ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2024

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.... 17

1. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության պատմական զարգացումը 17

2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները 19

3. Համագործակցությունը հանրային իշխանության մարմինների հետ..... 20

4. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ 26

5. Համագործակցությունը միջազգային կառույցների հետ 28

6. Գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը 51

7. 2024 թվականի վիճակագրական տվյալներ 55

8. Արտահերթ հրապարակային զեկույցներ և ուսումնասիրություններ 59

9. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ..... 60

ԲԱԺԻՆ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 65

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 67

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ 67

2. Հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը..... 70

3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում 74

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 77

1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը ... 77

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքը..... 80

3. Քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն այլընտրանքային ծառայության կազմակերպման և իրականացման գործընթացում..... 84

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 94

1. Բժշկական հետազոտությունների ու փորձաքննությունների հետ կապված խնդիրներ 94

2. Զինվորական ծառայության համար պիտանիության գնահատման առկա չափանիշները. հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը 99
ԳԼՈՒԽ 4. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 106
1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում 106
2. Զինծառայողների առաջնահերթ հետազոտման և բուժման իրավունքը .. 112
3. Զինծառայողների հոգեկան առողջության պահպանման իրավունքը 113
4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը 115
ԳԼՈՒԽ 5. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 117
1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը և զինծառայողների ատեստավորման գործընթացը 117
2. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը ծառայությունից արձակվելու գործընթացում 120
3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը 122
ԳԼՈՒԽ 6. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 125
1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ 125
2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք 127
ԳԼՈՒԽ 7. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 135
1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը 135
2. Զինված ուժերում վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքը 142
ԳԼՈՒԽ 8. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 145
1. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները 145
2. Զինված ուժերում կանանց իրավունքների ապահովման օրենսդրական երաշխիքները 150

ԳԼՈՒԽ 9. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 154

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը 154

2. Զինվորական կենսաթոշակի իրավունքի ապահովման հետ կապված խնդիրները 160

3. Զինծառայողների իրավունքների ապահովումը մարտական գործողությունների մասնակցության համատեքստում 161

4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը 163

ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ 166

1. Վարժական հավաքների կազմակերպման գործընթացում օրենսդրական և գործնական խնդիրները 166

2. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո 171

ԲԱԺԻՆ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 175

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 176

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը 176

2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և չքննարկելու՝ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողական պրակտիկան 179

3. Քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանությունը 183

4. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ 187

5. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ 189

6. Քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրներ 194

7. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան 200

8. Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներ 209

9. Քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն առնչվող խնդիրներ 213

10. Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալմանն ու կալանավորմանն առնչվող գործնական խնդիրներ 218

ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ 224

1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները 224

2. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելու պրակտիկայում մարդու իրավունքների խնդիրներ 228

3. Քրեական վարույթի շրջանակում անձանց պատշաճ ծանուցմանն առնչվող գործնական խնդիրներ 232

4. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները 236

ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 241

1. Մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան 241

2. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկան 244

3. ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ այլ երկրների իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված լինելու պարագայում նրանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելքը տևական ժամանակ պահպանելու հետ կապված խնդիրներ 246

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 249

1. Փաստաբանի մասնագիտական գործունեության երաշխավորումն ու մատչելիությունը՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավաբանական օգնության իրավունքի իրացման հիմնապայման 249

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 263

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների և Պարեկային ծառայության գործունեությանն առնչվող բողոքներով բարձրացված խնդիրներ 263

2. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ 276

3. ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտին առնչվող խնդիրներ 279

ԲԱԺԻՆ 4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ 283

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՈՒՄԸ.....285

1. Իրավահավասարության և խտրականության բացառմանն առնչվող խնդիրները ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում 290

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանմանն առնչվող խնդիրներ 294

2.1. Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքին առնչվող խնդիրներ 294

2.2. Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանմանն առնչվող խնդիրներ 300

2.3. Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանմանն առնչվող այլ խնդիրներ..... 304

3. Վաղ ամուսնությունները ազգային փոքրամասնությունների համայնքներում..... 306

ԳԼՈՒԽ 2. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 312

1. ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ-ում..... 313

2. Օրենսդրական խնդիրներ 315

3. Պետական մարմինների աշխատանքը և քաղաքացիական հասարակության արձագանքը կատարված աշխատանքներին 318

ԳԼՈՒԽ 3. ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ 321

1. Սեռական ոտնձգությունն աշխատավայրում 322

2. Ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգությունը 326

ԳԼՈՒԽ 4. ՊՏՂԻ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ 328

ԳԼՈՒԽ 5. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍ/ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ 332

ԲԱԺԻՆ 5. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 337

1.Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան և կենցաղային բռնություն 340

2. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին .. 358

3. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ .375

4. Տնտեսական իրավունքների սահմանափակման խնդիրներ 380

5. Գենդերազգայուն արհեստական բանականության զարգացումը՝ որպես կանանց իրավունքների լիարժեք իրացման գործոն 383

ԲԱԺԻՆ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....388

ԳԼՈՒԽ 1. ԱՆԿԱԽ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 392

1. Ապահնստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ 393

2. Անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ 397

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ 400

ԳԼՈՒԽ 2. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 402

1. Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ 403

2. Տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ 410

ԳԼՈՒԽ 3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 415

1. Մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ 416

2. Կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ 419

3. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելը 421

ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 422

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 426

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 429

ԲԱԺԻՆ 7. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 432

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 437

1. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը 437

2. Երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը 439

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵԽԱՅԻ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 441

1. Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ 442

2. Որդեգրման հետ կապված խնդիրներ 444

3. Խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ 446

4. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ 448

5. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ 449

6. Հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ 456

7. Մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ 459

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ 461

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների իրավաչափությունը երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից 461

2. Երեխայի հետ շփման իրավունքի ապահովումը երեխային օտարերկրյա պետություն անօրինական տեղափոխելու դեպքում 462

3. ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում երեխայի հայտնաբերման և երեխայի հետ շփման իրավունքի ապահովման կառուցակարգերի հետ կապված խնդիրներ 464

4. Երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովումը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման դեպքերում.... 465
ԳԼՈՒԽ 4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 467
1.Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ 467
2.Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ 469
3. Նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ 470
ԳԼՈՒԽ 5. ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 472
1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ 472
2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ.....474
3.Երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ 475
ԳԼՈՒԽ 6. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ 477
1. Երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ 479
2. Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրներ 480
3. Իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրներ 482
4. Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրներ..... 483
ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 485
ԳԼՈՒԽ 8. ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 487
ԳԼՈՒԽ 9. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 489
1. «ԴատաԼեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ..... 490

2. Զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ 490

ԳԼՈՒԽ 10. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 493

ԳԼՈՒԽ 11. ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 495

ԲԱԺԻՆ 8. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 498

1. Անձնական տվյալների պաշտպանության մարմնի անկախությունը՝ որպես իրավական պաշտպանության ամրապնդման հիմնասյուն 498

2. Անձնական տվյալների պաշտպանությունը՝ որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմք 500

3. Անձնական տվյալների պաշտպանությունը «ԴատաԼեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում 503

4. Արհեստական բանականության զարգացմանը զուգընթաց անձնական տվյալների պաշտպանությունը 505

ԲԱԺԻՆ 9. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 509

1. Ատելության խոսքը հանրային տիրույթում 513

2. Լրագրողի մասնագիտական գործունեության անխոչընդոտ իրականացումը՝ որպես կարծիքի արտահայտման ազատության երաշխիք 521

3. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա 533

ԲԱԺԻՆ 10. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 538

1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացումը 540

2. Սահմանված ժամկետից ավելի անձին անազատության մեջ պահելը և ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը 542

3. Ազատությունից զրկված անձի ընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը 544

4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ 545

5. Հատուկ միջոցների գործադրման իրավաչափության հարցը 550

6. Լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս վերջիններիս անվտանգության երաշխավորման հարցերը 556

7. Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության պատշաճ գնահատման հարցը..... 559

ԲԱԺԻՆ 11. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 566

1. Լեռնային Ղարաբաղի դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարման ապահովման կարգի հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ..... 566

2. Կատարողական վարույթի շրջանակում կատարողական գործողությունները պատշաճ չիրականացնելու հետ կապված խնդիրներ 569

3. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև քանդման (ապամոնտաժման) գործընթացների իրականացման հետ կապված խնդիրներ 572

4. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող, շրջակա միջավայրին վնաս հասցնող եղանակով, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոնների պահանջների չպահպանմամբ շինությունների ապամոնտաժման խնդիր 580

5. Սահմանափակումների դադարման (վերացման) պետական գրանցումն իրականացնելու հետ կապված օրենսդրական խնդիր.....588

6. Թափառող շների հարձակումների կանխարգելման խնդիր.....592

ԲԱԺԻՆ 12. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 598

ԳԼՈՒԽ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... 599

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում 599

2. Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության հասանելիության ապահովումը.....601

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հոգեկան առողջության պահպանման հարցը. 605

4. Հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում շենքային, գույքային պայմանների և ջեռուցման ապահովման վերաբերյալ խնդիրներ. 609

5. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը..... 612

6. Ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում. 613

7. Սննդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում. 617

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 620

1. Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու կամ ոչ ամբողջովին կատարելու խնդիրներ 620

2. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը.....623

3. Գործադուլի իրավունքի սահմանափակումը 625

4. Խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայությունը 628

5. Աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման իրավունքների պաշտպանություն 630

6. Աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խթանման հարցում արհեստակցական միությունների դերի բարձրացումը.....632

ԳԼՈՒԽ 3. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....635

1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիր 635

2. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցում չտրամադրելու շարունակական խնդիր 643

3. Սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պատճառով առաջացած հողամասերի համադրումները վերացնելու և որպես հետևանք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումները մերժելու խնդիրներ 646

4. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման (հեռացման) և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրներ..... 649

5. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման հետ կապված օրենսդրական խնդիր 653

6. Տրանսպորտային միջոցի հափշտակման և փաստացի չտիրապետման պարագայում գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու խնդիր 657
7. 1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդիր 659
ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 663
1. Բժշկական օգնության և սպասարկման հասանելիության խնդիր 664
2. Բժշկական օգնության և սպասարկման մատչելիության խնդիրներ 671
3. Շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգերի բացակայության խնդիր 678
4. Աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցման հետ կապված խնդիր 680
5. Հանրային տրանսպորտում հրդեհային անվտանգության ապահովման խնդիր 685
6. Պալիատիվ բուժօգնությունը.....688
ԳԼՈՒԽ 5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....692
1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ 692
1.1 Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու խնդիր..... 692
1.2. Մասնակի կենսաթոշակ նշանակելու խնդիր 696
1.3 Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիր 700
1.4 Կենսաթոշակի վճարման շարունակականության ապահովման գործընթացի խնդիրներ 705
2. Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը 709
2.1 Ընտանիքների անապահովության գնահատման գործընթացի օրենսդրական և գործնական խնդիրներ 709
2.2 Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման խնդիր 712
2.3 Անօթևան անձանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ 715
2.4 Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման խնդիրներ 721
2.5 Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման խնդիրներ.....725
2.6 Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2024-2026 թվականների պետական աջակցության ծրագրի իրականացման հետ կապված խնդիր 727

2.7 Պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալներին բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում չտրամադրելու խնդիր 730
ԳԼՈՒԽ 6. ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ 734
ԳԼՈՒԽ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 739

ԲԱԺԻՆ 13. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 745
1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայությունը 746
2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը 749
3. ՓՀԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը 754
4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ 757

ԲԱԺԻՆ 14. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 767
ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 769
1. Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներ 769
2. ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ աշխատանքային կամ աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացված եկամուտների կրկնակի հարկման խնդիր 771
3. Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ժամանակավոր ներմուծված՝ թեթև մարդատար տրանսպորտային միջոցների մաքսազերծման անհամարժեքության խնդիր 772
4. Մաքսակետերում գոյացող հերթերի և պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիր 774

5. Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի իրազեկվածության պակասի խնդիր 777

6. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր 778

7. Վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված տուգանքների անհամաչափության և անհատական մոտեցման բացակայության խնդիր 780

8. Տնտեսական բնույթի մի շարք հանցագործությունների համար նախատեսված խրախուսական նորմերի վերացման խնդիր 782

9. Ֆիզիկական անձանց կողմից եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային և արժեքային ավելի խիստ չափաքաներ սահմանելու խնդիր 786

10. Ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչների բացակայության խնդիր 789

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 792

1. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը 792

2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը 795

3. Խմելու ջրի մատակարարման խափանումներ 797

4. Առևտրային հաշվառքի սարքի խափանման կամ վնասման դեպքում առանց փաստական հանգամանքների բացահայտման բաժանորդին պատասխանատվության ենթարկելու խնդիր 801

5. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ 804

6. Անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասում էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ տեղադրելու խնդիր 807

7. Էլեկտրաէներգիայի մատակարարման հաճախակի ընդհատումների խնդիր 809

ԲԱԺԻՆ 15. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐԵՐ 816

ԲԱԺԻՆ 16. ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 820

ԲԱԺԻՆ 17. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 825
1. Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ինչպես նաև սոցիալական աջակցության միջոցառումների հետ կապված խնդիրներ ... 830
2. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրներ 846

ԲԱԺԻՆ 18. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 847
1. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կյանքի, խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքների խախտմանն առնչվող խնդիրներ 849
2. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների սեփականության իրավունքի, զբաղվածության ապահովման և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված խնդիրներ 853
3. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում երեխաների կրթության իրավունքի ապահովման խնդիրները 856

ԲԱԺԻՆ 19. ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 859

ԲԱԺԻՆ 20. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 873
1. Ոլորտում առկա գործնական և օրենսդրական խնդիրներ 873
2. Տարեցներին տրամադրվող ծառայությունների խնդիր 881

ԲԱԺԻՆ 21. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 887
1. Ոլորտին վերաբերելի վիճակագրական տվյալներ..... 890
2. Արձանագրված հիմնական խնդիրները.....891
3. Ոլորտում գոյություն ունեցող համակարգային խնդիրները..... 893
3.1. Մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում՝ անձի արտաքսման կամ հանձնման օրենսդրական արգելքը..... 893
3.2. Պետական սահմանի անցման բոլոր կետերում Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների բացակայությունը 895
3.3. Ռեսուրսների բացակայության պատճառով ապաստան հայցողներին հատուկ կացարանում տեղավորելու անհնարինությունը 895

3.4. Ապաստան հայցողների և փախստականների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգ (օնլայն հարթակ) ստեղծելու անհրաժեշտություն 897
3.5. Ապաստան հայցողների և փախստականների աշխատանքային իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքներ 897
3.6. Ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցելու կարգը 898
3.7. Ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների ապահովման խնդիրներ 899

ԲԱԺԻՆ 22. ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 901
1. Թրաֆիքինգի և շահագործման զոհերի վիճակագրություն 902
2. Ոլորտում արձանագրված խնդիրներ 903

ԲԱԺԻՆ 23. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 907

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության պատմական զարգացումը

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ստեղծման նախադրյալները ձևավորվել են դեռևս 1995 թվականին: Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարն ամրագրվել է դեռևս 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ: Սահմանադրաիրավական նորմի իրագործումն ապահովելու նպատակով 1998 թվականի ապրիլի 27-ի՝ ՀՀ Նախագահի ՆՀ-32 հրամանագրով ստեղծվել է ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովը:

Հանձնաժողովը գործել է որպես խորհրդակցական մարմին և իր գործունեությունը ծավալել է մարդու իրավունքների և ազատությունների աջակցության ու պաշտպանության ոլորտում, այդ թվում՝ մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների առնչությամբ Նախագահին ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերլուծության, մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների առնչությամբ Նախագահի ստորագրմանը ներկայացված օրենքների և վավերացմանը ներկայացված կառավարության որոշումների մասին եզրակացության տրամադրման, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ Նախագահին կամ Հանձնաժողով ներկայացված գանգատների քննարկման, մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ու վիճակի վերաբերյալ ամենամյա զեկույցի պատրաստման համատեքստում:

Հանձնաժողովի գործունեությունը հետագայում դարձավ այն հենակետը, որը հիմք հանդիսացավ որպես սահմանադրական կառույց՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ստեղծման ու ձևավորման համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը հիմնադրվել է 2004 թվականին 2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված և 2004 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով:

Այնուհետև, 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխություններով ամրագրվել են Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես սահմանադրական հաստատության դերն ու կարևորությունը, անկախության և անձեռնմխելիության երաշխիքները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ Պաշտպանի հետ համագործակցելու պարտականությունը և վերջապես անձի՝ իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունքը:

Պաշտպանի հաստատության՝ որպես սահմանադրական մարմնի պատմության մեջ հիմնարար փոփոխություններ տեղի ունեցան 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ Պաշտպանի հաստատության հիմքերն ու դերն ամրագրելով նոր հարթությունում: Սահմանադրության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ 2-րդ գլխում առանձին հոդվածով ամրագրվեց Պաշտպանին դիմելու սահմանադրական բացարձակ իրավունքը:

Սահմանադրության 10-րդ գլխով ամրագրվեցին Պաշտպանի հաստատությանը՝ Պաշտպանի գործառույթներին և լիազորություններին, ընտրությանը, ինչպես նաև գործունեության երաշխիքներին վերաբերելի կարգավորումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերն ու նշանակությունն էլ ավելի կարևորվեց 2016 թվականի դեկտեմբերի 16-ին՝ սահմանադրական փոփոխությունների հիման վրա «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունմամբ: Օրենքով ընդլայնվեցին Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության երաշխիքները, իրավասության ոլորտները՝ հատկապես անկախության երաշխիքների ամրապնդման տեսանկյունից: Այդ փոփոխությունների հիման վրա նախագծվեցին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի նոր ուղղություններ:

Ներկայացվածից բացի, Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ[1] հանդիսանալու հիմքերը դրվել են դեռևս 2008 թվականի ապրիլի 8-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով:

Սահմանադրական օրենքի ընդունմամբ ամրագրվեց նաև Պաշտպանի դերը որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն իրականացնող մարմին[2]:

Սահմանադրական օրենքում 2018 թվականի հունիսի 13-ին կատարված փոփոխություններով Պաշտպանն իրականացնում է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն[3]:

2022 թվականի դեկտեմբերի 7-ին լրացումներ կատարվեցին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում, որով Պաշտպանի կողմից քննարկվող հարցերի շրջանակն ընդլայնվեց՝ դրանում ներառելով կազմակերպությունների կողմից ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը:

2024 թվականը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համար նշանավորվել է հաստատության 20-ամյակի տոնակատարությամբ: Հաստատության հոբելյանական տարեդարձը ևս մեկ անգամ հնարավորություն է տվել ընդգծելու մարդու իրավունքների ազգային հաստատությունների անկյունաքարային դերը

---

[1] Այս մանդատի շրջանակներում իրականացված գործունեությունն առավել մանրամասն ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության մասին տարեկան զեկույցում:

[2] Այս ոլորտում իրականացված աշխատանքներն ու արձանագրումները ներկայացված են սույն հաղորդման՝ «Երեխայի իրավունքներ» բաժնում:

[3] Այս ոլորտում իրականացված աշխատանքներն ու արձանագրումները ներկայացված են սույն հաղորդման՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում:

մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման և մարդու իրավունքների խթանման գործում:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության 20-ամյակի առթիվ մեկնարկել է «Օմբուդսմանական/Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն և մարտահրավերներ» խորագրով երկօրյա բարձրաստիճան միջազգային համաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և օմբուդսմանական միակ ազգային հաստատությանը:

Հոկտեմբերի 21-22-ն անցկացվող միջոցառմանը մասնակցել են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մարդու իրավունքների ազգային հաստատությունների և իրավահավասարության մարմինների ղեկավարներ ու ներկայացուցիչներ ավելի քան 15 պետություններից: Միջազգային համաժողովին առցանց ձևաչափով հիմնական ելույթով է հանդես եկել Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար պարոն Մայքլ Օ'Ֆլահերթին: Միջոցառմանը հյուրընկալվել են նաև Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի կառավարման խորհրդի նախագահը, անդամները և գլխավոր քարտուղարը, ինչպես նաև Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի ներկայացուցիչը:

Միջոցառումն ընդգծել է մարդու իրավունքների ազգային և Օմբուդսմանական հաստատությունների կարևոր դերը մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության և խթանման գործում, ինչպես նաև նրանց ինստիտուցիոնալ անկախության և անաչառության ապահովման կարևորությունը:

2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքներն ու դրանց փաստացի իրացման վիճակը հիմնաքարային նշանակություն ունեն Պաշտպանի գործունեության արդյունավետության և մարդու իրավունքների նկատմամբ պետության վերաբերմունքի գնահատման տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքներն ամրագրված են ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով: Սահմանադրական օրենքով ամրագրված են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները՝ *անկախությունը* (Հոդված 5), *անձեռնմխելիությունը* (Հոդված 6), *անվտանգությունը* (Հոդված 7) *գործունեության ֆինանսավորումը և սոցիալական երաշխիքները* (Հոդված 8), *Պաշտպանի գործունեությանն աջակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների պարտականությունը* (Հոդված 9), *պատասխանատվությունը Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելու համար* (Հոդված 10) *Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքները* (Հոդված 11):

Պաշտպանի ֆինանսական անկախության երաշխիքները սահմանվել են 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով: Նշվածն իր հերթին ենթադրում է յուրաքանչյուր տարի

Պաշտպանի և նրա աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափի՝ նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից պակաս լինելու արգելք:

Դեռևս նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանը ֆինանսական անկախության առումով կարևորել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի պատշաճ և բավարար մակարդակի ապահովումը՝ հաշվի առնելով նաև վերջին տարիներին քննիչների, դատախազների ամսական վարձատրության բարձրացման միտումը[4] ու այդ համատեքստում Պաշտպանի աշխատակազմի աշխատավարձերի անփոփոխ մնալը: Հաշվի առնելով Պաշտպանի գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի բազմաշերտությունն ու բազմակողմանիությունը՝ պետության՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի կարևորման վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից՝ կարևոր է նշված համակարգերում և Պաշտպանի աշխատակազմում աշխատավարձերի չափի մեծ խզվածքի վերացմանն ուղղված կառուցակարգերի մշակումը: Պաշտպանի աշխատակազմի վարձատրությանն առնչվող խնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների ազգային հաստատությունների հավատարմագրման ենթահանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետությանն ու Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականների շրջանակներում:

Նշվածից բացի, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը պաշտպանված է նաև քրեաիրավական կառուցակարգերով: 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսվում է քրեական պատասխանատվություն Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու (Հոդված 492), Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ սպառնալիքի կամ նրա մասին տեղեկություն հրապարակելու կամ նրա գույքը ոչնչացնելու կամ վնասելու կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելու (Հոդված 493), ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու (Հոդված 494) համար:

3. Համագործակցությունը հանրային իշխանության մարմինների հետ

Մարդու իրավունքների պաշտպանության հարցերում խիստ կարևորվում է արդյունավետ համագործակցությունը ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մարմինների հետ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը 2024 թվականի ընթացքում ***ինստիտուցիոնալ անկախության պահպանմամբ*** իր մանդատի շրջանակներում մշտապես համագործակցել է ինչպես իշխանության ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, այնպես էլ Սահմանադրությամբ ու օրենքներով ստեղծված այլ մարմինների հետ:

---

[4] Հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը ակտիվ համագործակցություն է ունեցել հանրային իշխանության մարմինների հետ մարդու իրավունքների խթանման համատեքստում: Մարդու իրավունքների խթանման համատեքստում Պաշտպանի աշխատանքներն ընդգրկում են այն գործունեությունը, որը Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է երկրում մարդու իրավունքների վիճակի բարելավման, միջազգային իրավական չափանիշներին համահունչ քաղաքականություն, օրենսդրություն ու իրավակիրառ պրակտիկա ունենալու ուղղությամբ: Նշված գործառույթը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արդեն իսկ երկար տարիներ փաստացի իրականացվում է՝ Պաշտպանի լայնաբովանդակ գործիքակազմի կիրառմամբ (իրազեկման արշավներ, մարդու իրավունքների կրթություն, զեկույցների մշակում և այլն):

Մարդու իրավունքների խթանման գործառույթը բխում է Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքներից (Փարիզյան սկզբունքներ)[5]: Դրանցով սահմանվում է, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունը պետք է իրավասու լինի «ներկայացնել կառավարությանը, խորհրդարանին կամ որևէ այլ իրավասու մարմնի մարդու իրավունքների խթանման և պաշտպանության վերաբերյալ կարծիքներ, առաջարկություններ և զեկույցներ՝ խորհրդատվական հիմունքներով կամ շահագրգիռ իշխանությունների խնդրանքով կամ իր լիազորությունների իրականացման միջոցով՝ առանց միջնորդության»:

Ընդ որում՝ ասվածի համատեքստում կարևոր է այն ընդգծումը, որ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների հավատարմագրման ենթահանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականներով[6] բարձր են գնահատվում մարդու իրավունքների պաշտպանության և մարդու իրավունքների խթանմանն ուղղված Պաշտպանի կողմից ձեռնարկված ջանքերը և Պաշտպանի կողմից մարդու իրավունքների խթանման գործառույթի լայն մեկնաբանումը՝ խրախուսելով դրա շարունակական իրականացումը: Ավելին, Հավատարմագրման ենթահանձնաժողովը բարձր է գնահատել Պաշտպանի աշխատանքները՝ Հավատարմագրման ենթահանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետությանն ու Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականների պահանջներին Սահմանադրական օրենքը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Ի թիվս այլնի՝ մարդու իրավունքների խթանման գործառույթի համատեքստում Հավատարմագրման ենթահանձնաժողովը կարևորում է մարդու իրավունքների տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերը վավերացնելու կամ դրանց միանալու առնչությամբ առաջարկություններ ներկայացնելը, ինչպես նաև այդ փաստաթղթերի արդյունավետ իրականացումը մշտադիտարկելը՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատությունների հիմնական գործառույթ: Հաշվի առնելով, որ Պաշտպանն արդեն իսկ երկար տարիներ իրավակիրառ պրակտիկայում

---

[5] Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբելայի «Փարիզյան սկզբունքները», թիվ 48/134 բանաձև, 1993թ., (այսուհետ՝ Փարիզյան սկզբունքներ), հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/PTS-4Rev1-NHRI_en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[6] Տե՛ս 2019 թվականի և 2024 թվականի հանձնարարականները:

իրականացնում է այդ աշխատանքները՝ Հավատարմագրման ենթահանձնաժողովը խրախուսում է Հայաստանի Հանրապետությունում իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ ստեղծելով սահմանադրական օրենքի մակարդակում լիազորության իրականացման հստակ հիմքեր:

Մարդու իրավունքների չափանիշների խթանման տեսանկյունից կարևորվում է Մարդու իրավունքների պաշտպանի և օրենսդիր իշխանության համագործակցությունն ու փոխգործակցությունը, ինչը նպաստում է երկրում մարդու իրավունքների համակարգի ամրապնդմանը[7]: Պաշտպանը տարվա ընթացքում ակտիվ համագործակցել է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների և պատգամավորների հետ՝ մարդու իրավունքներին առնչվող տարատեսակ խնդիրների առնչությամբ քննարկումներ կազմակերպելու, օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ մշակելու, ՀՀ տարբեր բնակավայրեր համատեղ այցեր իրականացնելու և այլ ձևաչափերով:

2024 թվականի ընթացքում օրենսդրի հետ համագործակցության շրջանակներում Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են հանրային քննարկումների, խորհրդարանական լսումների, խորհրդակցությունների, հանդիպել են Հայաստան այցելած օտարերկրյա պատգամավորների, խորհրդարանական բարեկամական խմբերի անդամների հետ[8]:

Օրենսդիր մարմնի հետ համագործակցության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի նոյեմբերի 11-ին Ազգային ժողովում մասնակցել է խորհրդարանական լսումների՝ «ՄԱԿ-ի Համընդհանուր Պարբերական Դիտարկման (ՀՊԴ) ընթացակարգի շրջանակներում ՀՀ չորրորդ ազգային զեկույցում երեխայի իրավունքների վերաբերյալ ներկայացվելիք հարցերը» թեմայով: Քննարկումը նախաձեռնել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը՝ հաշվի առնելով, որ 2025 թվականին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում տեղի է ունենալու Համընդհանուր պարբերական դիտարկման չորրորդ շրջանի՝ Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցի քննարկումը[9]:

2024 թվականի փետրվարի 15-ին Պաշտպանը նաև Ազգային ժողովում մասնակցել է «Ամուսնությունների տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրենսդրական բարեփոխումները՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում» թեմայով խորհրդարանական լսումներին որպես հիմնական զեկուցող:

2024 թվականի ընթացքում Պաշտպանին կարծիքի է ներկայացվել 173 նորմատիվ իրավական ակտի նախագիծ, որոնց վերաբերյալ ներկայացվել է 226 նկատառում՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները և ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան:

---

[7] ԵԽԽՎ, Բարելավել համագործակցությունը Մարդու իրավունքների ազգային հաստատությունների և խորհրդարանների միջև իրավահավասարության և խտրականության դեմ ուղղված խնդիրների լուծման գործում, 2014թ., հասանելի է https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=20554&lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[8] Առավել մանրամասն տե՛ս ստորև ներկայացված թեմատիկ բաժիններում:

[9] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3155 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Տարիների կայուն համագործակցություն է ձևավորվել նաև Սահմանադրական դատարանի հետ՝ նկատի ունենալով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից սահմանադրական արդարադատության բացառիկ կարևորությունն ու Մարդու իրավունքների պաշտպանի նշանակալից դերը վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում: Համագործակցության շրջանակներում Պաշտպանին են ներկայացվում սահմանադրականության հարցի որոշման վերաբերյալ դատարանին ուղղված բոլոր դիմումները, որոնց վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը կարող է ներկայացնել հատուկ կարծիք (*amicus curiae briefs*): Հատուկ կարծիքներն արտահայտում են Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը բարձրացված հարցերի վերաբերյալ՝ ներառելով Պաշտպանի կողմից անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրականացված վերլուծություններն ու կոնկրետ հարցի սահմանադրականության մասին միջազգային սկզբունքներն ու չափանիշները: 2024 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան է ներկայացվել 2 հատուկ կարծիք, որոնք վերաբերել են հավաքների ազատությանը, համաչափության ու որոշակիության սկզբունքներին և այլն:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով Պաշտպանը լիազորված է նաև դիմելու Սահմանադրական դատարան օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

2024 թվականին Սահմանադրական դատարան է ներկայացվել 3 դիմում՝

- «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15-րդ և 16-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու[10],
- «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՕ-474-Ն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու[11],
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի ՀՀ

[10] Սահմանադրական դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴԱՈ-151 որոշմամբ գործն ընդունվել է քննության:

[11] Սահմանադրական դատարանի 2024 թվականի հունիսի 18-ի ՍԴԱՈ-100 որոշմամբ գործն ընդունվել է քննության:

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ հարցերով[12]:

2024 թվականի ընթացքում հանրային իշխանության մարմինների հետ համագործակցության շրջանակներում կարևորվել է Պաշտպանի հաստատության բնականոն գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների ապահովման խնդրի լուծումը:

Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների կարգավիճակի վերաբերյալ ՄԱԿ սկզբունքները (Փարիզյան սկզբունքներ)[13] սահմանում են, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունը պետք է ունենա ենթակառուցվածքներ, որոնք ունակ են ապահովելու հաստատության գործունեության անխափան իրականացումը՝ համարժեք ֆինանսավորմամբ:

Վերոնշյալի համատեքստում կարևոր է այն, որ 2024 թվականի նոյեմբերի 15-ին Կառավարությունն ընդունել է «Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» որոշում, որով նախատեսվում է Երևանի Մոսկովյան փողոց թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքն ամրացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին: Առանցքային է, որպեսզի շարունակական աշխատանքներ իրականացվեն նշված շենքի պայմանները ՄԻՊ աշխատակազմի գործունեության համար անհրաժեշտ և բավարար մակարդակի հասցնելու և շենքը փաստացի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կողմից շահագործելու հնարավորություններ ապահովելու տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության պատշաճ շենքային պայմանների ապահովման հարցն առանցքային է համարել նաև Մարդու իրավունքների ազգային հաստատությունների հավատարմագրման ենթահանձնաժողովը:

Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները, ինստիտուցիոնալ անկախության պահպանմամբ և Մարդու իրավունքների պաշտպանի համաձայնությամբ, ներգրավված են մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերին վերաբերելի առանձին հանձնաժողովներում, խորհուրդներում և միջգերատեսչական աշխատանքային խմբերում, օրինակ՝ Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի կատարումը համակարգող հանձնաժողովը, Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության մշտադիտարկման խորհուրդը, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդը, ԱԿ ԱԽ 1325 բանաձևի միջգերատեսչական հանձնաժողովը, ՀՀ-ում կանանց հարցերով խորհուրդն ու աշխատանքային խումբը, ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդն ու աշխատանքային խումբը և այլն:

---

[12] Սահմանադրական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴԱՈ-177 որոշմամբ գործի քննությունը մերժվել է:

[13] Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբելայի «Փարիզյան սկզբունքները», թիվ 48/134 բանաձև, 1993թ., (այսուհետ՝ Փարիզյան սկզբունքներ), հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/PTS-4Rev1-NHRI_en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Կոնկրետ ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով Պաշտպանն ակտիվ համագործակցել է իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչը դրականորեն է անդրադարձել մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման համակարգի վրա: Այդ համագործակցության արդյունքում լուծում են ստացել մարդու իրավունքներին առնչվող բազմաթիվ խնդիրներ: Մարդու իրավունքների պաշտպանության հարցերով հանրային իշխանության տարբեր մարմինների հետ համագործակցությանը առավել մանրամասն անդրադարձ է կատարվում տարեկան հաղորդման՝ հիմնական իրավունքների պաշտպանությանը նվիրված կոնկրետ բաժիններում:

Ներկայացվածի հետ մեկտեղ, 2024 թվականի ընթացքում արձանագրվել են նաև առանձին խնդիրներ՝ հանրային իշխանության որոշ մարմինների հետ համագործակցության համատեքստում:

ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ուժով՝ Պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնելու գրավոր կարծիք:

Մինչդեռ, արձանագրվել են դեպքեր, երբ մարդու իրավունքներին առնչվող կոնկրետ նախագծեր չեն ուղարկվել Պաշտպանի կարծիքին: Օրինակ՝ հանրության շրջանում մեծ հնչեղություն ստացած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, «Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներ տրամադրելու և դրանց վերանորոգումն իրականացնելու կարգը և պայմանները, աջակցող միջոցների ցանկը, պետական հավաստագրերի և դրանց հիման վրա տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը, առանց պետական հավաստագրերի տրամադրվող աջակցող միջոցների և դրանց վերանորոգման փոխհատուցման գումարի չափը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և այլն:

Արձանագրվել են նաև օրենքով սահմանված կարգով Պաշտպանի կողմից պահանջվող տեղեկատվությունը առանձին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված ժամկետներում չներկայացնելու (օրենքով սահմանված ժամկետներից լուրջ ուշացմամբ պարբերաբար ներկայացնելու) դեպքեր:

Չնայած հանրային իշխանության մարմինների հետ ընդհանուր կառուցողական համագործակցությանը և ՄԻՊ առաջարկությունները կատարելու՝ հանրային իշխանության մարմինների հանձնառությանը, ինչի արդյունքում լուծում են ստանում մարդու իրավունքներին առնչվող բազմաթիվ խնդիրներ՝ 2024 թվականի ընթացքում արձանագրվել են առանձին դեպքեր, երբ կոնկրետ գործով իրավասու մարմինը վիճարկման առարկա է դարձրել Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական մանդատը կամ մարդու իրավունքներին առնչվող Պաշտպանի արձանագրումներն ու առաջարկությունները:

Մի շարք դեպքերում այդ հանգամանքը վկայում է մարդու իրավունքների ազգային հաստատությունների մանդատի, գործիքակազմերի և լիազորությունների

առնչությամբ ոչ բավարար գիտելիքների առկայության մասին և ունի շուտափույթ հաղթահարման անհրաժեշտություն:

4. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ

Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, հանրային քաղաքականության նպատակների ու որոշումների շուրջ երկխոսության և խորհրդակցությունների կառավարական և միջկառավարական գործընթացներին առանց խտրականության վերջիններիս մասնակցության կարևորությունն ընդգծվում է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում[14]:

Միջազգային իրավական փաստաթղթերում հատուկ ընդգծվում է նաև մարդու իրավունքների ազգային հաստատությունների՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցության կարևորությունը[15]: Պաշտպանն իր ելույթներում ևս բազմիցս ընդգծել է, որ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունն իր համար ունի առանցքային դերակատարություն և կարևոր է իրավունքների առնչությամբ խնդիրներն անձամբ քաղաքացիական հասարակությունից լսելն ու միասին դրանց լուծման ուղիները քննարկելը:

Այս համատեքստում, քաղաքացիական հասարակության ու իրավապաշտպանների հետ Պաշտպանի համագործակցությունը 2024 թվականի ընթացքում ևս պահպանել է իր շարունակականությունը՝ թե՛ անձամբ Պաշտպանի և քաղաքացիական հասարակության գործընկերների նախաձեռնությամբ կազմակերպված տարատեսակ հանդիպումների, քննարկումների, թե՛ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ինստիտուցիոնալ բնույթ կրող համագործակցության ձևաչափով:

2024 թվականի դրությամբ գործել է Պաշտպանին առընթեր 6 խորհրդատվական խորհուրդ՝

2024 թվականի ընթացքում անցկացվել է Պաշտպանին առընթեր խորհուրդների 10 նիստ.

- Երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով խորհրդի 3 նիստ,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով խորհրդի 2 նիստ,
- Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի 2 նիստ,
- Կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի 1 նիստ,
- Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի 1 նիստ,
- Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով խորհրդի 1 նիստ:

---

[14] ԵԽ Նախարարների կոմիտե, Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ հանձնարարական, 2007թ

[15] Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքներով (Փարիզյան սկզբունքներ), ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբելայի «Փարիզյան սկզբունքները», թիվ 48/134 բանաձև, 1993թ., (այսուհետ՝ Փարիզյան սկզբունքներ), հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/PTS-4Rev1-NHRI_en.pdf հղումով:

Մարդու իրավունքների պաշտպանը քաղաքացիական հասարակության ու իրավապաշտպան համայնքի հետ ակտիվ համագործակցություն է ունեցել ոչ միայն Պաշտպանին առընթեր հասարակական խորհուրդների միջոցով, այլև վերջիններիս կողմից Պաշտպանին ներկայացված ահազանգերի, դիմում-բողոքների ուսումնասիրության, վերջիններիս հետ տարբեր հանդիպումների ու քննարկումների եղանակով[16]:

Ինչպես նախորդ տարիներին, 2024 թվականին ևս Պաշտպանը բազմաթիվ հանդիպումներ է անցկացրել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ընդ որում՝ քաղաքացիական հասարակության գործընկերների հետ հանդիպումներ են կազմակերպվել գրեթե բոլոր մարզային այցելությունների ընթացքում:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի՝ քաղաքացիական հասարակության ու իրավապաշտպանների հետ համագործակցությունը նոր ուղղություն է ձեռք բերել՝ պայմանավորված նույն թվականի ընթացքում ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով:



Հարկ է նկատել, որ նշված հարցի առնչությամբ Պաշտպանը բազմիցս քննարկումներ է ունեցել ինչպես քաղաքացիական հասարակության հետ, այնպես էլ երկխոսության հարթակ է ձևավորել հասարակական կազմակերպությունների ու օրենսդրական փոփոխությունների հարցում իրավասու մարմինների միջև: Նշված հարթակը հնարավորություն է տվել բոլոր կողմերին ներկայացնելու արձանագրած խնդիրները, կիսվելու մտահոգություններով, ստանալու պարզաբանումներ[17]:

---

[16] Մարդու իրավունքների պաշտպանի՝ քաղաքացիական հասարակության ու իրավապաշտպան համայնքի հետ համագործակցությունը կոնկրետ ոլորտներում առավել մանրամասն ներկայ է կատարվում տարեկան հաղորդման՝ հիմնական իրավունքների պաշտպանությանը նվիրված կոնկրետ բաժիններում:

[17] Տե՛ս առավել մանրամասն սույն հաղորդման «Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին առնչվող խնդիրներ» բաժնում:

Հարկ է նկատի ունենալ, որ Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են գտնվում հասարակական կազմակերպությունների և նրանց անդամների նկատմամբ բռնություն գործադրելու, նրանց թիրախավորելու, վիրավորելու, ինչպես նաև նրանց գործունեությանը ոչ իրավաչափ միջամտելու դեպքերը: Դեռևս 2023 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը, կարևորելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների դերը ժողովրդավարական հասարակության կայացման տեսանկյունից, առանցքային համարելով նրանց անխոչընդոտ գործունեության ապահովման անհրաժեշտությունը, դատապարտել է իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների և նրանց անդամների նկատմամբ բռնություն գործադրելու, նրանց թիրախավորելու, վիրավորելու, ինչպես նաև նրանց գործունեությանը ոչ իրավաչափ միջամտելու ցանկացած դեպք: Պաշտպանն ընդգծել է, որ պետությունը պետք է մշակի և գործարկի ինչպես իրավապաշտպանների և հասարակական կազմակերպությունների իրավաչափ գործունեությանը չխոչընդոտելու, այնպես էլ նման խոչընդոտները կանխարգելելու, դրանց առկայության պարագայում՝ վերացնելու, դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելու, այդ թվում՝ վարքագծի կանոնների խախտում թույլ տված անձանց պատասխանատվության անխուսափելիությունը երաշխավորելու պատշաճ կառուցակարգեր:

Պաշտպանն ընդգծում է, որ հասարակական կազմակերպությունները բաց և ժողովրդավարական հասարակության մասնակցայնության կարևոր բաղադրիչ են և հատուկ տեղ ունեն մարդու իրավունքների պաշտպանության համակարգում՝ իրականացնելով պետության նկատմամբ վերահսկողության կարևոր գործառույթ:

Պաշտպանը, վերահաստատելով իր նախկինում արտահայտած դիրքորոշումները, խիստ կարևորում է իրավապաշտպանների գործունեության պաշտպանված լինելու անհրաժեշտությունը, ինչպես նաև նրանց նկատմամբ անհանդուրժող և խտրական վերաբերմունքի, ատելության խոսքի, վերջիններիս թիրախավորելու և այլ բացասական երևույթների անթույլատրելիությունը:

5. Համագործակցությունը միջազգային կառույցների հետ

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) 2024 թվականին ունեցել է ավելի քան 100 հանդիպում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների (ՀՀ-ում ԵՄ, ԱՄՆ, Բելգիայի, Կանադայի, Իրանի, Լիտվայի, Նորվեգիայի, Ֆրանսիայի Նիդերլանդների, Շվեդիայի, Գերմանիայի, Իրաքի), ինչպես նաև ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի, ՆԱՏՕ-ի, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի առաքելության, Ռաուլ Վալլենբերգ ինստիտուտի, Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության, Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (National Democratic Institute - NDI) հայաստանյան գրասենյակի, Կրթության և վերապատրաստման Ֆրանկոֆոնիայի ինստիտուտի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), Անհայտ կորած անձանց հարցերով միջազգային հանձնաժողովի (ICMP) և մի շարք այլ միջազգային կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների հետ:

Հանդիպումները և համագործակցությունները կրում են շարունակական բնույթ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են Պաշտպանի գործունեության ուղղությունները՝ ընդգծելով կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, զինված ուժերում, քրեական վարույթի շրջանակում անձանց իրավունքների պաշտպանության, քաղաքացիական և սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի շրջանակներում և մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները: Քննարկվել են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանը, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց ու նրանց ընտանիքների իրավունքների ապահովման վիճակին առնչվող և մի շարք այլ հարցեր:

Պաշտպանի հաստատությունը 2024 թվականին շարունակել է իր անդամակցությունը մի շարք միջազգային օմբուդսմանական կազմակերպությունների՝ մասնավորապես Օմբուդսմանի միջազգային ինստիտուտին (The International Ombudsman Institute, IOI), Եվրոպական օմբուդսմանի ինստիտուտին (The European Ombudsman Institute, EOI), Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների միջազգային կոորդինացիոն կոմիտեին (The International Coordinating Committee for National Human Rights Institutions), Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցին (The European Network of Ombudspersons for Children (ENOC)), Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցին (European Network of National Human Rights Institutions, (ENNHRI)): Պաշտպան Անահիտ Մանասյանը 2024 թվականին ընտրվել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի կառավարման խորհրդի անդամ: Ընտրությունը կայացել է ցանցի ընդհանուր ժողովի՝ փետրվարի 7-ի առցանց նիստի շրջանակներում: Քվեարկությանը մասնակցել են ENNHRI-ի անդամ ավելի քան 30 ՄԻՊ հաստատություններ: Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն առաջին անգամ է ընդգրկվել եվրոպական ցանցի կառավարման մարմնում[18]:

Նախագահողի գլխավորությամբ՝ Խորհուրդն առաջնորդում է կառույցի ռազմավարական առաջնահերթությունները և պատասխանատու է ցանցի կառավարման և վարչարարության համար:

Պաշտպանի հաստատությունը 2024 թվականին շարունակել է իր անդամակցությունը նաև Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիային (l'Association des Ombudsmans et Médiateurs de la Francophonie),

[18] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2858 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Միջերկրածովային օմբուդսմանների ասոցիացիային (The Association of Mediterranean Ombudsman), Ասիական Օմբուդսմանների Ասոցիացիային (Asian Ombudsman Association (AOA), Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքին (Global Alliance of National Human Rights Institutions (GANHRI)), որի հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը 2024 թվականին շնորհել է վստահելիության և անկախության A դասի բարձրագույն կարգավիճակ[19]:

2024 թվականին Պաշտպանի ներկայացուցիչները շարունակել են իրենց անդամակցությունը Եվրոպայի խորհրդի Ղեկավար կոմիտեներին՝ Երեխայի իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեում (CDENF) և Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեում (CDEG), ԵԽ «Մարդու իրավունքները կենսաբժշկության մեջ» ծրագրի Համակարգող խորհրդում: Անդամակցությունը շարունակվել է նաև ԱՊՀ մարդու իրավունքների հանձնաժողովին և ԱՊՀ անդամ երկրների երեխաների իրավունքների հանձնակատարների հանձնաժողովին: Պաշտպանի հաստատությունը ներկայացված է նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի ապաստանի և միգրացիայի հարցերով, բիզնեսի և մարդու իրավունքների հարցերով, համագործակցության հարցերով, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և իրավական հարցերով աշխատանքային խմբերում: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի գործունեության շրջանակներում հանդիսանում է Երիտասարդ խորհրդատուների եվրոպական ցանցի (ENYA) համակարգող:

Պաշտպանը կատարել է մի շարք աշխատանքային այցեր այլ երկրներ, մասնակցել է միջազգային տարբեր միջոցառումների, որոնց շրջանակներում ներկայացրել է Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները և առաջնահերթությունները, ինչպես նաև ժամանակակից աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման համակարգերի զարգացման տեսլականին առնչվող իր մոտեցումները: Մասնավորապես.

ա) Փետրվարի 8-11-ը Ժնևում՝ Շվեյցարիայի Համադաշնությունում, տեղի է ունեցել ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի նախանիստը, որին մասնակցել են Պաշտպանը և Երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով պաշտպանին առընթեր խորհրդի անդամները: Նիստի նպատակն էր քննարկել

[19] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3143 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի զարգացման ուղղությունները և ապահովել նրանց մասնակցության իրավունքը: Այցի շրջանակում նրանք հանդիպումներ են ունեցել նաև ՀՀ դեսպանի և հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով Խորհրդի անդամների այցելությունը կազմակերպվել էր Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի աջակցությամբ:

Շվեյցարիա կատարած աշխատանքային այցի շրջանակում Պաշտպանը Ժնևում հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի գրասենյակի փոխտնօրեն Օկտավիան Բիվոլի հետ: Քննարկմանը մասնակցել է նաև Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը, անդրադարձ է կատարվել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Պաշտպանի աշխատակազմի համագործակցությամբ իրականացվող ծրագրերին, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրներին և դրանց լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

բ) Պաշտպանը Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում մարտի 5-ին հանդիպել է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ:

Պաշտպանը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցեր, անդրադարձ կատարել անձամբ իր և աշխատակազմի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքներին, որոնց ընթացքում ստացվել են քաղաքացիական անձանց շրջանում մահվան, խոշտանգումների, մարմինների անարգման, անդամախեղման և վատ վերաբերմունքի՝ միջազգային իրավունքով արգելված այլ դեպքերի մասին տեղեկություններ: Նշված տեղեկությունները ներառվել են Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում, որը տեղեկությունների իսկությունն ապացուցող խորհրդապահական հատվածով Պաշտպանի կողմից ներկայացվել է մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին և դերակատարներին:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, Պաշտպանը անդրադարձ է կատարել կանանց իրավունքների պաշտպանությանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը, Ստամբուլյան կոնվենցիան վավերացնելու անհրաժեշտությանը, կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ծրագրի իրականացման մանրամասներին, այդ թվում՝ Օվիեդոյի կոնվենցիան Հայաստանի կողմից վավերացնելու հարցին:

Պաշտպանը ներկայացրել է խտրականության, անհանդուրժողականության, ատելության խոսքի դեմ պայքարի, հավաքների ազատության իրավունքի և մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները:

գ) Պաշտպանը Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում մարտի 6-ին հանդիպել է Եվրոպայի խորհրդի ծրագրերի համակարգման տնօրեն Կլաուս Նոյկիրխի հետ:

Զրուցակիցները քննարկել են Պաշտպանի հաստատության և Եվրոպայի Խորհրդի կողմից համատեղ իրականացվող ծրագրերի մանրամասները: Այս համատեքստում Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ բարձր է գնահատում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իր ղեկավարած հաստատության և

Եվրոպայի Խորհրդի միջև ձևավորված երկարամյա և արդյունավետ համագործակցությունը:

Հանդիպման շրջանակում անդրադարձ է կատարվել կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ծրագրին, այդ թվում՝ Օվիեդոյի կոնվենցիան Հայաստանի կողմից վավերացնելու հարցին, կանանց իրավունքների պաշտպանության, ընտանեկան բռնության կանխարգելման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, Ստամբուլյան կոնվենցիան վավերացնելու անհրաժեշտությանը:

Քննարկվել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի հետ կապված հարցեր, ընդգծվել է այդ ոլորտում իրականացվող ծրագրի կարևորությունը: Պաշտպանը ներկայացրել է նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ, խտրականության, անհանդուրժողականության, ատելության խոսքի դեմ պայքարի, հավաքների ազատության իրավունքի և մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները:

դ) Պաշտպանը մարտի 12-ին Վիեննայում մասնակցել է Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների գործակալության կողմից կազմակերպված Հիմնարար իրավունքների ֆորումին (Fundamental Rights Forum):

Միջոցառման շրջանակում տեղի են ունեցել մի շարք պանելային քննարկումներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել մարդու իրավունքներին, խտրականության կանխարգելման, թվայնացման և անվտանգության, սոցիալական համերաշխության ապահովմանն առնչվող հարցերին:

ե) Պաշտպանը Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում հուլիսի 1-ին հանդիպել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Մայքլ Օ'Ֆլահերթիի հետ:

Անահիտ Մանասյանը խոսել է մարդու իրավունքների մի շարք բնագավառներում առկա խնդիրների մասին, անդրադարձ կատարել իրավահավասարության երաշխավորման և հակախտրականության ոլորտում առկա մարտահրավերներին: Այս համատեքստում Պաշտպանն ընդգծել է ատելության խոսքի, խտրականության, անհանդուրժողականության մթնոլորտի հաղթահարման շրջանակներում լայնածավալ աշխատանքներ իրականացնելու կարևորությունը:

Հատուկ անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանը, Պաշտպանի կողմից այդ ոլորտում իրականացված աշխատանքներին: Անահիտ Մանասյանը նշել է, որ բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությունը ենթադրում է առանձնահատուկ մեթոդաբանություն, ինչը պետք է լինի բոլոր մարմինների կողմից այս համատեքստում իրականացվող աշխատանքների առանցքում: Պաշտպանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերին, ընդգծել բոլոր գործընթացների շրջանակներում մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը:

զ) Պաշտպանը Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում հուլիսի 3-ին հանդիպել է Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով գլխավոր տնօրեն Մարյա Ռուտանենի հետ:

Պաշտպանը ներկայացրել է մարդու իրավունքների մի շարք բնագավառներում առկա խնդիրները, անդրադարձ կատարել իրավահավասարության երաշխավորման և հակախտրականության ոլորտում առկա մարտահրավերներին: Այս համատեքստում Պաշտպանն ընդգծել է ատելության խոսքի, խտրականության, անհանդուրժողականության մթնոլորտի հաղթահարման, այս ոլորտում կրթության համակարգի ամբողջական վերափոխման նպատակով լայնածավալ աշխատանքներ իրականացնելու կարևորությունը:

Զրուցակիցներն անդրադարձել են Ստամբուլյան կոնվենցիայի կարևորությանը և վերահաստատել կանանց նկատմամբ և ընտանեկան բռնության կանխարգելմանն ու դրա դեմ պայքարի իրենց հանձնառությունը:

Պաշտպանն ընդգծել է նաև ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման, գենդերային հավասարության երաշխավորման ոլորտում լուրջ աշխատանքներ իրականացնելու կարևորությունը, անդրադարձել՝ իր կողմից նշված բնագավառներում կատարած աշխատանքներին, ընդգծել՝ Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդման առանձնահատկությունը՝ նկատի ունենալով այն, որ վերջինիս շրջանակներում իրավահավասարության և հակախտրականության հարցերը ներկայացված են նոր մեթոդաբանությամբ և ժամանակակից միջազգային չափանիշները նկատի ունենալով:

է) Պաշտպանը սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը Բեռլինում մասնակցել է Զինված ուժերի օմբուդսմանական հաստատությունների՝ «Օմբուդսմանական հաստատությունները և զինծառայողների ընտանիքներին աջակցելու պարտավորությունները» խորագրով 16-րդ միջազգային համաժողովին:

Միջոցառման նպատակն էր վեր հանել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրները, խթանել լավագույն փորձի փոխանակումը, ինչպես նաև ուսումնասիրել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունների դերը զինծառայողների ընտանիքներին աջակցելու հարցերում: Պաշտպանը որպես մոդերատոր է հանդես եկել համաժողովի շրջանակում կազմակերպված՝

զինծառայողների ընտանիքների անդամների աջակցությանն ու խնամքին վերաբերող նիստի շրջանակներում, որտեղ ներկայացրել է իր գործունեության կարևոր ուղղությունները, այդ թվում՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներին վերաբերելի առկա մարտահրավերները, անդրադարձել զինծառայողների ընտանիքների աջակցությանն ուղղված աշխատանքներին, այդ հարցում օմբուդսմանական հաստատությունների դերին:

Պաշտպանն անդրադարձել է զինված հակամարտությունների ազդեցությունը կրած ընտանիքների իրավունքների ապահովմանն ուղղված ջանքերին, խոսել ՀՀ ՄԻՊ հաստատության գործունեության մասին՝ հատուկ ընդգծելով գտնվելու վայրն անհայտ անձանց ճակատագրերը պարզելուն միտված աշխատանքների շարունակականության, գերության մեջ հայտնված անձանց իրավունքների պաշտպանության, նրանց վերադարձի ապահովման կարևորության մասին՝ այս հարցերում շեշտելով մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող կառույցների դերը:

ը) Պաշտպանը դեկտեմբերի 3-6-ն աշխատանքային այցով գտնվել է Սլովենիայում՝ Սլովենիայի օմբուդսման Պետեր Սվետինայի հրավերով մասնակցելու օմբուդսմանական հաստատության 30-ամյակին նվիրված միջազգային համաժողովին և պաշտոնական հանդիպումներին:

Պաշտպանը միջոցառման շրջանակում դեկտեմբերի 5-ին որպես բանախոս է հանդես եկել «Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանություն. Օմբուդսմանական և Մարդու իրավունքների ազգային հաստատությունների ազդեցության ընդլայնման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը» թեմայով առաջին պանելային քննարկմանը:

Պաշտպանը ներկայացրել է իրավահավասարության ոլորտում ՄԻՊ աշխատանքի կարևոր ուղղությունները՝ անդրադառնալով կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին, ատելության խոսքի, գենդերային հավասարության, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի ոլորտներին: Անահիտ Մանասյանը հատուկ ընդգծել է, որ այս բնագավառներում իրականացվող աշխատանքների հիմքով հաճախ է թիրախավորվում հենց իրավաբան մասնագետների, հանրային գործիչների կողմից, ինչը վտանգավոր միտում է:

Պաշտպանը նաև հարցազրույց է տվել Սլովենիայի RTV ազգային հեռուստաընկերության Globus հաղորդաշարին: Անդրադարձ է կատարել Լեռնային Ղարաբաղից էթնիկ հայերի բռնի տեղահանմանը, դրան նախորդող իրադարձություններին, որոնց հետևանքով հայերը ստիպված էին լքել Լեռնային Ղարաբաղը, Ադրբեջանում պահվող հայ գերիների խնդրին, Ադրբեջանում նրանց նկատմամբ իրականացվող գործընթացների՝ միջազգային չափանիշների տեսանկյունից խնդրահարույց լինելուն, խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը, այդ ոլորտում առկա խնդիրներին, սեռով պայմանավորված՝

կանանց թիրախավորման դեպքերին, Հայաստանում դրա տարածվածության պատճառներին և ոլորտին առնչվող այլ հարցերի:

Պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների միջազգային ցանցերի շրջանակներում՝ մասնակցելով միջազգային տարբեր հանդիպումների, հանդես գալով ելույթներով, հաստատությունների կարողությունների ամրապնդմանը և զարգացմանն ուղղված առաջարկություններով, ներկայացնելով Հայաստանի ՄԻՊ հաստատության փորձառությունը:

ա) Բելգիայում հունվարի 23-24-ին Պաշտպանը մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) Առաջնորդության ֆորումին: Քննարկումների օրակարգն ընդգրկում էր մարդու իրավունքներին և իրավունքի գերակայությանն առնչվող մի շարք հարցեր:

Միջոցառմանը մասնակցել է ENNHRI անդամ երկրներից շուրջ 30 ներկայացուցիչ:

բ) Պաշտպանը մարտի 13-ին Վիեննայում մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) Կառավարման խորհրդի նիստին, որտեղ քննարկվել են եվրոպական ցանցի կառավարմանն առնչվող մի շարք հարցեր:

գ) Պաշտպանը Ժնևում մասնակցել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) ամենամյա նիստին:

Դաշինքը հետևում է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գործունեության համապատասխանությանը Փարիզի սկզբունքներին, ինչպես նաև նպաստում է մարդու իրավունքների զարգացմանն ու պաշտպանությանը:

Մայիսի 6-ին տեղի են ունեցել Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների (APF, ENNHRI, NANHRI, RIDHCA) տարածաշրջանային ցանցերի ներկայացուցիչների և Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) Բյուրոյի հանդիպումները, որոնց մասնակցել է նաև Պաշտպանը:

Մայիսի 6-ին կայացել է նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի (ENNHRI) Գլխավոր վեհաժողովի նիստը:

Քննարկման օրակարգում ընդգրկված էին մարդու իրավունքների պաշտպանությանը, իրավունքի գերակայությանն առնչվող մի շարք հարցեր:

դ) Պաշտպանը Ժնևում մայիսի 7-ին մասնակցել Է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) խորհրդի լիագումար նիստին:

Միջոցառման շրջանակում քննարկվել են նաև խոշտանգումների կանխարգելման ու բռնի տեղահանված անձանց, փախստականների իրավունքներին առնչվող հարցեր:

Պաշտպանը ներկայացրել է խոշտանգումներին և վատ վերաբերմունքի այլ ձևերին առնչվող գործերի արդյունավետ քննության կարևորությունը: Պաշտպանն ընդգծել է նշված գործերի քննության առանձնահատկությունների առնչությամբ իրավապահ մարմինների կարողությունների բարելավման և դրան ուղղված համատեղ ծրագրերի մշակման ու իրականացման անհրաժեշտությունը:

Անդրադարձ է կատարվել ՀՀ Պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդի գործունեությանը, որի կազմում ընդգրկված են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

ե) Պաշտպանը օգոստոսի 28-ից 30-ին աշխատանքային այցով գտնվել է Դանիայի Թագավորությունում:

Պաշտպանը Կոպենհագենում մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) Կառավարման խորհրդի անդամների հանդիպմանն ու կառավարման խորհրդի նիստին:

Մասնակիցները, ի թիվս այլնի, քննարկել են ցանցի աշխատանքների, Կառավարման խորհրդի գալիք ընտրությունների, ռազմավարական առաջնահերթությունների, հնարավոր մարտահրավերների հետ կապված հարցեր:

Պաշտպանն ընդգծել է իր հանձնառությունը՝ շարունակելու ակտիվ ներգրավվածությունը հիմնական իրավունքների պաշտպանությանն ուղղված համատեղ աշխատանքներին:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները նույնպես ակտիվորեն մասնակցել են մի շարք միջազգային միջոցառումների և կոնֆերանսների որոնք նպաստել են մարդու իրավունքների պաշտպանության համակարգի զարգացմանը և միջազգային համագործակցության խորացմանը:

ա) Հունիսի 4-5-ին Ստրասբուրգում տեղի է ունեցել «Նախաքննական կալանքի տակ պահվող անձանց կալանքի տակ պահելու իրավունքների և նյութական պայմանների մոնիտորինգի և այլ թեմաների վերաբերյալ» խորագրով աշխատաժողով, որին մասնակցել է նաև Պաշտպանի ներկայացուցիչը: Աշխատաժողովի նպատակն է եղել վեր հանել ոլորտում առկա համակարգային խնդիրները, քննարկել դրանց հնարավոր լուծումները, և մասնակիցներին փորձի փոխանակման հնարավորություն տալ:

բ) Հունիսի 27-ին Սանկտ Պետերբուրգում՝ Ռուսաստանում, կայացած ԱՊՀ Մարդու իրավունքների հանձնաժողովի երկրորդ նիստին մասնակցել է նաև Պաշտպանի ներկայացուցիչը: Նիստի ընթացքում քննարկվել են միգրանտների իրավունքների պաշտպանության հարցերը, միգրացիոն օրենսդրության բարելավման հնարավորությունները, ինչպես նաև ԱՊՀ Մարդու իրավունքների հանձնաժողովի աշխատանքային պլանը:

գ) Հունիսի 30-ից հուլիսի 4-ը Լեհաստանի Գդինյա քաղաքում անցկացվել է մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման հարցերին նվիրված տարածաշրջանային համաժողով, որին մասնակցել է նաև Պաշտպանի ներկայացուցիչը:

Քննարկումների շրջանակում անդրադարձ է կատարվել ապատեղեկատվության սպառնալիքներին և ռիսկերին, ապատեղեկատվության դեմ պայքարի միջոցներին և գործիքակազմին, զինված ուժերում մարդու իրավունքներին, խոշտանգումներին և վատ վերաբերմունքին, ներկայացվել են զինծառայողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ առաջարկություններ:

դ) Մարդու իրավունքների պաշտպանի երիտասարդ ներկայացուցիչները, հուլիսի 1-2-ը Բրատիսլավայում մասնակցել են Երեխաների հարցերով

օմբուդսմանների եվրոպական ցանցի (ENOC) կողմից կազմակերպված Երիտասարդ Խորհրդատուների եվրոպական ցանցի (ENYA) ֆորումին:

Երեխաներին ուղեկցել են Պաշտպանի ներկայացուցիչները:

ե) Հուլիսի 1-2-ը Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպվել էր «Անդրադառնալով ատելության խոսքին և ատելության հիմքով կատարված հանցագործությանը. իրավահավասարության մարմինների դերը բռնության և խտրականության շրջափուլին դիմակայելու հարցում» խորագրով երկօրյա դասընթաց, որին մասնակցել է նաև Պաշտպանի ներկայացուցիչը:

Երկօրյա դասընթացի շրջանակում դասընթացավարները ներկայացրել են ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ վերջին շրջանի զարգացումներն ու մոտեցումները, կազմակերպել են խմբային աշխատանքներ, որոնց ընթացքում մասնակիցները հանդես են եկել ելույթներով, փոխանակվել ատելության խոսքի դեմ պայքարի փորձով՝ ոլորտի կատարելագործմանն ուղղված աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

զ) Սեպտեմբերի 19-20-ը Քիշնևում՝ Մոլդովայի Հանրապետությունում, տեղի է ունեցել «Մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերն ու մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերը ԵՄ անդամակցության և գործընկերության համատեքստում» խորագրով միջազգային համաժողովը, որին մասնակցել են Պաշտպանի ներկայացուցիչները: Միջազգային գործընկերներին ներկայացվել են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները՝ ինչպես հաստատության ընդհանուր մանդատի, այնպես էլ կոնվենցիոն կարգավիճակների շրջանակում՝ ընդգծելով հաստատության պատշաճ գործառութավորման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովվածության կարևորությունը:

է) Սեպտեմբերի 24-25-ը Պաշտպանի ներկայացուցիչը Ստրասբուրգում մասնակցել է «Թմրամիջոցների օգտագործման խանգարումներով ազատությունից զրկված անձանց առողջական վիճակի բարելավում և պաշտպանություն» խորագրով հանդիպմանը, որտեղ վեր են հանվել մի շարք համակարգային խնդիրներ, քննարկվել է լավագույն փորձը և իրականացվել է փորձի փոխանակում:

ը) Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամները հոկտեմբերի 1-3-ը Աթենքում մասնակցել են Աթենական ժողովրդավարության ֆորումի (Athens Democracy Forum) մաս կազմող Պատանիների աթենական ժողովրդավարության ֆորումին (Teens Athens Democracy): Խորհրդի անդամներին ուղեկցել է Պաշտպանի ներկայացուցիչը:

Խորհրդի անդամ երեխաները ևս մեկ անգամ հնարավորություն են ունեցել միջազգային հարթակում ներկայացնելու իրենց տեսակետներն ու դիրքորոշումը ապագայի վրա ներազդող հարցերի առնչությամբ:

թ) 2024 թվականի հոկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի և Ռուսաստանի Դաշնության մարդու իրավունքների հանձնակատարի ներկայացուցիչները համատեղ այց են իրականացրել Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության գլխավոր վարչության Մոսկվա քաղաքի օտարերկրյա քաղաքացիների ժամանակավոր պահման կենտրոն:

Այցի ընթացքում Օմբուդսմանների ներկայացուցիչները հանդիպել են ՌԴ տարածքում առանց թույլտվության բնակվող և ռեադմիսիայի սպասող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ:

Առանձնազրույցների ընթացքում ՀՀ քաղաքացիները բարձրացրել են պատշաճ բժշկական օգնության, այդ թվում՝ դեղորայքի տրամադրման, անձնական հիգիենայի, մերձավոր ազգականներին միմյանցից անջատ պահելու հետ կապված և այլ հարցեր:

ժ) Պաշտպանի ներկայացուցիչը հոկտեմբերի 21-23-ը հայաստանյան պատվիրակության կազմում աշխատանքային այց է իրականացրել Ստոկհոլմ (Շվեդիա):

Պատվիրակության անդամները՝ պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ծանոթացել են Շվեդիայի իրավական համակարգին, փորձառություններին, մարտահրավերներին և հաջողություններին, ինչպես նաև տարբեր կառույցների համագործակցության մեխանիզմներին կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում:

Ուսումնական այցը կարևոր քայլ է Հայաստանի՝ միջազգային չափանիշներին, մասնավորապես Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիային (Ստամբուլի կոնվենցիա) համապատասխանության ճանապարհին:

ի) Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները փորձի փոխանակման այցով դեկտեմբերի 2-6-ը գտնվել են Կոպենհագենում:

Այցը կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի և Մարդու իրավունքների պաշտպանության դանիական հաստատության տնօրեն Լուիս Հոլքի միջև հոկտեմբերի 22-ին կնքված համագործակցության հուշագրի արդյունքում:

Այցի նպատակն էր աջակցել Հայաստանի և Դանիայի մարդու իրավունքների ազգային հաստատությունների համագործակցության ամրապնդմանը:

Այցի ընթացքում մասնակիցները քննարկել են ՀՀ Պաշտպանի հաստատության և Մարդու իրավունքների պաշտպանության դանիական հաստատության համապատասխան լիազորություններն ու աշխատանքային հիմնական ուղղությունները՝ քննարկելով առկա մարտահրավերներն ու համագործակցության հնարավորությունները: Այցը եզրափակվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և Մարդու իրավունքների պաշտպանության դանիական հաստատության միջև ռազմավարական հարցերի շուրջ քննարկումով, ինչի արդյունքում հստակեցվել են համագործակցության հետագա ուղիները և համատեղ միջոցառումները 2025 թվականի համար:

2024 թվականին աշխատանքային այցերի հետ մեկտեղ Պաշտպանն ընդունել է նաև մի շարք բարձրաստիճան միջազգային դերակատարների և օտարերկրյա պատվիրակությունների ներկայացուցիչների, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի նախկին տեղակալ Ֆրանսուազ Տյուլկենին, Միջխորհրդարանական միության գլխավոր քարտուղար Մարտին Չունգոնգի գլխավորած պատվիրակությանը, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի առաքելության Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի տնօրենի պաշտոնակատարի գլխավորած պատվիրակությանը, Եվրոպայի խորհրդի բիոէթիկայի բաժնի ղեկավար

Լորանս Լվոֆֆի գլխավորած պատվիրակությանը, Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության ծրագրերի գլխավոր մասնագետ Քրիստին Օլսոնին և ԵԽ երևանյան գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Մաքսիմ Լոնգանգեին, Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (National Democratic Institute - NDI) հայաստանյան գրասենյակի տնօրեն Կոեն Պուստյենսին և NDI խորհրդարանի ծրագրի ավագ ղեկավար Հովհաննես Հարությունյանին, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի Իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Էլիզաբեթ Վինկելմայեր-Բեքերի գլխավորած պատվիրակությանը, Կանադայի կանանց խաղաղության և անվտանգության հարցերով դեսպան Ժակլին Օնիլին, Ֆրանսիայի Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Անն-Լորանս Պետելի գլխավորած պատվիրակությանը, Եվրոպայի խորհրդի քաղաքական ու արտաքին հարաբերությունների հարցերով տնօրեն Միրոսլավ Պապային, ԱՄՆ Հավայի նահանգի Գերագույն դատարանի դատավոր Թոդ Էդինսին, Եվրոպայի խորհրդի Արդարադատության և մարդու իրավունքների ոլորտում համագործակցության ծրագրերի բաժնի պետի տեղակալ Լիլիթ Դանեղյան-Բոսլերի գլխավորած պատվիրակությանը, ԵԱՀԿ-ում Ֆինլանդիայի մշտական ներկայացուցիչ, դեսպան Վեսա Հակկինենի գլխավորած պատվիրակությանը, Դանիայի Մարդու իրավունքների ինստիտուտի Մարդու իրավունքների, հարևան երկրների և Ասիայի դեպարտամենտի տնօրեն Սառա Ֆորտին և դեպարտամենտի գլխավոր խորհրդական Փոլ Դալթոնին, բրիտանական ՋԼՄ-ների ներկայացուցիչների, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագրերի տնօրենին, Կրթության և վերապատրաստման Ֆրանկոֆոնիայի ինստիտուտի տնօրեն Մոնա Լառուսին, ԱՄՆ Պետքարտուղարության ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով տնօրեն Քրիստոֆեր Ջ. Անդերսոնին, Նիդերլանդների Թագավորության Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի պատվիրակությանը, Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն Քլեր Օվեյի գլխավորած պատվիրակությանը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրենին, Equal Right Trust հիմնադրամի տնօրեն Ջիմ Ֆիցջերալդին և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Էվելին Քոլինսին, Նիդերլանդների Թագավորության Խորհրդարանի նախկին պատգամավոր, Նիդերլանդների աշխատավորական կուսակցության «Ազգային սկաուտական հանձնաժողովի» նախագահ, առաջնորդության և կանանց հարցերի փորձագետ Մարյա Վախենարին, Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչներին, Անհայտ կորած անձանց հարցերով միջազգային հանձնաժողովի (ICMP) գլխավոր տնօրեն Քեթրին Բոմբերգերին և այլն:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են Պաշտպանի գործունեության ուղղությունները՝ մասնավորապես՝ կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, զինված ուժերում, քրեական վարույթի շրջանակում անձանց իրավունքների պաշտպանության, քաղաքացիական և սոցիալ-տնտեսական

իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեմ պայքարի շրջանակներում և մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները: Քննարկվել են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանը, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց ու նրանց ընտանիքների իրավունքների ապահովման վիճակին առնչվող և մի շարք այլ հարցեր:

Օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության շրջանակներում մի քանի համատեղ այցելություններ են իրականացվել Հայաստանի Հանրապետության մարզեր.

ա) Մայիսի 31-ին Պաշտպանը ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի և ՀՀ-ում հավատարմագրված ավելի քան 40 դիվանագիտական ներկայացուցիչների հետ իրականացրել է այց Լոռու մարզի աղետի գոտի, ծանոթացել է վնասված թաղամասերին, առանձնազրույցներ ունեցել քաղաքացիների հետ, լսել նրանց կողմից բարձրաձայնված հարցերը:

Պաշտպանն առանձնազրույցներ է ունեցել ավելի քան 50 բնակիչների, այդ թվում՝ տարհանված ընտանիքների հետ: Տեղում արձանագրվել են բոլոր խնդիրները, հեղեղումների արդյունքում պատճառված վնասները:

բ) Պաշտպանն ու Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, այց են իրականացրել Լոռու մարզի Տաշիր խոշորացված համայնքի Պրիվոլնոյե բնակավայր՝ երեխաների համար կազմակերպելով տոնական միջոցառում:

Բնակավայրի միջնակարգ դպրոցում տեղի ունեցած միջոցառմանը մասնակցել է շուրջ 100 երեխա: Ներկա են եղել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձինք, նաև Ազնավուր հիմնադրամի համահիմնադիր Նիկոլա Ազնավուրը:

գ) Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը օգոստոսի 5-ին համատեղ այց են իրականացրել Տավուշի մարզ:

Անահիտ Մանասյանն ու Ֆրանսուազ Ժակոբն Իջևանում հանդիպում են ունեցել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ: Վերջինս ներկայացրել է մարզում առկա խնդիրները, ինչպես նաև առկա սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Անդրադարձ է կատարվել կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող խնդիրներին, կանանց զբաղվածությանը, բնապահպանական իրավունքներին, բռնի տեղահանված անձանց իրավունքներին վերաբերելի հարցերին: Քննարկվել են նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցեր:

Պաշտպանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողն այցելել են Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, հանդիպում ունեցել տարբեր հասարակական կազմակերպությունների կին ներկայացուցիչների և շահառուների հետ: Ի թիվս այլնի, բարձրաձայնվել են խնդիրներ՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ անձնական օգնականի ծառայությունների տրամադրման, ֆիզիկական միջավայրի մատչելիության, համայնքահեն ծառայությունների հասանելիության, մատչելիության ապահովման և մի շարք այլ հարցերի հետ:

Անահիտ Մանասյանն ու Ֆրանսուազ Ժակոբն այցելել են «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի այլընտրանքային խնամք ստացող երեխաներին:

Պաշտպանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողը «ՍՕՍ Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն Սպարտակ Սարգսյանի ուղեկցությամբ շրջել են տարածքով, ծանոթացել երեխաների խնամքի կազմակերպմանը, իրավունքների ապահովման վիճակին, առանձնազրույցներ ունեցել երեխաների հետ, լսել նրանց մտահոգող հարցերը:

Այց է իրականացվել նաև խնամատար ընտանիք, ուսումնասիրվել են երեխաների խնամքի տրամադրման պայմանները:

2024 թվականին Պաշտպանը շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ ապահովելով մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում իր ակտիվ ներգրավվածությունը: Այդ համագործակցության շրջանակում Պաշտպանի աշխատակազմը նաև իր գրավոր տեղեկատվություններն (inputs) է տրամադրել հետևյալ հատուկ զեկուցողներին (Special Rapporteur) մի շարք զեկույցների պատրաստման համար.

- Մշակութային իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի հատուկ զեկուցող,
- Մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցող,
- Կրթության իրավունքի հարցերով հատուկ զեկուցող,
- Երեխաների վաճառքի, սեռական շահագործման և սեռական բռնության հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ զեկուցող,
- Անցումային արդարադատության հարցերով հատուկ զեկուցող,

Տեղեկատվություն է տրամադրվել նաև **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին**, **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 55-րդ նստաշրջանին՝** ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի հետ երկխոսության ժամանակ, ինչպես նաև **ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի 79-րդ նստաշրջանի զեկույցի պատրաստման համար՝** Օմբուդսմանական հաստատությունների դերի վերաբերյալ մարդու իրավունքների խթանման, իրավունքի գերակայության և լավ կառավարման հարցերի առնչությամբ:

Առանձնակի կարևորություն են ներկայացնում նաև Պաշտպանի մի քանի այլընտրանքային զեկույցներ, որոնք մշակվել և ներկայացվել են համապատասխան մարմիններին: Դրանցից են **Պաշտպանի այլընտրանքային զեկույցը Ռասայական խտրականության վերացման կոմիտեին՝ Հայաստանի Հանրապետության տասներկուերորդից տասնչորսերորդ զեկույցի վերաբերյալ**, **Պաշտպանի այլընտրանքային զեկույցը (Չորրորդ փուլ) ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) շրջանակներում** (չորրորդ շրջանի ազգային զեկույցը) և **Պաշտպանի այլընտրանքային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և դրա կամընտիր արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վերաբերյալ:**

Պաշտպանը նաև նոյեմբերի 11-ին Ազգային ժողովում մասնակցել է խորհրդարանական լսումների՝ «ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) ընթացակարգի շրջանակներում ՀՀ չորրորդ ազգային զեկույցում երեխայի իրավունքների վերաբերյալ ներկայացվելիք հարցերը» թեմայով: Քննարկումը նախաձեռնել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը՝ հաշվի առնելով, որ 2025 թվականին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում տեղի է ունենալու Համընդհանուր պարբերական դիտարկման չորրորդ շրջանի՝ Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցի քննարկումը: Իր խոսքում Պաշտպանն անդրադարձել է երեխաների իրավունքներին առնչվող մի շարք խնդիրների, որոնք զետեղվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան, արտահերթ հրապարակային զեկույցներում, ինչպես նաև ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացված այլընտրանքային զեկույցում:

2024 թվականին Պաշտպանը շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ տարբեր ծրագրերի շրջանակներում, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Եվրոպական միության (ԵՄ), Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), Միավորված ազգերի միջազգային մանկական ճգնաժամային հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի (ՄԱԿԲՀ), Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ), Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպանության, Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության, ինչպես նաև մի շարք այլ միջազգային գործընկերների հետ: Օրինակ՝

ա) Պաշտպանի աշխատակազմը հանդիսանում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2023-2026թթ. Գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող **«Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II»**[20] ծրագրի գործընկեր:

Շարունակելով համագործակցությունը ծրագրի շրջանակներում՝ Պաշտպանը 2024 թվականի փետրվարի 7-ին մասնակցել է «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II» ծրագրի համակարգման խորհրդի

[20] Հասանելի է «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II» https://www.coe.int/hy/web/yerevan/protection-of-human-rights-in-biomedicine-ii հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

երկրորդ նիստին: Միջոցառման նպատակն էր քննարկել Օվիեդոյի կոնվենցիայի հնարավոր վավերացմանն առնչվող հարցեր՝ համախմբելով ծրագրի գործընկերներին, դերակատարներին ու փորձագետներին, ներկայացնել համագործակցության ուղղություններն ու առաջնահերթությունները:

Ծրագրի շրջանակներում ապրիլի 13-ին և 14-ին նաև կազմակերպվել է Օվիեդոյի կոնվենցիայի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման երկօրյա դասընթաց:

Դասընթացի նպատակն էր բարձրացնել Եվրոպայի խորհրդի՝ կենսաբանության և բժշկության կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիայով (Օվիեդոյի կոնվենցիա) ամրագրված մարդու իրավունքների և էթիկայի սկզբունքների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմի կարողություններն ու հմտությունները:

Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով՝ սեպտեմբերի 8-ից 12-ը Պաշտպանի ներկայացուցիչներն ուսումնական այցով գտնվել են Ֆրանսիայում:

Հանդիպումներ են կազմակերպվել ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացուցիչների հետ, կազմակերպվել են քննարկումներ տեղահանված բնակչության խնդիրների, իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի, ինչպես նաև կենսաբժշկության մեջ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Ուսումնական այցն իրականացվել է «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II» և «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում» ծրագրերի շրջանակներում:

բ) Կարևորագույն իրադարձություններից էր նաև Պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ կազմակերպված երկօրյա բարձր մակարդակի միջազգային համաժողովը՝ «Օմբուդսմանական/ Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն և մարտահրավերներ» խորագրով:

Հոկտեմբերի 21-22-ն անցկացված միջոցառմանը մասնակցել են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ՄԻՊ հաստատությունների և իրավահավասարության մարմինների ղեկավարներ և ներկայացուցիչներ ավելի քան 15 պետություններից:

Միջոցառումը կազմակերպվել է Պաշտպանի աշխատակազմի կողմից՝ Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ: Այն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Համագործակցության ծրագրերի բաժնի **«Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում»**[21], Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի **«Գործընկերություն**

[21] Տե՛ս «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/strengthening-human-right-safeguards-for-the-displaced-population-in-armenia հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրերի հետ համագործակցությամբ՝ Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող **«Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում»**[22] ծրագրի շրջանակներում:

Միջոցառման կարևորագույն հատվածներից էր հոկտեմբերի 22-ին Պաշտպանի և Մարդու իրավունքների պաշտպանության դանիական հաստատությունների միջև ստորագրված համագործակցության հուշագրի ստորագրումը: Հուշագիրը ստորագրել են Պաշտպանը և Մարդու իրավունքների պաշտպանության դանիական հաստատության տնօրեն Լուիս Հոլքը:

գ) 2024 թվականին Պաշտպանի աշխատակազմը շարունակել է գործընկեր հանդիսանալ նաև Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026թթ. ծրագրի շրջանակներում իրականացվող **«Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում»**[23] ծրագրին:

Պաշտպանը հունիսի 21-ին բացման խոսքով հանդես է եկել «Մարդու իրավունքները զինված ուժերում» ՀԵԼՓ դասընթացի հայկական տարբերակի մեկնարկի միջոցառմանը: Ներկայացվել են ՀԵԼՓ դասընթացի վերջին զարգացումները, «Մարդու իրավունքները զինված ուժերում» ՀԵԼՓ դասընթացի հայկական տարբերակի մշակումը, տեղայնացումը և այլն: Միջոցառման ընթացքում գրանցվել է վերապատրաստվողների առաջին 25 հոգանոց խումբը, ներառյալ՝ Պաշտպանի կողմից առաջադրված 5 ներկայացուցիչ:

Պաշտպանը սեպտեմբերի 26-ին մասնակցել է նաև Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում անցկացվող Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից կայացված վճիռների կատարման վերաբերյալ միջգերատեսչական աշխատաժողովին: Քննարկվել են զինված ուժերում ինքնասպանության նախականխման և արդյունավետ քննությանն առնչվող հարցեր, և այս համատեքստում՝ պետության ստանձնած պարտավորությունները: Աշխատաժողովի նպատակն էր խթանել Մուրադյանն ընդդեմ Հայաստանի խումբ գործերով Հայաստանի Հանրապետության առջև դրված խնդիրների լուծումը:

---

[22] Տե՛ս «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/promoting-equality-and-non-discrimination-in-armenia հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[23] Տե՛ս «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/fostering-human-rights-in-the-armed-forces-in-armenia հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանը դեկտեմբերի 13-ին բացման խոսքով է հանդես եկել Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում անցկացվող Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից կայացված վճիռների կատարման վերաբերյալ միջգերատեսչական աշխատաժողովին: Քննարկման առարկա է դարձվել «Առողջապահական ծառայությունների բարելավումը Հայաստանի զինծառայողների համար» թեման:

Պաշտպանի առաջարկությամբ Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակը ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 20-ին կազմակերպել է «Այլընտրանքային ծառայությունը Հայաստանում. մարտահրավերներ և լուծումներ» թեմայով կլոր-սեղան քննարկում: Քննարկման առարկա են դարձել դավանանքի կամ համոզմունքների հիմքով զինծառայությունից հրաժարվող անձանց իրավունքների վերաբերյալ մի շարք հարցեր: Միջոցառման ընթացքում վեր են հանվել այլընտրանքային ծառայության վերաբերյալ իրավակարգավորումների և պրակտիկայի լավարկման հնարավոր քայլերը, ներկայացվել՝ Հայաստանում այլընտրանքային ծառայության հետ կապված մարտահրավերներն ու լուծումները և այդ համատեքստում միջազգային իրավական չափորոշիչները:

դ) Պաշտպանը հունիսի 25-ին կազմակերպել է քննարկում՝ կրթական հաստատությունների դերն ատելության խոսքի դեմ պայքարում թեմայով, որի նպատակն էր բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ քննարկել ատելության խոսքը կարգավորող չափանիշները, կրթական հաստատությունների դերը ատելության խոսքի դեմ պայքարում և կրթական հաստատություններում ատելության խոսքին հակազդելու ներքին մեխանիզմների ներդրման հետագա քայլերը: Քննարկումը հանդիսացել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի **«Գործընկերություն հանուն լավ կառավարման»** համատեղ ծրագրի մի մասը, որը համաֆինանսավորվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից և իրականացվել է Եվրոպայի խորհրդի կողմից՝ **«Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում»**[24] ծրագրի շրջանակներում:

Պաշտպանը հունիսի 27-ին բացման խոսքով է հանդես եկել հավասարության և խտրականության դեմ թեմայով վերապատրաստման դասընթացի մեկնարկի միջոցառմանը:

Դասընթացը նույնպես հանդիսացել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի մի մասը՝ համաֆինանսավորվելով Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից և իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից՝ «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Այն կազմակերպվել է Ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների համար, որի նպատակն էր՝ բարելավել նրանց գործունեությունը խտրականության, ատելության և ռասիզմի դեմ պայքարելու ուղղությամբ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան:

---

[24] Տե՛ս «ԳԼԿ III. Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/promoting-equality-and-non-discrimination-in-armenia հղումով, 2025 թվականի 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ե) ԵՄ մի շարք համագործակցության ծրագրերի ֆինանսավորման շնորհիվ հնարավոր է դարձել իրականացնել 2023 թվականի Պաշտպանի տարեկան հաղորդման անգլերեն թարգմանությունը:

Այն իրականացվել է մասնավորապես՝ «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում», «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում - Փուլ 2», «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում», «Աջակցություն դատաիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում», «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում», «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում», «Հայաստանում մարդու սոցիալական իրավունքների ամրապնդում», «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» և «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրերի ֆինանսավորմամբ[25]:

Հաղորդման 17-րդ բաժնի 2-րդ գլխի անգլերեն թարգմանությունը (ԼԳԲՏ անձանց իրավունքներ) տրամադրվել է COC Nederland-ի կողմից:

զ) Պաշտպանը հունիսի 17-ին մասնակցել է «Փախստականների պաշտպանության և ինտեգրման ամրապնդում Հայաստանում. մարտահրավերներ, ռազմավարություններ և համագործակցություն» թեմայով պանելային քննարկմանը, որն իրականացվել է **«Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում»**[26] ծրագրի շրջանակներում:

Հոկտեմբերի 8-9-ը Ծաղկաձորում անցկացվել է լրագրողների համար վերապատրաստման դասընթաց՝ «Ատելության խոսքի դեմ պայքարի եվրոպական չափանիշներն ու լավագույն փորձը» թեմայով: Այն նույնպես կազմակերպվել է Պաշտպանի աշխատակազմի և ԵՄ երևանյան գրասենյակի հետ համատեղ՝ «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում» և «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» տեղական ծրագրերի շրջանակներում:

է) «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի աջակցությամբ, հունվարի 12-ին և 13-ին կազմակերպվել է «Փաստահավաք առաքելության կարողությունների զարգացում» խորագրով աշխատաժողով, որի նպատակն էր զարգացնել Պաշտպանի աշխատակազմի՝ փաստահավաք աշխատանքներ իրականացնելու կարողությունները:

---

[25] Տե՛ս «Ընթացիկ ծրագրեր», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/ongoing-projects հղումով, 2025 թվականի 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[26] Տե՛ս «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/strengthening-human-right-safeguards-for-the-displaced-population-in-armenia հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ծրագրային համագործակցության կարևոր արդյունք է հանդիսանում նաև «Ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջությունն ու վերարտադրողական իրավունքը ՀՀ-ում» ուսումնասիրությունը, որը ներկայացվել է Պաշտպանի նախաձեռնությամբ՝ փետրվարի 26-ին տեղի ունեցած ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջության ու վերարտադրողական իրավունքի իրացման վերաբերյալ քննարկման ընթացքում: Ուսումնասիրությունը պատրաստվել է Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի կողմից:

ը) Պաշտպանը հուլիսի 17-ին մասնակցել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող **«Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում»**[27] ծրագրի բացման արարողությանը:

Ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանության խթանմանը փորձագիտական խորհրդատվության, կարողությունների զարգացման քաղաքականության զարգացման և հանրային իրազեկման միջոցով: Դրա շրջանակը ենթադրում է կարևորագույն հարցերի հասցեագրում, ինչպիսիք են՝ խտրականության բացառումը, խոշտանգումների կանխարգելումը, անվճար իրավաբանական օգնությունը և սահմանադրական բարեփոխումները՝ 2023-2025 թթ. Մարդու իրավունքների գործողությունների ծրագրի և մոնիթորինգի ու գնահատման շրջանակի ամրապնդման հատուկ շեշտադրմամբ:

Ծաղկաձորում սեպտեմբերի 27-28-ն անցկացվել է «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ոչ հոժարակամ բուժման ենթարկելու, ինչպես նաև նրանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու դատավարական ընթացակարգերում առաջացող խնդիրները» թեմայով քննարկում: Միջոցառման ընթացքում քննարկվել են հոգեբուժական կազմակերպություններում անձանց իրավունքների ապահովման վիճակը, անդրադարձ է կատարվել նրանց կենցաղային պայմաններին: Ներկայացվել են Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկմամբ ոչ հոժարակամ և հարկադիր բուժման ոլորտում վեր հանված խնդիրներն ու օրենսդրական բացերը, քննարկման միջոցով մշակվել են լուծման առաջարկություններ: Անդրադարձ է կատարվել անձին ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու վերաբերյալ պահանջի քննության հետ կապված խնդիրներին:

Պաշտպանը, միանալով «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա միջազգային քարոզարշավին, նոյեմբերի 25-ին մասնակցել է գենդերային թեմատիկ խմբի ընդլայնված հանդիպման շրջանակում կազմակերպված պանելային քննարկման, որի նպատակն էր անդրադառնալ Ընտանեկան բռնության

---

[27] Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանութան խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի բացման արարողությունը», հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3064 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

օրենքի ընդունումից հետո իրականացված աշխատանքներին և նախանշել առաջիկա հինգ տարիների հիմնական առաջնահերթություններն ու գործողությունները՝ դիտարկելով դրանք օրենքի նոր փոփոխությունների լույսի ներքո և առանձնացնելով այն խնդիրները, որոնց առնչվում են կանայք հումանիտար ճգնաժամերի ժամանակ:

Մարդու իրավունքների միջազգային օրը՝ դեկտեմբերի 10-ին, Պաշտպանի նախաձեռնությամբ կազմակերպվել է քննարկում «Մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերը մարդու իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում. արդի մարտահրավերները» թեմայով, որը նույնպես իրականացվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:

Միջոցառման շրջանակներում տրվել է նաև Մարդու իրավունքների ձմեռային դպրոցի մեկնարկը, որը նույնպես իրականացվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող վերոնշյալ ծրագրի շրջանակներում:

Նույն ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 10-ին՝ «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա քարոզարշավի վերջին օրը, տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստը:

Նիստի ընթացքում ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու դրանց պաշտպանության համատեքստում կրթության դերի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները:

Ծրագրի շրջանակներում Պաշտպանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 23-ին տեղի է ունեցել քրեակատարողական հիմնարկներում և ձերբակալվածների պահման վայրերում հատուկ միջոցների, ֆիզիկական ուժի և զենքի գործադրման հիմնախնդիրների վերաբերյալ քննարկում: Պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակում ներկայացվել է ոլորտի վերաբերյալ արտահերթ զեկույցը: Աշխատաժողովի ընթացքում մասնակիցները ներկայացրել են նաև պրակտիկայում հաճախ հանդիպող խնդիրները և համատեղ քննարկվել են դրանց լուծման ճանապարհները:

թ) Պաշտպանի աշխատակազմն ապրիլի 9-ին պաշտոնապես գործարկել է հանրային հաստատությունների համար Գենդերային հավասարության պարգևադրոշմի (ԳՀՊ) ներդրման գործընթացը:

Գենդերային հավասարության պարգևադրոշմի (ԳՀՊ) ներդրման գործընթացը առաջին անգամ է պաշտոնապես գործարկվում Հայաստանի Հանրապետությունում, իսկ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը մարդու իրավունքների

պաշտպանության առաջին ազգային հաստատությունն է, որն անցել է պարգևադրոշմի ներդրման համար գնահատումը:

Գենդերային հավասարության պարգևադրոշմի գործընթացն իրականացվում է **Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Լավ կառավարման հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության, պետական կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ»**[28] ծրագրի շրջանակում:

Գենդերային հավասարության պարգևադրոշմը հատուկ մշակված մեթոդաբանություն է, որի նպատակն է աջակցել պետական մարմիններին 2030 թվականի ՄԱԿ-ի Կայուն զարգացման 5-րդ նպատակների՝ գենդերային հավասարության վերաբերյալ դրույթները ներքին իրավական ակտերում ամրագրելու՝ որդեգրելով գենդերազգայուն մոտեցումներ լիազորություններն իրականացնելիս: Այս ամենի հիմնական նպատակն է՝ խթանել կանանց ու տղամարդկանց իրավահավասարությունը պետական համակարգի լավարկման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նոյեմբերի 13-ին Պաշտպանի աշխատակազմի համար անցկացվել է Գենդերային հավասարության պարգևադրոշմի վերաբերյալ վերապատրաստման դասընթաց:

Դասընթացի ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են գենդերային հավասարության պարգևադրոշմի համատեքստում՝ ռազմավարական ուղղությունները, գենդերային բաղադրիչի դիտարկումը հանրային ինստիտուտների գործունեության և քաղաքականությունների մակարդակում, ինչպես նաև գենդերային հավասարության պարգևադրոշմի շրջանակը հանրային ինստիտուտների համատեքստում:

ժ) Համագործակցությունը շարունակվել է նաև Պաշտպանի և Միավորված ազգերի կազմակերպության **Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ,** որի հետ համատեղ նոյեմբերի 19-ին կազմակերպվել է «Սահմանափակումներ և հնարավորություններ. Փախստականների և ապաստան հայցողների մարտահրավերները Հայաստանում» թեմայով աշխատաժողովը:

Մասնակիցներն անդրադարձել են փախստականների իրավունքների պաշտպանությանն առնչվող հիմնական մարտահրավերներին և դրանց հաղթահարման լավագույն փորձին, վերջիններիս իրավունքների ոլորտում ձեռքբերումներին և առկա մարտահրավերներին, մեր երկրում նրանց իրավունքների պաշտպանության ներկա վիճակին, օրենսդրական բացերին:

ի) Պաշտպանը՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ, հունիսի 26-ին կազմակերպել է Խոշտանգումների զոհերի աջակցության օրվան նվիրված վերապատրաստման դասընթաց՝ պետական իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են Կանխարգելման ազգային մեխանիզմի մանդատը և գործառույթները, Խոշտանգման հասկացությունը ներպետական իրավական համակարգում և միջազգային

[28] Տե՛ս «Պաշտպանի աշխատակազմում պաշտոնապես գործարկվել է հանրային հաստատությունների համար Գենդերային հավասարության պարգևադրոշմի ներդրման գործընթացը», հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2908 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

փաստաթղթերում, Խոշտանգումների կանխարգելման ոլորտի միջազգային փաստաթղթերը, ԽԿԿ (Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե) չափանիշները, ոլորտի ՄԻԵԴ վճիռները, ոչ հոժարակամ բուժումը, հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի, զսպման և հարկադրանքի այլ միջոցների կիրառումը, ազատությունից զրկման վայրեր ընդունվելիս անձանց առաջնային բժշկական զննությունը՝ որպես վատ վերաբերմունքի կանխարգելման կարևոր բաղադրիչ և այլն:

Դասընթացը կազմակերպվել է ՄԱԶԾ աջակցությամբ՝ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորվող **«Դիմակայունություն բոլորի համար»** ծրագրի շրջանակում:

Ծրագրի շրջանակներում հունիսի 28-ից 29-ն Աղվերանում կազմակերպվել է նաև Խոշտանգումների զոհերի աջակցության օրվան նվիրված երկօրյա վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում քննարկվել են ոլորտում առկա խնդիրները և ըստ գերատեսչությունների՝ դրանց պատշաճ հասցեավորումը:

Դասընթացներին մասնակցել են ներկայացուցիչներ Գլխավոր դատախազությունից, Քննչական կոմիտեից, Առողջապահության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Ներքին գործերի նախարարություններից, Քրեակատարողական ծառայությունից «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ից:

ի) **«Ուժեղացնելով Արևելյան հարևանության կայունությունը» ծրագրի շրջանակներում** Պաշտպանը փետրվարի 2-ին մասնակցել է ազգային փոքրամասնությունների կանանց հզորացմանը նվիրված «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» խորագրով միջոցառմանը, որի նպատակն էր քննարկել այն խնդիրները, որոնց տարբեր իրավիճակներում բախվում են Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների կին ներկայացուցիչները:

լ) **Ռաուլ Վալենբերգ մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի** հետ նույնպես շարունակվել է ակտիվ համագործակցությունը.

Պաշտպանի աշխատակազմը մայիսի 2-ին և 3-ին Ռաուլ Վալլենբերգի անվան երևանյան գրասենյակի հետ համատեղ իրականացրել է Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված հանդիպում-քննարկում:

Հանդիպման ընթացքում քննարկվել է Կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից իրականացվող քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկման այցերի ստուգաթերթի՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանությունը, նոր հարցաշարի կազմումը:

Սեպտեմբերի 23-24-ը Պաշտպանի աշխատակազմը Ռաուլ Վալլենբերգի անվան ինստիտուտի երևանյան գրասենյակի հետ համատեղ իրականացրել է Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված հանդիպում-քննարկում:

Հանդիպման նպատակն էր քննարկել Կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից իրականացվող քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկման այցերի համար ստեղծված ստուգաթերթերը՝ կիրառման գործիքակազմը, դրանց առավել արդյունավետ օգտագործման մանրամասները:

Համատեղ համագործակցության արդյունքում դեկտեմբերի 3-4-ը նույնպես իրականացվել է երկօրյա սեմինար՝ խոշտանգումների կանխարգելման ոլորտում առկա խնդիրների և մարտահրավերների վերաբերյալ:

Քննարկման ընթացքում փորձագետները ներկայացրել են խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ միջազգային լավագույն փորձը, նախադեպային որոշումները, հայաստանյան օրենսդրությունը, նշված գործերում ապացույցների կիրառումը, բժշկական և իրավական տեսանկյունից խոշտանգումների փաստագրման համար տեղեկություններ հավաքելու կարևորությունը:

խ) Պաշտպանը «Ժամանակն է գործելու. կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում» խորագրով ամփոփիչ համաժողովի շրջանակներում մայիսի 23-ին մասնակցել է պանելային քննարկման, որը կազմակերպվել էր **«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի** կողմից: Հանդիպմանը քննարկվել են հարցեր՝ կապված Հայաստանում կանանց առաջնորդության, հասարակական և քաղաքական կյանքում նրանց մասնակցության հետ: Մասնակիցները կիսվել են իրենց անձնական փորձով, հաջողության հասնելու գաղափարներով և ռազմավարություններով:

ծ) Պաշտպանի աշխատակազմը շարունակել է իր համագործակցությունը **Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության (ԿԽՄԿ)** հետ, որի արդյունքներից է եղել աշխատակազմի ներկայացուցիչների համար հոկտեմբերի 7-10-ն անցկացված վերապատրաստման դասընթացը՝ «Արդյունավետ հաղորդակցություն և սթրեսի կառավարում անհայտ կորած անձանց ընտանիքներին աջակցելու նպատակով» թեմայով:

Միջոցառումը կազմակերպվել էր ԿԽՄԿ աջակցությամբ՝ Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով:

կ) Պաշտպանը ապրիլի 16-ին մասնակցել է «Կին առաջնորդների թիրախավորումն առցանց հարթակներում» թեմայով պանելային քննարկմանը և հանդես է եկել հիմնական ելույթով:

Պանելային քննարկումը կազմակերպվել էր **Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից**՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսավորմամբ և Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի հետ համագործակցությամբ:

հ) Պաշտպանը հունիսի 17-ին մասնակցել է «Քաղաքացիական հասարակության ներգրավումը Հայաստանի բարեփոխումների օրակարգում» թեմայով համաժողովին: **«Քաղաքացիական հասարակության զարգացման ազդեցության ընդլայնում»** ծրագիրն իրականացվում է **Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ**:

Միջոցառման նպատակն էր համախմբել Երևանում և ՀՀ մարզերում գործող հասարակական կազմակերպություններին, Կառավարության ներկայացուցիչների հետ միասին քննարկելու Հայաստանի ընթացիկ բարեփոխումների օրակարգը:

6. Գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը

2024 թվականի ընթացքում ևս հատուկ ուշադրություն է դարձվել Մարդու իրավունքների պաշտպանի ու աշխատակազմի ներկայացուցիչների աշխատանքի հրապարակայնությանը տարբեր ոլորտներում: Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում արդեն հաստատված համագործակցություն է ունեցել զանգվածային լրատվության միջոցների ու լրագրողների հետ՝ առանցքային

կարևորություն տալով վերջիններիս հետ պարբերական հանդիպումներին, հարցազրույցներին ու հաղորդակցման այլ ուղիներին ու երաշխավորելով իր գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մասնակցությամբ կազմակերպվել է մոտ 50 հարցազրույց, այդ թվում՝ տաղավարային հաղորդաշարեր: Պաշտպանն ունեցել է 40-ից ավել հրապարակային այց ու մի շարք ելույթներ, որոնք լուսաբանվել են ՄԻՊ աշխատակազմի կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում պարբերաբար կազմակերպել է նաև տարաբնույթ հանդիպումներ երեխաների, ուսանողների և այլ շահագրգիռ խմբերի հետ, որի ընթացքում ներկայացվել են Պաշտպանի իրավասությունը, աշխատանքի սկզբունքները, գործունեության ուղղությունները և մարդու իրավունքներին վերաբերելի տարատեսակ հարցեր:

Որպես 2024 թվականի կարևորագույն ձեռքբերում հիշատակման է արժանի 2024 թվականին Միավորված Ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը վստահելիության և անկախության A դասի բարձրագույն կարգավիճակի շնորհումը:

Նման կարգավիճակ շնորհվում է այն օմբուդսմաններին և մարդու իրավունքների ազգային հաստատություններին, որոնք համապատասխանում են մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության համար սահմանված սկզբունքներին, անկախ են, վստահելի և դրսևորում են մարդու իրավունքներին առնչվող խնդիրներն արդյունավետորեն ուսումնասիրելու և լուծելու կարողություն:

Ենթահանձնաժողովն ուսումնասիրել է Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը, որի արդյունքում հաստատել է, որ Հայաստանի Պաշտպանի ինստիտուտը գործում է Փարիզյան սկզբունքների համաձայն և համապատասխանում է բարձրագույն կարգավիճակ ստանալու չափանիշներին:

Ի թիվս այլնի, ուսումնասիրության առարկա են դարձել Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդումը, մարդու իրավունքներին առնչվող զգայուն հարցերը հրապարակայնորեն հասցեավորելու հանգամանքը և այլն: 2023-2024թթ. Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ իրավասու պետական մարմինների հետ ակտիվ քննարկումների առարկա են դարձել 2019 թվականին Հավատարմագրման ենթահանձնաժողովի կողմից Հայաստանի ՄԻՊ հաստատությանը տրված հանձնարարականները՝ վերաբերելի ոլորտներում օրենսդրական փոփոխություններ կատարելու առնչությամբ, մշակվել և քննարկվել են համապատասխան նախագծային տարբերակներ:

Մարդու իրավունքների պաշտպանն իր հերթին հրապարակայնորեն հայտնել է հանձնառություն՝ Հավատարմագրման ենթահանձնաժողովի կողմից ներկայացված հանձնարարականների հետագա իրացման հարցերի առումով հետևողական լինելու տեսանկյունից:

A դասի կարգավիճակը բարձրացնում է ոչ միայն Մարդու իրավունքների պաշտպանի, այլև տվյալ երկրի հեղինակությունը միջազգային հարթակներում: Նման կարգավիճակ ստացած Պաշտպանները հնարավորություն են ստանում լիակատար մասնակցություն ունենալու Միավորված ազգերի կազմակերպության մարմիններում

և մի շարք այլ հեղինակավոր միջազգային կառույցներում, ինչպես նաև ընդգրկվելու դրանց կառավարման մարմիններում:

2024 թվականի փետրվարի 7-ին Մարդու իրավունքների պաշտպանը ընտրվել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) Կառավարման խորհրդի անդամ: Հարկ է նկատել, որ բացառապես «A» կարգավիճակ ունեցող մարդու իրավունքների ազգային հաստատությունների ներկայացուցիչներն են ընդգրկվում Կառավարման խորհրդի կազմում: Պետք է ընդգծել, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն առաջին անգամ է ներկայացվել եվրոպական ցանցի կառավարման մարմնում[29]:

Նշվածի հետ մեկտեղ, Հայաստանի ՄԻՊ հաստատության նկատմամբ վերաբերմունքի որոշ դրսևորումների առումով մտահոգություն է հայտնել Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը (ENNHRI)՝ ընդգծելով, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանն ու աշխատակազմը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվող գործունեության պատճառով ենթարկվում են քաղաքական գործիչների կողմից սպառնալիքների և հարձակումների: Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցը վերահաստատել է իր աջակցությունը Մարդու իրավունքների պաշտպանին՝ Հայաստանում մարդու բոլոր իրավունքները խթանելու և պաշտպանելու իր աշխատանքում:

Ըստ Եվրոպական ցանցի՝ հարձակումները, որոնց բախվում են Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմը, ներառում են բանավոր ձևաչափով ոտնձգություններ, գենդերային և էթնիկական հիմքով ատելության խոսք, սպառնալիքներ և ինստիտուտին քաղաքացիների դիմելը և հաղորդումներ ներկայացնելը խոչընդոտելու փորձեր: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանը թիրախավորված է հատկապես այն պատճառով, որ ինստիտուտը ներգրավված է խոցելի իրավիճակներում գտնվող խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց և ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության գործում: Ընդ որում՝ ըստ ցանցի՝ նշված ոլորտներում Պաշտպանն իր գործունեությունն իրականացնում է միջազգային չափանիշներին համահունչ:

Այս շարունակական ոտնձգությունները և ինստիտուտի լայն մանդատին անհարկի միջամտությունը, ըստ ցանցի, հանգեցնում են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իր գործունեությունն իրականացնելու միջավայրի վատթարացման: Բացի այդ, քաղաքական գործիչների այս գործողությունները մտահոգություններ են առաջացնում ինստիտուտի աշխատակազմի և ղեկավարության անվտանգության տեսանկյունից: Ի վերջո, Հայաստանի Մարդու

[29] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2809 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրավունքների պաշտպանի նկատմամբ այս հարձակումները մտահոգիչ են ինչպես հանրային վստահության, այնպես էլ ՄԻՊ-ին դիմելու և հաղորդումներ ներկայացնելու տեսանկյունից, այն դեպքում, երբ այս ինստիտուտն առանցքային դեր է խաղում Հայաստանում անհատների իրավունքների պաշտպանության և խթանման գործում:

Եվրոպական ցանցը, այս առումով հատուկ ընդգծել է, որ Փարիզյան սկզբունքներին լիովին համապատասխանող Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ուժեղ հաստատությունը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության հենասյուն է, որն առանցքային դեր է խաղում ազգային մակարդակում մարդու իրավունքների իրականացման հարցում:

Ի թիվս այլնի՝ Փարիզյան սկզբունքների հիմնարար պահանջն այն է, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունը պետք է կարողանա գործունեություն իրականացնել՝ առանց քաղաքական միջամտության: Փարիզյան սկզբունքները պահանջում են, որպեսզի մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատություններն իրավասու լինեն կարծիք ներկայացնելու մարդու իրավունքների խախտման ցանկացած իրավիճակի վերաբերյալ, որն իրենք են որոշում հասցեավորել: Այս համատեքստում Հավատարմագրման ենթահանձնաժողովն ընդգծել է, որ կենսական նշանակություն ունի մարդու իրավունքների ազգային հաստատությունների կարողությունների հզորացման համար երաշխիքների ապահովումը՝ նպատակաուղղված մարդու իրավունքներին վերաբերելի քննադատական վերլուծություն և մեկնաբանություններ կատարելուն, հաստատության ղեկավարության անկախությունը երաշխավորելուն և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների նկատմամբ հանրային վստահության խթանմանը: Սա ենթադրում է՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության աշխատակազմի և որոշումներ կայացնող մարմնի պաշտպանվածությունը պատասխանատվությունից այն գործողությունների համար, որոնք նրանք կատարել են իրենց պաշտոնեական լիազորությունների շրջանակներում:

Ավելին, Հավատարմագրման ենթահանձնաժողովն ընդգծել է, որ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները պետք է իրավասու լինեն դիտարկելու և որոշելու ինստիտուտի ռազմավարական առաջնահերթությունները և գործունեությունը՝ հիմքում ունենալով բացառապես երկրում մարդու իրավունքների՝ իր կողմից որոշված առաջնահերթությունները՝ զերծ լինելով որևէ քաղաքական միջամտությունից:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հատուկ շեշտել է, որ Մարդու իրավունքների պաշտպանը և նրա աշխատակազմը չպետք է ենթարկվեն որևէ ճնշումների կամ ահաբեկման, ներառյալ՝ քաղաքական ճնշումները, ֆիզիկական ահաբեկումը կամ ոտնձգությունը՝ իրենց մանդատի շրջանակում իրականացվող գործողությունների հետևանքով, այդ թվում՝ անհատական գործերի կամ համակարգային խախտումների մասին հաղորդումներ ներկայացնելիս:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան նաև կոչ է արել պետություններին անհապաղ և հանգամանալից քննության առարկա դարձնել մարդու իրավունքների ազգային հաստատությունների անդամների կամ աշխատակիցների, ինչպես նաև նրանց հետ համագործակցող կամ համագործակցելու ցանկություն ունեցող անձանց նկատմամբ

ենթադրյալ ճնշումների կամ ահաբեկումների դեպքերը, և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

Եվրոպական ցանցը իր մտահոգություն է հայտնել առ այն, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի դեմ վերջին սպառնալիքներն ու հարձակումները հակասում են ազգային, տարածաշրջանային և միջազգային չափանիշներին ու ընդգծել, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ինչպես ազգային, այնպես էլ ավելի լայն միջազգային իրավապաշտպան հանրության շրջանում մեծ հարգանք վայելող ինստիտուտ է, որը լիակատար համապատասխանում է Փարիզյան սկզբունքներին: Միևնույն ժամանակ, Ենթահանձնաժողովը բարձր է գնահատել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի կողմից մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ գործադրված ջանքերը՝ չնայած այն բարդ պայմաններին, որոնցում այն ծավալում է իր գործունեությունը, ներառյալ՝ զգայուն հարցերի շուրջ հրապարակային դիրքորոշում արտահայտելով:

Ի թիվս այլնի՝ Եվրոպական ցանցը, հիմք ընդունելով միջազգային չափանիշները, կոչ է արել պետական մարմիններին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ ՄԻՊ հաստատության ղեկավարության անկախությունն ու անվտանգությունն ապահովելու ուղղությամբ[30]:

Նշվածից բացի, 2024 թվականին հրապարակվել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI)՝ Եվրոպայում իրավունքի գերակայության վիճակի վերաբերյալ զեկույցը[31]:

Անդրադառնալով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը՝ զեկույցը շեշտադրում է ինչպես իրականացված աշխատանքները կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության, խտրականության դեմ պայքարի և մի շարք այլ ուղղություններով, այնպես էլ ընդգծում այն մարտահրավերները, որոնց բախվել են Պաշտպանն ու աշխատակազմը վերոնշյալ աշխատանքների իրականացման ընթացքում:

Զեկույցի «Մարդու իրավունքների հաստատությունների գործունեության նպաստավոր և անվտանգ միջավայրի ապահովում» բաժնում առանձնացվել են Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի այն անդամ հաստատությունները, որոնք ենթարկվել են հարձակումների, ատելության խոսքի դրսևորման կամ ահաբեկման: Վերջիններիս շարքում մատնանշվել է նաև Հայաստանի ՄԻՊ հաստատությունը՝ Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի դեմ իրականացվող արշավը գնահատելով որպես կազմակերպված բնույթ ունեցող:

7. 2024 թվականի վիճակագրական տվյալներ

2024 թվականի ընթացքում արձանագրվել է Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների, ինչպես նաև ստացված հեռախոսազանգերի թվի աճ:

---

[30] Առավել մանրամասն հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3031 հղումով:

[31] Առավել մանրամասն հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3102 հղումով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ԱՆՁԱՆՑ	
	2024
Գրավոր և բանավոր բողոքների և սեփական նախաձեռնությունների ընդհանուր տվյալներ	**11634**[32]
Գրավոր դիմում-բողոքներ	**4961**
Քաղաքացիներին տրամադրված խորհրդ., այդ թվում՝ թեժ գիծ հեռախոսահամարներին ստացված զանգերի հիման վրա	**6673**
Թեժ գիծ հեռախոսահամարներին ստացված ընդհանուր զանգերի քանակ	**4832**[33]
Դրական լուծված գործեր	**1620**
Այցեր	**262**

Այսպես՝ 2024 թվականի ընթացքում ստացվել է 11634 դիմում բողոք: Հարկ է նկատել, որ վիճակագրության վարման մեթոդաբանության փոփոխության արդյունքում դիմում-բողոքների թվի մեջ ներառվել են միայն այն հեռախոսազանգերը, որոնցով տրվել է բովանդակային խորհրդատվություն: Մինչդեռ նախկին մեթոդաբանության համատեքստում դիմում-բողոքների ընդհանուր թիվը կկազմեր 19781:

Հատկանշական է, որ 2022 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 15473, իսկ 2023 թվականին՝ 15889: Այսինքն՝ դիմում-բողոքների թիվը նախորդ տարիների համեմատությամբ 2024 թվականին ավելացել է մոտ 4000-ով:

2024 թվականի ընթացքում ստացվել է 4832 հեռախոսազանգ, ընդ որում՝ վիճակագրության վարման մեթոդաբանության փոփոխության արդյունքում հեռախոսազանգերի թվի մեջ ներառվել են միայն այն հեռախոսազանգերը, որոնցով տրվել է բովանդակային խորհրդատվություն: Մինչդեռ նախկին մեթոդաբանության համատեքստում հեռախոսազանգերի ընդհանուր թիվը կկազմեր 12979: 2022

[32] Թեժ գիծ հեռախոսահամարին ստացված զանգերի քանակի հաշվարկման մեթոդաբանության փոփոխությամբ պայմանավորված ընդհանուր ստացված 19781 գրավոր և բանավոր բողոքների քանակի մեջ ներառվել են միայն խորհրդատվություն պարունակող բովանդակային հեռախոսազանգերը:

[33]Թեժ գիծ հեռախոսահամարին ստացված զանգերի քանակի հաշվարկման մեթոդաբանության փոփոխությամբ պայմանավորված 12979 ստացված հեռախոսազանգերից նշվել են միայն խորհրդատվություն պարունակող հեռախոսազանգերը:

թվականին հեռախոսազանգերի թիվը կազմել է 9851, 2023 թվականին՝ 9988: Ստացվում է, որ հեռախոսազանգերի թիվն էլ 2024 թվականին ավելացել է մոտ 3000-ով:

2024 թվականին իրականացվել է 262 այց[34]: Մասնավորապես, այցեր՝

- ՀՀ սահմանամերձ բնակավայրեր, զորամասեր, զինվորական հաստատություններ, հոսպիտալներ,
- խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման շրջանակում՝ քրեակատարողական հիմնարկներ, հոգեկան առողջության կենտրոններ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության բաժիններ, ձերբակալվածներին պահելու վայրեր և այլ փակ հաստատություններ,
- քրեական արդարադատության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության նպատակով՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ, ձերբակալվածներին պահելու վայրեր, քննչական մարմիններ, քրեակատարողական հիմնարկներ,
- քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության նպատակով՝ տուն-ինտերնատներ, երեխաների աջակցության կենտրոններ, մանկատներ, բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կացարան,
- կոնվենցիոն մանդատների ապահովման շրջանակներում՝ մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններ, դպրոցներ, մանկապարտեզներ,
- ինչպես նաև աշխատանքային բնույթի ընթացիկ այլ այցեր:

[34] Հարկ է նշել, որ այցերի արդյունքները, ուսումնասիրությունները և վերլուծությունները՝ արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների հետ մեկտեղ, ներկայացվել են պետական իրավասու մարմիններին:

Դիմում-բողոքներ և սեփական նախաձեռնություններ՝ ըստ վարչատարածքային միավորների



Դիմում-բողոքներ՝ ըստ մարմինների և կազմակերպությունների



8. Արտահերթ հրապարակային զեկույցներ և ուսումնասիրություններ

Պաշտպանի աշխատանքի հիմնարար ուղղություններից է առանձին թեմաներով արտահերթ զեկույցների, ուղեցույցների, ուսումնասիրությունների և այլ փաստաթղթերի հրապարակումը:

Նշված փաստաթղթերում մանրակրկիտ ուսումնասիրությամբ և վերլուծությամբ ներկայացվում են անհատական դիմումների, այցերի, մշտադիտարկումների արդյունքում և առհասարակ ոլորտում համակարգային առումով վեր հանված խնդիրներն ու դրանց հաղթահարմանն ուղղված առաջարկները՝ ապահովելով այդ առաջարկների կատարման նկատմամբ հետևողական մշտադիտարկում:

Զեկույցներն ու այլ փաստաթղթերը 2024 թվական ընթացքում ևս ուղարկվել են պետական իրավասու գերատեսչություններին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մանդատ ունեցող կազմակերպություններին և դերակատարներին:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը հրապարակել է թվով 2 զեկույց՝ արտահերթ և այլընտրանքային, 2 ուղեցույց, 1 ուսումնասիրություն և 1 հրապարակային դիրքորոշում:

- Արտահերթ հրապարակային զեկույց ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և ՀՀ ներքին գործերի նախարարության ձերբակալված անձանց պահելու վայրերում ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման վերաբերյալ[35],
- Այլընտրանքային հրապարակային զեկույց՝ Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ[36],
- Ուղեցույց մարդու իրավունքների ոլորտում փաստահավաք գործունեության իրականացման վերաբերյալ[37],
- Ուղեցույց միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի վերաբերյալ[38]
- Ուսումնասիրություն «Ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջությունն ու վերարտադրողական իրավունքը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ[39],

---

[35] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/70810b98afbea8728c48cea8ec6e9b3c.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[36] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/70810b98afbea8728c48cea8ec6e9b3c.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[37] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/96b751e4c8575af07dd352d4cdef3dca.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[38] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/b6cb7a43c158e4cb4627979e69bd709a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[39] Ուսումնադիրությունը հասանելի է https://www.ombuds.am/images/files/9fd2e8964cca25ae7fded45bfa866e44.pdf?fbclid=IwAR2OIOj9bPS84zphak1IMp5omP_e99mUPc7IBebp-eWKGzz0dZ7sCW7LmLA հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

➢ Հրապարակային դիրքորոշում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ[40] :

9. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ

Մարդու իրավունքների խթանումը Պաշտպանի աշխատանքի առանցքային ուղղություններից է, որի շրջանակներում բացառիկ կարևորություն ունեն մարդու իրավունքների կրթության բնագավառում իրականացվող աշխատանքներն ու իրազեկման միջոցառումները:

Այս առումով, Փարիզյան սկզբունքները ևս սահմանում են, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունները պարտավոր են «աջակցել մարդու իրավունքների ուսուցման և հետազոտության ծրագրերի ձևավորմանը և մասնակցել դպրոցներում, համալսարաններում ու մասնագիտական շրջանակներում դրանց իրականացմանը»[41]:

Մարդու իրավունքների պաշտպանը մարդու իրավունքների կրթության խթանման գործունեության իրավական հիմքերին առավել մանրամասն անդրադարձել է նախորդ տարիների տարեկան հաղորդումների շրջանակներում[42]:

2024 թվականին Պաշտպանը շարունակել է մարդու իրավունքների կրթության բնագավառում իր գործունեությունը: Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները տարբեր ձևաչափերով մարդու իրավունքների պաշտպանության հարցերի վերաբերյալ վերապատրաստումներ ու իրազեկման աշխատանքներ են իրականացրել շահառու հանրային իշխանության մարմինների, կրթական հաստատությունների աշխատակիցների, ուսանողների ու դպրոցականների և հասարակության այլ դերակատարների համար:

Մարդու իրավունքների պաշտպանն անձամբ իրականացրել է իրազեկման աշխատանքներ և քննարկումներ հասարակության տարբեր շրջանակների, այդ թվում՝ դպրոցականների և ուսանողների հետ՝ Պաշտպանի մանդատի, գործունության ուղղությունների, կառույցի առաքելության, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ, սահմանադրականության, իրավունքի գերակայության և մի շարք այլ թեմաներով:

---

[40] Դիրքորոշումը հասանելի է https://www.ombuds.am/images/files/aff9819f509df2f8ba6e8146af8d7bac.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[41] Տե՛ս «Փարիզյան սկզբունքները», հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/PTS-4Rev1-NHRI_en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[42] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 41-42, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ընդ որում՝ նշված աշխատանքներն իրականացվել են ինչպես Երևանում, այնպես էլ տարբեր մարզերում:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ապրիլի 8-ին «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի Աշակերտական խորհուրդների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում ընդունել է Երևանի Գևորգ Վարդանյանի անվան 192 հիմնական դպրոցի աշակերտներին: Պաշտպանը դպրոցի սաներին ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանի առաքելությունը, իրավասությունների շրջանակը, աշխատանքի ուղղություններն ու առաջնահերթությունները, խոսել մարդու իրավունքների պաշտպանությանը, բուլինգին, ատելության խոսքին, անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքարին վերաբերելի հարցերի շուրջ[43]:

Պաշտպանը 2024 թվականի ապրիլի 29-ին այցելել է Արարատի մարզի Զանգակատուն համայնքի միջնակարգ դպրոց: Դպրոցականների հետ հանդիպումն ու զրույցն անցկացվել են Պաշտպանի նախաձեռնությամբ՝ «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի «Սերունդ» ծրագրի շրջանակներում: Ներկա են եղել հաստատության սաները, ուսուցչական կազմը, մարզպետարանի և ՄԻՊ ներկայացուցիչները: Իր խոսքում Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ կրթության ամենակարևոր արդյունքը պետք է լինի հանդուրժողականության արմատավորումը, առանց որի չի կարող գոյություն ունենալ մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգ[44]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը 2024 թվականի հուլիսի 22-ին Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Շենիկ և Քարակերտ բնակավայրերում «Հայաստանի մանուկներ» («ՔՈԱՖ») բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մարդու իրավունքների ամառային դպրոցներ» ծրագրի շրջանակներում անցկացրել է խմբային պարապմունքներ: Խմբային պարապմունքների ընթացքում Պաշտպանն անդրադարձել է մարդու իրավունքների հիմքում ընկած գաղափարախոսությանը, երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով նախատեսված իրավունքներին, այդ ոլորտում Պաշտպանի գործառույթներին ու լիազորություններին[45]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը 2024 թվականի օգոստոսի 23-ին հանդիպել է Ազգային ժողովի «Ամառային դպրոց» ծրագրի մասնակից դպրոցականների հետ: Հանդիպման ընթացքում Պաշտպանը ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների շրջանակն ու աշխատանքների հիմնական ուղղությունները[46]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը նոյեմբերի 18-ին ընդունել է Լիբերալ քաղաքականության դպրոցի 11-րդ հոսքի սաներին: Հանդիպման

---

[43] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2906 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[44] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2945 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[45] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3069 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[46] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3086 հղումով, 2025 թականի մարտի 31-ի դրությամբ:

ընթացքում Պաշտպանն անդրադարձել է Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերներին, որոնցից առաջինը իրավունքի քաղաքականացումն է, մասնագիտական էթիկայի ցածր մակարդակը[47]:

2024 թվականի դեկտեմբերի 10-ին՝ «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա քարոզարշավի վերջին և Մարդու իրավունքների միջազգային օրը, Երևանի պետական համալսարանում տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստը, որի ընթացքում Պաշտպանն ընդգծել է մարդու իրավունքների կրթության բնագավառում բարեփոխումների անհրաժեշտությունը, այդ ճանապարհով առկա կարծրատիպերի հաղթահարումը՝ կարևորելով նաև ուսանողների դերը, ովքեր խնդիրները հաղթահարելու մեծ ներուժ ունեն:

2024 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների օրը՝ տրվել է Մարդու իրավունքների ձմեռային դպրոցի մեկնարկը, որը կազմակերպվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ[48]:

Այն նպատակ է հետապնդում խորացնել ՀՀ բուհերի ուսանողների գիտելիքները մարդու իրավունքների ոլորտում: Ձմեռային դպրոցը ներառել է ինչպես տարբեր պետական մարմիններ այցելություններ ու հանդիպումներ այդ մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ, այնպես էլ հանդիպումներ ոլորտի լավագույն մասնագետների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը դեկտեմբերի 12-ին հյուրընկալել է Երևանի «Արգենտինյան Հանրապետություն» թիվ 76 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտներին: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Մարդու իրավունքների Պաշտպանի իրավասությունների շրջանակը, աշխատանքի ուղղություններն ու առաջնահերթությունները, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված երեխայի իրավունքները և դրանց պաշտպանության կառուցակարգերը, քննարկել են նաև մարդու իրավունքների

---

[47] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3164 հղումով, 2025 թվալանի մարտի 31-ի դրությամբ:

[48] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3198 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պաշտպանության, բուլինգի, խտրականության դեմ պայքարի, Սահմանադրական իրավունքի և իրավունքի սահմանափակումների մասին մի շարք հարցեր[49]:

2024 թվականի դեկտեմբերի 15-ին Մարդու իրավունքների պաշտպանը դասախոսությամբ է հանդես եկել Միջազգային Իրավունքի Ակադեմիայի չորրորդ դասընթացի շրջանակում՝ նվիրված մարդու իրավունքներին: Միջոցառման նպատակն էր քննարկել մարդու իրավունքների միջազգային իրավունքի բնույթը, կառուցվածքը, կիրառման և պաշտպանության մեխանիզմները, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերն ու գործունեության ուղղությունները[50]:

Դեկտեմբերի 16-ին Պաշտպանն այցելել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր և դասախոսությամբ հանդես եկել ավագ դպրոց-հետազոտական վարժարանի սաների համար: Իր խոսքում Պաշտպանը նախ կարևորել է դպրոցականների հետ նման ձևաչափով հանդիպումների անցկացումը՝ մարդու իրավունքների կրթությունը կատարելագործելու տեսանկյունից, ապա՝ ավագ դպրոցի աշակերտների հետ քննարկել է մարդու իրավունքների պաշտպանության առաջնահերթություններին առնչվող մի շարք հարցեր, ներկայացրել ոլորտում տեղական և միջազգային լավագույն փորձը[51]:

Հաշվետու տարում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները նույնպես իրականացրել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, օրինակ, լրագրողների համար «Ատելության խոսքի դեմ պայքարի եվրոպական չափանիշներն ու լավագույն փորձը»[52] և մարդու իրավունքների հիմնահարցերի լուսաբանման[53] և այլ թեմաներով:

Առանձնահատուկ կարևորելով աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները՝ մեծ ակտիվությամբ իրականացվել են նաև Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ:

Այսպես, 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համար իրականացվել են Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ[54][55], վերապատրաստման դասընթացներ «Արդյունավետ հաղորդակցություն և սթրեսի կառավարում անհայտ կորած անձանց ընտանիքներին աջակցելու նպատակով»

---

[49] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3206 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[50] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3211 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[51] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3212 հղումով, 2025 թվաականի մարտի 31-ի դրությամբ:

[52] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3097 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[53] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3097 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[54] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2954 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[55] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3108 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

թեմայի[56], Օվիեդոյի կոնվենցիայի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման[57], ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հիմքով խտրականության[58], գենդերային հավասարության[59] և մի շարք այլ ոլորտներին վերաբերելի տարբեր թեմաների առնչությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով 2024 թվականի սեպտեմբերի 8-ից 12-ը Պաշտպանի ներկայացուցիչներն ուսումնական այցով գտնվել են Ֆրանսիայում: Այցի ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացուցիչների հետ, կազմակերպվել են քննարկումներ տեղահանված բնակչության խնդիրների, իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի, ինչպես նաև կենսաբժշկության մեջ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ: Հանդիպում է կազմակերպվել նաև Ֆրանսիայի երեխաների օմբուդսմանի, ինչպես նաև Ֆրանսիայի իրավունքների պաշտպանի գրասենյակի Գլխավոր պատվիրակի հետ: Քննարկվել են Օմբուդսմանի գրասենյակի աշխատանքի ուղղությունները, լիազորությունների շրջանակը, խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը վերաբերելի մի շարք հարցեր[60]:

Ավելին, 2024 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Մարդու իրավունքների պաշտպանության դանիական հաստատությունների միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Նշվածով պայմանավորված՝ 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները փորձի փոխանակման այցով դեկտեմբերի 2-6-ը գտնվել են Կոպենհագենում: Այցի ընթացքում քննարկվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և Մարդու իրավունքների պաշտպանության դանիական հաստատության համագործակցության հնարավորությունները մարդու իրավունքների կրթության ոլորտում[61]:

---

[56] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3119 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[57] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2914 հղումով 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[58] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3215 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[59] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3180 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[60] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3103 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[61] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3203 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման խնդրի լուծման տեսանկյունից Պաշտպանը մշտապես առանցքային է համարել այն, որ անվտանգությունը չի հակադրվում մարդու իրավունքներին: Ավելին՝ դրանք համարժեք երևույթներ ու միմյանց փոխլրացնող արժեքներ են, որոնք կարող են ու պետք է զուգահեռ զարգանան՝ մշտապես լինելով պետության հոգածության ներքո: Բնականաբար, այս հարաբերակցությունն առավել արդյունավետ է դարձնում թե՛ մեկի, թե՛ մյուսի ապահովումը: Դրա մասին են վկայում նաև Սահմանադրության, ներպետական օրենսդրության և միջազգային իրավական չափանիշների պահանջները:

Սահմանադրության 14-րդ հոդվածը հռչակում է. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»: Այս դրույթը փոխլրացվում է սահմանադրական մեկ այլ պահանջով՝ «զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են»[62]:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը ենթակա է կազմակերպման և իրականացման, ի թիվս այլնի, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, ԶՈՒ գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում 1994 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններով» ամրագրվել է, որ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական (քաղաքացիական) վերահսկողությունը կայունության և անվտանգության անբաժանելի մասն է: Նաև ընդգծվել է, որ քաղաքացիական հասարակությանը զինված ուժերի ինտեգրումը ոչ այլ ինչ է, քան ժողովրդավարության կարևորագույն դրսևորում[63]:

Տարեկան հաղորդման սույն բաժնում արտացոլված են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող և ոլորտում առկա տարբեր հարցեր, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների, ինչպես նաև զինապարտության փուլերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված խնդիրներ:

Խնդիրները վեր են հանվել երեք հարթությունում՝ **նախքան զինվորական ծառայությունը, զինվորական ծառայության ընթացքում և ծառայությունից հետո**: **Ավելին, վերլուծությունները չեն սահմանափակվել միայն զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հարցերով,**

---

[62] ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

[63] Տե՛ս Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններ, կետ 20, http://www.osce.org/fsc/41355:

այլ ընդգրկել են ավելի լայն շրջանակ՝ ներառելով նաև համակարգային խնդիրները:

Սույն բաժնում հիմնական խնդիրների ներկայացումը կատարվել է բացառապես մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից և պետական գաղտնիքին առնչվող իրավակարգավորումները նկատի ունենալով՝ հաշվի առնելով սույն հաղորդման հրապարակային բնույթը:

Նախորդ տարիներին ձևավորված սկզբունքներին համահունչ, այս տարի նույնպես ուսումնասիրություններն արվել են, և խնդիրները վեր են հանվել Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների և ահազանգերի, զինվորական հաստատություններ իրականացված այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների՝ զինապարտների իրավունքների պաշտպանությանն առնչվող հրապարակումների հիման վրա:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի այցերը զինվորական հաստատություններ կրել են առավել ինտենսիվ բնույթ: Այցերը ընդգրկել են Երևանի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու մարզերում տեղակայված զորամասերը, զինվորական հոսպիտալները, զինկոմիսարիատները, ռազմական ոստիկանության ստորաբաժանումները, մարտական դիրքերը և այլն: Միևնույն ժամանակ, 2024 թվականից սկիզբ է դրվել ԱԱԾ սահմանապահ զորքերի մի շարք ստորաբաժանումներ (զորամասեր, ուղեկալներ) Պաշտպանի այցերին:

Նկատի ունենալով անվտանգության ոլորտի կարևորությունը և դրանում առկա խնդիրներին պատշաճ ու հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը չի սահմանափակվել հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացրել է նաև լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Տարեկան հաղորդման սույն բաժնի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվել **կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում Պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության դերի ընդգծմանը:**

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ

Պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելը: Որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող սահմանադրական հաստատություն՝ Պաշտպանի նպատակներից է ապահովել բանակում մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը:

Զինված ուժերի անձնակազմի համար կարևոր է, որ նրանք ծառայության ընթացքում իրենց խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն: Ավելին՝ յուրաքանչյուր զինծառայող ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք: Ընդ որում՝ այդ մարմինը կարող է դատական չլինել, սակայն պետությունն, ըստ էության, պետք է ապահովի այն նույն երաշխիքները, որով օժտված են դատական մարմինները՝ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար64: Չնայած ԶՈՒ-ում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ զինվորական աստիճանակարգության վերահսկողության ներքո չգտնվող անկախ օմբուդսմանի ինստիտուտների նպատակն է քննության առնել զինված ուժերում ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների վերաբերյալ գանգատները, ինչպես նաև մարդու իրավունքների տեսանկյունից ոլորտային քաղաքականության բացերը և զինված ուժերի համակարգային խնդիրները: Այս առումով, օմբուդսմանի դերը կարևորվում է մի քանի առումներով՝

1) նրա անկախ վերահսկողությունը բարձրացնում է վստահությունը զինված ուժերի նկատմամբ՝ վարչարարության գործընթացում ավելի մեծ թափանցիկություն ստեղծելով և չվնասելով ենթակայության աստիճանակարգը.

2) որպես վերահսկող անկախ մարմին՝ խթանում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը.

3) Զինված ուժերում ուժեղացնում է պատշաճ կառավարման, քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքները.

4) զինծառայողներին պաշտպանում է նրանց իրավունքների խախտումներից, չարաշահումներից և անարդարացի որոշումներից.

5) զինվորական հրամանատարներին օգնում է հասնել ներքին բարեփոխումների և կատարելագործել զինված ուժերի ներքին ծառայությունը:

---

[64] Տե՛ս ԶՈՒ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագիր, բաժին «ԻԲ»:

Արդյունքում, օմբուդսմանը դրական ներգործություն է ունենում զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու և զորքերի մարտական համախմբվածության վրա[65]:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես սահմանադրական անկախ պետական ինստիտուտ, առանցքային դեր ունի զինված ուժերում իրավունքի գերակայության ապահովմանն աջակցելու և «համազգեստով քաղաքացիների» իրավունքների արդյունավետ պաշտպանությանը նպաստելու հարցերում: Այս նպատակների իրագործման համար Պաշտպանն ունի մասնագիտացված և անհրաժեշտ կարողություններ՝ հետևելու զինված ուժերում իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների ապահովմանը: Միաժամանակ, նկատի ունենալով ոլորտի կարևորությունն ու զգայունությունը և մարդու իրավունքներին վերաբերելի հարցերին պատշաճ արձագանքելու մեխանիզմների կատարելագործումը՝ Պաշտպանը շարունակաբար զարգացնում է աշխատակազմի կարողություններն ու նոր մոտեցումների ձևավորումը[66]: 2024 թվականի ընթացքում աշխատակազմի կարողությունների զարգացման համար անցկացվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, լավագույն փորձի փոխանակման նպատակով այցեր տարբեր երկրներ[67] և այլն:

Պաշտպանը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնում է 3 գլխավոր ուղղություններով՝

1) մինչև զինվորական ծառայության անցնելը զինապարտների իրավունքների պաշտպանություն,

2) զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանություն,

3) զինվորական ծառայության ավարտից հետո նախկին զինծառայողների իրավունքների պաշտպանություն: Այս ամենով հանդերձ՝ Պաշտպանի ուշադրության կենտրոնում են ոչ միայն զինապարտների, այլ նաև նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերն ու ոլորտին առնչվող համակարգային խնդիրները:

Վերոնշյալ աշխատանքների պատշաճ իրականացման նպատակով Պաշտպանի աշխատակազմում գործում է **Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը**, որը մասնագիտական ստորաբաժանում է և գործում է Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում: Բաժինը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների

---

[65] Տե՛ս ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Ձեռնարկ «ՋՈ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին», 2008 թվական, էջ 321, հասանելի է https://www.osce.org/hy/odihr/88572 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[66] Աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով 2024 թվականի ընթացքում անցկացել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակման նպատակով այցեր տարբեր երկրներ:

[67] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3248, https://ombuds.am/am/site/ViewNews/3119, https://ombuds.am/am/site/ViewNews/3032, https://ombuds.am/am/site/ViewNews/3103, https://ombuds.am/am/site/ViewNews/3264 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պաշտպանությամբ բոլոր փուլերում (զինվորական հաշվառում և զորակոչ, զինվորական ծառայության բուն ընթացք, պահեստազոր): Միաժամանակ, բաժինը զբաղվում է զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում զինված ուժերի անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերով: 2024 թվականի ընթացքում բաժինը ներգրավվել է թվով 63 այց-հանդիպում-քննարկումների, որոնք նպատակ են ունեցել վերհանել ոլորտային խնդիրները, աջակցել դրանց լուծմանը միտված մեխանիզմներ մշակելուն, զարգացնել բաժնի աշխատողների կարողությունները և այլն:

Պաշտպանին զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աջակցող մյուս մարմինը **Պաշտպանին առընթեր գործող Զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհուրդն է:**

2024 թվականին ձևավորված փորձագիտական նոր խորհրդի կազմում ընդգրկվել են ոլորտային ակտիվ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հոգեբանության, սոցիոլոգիայի ոլորտի անկախ մասնագետներ, փաստաբաններ: Փորձագիտական խորհուրդը լայն հնարավորություն է տալու քաղաքացիական հասարակության, պետական կառույցների, անկախ փորձագետների ներգրավմամբ կազմակերպելու մասնագիտական քննարկումներ՝ նպատակ ունենալով ջանքերի համատեղմամբ լուծելու անվտանգային ոլորտում մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրները: Օրինակ, 2024 թվականի դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած փորձագիտական խորհրդի նիստում քննարկվել են զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի, կարգապահության ամրապնդման, զորակոչերի ընթացքում արձանագրվող խնդիրների, ինչպես նաև զինված ուժերում կանանց իրավունքների հետ կապված մի շարք հարցեր[68]:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում, ի թիվս այլնի, շարունակվել են աշխատանքները 2020 թվականին և դրանից հետո տեղի ունեցած ռազմական գործողությունների ազդեցությունը կրած անձանց իրավունքներին վերաբերելի խնդիրների ու մարտահրավերների լուծման ուղղությամբ:

[68] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3231 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2. Հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առաքելություններից է լինել կապող օղակ կամ կամուրջ պետության և քաղաքացիական հասարակության միջև: Պաշտպանի համար այս առաքելության իրականացումը մեծապես կարևորվում է նաև զինված ուժերին և ընդհանրապես անվտանգային ոլորտին առնչվող խնդիրների մասով[69]: Այս առումով, 2024 թվականի ընթացքում է՛լ ավելի է ակտիվացել համագործակցությունը պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, զինված ուժերում մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ հանրային կառույցների հետ:

Մասնավորապես, Պաշտպանը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում ակտիվ համագործակցել է Ազգային ժողովի, Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի և մի շարք այլ մարմինների հետ:

Դրական պետք է գնահատել Ազգային անվտանգության ծառայության հետ ձևավորված համագործակցության մակարդակը, որի շրջանակում 2024 թվականին Սահմանապահ զորքերի տարբեր ստորաբաժանումներ այցերի ընթացքում արձանագրված մի շարք խնդիրներ (և՛ անհատական, և՛ համակարգային բնույթ ունեցող) Պաշտպանի աջակցությամբ և ԱԱԾ-ի հետ համագործակցությամբ ստացել են լուծումներ[70]:

---

[69] ԵԱՀԿ հստակ դիրքորոշմամբ՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները գործում են որպես կամուրջ քաղաքացիական հասարակության և պետության միջև՝ կապելով պետությունների պարտականությունները քաղաքացիների իրավունքների հետ: Հասանելի է https://www.osce.org/odihr/national-human-rights-institutions հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[70] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3160 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԱԱԾ համակարգի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքները շարունակվելու են գտնվել Պաշտպանի հատուկ ուշադրության ներքո, Սահմանապահ զորքերի տարբեր ստորաբաժանումներ այցերը կրելու են շարունակական բնույթ:

Պետական մարմինների հետ լավագույն և հաջողված համագործակցության

օրինակներից է Պաշտպանության նախարարության և առանձին ստորաբաժանումների հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը, որը, իհարկե, դրականորեն է անդրադարձել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման վրա:

Այդ համատեքստում կարևորվում է նաև ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի, Իրավաբանական վարչության, Ռազմական ոստիկանության, Ռազմաբժշկական ապահովման վարչության, Զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության և մի շարք այլ ստորաբաժանումների, ինչպես նաև զորամիավորումների ու զորամասերի պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործուն համագործակցության առումով: Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետք է ողջունելի համարել ՊՆ Մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի գործունեությունը, որը հավելյալ երաշխիք է ստեղծում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համար: Կենտրոնի նախաձեռնությամբ 2024 թվականին Պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի համապատասխան ստորաբաժանումների և ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում՝ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդմամբ արձանագրված խնդիրների և դրանց լուծման առաջարկների վերաբերյալ[71]:

[71] Հասանելի է https://mil.am/hy/news/12147 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի այցերը զինվորական հաստատություններ կրել են առավել ինտենսիվ բնույթ: Իրականացվել են շուրջ երկու տասնյակ այցեր զորամասեր, զինվորական հոսպիտալներ, մարտական դիրքեր, ռազմական ոստիկանության բաժիններ և այլն: Այցերն ընդգրկել են Երևանի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու մարզերում տեղակայված զինվորական հաստատությունները: Այցերի ընթացքում ուսումնասիրվել են զինծառայողների բուժօգնության, կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի, սննդի որակի հետ կապված հարցերը և այլն: Առանձնազրույցներ են տեղի ունեցել բոլոր կազմերի զինծառայողների հետ, քննարկվել են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներին վերաբերելի տարբեր հարցեր, այդ թվում՝ սոցիալական ապահովության, կրթական ցենզի բարձրացման, ատեստավորման գործընթացի, բնակարանային ապահովության, առողջության պահպանման, սոցիալ-կենցաղային պայմանների և այլնի հետ կապված: Կարևոր է արձանագրել, որ այցերի ընթացքում Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի ներկայացուցիչները դրսևորել են համագործակցության բարձր մակարդակ:

Պաշտպանի ներկայացուցիչները մշտապես համագործակցել են Կենտրոնական բժշկական և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների հետ, ստացված բողոքների շրջանակներում համատեղ քննարկվել են զինապարտ քաղաքացիների առողջական վիճակին առնչվող հարցեր: ՊՆ-ի հետ համատեղ քննարկումների արդյունքում նշանակվել են առողջական վիճակի կրկնակի փորձաքննություններ, զորակոչիկները ստացել են տարկետումներ, զինծառայողներն ուղեգրվել են զինվորական հոսպիտալներ և ստացել համապատասխան բուժումներ և այլն: Մի շարք դեպքերում այցերի մասին Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով[72]:

2024 թվականի ընթացքում գործընկերների հրավերներով Պաշտպանը և ներկայացուցիչները մասնակցել են ոլորտային տարբեր հարցերով քննարկումների, օրինակ, զորակոչին կամ վարժական հավաքներին ծանուցումների, զորակոչերի ընթացքում արձանագրված խնդիրների, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի

[72] Տե՛ս, Պաշտպանի այցերը զինվորական հաստատություններ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3160 հղումով, զինվորական հոսպիտալ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2987 հղումով, զինկոմիսարիատ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3028 հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

նշանակման մեխանիզմի և այլ հարցերի վերաբերյալ[73]:

Դրական արդյունքներ է տվել նաև պետական մյուս կառույցների հետ համագործակցությունը: Օրինակ՝ Պաշտպանի գրությունների և առաջարկությունների հիման վրա Քննչական կոմիտեն, Գլխավոր դատախազությունը մի շարք աշխատանքներ են իրականացրել զինված ուժերում կարգապահության բարձրացման, խաղաղ պայմաններում մահացության դեպքերի կանխարգելման, մահվան, ինքնավնասման դեպքերով վարույթներ նախաձեռնելու և այլ հարցերի մասով:

2024 թվականի ընթացքում ակտիվ համագործակցություն է եղել Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովների հետ: Ոլորտային մի շարք հարցերի շուրջ քննարկումներ են եղել ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի, Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի հետ և այլն: Պաշտպանն առանձնահատուկ կարևորում է ԱԺ-ի և ոլորտային հանձնաժողովների հետ համագործակցությունը՝ որպես ՀՈ նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող մարմիններ:

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ համագործակցություն է եղել Վարչապետի աշխատակազմի հետ: Ոլորտային մի շարք խնդիրներ և դրանց լուծման առաջարկներ ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ: Օրինակ, զինծառայողների բնակարանային իրավունքի լավարկման, սահմանամերձ համայնքներում փաստահավաք աշխատանքների արդյունքներով արձանագրված խնդիրների լուծման և այլնի վերաբերյալ:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից հատուկ կարևորություն ունի համագործակցությունը փաստաբանների հետ: Փաստաբանների հետ համագործակցությունն իրենց վստահորդներ հանդիսացող զինծառայողների իրավունքների պաշտպանության բնագավառում կրում է շարունակական բնույթ:

Լինելով կամուրջ հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության միջև՝ Պաշտպանի համար կարևոր է միասնական հարթակ ստեղծել զինված ուժերում առկա խնդիրները վեր հանելու, դրանք քննարկելու և անհրաժեշտ լուծումներ գտնելու ուղղությամբ: 2024 թվականի ընթացքում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունեցել զինված ուժերում մարդու իրավունքների գործնական և համակարգային խնդիրներին նվիրված մի շարք քննարկումներ[74]:

Պաշտպանության և անվտանգության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ժամանակակից մարտահրավերների հաղթահարման նպատակով Պաշտպանը կարևորում է բոլոր դերակատարների հետ ակտիվ փոխգործակցությունը և միասնական ու հետևողական աշխատանքը:

---

[73] Հասանելի է https://shorturl.at/xsxrp , https://shorturl.at/Q9twA հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[74]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3173 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում

Պաշտպանի հաստատության համար առանձնակի կարևորություն ունի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային մասնագիտացված կառույցների հետ համագործակցությունը: Այդպիսի համագործակցության լավագույն օրինակներից են Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը միտված թիրախային ծրագրերը:

2024 թվականի ընթացքում շարունակվել են ԵԽ-ի հետ աշխատանքները «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի շրջանակում ԵԽ-ի, պետական իրավասու մարմինների և Պաշտպանի աշխատակազմի ակտիվ համագործակցությամբ արձանագրվել են կոնկրետ արդյունքներ: Մասնավորապես՝

- Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են մի շարք **հանդիպումներ, կլոր սեղան քննարկումներ, աշխատաժողովներ**, որոնք ուղղված են եղել ոլորտում մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրների վերհանմանը և լուծման մեխանիզմների մշակմանը:
- Ծրագրի շրջանակում իրականացված կարևոր միջոցառումներից էր **«Համազգեստով քաղաքացի» հեռախոսային հավելվածի** գործարկումը, որն իրենից ներկայացնում է ճկուն և հարմարավետ գործիք և որի օգտագործմամբ մեր քաղաքացիները հեշտությամբ կկարողանան ստանալ զինվորական հարաբերություններին վերաբերող իրենց հարցերի պատասխանները և իրենց իրավունքների պաշտպանության հարցերով հեշտությամբ կարող են դիմել Պաշտպանին և Պաշտպանության նախարարություն:
- Ոլորտի մասնագիտական հմտությունների զարգացման առումով կարևոր էր **«Մարդու իրավունքները զինված ուժերում» ՀԵԼՓ դասընթացի** հայկական տարբերակի մեկնարկը: Դասընթացը ևս իրականացվել է ԵԽ «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակում:
- Ծրագրի աջակցությամբ կազմակերպվել է **ՄԻՊ առընթեր Զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի նիստը**, որի ընթացքում տարբեր գերատեսչությունների, ՀԿ-ների, փաստաբանական համայնքի

ներգրավմամբ քննարկման առարկա են դարձել ոչ մարտական պայմաններում բանակում մահվան դեպքերի և կարգապահության ամրապնդման հետ կապված խնդիրները, վարժական հավաքների գործընթացում անձանց իրավունքների վիճակը:

- Ծրագրի շրջանակներում անցկացվել են **Մուրադյանն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ խումբ գործերով վճիռների կատարման վերաբերյալ միջգերատեսչական աշխատաժողովներ**, որոնց շրջանակում քննարկվել են Հայաստանի զինծառայողների համար առողջապահական ծառայությունների բարելավման, ինքնասպանության նախականխման և արդյունավետ քննությանն առնչվող հարցեր և այլն:

- Պաշտպանի առաջարկությամբ կազմակերպվել է **«Այլընտրանքային ծառայությունը Հայաստանում. մարտահրավերներ և լուծումներ» թեմայով կլոր-սեղան քննարկում**, որտեղ ոլորտային գերատեսչությունների ներգրավմամբ հնարավորություն է ստեղծվել քննարկելու տվյալ որոտում առկա հիմնական խնդիրները:

- Ծրագրի շրջանակում **իրականացվել է ճանաչողական այց Նիդերլանդների Թագավորություն:** Այցը նպաստել է նիդերլանդական լավագույն փորձի ուսումնասիրմանը, մասնավորապես հետևյալ ուղղություններով՝ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, իրավախախտումների քննության, զինծառայողների իրավունքների պաշտպանության ներքին և արտաքին մեխանիզմների, զինված ուժերում կանանց պաշտպանության և խտրականության բացառման և այլ հարցերում:

Պաշտպանը մի շարք առանձին հանդիպում-քննարկումներ է ունեցել ԵԽ գործընկերների հետ՝ ներկայացնելով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը միտված ծրագրերի շրջանակում առաջարկներ, որոնք միտված են ինչպես Պաշտպանի հաստատության կարողությունների զարգացմանը, այնպես էլ ՀՈւ-ում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ կառուցակարգերի մշակմանն ու գործարկմանը[75]:

Պաշտպանը 2024 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը Բեռլինում մասնակցել է Զինված ուժերի օմբուդսմանական հաստատությունների՝ «Օմբուդսմանական հաստատությունները և զինծառայողների ընտանիքներին աջակցելու պարտավորությունները» խորագրով 16-րդ միջազգային համաժողովին: Միջոցառման նպատակն էր վեր հանել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրները, խթանել լավագույն փորձի փոխանակումը, ինչպես նաև ուսումնասիրել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունների դերը զինծառայողների ընտանիքներին աջակցելու հարցերում:

Պաշտպան Անահիտ Մանասյանը որպես մոդերատոր է հանդես եկել համաժողովի շրջանակում կազմակերպված զինծառայողների ընտանիքների անդամների աջակցությանն ու խնամքին վերաբերող նիստի շրջանակներում:

---

[75] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2930, https://ombuds.am/am/site/ViewNews/3096, https://ombuds.am/am/site/ViewNews/3246 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Այդ համատեքստում Պաշտպանը ներկայացրել է իր գործունեության կարևոր ուղղությունները, այդ թվում՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներին վերաբերելի առկա մարտահրավերները, անդրադարձել զինծառայողների ընտանիքների աջակցությանն ուղղված աշխատանքներին, այդ հարցում օմբուդսմանական հաստատությունների դերին[76]: Միջոցառումը, որին մասնակցել են շուրջ 40 երկրներից մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հաստատությունների ներկայացուցիչներ և ղեկավարներ, կազմակերպել է Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնը (DCAF) Գերմանիայի ԶՈՒ գծով խորհրդարանական հանձնակատարի հետ համատեղ:

2024 թվականի ընթացքում Ժնևի անվտանգության ոլորտի կառավարման կենտրոնի (DCAF) և Գործընկերություն հանուն խաղաղության կոնսորցիումի (PfPC) հետ համագործակցության շրջանակներում ՄԻՊ ներկայացուցիչը Լեհաստանի Գդինյա քաղաքում մասնակցել է մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման հարցերին նվիրված տարածաշրջանային համաժողովին, որի նպատակն էր ուժեղացնել անվտանգության ոլորտում վերահսկողությունը և խթանել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը[77]:

Պաշտպանը միջազգային գործընկերների հետ բազմաթիվ հանդիպում-քննարկումներ է ունեցել՝ նրանց ներկայացնելով Պաշտպանի գործունեության ուղղությունները նաև զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում[78]:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Պաշտպանի աշխատանքները կրում են շարունակական բնույթ և նպատակ ունեն միջազգային կառուցակարգերի հավելյալ հնարավորություններն օգտագործելով՝ նպաստել/աջակցել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի զարգացմանը:

[76] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3115 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[77] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3062 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[78] Տես, օրինակ, Պաշտպանի հանդիպումը Վրաստանում ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի ղեկավարի հետ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3214 , Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանի հետ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3156 , Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության գլխավոր տնօրենի հետ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3096, ԵԱՀԿ-ում Ֆինլանդիայի մշտական ներկայացուցչի հետ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2916 հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը

Պաշտպանն իրականացնում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանություն բոլոր փուլերում՝ զինվորական հաշվառում և զորակոչ, զինվորական ծառայության բուն ընթացք, պահեստազոր: Այս աշխատանքների շրջանակում Պաշտպանի հատուկ ուշադրության ներքո են զինվորական հաշվառման և հայտարարված զորակոչերի ընթացքում անձանց իրավունքների հետ կապված հարցերը:

2024 թվականի ընթացքում նշված գործընթացի հետ կապված Պաշտպանին հասցեագրված բողոքները հիմնականում վերաբերում են **ծանուցումների ոչ պատշաճ լինելուն, բժշկական հետազոտություններին և փորձաքննություններին, տարկետումներ տրամադրելուն, այլընտրանքային զինվորական ծառայություն անցնելուն, զինապարտների իրավունքների ու պարտականությունների մասին տեղեկություններ չտրամադրելուն կամ ոչ լիարժեք տրամադրելուն, ՊՆ կողմից գործարկված ծրագրերի («Պատիվ ունեմ», «Պաշտպան հայրենյաց», ՊՆ 8-Ն հրամանով սահմանված ծրագրեր և այլն) մասին ոչ պատշաճ իրազեկումներին և այլն**[79]**:**

Կոնկրետ բողոքներից բացի Պաշտպանը վեր է հանել զորակոչի գործընթացին վերաբերելի այլ կարևոր խնդիրներ ևս, որոնք լուծման անհրաժեշտություն ունեն (օրինակ, մեկ օրվա ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացվողների առավելագույն քանակի, զորակոչիկի նախընտրած մասնագետին՝ որպես խորհրդատու, փորձաքննությանը ներգրավելու հնարավորության, հետազոտություններն ու փորձաքննություններն այլ անձանց տեսալսողական տիրույթում իրականացնելու և դա բժշկական գաղտնիքի տեսանկյունից խնդրահարույց լինելու մասին և այլն)[80]: 2024 թվականին հայտարարված զորակոչերի ընթացքում Պաշտպանն իրականացրել է մի քանի ուղղություններով աշխատանքներ: Բացի անհատական բողոքների պատշաճ ընթացքն ապահովելուց և յուրաքանչյուր քաղաքացու բարձրացրած հարցին անհատական մոտեցում ցուցաբերելուց,

[79] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3088 , https://hy.armradio.am/archives/630520 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[80] Առավել մանրամասն տես սույն բաժնի «Բժշկական հետազոտությունների ու փորձաքննությունների հետ կապված խնդիրները» ենթավերնագրում:

Պաշտպանն անձամբ այցելել է ՊՆ կենտրոնական հավաքական[81]: Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել զինկոմիսարիատ, ինչպես նաև ներկա գտնվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկների փորձաքննությունների ընթացքին, առանձնազրույցներ ունեցել զորակոչիկների հետ, նրանց մտահոգող հարցերը քննարկել ԿԲՀ բժիշկ-փորձագետների հետ, ուսումնասիրել ԿԲՀ-ի կողմից ներկայացվող՝ զորակոչի գործընթացի հետ կապված առաջարկություններն ու դիտարկումները: Զուգահեռաբար զորակոչերի ընթացքում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերի շուրջ Պաշտպանի աշխատակազմը, պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների գործընկերների հետ ներգրավվել է մի շարք հանդիպումների ու քննարկումների[82]:

Տարիներ շարունակ Պաշտպանը խոսել է զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացում առաջացող ամենատարածված խնդիրներից մեկի մասին, որը վերաբերում է քաղաքացիներին զինկոմիսարիատ ներկայանալու (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ներգրավվելու, վարժական հավաքի մեկնելու և այլն) նպատակով ծանուցումների ոչ պատշաճ լինելուն: Ընդ որում, վարժական հավաքներ կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչ հայտարարելուց հետո հենց այս հարցի վերաբերյալ են Պաշտպանի աշխատակազմում ստացվում բազմաթիվ բողոքներ: Քաղաքացիների պնդումներով՝ իրենք զինկոմիսարիատ ներկայանալու մասին սահմանված կարգով չեն ծանուցվում, այլ կանչվում են հեռախոսազանգի միջոցով, կամ ծանուցագիր չի ուղարկվում, և դրա փոխարեն Ոստիկանության ծառայողն է այցելում իրենց բնակության վայր ու պահանջում ներկայանալ զինկոմիսարիատ և այլն: Արձանագրված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն իրավասու գերատեսչություններին առաջարկել էր մշակել քաղաքացիներին իրապես պատշաճ ծանուցելու ընթացակարգ[83]:

Քաղաքացիներից ստացվող գրավոր և բանավոր բողոքների ուսումնասիրությունը, ՄԻՊ թեժ գծին ահազանգերը ցույց են տալիս, որ մարդիկ հաճախ իրազեկված չեն լինում զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացում իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: Դրա հետ մեկտեղ նկատվում են պետական իրավասու մարմինների կողմից քաղաքացիների հետ պատշաճ հաղորդակցություն վարելու հետ կապված խնդիրներ: ՄԻՊ թեժ գծին քաղաքացիներից հաճախ ստացվել են զանգեր այն մասին, որ այցելել են զինկոմիսարիատ զինվորական հաշվառման կամ զորակոչի գործընթացի մասին տեղեկություն ստանալու, սակայն ստացված պատասխաններն իրենց համար հասկանալի չեն եղել, հարցերին պատշաճ պատասխաններ չեն ներկայացվել,

---

[81] Հասանելի են հետևյալ https://ombuds.am/am/site/ViewNews/3243 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[82] Հասանելի են հետևյալ https://shorturl.at/mER3j, https://shorturl.at/Zf5AI հղումներով, 2025 թվականի մարտի
31-ի դրությամբ:

[83] Ծանուցումների գործընթացքում արձանագրված խնդիրների, դրանց լուծման եղանակների, 2024 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների մասին մանրամասն անդրադարձ է կատարվել «Վարժական հավաքների կազմակերպման գործընթացում օրենսդրական և գործնական խնդիրները» ենթավերնագրում:

հարցերի կապակցությամբ ստացել են մերժումներ՝ առանց պարզաբանումների և այլն:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն առ այն, թե ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել զինկոմիսարիատների գործունեության բարելավման, արդյունավետության բարձրացման, ինչպես նաև դրանց գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առավել բարձրացման ուղղությամբ: Պաշտպանության նախարարությունը, ի թիվս այլնի, տեղեկացրել է, որ ներկայում զինկոմիսարիատներից մեկում իրականացվում է պիլոտային ծրագրով պահեստազորայինների հաշվառման տվյալների կառավարման ավտոմատացված համակարգի ներբեռնման աշխատանքներ, ինչպես նաև քննարկվում է ծրագիրը մյուս զինվորական կոմիսարիատներում ներդնելու հարցը: Հանրապետական զինվորական կոմիսարիատի տարածքային ստորաբաժանումներում ներդրվել է «ԱրՄեդ» համակարգը և զինապարտների ուղեգրման աշխատանքներն իրականացվում են նշված համակարգի միջոցով, ավարտվել է «Մալբրի» համակարգի ներդրման աշխատանքները, ինչպես նաև ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում իրականացվում են անհրաժեշտ փոփոխությունների նախագծման աշխատանքներ: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասում կատարվել է փոփոխություն, համաձայն որի զինվորական կոմիսարիատները վարժական հավաքների նախապատրաստման գործընթացը սկսում են իրականացնել առնվազն նախորդող եռամսյա ժամկետում: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշման մեջ կատարված համապատասխան փոփոխության և լրացման արդյունքում վարժական հավաքների ընթացքում ծանուցումները կարող են իրականացվել նաև էլեկտրոնային տարբերակով:

Պաշտպանը կարևոր է համարում պետական իրավասու մարմինների կողմից քաղաքացիների հետ պատշաճ հաղորդակցության վարումը, որն իր հերթին կարող է նպաստել զորակոչի գործընթացին ներգրավված անձանց իրավունքների երաշխավորմանը: Այստեղ կարևոր է անդրադառնալ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացված մի խնդրի լուծմանը, որը վերաբերում էր զինկոմիսարիատների կողմից զորակոչիկներին զինված ուժեր ներգրավվելու ծրագրերի մասին իրազեկելուն (օրինակ, «Պատիվ ունեմ», «Հայրենյաց պաշտպան» Պաշտպանության նախարարի 8-Ն հրամանով սահմանված ծրագրեր և այլն): Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկատվության՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատը և տարածքային զինվորական կոմիսարիատները զորակոչերի նախապատրաստական փուլում զորակոչիկների և նրանց ծնողների շրջանում իրականացրել են ՀՀ զինված ուժերի համալրմանն առաջարկվող ծրագրերի և Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի N 8-Ն հրամանով սահմանված մրցույթների լուսաբանման աշխատանքներ, իսկ զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկները գրավոր իրազեկվել են վերը նշված ծրագրերով և մրցույթներով զինվորական ծառայության զորակոչվելու պայմաններին:

Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքներով կարող ենք փաստել, որ էապես նվազել է բժշկական փաստաթղթերը քաղաքացիներին հասանելի դարձնելու հետ կապված տարիներ շարունակ բարձրացվող խնդիրը: Իհարկե, հարցը դեռևս ամբողջությամբ չի կարգավորվել, բայց կատարված օրենսդրական փոփոխությունները, այդ թվում՝ փաստաթղթերը «Արմեդ» համակարգ մուտքագրելը, գործնականում քաղաքացիների համար կարող են առավել դյուրին դարձնել իրենց առողջական վիճակին վերաբերելի փաստաթղթերին հասանելիությունը: Միևնույն ժամանակ, արձանագրվել է դեպք, երբ վերոնշյալ համակարգը որոշ ժամանակ խափանվել է, և քաղաքացիները չեն կարողացել մուտք գործել համակարգ և ծանոթանալ իրենց առողջական վիճակին վերաբերելի փաստաթղթերին: Ինչպես նմանատիպ, այնպես էլ ցանկացած այլ դեպքում պետք է նկատի ունենալ, որ իրավասու մարմինները, ներառյալ՝ զինկոմիսարիատը, բժշկական հաստատությունները, քաղաքացիների պահանջի դեպքում պետք է տրամադրեն նրանց առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերը: Դա կարևոր է ինչպես անձի՝ իր առողջական վիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ ստանալու և դրանով պայմանավորված՝ առողջության պահպանման, այնպես էլ տրված եզրակացությունների բողոքարկման իրավունքի իրացման տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***զորակոչի կազմակերպման գործընթացում բացառել օրենքով սահմանված կարգի խախտմամբ քաղաքացիներին ծանուցելու պրակտիկան,***
- ✓ ***իրավասու մարմինների կողմից զորակոչի գործընթացում ներգրավված քաղաքացիների հետ մշտապես վարել պատշաճ հաղորդակցություն՝ երաշխավորել նրանց իրավունքները և բարձրացվող խնդիրներին լինել առավել արձագանքող,***
- ✓ ***երաշխավորել բժշկական փաստաթղթեր ստանալու քաղաքացիների իրավունքի պատշաճ իրացումը, ինչը պետք է ապահովվի ինչպես բժշկական հաստատությունների, այնպես էլ զինկոմիսարիատների կողմից:***

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունք:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը քաղաքացիներից շարունակել է ստանալ բողոքներ՝ ընտանեկան պայմաններից ելնելով զորակոչից տարկետում տրամադրելու վերաբերյալ: Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Պաշտպանի կողմից բարձրացվող մի շարք խնդիրներ, այդ թվում՝ օրենսդրական կարգավորում պահանջող, շարունակում են մնալ չլուծված: Այսպես, նախկինում գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին)՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում էր տրամադրվում զորակոչիկին, ով ուներ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կին: «Զինվորական

ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ին) ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու նշված հիմքը չի նախատեսվել:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետումն ուղղված է առաջին հերթին ոչ թե զորակոչիկների, այլ խնամքի կարիք ունեցող ընտանիքի անդամների իրավունքների ապահովմանը: Ուստի, տվյալ պարագայում **տարկետում տրամադրելը կարող է հետապնդել զորակոչիկի ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կնոջն առանց խնամքի չթողնելու իրավաչափ նպատակ**:

Պաշտպանի նշված առաջարկի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կին ունենալու դեպքում զորակոչիկին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տալու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու հարցում առարկություններ չկան:

Տարկետում ստանալու իրավունքի հետ կապված Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում ներկայացված խնդիրներից մեկը ևս շարունակում է պահպանվել: Այսպես, առաջարկվել է ընտանեկան պայմաններից ելնելով 6 ամիս ժամկետով **տարկետում տրամադրել զորակոչի ենթակա այն քաղաքացուն, ում ընտանիքի անդամը մահացել է տվյալ զորակոչի ընթացքում:** Նշված հարցի հետ կապված պատգամավորական նախաձեռնությամբ ներկայացվել էր օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծ[84], մինչդեռ նախագիծը չի ընդունվել:

Ընտանիքի անդամի մահվան դեպքում զորակոչիկին ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու օրենսդրական հիմք սահմանելը կարևոր է նախ և առաջ այն առումով, որ ընտանիքի անդամի մահվան դեպքում անձը դառնում է հոգեպես ճնշված: Տվյալ հոգեվիճակում քաղաքացիական կյանքից զինվորական միջավայրի անցմամբ խնդիրներ կարող են առաջանալ ոչ միայն հարմարվողականության, այլև զինվորական ծառայության մեջ ներգրավվելու հարցերում:

Վերը նշված առաջարկի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա բոլոր քաղաքացիները զորակոչի նախապատրաստական փուլում սահմանված կարգով անցնում են առողջական վիճակի հետազոտություն և բժշկական փորձաքննություն, ինչպես նաև զինկոմիսարիատներն իրականացնում են նրանց ընտանեկան պայմանների ուսումնասիրում: Հետևաբար, ընտանիքի անդամի մահվան հետ կապված հոգեկան ճնշվածության կամ այլ խնդիրների առկայության դեպքում զորակոչիկները համապատասխան առողջական վիճակի հետազոտությունների և բժշկական փորձաքննության արդյունքում կարող են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից կարճաժամկետ տարկետում ստանալ առողջական վիճակի

[84] Հասանելի է http://www.parliament.am/draft_docs7/P-461_teghekanq.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պատճառով: Միաժամանակ, անհրաժեշտության դեպքում նման կատեգորիայի զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հարցը կարող է քննարկվել նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում:

Պաշտպանության նախարարության դիրքորոշման առնչությամբ կարևոր է նշել, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ հստակ սահմանված են այն առողջական խնդիրները, որոնց առկայության պարագայում անձը կարող է չզորակոչվել (ստանալ տարկետում): Նշված որոշմամբ ոչ բոլոր դեպքերում է, որ անձի մոտ հոգեկան և վարքային խանգարումների, հոգեբանական առանձնահատկությունների պարագայում կարող են տրվել տարկետումներ, դա կախված է զորակոչիկի առողջական վիճակից[85]: Զորակոչի ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպքում չենք կարող պնդումներ կատարել այն մասին, որ անձը ձեռք է բերել այնպիսի հոգեկան/հոգեբանական առողջական խնդիրներ, որոնց հաշվառմամբ զորակոչիկին վերը նշված որոշման շրջանակներում կարող է տրվել տարկետում: Ավելին, բացառված չէ և ավելի շատ հավանական է, որ ԿԲՀ եզրակացությամբ զորակոչիկը ճանաչվի պիտանի կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար: Հետևաբար, նշված հիմքը անհրաժեշտ է հստակ սահմանել օրենքով և զորակոչի ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպքում նրան տրամադրել տարկետում:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է ուղարկել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված և Պաշտպանության նախարարի հրամանով զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու նպատակով քանի՞ դիմում է ստացվել, տարկետում տրամադրելու նպատակով ի՞նչ չափանիշներ են հաշվի առնվել, քանի՞ զորակոչիկի է նշված հիմքով տրամադրվել տարկետում:

Հարցադրման կապակցությամբ ՊՆ-ն հայտնել է, որ 2024 թվականի ընթացքում վերոնշյալ օրենսդրական հիմքերով տարկետում ստանալու վերաբերյալ ստացվել է 31 դիմում, որից Պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրվել 28 քաղաքացու, 3 քաղաքացու դիմում մերժվել է: Տարկետումների տրամադրման համար հաշվի են առնվել զորակոչիկների ընտանեկան պայմանները:

Հաջորդ խնդիրը վերաբերում է **մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքին**:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 57-րդ կետի համաձայն՝ այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումներ նախատեսող հինգ և ավելի հոդվածներով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մեկ անգամ մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման և/կամ դիտարկման

[85] Տես ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ից 8-րդ հոդվածները:

նպատակով: Տարկետման ավարտից հետո առողջական նույն վիճակի պահպանման պարագայում, զորակոչիկները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝ ծառայության հեշտացված օրվա կարգացուցակով:

Ստացվում է, որ գործող կարգավորումների հետևանքով բժշկական հանձնաժողովները **զորակոչիկների մի քանի առողջական խնդիրները դիտարկում են առանձին-առանձին, չեն գնահատում հիվանդությունների համակցված ազդեցությունը զորակոչիկների առողջության վրա:** Արդյունքում, զորակոչիկները ճանաչվում են զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի: Այսպես, եթե զորակոչիկն ունի 5 և ավելի հիվանդություն՝ ծառայության համար սահմանափակում նախատեսող (այսուհետ՝ *«քանակական փունջ»*), ապա զինծառայությունից ստանում է տարկետում: Այսինքն, գործող կարգավորումները նախատեսում են հիվանդությունների «քանակական փունջ» կամ քանակական նվազագույն պահանջ՝ առանց դիտարկելու դրանց համակցված ազդեցությունն անձի առողջության վրա: Մինչդեռ կարևոր է, որ լինի նաև հիվանդությունների *«որակական փունջ»*: Գործնականում առկա դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թվով 5-ից պակաս սահմանափակումներ նախատեսող հոդվածների առկայությունը կարող է առավել խնդրահարույց լինել մարդու առողջության տեսանկյունից: Հետևաբար, հիվանդությունների «քանակական փնջի» հետ միասին անհրաժեշտ է սահմանել «հիվանդությունների որակական փունջ», ինչպես նաև անձին զինվորական ծառայության զորակոչելիս նրա առողջական վիճակի համակարգված գնահատման կառուցակարգ:

Նշված հարցը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Պաշտպանի կողմից ինչպես տարեկան հաղորդումներում, այնպես էլ ՀՈՒ իրավասու ստորաբաժանումների հետ քննարկումների ընթացքում: Հասկանալի է, որ նշված առաջարկության իրացումը ենթադրում է որոշակի բարդություններ և առողջական վիճակի գնահատման որակական չափանիշների որոշման հատուկ մեխանիզմների սահմանման անհրաժեշտություն: Սակայն հաշվի առնելով, որ հարցը վերաբերում է զորակոչիկների պատշաճ փորձաքննության և զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների առողջական վիճակի պահպանման պետության պոզիտիվ պարտականությանը՝ իրավասու գերատեսչությունները պարտավոր են առողջական վիճակի գնահատման այնպիսի մեխանիզմներ սահմանել, որոնց շնորհիվ հնարավոր կլինի պարզել, թե զորակոչիկի կամ զինծառայողների մոտ առկա առողջական խնդիրների որակական համակցությունը արդյոք թույլ կտա պատշաճ իրականացնել զինվորական պարտականությունները և չի հանգեցնի առողջական խնդիրների վատթարացման:

Ճիշտ է, պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և ծառայությանը պիտանիության չափանիշները, սակայն զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների բարդություններին: Կարևոր է ի սկզբանե ծառայության զորակոչել առողջ քաղաքացիների, իսկ որոշակի առողջական խնդիրների առկայության դեպքում հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դրանք լինեն համատեղելի ծառայության հետ և զինծառայողների համար չդառնան անհամաչափ բեռ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

✓ ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում նախատեսել կարգավորում այն մասին, որ ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կին ունենալու դեպքում զորակոչիկներին (եթե համատեղ են բնակվում) տրամադրվում է տարկետում,***

✓ ***վերոնշյալ օրենքում կատարել փոփոխություն և սահմանել, որ հայտարարված զորակոչի ընթացքում ընտանիքի անդամի (հայր, մայր, եղբայր, քույր, պապ, տատ) մահվան դեպքում զորակոչի ենթակա քաղաքացուն տրամադրվում է տարկետում մինչև հաջորդ զորակոչ,***

✓ ***հիվանդությունների «քանակական փնջի» հետ միասին քննարկել «հիվանդությունների որակական փունջ» նախատեսելու, ինչպես նաև այդ համատեքստում անձին զինվորական ծառայության զորակոչելիս կամ զինվորական ծառայության ընթացքում նրա առողջական վիճակի համակարգված գնահատման կառուցակարգ սահմանելու հարցերը:***

3. Քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն այլընտրանքային ծառայության կազմակերպման և իրականացման գործընթացում

Եվրոպայի Խորհրդի կողմից կրոնական դավանանքի կամ համոզմունքների հիմքով այլընտրանքային ծառայության անցնելու հարցը մանրամասն կարգավորման է արժանացել: Ըստ այդմ, ԵԽ գրեթե բոլոր երկրներում ներդրված է այլընտրանքային ծառայության անցնելու համակարգը: Հայաստանում այլընտրանքային ծառայություն անցնելու հնարավորությունը նախատեսվել է դեռևս 2003 թվականից: Հետագա փոփոխությունների արդյունքում 2013 թվականին վերանայվել է այլընտրանքային ծառայության մասին օրենսդրությունը, ինչը կարևոր քայլ էր Հայաստանի կողմից միջազգային պարտավորությունների կատարման, ինչպես նաև ոլորտային օրենսդրությունը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից կատարելագործելու համար[86]:

ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք: «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական,

---

[86] «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը կարևոր քայլ դարձավ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների զարգացման գործում: Առաջին անգամ դատարանը ճանաչեց, որ համոզմունքներով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը ենթակա է լիարժեք պաշտպանության Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի շրջանակներում, որն ամրագրում է մտքի, խղճի և կրոնի ազատությունը: Այս նախադեպը զգալի ազդեցություն ունեցավ իրավակիրառ պրակտիկայի վրա և նպաստեց Կոնվենցիայի մասնակից պետությունների պարտավորությունների շրջանակներում անհատական համոզմունքների նկատմամբ հարգանքի սկզբունքների ամրապնդմանը:

այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

ա) **այլընտրանքային զինվորական** (ժամկետը 30 ամիս)՝ ՀՀ ԶՈՒ-ում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն.

բ) **այլընտրանքային աշխատանքային** (ժամկետը 36 ամիս)՝ ՀՀ ԶՈՒ-ից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

Այլընտրանքային զինվորական ծառայության կարող է անցնել այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին **հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը:**

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին **հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը**[87]**:**

2024 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են այլընտրանքային ծառայության վերաբերյալ գրավոր բողոքներ, նշված հարցի հետ կապված խորհրդատվություն ստանալու համար քաղաքացիները զանգահարել են Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին: Միաժամանակ, նշված ոլորտում առկա տարբեր խնդիրների վերաբերյալ Պաշտպանին իրենց մտահոգություններն են հայտնել հասարակական կազմակերպությունները, միջազգային գործընկերները: Հիմնական բողոքները/մտահոգությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի կամ ուղղությունների՝

1) Ըստ պնդումների՝ ՀՀ ոլորտային օրենսդրությունը կիրառվում է տարբերակված մոտեցմամբ, իրավական չափանիշներին ոչ միշտ համապատասխան, ինչպես նաև՝ հաճախ հայեցողական ձևով: Օրինակ, նշվել է, որ Եհովայի վկաներ կրոնական կազմակերպության ներկայացուցիչներն այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու ցանկություն հայտնելու դեպքում՝ խոչընդոտների չեն հանդիպում, ինչը դրական հանգամանք է, այնինչ այլ կրոնական կամ համոզմունքների պատկանող քաղաքացիների համար ծառայության նշված տեսակը, ըստ էության, անհասանելի է: Նման մոտեցումը հակասում է ԵԽ Նախարարների կոմիտեի R (87) 8 հանձնարարականին[88]:

2) Ըստ պնդումների՝ այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի կազմը, դիմումների քննարկման, եզրակացությունների ներկայացման ընթացակարգը խնդրահարույց է[89]:

---

[87] «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=190398 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ :

[88] Հասանելի է https://www.refworld.org/legal/resolution/coeministers/1987/en/88968 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[89] «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է և կազմված է տարածքային կառավարման, արդարադատության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության ու պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի՝ ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից:

3) Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացին հանդիպում է մի շարք խոչընդոտների՝ սկսած աշխատանքի բնույթից, առողջական վիճակի պահպանման իրավունքից, մինչև առողջական վիճակով պայմանավորված ծառայությունից վաղաժամկետ արձակում:

4) Պարտադիր զինվորական ծառայություն անցնող ՀՀ քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայությունը, իսկ այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել պարտադիր զինվորական ծառայությունը:

5) Այլընտրանքային ծառայությունը չի տալիս այն նույն իրավունքները և սոցիալական արտոնությունները, ինչ զինվորական ծառայությունը (ՀՀ օրենսդրությամբ այլընտրանքային աշխատանքային ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովությունը իրականացվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, ինչը պակաս արտոնություններ է սահմանում, ի տարբերություն զինծառայողների):

6) Մի շարք երկրներում, օրինակ, այլընտրանքային աշխատանքային ծառայության մեջ գտնվող քաղաքացիների առողջական վիճակով պայմանավորված ծառայության պիտանիության պահանջները նույնն են, ինչ զինծառայողներին ներկայացվող պահանջները: Մինչդեռ, ՀՀ-ում այդպես չէ: Մինչ ծառայությունը բոլորը փորձաքննվում են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումներով սահմանված կարգով, այնինչ ծառայության ներգրավվելուց հետո, այլընտրանքային աշխատանքային ծառայողները հետագա ծառայության պիտանիությունը որոշելու նպատակով վերոնշյալ որոշումներով սահմանված կարգով չեն փորձաքննվում: Ավելին, նրանց համար առկա չէ փորձաքննություն իրականացնելու այլ կարգ, քան բժշկասոցիալական փորձաքննության ներկայանալը և ֆունկցիոնալության հարցը որոշելը:

7) Այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացիները ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ձեռք բերելու դեպքում հետազոտություն ու բուժում են անցնում սեփական միջոցներով և չեն օգտվում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունքից՝ չնայած այն հանգամանքին, որ հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքն են կատարում:

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ այլընտրանքային ծառայության հետ կապված մի շարք այլ հարցեր, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությունը միջազգային իրավական չափորոշիչներին համապատասխանության մասով, գտնվել են Պաշտպանի ուշադրության ներքո: Ոլորտային խնդիրները և դրանց լուծման եղանակները Պաշտպանը տարբեր ձևաչափերով ներկայացրել և քննարկման առարկա է դարձրել

պետական իրավասու մարմինների, հասարակական կազմակերպությունների, միջազգային գործընկերների ներգրավմամբ:

Նկատի ունենալով ոլորտում առկա խնդիրները, Պաշտպանին հասցեագրվող տարբեր մտահոգությունները՝ 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Պաշտպանի նախաձեռնությամբ և Եվրոպայի Խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ ԵԽ «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակում կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում՝ «Այլընտրանքային ծառայությունը Հայաստանում. մարտահրավերներ և լուծումներ» թեմայով[90]: Կարևոր է նշել, որ այս միջոցառումը կարևոր հարթակ դարձավ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, միջազգային գործընկերների հետ համատեղ ոլորտային հարցերը քննարկելու, խնդիրները վերհանելու և լուծման մեխանիզմներ առաջարկելու տեսանկյունից: Քննարկման առարկա են դարձել դավանանքի կամ համոզմունքների հիմքով զինծառայությունից հրաժարվող անձանց իրավունքների վերաբերյալ մի շարք հարցեր, վեր են հանվել այլընտրանքային ծառայության վերաբերյալ իրավակարգավորումների և պրակտիկայի լավարկման հնարավոր քայլերը, ներկայացվել՝ Հայաստանում այլընտրանքային ծառայության հետ կապված մարտահրավերներն ու լուծումները և այդ համատեքստում միջազգային իրավական չափորոշիչները:

Պաշտպանը նշել է, որ այլընտրանքային ծառայության հետ կապված բոլոր հարցերը թեև շատ կարևոր են մարդու իրավունքների պաշտպանության դիտանկյունից, բայց հաճախ դուրս են մնում ուշադրությունից: «Հարկ եմ համարում շեշտել, որ թեև ՄԻԵԴ վճիռներն էական դրական ազդեցություն են ունեցել ոլորտի կատարելագործման վրա, այնուամենայնիվ, այն Հայաստանում դեռ ամբողջությամբ չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Թեմայի վերաբերյալ շատ քիչ են նաև հանրային քննարկումները, քանի որ մարդիկ այստեղ առկա խնդիրները չեն դիտարկում որպես մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրներ»,- ասել է Անահիտ Մանասյանը:

Քննարկման առարկա են դարձել ինչպես վերը նշված ուղղություններով Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացված խնդիրները, այնպես էլ ոլորտում առկա մարդու իրավունքներին վերաբերելի այլ հարցեր: Հատուկ նշվել է, որ ամբողջ գործընթացը պետք է պատշաճ իրականացվի ոչ միայն մինչև քաղաքացու այլընտրանքային ծառայության անցնելը, այլև բուն ծառայության ընթացքում: Այս համատեքստում, վկայակոչվել է Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով բարձրացված խնդիրը, որը վերաբերում է այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացու առողջական խնդիրը հետազոտելուն, փորձաքննելուն և ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում՝ ծառայությունից վաղաժամկետ արձակելուն:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրության առարկա են դարձվել ինչպես խնդրին վերաբերելի ներպետական, այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչները, այդ թվում՝ մի շարք պետությունների այլընտրանքային աշխատանքային ծառայությանն առնչվող իրավակարգավորումները:

---

[90] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3220 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի «Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմումը» վերտառությամբ 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը գրանցելու պահից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան զորակոչի ավարտին նախորդող 25-րդ օրը, **պարզում է օրենքով սահմանված կարգով դիմումատուին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայությունը և դրանց բացակայության դեպքում ներկայացված դիմումը և դիմումատուի անձնական գործն ուղարկում է հանրապետական հանձնաժողով:** Ըստ նույն հոդվածի 7-րդ մասի՝ դիմումատուին **պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայության դեպքում դիմումը հանրապետական հանձնաժողով չի ներկայացվում**, և այն տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցվելու պահից 30 օրվա ընթացքում վերադարձվում է դիմումատուին, որից հետո **հայտարարված զորակոչի ժամանակ օրենքով սահմանված կարգով ձևակերպվում է քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը:**

Այսինքն, ստացվում է, որ այլընտրանքային ծառայություն անցնելու դիմում ներկայացրած քաղաքացին, եթե ունի, օրինակ, այնպիսի առողջական խնդիրներ, որոնք անհամատեղելի են զինվորական ծառայության համար, ապա օրենքով սահմանված կարգով ստանում է տարկետում կամ ազատվում է զինվորական ծառայությունից: Եվ տվյալ դեպքում չի դիտարկվում այլընտրանքային ծառայություն անցնել/չանցնելու հարցը: Զորակոչի գործընթացում (և տվյալ իրավահարաբերությունների մեջ մտնող յուրաքանչյուր քաղաքացու հետ, անկախ նրանից՝ անձը դիմել է այլընտրանքային ծառայություն անցնելու համար, թե՝ ոչ) քաղաքացիների փորձաքննությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն (հիվանդությունների ցանկ) և 405-Ն (փորձաքննության կարգ) որոշումներով սահմանված կարգով:

Գործող իրավակարգավորումներով զինծառայողների պարագայում, երբ ծառայության ընթացքում ունենում են այնպիսի առողջական խնդիրներ, որոնք ըստ Կառավարության վերը նշված որոշումների՝ հանգեցնում են պիտանիության աստիճանի վերանայման, զինծառայողը կարող է վաղաժամկետ արձակվել զինված ուժերից (ընդ որում առանց հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու), մինչդեռ այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների դեպքում իրավական պահանջն այլ է: Այսպես, «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունից պահեստ արձակվում և պահեստազորում հաշվառվում են նույն օրենքով սահմանված այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը լրանալու կամ ժամկետից շուտ՝ օրենքով սահմանված կարգով **հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքերում:**

Ստացվում է, որ եթե այլընտրանքային աշխատանքային ծառայողներն ունեն այնպիսի առողջական խնդիրներ, որոնք ՀՀ կառավարության վերը նշված որոշումների համաձայն՝ հանգեցնում են պիտանիության աստիճանի փոփոխության (ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու), ի տարբերություն զինծառայողների՝

չեն կարող արձակվել ծառայությունից, եթե նրանց նկատմամբ չի սահմանվել հաշմանդամություն:

Մարդու իրավունքների տեսանկյունից նման մոտեցումը խնդրահարույց է: Հարց է առաջանում, եթե ծառայության ներգրավելուց առաջ բոլոր քաղաքացիները (այդ թվում՝ այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համար դիմած) փորձաքննվում են վերը նշված որոշումների պահանջներով և առողջական խնդիրների դեպքում ծառայության չեն ներգրավվում, ինչո՞ւ արդեն բուն ծառայության ընթացքում (այդ թվում՝ այլընտրանքային աշխատանքային ծառայության) չպետք է նույն չափորոշիչներով փորձաքննվեն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ձեռք բերելու կամ առողջական վիճակի վատթարացման դեպքում պետք է հնարավորություն ունենան փորձաքննվելու և ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում վաղաժամկետ արձակվելու այլընտրանքային աշխատանքային ծառայությունից, ընդ որում՝ անկախ հաշմանդամություն (ֆունկցիոնալության որևէ աստիճանի սահմանափակում) ունեցող անձ ճանաչվելու հանգամանքից:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի գնահատմամբ՝ պետությունը պետք է կատարելագործի գործող իրավական կարգավորումները, ինչպես նաև մշակի այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների համար փորձաքննություն անցնելու կառուցակարգեր: Ավելին՝ հղում կատարելը միայն օրենքի այն պահանջին, որ ծառայությունից արձակվելու համար այլընտրանքային ծառայողը (անկախ նրանից, թե ինչ բնույթի հիվանդություն ունի) պարտադիր պետք է հաշմանդամություն (ֆունկցիոնալության որևէ աստիճանի սահմանափակում) ունեցող անձ ճանաչվի՝ խնդրահարույց է և չի բխում ինչպես ներպետական իրավակարգավորումների տրամաբանությունից, այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներից: Նման մոտեցումը պետության ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի պահանջները կատարելու տեսանկյունից խնդրահարույց է:

2024 թվականի ընթացքում միջազգային գործընկերներից, հասարակական կազմակերպություններից Պաշտպանին բողոքներ ու մտահոգություններ են հասցեագրվել այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համար դիմած քաղաքացուն նշված ծառայության անցնելը մերժելու, այնուհետև զինվորական ծառայությունից խուսափելու համար երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտելու վերաբերյալ[91]: Կոնկրետ դեպքում Ավետարանական-մկրտական եկեղեցու անդամ հանդիսացող քաղաքացին, դիմելով զինկոմիսարիատ, հայտնել է, որ իր կրոնական համոզմունքներն իրեն թույլ չեն տալիս զենք կրել և երդում տալ՝ ցանկանալով պարտադիր զինվորական ծառայությունը փոխարինել այլընտրանքային ծառայությամբ, սակայն ստացել է մերժում: Պաշտպանի աշխատակազմում ի գիտություն է ընդունվել այն, որ նույն հարցի վերաբերյալ առկա է դատարանի վերջնական դատական ակտ[92], հետևաբար ՀՀ

[91] Հասանելի է հետևյալ https://www.forum18.org/archive.php?article_id=2873 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[92] Տե՛ս Դատական գործ N: ԵԴ1/0636/01/23

օրենսդրության համաձայն՝ կոնկրետ դեպքում հարցի լուծումը Պաշտպանի լիազորությունների շրջանակից դուրս է: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով գործընկերների մտահոգությունները, ինչպես նաև մարդու իրավունքների տեսանկյունից հարցի կարևորությունը՝ Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի ներկայացուցիչներն այց են իրականացրել քրեակատարողական հիմնարկ, տեսակցել և առանձնազրույց ունեցել քաղաքացու հետ: Քննարկվել են կրոնական համոզմունքներով պայմանավորված զինվորական ծառայության չներգրավվելու և այդ առումով գործընթացին առնչվող հարցեր: Պաշտպանն ինչպես այս, այնպես էլ ոլորտում առկա այլ համակարգային խնդիրներն ու մտահոգությունները քննարկել է տարբեր գործընկերների հետ, հարցն առանձին քննարկման առարկա է դարձել Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ կազմակերպված վերոնշյալ միջոցառման շրջանակում, որին մասնակցել են պետական տարբեր մարմինների, այդ թվում՝ գործադիր, օրենսդիր, դատական իշխանության մարմինների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ և միջազգային գործընկերներ: Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ չնայած կոնկրետ գործերով դատական ակտի առկայության պայմաններում միջամտության հնարավորությունների բացակայությանը՝ խնդիրները դիտարկվում են համակարգային տեսանկյունից և ոլորտում առկա խնդիրներին համակարգային լուծումներ գտնելու հարցերում Պաշտպանը լինելու է հետևողական:

Ինչպես քննարկված կոնկրետ դեպքերում, այնպես էլ վերոնշյալ բոլոր մտահոգությունների, Պաշտպանին հասցեագրված բողոքների հաշվառմամբ՝ Պաշտպանն այլընտրանքային ծառայության պատշաճ կազմակերպման տեսանկյունից կարևոր է համարում պետական իրավասու մարմինների ուշադրությունը հրավիրել խնդրին վերաբերելի մի քանի միջազգային չափորոշիչների և դատական նախադեպերի:

Այսպես, ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի 1993/84 բանաձևում արձանագրվել է, որ այլընտրանքային ծառայությունը պետք է բխի հասարակական շահերից և **չպարունակի պատժի տարրեր**[93], իսկ 1998/77 բանաձևում նշվել է, որ պետություններն իրենց օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում չպետք է խտրականություն թույլ տան կրոնական և այլ համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ՝ **կապված ծառայության ժամկետի և պայմանների կամ որևէ տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ քաղաքական իրավունքի իրականացման հետ**[94]: Ըստ ԵԱՀԿ վարքականոնների 28-րդ կետի՝ մասնակից պետություններն իրենց օրենքներում և այլ առնչվող փաստաթղթերում պարտավորվում են արտացոլել զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքները և պարտականությունները: Նրանք պարտավորվում են ուսումնասիրել զինվորական ծառայությունից արվող բացառությունների կամ զինվորական ծառայության այլընտրանքային եղանակների խնդիրը»:

---

[93] Հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/E-CN_4-RES-1993-84.pdf հղումով, 2025 թվականի մարտի
31-ի դրությամբ:

[94] Հասանելի է https://www.refworld.org/legal/resolution/unchr/1998/en/8561 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն Ադյանը և այլք ընդդեմ Հայաստանի վճռով նշել է. «…*Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետություններն ունեն իրենց այլընտրանքային ծառայության համակարգի կազմակերպման և իրականացման հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Դատարանը համարում է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված՝ համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը երևակայական բնույթ կկրեր, եթե պետությանը հնարավորություն տրվեր այլընտրանքային ծառայության իր համակարգը կազմակերպելու և իրականացնելու այնպիսի եղանակով, որով օրենքով կամ գործնականում չէր առաջարկվի զինվորական ծառայությանն այնպիսի այլընտրանք, որն իրականում կկրեր քաղաքացիական բնույթ և* ***չէր ունենա արժանապատվությունը նվաստացնող կամ պատժիչ բնույթ***[95]:»: Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը նշել է, որ *բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը «ժողովրդավարական հասարակության» չափանիշներն են*: … ***փոքրամասնություն կազմող կրոնական խմբերի նկատմամբ պետության կողմից հարգանքի դրսևորումը՝ վերջիններիս կողմից իրենց խղճին համապատասխան ձևով հասարակությանը ծառայելու հնարավորության տրամադրման միջոցով կստեղծի առավել միասնական և կայուն բազմակարծություն, խթան կհանդիսանա կրոնական ներդաշնակության և հասարակության հանդուրժողականության համար, որն ավելի գերադասելի է, քան, ինչպես Կառավարությունն է պնդում, անարդար անհավասարություններ ստեղծելը կամ խտրականություն ցուցաբերելը***[96]:»:

Դյագիլևն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ պետությունները հիմնականում ունեն նեգատիվ պարտավորություն՝ զերծ մնալու Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին որևէ միջամտությունից… Նման միջամտությունը հակասում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածին, եթե այն ***«նախատեսված չէ օրենքով», չի հետապնդում 2-րդ կետում նշված օրինական նպատակներից մեկը կամ մի քանիսը և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»***[97]***:***

Ի գիտություն ընդունելով տարբեր պետություններում այլընտրանքային աշխատանքային ծառայության հարցերին ցուցաբերվող մոտեցումները, ինչպես նաև նկատի ունենալով միջազգային իրավական չափորոշիչները, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները՝ **Պաշտպանն ընդգծում է, որ օրենսդրական գործող կարգավորումները դեռևս ամբողջությամբ չեն արտացոլում միջազգային իրավական չափանիշների պահանջները և անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց են:**

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրումներ է կատարել իրավասու պետական մարմիններին այն

---

[95] Տես, Ադյանը և այլք ընդդեմ Հայաստանի (ADYAN AND OTHERS v. ARMENIA) գործով, 2017 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 75604/11, կետ 67

[96] Տես, Բայաթյանն ընդդեմ Հայաստանի (CASE OF BAYATYAN v. ARMENIA) գործով 2011 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 23459/03, կետ 126:

[97] Տես, Դյագիլևն ընդդեմ Ռուսաստանի (CASE OF DYAGILEV v. RUSSIA) գործով 2020 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 49972/16, կետ 60:

մասին, թե «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո առ այսօր քանի՞ քաղաքացի է անցել այլընտրանքային աշխատանքային ծառայության, նրանցից քանի՞սն են կրոնական դավանանքի հիմքով և քանի՞սը համոզմունքների հիմքով անցել այլընտրանքային աշխատանքային ծառայության, քանի՞ դիմումներ են ստացվել այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ և ի՞նչ ընթացք են ստացել: Արդյոք արձանագրվել են այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ քաղաքացու դիմումը մերժելու դեպքեր, եթե այո՝ ի՞նչ պատճառաբանությամբ:

Հարցերի կապակցությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացրել է, որ 2013 թվականից մինչև 2024 թվականի հուլիս ամիսը այլընտրանքային աշխատանքային ծառայության են նշանակվել 561 քաղաքացի: Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել այն դիմումատուների մասով, որոնց պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պարտականությունը լուրջ և ծանրակշիռ հակասության մեջ է եղել այդ անձի խղճի կամ խորը և իրական կրոնական դավանանքի կամ այլ անհաղթահարելի համոզմունքների հետ կամ պայմանավորված է եղել այդ անձի հիմնավոր, լուրջ, հետևողական և կարևոր համոզմունքով կամ հավատքով: Այլընտրանքային աշխատանքային ծառայողին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ: Այլընտրանքային աշխատանքային 1 ծառայող անցել է փորձաքննություն, սակայն հաշմանդամություն ունեցող անձ չի ճանաչվել, ապա հրաժարվել և խուսափել է ծառայությունից, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ 2018-2024 թվականների ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Արդարադատության նախարարություն են ներկայացվել ընդհանուր թվով 238 դիմում և դրանց վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որոնց ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարի հրամանների հիման վրա 224 դիմում բավարարվել է, իսկ 14 դիմում մերժվել: Որոշ քաղաքացիների կողմից վարչական դատարան հայցեր են ներկայացվել՝ բողոքարկելով Արդարադատության նախարարի վերաբերելի հրամանները (թիվ ՎԴ/6468/05/19, թիվ ՎԴ/8778/05/20, թիվ ՎԴ/1567/05/20 և թիվ ՎԴ/4032/05/20 վարչական գործեր, որոնցից երեք վարչական գործերով հայցերը մերժվել են և առկա են օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, իսկ մեկ գործի վարույթը կարճվել է հայցվորի՝ հայցից հրաժարվելու հիմքով, և այդ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ):

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2024 թվականի ընթացքում պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային աշխատանքային ծառայությամբ փոխարինելու վերաբերյալ դիմում է ներկայացրել 32 քաղաքացի, որոնցից 27-ի վերաբերյալ Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, մերժվել է 5 դիմում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ այլընտրանքային ծառայության կազմակերպման ոլորտում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերը շարունակելու են գտնվել Պաշտպանի

հատուկ ուշադրության ներքո՝ արձանագրված խնդիրները հասցեագրվելու են իրավասու գործընկերներին՝ լուծումներ գտնելու մեխանիզմներ մշակելու և ՀՀ օրենսդրությունը միջազգային իրավական չափանիշներին ամբողջությամբ համապատասխանեցնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Բժշկական հետազոտությունների ու փորձաքննությունների հետ կապված խնդիրներ

Զինապարտ քաղաքացիների պատշաճ բժշկական հետազոտություններն ու փորձաքննությունները Պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում են: Ինչպես նախկինում, 2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ զինապարտներին պատշաճ բժշկական հետազոտության ենթարկելու, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների եզրակացությունների, դրանց բողոքարկման և տարկետման իրավունքների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, 2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչիկների և նրանց ընտանիքների անդամների կողմից Պաշտպանին հասցեագրվել է 195 գրավոր ու բանավոր բողոք: Բողոքների մեծ մասը վերաբերել է **բժշկական հանձնաժողովների եզրակացությունների հետ անհամաձայնություններին, կրկնակի և ստուգիչ հետազոտություններ անցնելուն, տարկետումներ տրամադրելուն, առողջական վիճակին վերաբերելի փաստաթղթեր ստանալուն, փորձաքննություններին:**

Պաշտպանի աշխատակազմում զորակոչին առնչվող հարցերով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Բողոքների քննարկման շրջանակում պարզաբանումների պահանջով և կոնկրետ առաջարկություններով գրություններ են հասցեագրվել ՀՀ պաշտպանության նախարարություն:
- Արագ արձագանքումների շրջանակում քննարկումներ են նախաձեռնվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի, զինկոմիսարիատների և ՊՆ այլ իրավասու ստորաբաժանումների, ինչպես նաև առողջապահական կազմակերպությունների հետ:
- Համակարգային բնույթ ունեցող հարցերի և Պաշտպանի տարեկան հաղորդմամբ ներկայացված առաջարկների իրացման վերաբերյալ քննարկումներ են տեղի ունեցել ՊՆ և ԳՇ տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Պաշտպանի աջակցության արդյունքում՝

Կրկնակի կամ ստուգիչ բժշկական հետազոտություններ անցնելու նպատակով զորակոչիկներին տրամադրվել են ուղեգրեր:

Զորակոչիկները ստացել են իրենց առողջական վիճակին վերաբերելի բժշկական փաստաթղթերը:

Զորակոչիկները կրկին ներկայացվել են Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը:

Զորակոչիկներին տրվել են տարկետումներ կամ առողջական վիճակի պատճառով նրանք ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից կամ ճանաչվել են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ Պաշտպանն անձամբ այցելել է ՊՆ կենտրոնական հավաքակայան, տեղում դիտարկել զորակոչի գործընթացը, զրուցել անձնակազմի հետ, ծանոթացել զորակոչային հանձնաժողովների աշխատանքներին: Կարևոր է նշել, որ Կենտրոնական հավաքակայանում զորակոչի կազմակերպման գործընթացում պարբերաբար արձանագրվում են դրական փոփոխություններ, օրինակ՝ վերանորոգվել է ճաշարանը, զորակոչիկներն ապահովված են սննդով, ծառայության վայրեր մեկնելուց առաջ զորակոչիկները ստանում են իրենց համապատասխան զինվորական հանդերձանք, ավտոմատացված էլեկտրոնային համակարգի միջոցով ստուգվում են զորակոչիկների գիտելիքները և ըստ այդմ՝ ստեղծվել են հիմնական զորամաս մեկնելուց առաջ ծառայության նշանակվելու և ուսումնական զորամասերում վերապատրաստվելու կառուցակարգեր և այլն: Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են զինկոմիսարիատ, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստերին: Զուգահեռաբար իրականացվել են իրազեկման աշխատանքներ[98]:

[98] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3243 , https://ombuds.am/am/site/ViewNews/3075 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:



Ոլորտում Պաշտպանի ակտիվ գործունեությունը, կատարած բազմակողմանի աշխատանքներն ու մոնիթորինգը հնարավորություն են տալիս արձանագրելու, որ շարունակում են արդիական մնալ խնդիրներ, որոնց լուծումը ենթադրում է ինչպես պրակտիկայի վերանայում, այնպես էլ օրենսդրական փոփոխություն:

Այսպես.

<u>1) Օրենսդրությամբ սահմանված չէ մեկ օրվա ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացվողների առավելագույն քանակ:</u> Օրվա ընթացքում մեծ թվով փորձաքննությունների իրականացումը ռիսկ է պարունակում՝ դրանց որակի նվազեցման և ժամեր շարունակ իրենց հերթին սպասող զորակոչիկների համար բարդություններ առաջացնելու առումով: Օրինակ, 2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերին ստացվել են ահազանգեր՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը սպասելիս՝ հերթում, զորակոչիկների առողջական վիճակը վատթարանալու վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմ ահազանգ ներկայացնող անձինք խնդրել են աջակցել հնարավորին սեղմ ժամկետում փորձաքննությանը ներկայացվելու հարցում: Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման և ԿԲՀ-ի հետ համագործակցության արդյունքում զորակոչիկներն անմիջապես ներկայացվել են փորձաքննության: Նշված հարցը 2024 թվականի ընթացքում քննարկվել է նաև ԿԲՀ իրավասու ներկայացուցիչների հետ: Արդյունքում կարող ենք փաստել, որ անհրաժեշտ է մշակել կառուցակարգեր, որպեսզի և՛ զորակոչիկների և՛ բժիշկ-փորձագետների համար օրվա ընթացքում մեծաթիվ հերթերն ու փորձաքննությունները չհանգեցնեն բարդությունների:

<u>2) Գործող կարգավորումները զինապարտ քաղաքացու համար չեն նախատեսում իր նախընտրած մասնագետին՝ որպես խորհրդատու, փորձաքննությանը ներգրավելու հնարավորություն:</u> Այս հնարավորության ընձեռումը կարող է ապահովել զորակոչիկի պատշաճ իրազեկվածությունը փորձաքննության ընթացքի ու դրա արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև ապահովել առավել բարձր վստահություն հանձնաժողովի որոշման օբյեկտիվության նկատմամբ, քանի որ իրենց նախընտրած մասնագետի միջոցով զորակոչիկներն առավել արդյունավետ կկարողանան բարձրացնել փորձաքննության հետ կապված խնդրահարույց թվացող հարցերը կամ մտահոգությունները:

3) Զորակոչային և ռազմաբժշկական հանձնաժողովները (ԶԲՀ, ԿԲՀ, ԿՊՌԲՀ) զորակոչիկների առողջական խնդիրները հետազոտում կամ փորձաքննում են բոլորի ներկայությամբ, այսինքն՝ այլ զորակոչիկների կամ այլ անձանց ներկայությամբ, ինչը բժշկական գաղտնիքի տեսանկյունից խնդրահարույց է: Պաշտպանն այս խնդիրը շարունակել է արձանագրել 2024 թվականի զորակոչերի ընթացքում:

4) Գործող կարգավորումներով զորակոչից խուսափելու համար քրեական հետապնդման մեջ գտնվող անձանց՝ քրեական վարույթի շրջանակներում իրականացված դատաբժշկական փորձաքննության արդյունքները (եզրակացությունները) զորակոչիկների փորձաքննությունն իրականացնելիս (օրինակ, ԿԲՀ-ի կողմից) հաշվի չեն առնվում, և զորակոչիկների փորձաքննություններն իրականացվում են ընդհանուր հիմունքներով: Այսինքն, կրկին ուղեգրեր են տրամադրվում, միջոցներ են ծախսվում և այլն: Ստացվում է, որ քրեական վարույթի շրջանակներում անձի նկատմամբ իրականացվում է դատաբժշկական փորձաքննություն, քաղաքացին անցնում է բժշկական հետազոտություններ, ծախսվում են որոշակի միջոցներ, և ներկայացվում է մասնագիտական եզրակացություն, սակայն այն որևէ կերպ զորակոչի գործընթացում չի դիտարկվում և հաշվի չի առնվում: Սա խնդրահարույց է նաև անձի իրավունքների տեսանկյունից այն առումով, որ քաղաքացին ստիպված է լինում պարբերաբար անցնել նույն հետազոտությունը (օրինակ, ռենտգեն), որը կարող է բացասաբար անդրադառնալ նրա առողջության վրա: Արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչերի ընթացքում ԿԲՀ եզրակացությամբ անձը ենթակա է եղել զորակոչման ՀՀ ԶՈՒ, սակայն հետագայում (երբ անձը համաձայն չլինելով ԿԲՀ եզրակացության հետ՝ չի զորակոչվել և նախաձեռնվել է քրեական վարույթ) քրեական վարույթի շրջանակում իրականացված դատաբժշկական փորձաքննությամբ ներկայացվել է ԿԲՀ եզրակացությունից տարբերվող եզրակացություն:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել ՀՀ քննչական կոմիտե այն մասին, թե պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում իրականացված դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննությունների եզրակացությամբ 2024 թվականի ընթացքում քանի՞ մեղադրյալ է զինվորական ծառայության համար ճանաչվել ոչ պիտանի (այդ թվում՝ ժամանակավորապես ոչ պիտանի և բուժման կարիք ունեցող): Ըստ Քննչական կոմիտեի՝ 2024 թվականի ընթացքում 269 մեղադրյալ զինվորական կամ այլընտրանքային ծառայության համար ճանաչվել են ոչ պիտանի, այդ թվում 134-ը՝ ոչ պիտանի, 127-ը՝ ժամանակավորապես ոչ պիտանի և 8-ը՝ բուժման կարիք ունեցող:

6) Փորձը ցույց է տալիս, որ զորակոչերի ընթացքում երբեմն հաշվի չեն առնվում առաջնային փորձաքննությունից էականորեն տարբերվող և զորակոչիկների սեփական միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքները: Պաշտպանը կարևորում է, որ նման դեպքերում անձը ուղեգրվի լրացուցիչ հետազոտության, հակառակ դեպքում կարող ենք ունենալ խնդրահարույց իրավիճակներ: Այս հարցի հետ կապված 2024 թվականի զորակոչերի ընթացքում զորակոչիկներից և նրանց ծնողներից ստացվել են մի շարք բողոքներ:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2024 թվականի ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կայացրած թվով 156 եզրակացություն բողոքարկվել է ՀՀ պաշտպանության նախարարին, որոնցից թվով 64 դիմումների վերաբերյալ նշանակվել է լրացուցիչ քննություն, որի արդյունքում թվով 14 եզրակացություն փոխվել է:

<u>7) Շարունակվում են արձանագրվել դեպքեր, երբ զորակոչիկները լրացուցիչ հետազոտության են ուղեգրվում այն բժշկական հաստատություն, որի հետ կապված բողոք են ներկայացրել:</u> Նման դեպքերում նույն բժշկական հաստատությունը կարող է կաշկանդված լինել նախկինում իր կողմից տրված ախտորոշմամբ, իսկ զորակոչիկը՝ կասկածներ ունենալ՝ հետազոտության օբյեկտիվության հետ կապված:

<u>8) Մեկ այլ խնդիր է այն, որ զինկոմիսարիատի ուղեգրով զորակոչիկն անցնում է կոնկրետ հետազոտություն, զորակոչիկի մոտ հետազոտությամբ հաստատվում է հիվանդության առկայությունը, արդյունքում, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը հետազոտության հիման վրա կարող է կայացնել պիտանիության վերաբերյալ կոնկրետ եզրակացություն: Մինչդեռ, շարունակվում են արձանագրվել դեպքեր, երբ Կենտրոնական բժշկական հանձնաժողովը զորակոչիկին ուղեգրում է նույն հիվանդության կապակցությամբ կրկնակի կամ եռակի հետազոտությունների:</u> Արդյունքում, ոչ միայն ծախսվում են հավելյալ միջոցներ, այլև զորակոչիկը ստիպված է լինում անընդհատ անցնել նույնաբնույթ հետազոտություններ:

Պաշտպանը ոլորտային խնդիրները բարձրաձայնելու հետ մեկտեղ ներկայացնում է նաև դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Մասնավորապես, վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.

- ***մշակել նոր կառուցակարգեր՝ մեկ օրվա ընթացքում առողջական վիճակի փորձաքննություն իրականացնելու զինապարտ քաղաքացիների առավելագույն թվաքանակի հաշվառմամբ,***
- ***Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանել, որ փորձաքննվողը բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների նիստերին որպես խորհրդատու կարող է ներգրավել իր նախընտրած մասնագետին,***
- ***զորակոչիկների բժշկական հետազոտություններն ու փորձաքննություններն իրականացնել այլ անձանց տեսալսողական տիրույթից դուրս,***
- ***քննարկման առարկա դարձնել ՀՀ զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովի և ԿԲՀ-ի կողմից զորակոչիկների վերաբերյալ փորձաքննական եզրակացություններ ներկայացնելիս դրանց հիմքում զորակոչից խուսափելու համար քրեական վարույթների շրջանակներում իրականացված դատաբժշկական փորձաքննության արդյունքները դնելու հնարավորության հարցը (ըստ անհրաժեշտության՝ սահմանելով որոշակի բացառություններ),***
- ***զորակոչիկներին ուղեգրել լրացուցիչ հետազոտությունների, երբ զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ և միջոցներով իրականացված հետազոտությունների ախտորոշումներում առկա են ուղեգրով կատարված***

հետազոտությունների արդյունքներից էապես տարբերվող և պիտանիության աստիճանի հնարավոր փոփոխության հանգեցնող տվյալներ,

✓ զինկոմիսարիատի ուղեգրով անցած հետազոտությունները բողոքարկող զորակոչիկին հնարավորության դեպքում ուղեգրել այլընտրանքային բուժհաստատություն, այլ ոչ թե այն հաստատություն, որի եզրակացությունը տվյալ զորակոչիկը բողոքարկում է (իհարկե հաշվի առնելով այն հանգամանքը, թե տվյալ հիվանդությունն ախտորոշող այլ բուժհաստատություն առկա է, թե ոչ),

✓ մշակել կառուցակարգեր բավարար տվյալների առկայության դեպքում զորակոչիկի պիտանիության վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու առնչությամբ՝ նույն ախտորոշումը ճշգրտելու նպատակով զորակոչիկին անընդհատ նույնաբովանդակ հետազոտությունների ուղեգրելու փոխարեն:

2. Զինվորական ծառայության համար պիտանիության գնահատման առկա չափանիշները. հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը

Քաղաքացիների առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկելը պետության պարտականությունն է և այդ նպատակով, ի թիվս այլնի, պետք է կատարելագործվեն նաև օրենսդրական կառուցակարգերը, այդ թվում՝ քաղաքացիների առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշները:

Այս առումով առանցքային նշանակություն ունի զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունները սահմանող ցանկի կատարելագործման շարունակականությունը:

2024 թվականի նոյեմբերին Պաշտպանի կարծիքին են ներկայացվել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն (հիվանդությունների ցանկ) և 405-Ն (հետազոտման ու փորձաքննության կարգ) որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին Կառավարության որոշումների նախագծերը[99]:

Սույն տարեկան հաղորդման շրջանակում Պաշտպանը կարևոր է համարում հատուկ անդրադառնալ նշված որոշումների նախագծերին, դրանց կապակցությամբ Պաշտպանի ներկայացրած դիտարկումներին, քանի որ *նշված որոշումները և դրանցում կատարված լրացումներն ու փոփոխությունները էական ազդեցություն են ունեցել հատկապես 2024 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում զինծառայության համար քաղաքացիների պիտանիությունը որոշելու հարցերում:*

Ավելին, նշված որոշումներում փոփոխություններն ու լրացումները կատարվել են հենց 2024 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում՝ 2024 թվականի դեկտեմբերի 19-ին: Նախագծերը հիմնականում կառուցված են եղել «խստացումների գնալու» կամ այլ կերպ ասած՝ որոշակի առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիներին բուժման նպատակով այլևս տարկետումներ չտրամադրելու տրամաբանության վրա: Դրա մասին էր վկայում նաև նախագծին կից ներկայացված հիմնավորումը, ըստ որի՝ նման կարգավորումների նախատեսմամբ կնվազի բուժման նպատակով քաղաքացիներին տրվող տարկետումների քանակը, և ըստ անհրաժեշտության՝ նրանց բուժումը կիրականացվի զինծառայողի կարգավիճակով: Փոփոխություններից ու լրացումներից

[99] Նախագծին և դրա վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումներին կարելի է մանրամասն ծանոթանալ https://www.e-gov.am/sessions/archive/2024/12/19/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հետո բազմաթիվ զորակոչիկներ, որոնք նախկինում առողջական կոնկրետ խնդրի պատճառով չէին զորակոչվել՝ փորձաքննության արդյունքում նույն առողջական խնդրով ճանաչվեցին պիտանի/սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և ենթակա եղան ներգրավվելու զինված ուժեր:

Վերոնշյալ հարցերի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմ ստացվել են բազմաթիվ բողոքներ:

Մարդու իրավունքների պաշտպանի նկատառումները ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումների նախագծերի վերաբերյալ.

1.Ելակետային պետք է համարել այն գաղափարը, որ քաղաքացուն բուժման կարիք ունեցող ճանաչելը և մինչև մեկ տարի ժամկետով տարկետում տալը մշտապես ունեցել է իր նպատակային նշանակությունը: Այն է՝ բուժումից/դիտարկումից հետո **զինված ուժեր ներգրավել առողջ անձի կամ այնպիսի անձի, որն ունակ կլինի առողջական որոշակի խնդիրներով հանդերձ պիտանի լինել զինված ուժերի համար և, միևնույն ժամանակ, զորակոչելիս արձանագրված առողջական խնդիրները և զինվորական ծառայությունը չեն լինի անհամատեղելի**: Ոչ պակաս կարևոր է նաև այն հարցը, թե արդյոք նման կարգավորումներ նախատեսելիս ամբողջությամբ գնահատվել են զինված ուժերի (առանձին զորամասերի, բուժկետների, հոսպիտալների) հնարավորություններն ու պայմանները և դրա ազդեցությունը անձի՝ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածով երաշխավորված առողջության պահպանման իրավունքի վրա:

2.Ըստ նախագծային կարգավորման՝ մոնոնուկլեոզի սուր փուլում գտնվող զորակոչիկները կարող են ճանաչվել բուժման կարիք ունեցող և ստանալ տարկետում, մինչդեռ մոնոնուկլեոզով հիվանդացած զորակոչիկները ենթակա կլինեն զորակոչման: Այս կապակցությամբ Պաշտպանն իրավասու մարմինների ուշադրությունն է հրավիրել այն հարցի վրա, որ **նշված հիվանդությունը վարակիչ է, և անձի մոտ մոնոնուկլեուզ (թեկուզև սուր փուլում չգտնվող) արձանագրելը և այդ առողջական վիճակով նրան զորակոչելը կարող է խնդրահարույց լինել ոչ միայն այդ անձի, այլև մյուս զինծառայողների իրավունքների ապահովման տեսանկյունից:** Առանց նախապես դիտարկելու նշված հիվանդության ընթացքը, տևականությունն ու արտահայտվածությունը՝ անմիջապես պիտանիության մասին որոշում կայացնելուց և զորակոչելուց հետո ծառայության ընթացքում արդեն կարող ենք «գործ ունենալ» մոնոնուկլեոզի սուր փուլում գտնվող անձի հետ: Բացի այդ, հարց է առաջանում՝ արդյոք մոնոնուկլեոզով հիվանդացած անձը կարող է զինվորական ծառայության ներգրավվելուց հետո պատշաճ կատարել ծառայողական պարտականությունները:

3.Նախատեսվող կարգավորմամբ՝ չափավոր գինեկոմաստիա, ինչպես նաև աննշան ոչ կանացի տիպի գինեկոմաստիա ունեցող զորակոչիկները ճանաչվելու են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և ենթակա են լինելու զորակոչման՝ անկախ նրանց մոտ հորմոնալ խանգարում լինելու հանգամանքից: Մինչդեռ, Պաշտպանի կարծիքով նախագծով հիմնավորված չէ նախատեսվող կարգավորմամբ հետապնդվող իրավաչափ նպատակը, բացահայտված և գնահատված չեն, թե արդյոք **հորմոնալ խանգարումներն ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ անձի առողջական վիճակի վրա, արդյոք խոչընդոտ չեն հանդիսանա զինվորական ծառայությունը պատշաճ իրականացնելու համար, ո՞րն է սահմանափակման վերացման նպատակը** և այլն:

4.Նախագծային կարգավորումների տրամաբանությամբ՝ առողջական վիճակի պատճառով տարկետում ստացած անձինք փորձաքննության արդյունքում ճանաչվում են պիտանի/սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, եթե առողջական վիճակում չի արձանագրվել բացասական դինամիկա: Պաշտպանի գնահատմամբ՝ նման կարգավորում նախատեսելը խնդրահարույց է՝ նկատի ունենալով նաև այն հիվանդությունների շրջանակը (արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդությունները, իմունային համակարգի առանձին խանգարումները, սրտամկանի, սրտապարկի, աորտայի հիվանդությունները, որովայնի խոռոչի օրգանների հիվանդությունները և զարգացման արատները), որոնց դեպքում մեկ անգամ մինչև մեկ տարի ժամկետով տարկետում ստանալուց հետո անձինք զորակոչվում են, եթե առողջական վիճակը ավելի չի վատթարացել: Նման պարագայում հարց է առաջանում, բոլոր այն դեպքերում, ***երբ անձին տրվում է տարկետում (օրինակ՝ սրտի հետ կապված առողջական խնդրի պատճառով), և այդ ընթացքում նա բուժում է ստանում, սակայն բուժումն արդյունք չի տալիս ու դրական դինամիկա չի արձանագրվում և հերթական զորակոչին հետազոտությամբ կրկին արձանագրվում է առողջական խնդիրը՝ ի՞նչ իրավաչափ նպատակով ու հիմնավորմամբ անձին պետք է զորակոչել: Նույնը վերաբերում է բուժումից հրաժարվելու դեպքերին, երբ անձի առողջական վիճակում դրական դինամիկա չի արձանագրվում: Մեկ այլ հարց է այն, թե նշված առողջական խնդիրներով անձանց զորակոչելն ինչո՞վ է պայմանավորված, արդյո՞ք զինված ուժերում, առանձին զորամասերում կատարվել են ծառայության պայմանների այնպիսի փոփոխություններ, հարմարեցումներ, որոնցով հանդերձ զինված ուժերը պատրաստ են այդպիսի առողջական խնդիրներով զինծառայողների ընդունել, որի դեպքում նաև ՀՈՒ-ում զինծառայողների առողջական վիճակն ավելի չի վատթարանա (հաշվի առնելով ծառայության ծանրաբեռնվածությունը)՝ հանգեցնելով անկանխատեսելի հետևանքների: Սրանք հարցեր են, որոնք կարիք ունեն առավել մանրամասն ուսումնասիրությունների ու քննարկումների:***

5.Նախագծով առաջարկվում է վերացնել որոշակի առողջական խնդիրներ ունեցող անձանց ներգրավման սահմանափակումն առաջնագծում մարտական հերթապահությանը, հրետանու կրակային, ՀՕՊ-ի մեկնարկային դիրքերում ու կապի հանգույցներում մարտական հերթափոխի և պահակային ծառայությանը, ինչպես նաև խոնավ և ցուրտ եղանակային պայմաններում ծառայությանը: Դա վերաբերում է, օրինակ, Կառավարության վերոնշյալ որոշման 48-րդ հոդվածի «գ» կետին: Այս կետն այնպիսի առողջական խնդիրների մասին է, ինչպիսիք են երակների խրոնիկ հիվանդությունը, պերիֆերիկ զարկերակների ֆունկցիոնալ հիվանդությունները, անգիոսպաստիկ փուլ, I աստիճանի լիմֆեդեման, ոտնաթաթի թիկնային մակերեսի աննշան այտուցով, որը անհետանում է հանգստից հետո, ցողունային երակահատումներից հետո վիճակները, եթե չկա երակային համակարգի փականային անբավարարություն: **Ստացվում է, որ, օրինակ, I աստիճանի լիմֆեդեմա կամ պերիֆերիկ զարկերակների ֆունկցիոնալ հիվանդություն ունեցող զինծառայողը կարող է ընդգրկվել խոնավ և ցուրտ պայմաններում առաջնագծում մարտական հերթապահության:** Հարկ է նշել, որ նախագծի հիմնավորումներում բացահայտված չէ նշված սահմանափակման վերացման նպատակը, ավելին, պարզ չէ, թե գնահատվել են արդյոք վերը նշված առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին մարտական հերթապահության կամ խոնավ ու ցուրտ պայմաններում ծառայության ներգրավելու ռիսկերը:

Կարևոր է նշել, որ Պաշտպանին հասցեագրվող բողոքների մեծ մասը վերաբերում են հենց զինծառայողների առողջական խնդիրներին ու պատշաճ բժշկական հետազոտություններ ու բուժումներ տրամադրելուն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ռազմաբժշկական համակարգը գործում է ծանրաբեռնված, երբեմն զինծառայողների որոշակի առողջական խնդիրներին արձագանքելը ձգձգվում է (օրինակ, բուժկետը, հոսպիտալները կամ կոնկրետ բժիշկ-մասնագետը լինում են գերծանրաբեռնված, կամ երբեմն առկա են լինում կոնկրետ բժիշկ-մասնագետի կամ սարքավորման համալրման անհրաժեշտություն և այլն) և զինծառայողը բուժում պահանջող առողջական խնդիրներով շարունակում է ծառայությունը, ինչն անթույլատրելի է: Վերոնշյալ կարգավորումները հանգեցնելու են զինված ուժեր առողջական խնդիրներով զինծառայողների նոր հոսքի, արդյունքում խնդիրներ են առաջանալու ինչպես կոնկրետ զորամասերի ծառայության կազմակերպման, կարգապահության բարձր մակարդակի պահպանման, այնպես էլ, ընդհանուր առմամբ, ռազմաբժշկական համակարգի ծանրաբեռնվածության մեծացման համար: Դա իր հերթին ուղղակի ազդեցություն է ունենալու զինծառայողներին տրամադրվող բժշկական օգնության ու սպասարկման որակի և ընդհանրապես զինծառայողների առողջության պահպանման և պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքների վրա: Բնականաբար, վերը նշվածի հետ մեկտեղ պետության համար կարող են առաջանալ նաև լրացուցիչ ֆինանսական և կազմակերպչական ծախսեր: Վերոնշյալի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ներկայում իրականացվում են զինապարտների և զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման ու փորձաքննությունների ամբողջական թվայնացման աշխատանքներ, ինչը վերջնարդյունքում դրական ազդեցություն է ունենալու գործընթացի պատշաճ իրականացման և զինվորական ծառայության կազմակերպման վրա:

Պաշտպանի աշխատակազմում զորակոչիկների և զինծառայողների առողջական վիճակի, հետազոտությունների ու փորձաքննությունների հետ կապված հարցերը դիտարկվել են նաև միջազգային իրավական չափորոշիչների լույսի ներքո:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. ***թեև պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշները, այնուամենայնիվ զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների մարտահրավերներին:*** Նրանք պետք է պատրաստ լինեն նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականության ու պատասխանատվության բարձրացմանը: Զինվորական ծառայության պահանջները նկատի ունենալով՝ ***պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական***

ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի[100]: Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ ***պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չպատճառեն նրան ֆիզիկական տառապանք կամ չանցնեն զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ զինծառայողի առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված լինեն:*** Պետության առաջնային պարտականությունն է անձին զինվորական ծառայության զորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով[101]: Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետությունը պետք է ***գործնական միջոցներ ձեռնարկի զորակոչիկների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով նրանց առողջությանը սպառնացող ռիսկը՝ ի թիվս այլնի տրամադրելով նաև պահանջվող բժշկական օգնություն***[102]: Բժշկական հանձնաժողովներն իրենց գործունեությունը պետք է կազմակերպեն այնպես, որպեսզի պարտադիր զինվորական ծառայության համար առողջական խնդիրների պատճառով ոչ պիտանի անձինք չզորակոչվեն զինվորական ծառայության[103]:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է արձանագրել, որ **չափազանց կարևոր է ի սկզբանե ծառայության զորակոչել առողջ քաղաքացիների, իսկ որոշակի առողջական խնդիրների առկայության պարագայում հատուկ ուշադրություն դարձնել պատշաճ բուժօգնության տրամադրմանը, առողջական վիճակի բարելավմանը և հետո միայն զինված ուժեր ներգրավմանը: Հակառակ տրամաբանությամբ առաջ շարժվելը հակադրության մեջ է դնելու «մարդու իրավունքներ և պետության անվտանգություն» զուգահեռ ընթացող արժեքները: Բոլոր դեպքերում պետք է թույլ չտալ պետության անվտանգության ապահովման համար մարդու իրավունքների տեսանկյունից խնդրահարույց իրավիճակի առաջացում:**

Միևնույն ժամանակ, փոփոխություններ նախատեսելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե զինված ուժերը, առանձին զորամասերը, զորամասային պայմանները, հոսպիտալային համակարգը արդյոք պատրաստ են նոր մարտահրավերներին, արդյոք նշված համակարգերում կատարվել են

---

[100] Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի (Kayankin v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

[101] Տե՛ս Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (CHEMBER v. RUSSIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի հուլիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

[102]Տե՛ս Քիլինջը և այլք ընդդեմ Թուրքիայի (Kilinç and thers v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, կետեր 41-42:

[103] Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի (Kayankin v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

այնպիսի փոփոխություններ ու հարմարեցումներ, որոնք կապահովեն անձի առողջության համար անվտանգ պայմաններում ծառայություն և չեն հանգեցնի առողջական վիճակի վատթարացման:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում

2024 թվականի ընթացքում զինծառայողներին առողջական խնդիրների կապակցությամբ ամբողջական հետազոտություններ իրականացնելու, պատշաճ բուժօգնություն տրամադրելու և առողջության պահպանման իրավունքին վերաբերելի հարցերը շարունակել են գտնվել Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Հարկ է նկատել, որ զինծառայողներից և նրանց ընտանիքների անդամներից Պաշտպանի աշխատակազմ մուտքագրվող բողոքների զգալի մասը վերաբերում են հենց առողջական վիճակի վերաբերյալ հարցերին և առողջական խնդիրների կապակցությամբ պատշաճ բուժօգնություն տրամադրելուն:

Ամփոփելով Պաշտպանին հասցեագրվող զինծառայողների առողջության պահպանման իրավունքին առնչվող բողոքները՝ կարող ենք ոլորտային խնդիրները բաժանել մի քանի հիմնական ուղղությունների՝

1. Առողջական խնդիրների կապակցությամբ պատշաճ բուժօգնության չտրամադրում

↓

2. Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանների չպահպանում

↓

3. Պլանային վիրահատությունների չիրականացում կամ վիրահատությունների ձգձգում

↓

4. Հոսպիտալների, բուժկետերի շենքային պայմանների, կադրային ու գործիքային հագեցվածությամբ ապահովելու անհրաժեշտություն

↓

5. Հոսպիտալում բուժում ստանալու նպատակով 120 օրից ավելի չպահելու և զորամաս ուղարկելու հետ կապված խնդիր

Կարևոր է արձանագրել, որ զինծառայողներին հետազոտությունների ուղեգրելու և պատշաճ բուժօգնություն տրամադրելու վերաբերյալ բազմաթիվ հարցեր Պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ արագ լուծումներ են ստացել, իսկ համակարգային խնդիրներին լուծումներ գտնելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը բազմաթիվ այցեր է իրականացրել զորամասեր և զինվորական հոսպիտալներ: Այցերի ընթացքում առաջնային ուշադրություն է դարձվել զինծառայողների ծառայության պայմաններին և դրանց համատեղելիությանը զինծառայողների առողջության պահպանման իրավունքին: Այդ նպատակով առանձնազրույցներ են տեղի ունեցել ժամկետային և պայմանագրային զինծառայողների, այդ թվում՝ սպայակազմի հետ: Այցերի ընթացքում մշտապես դիտարկվել են զորամասերի բուժկետերը, դրանց շենքային պայմանները, հաստիքային համալրվածությունը, դեղորայքի առկայությունը և այլն[104]: Պաշտպանն առանձին այց է իրականացրել Լոռու կայազորային հոսպիտալ[105]: Ուսումնասիրվել են զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման հարցերը, առանձնազրույցներ են տեղի ունեցել տարբեր բաժանմունքներում բուժում ստացող զինծառայողների հետ: Բուժանձնակազմի հետ քննարկվել են զինծառայողների բուժման ընթացքի ու մեթոդների հետ կապված հարցեր: Բուժում ստացող զինծառայողները ներկայացրել են իրենց առողջական խնդիրները, բուժման ընթացքը, ծառայողական առօրյան: Նշված հոսպիտալում, ի թիվս այլնի, արձանագրվել է շենքային պայմանների (հին շինություն է, անհրաժեշտություն կա վերանորոգման և նոր մասնաշենքի կառուցման), հաստիքային համալրվածության, գործիքային հագեցվածության և այլ բնույթի խնդիրներ: Անհրաժեշտ է նշել, որ զինծառայողների առողջության պահպանման իրավունքին վերաբերելի բոլոր

[104] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3121, https://ombuds.am/am/site/ViewNews/2987, https://ombuds.am/am/site/ViewNews/3028 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[105] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3126 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հարցերը Պաշտպանը պարբերաբար տարբեր ձևաչափերով ներկայացնում է իրավասու գերատեսչություններ:

Այս համատեքստում կարևորելով հոսպիտալների կադրային և գործիքային բավարար համալրվածության խնդրի լուծումը՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է ուղարկել ՊՆ և ԱԱԾ այն մասին, թե 2024 թվականի ընթացքում զինվորական հոսպիտալների շենքային և տեխնիկական հագեցվածության աստիճանի բարձրացման (նոր շենք-շինությունների կառուցում ու բարեկարգում, բժշկական սարքավորումների ավելացում, նոր կամ ավելի արդիական սարքերի տրամադրում և այլն) ուղղությամբ ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել, հետագայում այս ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են պլանավորվել: Պաշտպանի գնահատմամբ՝ հարցի հրատապությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ նախատեսվել են հիվանդությունների ցանկի «խստացումներ», ինչի պատճառով հոսպիտալների ծանրաբեռնվածությունն ավելանալու է:

Ազգային անվտանգության ծառայության տեղեկացմամբ՝ 2024 թվականի ընթացքում ԱԱԾ ռազմաբժշկական հաստատությունը համալրվել է 3 ատամնաբուժական սարքերով, «ԷՍԳ» սարքով, լաբորատոր ցենտրիֆուգայով: Նոր բժշկական գույքով և սարքավորումներով համալրվել են ֆիզիոթերապևտիկ, «ԼՕՌ» և ակնաբուժական կաբինետները: Ծառայության ռազմաբժշկական հաստատության վարչական շենքը «կոսմետիկ» վերանորոգվել է, մասամբ փոխարինվել է բժշկական և գրասենյակային գույքերը»: Ստորաբաժանումներն ապահովված են անհրաժեշտ դեղորայքով և այլ միջոցներով, մշտապես համալրվում է զորամասերում, պարետատներում, ուղեկալներում առկա դեղորայքի քանակը, մշտապես անցկացվում են դեղորայքի ժամկետների, պահպանման պայմանների ստուգումներ: Ծառայության ռազմաբժշկական հաստատության շենքային պայմանները բարելավվելու, որակյալ բժշկական անձնակազմով և սարքավորումներով համալրելու ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ Երևանի կայազորային հոսպիտալում նախատեսվել է 2025 թվականին կառուցել առանձին խոհանոցի մասնաշենք և այդ նպատակով կայացած շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթային գործընթացի արդյունքում կա ընտրված մասնակից: Միաժամանակ նշվել է, որ ՋՈՒ բոլոր հոսպիտալների խոհանոցներն ու բուֆետները 2024 թվականին ենթարկվել են ընթացիկ վերանորոգումների, ամբողջությամբ թարմացվել է գույքն ու սպասքեղենը: Բոլոր նոր շենք-շինությունների կառուցման ավարտից հետո, համաձայն ներկայացրած հայտերի, ՊՆ ԹԱՎ հրդեհային անվտանգության ծառայության կողմից հատկացվում է համապատասխան հակահրդեհային գույք: Միևնույն ժամանակ, Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ 2023 թվականի հոկտեմբերի 31-ին կայացած խորհրդակցության արդյունքում ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության 2024 թվականի ծախսային ծրագրից հանվել է «Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրում» միջոցառումը, բացի այդ 2025 թվականի ծախսային ծրագրում նվազեցվել է նաև «Դեղորայքի տրամադրում զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին» միջոցառման

ֆինանսավորումը, ուստի՝ անհրաժեշտ միջոցներով համալրում հնարավոր կլինի իրականացնել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում հատուկ ընդգծել, որ զինծառայողների առողջության պահպանման իրավունքի «ուղիղ պատասխանատուն» պետությունն է, հետևաբար պետությունը պետք է մշակի արդյունավետ կառուցակարգեր և ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում անձի առողջական վիճակը չվատթարանա, իսկ զինծառայողների առողջական խնդիրների դեպքում՝ տրամադրի պատշաճ բժշկական օգնություն: Հետևաբար, անհրաժեշտ է ռազմաբժշկական ոլորտին ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում՝ մշտապես համալրելով, զարգացնելով ու կատարելագործելով առկա կառուցակարգերը՝ սկսած բուժկետերի, հոսպիտալների շենքային պայմաններից, մինչև գործիքային, կադրային ու դեղորայքային համալրվածության ապահովում: Այս համատեքստում Պաշտպանը հատուկ ընդգծում է ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության առանցքային դերը ՀՀ զինված ուժերի անձնակազմի առողջության պահպանման, ամրապնդման, ամբուլատոր, ստացիոնար և վերականգնողական բուժօգնության կազմակերպման հարցերում: Պաշտպանը բարձր է գնահատում նշված ստորաբաժանման ակտիվ ու արձագանքող մոտեցումը Պաշտպանի աշխատակազմի կողմից բարձրացվող՝ զինծառայողների առողջության պահպանման իրավունքին վերաբերելի տարբեր հարցերին արագ արձագանքելու և բարձրացված խնդիրներին սեղմ ժամկետում լուծումներ տալու համար: Ինչպես նշված ստորաբաժանման, այնպես էլ ՊՆ այլ ստորաբաժանումների հետ ձևավորված ակտիվ ու արդյունավետ համագործակցության շնորհիվ հնարավոր է լինում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բարձրացրած բազմաթիվ հարցերի արագ լուծումներ տալ: Այս առումով Պաշտպանը կարևորում է նաև ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության և ենթակա օղակների՝ բուժկետեր, հոսպիտալներ և այլն, կարողությունների շարունակական զարգացումը:

Ոլորտային հաջորդ հարցը վերաբերում է **զինծառայողների առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները չպահպանելուն:** Նշված հարցով Պաշտպանը ստացել է գրավոր ու բանավոր բողոքներ, խնդիրն արձանագրվել է նաև տարբեր զորամասեր իրականացված այցերի ընթացքում: Օրինակ, զորամասերից մեկում առանձնազրույցների ընթացքում որոշ զինծառայողներ տեղեկացրել են, որ չնայած սահմանափակումով պիտանի են ճանաչվել զինվորական ծառայության համար, սակայն որևէ ֆիզիկական վարժությունից ազատված չեն: Խնդիրները տեղում քննարկվել են հրամանատարության հետ, և առաջարկվել է խստորեն պահպանել հոդվածներով նախատեսված սահմանափակումների պահանջները, իսկ բուժման կարիք ունեցող զինծառայողին տրամադրել համապատասխան բուժօգնություն:

Պաշտպանն առանձին հարցում է ուղարկել Պաշտպանության նախարարություն և Ազգային անվտանգության ծառայություն այն մասին, թե արդյոք արձանագրվել են դեպքեր, երբ ծառայության ընթացքում սահմանափակումները չպահպանելու հետևանքով զինծառայողների առողջական վիճակը վատթարացել է, եթե այո, ապա ինչ միջոցներ են ձեռնարկվել այդ ուղղությամբ:

Ազգային անվտանգության ծառայության տեղեկացմամբ՝ 2024 թվականի ընթացքում սահմանապահ զորքեր զորակոչվել են զինծառայողներ, որոնց առողջական խնդիրների հաշվառմամբ ցուցաբերվում է անհատական մոտեցում և

նրանք ընդգրկվում են ծառայության այնպիսի տեղամասերում, որտեղ նրանց առողջական վիճակը չի վատթարանա: Սահմանափակումները խստորեն պահպանվում են: Վերոնշյալ հարցադրման կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ծառայության ընթացքում սահմանափակումները չպահպանելու վերաբերյալ ստացվել են եզակի դիմում-բողոքներ, սակայն զինծառայողների լրացուցիչ բժշկական հետազոտության արդյունքներով առողջական վիճակի վատթարացում չի արձանագրվել, իսկ սահամանափակումները պահպանելու վերաբերյալ տրվել են հանձնարարականներ:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ **առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը բոլոր դեպքերում և անխտիր բոլոր զորամասերում պետք է լինի երաշխավորված, և պետությունը պետք է բացառի ծառայողական պայմանների հետ կապված՝ զինծառայողների առողջությանը սպառնացող ռիսկը:**

Զինծառայողների առողջության պահպանման տեսանկյունից կարևոր է **պլանային վիրահատությունների պատշաճ կազմակերպումն ու իրականացումը՝ առանց անհարկի ձգձգումների:** Մինչդեռ, մի շարք բողոքներով զինծառայողները նշել են, որ չնայած վիրահատություն իրականացնելու համար առկա է բժշկական ցուցում, սակայն վիրահատությունը չի իրականացվում և պարբերաբար ձգձգվում է (հիմնականում քթի միջնապատի վիրահատություն): Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ նշանակված պլանային վիրահատությունը ծառայության ընթացքում չի իրականացվել, զինծառայողը արձակվելուց հետո դիմել է Պաշտպանին: Եվ միայն Պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման և ՊՆ-ի հետ համագործակցության արդյունքում է խնդիրը կարգավորվել:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ խնդիրն առկա է հիմնականում քթի միջնապատի դեֆորմացիայի հետ կապված զինծառայողների վիրահատության մասով: Այն զինծառայողները, ովքեր չեն վիրահատվել նախազորակոչային ժամանակահատվածում և ցանկանում են վիրահատվել ծառայության ընթացքում՝ վիրահատության հարցը քննարկվում է արտաքին շնչառական ֆունկցիայի խանգարման աստիճանը ռազմաբժշկական հաստատություններում գնահատելուց հետո, իսկ զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության պարագայում պլանային վիրահատությունների ձգձգումներ հիմնականում չեն լինում կամ կապված են սահմանային միջադեպերով պայմանավորված զինծառայողների մարտական հերթապահությանը ընդգրկված լինելու կամ կայազորային հոսպիտալների մահճակալային ֆոնդի ծանրաբեռնվածությամբ և մահճակալային ռեզերվի անհրաժեշտությամբ:

Հարցի կապակցությամբ ԱԱԾ-ն տեղեկացրել է, որ 2024 թվականի ընթացքում պլանային վիրահատություն իրականացնելու ցուցմամբ 40 զինծառայող ստացել են վիրահատական բժշկական օգնություն: Ծառայության կողմից իրականացվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված և պլանային վիրահատության կարիք ունեցող նորակոչիկների հաշվառում: Պլանային վիրահատությունների ժամանակացույցը մշակվում է ՊՆ ռազմաբժշկական հաստատությունների հետ համատեղ և պարբերաբար թարմացվում է, իսկ բժշկական օգնությունը կազմակերպվում է նույն ռազմաբժշկական հաստատություններում՝ հիմնականում ծառայության առաջին վեց ամիսների ընթացքում:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը բողոքներ է ստացել զինծառայողին **120 օրից ավելի հոսպիտալում չպահելու և զորամաս ուղարկելու հարցի վերաբերյալ:** Նշված խնդրին Պաշտպանը մանրամասն անդրադարձել էր նաև նախորդ տարեկան հաղորդմամբ: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 95-րդ կետի համաձայն՝ «... ընդհանուր առմամբ, հիվանդության պատճառով բուժման և հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 120 օրը՝ զորամասից ուղեգրվելու օրվանից հաշված: Բացառիկ դեպքերում, զինծառայողի բուժման ու շարք վերադարձման նպատակով, ԿՌԲՓԿ հիմնավորմամբ և Պաշտպանության նախարարի որոշմամբ բուժման ժամկետը կարող է երկարացվել ևս մինչև 30 օր»: Այս պարագայում բաց է մնում այն հարցը, թե վերը նշված ժամկետը լրանալու և զինծառայողի բուժումն ավարտված չլինելու պարագայում ինչպես է կազմակերպվելու դրա հետագա իրականացումը: Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ սահմանված առավելագույն ժամկետի լրանալուն պես զինծառայողն ուղարկվել է մշտական տեղակայման զորամաս՝ չնայած այն հանգամանքին, որ դեռ ամբողջովին վերականգնված կամ բուժված չի եղել: Պաշտպանի դիտարկմամբ՝ զինծառայողներին բուժօգնություն տրամադրելու հարցերին չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերել, այլ անխտիր բոլոր դեպքերում անհրաժեշտ է դրսևորել անհատական մոտեցում և լրիվ ծավալով իրականացնել պատշաճ բժշկական օգնություն ու սպասարկում:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***առողջական վիճակի վերաբերյալ գանգատների բոլոր դեպքերում անհապաղ իրականացնել զինծառայողի պատշաճ հետազոտություն և բուժում,***
- ✓ ***բոլոր զորամասերի համար մշակել պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև պլանային վիրահատության կարիք ունեցող զինծառայողների հաշվառման կարգ և հնարավորին սեղմ ժամկետում միջոցներ ձեռնարկել վիրահատություններն իրականացնելու ուղղությամբ,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի նկատմամբ նշանակված բուժումը լրիվ ծավալով փաստացի իրականացվի,***
- ✓ ***ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ վերանայելով նշված որոշման 95-րդ կետի պարտադիր պահանջը՝ բուժման առավելագույն ժամկետի վերաբերյալ,***
- ✓ ***խստորեն պահպանել պարտադիր ժամկետային զինծառայողների առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները և զինծառայողներին ծառայության նշանակել իրենց առողջական վիճակին համապատասխան զորամասեր,***
- ✓ ***զարգացնել ու արդիականացնել ռազմաբժշկական ոլորտի առկա կառուցակարգերը՝ սկսած բուժկետերի, հոսպիտալների շենքային պայմաններից, մինչև գործիքային, կադրային ու դեղորայքային համալրվածության ապահովում:***

2. Զինծառայողների առաջնահերթ հետազոտման և բուժման իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիներին **զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու դեպքերում,** նրանց հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են **առաջնահերթ** ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Առաջնահերթ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու այսպիսի արտոնություն նախատեսված չէ զինծառայողների պարագայում, և զինծառայողների հետազոտությունն իրականացվում է ընդհանուր հիմունքներով: Արդյունքում, զինծառայողների հետազոտությունները, բժշկական օգնության տրամադրումը ձգձգվում են, որի հետևանքով զինվորական հոսպիտալներում նրանց մնալը երկարացվում է: Հարցը բազմիցս բարձրացվել է ինչպես Պաշտպանի տարեկան հաղորդումներում, այնպես էլ իրավասու պետական մարմինների հետ տարբեր հաղորդակցությունների ձևով: Խնդիրը ներկայում ևս արդիական է, քանի որ զինծառայողների բուժօգնությունը քաղաքացիական բժշկական հաստատություններում շարունակվում է իրականացվել հերթագրմամբ:

Հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ ոլորտային օրենսդրությունում փոփոխություններ կատարելու առաջարկություններ են ներկայացվել, իսկ մինչ համապատասխան փոփոխությունները՝ տարբեր ձևերով միջոցներ են ձեռնարկվում զինծառայողների անհրաժեշտ հետազոտությունները հնարավորին սեղմ ժամկետներում իրականացնելու համար: Ազգային անվտանգության ծառայությունն էլ տեղեկացրել է, որ քաղաքացիական բժշկական կենտրոններում բուժօգնություն ստանալու նպատակով հերթագրված զինծառայողների հետազոտությունը հերթի պատճառով ձգձգվելու վերաբերյալ գրավոր բողոքներ չեն ստացվել, սակայն եղել են բանավոր դժգոհություններ: Նման դեպքերը բացառելու նպատակով բուժհաստատությունների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ հետազոտությունները հնարավորին արագ կազմակերպելու ուղղությամբ: ԱԱԾ-ն ևս առաջարկում է ոլորտային օրենսդրությունում կատարել փոփոխություններ, որոնք թույլ կտան զինծառայողների բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպել արտահերթ:

Այս կապակցությամբ ուշագրավ է, որ Առողջապահության նախարարությունն ի պատասխան Պաշտպանի հարցմանը՝ նշել է, որ 2024 թվականին քաղաքացիական բժշկական կազմակերպություններ դիմած կամ ուղեգրված զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման ձգձգումների հետ կապված բողոքներ չեն ստացվել:

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ խնդիրը քննարկվել է ոլորտային մասնագետների, հոսպիտալների բուժանձնակազմի և ղեկավար կազմի հետ, և կրկին հաստատվել է, որ զինծառայողների հետազոտությունները փաստացի շարունակվում են իրականացվել ընդհանուր հիմունքներով, ավելին՝ ընդգծվել է, որ խնդիրը համակարգային է. հաճախ հետազոտությունները ձգձգվում են, և միայն քիչ դեպքերում է, որ դրանք իրականացվում են հրատապ և սեղմ ժամկետում:

Պաշտպանին հասցեագրված բողոքները, ինչպես նաև զորամասեր և հոսպիտալներ իրականացված այցերը ցույց են տալիս, որ շատ դեպքերում քաղաքացիական բժշկական հաստատություններում հետազոտության նպատակով հերթագրվելու խնդիրների պատճառով զինծառայողները տևական ժամանակ կարող են մնալ զինվորական հոսպիտալներում: Խնդիրը հատկապես ակնառու է այն դեպքերում, երբ տասնյակ օրեր շարունակ հնարավոր չի լինում կազմակերպել մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողների հետազոտությունը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է զորամասում մնացած անձնակազմի ծանրաբեռնվածության մեծացմանը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ **զինվորական ծառայության մեջ գտնվող քաղաքացին պետության անմիջական հոգածության ներքո է,** ինչը ոչ միայն զինծառայողի կյանքի ու առողջության իրավունքի ապահովման և դրան համարժեք՝ պետության պարտավորության մասին է վկայում, այլ պարտավորությունների չկատարման պարագայում կարող է հանգեցնել պատասխանատվության:

Հետևաբար, առաջարկվում է.

- ✓ ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում և վերաբերելի իրավական ակտերում նախատեսել կարգավորում, որ զինծառայողների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում,***
- ✓ ***մինչև վերը նշված օրենսդրական փոփոխության կատարումը միջոցներ ձեռնարկել զինծառայողների անհրաժեշտ հետազոտությունները հնարավորին սեղմ ժամկետներում իրականացնելու ուղղությամբ,***
- ✓ ***զինվորական հոսպիտալներն առավելագույնս ապահովել զինծառայողների հետազոտությունների համար անհրաժեշտ գործիքային-ախտորոշիչ սարքավորումներով, որպեսզի հնարավոր լինի առանց ուղեգրման և սեղմ ժամկետում տեղում կազմակերպել պատշաճ բժշկական օգնություն ու սպասարկում:***

3. Զինծառայողների հոգեկան առողջության պահպանման իրավունքը

Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման ոլորտի հետ կապված հարցերը: Այս հարցերին Պաշտպանը շարունակաբար է անդրադարձել՝ ներկայացնելով ոլորտում առկա խնդիրները և բացերը:

2024 թվականի ընթացքում ոլորտային խնդիրները հիմնականում պահպանվել են: Չնայած դրան՝ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի կապիտալ վերանորոգում կամ այլ շինության տրամադրում նախատեսված չէ, սակայն պլանավորված է հոգեբուժական ծանր խնդիրներ, փսիխոտիկ վիճակներ ունեցող զինծառայողների բուժումը կազմակերպել «Նուբարաշեն» հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում՝ վերջինիս վերանորոգման աշխատանքների ավարտից հետո, իսկ հոգեբանական խնդիրներ, նևրոտիկ, հետսթրեսային և այլ ֆունկցիոնալ

խանգարումներ ունեցող զինծառայողների բուժումը պլանավորվում է կազմակերպել հոգեվերականգնողական ծառայության միջոցով:

Այս կապակցությամբ Պաշտպանը կարևոր է համարում ևս մեկ անգամ հատուկ նշել, որ զինծառայողներին հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրող գերատեսչական միակ հաստատությունը, որտեղ ստացիոնար պայմաններում զինծառայողները բուժօգնություն են ստանում՝ ՊՆ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքն է: Հետևաբար, զինծառայողների առողջության պահպանման, պատշաճ բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունքների տեսանկյունից կարևոր է նշված բաժանմունքի շենքային պայմանների հրատապ բարելավումը: Դա կարևոր նշանակություն ունի նաև բուժանձնակազմի իրավունքների տեսանկյունից: Խնդիրն այն է, որ այս հարցը Պաշտպանը տարիներ շարունակ բարձրացնում է և մշտապես իրավասու մարմիններից ստացվում են նույնաբովանդակ պատասխաններ և խնդիրը այդպես էլ լուծում չի ստանում, իսկ այդ ընթացքում զինծառայողների բուժօգնության կազմակերպումն իրականացվում է այնպիսի պայմաններում, որը չի համապատասխանում ոչ ներպետական, ոչ միջազգային չափորոշիչներին:

Պաշտպանը ևս մեկ անգամ իրավասու մարմինների ուշադրությունը հրավիրում է ՊՆ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի ոչ բարվոք շենքային պայմանների վրա՝ կրկին առաջարկելով հրատապ միջոցներ ձեռնարկել շենքային պայմանների բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ հնարավորին սեղմ ժամկետում դիտարկել բաժանմունքը վերանորոգելու կամ նոր բաժանմունք կառուցելու հարցը:

Դրա հետ մեկտեղ, հոգեբուժական բաժանմունքում առկա են մի շարք այլ խնդիրներ: Օրինակ, հոգեբուժական բաժանմունքում ստացիոնար բուժման ընդունելիս ոչ միշտ է հաշվի առնվում զինծառայողների ցանկությունը: Երբեմն տրամադրվում է բուժում ստանալու համաձայնության մասին դիմում, որը զինծառայողը ստորագրում է: Հոսպիտալի անձնակազմը տեղեկացրել է, որ զինծառայողին հարկադիր բուժման ենթարկելու նպատակով դատարան դիմելու դեպք չի արձանագրվել: Զինծառայողները զբոսանքի են դուրս գալիս կարճ ժամանակով, լինում են օրեր, երբ բաժանմունքից դուրս չեն գալիս: Ըստ պարզաբանման՝ բուժում ստացող զինծառայողների զբոսանքի կազմակերպման դժվարությունների պատճառը շենքային պայմանների անբավարարությունն է. զինծառայողների համար նախատեսված բացօթյա միակ տարածքը շենքի ներսում առանձնացված ծխարանն է, որն ակնհայտ փոքր է: Զինծառայողները հնարավորություն չունեն սեփական միջոցների հաշվին զննության ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից: Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի հետ կապված այլ խնդիրների Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել նախորդ տարեկան հաղորդմամբ[106]:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

---

[106] Տե՛ս ՄԻՊ 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջ 445, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

- ✓ ***հնարավորին սեղմ ժամկետում բարելավել Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի շենքային պայմանները, այդ թվում՝ նոր շենքային պայմաններ ապահովելու միջոցով,***
- ✓ ***բացառել հոգեբուժական օգնության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ գործող պրակտիկան, այն է՝ առանց զինծառայողների գրավոր համաձայնության կամ դատարանի որոշման զինծառայողներին հոգեբուժական բաժանմունք ընդունելու, ինչպես նաև նրանց հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու դեպքերը,***
- ✓ ***ապահովել հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինծառայողների ամենօրյա առնվազն մեկ ժամ զբոսանքի իրավունքը,***
- ✓ ***զինծառայողներին հնարավորություն ընձեռել սեփական միջոցների հաշվին ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից զննության:***

4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած խեղման կամ վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են օրենքով սահմանված կարգով:

Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշակի դեպքերում ծառայության ընթացքում հիվանդություն ձեռք բերած նախկին զինծառայողները չեն օգտվում անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունքից: Մասնավորապես՝

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ովքեր զինվորական ծառայության ընթացքում ձեռք են բերել հիվանդություն, որը հիմք չի հանդիսացել նրանց ոչ պիտանի ճանաչելու համար, սակայն զորացրվել են ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից.
- պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ում զինվորական ծառայության ընթացքում ցուցվել է բժշկական օգնություն, սակայն զինվորական ծառայության ընթացքում չի իրականացվել, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից[107].

---

[107] Այս կապակցությամբ կարևոր է նշել, որ ըստ ՊՆ պարզաբանման՝ հարցի լուծումը ենթադրում է ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացում, և այդ ոլորտը կարգավորող լիազոր մարմինը ՀՀ առողջապահության նախարարությունն է: ՊՆ-ն հավելել է, որ այն դեպքերում, երբ զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինծառայողների առողջական խնդիրները, զինվորական ծառայությունից արձակվելուց հետո ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով իրականացվում է ռազմաբժշկական հաստատության հաշվին, համաձայն 2018 թվականի նոյեմբերի 15-ի ՀՀ պաշտպանության նախարարի №13-Ն և ՀՀ առողջապահության նախարարի №28-Ն համատեղ հրամանի 11-րդ կետի, Պաշտպանության նախարարի գրավոր թույլտվությամբ: 2024 թվականի ընթացքում 7 նախկին զինծառայող (6-ը՝ քթի

- զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ովքեր ֆունկցիոնալության գնահատման արդյունքում (ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում) հաշմանդամություն ունեցող անձ չեն ճանաչվել, օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման իրավունքից՝ միայն անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից կազմված ծառայությունների անհատական ծրագրի շրջանակներում և վերականգնողական անհատական ծրագրերի գործողության ժամկետում.
- այն պայմանագրային զինծառայողները, ովքեր զինվորական ծառայությունից արձակվել են պահեստազոր ոչ թե երկարամյա ծառայության կամ ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով, այլ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնությունից նույնիսկ այն դեպքում, երբ հիվանդությունը ձեռք են բերել ծառայության ընթացքում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է.

- ✓ ***սահմանել կառուցակարգեր՝ ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս պարտադիր ժամկետային զինծառայողների մոտ բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում նրանց անվճար բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով,***
- ✓ ***սահմանել, որ այն դեպքում, երբ զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինծառայողների առողջական խնդիրները՝ ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով պետք է իրականացվի զինվորական ծառայությունից արձակվելուց հետո,***
- ✓ ***օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ անկախ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ունենալու հանգամանքից,***
- ✓ ***օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ նախկին պայմանագրային զինծառայողներն օգտվում են զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության կապակցությամբ անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ անկախ զինվորական ծառայությունից արձակվելու հիմքից:***

միջնապատի դեֆորմացիայի կապակցությամբ) վիրահատվել են Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում զինվորական ծառայությունից արձակվելուց հետո, 1 նախկին զինծառայող հրաժարվել է վիրահատական բուժումից:

ԳԼՈՒԽ 5. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը և զինծառայողների ատեստավորման գործընթացը

Հայաստանի Հանրապետության համար զինված ուժերը պայմանագրային կադրերով համալրելը առաջնային է: Դրա մասին է վկայում, օրինակ, ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը[108], որի նպատակներից է բանակը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացի ակտիվացումը: Այս մասին է խոսում նաև ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը[109], որով նախատեսվում է պարտադիր ժամկետային և պայմանագրային ծառայության փոխլրացնող համակարգի շարունակական բարելավում ու արհեստավարժ զինվորական ծառայության համակարգի ընդլայնում:

Այս հարցում կարևոր է, որ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, հնարավորություն ունենա օգտվելու իրեն վերաբերելի բոլոր իրավունքներից, որոնք ամրագրված են թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ միջազգային փաստաթղթերում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրվել է աշխատանքի ընտրության ազատության իրավունքը, իսկ 49-րդ հոդվածով՝ քաղաքացիների հանրային ծառայության անցնելու իրավունքը:

Համաձայն «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի ձեռնարկի՝ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող անձ, պետք է հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից[110]: Նույն չափորոշիչն է սահմանվել նաև ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ 1742 (2006) հանձնարարականով:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը քաղաքացիներից ստացել է մի շարք բողոքներ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու հարցերի վերաբերյալ: Բողոքները հիմնականում վերաբերել են **պայմանագրային զինվորական ծառայության չընդունելուն, պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմելուց հետո տևական ժամանակ անց որևէ պատասխան չստանալուն, կազմակերպչական-հաստիքային միջոցառումների արդյունքում հաստիքը կրճատվելու և նոր հաստիքի նշանակվելու համար վերադաս հրամանատարության կողմից միջնորդություն չներկայացնելուն,**

---

[108] Հասանելի է https://www.mil.am/files/LIBRARY/2018-2024.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[109] Հասանելի է https://www.e-gov.am/gov-decrees/item/37300/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[110] Ձեռնարկ ԶՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, հասանելի է http://www.osce.org/hy/odihr/88572 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ տարբեր ծրագրերի մասին իրազեկվածության պակասին, կին զինծառայողներին պայմանագրային զինվորական ծառայության ներգրավվելու խոչընդոտներին և այլն:

Կարևոր է արձանագրել, որ ՊՆ-ի և ենթակա ստորաբաժանումների՝ զինկոմիսարիատների, զորամասերի հետ համագործակցությամբ անհատական բողոքներով բարձրացված հարցերը ստացել են լուծումներ, սակայն պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու գործընթացում առկա խնդիրների հաղթահարման նպատակով անհրաժեշտ է գտնել համակարգային լուծումներ: Անխտիր բոլոր դեպքերում զինվորական ծառայություն անցնելու գործընթացում պետք է երաշխավորված լինեն անձանց իրավունքները: Այս առումով կարևոր է ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1550-Ն հրամանը, որով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու կարգը»:

Պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու, ծառայությունն ավելի գրավիչ դարձնելու, այդ գործընթացում անձանց իրավունքների ապահովման հարցերին Պաշտպանը պարբերաբար անդրադարձ է կատարել, ներառյալ գործընկերների հետ տարբեր ձևաչափերով քննարկումների, զինվորական հաստատություններ այցերի, իրավասու մարմիններին ուղղված պաշտոնական գրությունների ու առաջարկությունների ներկայացման միջոցով: Այս հարցերում պարբերաբար ուսումնասիրվում է նաև միջազգային լավագույն փորձը[111]:

Զինվորական հաստատություններ այցերի ընթացքում զինծառայողները նշել են, որ անհրաժեշտ է շարունակաբար իրականացնել ծառայության գրավչությունը բարձրացնող միջոցառումներ, այդ թվում՝ աշխատավարձերի բարձրացման, զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին սոցիալական տարբեր ծրագրերում ներառելու, արտոնություններ տրամադրելու միջոցով: Այս համատեքստում բազմաթիվ զինծառայողներ դրական են գնահատել ատեստավորման գործընթացը[112], որը հնարավորություն է տալիս զինծառայողներին հավելավճարներ ստանալ: Դրա հետ մեկտեղ, որոշ զինծառայողներ (նաև սպայակազմի) ատեստավորման գործընթացի վերաբերյալ ներկայացրել են նաև մտահոգություններ: Օրինակ, նշել են, որ ատեստավորման գործընթացը կարող է ավելի բարդացնել կադրերի հետ կապված խնդիրները (ատեստավորում չանցածները կարող են այլևս չցանկանալ ծառայություն անցնել և արձակվել ծառայությունից), վարձատրության տեսանկյունից անհավասար պայմաններ ստեղծել սպաների միջև (օրինակ, զորամասի հրամանատարը կամ նրա տեղակալները կարող են ավելի պակաս վարձատրվել, քան նրանց ենթակաները): Արդյունքում՝ զինծառայողների շրջանում կարող են առաջանալ տարբեր խնդիրներ, ընդհուպ մինչև

---

[111] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3115, https://ombuds.am/am/site/ViewNews/3264, https://ombuds.am/am/site/ViewNews/3173, https://ombuds.am/am/site/ViewNews/2958, https://ombuds.am/am/site/ViewNews/3062 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[112] Նշված գործընթացի մեկնարկը տրվել է ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի թիվ 162-Ն և 166-Ն որոշումներով:

կարգապահության, ծառայողական պարտականությունները միմյանց մեջ բաշխելու հետ կապված և այլն[113]:

ՀՈՒ-ը պետք է արդյունավետորեն մրցակցեն աշխատանքի շուկայում բարձր մակարդակի մասնագետներին ներգրավելու համար՝ առավելապես շեշտը դնելով որակական ցուցանիշների վրա: Այս հարցում կարևոր է ատեստավորման գործընթացի շարունակական կատարելագործումը: Նշվածի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ աշխատանքի շուկայում բարձր մակարդակի մասնագետներին ներգրավվելու համար արդյունավետ մրցակցություն կազմակերպելու նպատակով՝ ՀՀ զինված ուժերի պատրաստության պլանով նախատեսվում են տարբեր ոլորտների մասնագիտական պարապմունքներ և հավաքներ: Ատեստավորման գործընթացը մշտապես գտնվում է ուշադրության կենտրոնում, ոլորտային իրավական ակտերում կատարվել են մի շարք փոփոխություններ, որի արդյունքներով հեշտացվել են զինծառայողների ատեստավորման գործընթացը, զինծառայողներին հնարավորություն է ընձեռվել ատեստավորումը վերահանձնելու, ատեստավորման արդյունքները բարելավելու, ինչպես նաև մեկ ուղղությունից անբավարար ստացած գնահատականը վերահանձնելու: Աշխատանքներ են իրականացվում ատեստավորման կենտրոնների արդիականացման, զինծառայողների կողմից ատեստավորման ստուգարքների հանձնման նպատակով բարենպաստ պայմանների ստեղծման ուղղությամբ և այլն:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն առ այն, թե ինչ փուլում է գտնվում զինծառայողների ատեստավորման գործընթացը (զինծառայողների քանի տոկոսն են արդեն իսկ անցել ատեստավորում), ինչ բնույթի բողոքներ են ստացվել նշված գործընթացի վերաբերյալ, քանի զինծառայող է ատեստավորումը չանցնելու պատճառով արձակվել ծառայությունից:

Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ զինծառայողների ատեստավորման գործընթացն իրականացվում է՝ ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանների հիման վրա, զինծառայողների 57%-ը ստացել է դրական գնահատական: Բոլոր բողոքներին և բարձրացված հարցերին տրվել է համապատասխան իրավական լուծում՝ առաջնահերթությունը տալով զինծառայողների շահերին: Ոչ մի զինծառայող ատեստավորման չանցնելու պատճառով չի արձակվել ծառայությունից:

Հարցի կապակցությամբ Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ ծառայությունում անցկացվող պարտադիր և կամավոր ատեստավորման գործընթացը գտնվում է շարունակական փուլում: Ատեստավորվել է զինծառայողների 46%-ը, նշված գործընթացի վերաբերյալ զինծառայողներից բողոքներ չեն ստացվել, ատեստավորումը չհաղթահարելը ծառայությունից արձակման հիմք չէ:

Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու գործընթացում քաղաքացիների իրավունքների հետ կապված հարցերը գտնվում են Պաշտպանի

---

[113] Ատեստավորման գործընթացի հետ կապված խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է 2023թ. տարեկան հաղորդմամբ, էջեր 453-454, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ուշադրության ներքո, ոլորտում արձանագրված խնդիրներին անհրաժեշտ է մոտենալ համակարգային լուծումներ ներդնելու տրամաբանությամբ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

- ✓ ***ամրապնդել ԶՈՒ մուտք գործող անձանց իրավունքների երաշխավորման, հավասար հնարավորությունների ապահովման կառուցակարգերը՝ բացառելով զինվորական ծառայության ընդունելն անհիմն մերժելու դեպքերը,***
- ✓ ***պայմանագրային զինվորական ծառայություն անցնելուն միտված տարբեր ծրագրերի (նաև դրանց դիմելու ընթացակարգերի) վերաբերյալ բարձրացնել հանրության տեղեկացվածության աստիճանը՝ տարբեր եղանակներով պարբերաբար իրականացնելով իրազեկման արշավներ, դրանց շրջանակում հատուկ ընդգծելով զինծառայողներին և նրանց ընտանիքներին տրվող տարբեր արտոնությունների, իրավունքների մասին,***
- ✓ ***շարունակական աշխատանքներ իրականացնել ատեստավորման գործընթացի կատարելագործման ուղղությամբ՝ նկատի ունենալով զինծառայողների և ոլորտային մասնագետների կողմից ներկայացվող մտահոգությունները, առաջարկվող լուծումները:***

2. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը ծառայությունից արձակվելու գործընթացում

Միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերը հռչակում ու երաշխավորում են զինված ուժերի կազմից զինծառայողների դուրս գալու իրավունքի լիարժեք իրացումը[114]: Չնայած իրավական հստակ կարգավորումներին՝ պայմանագրային զինվորական ծառայությունից չարձակելու կամ արձակումը ձգձգելու հարցերով Պաշտպանը 2024 թվականի ընթացքում զինծառայողներից, նրանց փաստաբաններից շարունակել է ստանալ բողոքներ:

Այս կապակցությամբ կարևոր է նկատի ունենալ, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի նույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ: Նույն օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող

---

[114] Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 16-րդ կետի բովանդակության համաձայն՝ զինված ուժերի անդամներն ունեն զինված ուժերից դուրս գալու իրավունք: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ: Նույն օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց **ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում**:

Ճիշտ է, անհատական բողոքների շրջանակում Պաշտպանի աջակցությամբ և Պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ քաղաքացիների բարձրացրած հարցերը լուծվել են, սակայն օրենսդրական հստակ կարգավորումների պարագայում նմանատիպ դեպքերի առկայությունը խնդրահարույց է:

Պաշտպանը մշտապես առաջարկում է կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ ու վեր հանել պայմանագրային զինծառայողների՝ պայմանագրից հրաժարվելու և զինվորական ծառայությունից արձակվելու պատճառները: Միայն այդ պատճառների վերհանման և դրանց լուծման միջոցով հնարավոր կլինի ՀՀ ԶՈՒ-ում ծառայությունը դարձնել գրավիչ, ինչն իր հերթին կավելացնի ծառայություն անցնելու ցանկություն հայտնող անձանց քանակը և կնվազեցնի զինված ուժերից արձակվող զինծառայողների թիվը:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել պայմանագրային զինծառայողների ծառայությունից արձակման պատճառները պարզելու ուղղությամբ և արդյոք իրականացվել կամ նախատեսվում է իրականացնել խնդրի վերաբերյալ հետազոտություն և վերլուծություն և արդյոք ծառայության գրավչությունը բարձրացնելուն միտված ներդրվել են լրացուցիչ կառուցակարգեր: Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ զինծառայողներին ԶՈՒ պահեստազոր արձակման պատճառները պարզելու նպատակով՝ կառուցվածքային ստորաբաժանման (զորամասերի) հրամանատարների կողմից իրականացվում է անհրաժեշտ ուսումնասիրություն և վերլուծություն, իսկ զինվորական ծառայության գրավչության բարձրացման նպատակով շարունակաբար իրականացվում են համալիր ծրագրեր, որոնցից մեկը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքի պահպանմամբ զինվորական ծառայության անցնելու կարգը սահմանող իրավական փաթեթն է:

Պայմանագրային զինծառայողներին ծառայությունից արձակելու գործընթացում նրանց իրավունքների հետ կապված մեկ այլ խումբ խնդիր արձանագրվել էր դեռևս 2019 թվականին: Խոսքը վերաբերում է պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում **ամենամյա արձակուրդ չտրամադրելուն կամ մասամբ տրամադրելուն, չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական հատուցում չվճարելուն**, ինչպես նաև **ոչ աշխատանքային օրերին (շաբաթ-կիրակի, նաև տոնական օրերին) ծառայության ներգրավելուն**, **լրացուցիչ հանգստյան օր չտրամադրելուն և չվարձատրելուն:** Նշված հարցերին Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել նախորդ տարեկան հաղորդումներում՝ պետական իրավասու մարմիններին առաջարկելով միջոցներ ձեռնարկել անձանց իրավունքների վերականգնման ու պաշտպանության ուղղությամբ: Պաշտպանը 2024 թվականի ընթացքում նախկին զինծառայողներից շարունակել է ստանալ վերը նշված հարցերի վերաբերյալ գրավոր ու բանավոր բողոքներ, որոշ բողոքների քննարկումը Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է:

Խնդրի կապակցությամբ, հարկ է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 26.07.2024թ. ուժի մեջ է մտել ՀՕ-310-Ն օրենքը, որի պահանջներից ելնելով ՀՀ պաշտպանության նախարարի №983-Լ կարգավորիչ հրամանում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես, սահմանվել է

չօգտագործված արձակուրդային օրերի հաշվարկի կատարման հերթականությունը՝ հիմք ընդունելով դիմողի պահեստազոր արձակման տարին ու դիմումի ներկայացման ժամանակը, ինչպես նաև բյուջետային հատկացումների պայմանները:

Չնայած դրան՝ 2024 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած բողոքներով քաղաքացիները հայտնել են, որ Պաշտպանության նախարարի հրամանի առկայության պարագայում էլ դրամական հատուցումները չեն կարողանում ստանալ: Նշվածի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ չօգտագործված արձակուրդների դիմաց դրամական փոխհատուցում ստանալու համար դիմել է ավելի քան 1000 քաղաքացի: Բոլոր բողոքներին հնարավորության սահմաններում տրվել է դրական և խելամիտ լուծումներ: Միաժամանակ նշվել է, որ գործընթացի շրջանակներում վարչարարության ժամկետների երկարաձգման պատճառներով բազմաթիվ նախկին զինծառայողներ իրենց պահանջները ներկայացնում են դատական կարգով:

Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու և ծառայությունից արձակվելու գործընթացում կարևոր է զինծառայողների իրավունքների պատշաճ երաշխավորումը:

Հետևաբար առաջարկվում է՝

- ✓ ***ներդնել կառուցակարգեր պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու գործընթացն առանց ձգձգումների կազմակերպելու նպատակով,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել պայմանագրային զինծառայողների ծառայությունից արձակման պատճառները պարզելու, անհրաժեշտ հետազոտություն և վերլուծություն իրականացնելու ու դրանց արդյունքների ամփոփմամբ՝ ծառայության գրավչությունը բարձրացնելուն միտված լրացուցիչ կառուցակարգեր ներդնելու (օրինակ՝ սոցիալական) ուղղությամբ,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել ծառայությունից արձակվելիս նախկին զինծառայողների կողմից չօգտագործված արձակուրդների դիմաց հատուցումն առանց ձգձգումների տրամադրելու ուղղությամբ,***
- ✓ ***զինվորական ծառայությունից արձակվելիս կատարվող վերջնահաշվարկի ժամանակ զինվորական ծառայության ընթացքում հանգստյան օրերին կատարած արտաժամյա աշխատանքի դիմաց զինծառայողներին տրամադրել փոխհատուցում այն դեպքերում, երբ զինվորական ծառայության ընթացքում այդ աշխատանքի դիմաց այլ հանգստյան օր չի տրամադրվել կամ այն չի ավելացվել ամենամյա արձակուրդին, ինչպես նաև դրամական հավելում չի տրամադրվել:***

3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը

Պաշտպանը բազմիցս առաջարկել է օրենսդրական փոփոխություններով զինծառայողների համար վերացնել արհեստակցական կազմակերպությանը

մասնակցելու արգելքը, ինչպես նաև ստեղծել զինծառայողների արհեստակցական միություններ: 2024 թվականին նշված հարցն առանձին քննարկման առարկա է դարձել Պաշտպանության նախարարությունում կազմակերպված՝ Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկների իրացմանը նվիրված համատեղ քննարկման շրջանակում, որտեղ գործընկերները ևս հաստատել են Պաշտպանի առաջարկների իրացման կարևորությունը[115]:

Խնդրի կապակցությամբ սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարությանն այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում զինված ուժերում արհմիություններ ստեղծելու ուղղությամբ, և արդյոք նախատեսվում է վերացնել դրանց ստեղծման օրենսդրական արգելքը: Ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ մշակման փուլում է գտնվում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որում ներառված է նաև օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով արհմիությունների ստեղծման հետ կապված սահմանափակումը հանելու վերաբերյալ դրույթը: Նախատեսվում է համապատասխան օրենքի նախագիծը շրջանառության դնել 2025թ. առաջին եռամսյակի ընթացքում:

Իհարկե, կարևոր է նշել Պաշտպանության նախարարության հանձնառությունը խնդրին լուծում տալու ուղղությամբ, առավել ևս, որ ՄԻՊ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2023 թվականի ապրիլի 11-ին *հակասահմանադրական է ճանաչել ԶՈՒ, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված՝ արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը*[116]: Պաշտպանը ևս մեկ անգամ հատուկ ընդգծում է, որ այլոց հետ միավորվելու ազատությունը հիմնարար իրավունք է, որն անվերապահորեն ճանաչված է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կարևորագույն փաստաթղթերով[117]:

Պաշտպանի գնահատմամբ՝ կոլեկտիվ մարմինները կարող են ստեղծել լավ հնարավորություն իրենց անդամների շահերը և իրավունքները պատշաճ ներկայացնելու, ներառյալ՝ նրանց իրավունքներն արդյունավետ պաշտպանելու գործում: Զինվորական միավորումները կամ միությունները կարող են նպաստել զինծառայողների բարեկեցությանը, ներկայացնել նրանց շահերը տարբեր մակարդակներում, տրամադրել խորհրդատվություն կամ բանակցել ԶՈՒ-ում ծառայության պայմանների վերաբերյալ: Միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ նման միավորումները կարող են լինել կամուրջ պաշտպանական գերատեսչությունների և զինծառայողների միջև:

---

[115] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2958 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[116] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1683 որոշումը:

[117] Օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի միավորումներ կազմելու իրավունք: Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

Հետևաբար առաջարկվում է՝

- ***օրենսդրական փոփոխություններով վերացնել զինծառայողների համար արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) արգելքը,***
- ***նախատեսել և ամրապնդել զինծառայողների արհեստակցական միություններ ստեղծելու կառուցակարգերը:***

ԳԼՈՒԽ 6. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ

Որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող մարմին՝ առանցքային է օմբուդսմանի ինստիտուտի դերը, որն, ի թիվս այլ գործառույթների, օժանդակում է զինված ուժերում իրավունքի գերակայության պահպանմանը, նպաստում զինված ուժերի կառույցների թափանցիկությանն ու պատասխանատվությանը, ուշադրություն է հրավիրում զինվորական պրակտիկայում առկա մարդու իրավունքներին առնչվող այն հիմնախնդիրների վրա, որոնք ենթակա են կարգավորող միջամտության[118]:

2024 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված՝ զինված ուժերում կարգապահությանն առնչվող խնդիրների բազմակողմանի ուսումնասիրությունները ևս մեկ անգամ փաստում են, որ բանակում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունն առաջնային խնդիր է, ինչն ուղղակի ազդեցություն ունի նաև զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա:

Կարևոր է նշել, որ այս ոլորտում Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններն են ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի, առկա խնդիրների, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների հետ կապված հարցերը: Դրանք վեր են հանվում ստացված բողոքների, զինվորական հաստատություններ այցերի, տարբեր գործընկերների հետ քննարկումների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա: Ոլորտային օրենսդրության կատարելագործման նպատակով Պաշտպանը ՀՈՒ-ում մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացնում է առաջարկներ: 2024 թվականի ընթացքում Պաշտպանը զորակոչիկների, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությանն ու պատշաճ իրացմանը միտված մի շարք առաջարկություններ է ներկայացրել. օրինակ, զորակոչիկների և զինծառայողների առողջական խնդիրների հետազոտությունների ու փորձաքննությունների, զինկոմիսարիատների կողմից պատշաճ ծանուցումների ապահովման, զորակոչի շրջանակում անձանց իրավունքների, այլընտրանքային ծառայության կազմակերպման վերաբերյալ և այլն: Այս առումով կարևոր է արձանագրել, որ Պաշտպանի՝ ինչպես վերը նշված, այնպես էլ բազմաթիվ այլ առաջարկներ արդեն իսկ իրացվել են, մի շարք հարցերի շուրջ իրավասու գերատեսչությունների հետ քննարկումները շարունակվում են:

---

[118] ԵԱՀԿ ձեռնարկ՝ ՀՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, էջ 321: Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/6/7/88572.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2024 թվականի ընթացքում ԵԽ «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակում պետական իրավասու գերատեսչությունների ներգրավմամբ կազմակերպվել են «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» խումբ գործերով միջգերատեսչական աշխատաժողովներ, որոնք վերաբերել են Հայաստանի զինված ուժերում ինքնասպանության նախականխմանը և արդյունավետ քննությանը, զինծառայողների առողջապահական ծառայությունների բարելավման ուղիներին, քննարկվել են զորակոչի ժամանակ բժշկական զննության և զինվորական ծառայության ընթացքում բժշկական օգնության հետ կապված խնդիրներն ու հնարավոր լուծումները[119]:

Քննարկվող ժամանակաշրջանում ՊՆ, ԱԱԾ ենթակայության տարբեր զորամասեր, այդ թվում՝ Սահմանապահ զորքերի ստորաբաժանումներ, Լոռու և Սյունքի մարզերում տեղակայած զորամասեր, կանանց գումարտակ, Կենտրոնական հավաքակայան կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում Պաշտպանը մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի համատեքստում հատուկ ուշադրություն է դարձրել կարգապահության հետ կապված հարցերին: Զորամասերի հրամանատարությունը Պաշտպանին ներկայացրել է զինծառայողների և սպայական անձնակազմի ծառայության պայմանները, առկա խնդիրները, առանձնազրույցներ են տեղի ունեցել ժամկետային ու պայմանագրային զինծառայողների, այդ թվում՝ զորամասերի տարբեր մասնագետների հետ (սպա-հոգեբան, սպա-իրավաբան և այլն)[120]:

Զինված ուժերում կարգապահության ամրապնդման

[119] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3208, https://ombuds.am/am/site/ViewNews/3111 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[120] Հասանելի են https://www.ombuds.am/am/site/ViewNews/2987, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3028, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3121, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3160 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կարևորությունը՝ որպես առանձին թեմա, քննարկման առարկա է դարձել Պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի նիստում, որտեղ քննարկվել են նաև զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի, զորակոչերի ընթացքում արձանագրվող խնդիրների, ինչպես նաև զինված ուժերում կանանց իրավունքների հետ կապված մի շարք հարցեր[121]:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի, այդ թվում՝ իրավունքի գերակայությամբ երաշխավորված կարգապահության ապահովման հետ կապված հարցերը, շարունակելու են գտնվել Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք

Զինծառայողը հանդիսանում է պետության պաշտպանության ներքո գտնվող անձ, ում իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պետք է հարգվեն ու պաշտպանվեն: Հենց այս ուղենիշն ունենալով է 2024 թվականի ընթացքում Պաշտպանը դիտարկել բանակում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերը: Բանակում կարգապահության անընդհատ ամրապնդման և իրավախախտումների կանխարգելման համար անհրաժեշտ պայման է զինծառայողի մոտ իրավունքի նկատմամբ հարգանքի, իրավունքի գերակայության արժևորման, նշված արժեքներով հավասարապես պաշտպանված և կաշկանդված լինելու, սեփական իրավունքների նկատմամբ հարգանք պահանջելու և միևնույն ժամանակ այլ անձանց իրավունքների նկատմամբ անվերապահ հարգանք դրսևորելու հատկանիշների ձևավորումը:

ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով ու ԶՈՒ-ում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

2024 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումները, զորամասեր մշտադիտարկման այցերը ցույց են տալիս, որ ԶՈՒ-ում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունը շարունակում է մնալ կարևորագույն խնդիր:

---

[121] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3231 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանին հասցեագրված զինվորական կարգապահությանը վերաբերող բազմաթիվ բողոքներով (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, բռնություն գործադրելու և այլն) պաշտոնական պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից՝ Պաշտպանության նախարարությունից, Դատախազությունից, Քննչական կոմիտեից: Զինված ուժերում կարգապահական խախտումները, որոնք կարող են հանգեցնել նաև բռնության ու մահացության դեպքերի, անթույլատրելի են և խիստ մտահոգիչ: Այս հարցին Պաշտպանը նաև հրապարակային է անդրադարձել՝ նշելով, որ **չափազանց կարևոր է իրավասու պետական մարմինների կողմից նման գործերով արդյունավետ քննության իրականացումը, ինչպես նաև համանման դեպքերի կանխարգելմանն ուղղված անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումն ու այդ նպատակով ամբողջական և պատշաճ կառուցակարգերի գործարկումը**[122]:

Պաշտպանի հարցադրումներին ի պատասխան՝ Քննչական կոմիտեն տեղեկացրել է, որ կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի 461-468-րդ հոդվածներ) և զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների վերհանման արդյունքում իրավասու մարմիններին ներկայացվել է 138 միջնորդագիր՝ զինվորական ծառայության և զորակոչի ընթացքում թույլ տված խախտումները և թերացումները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար: Այս կապակցությամբ, նկատի ունենալով գործընկերներից ստացվող մտահոգությունները, Պաշտպանը Պաշտպանության նախարարությանն առաջարկել է հետևողականություն դրսևորել դատախազների և քննիչների կողմից զորամասերի հրամանատարներին ներկայացվող միջնորդագրերի կատարման նկատմամբ:

Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանման՝ զորամասերում տեղի ունեցած դեպք-պատահարների և իրավախախտումների վերաբերյալ իրավապահ մարմինների կողմից ուղարկվող միջնորդագրերի կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վերլուծվել են դրանց քննարկման ու ձեռնարկած միջոցների արդյունքները և ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կարգադրությամբ տրվել համապատասխան հանձնարարականներ թերությունները բացառելու ուղղությամբ: Նշված քրեադատավարական գործընթացի պատշաճ իրականացման նկատմամբ սահմանված է հսկողություն: Պաշտպանության նախարարությունը հավելել է, որ 2024 թվականի ընթացքում կարգապահական տույժի են ենթարկվել սպայական կազմի 688 զինծառայող, ենթասպայական և շարքային պայմանագրային կազմի 1219 զինծառայող: Առավել հաճախ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն, նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին: Զինծառայողների մահվան, ինքնավնասման, նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի, ինչպես նաև կանոնագրքային կանոնների խախտման դեպքերի կանխարգելման և բացահայտման ուղղությամբ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության կողմից ամենօրյա ռեժիմով զորամասերում և մարտական դիրքերում իրականցվում են պրոֆիլակտիկ միջոցառումներ, որոնց շրջանակներում զինծառայողների իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու համար վերջիններս

[122] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2836 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ծանոթացվում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հոդվածներին: Այդ աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են բերվում բացասական վարքագծով աչքի ընկնող, համածառայակիցների շրջանում գերիշխող դիրք զբաղեցնելու հակում ունեցող զինծառայողներ, որոնց նկատմամբ իրականացվում են ուղղիչ աշխատանքներ:

Ազգային անվտանգության ծառայությունը տեղեկացրել է, որ ծառայության համակարգի զինծառայողների հնարավոր ինքնասպանության դեպքերը կանխելու նպատակով հաճախ կազմակերպվում են քննարկումներ, որոնց ընթացքում համապատասխան պաշտոնատար անձանց տրվում են հստակ ցուցումներ՝ աշխատանքի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ: Ծառայության առանձին պաշտոնատար անձանց կողմից պարբերաբար իրականացվում են անհատական և խմբային զրույցներ զինծառայողների հետ, կազմակերպվում են համապատասխան դասընթացներ: Զինծառայողների ինքնասպանության դեպքերը կանխարգելելու նպատակով առանձին հայեցակարգային մոտեցումներ ձևավորելու ուղղությամբ տարվում են անհրաժեշտ աշխատանքներ:

Իհարկե, կարևոր է իրավասու մարմինների կողմից խնդիրների հաղթահարման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց են տալիս մի շարք զորամասերում մարդու իրավունքներին առնչվող խնդրահարույց իրավիճակները, որոնք հաճախ արդյունք են կարգապահության հետ կապված տարաբնույթ խնդիրների, Պաշտպանին հասցեագրվող բողոքները, և այդ ամենի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները՝ կատարված աշխատանքները դեռևս բավարար չեն զինված ուժերում այնպիսի կարգապահություն ունենալու համար, որը կերաշխավորի մարդու իրավունքների պատշաճ պաշտպանությունն ու խթանումը: Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ խնդրի համակարգային լուծման կապակցությամբ անհրաժեշտ է մշակել և գործադրել նոր կառուցակարգեր:

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են զինված ուժերում կարգապահությանը վնասող կամ կարգապահական խախտումների նախադրյալներ հանդիսացող մի քանի խումբ խնդիրներ. զինծառայողների շրջանում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակ, կադրային թերի համալրվածություն, մինչև զինված ուժեր ներգրավելն անձի մոտ արմատացած և տարածում գտած վարքագծային դրսևորումներ, միմյանց նկատմամբ անհանդուրժողականություն, զորամաս-ռազմական ոստիկանություն ոչ բավարար համագործակցություն և այլն: Պաշտպանի հաստատության ուսումնասիրությունները ներկայացվել են իրավասու տարբեր գերատեսչությունների ներգրավմամբ Պաշտպանության նախարարությունում անցկացված հավաք-խորհրդակցության ժամանակ, որտեղ ևս մեկ անգամ հաստատվեցին Պաշտպանի մտահոգությունները և խնդիրների հաղթահարման ուղղությամբ հրատապ աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը[123]:

Այսպես, կարգապահությանը վնասող գործոն է առաջին հերթին **զինծառայողների շրջանում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը:** Զինծառայողների շրջանում ցածր իրավագիտակցությունը կամ իրավական

[123] Հասանելի է https://mil.am/hy/news/11977 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրազեկվածության պակասն իր հերթին կարող է լինել ոչ կանոնադրային հարաբերությունների հաստատման պատճառներից մեկը: Բազմիցս է նշվել, որ բանակում իրավագիտակցության բարձրացման գործում առանցքային դեր ունի հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքների գծով օգնական-սպան (սպա-իրավաբանը)[124]: Սպա-իրավաբանը պետք է առավել նախաձեռնող (պրոակտիվ) լինի զորամասում իրավական ուսուցման ու դաստիարակության, իրավական մշակույթի ձևավորման, օրինականության պահպանման հարցերում:

Պաշտպանության նախարարությունն այս հարցի կապակցությամբ հայտնել է, որ զինծառայողների իրավագիտակցության և իրազեկվածության բարձրացման նպատակով զորամասերում օրվա կարգացուցակով սահմանված օրերին անցկացվում են իրավական աշխատանքներ, որոնց ընթացքում ներկայացվում են զինվորական ծառայությունը կանոնակարգող կամ առնչվող իրավական ակտերի դրույթները, իրավական թեմաներով պարապմունքներ են անցկացվում հասարակական-պետական պատրաստության առարկայի շրջանակներում, վերջիններս անձնական ստորագրությամբ ծանոթացվում են վերադաս հրամանատարության կարգադրական բնույթի փաստաթղթերին, ինչպես նաև յուրաքանչյուր շաբաթ զորամասեր ուղարկվող՝ Զինված ուժերում արձանագրված դեպքերի, պատահարների և այլ իրավախախտումների վերաբերյալ հակիրճ տեղեկատվությունը: Հարցի կապակցությամբ Գլխավոր դատախազությունը հայտնել է, որ բանակում հանցավորության վիճակը բարելավելու ուղղությամբ կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից պարբերաբար զորամասերում կատարվել են ստուգայցեր, իսկ զինծառայողների իրավագիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ՝ վերջիններիս հետ անցկացվել են զրույցներ:

Բնականաբար կարևոր է նմանատիպ աշխատանքների իրականացումը, սակայն զորամասեր այցերն ու զինծառայողների (հատկապես պարտադիր ժամկետային) հետ առանձնազրույցները ցույց են տալիս, որ զինծառայողների իրավագիտակցությունը բավարար մակարդակի չէ: Օրինակ, զինծառայողների մեծ մասը տեղյակ չէ, որ կարգապահական տույժերը տրվում են գրավոր հրամանով, և իրենք ունեն դրանց հետ *ծանոթանալու ու բողոքարկելու իրավունք*: Ավելին, կարգապահական տույժերի բողոքարկման պրակտիկան կայացած չէ և գրեթե չի գործում: ԱԱԾ-ի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ծառայողական քննության արդյունքները բողոքարկելու վերաբերյալ ստացվել է 4 բողոք, 1 բողոքի քննարկման արդյունքում զինծառայողի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը փոխարինվել է առավել մեղմ կարգապահական

---

[124] ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 103-րդ և 104-րդ հոդվածները սահմանում են, որ գնդի հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպան պատասխանատու է գնդում իրավական աշխատանքի կազմակերպման համար: Նա պարտավոր է զորամասի մյուս ծառայությունների հետ համատեղ մշակել և իրականացնել զորամասում օրինականության պահպանման ապահովմանը ուղղված միջոցառումներ, անձնակազմին տեղեկատվություն տալ գործող օրենսդրության մասին, զինծառայողներին ուսուցանել ծառայության իրավական հիմունքները, միջոցառումներ անցկացնել անձնակազմի մեջ իրավական կուլտուրայի ձևավորման, նրանց կողմից օրենքների, զինվորական երդման, զինվորական կանոնադրությունների և ծառայությունը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի պահպանման ուղղությամբ, մասնակցել զորամասի անձնակազմի իրավական դաստիարակման կազմակերպմանը, զորամասի հրամանատարի ցուցումով անցկացնել ծառայողական քննություն և այլն:

տույժով, 2 բողոքի քննարկման արդյունքում կարգապահական տույժերը թողնվել են անփոփոխ, իսկ 1 բողոքի քննությունն ընթացքի մեջ է:

Ըստ ՊՆ-ի տրամադրած տեղեկությունների՝ 2024 թվականի ընթացքում ըստ վերադասության բողոքարկվել է մեկ կարգապահական տույժ, որի արդյունքում այն չեղարկվել է:

2024 թվականին ևս տարբեր զորամասեր այցերի ընթացքում արձանագրվել է, որ շարունակվում է պահպանվել այն պրակտիկան, երբ *զինծառայողների կողմից զինվորական գրքույկը կորցնելու դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով իրականացվում են ծառայողական քննություններ*, որոնց արդյունքում զինծառայողներին տրվում են կարգապահական տույժեր: Նման պրակտիկան խնդրահարույց է՝ հատկապես, որ Կարգապահական կանոնագրքով զինվորական փաստաթղթերը կորցնելու կամ վնասելու համար տույժ կիրառելու հնարավորություն նախատեսված չէ[125]:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը զինծառայողների կողմից ստացել է *Կարգապահական կանոնագրքով չնախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին տեղեկություններ* (օրինակ՝ մեկ զինծառայողի կատարած իրավախախտման համար բազմաթիվ զինծառայողներին պատժելու նպատակով՝ վազք, կքանիստ, ձգում և այլն): Ահազանգերից մեկով, օրինակ, Պաշտպանն անձամբ է այցելել զորամաս, խնդիրը տեղում քննարկման առարկա դարձրել վերադաս հրամանատարության հետ:

Պաշտպանն արձանագրում է, որ նշված պրակտիկան հակասում է հարցին առնչվող իրավական չափանիշներին և անհրաժեշտ է բացառել օրենքով չնախատեսված հիմքով և կարգով տույժ կիրառելու ցանկացած դեպք:

Մարդու իրավունքներին առնչվող խնդիրների հիմքում ընկած է նաև կադրային թերի համալրվածությունը: Այս խնդրի մասին շարունակվել են մտահոգություններ հնչել նաև 2024 թվականի ընթացքում ինչպես տարբեր զինվորական հաստատությունների այցերի, այնպես էլ իրավասու գերատեսչությունների հետ քննարկումների ընթացքում[126]:

Զինված ուժերում մարդու իրավունքների երաշխավորման տեսանկյունից մեծ է սպա-հոգեբանի դերը[127]: 2024 թվականի ընթացքում ԱԱԾ և ՊՆ ենթակայության զորամասեր այցերի ընթացքում շարունակվել է արձանագրվել, որ որոշ զորամասերում թափուր է սպա-հոգեբանի հաստիքը, իսկ որոշ զորամասերում էլ

---

[125] Ճիշտ է, Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանով որպես ծառայողական քննության նշանակման առիթ նախատեսված է զինծառայողի ծառայողական վկայականի (զինվորական գրքույկի), ինչպես նաև հատուկ պահպանության ենթակա այլ փաստաթղթի(երի) կորցնելը կամ փչացնելը, սակայն հարկ է նկատի ունենալ, որ ծառայողական քննություն անցկացնելու այդպիսի առիթը որևէ պարագայում չպետք է կարգապահական կանոնագրքով չնախատեսված տույժ կիրառելու հիմք հանդիսանա (դա չի ունենա լեգիտիմ նպատակին (legitimate aim) բավարարող հիմնավորվածություն):

[126] Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2023թ. տարեկան հաղորդմամբ, էջ 466-467, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[127] Ներքին ծառայության կանոնագրքի 126.1-րդ հոդվածի համաձայն՝ գնդի սպա-հոգեբանը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գնդում հոգեբանական աշխատանքի կազմակերպման, անձնակազմի հոգեբանական վիճակի, զինծառայողների հոգեկան կայունության պահպանմանն ուղղված աշխատանքների համար:

ընդհանրապես բացակայել է նման հաստիքը: ՊՆ-ի տեղեկացմամբ՝ զինված ուժերում ներկայում ընթանում են կազմակերպչական-հաստիքային փոփոխություններ, զորամասերի սպա-հոգեբաններով համալրումը շարունակական գործընթաց է (ներկայում համալրվածությունը կազմում է 77%): ՊՆ-ն նաև տեղեկություններ է տրամադրել սպա-հոգեբանների կողմից կատարվող աշխատանքների և նրանց կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստումների մասին:

Այս կապակցությամբ Պաշտպանը կարևոր է համարում այս ուղղությամբ իրականացված աշխատանքները: Դրա հետ մեկտեղ բացառիկ կարևորություն ունի ոչ թե հաստիքի ֆորմալ համալրումը, այլ այն, որ ընտրված կադրերը լինեն պրոֆեսիոնալ և բարեվարք: Որակյալ կադրերով համալրվածությունը կարող է էական նշանակություն ունենալ ինքնասպանություն և ինքնավնասում կատարելու հակում ունեցող զինծառայողներին բացահայտելու և վերջիններիս հետ թիրախային աշխատանքների արդյունքում հնարավոր դեպքերը կանխելու տեսանկյունից:

Սպա-հոգեբանի դերը մեծ է նաև իրավախախտումներից տուժած անձանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելու հարցում:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա բացասաբար են անդրադառնում նաև մինչև զինված ուժեր ներգրավելն անձի մոտ արմատացած և տարածում գտած վարքագծի դրսևորումները:

Պաշտպանի դիտարկմամբ՝ իրավախախտումների կանխարգելման տեսանկյունից կարևոր է անձի վարքի ռիսկերի գնահատումն ու բացահայտված խնդիրների հիման վրա անհատական աշխատանքների պլանավորումն ու իրականացումը: Ընդ որում՝ այս հարցում բացառիկ դերակատարություն ունի միջգերատեսչական պատշաճ համագործակցությունը բոլոր վերաբերելի դերակատարների միջև՝ կրթության, պաշտպանության ոլորտում իրավասու գերատեսչությունների, ոստիկանության և այլն:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի կատարած ուսումնասիրությունները, այդ թվում՝ ՊՆ իրավասու ներկայացուցիչներից, մի շարք զորամասերից, զինկոմիսարիատների իրավասու ներկայացուցիչներից, ՊՆ կենտրոնական հավաքակայանից ստացված տեղեկությունները վկայում են, որ դպրոցները, որպես կանոն, շարունակում են զորակոչի ենթակա քաղաքացիների վերաբերյալ տրամադրել նախապես մշակված տիպային ձևի դրական բնութագրեր, որոնք ամբողջական ու օբյեկտիվ տեղեկատվություն չեն բովանդակում զորակոչիկի վերաբերյալ, իսկ անձի հոգեբանական բնութագրի մասով դրանք միանշանակ թերի են: Արդյունքում, զորակոչվելուց հետո զորամաս փոխանցվող տեղեկատվությունը սպայակազմին հնարավորություն չի տալիս զինծառայողի հետ տանել թիրախային աշխատանք և կանխել նրա հակահիրավական վարքագիծը: Զորամասերի հրամանատարությունը ևս նշել է, որ ծառայության ներգրավելուց որոշ ժամանակ հետո է միայն հնարավոր լինում իրական պատկերացում ունենալ անձի բնութագրի մասին, քանի որ մինչ այդ զինկոմիսարիատից ներկայացված տեղեկատվությունն ամբողջությամբ չի արտացոլում իրական պատկերը:

Իրավախախտումների կանխարգելման գործում կարևոր է նաև թիրախային խմբերի հետ (քրեական ենթամշակույթով հետաքրքրվող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) հնարավոր հակահիրավական վարքագիծը բացառելու նպատակով կոնկրետ աշխատանքների իրականացումը:

Զինծառայողների շրջանում իրավունքահեն գաղափարների տարածման և դրական վարքագծի խրախուսման տեսանկյունից կարևոր է նաև բանակում **խրախուսանքի կիրառման գործուն և արդյունավետ քաղաքականության իրականացումը**: 2024 թվականին որոշ զորամասեր այցերի ընթացքում արձանագրվել է, որ հրամանատարությունը որպես կարգապահության ամրապնդման միջոց ակտիվորեն կիրառում է նաև խրախուսանքի տարբեր միջոցներ (ազատ արձակումներ, շնորհակալության հայտարարում և այլն): Հրամանատարության և զինծառայողների հետ առանձնազրույցները, զորամասում ծառայողական քննությունների, կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցների ընդհանուր պատկերը ևս մեկ անգամ հնարավորություն են տալիս արձանագրելու խրախուսանքի միջոցների դրական ազդեցությունը զինվորական կոլեկտիվում համախմբվածության, միմյանց իրավունքները հարգելու, հետևաբար կարգապահության բարձր մակարդակի մասին:

Զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման գործում սկզբունքային է նաև **իրավախախտումներից տուժած անձանց պաշտպանությունը**: Ճիշտ է, իրավախախտումներից տուժած անձանց նկատմամբ, ըստ անհրաժեշտության, կիրառվում են օրենքով սահմանված պաշտպանության միջոցներ, կամ տուժած զինծառայողները տեղափոխվում են ծառայության այլ վայր, սակայն նրանց հետ անհրաժեշտ է ամենօրյա ռեժիմով անցկացնել հոգեբանական աջակցման աշխատանքներ և պահել հատուկ ուշադրության ու հոգածության ներքո:

Այս մասով մնում է հավելել, որ բանակում ամուր կարգապահություն ապահովելու գրավականներից է գրագետ զինծառայողների արհեստավարժ մոտեցումը ծառայության նկատմամբ: Այն իր հերթին անխուսափելիորեն ենթադրում է մարդու իրավունքների ապահովում, ներառյալ՝ հարգանք մարդու արժանապատվության հանդեպ: Իհարկե, խոսքը վերաբերում է հավասարապես ինչպես շարքային, այնպես էլ ենթասպայական ու սպայական կազմերի զինծառայողներին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***շարունակ կատարելագործել և զարգացնել զինծառայողների շրջանում իրավագիտակցության բարձրացմանը միտված կառուցակարգերը (այդ թվում՝ ձեռնարկների, ուղեցույցների, տեղեկատվական թերթիկների տրամադրման, ինչպես նաև պարբերական դասընթացների միջոցով),***
- ✓ ***զորամասերում իրականացնել համապատասխան աշխատանքներ ոչ իրավաչափ վարքագծի, բռնության կանխարգելման ուղղությամբ, կատարելագործել նշված ոլորտում իրավասու մարմինների և նրանց ներկայացուցիչների հմտություններն ու միմյանց հետ փոխգործակցությունը,***
- ✓ ***բոլոր զորամասերն ապահովել պրոֆեսիոնալ սպա-հոգեբաններով, ամենօրյա ռեժիմով ուշադրություն դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին, սպա-հոգեբանների կարողությունները զարգացնելու նպատակով պարբերաբար իրականացնել վերապատրաստման դասընթացներ՝ զուգահեռաբար միջոցներ ձեռնարկելով զորամասերի հոգեբանական օգնության կետերը մասնագիտական գույքով կահավորելու ուղղությամբ,***
- ✓ ***մշակել առավել արդյունավետ կառուցակարգեր զորակոչիկների վերաբերյալ օբյեկտիվ ու ամբողջական տեղեկությունների (բնավորություն, վարքագիծ, հակվածություն, սոցիալական և հոգեբանական մի շարք գործոններ,***

գիտելիքների աստիճան և այլն) հավաքագրման, դրանք զինկոմիսարիատներին տրամադրելու և հետագայում զորամասեր փոխանցելու ուղղությամբ,

- ✓ *թիրախային խմբերի (քրեական ենթամշակույթով հետաքրքրվող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) հնարավոր հակահրավական վարքագիծը կանխելու նպատակով նրանց հետ իրականացնել համապատասխան աշխատանքներ՝ ներգրավվելով անհրաժեշտ մասնագետներ (օրինակ, հոգեբան, իրավաբան և այլն),*
- ✓ *բացառել համապատասխան իրավակարգավորումներով չնախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու դեպքերը,*
- ✓ *երաշխավորել զինծառայողների նկատմամբ խրախուսանքի կիրառման գործուն և արդյունավետ քաղաքականության իրականացումը:*

ԳԼՈՒԽ 7. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը

2024 թվականի ընթացքում Պաշտպանի հատուկ ուշադրության ներքո շարունակել են գտնվել զինծառայողների կյանքի իրավունքի երաշխավորման ու խոշտանգումների, վատ վերաբերմունքի բոլոր ձևերի բացառման հետ կապված հարցերը: Կրկին պետք է արձանագրել, որ խաղաղ պայմաններում զինված ուժերում մահվան դեպքերը շարունակում են մնալ լուրջ մարտահրավեր:

ՀՀ Կառավարության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ և դրանից բխող 2020-2022 և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով պետության համար որպես ռազմավարական առանձին նպատակներ նշվել են զինված ուժերում կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանության, խոշտանգումների, վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքի ապահովման հետ կապված հարցերը: Այդ նպատակների իրագործման համար առանձնացվել են գործողությունների այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են զինված ուժերում հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ամրապնդումը, խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումների ներդնումը, վատ վերաբերմունքի արգելքի թեմայով զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին վերապատրաստելը և այլն: Իհարկե, կարևոր է, որ պետության համար վերոնշյալ հարցերն ունեն ռազմավարական նշանակություն, սակայն ոչ պակաս կարևոր է այդ նպատակների հետևողական իրագործումը և արդյունքային ցուցանիշների տեսանելի լինելը, որպեսզի կարողանանք հստակ արձանագրել, որ զինված ուժերում ամբողջությամբ կայացած են այն կառուցակարգերը, որոնք կարող են երաշխավորել կյանքի իրավունքի և վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքի ապահովումը:

2024 թվականի ընթացքում վերոնշյալ հարցերի կարևորությունը և դրանց լուծմանը միտված արդյունավետ մեխանիզմներ մշակելու անհրաժեշտությունը ընդգծելու նպատակով Պաշտպանն իրականացրել է մի շարք աշխատանքներ.

1) Այցեր զորամասեր, հոսպիտալներ և զինվորական այլ հաստատություններ.

Պաշտպանը և Պաշտպանի ներկայացուցիչները բազմաթիվ այցեր են իրականացրել ՊՆ և ԱԱԾ ենթակայության ստորաբաժանումներ: Պարտադիր ժամկետային ու պայմանագրային զինծառայողների հետ հանդիպումների և քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել զինծառայողների միջև փոխադարձ հարգանքի, միմյանց իրավունքներն ու արժանապատվությունը

հարգելու կարևորությանը, բռնության դեպքերի անթույլատրելիությանը, իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահության խստիվ պահպանմանը: Այս հարցերի շուրջ քննարկումներ են եղել նաև զորամասերի սպա-հոգեբանների, սպա-իրավաբանների հետ[128]:

2) Խնդիրներին լուծումներ գտնելուն միտված ուսումնասիրություններ, առաջարկների ներկայացում պետական մարմիններին.

Պաշտպանը զինված ուժերում կյանքի իրավունքի երաշխավորմանը և խոշտանգումների, վատ վերաբերմունքի բոլոր ձևերի բացառմանը միտված առաջարկներ է ներկայացրել իրավասու գերատեսչություններ: Դրանք առնչվում են ինչպես համակարգային խնդիրներին, այնպես էլ անհատական բողոքների քննարկման շրջանակում արձանագրված կոնկրետ դեպքերին:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրություններ են կատարվել նաև ՀՈՒ-ում կյանքի իրավունքի ապահովման միջազգային չափանիշների վերաբերյալ: Այս առումով կարևոր է ընդգծել, որ պետությունը պարտավոր է ձեռնարկել զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ և բավարար քայլեր, իսկ զինծառայողների մահվան պարագայում իրականացնել դրանց հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով արդյունավետ քննություն (effective investigation): Միջազգային իրավաբանության ներքո քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է, որ այն բավարարի հետևյալ չորս միաժամանակյա պահանջները՝ 1) անկախություն (independence), 2) պատշաճություն (adequacy), 3) անհապաղ և ողջամիտ ժամկետ (promptness and reasonable expedition) և 4) հանրային վերահսկողություն,

[128] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3121, https://ombuds.am/am/site/ViewNews/3257, https://ombuds.am/am/site/ViewNews/2987, https://ombuds.am/am/site/ViewNews/3160, https://ombuds.am/am/site/ViewNews/3008 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ներառյալ՝ տուժողի իրավահաջորդի ներգրավվածություն (public scrutiny and the participation of the next-of-kin):

2024 թվականի ընթացքում Պաշտպանի ներկայացրած առաջարկները Պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ դարձվել են առանձին քննարկման առարկա[129]:

3) Հարցի հանրայնացում, հրապարակային ուղերձներ.

Պաշտպանը պարբերաբար հանդես է եկել հրապարակային հայտարարություններով ու ուղերձներով, որոնցում հատուկ ընդգծել է, որ զինված ուժերում նման դեպքերի առկայությունն անթույլատրելի է և խիստ մտահոգիչ: Պետությունը պարտավոր է ձեռնարկել զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ և բավարար քայլեր, իսկ զինծառայողների մահվան պարագայում՝ իրականացնել դրանց հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով արդյունավետ քննություն: Պաշտպանը միաժամանակ առաջնային է համարել բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգի (ծրագիր, քայլերի հերթականություն և այլն) մշակման և իրացման անհրաժեշտությունը[130]:

4) Պետական մարմինների կատարած կանխարգելիչ և այլ աշխատանքների կապակցությամբ պարզաբանումներ.

Զինծառայողների մահվան և ինքնավնասումների, նրանց նկատմամբ խտրականության, վատ վերաբերմունքի դեպքերը Պաշտպանի աշխատակազմում դարձել են հատուկ ուսումնասիրության առարկա, յուրաքանչյուր դեպքով պաշտոնական պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից, այդ թվում՝ Պաշտպանության նախարարությունից, Գլխավոր դատախազությունից, Քննչական կոմիտեից, Առողջապահության նախարարությունից, Ազգային անվտանգության ծառայությունից և այլն: Պետական մարմիններից մշտապես պահանջվել է ներկայացնել պարզաբանումներ առ այն, թե ինչ գործուն քայլեր են ձեռնարկում զինված ուժերում իրավունքի գերակայությամբ երաշխավորված կարգապահություն ապահովելու, խաղաղ պայմաններում զինծառայողների կյանքի իրավունքը պաշտպանելու, նրանց նկատմամբ վատ վերաբերմունքը բացառելու, ինքնավնասումների դեպքերը կանխարգելելու ուղղությամբ:

---

[129] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2958 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[130] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3050, https://lratvakan.am/details/64936/am/, http://surl.li/rfqrk հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

5) Պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի նիստեր.

Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի, ինչպես նաև կարգապահության ամրապնդման հետ կապված հարցերը՝ որպես առանձին թեմա, քննարկման առարկա են դարձել Պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստում: Պաշտպանի աշխատակազմը և խորհրդի անդամները ներկայացրել են իրենց գործունեության ընթացքում արձանագրված՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներին վերաբերելի օրենսդրական և գործնական բնույթ ունեցող խնդիրները, որոնք վերաբերում են զորակոչիկների հետազոտություններին, զինծառայողների առողջական վիճակով պայմանավորված սահմանափակումների պահանջները պահպանելուն, սպա-հոգեբանի ինստիտուտին, զորքերում կարգապահությանը և կանոնադրային հարաբերություններին, կարգապահական և քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնահարցերին, գերության մեջ գտնվող և անհայտ կորած զինծառայողների կարգավիճակին և այլ հարցերին [131]:

6) Հանդիպումներ, քննարկումներ, աշխատաժողովներ:

Իրավունքի գերակայության երաշխավորման նպատակով զինվորական կարգապահության, զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության թեմաներով պետական մարմինների, քաղհասարակության, միջազգային գործընկերների և փորձագետների հետ համատեղ տեղի են ունեցել մի շարք կլոր-սեղան քննարկումներ և աշխատաժողովներ: Օրինակ, «Անվտանգության ոլորտի կառավարումը և վերահսկողությունը Հայաստանում-բարեփոխումների կարգավիճակը և հետագիծը» կլոր-սեղան քննարկման շրջանակում առանձին անդրադարձ է կատարվել ՀՈՒ-ում կարգապահության, հոգեկան առողջության բարելավման, պրոֆեսիոնալիզմի, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման, անկախ վերահսկողական հաստատությունների հզորացման և այլ հարցերի[132]: Միջազգային լավագույն փորձի և մոտեցումների զուգադրմամբ ներկայացվել են ոլորտային խնդիրներին լուծումներ գտնելու տարբեր մեխանիզմներ: ԵՄ «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի

---

[131] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3231 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[132] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3173 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

շրջանակում կազմակերպված միջգերատեսչական աշխատաժողովներում քննարկվել են զինված ուժերում ինքնասպանության նախականխման, արդյունավետ քննության, զինծառայողների առողջության պահպանման իրավունքին առնչվող հարցեր, և այս համատեքստում պետության ստանձնած պարտավորությունները: Աշխատաժողովների նպատակն է եղել խթանել Մուրադյանն ընդդեմ Հայաստանի խումբ գործերով Հայաստանի Հանրապետության առջև դրված խնդիրների լուծումը[133]:

7) Միջազգային գործընկերների հետ համագործակցություն:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող առանձին հարցեր և համագործակցության ուղղություններ քննարկման առարկա են դարձել Եվրոպայի խորհրդի, Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության (SIDA), ԵՄ Անվտանգության ոլորտի կառավարման մեխանիզմի (EU Security Sector Governance Facility), Ժնևի անվտանգության ոլորտի կառավարման կենտրոնի (DCAF) ներկայացուցիչների հետ և այլն[134]:

Սույն գլխի շրջանակում, իրավասու պետական մարմինների ներկայացրած տեղեկությունների հաշվառմամբ, ուսումնասիրվել է զինված ուժերում խաղաղ պայմաններում զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը:

Այսպես, Ազգային անվտանգության ծառայության տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում Սահմանապահ զորքերում գրանցվել է ոչ մարտական պայմաններում զինծառայողի մահվան 1 դեպք (պարտադիր ժամկետային զինծառայողը մահացել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում, հիվանդության պատճառով): Նշված ժամանակահատվածում գրանցվել է պարտադիր ժամկետային զինծառայողների կողմից ինքնավնասման 5 դեպք:

Պաշտպանության նախարարության տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում մարտական պայմաններում զոհվել են 4

---

[133] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3111 , https://ombuds.am/am/site/ViewNews/3208 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[134] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/2857, https://ombuds.am/am/site/ViewNews/3062, https://ombuds.am/am/site/ViewNews/2930 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

զինծառայողներ (ԵԿՄ անդամներ): Նույն ժամանակահատվածում՝ ոչ մարտական պայմաններում, սակայն ծառայության հետ կապված հանգամանքներում մահացել է 36 զինծառայող, որոնցից՝ 4-ը՝ սպանության, 1-ը՝ հրդեհի, 7-ը՝ ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու, 4-ը՝ ճանապարհատրանսպորտային պատահարի, 1-ը՝ մարտական մեքենաներ վարելու կանոնների խախտման, 2-ը՝ ավիավթարի, 3-ը՝ հիվանդության և 1-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով: 2024թ. ընթացքում ևս 13 զինծառայողներ մահացել են ծառայության հետ չկապված հանգամանքներում, որոնցից 3-ը՝ հիվանդության, 7-ը՝ ճանապարհատրանսպորտային պատահարի, 1-ը՝ ինքնասպանության և 2-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով: 2024թ. տեղի ունեցած 8 ճանապարհատրանսպորտային պատահարից գրանցվել է 11 մահվան ելք, որից 4-ը տեղի է ունեցել մարտական հերթապահության ընթացքում, իսկ 7-ը՝ անձնական օգտագործման մեքենաներով, ծառայողական օրվա ավարտից հետո:

Զինծառայողների ինքնավնասումների մասով Պաշտպանության նախարարությունը տրամադրել է հետևյալ տեղեկությունները՝ 2024 թվականի ընթացքում զինված ուժերում արձանագրվել է ինքնավնասման 77 դեպք, որից 67-ը կապված է եղել ծառայության հետ: Ինքնավնասման 77 դեպքերը կատարվել են 70 զինծառայողի կողմից: 7 զինծառայող ինքնավնասում կատարել է 1-ից ավելի անգամներ: Ինքնավնասման 70 դեպքերից 36-ը (50%-ը)՝ զինծառայողները կատարել են զինվորական ծառայության սկզբնական ժամանակահատվածում: 70 ինքնավնասում կատարած զինծառայողներից 41-ը զինվորական ծառայության են զորակոչվել առողջական սահմանափակումների տարբեր հոդվածներով, որոնցից 28-ը՝ «7գ» հոդվածով:

Գլխավոր դատախազությունը հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ՝ ներկայացնելով 2024 թվականի ընթացքում զինված ուժերում արձանագրված դեպքերի, նախաձեռնված քրեական վարույթների, դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների արդյունքները[135]:

Ամփոփելով վերջին տարիներին խաղաղ պայմաններում զինծառայողների մահացության և ինքնավնասումների դեպքերի վերաբերյալ իրավասու պետական մարմինների ներկայացրած տվյալները՝ արձանագրում ենք հետևյալ վիճակագրությունը.

Մահվան դեպքեր.
2020թ.՝ 54
2021թ.՝ 58
2022թ.՝ 64
2023թ.՝ 83
2024թ.՝ 40

Ինքնավնասումների դեպքեր.
2020թ.՝ 65
2021թ.՝ 77
2022թ.՝ 108
2023թ.՝ 66
2024թ.՝ 77

[135] Հասանելի է https://prosecutor.am/article/4831 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանն իրավասու գերատեսչություններին հարցադրումներ է ուղարկել խաղաղ պայմաններում զինված ուժերում մահվան և ինքնավնասումների դեպքերի պատճառների վերհանման և դրանց կանխարգելման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ զորամասերում ձևավորվում են «Ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման խմբեր», ովքեր իրենց գործունեությունն իրականացնում են համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի 2014թ. մարտի 20-ի N 271 հրամանի հավելված 3-ի դրույթներով: Համաձայն նշված ղեկավար փաստաթղթի պահանջների՝ խումբը իրականացնում է զինծառայողների հոգեբանական նկարագրերի կազմման, հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական որակների գնահատման, նյարդահոգեկան անկայունության նշաններ ունեցող անձանց բացահայտման, շեղվող վարքով առանձնացող զինծառայողների մեկուսացման և կանխարգելիչ աշխատանքների իրագործման աշխատանքներ: Զինված ուժերում հոգեկան առողջության խթանման և զինծառայողների կողմից ինքնավնասումների և ինքնասպանությունների կանխարգելման ուղղությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր: Նշվածի հետ կապված՝ Պաշտպանության նախարարությունը Պաշտպանի աշխատակազմ է ներկայացրել մանրամասն այլ տեղեկություններ ևս:

Գլխավոր դատախազությունը, ի թիվս այլնի, տեղեկացրել է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների վերհանման արդյունքում իրավասու մարմիններին ներկայացվել է 34 միջնորդագիր: Միջնորդագիր է ներկայացվել ինքնասպանության դեպքերի կանխարգելման համար զինծառայողների փոխհարաբերություններն ամրապնդելու, «կեղծ հեղինակություն» ունեցող զինծառայողներին պարզելու և մշտական հսկողության տակ պահելու, զինծառայողների հետ տարվող բարոյահոգեբանական աշխատանքներն ակտիվացնելու, կարգապահության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Զինված ուժերում թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխելու և դեպքերը բացահայտելու համար միջնորդագիր է ներկայացվել զորամասերում զինծառայողների նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, տեսակցությունն ավարտած զինծառայողների կողմից զորամասեր թմրամիջոց բերելը կանխելուն և բացահայտելուն ուղղված արդյունավետ մեխանիզմներ մշակելու ու կիրառելու և այլ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Բացի այդ, բանակում հանցավորության վիճակը բարելավելու ուղղությամբ կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից պարբերաբար զորամասերում կատարվել են ստուգայցեր, իսկ զինծառայողների իրավագիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ՝ վերջիններիս հետ անցկացվել են զրույցներ:

Ոլորտային խնդիրների վերհանման, կանխարգելման և լուծմանը միտված աշխատանքներ կատարելու վերաբերյալ պարզաբանումներ են ներկայացրել նաև Ազգային անվտանգության ծառայությունը և Քննչական կոմիտեն:

Պաշտպանը ողջունում է խնդրի հաղթահարման ուղղությամբ իրավասու պետական մարմինների կողմից իրականացվող քայլերը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս զինված ուժերում մահվան, ինքնավնասումների դեպքերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև ոլորտում առկա տարատեսակ

խնդիրները՝ կատարված աշխատանքները բավարար չեն եղել հարցը համակողմանիորեն լուծելու համար:

Պաշտպանը վերահաստատում է իր այն մոտեցումը, որ հարցի լուծմանն անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում՝ այդ առումով կարևորելով բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգի (ծրագիր, քայլերի հերթականություն և այլն) մշակման և իրացման անհրաժեշտությունը: Դրա հետ միաժամանակ, կարևոր է, որ զինված ուժերում մահվան յուրաքանչյուր դեպքի, դրան առնչվող վարույթի ընթացքի վերաբերյալ իրավասու պետական մարմինները հանրությանը տրամադրեն պատշաճ տեղեկատվություն, ինչը բացառիկ կարևորություն ունի ՀՈ-ում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերի առնչությամբ քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և հետևողականորեն իրացնել խաղաղ պայմաններում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ,***
- ✓ ***անհրաժեշտ և բավարար քայլեր ձեռնարկել ՀՈ-ում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու, իսկ զինծառայողների մահվան պարագայում դրանց հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով արդյունավետ քննություն իրականացնելու ուղղությամբ:***

2. Զինված ուժերում վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքը

Պաշտպանության և անվտանգության համակարգում առաջացող խնդիրները (այդ թվում՝ զորքերում կարգապահության, բռնության դեպքերի, կարգապահական մեկուսարանների պահման պայմանների և այլնի հետ կապված) լուծվում են Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության գործիքակազմի ներքո և մասնագիտական ստորաբաժանման ներգրավմամբ: Դրանից ելնելով էլ բանակում բռնության հարցերն առանձին ձևաչափով ներկայացված են հենց Պաշտպանի տարեկան հաղորդումներում: Զինված ուժերում բռնության հետ կապված հարցերը վեր են հանվում Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների, թեժ գծին ստացված ահազանգերի, հասարակական կազմակերպությունների, փաստաբանների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների կամ զինվորական հաստատություններ իրականացված այցերի արդյունքներով:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել բողոքներ զինծառայողների նկատմամբ ենթադրյալ բռնության և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների վերաբերյալ: Ստացված բողոքների կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում անմիջապես նախաձեռնվել են քննարկման ընթացակարգեր, կոնկրետ հարցադրումներով պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից: Միևնույն ժամանակ, մշտական կապ է պահպանվել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների հետ:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2024 թվականի ընթացքում զինված ուժերում ծառայության հետ կապված հանգամանքներում տեղի

է ունեցել ոչ կանոնադրային փոխհարաբերությունների (բռնարարքի) 328 դեպք, որի արդյունքում մարմնական վնասվածքներ են ստացել 312 զինծառայող:

Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2024 թվականին արձանագրվել է ռազմական ոստիկանության ծառայողների կողմից ենթակաների կամ այլ զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու 12 դեպք, որոնց կապակցությամբ ստացվել են հաղորդումներ և նախաձեռնվել է 12 քրեական վարույթ: Արձանագրվել է ռազմական ոստիկանության ծառայող չհանդիսացող զինծառայողների կողմից ենթակաների նկատմամբ բռնություն գործադրելու 119 դեպք, որոնց կապակցությամբ ստացվել են հաղորդումներ և նախաձեռնվել են 119 քրեական վարույթ:

Պաշտպանը մտահոգիչ է համարում զինված ուժերում վատ վերաբերմունքի տարբեր դրսևորումների առկայությունը: Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պոզիտիվ պարտականություն ունի կանխելու զինված ուժերում բռնության և վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում, իսկ դրանց առկայության դեպքում՝ իրականացնելու գործերի արդյունավետ քննություն:

ՄԻԵԴ իրավաբանության համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չպատճառեն նրան ֆիզիկական տառապանք կամ չանցնեն զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ զինծառայողի առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված լինեն: Պետության առաջնային պարտականությունն է անձին զինվորական ծառայության զորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով[136]:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրումներ է ուղարկել իրավասու պետական մարմիններին առ այն, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի պատճառները պարզելու և կանխելու նպատակով:

Քննչական կոմիտեի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության պետի հանձնարարությամբ ենթակա ստորաբաժանումների քննիչներն, ըստ նախապես պլանավորած թեմաների, պարբերաբար այցելում են սպասարկվող տարածքներում տեղակայված զորամասեր, որտեղ զինծառայողների շրջանում իրականացնում են պրոֆիլակտիկ զրույցներ, կազմակերպում դասընթացներ՝ նրանց իրավագիտակցության բարձրացման, հանցագործությունների կանխարգելման նպատակով: Քննչական կոմիտեն հավելել է, որ 2024 թվականի ընթացքում սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային 441 զինծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում,

---

[136] Տե՛ս Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (CHEMBER v. RUSSIA) գործով ՄԻԵԴ 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

որից 396-ի նկատմամբ քրեական վարույթները մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ զինված ուժերում արձանագրված բռնարարքների դեպքերով անցկացվում են ծառայողական քննություններ, իսկ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքերով նախաձեռնվում է նախաքննություն:

Զինված ուժերում բռնության, վատ վերաբերմունքի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքների առկայությունը վկայում է, որ իրավասու մարմինների կատարած աշխատանքը դեռևս բավարար չէ խնդիրը հաղթահարված համարելու համար:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***զինծառայողներին բռնությունից, վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորումից պաշտպանելու նպատակով մշակել և իրացնել առավել արդյունավետ կանխարգելիչ կառուցակարգեր՝ բոլոր զորամասերում շարունակ զարգացնելով սպա-հոգեբանի, սպա-իրավաբանի ինստիտուտը,***
- ✓ ***ՀՈՒ-ում բռնության, վատ վերաբերմունքի վերաբերյալ ցանկացած տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության առարկա, մեղավորներին ենթարկել պատասխանատվության,***
- ✓ ***բարձրացնել զինծառայողների իրազեկվածությունը բռնության, վատ վերաբերմունքի բոլոր ձևերի անթույլատրելիության, ինչպես նաև դրանց կանխարգելման կառուցակարգերի առնչությամբ:***

ԳԼՈՒԽ 8. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները

Զինված ուժերում կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների հասանելիության ապահովումը հատկապես կարևոր է այն պայմաններում, երբ ձևավորված և խոր արմատներ ունեցող հանրային կարծրատիպային ընկալման համաձայն՝ բանակը միայն տղամարդկանց միջավայր է, իսկ զինվորական ծառայությունը տղամարդկանց ծառայություն է ենթադրում:

Կարևոր է նշել, որ միջազգային իրավական փաստաթղթերի հետ միասին՝ ներպետական օրենսդրությունը, առավել ևս՝ ՀՀ Սահմանադրությունը հստակ ամրագրում են կանանց ու տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը: Ընդ որում, Սահմանադրությունը հատկապես ընդգծում է, որ, ի թիվս այլնի, պետության քաղաքականության հիմնական նպատակներից է «կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը» (հոդված 86):

Պաշտպանն ընդգծում է, որ անհնար է թերագնահատել կանանց դերը և կարևորությունը զինված ուժերի զարգացման և բնականոն գործունեության հարցում: Զինված ուժերում կանանց մասնակցությունը կարևոր ազդեցություն կարող է ունենալ հակամարտությունների կարգավորմանն ու լուծմանը նրանց մասնակցության տեսանկյունից:

Այսպես, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2000 թվականի թիվ 1325 բանաձևը կարևորում է կանանց դերը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, ինչպես նաև խաղաղաշինության գործում: Այն պետություններին կոչ է անում ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և հանգուցալուծման ազգային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների ընդունմանը բոլոր մակարդակներում: Բանաձևը հաստատում է, որ որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության բացակայությունը և նրանց նկատմամբ թիրախավորված բռնության տարածվածությունը երկարաձգում են հակամարտությունները, ապակայունացնում ամբողջական տարածաշրջաններ և խոչընդոտում հակամարտությունների խաղաղ կարգավորմանը: Այս առումով պետության կողմից կարևոր քայլ էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 6-ի թիվ 803-Լ որոշումը, որով Կառավարությունը վերահաստատում է իր պատրաստակամությունը շարունակելու աշխատանքները կանայք, խաղաղություն և անվտանգություն թեմայով: Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ մանրամասն ներկայացվել է միջազգային լավագույն փորձը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325, ինչպես նաև «Կանայք, խաղաղությունը

և անվտանգությունը» բանաձևերի տեղայնացումը Հայաստանում լիակատար ապահովելու տեսանկյունից[137]:

ԵԽԽՎ-ի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝
Ավելի մեծ թվով կանանց անձնակազմում ներգրավելն ու պահելը դարձել է զինված ուժերի կարևորագույն խնդիրներից մեկը: Սակայն, չնայած այն փաստին, որ վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի բանակներն ասպիճանաբար ավելի դրական են վերաբերվում զինված ուժերը կանանցով համալրելու հարցին՝ կանայք զինված ուժերում և հատկապես՝ հրամանատարական բարձր կոչումներ ունեցող անձանց շարքերում, դեռևս շարունակում են փոքրամասնություն կազմել: *Զինված ուժերին միացող կանայք հայտնվում են տղամարդկանց կողմից և հենց նրանց համար մշակված միջավայրում: Նրանք ենթարկվում են տարատեսակ խտրականությունների, բախվում են կոշտ աշխատանքային ռեժիմով աշխատելու և կարծր մտածելակերպի խնդիրներին, որոնք դեռևս արմատացած են զինված ուժերին բնորոշ «տղամարդկային» մոտեցումներում:*

Պետք է արձանագրել, որ Հայաստանում ոլորտային օրենսդրությունը սեռով պայմանավորված չեզոք է, ինչն էլ հստակ երաշխիքների բացակայության պայմաններում հաճախ ստեղծում է մի իրավիճակ, երբ սեռային առանձնահատկությունները հաշվի չեն առնվում: Բացի այդ, թեպետ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց, սակայն դեռևս առկա է զինվորական ծառայության պաշտոններում կանանց ցածր ներգրավվածության խնդիր: Չնայած միջազգային և ներպետական իրավական չափորոշիչներին՝ ՀՀ ԶՈՒ-ում փաստացի շարունակվում է նկատվել կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն, որն ավելի ակնհայտ է դառնում զինվորական ծառայության անցնելիս (այդ թվում՝ զինվորական մասնագիտություն ընտրելիս), աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, զինվորական ծառայությունում առաջխաղացում ունենալիս, բարձր զինվորական պաշտոններում նշանակելիս և այլն[138]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը.
• *Սեռով պայմանավորված տարբերակված վերաբերմունքը՝ խտրականությունը, չի կարելի հիմնավորել երկրի ավանդույթներով, հասարակության մեջ ընդունված կարծիքներով կամ գերիշխող վարքագծերով[139]:*

[137] Տես Պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 479-480, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[138] Կանանց աշխատանքային իրավունքների խնդիրներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ սույն հաղորդման՝ «Կանանց իրավունքներ» բաժնում:

[139] Տե՛ս, Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի (KONSTANTIN MARKIN v RUSSIA) գործով ՄԻԵԴ 2012 թվականի մարտի 12-ի վճիռը, կետ 127:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կին զինծառայողները խոչընդոտների են հանդիպում հիմնականում առաջխաղացում ունենալու հարցերում: Կանայք առավել մեծ թիվ են կազմում միայն շարքային և ենթասպայական կազմերի պաշտոններում, մինչդեռ սպայական կազմում կին զինծառայողների հարաբերակցությունը բավական ցածր է: Կին զինծառայողները բախվում են խոչընդոտների նաև սպայական կոչում ստանալիս:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2024 թվականի դրությամբ ՀՀ ԶՈՒ պայմանագրային զինծառայողների ընդհանուր թվաքանակում կին զինծառայողների թվաքանակը կազմում է 10,3%. սպայական կազմում՝ 7%, ավագ սպայական կազմում՝ 1%, կրտսեր սպայական կազմում՝ 5%, ավագ ենթասպայական կազմում՝ 32%, կրտսեր ենթասպայական կազմում՝ 6,8%, շարքային կազմում՝ 5%: Կին զինծառայողների թվաքանակը Երևանում տեղաբաշխված զորամասերում կազմում է 14,8%, իսկ մարզերում՝ 3,5%: Ըստ ՊՆ-ի՝ ՀՀ զինված ուժերում կանանց ներգրավվածության աստիճանը բարձրացնելու նպատակով 2024 թվականի ընթացքում պատրաստվել և ՊՆ պաշտոնական (www.mil.am, www.hayzinvor.am կայքեր, «Հայ զինվոր հանդես», սոցիալական տարբեր հարթակներ), ինչպես նաև հայաստանյան այլ լրատվամիջոցներով հրապարակվել են կանանց ծառայության, ներառյալ նաև կամավոր հիմունքներով պարտադիր ժամկետային ծառայության, կանանց գումարտակի կենցաղային և այլ պայմանների վերաբերյալ հոդվածներ, տեսանյութեր, խաղարկային և անիմացիոն տեսահոլովակներ:

Ազգային անվտանգության ծառայության տեղեկացմամբ՝ սահմանապահ զորքերի անձնակազմի շուրջ 20%-ը կին զինծառայողներ են: Ծառայության կողմից ձեռնարկվում են գործուն միջոցներ համակարգում կին զինծառայողների քանակն ավելացնելու ուղղությամբ: Սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության համապատասխան բաժիններից մեկում սպաների 14.2%-ը, ենթասպայական կազմի 52%-ը, կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների 45%-ը կին զինծառայողներ են: 2024 թվականին ԱԱԾ սահմանապահ զորքերում ծառայության և աշխատանքի ընդունված կին զինծառայողների թիվը 2023 թվականի ծառայության և աշխատանքի ընդունված կին զինծառայողների համեմատ աճել է 56%-ով:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԹ» կետի համաձայն՝
Կին զինծառայողները տղամարդ զինծառայողների նման պետք է պաշտոնական առաջխաղացման հարցերում ունենան հավասար հնարավորություններ և ԶՈՒ-ում աշխատելիս արժանանան հավասար վերաբերմունքի: Սեռի հիմքով նրանք չպետք է դուրս թողնվեն մասնագիտությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ տեսակի մասնագիտական գործունեության բնույթով կամ համատեքստով պայմանավորված, սեռը հանդիսանում է իրական վճռորոշ հանգամանք:

Զինված ուժերում հավասար հնարավորությունների ապահովումը նշանակում է, որ կանանց նկատմամբ պետության վերաբերմունքը (սկսած ծառայության

ընդունումից, առաջխաղացումից, խրախուսումից, մինչև ծառայությունից արձակում) պետք է հիմնված լինի բացառապես նրանց մասնագիտական ունակությունների, ծառայության կամ ուսման ընթացքում դրսևորած վարքագծի վրա: Միևնույն ժամանակ, կանանց համար պետք է ապահովվեն ծառայության համար պատշաճ պայմաններ:

2024 թվականի ընթացքում բազմաթիվ զորամասեր այցերի, կին զինծառայողների հետ առանձնազրույցների, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ ստացված գրավոր ու բանավոր բողոքների ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրելու, որ կին զինծառայողները ծառայության վայրերում բախվում են մի շարք խնդիրների:

Դրանք հիմնականում վերաբերում են օրենքով սահմանված աշխատաժամանակի չպահպանմանը, զինվորական համազգեստի, կոշիկների, այլ պարագաների (օրինակ, զրահաբաճկոն)՝ կանանց համար հարմարեցված չլինելուն, ատեստավորման գործընթացին, բնակարանի վարձակալության համար տրամադրվող գումարների չափերին, զինվորական ծառայության և ընտանեկան կյանքի համատեղելիությանը, որոշ զորամասերի, մարտական դիրքերի կենցաղային պայմաններին (առանձնացված զուգարան, բաղնիք և այլն), հրամանատարության կողմից թիրախավորվելուն և խտրական վերաբերմունքի արժանանալուն և այլն: Կին զինծառայողներից ստացված բոլոր բողոքները Պաշտպանի աշխատակազմում հատուկ ուսումնասիրության առարկա են դարձվել, դրանցում բարձրացված հարցերով գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններ: Զուգահեռաբար Պաշտպանի աշխատակազմը մշտական կապ է պահել բողոք ներկայացրած անձանց հետ՝ հետագա հնարավոր խնդիրներին արագ արձագանքելու նպատակով:

Դրականորեն պետք է արձանագրել զորամասերում կանանց խորհուրդների գործունեությունը, որն էական նշանակություն ունի զինված ուժերում կանանց ներգրավվածության և կին զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցում: Խորհուրդների ձևավորումը հնարավորություն է տալիս կին զինծառայողներին բարձրաձայնել ծառայության ընթացքում առաջացող խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիներ:

2024 թվականի ընթացքում Պաշտպանն առանձին այց է իրականացրել կանանց գումարտակ: Այցի շրջանակում Պաշտպանը զորամասի հրամանատարության ուղեկցությամբ շրջայց է կատարել տարածքում, ծանոթացել կին զինծառայողների համար նոր կառուցված շենք-շինություններին, դրանց կենցաղային պայմաններին և իրավունքների ապահովման վիճակին:

Կին զինծառայողների իրավունքների պաշտպանության և պատշաճ պայմաններում ծառայություն իրականացնելու տեսանկյունից Պաշտպանը դրական է գնահատում նոր ստեղծված պայմանները: Պաշտպանն առանձնազրույցներ է ունեցել գումարտակի կին զինծառայողների հետ, ովքեր ներկայացրել են իրենց ծառայողական առօրյան, բարձրացրել են ծառայության պայմանների լավարկման, իրենց իրավունքներին վերաբերելի մի շարք այլ հարցեր[140]:

Կին զինծառայողների հետ առանձին հանդիպումներ են եղել նաև Լոռու մարզում տեղակայված զորամասեր այցերի ընթացքում: Առանձնազրույցների ընթացքում կին զինծառայողները ներկայացրել են իրենց մտահոգող հիմնական խնդիրները՝ զուգահեռաբար առաջարկներ ներկայացնելով ծառայության պայմանների լավարկման, ծառայության գրավչության բարձրացման, զինվորական ծառայության ընթացքում նոր մասնագիտություն սովորելու և հետագայում ծառայությունից արձակվելուց հետո քաղաքացիական կյանքում հեշտ ինտեգրվելու և այլնի վերաբերյալ[141]:

Այս համատեքստում Պաշտպանը կարևոր է համարում հատուկ ընդգծել կին զինծառայողների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի պատշաճ երաշխավորումը: Սա ունի ինչպես ներպետական[142], այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներով պաշտպանվող հենք: Ճիշտ է, զինվորական ծառայությունը սահմանափակում է անձանց որոշ իրավունքներ, այդ թվում՝ անձնական կյանքը, այնուամենայնիվ պետությունը պետք է ապահովի զինծառայողների՝ անձնական կյանքով ապրելու համար անհրաժեշտ պայմանները (օրինակ, հեռախոսային կապ ամուսնու/կնոջ հետ, նամակագրություն և այլն): Դրա հետ մեկտեղ, հեռախոսի օգտագործումը կարող է սահմանափակվել (եթե ունի իրավաչափ նպատակ, ողջամիտ բացատրություն), օրինակ, մարտական հերթապահության ժամանակ[143]: Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը և արժանապատիվ զինծառայությունը ներառում են նաև պատշաճ կացարանի իրավունքը: Կին զինծառայողները պետք է բնակվեն այնպիսի կացարաններում և պայմաններում, որ կարողանան բավարարել իրենց նվազագույն կարիքները: Ընդ որում, կին զինծառայողների համար կահավորվում են առանձին հանրակացարաններ (ննջարաններ), պարապմունքներին նախապատրաստվելու, խորհրդակցությունների և ժամանցի սենյակներ, ցնցուղարան և զուգարաններ, ինչպես նաև կենցաղսպասարկման և լվացվելու առանձին սենյակներ: Նույնիսկ զորանոցում զինծառայողին հատկացված տարածքը նրա անձնական և մասնավոր

---

[140] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3028 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[141] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3121 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[142] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 31:
[143] Տե՛ս «Կանայք ԶՈՒ-ում. եղիր իրազեկված: Հայաստանի կին զինծառայողների իրավունքների և ազատությունների մասին» ԵԽ ձեռնարկը, էջ 15:

միջավայրն է: Կին զինծառայողների ննջարաններում մահճակալները դասավորվում են մեկ հարկաշարքով[144]:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև նշված հարցի վերաբերյալ ներպետական և միջազգային չափորոշիչները, անհրաժեշտ է՝

- ✓ ***կատարել ուսումնասիրություններ (այդ թվում՝ հարցումների միջոցով)՝ ՀՀ ԶՈՒ-ում ընդգրկված իգական սեռի ներկայացուցիչների՝ ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու պատճառները պարզելու նպատակով,***
- ✓ ***հանրային իրազեկումներով ընդգծել կնոջ դերն ու կարևորությունը ԶՈՒ-ում (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով)՝ կնոջ դերի և ԶՈՒ առնչությամբ կարծրատիպային մտածողությունը փոխելու նպատակով,***
- ✓ ***ԶՈՒ-ում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը խթանելու նպատակով կանանց համար հասանելի դարձնել ՀՀ ԶՈՒ բոլոր պաշտոնները՝ երաշխավորելով ինչպես կանանց բավարար մասնագիտական պատրաստվածությունը, այնպես էլ վերջիններիս ծառայության համար անհրաժեշտ պայմանների առկայությունը,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել կին զինծառայողներին այն դերերում ներգրավելու ուղղությամբ, որոնցից նրանք նախկինում դուրս են թողնվել, դիտարկել այդ մասնագիտությունների համալրման ժամանակ կիրառված ֆիզիկական չափանիշները և փորձնական ծրագրերի նպատակահարմարությունը՝ կանանց համալրումն այդ մասնագիտություններում խթանելու նպատակով,***
- ✓ ***աջակցել զորամասերի կին զինծառայողների խորհուրդների գործունեությանն ու կարողությունների զարգացմանը,***
- ✓ ***կին զինծառայողներին խտրականությունից, վատ վերաբերմունքից, թիրախավորումներից զերծ պահելու նպատակով զինվորական հաստատություններում իրականացնել իրազեկման, կրթական ու կանխարգելիչ աշխատանքներ:***

2. Զինված ուժերում կանանց իրավունքների ապահովման օրենսդրական երաշխիքները

Կանանց իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում երաշխավորելու ամենակարևոր քայլերից մեկը զինվորական օրենսդրությամբ համապատասխան երաշխիքների ամրագրումն է: Կանանց զինվորական ծառայության խրախուսման տեսանկյունից Պաշտպանը կարևոր է համարում նաև օրենսդրության վերանայումը՝ անձնական կամ ընտանեկան հանգամանքների հաշվառմամբ:

Ընդհանուր առմամբ, ոլորտային օրենսդրությունը գենդերային առումով չեզոք է (gender-neutral), և հաճախ խնդիրներ առաջանում են հենց գենդերային առանձնահատկությունները հաշվի չառնելու պատճառով, ինչը կին զինծառայողների համար ստեղծում է անհավասար պայմաններ: Այս առումով Պաշտպանը կարևորում

[144] Տե՛ս նույն տեղը, էջ 16:

է, որ օրենսդրությամբ լրացուցիչ երաշխիքներ նախատեսվեն զինվորական ծառայություն անցնող կանանց համար:

Իհարկե, դրականորեն պետք է ընդգծել իրավասու պետական մարմինների կատարած աշխատանքը կին զինծառայողների իրավունքների ապահովման ուղղությամբ, սակայն առկա են օրենսդրական խոչընդոտներ, որոնք զինված ուժերում հաճախ հանգեցնում են կանանց իրավունքների՝ ոչ ամբողջությամբ իրացմանը:

Մասնավորապես՝ համատեղ ծառայության բավարար օրենսդրական երաշխիքներ առկա չեն *զինծառայող և քաղաքացիական ծառայող, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների համար*: Միևնույն ժամանակ, առկա չեն օրենսդրական երաշխիքներ *պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսնուն նրա հետ ծառայության նոր վայր տեղափոխելու, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում մյուս ամուսնուն հնարավորին մոտ զորամասում ծառայության տեղափոխելու վերաբերյալ (վերջիններիս ցանկությամբ)*:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «Է» կետի համաձայն՝
Զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի համար կարևոր է, որպեսզի նրանք հնարավորության սահմաններում կարողանան կապ պահպանել իրենց մտերիմների, այդ թվում՝ հարազատների և զուգընկերոջ հետ: Անդամ պետությունները պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն, որպեսզի զինծառայողներն օգտվեն այս հատուկ իրավունքից:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան (հոդված 11) և «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» ԵԽԽՎ-ի 2016 թվականի թիվ 2120 բանաձևը (կետեր 6.1.3, 6.1.6 և 6.1.7) պետություններին պարտավորեցնում են ստեղծել այնպիսի պայմաններ, որ կանանց անձնական ու ընտանեկան կյանքի հանգամանքները չխոչընդոտեն ծառայության մեջ առաջխաղացմանը, հնարավորինս փորձեն ստեղծել այնպիսի սոցիալական ծառայություններ (օրինակ՝ երեխաների խնամքով զբաղվող հաստատություններ), որոնք հնարավորություն կտան ընտանեկան իրավունքների իրականացումը համատեղել զինծառայության հետ:

Պաշտպանը կարևորում է այս ուղղությամբ պետության կողմից համապատասխան միջոցառումների իրականացումը:

Աշխատանքային իրավունքների իրացման տեսանկյունից առկա է խնդիր մեկ այլ իրավակարգավորման շրջանակներում:

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառման վերցվում են նաև 18 տարին լրացած և զինվորական մասնագիտություն ստացած կամ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական կամ պայմանագրային զինվորական

ծառայություն անցնելու համար դիմած, ինչպես նաև *զինվորական հաշվառման ենթակա մասնագիտություններ ունեցող իգական սեռի քաղաքացիները*:

Մինչդեռ, **կանայք բավարար չափով իրազեկված չեն զինվորական հաշվառման ենթակա մասնագիտությունների մասին**, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ զինվորական հաշվառման նպատակով կանանց դիմելու և հետագայում զինվորական ծառայություն անցնելու համար:

ՀՀ զինված ուժերում հղի կին ծառայողների համար հատուկ հանդերձանք նախատեսված չէ: Մինչդեռ, հղի կանանց համազգեստի հարմարավետության անհրաժեշտության տեսանկյունից, հաշվի առնելով նաև այլ երկրների փորձը (օրինակ՝ Միացյալ Թագավորության), Պաշտպանը կարևորում է նրանց համար հատուկ համազգեստ նախատեսելու անհրաժեշտությունը: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ պետությունն ունի պարտականություն՝ ապահովելու, որ ռազմական հանդերձանքը, համազգեստները լինեն կանանց հարմարեցված և անհարմարություն չպատճառեն[145]: Բացի այդ, կանանց ֆիզիոլոգիական առանձնահատկություններին հարմարեցված չեն նաև կոշիկները, զրահաբաճկոնները:

Քննարկվող թեմայի շրջանակներում **Պաշտպանը կարևոր է համարում անդրադառնալ կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հարցին**: Նշված հարցը քննարկման առարկա է դարձել նաև կանանց գումարտակ Պաշտպանի այցի ընթացքում, որտեղ կին զինծառայողները դրական են արտահայտվել նշված հիմունքներով ծառայության կազմակերպման մասին՝ միաժամանակ կարևորելով ներգրավվածության խթանմանը միտված աշխատանքների իրականացումը:

Անհրաժեշտ է նշել, որ կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ մի շարք մտահոգություններ են հայտնել նաև տարբեր գործընկերներ, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններ[146]:

Պաշտպանը ևս ունի մտահոգություններ կանանց զինվորական ծառայության ներգրավելու բնագավառում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերի առնչությամբ[147]: Թեև այս համակարգն աշխարհում նոր չէ և տարբեր երկրներում արդյունավետորեն գործում է (օրինակ, Նորվեգիա, Շվեդիա և այլն), սակայն իգական սեռի քաղաքացիներին ԶՈՒ ներգրավելիս անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ հանգամանքներ՝ սկսած վերաբերելի օրենսդրությունից մինչև զորամասային պայմաններ: Հարկ է նկատի ունենալ, որ պետությունը միջազգային մի շարք փաստաթղթերով ստանձնել է կոնկրետ պարտավորություններ, այդ թվում՝ կանանց զինվորական ծառայության մասով, որոնք վերաբերում են ԶՈՒ անդամների հավաքագրման և կարիերայի կառավարման, գենդերային հավասարության համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծման, գենդերային բռնության դեմ պայքարի

---

[145] Տե՛ս «Կանայք ԶՈՒ-ում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» ԵԽԽՎ-ի 2016 թվականի թիվ 2120 բանաձևը, կետ 6.2.5:

[146] Հասանելի է https://hcav.am/hcav-15-03-2024/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[147] Գործող օրենքում առկա են խնդրահարույց կարգավորումներ, օրինակ, կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնող իգական սեռի զինծառայողները ընտանեկան պայմաններից ելնելով չեն կարող արձակվել ԶՈՒ-ից:

հետ կապված և այլ հարցերի[148]: Դրանք ենթադրում են կանանց զինվորական ծառայության նախապատրաստման նպատակով լուրջ և համակարգային քայլերի իրականացում:

Ուստի, հաշվի առնելով վերագրյալը և նկատի ունենալով միջազգային իրավական չափորոշիչները՝ առաջարկվում է՝

- ✓ ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նրա հետ ծառայության նոր վայր է տեղափոխվում նաև նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը)՝ ըստ վերջիններիս ցանկության: Նախատեսել նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների, ըստ վերջիններիս ցանկության, միմյանց հնարավորին մոտ զորամասերում բնակվելու հնարավորությունը,***
- ✓ ***ապահովել այն մասնագիտությունների վերաբերյալ իրազեկումը, որոնք ունեցող իգական սեռի ներկայացուցիչները կարող են դիմել զինվորական հաշվառման համար,***
- ✓ ***զինվորական օրենսդրությամբ խրախուսական նորմեր նախատեսել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն ունեցող, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չօգտված կին զինծառայողների համար, որպեսզի նրանք ունենան բավարար հնարավորություններ ծառայությունը երեխայի խնամքի հետ համատեղելու համար,***
- ✓ ***ստեղծել այնպիսի պայմաններ, որ կանանց անձնական ու ընտանեկան կյանքի հանգամանքները չխոչընդոտեն ծառայության մեջ առաջխաղացմանը (օրինակ՝ երեխաների խնամքով զբաղվող հաստատություններ),***
- ✓ ***հղի կին ծառայողների համար նախատեսել հատուկ հանդերձանք,***
- ✓ ***իգական սեռի քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության նոր մոդելի համատեքստում միջազգային փորձի ու չափորոշիչների հաշվառմամբ՝ կատարել անհրաժեշտ իրավական, նյութատեխնիկական ու կենցաղային հարմարեցումներ, փոփոխություններ, ներդնել համապատասխան կրթական ծրագրեր՝ ապահովելու համար ՀՈՒ-ում կանանց արժանապատիվ ծառայության համար անհրաժեշտ պայմանները:***

---

[148] Առավել մանրամասն, տե՛ս, «Կանայք ՀՈՒ-ում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 ԵԽԽՎ բանաձևը, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ 2008 թվականին տպագրված «ՀՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկը:

ԳԼՈՒԽ 9. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների պարագայում բնակարանային ապահովումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, քանի որ զինվորական ծառայությունը ենթադրում է հատուկ կենսապայմաններ, հաճախակի տեղափոխություններ, աճող ռիսկեր և բնակության վայրի ընտրության սահմանափակումներ: Գործնականում այս ոլորտը շարունակում է բախվել մի շարք համակարգային խնդիրների: Դրա մասին են վկայում ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ նաև 2024 թվականին Պաշտպանին հասցեագրվող բողոքները: Ստացված բողոքները հիմնականում վերաբերել են՝ *1) բնակարանային ապահովության շահառու հաշվառված զինծառայողների (այդ թվում՝ պահեստազորում հաշվառված նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության գործընթացի ձգձգմանը, 2) ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում ամսական դրամական հատուցման ոչ բավարար լինելուն, 3) Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող անձանց բնակարանի գնման վկայագրերով տրամադրվող գումարի չափի ոչ բավարար լինելուն, 4) հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներին, 5) ծառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելուն, 6) այլ զորքերի և ծառայությունների (օրինակ՝ Քրեակատարողական, ԱԱԾ) բնակարանային ապահովման խնդիրներին և այլն*: Այսպես.

Պաշտպանին հասցեագրած բողոքներով զինծառայողները (նաև նախկին զինծառայողները) դժգոհություններ են ներկայացրել առ այն, որ **երկար տարիներ հաշվառված են բնակարանային ապահովության շահառուների հերթացուցակում, սակայն բնակարանով չեն ապահովվել**: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ նախկին զինծառայողները 15 տարուց ավելի շարունակում են հաշվառված մնալ հերթացուցակում:

Պաշտպանն ի գիտություն է ընդունում գործող իրավակարգավորումները (այդ թվում՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն, 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն, 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1930-Ն որոշումները), սակայն զինծառայողների (նաև նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության խնդրին պետք է հնարավորինս արագ լուծում տալ:

Ըստ ՊՆ տվյալների՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 68 զինծառայողի գործերի վերաբերյալ 2024 թվականին ՊՆ կենտրոնական բնակարանային հանձնաժողովը տվել է ապահովման դրական եզրակացություն: Հաշվետու ժամանակահատվածում 55 զինծառայող բնակարանի գնման վկայագրով ձեռք է բերել բնակարան կամ բնակելի տուն: ՀՀ ՊՆ համակարգի՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներ և զոհված (մահացած) զինծառայողների 42 ընտանիքների տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր: Բնակարան են ձեռք բերել 39 ընտանիք:

Պաշտպանի այն հարցադրմանը, թե բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառման վերցված քանի՞ նախկին զինծառայողներին կամ նրանց ընտանիքների անդամներին է տրամադրվել բնակարան կամ պետական ֆինանսական աջակցություն, եղե՞լ են արդյոք նշված աջակցությունից հրաժարվելու դեպքեր, և ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել հրաժարվելու պատճառները պարզելու ուղղությամբ՝ Պաշտպանության նախարարություն հայտնել է, որ 2024թ ընթացքում՝ 61 նախկին զինծառայողներ 2023 թվականին տրված բնակարանի գնման վկայագրով ձեռք են բերել բնակարան կամ բնակելի տուն: ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ ՀՀ ՊՆ համակարգի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, հաշվառված և սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված նախկին զինծառայողների վերաբերյալ 2024թ. ՊՆ կենտրոնական բնակարանային հանձնաժողովի նիստեր չեն գումարվել, բյուջեով նախատեսված գումարը սպառված լինելու պատճառով:

Զինծառայողների կողմից շարունակվում է **բարձրացվել ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում ամսական դրամական հատուցման գումարների չափը բարձրացնելու հարցը:** Խնդիրն այն է, որ ամսական դրամական հատուցման գումարը չի բավականացնում վարձակալությամբ բնակարան ձեռք բերելու համար, քանի որ շուկայական գների բարձրացման համատեքստում բնակարանների վարձավճարները ևս էականորեն բարձրացել են: Արդյունքում, զինծառայողներն իրենք են ստիպված լինում սեփական միջոցներից (ստացած աշխատավարձից) գումար ավելացնել և վարձավճարն ամբողջությամբ վճարել: 2024 թվականի ընթացքում տարբեր զորամասեր այցերի ընթացքում կրկին արձանագրվել է այս հարցի արդիականությունը և լուծման ուղղությամբ անհապաղ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 20.07.2023թ. N 1219-Ն որոշմամբ սահմանված՝ ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովված զինծառայողին տրամադրվող դրամական հատուցման չափերը որոշակի պարբերականությամբ փոփոխվում են, սակայն դրանց հիմքում միշտ չէ, որ կարող է դրվել տնտեսության մեջ ձևավորվող գնագոյացման դինամիկան: Ամսական դրամական հատուցման գումարի չափերի վերանայման հարց ներկա դրությամբ չի քննարկվում:

Հաջորդ խնդիրը վերաբերում է **Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող անձանց բնակարանի գնման վկայագրերով տրամադրվող գումարի չափի ոչ բավարար լինելուն:** Ներկայում Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող անձանց բնակարանի գնման վկայագրով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրվում է շուկայական միջինացված արժեքի 50 տոկոսի չափով, այլ ոչ թե 100 տոկոսի: Մարդիկ նշում են, որ ստիպված են լինում մյուս 50 տոկոսը սեփական գրպանից ավելացնեն, կամ դիմեն դատարան և դատական կարգով վերականգնեն իրենց իրավունքները: Ըստ ՊՆ-ի՝ ներկայում խնդիրը քննարկման փուլում է:

Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է ապահովել նախկին զինծառայողների՝ բնակության համար նվազագույն պայմանները բավարարող բնակարան ձեռք բերելու իրական հնարավորությունը՝

առանց աջակցություն ստացողի միջոցների հաշվին գնի տարբերությունը լրացնելու անհրաժեշտության:

Հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրները: Հիփոթեքային վարկավորումը շարունակում է մնալ զինծառայողներին և նրանց ընտանիքներին բնակարաններով ապահովելու առանցքային մեխանիզմներից մեկը: Այնուամենայնիվ, գործնականում այս համակարգը ուղեկցվում է մի շարք խնդիրներով, որոնք զգալիորեն դժվարացնում են բոլոր կազմերի զինծառայողների հասանելիությունը հիփոթեքային վարկավորման ծրագրին: Գործող կարգավորումների համաձայն՝ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերը հասանելի են բացառապես սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողներին: Մինչդեռ, շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները ներկայում զրկված են տվյալ ծրագրից օգտվելու հնարավորությունից: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ զինված ուժերում ատեստավորման գործընթացը և ատեստավորումն հաղթահարած զինծառայողների աշխատավարձերի բարձրացումը կարող են հանդիսանալ կարևոր գործոն, որպեսզի իրավասու մարմինները քննարկման առարկա դարձնեն գործող իրավակարգավորումներում փոփոխություններ կատարելու և շարքային ու կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողներին ևս հիփոթեքային վարկավորման ծրագրում ներառելու հարցը:

Հիփոթեքային վարկավորման ծրագրերի հետ կապված մեկ այլ խնդիր էր այն, որ այդ ծրագրերից չէին կարողանում օգտվել Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողները: Պաշտպանն առաջարկել էր նշված համակարգերի զինծառայողներին ևս հնարավորություն տալ օգտվելու օրենքով սահմանված արտոնությունից: Այս առումով Պաշտպանը դրական է գնահատում այն, որ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1091-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել՝ նախատեսելով, որ հիփոթեքային վարկավորման ծրագրերից կարող են օգտվել նաև Ազգային անվտանգության մարմինների և Պետական պահպանության մարմնի ծառայողները: Մինչդեռ, Ոստիկանության և Քրեակատարողական համակարգի ծառայողների համար խնդիրը մնում է չլուծված:

Զինծառայողների շրջանում հիփոթեքային վարկավորման ծրագիրը դրական է գնահատվում[149]: Դրա հետ մեկտեղ, առկա են որոշ մտահոգություններ այն առումով, որ տևական ժամանակ ծառայող սպաները, ովքեր երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու մտադրություն ունեն, ծրագրից օգտվելու խնդիրների առաջ են կանգնում: Նրանց համար ֆինանսական տեսանկյունից շահավետ չէ այդ ծրագրից օգտվելը: Սպաները հայտնել են, որ հիփոթեքային վարկավորման ծրագիրն ունի կատարելագործման անհրաժեշտություն, քանի որ շահառուների համար նախատեսված տեղերը սահմանափակ են, իսկ այն կարող է շահավետ լինել միայն ԶՈՒ նոր ներգրավվող սպաների համար: Ուստի, զինծառայողների կարծիքով, այս ծրագրի հետ մեկտեղ անհրաժեշտ է մշակել այլ կառուցակարգեր, որպեսզի երկար

[149] Ըստ ՊՆ-ի՝ 2024 թվականի ծրագրում ընդգրկված 500 զինծառայողից 303-ը օգտվել են մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրից:

տարիներ (օրինակ, 20 և ավելի) ծառայած սպաները կարողանան բնակարան ձեռք բերել: Այս առումով, զինծառայողների բնակարանային ապահովության ուղղությամբ կարևոր քայլ է այն, որ նախատեսվել է կարգավորում, ըստ որի՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառություն անցնելու համար օրենքով սահմանված ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՊՆ-ի համակարգում կամ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան[150]:

Ծառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելու խնդիր: Այս հարցին Պաշտպանն անդրադարձ է կատարել նաև նախորդ տարեկան հաղորդմամբ՝ կարևորելով զինծառայողների և նրանց ընտանիքների համար արժանապատիվ բնակարանային պայմանների ապահովումը: Ներկայում չի կարելի ներկայացնել պնդում այն մասին, որ Զինված ուժերում այս խնդիրը դեռևս առկա չէ[151]: Ծառայողական բնակարաններում կոմունալ ենթակառուցվածքների բացակայությունը զինծառայողների և նրանց ընտանիքների համար ստեղծում է կենցաղային լուրջ դժվարություններ՝ ազդելով նրանց կենսապայմանների վրա: Այս հարցը պահանջում է համակարգային լուծում՝ ուղղված տրամադրվող բնակարանների որակի բարելավմանը և անհրաժեշտ բոլոր կոմունալ հարմարություններով ապահովելուն:

Արժանապատիվ բնակարանային պայմանների իրավունքը դիտարկելով միջազգային իրավական չափորոշիչների լույսի ներքո՝ կարող ենք փաստել, որ անկախ զինծառայողի կոչումից՝ նա իրավունք ունի օգտվելու այնպիսի կացարանից, որն ունի բավարար լուսավորություն և օդափոխություն (ներառյալ՝ բավարար ջեռուցում), մաքուր է, լավ վիճակում է, բավարար չափով կահավորված է և ունի բավարար բնակելի տարածք՝ դրանում ապրող անձանց թվին համապատասխան: Ծառայողական կացարանները պետք է պատշաճ կերպով պահպանվեն: Հիգիենայի և առողջության հարցերը նույնպես կարևոր են բնակարանային պայմանների տեսանկյունից: Զորանոցային տիպի կացարաններում կանանց և տղամարդկանց հատվածները պետք է լինեն առանձնացված[152]:

Այս ստանդարտների պահպանումը զինծառայողների իրավունքների ապահովման անբաժանելի մասն են և պահանջում են մշտական ուշադրություն ու հոգածություն իրավասու մարմինների կողմից:

ՊՆ համակարգի զինծառայողներից բացի, բնակարանային ապահովության իրավունքը հավասարապես վերաբերում է նաև ԱԱԾ, ՊՊԾ,

---

[150] Ավելի մանրամասն տե՛ս «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 1665-Ն որոշումը:

[151] Օրինակ՝ ՊՆ թիվ 8115 զորամասի հաշվեկշռում գտնվող շենքը շարունակում է մնալ վթարային և անմխիթար վիճակում, ինչի կապակցությամբ Պաշտպանը գրություն է ուղարկել Պաշտպանության նախարարին, սակայն խնդիրը 2024 թվականի դրությամբ լուծում չի ստացել:

[152] Տե՛ս ԶՈՒ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԵ» կետը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածը, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 31-րդ հոդվածի 1-ին մասը:

Քրեակատարողական ծառայության, Ոստիկանության համակարգի զինծառայողներին, ինչպես նաև բնակարանային հաշվառման վերցված նախկին ծառայողներին:

Նշված համակարգերում բնակարանային հաշվառման վերցված զինծառայողներից Պաշտպանը ստացել է բողոքներ: Բողոքներից մեկով, օրինակ, քաղաքացին ԱԱԾ-ում ծառայության ընթացքում ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի թիվ 805-Ն որոշմամբ սահմանված կարգով հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման շահառու: Սակայն, մինչև այսօր նրա բնակարանային պայմանների բարելավման հարցը լուծում չի ստացել այն հիմնավորմամբ, որ ԱԱԾ ֆոնդում առկա չէ բնակարան: Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ստացվել է պատասխան այն մասին, որ որպես բնակարանային բարելավման շահառու հաշվառված ծառայողներն ունեն պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային բարելավում ստանալու իրավունք, **մինչդեռ պետական բյուջեով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, բացի այդ Կառավարության կողմից չի սահմանվել անհրաժեշտ կարգը:**

Վերը նշվածի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ ծառայության ընթացքում զինծառայողներին բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդգրկելու հարաբերությունները կարգավորվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 2017թ. դեկտեմբերի 16-ին) 34-րդ հոդվածով, ըստ որի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողները, ովքեր ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ, ապահովվում են բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ընդ որում, նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ բնակարանային ապահովման տեսանկյունից Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայողները զինծառայողներին հավասարեցված անձինք են, և նրանց վրա տարածվում են նշված օրենքով նախատեսված դրույթները:

Ավելին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ գործող օրենքի 72-րդ հոդվածը նախատեսում է, որ զինծառայողներին հավասարեցված անձինք են համարվում նաև Ազգային անվտանգության ծառայողները (1-ին մաս), որոնց վրա տարածվում են համապատասխան, կոնկրետ դեպքում՝ 65-րդ հոդվածի (Զինծառայողների բնակարանային ապահովությունը) դրույթները:

ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի թիվ 805-Ն որոշմամբ հաստատվել է Ազգային անվտանգության ծառայության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության կարգը, որի 4-րդ կետով պետական կառավարման մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառում իրականացնելու պահանջ է նախատեսված: Նույն կարգի 5-րդ կետով սահմանվել է, որ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների շրջանակը որոշվում և նրանց բնակարանային

հաշվառումն իրականացվում է ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման համաձայն:

Այսպիսով, ստացվում է, որ Ազգային անվտանգության ծառայության ծառայողների բնակարանային պայմանների բարելավման իրավունքն ամրագրված է օրենքով, առկա են նաև բարելավումն իրականացնելու իրավական մեխանիզմները, սակայն այդ իրավունքը տևական ժամանակ չի իրացվում:

Դրա հետ մեկտեղ, նույն իրավունքն է նախատեսված նաև Պաշտպանության նախարարության, Քրեակատարողական և Ոստիկանության համակարգերի ծառայողների համար, որոնց բնակարանային պայմանների բարելավման գործընթացի իրականացման ուղղությամբ փաստացի գործողություններ են ձեռնարկվում միայն Պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների մասով: Այս հարցերին լուծումներ տալու առաջարկով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքին վերաբերելի բազմաթիվ այլ հարցերի, այդ թվում՝ բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալուն, նախկին զինծառայողներին բնակելի տարածությունից հանելուն, զինվորական ծառայությունից արձակվելուց հետո վարձակալության գումարի փոխհատուցմանը և այլն, Պաշտպանն անդրադարձ է կատարել և համապատասխան առաջարկություններ ներկայացրել նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում[153]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

✓ միջոցներ ձեռնարկել երկար տարիներ բնակարանային հաշվառման մեջ գտնվող զինծառայողների (նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության հարցին հնարավորին սեղմ ժամկետում վերջնական լուծում տալու ուղղությամբ, այդ թվում՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ,

✓ քննարկել զինծառայողներին ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում ամսական դրամական հատուցման գումարների չափը բարձրացնելու հարցը՝ նկատի ունենալով, որ նշված գումարի չափը վերանայելու անհրաժեշտություն կա՝ շուկայական գների բարձրացման համատեքստում,

✓ Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող շահառուներին բնակարանի գնման վկայագրով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրել շուկայական միջինացված արժեքի 100 տոկոսի չափով,

✓ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն և երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար,

---

[153] Տես, Պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 485-491, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

✓ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության համակարգի զինծառայողների համար՝ ապահովելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նրանց տրված արտոնությունից օգտվելու հնարավորությունը,

✓ շարունակական աշխատանքներ իրականացնել ՊՆ-ի հաշվեկշռում առկա բնակարանները բարեկարգելու, նոր շենքեր կառուցելու և դրանք կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելու ուղղությամբ,

✓ միջոցներ ձեռնարկել ծառայության ընթացքում բնակարանային հաշվառման վերցված մյուս համակարգերի զինծառայողների բնակարանային ապահովման ուղղությամբ:

2. Զինվորական կենսաթոշակի իրավունքի ապահովման հետ կապված խնդիրները

Չնայած կենսաթոշակային ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական իրավական կարգավորումներին՝ Պաշտպանը 2024 թվականի ընթացքում շարունակել է ստանալ կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված բողոքներ: Բողոքները հիմնականում վերաբերել են *զինվորական կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումներին, զինվորական կենսաթոշակի չափը սխալ հաշվարկելուն, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելուն* և այլն:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ հաշվետու ժամանակահատվածում զինվորական կենսաթոշակների հետ կապված բողոքների թիվը Պաշտպանի աշխատակազմում նվազել է, ինչը վկայում է նաև իրավասու մարմինների կողմից ոլորտում կատարած աշխատանքների մասին: Անհատական բողոքների քննարկման շրջանակում կենսաթոշակային իրավունքին վերաբերելի բազմաթիվ հարցեր իրավասու մարմինների հետ համագործակցությամբ ստանում են լուծումներ:

Դրա հետ մեկտեղ, շարունակում է չլուծված մնալ համակարգային մի խնդիր, որը վերաբերում է **զինվորական կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժը չհաշվարկելուն:**

Պաշտպանը բարձրացված հարցի խորքային բնույթը ներկայացնելու համար կարևոր է համարում անդրադառնալ հետևյալ հանգամանքներին.

ա) տարիներ շարունակ Պաշտպանը նախկին զինծառայողներից ստանում է նույն խնդրի վերաբերյալ բողոքներ (խնդիրը վերաբերելի է բոլոր այն համակարգերին, որտեղ քաղաքացիներն անցել են ծառայություն՝ Պաշտպանության նախարարություն, Քրեակատարողական ծառայություն, Ոստիկանություն և այլն),

բ) քննարկվող հարցին Պաշտպանն անդրադարձ է կատարել տարեկան հաղորդումներում՝ հայտնելով իր մտահոգությունները[154],

---

[154] Տես, օրինակ, Պաշտպանի 2018, 2019, 2023 թվականների տարեկան հաղորդումները, հասանելի են https://ombuds.am/am/site/SpecialReports հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գ) Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումները հնարավորություն չեն տալիս երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելիս հաշվարկել նաև աշխատանքային ստաժը:

Ներկա իրավակարգավորումների պարագայում հավասարաչափ կենսաթոշակ են ստանում ինչպես միայն երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, այնպես էլ նույն ժամկետով երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, ովքեր, բացի զինվորական ծառայությունը, կատարել են նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հավասար պայմաններում զինվորական ծառայություն անցած անձանց չի կարող հավասար չափի կենսաթոշակ նշանակվել, եթե նրանցից մեկը կատարել է նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ անհրաժեշտ է մշակել կառուցակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը:

Վերոնշյալ հարցի լուծման նպատակով Պաշտպանը համապատասխան առաջարկություններով գրություններ է հասցեագրել իրավասու գերատեսչություններ: Արդյունքում, Ազգային Ժողովում պետական իրավասու մարմինների ներգրավմամբ կազմակերպվել է քննարկում երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի նշանակման մեխանիզմի և դրա հետ կապված խնդիրների վերաբերյալ: Նշվել է, որ ներկայացված դիտարկումներն ու առաջարկները լրացուցիչ կքննարկվեն և առաջիկայում կներկայացվի օրենսդրական նախաձեռնություն, որով նախատեսվում է, ի թիվս այլնի, վերանայել նաև աշխատանքային ստաժի տարիները[155]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝ *հնարավորին սեղմ ժամկետում մշակել կառուցակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը:*

3. Զինծառայողների իրավունքների ապահովումը մարտական գործողությունների մասնակցության համատեքստում

Մարտական գործողություններին մասնակցությունը զուգակցված է հատուկ ռիսկերի և զինծառայողների վրա մեծ ծանրաբեռնվածության հետ, ինչը պետությունից պահանջում է ոչ միայն ծառայության ընթացքում նրանց իրավունքների արդյունավետ ապահովում, այլև երաշխավորված սոցիալական և իրավական աջակցություն մարտական առաջադրանքների ավարտից հետո: Նրանց իրավունքների ապահովումն այս համատեքստում ներառում է հարցերի լայն շրջանակ՝ պատշաճ բուժօգնությունից և վերականգնումից մինչև սոցիալական երաշխիքներ, կենսաթոշակային ապահովություն, ինչպես նաև վիրավորում ստացած, գերեվարված և զոհված զինծառայողների ընտանիքների անդամների

[155] Հասանելի է https://shorturl.at/r32Ns հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ: Կարևոր է ոչ միայն համապատասխան իրավական նորմերի առկայությունը, այլ նաև գործնականում դրանց արդյունավետ կիրառումը: Այդ առումով կարևորվում է մարտական գործողություններին մասնակցած անձանց համապատասխան կարգավիճակի տրամադրումը, որը նրանց հնարավորություն կտա օգտվել որոշակի արտոնություններից և սոցիալական ապահովության միջոցառումներից:

Պաշտպանը շարունակում է արձանագրել, որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու հարցում նախկին զինծառայողները բախվում են խնդիրների: Գործող օրենսդրությամբ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ հնարավոր է տրամադրել բացառապես 1989-1994 թվականների ընթացքում և ոչ պակաս, քան 3 ամիս ընդհանուր տևողությամբ մարտական գործողություններին մասնակցածներին[156]: Քանի որ 3 ամսից ոչ պակաս մասնակցության կանոնն ընդհանուր է, ստացվում է, որ **1989-1994 թվականներից հետո տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած զինծառայողներին չի կարող տրամադրվել մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ:**

Խնդրի խորքային լուծման, սոցիալական արդարության ապահովման, մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների իրավունքների երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ է գտնել արագ ու կոնկրետ լուծումներ, քանի որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելն ինքնանպատակ չէ, այն ունի որոշակի սոցիալական ուղղվածություն, այդ թվում՝ տարբեր սոցիալական իրավունքներից ու արտոնություններից օգտվելու համար, ներառյալ՝ անվճար բժշկական օգնություն, բնակարանային ապահովություն, դրամական աջակցություն, զինվորական կենսաթոշակի իրավունք և այլն:

Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակի տրամադրման հետ կապված այլ հարցերի, օրինակ, մարտական ուղի, ստացած վնասվածքի պատճառական կապի մասին փաստաթղթեր կրկին ներկայացնելու պահանջի և այլնի մասին, Պաշտպանն անդրադարձել է նախորդ տարեկան հաղորդմամբ՝ ներկայացնելով հարցերի կարգավորման մեխանիզմներ[157]:

Դրա հետ մեկտեղ, 2024 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով բացահայտվել է մի նոր խնդիր, որը վերաբերում է մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակի տրամադրման ժամկետների չպահպանմանը: Կոնկրետ դեպքում քաղաքացուն մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրամադրվել ՊՆ դիմելուց շուրջ երեք ու կես ամիս անց[158]: Այդ ընթացքում քաղաքացին սեփական միջոցներով վիրահատվել է՝

---

[156] Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1664-ն որոշմամբ:

[157] Տես, Պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 493-495, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[158] ՀՀ պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1664-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ միջգերատեսչական հանձնաժողովի **նիստերը հրավիրվում են 2 ամիսը մեկ անգամ՝ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու դիմումների առկայության դեպքում**: Ըստ հավելվածի 12-րդ կետի՝ միջգերատեսչական

վճարելով 2.380.000 (երկու միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը կարող էր չվճարել և վիրահատությունը կիրականացվեր անվճար, եթե ՊՆ-ում վարչարարությունն իրականացվեր սահմանված ժամկետներում: Նշած հարցը գտնվում է Պաշտպանի ուշադրության ներքո, բողոքի քննարկումը Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

✓ 1994 թվականից հետո տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած զինծառայողներին համապատասխան կարգավիճակ տրամադրելու նպատակով մշակել ու ներդնել կոնկրետ կառուցակարգեր ու չափորոշիչներ՝ երաշխավորելով որոշակի արտոնություններից և սոցիալական միջոցառումներից օգտվելու հնարավորությունը՝ գոյություն ունեցող միջազգային չափանիշներին համապատասխան,

✓ խստացնել հսկողությունը մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու գործընթացում իրականացվող վարչարարության ժամկետների նկատմամբ՝ դրանով իսկ ապահովելով քաղաքացիների հասանելիությունը սահմանված արտոնություններին և սոցիալական երաշխիքներին,

✓ օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանել, որ եթե զինծառայողը նախկինում արդեն իսկ ներկայացրել է հրամանատարի կողմից տրված մարտական ուղի, մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը հաստատող փաստաթուղթ, և դրանք իրավական հետևանք են առաջացրել, ապա մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար այլևս անհրաժեշտ չէ ներկայացնել նույն փաստաթղթերը:

4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը

Զինվորական հաշմանդամություն ունեցող անձինք մշտապես պետք է գտնվեն պետության պաշտպանության ու հոգածության ներքո, և այդ ուղղությամբ պետությունը պետք է մշտապես կատարելագործի առկա մեխանիզմները՝ երաշխավորելով անձանց արժանապատիվ կյանքի համար բավարար պայմաններ:

Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է: Դա նաև ընդգծվում է Պաշտպանի՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի

հանձնաժողովն անձին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու եզրակացությունն ընդունում է սույն կարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերի հիման վրա և եզրակացության ընդունման օրվանից **5 աշխատանքային օրվա** ընթացքում եզրակացությունը, ստացված դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին: Նշված փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում սահմանված կարգով մուտքագրվելու օրվանից **ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա** ընթացքում Պաշտպանության նախարարը որոշում է անձին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ (այդ թվում՝ հետմահու) շնորհելու հարցը:

դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող հաստատության կարգավիճակով:

Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերելի հարցերի, այդ թվում՝ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունները, ցույց են տալիս, որ ոլորտում առկա մի շարք խնդիրներ, որոնց Պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարեկան հաղորդմամբ՝ պահպանվել են: Արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝ 1) բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված՝ հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներին բնակարան չտրամադրելուն, 2) զորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված չլինելուն, 3) զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը չհաստատելուն, 4) ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց պարգևավճար տրամադրելուն և տարբերակված մոտեցումը բացառելուն և այլն[159]: Դրա հետ մեկտեղ, քննարկվող ժամանակահատվածում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել հաշմանդամության զինվորական կենսաթոշակի և սոցիալական աջակցության տրամադրման, հաշմանդամություն ունեցող անձի խնամակալը լինելու հիմքով վարժական հավաքի չներգրավվելու, ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամություն ունեցող անձ չճանաչելու և այլ հարցերի վերաբերյալ: Բարձրացված հարցերի կապակցությամբ քաղաքացիներին ներկայացվել են իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները, խնդիրների լուծման առաջարկներով գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններ: Արդյունքում, զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց բազմաթիվ հարցեր ստացել են լուծումներ, օրինակ, վարժական հավաքի չներգրավվելու, պատճառական կապ տրամադրելու վերաբերյալ և այլն, մի շարք համակարգային հարցերի քննարկումներ իրավասու մարմինների հետ շարունակվում են:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

✓ հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար ծառայության բոլոր վայրերում ապահովել մատչելի ֆիզիկական միջավայր, այդ թվում՝ վերջիններիս կարիքներին հարմարեցնել սանհանգույցը, թեքահարթակները և այլն,

✓ միջոցներ ձեռնարկել ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների բնակարանային ապահովության հարցին հնարավորին սեղմ ժամկետում լուծում տալու ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ մարդիկ տարիներ շարունակ հերթագրված են և սպասում են հարցի վերջնական կարգավորմանը,

---

[159] Առավել մանրամասն, տես, Պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 495-497, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

- ***ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու միջոցով պարգևավճար սահմանել նաև ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց համար:***

ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

1. Վարժական հավաքների կազմակերպման գործընթացում օրենսդրական և գործնական խնդիրները

Վարժական հավաքների հետ կապված քաղաքացիների իրավունքների վիճակը 2024 թվականի ընթացքում շարունակել է գտնվել Պաշտպանի մշտադիտարկման ներքո: Պաշտպանի աշխատակազմ տարբեր եղանակներով, այդ թվում՝ գրավոր բողոքների կամ թեժ գծին ահազանգերի միջոցով ստացվել են բազմաթիվ բողոքներ, որոնք առնչվում են վարժական հավաքների ներգրավելու գործընթացում քաղաքացիների իրավունքների ապահովման հարցերին: Ոլորտի հետ կապված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախկինում արձանագրված մի շարք խնդիրներ, որոնք ներկայացվել են Պաշտպանի տարեկան հաղորդումներում, կամ մասամբ են լուծվել կամ դեռևս լուծում չեն ստացել: **Նշված գործընթացի հետ կապված Պաշտպանին առավել հաճախ հասցեագրված բողոքները կարելի է բաժանել մի քանի խմբի.**

1) վարժական հավաքների ծանուցումների հետ կապված բողոքներ,

2) վարժական հավաքի ներգրավվելուց առաջ պատշաճ բժշկական հետազոտություն ու փորձաքննություն անցնելու վերաբերյալ բողոքներ,

3) ընտանեկան դրությամբ պայմանավորված չզորակոչելու կամ զորակոչը հետաձգելու հետ կապված բողոքներ:

Վերը նշվածից բացի, վարժական հավաքների ընթացքում քաղաքացիները Պաշտպանին դիմել են նաև իրենց իրավունքների մասին պարզաբանումներ ստանալու հարցերով: Օրինակ, վարժական հավաքի ներգրավվելուց հետո ընտանիքի անդամին անվճար բուժօգնություն տրամադրելու հնարավորության, վարժական հավաքի ընթացքում սննդով ու համազգեստով ապահովելու, առաջնագծում մարտական հերթապահության ընդգրկելու համար պայմանագրի (համաձայնագրի) կնքման անհրաժեշտության, զորակոչվելու դեպքում վարկային կամ այլ պարտավորությունների կատարման, ինչպես նաև աշխատատեղն ու աշխատավարձը պահպանելու և այլնի վերաբերյալ:

Այս կապակցությամբ Պաշտպանի գնահատմամբ՝ անհրաժեշտ է, որպեսզի իրավասու մարմինները պատշաճ հաղորդակցությամբ անձանց իրազեկեն նրանց իրավունքների, վարժական հավաքի ներգրավվելու դեպքում արտոնությունների մասին:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ շարունակել են ստացվել բողոքներ **վարժական հավաքների ծանուցումների հետ կապված հարցերով:** Կարևոր է նշել, որ 2024 թվականին Պաշտպանի կարծիքին է ներկայացվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը,

որը միտված է կանոնակարգել ծանուցումների հետ կապված հարցերը[160]: Նշված օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է իր դիտարկումներն ու առաջարկությունները[161]: Մասնավորապես, *առաջարկվել է օրենքով սահմանել ծանուցման հստակ հերթականություն*՝ ապահովելով քաղաքացուն ծանուցագրի վերաբերյալ իրազեկելու ուղղությամբ իրավասու մարմինների պատշաճ ջանասիրությունը յուրաքանչյուր ծանուցման ձևի կիրառման շրջանակներում[162]: Պաշտպանի նշված առաջարկն ամբողջությամբ ընդունվել է:

Նախագծի շրջանակներում Պաշտպանը բարձրացրել է նաև *զինկոմիսարիատների կողմից համացանցին հասանելիության խնդրով պայմանավորված ծանուցումը գործնականում կիրառելու անհնարինության հետ կապված մտահոգություն*:

Այս կապակցությամբ իրավասու գերատեսչությունը նշել է, որ Պաշտպանի դիտարկումն ընդունվել է ի գիտություն և նախագիծը խմբագրվել է, իսկ նշված խնդիրը կլուծվի զինկոմիսարիատների տեխնիկական հագեցվածության և համապատասխան կապի հասանելիության ապահովման միջոցով:

Պաշտպանի մեկ այլ դիտարկմամբ՝ *գործնականում կարող են խնդիրներ առաջանալ էլեկտրոնային փոստի միջոցով կամ հրապարակային ծանուցման եղանակով քաղաքացիներին վարժական հավաքին կանչելու հետ կապված այն դեպքերում, երբ, օրինակ, քաղաքացին գտնվում է արտերկրում:*

Նման պարագայում ստացվում է, որ անձը կարող է համարվել օրենքով նախատեսված կարգով ծանուցված, սակայն օբյեկտիվորեն չկարողանա ներկայանալ վարժական հավաքին՝ երկրում չլինելու պատճառով: Նման պարագայում, հարց է առաջանում, թե այդ իրավիճակում քաղաքացու՝ ՀՀ մուտք գործելու դեպքում արդյո՞ք վերջինս ենթարկվելու է պատասխանատվության, արդյո՞ք նրա նկատմամբ նախաձեռնվելու է քրեական վարույթ, թե՞ ոչ: Ավելին, եթե այլ վարույթների դեպքում (քաղաքացիական, վարչական) պատշաճ ծանուցված անձի չներկայանալու դեպքում որոշակի իրավական հետևանքներ են առաջանալու նրանց

---

[160] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում արդեն իսկ կատարվել են համապատասխան փոփոխություններն ու լրացումները: Տե՛ս նշված օրենքի 20-րդ հոդվածը:

[161] Նախագծի վերաբերյալ Պաշտպանի կարծիքն առավել մանրամասն, տե՛ս https://www.e-gov.am/ajax/gfn_mul.php?file_id=3156051&inst=854104 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[162] «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացուն պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ կամ հանգամանք են համարվում՝

1) **ծանուցագիրն առձեռն հանձնելու դեպքում**՝ ծանուցագիրը ստանալու մասին քաղաքացու ստորագրությամբ հաստատված ստացականը.

2) **փոստային կապի միջոցով ծանուցման դեպքում**՝ ծանուցագիրը ներառող փոստային պատվիրված նամակը քաղաքացուն հանձնված լինելը հաստատող փաստաթուղթը կամ էլեկտրոնային հավաստումը.

3) **անհատական ծանուցման դեպքում**՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագիրը քաղաքացու կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը.

4) **հրապարակային ծանուցման դեպքում**՝ օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն ուղղված ծանուցագրի քաղվածքի տեղադրումը:

քաղաքացիական իրավունքների տեսանկյունից, ապա այս պարագայում խոսքը գնում է պետության կողմից կիրառվող ամենախիստ՝ քրեաիրավական պատասխանատվության, ընդհուպ մինչև ազատությունից զրկելու հետ կապված պատժի մասին[163]: Նշված հանգամանքը մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ ապահովման տեսանկյունից էլ ավելի է կարևորում անձի՝ իրապես, պատշաճ ծանուցված լինելու երաշխավորումը:

Պաշտպանի վերոնշյալ դիտարկումը ևս ընդունվել է:

Նախագծային լուծումների առնչությամբ Պաշտպանը իրավասու գերատեսչությունների ուշադրությունն է հրավիրել այն հարցի վրա, որ *հրապարակային ծանուցման եղանակն իր մեջ կարող է պարունակել նաև որոշակի անվտանգային ռիսկեր*: Մասնավորապես, հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքը, կայքում առկա ցանկացած տեղեկատվություն հասանելի է հանրության լայն շրջանակների: Տվյալ դեպքում Պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվող վարժական հավաքի մասնակիցների (պահեստազորում հաշվառված ՀՀ քաղաքացիների) անձնական տվյալների հրապարակումը կազմակերպվող վարժական հավաքից առաջ, որն իրենից ենթադրում է նաև մարտական հերթապահություն իրականացնելը, հնարավոր է հանգեցնի որոշակի անվտանգային խնդիրների:

Պաշտպանի դիտարկումն ընդունվել է և նախագիծը խմբագրվել է: Պաշտպանության նախարարությունը նշել է, որ համապատասխան կառուցակարգերը կսահմանվեն ՀՀ կառավարության որոշմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ 2024 թվականի մայիսի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքը[164]: Չնայած վերոնշյալ օրենքով կարգավորվել է ծանուցումների գործընթացը, սակայն գործնականում Պաշտպանը շարունակում է ստանալ նույնաբովանդակ բողոքներ: Մի շարք դեպքերում մարդիկ ներկայացրել են պնդումներ, որ իրենց վարժական հավաքների ներգրավման նպատակով ծանուցվում են հեռախոսազանգի միջոցով կամ առանց օրենքով սահմանված ծանուցումներից որևէ մեկը ստանալու՝ իրենց բնակարան է այցելում ոստիկանության ծառայողը և պահանջում ներկայանալ զինկոմիսարիատ և այլն: Այս ամենի հետ մեկտեղ, շարունակում է չլուծված մնալ զինկոմիսարիատների տեխնիկական հագեցվածությամբ ապահովելու խնդիրը: Հետևաբար, Պաշտպանի այն մտահոգությունը, որ համացանցին հասանելիության խնդրի պատճառով զինկոմիսարիատների կողմից հնարավոր չի լինելու ապահովել օրենքի պահանջները՝ հստակ տեսանելի են դառնում զորակոչերի (վարժական հավաքների) ընթացքում:

---

[163] Ըստ Քննչական կոմիտեի՝ 2024 թվականին վարժական հավաքներից խուսափելու հատկանիշներով նախաձեռնվել է 300 քրեական վարույթ, որից 34 քրեական վարույթ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատախազին՝ դատարան ուղարկելու համար, 95 քրեական վարույթ կարճվել է, 1 քրեական վարույթ ուղարկվել է նախաքննություն իրականացնող այլ մարմին, 6 քրեական վարույթով կայացվել են հանրային քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ, իսկ 164 քրեական վարույթներ գտնվում են նախաքննության փուլում:

[164] Հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=193799 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մեկ այլ խումբ խնդիրներ վերաբերում են **վարժական հավաքի ներգրավելուց առաջ պատշաճ բժշկական հետազոտություն ու փորձաքննություն անցկացնելուն**: Քաղաքացիները հաճախ բարձրացնում են զինկոմիսարիատների կողմից իրենց առողջական խնդիրները պատշաճ չհետազոտելու հարցեր: Ավելին, նշում են, որ գանգատների և նույնիսկ այդ գանգատները հիմնավորող բժշկական փաստաթղթերի առկայության պարագայում էլ զինկոմիսարիատները պատշաճ չեն հետազոտում և ուղեգրեր չեն տրամադրում: Ըստ քաղաքացիների՝ ուղեգրերը տրամադրվում են միայն երկարատև քաշքշուկներից հետո:

Իհարկե, անհատական բողոքների և ահազանգերի հիման վրա ՄԻՊ կողմից ձեռնարկված միջոցների և զինկոմիսարիատների հետ համագործակցության արդյունքում խնդիրները կարգավորվել են, սակայն օրենքով նախատեսված պարտադիր բժշկական հետազոտություններ չիրականացնելն ինքնին խնդրահարույց է: Միևնույն ժամանակ, կարևոր է նշել, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ 2024 թվականի ընթացքում վերոնշյալ խնդրի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքները զգալի պակասել են, ինչը վկայում է նաև իրավասու մարմինների կողմից կատարված աշխատանքների դրական արդյունքների մասին:

Պաշտպանի աշխատակազմ շարունակվում են ստացվել **ընտանեկան դրությամբ պայմանավորված քաղաքացիներին վարժական հավաքի չզորակոչելու կամ զորակոչը հետաձգելու վերաբերյալ բողոքներ**: Նշված խնդրին Պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարեկան հաղորդմամբ՝ կարևորելով, որ ոլորտային օրենսդրությունում Պաշտպանի առաջարկությունների հաշվառմամբ կատարվել են փոփոխություններ ու լրացումներ և սահմանվել են ընտանեկան պայմաններից ելնելով՝ քաղաքացիներին վարժական հավաքների չներգրավելու պայմանները:

Արդյունքում, նախորդ տարիների համեմատ, նշված հարցով Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքների քանակը որոշ չափով նվազել է: Այնուամենայնիվ, առանձին դեպքերում, ընտանեկան դրությամբ պայմանավորված վարժական հավաքի չներգրավելու առավել ճկուն մեխանիզմներ մշակելու անհրաժեշտություն կա: Որպես ասվածի հիմնավորում՝ կարևոր է նշել մի քանի օրինակ: Այսպես, մի շարք դեպքերում քաղաքացիները հայտնել են, որ կատարում են գյուղատնտեսական սեզոնային աշխատանքներ, ուստի այդ ժամանակահատվածում վարժական հավաքի ներգրավվելու դեպքում աշխատանքները կմնան կիսատ (այս հարցով առավել շատ բողոքներ ստացվում են գարնանը և աշնանը): Քաղաքացիները խնդրել են իրենց զորակոչը հետաձգել (զորակոչել, օրինակ, ամռանը կամ ձմռանը): Մեկ այլ դեպքի շրջանակներում քաղաքացին տեղեկացրել է, որ որդին գերազանցությամբ սովորում է համալսարանում և վարժական հավաքի ներգրավվելու պատճառով չի կարողանա յուրացնել ստացած գիտելիքները և հանձնել քննությունները, ինչի պատճառով էլ կզրկվի վարձավճարի զեղչի արտոնությունից: Բողոքներից մեկով էլ քաղաքացին նշել է, որ կինը ութամսյա հղիության մեջ է գտնվում, չունի այլ խնամող և վարժական հավաքի ներգրավվելու դեպքում կինը կմնա առանց խնամքի: Մեկ այլ օրինակ՝ նախկինում Պաշտպանին էր դիմել 44-օրյա մարտական գործողությունների ընթացքում անհայտ կորած զինծառայողի եղբայրը և հայտնել, որ ստացել է վարժական հավաքի մեկնելու

ծանուցագիր: Կոնկրետ դեպքում քաղաքացին խնդրել է իրեն չզորակոչել՝ մինչև եղբոր ճակատագրի մասին լուր ստանալը:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ բացի վերը նշվածից, հնարավոր են նաև այլ դեպքեր, երբ անձին վարժական հավաքի ներգրավելը լինի խնդրահարույց: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն կտա հաշվի առնել իրականում ավելի բարդ ընտանեկան պայմանները և յուրաքանչյուր կոնկրետ դեպքով ցուցաբերել անհատական մոտեցում:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ արձանագրվել է 1 դեպք, երբ քաղաքացին ընդգրկվել է վարժական հավաքներին՝ ունենալով 5 երեխա: Վերջինիս կողմից բարձրացվել է վարժական հավաքներին չընդգրկվելու հարց, որը դրական լուծում չի ստացել, քանի որ պարզվել է, որ 5 երեխաներից 2-ը չափահաս են: 2024 թվականի ընթացքում վարժական հավաքների կազմակերպման գործընթացում, ընտանեկան դրությամբ պայմանավորված, այլ բողոքներ ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատում չեն ստացվել: Մարտական գործողությունների ընթացքում գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայող եղբայր կամ ընտանիքի այլ անդամ ունեցող քաղաքացիներին վարժական հավաքի կամ զորավարժանքի ներգրավվելու դեպքեր չեն արձանագրվել:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրումներ է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե վարժական հավաքների վերաբերյալ ի՞նչ այլ բնույթի բողոքներ են ստացվել (օրինակ՝ սննդի ապահովում, խնամքին հաշմանդամություն ունեցող ծնողներ կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող քաղաքացիներին վարժական հավաքների ներգրավում, վարժական հավաքների մասնակիցների կարգապահություն, առաջնագծում մարտական հերթապահության ընդգրկում և այլն):

Հարցադրումների կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ վարժական հավաքներին ընդգրկված անձնակազմի սննդի կազմակերպման հարցերը մշտապես գտնվել են ՀՀ ՊՆ ԹԱ վարչության, ինչպես նաև ՊՆ ու ԶՈՒ ԳՇ այլ կառուցվածքային ստորաբաժանումների խիստ վերահսկողության տակ, հաճախակի իրականացվել են ստուգումներ, որոնց ժամանակ հավաքներին ընդգրկված անձնակազմի կողմից սննդի վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

2024 թվականի ընթացքում ստացվել է 17 բողոք խնամքին հաշմանդամություն ունեցող ծնողներ կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող քաղաքացիներին վարժական հավաքների ներգրավելու վերաբերյալ, որոնք դրական ընթացք չեն ստացել:

Վարժական հավաքների մասնակիցների կարգապահության հարցերի վերաբերյալ զորամասերից բողոքներ չեն ստացվել, իսկ վարժական հավաքի 1 մասնակից ենթարկվել է կանոնագրքային պատասխանատվության: Գործող իրավակարգավորումներով պահեստազորայինի կողմից որևէ համաձայնություն պետք չէ նրան մարտական հերթապահության ներգրավման համար:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկվում է՝

✓ ***բացառել քաղաքացիներին պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին (վարժական հավաք, զորավարժություններ և այլն) օրենքով սահմանված կարգի խախտմամբ ծանուցելու պրակտիկան՝ միաժամանակ միջոցներ ձեռնարկելով զինկոմիսարիատների տեխնիկական հագեցվածությունն ապահովելու ուղղությամբ,***

✓ ***վարժական հավաքի ներգրավելուց առաջ բոլոր դեպքերում իրականացնել բժշկական հետազոտություններ և փորձաքննություններ՝ երաշխավորելով ինչպես օրենքի պահանջի կատարումը, այնպես էլ քաղաքացիների իրավունքների պատշաճ իրացումը,***

✓ ***կատարելագործել գործող կառուցակարգերը և վարժական հավաքների ներգրավելիս յուրաքանչյուր դեպքում ցուցաբերել անհատական մոտեցում՝ ուշադրություն դարձնելով անձի առողջական, ընտանեկան կամ այլ օբյեկտիվ հանգամանքներին, և իրավաչափ խոչընդոտ հանդիսացող խնդիրների վերացումից հետո միայն քննարկել քաղաքացուն վարժական հավաքի ներգրավելու հնարավորության հարցը:***

2. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո

Պաշտպանը 2024 թվականի ընթացքում շարունակել է մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հետպատերազմյան խնդիրների բացահայտման, ուսումնասիրման ու լուծման եղանակներ ներկայացնելու ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Պաշտպանը բազմաթիվ այցեր է իրականացրել սահմանամերձ համայնքներ (օրինակ, Կիրանց, Ոսկեպար, Բերքաբեր, Սյունիք, Ներքին Հանդ և այլն)[165], զորամասեր[166], աշխատակազմում հանդիպումներ կազմակերպել, ինչպես նաև անձամբ այցելել գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին, լսել նրանց կարիքները և բարձրացված հարցերը լուծելու նպատակով դրանք հասցեագրել իրավասու գերատեսչություններին, Պաշտպանի մանդատի շրջանակներում աշխատանքներ իրականացրել Ադրբեջանում ապօրինի ազատությունից զրկված անձանց իրավունքների հետ կապված խնդիրները ոլորտում մանդատ ունեցող բոլոր դերակատարներին պարբերաբար հասցեագրելու ուղղությամբ, հանդես է եկել մի շարք հրապարակային հայտարարություններով և այլն[167]:

---

[165] Հասանելի են https://www.ombuds.am/am/site/ViewNews/2913, https://www.ombuds.am/am/site/ViewNews/2985, https://www.ombuds.am/am/site/ViewNews/2862 հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[166] Հասանելի են https://www.ombuds.am/am/site/ViewNews/2987, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3028 հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[167] Հասանելի են https://www.ombuds.am/am/site/ViewNews/2885, https://www.ombuds.am/am/site/ViewNews/2903, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3241, https://ombuds.am/am/site/ViewNews/3109 հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանի ամենօրյա ուշադրության ներքո են գտնվել մարտական գործողությունների ազդեցությունը կրած զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված հարցերը:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքները ցույց են տալիս, որ նախկինում արձանագրված մի շարք խնդիրներ, այդ թվում՝ համակարգային բնույթ ունեցող, շարունակում են մնալ արդիական: Այսպես, Պաշտպանը շարունակում է բողոքներ ստանալ **գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայողների ճակատագրերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցություն տրամադրելու, հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու**[168], **զինգրքույկում մարտերին մասնակցության վերաբերյալ գրառում կատարելու**[169]**, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթի շրջանակում տուժող ճանաչելու և այլ հարցերի վերաբերյալ:**

Վերոնշյալ խնդիրների կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակում մշտապես ակտիվ քննարկումներ են տեղի ունեցել պետական իրավասու մարմինների հետ, բազմաթիվ խնդիրներ Պաշտպանի աջակցությամբ արագ լուծումներ են ստացել, իսկ համակարգային բնույթ ունեցող հարցերին լուծումներ տալու նպատակով գրություններ և առաջարկություններ են ներկայացվել իրավասու գերատեսչություններ (Պաշտպանության նախարարություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե և այլն):

2020 թվականի 44-օրյա մարտական գործողություններից տևական ժամանակ է անցել, սակայն բազմաթիվ զինծառայողների ճակատագրեր շարունակում են մնալ անհայտ: Ըստ Քննչական կոմիտեից ստացված տեղեկատվության՝ 44-օրյա մարտական գործողությունների, դրան հաջորդող տարիների ադրբեջանական ագրեսիաների, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-20-ի ագրեսիայի վերաբերյալ քննվող 2 քրեական վարույթով 183 զինծառայողի և 25 քաղաքացիական անձի գտնվելու վայրն անհայտ է: Նշված 2 քրեական վարույթները գտնվում են նախաքննության փուլում:

2024 թվականի ընթացքում գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ընտանիքների անդամներից գրավոր ու բանավոր եղանակներով ստացվել են բազմաթիվ բողոքներ, Պաշտպանը պարբերաբար ընդունել է զինծառայողների հարազատներին, տեղում լսել նրանց մտահոգող խնդիրները: Օրինակ, ծնողների մի մասը տարբեր պատճառներով համաձայն չէ ԴՆԹ փորձաքննությունների

---

[168] Ըստ ՊՆ-ի՝ 2024 թվականի ընթացքում տրամադրվել է հիվանդության կամ վնասվածքի պատճառական կապի 287 եզրակացություն, իսկ 2 անձի պատճառական կապի տրամադրումը մերժվել է, քանի որ բացակայել են ծառայության ընթացքում հիվանդության մասին վկայող բժշկական կամ այլ փաստաթղթերը:

[169] Ըստ ՊՆ-ի՝ 2024 թվականի ընթացքում զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցած լինելու վերաբերյալ գրառումներ չկատարելու մասին ստացվել է 3 բողոք, որոնց հիման վրա կատարվել են հարցումներ համապատասխան զորամասեր: Ստացված տեղեկությունների հիման վրա 1 բողոք բավարարվել է, 2-ը՝ մերժվել:

արդյունքների հետ[170], մյուս մասը մտահոգություն է ներկայացրել քրեական վարույթների ընթացքի հետ կապված, ծնողների մեկ այլ խումբ բարձրացրել է սոցիալական, հոգեբանական աջակցության և այլ բնույթի խնդիրներ: Բոլոր հարցերին Պաշտպանի աշխատակազմում ցուցաբերվել է անհատական մոտեցում:

Այս առումով Պաշտպանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ 2022 թվականի հոկտեմբերին ստեղծվել է Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով, որտեղ քննարկման առարկա են դարձվում ինչպես վերը նշված, այնպես էլ խնդրին վերաբերելի այլ համակարգային հարցեր[171]: Միևնույն ժամանակ, Պաշտպանը հատուկ կարևորում է բոլոր իրավասու պետական մարմինների կողմից գերության մեջ գտնվող, գտնվելու վայրն անհայտ, զոհված զինծառայողների հարազատների հետ պատշաճ հաղորդակցության իրականացումը, նրանց բարձրացրած խնդիրներին արձագանքող լինելը:

Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը, բացի ներպետական իրավասու մարմիններին հասցեագրելուց, Պաշտպանը ներկայացրել է նաև մարդու իրավունքների հարցերով միջազգային դերակատարներին[172]:

Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողների իրավունքների պաշտպանության և պատշաճ իրացման հարցերում առանցքային կարևորություն ունի Պաշտպանի ներկայացրած իրավական դիրքորոշումը[173], որով Պաշտպանը միջազգային իրավական չափորոշիչների և ներպետական օրենսդրության պահանջների հաշվառմամբ՝ հատուկ ընդգծել է, որ անհայտ կորած զինծառայողների ծնողները պետք է հնարավորություն ունենան իրենց զավակների վերաբերյալ քննվող քրեական վարույթներով ներգրավվելու որպես տուժող: Պաշտպանի դիրքորոշումը համապատասխան գրություններով ուղարկվել է Դատախազություն և Քննչական կոմիտե: Կարևոր է արձանագրել, որ նշված դիրքորոշումից հետո իրավասու մարմինները գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթներով ներգրավել են որպես տուժող:

Մանրամասն չանդրադառնալով վերոնշյալ խնդիրներից յուրաքանչյուրին (Պաշտպանը դրանց մանրամասն անդրադարձել է նախորդ տարեկան հաղորդմամբ)[174]՝ հարկ ենք համարում վերահաստատել միջազգային իրավական մոտեցումներն առ այն, որ որպես գործատու՝ ՀՈՒ-ն իրենց ներկա և նախկին

---

[170] Ըստ Քննչական կոմիտեի՝ 2024թ. դրությամբ առկա է նույնականացված 83 մարմին և /կամ/ մասունք, որոնց հետ (ԴՆԹ պատասխանի հետ) հարազատները համաձայն չեն և հրաժարվել են ընդունել: 2024թ. ընթացքում զոհված զինծառայողների նույնականացման կրկնակի ԴՆԹ փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ միջնորդություններ չեն ստացվել:

[171] Հասանելի է https://www.sns.am/hy/news/view/1022 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[172] Հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3207, https://ombuds.am/am/site/ViewNews/3270, https://ombuds.am/am/site/ViewNews/3115 հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[173] Պաշտպանի իրավական դիրքորոշումը՝ https://ombuds.am/images/files/00921e1bd79ec76336266b5f9c9f2c95.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[174] Առավել մանրամասն տես, օրինակ, 2023թ. Պաշտպանի տարեկան հաղորդումը, էջեր 501-510, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

աշխատակիցների մասին հոգ տանելու պարտականություն ունի: Ծառայության ընթացքում զինծառայողները հաճախ կարող են լինել վտանգավոր և կյանքին սպառնացող հանգամանքներում: Շատ վետերաններ հաճախ ծառայության հետևանքներից տառապում են անգամ ծառայությունը թողնելուց հետո, օրինակ՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարումից, ֆիզիկական առողջության հետ կապված խնդիրներից և անդամալուծությունից: Հարկ է նկատել, որ պետություններն ունեն վետերանների մասին հոգ տանելու պարտականություն[175]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***գտնվելու վայրն անհայտ զինծառայողների հարազատների (ծնողների) հետ իրավասու մարմինների կողմից մշտապես վարել պատշաճ հաղորդակցություն, միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ երաշխավորել նրանց իրավունքները և դրանց վերաբերելի հարցերին լինել առավել արձագանքող,***
- ✓ ***մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին մշտապես պահել պետության հոգածության ներքո, այդ թվում՝ պարբերաբար հոգեբանական աջակցություն տրամադրելու և համապատասխան ծրագրեր իրականացնելու միջոցով,***
- ✓ ***ապահովել զինծառայողների զինվորական գրքույկներում գրառումների պատշաճությունն ու ճշգրտությունը:***

[175] Տես, ԵԱՀԿ ձեռնարկ՝ ԶՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 2008 թվական, էջ 261: Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/6/7/88572.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հասարակական կարգի և անվտանգության պահպանության, իրավախախտումների և հանցավորության դեմ պայքարի, անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում կարևորագույն և անփոխարինելի դեր ունեն Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինները: Միևնույն ժամանակ, քրեական արդարադատության ոլորտում բարձր են մարդու իրավունքների ոտնահարման ռիսկերը, ուստի հետաքննություն և նախաքննություն իրականացնող մարմիններն ու քրեական արդարադատության ամբողջ շղթայի պատասխանատու այլ մարմինները պետք է դրսևորեն բարձր պատասխանատվություն իրենց առջև դրված խնդիրների լուծման հարցում: Պետությունը պետք է ապահովի մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ կառուցակարգերի առկայությունն և դրանց արդյունավետ կիրառումը քրեական արդարադատության ամբողջ շղթայում:

Քրեական արդարադատության և իրավապահ մարմինների գործունեության ոլորտում մարդու իրավունքների երաշխավորման հարցը մշտապես հանդիսացել է Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության առաջնահերթություններից մեկը:

Ինչպես նախորդ տարիներին, 2024 թվականին ևս ինչպես անհատական բողոքներով ներկայացված, այնպես էլ մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրները և հանրային հետաքրքրություն ներկայացնող քրեական վարույթների քննությանն առնչվող հարցերը գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: Մի շարք դեպքերում Պաշտպանը նշված հարցերի կապակցությամբ հանդես է եկել հրապարակային հայտարարություններով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ սկսել է քննարկման ընթացակարգեր:

Անդրադառնալով հանրային հետաքրքրություն ներկայացնող քրեական վարույթներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծել է դրանց ընթացքի վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկելու անհրաժեշտությունը՝ իրավասու մարմինների հաշվետու և թափանցիկ աշխատանքն ապահովելու և մեղադրվող անձանց անմեղության կանխավարկածի սկզբունքների ապահովմամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները և ահազանգերը, ինչպես նաև իրավասու մարմիններ պարբերաբար իրականացված այցերը վկայում են, որ քրեական արդարադատության շրջանակում մարդու իրավունքների երաշխավորմանը վերաբերելի մի շարք խնդիրներ կրում են համակարգային բնույթ, որոշ դեպքերում այդ հարցերի կապակցությամբ ձևավորվել է գործունեության ոչ իրավաչափ պրակտիկա: Պաշտպանը, մատնանշելով ոլորտում առկա հիմնահարցերը, մշտապես ներկայացրել է նաև դրանց հաղթահարման առաջարկներ և խնդիրների լուծման հնարավոր եղանակներ՝ հիմնվելով միջազգային իրավական չափանիշների վրա: Մարդու իրավունքների պաշտպանը հետևողական է խնդիրների լուծման դինամիկայի և առաջարկների կատարմանն ուղղված պետական իրավասու մարմինների կողմից ձեռնարկվող գործողություններին և արձանագրում է, որ որոշ ոլորտներում առկա է դրական դինամիկա: Այնուամենայնիվ, բազմաթիվ համակարգային խնդիրներ դեռևս շարունակում են մնալ արդիական:

Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ իրավասու մարմինների հետ տարիների գործունեության արդյունքում ձևավորվել է արդյունավետ համագործակցություն տարբեր ձևաչափերով: Պաշտպանի աշխատակազմի և ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի, Հակակոռուպցիոն կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության հետ ձևավորված համագործակցության արդյունքում Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացված հարցերն ստանում են դրական լուծում: Կարևոր է նշել նաև, որ օրենսդրությամբ նախատեսված իրավասությունների շրջանակում մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի հետ ևս ձևավորվել է պատշաճ համագործակցություն:

Քրեական արդարադատության և իրավապահ մարմինների գործունեության այլ ոլորտներում Պաշտպանը մշտապես առանձնահատուկ կարևորել է նաև փաստաբանների, ինչպես նաև ոլորտում գործունեություն իրականացող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը:

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը

Իրավական պետությունում պետական ինստիտուտների, մասնավորապես՝ իրավապահ մարմինների գործունեությունը պետք է հինված լինի մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքի սահմանադրական պահանջի վրա: Դրանցից մեկի՝ արդար դատաքննության իրավունքի անբաժանելի և անկյունաքարային բաղադրիչներից է անմեղության կանխավարկածը:

Պաշտպանի 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ[176] մանրամասն վերլուծվել են անմեղության կանխավարկածի էությունը, դրա պահպանման կարևորությունը, ներպատական և միջազգային վերաբերելի իրավակարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները:

Այնուամենայնիվ, կարևոր է կրկին ընդգծել, որ պետությունը կրում է անմեղության կանխավարկածի սկզբունքի անշեղ իրացումն ու իրավասու մարմինների՝ իրավունքի գերակայության սկզբունքին համահունչ գործունեությունն ապահովելու և այս տեսանկյունից խնդրահարույց իրավիճակներ թույլ չտալու

[176] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 253-258 հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պատասխանատվություն: Ավելին, անգամ եթե պետությունը չի նպաստել անձի մեղավորության առնչությամբ կանխակալ ընկալումների ձևավորմանը, այդպիսի իրավիճակի պարագայում պարտավոր է գործադրել առավելագույն ջանքեր՝ իրավիճակը հաղթահարելու ուղղությամբ: Ընդ որում, անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման պահանջը կարող է ունենալ տարբերակված բովանդակություն՝ պայմանավորված պետական մարմինների և պաշտոնատար անձանց իրավասության շրջանակով կամ կարգավիճակով:

Կարևոր է նաև, որ պետական մարմինները և պաշտոնատար անձինք ապահովեն իրենց գործունեության հանրային հաշվետվողականությունն ու թափանցիկությունը՝ ներկայացնելով տեղեկություններ հանցավորության ընդհանուր վիճակի կամ կոնկրետ քրեական վարույթների վերաբերյալ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր դեպքում դա պետք է կատարվի՝ հարգելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները և իրավունքի գերակայության հիմքում ընկած արժեքները: Ընթացիկ քրեական վարույթների շրջանակում անձի վերաբերյալ հայտարարություններ անելիս պետական մարմինները և դրանց ներկայացուցիչները պետք է բացառեն, մինչև իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, անձի մեղավորությունը որպես հաստատված փաստ ներկայացնելու դրսևորումները:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների համաձայն՝ պաշտոնական հայտարարություններում կամ մամլո հաղորդագրություններում հանցանքի կամ անձի մեղավորության առնչությամբ տեղեկատվությունը պետք է ներկայացվի այնպես, որ չընկալվի որպես անձի մեղավորության մասին արդեն իսկ հաստատված փաստ: Իրավասու մարմինների կողմից հայտարարությունները պետք է լինեն բավարար չափով մշակված՝ բացառելով մեղադրվող անձի նույնականացումը հնարավոր դարձնող տեղեկությունների հրապարակումը:

Այս համատեքստում կարևոր է զանգվածային լրատվության միջոցների դերը, որոնք իրականացնում են հասարակության իրազեկվածության, խոսքի ազատության և քաղաքացիական վերահսկողության ապահովման կարևորագույն առաքելությունը: Պատասխանատու լրագրության գաղափարը պահանջում է, որ լրագրողները ևս իրենց մասնագիտական գործունեության մեջ պահպանեն անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այս դիրքորոշումն արտահայտվել է ինչպես ՄԻԵԴ որոշումներում, այնպես էլ միջազգային իրավական այլ փաստաթղթերում:

2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ ներկայացվել է նաև Պաշտպանի դիրքորոշումն առ այն, որ կատարված առերևույթ հանցագործության և անձի մեղավորության առնչությամբ ձևակերպումները չպետք է ձևավորեն կանխակալ ընկալում արարքի կատարումն անձի կողմից որպես հաստատված փաստ ներկայացնելու տեսանկյունից՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

Այս առնչությամբ, 2024 թվականի ընթացքում պետական մարմիններին ուղարկվել են հարցումներ Պաշտպանի 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ ներկայացված առաջարկների կապակցությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ: Այդ

հարցումներին ի պատասխան՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության և Ներքին գործերի նախարարության կողմից ստացվել է տեղեկություն առ այն, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման համատեքստում դրսևորում են հետևողականություն՝ ապահովելով, որ հրապարակումներում և պաշտոնական հայտարարություններում՝ կատարված առերևույթ հանցագործության և անձի մեղավորության առնչությամբ ներկայացվող տեղեկությունները չընկալվեն որպես անձի մեղավորության մասին արդեն իսկ հաստատված փաստ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

Միևնույն ժամանակ, նշված հարցման կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեից ստացվել է պարզաբանում առ այն, որ Կոմիտեն հետևողական է անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման հարցում թե՛ քրեական վարույթներով նախաքննության վերաբերյալ պաշտոնական հրապարակումներ անելիս և թե՛«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ներկայացված հարցումներով տեղեկատվություն տրամադրելիս: Այդ նպատակով Կոմիտեի նախագահի կողմից 2024 թվականի ապրիլի 5-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գործունեության, քրեական վարույթներով նախաքննության վերաբերյալ պաշտոնական հրապարակումների, հանրային իրազեկման աշխատանքների իրականացման կարգը հաստատելու մասին» N 97-L հրամանը, որը մշակվել է հաշվի առնելով անմեղության կանխավարկածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները: Պաշտպանը բարձր է գնահատում Քննչական կոմիտեում խնդրի վերաբերյալ միջազգային չափանիշների հաշվառմամբ նման հրամանի մշակումը, որը կարևոր քայլ է ոլորտում կայուն դրական դինամիկայի ապահովման համար:

Այս առումով կարևոր է նաև նշել, որ 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում չեն ստացվել անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման հետ կապված խնդիրների վերաբերյալ բողոքներ: Ավելին, Պաշտպանի աշխատակազմում իրականացվող զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքները ևս վկայում են նշված սկզբունքի զանգվածային խախտումների բացակայության մասին: Իրավապահ մարմինները ոլորտին վերաբերելի հայտարարություններում ձայնային և տեքստային ծանուցման ձևով ներկայացնում են անմեղության կանխավարկածի մասին մեջբերումները, չեն նշվում անձանց նույնականացման տվյալները, արտաքին և ձայնային տվյալները թաքցվում են տեխնիկական միջոցներով, չեն տրվում արարքին սուբյեկտիվ որակումներ, գնահատականներ, և շեշտվում է, որ դեպքերը ներկայացվում են՝ ըստ նախնական տվյալների: Անձին իրավապահ մարմին ներկայացնելու կամ ձերբակալման տեսանյութը հրապարակելիս հիմնականում դեմքի հատվածը մշակվում է, կամ նկարահանումը կատարվում է այնպիսի դիրքից, որ հնարավոր չլինի նույնականացնել անձին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է արձանագրել, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի պահանջների չպահպանման խնդիրը ներկայում չունի նույն արդիականությունը, ինչպես նախորդ տարիներին և այս ոլորտում գրանցվել է էական առաջընթաց: Այդուհանդերձ անմեղության կանխավարկածի սկզբունքի երաշխավորման հարցը շարունակում է լինել Մարդու իրավունքների

պաշտպանի ուշադրության կենտրոնում և Պաշտպանը հետագայում ևս հետևողական է լինելու իրավասու մարմինների կողմից համապատասխան չափանիշների պահպանման հարցում:

2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և չքննարկելու՝ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողական պրակտիկան

Քրեական դատավարության ոլորտում ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով ամրագրված է քաղաքացիների համար արդարադատության մատչելիությունն ապահովելու պետության պարտավորությունը, այդ թվում՝ կատարված հանցագործության վերաբերյալ իրավասու մարմիններին տեղեկություն հայտնելու հնարավորության և դրան արձագանքման ընթացակարգեր ամրագրելու մասով: Այսպես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Անձանց հանցագործությունների մասին հաղորդումների ընդունումը և քննարկումը քրեական արդարադատության գործընթացի սկզբնական և ամենակարևոր փուլերից մեկն է, որն ապահովում է քաղաքացիների անարգել հասանելիությունն արդարադատությանը: Ուստի իրավացի է որոշ իրավագետների այն կարծիքը, որ արդարադատությունը սկսվում է ոչ թե հանցագործության կատարման, այլ դրա գրանցման պահից: Քաղաքացու հաղորդումն ընդունելու կամ Ոստիկանության ծառայողի կողմից անձի ահազանգը պատշաճ գրանցելու օրենքով սահմանված ընթացակարգերի և չափանիշների ապահովումից է նաև կախված քրեական վարույթ նախաձեռնելն ու դրա հետագա նախաքննության ուղղվածությունը:

Ինչպես և նախորդ տարիներին՝ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ անդրադարձ է կատարվել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի չպահպանման խնդիրներին: Մանրամասն քննարկվել են ոլորտի օրենսդրական կարգավորումներն ու չափանիշները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի խնդիրները[177]:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2024 թվականի ընթացքում ստացված բողոքներն ու ահազանգները վկայում են, որ հանցագործության մասին հաղորդումների ընդունման վերաբերյալ խնդիրները դեռևս չեն կորցրել արդիականությունը:

---

[177] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջ 258-263 հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Այսպես, ստացվել են բողոքներ առ այն, որ Ոստիկանության ծառայողները, տարբեր պատճառաբանություններով, հորդորել են չներկայացնել հաղորդում կամ հրաժարվել են ընդունել ներկայացված հանցագործության մասին հաղորդումը: Բողոքների քննարկման շրջանակում արձանագրվել են դեպքեր, երբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային ստորաբաժանում ներկայացված հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քաղաքացիները տևական ժամանակ չեն ստացել որևէ պատասխան կամ հաղորդումները դիտարկվել են որպես ահազանգ/դիմում և նրանց պատասխան է ներկայացվել Ոստիկանության կողմից ուղարկված գրությամբ: Առանձին դեպքերում ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկությունը ևս համապատասխան կարգով քաղաքացուն տրամադրված չի եղել, որի հետևանքով անձը, ըստ էության, զրկվել է այն բողոքարկելու հնարավորությունից:

Պաշտպանը մեկ անգամ ևս ընդգծում է, որ նման գործելաոճն անընդունելի է առնվազն այն տեսանկյունից, որ Քրեական դատավարության օրենսգիրքը հաղորդումն ընդունող մարմնին չի վերապահում հանգամանքները ստուգելու կամ քննարկելու լիազորություն: ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը չի կարող ըստ էության քննարկել հանցագործության մասին հաղորդումները և կայացնել օրենսգրքով սահմանված վարութային ակտերից մեկը, դրանք պետք է ընդունվեն՝ քննչական մարմինների քննարկմանը փոխանցելու նպատակով:

Միևնույն ժամանակ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները պետք է հանցագործության մասին հաղորդումների ընդունումն ու գրանցումն իրականացնեն ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման դրույթների համապատասխան:

Դեպքերից մի քանիսում էլ անձանց պատշաճ չեն պարզաբանվել իրականացված գործողությունների հիմքերն ու իրավունքների պաշտպանության այլ հնարավոր եղանակները: Այս առումով, կարևոր է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ անձինք շատ դեպքերում իրազեկված չեն Քրեական դատավարության օրենսգրքով հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ նախատեսված չափանիշներին և չեն տարբերում քրեորեն պատժելի արարքները վարչական իրավախախտումներից կամ քաղաքացիաիրավական բնույթի գործողություններից:

Նշվածի կապակցությամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է Ոստիկանություն դիմող անձանց տարբեր եղանակներով իրազեկել Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չափանիշների, ինչպես նաև իրավունքների պաշտպանության օրենքով սահմանված այլ եղանակների մասին:

Բացի այդ, շարունակում է արդիական մնալ նաև հաղորդումը հայերեն լեզվով չներկայացնելու պատճառաբանությամբ օտարերկրյա քաղաքացիներից, փախստականներից, ՀՀ-ում ապաստան հայցող անձանցից կամ հայերենին բավարար չափով չտիրապետող ՀՀ քաղաքացիներից հաղորդումը չընդունելու խնդիրը:

Այս առումով, Պաշտպանը կրկին ընդգծում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Միևնույն ժամանակ ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշմամբ սահմանված է, որ *հաղորդում ներկայացնող անձը հաղորդումը շարադրում է այն լեզվով, որին ինքը տիրապետում է*:

Նշված խնդիրների կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Պաշտպանի հաղորդումներում ներկայացված առաջարկների վերաբերյալ Ներքին գործերի նախարարությունից ստացվել է տեղեկություններ առ այն, որ 2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստում է անցել ընդհանուր թվով ոստիկանության 68 ծառայող, հետևյալ թեմաներով և ժամաքանակներով՝ ՆԳՆ ոստիկանության հերթապահ մասերի և օպերատիվ կառավարման կենտրոնի աշխատանքների կազմակերպումը և հիմնական գործառույթները /6 ժամ/, Պարեկային ծառայողների գործողությունները պատահարների և հանցագործությունների դեպքում /2 ժամ/, ՀՀ ոստիկանության պետի 20.06.2014թ. «ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ մասերի և հերթապահ ծառայությունների գործունեությունը կանոնակարգելու մասին» թիվ 2121-Ա հրամանը, ՀՀ կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշումը /2 ժամ/, Ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը /6 ժամ/, Ոստիկանության հերթապահ մասերի և օպերատիվ կառավարման կենտրոնի աշխատանքների կազմակերպումը և հիմնական գործառույթները /8 ժամ/:

Միևնույն ժամանակ, ըստ ստացված տեղեկության՝ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշման պահանջների համաձայն: ՆԳՆ ոստիկանությունում քաղաքացիների կողմից տրված հաղորդումները (ահազանգերը) իրավասու ծառայողների կողմից մուտքագրվում են ՆԳՆ ոստիկանության ավտոմատացված տեղեկատվական համակարգի էլեկտրոնային գրանցամատյան, որից հետո նույն համակարգով փոխանցվում են տարածքային ստորաբաժանումներ: ՆԳՆ էլեկտրոնային փոստին ստացված հաղորդումները նույնպես մուտքագրվում են էլեկտրոնային գրանցամատյան, որից հետո նույն եղանակով փոխանցվում է տարածքային ստորաբաժանումներ: Հաղորդումներն էլեկտրոնային գրանցամատյան մուտքագրելուց հետո աշխատակցի կողմից քաղաքացիները բանավոր կերպով իրազեկվում են հաղորդման ընդունման վերաբերյալ, իսկ անձամբ՝ տարածքային բաժնում հաղորդում ներկայացնելու դեպքում՝ քաղաքացին կրկին տեղում բանավոր իրազեկում է ստանում:

Կարևոր է նաև արձանագրել, որ նախորդ տարիների համեմատությամբ Պաշտպանի աշխատակազմ ստացված նման բողոքների և ահազանգների թիվը կրճատվել է: Հարկ է ընդգծել, որ մի շարք դեպքերում ստացված ահազանգների կապակցությամբ արագ արձագանքմամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության հետ հարցի քննարկման արդյունքում բողոքի քննության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրը ստացել է լուծում:

ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ստացված պարզաբանման համաձայն՝ հանցագործության դեպքերը գրանցելու սահմանված կարգի խախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների (բողոքների) կապակցությամբ 2024 թվականի ընթացքում կատարվել են 8 ծառայողական քննություններ, որոնց արդյունքներով ոստիկանության 9 ծառայողի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր, իսկ ոստիկանության 8 ծառայող ազատվել է կարգապահական պատասխանատվությունից՝ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

Նշվածը թույլ է տալիս արձանագրել, որ ձեռնարկված միջոցներն ապահովել են քննարկող ոլորտում դրական և արդյունավետ պրակտիկա ձևավորելու միտում:

Պաշտպանը կրկին արձանագրում է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները պետք է ցանկացած պարագայում պատշաճ կարգով ընդունեն և գրանցեն անձանց հանցագործության մասին հաղորդումները՝ չանդրադառնալով ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատմանը կամ չիրականացնելով դրանց ստուգում: Յուրաքանչյուր հաղորդում պետք է սահմանված կարգով հասցեագրվի վարույթն իրականացնող համապատասխան մարմին և քննարկվի քննիչի կողմից:

Ստացվել են առանձին բողոքներ այն մասին, որ հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս դիմողը քննչական մարմնի կողմից պատշաճ ժամկետում և կարգով չի տեղեկացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վարութային ակտերի և դրանց բողոքարկման ընթացակարգերի վերաբերյալ: Մի շարք բողոքներում անձինք մատնանշել են, որ վարույթն իրականացնող մարմինն իրենց գրությամբ տեղեկացրել է քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ, սակայն պատշաճ չի ներկայացրել դրա հիմնավորումները և քննարկման առարկա չի դարձրել իրենց կողմից ներկայացված հանգամանքները: Նշված բողոքներից յուրաքանչյուրով Պաշտպանի լիազորությունների շրջանակում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ:

Հարցի վերաբերյալ Դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում հանցագործության մասին հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և համապատասխան վարութային ակտ չկազմելու վերաբերյալ ստացվել է 1 բողոք, որը դատախազի կողմից բավարարվել է և քննիչին տրվել է հանձնարարություն՝ վերացնելու նշված խախտումը:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ **հաղորդումների քննարկման և լուծման նախատեսված ընթացակարգերը չեն նախատեսում հանցագործության մասին ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման գործողություններ և պայմանավորված չեն դրանց արդյունքներով: Քննիչը պարտավոր է իր իրավասության սահմաններում նախաձեռնել քրեական վարույթ բոլոր այն դեպքերում, երբ ստացվել է առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում:** Միևնույն ժամանակ, համապատասխան վարութային ակտի վերաբերյալ անձին պատշաճ ծանուցելը երաշխավորում է վերջինիս ողջամիտ ժամկետում վարույթի հանրային մասնակցի գործողությունները բողոքարկելու հնարավորությունը:

Գնահատելով իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցները և ոլորտում արձանագրված առաջընթացը, ինչպես նաև հաշվի առնելով խնդրի կարևորությունն ու աշխատակազմ սպացվող բողոքներն ու ահազանգերը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է շարունակել միջոցներ ձեռնարկել.

✓ հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումների ընդունման և քննարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշման պահանջներն ապահովելու, ինչպես նաև իրավապահ մարմինների ծառայողների՝ ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ գիտելիքներն ու հմտությունները կատարելագործելու ուղղությամբ,

✓ տարբեր եղանակներով հաղորդում ներկայացնող անձին իրազեկել հանցագործության մասին հաղորդումներին ներկայացվող չափանիշների, ինչպես նաև իր իրավունքների պաշտպանության այլ եղանակների վերաբերյալ:

3. Քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանությունը

Հանցագործությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության, հանցավոր արարք կատարած անձին հայտնաբերելու, քրեական վարույթով լրիվ, օբյեկտիվ և համակողմանի քննություն իրականացնելու համար անհրաժեշտ է երաշխավորել դատավարության բոլոր մասնակիցների անվտանգությունը: Հակառակ պարագայում, անձինք իրենց կամ իրենց ընտանիքի անդամներին վտանգ սպառնալու կամ վրեժխնդրության երկյուղից կարող են խուսափել իրավապահ մարմիններին համապատասխան տեղեկություններ ներկայացնելուց կամ վարութային գործողություններին մասնակցելուց:

Նախորդ տարիների, այդ թվում՝ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ[178] Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել քրեական վարույթին մասնակցող անձանց իրավունքներին ու օրինական շահերի պաշտպանության երաշխիքներին, մանրամասն վերլուծվել են հատուկ պաշտպանության միջոցների էությունը, դրանց արդյունավետ կիրառման կարևորությունը, Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները և ներպետական իրավակարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները:

Նշվածի հաշվառմամբ՝ արձանագրվել է, որ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել Կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 560-Ն որոշման պահանջները գործնականում արդյունավետ կիրառելու ուղղությամբ, միջոցներ ձեռնարկել հատուկ պաշտպանության միջոցների կիրառման ընթացակարգերին առնչվող կարգավորումների շարունակական բարելավման ուղղությամբ՝ հարկ եղած դեպքում դրանց կատարմանը ներգրավելով պետական այլ գերատեսչությունների, և

---

[178] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 265-270, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գործնականում մանրամասն ուսումնասիրման առարկա դարձնել պաշտպանության միջոց կիրառելու մասին միջնորդությունները՝ հաշվի առնելով պաշտպանվող անձի և մեղադրյալի իրավունքների հավասարակշռությունն ապահովելու կարևորությունը:

Առաջարկի կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ Ոստիկանության քրեական ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառում իրականացվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում: Միաժամանակ, Ոստիկանության իրավասու ստորաբաժանմանը տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ հատուկ պաշտպանության միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպքով պատշաճ իրականացնել անհրաժեշտ պաշտպանության միջոցները:

Նույն առաջարկի կապակցությամբ Քննչական կոմիտեից ստացվել է տեղեկություն առ այն, որ Կոմիտեն, հետևողական է մինչդատական վարույթը կարգավորող իրավական ակտերի լավարկման հարցում և ըստ անհրաժեշտության հանդես է գալիս համապատասխան նախաձեռնություններով: Կոմիտեում քննվող քրեական վարույթներով հատուկ պաշտպանության միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունները քննարկվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված դրույթների պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով այդ կապակցությամբ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները:

Պաշտպանը կրկին արձանագրում է, որ քրեական դատավարությանը մասնակցելու անվտանգության երաշխիքներ նախատեսելն ու դրանց արդյունավետ կիրառումն ապահովելը պետության պարտականությունն է: Ընդ որում, խնդիրն արդիական է ոչ միայն նախաքննության ընթացքում, այլև քրեական վարույթը դատարան ուղարկվելու և դատական քննության փուլում: Ավելին, հաճախ տուժողները մտավախություն ունեն, որ վերջնական դատական ակտից կամ անգամ դատապարտված անձի կողմից պատիժը կրելուց հետո ևս իրենք կարող են ունենալ անվտանգության խնդիրներ: Ուստիև, պետությունը պետք է ապահովի անձի իրավունքների պաշտպանության ամբողջական և արդյունավետ համակարգ:

Տարեկան հաղորդման կազմման ընթացքում ՀՀ դատախազությունից և Քննչական կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում 48 քրեական վարույթով 62 անձանց նկատմամբ կիրառվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված պաշտպանական միջոցները:

Ըստ ստացված պարզաբանումների՝ պաշտպանական միջոցները կիրառվել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու, հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելու, մարդու դեմ ուղղված հանցագործությունների, ֆիզիկական ներգործության համակարգչային հափշտակության, հանցավոր կազմակերպություն ստեղծելու, ղեկավարելու, հանցավոր կազմակերպությանը մասնակցելու, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ընտանիքում և կենցաղում բռնության դեպքերով, անձի կյանքի և առողջության, խուլիգանության, շորթման և փողերի լվացման, ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելու, իրացնելու և պահելու, ինչպես նաև զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված

հանցագործությունների դեպքերով քննվող քրեական վարույթներով:

Ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2024 թվականին իրավապահ մարմինների գործունեության վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ հատուկ պաշտպանության միջոցներ կիրառվում են քրեական վարույթների ընդհանուր թվի 1%-ից պակասի դեպքերում: Մասնավորապես, Քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում նախաձեռնվել է 58.085 քրեական վարույթ, հետևաբար հատուկ պաշտպանության միջոց կիրառվել է վարույթների միայն 0,08%-ով: Ընդ որում, վիճակագրության համաձայն՝ վերջին տարիներին նախաձեռնված քրեական վարույթների թիվը յուրաքանչյուր տարի ավելին է նախորդ տարիներից:

Հատուկ պաշտպանության միջոցների կիրառման նման ցածր ցուցանիշը, սակայն չի կարող միանշանակ վկայել անձանց անվտանգությունն ապահովելու անհրաժեշտության դեպքերի նվազ քանակի մասին:

Այս առումով հարկ է ընդգծել, որ Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և ահազանգերի, ինչպես նաև Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում պետական մարմինների կողմից ներկայացված տեղեկությունների ուսումնասիրությունը վկայում է խնդրի շարունակականության մասին:

Միևնույն ժամանակ, բողոքների և ահազանգների ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ քաղաքացիները տեղեկացված չեն իրենց անվտանգության երաշխավորման համար Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այս ինստիտուտի առկայության և դրա կիրառման հնարավորության վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով քաղաքացիները հաճախ նշում են, որ տեղեկացրել են վարույթն իրականացնող քննիչին, որ ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից իրենց կամ իրենց ընտանիքի անդամներին կարող է վտանգ սպառնալ կամ շարունակում է առկա լինել կրկին նույն հանցավոր արարքն իրականացնելու ռիսկը, սակայն վարույթի հանրային մասնակիցների կողմից չեն ձեռնարկվում համապատասխան միջոցներ: Հաճախ անձինք ենթադրյալ լուծումը տեսնում են բացառապես անձի նկատմամբ առավել խիստ խափանման միջոցի կիրառման մեջ:

Այս առումով, Պաշտպանը հարկ է համարում կրկին արձանագրել, որ Քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխի կարգավորումների համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ: Հատուկ պաշտպանության միջոց կիրառելու անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմինը համապատասխան անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ կայացնում է հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշում, որի կատարումն անհապաղ հանձնարարում է իրավասու պետական մարմնին: Կիրառվող հատուկ պաշտպանության միջոցը պետք է համաչափ լինի պաշտպանվող անձին սպառնացող վտանգի բնույթին և հնարավոր հետևանքներին: Ընդ որում, Քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն

իրականացնող քննիչը յուրաքանչյուր դեպքում, երբ ողջամտորեն առկա է վտանգ վարույթի մասնակցի կամ նրա ընտանիքի անդամի կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին, անկախ անձի կողմից դիմում ներկայացնելու հանգամանքից, պետք է քննարկման առարկա դարձնի հատուկ պաշտպանության միջոց կիրառելու հարցը և այդ մասին տեղեկացնի անձին:

2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ վերլուծվել են ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները՝ արդար դատաքննության սկզբունքի պահպանման, հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռության պահպանման և մեղադրյալի արդյունավետ պաշտպանության հնարավորությունները չսահմանափակելու տեսանկյունից: Հաղորդմամբ անդրադարձ է կատարվել նաև ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի՝ «Քրեական վարույթին ներգրավված և քրեական դատավարության մասնակից չհանդիսացող և այլ օրենքներով պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 560-Ն որոշման իրավակարգավորումներին: Մասնավորապես, նշվել է, որ թեև որոշումը բավական մանրամասն կարգավորում է հատուկ պաշտպանության միջոցների կիրառման եղանակները, առանձին պաշտպանության միջոցների վերաբերյալ, սակայն հարկ է նախատեսել առավել մանրամասն կարգավորումներ, այդ թվում՝ միջգերատեսչական համագործակցության տեսանկյունից, օրինակ՝ պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոփոխման դեպքում: Կարևոր է նաև կրկին ընդգծել, որ օրենսդրական կարգավորումներում հատուկ պաշտպանության միջոցի կիրառման անհրաժեշտության և դրանցից մեկի կամ մի քանիսի ընտրության չափանիշներ նախատեսված չեն, և դրա պիտանելիության գնահատումը թողնված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Վերոգրյալ հանգամանքները կարող են հանգեցնել վարույթն իրականացնող մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված գործիքակազմի ոչ լիարժեք գործարկմանը:

Ուստի, նկատի ունենալով, որ ներկայում հատուկ պաշտպանության միջոցները լայնորեն չեն կիրառվում, անհրաժեշտ է ապահովել քրեադատավարական այս ինստիտուտի գործարկման արդյունավետ կառուցակարգի առկայությունը և սահմանել դրանց կիրարկման արդյունավետ և լայն պրակտիկայի ձևավորման երաշխիքներ:

Վերը նշված դիրքորոշումների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է շարունակել գործուն միջոցներ ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, Կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 560-Ն որոշման և վերաբերելի այլ կարգավորումների շարունակական բարելավման և դրանց արդյունավետ կիրառման ուղղությամբ՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

4. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ

Արդար դատաքննության իրավունքը քրեական դատավարության հիմնական և հենասյունային սկզբունքներից մեկն է: Յուրաքանչյուր քրեական վարույթով իրավասու մարմինները պետք է երաշխավորեն լրիվ, օբյեկտիվ և համակողմանի քննության իրականացում: Արդար դատաքննության սկզբունքը պահանջում է նաև, որ քննության ընթացքում պետական իրավասու մարմինները երաշխավորեն վարույթի մասնակիցների իրավունքները: Մեղադրյալի հիմնական իրավունքներից մեկը հակընդդեմ հարցման իրավունքն է, որը երաշխավորված է ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ Եվրոպական դատարանի իրավաբանությամբ:

Ինչպես նախորդ տարիներին, 2023 թվականի ընթացքում ևս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ[179] անդրադարձ է կատարվել նշված իրավունքի էությանը և դրա արդյունավետ կիրառման կարևորությանը: Վերլուծվել են ինչպես Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները, այնպես էլ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները:

Թեև 2023 թվականի ընթացքում նշված հարցին առնչվող բողոքներ Պաշտպանի աշխատակազմում չեն ստացվել, 2024 թվականի ընթացքում ստացված բողոքները ցույց են տվել, որ որոշակի խնդիրներ դեռևս առկա են նշված իրավունքի իրացման դիտանկյունից: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ թեև ընդհանուր առմամբ, վերջին տարիներին այս ոլորտում ձևավորվել է դրական զարգացման միտում, սակայն հակընդդեմ հարցման իրավունքի իրացմանը վերաբերող խնդիրները չեն կորցրել արդիականությունը:

Տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում Դատախազությունից ստացվել են տեղեկություններ առ այն, որ 2024 թվականի ընթացքում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացման չապահովման վերաբերյալ ստացվել է 10 բողոք:

Քննարկվող հարցի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքները հիմնականում վերաբերել են համապատասխան հիմքերի առկայության կամ միջնորդություն ներկայացնելու պարագայում առերեսում չիրականացնելու կամ դրա իրականացումը տևական ժամանակ անհիմն հետաձգելու հարցին: Որոշ դեպքերում բողոք ներկայացրած անձինք պնդել են, որ իրենց նկատմամբ կիրառված խիստ խափանման միջոցը տևական ժամանակ չի փոփոխվում՝ նկատի ունենալով առերեսում իրականացնելու անհրաժեշտությունը: Բողոքներից յուրաքանչյուրի դեպքում Պաշտպանի իրավասության շրջանակներում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ:

Այսպես, ստացված բողոքներից մեկով մեղադրյալը տեղեկացրել է, որ առկա են իր անմեղությունը հաստատող մի շարք փաստեր, որոնք սակայն վարույթն

---

[179] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 270-273, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրականացնող քննիչի կողմից քննարկման առարկա չեն դարձվել: Նշել է, որ միջնորդություններ է ներկայացրել վարույթն իրականացնող քննիչին՝ առերեսում իրականացնելու խնդրանքով, սակայն դրանց կապակցությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել: Միևնույն ժամանակ, ըստ պնդման՝ խափանման միջոցի կիրառման արդյունքում իր նկատմամբ սահմանված սահմանափակումների հետևանքով կրում է գույքային վնաս: Բողոքի քննարկման ընթացքում համապատասխան գրագրություն է իրականացվել ՀՀ գլխավոր դատախազության հետ: Ստացված պարզաբանման համաձայն՝ ձեռնարկվել են միջոցներ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու, այդ թվում նաև վարույթի մասնակիցների կողմից ներկայացված միջնորդությունները քննության առնելու և դրանցում առաջ քաշված պահանջները կատարելու ուղղությամբ:

Հարկ է ընդգծել, որ առերեսման վերաբերյալ բողոքներ են ստացվել նաև տուժողներից և նրանց ներկայացուցիչներից: Օրինակ, բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ քրեական վարույթը նախաձեռնվելուց հետո՝ ավելի քան 20 ամսվա ընթացքում, վարույթն իրականացնող մարմնի կողմից հարցաքննվել են միայն տուժողները, իսկ անհրաժեշտ այլ ապացուցողական և վարութային գործողություններ չեն իրականացվում: Ավելին, ըստ պնդման, ամիսներ առաջ պայմանավորվածություն է ձեռք բերվել վարույթն իրականացնող քննիչի հետ՝ առերեսում իրականացնելու վերաբերյալ, ինչը ևս չի կատարվել: Բողոք ներկայացրած անձը ներկայացրել է նաև իր դիտարկումներն ու իրավական հիմնավորումներն առ այն, որ ողջամիտ ժամկետում լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի նախաքննություն չիրականացնելու հետևանքով վտանգված են տուժողի իրավունքներն ու օրինական շահերը: Նշված դեպքի կապակցությամբ նույնպես համապատասխան գրություն է հասցեագրվել Դատախազություն: Ըստ ստացված պարզաբանման՝ արձանագրվել է, որ նախաքննությունն իրականացվել է անհարկի ձգձգումներով և տևական դադարներով, ուստի քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ հսկող դատախազի կողմից նախաքննություն իրականացնող քննիչին տրվել են անհրաժեշտ վարութային և ապացուցողական գործողություններ կատարելու, անհապաղ նախաքննությունն ակտիվացնելու և սեղմ ժամկետներում քրեական վարույթի ընթացքը լուծելու վերաբերյալ հանձնարարություն:

Հաշվի առնելով, որ ոլորտի խնդիրները դեռևս շարունակում են լինել արդիական, հարկ է կրկին արձանագրել, որ ՄԻԵԴ կայուն նախադեպային պրակտիկան հանգում է այն դիրքորոշմանը, որ մեղադրյալին իր դեմ ցուցմունք տված անձին հարցեր ուղղելու հնարավորություն չընձեռելը դատավարության որևէ փուլում խախտում է նրա արդար դատաքննության իրավունքը:

Թեև հակընդդեմ հարցման իրավունքը հիմնականում իրացվում է դատական վարույթի ընթացքում, նշված իրավունքի իրացման երաշխիքները պետք է ապահովվեն նաև նախաքննության ընթացքում, այդ թվում՝ առերեսման միջոցով: Ընդ որում, անգամ մեղադրյալի ցուցմունք տալուց հրաժարվելն ինքնին չի կարող սահմանափակել նրա առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, երբեմն անհրաժեշտ է երաշխավորել վարույթի մասնակիցների անվտանգությունը կամ գաղտնիությունը, վարութային գործողություններն անհրաժեշտ է իրականացնել՝ ապահովելով պաշտպանական կողմի շահերի համաչափությունը ցուցմունք տվող

վկաների և տուժողների շահերի հետ: Եվրոպական դատարանի դիրքորոշումն այն է, որ անգամ եթե վարույթի մասնակցի նկատմամբ կիրառված է պաշտպանության միջոց կամ նրա տվյալները գաղտնիացված են, վարույթի որևէ փուլում մեղադրյալը կամ նրա փաստաբանը պետք է ունենան հնարավորություն առնվազն անուղղակի եղանակով հարցեր ներկայացնել մեղադրյալի դեմ ցուցմունք տված անձին:

Կարևոր է նաև կրկին արձանագրել, որ Քրեական դատավարության գործող օրենսգրքի կարգավորումներում ամրագրվել է առերեսման ընթացքում պաշտպանի կողմից հարցեր տալու իրավունքը: Մասնավորապես, օրենսգրքի 224-րդ հոդվածով սահմանվում է, որ քննիչի հարցերն ավարտվելուց հետո առերեսվողները, ինչպես նաև փաստաբանը, լիազոր ներկայացուցիչը, պաշտպանը, օրինական ներկայացուցիչը կամ հոգեբանը կարող են հարցեր տալ առերեսվողներին:

2023 թվականի հաղորդմամբ ներկայացված առաջարկների կապակցությամբ պետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ 2024 թվականի ընթացքում համապատասխան հարցումներ են ուղարկվել ՀՀ պետական մարմիններին: Ի պատասխան նշված հարցմանը՝ Քննչական կոմիտեից ստացվել է պարզաբանում առ այն, որ քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործման նպատակով Կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 3-ի որոշմամբ Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) 2024 թվականի վերապատրաստման ծրագրում ներառվել է «Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովումը քրեական դատավարությունում» դասընթացը: Այն ներառում է ՀՀ քրեական դատավարությունում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Դրական գնահատելով թե ձևավորված պրակտիկայի միտումները, թե իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցները, Պաշտպանը կարևոր է համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ անհրաժեշտ է ձևավորել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացման և առերեսման պատշաճ իրականացման միասնական և արդյունավետ պրակտիկա՝ անհարկի հայեցողությամբ չհետաձգելով դրա կատարումը և երաշխավորելով վարութային գործողությունների իրականացումը ողջամիտ ժամկետում, ինչպես նաև ապահովելով կողմերի իրավունքների և դրանց հավասարակշռությունը՝ քրեադատավարական օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին համապատասխան:

5. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ

Խուզարկությանը վերաբերող գործնական խնդիրները մանրամասն վերլուծության են ենթարկվել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին նախորդ տարիների տարեկան հաղորդումներով:

Մասնավորապես, 2023 թվականի տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ անհրաժեշտ է քրեական վարույթի շրջանակում խստագույնս երաշխավորել անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը և բացառել դրա՝ ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը, խուզարկություն քննչական գործողությունն

իրականացնել բացառապես դատարանի որոշմամբ սահմանված ծավալի շրջանակում (դրանով սահմանված հասցեում, որոնել դրանով մատնանշված առարկաներ և այլն), ինչպես նաև խուզարկության ավարտից հետո բացառել սեփականության իրավունքի սահմանափակման այն դեպքերը, երբ հակակշիռ իրավական շահը չունի բացառիկ նշանակություն, և չեն պահպանվում սեփականության իրավունքի սահմանափակման չափանիշները:

Հատկանշական է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ Կոմիտեն հետևողական է քրեական վարույթի շրջանակներում անձի կողմից գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ սահմանադրական բնույթ կրող իրավազորությունները պահպանելու հարցում: Յուրաքանչյուր դիմում-բողոք՝ կապված վերը թվարկված իրավազորությունների սահմանափակման հետ հանգեցնում է քրեական վարույթի ուսումնասիրության, խնդիրն ուշադրության կենտրոնում է պահվում նաև Կոմիտեի վերահսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում:

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում Դատախազությունից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ խուզարկություն քննչական գործողությունը ողջամիտ ժամկետում չիրականացնելու վերաբերյալ 2024 թվականի ընթացքում ստացվել է 4 բողոք, որոնք բավարարվել են, իսկ երկու դեպքով վարույթն իրականացնող քննիչի նկատմամբ միջնորդություն է ներկայացվել ծառայողական քննություն անցկացնելու մասին:

Պաշտպանը ողջունելի է համարում իրավասու մարմնի կողմից անհատական բողոքներով բարձրացված խնդիրների լուծմանն ուղղված պատրաստակամությունն ու հետևողականությունը, սակայն արձանագրում է, որ 2024 թվականի ընթացքում ևս շարունակվել են բողոքներ ստացվել խուզարկություն քննչական գործողության վերաբերյալ:

Պաշտպանի աշխատակազմ կատարված ահազանգերից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ վարույթն իրականացնող քննիչի կողմից իրեն արգելվել է մասնակցել խուզարկությանը, քանի որ խուզարկության կատարումն արդեն սկսված է եղել, իսկ ինքը տվյալ պահին ստանձնած չի եղել անձի իրավունքների պաշտպանությունը: Ուստի, վարույթն իրականացնող մարմինը պատճառաբանել է, որ հնարավոր չէ ընդհատել սկսված քննչական գործողությունը՝ փաստաբանին վարույթին ներգրավելու նպատակով:

Նշված դեպքով վարույթն իրականացնող մարմնի կողմից փաստաբանի մուտքն արգելելը հիմնավորվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ վարութային գործողություններն ամրագրվում են էլեկտրոնային եղանակով կազմված արձանագրությամբ (…), ինչպես նաև 235-րդ հոդվածի 5-րդ մասով, որի համաձայն՝ քննիչն իրավասու է խուզարկության վայրում գտնվող անձանց արգելելու հեռանալու այդ վայրից, հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ, ինչպես նաև թույլ չտալու այլ անձանց մուտքը խուզարկության վայր մինչև խուզարկության ավարտը:

Նման պարագայում վարույթն իրականացնող մարմնի հիմնավորումը խնդրահարույց է մարդու իրավունքների տեսանկյունից, քանի որ խուզարկությունը ցանկացած պարագայում մարդու անձնական կյանքին միջամտող քննչական գործողություն է, ուստի, տվյալ դեպքում առաջանում է խնդիր անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հետ կապված:

Անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխավորված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ ՄԻԵԿ-ով: Այն կարևորվել և բացահայտվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով[180]:

ՄԻԵԴ իրավաբանության համաձայն՝ իրավաբանական օգնության հասանելիությունը կասկածյալին, որպես կանոն, պետք է երաշխավորել այն պահից, երբ նրան առաջադրվել է «քրեական մեղադրանք»՝ Կոնվենցիայով նախատեսված ինքնուրույն իմաստով[181]: Այս կապակցությամբ Դատարանն ընդգծել է, որ անձը 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների կիրառության ենթակա՝ կասկածյալի կարգավիճակը ձեռք է բերում ոչ թե այն պահից, երբ նա պաշտոնապես ստանում է այդ կարգավիճակը, այլ՝ այն պահից, երբ ներպետական իրավասու մարմինները հնարավոր պատճառներ ունեն կասկածելու, որ անձը մասնակից է քրեական իրավախախտմանը[182]: Այսպես, օրինակ, փաստաբանի հասանելիության իրավունքը ծագում է ոչ միայն անձին արգելանքի վերցնելիս կամ հարցաքննելիս[183], այլ կարող է նշանակություն ունենալ նաև դատավարական գործողությունների, օրինակ՝ ճանաչման ընթացակարգերի, դեպքերի վերարտադրման կամ *տեղանքների զննությունների ժամանակ*[184]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ քրեական վարույթի շրջանակում պետք է խստագույնս երաշխավորվի անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը՝ բացառելով դրա հետաձգումը՝ պայմանավորված տեխնիկական խնդիրներով:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ դատարանի որոշմամբ թույլատրվել է խուզարկություն կատարել որոշմամբ նշված հասցեում և փնտրել որոշմամբ նշված նյութեր, փաստաթղթեր և կրիչներ, սակայն խուզարկությունն իրականացվել է այլ հասցեում, որտեղից վերցվել են նաև դատարանի որոշմամբ չնշված առարկաներ:

---

[180] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08, 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշումները:

[181] Տե՛ս Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (SIMEONOVI v. BULGARIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, կետ 110:

[182] Տե՛ս Տրուտենն ընդդեմ Ուկրաինայի (TRUTEN v. UKRAINE) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, կետ 66:

[183] Տե՛ս Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (SIMEONOVI v. BULGARIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, կետ 111, Sîrghi v. Romania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի օգոստոսի 24-ի վճիռը, կետ 44:

[184] Տե՛ս Իբրահիմ Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի (İbrahim Öztürk v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի մայիսի 17-ի վճիռը, կետեր 48-49, Թյուրքն ընդդեմ Թուրքիայի (Türk v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, կետ 47, Մեհմեդ Դուման ընդդեմ Թուրքիայի (Mehmet Duman v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2019 թվականի հունվարի 23-ի վճիռը, կետ 41:

Նշվածի կապակցությամբ Դատախազությունից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ խուզարկությունն իրականացնելուց առաջ տվյալ տանը հաշվառված և բնակվող անձը ծանոթացել է համապատասխան դատական ակտին, հատկապես՝ դրա բովանդակությանը, և դրա հետ կապված որևէ առարկություն կամ հայտարարություն չի ներկայացրել՝ մասնակցելով խուզարկությանը որպես հիշյալ տան բնակիչ և ներկայացնելով հստակ և առարկայական տեղեկատվություն այդ տան բնակիչների բնակության սենյակների և նրանց անձնական իրերի վերաբերյալ:

Հարկ է ընդգծել, որ քննչական տվյալ գործողության պարագայում կարևորագույն նշանակություն ունի այն, թե որոշակիության ինչ աստիճան ունեն քննիչի միջնորդության ու դատարանի որոշման մեջ առկա ձևակերպումները: Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի գործով Վճռաբեկ դատարանը, հղում կատարելով ՄԻԵԴ դիրքորոշումներին, ի թիվս այլնի, նշել է, որ ինչպես խուզարկություն կատարելու համար նախաքննական մարմնի միջնորդությունը, այնպես էլ դատարանի թույլտվության որոշումը պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված: Մասնավորապես, ըստ հիշատակված որոշման, նախաքննական մարմնի որոշման պատճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել խուզարկություն, ինչպիսի առարկաներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված գործողության արդյունքում, դրա կատարման ժամկետը, *այն բնակարանի նույնականացման տվյալները, որտեղ պետք է կատարվի խուզարկությունը, տվյալները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ փնտրվող առարկաները գտնվում են տվյալ բնակարանում*, քննչական գործողության անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար[185]: Ընդ որում, Դատարանը սահմանել է, որ միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշումը պետք է պարունակի նշում խուզարկության կատարման փաստական հիմքերի առկայության մասին, դրանց վերաբերելիության, արժանահավատության և բավարարության մասին հիմնավորումներ, փնտրվող առարկաների՝ գործի համար նշանակության վերաբերյալ հիմնավորումներ, ինչպես նաև հստակ նշում բնակարանի նույնականացման համար անհրաժեշտ տվյալների և փնտրվող առարկաների բնութագրի վերաբերյալ:

Բացի այդ, Պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերից մեկով փաստաբանը հայտնել է, որ Քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում իր գործունեության հասցեում դատարանի կողմից խուզարկություն իրականացնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշում է կայացվել: Փաստաբանը հայտնել է, որ քննիչները պատրաստվում են առգրավել իր համակարգիչը, որն իր մեջ պարունակում է փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքման այց են կատարել խուզարկության իրականացման վայր: Քննչական մարմնի ներկայացուցիչը հայտնել է, որ խուզարկությունը սկսելիս պարզվել է, որ

---

[185] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ին թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշումը:

քննչական գործողության իրականացման հասցեում գործունեություն են ծավալում տարբեր անձինք և ընկերություններ, այդ թվում՝ Պաշտպանի աշխատակազմ ահազանգ ներկայացրած փաստաբանը: Քննչական մարմնի ներկայացուցիչը ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ փաստաբանին առաջարկվել է համակարգչում ցույց տալ որևէ նյութ, սակայն ոչ բովանդակային առումով, որը կփաստի համակարգչում փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկություններ պարունակելը:

Արդյունքում, Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ փաստաբանի համակարգիչը չի առգրավվել:

Հարկ է նշել, որ փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ կամ նյութեր հավաքելու, պահելու կամ օգտագործելու արգելքը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով փաստաբանական գաղտնիքի կարևորությանը, արձանագրել է, որ դրան անհամաչափ միջամտությունը կարող է ազդեցություն ունենալ արդարադատության պատշաճ իրականացման և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների վրա: Դա կարող է բացասաբար ազդել փաստաբանի մասնագիտական հեղինակության վրա՝ ինչպես իր վստահորդների, այնպես էլ ողջ հասարակության շրջանում[186]:

Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել նաև քրեական վարույթի շրջանակում իրականացվող թվային խուզարկությունների կապակցությամբ:

Մասնավորապես, բողոքներից մեկով անձը հայտնել է, որ քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկության արդյունքում իր բջջային հեռախոսը վերցվել է: Ավելի ուշ, դատարանի կողմից թվային խուզարկություն իրականացնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշում է կայացվել, որով թույլատրվել է որոշմամբ նշված ժամանակահատվածում մեկ անգամ թվային խուզարկություն կատարել բջջային հեռախոսում: Քաղաքացին հայտնել է, որ թվային խուզարկությունն իրականացվել է, սակայն բջջային հեռախոսում առկա տեղեկությունը հնարավոր չի եղել արտածել և ներբեռնել, քանի որ այն պաշտպանված է եղել գաղտնաբառով: Դրանից հետո վարույթն ուղարկվել է դատարան, քրեական գործով դատարանի կողմից կայացվել է դատական ակտ, սակայն նախաքննությունն իրականացրած քննչական մարմնի կողմից բջջային հեռախոսը չի վերադարձվել՝ պատճառաբանությամբ, որ հետագայում հնարավոր է ի հայտ գան դրա պարունակությունն ուսումնասիրելու հնարավորություն ընձեռող տեխնիկական միջոցներ:

Վերոգրյալի կապակցությամբ, գրություն է ուղարկվել Դատախազություն և պարզաբանում է ստացվել այն մասին, որ բջջային հեռախոսը քրեական վարույթի շրջանակում քննիչի կողմից պահվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իսկ անհրաժեշտությունը վերանալուց հետո վերադարձվել է քաղաքացուն:

---

[186] Տե՛ս Նիմիցն ընդդեմ Գերմանիայի (Niemietz v. Germany) գործով Եվրոպական դատարանի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 37:

Նման պայմաններում, թեև Պաշտպանի միջամտության արդյունքում խնդիրը ստացել է լուծում, սակայն նման պրակտիկան անձի սեփականության իրավունքի սահմանափակման տեսանկյունից խնդրահարույց է՝ հաշվի առնելով անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը:

Հարկ է ընդգծել, որ անձի սեփականության իրավունքն ամրագրված է և պաշտպանվում է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ ՄԻԵԿ-ով: Սեփականության իրավունքի կարևորությանն անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահն ունենա բացառիկ նշանակություն[187]:

Այսպիսով, նկատի ունենալով խուզարկությանն առնչվող գործնական խնդիրների շարունակականությունը նաև 2024 թվականի ընթացքում՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել ներքոշարադրյալի ուղղությամբ.

- ✓ ***խուզարկություն քննչական գործողությունն իրականացնելիս խստագույնս երաշխավորել անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը՝ բացառելով դրա հետաձգումը՝ պայմանավորված գործողության սկսված լինելով կամ այլ տեխնիկական խնդիրներով,***
- ✓ ***խուզարկությունն իրականացնել բացառապես դատարանի որոշմամբ սահմանված ծավալի շրջանակում (դրանով սահմանված կոնկրետ հասցեում, որոնել դրանով մատնանշված առարկաներ և այլն),***
- ✓ ***խուզարկության ավարտից հետո բացառել սեփականության իրավունքի անհիմն սահմանափակման այն դեպքերը, երբ հակակշիռ իրավական շահը չունի բացառիկ նշանակություն:***

6. Քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրներ

Քրեական վարույթի շրջանակում անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովմանը, սեփականության իրավունքին միջամտության համաչափությանը վերաբերող խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումներով:

2023 թվականի տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանը կարևորել է, որ յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմիններն անձի սեփականության իրավունքը սահմանափակելիս առաջնորդվեն միջազգային չափանիշներով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով՝ առաջնորդվելով պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և

[187] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը:

անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ Կոմիտեն հետևողական է քրեական վարույթի շրջանակներում անձի կողմից գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ սահմանադրական բնույթ կրող իրավազորությունները պահպանելու հարցում, ինչպես նաև հետևողական է, որպեսզի քրեական վարույթի շրջանակներում անձի սեփականության իրավունքի սահմանափակումը լինի օրինական և համաչափ: Ամեն դեպքում քրեական վարույթի շրջանակում իրեղեն ապացույց ճանաչվում է այն գույքը, որը բավարարում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածով նախատեսված իրեղեն ապացույց ճանաչելու նպատակը: Նաև նշվել է, որ յուրաքանչյուր դիմում-բողոք՝ կապված վերը թվարկված իրավազորությունների սահմանափակման հետ, հանգեցնում է քրեական վարույթի ուսումնասիրության, խնդիրն ուշադրության կենտրոնում է պահվում նաև Կոմիտեի վերահսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում:

Պաշտպանը, կրկին կարևորելով անձի սեփականության սահմանադրական և կոնվենցիոն իրավունքը, դրա սահմանափակման միջազգային և ներպետական չափանիշները, արձանագրում է, որ 2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ՝ կապված սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման հետ:

Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ իր պաշտպանյալի ավտոմեքենան վերցվել է արգելանքի, տեղափոխվել է Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք: Փաստաբանը նշել է, որ քրեական վարույթի շրջանակում նշված ավտոմեքենան ենթարկվել է խուզարկության, սակայն չի ճանաչվել իրեղեն ապացույց: Ավելի ուշ, փաստաբանը դիմում է հասցեագրել նախաքննության ընթացքում վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազին՝ ավտոմեքենան վերադարձնելու հարցի քննարկման խնդրանքով: Հավելել է, որ Դատախազությունից իրեն հայտնել են, որ քրեական գործը գտնվում է դատաքննության փուլում և առաջարկել են դիմումը հասցեագրել դատարանին: Դատական նիստի ընթացքում դատարանը, քննության առնելով մեքենան վերադարձնելու հարցը, արձանագրել է, որ այն քրեական գործով ճանաչված չէ իրեղեն ապացույց և ավտոմեքենան վերադարձնելու հարցը դուրս է դատարանի լիազորությունների շրջանակից:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմից համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե, ինչի արդյունքում ավտոմեքենան վերադարձվել է սեփականատիրոջը:

Նշված դեպքում, թեև Պաշտպանի միջամտության արդյունքում խնդիրը ստացել է լուծում, սակայն անհրաժեշտ վարութային գործողություններն ավարտված լինելու և իրեղեն ապացույց ճանաչված չլինելու պարագայում նախաքննությունն

իրականացրած մարմնի կողմից առանց ծանրակշիռ փաստարկներ ներկայացնելու անձի սեփականության իրավունքի սահմանափակումն անընդունելի է:

Ստացված ահազանգերից մեկով տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթներից մեկի շրջանակում ձերբակալված անձանց անձնական խուզարկությամբ վերցվել են անձնական օգտագործման մի շարք իրեր, որոնք որևէ նշանակություն չունեն վարույթով պարզման ենթակա հանգամանքների համար, այդ թվում՝ բնակարանի բանալի, ինչի հետևանքով անձը ձերբակալումից ազատ արձակվելուց հետո զրկված է եղել սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարան մուտք գործելու հնարավորությունից:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում նույն օրն ահազանգ ներկայացրած անձանց վերադարձվել են անձնական խուզարկությամբ վերցված և վարույթով պարզման ենթակա հանգամանքների համար նշանակություն չունեցող իրերը:

Վերոգրյալից բացի, 2024 թվականի մայիս և հունիս ամիսներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են մի շարք բողոքներ և ահազանգներ, այդ թվում՝ փաստաբանների կողմից, առ այն, որ ՀՀ տարածքում իրականացված բողոքների ակցիաների ընթացքում քաղաքացիներին պատկանող տրանսպորտային միջոցները ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից տեղափոխվել են Ոստիկանության Երևան քաղաքի, ինչպես նաև մարզային վարչությունների հատուկ պահպանվող տարածքներ:

Ստացված տեղեկությունների համաձայն՝ քաղաքացիների ավտոմեքենաները տևական ժամանակ գտնվում են Ոստիկանության հատուկ տարածքում և չեն վերադարձվում դրանց սեփականատերերին՝ առանց որևէ իրավական հիմնավորման, ինչպես նաև ավտոմեքենաների՝ Ոստիկանության հատուկ տարածքում լինելը հիմնավորող որևէ փաստաթղթի տրամադրման:

Այնուհետև, Ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ հիշյալ տրանսպորտային միջոցները հատուկ տարածքում պահելը պայմանավորված է քրեական վարույթների առկայությամբ:

Նշվածի հաշվառմամբ Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե՝ տրանսպորտային միջոցների պահման հիմքերը պարզելու և դրանք սեփականատերերին վերադարձնելու հարցը քննարկելու պահանջով: Քննչական կոմիտեից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ տրանսպորտային միջոցները հատուկ պահպանվող տարածքներ են տեղափոխվել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժիններում ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակում, որոնց շրջանակում իրականացվել և իրականացվում են ապացուցողական և վարութային այլ գործողություններ, որոնք ավարտելուց հետո հնարավոր կլինի քննարկել տրանսպորտային միջոցներն օրինական տիրապետողներին վերադարձնելու հարցը:

Դրանից հետո, Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ առ այն, որ քրեական վարույթների շրջանակում ողջամիտ ժամկետում չեն իրականացվում ավտոմեքենաների հետ կապված անհրաժեշտ վարութային գործողությունները և դրանք չեն վերադարձվում սեփականատերերին: Ավելին, ըստ ստացված տեղեկության՝ վարութային գործողությունների իրականացված լինելու

պարագայում անգամ ավտոմեքենաները շարունակում են պահվել Ոստիկանության հատուկ տարածքում: Նշվածի կապակցությամբ Քննչական կոմիտե ուղարկված լրացուցիչ հարցմանն ի պատասխան՝ ստացվել են տեղեկություններ այն մասին որոշ տրանսպորտային միջոցներ վերադարձվել են, իսկ որոշները նույնաբովանդակ պատճառաբանությամբ շարունակվում են պահվել:

Պաշտպանը խիստ մտահոգիչ և անընդունելի է համարում ամիսներ շարունակ անձանց սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակումը՝ անհրաժեշտ ապացուցողական գործողություններ կատարելու պատճառաբանությամբ: Հարկ է կրկին ընդգծել, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Սեփականության իրավունքի սահմանափակման կապակցությամբ կայուն նախադեպային իրավունք է ձևավորել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, արտահայտելով իրավական դիրքորոշումներ առ այն, որ. «(…) գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն(…)[188], (…)անձի սեփականության իրավունքը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև պետության պարտականությունը՝ սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգություններից(…)[189]: (…) Համաչափության սկզբունքը պետք է ապահովվի ոչ միայն անձի իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելիս, այլ նաև դրա աստիճանը որոշելիս: Վերջինս արտահայտվում է իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավազորություններից որևէ մեկը կամ բոլորը սահմանափակելու հարցի որոշմամբ (…)[190], (…) անձի սեփականության իրավունքի համաչափ սահմանափակման տեսանկյունից կարևոր օրենսդրական պահանջ է նաև գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ արգելադրման ենթակա գույքի և դրա արժեքի հստակեցումը, ինչն իր հերթին պետք է հիմնավորված լինի այդ հարկադրանքի միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակներով, լինի որոշակի և հստակ՝ ապահովելով հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռությունը (…)[191]»:

---

[188] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը:
[189] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0326/01/09 որոշումը:
[190] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշումը:
[191] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0587/11/18 որոշումը:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրման համար սահմանված են բարձր, այդ թվում՝ դատական երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմիններն անձի սեփականության իրավունքը սահմանափակելիս պարտավոր են առաջնորդվել միջազգային չափանիշներով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով՝ առաջնորդվելով պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությամբ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իրեն պատկանող ընկերության դրամական միջոցները վարույթի շրջանակում փաստացի արգելադրվել են և չեն վերադարձվում, մինչդեռ այն չի կատարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ գույքի արգելադրման ինստիտուտը: Նշվածին ի պատասխան, Գլխավոր դատախազությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ անձին պատկանող ընկերության դրամական միջոցները վերադարձնելու հարցին հնարավոր է անդրադարձ կատարել միայն անձի արարքում քրեական օրենսդրությամբ հանցակազմի բացակայության պայմաններում:

Նշվածից բացի, 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների վերլուծությամբ պարզ է դառնում, որ շարունակում է արդիական մնալ անձին պատկանող գույքն իրեղեն ապացույց ճանաչելու միջոցով դրա նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները սահմանափակելու խնդիրը:

Այս առումով Պաշտպանը կրկին հարկ է համարում արձանագրել, որ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու և գույքի արգելադրման հիմքերը նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ՝ գույքի արգելադրման ինստիտուտը կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը, մինչդեռ, գույքն իրեղեն ապացույց ճանաչելով՝ իրացվում են քրեադատավարական այլ նպատակներ: Մասնավորապես, իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝ գույքը, որն իր վրա կրում է հանցագործության հետքեր կամ ինքնին կարող է ծառայել ապացուցման գործընթացում որոշակի հանգամանքներ պարզելու համար:

Այդուհանդերձ, նույնիսկ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է մի շարք դեպքերում իրեղեն ապացույց ճանաչված իրն օրինական տիրապետողի պահպանմանը վերադարձնելու հնարավորություն, եթե դա չի կարող վնասել պատշաճ ապացուցմանը: Մինչդեռ, ըստ ստացված բողոքների, նշված հնարավորությունը, երբեմն, նույնիսկ քննարկման առարկա չի դարձվում:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ իրեղեն ապացույց ճանաչված առարկայի մեծածավալության դեպքում այն համապատասխան անձանց պատասխանատու պահպանմանը հանձնելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ելնի պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունից:

Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովվեն համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ: Իրեղեն ապացույց ճանաչված մեծածավալ գույքի դեպքում, եթե ողջամտորեն բացառվում է դրա առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը: Վերջին պահանջից բխում է նաև սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը վերոհիշյալ գույքը չթողնելու պարագայում պատշաճ հիմնավորում ներկայացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, որպիսի դեպքում միայն կապահովվի սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունն անձի կողմից վիճարկելու, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից այն գնահատելու հնարավորությունը[192]:

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում Դատախազությունից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ սեփականություն հանդիսացող գույքն իրեղեն ապացույց ճանաչելու իրավաչափության կամ անհրաժեշտ վարութային գործողությունները չկատարելու կամ դրանց ավարտից հետո գույքը սեփականատիրոջը տևական ժամանակ չվերադարձնելու վերաբերյալ 2024 թվականի ընթացքում ստացվել է 67 բողոք, որոնցից 37-ը բավարարվել է հսկող դատախազի կողմից, 1-ը բավարարվել է մասնակիորեն, 27-ը մերժվել է, 2-ը տվյալ պահի դրությամբ գտնվել է քննարկման փուլում:

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանը կրկին արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում գույքն իրեղեն ապացույց ճանաչելուց հետո անհրաժեշտ է, որպեսզի վարույթն իրականացնող մարմնի կողմից դրա հետագա տնօրինման հարցը պարբերաբար պատշաճ քննարկման առարկա դարձվի՝ հաշվի առնելով վերաբերելի չափանիշներով սահմանված մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ գույքը տիրապետողի անձը, ընտանեկան և ֆինանսական դրությունը, ինչպես նաև ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը և այլն: Հարկ է նշել, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը քրեական վարույթի որոշակի փուլում կարող է լինել օրինական և հետապնդել իրավաչափ նպատակ, սակայն վարույթի մասնակցի սեփականության իրավունքի սահմանափակման տևողությունը ևս պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին:

Նկատի ունենալով, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրված խնդիրները շարունակում են արդիական լինել՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

---

[192] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշումը:

- ✓ ***միջոցներ ձեռնարկել բացառելու գույքի արգելադրման քողարկված նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գույքն իրեղեն ապացույց ճանաչելու, վարույթի շրջանակում օրենքով չնախատեսված եղանակով անձի սեփականության իրավունքի սահմանափակման դեպքերը՝ զերծ մնալով անձի սեփականության իրավունքին՝ միջազգային և ներպետական չափանիշներին չհամապատասխանող ոչ իրավաչափ միջամտությունից,***
- ✓ ***ցուցաբերել բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ անձի սեփականություն հանդիսացող գույքի հետ կապված քննչական և վարութային այլ գործողությունները հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու և գույքը, այդ թվում՝ վերցված իրերն ու առարկաները, պատշաճ ապացուցմանը չվնասելու պարագայում սեփականատիրոջը վերադարձնելու ուղղությամբ,***
- ✓ ***քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված՝ իրեղեն ապացույցները վարույթի նյութերի հետ պահելու ընդհանուր կանոնից բացառության առկայության դեպքում քննարկման առարկա դարձնել այն սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը՝ հակառակ պարագայում ներկայացնելով պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխանող հիմնավորումներ:***

7. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան

Քրեական արդարադատության շղթայի համատեքստում ամենակարևոր և խնդրահարույց հարցերից մեկը շարունակում են մնալ խափանման միջոցների, հատկապես դրանցից ամենախիստ տեսակի՝ կալանքի կիրառման հարցերը, քանի որ այն ենթադրում է անձի իրավունքների և ազատությունների անհամեմատ մեծ սահմանափակում:

Պաշտպանի աշխատակազմում 2024 թվականի ընթացքում շարունակվել են ստացվել բազմաթիվ բողոքներ և ահազանգներ՝ կապված կալանքի կիրառման հետ, ինչը վկայում է, որ խնդիրը դեռևս արդիական է մնում: Ինչպես նախորդ տարիներին՝ բողոք ներկայացրած անձանց կողմից բարձրացված խնդիրները վերաբերել են կալանքի հիմնավորվածությանը, իրավաչափությանը, անհրաժեշտությանն ու համաչափությանը, ինչպես նաև հիմքերի բացակայության պայմաններում կալանքի պարբերաբար երկարաձգմանը: Կալանքի շարունակականությանը վերաբերող մեկ այլ խնդիր վերաբերում է տևական ժամանակ ազատությունից զրկման ընթացքում մեղադրյալի մասնակցությամբ վարութային գործողություններ չկատարելուն կամ ներկայացված միջնորդությունները մերժելուն:

Նշվածի համատեքստում հարկ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմում ստացված մի շարք բողոքներ վերաբերել են վարույթի քննության ողջամիտ ժամկետները չպահպանելուն՝ հատկապես դատական քննության փուլում գտնվող գործերով: Մասնավորապես, բողոքների վերլուծությամբ արձանագրվել է բացասական միտում, երբ դատական նիստերի պարբերաբար հետաձգմամբ պայմանավորված (կալանավորված անձին դատական նիստին ուղեկցելու անհնարինություն, վարույթի մասնակիցների կողմից դատական նիստին չներկայանալ և այլն)՝ անձանց նկատմամբ շարունակաբար երկարաձգվել է կիրառված կալանքի ժամկետը: Պաշտպանին նման բողոքներ են ներկայացվել նաև ազատությունից զրկման վայրեր իրականացրած այցերի շրջանակներում:

Թեև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված՝ դատական վարույթին միջամտելու արգելքով պայմանավորած՝ Պաշտպանը չի քննարկում կոնկրետ գործով դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց մեղադրյալի նկատմամբ կիրառելու որոշման վերաբերյալ անհատական բողոքները, սակայն, նկատի ունենալով այն, որ նշված խափանման միջոցն ամենալուրջ միջամտությունն է ենթադրում անձի անձնական ազատության իրավունքին, և հաշվի առնելով կալանքի կիրառելիության դինամիկան և համակարգային հարցերի արդիականությունը՝ դրանք շարունակում են գտնվել Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Այս ոլորտում պրակտիկայի ամփոփման նպատակով Պաշտպանի աշխատակազմում յուրաքանչյուր տարի պատասխանատու մարմիններից վիճակագրական տվյալներ են ստացվում կալանքի կիրառելիության վերաբերյալ:

Այսպես, ըստ Դատախազությունից ստացված տվյալների՝ 2024 թվականի ընթացքում դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 3243 միջնորդություն, որոնցից բավարարվել է 2517-ը, մասնակի է բավարարվել 432-ը, մերժվել՝ 294-ը: Այսինքն՝ բավարարվել կամ մասնակի է բավարարվել ներկայացված միջնորդությունների 90.93%-ը:

Ըստ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտից ստացված տեղեկատվության՝ 2024 թվականի ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարաններ ներկայացված թվով 3718 միջնորդություններից՝ բավարարվել է 2577-ը, մասնակի է բավարարվել՝ 664-ը, մերժվել է 423-ը, իսկ 54 միջնորդության կապակցությամբ ըստ էության որոշումներ չեն կայացվել:

Հաշվի առնելով Դատական դեպարտամենտի և Դատախազության կողմից վերը ներկայացված վիճակագրական տվյալների որոշակի անհամապատասխանությունը, ինչպես նաև նկատի ունենալով, որ նախորդ տարեկան հաղորդումներում հիմք են ընդունվել ՀՀ դատախազության ներկայացրած թվային տվյալները՝ ստորև ներկայացվող վիճակագրության համեմատական վերլուծությունն իրականացվել է ՀՀ դատախազությունից ստացված տեղեկատվության հիման վրա:

Կալանքի կիրառման պրակտիկայի միտումը վերլուծելու համար հարկ է նշել, որ ըստ Դատախազությունից ստացված տեղեկությունների՝ քրեական վարույթի շրջանակներում դատարանի կողմից բավարարվել է 2018 թվականի ընթացքում ներկայացված միջնորդությունների 96.4%-ը, 2019 թվականին՝ 90.8%-ը, 2020 թվականին՝ 84.3 %-ը, 2021 թվականին՝ 80.28%-ը, 2022 թվականին՝ 80.36%, 2023 թվականին՝ 82.12%-ը: Նշվածը վկայում է, որ միջնորդությունների բավարարման կամ մասնակի բավարարման առումով տոկոսային աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 8.75%:



Վիճակագրության վերլուծությունը վկայում է նաև այն մասին, որ ներկայացված միջնորդությունների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 15.74%-ով: Պատկերն ամբողջական դարձնելու համար նշենք, որ 2023 թվականին ընդհանուր առմամբ նախաձեռնվել են թվով 51760, իսկ 2024 թվականին՝ 58895 քրեական վարույթներ, այսինքն՝ նախաձեռնված վարույթների քանակը աճել է 13.78%-ով:

Ընդ որում, կալանքի կիրառման պրակտիկան մտահոգիչ է հատկապես այն լույսի ներքո, որ գործող օրենսդրությամբ նախատեսված է այլընտրանքային միջոցների լայն շրջանակ: Հարկ է ընդգծել, որ օրենսդրությունը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն է ընձեռում այլընտրանքային խափանման միջոցները կիրառել ինչպես առանձին, այնպես էլ համակցված: Այսինքն՝ օրենսդրության հիմքում դրված է այն գաղափարը, որ անգամ մի քանի այլ բնույթի սահմանափակումների կիրառումը՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծը ապահովելու նպատակով, առավել նախընտրելի է, քան վերջինիս ազատության սահմանափակումն ամենախիստ եղանակով:

Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2024 թվականին դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին 210 միջնորդություն, որոնցից բավարարվել է 185-ը, մերժվել՝ 25-ը, իսկ 429 դեպքով դատարանի կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի բավարարելու արդյունքում կիրառվել է տնային կալանք տեսակի խափանման միջոց:

Նույն ժամանակահատվածում դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ վարչական հսկողությունը որպես խափանման միջոց ընտրելու մասին 48 միջնորդություն, որոնցից բավարարվել է 45-ը, մերժվել՝ 3-ը, իսկ 136 դեպքով՝ դատարանի կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի բավարարելու արդյունքում կիրառվել է վարչական հսկողություն տեսակի խափանման միջոց:

Դատախազությունից ստացված տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում նախաձեռնվել է թիվ 58895 քրեական վարույթ:



Տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Արդարադատության նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվում է 2686 ազատազրկված անձ, որից 1401-ը կալանավորված անձինք են, այսինքն՝ ազատությունից զրկված անձանց 52.15%-ը: 2023 թվականին կալանավորված անձինք կազմել են քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 53.29%-ը: Ստացվում է, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական հաստատություններում գտնվող անձանց կեսից ավելին կալանավորված անձինք են:

Այս ցուցանիշը մտահոգիչ է, հատկապես այլ երկրների փորձի հետ համեմատությամբ: Այսպես, Համաշխարհային բանտային ամփոփագրում առկա տվյալների համաձայն՝ օրինակ՝ Վրաստանի Հանրապետությունում 2025 թվականի հունվարի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր պահվող



անձանցից միայն 19.8%-ն են կալանավորված անձինք[193]: Եթե համեմատական անցկացնենք բնակչության թվով ՀՀ-ին մոտ եվրոպական երկրների հետ, ապա պետք է փաստել, որ 2024 թվականի հունվար ամսվա դրությամբ Լիտվայում ազատությունից զրկված անձանց թիվը կազմել է 4 955, որից ընդամենը 11.8%-ն են եղել կալանավորված անձինք[194]: Ֆրանսիայում կալանավորված անձինք կազմում են ազատությունից զրկված անձանց 31.2%-ը, Գերմանիայում՝ 20,8%, Մեծ Բրիտանիայում՝ 20.3%, Իտալիայում՝ 24.4%[195]:

Պաշտպանի՝ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ մանրամասն վերլուծվել են խափանման միջոց կալանքի վերաբերյալ ինչպես ներպետական իրավակարգավորումները, այնպես էլ միջազգային չափանիշները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները[196]:

Մասնավորապես, քննարկվող հարցի առնչությամբ Պաշտպանը մտահոգիչ է համարել այլընտրանքային խափանման միջոցների համեմատությամբ նշված խափանման միջոցի կիրառման լայն տարածում ունեցող պրակտիկան և ընդգծել, որ անհրաժեշտ է համակարգային քայլեր ձեռնարկել օրենսդրական կառուցակարգերի լիարժեք կենսագործման, նվազագույնի սկզբունքով առաջնորդվելու և կալանք խափանման միջոցի՝ որպես բացառիկ միջոց կիրառելու, կալանքի շարունակականության պրակտիկան միջազգային և ներպետական դատական ատյանների չափանիշներին համահունչ դարձնելու, հիմնավոր և բավարար հիմքերի բացակայության պայմաններում կալանքի կիրառման դեպքերը բացառելու և կալանքի տակ գտնվող անձանց մասնակցությամբ քրեական վարույթներն

---

[193] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/georgia հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[194] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/lithuania հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[195] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/france, https://www.prisonstudies.org/country/germany, https://www.prisonstudies.org/country/united-kingdom-england-wales, https://www.prisonstudies.org/country/italy հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[196] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 287-300, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

առաջնահերթ քննելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն դրսևորելու նպատակով:

Նշված առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից պարզաբանում է ստացվել այն մասին, որ Քննչական կոմիտեն հետևողական է մինչդատական վարույթի ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված իրավաչափության առանձնահատկությունների և կալանքի տակ պահելու ժամկետների պահպանման հարցում:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկությունների՝ 2024 թվականի առաջին կիսամյակի ընթացքում 1.605 միջնորդություն է ներկայացվել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոցը կիրառելու մասին, որից 1.255-ը բավարարվել է ամբողջությամբ, 227-ը՝ մասնակի, իսկ 123-ը՝ մերժվել է: Նշված 1.605 կալանքի միջնորդությունից 473-ը եղել է ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ (պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը) և 462-րդ (վարժական հավաքից խուսափելը) հոդվածներով քրեական հետապնդման ենթարկված մեղադրյալների վերաբերյալ: Դրանցից 469-ը բավարարվել է ամբողջությամբ, 1-ը՝ մասնակի, իսկ 3-ը՝ մերժվել:

Այդուհանդերձ, հաշվի առնելով կալանք խափանման միջոցի լայն կիրառումը՝ հարկ է կրկին ընդգծել, որ ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ և Քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված է այն սկզբունքը, որ անձի ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը կարող են սահմանափակվել միայն *բացառիկ դեպքերում* և օրենքով նախատեսված հիմքերի առկայության պարագայում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2006)2 բանտային եվրոպական կանոններում, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» բանաձևում, Եվրոպական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի հանձնարարականում, «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններում, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումներում բազմիցս ընդգծվել է, որ անձին ազատությունից զրկելը պետք է հանդիսանա *վերջին՝ բացառիկ միջոց:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները
- ներպետական իշխանությունները, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս, պետք է փնտրեն նաև այլընտրանքային միջոցներ, որոնք թույլ կտան ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը[197], - կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը[198], - կալանքի՝ որպես խիստ միջոցի կիրառումը կարող է արդարացվել, երբ այլ՝ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը կարող է պահանջել, որ անձը կալանավորվի[199]:

ՀՀ սահմանադրական դատարանը ևս իր 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ ընդգծել է, որ կալանքը որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio), միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա: Հաշվի առնելով անձի անձնական ազատության իրավունքին կալանավորման առավել ինտենսիվ միջամտող բնույթը, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում այն ընտրելուց առաջ պարտավոր է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հիմնավորված կերպով բացառել մնացած բոլոր, ավելի մեղմ խափանման միջոցների ընտրության հնարավորությունը[200]:

Նվազագույնի սկզբունքն ընկած է նաև ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի համապատասխան կարգավորումների հիմքում և երաշխավորվում է կալանք խափանման միջոցի կիրառման իրավաչափության լրացուցիչ պայմանների նախատեսմամբ: Ուստի բոլոր այն դեպքերում, երբ առավել մեղմ խափանման միջոցի ընտրությամբ հնարավոր կլինի ապահովել մեղադրյալի օրինական վարքագիծը քրեական վարույթի ընթացքում, նրա նկատմամբ չպետք է կիրառվի առավել խիստ խափանման միջոց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկան սահմանում է հինգ հստակ հիմք նախնական կալանքի համար. դրանք են՝ փախուստի վտանգը, քննությանը խոչընդոտելու ռիսկը, հետագա իրավախախտում կատարելու ռիսկը, ազատ արձակվելու դեպքում հանրային անկարգություններ առաջացնելու վտանգը, կալանավորին պաշտպանելու

---

[197] Տե՛ս Idalov v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 140-րդ կետ:

[198] Տե՛ս, mutatis mutandis, Sahin Alpay v. Turkey գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:

[199] Տե՛ս, mutatis mutandis, Djundiks v. Latvia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, 89-րդ կետ:

[200] Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշումը, 7.2-7.4-րդ կետեր:

անհրաժեշտությունը[201]: Ընդ որում, ինչպես Եվրոպական դատարանը, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում փաստել են, որ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է չունենան ընդհանուր կամ վերացական բնույթ և պետք է գնահատվեն համակցության մեջ[202]:

Միջազգային իրավական փաստաթղթերում ընդգծված մեկ այլ կարևոր սկզբունք, որն իր ամրագրումն է գտել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ կալանքի վերաբերյալ որոշումների պարբերական վերանայման անհրաժեշտությունն է ինչպես քրեական վարույթի քննության մինչդատական, այնպես էլ դատական փուլում:

Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված առաջարկների կապակցությամբ պետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտից ստացվել է տեղեկություն առ այն, որ կալանքի գործերով միջնորդությունների քննության առաջնահերթության պահանջը նախատեսվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի «Մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում ներկայացված միջնորդությունները, բողոքները և օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների հերթապահության կարգը սահմանելու և Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 26-ի թիվ ԲԴԽ-29-Ո-67 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԲԴԽ-84-Ո-169 որոշմամբ, որի համաձայն՝ մինչդատական վարույթ իրականացնող մարմինների կողմից ներկայացված միջնորդությունները ենթակա են անհապաղ քննության, որը ապահովելու նպատակով տվյալ դատարանի նախագահի կողմից կազմվում է միջնորդությունները քննող դատավորների հերթապահության ժամանակացույց:

Կալանքի շարունակականության հիմնախնդրի համատեքստում հարկ է ընդգծել, որ ինչպես Քրեական դատավարության օրենսգրքի դրույթներում, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներով ամրագրված է կալանքի ժամկետը երկարաձգելու հարցը քննարկելիս ինչպես տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը, այնպես էլ վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը (due diligence) դատարանի առջև հիմնավորելու պահանջը[203]:

---

[201]Տե՛ս Բուզաջին ընդդեմ Մոլդովայի (Buzadji v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը գանգատ թիվ 23755/07 կետ 88:

[202] Տե՛ս Քլութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12718/87, կետ 44, ՀՀ վճռաբեկ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի ԵԴ/0548/06/19 որոշումը, կետ 15.1:

[203]Տե՛ս օրինակ Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 7064/05, 73-րդ կետ, Լաբիտան ընդեմ Իտալիայի (Labita v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/95, 152-153-րդ կետեր, Աբդոելլան ընդդեմ Նիդերլանդների (Abdoella v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1992 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 12728/87, կետ 24, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v. Russia) գործով Մարդու

Նույն դիրքորոշումն արտահայտել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, նշելով, որ կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյո՞ք բավարար չափով հիմնավորված է տվյալ գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների «պատշաճ ջանասիրությունը» և դրա հիման վրա բավարար փաստերի ներքո նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը[204]:

Վերոգրյալ բոլոր սկզբունքներն ու չափանիշները, ըստ էության, միտված են հնարավորինս նվազեցնել վերջնական դատավճռի բացակայության պայմաններում անձին ազատությունից անհարկի զրկելու դեպքերը կամ դրա անհրաժեշտության պայմաններում ապահովել ազատության սահմանափակման առավելագույն սեղմ ժամկետ:

Այս առումով, Քրեական դատավարության օրենսգրքում դրսևորվել է առաջադիմական մոտեցում և մանրամասն կարգավորվել են անձին կալանքի տակ պահելու ընդհանուր, ինչպես նաև մինչդատական վարույթում անձին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքների և ահազանգերի վերլուծությունը վկայում է, որ որոշ դեպքերում անձը տարիներ շարունակ գտնվում է անազատության մեջ՝ դեռևս մինչդատական վարույթի ժամանակահատվածում: Օրենսդրությամբ դատական քննության փուլում խափանման միջոցի վերանայման համար նախատեսված է առավել երկար ժամկետ, ինչպես նաև առկա չէ դատարանի վարույթում քննվող քրեական գործի շրջանակում կալանքի կիրառման առավելագույն ժամկետ սահմանող կարգավորում: Առկա միակ կարգավորումը սահմանում է, որ կալանքի տակ պահելու ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել մեղադրյալին վերագրվող հանցանքի համար նախատեսված՝ ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը:

Նշված պայմաններում, ելնելով նաև այլ հանգամանքներից, ինչպիսիք են, օրինակ՝ դատական նիստերի պարբերաբար ձգձգումը, դատական քննության տևական ընթացքը, կարող է ստեղծվել իրավիճակ, երբ անձը տևական ժամանակ՝ անգամ տարիներ շարունակ, պահվի անազատության մեջ: Նշված խնդիրն առավել արտահայտված է այն դեպքերում, երբ քրեական գործով դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել նախքան Քրեական դատավարության գործող օրենսգրքի ուժի մեջ մտնելը և դատական քննության փուլում կիրառվում են նախորդ օրենսգրքի իրավակարգավորումները:

Պաշտպանը, չմիջամտելով դատարանների գործունեությանը, հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ անձը տևական ժամանակ գտնվում է անազատության մեջ, վարույթն իրականացնող դատարանը պետք է ձեռնարկի հնարավոր և առաջնահերթ միջոցներ գործի քննությունը ողջամիտ և հնարավորին սեղմ ժամկետներում իրականացնելու նպատակով:

Նշվածի համատեքստում հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 18-ին Լ.Վարդանյանի և Զ.Այվազյանի վերաբերյալ կայացված որոշմամբ ընդգծել է, որ դատարանների կողմից գործերի քննության ժամանակ,

---

իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 132:

[204] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը:

առաջնային կարող են ուշադրության արժանանալ այն գործերը, որոնցով «անձինք գտնվում են կալանքի տակ (հատուկ ուշադրության են արժանի ավելի երկար ժամանակահատված կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ գործերը)»[205]:

Այս առնչությամբ, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտից ստացվել է տեղեկություն առ այն, որ դատական գործերի քննության առաջնահերթության պահպանման տեսանկյունից Դատական դեպարտամենտը՝ իր կանոնադրական լիազորությունների շրջանակներում, իրականացնում է դատական գործերի քննության տևողության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և տրամադրման ապահովումը:

Հաշվի առնելով այլընտրանքային խափանման միջոցների համեմատությամբ կալանք խափանման միջոցի կիրառման բացասական դինամիկան՝ Պաշտպանը մտահոգիչ է համարում նշված խափանման միջոցի կիրառման լայն տարածում ունեցող պրակտիկան և վերահաստատում իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է համակարգային քայլեր ձեռնարկել օրենսդրական կառուցակարգերի լիարժեք կենսագործման, նվազագույնի սկզբունքով առաջնորդվելու և կալանք խափանման միջոցի՝ որպես բացառիկ միջոց կիրառելու, կալանքի շարունակականության պրակտիկան միջազգային և ներպետական դատական ատյանների չափանիշներին համահունչ դարձնելու, հիմնավոր և բավարար հիմքերի բացակայության պայմաններում կալանքի կիրառման դեպքերը բացառելու և կալանքի տակ գտնվող անձանց մասնակցությամբ քրեական վարույթներն առաջնահերթ քննելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն դրսևորելու նպատակով:

8. Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներով մանրամասն անդրադարձել է քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներին: Հաղորդումներով մանրամասն ներկայացվել են ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև միջազգային չափանիշներն ու նախադեպային իրավունքը:

2023 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը, օրենսդրական կարգավորումների, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և միջազգային չափանիշների հաշվառմամբ՝ արձանագրել է, որ անհրաժեշտ է հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձին և շահագրգիռ մյուս սուբյեկտներին, այդ թվում՝ տուժողին, բավարար ժամանակ տրամադրել քրեական վարույթի նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու համար՝ հաշվի առնելով գործի առանձնահատկությունները և ծավալը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել Եվրոպական դատարանի չափանիշների և ներպետական օրենսդրության խստագույնս պահպանման ուղղությամբ՝ բացառելով վարույթին ներգրավված անձանց հասանելի փաստաթղթերն (այդ թվում՝ հասկանալի լեզվով, այն

---

[205] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0016/01/14 որոշումը, կետ 20:

պարագայում, երբ վարույթին ներգրավված անձը չի տիրապետում հայերենին) առանց բավարար և պատշաճ հիմնավորման չտրամադրելու դեպքերը:

Նշված առաջարկի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեից պարզաբանում է ստացվել այն մասին, որ կոմիտեն հետևողական է հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձին և շահագրգիռ մյուս սուբյեկտներին, այդ թվում՝ տուժողին քրեական վարույթի նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու համար բավարար ժամանակ տրամադրելու հարցում:

Այդուհանդերձ, 2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ՝ կապված քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետների և կարգի հետ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ վարույթն իրականացնող քննիչն իր փաստաբանների էլեկտրոնային փոստին ուղարկել է նույն օրը վարույթն իրականացնող մարմին ներկայանալու և քրեական վարույթի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ծանուցումներ: Մինչդեռ, գործող օրենսդրության համաձայն՝ ծանուցագիրը հանձնվում է վարութային գործողությունից առնվազն երկու օր առաջ: Բացի այդ, բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ ավելի վաղ վարույթն իրականացնող քննիչն իրեն տրամադրել է հսկող դատախազի կողմից նախկինում կայացված հանրային քրեական հետապնդումը կասեցնելու մասին երեք որոշումներ:

Բողոք ներկայացրած անձի հայտնած հանգամանքների կապակցությամբ Դատախազությունից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ մեղադրյալին մեղադրանքը ներկայացվելուց հետո վերջինը և պաշտպանները հրաժարվել են մասնակցել որևէ գործողության և հեռացել քննչական մարմնից: Այնուհետև քննիչի կողմից մեղադրյալին հարցաքննելու պահանջ ներկայացնելուց հետո ներկայացել է միայն մեղադրյալը՝ հրաժարվելով ցուցմունք տալ: Այդ պայմաններում, հաշվի առնելով, որ մեղադրյալն ու պաշտպանները հրաժարվել են ներկայանալ որևէ քննչական գործողության՝ քննիչը նախաքննության ավարտի մասին գրավոր ծանուցել է պաշտպաններին էլեկտրոնային փոստի միջոցով՝ նշելով գործի նյութերին ծանոթանալու օրվա և ժամի մասին: Դրանից հետո, հաշվի առնելով, որ պաշտպանները չեն արձագանքել՝ քննիչի կողմից մեղադրյալին նախաքննության ավարտ է հայտնվել նույն օրը՝ առաջարկելով ծանոթանալ քրեական վարույթի նյութերին, սակայն վերջինը հրաժարվել է՝ հայտնելով, որ իր պաշտպանները պատրաստվում են բացարկ հայտնել քննիչին: Ըստ ստացված պարզաբանման՝ այնուհետև քննիչի կողմից լրացուցիչ գրություն է ուղարկվել պաշտպաններին՝ էլեկտրոնային փոստի միջոցով, որով առաջարկվել է 3-օրյա ժամկետում ծանոթանալ քրեական վարույթի նյութերին:

Նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող քննիչի կողմից որոշ դատավարական ակտեր օրենքով սահմանված ժամկետից ուշ տրամադրելու կապակցությամբ Դատախազությունից ստացվել է պատասխան այն մասին, որ չնայած մեղադրյալը դրանք ստացել է ուշացումով, սակայն փաստացի դրանք բողոքարկելու հնարավորությունից զրկված չի եղել և իրացրել է իր բողոքարկման իրավունքը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նկատել, որ թեև վարութային ակտի բողոքարկման ժամկետը սկսում է հոսել այն անձին հասանելի դառնալու պահից, սակայն կարող է ստեղծվել մի իրավիճակ երբ նշված վարութային ակտն անձին ուշ

տրամադրվելու արդյունքում դրա բողոքարկումը դառնա առարկայազուրկ և ժամանակավրեպ: Ուստի, Պաշտպանը կարևոր է համարում, որպեսզի քրեական վարույթի շրջանակում մեղադրյալին հասանելի փաստաթղթերը նրան տրամադրվեն հնարավորինս սեղմ ժամկետում, քանի որ դրանց տրամադրումն անհրաժեշտ է վարույթի քննության կոնկրետ փուլում դիրքորոշում հայտնելու, այդ թվում՝ իր բողոքարկման իրավունքն իրացնելու համար:

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում քննարկվող հարցի վերաբերյալ Դատախազությունից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ 2024 թվականի ընթացքում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում ստացվել է քրեական վարույթի նյութերին ծանոթանալու համար բավարար ժամանակ չտրամադրելու վերաբերյալ 3 բողոք, որոնցից 1-ը բավարարվել է, 2-ը՝ մերժվել:

Վերը նշվածից բացի, 2024 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել օտարերկրյա քաղաքացիներից այն մասին, որ չեն տիրապետում հայերեն լեզվին, մինչդեռ քրեական վարույթին առնչվող դատավարական փաստաթղթերն իրենց տրամադրվել են միայն հայերեն լեզվով:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ վարույթն իրականացնող քննիչի կանչով ներկայացել է քրեակատարողական հիմնարկ՝ քրեական վարույթի ավարտ հայտարարելու և գործում առկա նյութերին ծանոթանալու համար: Փաստաբանի պնդմամբ՝ թարգմանչի ներկայությամբ մեղադրյալը ցանկություն է հայտնել ծանոթանալ քրեական վարույթի նյութերին, ինչի կապակցությամբ խնդրել է քննիչին՝ ողջամիտ ժամկետ տրամադրել քրեական վարույթի նյութերը թարգմանելու և ծանոթանալու համար, սակայն քննիչը մերժել է այն պատճառաբանությամբ, որ վերջինս ունի պաշտպան, քրեական վարույթի ամբողջ նյութերը կտրամադրվեն պաշտպանին, իսկ մեղադրյալին կտրամադրվեն ոչ ամբողջ ծավալով: Արդյունքում, ըստ պնդման, քննիչի կողմից չեն ապահովվել քրեական վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալի իրավունքները:

Վերոգրյալի կապակցությամբ Դատախազությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ նախաքննության ավարտ հայտարարելու ընթացքում թարգմանչի կողմից թարգմանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 43-րդ հոդվածով սահմանված՝ մեղադրյալին հասու փաստաթղթերը, իսկ նույն օրը քրեական վարույթի նյութերի էլեկտրոնային պատճենն ուղարկվել է մեղադրյալին և վերջինիս պաշտպանին: Ստացված պարզաբանման համաձայն՝ քրեական վարույթի նյութերը հաստատված մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելուց հետո մեղադրյալին է տրամադրվել նաև մեղադրական եզրակացությունը՝ թարգմանված այն լեզվով, որին տիրապետում է մեղադրյալը:

Մեկ այլ բողոքով փաստաբանները հայտնել են, որ իրենց պաշտպանյալին վարույթն իրականացնող մարմնի կողմից վարույթի նյութերը տրամադրվել են միայն հայերեն լեզվով, մինչդեռ իրենց պաշտպանյալը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ինչի հաշվառմամբ էլ վարույթն իրականացնող քննիչի կողմից թարգմանիչ է ներգրավվել:

Վերոնշյալի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջները՝ մեղադրյալին իրեն հասկանալի լեզվով տրամադրվել են դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում հարուցելու

մասին որոշման, ինչպես նաև մեղադրյալի իրավունքների և պարտականությունների թարգմանությունները:

Պարզաբանում է ներկայացվել նաև առ այն, որ մեղադրյալին օրենքով հանձնման ենթակա փաստաթղթերն ուղարկվել են թարգմանության և պայմանավորված դրանց մեծածավալության հանգամանքով՝ թարգմանությունները դեռևս վարույթն իրականացնող մարմնում չեն ստացվել, իսկ ստացվելուն պես՝ կհանձնվեն նրան: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովելու նպատակով քրեական վարույթին ներգրավված է թարգմանիչ, ում կողմից մշտապես իրականացվել են անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանություններ:

Միևնույն ժամանակ, փաստաբանը լրացուցիչ բողոքով տեղեկացրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից իր պաշտպանյալի նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան: Նշել է, որ միջնորդությունը և կից նյութերն իր պաշտպանյալին ներկայացվել են հայերեն լեզվով և տվյալ պահի դրությամբ որևէ փաստաթուղթ ուղարկված չի եղել թարգմանության, ինչը դատական նիստի ընթացքում հաստատել է նաև քննիչը: Մինչդեռ, փաստաբանի պնդմամբ, դրանք պետք է թարգմանված տրամադրվեին իր պաշտպանյալին միջնորդությունը քննարկելուց առաջ:

Պաշտպանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջն ինքնանպատակ չէ, այն հատկապես կարևոր է վարույթին ներգրավված անձանց կողմից իրենց վերաբերող վարութային ակտերն իրենց հասկանալի լեզվով ստանալու և արդյունքում իրենց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու տեսանկյունից: Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ մրցակցային դատավարությունում իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար *ժամանակ և հնարավորություններ* ունենալու իրավունքը հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքի կարևորագույն բաղադրիչներից մեկն է:

Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքին անդրադարձ կատարվել է նաև Եվրոպական դատարանի մի շարք վճիռներով[206]:

Հաշվի առնելով սույն թեմային առնչվող բողոքների շարունակական առկայությունը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է շարունակել միջոցներ ձեռնարկել ոլորտում առկա գործնական խնդիրները բացառելու, մասնավորապես՝ Եվրոպական դատարանի չափանիշների և ներպետական օրենսդրության խստագույնս պահպանմամբ վարույթի մասնավոր

---

[206] Տե՛ս օրինակ՝ Քոննոլլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Connolly v. the United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1996 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 27245/95, Մայզիտն ընդդեմ Ռուսաստանի (Mayzit v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 63378/00, կետ 78, C.G.P.-ն ընդդեմ Նիդերլանդների (C.G.P. v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 29835/96:

մասնակիցներին քրեական վարույթի նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու համար բավարար ժամանակ և հնարավորություն տրամադրելու ուղղությամբ՝ բացառելով վարույթին ներգրավված անձանց հասանելի փաստաթղթերն (այդ թվում՝ հասկանալի լեզվով, այն պարագայում, երբ վարույթին ներգրավված անձը չի տիրապետում հայերենին) առանց բավարար և պատշաճ հիմնավորման չտրամադրելու դեպքերը:

9. Քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն առնչվող խնդիրներ

Քրեական վարույթներով ողջամիտ ժամկետում քննություն իրականացնելու անհրաժեշտությունն ունի ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական հիմքեր: Հարցին առնչվող միջազգային և ներպետական իրավական կարգավորումներին, գործնական խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին նախորդ տարիների տարեկան հաղորդումներով:

2023 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանը կարևորել է, որպեսզի վարույթն իրականացնող մարմինները ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ ներկայացված միջազգային և ներպետական չափանիշների խստիվ պահպանմամբ վարույթի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու ուղղությամբ: Ավելին, պետությունը պետք է երաշխավորի իրավական հետևանքների անխուսափելիությունը քննարկված չափանիշները չպահպանելու պարագայում: Պաշտպանը նշել է, որ անհրաժեշտ է շարունակական աշխատանքներ իրականացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումներում հաստիքների, տրասնպորտային միջոցների համալրման ուղղությամբ՝ բացառելով դատական նիստերի հետաձգումն ուղեկցող ստորաբաժանումների ծանրաբեռնվածության պատճառաբանությամբ:

Հարկ է նկատել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ Ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ ՆԳՆ ոստիկանությունում իրականացվող բարեփոխումների, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների շրջանակում համապատասխան միջոցներ են ձեռնարկվում ուղեկցող ստորաբաժանումներում կազմհաստիքային միավորների համալրման ուղղությամբ, որի արդյունքում հնարավոր կլինի պատշաճ ժամկետներում իրականացնել ուղեկցումները՝ հնարավորինս բացառելով դատական նիստերի ձգձգումները: Միաժամանակ, ՆԳՆ կողմից ուղեկցող ստորաբաժանման աշխատանքներն իրականացնելու համար ձեռք են բերվել թվով 22 տրանսպորտային միջոցներ, որոնք ներկայացվել են վերազինման՝ միջազգային

չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով (պատշաճ օդափոխությամբ, լուսավորությամբ, տաքացնող և հովացնող, GPS, տեսաձայնագրող համակարգերով, 0.8 քմ-ից ավել մակերես ունեցող խցերով և այլն):

Չնայած Ներքին գործերի նախարարության կողմից իրականացված բարեփոխումներին՝ 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել դատական քննության ժամանակ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումների կողմից կալանավորված անձանց դատարան չտեղափոխելու վերաբերյալ մի շարք ահազանգեր և բողոքներ: Նշվածի հետևանքով դատական նիստերը հետաձգվում են, ինչն էլ ուղղակիորեն բացասական կերպով է ազդում գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանման վրա: Օրինակ՝ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից մեկով անձը 1 տարվա ընթացքում իրեն վերաբերելի 7 դատական նիստից 4-ին չի կարողացել մասնակցել, մեկ այլ բողոքի համաձայն՝ անձը շուրջ 2 տարի վերը նշված խնդիրների պատճառով չի կարողացել ընդհանրապես մասնակցել դատական նիստին: Արդյունքում, դատական նիստերին մասնակցությունը չապահովելու պարագայում, վտանգվում է անձանց արդար դատաքննության իրավունքը:

Վերը նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ[207]:

Հարկ է ընդգծել, որ բողոքների քննարկման արդյունքում մի շարք դեպքերում հարցը լուծում է ստացել Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում: Բողոքների մի մասի վերաբերյալ Ներքին գործերի նախարարությունից պատասխան է ստացվել այն մասին, որ վարույթն իրականացնող դատարաններից ստացված հայտերի որոշ ուղեկցումները չեն իրականացվել ուղեկցող գումարտակի ծառայողական ծանրաբեռնվածության, նույն օրերի մի շարք այլ դատական նիստերի կալանավորված անձանց ուղեկցումներն իրականացնելու հանգամանքով և թափուր հաստիքներով պայմանավորված:

Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ պետության կողմից պետք է ձեռնարկվեն գործուն քայլեր քրեակատարողական հիմնարկներից ազատությունից զրկված անձանց տրանսպորտային միջոցներով դատարաններ ուղեկցումն ապահովելու ուղղությամբ, ինչը գործնականում կարող է բարձրացնել նաև դատական իշխանության գործունեության արդյունավետությունը: Պաշտպանը նաև խիստ մտահոգիչ է համարում, որ տարիներ շարունակ բարձրացրած խնդիրները մնում են անփոփոխ և արդիական, այդ թվում՝ ՀՀ ներպետական օրենսդրությամբ տրանսպորտային միջոցների համար հստակ չափանիշներ սահմանված չլինելու հարցը:

Բացի այդ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված

---

[207] Հայտարարությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3259, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ Քննչական կոմիտեից տեղեկություններ են ներկայացվել այն մասին, որ Կոմիտեն հետևողական է քրեական վարույթի քննության ողջամիտ ժամկետի պահպանման հարցում: Այդ նպատակով Կոմիտեի վերահսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների կողմից պարբերաբար իրականացվում են ստուգումներ, խախտումներ թույլ տված քննիչները ենթարկվում են կարգապահական պատասխանատվության: Մասնավորապես՝ 2024 թվականի ընթացքում արձանագրվել է քննության ողջամիտ ժամկետի խախտման 21 դեպք, և բոլոր դեպքերում խախտում թույլ տված անձինք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Այդուհանդերձ, 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ՝ կապված վարույթների քննության ժամկետների հետ: Բողոքների գերակշիռ մասը վերաբերել է այն դեպքերին, երբ քրեական վարույթի շրջանակում որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված չէ, և, բողոք ներկայացրած անձի գնահատմամբ, ժամկետներով սահմանափակված չլինելու պայմաններում վարույթն իրականացնող մարմնի կողմից բավարար ջանասիրություն չի գործադրվում քննություն կատարելու և դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում Դատախազությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում ստացվել է 134 բողոք (միջնորդություն) քրեական վարույթի ողջամիտ ժամկետը չպահպանելու և քննությունն անհիմն ձգձգելու վերաբերյալ: Ստացված բողոքների քննարկման արդյունքներով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ քննության անհարկի ձգձգումները վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ քննիչին տրվել են համապատասխան հանձնարարություններ, կայացվել են քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշումներ, իրավասու մարմնին ներկայացվել են քննիչի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու մասին միջնորդություններ:

Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննությունների եզրակացությունները չստացվելու հետևանքով վարույթների ձգձգման վերաբերյալ բողոքներ:

Օրինակ՝ բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2023 թվականին նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում նշանակվել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն, սակայն եզրակացությունը տևական ժամանակ չի ստացվել վարույթն իրականացնող մարմնում, ինչի հետևանքով էլ վարույթի ընթացքը ձգձգվում է: Նշվածի կապակցությամբ դատախազությունից տրամադրվել է պարզաբանում այն մասին, որ վարույթի շրջանակում որոշում է կայացվել լրացուցիչ դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ, որի կատարումը հանձնարարվել է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան փորձագետներին, սակայն եզրակացությունը չի ստացվել: Բողոքի քննարկման ընթացքում Դատախազության հետ լրացուցիչ գրագրության արդյունքում պարզ է դարձել,

որ փորձաքննությունը հնարավորինս սեղմ ժամկետում չիրականացնելը պայմանավորված է փորձագիտական կենտրոնի ֆինանսավորման խնդիրների հետ:

Ելնելով բողոքի քննարկման պատշաճ ընթացքն ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ողջամիտ ժամկետում գործի քննության կարևորությունը՝ գրություն է հասցեագրվել Արդարադատության նախարարություն: Ի թիվս այլնի, տեղեկություններ են ստացվել այն մասին, որ նշանակված փորձաքննության կատարումն ավարտվել է, սակայն Կենտրոնը փորձագետի եզրակացությունը քրեական վարույթն իրականացնող մարմնին տրամադրելու հնարավորություն չի ունեցել, քանի որ առկա է ծառայությունների ձեռքբերման պայմանագրի կատարման համար նախատեսված ֆինանսական միջոցների սպառման հետ կապված խնդիր, որը գտնվում է լուծման փուլում: Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով Արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով ակնկալվում է ՀՀ դատարանների (քրեական գործերով) և քրեական հետապնդում ու վարչական վարույթ իրականացնող մարմինների կողմից նշանակված և նշանակվելիք փորձաքննությունների կատարման համար նախատեսել անհրաժեշտ գումար:

Ավելի ուշ, բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ փորձաքննության եզրակացությունը ստացվել է:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով փաստաբանը հայտնել է, որ քրեական վարույթի շրջանակում նշանակվել է կրկնակի դատաէլեկտրատեխնիկական փորձաքննություն, որի եզրակացությունը տևական ժամանակ չի ստացվել: Դատախազության հետ գրագրության արդյունքում կրկին տեղեկություն է ստացվել այն մասին, որ եզրակացության տրամադրման ձգձգումը պայմանավորված է փորձաքննություն իրականացնող մարմնի ֆինանսական խնդիրներով: Նշվածի հաշվառմամբ՝ ՀՀ արդարադատության նախարարությունից նույնաբովանդակ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը փորձագետի եզրակացությունը քրեական վարույթն իրականացնող մարմնին տրամադրելու հնարավորություն չի ունեցել, քանի որ առկա է ծառայությունների ձեռքբերման պայմանագրի կատարման համար նախատեսված ֆինանսական միջոցների սպառման հետ կապված խնդիր, որը գտնվում է լուծման փուլում: Խնդրի լուծման նպատակով Արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով ակնկալվում է Հայաստանի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) և քրեական հետապնդում ու վարչական վարույթ իրականացնող մարմինների կողմից

նշանակված և նշանակվելիք փորձաքննությունների կատարման համար նախատեսել անհրաժեշտ գումար:

Մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ քրեական վարույթի շրջանակում վարույթն իրականացնող քննիչը հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշում է կայացրել, որն ուղարկվել է ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ, սակայն փորձաքննությունը տևական ժամանակ չի իրականացվել: Դիմումատուն հայտնել է, որ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցչի պնդմամբ՝ փորձաքննության ձգձգումը պայմանավորված է հանձնաժողով ձևավորելու անհնարինությամբ:

Նշվածի կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ հանձնաժողովային կազմով փորձաքննությունները չեն իրականացվել նեղ մասնագետներից ոմանց քննարկումներին չներկայանալու պատճառով: Բացի այդ, նշվել է, որ վերոհիշյալ փորձաքննության ժամկետների ձգձգումը պայմանավորված է նաև 2024 թվականին առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ում ստացված հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություններ նշանակելու վերաբերյալ աննախադեպ մեծ քանակի որոշումներով:

Ստացվող նմանատիպ բոլոր բողոքները մշտապես գտնվում են Պաշտպանի ուշադրության ներքո: Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ վարույթի քննությունը ողջամիտ ժամկետում չիրականացնելը՝ պայմանավորված փորձաքննության կատարման անհնարինությամբ, այն էլ՝ ֆինանսական խնդիրների պատճառով՝ խիստ մտահոգիչ է և կարող է հանգեցնել անձի՝ ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքի խախտման: Միևնույն ժամանակ, Պաշտպանը դրական է գնահատում խնդիրների լուծման ուղղությամբ հրատապ միջոցներ ձեռնարկելու իրավասու պետական մարմինների պատրաստակամությունը:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ նաև դատական քննության փուլում գտնվող գործերի ձգձգումների, մասնավորապես՝ դատական նիստերի պարբերաբար հետաձգման և ուշ նշանակվելու վերաբերյալ: Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենսդրական պահանջից ելնելով՝ կոնկրետ գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից քննության առարկա չեն դառնում: Այդուհանդերձ, երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակը ներկայացնելու համատեքստում կարևոր է նաև քրեական վարույթի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդրի ուսումնասիրությունը՝ միջազգային

իրավական չափանիշների և օրենսդրական կանոնակարգումների դիտանկյունից[208]:

Բացի այդ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ տեղեկություններ են ստացվել նաև Դատական դեպարտամենտից (Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ), համաձայն որոնց՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման նկատմամբ իրականացվում է մշտադիտարկում: Ընդ որում, այդ որոշմամբ սահմանված կանոնները չպահպանելու դեպքում Դատարանի նախագահը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված իր լիազորությունների սահմաններում, դիմում է Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին և դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող լիազոր մարմնին:

Այսպիսով, Պաշտպանը դրական է գնահատում իրավասու մարմինների կողմից կոնկրետ դեպքերով խնդիրների լուծմանն ուղղված պատրաստակամությունը, այնուամենայնիվ արձանագրում է, որ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ վեր հանված՝ վարույթի ողջամիտ ժամկետում քննության իրականացմանն առնչվող խնդիրներն արդիական են եղել նաև 2024 թվականի ընթացքում: Ուստի առանցքային է, որպեսզի իրավասու մարմինների կողմից շարունակաբար ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ քրեական վարույթներով ողջամիտ ժամկետում քննություն իրականացնելու, դրան խոչընդոտող հանգամանքները վեր հանելու և դրանց լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ:

10. Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալմանն ու կալանավորմանն առնչվող գործնական խնդիրներ

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև իրականացվող կարևորագույն գործընթացներից են դատապարտյալների փոխանցումն ու Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց հանձնումը, որոնք իրականացվում են «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի եվրոպական կոնվենցիայի, «Պատժի հետագա կրման համար դատապարտյալների փոխանցման

[208] Տե՛ս Պաշտպանի 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 307-310, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մասին» Մոսկվայի 1998 թվականի կոնվենցիայի, «Հանձնման մասին» 1957 թվականի Եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի 1993 թվականի կոնվենցիայի, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի 2002 թվականի կոնվենցիայի, ինչպես նաև առանձին երկկողմ միջազգային պայմանագրերի դրույթներով:

Մարդու իրավունքների պաշտպանն իր՝ նախորդ, այդ թվում՝ 2023թ. տարեկան հաղորդումներով մանրամասն անդրադարձ է կատարել «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի մարտի 21-ի կոնվենցիայի նպատակներին, կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իմպլեմենտացման գործնական խնդիրներին և Պաշտպանի աշխատակազմ ստացված՝ դատապարտյալների փոխանցմանն առնչվող այլ խնդիրներին:

2024 թվականի ընթացքում ևս քրեական արդարադատության ոլորտում միջազգային-իրավական համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացները, դրանց իրականացման շրջանակում անձանց իրավունքների պաշտպանությունը գտնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմում շարունակվել է օտարերկրյա պետությունում դատապարտված անձանց պատժի մնացած մասը Հայաստանում կրելու հարցի կապակցությամբ ինչպես ավելի վաղ ներկայացված բողոքների քննությունը, այնպես էլ ստացվել են այլ պետություններում ազատազրկման դատապարտված ՀՀ քաղաքացիներին պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով փոխանցելու վերաբերյալ խնդիրներին առնչվող նոր բողոքներ: Նշված բողոքների կապակցությամբ գրագրություն է իրականացվել ինչպես Հայաստանի իրավասու մարմինների, այնպես էլ օտարերկրյա գործընկեր կառույցների (օրինակ՝ ՌԴ մարդու իրավունքների հանձնակատարի, ԳԴՀ Բունդեսթագի պետիցիայի հարցերով հանձնաժողովի) հետ:

Ստացված պարզաբանումների համաձայն՝ որոշ դեպքերում դատապարտված ՀՀ քաղաքացիներին պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով փոխանցելը հնարավոր չի եղել դատարանի վարույթում քննվող ընթացիկ քրեական գործի առկայությամբ պայմանավորված: Որոշ դեպքերում էլ Հայաստանի Հանրապետությունում պատիժ կրող օտարերկրյա քաղաքացիների փոխանցումը չի իրականացվել, քանի որ մյուս երկրի իրավասու մարմինը համաձայնություն չի տվել դատապարտյալի փոխանցման վերաբերյալ, առաջարկելով վտարել (արտաքսել) իր քաղաքացներին Հայաստանից:

Պրակտիկայի ամփոփման նպատակով Արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ տեղեկություններ են ներկայացվել այն մասին, որ 2024 թվականի ընթացքում օտարերկրյա պետությունում դատապարտված 41 ՀՀ քաղաքացի դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով, որոնցից բավարարվել է 4 դատապարտյալի փոխանցման խնդրանք: Հարկ է ընդգծել, որ Արդարադատության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում պատժի մնացած մասը Հայաստանի Հանրապետությունում կրելու նպատակով օտարերկրյա պետություններից դիմել են թվով 68 դատապարտյալներ, որոնցից փոխանցվել է 1-ը,

իսկ 2022 թվականի ընթացքում դիմում ներկայացրած թվով 72 քաղաքացիներից փոխանցվել է 7 դատապարտյալ: 2023 թվականի ընթացքում պատժի մնացած մասը կրելու նպատակով օտարերկրյա պետությունից ՀՀ, ինչպես նաև Հայաստանից օտարերկրյա պետություն փոխանցման խնդրանքով դիմել է 31 դատապարտյալ, արդյունքում Հայաստանի Հանրապետությունում պատժի մնացած մասը կրելու նպատակով հանձնվել է թվով 7 դատապարտյալ:

2024 թվականի նոյեմբերի 15-ին ընդունվեց «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք), որով մանրամասն կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում՝ քրեական վարույթներով իրավական օգնության իրականացման կարգն ու պայմանները և ոլորտի վերաբերյալ իրավահարաբերությունները:

Մասնավորապես, նշված օրենքի՝ «Դատապարտյալի փոխանցումը» վերտառությամբ
7-րդ գլխի կարգավորումները, ի թիվս այլնի, մատնանշում են դատապարտյալի փոխանցման նպատակը, ինչպես նաև սահմանում են դատապարտյալի փոխանցման պայմաններն ու կազմակերպման կարգը, փոխանցման մասին դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերը, որոշում կայացնելու չափորոշիչներն ու կարգը, իրավական հետևանքները, փոխանցումը մերժելու հիմքերը՝ ինչպես օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության միջև դատապարտյալի փոխանցման վերաբերյալ միջազգային պայմանագրերի առկայության, այնպես էլ դրանց բացակայության դեպքում:

Այսպես, Օրենքի 65-րդ հոդվածով որպես դատապարտյալների փոխանցման նպատակ է սահմանվել դատապարտյալների սոցիալական վերաինտեգրմանը նպաստելը՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս իրենց նկատմամբ նշանակված պատժի մնացած մասը կրելու այն պետությունում, որի քաղաքացին են կամ որի տարածքում մշտապես բնակվում են: Բացի այդ, Օրենքի 72-րդ հոդվածով, ի թիվս այլնի, դատապարտյալի փոխանցման վերաբերյալ որոշում կայացնելիս որպես կիրառելի պարտադիր չափորոշիչ է սահմանվել դատապարտյալի և նրա ընտանիքի անդամների (մասնավորապես դատապարտյալի ծնողների, ամուսնու կամ երեխաների), դատապարտյալի քաղաքացիության կամ քաղաքացիություն չունենալու դեպքում՝ մշտական բնակության վայր հանդիսացող պետությունում բնակվելու, աշխատելու, սոցիալական կապերի առկայության հանգամանքը:

Օրենքի 81-րդ հոդվածով սահմանվում են միջազգային պայմանագրի բացակայությամբ դատապարտյալի փոխանցման վերաբերյալ որոշում կայացնելիս կիրառելի այլ չափանիշները: Մասնավորապես, հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ դատապարտյալի փոխանցման վերաբերյալ որոշում կայացնելիս ՀՀ իրավասու մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի հավաստիանալու, որ փոխանցումից հետո դատապարտյալը չի պահվի առավել վատ պայմաններում կամ նրա նկատմամբ չի փոփոխվի քրեակատարողական հիմնարկի տեսակը կամ չի խստացվի վերջինիս պահելու ռեժիմն առավել խիստ ռեժիմով, և կպահպանվեն հատուկ կարիքներ ունեցող դատապարտյալներին անհրաժեշտ միջոցների տրամադրումը: Նշված իրավակարգավորումը կարևոր երաշխիք է փոխանցումից հետո դատապարտյալի իրավունքների ապահովման տեսանկյունից:

Ներկայում «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքով հանգամանորեն կարգավորված են նաև օտարերկրյա պետության դատավճռի կատարման շարունակումն ապահովելու (ճանաչելու) և փոխարկելու կարգը: Հարկ է նկատել, որ այս գործընթացը, մինչ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի ընդունումը կարգավորվում էր 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքով:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված մի շարք բողոքներ և ահազանգեր վերաբերել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանում ձերբակալված կամ ժամանակավոր կալանավորված անձանց տեսակցությունների ու հեռախոսային խոսակցությունների իրավունքի սահմանափակմանը:

Այս իրավահարաբերությունները մինչ 2024 թվականի դեկտեմբերի 12-ին «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը նույնպես կարգավորվում էին 1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ՝ մինչ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը վստահորդին տեսակցելու համար փաստաբանը պետք է յուրաքանչյուր տեսակցության համար նախապես դիմում ներկայացներ իրավասու մարմնին և միայն թույլտվություն ստանալու և դրա վերաբերյալ քրեակատարողական հիմնարկ ուղարկված գրության առկայության պարագայում կարող էր հանդիպել ազատությունից զրկված անձին՝ նրա իրավունքների ապահովման վերաբերյալ անհրաժեշտ հարցերը քննարկելու նպատակով: Ըստ էության, բացակայում էր նաև փաստաբանի ներգրավման հստակ ընթացակարգ:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ Լիբանանի Հանրապետության քաղաքացու կողմից տրված լիազորագրի հիման վրա ներկայացնում է վերջինիս հոր շահերը: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ վերջինս «Զվարթնոց» օդանավակայանում ձերբակալվել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության Ինտերպոլի կողմից հետախուզվելու հիմքով և իրավասու դատարանի որոշմամբ նրա նկատմամբ կիրառվել է կալանք: Փաստաբանի պնդմամբ՝ ներկայացրել էր Գլխավոր դատախազություն մի շարք միջնորդություններ, այդ թվում՝ իր վստահորդին տեսակցելու վերաբերյալ, սակայն դրանց կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել:

Նշվածի հաշվառմամբ՝ հարցը քննարկվել է Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության իրավասու ներկայացուցչի հետ: Ստացվել են պարզաբանումներ հանձնման հանգամանքների կապակցությամբ իրականացված գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև պարզվել է, որ վստահորդի հետ տեսակցությունը թույլատրվել է և ձեռնարկվել են համապատասխան միջոցներ տեսակցությունն ապահովվելու նպատակով: Բացի դրանից, փաստաբանին տրամադրվել է գործընթացի վերաբերյալ տեղեկանք: Վերջինս ևս Պաշտպանի աշխատակազմ տեղեկություն է հայտնել, որ տեսակցել է իր վստահորդին:

Հարկ է ընդգծել, որ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ մանրամասն կարգավորվել է փաստաբանի ներգրավման և վստահորդի հետ անխոչընդոտ տեսակցության գործընթացը: Այսպես, Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը հայտնաբերված անձի

ներկայացուցչությունն ստանձնում է հայտնաբերված անձի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, ինչպես նաև այլ անձանց հրավերով՝ հայտնաբերված անձի հետագա գրավոր համաձայնությամբ կամ փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ հետաքննության մարմնի, Արդարադատության նախադրության, Գլխավոր դատախազության կամ դատարանի գրավոր պահանջի հիման վրա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավասու մարմինները փաստաբանների պալատից պահանջում են փաստաբան նշանակել հայտնաբերված անձի հայերենին չտիրապետելու կամ ոչ բավարար տիրապետելու, անչափահաս լինելու կամ փաստաբանի ծառայությունների դիմաց վճարելու համար բավարար միջոցներ չունենալու պարագայում:

Օրենքով սահմանված են փաստաբանի՝ հայտնաբերված անձի վերաբերյալ կազմված փաստաթղթերին ծանոթանալու, պատճենները ստանալու, իրավասու մարմինների գործողությունները բողոքարկելու, միջնորդություններ հարուցելու և մի շարք այլ իրավունքներ: Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ *փաստաբանն իրավունք ունի առանձին, խորհրդապահական (կոնֆիդենցիալ) կարգով անարգել տեսակցելու հայտնաբերված անձի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման:*

Պաշտպանը բարձր է գնահատում նոր օրենքով նման կարգավորումներ նախատեսելը՝ ինչպես կալանավորված անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման, այնպես էլ փաստաբանների անխոչընդոտ աշխատանքի երաշխավորման տեսանկյունից:

Պաշտպանի աշխատակազմում ստացված մեկ այլ բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդը ձերբակալվել է Ղազախստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված լինելու հիմքով և նրա նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառվել է կալանք խափանման միջոցը: Փաստաբանի պնդմամբ՝ վստահորդի դուստրն արտերկրից ժամանել է ՀՀ՝ նրան տեսակցելու նպատակով, սակայն քրեակատարողական հիմնարկի վարչակազմը թույլ չի տվել իրականացնել տեսակցությունը: Նշվածի հաշվառմամբ՝ կապ է հաստատվել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի հետ, ով հայտնել է, որ բացակայում է Գլխավոր դատախազության, որպես վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունը: Արդյունքում պարզվել է, որ Գլխավոր դատախազությունը որոշ ժամանակ առաջ արդեն իսկ ուղարկել է գրություն առ այն, որ Դատախազությունը չի առարկում վստահորդի տեսակցություններն ընտանիքի անդամների հետ: Խնդիրը լրացուցիչ քննարկվել է քրեակատարողական հիմնարկի և Գլխավոր դատախազության իրավասու ներկայացուցիչների հետ: Ըստ ստացված պարզաբանման՝ սահմանված կարգի համաձայն՝ թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր անգամ կոնկրետ տեսակցության համար: Հաշվի առնելով անձի հարազատի՝ արտերկրից ժամանելու հանգամանքը՝ խնդիրը լրացուցիչ քննարկվել է իրավասու մարմինների հետ էլեկտրոնային դիմում ներկայացնելու և դրա կապակցությամբ հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկելու կապակցությամբ: Արդյունքում, նույն օրը դիմումի կապակցությամբ Գլխավոր դատախազության կողմից տրվել է տեսակցության թույլտվություն:

Այս տեսանկյունից, հատկանշական է, որ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արգելանքի վերցված հայտնաբերված անձի տեսակցության հարցը լուծում է հանձնման մասին

հարցումը քննարկող իրավասու մարմինը: Օրենքով կարգավորված չէ, թե յուրաքանչյուր դեպքում թույլտվությունը տրվում է մեկ տեսակցության համար, թե կալանքի ողջ ժամկետի կամ կոնկրետ անձի, այդ թվում՝ մերձավոր ազգականի վերաբերյալ:

Պաշտպանի դիտարկմամբ՝ կալանավորված անձի իրավունքների համապարփակ երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ է նշված ոլորտում սահմանել կարգավորում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի տրամաբանությամբ: Այսպես՝ կալանքի հարցը քննարկելիս անհրաժեշտ փաստաթղթերին զուգահեռ հանձնման հարցը քննարկող իրավասու մարմինը պետք է դատարան ներկայացնի հայտնաբերված անձի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակելու վերաբերյալ միջնորդություն: Այս դեպքում միայն դրա անհրաժեշտությունը փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ հիմնավորվելու և դատարանի կողմից պատճառաբանված հաստատվելու պարագայում կարող է կիրառվել նման սահմանափակում՝ հստակ նշելով հստակ ժամկետին և անձանց շրջանակին վերաբերող պայմանները:

Պաշտպանը դրական է գնահատում «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը կարևոր քայլ է ոլորտում արդյունավետ պրակտիկա ձևավորելու հարցում, և վերահաստատում է դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով դատապարտյալի փոխանցման հարցը քննարկելիս առաջնահերթ ուշադրության պետք է արժանանա դատապարտյալի՝ տվյալ պետությունում առկա սոցիալական կապերը, ինչը կարևորագույն նշանակություն ունի անձի վերասոցիալականացման, կրկնահանցագործության ռիսկի նվազեցման հարցում, իսկ յուրաքանչյուր դեպքում դատապարտյալի փոխանցումը մերժելիս պետք է ներկայացվեն բավարար հիմնավորումներ:

Պաշտպանն արձանագրում է, որ թեև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալման, կալանավորման և դատապարտյալների փոխանցման գործընթացին առնչվող խնդիրների առումով նկատելի է էական դրական առաջընթաց, այդուհանդերձ առանձին իրավունքներին վերաբերող կարգավորումներ ունեն առավել մանրամասն կարգավորման կարիք:

Ուստի անհրաժեշտ է «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում կատարել փոփոխություններ՝ անձի արտաքին աշխարհի հետ կապի, այդ թվում՝ հաղորդակցության իրավունքի երաշխավորման համար սահմանելով առավել բարձր երաշխիքներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ նշված գործընթացները շարունակում են գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում և Պաշտպանը հետագայում ևս հետևողական է լինելու ոլորտը կարգավորող օրենսդրության զարգացմանը և իրավասու մարմինների կողմից համապատասխան չափանիշների պահպանմանը:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները

Անձի անձնական ազատության իրավունքն ունի ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական հիմքեր: Այսպես, անձնական ազատության իրավունքը, ինչպես նաև դրա սահմանափակման հնարավորությունները սահմանված են Սահմանադրության 27-րդ հոդվածով: Բացի այդ, անձնական ազատության իրավունքի երաշխիքներ են սահմանված նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 9-րդ հոդվածում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածում:

Անձնական ազատության իրավունքի երաշխավորման հետ կապված համակարգային խնդիրները մշտապես գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում, և Պաշտպանն իր ամենամյա հաղորդումներում մշտապես անդրադարձ է կատարում քննարկվող հարցին:

2023 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել է, որ անթույլատրելի է ազատությունից զրկված անձին նվազագույն իրավունքները չպարզաբանելու և դրանք չապահովելու պրակտիկայի շարունակականությունը և կարևորել է, որպեսզի ցանկացած դեպքում անձին ազատությունից զրկելիս իրավասու մարմինների կողմից ապահովվեն նրա նվազագույն իրավունքները՝ միջազգային և ներպետական չափանիշների պահպանմամբ: Պաշտպանն ընդգծել է, որ անհրաժեշտ է բացառել անհամաչափ ուժի կիրառման և անձանց իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելու դեպքերը՝ կարևորելով անձանց իրավունքների սահմանափակման իրավաչափության և ֆիզիկական ուժի գործադրման չափանիշների առնչությամբ Ոստիկանության ծառայողների համար պարբերաբար վերապատրաստման դասընթացների իրականացումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ Ազգային անվտանգության ծառայության կողմից անձին ազատությունից զրկելիս՝ յուրաքանչյուր դեպքում ապահովվում է վերջինիս՝ օրենքով նախատեսված իրավունքների իրացումը:

Նույն հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ ՆԳՆ ոստիկանության ձերբակալվածների պահման վայրերում, ազատությունից զրկված անձանց ընդունելիս, կարևորագույն առաջնային գործողություն համարվում է իրենց իրավունքների և պարտականությունների մասին ծանուցումը, ինչպես նաև իրենց գտնվելու վայրի մասին իրենց իսկ նախընտրած անձին տեղեկացնելու հնարավորությունը: Միաժամանակ, ՆԳՆ իր պատրաստակամությունն է հայտնում նմանօրինակ խախտումների յուրաքանչյուր դեպքի արձանագրման պարագայում տալ օբյեկտիվ և իրավաչափ գնահատական:

Բացի այդ, ՀՀ ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստում է անցել ընդհանուր թվով ոստիկանության 88 ծառայող, հետևյալ թեմաներով և ժամաքանակներով՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից կիրառվող վարչական հարկադրանքի էությունը և տեսակները, Վարչական պատասխանատվություն /6 ժամ/, Վարչական վարույթի ապահովման միջոցները /6 ժամ/, Մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատությունները, դրանց իրականացման երաշխիքները և խտրականության արգելքի սկզբունքը մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում /4 ժամ/, Օրինականության ապահովումը ոստիկանության վարչական գործունեությունում /2 ժամ/, Առանձին իրավախախտումների գործերով վարչական վարույթի ապահովման միջոցները և փաստաթղթավորումը /6 ժամ/, Պարեկային ոստիկանության իրավունքներն ու պարտականություններն արտակարգ իրավիճակներում և հատուկ միջոցառումներ իրականացնելիս /6 ժամ/, Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ոստիկանության ծառայողների կողմից իրենց գործառույթներն իրականացնելիս /6 ժամ/, Վարչական ձերբակալում, բերում /օրինական պահանջ/, Հրազենի գործադրման հիմքերը / 2 ժամ/:

Այդուհանդերձ, Պաշտպանի աշխատակազմում 2024 թվականի ընթացքում ստացված բողոքներով, ահազանգերով և Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի ընթացքում շարունակել են արձանագրվել անձի նվազագույն իրավունքների ապահովման, մասնավորապես, անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու, նվազագույն իրավունքները, այդ թվում՝ իր նախընտրած անձին զանգահարելու, փաստաբան հրավիրելու իրավունքը չպարզաբանելուն և չապահովելուն առնչվող խնդիրներ: Արդյունքում Պաշտպանի աշխատակազմ ահազանգեր են ստացվում փաստաբաններից այն մասին, որ ձերբակալված անձի մերձավոր ազգականների խնդրանքով ցանկանում են ստանձնել վերջինի շահերի պաշտպանությունը, սակայն տեղեկություն չունեն նրա գտնվելու վայրի մասին: Վերը նշված ահազանգերով բոլոր դեպքերում Պաշտպանի ներկայացուցիչների կողմից ձեռնարկվել են հրատապ միջոցներ, որոնց արդյունքում պարզվել են ձերբակալված անձանց գտնվելու վայրերը:

Պաշտպանն արձանագրում է, որ 2024 թվականի ընթացքում անձին վարչական ձերբակալման ենթարկելիս նվազագույն իրավունքների ապահովման խնդիրը համակարգային առումով մնացել է չլուծված: 2024 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների ընթացքում Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի և ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում որոշակի խումբ անձինք նշել են, որ Ոստիկանության ծառայողների կողմից չի ներկայացվել որևէ պահանջ, մինչդեռ իրենք վարչական ձերբակալման են ենթարկվել Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով: Իրականացված այցերի ընթացքում մի խումբ անձինք նշել են, որ կատարել են Ոստիկանության ծառայողների կողմից հնչեցված պահանջները, սակայն իրենք արգելանքի են վերցվել և տեղափոխվել ոստիկանության բաժիններ:

Պաշտպանը մտահոգիչ է համարում նաև այն հանգամանքը, որ 2024 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների շրջանակում ոստիկանության բաժիններ իրականացված արագ արձագանքման այցերի, լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների դիտարկման արդյունքում Ոստիկանության

ծառայողների կողմից անձանց արգելանքի վերցնելիս արձանագրվել են ֆիզիկական ուժի առերևույթ անհամաչափ կիրառման դեպքեր: Մասնավորապես, մի խումբ անձինք հայտնել են, որ իրենց նկատմամբ ֆիզիկական ուժ է կիրառվել նույնիսկ այն դեպքում, երբ համաձայնել են Ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ գնալ ոստիկանության բաժին կամ այն դեպքում, երբ փաստացի գտնվել են Ոստիկանության ծառայողի հսկողության ներքո:

Իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է դեպք, երբ Ոստիկանության ծառայողների կողմից առերևույթ ֆիզիկական ուժի գործադրմամբ բերման է ենթարկվել ՀՀ ԱԺ պատգամավոր: Ընդ որում՝ անձի նկատմամբ ուժի կիրառումը շարունակվել է այն դեպքում, երբ վերջինս գտնվել է Ոստիկանության ծառայողների հսկողության ներքո: Ավելի ուշ, ըստ Ոստիկանությունից ստացված պարզաբանման՝ պատգամավորը ոստիկանական ավտոմեքենայից ազատ է արձակվել: Նշվածի մասին Պաշտպանը քանիցս հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով՝ անթույլատրելի համարելով իրավասու մարմինների կողմից անհամաչափ ուժի գործադրումը և կարևորել նման յուրաքանչյուր դեպք պատշաճ իրավական գնահատականի արժանացնելու անհրաժեշտությունը՝ նման դեպքերի շարունակականությունը բացառելու նպատակով[209]: Հայտարարություններով Պաշտպանը խիստ անթույլատրելի է համարել որևէ պարագայում Ոստիկանության ծառայողի կողմից անձին բերման ենթարկելու անհրաժեշտությամբ չպայմանավորված՝ անհամաչափ ուժի կիրառումը: Անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է անհապաղ ստանա պատշաճ իրավական գնահատական՝ նման դեպքերի շարունակականությունը բացառելու նպատակով: Ավելին, Պաշտպանն անթույլատրելի է համարել այնպիսի գործելաոճը, երբ անձի նկատմամբ ուժի գործադրումը շարունակվել է այն պայմաններում, երբ վերջինս արդեն իսկ գտնվել է ոստիկանության ծառայողների հսկողության ներքո:

2024 թվականի ընթացքում արձանագրվել է նաև դեպք, երբ Ոստիկանության ծառայողներն արգելանքի են վերցրել ՀՀ ԱԺ պատգամավորի, նրան տեղափոխել են Ոստիկանության բաժին, իսկ ավելի ուշ հայտնել, որ ինքը բերվածի, վարչական ձերբակալվածի կամ որևէ այլ կարգավիճակ չունի: Այդ կապակցությամբ ևս Պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարություններով՝ ընդգծելով, որ ՀՀ ԱԺ պատգամավորն օժտված է սահմանադրաիրավական հատուկ կարգավիճակով, վերջինս ազատությունից կարող է զրկվել օրենսդրությամբ սահմանված հատուկ ընթացակարգով՝ մտահոգիչ համարելով նշված պրակտիկայի առկայությունը[210]:

---

[209] Հայտարարությունները հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2950, https://ombuds.am/am/site/ViewNews/2957,https://ombuds.am/am/site/ViewNews/2971,https://ombuds.am/am/site/ViewNews/2989,https://ombuds.am/am/site/ViewNews/2996,https://ombuds.am/am/site/ViewNews/3003,https://ombuds.am/am/site/ViewNews/3016, https://ombuds.am/am/site/ViewNews/3013, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[210] Հայտարարությունները հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2943, https://ombuds.am/am/site/ViewNews/2989, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հարկ է ընդգծել, որ տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում 2024 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընթացքում Ոստիկանության գործողությունների իրավաչափության, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման վերաբերյալ անցկացված ծառայողական քննությունների վերաբերյալ համապատասխան հարցադրում է ներկայացվել ՀՀ ներքին գործերի նախարարությանը: Պարզաբանումներ են ներկայացվել այն մասին, որ 2024 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման հանգամանքները պարզելու նպատակով ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել են 33 կարգապահական վարույթներ, որոնցից՝

- 18-ի ընթացքը կասեցվել է՝ մինչև նույն փաստերի կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը,
- 15-ը թողնվել են անհետևանք, որոնցից 12-ի արդյունքներով ոստիկանության ծառայողների գործողություններում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, իսկ 3 հիմնավորված դեպքերով կարգապահական խախտում թույլ տված ոստիկանության 3 ծառայող ենթակա են եղել կարգապահական տույժի, սակայն ղեկավարվելով «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ վերջիններիս նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել:

Իրականացված ծառայողական քննությունների արդյունքներով կազմված եզրակացությունների պատճենները, հիմնավորված դեպքերով, ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումների պետերին՝ ենթակա ստորաբաժանումներում քննարկելու, հավաքների ու հանրային այլ միջոցառումների ընթացքում իրավաչափ վարքագիծ դրսևորելու ուղղությամբ համապատասխան հանձնարարականներ տալու համար:

Բացի այդ, 2024 թվականի ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից անձանց նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթների վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ քննարկվող ժամանակահատվածում նախաձեռնվել է 224 քրեական վարույթ (115-ը ՀՀ ՔՕ 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 109-ը՝ 450-րդ հոդվածի հատկանիշներով): 3 քրեական վարույթով ոստիկանության 3 ծառայողների նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում (1-ը՝ ՀՀ ՔՕ 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 2-ը՝ 450-րդ հոդվածի հատկանիշներով): Նշված վարույթներից դատարան չեն ուղարկվել, մեղադրական դատավճիռներ չեն կայացվել: Երկու անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ռեաբիլիտացնող հիմքով, 1 անձի վերաբերյալ քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

Նկատի ունենալով, որ քննարկվող խնդիրները, ընդհանուր առմամբ, արդիական են եղել և մնացել են չլուծված նաև 2024 թվականի ընթացքում՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է 2023 թվականի տարեկան հաղորդմամբ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ անթույլատրելի է ազատությունից զրկված անձին նվազագույն իրավունքները չպարզաբանելու և

դրանք չապահովելու անթույլատրելի պրակտիկայի շարունակականությունը և կարևորում, որպեսզի ցանկացած դեպքում անձին ազատությունից զրկելիս իրավասու մարմինների կողմից ապահովվեն նրա նվազագույն իրավունքները՝ միջազգային և ներպետական չափանիշների պահպանմամբ: Բացի այդ, անհրաժեշտ է բացառել անհամաչափ ուժի կիրառման և անձանց իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելու դեպքերը, հատկապես այն դեպքում, երբ անձն արդեն իսկ գտնվում է Ոստիկանության հսկողության ներքո, և առկա չեն ուժի կիրառման՝ օրենքով սահմանված այլ հիմքեր: Անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է անհապաղ ստանա պատշաճ իրավական գնահատական՝ նման դեպքերի շարունակականությունը բացառելու նպատակով:

2. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելու պրակտիկայում մարդու իրավունքների խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր՝ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ներպետական դատական ատյանների կողմից արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ, վերլուծել է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումները և անդրադարձել է նշված հիմքով անձին ձերբակալելիս պրակտիկայում առաջացող խնդիրներին:

Ըստ այդմ, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ ձերբակալման քննարկվող տեսակը (դրան ուղեկցող անձնական խուզարկության հետ միասին) այն բացառիկ դատավարական միջոցն է, որը կիրառվում է մինչև քրեական վարույթ նախաձեռնելը և բացառապես ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի աշխատակցի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ (առանց քննիչի որոշման կամ հանձնարարության), և կարող է տևել առավելագույնը 6 ժամ՝ մինչև քննիչի կողմից ձերբակալելու կամ ազատ արձակելու մասին որոշում կայացնելը: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալումը կիրառվում է այն դեպքում, երբ ենթադրյալ հանցանքի փաստական հանգամանքները (օբյեկտիվ կողմի հատկանիշները) և այն կատարող անձն իրավասու մարմնին հայտնի են դառնում հենց այդ հոդվածում թվարկված իրավիճակներից որևէ մեկի ակնհայտ առկայության դեպքում, այսինքն՝ ակնհայտ անմիջականորեն:

2023 թվականի տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելիս անհրաժեշտ է խստագույնս պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներն ու նշված ինստիտուտի հիմքում ընկած տրամաբանությունը՝ առաջնորդվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ ներպետական դատական ատյանների համապատասխան իրավական դիրքորոշումներով՝ բացառելով հիմքերի բացակայության դեպքում անձի նկատմամբ ձերբակալման տվյալ տեսակը կիրառելու պրակտիկան:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված

հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ բարձրացված հարցն ընդգրկվել է տարածքային բաժինների ուսումնական պլաններում որպես պարտադիր քննարկվող թեմա, ինչպես նաև հանձնարարվել է անդրադառնալ ստորաբաժանումներում անցկացվող խորհրդակցությունների ժամանակ: Միաժամանակ, ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության ձևավորման և որպես մասնագիտացված ծառայություն ստեղծմանն ուղղված կազմակերպված վերապատրաստման և ատեստավորման շրջանակներում ծառայողներն ուսումնասիրել են ՀՀ քրեական դատավարության, Քրեական օրենսգրքի, «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների կարգավորումները, կատարելագործել գիտելիքները, ուսումնասիրել նախադեպային վճիռներ: Ուսուցման ծրագրի շրջանակներում քննարկվել են հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելու իրավաչափությունը, առհասարակ ձերբակալման հիմքերն ու տարբերությունները:

Այնուամենայնիվ, 2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում ստացվել են քննարկվող հարցին առնչվող խնդրահարույց փաստեր, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին իրականացված ահազանգերից մեկով Երևանի քաղաքի ավագանու անդամներից մեկը հայտնել է, որ իրենց խմբակցության մյուս անդամները ձերբակալվել և տեղափոխվել են Ոստիկանության բաժին, ուստի խնդրել է վերջիններիս իրավունքների ապահովման նպատակով արագ արձագանքման այց իրականացնել: Ահազանգի կապակցությամբ՝ Պաշտպանի հանձնարարությամբ արագ արձագանքման այց է իրականացվել Ոստիկանության բաժին: Պաշտպանի ներկայացուցիչներն առանձնազրույց են ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, որի ընթացքում ձերբակալված անձինք հայտնել են, որ Երևան քաղաքում տեղի ունեցած միջադեպից մի քանի ժամ անց Ոստիկանության ծառայողները ներկայացել են իրենց բնակության հասցեներ, խուլիգանություն կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալել և տեղափոխել են Ոստիկանության բաժին:

Մեկ այլ դեպքով զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է տարածվել այն մասին, որ «Մարտական եղբայրություն» միաբանության անդամներին ու հարազատներին չի հաջողվում կապ հաստատել միաբանության ղեկավարի հետ: Ավելի ուշ, պարզվել է, որ վերջինս ձերբակալվել է ապօրինի զենք պահելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով:

Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքման այց են իրականացրել Ոստիկանության բաժին, որտեղ անձնական խուզարկություն կատարելու մասին արձանագրությամբ պարզվել է, որ ազատությունից զրկված անձի մոտ ապօրինի զենք կամ այլ ապօրինի իրեր չեն հայտնաբերվել: Բացի այդ, զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է տարածվել, այն մասին, որ նույն օրը «Մարտական եղբայրություն» միաբանության մի քանի տասնյակ անդամներ նույն հիմքով ձերբակալվել են և տեղափոխվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ:

Պաշտպանը կրկին հարկ է համարում ընդգծել, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով անձին ձերբակալելիս կասկածը պետք է լինի «հիմնավոր»:

Հիմնավոր կասկածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները

- անձի ազատության իրավունքի երաշխավորման նպատակ է համարվում ազատությունից կամայականորեն զրկելուց անձի իրավական պաշտպանությունը[211],
- ինչպիսի կասկածը կարող է համարվել հիմնավոր, կախված է գործի բոլոր հանգամանքներից: Կասկածը չի կարող հիմնված լինել սոսկ այն հավաստիացման վրա, որ առկա է ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն[212],
- ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լիներ հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն չափանիշին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական վարույթի քննության փուլում[213],
- ողջամիտ կասկածը պետք է հիմնված լինի ողջամիտ հիմքերի վրա, ինչը կամայական ձերբակալությունից և կալանավորումից պաշտպանվելու էական բաղադրիչն է: Այն փաստը, որ կասկածը բարեխիղճ է, բավարար չէ: «Ողջամիտ կասկած» բառերը նշանակում են փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որոնք օբյեկտիվ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող էր կատարել հանցագործությունը[214]:

Պաշտպանն այս կապակցությամբ ողջունելի է համարում ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումներն առ այն, որ յուրաքանչյուր դեպքում, եթե առկա է անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն, դրա հետ միաժամանակ պարտադիր դատական ստուգման է ենթակա նաև ձերբակալման իրավաչափությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բողոքը բավարարելու դեպքում դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 288-րդ հոդվածի 7-

---

[211] Տե՛ս Կլիֆտն ընդդեմ Միացյալ Թագավորության (Clift v United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2010 թվականի հուլիսի 13-ի վճիռը, կետ 62:

[212] Տե՛ս Ֆոկսը, Քեմբելն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. The United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32:

[213] Տե՛ս Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K.-F. v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, կետ 57:

[214] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի (Gusinskiy v. Russia) գործով 2004 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, կետ 53:

րդ մասով սահմանված միջոցները, իսկ սույն օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կամ 5-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում որոշմամբ անհապաղ ազատ է արձակում ձերբակալվածին: Օրենսգրքի 288-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե դատարանը պարզում է, որ ձերբակալման ընթացքում խախտվել են ձերբակալված անձի իրավունքները, ապա որոշմամբ՝

1) հաստատում է այդ փաստը.

2) ձերբակալված անձին պարզաբանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հատուցում ստանալու կարգը.

3) խախտման փաստի կապակցությամբ իրավական ընթացակարգ սկսելու նպատակով դիմում է իրավասու մարմիններ կամ պաշտոնատար անձանց.

4) անհրաժեշտության դեպքում իրավասու մարմիններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել ձերբակալված անձի իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ:

Պաշտպանը հարկ է համարում նաև ընդգծել, որ վերը նշված գործիքակազմն արդյունավետ միջոց է յուրաքանչյուր ոչ իրավաչափ ձերբակալման դեպքում դրա դիմաց փոխհատուցում ստանալու, ինչպես նաև խախտումը թույլ տված պաշտոնատար անձին կամ անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1063-րդ հոդվածը նախատեսում է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Նույն օրենսգրքի 1064-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, կալանք, տնային կալանք, վարչական հսկողություն կամ բացակայելու արգելք խափանման միջոց կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը օրենքով սահմանված կարգով լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ նախաքննության մարմնի, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

2. Քաղաքացուն կամ իրավաբանական անձին նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հետևանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063-րդ հոդվածով նախատեսված հիմքերով և կարգով:

3. Արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:»

Քննարկվող հարցի վերաբերյալ 2024 թվականի ընթացքում ստացված բողոքների և ահազանգերի ոչ մեծ քանակը ցույց է տալիս, որ ձերբակալման նշված տեսակի հետ կապված նախորդ տարիների ընթացքում արձանագրված խնդիրների առումով արձանագրվել է որոշակի առաջընթաց: Այնուամենայնիվ, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով անձին

ձերբակալելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և այդ ինստիտուտի հիմքում ընկած տրամաբանության պահպանման հարցը շարունակում է գտնվել Պաշտպանի ուշադրության ներքո:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելիս անհրաժեշտ է խստագույնս պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներն ու նշված ինստիտուտի հիմքում ընկած տրամաբանությունը՝ առաջնորդվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ ներպետական դատական ատյանների համապատասխան իրավական դիրքորոշումներով՝ բացառելով հիմքերի բացակայության դեպքում անձի նկատմամբ ձերբակալման տվյալ տեսակը կիրառելու պրակտիկան:

3. Քրեական վարույթի շրջանակում անձանց պատշաճ ծանուցմանն առնչվող գործնական խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր՝ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրների շրջանակում անդրադարձել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ վարույթն իրականացնող մարմնի՝ վարութային գործողության կամ դատական նիստի մասին պատշաճ ծանուցելու պարտականությանը, ծանուցման եղանակներին և կարգին:

Մասնավորապես, անդրադառնալով պաշտոնատար անձանց կողմից քրեական վարույթի շրջանակում անձանց հեռախոսազանգի միջոցով վարութային գործողության մասնակցելու նպատակով վարույթն իրականացնող մարմին կանչելու ոչ իրավաչափ պրակտիկային, փաստվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվում է, որ վարույթի ընթացքում անձի ծանուցումը կատարվում է՝ 1) թղթային կամ էլեկտրոնային ծանուցագրով, 2) ծանուցվող անձի մասնակցությամբ կատարվող վարութային գործողության կամ ընթացող դատական նիստի ժամանակ ծանուցման մասին հայտարարելով և միաժամանակ համապատասխան արձանագրության մեջ այդ մասին նշում կատարելով, 3) ծանուցվողի համաձայնությամբ՝ ցանկացած այլ եղանակով: Հետևաբար, արձանագրվել է, որ հեռախոսազանգը ևս հնարավոր է դիտարկել որպես ծանուցման այլ եղանակ, ուստի, պաշտոնատար անձն իրավասու է հեռախոսազանգի միջոցով անձին հրավիրել վարութային գործողության միայն ծանուցվողի կողմից տվյալ կերպով ծանուցվելու վերաբերյալ համաձայնություն ստացված լինելու պարագայում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ անհրաժեշտ է շարունակել պրակտիկայի կատարելագործումը՝ հետևողականորեն ապահովելով անձանց ծանուցումը բացառապես Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և գործնականում բացառել դեպքերը, երբ անձը հարկադրաբար ներկայացվում է վարույթն իրականացնող մարմին առանց օրենքով սահմանված կարգով նախապես պատշաճ ծանուցված լինելու:

Նշված առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ անձնակազմին կրկին հրահանգավորվել

է առաջնորդվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի պահանջներով:

Վերոնշյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեից ստացվել է պատասխան առ այն, որ Քննչական կոմիտեն հետևողական է վարութային գործողության մասին դրան մասնակցելու իրավունք կամ պարտականություն ունեցող անձանց ծանուցելու եղանակների և ծանուցման պատշաճությունը պահպանելու հարցում:

2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում ՀՀ քննչական կոմիտեից տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2024 թվականի ընթացքում անձին հարցաքննության հրավիրելու դատավարական կարգի խախտման, մասնավորապես, թղթային կամ էլեկտրոնային ծանուցագրերի ձևը չպահպանելու կամ ծանուցագրում անձի դատավարական կարգավիճակը չմատնանշելու կամ սխալ մատնանշելու վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում բողոքներ չեն ստացվել:

Քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված պարզաբանման համաձայն՝ 2024 թվականի ընթացքում արձանագրվել է հարցաքննության հրավիրելու դատավարական կարգի խախտման 2 դեպք: Ըստ պարզաբանման՝ ծանուցումների իրականացման մասով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետները գործնականում պահպանվում են, իսկ հաշվետու ժամանակահատվածում արձանագրված դեպքերում, երբ անձը ծրագրված վարութային գործողության վերաբերյալ ծանուցվել է նույն օրը՝ պայմանավորված է եղել հեռախոսակապով ծանուցվելու և նույն օրը ներկայանալու մասին նախկինում ունեցած բանավոր պայմանավորվածությամբ:

Պաշտպանը, կարևորելով իրավասու մարմինների հետևողականությունը վարութային գործողությունների վերաբերյալ դրան մասնակցելու իրավունք կամ պարտականություն ունեցող անձանց ծանուցման պատշաճ իրականացման հարցում, ընդգծում է, որ այնուամենայնիվ, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նշված հարցի կապակցությամբ շարունակել են ստացվել ահազանգեր և բողոքներ:

Օրինակ՝ բողոքներից մեկով անձը հայտնել է, որ վարույթն իրականացնող քննիչն իր փաստաբանների էլեկտրոնային փոստի հասցեներին է ուղարկել նույն օրը վարույթն իրականացնող մարմին ներկայանալու և քրեական վարույթի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ծանուցումներ, մինչդեռ, գործող օրենսդրության համաձայն՝ ծանուցագիրը հանձնվում է վարութային գործողությունից առնվազն երկու օր առաջ: Բացի այդ, բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ ծանուցումներում չի նշվել դրանք ուշ հանձնելու պատճառները:

Վերոգրյալի կապակցությամբ Դատախազությունից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ մեղադրյալին մեղադրանքը ներկայացվելուց հետո վերջինը և պաշտպանները հրաժարվել են մասնակցել որևէ գործողության և հեռացել քննչական մարմնից: Այնուհետև, քննիչի կողմից մեղադրյալին հարցաքննելու պահանջ ներկայացնելուց հետո ներկայացել է միայն մեղադրյալը՝ հրաժարվելով ցուցմունք տալ: Այդ պայմաններում, հաշվի առնելով, որ

մեղադրյալն ու պաշտպանները հրաժարվել են ներկայանալ որևէ քննչական գործողության՝ քննիչը նախաքննության ավարտի մասին գրավոր ծանուցել է պաշտպաններին էլեկտրոնային փոստի միջոցով՝ նշելով գործի նյութերին ծանոթանալու օրվա և ժամի մասին: Դրանից հետո, հաշվի առնելով, որ պաշտպանները չեն արձագանքել՝ քննիչի կողմից մեղադրյալին նախաքննության ավարտ է հայտնվել նույն օրը՝ առաջարկելով ծանոթանալ քրեական վարույթի նյութերին, սակայն վերջինը հրաժարվել է՝ հայտնելով, որ իր պաշտպանները պատրաստվում են բացարկ հայտնել քննիչին: Ըստ ստացված պարզաբանման՝ այնուհետև քննիչի կողմից լրացուցիչ գրություն է ուղարկվել պաշտպաններին՝ էլեկտրոնային փոստի միջոցով, որով առաջարկվել է 3-օրյա ժամկետում ծանոթանալ քրեական վարույթի նյութերին:

Մեկ այլ խնդիր է Պաշտպանի աշխատակազմում շարունակաբար ստացվող բողոքներն ու ահազանգերը, այդ թվում՝ փաստաբաններից, այն մասին, որ որևէ տեղեկություն չունեն իրենց վստահորդի կամ մերձավոր ազգականի գտնվելու վայրի վերաբերյալ՝ խնդրելով Պաշտպանի աջակցությունը: Որոշ ահազանգերով, լավագույն դեպքում, անձը հայտնել է, որ ամենայն հավանականությամբ իր մերձավոր ազգականն արգելանքի է վերցվել իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից, սակայն առանց պարզաբանման, թե ի՞նչ վարույթի շրջանակում, ի՞նչ կարգավիճակով և ու՞ր է ներկայացվում:

Նմանատիպ ահազանգերի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից անմիջապես ձեռնարկվում են միջոցներ՝ անձի գտնվելու վայրը (Ոստիկանության կամ Քննչական բաժինը), այդ վայրում անձի գտնվելու հիմքերը պարզելու և մերձավոր ազգականներին կամ նրա փաստաբանին տեղեկացնելու ուղղությամբ: Հաճախ են պատահում դեպքեր, երբ փաստաբանը տվյալ անձի իրավունքների պաշտպանության նպատակով ներկայանում է քննչական բաժին, սակայն նրա մուտքը չի ապահովվում՝ պատճառաբանությամբ, որ տվյալ անձը քննչական մարմնում հարցաքննվում է վկայի կարգավիճակով, և հրաժարվել է փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իր իրավունքից: Նման ահազանգերի յուրաքանչյուր դեպքով Պաշտպանի ներկայացուցիչները բարձրացված խնդիրը հրատապ կարգով քննարկում են վարույթն իրականացնող մարմնի հետ: Նաև բազմաթիվ են դեպքերը, երբ կոնկրետ դեպքով վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվում է նույնաբնույթ պարզաբանում առ այն, որ անձը հարցաքննվում է վկայի դատավարական կարգավիճակով, նախքան բուն հարցաքննությունը նրան պարզաբանվել է փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իր իրավունքը, սակայն վերջինը հրաժարվել է: Մինչդեռ, տվյալ անձի մերձավոր ազգականները կամ փաստաբանն իրենց մտահոգությունն են հայտնում առ այն, որ անձի նկատմամբ կարող է փաստացի քրեական հետապնդում իրականացվել, քանի որ նա տևական ժամանակ գտնվում է վարույթն իրականացնող մարմնում, և խնդրում են Պաշտպանի աջակցությունը, որպեսզի ապահովվի փաստաբանի մուտքը քննչական մարմին, և նրա ներկայությամբ անձը հրաժարվի փաստաբանի մասնակցությամբ հարցաքննվելուց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի կարգավորում, որով հնարավորություն կընձեռվի փաստաբանին նմանատիպ

դեպքերում ներկայանալ քննիչի աշխատասենյակ, ինչից հետո վկան հնարավորություն կունենա փաստաբանի ներկայությամբ պնդել առանց փաստաբանի մասնակցության հարցաքննվելու իր դիրքորոշումը:

Այսպես, ծանուցագրին և դրա բովանդակությանը վերաբերող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ տուժողին կամ վկային հասցեագրված ծանուցագրում նշվում է, որ վարութային գործողությանն առանց փաստաբանի ներկայանալու դեպքում փաստաբան պահանջելու հիմքով այդ վարութային գործողությունը ենթակա չէ հետաձգման:

Բացի այդ, նույն օրենսգրքի՝ վկայի հարցաքննության կարգին վերաբերող 218-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, ապա փաստաբանն իրավունք ունի մասնակցելու հարցաքննությանը և քննիչի ներկայությամբ կարճատև խորհրդատվություն տալու վկային նրա կարգավիճակին վերաբերող հարցերով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե փաստաբանի հետ հարցաքննությանը ներկայանալու իրավունքի մասին պատշաճ ծանուցված վկան հարցաքննությանը ներկայացել է առանց փաստաբանի, ապա քննիչը պարտավոր չէ փաստաբան հրավիրելու հիմքով հետաձգել հարցաքննությունը, բացառությամբ այն դեպքի, երբ վկան գտնում է, որ փաստացի կասկածվում է հանցագործության մեջ:

Գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ անձը, ով հարցաքննվում է վկայի կարգավիճակով, վարույթն իրականացնող մարմնում «հայտնվում» է առանց պատշաճ ծանուցման: Օրինակ՝ վարույթն իրականացնող մարմինը խուզարկություն է իրականացնում որևէ ընկերության տարածքում, այնուհետև, խուզարկության ավարտից անմիջապես հետո, տվյալ ընկերության աշխատակիցներին «հրավիրում» է ներկայանալ վարույթն իրականացնող մարմին: Բնականաբար, դեպքերի գերակշիռ մասում անձինք կատարում են տվյալ պահին վարույթն իրականացնող մարմին ներկայանալու իրավապահ մարմնի ներկայացուցչի պահանջը (որքան էլ դա հետագայում ձևակերպվի որպես խնդրանք կամ հրավեր), քանի որ մանրամասն չեն տիրապետում իրենց իրավունքներին, այդ թվում՝ տեղեկացված չեն, որ վարույթն իրականացնող մարմին ներկայանալ «հրավիրելու» ընթացակարգ առկա չէ, և կարող են վարույթն իրականացնող մարմին ներկայանալու համար պահանջել օրենքով սահմանված կարգով իրենց հանձնել ծանուցագիր:

Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ծանուցագիրը հանձնվում է վարութային գործողության կամ դատական նիստի օրվանից ոչ ուշ, քան երկու օր առաջ: Եթե վարութային գործողությունը կամ դատական նիստը ծրագրված չէ, կամ դատալսումները չեն կարող հետաձգվել, ապա ծանուցագիրը կարող է հանձնվել ներկայանալու նախորդ օրը կամ ներկայանալուց անմիջապես առաջ՝ դրանում նշելով ծանուցագիրն ուշ հանձնելու պատճառը:»:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածը սահմանում է նաև, որ ծանուցագրում պետք է նշվեն հրավիրող մարմնի կամ պաշտոնատար անձի տվյալները, հրավիրվող անձի անունը, ազգանունը, հասցեն և կարգավիճակը, ծանուցվողի վերաբերելի տվյալները, եթե

հրավիրվողը ծանուցվում է այլ անձի կամ հաստատության միջոցով, ներկայանալու տեղը և ժամանակը (տարին, ամիսը, օրը, ժամը), վարույթի նախաձեռնման հիմքում դրված փաստը և դրա իրավական գնահատականը, կատարման ենթակա վարութային գործողությունը, ծանուցումն ստացող անձի պարտականությունն այն հանձնելու հրավիրվող անձին և անհարգելի պատճառով չներկայանալու իրավական հետևանքները: Տվյալ կարգավիճակով առաջին անգամ հրավիրվող անձին հասցեագրված ծանուցագրին կցվում է հրավիրվողի կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների ցանկը: Տուժողին կամ վկային հասցեագրված ծանուցագրում նշվում է, որ վարութային գործողությանն առանց փաստաբանի ներկայանալու դեպքում փաստաբան պահանջելու հիմքով այդ վարութային գործողությունը ենթակա չէ հետաձգման:

Պաշտպանն արձանագրում է, որ վերոգրյալ իրավակարգավորումների համաձայն գործելու դեպքում՝ կբացառվեն անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հանգամանքները: Անձինք պատշաճ կերպով կծանուցվեն թե՛ վարույթն իրականացնող մարմնի, թե՛ նախաձեռնված վարույթի, և թե՛ իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, հնարավորություն կունենան իրենց հարցաքննությունից առաջ քննարկել ստեղծված իրավիճակը փաստաբանի հետ, և անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի ուղեկցությամբ:

Հետևաբար, վերը թվարկված խնդիրների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է շարունակել պրակտիկայի կատարելագործումը՝ հետևողականորեն ապահովելով անձանց պատշաճ ծանուցումը բացառապես Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին նախորդ տարեկան հաղորդումներով Պաշտպանը մշտապես անդրադարձել է Վարչական իրավախախտման վարույթով անձին ազատությունից զրկելու գործնական խնդիրներին: Մասնավորապես, 2023 թվականի տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրների հաշվառմամբ Պաշտպանը, նկատի ունենալով գործնականում առկա խնդիրների շարունակականությունը՝ անհրաժեշտ է համարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով սահմանված հիմքով անձին վարչական ձերբակալման ենթարկելիս երաշխավորել, որպեսզի նախքան անձին ազատությունից զրկելը Ոստիկանության ծառայողների կողմից ներկայացվող օրինական պահանջը բավարարի միջազգային պրակտիկայում առկա չափանիշներին: Ուստի, նշվածն ապահովելու նպատակով հարկ է համարվել լուրջ ուշադրություն դարձնել Ոստիկանության ծառայողների մասնակցությամբ իրականացվող վերապատրաստումներին՝ ինչպես բովանդակության, այնպես էլ մեթոդաբանության տեսանկյունից՝ դրանցում ընդգրկելով ավելի շատ թվով Ոստիկանության ծառայողների:

Վերոգրյալից բացի, Պաշտպանը ողջունելի է համարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում տեղ գտած մոտեցումները, միևնույն ժամանակ կարևորելով նաև դրա հնարավոր սեղմ ժամկետում ընդունման անհրաժեշտությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդմամբ վերը նշված առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացվել է տեղեկություն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթը գտնվում է շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ քննարկումների և լրամշակումների փուլում: Աշխատանքների ամփոփման և համաձայնեցված Նախագծերի փաթեթի պատրաստ լինելուց հետո այն ևս մեկ անգամ՝ մինչև 2024 թվականի ավարտը, կներկայացվի Վարչապետի աշխատակազմի քննարկմանը:

Բացի այդ, տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ 2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստում է անցել ընդհանուր թվով ոստիկանության 84 ծառայող, հետևյալ թեմաներով և ժամաքանակներով՝

- վարչական վարույթի ապահովման միջոցները (6 ժամ),
- վարչական ձերբակալում (օրինական պահանջ): Հրազենի գործադրման հիմքեր (2 ժամ),
- օրինականության ապահովումը ոստիկանության վարչական գործունեությունում (2 ժամ),
- պարեկային ոստիկանության իրավունքներն ու պարտականություններն արտակարգ իրավիճակներում և հատուկ միջոցառումներ իրականացնելիս (6 ժամ),
- առանձին իրավախախտումների գործերով վարչական վարույթի ապահովման միջոցները և փաստաթղթավորումը (6 ժամ):

Չնայած վերոգրյալին՝ Պաշտպանն արձանագրում է, որ նախորդ տարիների տարեկան հաղորդումներով քննարկված, այդ թվում՝ վարչական ձերբակալման ենթարկված անձանց նվազագույն իրավունքների ապահովման խնդիրները համակարգային առումով մնացել են չլուծված նաև 2024 թվականի ընթացքում:

Ինչպես նախորդ տարիներին, 2024 թվականի ընթացքում ևս վարչական իրավախախտման վարույթով անձին ազատությունից զրկելու ընթացքում մարդու իրավունքների ապահովման վերաբերյալ խնդիրներն արձանագրվել են հիմնականում հավաքների ընթացքում, երբ անձինք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով, նույն օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով ենթարկվում են վարչական ձերբակալման:

Մասնավորապես, քննարկվող ժամանակահատվածում տեղի ունեցած հավաքների ընթացքում Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի և ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների

ընթացքում հիմնականում ներկայացվել են նույնաբնույթ խնդիրներ առ այն, որ Ոստիկանության ծառայողների կողմից որևէ պահանջ հնչեցված չլինելու պայմաններում իրենք վարչական ձերբակալման են ենթարկվել Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով: Իրականացված այցերի ընթացքում մի խումբ անձինք էլ նշել են, որ կատարել են Ոստիկանության ծառայողների կողմից հնչեցված պահանջները, բայց միևնույն է կրկին արգելանքի են վերցվել և տեղափոխվել ոստիկանության բաժիններ:

Որոշ դեպքերում անձանց ազատությունից զրկելիս չեն ներկայացվել նրանց ազատությունից զրկելու հիմքերն ու պատճառները: Այս համատեքստում առավել մտահոգիչ են այն դեպքերը, երբ անձանց ազատությունից զրկելու պահին չի հստակեցվում՝ արդյոք վերջիններս ձերբակալվել են ենթադրյալ հանցանք, թե վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

Խնդրահարույց են նաև ազատությունից զրկված անձին՝ իր ընտրած անձին տեղեկացնելու իրավունքի մասին (զանգի իրավունք) չծանուցելու կամ նշված իրավունքը չապահովելու դեպքերը:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ անկախ անձի նկատմամբ վարչական վարույթի շրջանակում իրականացվող գործողությունների ավարտից՝ անձինք շարունակել են պահվել Ոստիկանության բաժիններում մինչև լրանա օրենքով սահմանված 3 ժամը:

Նշվածի համատեքստում Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ վերոնշյալ 3 ժամն այն առավելագույն ժամկետն է, որում Ոստիկանությունը կարող է անձին վարչական ձերբակալման շրջանակում ազատությունից զրկել: Միաժամանակ, մինչև այդ ժամկետի լրանալն անձի մասնակցությամբ վարութային գործողությունների ավարտից հետո անձը պետք է անմիջապես ազատ արձակվի՝ անկախ վերջինիս՝ փաստացի արգելանքի վերցնելու պահից 3 ժամը լրանալու հանգամանքից:

Քննարկվող խնդիրների վերաբերյալ Պաշտպանը բազմիցս հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով[215]:

2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում վերը նշված հարցերի կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացված հավաքների ընթացքում ձերբակալվել և ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային բաժիններ են բերվել ընդհանուր թվով 1107 անձ, որոնցից 132-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով, 975-ը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության զորքերի զինծառայողի կամ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու կասկածանքով: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ տվյալ հոդվածով Վարչական դատարան է ներկայացվել 116 հայց, որից 71 վարչական գործ գտնվում է դեռևս քննության փուլում, 2 հայց բավարարվել է, 43 հայց՝ մերժվել:

---

[215]Հայտարարությունները հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2950, https://ombuds.am/am/site/ViewNews/2989, https://ombuds.am/am/site/ViewNews/3003, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ Ոստիկանության ծառայողի հնչեցրած օրինական պահանջի և այն չկատարելու վերաբերյալ գլխավոր նախապայմանները հետևյալն են.

- Նախքան վարչական ձերբակալումը իրականացնելը Ոստիկանության ծառայողների կողմից պետք է հնչեցվի օրինական պահանջ,
- Չի կարող ներկայացվել ցանկացած բնույթի պահանջ: Վերջինս պետք է բխի օրենքից (համապատասխան իրավական ակտից)՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման կամ օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում,
- Օրինական պահանջը պետք է լսելի և ընկալելի լինի անձի համար,
- Օրինական պահանջը հնչեցնելուց հետո պետք է տրամադրվի ողջամիտ ժամանակ այն կատարելու համար, որից հետո միայն դրան չենթարկվելու հիմքով անձը կարող է զրկվել ազատությունից:

Միայն այս պահանջների պահպանման արդյունքում է, որ Ոստիկանության ծառայողների գործողությունները կարող են հիմնավորված լինել:

Վերոգրյալից բացի, ՀՀ ներքին գործերի նախարարությունից տեղեկություններ են ներկայացվել այն մասին, որ 2024 թվականին անցկացված հավաքների ընթաց-քում ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման հանգամանքները պարզելու նպատակով ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել են 33 կարգապահական վարույթներ, որոնցից 18-ի ընթացքը կասեցվել է՝ մինչև նույն փաստերի կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ 15-ը թողնվել են անհետևանք, որոնցից 12-ի արդյունքներով ոստիկանության ծառայողների գործողություններում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, իսկ 3 հիմնավորված դեպքերով կարգապահական խախտում թույլ տված ոստիկանության 3 ծառայող ենթակա են եղել կարգապահական տույժի, սակայն ղեկավարվելով «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ վերջիններիս նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել: Իրականացված ծառայողական քննությունների արդյունքներով կազմված եզրակա-գությունների պատճենները, հիմնավորված դեպքերով, ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումների պետերին՝ ենթակա ստորաբաժանումներում քննարկելու, հավաքների ու հանրային այլ միջոցառումների ընթացքում իրավաչափ վարքագիծ դրսևորելու ուղղությամբ համապատասխան հանձնարարականներ տալու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումներով արձանագրված խնդիրները 2024 թվականի ընթացքում համակարգային առումով մնացել են չլուծված, ուստի անհրաժեշտ է խստագույնս հետևել, որպեսզի յուրաքանչյուր դեպքում, նախքան վարչական իրավախախտման վարույթով անձին ազատությունից զրկելը, Ոստիկանության

ծառայողների կողմից ներկայացվող օրինական պահանջը բավարարի վերը թվարկված և միջազգային պրակտիկայում առկա չափանիշներին, ինչպես նաև իրականացվող վարույթների ընթացքում անշեղորեն ապահովվեն ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքները:

ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախորդ տարիների, այդ թվում՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդմամբ ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ իրավասու մարմնին տեղեկություններ տրամադրելու պարտականությանը զուգահեռ պետք է ապահովվի նաև սահմանափակման հիմքերի վերացման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը:

Նկատի ունենալով, որ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել մեղադրյալի ազատ տեղաշարժվելու սահմանափակման ոչ իրավաչափ դեպքերի վերաբերյալ բողոքներ՝ կապված անձի նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերացման դեպքում սահմանային էլեկտրոնային կառավարման (ՍԷԿՏ) համակարգում տվյալ անձի անհատական տվյալների վերաբերյալ համապատասխան գրառում չկատարելու հետ, Պաշտպանը կարևորել է, որպեսզի գործնականում քրեական վարույթն իրականացնող մարմինները բոլոր դեպքերում խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որոշում կայացնելիս (հատկապես բացակայելու արգելք խափանման միջոցի դեպքում) պատշաճ ջանասիրություն ցուցաբերեն այդ որոշումը կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին անհապաղ հանձնելու ուղղությամբ՝ բացառելով անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը: Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրել է, որ վերը նշված խնդիրների բացառման նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նաև ոլորտը կարգավորող օրենսդրական կարգավորումների կատարելագործման ուղղությամբ՝ ՍԷԿՏ համակարգ մուտքագրվող համապատասխան տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով ուղարկելու ընթացակարգեր իրավասու բոլոր պետական մարմինների համար ներդնելու եղանակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության և պետական իրավասու մարմինների կողմից աշխատանքներ են իրականացվում «Պետական սահմանի մասին» օրենքում և Կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու համար համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման ուղղությամբ, որոնց արդյունքում քրեական վարույթ իրականացնող բոլոր մարմիններում կներդրվեն ՀՀ սահմանային էլեկտրոնային տեղեկատվական համակարգի համապատասխան աշխատատեղեր և իրական ժամանակում քրեական վարույթն իրականացնող մարմինները հնարավորություն կունենան ՀՀ ՍԷԿՏ համակարգում մուտքագրել ՀՀ-ից անձի ելքի

սահմանափակում ենթադրող խափանման միջոց կիրառելու և այն վերացնելու վերաբերյալ տեղեկությունները:

Նույն առաջարկի կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ ՆԳՆ-ն պատրաստակամ է համագործակցել իրավասու պետական կառավարման մարմինների հետ օրենսդրական կարգավորումների կատարելագործման ուղղությամբ:

Բացի այդ, Դատական դեպարտամենտից պարզաբանում է ստացվել այն մասին, որ ՍԷԿՏ համակարգի գործարկման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ Ներքին գործերի նախարարության կողմից պարբերաբար նախաձեռնվում են աշխատանքային քննարկումներ՝ շահառու պետական մարմինների մասնակցությամբ: Այդ քննարկումներում ՍԷԿՏ համակարգի կիրառման մասով առանցքային հարց է դիտարկվել դրա արդյունավետ շահագործման ապահովման անհրաժեշտությունը՝ շահառու պետական մարմինների միջև համապատասխան տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով ուղարկելու ընթացակարգերի ներդրման տեսանկյունից: Քննարկվել են նաև վարույթն իրականացնող մարմինների կողմից որոշումն այն կիրառող մարմնին անհապաղ հանձնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օրենսդրական համապատասխան կառուցակարգերի ներդրման հարցերը:

Նույն առաջարկի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեից ստացված պարզաբանման համաձայն՝ նկատի ունենալով բարձրացված հարցի կարևորությունը՝ Կոմիտեի նախագահի կողմից ընդունվել է «Խափանման միջոցներ կիրառելիս տեղեկատվությունը տրամադրելու մասին» 2015թ. հոկտեմբերի 10-ի N 91-Լ հանձնարարականը, համաձայն որի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված՝ «Բացակայելու արգելքը» խափանման միջոց կիրառելիս՝ մեղադրյալի ՀՀ-ից բացակայելն արգելելու մասին որոշում կայացնելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշման համաձայն՝ համապատասխան տվյալները «Mulberry» էլեկտրոնային համակարգով ուղարկվում են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն՝ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար: Նույն ընթացակարգով և ժամկետներում տեղեկատվությունն ուղարկվում է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն նաև այն դեպքերում, երբ կիրառված խափանման միջոցը վերացվել է և/կամ ստացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին հսկող դատախազի որոշումը: Նշված իրավական ակտով կարգավորվում են ընդհուպ տեղեկատվությունը ոչ աշխատանքային ժամերին կամ օրերին, ինչպես նաև «Mulberry» էլեկտրոնային համակարգի խափանման դեպքում ուղարկելու հետ կապված հարցերը:

Պաշտպանը կարևորում է ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված պետական իրավասու մարմինների պատրաստակամությունն ու կատարվող աշխատանքները: Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ 2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում ստացվել են ահազանգեր այն մասին, որ անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական վարույթը՝ կարճվել, սակայն նրա՝ ՀՀ-ից ելքի իրավունքի սահմանափակումը շարունակել է գործել՝ ՍԷԿՏ համակարգում համապատասխան գրառում չկատարելու

հետևանքով: Ընդ որում՝ ՍԷԿՏ համակարգում անձի նկատմամբ կիրառված սահմանափակման վերացման համապատասխան նշում չի կատարվում ինչպես դատարանից, այնպես էլ քննչական մարմնից համապատասխան գրություն ուղարկված չլինելու պատճառաբանությամբ: Չնայած խափանման միջոցը վերացնելու մասին որոշումը դրա կիրառումն ապահովող մարմնին հանձնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանված է օրենսդրական մակարդակով՝ այդուհանդերձ, 2024 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացված ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման բողոքների առկայությունը վկայում է այն մասին, որ տվյալ օրենսդրական դրույթի գործնական կիրառման համատեքստում դեռևս առկա են խնդիրներ, և իրավակիրառ պրակտիկան միշտ չէ, որ համապատասխանում է հարցի առնչությամբ առկա չափանիշներին և երաշխիքներին: Ստացված ահազանգերից յուրաքանչյուրը սեղմ ժամկետում քննարկվում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության, ինչպես նաև քննչական մարմինների ներկայացուցիչների հետ և արդյունավետ համագործակցության շնորհիվ գերակշռող դեպքերում ահազանգով ներկայացված հարցը ստանում է դրական լուծում:

2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում Դատախազությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ 2024 թվականի ընթացքում ստացված բողոքների քննարկման շրջանակներում արձանագրվել է 1 դեպք, երբ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը վերացված չի եղել վերջինիս նկատմամբ ավարտված քրեական վարույթի պայմաններում, որը դատախազական ներգործության արդյունքում վերացվել է:

Հաշվի առնելով վերոգրյալը և նախորդ տարիներին Պաշտպանի արտահայտած դիրքորոշումներն ու առաջարկները, խնդրի վերաբերյալ աշխատակազմում ստացված բողոքների ոչ մեծ քանակը, ինչպես նաև իրավասու պետական մարմիններից ստացված տվյալները՝ Պաշտպանն արձանագրում է, որ մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկայի վերացման ուղղությամբ շարունակաբար ձեռնարկվում են քայլեր, և այդ առումով առկա է դրական դինամիկա:

Այդուհանդերձ, դեռևս խնդրահարույց է պետական որոշ մարմինների (օրինակ՝ դատարանների) կողմից Ոստիկանությանը ՍԷԿՏ համակարգ մուտքագրվող համապատասխան տեղեկատվությունն առաքման միջոցով փոխանցելն, ինչն ինքնին բարդացնում է ընթացակարգը՝ հանգեցնելով իրավունքների տեսանկյունից խնդրահարույց իրավիճակների: Անցնող տարում ևս արձանագրվել են դեպքեր, երբ կիրառված սահմանափակումը վերացնելուց մի քանի օր անց անձը փորձել է հատել ՀՀ պետական սահմանը, սակայն դա նրան չի թույլատրվել, քանի որ վարույթն իրականացնող մարմինն (հիմնականում դատարանի վարույթում գտնվող գործերով) անհրաժեշտ գրությունը Ոստիկանություն ուղարկվել է փոստային ծառայության միջոցով, և այն դեռևս ստացված չի եղել: Նման դեպքերում կրկին բարձրացված խնդիրները հնարավոր սեղմ ժամկետներում լուծում են ստանում Ոստիկանության հետ ձևավորված համագործակցության արդյունքում՝ համապատասխան գրությունը ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային տարբերակով Ոստիկանության իրավասու ստորաբաժանում ուղարկելու միջոցով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը կարևորում է, որպեսզի օրենսդրական կարգավորումների կատարելագործման արդյունքում հնարավորինս սեղմ ժամկետներում քրեական վարույթ իրականացնող բոլոր մարմիններում ներդրվեն կառուցակարգեր, որոնց միջոցով իրական ժամանակում քրեական վարույթն իրականացնող մարմինները հնարավորություն կունենան ՀՀ ՍԷԿՏ համակարգում մուտքագրել ՀՀ-ից անձի ելքի սահմանափակում ենթադրող խափանման միջոց կիրառելու և այն վերացնելու վերաբերյալ տեղեկությունները՝ բացառելով անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը:

2. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախորդ տարիների տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձել է քրեական վարույթով տուժողի և վկայի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող այլ անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունից ելքը սահմանափակելու ոչ իրավաչափ պրակտիկային առնչվող խնդիրներին: Մասնավորապես, Պաշտպանը մշտապես ընդգծել է, որ անգամ եթե անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքի սահմանափակումը վարույթի մասնակցի (մասնավոր կամ օժանդակող) պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, դրա կիրառման համար օրենսդրությամբ պետք է սահմանված լինեն քրեադատավարական հիմքեր:

Հարկ է կրկին ընդգծել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով Մարդու իրավունքների պաշտպանի դիմումով բարձրացված՝ վկայից, տուժողից անձնագիր վերցնելու, ինչպես նաև ՍԷԿՏ համակարգի միջոցով վկայի և տուժողի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու հիմնահարցին, 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության որևէ իրավական ակտով նման պահանջ չի նախատեսվում[216]: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշմամբ էլ չի նախատեսվում նման դատավարական կարգավիճակ ունեցող անձի վերաբերյալ տեղեկությունները ՍԷԿՏ համակարգ տեղադրելու՝ իրավասու մարմնի պարտականություն:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և ահազանգերի կապակցությամբ Պաշտպանը, ողջունելի համարելով խնդրի լուծման ուղղությամբ արձանագրված դրական դինամիկան, ընդգծել է, որ գործնականում պետք է բացառել քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման՝ օրենքով չնախատեսված և խնդրին առնչվող չափանիշներին հակասող ցանկացած դեպք (այդ թվում՝ ՍԷԿՏ համակարգում հանրապետությունից դուրս գալու արգելքի մասին տվյալ մուտքագրելու եղանակով):

---

[216] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշումը, կետ 9-րդ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից պարզաբանում է ստացվել առ այն, որ Ծառայության կողմից, իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ բացառելու քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման օրենքով չնախատեսված և խնդրին առնչվող չափանիշներին հակասող ցանկացած դեպք:

Նույն առաջարկի կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ստացվել առ այն, որ ՆԳՆ ոստիկանության իրավասու ծառայողների կողմից սահմանային էլեկտրոնային կառավարման համակարգը շահագործվում, անձի վերաբերյալ տվյալներ մուտքագրվում և ՀՀ-ից ելքի իրավունքը սահմանափակվում է բացառապես սահմանված իրավակարգավորումներին համապատասխան:

ՀՀ քննչական կոմիտեից էլ պարզաբանում է ստացվել այն մասին, որ քննարկվող հարցը կարգավորվում է Կոմիտեի նախագահի՝ «Խափանման միջոցներ կիրառելիս տեղեկատվությունը տրամադրելու մասին» 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 91-Լ հանձնարարականի շրջանակներում:

Այդուհանդերձ, 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ՝ կապված քննարկվող խնդրի հետ: Մասնավորապես, ստացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ընտանիքի անդամների հետ, արձակուրդն անցկացնելու նպատակով, Ռուսաստանի Դաշնությունից ժամանել է Հայաստանի Հանրապետություն: Հավելել է, որ ՌԴ վերադառնալիս Բագրատաշենի սահմանային անցակետում տեղեկացել է, որ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա են տվյալներ ՀՀ-ից իր ելքի սահմանափակման վերաբերյալ, որը կիրառվել է Ոստիկանության բաժնի կողմից: Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ որևէ տեղեկություն չունի, թե ինչ հիմնավորմամբ է սահմանափակվել իր ազատ տեղաշարժի իրավունքը, ուստի խնդրել է Պաշտպանի աջակցությունը սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում կիրառված սահմանափակումը վերացնելու ուղղությամբ:

Բողոքի քննարկման շրջանակում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությունից ստացվել է պարզաբանում առ այն, որ անձի կողմից հայտնած տեղեկությունների հիման վրա կազմված փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե՝ հետագա ընթացքը որոշելու համար: Ավելի ուշ, լրացուցիչ պարզաբանում է ստացվել առ այն, որ տվյալ անձի նկատմամբ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում կիրառված սահմանափակումը վերացվել է և վերջինս «Բագրատաշեն» սահմանային անցակետով անարգել հատել է ՀՀ պետական սահմանը:

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում Դատախազությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ որպես վկա և տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման վերաբերյալ 2024 թվականի ընթացքում ստացվել է 1 դիմում, որն ուղարկվել է ՀՀ

հակակոռուպցիոն կոմիտե՝ ՀՀ քր. դատ. օր. 178-րդ հոդվածով սահմանված կարգով քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու նպատակով:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներն ու ահազանգերը վկայում են, որ դեռևս առկա են դեպքեր, երբ իրավասու մարմնի ծառայողը, ստանալով տվյալ անձի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն, առանց վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական հետապնդում իրականացնելու և բացակայելու արգելք խափանման միջոց կիրառելու որոշումների առկայության, գրություն է ուղարկում սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին՝ տվյալ անձի անհատական տվյալները սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգ մուտքագրելու և վերջինիս՝ ՀՀ-ից ելքի իրավունքը սահմանափակելու համար, իսկ սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի ծառայողը, ստացված գրության հիման վրա, առանց վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական հետապնդում իրականացնելու և բացակայելու արգելք խափանման միջոցը կիրառելու որոշումների առկայության, տվյալ անձի ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակելու նպատակով վերջինիս անհատական տվյալները զետեղում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում, ինչի արդյունքում անձի՝ ՀՀ-ից ելքը սահմանափակվում է:

Թեև քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունից ելքի արգելք սահմանելու պրակտիկայի բարելավման հարցում առկա է դրական դինամիկա և Պաշտպանի աշխատակազմում քննարկվող հարցի վերաբերյալ ստացված բողոքները մեծ թիվ չեն կազմել, այդուհանդերձ, Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել բացառելու քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման՝ օրենքով չնախատեսված և խնդրին առնչվող չափանիշներին հակասող ցանկացած դեպք (այդ թվում՝ ՍԷԿՏ համակարգում հանրապետությունից դուրս գալու արգելքի մասին տվյալ մուտքագրելու եղանակով)՝ երաշխավորելով նման յուրաքանչյուր դեպքով մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու արդյունավետ ընթացակարգ:

3. ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ այլ երկրների իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված լինելու պարագայում նրանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելքը տևական ժամանակ պահպանելու հետ կապված խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձ է կատարվել անձի նկատմամբ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից հայտարարված հետախուզման հիմքով ՀՀ տարածքում հայտնաբերվելուց հետո նրա ազատ տեղաշարժվելու կոնվենցիոն իրավունքի իրացման սահմանափակմանն առնչվող հարցերին:

2023 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծել է, որ անհրաժեշտ է բացառել այլ պետության կողմից անձի նկատմամբ հայտարարված հետախուզման պարագայում նրա ազատ

տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումները, ինչպես նաև կատարելագործել խնդրի հաղթահարմանն ուղղված կառուցակարգերը:

Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ 2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նույնաբովանդակ բողոքներ:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից մեկով Մոլդովայի Հանրապետության քաղաքացին տեղեկացրել է, որ Մոլդովայի Հանրապետությունում գտնվելու ընթացքում տեղի իրավապահ մարմինների կողմից քննվող քրեական վարույթի շրջանակում հանդիսացել է մեղադրյալ: Հավելել է, որ դրանից հետո Մոլդովայի Հանրապետության իրավասու մարմնի կողմից պատասխանատվության է ենթարկվել, ինչից հետո իր նկատմամբ կիրառված սահմանափակումները վերացել են և ազատ է արձակվել: Ըստ պնդման՝ այնուհետև Մոսկվա-Երևան-Քիշնև տրանզիտային թռիչքով ժամանել է «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, որտեղ ձերբակալվել է և տեղեկացվել, որ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա են տվյալներ իր նկատմամբ հետախուզում հայտարարված լինելու վերաբերյալ: Հավելել է, որ ձերբակալվելուց 2-3 օր անց ազատ է արձակվել՝ նկատի ունենալով, որ Մոլդովայի իրավասու մարմինների կողմից համապատասխան փաստաթղթեր չեն ներկայացվել ՀՀ իրավապահ մարմիններին: Վերոգրյալի հաշվառմամբ՝ բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում իր նկատմամբ կիրառված սահմանափակումը վերացնելու ուղղությամբ:

Բողոքի քննարկման շրջանակում ՀՀ ներքին գործերի նախարարության հետ իրականացված գրագրության արդյունքում պարզաբանումներ են ներկայացվել այն մասին, որ համապատասխան ընթացակարգի արդյունքում ժամանակավորապես դադարեցվել է Մոլդովայի Հանրապետության քաղաքացու սահմանային տեղաշարժի նկատմամբ առկա հսկողությունն, ինչի արդյունքում վերջինս ներկայումս կարող է հատել ՀՀ պետական սահմանը: Միևնույն ժամանակ, պարզաբանվել է, որ հայտարարված հետախուզումն ինքնին չի դադարում և շարունակում է գործել մյուս պետությունների տարածքում, և օտարերկրյա որևէ (երրորդ) պետությունում, որի քաղաքացին չի հանդիսանում տվյալ անձը, հայտնաբերվելու դեպքում հնարավոր է քննարկվի այդ պետության կողմից հետախուզումը նախաձեռնած պետությանը (տվյալ դեպքում՝ Մոլդովայի Հանրապետություն) հանձնելու հարցը: Տեղեկություն է ստացվել նաև, որ նշված անձն անարգել մեկնել է Հայաստանի Հանրապետությունից:

Մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ ինքնակամ ներկայացել է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժին, որտեղ ձերբակալվել է, քանի որ ՌԴ իրավասու մարմինների կողմից ՌԴ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի հատկանիշներով քննվող գործի շրջանակում գտնվել է միջպետական հետախուզման մեջ: Հավելել է, որ ձերբակալվելուց հետո՝ երկու օր անց, ՀՀ դատախազության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի որոշմամբ ազատ է արձակվել, իր վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում ՌԴ-ից չստանալու հիմքով:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ նկատի ունենալով, որ հանդիսանում է ՀՀ քաղաքացի՝ իր պաշտպանները գրություն են հասցեագրել ՀՀ արդարադատության նախարարություն՝ իր վերաբերյալ ՌԴ-ում քննվող քրեական

վարույթը պահանջելու հարցը քննարկելու վերաբերյալ, ինչի կապակցությամբ հարցում է կատարվել ՌԴ գլխավոր դատախազություն, սակայն հարցման կապակցությամբ տևական ժամանակ պատասխան չի ստացվել: Դրանից հետո իր պաշտպանները գրություն են հասցեագրել Ոստիկանություն՝ իր տվյալները ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգից հանելու և ՀՀ պետական սահմանը հատելը թույլատրելու վերաբերյալ, սակայն Ոստիկանությունից ստացված պարզաբանմամբ նշվել է, որ իրականացվում են համապատասխան ստուգումներ: Բողոք ներկայացրած անձը խնդրել Պաշտպանի աջակցությունը ՍԷԿՏ համակարգում իր նկատմամբ կիրառված սահմանափակումը վերացնելու ուղղությամբ:

Բողոքի քննարկման շրջանակում ՀՀ ներքին գործերի նախարարության հետ գրագրության արդյունքում հարցը կրկին ստացել է դրական լուծում, անձի նկատմամբ սահմանային տեղաշարժի նկատմամբ առկա հսկողությունը ժամանակավորապես դադարեցվել է:

Նման օրինակները բազմաթիվ են, երբ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում հետախուզման մեջ գտնվելու վերաբերյալ տեղեկությունների ներմուծված լինելու հանգամանքով պայմանավորված՝ անձինք չեն կարողանում հատել ՀՀ պետական սահմանը, ինչի արդյունքում առանց իրավական պատշաճ հիմնավորման, իրենց կամքին հակառակ, շարունակում են մնալ ՀՀ տարածքում՝ զրկված լինելով նաև բնակության վայրի, գումարի և այլ նվազագույն կենսապահովման միջոցներից:

Պաշտպանը վերստին ընդգծում է, որ այլ պետության կողմից անձի նկատմամբ հայտարարված հետախուզումն ինքնին չի կարող հանդիսանալ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելու միակ իրավաչափ հիմք: Այդ իրավունքի իրավաչափ սահմանափակումը հնարավոր է մի շարք այլ պայմանների բավարարման իրավիճակում միայն:

Պաշտպանի աշխատակազմ ստացված նմանատիպ բոլոր բողոքներն ու կից փաստաթղթերը պատշաճ կերպով ուսումնասիրվում են, խնդրի լուծման կապակցությամբ համապատասխան պարզաբանումների պահանջով գրություններ են ուղարկվում Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմիններին, իսկ որոշ դեպքերում՝ բարձրացված հարցերը լուծում են ստանում ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ ՆԳՆ ոստիկանության Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ներկայացուցիչների հետ քննարկումների և համագործակցության արդյունքում:

Պաշտպանը դրական է գնահատում ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված պետական իրավասու մարմինների պատրաստակամությունն ու կատարվող աշխատանքները, սակայն վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ այլ պետության կողմից անձի նկատմամբ հայտարարված հետախուզման պարագայում նրա ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումները բացառելու և խնդրի հաղթահարմանն ուղղված կառուցակարգերն անհրաժեշտ է ենթարկել մանրամասն իրավական կարգավորման:

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Փաստաբանի մասնագիտական գործունեության երաշխավորումն ու մատչելիությունը՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավաբանական օգնության իրավունքի իրացման հիմնապայման

Իրավական և ժողովրդավար պետության կարևորագույն բնութագրիչներից է մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության մեխանիզմների ապահովումը: Դրանց թվում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ կիրառման կառուցակարգերի ապահովումը:

Այսպես, Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության շրջանակում մշտապես կարևորել է ժողովրդավարական հասարակությունում փաստաբաններին վերապահված հիմնարար դերակատարությունն ու փաստաբանական համայնքի հետ արդյունավետ համագործակցությունը: Պաշտպանը բազմիցս ընդգծել է, որ փաստաբանական գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանության համակարգը պայմանավորող գործոններից է, և պետության ու հասարակության կյանքում իրավունքի գերակայության ապահովման գործում ունի առանցքային դերակատարություն: Այն նաև պետության իրավական անվտանգության կարևորագույն երաշխիքներից է:

Հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հիմնական եղանակ, որն ուղղված է անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով: Հետևաբար, առավել քան կարևոր է հասարակության և, հատկապես, պետական մարմինների, իրավապահ համակարգի ներկայացուցիչների կողմից փաստաբանության դերի և փաստաբանի գործառույթների ճիշտ ընկալումը: Փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքներից մեկը հենց փաստաբանի անձի նկատմամբ համապատասխան վերաբերմունքն է:

Փաստաբաններն իրականացնում են իրավական աջակցություն ինչպես միջանձնային ոլորտի իրավահարաբերություններում, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման, դատական իշխանության մարմինների հետ անձի փոխհարաբերությունների համատեքստում: Այն դեպքերում, երբ պետությունն անձին մեղադրում է ենթադրյալ հանցանքի կատարման մեջ, փաստաբանի առաքելությունն է ոչ միայն ապահովել որակյալ իրավաբանական օգնություն, այլև իրականացնել

պատշաճ պաշտպանություն մեղադրանքից, հնարավոր ապօրինի հետապնդումից կամ ապօրինի ազատազրկումից:

Փաստաբանության կարևոր դերը ժամանակակից հասարակության մեջ ընդգծված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Ընդ որում, արձանագրված է ոչ միայն անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, այլև պետության պարտավորությունը՝ ապահովել փաստաբանական գործունեության երաշխիքները, ներառյալ՝ անվտանգային երաշխիքները և վստահորդների հետ անխոչընդոտ հաղորդակցվելու հնարավորությունը: Այդ իմաստով կարևոր է առանձնացնել «Հանցավորության կանխարգելման և իրավախախտների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ» Միացյալ Ազգերի Կազմակերպության 1990 թվականի 8-րդ համաժողովին ընդունված «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները»:

Դրանցով, ի թիվս այնի, սահմանված է, որ պետությունները պետք է ապահովեն, որ փաստաբանները չենթարկվեն քրեական հետապնդման կամ որևէ այլ պատասխանատվության իրենց մասնագիտական պարտականությունների կատարման համար: Բացի այդ, փաստաբանների անվտանգությունը վտանգված լինելու դեպքում պետությունը պետք է երաշխավորի նրանց պաշտպանությունը: Նույն սկզբունքների համաձայն՝ փաստաբաններն իրենց գործառույթների կատարման արդյունքում չեն կարող նույնացվել իրենց վստահորդների հետ[217]:

Հարկ է ընդգծել, որ միջազգային ընդունված չափանիշներով ընդգծվում է նաև, որ փաստաբանական համայնքը մասնագիտական գործունեություն իրականացնելիս պետք է դրսևորի ընդունված էթիկայի սկզբունքներին համահունչ վարքագիծ: Այսպես, «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները» նաև սահմանում են, որ փաստաբանները, նպաստելով արդարադատության գործին, պետք է ձգտեն պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, որոնք ճանաչված են ազգային և միջազգային իրավունքով և պետք է միշտ գործեն ազատ և ջանասիրաբար՝ համաձայն օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված չափանիշների ու էթիկայի: Ընդգծվում է, որ անհրաժեշտ է սահմանել փաստաբանների մասնագիտական վարքագծի կանոններ, որոնք կհամապատասխանեն ազգային օրենսդրությանը և սովորույթներին, ինչպես նաև ճանաչված միջազգային չափանիշներին ու նորմերին, և կարգապահական վարույթներ իրականացնել դրանց խախտման պարագայում:

Նույն սկզբունքներով սահմանվում է նաև, որ կառավարությունները, իրավաբանների մասնագիտական ասոցիացիաները և կրթական հաստատությունները պետք է ապահովեն, որ իրավաբաններն ունենան համապատասխան կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև տեղեկացված լինեն փաստաբանի օրինակելի վարքագծի և էթիկական պարտականությունների,

---

[217] Ավելի մանրամասն տե՛ս «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ», Հավանա, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրես, 1990թ., հասանելի է https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/roleoflawyers.aspx, հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ինչպես նաև ազգային և միջազգային իրավունքով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի (փաստաբանի մատչելիության իրավունքի) նպատակն է արդարության իրականացման թերացման կանխարգելումը և, առաջին հերթին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակների իրականացումը, հատկապես, քննչական մարմինների ու դատախազության և մեղադրյալի միջև զենքերի հավասարության ապահովումը: Բեուզեն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (փաստաբանի մատչելիության իրավունքը) հակակշռում է կասկածյալի խոցելիությանն ազատությունից զրկման վայրերում, ոստիկանության կողմից կասկածյալների նկատմամբ հարկադրանքի և վատ վերաբերմունքի հիմնարար երաշխիք է, ինչպես նաև ապահովում է մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը[218]: Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի փաստաբանի միջոցով արդյունավետ պաշտպանության իրավունքն արդար դատաքննության հիմնարար հատկանիշներից է[219]:

ԵԽ խորհրդարանական վեհաժողի իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի 2020 թվականի հանձնարարականի համաձայն՝ փաստաբանի մասնագիտության ազատությունը հանձնարարականի հիմնարար սկզբունքներից է: Հանձնարարականում նշվում է, որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հարգելու, պաշտպանելու և խթանելու փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը՝ առանց խտրականության և առանց իշխանությունների կամ հասարակության ոչ պատշաճ միջամտության: Պետությունները պետք է ձգտեն ստեղծելու իրավաբանների համար հարկման, կենսաթոշակային ապահովման և այլ սոցիալական արտոնությունների արդյունավետ, հավասարակշռված համակարգ՝ հիմք ընդունելով փաստաբանի մասնագիտությունը[220]:

ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականում փաստաբանի մասնագիտության ազատության վերաբերյալ նշվում է, որ փաստաբանների միությունները կամ այլ պրոֆեսիոնալ իրավաբանների

---

[218] Տե՛ս Բեուզեն ընդդեմ Բելգիայի (Beuze v. Belgium) գործով Եվրոպական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 71409/10, կետեր 125-130:

[219] Տե՛ս Սալդուզն ընդդեմ Թուրքիայի (Salduz v. Turkey [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 36391/02, կետ 51, Իբրահիմը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ibrahim and Others v. the United Kingdom [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 50541/08, 50571/08, 50573/08 և 40351/09) կետ 255, Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (Simeonovi v. Bulgaria [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 21980/04, կետ 112, Բեզն ընդդեմ Բելգիայի (Beuze v. Belgium [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 71409/10, կետ 123:

[220] Տե՛ս ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ AS/Jur (2020) 18 հանձնարարականը, «Փաստաբանների սկզբունքներն ու երաշխիքները», 2020թ., հասանելի է https://assembly.coe.int/LifeRay/JUR/Pdf/DocsAndDecs/2020/AS-JUR-2020-18-EN.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ասոցիացիաները պետք է խրախուսվեն՝ ապահովելու փաստաբանների անկախությունը և, ի թիվս այլնի, պաշտպանելու փաստաբանների դերը հասարակության մեջ և, մասնավորապես, պահպանելու նրանց պատիվը, արժանապատվությունը և ազնվությունը, ինչպես նաև խրախուսելու փաստաբանների մասնակցությունը տնտեսապես թույլ վիճակում գտնվող անձանց արդարադատության մատչելիությունն ապահովելու ծրագրերին, մասնավորապես՝ իրավաբանական օգնության և խորհրդատվության տրամադրմանը[221]:

«Փաստաբանի մասնագիտության մասին» եվրոպական կոնվենցիայի մշակման գործի վերաբերյալ 2018 թվականի թիվ 2121 հանձնարարականում Խորհրդարանական վեհաժողովը վերահաստատել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն տեսակետը, որ փաստաբանների հատուկ դերը նրանց առանցքային դիրք է հատկացնում արդարադատության իրականացման գործում՝ որպես գլխավոր դերակատարներ և միջնորդներ հանրության և դատարանների միջև: Նրանք առանցքային դեր են խաղում՝ ապահովելու, որ դատարանները, որոնց առաքելությունը հիմնարար է իրավունքի գերակայության վրա հիմնված պետությունում, վայելեն հանրային վստահություն: Որպեսզի հանրության անդամները վստահեն արդարադատության իրականացմանը, նրանք պետք է վստահեն փաստաբանների՝ արդյունավետ ներկայացուցչություն ապահովելու կարողությանը[222]:

Իր գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի՝ քաղաքական, տնտեսական և մտավոր առումով՝ հաճախորդին խորհրդատվություն տրամադրելու և ներկայացուցչությունն ապահովելու հարցերում[223]: Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է լինի անկախ, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար: Այս անկախությունն անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում և դատարավարությունների ժամանակ[224]:

---

[221] Տե՛ս ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ R(2000)21 հանձնարարականը, հասանելի է https://www.ibanet.org/MediaHandler?id=c0a1f2cc-0a0c-4e97-a180-fa6fc53b4a32 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[222] Տե՛ս ԵԽ, Խորհրդարանական վեհաժողով, «Փաստաբանի մասնագիտության մասին» եվրոպական կոնվենցիայի մշակման գործի վերաբերյալ 2018 թվականի թիվ 2121 հանձնարարականը, հասանելի է https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=24466&lang=en, հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[223] Տե՛ս Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի Եվրոպական փաստաբանի մասնագիտության հիմնական սկզբունքների խարտիան և եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնները, 2013թ., հասանելի է https://www.ccbe.eu/NTCdocument/EN_CCBE_CoCpdf1_1382973057.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31 ի դրությամբ:

[224] Տե՛ս ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշումը, 2019թ., հասանելի է

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես կարևորել է փաստաբանների կողմից մասնագիտական գործունեության անկախության և փաստաբանական էթիկայի սկզբունքները, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնները պահպանելու անհրաժեշտությունն, ինչն ամրագրված է ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ: Այս առնչությամբ Պաշտպանն ընդգծել է, որ անհրաժեշտ է երաշխավորել փաստաբանների և նրանց դերի առնչությամբ հանրային պատշաճ ընկալման ձևավորումը, զերծ մնալ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբաններին ուղղված վիրավորանքի, ծաղրանքի կամ ատելության խոսքի դրսևորումներից:

Նշվածի համատեքստում Պաշտպանի 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ ներկայացված առաջարկների կապակցությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ 2024 թվականի ընթացքում պետական մարմիններին ուղարկվել են հարցումներ:

Ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ ՆԳՆ ոստիկանության ծառայողներն իրազեկված են, որ պետական իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել փաստաբանի պաշտպանության համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված միջոցներ, եթե իր մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրան կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ, գույքի ոչնչացմամբ կամ այլ անօրինական գործողություններով: Միաժամանակ, ՆԳՆ ոստիկանության ծառայողները համապատասխան հրահանգավորում են անցել փաստաբանների հետ շփումներում վերջիններիս գործունեությանը չխոչընդոտելու և հարգալից վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ:

Նույն հարցի կապակցությամբ Քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ Կոմիտեն հետևողական է Կոմիտեի նախագահի հրամանով սահմանված վարքագծի կանոնները պահպանելու, համաձայն որոնց քննիչը պետք է լինի հարգալից, զերծ մնա վիրավորական, հեգնական արտահայտություններից, ժեստիկուլյացիայից և այլն:

Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է շարունակաբար դրսևորել հետևողականություն հասարակությունում և, հատկապես, պետական մարմինների շրջանակում փաստաբանների և նրանց դերի պատշաճ ընկալման ու գնահատման, իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանների անվտանգության ապահովման, նրանց նկատմամբ պատշաճ և հարգալից վերաբերմունքի ձևավորման հարցում:

Միևնույն ժամանակ, փաստաբանները ևս պետք է իրենց գործունեությունը կառուցեն իրավաբանի մասնագիտության ճանաչված չափանիշներին ու էթիկայի սկզբունքներին համապատասխան:

Անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ կիրառման համատեքստում հատկանշական է, որ փաստաբանների մատչելիությունը հանդիսանում է ոչ միայն մեղադրանքից արդյունավետ պաշտպանության, այլև

---

https://advocates.am/images/general_meetings/2019/Kanonagirk_19.10.2019.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ազատությունից զրկված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի հարցում իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք[225]: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը: ՀՀ վճռաբեկ դատարանն այս կապակցությամբ իր որոշումներում ևս արձանագրել է, որ ձերբակալման սկզբնական փուլից անձը, ի թիվս այլնի, ունի նաև պաշտպանի իրավունք[226]:

Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ անդրադարձել է քրեական հետապնդման ենթարկվող անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հարցերին[227]: Քննարկվել են ինչպես միջազգային կարգավորումներն ու չափանիշները, այնպես էլ փաստաբանի մասնագիտական գործունեությունը երաշխավորող և դրան խոչընդոտելու դեպքում պատասխանատվություն սահմանող ներպետական կարգավորումները:

Հարկ է ընդգծել, որ ՀՀ գործող օրենսդրությամբ ևս ապահովված են փաստաբանի արդյունավետ և անխոչընդոտ գործունեության ապահովման բավարար հիմքեր: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված են փաստաբանի գործունեության, ինչպես նաև ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման քրեաիրավական երաշխիքները: Ընդ որում՝ պատասխանատվություն է նախատեսվում փաստաբանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, ներառյալ՝ սպառնալիքի և բռնություն գործադրելու համար: Ավելին, քրեական պատասխանատվություն է սահմանված իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելու դեպքերի համար:

Փաստաբանի մատչելիության երաշխիքներ սահմանված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես, սահմանված է վարույթի

---

[225] Տե՛ս ԽԿԿ-ի չափանիշների վերաբերյալ զեկույցը, փաստաթուղթ թիվ CPT/Inf/E (2002) 1, կետ 18-25: Զեկույցի ամբողջական տեքստը հասանելի է http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=10725e4cd1102c333112&size_mode=1 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ», Հավանա, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրես, 1990թ., հասանելի է https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/roleoflawyers.aspx հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[226] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշումը:

[227] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 334-349, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մասնավոր մասնակիցների իրավունքը ստանալու իրենց հրավիրած, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև պետական միջոցների հաշվին տրամադրված փաստաբանի իրավաբանական օգնությունը: Ընդ որում՝ սահմանվում է, որ վարույթն իրականացնող մարմինն իրավասու չէ արգելելու փաստաբանի ներկայությունն իր վստահորդի մասնակցությամբ կատարվող վարութային գործողությանը: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված են լրացուցիչ երաշխիքներ մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրացման տեսանկյունից, ինչպես նաև նախատեսված են պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը:

Իրավաբանական օգնության հասանելիության կարևոր բաղադրիչներից է նաև փաստաբանների ծառայությունների մատուցման հասանելիությունը հասարակության տարբեր խավերին: Այս առումով կարևոր է արձանագրել, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հանրային պաշտպանության հնարավորություն, որը ներառում է տարբեր խումբ անձանց, այդ թվում՝ ձերբակալված անձի կամ մեղադրյալի համար անվճար իրավաբանական օգնությունը, որն իրականացվում է ՀՀ փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանման՝ Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվում են մի շարք բողոքներ, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներ կատարված այցերի ընթացքում, որոնք վերաբերում են Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով ներգրավված փաստաբանների կողմից պատշաճ իրավաբանական օգնություն չապահովելուն: Կալանավորված անձինք հիմնականում հայտնում են, որ հանրային պաշտպանները քիչ են շահագրգռված իրենց իրավունքների պաշտպանության հարցում, ապացուցողական կամ վարութային այլ գործողություններից առաջ չեն տեսակցում իրենց քրեակատարողական հիմնարկում՝ քննարկելու հնարավոր սցենարները և այլն:

Օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ վարույթին ներգրավված հանրային պաշտպանն արդյունավետ չի իրականացնում իր իրավունքների պաշտպանությունը, նրան հանդիպել է միայն խափանման միջոցի երկարաձգման կապակցությամբ տեղի ունեցող դատական նիստի ընթացքում: Այդ հանգամանքով պայմանավորված՝ վարույթին ներգրավված պաշտպանին փոխարինելու խնդրանքով դիմել է ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակին և վարույթն իրականացնող մարմին, սակայն իր դիմումներն անհիմն մերժվել են:

Հաշվի առնելով մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության գործում երկու կառույցների արդյունավետ համագործակցությունը՝ բարձրացված խնդրի կապակցությամբ գրություն է հասցեագրվել Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին: Ի պատասխան՝ տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ հաշվի առնելով վստահորդի և հանրային պաշտպանի միջև ծագած անհամաձայնությունը, որը կարող է ազդել գործի հետագա ընթացքի վրա, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշմամբ քրեական վարույթով մեղադրյալի շահերի պաշտպանությունն իրականացնելու նպատակով նշանակված հանրային պաշտպանին փոխարինել է այլ հանրային պաշտպան, ում հանձնարարվել է նաև տեսակցել մեղադրյալին:

Հանրային պաշտպանների գործունեության հետ կապված առանձին մտահոգություններ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, բազմաթիվ են դեպքերը, երբ անձին անհատույց իրավաբանական օգնություն է տրամադրվում հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանի կողմից: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով խրախուսվում է կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը: Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի թիվ ՀՕ-285-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքում, ի թիվս այլ փոփոխությունների, վերաշարադրվեց նաև 254-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչի արդյունքում շրջանառության հարկ չվճարող սուբյեկտների շարքում ավելացվեցին նաև փաստաբանական ծառայություն մատուցողները: Նշվածի արդյունքում փաստաբանական ծառայություններ մատուցող տնտեսվարողները 5 տոկոսի փոխարեն վճարելու են շուրջ 20 տոկոս ԱԱՀ և 18 տոկոս շահութահարկ, որը հաշվարկվելու է հարկվող շահույթի՝ հարկային տարվան վերագրվող համախառն եկամտի և նվազեցումների տարբերությունից: Այս փուլում բազմաթիվ անորոշություններ են առկա Հարկային օրենսգրքի կարգավորումների համատեքստում հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրման պարագայում հարկային բեռից ազատված լինելու հնարավորությունների առումով:

Հարկ է ընդգծել, որ նախքան նախագծի ընդունումը Մարդու իրավունքների պաշտպանն իր բացասական դիրքորոշումն էր հայտնել տեղի ունեցող փոփոխությունների գործընթացի վերաբերյալ՝ ներկայացնելով իր դիտարկումները[228]: Նշվածի մասին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել սույն տարեկան հաղորդման «Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքին առնչվող խնդիրներ» բաժնում:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին ստացվել են բողոքներ և ահազանգեր փաստաբանի մասնագիտական աշխատանքն առերևույթ խոչընդոտելու և անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն իրացնելու հետ կապված խնդիրների վերաբերյալ: Վարույթն իրականացնող մարմին փաստաբանի մուտքը խոչընդոտելու վերաբերյալ Պաշտպանին ներկայացված յուրաքանչյուր բողոքի կամ ահազանգի դեպքում, նկատի ունենալով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից դրա կարևորությունը, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվել է անհապաղ միջամտություն: Բարձրացված հարցն անհապաղ բանավոր ընթացակարգով քննարկվել է իրավասու պետական մարմնի ներկայացուցչի հետ, իսկ նման անհրաժեշտության դեպքում՝ նաև արագ արձագանքման ձևով այց է իրականացվել տվյալ հաստատություն: Ընդ որում՝ դեպքերի մեծամասնության պարագայում խնդիրը բանավոր ընթացակարգով

[228]«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ դիրքորոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/images/files/aff9819f509df2f8ba6e8146af8d7bac.pdf, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ստացել է լուծում: Այս կապակցությամբ Պաշտպանը գնահատում է իրավապահ մարմինների հետ ձևավորված պատշաճ համագործակցությունը, սակայն ընդգծում է, որ նշված ոլորտում իրավակիրառ պրակտիկան դեռևս ունի կատարելագործման անհրաժեշտություն:

Ինչպես 2023, այնպես էլ 2024 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանին են դիմել ազատությունից զրկված անձանց մերձավոր ազգականները՝ նրա շահերի պաշտպանությունը ստանձնելու նպատակով, նա ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, սակայն փաստաբանի մուտքը տարբեր պատճառաբանություններով չի թույլատրվել: Որոշ դեպքերում ներկայացվել է պատճառաբանություն առ այն, որ ազատությունից զրկված անձը հրաժարվել է պաշտպանից:

Ստացված ահազանգերից մեկով էլ փաստաբանը ներկայացրել է դիմում, որի համաձայն՝ քաղաքացին նշել է, որ քննիչի կողմից հոգեբանական ճնշման ներքո հրաժարվել է փաստաբանից, սակայն ներկայում ցանկանում է, որ վերջինս շարունակի իրականացնել իր պաշտպանությունը:

Նշված դեպքերում անմիջապես ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ և Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում փաստաբանի մուտքը վարույթն իրականացնող մարմին ապահովվում է:

Պաշտպանի աշխատակազմում ստացված մի շարք ահազանգերով էլ փաստաբանները նշել են, որ այն պարագայում, երբ ձերբակալված անձը գտնվում է վարույթն իրականացնող մարմնում, և նրա հետ պետք է իրականացվեն համապատասխան վարութային գործողություններ, փաստաբանին թույլ չեն տալիս տեսակցել վստահորդին՝ պնդելով, որ վերջինս տվյալ անձի պաշտպանությունը ստանձնելու նպատակով պետք է գրավոր դիմում ներկայացնի: Ավելին, որոշ դեպքերում նշվածի կապակցությամբ իրավասու մարմիններից Պաշտպանի աշխատակազմ ներկայացվել է պարզաբանում առ այն, որ քննիչն ազատությունից զրկված անձի մասնակցությամբ սկսել է կատարել տեսաձայնագրմամբ զուգորդված վարութային գործողություն և պաշտպանի ներգրավման հարցը կարող է քննարկվել բացառապես գործողության ավարտից հետո, քանի որ տեսաձայնագրառումը հնարավոր չէ ընդհատել:

Բողոքներից մի քանիսի պարագայում արձանագրվել է, որ թեև վարույթն իրականացնող մարմինը չի հրաժարվել փաստաբանին վստահորդի հետ տեսակցելու հնարավորություն ընձեռելուց, սակայն այն տևական ժամանակ ձգձգվել է՝ ընթացակարգային կամ տեխնիկական գործոններով պայմանավորված: Ավելին, որոշ դեպքերում, փաստաբանի մուտքն ապահովելը ձգձգվել է այնքան ժամանակ, մինչ վստահորդը դուրս է եկել վարույթն իրականացնող մարմնից: Նման պարագայում փաստաբանների մոտ առաջանում է ողջամիտ մտավախություն առ այն, որ թեև այդ ժամանակահատվածում վստահորդի մասնակցությամբ ապացուցողական կամ վարութային այլ գործողություններ չեն իրականացվում, սակայն իրավապահ մարմնի աշխատակիցները կարող են տարբեր եղանակներով ազդեցություն գործադրել իրենց տիրապետության ներքո գտնվող անձի նկատմամբ, այդ թվում՝ ուղղորդել ներկայացնել որոշակի հանգամանքներ կամ հոգեբանական ճնշում գործադրել նրա նկատմամբ:

Այս առումով Պաշտպանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ փաստաբանի մուտքն ու վստահորդին տեսակցելն ուղղված են անձի իրավունքների լիարժեք

իրացման երաշխավորմանը: Նշվածի հաշվառմամբ՝ խիստ մտահոգիչ է վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով ներկայացած փաստաբանների մուտքի առումով խոչընդոտներ ստեղծելու պրակտիկան: Նման գործելաոճը վտանգում է վարույթն իրականացնող մարմնի վարչական շենքում գտնվող՝ հատկապես քրեական հետապնդման ենթարկվող անձանց իրավաբանական օգնություն ստանալու, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված այլ իրավունքների պատշաճ իրացումը:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ իրավաբանական օգնության հասանելիությունը կասկածյալին, որպես կանոն, պետք է երաշխավորել այն պահից, երբ նրան առաջադրվել է «քրեական մեղադրանք»՝ Կոնվենցիայով նախատեսված ինքնուրույն իմաստով: Փաստաբանի հասանելիության իրավունքը ծագում է անձին արգելանքի տակ վերցնելու կամ ոստիկանության կողմից հարցաքննվելու ժամանակ[229]: Այս կապակցությամբ Դատարանն ընդգծել է, որ անձը 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների կիրառության ենթակա՝ կասկածյալի կարգավիճակը ձեռք է բերում ոչ թե այն պահից, երբ նա պաշտոնապես ստանում է այդ կարգավիճակը, այլ՝ այն պահից, երբ ներպետական իրավասու մարմինները հնարավոր պատճառներ ունեն կասկածելու, որ անձը մասնակից է քրեական իրավախախտմանը[230]:

Հետևաբար, Պաշտպանն արձանագրում է, որ անկախ այն հանգամանքից՝ ազատությունից զրկված անձը գտնվում է հետաքննության, թե նախաքննության մարմնում, ինչպես նաև անկախ նրա մասնակցությամբ ապացուցողական կամ վարութային այլ գործողություններ սկսված լինելուց՝ նա պետք է ունենա փաստաբանի հասանելիության հնարավորություն, ուստի պետական իրավասու մարմինները պարտավոր են ապահովել փաստաբանի անխոչընդոտ մուտքն ազատությունից զրկված անձի գտնվելու վայր՝ առանց անհիմն ձգձգումների և տեխնիկական կամ ընթացակարգային բարդությունների:

2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ ներկայացված առաջարկների կապակցությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ կատարված հարցմամբ, ինչպես նաև 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում Ներքին գործերի նախարարությունից ստացվել է պարզաբանում առ այն, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համակարգում գործող բոլոր ՁՊՎ-ների վարչակազմը խստագույնս հրահանգավորված է պահպանելու օրենքով սահմանված յուրաքանչյուր դրույթ, մասնավորապես՝փաստաբանի մուտքի և վստահորդին տեսակցելու արգելքի, ինչպես նաև փաստաբանի օրինական գործունեությանն այլ կերպ խոչընդոտելու ցանկացած դրսևորման բացառման հարցում:

Դատախազությունից ստացվել է տեղեկատվություն առ այն, որ 2024 թվականի ընթացքում քննության է առնվել ազատությունից զրկման վայր, ոստիկանության ստորաբաժանում կամ քննչական մարմին փաստաբանի մուտքը չթույլատրելու և

---

[229] Տե՛ս Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (Simeonovi v. Bulgaria [GC]) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 21980/04, կետեր 110-111:
[230] Տե՛ս Տրուտեն ընդդեմ Ուկրաինայի (Truten v. Ukraine) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2016 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 18041/08, կետ 66:

անձանց փաստաբանի մատչելիության իրավունքի խախտման հետ կապված 1 բողոք, որը մերժվել է: Դատախազությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ձերբակալված անձին ձերբակալման որոշումը հանձնելուց հետո պաշտպան չներգրավվելու կամ պաշտպանի պարտադիր մասնակցություն նախատեսող վարութային գործողություններին փաստաբանի մասնակցությունը չապահովելու կամ դրան խոչընդոտելու վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

Նույն խնդիրների կապակցությամբ Քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ Կոմիտեն հետևողականություն է դրսևորում փաստաբանների գործունեությունը չխոչընդոտելու հարցում: Վարույթն իրականացնող մարմին ներկայացված կամ ձերբակալված անձանց փաստաբանի մատչելիության իրավունքի, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմին փաստաբանի մուտքը չթույլատրելու հետ կապված 2024 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում քննարկվել է մեկ դեպք, որը չի հիմնավորվել: Պարզաբանման համաձայն՝ նույն ժամանակահատվածում փաստաբանի ներգրավվումը կամ ձերբակալվածի հետ խորհրդապահական կարգով տեսակցումը վարույթն իրականացնող մարմնի կողմից տևական ժամանակ չապահովելու վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում մեկ դեպքով իրականացված նախնական ուսումնասիրության արդյունքներով Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կոպիտ քրեադատավարական խախտումներ թույլ տալու հանգամանքը հերքվել է՝ առաջարկելով արձանագրված ոչ կոպիտ խախտումները քննարկել օպերատիվ խորհրդակցությունում:

Քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ձերբակալված անձին ձերբակալման որոշումը հանձնելուց հետո պաշտպան չներգրավվելու կամ պաշտպանի պարտադիր մասնակցություն նախատեսող վարութային գործողություններին փաստաբանի մասնակցությունը չապահովելու կամ դրան խոչընդոտելու վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում երկու դեպքով կատարվել են նախնական ուսումնասիրություններ, որոնց արդյունքներով Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից կոպիտ քրեադատավարական խախտումներ թույլ տալու հանգամանքը հերքվել են՝ առաջարկելով արձանագրված ոչ կոպիտ խախտումները քննարկել օպերատիվ խորհրդակցությունում՝ հետագայում այդպիսիք բացառելու համար:

Վերը նշվածից բացի, 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ անդրադարձ է կատարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 543-ն որոշման Հավելվածով նախատեսված՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի՝ փաստաբանի հետ անխոչընդոտ և առանց քանակի սահմանափակման տեսակցելու երաշխիքների առկայությանը: Այս առումով հարկ է ընդգծել, որ 2024 թվականի ընթացքում փաստաբանի մուտքը քրեակատարողական հիմնարկ թույլ չտալու մասով գրանցվել է դրական դինամիկա:

Նշված հարցի կապակցությամբ ստացված խնդիրներն արագ ստացել են համապատասխան լուծում, իսկ ներկայացված պարզաբանումների վերաբերյալ փաստաբանների կողմից լրացուցիչ բողոքներ չեն ստացվել:

Ի տարբերություն 2023 թվականի՝ 2024 թվականի Պաշտպանի աշխատակազմում բողոքներ չեն ստացվել՝ կապված հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի իրավունքներն իր նախընտրած փաստաբանի կողմից ներկայացնելու վերաբերյալ: Այս առնչությամբ Դատախազության կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում փաստաբանի կողմից ներկայացվել է 1 բողոք՝ իրեն որպես մեղադրյալի պաշտպան չներգրավելու վերաբերյալ, որը մերժվել է՝ ՀՀ-ից բացակայող և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի անվամբ կազմված ու ստորագրված բնօրինակ դիմումը վերջինիս կողմից ստորագրված լինելը հավաստող հիմնավորումներ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ: Գործնականում նման դեպքերում օրենքով սահմանված կարգով քննարկման առարկա է դարձվում մեղադրյալի միջնորդությունը, և պաշտպանի մասնակցությունը բացառող հանգամանքների բացակայության դեպքում որոշում է կայացվում այն բավարարելու ու փաստաբանին որպես պաշտպան ներգրավելու մասին:

2024 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ կապված դատարանի խցում փաստաբանի կողմից պաշտպանյալին տեսակցելու հնարավորություն չընձեռելու հետ: Այս առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդից ստացված պարզաբանման համաձայն՝ հարցի կապակցությամբ Ներքին գործերի նախարարության համակարգմամբ գործում է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկված է նաև Դատական դեպարտամենտը: Աշխատանքային խումբն աշխատանքներ է տանում այդ թվում՝ դատարանների խցերում անազատության մեջ պահվող անձանց հանձնուքների փոխանցման և ստացման կարգը սահմանելու (ապահովվելով անձի սննդի ընդունման համար անհրաժեշտ ստանդարտացված պայմանները), ինչպես նաև խցերում անազատության մեջ պահվող անձանց համապատասխան իրավունքներն ապահովելու ուղղությամբ: Ներկայում առաջացած խնդիրներին տրվում են իրավիճակային լուծումներ:

Պաշտպանը ողջունելի է համարում տարիներ շարունակ առկա՝ դատարանի խցերում պահվող անձանց մի շարք իրավունքների իրացումը չապահովելու համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը: Այս կապակցությամբ, Պաշտպանը կարևորում է սեղմ ժամկետում խնդրի լուծմանն ուղղված համապատասխան իրավակարգավորումներ նախատեսելը և իր պատրաստակամությունն է հայտնում աջակցություն ցուցաբերել աշխատանքային խմբին:

Փաստաբանի գործունեությանն առնչվող մեկ այլ խնդիր վերաբերում է Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներում գտնվելու պարագայում անձանց, այդ թվում՝ օտարերկրացիների իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ապահովելուն, ներառյալ՝ այդ գոտիներում փաստաբանի անխոչընդոտ մուտքն ապահովելուն: Այս առնչությամբ 2023 թվականի հաղորդմամբ կատարվել է մանրամասն անդրադարձ նշված իրավիճակներում անձի

իրավունքների ապահովման վերաբերյալ[231]: Հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում ևս ստացվել են նմանատիպ ահազանգեր, որոնցից յուրաքանչյուրը բանավոր ընթացակարգով քննարկվել է իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ և բարձրացված հարցերին տրվել են իրավիճակային լուծումներ:

Փաստաբանների գործունեությանը խոչընդոտելու անթույլատրելիության և նրանց նկատմամբ ճիշտ հանրային ընկալում ձևավորելու համատեքստում Պաշտպանը բազմիցս ընդգծել է նաև, որ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանի նկատմամբ բռնության ցանկացած դրսևորում անթույլատրելի է ու խիստ մտահոգիչ: Այդ առումով Պաշտպանը կարևորում է ինչպես նշված երևույթների կանխարգելմանն ուղղված քայլերի ձեռնարկումն, այնպես էլ դեպքերի առնչությամբ հնարավոր սեղմ ժամկետներում արդյունավետ քննության իրականացումն ու հանրային հաշվետվողականության ապահովումը:

Այս առնչությամբ ևս 2024 թվականի ընթացքում պետական մարմիններին ուղարկվել են հարցումներ: Ըստ Դատախազությունից ստացված տվյալների՝ 2024 թվականի ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու, ինչպես նաև փաստաբանի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի դեպքեր չեն արձանագրվել:

Ներքին գործերի նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ Ոստիկանության ծառայողների կողմից թույլ տրվող իրավախախտումների, այդ թվում՝ մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ ստացված բոլոր դիմում-բողոքների, ահազանգերի, այլ հաղորդումների կապակցությամբ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում կատարվում են ծառայողական քննություններ և ուսումնասիրություններ, որոնց շրջանակներում իրականացվում է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն: Հանցագործության հատկանիշներ հայտնաբերվելու դեպքում ծառայողական քննության նյութերն ուղարկվում են նախաքննության մարմիններ: Ոստիկանության ծառայողի վերաբերյալ նախաքննության մարմնում իրականացվող քրեական վարույթի առկայության դեպքում ծառայողական քննության ընթացքն օրենքով սահմանված կարգով կասեցվում է՝ մինչև նախաձեռնված քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը:

Միևնույն ժամանակ, ըստ Ներքին գործերի նախարարությունից ստացված պարզաբանման՝ ներկայում մշակվում է «Ոստիկանության կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծը, որում ներառված են մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանների իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը կանխարգելելուն, վերացնելուն, դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելուն և պատասխանատվության

---

[231] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 334-349, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

անխուսափելիությունը երաշխավորելուն ուղղված կառուցակարգեր: Ոստիկանության կարգապահական նոր կանոնագիրքը հստակ ակնկալիքներ է սահմանելու ծառայողների վարքագծի և գործողությունների վերաբերյալ, այն ապահովելու է, որպեսզի անցկացվի որակյալ ծառայողական քննություն, ծառայողներն իրենց հակահիրավական արարքների համար ենթարկվեն պատասխանատվության: Միևնույն ժամանակ, ըստ պարզաբանման՝ այն կերաշխավորի, որպեսզի ծառայողները շարունակաբար զարգացնեն իրենց կոմպետենցիաները, ինչպես նաև պահպանեն էթիկական չափանիշները՝ տարատեսակ խախտումներից և խնդիրներից զերծ մնալու համար: Բացի դրանից, կարգապահական կանոնագրքով սահմանված պատասխանատվության մեխանիզմներն ապահովելու են թափանցիկություն, որով կխթանվի նաև հանրային վերահսկողությունը՝ նշված գործընթացի նկատմամբ:

Քննչական կոմիտեից և Բարձրագույն դատական խորհրդից ստացված տեղեկության համաձայն՝ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ դեպքերով ողջամիտ ժամկետում համակողմանի և անաչառ քննություն ապահովելու ուղղությամբ:

Կարևորելով պետության կողմից իրավունքի պաշտպանության անհրաժեշտ ու բավարար միջոցների երաշխավորումը, այդ թվում՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով համապատասխան կառուցակարգերի մշակումն ու դրանց պատշաճ իրացումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է գործնականում յուրաքանչյուր պարագայում ապահովել ներպետական և միջազգային չափանիշների խստիվ պահպանությունը և բացառել փաստաբանի մուտքի ու վստահորդին տեսակցելու արգելքի, ինչպես նաև փաստաբանի օրինական գործունեությանն այլ կերպ խոչընդոտելու ցանկացած դրսևորում:

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների և Պարեկային ծառայության գործունեությանն առնչվող բողոքներով բարձրացված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ, այդ թվում՝ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ, ներկայացրել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, ինչպես նաև Պարեկային ծառայության գործունեության առնչությամբ ստացված բողոքները:

2023 թվականի տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ անհրաժեշտ է՝ 1) մշակել և գործարկել կառուցակարգեր՝ վարորդական վկայական ստանալու համար անձանց հնարավորինս սեղմ ժամկետում քննությանը մասնակցելու հնարավորություն ընձեռելու նպատակով, 2) վարչական տույժ նշանակելու բոլոր դեպքերում միջոցներ ձեռնարկել անձին դրա վերաբերյալ պատշաճ ծանուցելու ուղղությամբ, 3) բացառել տրանսպորտային միջոցն՝ առանց անհրաժեշտ և բավարար հիմնավորումների և օրենսդրությամբ չնախատեսված դեպքերում ու կարգով, հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու պրակտիկան, 4) բացառել օրենքով չարգելված վայրում ծխախոտ օգտագործելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան, ինչպես նաև տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս և վարչական տույժ նշանակելու մասին որոշում կայացնելիս խստագույնս պահպանել օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ անձի լսված լինելու իրավունքը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունից պարզաբանումներ են ստացվել այն մասին, որ տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վկայական ստանալու համար որակավորման քննությունների հերթերի քանակի աճը կապված է մի շարք օբյեկտիվ պատճառների հետ, մասնավորապես՝

1. ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության (այսուհետ՝ վարչություն) ձևավորման (06.09.2024թ.) արդյունքում անձնակազմի ոչ բավարար համալրման,
2. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության և տեխնիկական միջոցներով հայտնաբերված խախտումների արդյունքում կայացված զրկման որոշումների ժամկետի ավարտով պայմանավորված վարորդական վկայական ստանալու համար դիմողների,
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 304.2-րդ և 317-րդ հոդվածներով սահմանված պահանջներով պայմանավորված դիմողների քանակի աճով:

Այնուամենայնիվ, ըստ ստացված պարզաբանման, Վարչության աշխատանքի կազմակերպման և հատկապես վարորդական վկայականների հերթերի նվազեցման նկատմամբ ամենօրյա հսկողությամբ պայմանավորված նկատվում է հերթերի զգալի նվազում, ինչն առավել արդյունավետ և նկատելի կլինի 2024 թվականի դեկտեմբեր ամսից սկսած՝ վարչության անձնակազմի համալրմամբ պայմանավորված:

Ստացված պարզաբանմամբ տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ վարչական ակտերի գերակշիռ մասը հանձնվում է առձեռն, իսկ մնացած մասը՝ «Հայփոստ» ՓԲԸ միջոցով, իսկ չստանալու դեպքում տեղադրվում է azdarar.am կայքում:

Ներկայացված պարզաբանմամբ նաև նշվել է, որ տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք են տեղափոխվում «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման» և «Ոստիկանության մասին» օրենքների համաձայն՝ դրանցով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Այնուամենայնիվ, ենթակա ստորաբաժանումներին մեկ անգամ ևս տրվել է հանձնարարական՝ խստորեն պահպանել տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու համար օրենքով նախատեսված պահանջները:

Բացի այդ, Ոստիկանության ենթակա ստորաբաժանումներին մեկ անգամ ևս տրվել է հանձնարարական՝ ծխախոտային արտադրանք օգտագործելու համար պատասխանատվություն կիրառելիս խստորեն պահպանել օրենքով նախատեսված պահանջները:

Պաշտպանը դրական է գնահատում Ներքին գործերի նախարարության կողմից ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում ՀՀ ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ 2024 թվականի ընթացքում հատուկ պահպանվող տարածք է տեղափոխվել 22.033 տրանսպորտային միջոց՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18.1 հոդվածի հատկանիշներով: Ըստ ստացված պարզաբանման՝ նախքան տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելը, ծառայողի կողմից հաշվի են առնվում վարչական իրավախախտումը տեղում վերացնելու հնարավորությունը և դրա բացակայության դեպքում նոր միայն տրանսպորտային միջոցը տեղափոխվում է հատուկ պահպանվող տարածք: Իրավասու պաշտոնատար անձը, համոզվելով, որ տրանսպորտային միջոցի բերման ենթարկելու պատճառները վերացված են, գրավոր կարգով թույլատրություն է տալիս հատուկ տարածքում արգելանքի տակ դրված տրանսպորտային միջոցը բաց թողնելու մասին և համապատասխան նշում կատարում տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու արձանագրության մեջ: Գործընթացի օրինականության և տրանսպորտային միջոցն օրինական տիրապետողի կողմից իրավախախտումը վերացվելուց հետո սեղմ ժամկետում չվերադարձնելու վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել բողոքներ և ահազանգեր ՀՀ ՆԳՆ

ոստիկանության, այդ թվում՝ Պարեկային ծառայության գործունեության առնչությամբ:

Բողոքների և ահազանգերի հիմնական մասով կրկին բարձրացվել են տրանսպորտային միջոցները համապատասխան իրավական հիմքերի բացակայությամբ կամ առանց դրանք ներկայացնելու հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու, այդ մասին արձանագրություն չկազմելու, տևական ժամանակ անհիմն կամ ծրագրային, տեխնիկական խնդիրների պատճառաբանությամբ օրինական տիրապետողին չվերադարձնելու մասին հարցեր: Մի շարք դեպքերում ահազանգ ներկայացրած անձինք հայտնել են, որ վերացրել են ավտոմեքենան հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու համար հիմք հանդիսացած պատճառները, մի քանի օր շարունակ ներկայացել են Ոստիկանության հատուկ տարածք, սակայն ավտոմեքենաները չեն վերադարձվում:

Հարկ է ընդգծել, որ ստացված ահազանգերից յուրաքանչյուրը բանավոր կերպով քննարկվել է Ոստիկանության Պարեկային ծառայության ներկայացուցիչների հետ: Որոշ դեպքերում բանավոր քննարկման արդյունքում ահազանգով ներկայացված հարցը ստացել է լուծում, մասնավորապես՝ անձին ներկայացվել են տրանսպորտային միջոցը հատուկ տարածքում պահելու հիմքերը, կամ այն վերադարձվել է օրինական տիրապետողին: Սակայն, մի շարք այլ դեպքերում բանավոր կերպով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին չեն ներկայացվել անձի տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու իրավական հիմքերը և այն չվերադարձնելու պատճառները: Փոխարենը տրամադրվել են ընդհանրական բնույթի պարզաբանումներ առ այն, որ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան ստուգումներ, որից հետո ավտոմեքենան կարող է վերադարձվել օրինական տիրապետողին: Նշված յուրաքանչյուր դեպքով Պաշտպանի աշխատակազմում նախաձեռնվել է քննարկման ընթացակարգ, և իրավասու մարմնից պարզաբանում է պահանջվել գրավոր ձևաչափով: Այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ մի շարք դեպքերում տրանսպորտային միջոցներն օրինական տիրապետողներին վերադարձվել են տևական ժամանակ պահվելուց հետո:

Օրինակ՝ ստացված բողոքներից մեկով անձը նշել է, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող ավտոմեքենան ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Պարեկային ծառայության աշխատակիցների կողմից առանց որևէ իրավական հիմնավորման տեղափոխվել է Ոստիկանության հատուկ տարածք: Հավելել է, որ հաջորդ օրը ներկայացել է Ոստիկանություն՝ ավտոմեքենան հատուկ տարածքում պահելու իրավական հիմքերի վերաբերյալ տեղեկություն ստանալու և տրանսպորտային միջոցը հետ վերադարձնելու նպատակով, սակայն իրեն որևէ պարզաբանում չի ներկայացվել, և Ոստիկանության ծառայողները հրաժարվել են վերադարձնել ավտոմեքենան: Իրականացված գրագրության արդյունքում ՀՀ ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ստացվել, որ ավտոմեքենան Ոստիկանության հատուկ տարածք է տեղափոխվել վերասարքավորման կասկածանքով, որից հետո՝ 3 օր անց, նշված հանգամանքը ստուգվել է, վարորդի նկատմամբ կայացվել է վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, ինչից հետո տրանսպորտային միջոցը վերադարձվել է:

Ստացված մեկ այլ բողոքով՝ անձը հայտնել է, որ իր ավտոմեքենան Պարեկային ծառայության աշխատակիցների կողմից տեղափոխվել է Ոստիկանության հատուկ տարածք՝ պատճառաբանությամբ, որ առկա է ավտոմեքենայի տեխնիկական անձնագրում առկա տվյալների իսկության ստուգման անհրաժեշտություն: Մինչդեռ, ըստ պնդման, նույն տեխնիկական անձնագիրը տրամադրվել է հենց Ոստիկանության կողմից: Բողոքի քննարկման շրջանակում անհրաժեշտ պարզաբանումների պահանջով գրություն է ուղարկվել ՀՀ ներքին գործերի նախարարություն: Ի պատասխան՝ Ոստիկանության պարեկային ծառայությունից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ հիշյալ ավտոմեքենան վերադարձվել է օրինական տիրապետողին: Մինչդեռ, Պարեկային ծառայությունից տրանսպորտային միջոցի հատուկ տարածք տեղափոխման և պահելու հիմքերի մասին հարցադրման վերաբերյալ որևէ հիմնավորում չի ներկայացվել:

Վերոգրյալից բացի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են մի շարք բողոքներ և ահազանգներ, այդ թվում՝ ԱԺ պատգամավորների և փաստաբանների կողմից, առ այն, որ 2024 թվականի ընթացքում ՀՀ տարածքում իրականացված բողոքների ակցիաների ժամանակ քաղաքացիների տրանսպորտային միջոցները ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից, առանց որևէ իրավական հիմնավորման, տեղափոխվել են Ոստիկանության Երևան քաղաքի, ինչպես նաև մարզային վարչությունների հատուկ պահպանվող տարածքներ, տևական ժամանակ գտնվել են Ոստիկանության հատուկ տարածքում և չեն վերադարձվել դրանց սեփականատերերին՝ առանց որևէ իրավական հիմնավորման: Ավելին, ըստ Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքների՝ Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիներին պարզաբանվել է, որ տրանսպորտային միջոցները չեն վերադարձվում Պարեկային ծառայության բարձրաստիճան պաշտոնատար անձանց հրամանով:

Այսպես, ահազանգներից մեկով անձը տեղեկացրել է, որ իր ավտոմեքենան կանգնեցվել է Պարեկային ծառայողների կողմից և տեղափոխվել Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք: Պարեկային ծառայողն իրեն հայտնել է, որ առկա են եղել ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի հետ կապված խնդիրներ: Նշել է, որ տեխնիկական անձնագրի հետ կապված խնդիրները լուծելուց հետո համապատասխան փաստաթղթերով ներկայացել է Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք, սակայն Ոստիկանության ծառայողները հրաժարվել են վերադարձնել ավտոմեքենան օրինական տիրապետողին՝ առանց հիմնավոր պատճառաբանության:

Բացի այդ, ՀՀ տարբեր վայրերում իրականացված բողոքի ակցիաների ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել Ոստիկանության բաժիններ և առանձնազրույցներ ունեցել վարչական ձերբակալման ենթարկված մի շարք անձանց հետ: Առանձնազրույցի ընթացքում անձանցից մեկը հայտնել է, որ վարչական ձերբակալման ենթարկվելու պահին իր ավտոմեքենայի բանալին տրամադրել է Ոստիկանության ծառայողին՝ այն բաժնի տարածք տեղափոխելու և հետագայում իրեն վերադարձնելու նպատակով: Սակայն, ըստ քաղաքացու՝ վարչական ձերբակալումից ազատվելուց հետո Ոստիկանության ծառայողները հրաժարվել են իրեն տրամադրել ավտոմեքենան և չեն ներկայացրել որևէ պարզաբանում: Մեկ այլ քաղաքացու պնդմամբ՝ իր

ավտոմեքենան Ոստիկանության պարեկային ծառայողների կողմից տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հետախուզում հայտարարված լինելու պատճառաբանությամբ, սակայն Ոստիկանության ծառայողները հրաժարվել են ներկայացնել հետախուզում հայտարարված լինելը հավաստող փաստաթուղթ, այդ թվում՝ էլեկտրոնային, և հայտնել են, որ ավտոմեքենան մի քանի օր պետք է պահվի հատուկ տարածքում: Մինչդեռ, անձը ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության իրավասու ներկայացուցչից տեղեկացել է, որ տրանսպորտային միջոցի նկատմամբ հետախուզում հայտարարված չէ:

Հարկ է ընդգծել, որ սեփականության իրավունքը որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պայմաններում անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորման բնութագրիչ, միաժամանակ նաև որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգ ունի սահմանադրաիրավական կարևոր նշանակություն: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Այն միջազգային իրավական ամրագրում է ստացել նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 17-րդ) և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդված
Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելելու հիմքերը սահմանված են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով, համաձայն որի՝

«1. Տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելվում է, եթե՝

ա) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է ոչ սթափ վիճակում կամ հրաժարվում կամ որևէ ձևով խուսափում է սթափության վիճակի զննությունից.

բ) վարորդը զրկված է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից.

գ) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է առանց տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի.

դ) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է՝ իր մոտ չունենալով վարորդական իրավունքի վկայական.

ե) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է կեղծ կամ ուժը կորցրած վարորդական իրավունքի վկայականով.

զ) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է առանց վարորդական վկայականում նշված փաստաթղթերի կամ պարագաների.

է) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է կեղծ հաշվառման վկայագրով կամ առանց հաշվառման վկայագրի.

ը) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է կեղծ, փոխված կամ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշներով (ժամանակավոր համարանիշների դեպքում՝ նաև ժամկետանց համարանիշներով) կամ առանց հաշվառման համարանիշների.

թ) վարորդը տրանսպորտային միջոցը վարում է առանց օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի.

ժ) տրանսպորտային միջոցը կամ տրանսպորտային միջոցի ներսում գտնվող անձը գտնվում է հետախուզման մեջ կամ կան հիմնավոր կասկածներ, որ տրանսպորտային միջոցով կատարվել է հանցագործություն կամ դրա մեջ գտնվում են հանցագործություն նախապատրաստող, կատարող կամ կատարած անձինք.

ժա) տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի անցել տեխնիկական զննություն, կամ տեխնիկական զննությամբ ի հայտ է եկել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքություններից կամ պայմաններից որևէ մեկը.

ժբ) տրանսպորտային միջոցն անօրինական վերասարքավորված է.

ժգ) տրանսպորտային միջոցը պատճառ է դարձել այնպիսի ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման համար, որի հետևանքով մարդու կյանքին կամ առողջությանը պատճառվել է վնաս, կամ այդպիսի պատահարի մասնակիցն է.

ժդ) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան՝ վճարված չէ Հայաստանի Հանրապետություն (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից) մուտք գործող (բացառությամբ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված)՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկը.

ժե) տրանսպորտային միջոցն առանց համապատասխան թույլտվության կահավորված է առկայծող փարոսիկներով և (կամ) հատուկ ձայնային ազդանշաններով, կամ տրանսպորտային միջոցի թափքի արտաքին մակերևույթի

վրա առանց համապատասխան թույլտվության փակցված են գունագծապատկերներ, գրառումներ և այլ նշումներ կամ դրանք չեն համապատասխանում օրենսդրության կամ ստանդարտների պահանջներին.

ժզ) տրանսպորտային միջոցը կահավորված է կեղծված, փոփոխված (ջնջված) համարներ ունեցող ագրեգատներով կամ հանգույցներով.

ժէ) բացակայում են վարորդի աչքը կամ վերին կամ ստորին վերջույթը, դաստակը կամ ոտնաթաթը, կամ առկա են շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտում, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումներ և արատներ, որոնք հանգեցնում են վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման, բացառությամբ տվյալ անձի հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերի.

ժը) օրենքով սահմանված այլ դեպքերում:

2. Շահագործումն արգելվում է նաև այն ավտոմոբիլների, ավտոբուսների, ավտոգնացքների, կցորդների, մոտոցիկլերի, մոպեդների, մոտոսայլակների, տրակտորների և այլ ինքնագնաց մեքենաների, որոնց տեխնիկական վիճակը և կահավորվածությունը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած[232]՝ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկին:

(…):»:

Նույն օրենքի 18.1-րդ հոդվածով սահմանված է տրանսպորտային միջոցները հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու կարգը, համաձայն որի՝

«1. Սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ա», «բ», «գ», «դ», «ե», «զ», «է», «ը», «թ», «ժ», «ժգ», «ժդ», «ժե», «ժզ» և «ժէ» կետերով նախատեսված դեպքերում ճանապարհային երթևեկությունը կարգավորողը պարտավոր է սույն հոդվածով սահմանված կարգով, տրանսպորտային միջոցը բերման ենթարկելով պահպանվող հատուկ տարածք, դնել արգելանքի տակ: Սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ա», «բ», «գ», «դ», «ե» և «զ» կետերով նախատեսված դեպքերում, տրանսպորտային միջոցի վարորդի համաձայնությամբ, տրանսպորտային միջոցը կարող է հանձնվել տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձի:

2. Բերման ենթարկումն իրենից ներկայացնում է տրանսպորտային միջոցի օգտագործումը դադարեցնելու ժամանակավոր հարկադիր միջոց, որը ներառում է ***(վարչական իրավախախտման հայտնաբերման տեղում արգելանքի տակ դնելու պատճառը վերացնելու անհնարինության դեպքում)*** վերջինիս տեղափոխումը հատուկ տարածք:

3. Տրանսպորտային միջոցը բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու հիմքերի առկայության դեպքում իրավասու պաշտոնատար անձն անհրաժեշտ գործողություններ է իրականացնում վարորդին տրանսպորտային միջոցի վարումից սույն օրենքի 241-րդ հոդվածով սահմանված կարգով հեռացնելու և տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելու ուղղությամբ:

---

[232] Տե՛ս «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշում:

(…)

7. Տրանսպորտային միջոցը հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու վերաբերյալ իրավասու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն, որի ձևը սահմանվում է ոստիկանության պետի հրամանով:

Արձանագրության մեջ նշվում է բերման ենթարկված տրանսպորտային միջոցի մեջ գտնվող իրերի ցուցակը: Արձանագրության կրկնօրինակը հանձնվում է այն անձին, որի նկատմամբ կիրառվել է հարկադրանքի միջոցը, իսկ հատուկ տարածք տրանսպորտային միջոցի տեղափոխման դեպքում՝ նաև հատուկ տարածքում տրանսպորտային միջոցի պահպանման համար պատասխանատու անձին:

8. Տրանսպորտային միջոցն արգելանքի տակ դնելու և պահպանման ժամկետը հաշվվում է օրերով և ժամերով՝ սկսած հատուկ տարածքում դրա տեղավորման պահից:

9. Եթե տրանսպորտային միջոցը տնօրինողը կամ տրանսպորտային միջոցի շահագործման համար պատասխանատու անձը տրանսպորտային միջոցն արգելանքի վերցնելու պահից 120 ժամվա ընթացքում՝

ա) վերացնում է արգելանքի տակ դնելու պատճառները, ապա ոստիկանությունն ***<u>անմիջապես տրանսպորտային միջոցը հանում է արգելանքից</u>***.

բ) չի վերացնում արգելանքի տակ դնելու պատճառները կամ վերացնելով արգելանքի տակ դնելու պատճառները՝ տրանսպորտային միջոցը չի հանում հատուկ տարածքից, ապա տրանսպորտային միջոցի պահպանման ծախսերը մարելու նպատակով տրանսպորտային միջոցի վարորդից (տիրոջից, տիրոջ ներկայացուցչից) հաջորդող յուրաքանչյուր լրիվ օրվա համար գանձվում է վճար՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով:

(…):»:

Վերը վկայակոչված իրավակարգավորումներից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է տեղում վերացնել արգելանքի տակ դնելու պատճառը, օրինակ, տրանսպորտային միջոցն անօրինական վերասարքավորված է և հնարավոր է վերասարքավորումը վերացնել տեղում կամ հեռացնել ավտոմեքենայի հողմապակիներին առկա լուսաթափանցելիության չափը խախտող թաղանթը, ապա տրանսպորտային միջոցը չի կարող տեղափոխվել հատուկ տարածք, եթե վարորդը ցանկանում է տեղում վերացնել խախտումը: Նմանապես, բոլոր այն դեպքերում, երբ արդեն իսկ հատուկ տարածք տեղափոխված տրանսպորտային միջոցի վարորդը վերացնում է արգելանքի տակ դնելու պատճառները, ապա Ոստիկանության ծառայողը պարտավոր է ***անմիջապես*** վերացնել անձի սեփականության իրավունքի սահմանափակումը՝ տրանսպորտային միջոցը վերադարձնելով օրինական տիրապետողին:

Վերը թվարկվածի հաշվառմամբ՝ Պաշտպանը խիստ մտահոգիչ և անթույլատրելի է համարում տրանսպորտային միջոցները համապատասխան իրավական հիմքերի բացակայությամբ կամ առանց դրանք ներկայացնելու հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու, տևական ժամանակ անհիմն կամ ծրագրային, տեխնիկական խնդիրների պատճառաբանությամբ օրինական տիրապետողին չվերադարձնելու պրակտիկան և կարևորում, որպեսզի խստորեն պահպանվեն տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու համար օրենքով նախատեսված պահանջները:

Վերոգրյալից բացի Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել Ոստիկանության ծառայողների կողմից իրականացված ոչ պատշաճ վարչարարության վերաբերյալ:

Այսպես, չնայած 2023 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել էր, որ անհրաժեշտ է բացառել օրենքով չարգելված վայրում ծխախոտ օգտագործելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան, ինչպես նաև տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս և վարչական տույժ նշանակելու մասին որոշում կայացնելիս խստագույնս պահպանել օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ անձի լսված լինելու իրավունքը, այնուամենայնիվ 2024 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ ծխախոտ ծխելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելիս օրենսդրության պահանջները չպահպանելու վերաբերյալ:

Մասնավորապես, բողոքներից մեկով անձը հայտնել է, որ Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակի զբոսայգում ծխախոտ ծխելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2-րդ հոդվածի 1-ին մասով իր նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 50.000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ, որևէ իրավախախտում չի կատարել, քանի որ զբոսայգում ծխախոտային արտադրատեսակների օգտագործումն արգելված չէ: Բացի այդ, ըստ բողոք ներկայացրած անձի՝ վարչական լսմանը մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը ստացել է նույն օրը, սակայն ավելի ուշ ժամի, քան նախատեսված է եղել վարչական լսումը, իսկ ծանուցագիրը ստանալուց հետո դիմել է Ոստիկանության բաժին, սակայն իր լսված լինելու իրավունքը կրկին չի ապահովվել:

Մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ իր նկատմամբ տուգանք է նշանակվել Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակի խաղահրապարակում ծխախոտ ծխելու համար: Մինչդեռ, ըստ պնդման՝ Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակում խաղահրապարակ առկա չէ, իսկ ինքը ծխախոտն օգտագործել է օրենքով չարգելված վայրում՝ բջջային հեռախոսների խանութ սրահի դիմացի մայթի մոտ: Ավելին, ըստ պնդման՝ վարչական մարմինն ապացույց չի ներկայացրել իր կողմից իրավախախտում կատարելու, այն է՝ համայնքի կողմից երեխաների համար նախատեսված խաղահրապարակում ծխախոտ ծխելու վերաբերյալ, իսկ որոշման մեջ չի նշվել այն իրավանորմը, որի խախտման հետևանքով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Բացի այդ, վարչական լսմանը մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը ստանալուց հետո դիմել է Ոստիկանության բաժին, սակայն վարչական լսում չի իրականացվել, այլ հայտնվել է, որ անհրաժեշտ է սպասել որոշման կայացմանը, որից հետո կարող է տարաժամկետել տուգանքի վճարումը:

Ծխախոտ ծխելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ այլ բողոքներով ևս բարձրացվել են վարչական լսման մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը լսման համար նախատեսված ժամանակից ուշ ստանալու, ինչպես նաև վարչական լսման իրավունքը չապահովելու հարցեր: Բարձրացվել են նաև չարգելված վայրում ծխելու համար պատասխանատվության ենթարկելու, վարչական ակտին ներկայացվող պահանջները չպահպանելու, առանց իրավախախտում կատարելն ապացուցելու վարչական պատասխանատվության ենթարկելու, ծխախոտային արտադրատեսակի օգտագործման արգելքի և սահմանափակման մասին տեղեկատվություն

պարունակող ցուցանակներ առկա չլինելու հարցեր: Արձանագրվել է նաև դեպք, երբ վարչական բողոքարկման արդյունքում բողոքը բավարարվել է, սակայն վարչական ակտն ուղարկվել է հարկադիր կատարման:

Պաշտպանն ընդգծում է, որ նախքան անձին օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելու համար վարչական պատասխանատվության ենթարկելն անհրաժեշտ է պարզել, արդյոք «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքով առկա են համապատասխան արգելքներն ու սահմանափակումները: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել, թե անձը որտեղ է օգտագործում ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչ և այդ վայրում օրենքով արգելված է դրա օգտագործումը, թե՝ ոչ:

Նշվածից ելնելով՝ անհրաժեշտ է բացառել առանց օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելու, այսինքն՝ առանց վարչական իրավախախտում կատարելու, անձին պատասխանատվության ենթարկելու պրակտիկան:

Կարևոր է նաև վարչական իրավախախտման գործի քննության ընթացքում ապահովել անձի լսված լինելու իրավունքի իրացումը՝ հնարավորություն տալով անձին արտահայտվել վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ՝ ներկայացնելով առարկություններ կամ բացատրություններ:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:»:

Սահմանադրության 50-րդ հոդվածի վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արձանագրել է հետևյալը.

«1) անձի լսված լինելու իրավունքը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ տարր է,

2) լսված լինելը վարչական մարմինների կողմից գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության ընթացքում մարդու և քաղաքացու իրավական պաշտպանության միջոց է, որը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր ոք առարկություն ներկայացնի կամ այլ կերպ իր կարծիքն արտահայտի իր նկատմամբ կայացվելիք և իր իրավունքներին կամ ազատություններին միջամտող ցանկացած վարչական ակտի առնչությամբ,

3) անձի լսված լինելը պատշաճ վարչարարության հիմնարար բաղադրիչ է,

4) անձի լսված լինելու իրավունքի իրականացումն ունի հետևյալ գործառութային նշանակությունը. մի կողմից՝ անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի դեմ արդյունավետ պաշտպանության ապահովման հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակներում պարտավոր է քննարկել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և պարզել դրանց օբյեկտիվությունը և լիարժեքությունը՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկներն ու դիրքորոշումները քննարկման առարկա դարձնելու միջոցով,

5) անձն օժտված է վարչական վարույթում լսված լինելու իրավունքով այն դեպքերում, երբ նրա նկատմամբ պետք է ընդունվի միջամտող անհատական ակտ,

6) վարչական վարույթում լսված լինելու իրավունքով օժտված է վարչական ակտի հասցեատեր և վարչական վարույթի մասնակից չհանդիսացող յուրաքանչյուր անձ, եթե տվյալ վարույթի արդյունքում ընդունվելիք միջամտող անհատական ակտը կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջինիս իրավունքների և օրինական շահերի վրա,

7) լսված լինելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորվում է միայն այն վարչական ընթացակարգերում, որոնք ուղղված են անձանց նկատմամբ միջամտող անհատական ակտ ընդունելուն,

8) «(...) բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» դրույթի բովանդակությունից հետևում է, որ վարչական մարմնի կողմից լսումներ կարող են չանցկացվել օրենքով սահմանված բացառիկ դեպքերում (տե՛ս, օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-4-րդ մասերը):» [233]:

Վարչական իրավախախտման գործի քննությանը մասնակցելու համար ծանուցագիր ուղարկելն ինքնանպատակ չէ, այլ այդ եղանակով անձինք իրազեկվում են իրենց վերաբերյալ գործով լսումների օրվա, ժամի ու վայրի մասին՝ հնարավորություն ունենալով արտահայտվել փաստական հանգամանքների վերաբերյալ: Ընդ որում, այն անհրաժեշտ է ուղարկել այնպիսի տրամաբանությամբ, որ անձը, իրազեկվելով վարչական լսումների ժամանակի մասին, հնարավորություն ունենա մասնակցել:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2023 թվականի փետրվարի 17-ին կայացրած թիվ ՎԴ/1889/05/18 որոշմամբ գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական մարմնի պարտականությունը կարող է պատշաճորեն կատարված համարվել, եթե վարչական մարմինը մինչև միջամտող վարչական ակտի կայացումն իր տրամադրության տակ ունեցել է բավարար ապացույցներ առ այն, որ վարչական վարույթի մասնակիցն իրազեկված է լսումների օրվա, ժամի ու վայրի մասին և իրազեկումից հետո իր տրամադրության տակ ունեցել է բավարար ժամանակ վարչական մարմնի առջև իր պաշտպանությունը կազմակերպելու համար: Հակառակ դեպքում, վարչական վարույթում անձի լսված լինելու իրավունքը, ինչպես նաև վարչական մարմնի առջև արդյունավետ իրավական պաշտպանության

[233] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշումը:

իրավունքները կդառնան անիրական և երևութական՝ զուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վարչական վարույթն իրականացնող վարչական մարմնի՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ գործը քննելու վարքագիծն իրավաչափ է, եթե վարչական պատասխանատվության ենթարկվող անձը, ժամանակին ծանուցված լինելով գործի քննության ժամանակի և տեղի մասին, կամք չի դրսևորել իրացնելու գործի քննությանը մասնակցելու իր իրավունքը: Գործի քննությանը մասնակցելու՝ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի կամքը բացակայում է, եթե վերջինս, ժամանակին ծանուցված լինելով գործի քննության ժամանակի ու տեղի մասին, չի ներկայանում գործի քննությանը և միաժամանակ չի ներկայացնում գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն[234]:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը կարևոր է համարում իրավասու մարմնի կողմից ծխախոտային արտադրատեսակների օգտագործման արգելքի և սահմանափակման մասին համապատասխան վայրերում տեղեկատվություն պարունակող ցուցանակներ տեղադրելը: Հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 173.3-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման սահմանափակումների ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու, մասնավորապես՝ օգտագործման արգելքի մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակների բացակայության համար: Մինչդեռ, քննարկվող հարցի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքներից գրեթե բոլորի դեպքում անձինք նշել են, որ այն վայրում, որտեղ ծխելու համար պատասխանատվության են ենթարկվել՝ առկա չի եղել որևէ ցուցանակ:

2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում ՀՀ ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ քննարկվող ժամանակահատվածում ստացված դիմում-բողոքների, օպերատիվ հաղորդագրությունների, ԶԼՄ-ների հրապարակումների և այլ աղբյուրներից ստացված հաղորդումների կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել են 1911 ծառայողական քննություններ և ուսումնասիրություններ, որից 1784-ը՝ ոստիկանության ծառայողների նկատմամբ:

Կատարված ծառայողական քննությունների արդյունքներով ՆԳՆ աշխատակիցների նկատմամբ կիրառվել են 590 կարգապահական տույժեր, որոնցից 549-ը՝ ոստիկանության ծառայողների նկատմամբ, այդ թվում՝ «Նկատողություն»՝ 268, «Խիստ նկատողություն»՝ 90, պաշտոնային դրույքաչափի իջեցում՝ 130, պաշտոնի իջեցում մեկ աստիճանով՝ 7, կոչման իջեցում մեկ աստիճանով՝ 4, ազատում ոստիկանությունից՝ 50:

Կարգապահական տույժերը ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվել են հետևյալ իրավախախտումների համար.

- իր լիազորություններն իրականացնելիս օրենքը խախտելը՝ 171,

[234] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ ՎԴ/1889/05/18 որոշումը:

- գործառույթները կարգավորող օրենքներով նախատեսված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ 287,
- ոստիկանության կարգապահական կանոնագրքով սահմանված կանոնները խախտելը՝ 30,
- էթիկայի կանոնները խախտելը՝ 17,
- օրենքով սահմանված սահմանափակումները խախտելը՝ 5,
- կարգապահական կոպիտ խախտումներ կատարելը՝ 39:

Միաժամանակ, ծառայողական քննությունների արդյունքներով ոստիկանության 20 ծառայող ազատվել է ոստիկանությունում ծառայությունից ոչ կարգապահական տույժի կարգով՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ (ծառայողի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում), 9.1-րդ (դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարքի առնչությամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով) և 11.1-րդ (ոստիկանությունում ծառայության անցնելու՝ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում հայտնաբերվելու դեպքում) կետերի հիմքով:

2024 թվականի ընթացքում ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացված ծառայողական քննություններով նախաքննության մարմիններ ուղարկված 51 նյութերով նախաձեռնվել են 45 քրեական վարույթներ, որոնցից 36-ը ոստիկանության ծառայողների, իսկ 9-ը՝ ՆԳՆ ենթակա մյուս մարմինների, կազմակերպությունների, ՆԳՆ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների վերաբերյալ: Հիշյալ 36 վարույթներից 7-ի շրջանակներում ոստիկանության 20 ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 445-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 46-445-րդ հոդվածի 1-ին մասով և 258-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 10-րդ կետերով:

Պարեկային ծառայության ծառայողների գործունեության վերաբերյալ բողոքների կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ ստացված դիմումների կապակցությամբ Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել է 34 ծառայողական քննություն և 17 ուսումնասիրություն: Դրանցից 11-ը կասեցվել է, 2-ը գտնվում է ընթացքի մեջ, 22-ը՝ թողնվել է անհետևանք, 10 դեպքով պարեկային ծառայության 17 ծառայողներ ազատվել են կարգապահական պատասխանատվությունից՝ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, 4-ի արդյունքներով պարեկային ծառայողների նկատմամբ կիրառվել են 6 կարգապահական տույժեր, այդ թվում՝ 5 «Նկատողություն», 1 «Խիստ նկատողություն»: Նշված դեպքերով արձանագրված խախտումներն են եղել իր լիազորություններն իրականացնելիս օրենքը խախտելը, գործառույթները կարգավորող օրենքներով նախատեսված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ոստիկանության կարգապահական կանոնագրքով սահմանված կանոնները խախտելը: Ծառայողական քննություններից 2-ի արդյունքներով պարեկային ծառայության 2 ծառայող ազատվել է ոստիկանությունում ծառայությունից ոչ կարգապահական տույժի կարգով՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով (ծառայողի նկատմամբ դատարանի մեղադրական

դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում)՝ 1 դեպքով՝ կաշառք ստանալու, մյուս դեպքով՝ փաստաթղթերի կեղծման համար: 2024 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային 106 ծառայողներ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրում անցել են վերապատրաստում:

Վերը քննարկված խնդիրների հաշվառմամբ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է.

- ✓ ***բացառել տրանսպորտային միջոցները համապատասխան իրավական հիմքերի բացակայությամբ կամ առանց դրանք ներկայացնելու հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու, տևական ժամանակ անհիմն կամ ծրագրային, տեխնիկական խնդիրների պատճառաբանությամբ օրինական տիրապետողին չվերադարձնելու պրակտիկան՝ խստորեն պահպանելով տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու համար օրենքով նախատեսված պահանջները,***
- ✓ ***բացառել առանց վարչական իրավախախտում կատարելու, առանց խախտման առկայությունն ապացուցելու և անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու անձին վարչական պատասխանատվության ենթարկելու անթույլատրելի պրակտիկան:***

2. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ անդրադարձել է ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության լիազորությունների կատարման ընթացքում արձանագրված գործնական խնդիրներին: Քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ անհրաժեշտ է պրակտիկան զարգացնել այն ուղղությամբ, որպեսզի անձի կողմից դատարան դիմած լինելու մասին հայտարարության պարագայում ստուգվի ներկայացված տեղեկատվության հավաստիությունը, ինչպես նաև մինչև համապատասխան դատական ակտի կայացումը զերծ մնալ ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունների կատարումից:

Բացի այդ, Պաշտպանը կարևոր է համարել, որպեսզի ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը, որպես վարչական վարույթ իրականացնող մարմին, մինչև ներխուժումը վերացնելուն ուղղված գործողությունների կատարումը քաղաքացիներին պատշաճ կարգով ներկայացնի վարույթի հիմքերը, այդ թվում՝ 2021 թվականի հունվարի 21-ի խմբագրությամբ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի և շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ

համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 797-Ն կառավարության որոշմամբ սահմանված իրավակարգավորումները, անձանց իրավունքներն ու պարտականությունները, իրականացվող գործողությունների բողոքարկման կարգը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման վերը նշված առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացվել է տեղեկություն այն մասին, որ Պաշտպանի առաջարկի շրջանակներում ՆԳՆ ոստիկանության իրավասու ծառայողներն անցել են համապատասխան հրահանգավորում:

Այնուամենայնիվ, Պաշտպանի աշխատակազմում 2024 թվականի ընթացքում ևս շարունակել են ստացվել ներխուժումը վերացնելիս Ոստիկանության ծառայողների գործողություններին առնչվող ահազանգեր և բողոքներ:

Մասնավորապես, Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին կատարված ահազանգերից մեկով փաստաբանը հայտնել է, որ իր վստահորդի բնակության վայր են ներկայացել Ոստիկանության ծառայողներ և կայացրել բանավոր վարչական ակտ՝ ներխուժումը վերացնելու վերաբերյալ: Փաստաբանի տեղեկացմամբ՝ բանավոր վարչական ակտը բողոքարկել է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավաբանական վարչություն, սակայն կայացվել է բողոքը մերժելու մասին որոշում: Դրանից հետո վիճարկման հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ միևնույն ժամանակ միջնորդելով կայացնել հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում և ժամանակավոր կասեցնել Ոստիկանության՝ ներխուժումը վերացնելուն ուղղված գործողությունների իրականացումը: Հավելել է, որ դատարանի կողմից միջնորդությունը բավարարվել է մասնակի և Ոստիկանության գործողությունները կասեցվել են միայն իր վստահորդի մասով: Ըստ փաստաբանի՝ ահազանգի պահին Ոստիկանության ծառայողները ժամանել են իր վստահորդի բնակության վայր և փորձել են ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ իրականացնել նաև անչափահաս երեխաների նկատմամբ:

Հաշվի առնելով բարձրացված հարցի հրատապությունը, այն բանավոր կարգով քննարկվել է Ոստիկանության իրավասու ներկայացուցչի հետ, և ձեռք բերված համաձայնության արդյունքում Ոստիկանության կողմից անչափահաս երեխաների ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ չեն իրականացվել:

Պաշտպանը դրական է գնահատում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության հետ ձևավորված կայուն համագործակցությունը, ինչի արդյունքում քննարկվող հարցի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներն ու ահազանգերը հրատապության կարգով լուծում են ստանում հիմնականում բանավոր ձևաչափով:

Վերոգրյալից բացի, 2024 թվականի ընթացում Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ նաև այն մասին, որ չնայած ներխուժումը վերացնելու վերաբերյալ կայացված բանավոր վարչական ակտի բովանդակությունն արտացոլող գրավոր արձանագրությունը տրամադրելու պահանջին, այնուամենայնիվ Ոստիկանության ծառայողի կողմից այն չի տրամադրվել:

Ներքին գործերի նախարարությունից ներկայացվել է պարզաբանում առ այն, որ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշման իմաստով ոստիկանության ծառայողը բանավոր վարչական ակտը գրավոր կերպով արձանագրելու պարտավորություն չի կրում: Այդպիսի արձանագրության կազմումը կրում է տեղեկատվական բնույթ և չի կարող ազդել վարչական ակտի իրավաչափության վրա:

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Օրենքով նախատեսված դեպքերում վարչական ակտը կարող է ընդունվել բանավոր: *Բանավոր վարչական ակտը, ակտի հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով, ենթակա է հետագա գրավոր ձևակերպման ինչպես օրենքով նախատեսված դեպքերում, այնպես էլ այն դեպքում, երբ ակտի հասցեատերն ունի արդարացված շահ:* Այդ դեպքում պահպանվում են գրավոր վարչական ակտին՝ սույն օրենքով ներկայացվող պահանջները:»:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է, որ վարչարարություն իրականացնելիս պաշտոնատար անձինք պետք է առաջնորդվեն ոչ միայն կոնկրետ գործողության կարգն ու պայմանները կարգավորող որոշմամբ սահմանված իրավակարգավորումներով, այլ նաև դրա ընթացքում պետք է պահպանվեն վարչական ակտի ձևին վերաբերող իրավակարգավորումները:

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշմամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը վերապահված գործառույթներն իրականացնելու վերաբերյալ 2024 թվականի ընթացքում ՆԳՆ իրավաբանական վարչությունում ստացվել է թվով 201 բողոք, որից 11-ի վերաբերյալ կայացվել է բողոքը բավարարելու մասին որոշում, 2 գործով կայացվել է բողոքը մասնակի բավարարելու մասին որոշում, 164-ը մերժվել է, 17 գործի վարույթ կարճվել է, 3 գործ թողնվել է առանց քննարկման, 4 գործով չի հարուցվել բողոքարկման վարույթ՝ բողոքի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված վավերապայմաններին չհամապատասխանելու պատճառով: Ներկայացված բողոքների շրջանակներում բողոք բերող անձանց կողմից վիճարկվել է ոստիկանության ծառայողի «Ողջամիտ ժամկետ տրամադրելու վերաբերյալ» բանավոր վարչական ակտի իրավաչափությունը, ոստիկանության ծառայողի գործողությունների, այդ թվում նաև անգործության իրավաչափությունը: Բողոքները մերժվել են այն հիմնավորմամբ, որ ոստիկանության ծառայողի կողմից կայացված բանավոր վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը եղել է իրավաչափ, բխել է ՀՀ օրենսդրության պահանջներից:

Խնդրո առարկայի վերաբերյալ 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների ու հայցադիմումների նվազ քանակի և դրանց վերլուծությամբ կարելի է արձանագրել, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ձեռնարկված միջոցներն ապահովել են քննարկվող

ոլորտում դրական և արդյունավետ պրակտիկա ձևավորելու միտում, իսկ ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության լիազորությունների կատարման ընթացքում նախկինում արձանագրված գործնական խնդիրները ներկայում չունեն նույն արդիականությունը: Այդուհանդերձ, ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում ծագող հարցերը շարունակում են լինել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում և Պաշտպանը հետագայում ևս հետևողական է լինելու իրավասու մարմնի կողմից համապատասխան չափանիշների պահպանման հարցում:

3. ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտին առնչվող խնդիրներ

Անձը հաստատող փաստաթղթերն ու ոլորտին առնչվող հարաբերությունները բացառիկ կարևորություն ունեն իրավական պետության մեջ սոցիալական և իրավական հարաբերություններին մասնակցող անձանց իրավունքների պատշաճ իրացման տեսանկյունից: Այդ իսկ պատճառով, նշված ոլորտին առնչվող խնդիրները մշտապես գտնվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում և դրանց անդրադարձ է կատարվել Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով:

2023 թվականի Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ, հաշվի առնելով անձնագրային և համապատասխան այլ գործարքների իրականացման համար հերթագրման դժվարությունների, համակարգի ծանրաբեռնվածության և հնարավոր սեղմ ժամկետում անձնագիր կամ համապատասխան փաստաթուղթ ստանալու անհրաժեշտության վերաբերյալ ստացված բողոքները՝ Պաշտպանն, ի թիվս այլնի, կարևորել է ոլորտում առկա խնդիրները կարգավորելուն ուղղված անհրաժեշտ կառուցակարգեր մշակելու անհրաժեշտությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2023 թվականի մայիս ամսից Երևան քաղաքում ներդրված էլեկտրոնային հերթագրման համակարգը չի ապահովել սպասված արդյունքը և կարիք է առաջացել փոխել հերթագրման համակարգի տեսակը՝ ներդնելով հերթագրման հիբրիդային կարգ՝ էլեկտրոնային հերթագրման («Early one» հերթագրման համակարգ) և կենդանի հերթի համադրությամբ: Նոր մեխանիզմը գործարկվել է 2024 թվականի սեպտեմբեր ամսվա սկզբին և արդեն իսկ դրան հաջորդող շաբաթվանից բեռնաթափել է անձնագրային ծառայություններում առկա հերթերի կուտակումները: Հերթագրման նոր համակարգը ներդրվել է դեռևս ամենաշատ սպասարկում իրականացնող 29 տարածքներում /ամբողջ Երևան քաղաքում և մի քանի մարզերում/, սակայն նախատեսվում է մինչև 2025 թվականի հունվար ամիսը բոլոր ծառայություններում ունենալ տվյալ համակարգը: Միևնույն

ժամանակ, նշվել է, որ միջոցներ են ձեռնարկվել ՀՀ քաղաքացիության ստացման կամ դադարի ընթացակարգի թվայնացման ուղղությամբ:

Վերոգրյալից բացի, հաշվի առնելով տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրները՝ Պաշտպանն անընդունելի է համարել հանրային քրեական հետապնդումը վարույթն իրականացնող մարմնի կողմից դադարեցված լինելու և մեղադրյալի անձնագրային գործարքների նկատմամբ սահմանված սահմանափակումը վերացված լինելու պայմաններում պետական մարմինների կողմից գործընթացին հետևողական չլինելու հանգամանքով պայմանավորված՝ անձի անձնագրային գործարքների սահմանափակումը: Որպես նշված խնդրի լուծում՝ առաջարկվել է անձի նկատմամբ կիրառված սահմանափակումների վերաբերյալ տվյալները դրանք սահմանող և վերացնող մարմինների կողմից մուտքագրելու հնարավորությամբ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն ու գործարկումը:

Նշվածի կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ առաջարկն ընդունվել է ի գիտություն և նախատեսվում է անհրաժեշտ քայլերի ձեռնարկում խնդրի լուծման ուղղությամբ:

Այդուհանդերձ, 2024 թվականի ընթացքում շարունակվել են ստացվել ահազանգեր այն մասին, որ անձինք, տեղեկացված չլինելով Էլեկտրոնային հերթագրման պարտադիր պահանջի մասին, փորձել են անձնագրային բաժնում այց ամրագրել, սակայն համակարգը հնարավորություն է տվել այն ամրագրել մեկ կամ մի քանի ամիս անց: Որոշ դեպքերում, հաշվի առնելով անձնագրային գործարքի իրականացման հրատապությունը, Անձնագրային և վիզաների վարչության իրավասու ներկայացուցիչների հետ Պաշտպանի ներկայացուցիչների բանավոր քննարկումների արդյունքում հնարավոր է եղել լուծել խնդիրը:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացվել են ահազանգեր նաև այն մասին, որ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային ծառայությունների մարզային ստորաբաժանումներում անձնագրային բաժնի աշխատակիցները հնարավորություն չեն տալիս հերթի կտրոն տրամադրող սարքից ստանալ կտրոն, այլ իրենք են տրամադրում սահմանափակ քանակությամբ կտրոններ: Ահազանգերի կապակցությամբ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը բանավոր ընթացակարգով քննարկվել են անձնագրային համապատասխան բաժնի իրավասու ներկայացուցչի հետ: Բոլոր դեպքերում ստացվել է պարզաբանում այն մասին, որ նշված գործընթացն իրականացվում է քաղաքացիների հոսքը կարգավորելու և հերթը կառավարելու նպատակով:

Հարկ է նկատել, որ հերթագրման հետ կապված խնդիրները չեն վերաբերել միայն անձնագրային գործարքներին: Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև բողոքներ առ այն, որ անձինք ցանկացել են հերթագրվել ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու նպատակով, սակայն համակարգում ինքնաշխատ եղանակով առաջարկվող այցի հնարավոր օրը եղել է վեց ամիս կամ առավել ուշ ժամկետներում: Հերթագրման հետ կապված խնդիրները նույնքան արդիական են եղել նաև կացության կարգավիճակի տրամադրման վերաբերյալ դիմումների ներկայացման համատեքստում:

Սույն տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Ներքին գործերի նախարարությունից վիճակագրական տվյալներ են ստացվել այն մասին, որ

2024 թվականի ընթացքում՝ ՀՀ-ում քաղաքացիություն ստանալու համար դիմել է 21.437 անձ, որոնցից 20.775-ին շնորհվել է ՀՀ քաղաքացիություն, իսկ 420 անձի դիմումը մերժվել է: ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար դիմել է 4202 անձ, որոնցից 3746-ի դեպքում ՀՀ քաղաքացիությունը դադարեցվել է, իսկ թվով 77 անձի դիմում մերժվել է:

Բացի այդ, ըստ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկության՝ Ներքին գործերի նախարարությունում 2024 թվականի ընթացքում քաղաքացիներից ստացվել են բողոքներ առ այն, որ չեն կարողանում օգտվել հերթագրման համակարգից կամ համակարգը հնարավորություն է տալիս հերթագրվելու ամիսներ անց: Այսպիսի բողոքների կապակցությամբ՝ որպես լուծում, հեռախոսազանգով, իսկ որոշ դեպքերում՝ նաև Միգրացիայի և քաղաքացիության ծառայության իրավասու ստորաբաժանում հրավիրելու եղանակով, քաղաքացիներին հերթագրվելու հարցում տրամադրվել է օգնություն: Այն դեպքում, եթե խնդիրը եղել է տեխնիկական՝ կապված հերթագրման համակարգի հետ, կապ է հաստատվել պատասխանատու ստորաբաժանման հետ՝ խնդիրը կարգավորելու նպատակով:

Ըստ Ներքին գործերի նախարարությունից ստացված պատասխանի՝ եղել են նաև բողոքներ, երբ էլեկտրոնային հերթագրման առկայության պարագայում համակարգը տեխնիկապես ուշ է արձագանքել և անձի սպասարկումն իրականացվել է նշանակված ժամից ավելի ուշ: Խնդիրը ներկայացվել է հերթագրման ծառայություն մատուցող ընկերությանը՝ տեխնիկական գործոնն ուսումնասիրելու, լուծում տալու և հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:

2024 թվականի ընթացքում արդիական են եղել նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չլինելու հիմքով անձնագիր չտրամադրելու վերաբերյալ ահազանգերը և բողոքները: Նշված բողոքների կապակցությամբ՝ քաղաքացիներին պարզաբանվել են ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրում հաշվառվելու հնարավորության վերաբերյալ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Բնակչության պետական ռեգիստրի համակարգի ներդրման մասին» թիվ 1231-Ն որոշման կարգավորումները:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացին հայտնել է, որ 2022 թվականին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացել է նույնականացման քարտ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ավելի ուշ պարզվել է, որ նույնականացման քարտի հետ իրեն տրամադրվել է այլ անձի նույնականացման քարտի PIN և PUK ծածկագրերը, իսկ իր քարտինը տրամադրվել է նշված անձին, ով կորցրել է ծածկագրերը: Նշվածի հետևանքով անձը զրկվել է էլեկտրոնային ստորագրություն ձեռք բերելու և մի շարք գործարքներ իրականացնելու հնարավորությունից, իսկ Անձնագրային և վիզաների վարչությունից իրեն հայտնել են, որ նոր ծածկագրեր կարող են տրամադրել միայն նոր նույնականացման քարտի ստացման պարագայում՝ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն ներկայանալու դեպքում:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ քաղաքացին նոր նույնականացման քարտ ստանալու կամ փոխանակելու համար կարող է դիմել միայն ՀՀ տարածքում: Տեղեկություն է ստացվել նաև այն մասին, որ 2022 թվականի դեկտեմբերին

փոփոխություն է կատարվել «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում, որի հետևանքով 2023 թվականի փետրվարի 15-ից ՀՀ քաղաքացիներին տրամադրվող նույնականացման քարտերն այլևս չեն պարունակում էլեկտրոնային կրիչ և քաղաքացիներին չի տրամադրվում PIN և PUK ծածկագրերը:

Ստեղծված իրավիճակի կապակցությամբ, Պաշտպանն անհրաժեշտ է համարում որոշակի մեխանիզմի ներդրում, որով հնարավորություն կընձեռվի նույնականացման քարտ ստանալուն կամ փոխանակելուն առնչվող գործարքները, օրենքով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու և պետական տուրքը վճարելու դեպքում, իրականացնել նաև առցանց դիմում ներկայացնելու եղանակով՝ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջոցով:

Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել նաև ահազանգեր և բողոքներ այն մասին, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից վարույթի շրջանակում կիրառված սահմանափակումները, այդ թվում՝ անձնագրային գործարքների վերաբերյալ, վերացված լինելու պայմաններում համապատասխան համակարգերում պահպանվել են անձի անձնագրային գործարքների սահմանափակումները: Այսպիսի խնդիրների մեծամասնությունը սեղմ ժամկետում հնարավոր է եղել կարգավորել Պաշտպանի և իրավասու մարմինների ներկայացուցիչների համագործակցության արդյունքում:

Ամփոփելով վերոշարադրյալը, Պաշտպանը ողջունելի է համարում ՀՀ ներքին գործերի նախարարության՝ անձնագրային ծառայություններում հերթերի բեռնաթափման նպատակով հերթագրման հիբրիդային կարգ ներդնելու ուղղությամբ իրականացված փոփոխությունները: Միևնույն ժամանակ, Պաշտպանն անհրաժեշտ է համարում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից մատուցվող ծառայությունների, դրանցից օգտվելու կարգի վերաբերյալ քաղաքացիների շրջանում իրազեկման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների շարունակական բարելավմանն ուղղված միջոցների գործադրումը:

Նշվածից բացի, Պաշտպանը վերահաստատում է 2023 թվականի տարեկան հաղորդմամբ արտահայտված դիրքորոշումն առ այն, որ իրավասու մարմինները պետք է ցուցաբերեն պատշաճ ջանասիրություն համապատասխան արգելքի բացակայության դեպքում անձի անձնագրային գործարքների սահմանափակումը բացառելու, խնդրի լուծմանն ուղղված համապատասխան կառուցակարգեր մշակելու և գործարկելու հարցում:

ԲԱԺԻՆ 4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից է եղել իրավահավասարության ու խտրականության արգելքի երաշխավորումը:

Իրավահավասարության ապահովմանն ուղղված օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի բացակայության խնդիրը 2024 թվականի ընթացքում ևս շարունակել է արդիական մնալ: Խտրականության դեմ պայքարի շրջանակներում գործուն կառուցակարգերի նախատեսման, այդ թվում՝ միասնական օրենքի ընդունման հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել են տարիներ շարունակ ինչպես հրապարակային, այնպես էլ ոչ հրապարակային հարթակներում:

2024 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանը ակտիվ կերպով բարձրացրել է «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի ընդունման հարցը՝ ընդգծելով ինչպես օրենսդրական փոփոխությունների շուտափույթ ընդունման ու հակախտրականության գործիքների հրատապ ներդրման, այնպես էլ հասարակության բոլոր շերտերում գոյություն ունեցող կարծրատիպերի հաղթահարման ու ոլորտում կրթական աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը:

Իրավահավասարության և խտրականության դեմ պայքարի շրջանակներում արձանագրված խնդիրները, այդ համատեքստում Պաշտպանի կողմից իրականացվող աշխատանքները, ինչպես նաև իրավահավասարության ու խտրականության արգելքի երաշխավորման և պատշաճ հանրային ընկալումների ձևավորման անհրաժեշտությունը Պաշտպանի կողմից ընդգծվել է օտարերկրյա պատվիրակությունների[235], դեսպանությունների ներկայացուցիչների[236], միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների[237], աշակերտների[238] հետ հանդիպումների, մարզային այցերի[239] (Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի մարզեր),

---

[235] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2833, https://ombuds.am/am/site/ViewNews/2922, https://ombuds.am/am/site/ViewNews/3057, https://ombuds.am/am/site/ViewNews/3214, https://ombuds.am/am/site/ViewNews/3182 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[236] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2833, https://ombuds.am/am/site/ViewNews/2916, https://ombuds.am/am/site/ViewNews/3018, https://ombuds.am/am/site/ViewNews/3019, https://ombuds.am/am/site/ViewNews/3044, https://ombuds.am/am/site/ViewNews/3127, https://ombuds.am/am/site/ViewNews/3171 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[237] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3183, https://ombuds.am/am/site/ViewNews/2966, https://ombuds.am/am/site/ViewNews/3006, https://ombuds.am/am/site/ViewNews/3181 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[238] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3212 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[239] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3078, https://ombuds.am/am/site/ViewNews/3227, https://ombuds.am/am/site/ViewNews/3082 հղումներով:

աշխատանքային այցերի[240], ինչպես նաև համաժողովների[241], քննարկումների[242], խորհրդարանական լսումների[243], ուղերձների[244] և այլ միջոցառումների[245] շրջանակներում:

Իրավահավասարության երաշխավորման հարցերին, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ հոկտեմբերի 21-22-ն անցկացվող «Օմբուդսմանական/ Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն և մարտահրավերներ» խորագրով բարձրաստիճան միջազգային համաժողովի շրջանակներում, որի 2-րդ օրվա առաջին պանելային քննարկումը նվիրված է եղել «Օմբուդսմանական/Մարդու իրավունքների ազգային հաստատությունների (իրավահավասարության մարմիններ) դերը ներառական հասարակություն կառուցելու գործում» թեմային[246]:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Ազգային ժողովում պետական շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվող քննարկումներին:

Պաշտպանն իր գրավոր կարծիքն է ներկայացրել «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ՝ դրանում ներառելով մի շարք նկատառումներ, այդ թվում՝ սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը որպես «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծով պաշտպանվող հատկանիշներ նախատեսելու անհրաժեշտության վերաբերյալ:

---

[240] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3048, https://ombuds.am/am/site/ViewNews/3051, https://ombuds.am/am/site/ViewNews/3193 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[241] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3172, https://ombuds.am/am/site/ViewNews/3118 հղումներով:

[242] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3063, https://ombuds.am/am/site/ViewNews/2924, https://ombuds.am/am/site/ViewNews/3004, https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1166, https://ombuds.am/am/site/ViewNews/2909, https://ombuds.am/am/site/ViewNews/3165 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[243] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2865 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[244] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2883 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[245] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2853, https://ombuds.am/am/site/ViewNews/3133, https://ombuds.am/am/site/ViewNews/, https://ombuds.am/am/site/ViewNews/3184, https://ombuds.am/am/site/ViewNews/3041 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[246] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3136 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՈՒՄԸ

2024 թվականին Պաշտպանը շարունակել է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ իր գործունեությունը՝ մի շարք ուղղություններով:

Տարվա ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից Պաշտպանի աշխատակազմ է մուտքագրվել 17 դիմում, այդ թվում՝ 9 գրավոր դիմում, և 8 հեռախոսազանգ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին:

Դիմումների մեծ մասը չի վերաբերել ազգային պատկանելության հիմքով իրավունքների խախտմանը կամ խտրականությանը: Դրանք հիմնականում վերաբերել են քրեական վարույթի շրջանակում անձանց իրավունքների պաշտպանության, փակ հաստատություններում անձանց իրավունքներին առնչվող, սեփականության իրավունքին վերաբերելի հարցերին:

Պաշտպանի աշխատակազմը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության վիճակն ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով:

Զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում տեղեկություններ են ստացվել առ այն, որ անհայտ անձը քարով հարվածել է հրեական կրոնական կենտրոնի պատուհանին ու կոտրել այն: Պաշտպանը իր մտահոգությունն է հայտնել դեպքի առթիվ՝ նշելով, որ պաշտամունքի կառույցի նկատմամբ ցանկացած ոտնձգություն անընդունելի է և դատապարտելի: Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ իրավասու մարմինների կողմից գործի քննության շրջանակներում պատշաճ գնահատման պետք է արժանանա այն հանգամանքը, թե արդյոք արարքը կատարվել է ռասայական, ազգային, էթնիկ կամ կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով:

Պաշտպանը կարևորում է նաև հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով համագործակցությունը:

2024 թվականի ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում Պաշտպանն ակտիվ համագործակցել է պետական մարմինների, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ:

Պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրավերներով Պաշտպանը և իր ներկայացուցիչները մասնակցել են ոլորտային տարբեր հարցերով քննարկումների, այցերի, ընդգծել համապատասխան ոլորտում իրավունքների պաշտպանության և խթանման համակարգի կատարելագործման կարևորությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը և Ազգային ժողովում Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչ, Ազգային ժողովում Հայաստան-Իրաք

բարեկամական խմբի ղեկավար Ռուստամ Բաքոյանը՝ ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գործընկեր «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության և ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ այց են իրականացրել Իրաքից ժամանած և Հայաստանում ապաստան հայցող եզդիներին: Վերջիններս Պաշտպանին ներկայացրել են իրենց իրավունքներին առնչվող հարցեր, խնդիրներ՝ կապված կացարանի, պետության կողմից դրամական օգնության, աշխատանքի և հայերենի չիմացության հետևանքով հաղորդակցվելու հետ: Ներկայացված խնդիրները գույքագրվել են՝ վերջիններիս ուսումնասիրության և Պաշտպանի մանդատի շրջանակներում համապատասխան քայլեր ձեռնարկելու համար[247]:

«Ուժեղացնելով Արևելյան հարևանության կայունությունը» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» խորագրով միջոցառման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը, հանդես գալով բացման խոսքով, նշել է, որ անհնար է ունենալ մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգ՝ առանց հանրային համերաշխության, իսկ հանրային համերաշխության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի իրավահավասարության երաշխավորումը: Ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված՝ պետությունն, ի թիվս այլնի, ունի պոզիտիվ պարտավորություն՝ երաշխավորելու և նպաստելու նրանց մշակույթի, կրոնի, լեզվի, ավանդույթների պահպանմանը, և այս առումով չափազանց կարևոր է նաև ազգային փոքրամասնությունների համայնքների ակտիվ ներգրավվածությունը: Պաշտպանը կարևորել է ազգային փոքրամասնության ներկայացուցիչ հանդիսացող կանանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացումը՝ ընդգծելով տարբեր կարծրատիպերի հաղթահարման անհրաժեշտությունը: Այս համատեքստում Պաշտպանը նշել է, որ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել կրթական համակարգի բարեփոխման ուղղությամբ, քանի որ հենց կրթական համակարգի միջոցով են շատ հաճախ փոխանցվում կարծրատիպային մոտեցումները, որոնք չեն համապատասխանում մարդու իրավունքներին վերաբերելի ժամանակակից միտումներին[248]:

Մարդու իրավունքների պաշտպանը ապրիլի 1-ին ասորական Նոր տարվա՝ Հաբ-Նիսանի առթիվ այցելել է Հայաստանում ասորական ամենախոշոր՝ Արարատի մարզի

---

[247] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2838 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[248] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2853 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Վերին Դվին համայնք[249]: Այցի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել Վերին Դվին համայնքի ղեկավարի, Արևելքի ասորական ընդհանրական սուրբ առաքելական եկեղեցու հոգևոր հոր, համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցչական անձնակազմի և աշակերտների հետ: Այցի ընթացքում Պաշտպանը նաև հարգանքի տուրք է մատուցել համայնքապետարանի տարածքում գտնվող՝ քառասունչորսօրյա պատերազմում նահատակված ասորի հերոսների հիշատակին կառուցված հուշակոթողին:

Պաշտպանին ներկայացվել են Հայաստանում բնակվող ասորիների խնդիրները, ազգային փոքրամասնությունների ինքնության տարրերի պահպանմանը վերաբերելի առանձին հարցեր: Վերջիններս գույքագրվել և ըստ իրավասության հասցեագրվել են համապատասխան պետական մարմիններին:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի գլխավորությամբ մի շարք ուսանողներ այցելել են Արմավիրի մարզի Ակնալճի եզդիների հոգևոր կենտրոն[250]: Այցին մասնակցել են նաև ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Ազգային ժողովում Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչ Ռուստամ Բաքոյանը, եզդիական համայնքի և Պաշտպանի ներկայացուցիչները:

Շրջայցի ընթացքում ուսանողներին ներկայացվել է եզդի ժողովրդի և տաճարի կառուցման պատմությունը:

Պաշտպանն ընդգծել է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը և խթանմանը վերաբերելի խնդիրները համատեղ ջանքերով լուծելու կարևորությունը: Իրենց հերթին, ուսանողները հնարավորություն են ունեցել հարցեր ուղղել Պաշտպանին Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման առնչությամբ:

---

[249] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2901 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[250] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2970 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանում ասորական համայնքի ներկայացուցիչների հետ անցկացրել է աշխատանքային քննարկում[251]:

Հանդիպմանը մասնակցել են Ազգային ժողովի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ասորական համայնքի ներկայացուցիչներ: Քննարկվել են ՀՀ-ում ապրող ասորիների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող որոշ հարցեր:

Պաշտպան Անահիտ Մանասյանը աշխատանքային այց է իրականացրել Արարատի մարզի Դիմիտրով բնակավայր[252]: Հանդիպումներ են կազմակերպվել Արարատի մարզպետի, Դիմիտրով բնակավայրի վարչական ղեկավարի, բնակիչների, այդ թվում՝ ասորական համայնքի ներկայացուցիչների, Դիմիտրովի միջնակարգ դպրոցի ուսուցչական անձնակազմի հետ: Վերջիններիս կողմից բարձրացվել են մի շարք խնդիրներ իրենց իրավունքներին, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերելի հարցերի առնչությամբ: Բարձրացված խնդիրները հավաքագրվել և հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին:

Պաշտպանը՝ որպես բանախոս, մասնակցել է «Ազգային փոքրամասնությունների մասին» և «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքների նախագծերի աշխատանքային քննարկմանը[253]:

Քննարկման շրջանակում անդրադարձ է կատարվել խտրականության, անհանդուրժողականության և ատելության խոսքի դեմ պայքարի գործիքակազմին: Պաշտպանը նշել է, որ Հայաստանում իրավահավասարության և

---

[251] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2976 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[252] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3005 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[253] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3063 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հակախտրականության ոլորտում առկա խնդիրները, ի թիվս այլնի, թյուր պատկերացումների և կարծրատիպային մոտեցումների արդյունք են՝ միաժամանակ ընդգծելով մեր երկրում ոլորտի հիմնովին վերափոխման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Պաշտպանը շեշտել է նաև, որ ոլորտում առկա խնդիրները հաղթահարելու արդյունավետ տարբերակներից մեկը վերոնշյալ օրենքների ընդունումն ու պատշաճ գործարկումն է: Այս համատեքստում հաջորդ կարևոր քայլը կրթական համակարգի վերափոխումն է: Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ մարդու իրավունքներին վերաբերելի կրթությունն այսօր ընդհանրապես չի համապատասխանում իրավահավասարության և հակախտրականության ոլորտին վերաբերելի ժամանակակից չափանիշներին, ինչը ևս լուրջ խնդիր է:

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանն այցելել է Արագածոտնի մարզի եզդիական բնակչություն ունեցող բնակավայրեր[254]:

Այցը կազմակերպվել է Ազգային ժողովի պատգամավոր, խորհրդարանում եզդիական համայնքի ներկայացուցիչ, ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանի հետ համատեղ, որին մասնակցել են Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը, ԱԺ պատգամավորներ:

Շրջայց է իրականացվել Արևուտ, Կանչ և Հակո գյուղական բնակավայրեր, որտեղ Պաշտպանն ու այցի մասնակիցները զրուցել են բնակիչների հետ, ծանոթացել նրանց կենցաղային պայմաններին: Այցի մասնակիցները եղել են նաև վերոնշյալ բնակավայրերի դպրոցներում, զրուցել աշակերտների և ուսուցչական անձնակազմի հետ: Բոլոր բնակավայրերում արձանագրվել են խնդիրներ՝ կապված բժշկական կենտրոնների, դեղատների, վաճառակետերի և տրանսպորտի բացակայության հետ: Ի թիվս այլնի, եզդիական համայնքի ներկայացուցիչները նշել են, որ իրենց բնակավայրերում չկա ավագ դպրոց, ինչի հետևանքով երեխաների՝ ապագայում կրթությունը շարունակելու հետ կապված խնդիրներ են առաջանում: Ուսումնական հաստատությունների շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում. բացակայում է կենտրոնական ջեռուցման համակարգը, դասարանների կահավորումը թերի է, մարզադահլիճներն ընդհանրապես ենթակա չեն օգտագործման: Արձանագրված բոլոր խնդիրները հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին՝ վերջիններիս պատշաճ լուծման նպատակով:

---

[254] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3190 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

1. Իրավահավասարության և խտրականության բացառմանն առնչվող խնդիրները ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում

2024 թվականին Պաշտպանը շարունակել է իր ակտիվ գործունեությունը իրավահավասարության և հակախտրականության ոլորտում:

Հարկ է ընդգծել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում իրավահավասարությանն ու խտրականության բացառմանն առնչվող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել և ամփոփվել են ոլորտին վերաբերելի խնդիրներ, որոնք շարունակում են արդիական մնալ[255]:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Շրջանակային կոնվենցիա) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն: Նույն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

Նշված կարգավորումներից բխում է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում պետությունն, ի թիվս այլնի, ունի պոզիտիվ պարտավորություն երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն, բացառել ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն, ինչպես նաև ձեռնարկել պատշաճ միջոցներ վերջիններիս էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության տարբերությամբ պայմանավորված՝ խտրական դրսևորումները արգելելու ուղղությամբ:

Չնայած պետության կողմից ստանձնած պարտավորությանը՝ այս ոլորտում շարունակում են առկա լինել առանձին խնդիրներ, որոնք շատ հաճախ կարծրատիպային մոտեցումների և թյուր պատկերացումների արդյունք են:

---

[255] Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդումը, 745-746 էջեր, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նշված խնդիրների հաղթահարման արդյունավետ տարբերակներից մեկը ոլորտի համապարփակ օրենսդրության ընդունումն ու պատշաճ գործարկումն է: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան օրենսդրությունը դեռևս չի ընդունվել:

Այս համատեքստում հիշատակման արժանի է Պաշտպանի ակտիվ հրապարակային գործունեությունը ոլորտի կարգավորմանն ուղղված օրենսդրության ընդունման կապակցությամբ:

Մասնավորապես՝ Պաշտպանը բազմիցս ընդգծելով նշված ոլորտում համապարփակ օրենսդրության ընդունման ու պատշաճ կիրառման կարևորությունը՝ շեշտում է, որ վերջինս չպետք է ունենա հռչակագրային բնույթ, այլ պետք է սահմանի իրական հնարավորություններ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների երաշխավորման համար՝ ընդգծելով ոլորտում պետության կոնկրետ պոզիտիվ պարտավորությունները, այդ թվում՝ երաշխավորելու և նպաստելու վերջիններիս մշակույթի, կրոնի, լեզվի, ավանդույթների պահպանմանը[256]:

Առանձնահատուկ հիշատակման արժանի է նաև հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի (այսուհետ՝ նաև Խորհուրդ) հերթական նիստի շրջանակում քննարկման առարկա է դարձել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը: Խորհրդի անդամները, ինչպես նաև Խորհրդի անդամ չհանդիսացող, սակայն նիստին հրավիրված՝ Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի ներկայացուցիչը ներկայացրել են իրենց դիտարկումներն ու առաջարկությունները նախագծի կարգավորումների առնչությամբ, որոնք ամփոփվել են և համահավաք փաստաթղթի տեսքով ներկայացվել Արդարադատության նախարարություն՝ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքներն իրականացնելիս վերջիններս հաշվի առնելու նպատակով:

Դիտարկումներն, ի թիվս այլնի, վերաբերել են ազգային փոքրամասնությունների իրավական կարգավիճակի սահմանմանը, օրենքի նախագծում ազգային փոքրամասնությունների սպառիչ ցանկ նախատեսող դրույթի խնդրահարույց լինելուն, վերջիններիս ինքնության պահպանման տարրերի՝ լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների պահպանման առնչությամբ հստակ և իրավական որոշակիությանը համապատասխանող կարգավորումների նախատեսմանը, ազգային փոքրամասնությունների ներառականության ապահովմանը և այլն:

Ի պատասխան՝ Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի կողմից նախագծի վերաբերյալ ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները դիտարկվել են նախագծի լրամշակման փուլում: Լրամշակման աշխատանքներն ավարտելուց հետո այն կտեղադրվի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում,

---

[256] Տե՛ս, օրինակ, https://ombuds.am/am/site/ViewNews/3065 հղումը, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կներկայացվի շահագրգիռ գերատեսչությունների և կողմերի, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կարծիքին: Նախատեսվում է կազմակերպել նաև հանրային քննարկում՝ հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ 2024 թվականին Վենետիկի հանձնաժողովը և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով տնօրինությունը (DGII) համատեղ կարծիք[257] են ներկայացրել օրենքի նախագծի վերաբերյալ: Համատեղ կարծիքում ներկայացված դիտարկումները վերաբերել են նախագծի կարգավորումների իրավական որոշակիության հետ կապված խնդիրներին, ազգային փոքրամասնությունների իրավական կարգավիճակի հստակ սահմանմանը, օրենքի նախագծում վերջիններիս սպառիչ ցանկ նախատեսող դրույթի խնդրահարույց լինելուն, ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման իրավունքի խթանման առնչությամբ ընդհանրական բնույթի կարգավորումներ նախատեսված լինելուն և այլն:

Հարկ է արձանագրել, որ 2024 թվականի ընթացքում պետական իրավասու մարմինների կողմից նախաձեռնվել և իրականացվել են առանձին քայլեր՝ ոլորտի կարգավորմանն ուղղված օրենսդրական նախագծի լավարկման և լրամշակման ուղղությամբ:

Մասնավորապես՝ Արդարադատության նախարարությունը և Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպել են «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի աշխատանքային քննարկում, որին մասնակցել են նաև Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի անդամներ հանդիսացող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ինչպես նաև ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչը: Քննարկման ընթացքում Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի փորձագետները ներկայացրել են նաև Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության (DGII) համատեղ կարծիքը նախագծի կարգավորումների առնչությամբ: Միջոցառման արդյունքում ամփոփվել են օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունները՝ հետագա փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի՝ «Խթանելով ՀՀ Ազգային ժողովի արձագանքման կարողությունները, արդյունավետությունը, թափանցիկությունն ու ներառականությունը» ծրագրի շրջանակում ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հետ համագործակցությամբ կազմակերպվել է քննարկում «Ազգային փոքրամասնությունների մասին» և «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ: Քննարկմանը խոսքով հանդես է եկել նաև Մարդու իրավունքների պաշտպանը՝ նշելով, որ իրավահավասարության և հակախտրականության ոլորտը բավականին խնդրահարույց է և միջազգային չափանիշներին չհամապատասխանող եղանակով է

[257] Հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)019-e հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

զարգացած Հայաստանում: Պաշտպանը հատուկ ընդգծել է նշված ոլորտին առնչվող խնդիրները փոխելու, կատարելագործելու ուղղությամբ պատշաճ և բավարար կառուցակարգերի ստեղծման անհրաժեշտությունը:

Վերը շարադրվածի համատեքստում Պաշտպանն ընդգծում է իրավահավասարության և խտրականության բացառմանն առնչվող օրենսդրության շուտափույթ ընդունման կարևորությունը՝ միջազգային չափորոշիչների հաշվառմամբ և շահագրգիռ կողմերի պարտադիր ներգրավմամբ:

Իրավահավասարության և խտրականության բացառման տեսանկյունից չափազանց կարևոր են նաև հանրության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, ներառյալ՝ կարծրատիպային մոտեցումների վերացմանն ուղղված համակարգային միջոցառումների, այդ թվում՝ հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը:

Այս առումով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ մասնագիտական կրթության և ուսուցման բոլոր պետական կրթական չափորոշիչներում ներառված է «Իրավունքի հիմունքներ» առարկան, որի շրջանակում լայն անդրադարձ է կատարվում խտրականության ձևավորման կանխարգելմանը, մարդու իրավունքներին և իրավագիտակցության ձևավորմանն ուղղված թեմաներին: Մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետ՝ ՄԿՈՒ) զարգացման ազգային կենտրոնի կողմից ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատակազմի շրջանում կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ, որոնք ուղղված են նաև նշյալ թեմաների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ու զգոնության ձևավորմանը:

Միաժամանակ, Նախարարությունը հայտնել է, որ ՀՀ բոլոր մարզերի և Երևանի դպրոցների 5-րդ և 7-րդ դասարաններում ներդրված է «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը, որի շրջանակում անդրադարձ է կատարվում փոխադարձ օրինակելի վերաբերմունքի և առողջ փոխհարաբերությունների կառուցման թեմաներին:

Նախարարությունն ու «ԱՅ ԷՖ Ի ԷՍ» կազմակերպությունը համատեղ մշակել են «Ներգրավված քաղաքացի» դասընթացի նյութը, որի շրջանակում անդրադարձ է կատարվել ատելության խոսքի բացասական հետևանքներին, հանրության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, ներառյալ՝ կարծրատիպային մոտեցումների վերացմանը, խտրականության բացառմանը և օրենքով սահմանված պաշտպանական կառուցակարգերին: 30 ՄԿՈՒ ուսումնական հաստատության հետ կնքվել է փոխըմբռման հուշագիր, դասընթացի մեթոդաբանության վերաբերյալ վերապատրաստվել է 88 դասավանդող, դասընթացը հաջողությամբ անցկացվել է շուրջ 1.000 ուսանողի շրջանում:

Արժևորելով հանրային իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, ներառյալ՝ կարծրատիպային մոտեցումների, խտրականության վերացմանն ուղղված քայլերը՝ Պաշտպանն ընդգծում է, որ դրանք պետք է կրեն շարունակական բնույթ և իրականացվեն առավել համակարգային եղանակով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***իրականացնել հանրության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, ներառյալ՝ կարծրատիպային մոտեցումների վերացմանն ու***

խտրականության բացառմանն ուղղված շարունակական և համակարգային միջոցառումներ,

✓ ***իրականացնել իրավահավասարության և խտրականության բացառմանն ուղղված, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը վերաբերելի օրենսդրության շուտափույթ ընդունմանն ուղղված աշխատանքներ՝ միջազգային չափորոշիչների պահպանմամբ և շահագրգիռ կողմերի պարտադիր ներգրավմամբ:***

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանմանն առնչվող խնդիրներ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է իր գործունեությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման բնագավառում:

Պաշտպանը ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման պատշաճ համակարգ ունենալու տեսանկյունից կարևորում է ոչ միայն իրավունքների պաշտպանությունը, այլև խթանումը: Վերջինս ենթադրում է հատուկ մեթոդաբանության և կառուցակարգերի մշակում և իրացում՝ ուղղված ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման տարրերի՝ լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև հասարակական կյանքում արդյունավետ մասնակցության ապահովմանը:

Ըստ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի հավատարմագրման ենթահանձնաժողովի ընդհանուր դիտարկումների[258]՝ խթանումը ընդգրկում է այն գործառույթները, որոնց նպատակն է ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ մարդու իրավունքները լայն շրջանակներում հասկացված են և հարգված: Նման գործառույթները կարող են ներառել կրթությունը, վերապատրաստումը, խորհրդատվությունը, հանրային իրազեկումն ու շահերի պաշտպանությունը:

2.1. Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքին առնչվող խնդիրներ

Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման համատեքստում իր ուրույն դերակատարումն ունի լեզվի պահպանման իրավունքը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվի պահպանման իրավունքին առնչվող առանձին խնդիրներ, որոնք, մեծամասամբ, շարունակում են արդիական մնալ[259]: Նշված խնդիրները վերաբերել

---

[258] Հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/EN_General Observations_Revisions_adopted_21.02.2018_vf.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[259] Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդումը, 746-753 էջեր, հասանելի է

են ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող մասնագետների սակավությանը, նշված մասնագետներին կրթելու համար նախատեսված բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ համապատասխան կառուցվածքային միավորների, ուսուցիչների վերապատրաստումների բացակայությանը և այլն:

Արձանագրված խնդիրների, ինչպես նաև վերջիններիս լուծման առնչությամբ ներկայացված առաջարկությունների իրացման վերաբերյալ գրություն է հասցեագրվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ նաև իրավասու մարմին):

Իրավասու մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը աշխատանքային հանդիպում է ունեցել Ազգային ժողովի պատգամավոր, Ազգային ժողովում Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչ Ռուստամ Բաքոյանի և Եզդիների ազգային միության նախագահ Խդր Հաջոյանի հետ, որի ընթացքում քննարկվել են մանկավարժական որակավորում տալու նպատակով ՀՀ բուհերից մեկում եզդիերենի ուսուցման ամբիոն հիմնելու, ծրագրերի մշակման, կադրերի պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև նպատակային ուսուցման կարգով ուսանողների ներգրավման վերաբերյալ հարցերը: Գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով՝ առաջարկվել է ձևավորել աշխատանքային խումբ, որը, համագործակցելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ, կաշխատի կրթական ծրագրի կազմման և մշակման ուղղությամբ: Հատկանշական է ձևավորվող աշխատանքային խմբի և եզդիական համայնքի համագործակցությունը, որի արդյունքում կմշակվեն ամբիոնի ստեղծման վերաբերյալ առաջարկները:

Շրջանակային կոնվենցիայի 12-րդ և 14-րդ հոդվածների համաձայն՝
Կողմերը պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն *ուսուցիչների պատրաստման*, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև: Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ: Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն: Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ:

https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նկատի ունենալով նշված ոլորտում պետության ստանձնած պարտավորությունը՝ Պաշտպանը խիստ կարևորում և գովելի է համարում բարձրագույն ուսումնական հաստատություններում եզդիերենի ամբիոն բացելու աշխատանքները մեկնարկելուն ուղղված քայլերը: Սակայն հարկ է ընդգծել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման պատշաճ համակարգ ունենալու տեսանկյունից խիստ կարևոր է ոչ միայն բարձրացվող խնդիրներին արձագանքելու, այլև ակտիվ և խթանող քաղաքականություն մշակելու, համընդգրկուն և շարունակական բնույթի միջոցառումներ իրականացնելու հանգամանքը: Մասնավորապես՝ ՀՀ-ում համապատասխան մասնագետների սակավության խնդիրը առկա է ոչ միայն եզդիերեն, այլև մյուս ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող մասնագետների շրջանում, ուստի անհրաժեշտ է նաև այդ ուղղությամբ պատշաճ և բավարար կառուցակարգերի մշակումն ու իրացումը:

Ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող համապատասխան մասնագետների ապահովման առնչությամբ իրավասու մարմինը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2270-Ն որոշմամբ լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և ՏՄԱԿ-ի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» թիվ 216-Ն որոշմամբ ուսումնական հաստատության խմբակավարին ներկայացվող որակավորման պահանջներում, ըստ որի՝ ազգային փոքրամասնությունների լեզուների խմբակավարի պաշտոնը կարող է զբաղեցնել առնվազն միջին մասնագիտական կրթություն ունեցող և տվյալ լեզվին տիրապետող անձը:

Հարկ է նկատի ունենալ, որ ազգային փոքրամասնությունների առանձին համայնքներ դեմ են խմբակների ձևաչափով դասընթացների անցկացմանը, քանի որ խմբակներին մասնակցությունը կրում է ոչ պարտադիր, կամային բնույթ, և մի շարք դեպքերում աշակերտները տարբեր պատճառաբանություններով չեն մասնակցում դասընթացներին:

Այս առումով Պաշտպանն ընդգծում է, որ մեծ կարևորություն ունի իրավասու մարմնի կողմից ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող համապատասխան մասնագետների ապահովմանը և աշխատանքի շարունակականությանն ուղղված քայլերի մշակումն ու իրացումը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնագետների սակավության կամ բացակայության խնդիրը կրում է համակարգային բնույթ և, ըստ էության, նշված խնդիրը օրեցօր սրվում է՝ անհրաժեշտ է ձեռնարկել և իրացնել ոլորտի կադրային ապահովմանն ուղղված հստակ և համապարփակ կառուցակարգեր՝ բացառելով դրվագային կամ ժամանակավոր բնույթ կրող լուծումները:

Ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող ուսուցիչների վերապատրաստումների առնչությամբ իրավասու մարմինը հայտնել է, որ ուսումնական պլանով նախատեսված առարկաների համար որևէ սահմանափակում չկա հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստումների համար: Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումն իրականացվում է մասնագիտական կարիքների

գնահատման արդյունքում որոշված մակարդակին համապատասխան: Կարիքի գնահատման հիման վրա ուսուցիչները յուրաքանչյուր մոդուլից մասնակցում են բարդության համապատասխան մակարդակի վերապատրաստումների: Առարկայական վերապատրաստման գործընթացը մեկտեղված է կամավոր ատեստավորման շեմը չհաղթահարած ուսուցիչների վերապատրաստման գործընթացի հետ: Միաժամանակ, վերապատրաստումներ են իրականացվում նաև բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների շրջանում, որոնց հնարավորություն է տրվում կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցելով՝ շարունակել մանկավարժի գործունեությունը դպրոցում: Նշված մեխանիզմը ներդրված է նաև կամավոր ատեստավորման գործընթացում, մասնավորապես՝ ատեստավորմանը կարող են մասնակցել ասորերեն, եզդիերեն, քրդերեն առարկաները դասավանդող ուսուցիչները և խմբակավարները: Համապատասխան արդյունք ցուցաբերելու դեպքում ուսուցիչները օգտվում են խրախուսման մեխանիզմներից:

Նախարարությունը տեղեկացրել է նաև, որ 2024 թվականի ընթացքում կամավոր ատեստավորման համար դիմել է ազգային փոքրամասնության լեզուներ դասավանդող 11 ուսուցիչ, մասնակցել՝ 7-ը, որից 6-ը հաղթահարել են անցողիկ շեմը ու ստանում են համապատասխան տոկոսով հավելավճար: Ազգային փոքրամասնության լեզուներ դասավանդող ուսուցիչներից վերապատրաստվել են 3-ը:

Այս առումով հարկ է ընդգծել, որ պետությունը՝ ի դեմս իրավասու մարմնի, պետք է առաջնորդվի ոչ թե ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող ուսուցիչների վերապատրաստման առնչությամբ զուտ սահմանափակում չնախատեսելու, այլ խթանող կառուցակարգեր նախատեսելու մեթոդաբանությամբ, օրինակ՝ նշված մասնագետների վերապատրաստման հատուկ ծրագրեր մշակելով և իրացնելով:

Նախարարությունը հայտնել է նաև, որ Լեզվի կոմիտեն ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանման և տարածման իրավունքը երաշխավորելու և հանրությանը ազգային փոքրամասնությունների լեզվին, մշակույթին, կենցաղին, հավատալիքներին և բանահյուսությանը ավելի լավ ծանոթացնելու նպատակով նախաձեռնել է 2025 թվականի փետրվարի 21-ը՝ Մայրենի լեզվի միջազգային օրը, նշանավորել ՀՀ-ում ապրող այլազգիների մշակույթի հանրահռչակմամբ: Այս առիթով նախարարությունը շրջաբերական է ուղարկել ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և նախարարության ենթակայության պետական, ինչպես նաև ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ առաջարկելով հանրակրթական դպրոցներում նախագծային կրթության շրջանակում իրականացնել ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթին ու լեզվին վերաբերող ծրագիր, որը կամփոփվի 2025 թվականի փետրվարի 21-ին՝ աշակերտների նախագծերը ներկայացնող փառատոնով:

Պաշտպանը գովելի է համարում ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանմանն ու տարածմանն ուղղված նմանատիպ ծրագրերի իրականացումը, հատկապես դպրոցահասակ երեխաների շրջանում, քանի որ նման միջոցառումները նպաստում են ազգային փոքրամասնությունների ինքնության ճանաչմանը, համերաշխ, հանդուրժող և տեղեկացված հասարակության ձևավորմանը՝

սերմանելով հարգանք մշակութային բազմազանության նկատմամբ: Նման ծրագրերն ու միջոցառումները պետք է կրեն շարունակական և համընդգրկուն բնույթ:

Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքի տեսանկյունից կարևոր դերակատարություն ունեն նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռուստառադիոհաղորդումները:

Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով ամրագրված են կարգավորումներ, համաձայն որոնց՝ հանրային հեռարձակողները պարտավոր են սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումներ հեռարձակելու նպատակով ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար շաբաթական նվազագույնը 30 րոպե Հանրային տեսալսողական հեռարձակողների և 2 ժամ Հանրային լսողական հեռարձակողի եթերով տրամադրել եթերային ժամանակ:

Իր հերթին, Փորձագետների կոմիտեն Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 1-ի զեկույցում[260] առաջարկել է՝

1. ապահովել հանրային հեռուստատեսությամբ ասորերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,

2. ապահովել հունարենով հանրային հեռուստատեսային ծրագրի կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,

3. ապահովել հանրային հեռուստատեսությամբ քրդերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,

4. ապահովել հանրային հեռուստատեսությամբ եզդիերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը:

Հիշատակման արժանի է այն հանգամանքը, որ Հայաստանի հանրային ռադիոյի կողմից յուրաքանչյուր օր հաղորդումներ են ներկայացվում եզդիերեն, քրդերեն, ասորեն և հունարեն լեզուներով հետևյալ տևողություններով՝ AM 69.7 հաճախականությամբ՝ եզդիերեն 60 րոպե, քրդերեն՝ 30 րոպե, ասորեն՝ 15 րոպե, հունարեն՝ 15 րոպե, AM 1395 հաճախականությամբ՝ եզդիերեն 15 րոպե, քրդերեն 30 րոպե: Հաղորդումները հեռարձակվում են ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ Հայաստանից դուրս և միտված են էթնիկ բազմազանության և ազգային փոքրամասնությունների մշակույթի տեղեկացվածության բարձրացմանը՝ ապահովելով վերոնշյալ ազգային փոքրամասնությունների՝ սեփական լեզվով տեղեկացվածությունը Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին: Բացի յուրաքանչյուր լեզվով տրվող ամենօրյա լրատվությունից, հանրային ռադիոյի եթերում ինչող փոքրամասնությունների հաղորդումներում մաս է հատկացվում նաև յուրաքանչյուրի մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի, լեզվի մասին տեղեկատվության ներառմանը: Հանրային ռադիոյում յուրաքանչյուր ազգային

---

[260] Հասանելի է https://rm.coe.int/min-lang-2021-17-evalria5-armenia-en/1680a44d26 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

փոքրամասնություն ունի նաև իր լեզվով հրապարակվող պաշտոնական կայքէջ, որտեղ հրապարակվում է հայերենից թարգմանված օրվա լրատվությունը, ներկայացվում են ռեպորտաժներ, տեսանյութեր, հարցազրույցներ ազգային փոքրամասնությունները ներկայացնող ականավոր գործիչների հետ[261]:

Հատկանշական է նաև հանրային հեռուստաընկերության եթերում «Էթնոգույներ» հաղորդման հեռարձակումը: Վերջինս ներկայացնում է Հայաստանում ազգային փոքրամասնություն հանդիսացող ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները, ազգային սովորույթները, կրոնը, լեզուն, խոհանոցը, միջազգային բարիդրացիական կապերը և այլն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են քայլեր ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ապահովման տեսանկյունից, մինչդեռ կարևոր առաջընթաց կարող է լինել նշված հաղորդումների համար առավել երկար ժամանակահատված նախատեսելը և հաղորդումների քանակն ավելացնելը: Վերջինս կարող է նպաստել լեզվի պահպանմանն ու տարածմանը, միջմշակութային հաղորդակցության խթանմանը, պատկանելության առավել մեծ ընկալմանը և այլն:

Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքի առնչությամբ գոյություն ունեն մի շարք միջազգային իրավական կարգավորումներ և չափորոշիչներ, որոնք մանրամասն ներկայացված են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակում[262]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ձեռնարկել և իրականացնել համընդգրկուն և շարունակական բնույթ կրող միջոցառումներ ոլորտում համապատասխան մասնագետների սակավության խնդիրը լուծելու ուղղությամբ, մասնավորապես՝ շուտափույթ քայլեր իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագետների կրթությունն ապահովելու նպատակով,***
- ***ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող ուսուցիչների վերապատրաստումների առնչությամբ առաջնորդվել ոչ թե զուտ սահմանափակում չնախատեսելու, այլ խթանող կառուցակարգեր նախատեսելու մեթոդաբանությամբ, մասնավորապես՝ մշակել և իրացնել նշված մասնագետների վերապատրաստման հատուկ ծրագրեր՝ վերջիններիս կրթական մակարդակի և կարողությունների բարձրացման նպատակով,***

---

[261] Հասանելի է https://rm.coe.int/6th-sr-armenia-am/1680b19fb4 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[262] Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդումը, 748-753 էջեր, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

✓ ***անհրաժեշտ է ձեռնարկել և իրացնել ոլորտի կադրային ապահովման և ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող ուսուցիչների աշխատանքի շարունակականությանն ուղղված հստակ և համապարփակ կառուցակարգեր՝ բացառելով դրվագային կամ ժամանակավոր բնույթ կրող լուծումները,***

✓ ***ձեռնարկել համակարգային քայլեր՝ հանրային հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով առավել շատ, կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումն ապահովելու համար:***

2.2. Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանմանն առնչվող խնդիրներ

Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման, վերջիններիս ինքնության պահպանման հարցում իր ուրույն տեղն ունի վերջիններիս մշակույթը:

Շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացվել են առանձին խնդիրներ[263] ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակույթի պահպանման բնագավառում: Նշված խնդիրները պահպանել են իրենց արդիականությունը նաև 2024 թվականի ընթացքում: Վերջիններս վերաբերում են ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող հայեցակարգային և ռազմավարական լուծումների բացակայությանը, ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ կազմակերպելուն ու իրականացնելուն և այլն:

Վերը նշված տարեկան հաղորդմամբ ամփոփված խնդիրների, վերջիններիս լուծմանն ուղղված առաջարկների կատարման առնչությամբ գրություն է հասցեագրվել պետական իրավասու մարմիններին:

Ի պատասխան՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման և

---

[263] Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդումը, 746-753 էջեր, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությամբ ամրագրվել է ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերականներին աջակցությունը, որը խթան է հանդիսանալու ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզվի, մշակույթի, կրոնի, ավանդույթների պահպանման և տարածման համար:

Միաժամանակ, «Ոչ պետական մամուլի հրատարակում» դրամաշնորհային ծրագրի առաջնահերթություններից է ազգային փոքրամասնությունների պարբերականների աջակցությունը: Այն միտված է ազգային փոքրամասնությունների լեզվի, կրոնի պահպանմանը, համայնքի մշակութային և հասարակական կյանքի լուսաբանմանը, մշակութային ժառանգության հանրահռչակմանը:

2024 թվականին հրատարակվել է ազգային փոքրամասնությունների 7 պարբերական՝ «Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Դնիպրո-Սլավուտիչ» ամսաթերթ, «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Բելառուս» ամսաթերթ, «Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայադթա» ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից հրատարակվող «Ասիրիսկիե նովոստի» ամսաթերթ, «Եզդիների ձայն» խմբագրություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հրատարակվող «Էզդիխանա», «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Զագրոս» ամսաթերթ, «Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Իլիոս» ամսաթերթ, «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Դավթի Վահան» ամսաթերթ:

Իրականացվել են միջոցառումներ մշակույթի տարբեր ոլորտներում. «Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում կազմակերպել է եզդի ժողովրդի ազգային հերոս, Մայիսյան հերոսամարտերի պատմական հաղթանակներում մեծ ավանդ ու ներդրում ունեցած զորահրամանատար Ջահանգիր աղայի 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումը: Հոբելյանական միջոցառման շրջանակում տեղի է ունեցել Ջահանգիր աղայի կիսանդրու բացման արարողությունը: Թանգարանի Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին հանրապետությանը նվիրված ցուցադրության մեջ տեղ գտած եզդի աշխարհազորայիններին նվիրված ցուցահամալիրը համալրվել է զորահրամանատար Ջահանգիր աղային նվիրված նյութերով ու արխիվային փաստաթղթերով: Միջոցառմանը համերգային կատարումներով հանդես են եկել նաև եզդիաբնակ համայնքներում գործունեություն ծավալող պարի խմբեր ու անհատ վոկալ կատարողներ:

Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին հարող այգու տարածքում կայացել է «Տանիքը՝ Հայաստան» խորագրով բացօթյա համերգ՝ ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ: Համերգի ընթացքում երաժշտական և պարային ելույթով հանդես են եկել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ և հրավիրված արտիստներ՝ ներկայացնելով ՀՀ ազգային փոքրամասնությունների 11 համայնքները:

Իրականացվել է կերպարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի նմուշների ցուցադրություն, ավանդական պարերի և երգերի ուսուցման աշխատարաններ (104 մասնակից), ստեղծվել են հարթակներ՝ տարազով լուսանկարահանվելու հնարավորությամբ: Միաժամանակ, իրականացվել են ազգային և ավանդական սպորտաձևով մրցույթ-խաղեր, անցկացվել է «Բարեկամության գավաթ» վազքի և արագ քայլքի մրցույթը: Ազգային խոհանոցների գունապնակը և առանձնահատկությունները ներկայացնելու նպատակով տեղադրվել են տաղավարներ, որտեղ համայնքները ներկայացրել են իրենց ազգային ուտեստները:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն» հասկացությունը անդրադառնում է նաև ազգային փոքրամասնությունների մշակույթին՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«անցյալում ստեղծված նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների ամբողջություն, որը համաշխարհային ժառանգության բաղկացուցիչ մաս է, և անկախ սեփականության իրավունքից, անհատների և համայնքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների համար ունի մշակութային, հոգևոր, գեղագիտական, զգայական, գիտական, տնտեսական կարևոր նշանակություն, հիմնարար գործոն է Հայաստանի մշակութային բազմազանության խթանման և կայուն զարգացման համար»*:

Այնուհետև, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1719-Ա որոշմամբ ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկում գրանցվել է եզդիների համայնքի «Ստեռ. անկողնու ծալքի սրբազնացումը Հայաստանի եզդիների մշակույթում» արժեքը:

Նախարարությունը տեղեկացրել է նաև, որ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների իրականացման շրջանակում այժմ ընթացիկ փուլում է ՀՀ Լոռու մարզի Ամրակից գյուղի ռուս-ուղղափառ Սուրբ Նիկոլայ Հրաշագործ եկեղեցու ուսումնասիրման, մաքրման, ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմման աշխատանքները: 2025 թվականի միջանաժամկետ ծախսային ծրագրով նախատեսվում է նաև ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կավարտ գյուղի հունական եկեղեցու վերականգման նախագծի մշակումը, 2026 թվականին՝ վերականգնողական աշխատանքները:

Պաշտպանը ողջունելի է համարում պետության կողմից ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման բնագավառում ձեռնարկված և իրականացված քայլերը, այդ թվում՝ վերը նշված իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացումը, ազգային փոքրամասնության ներկայացուցիչների մասնակցությամբ տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը, պարբերականների աջակցությանը միտված քայլերը և այլն:

Միևնույն ժամանակ, ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման, այդ թվում՝ մշակութային իրավունքների պահպանման պատշաճ համակարգ ունենալու տեսանկյունից կարևորվում է հայեցակարգային և

ռազմավարական լուծումների մշակումն ու իրացումը, մասնավորապես՝ անհրաժեշտ է ոլորտի խթանմանն ուղղված միջոցառումներն իրականացնել համակարգային եղանակով՝ մշակելով ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր և հստակ անդրադարձ կատարել նաև վերջիններիս մշակութային իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը առնչվող հարցերին:

Հանրային իրազեկման միջոցառումների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների մշակույթների, ավանդույթների վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելուն առնչվող հարցի կապակցությամբ Նախարարությունը տեղեկացրել է, որ ամեն տարի մայրենի լեզվին նվիրված միջոցառումներ են անցկացվում հանրակրթական ուսումնական հաստատություններում, որին ակտիվորեն մասնակցում են ազգային փոքրամասնությունների սովորողները:

Զուգահեռաբար, Նախարարության կայքում, սոցիալական ցանցի էջերում իրականացվում է ազգային փոքրամասնությունների մշակույթների, ավանդույթների վերաբերյալ միջոցառումների լուսաբանում: Միաժամանակ, հանրային իրազեկվածության նպատակով լուսաբանվում է նաև ազգային փոքրամասնություններին առնչվող այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Այս առումով հարկ է նշել, որ ԵԽ նախարարների կոմիտեն Հայաստանի կողմից Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[264] առաջարկել է ձեռնարկել ակտիվ քայլեր՝ Հայաստանի էթնիկ բազմազանության, ինչպես նաև հասարակությունում ազգային փոքրամասնությունների մշակույթի, պատմության, ավանդույթների, կրոնների և լեզուների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ և բարելավել միջմշակութային երկխոսությունը:

Գնահատելով հանրության տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ Պաշտպանն ընդգծում է, որ դրանք պետք է իրականացվեն հստակ մեթոդաբանությամբ, կրեն համապարփակ և շարունակական բնույթ, լինեն թիրախային՝ առաջադրված նպատակին ծառայելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ հստակ անդրադառնալով նաև վերջիններիս մշակութային իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը առնչվող հարցերին,***
- ✓ ***ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը մշակութային իրավունքների պահպանման և խթանման ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին,***
- ✓ ***համակարգային ձևով նախաձեռնել և իրականացնել միջմշակութային միջոցառումներ (հատկապես՝ մարզային բնակավայրերում)՝ ամրապնդելով***

---

[264] Հասանելի է https://search.coe.int/cm#{%22CoEIdentifier%22:[%220900001680abccc9%22],%22sort%22:[%22CoEValidationDate%20Descending%22]} հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանդուրժողական և միջմշակութային երկխոսության մթնոլորտը երկրի բնակչության մեծամասնության և ազգային փոքրամասնության համայնքների միջև,

- ✓ ***ազգային փոքրամասնությունների մշակույթների, ավանդույթների վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպվող հանրային իրազեկման միջոցառումներն իրականացնել առավել հաճախ և համակարգային եղանակով:***

2.3. Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանմանն առնչվող այլ խնդիրներ

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից կարևորվում է նաև վերջիններիս կրթության համար պատշաճ և բավարար պայմանների ապահովմանն ուղղված քայլերի իրականացումը:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ Արագածոտնի մարզի եզդիական բնակչություն ունեցող՝ Արևուտ, Կանչ և Հակո գյուղական բնակավայրերի դպրոցներ կատարած այցի[265] ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ՝ բնակավայրերում ավագ դպրոցի բացակայության, ուսումնական հաստատությունների՝ ոչ բարվոք վիճակում գտնվող շենքային պայմանների, կենտրոնական ջեռուցման համակարգի բացակայության, դասարանների թերի կահավորվածության, օգտագործման համար ոչ պիտանի մարզադահլիճների առկայության վերաբերյալ: Միաժամանակ, բոլոր բնակավայրերում արձանագրվել են նաև խնդիրներ՝ կապված բժշկական կենտրոնների, դեղատների, վաճառակետերի և տրանսպորտի բացակայության հետ: Արձանագրված խնդիրների առնչությամբ գրություն է հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին՝ վերջիններիս պատշաճ լուծման նպատակով:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը բարձրացված հարցերը քննարկել է Արագածոտնի մարզպետի աշխատակազմի հետ:

Քննարկման արդյունքներով Արագածոտնի մարզպետը գրությամբ տեղեկացրել է, որ Արևուտ, Կանչ, Հակո բնակավայրերի դպրոցների շենքերը կառուցվել են համապատասխանաբար 1992, 1974 և 1985 թվականներին: Բնակավայրերը գազիֆիկացված չեն և դպրոցների ջեռուցումն իրականացվում է էլեկտրական տաքացուցիչների միջոցով:

Արագածոտնի մարզպետի կողմից տրվել է հանձնարարական՝ դպրոցներում ջեռուցումը պատշաճ ապահովելու նպատակով դասասենյակներում, ըստ անհրաժեշտության, էլեկտրական տաքացուցիչներ ավելացնելու վերաբերյալ:

Միաժամանակ, ներկայացվել է առաջարկություն Կանչ, Հակո, Արևուտ բնակավայրերի համար կլաստերային մոտեցմամբ նոր դպրոցի կառուցման առնչությամբ՝ Կանչ կենտրոնով:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության կողմից նախաձեռնվել են եզդիական բնակավայրերի միջհամայնքային ճանապարհների հիմնանորոգման մեծածավալ

---

[265] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3190 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

աշխատանքներ, որի արդյունքում հիմնանորոգվել է Թաթուլ-Կանչ-Հակո 12 կմ երկարությամբ ճանապարհը, ինչպես նաև ավարտական փուլում են գտնվում Հացաշեն-Սորիկ 5.1 կմ երկարությամբ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Վերը նշված ճանապարհները մի քանի տասնամյակ չէին նորոգվել: Նորոգված ճանապարհները միմյանց են կապում մի քանի գյուղեր, որը լուծում է սոցիալական և տնտեսական շատ խնդիրներ: Հիմնանորոգման աշխատանքները կատարվել են ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արևուտ համայնքը բյուջեի սղության պատճառով ճանապարհների բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքներ չի կարող իրականացնել համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, ուստի դիմել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն S-1-10, /S-1-84/-/Հ-75/ (Արտենի) 11.5 կմ երկարությամբ մարզային նշանակության ավտոճանապարհի, տվյալ ճանապարհից դեպի Արևուտ բնակավայր գնացող մոտ 0.6 կմ երկարությամբ համայնքային նշանակության ճանապարհի և S-1-12, /Հ-62/ (Դաշտադեմ)–Դդմասար 3 կմ երկարությամբ մարզային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պաշտպանը ողջունում է պետության կողմից նշված ոլորտում նախաձեռնվող քայլերը՝ ուղղված նոր դպրոցի կառուցման վերաբերյալ ՀՀ կառավարությանը առաջարկություն ներկայացնելուն, ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը: Վերջիններիս նախաձեռնումն ու իրականացումը կարող են լուրջ խթան հանդիսանալ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, նրանց ինքնության պահպանման տեսանկյունից:

Միաժամանակ, Պաշտպանը կարևորում է համապատասխան բնակավայրերում գոյություն ունեցող մյուս խնդիրների շուտափույթ լուծմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Ընդ որում, վերջիններս պետք է իրականացվեն համակարգային եղանակով՝ հիմք ընդունելով բնակիչների կարիքները ու նրանց կողմից բարձրաձայնված խնդիրները:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման, այդ թվում՝ լեզվի պահպանման համատեքստում կարևոր նշանակություն ունի ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը:

Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝
Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում Կողմերը իրենց իրավական համակարգերի, անհրաժեշտության դեպքում՝ ներառյալ նաև այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

ՀՀ առանձին բնակավայրերում, օրինակ՝ Լոռու մարզի Ֆիոլետովո, Լերմոնտովո, Պրիվոլնոյե համայնքներում, բնակավայրերի անվանումների ցուցանակները տեղադրված են և՛ հայերեն, և՛ ռուսերեն լեզուներով: Կոտայքի մարզի Զովունի, Նոր Գեղի, Արզնի, Քանաքեռավան բնակավայրերի մուտքերի մոտ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղադրվել են տեղագրական ցուցանակներ[266]:

Պաշտպանը ողջունելի է համարում նշված համայնքներում ազգային փոքրամասնությունների լեզուներով ցուցանակների տեղադրումը՝ միաժամանակ կարևորելով նաև այլ համայնքներում քննարկվող ցուցանակների տեղադրումը՝ ոլորտում առկա միջազգային չափանիշներին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և իրացնել անհրաժեշտ և բավարար կառուցակարգեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կրթության համար պատշաճ պայմանների ապահովման ուղղությամբ,***
- ✓ ***ապահովել ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում ազգային փոքրամասնությունների լեզուներով ցուցանակների տեղադրումը՝ ոլորտում առկա միջազգային չափանիշների պարտադիր հաշվառմամբ:***

3. Վաղ ամուսնությունները ազգային փոքրամասնությունների համայնքներում

Հայաստանում շարունակում է մտահոգիչ լինել վաղ և հարկադիր ամուսնությունների խնդիրը: Թեև խնդիրը կարող է հանդիպել հանրապետության ամբողջ տարածքում, սակայն այն հատկապես տարածված և մտահոգիչ է ազգային փոքրամասնությունների առանձին, մասնավորապես՝ եզդիական համայնքում:

[266] Հասանելի է https://rm.coe.int/5th-sr-armenia-am/16809ec233 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվող ուսումնասիրությունների շրջանակում տեղեկատվություն[267] է ստացվել առ այն, որ սոցիալական հարթակներում, մասնավորապես «Ինստագրամ» հավելվածի միջոցով, հրապարակվել է տեսանյութ, որի մեկնաբանությունների ուսումնասիրությունը վկայում է երեխայի հարկադիր ամուսնության մասին:

Նշվածի առնչությամբ գրություն է հասցեագրվել Ներքին գործերի նախարարություն՝ տեսանյութում և դրա մեկնաբանություններում առկա տեղեկատվության իսկության ստուգման և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու առնչությամբ:

Ի պատասխան՝ Նախարարությունը տեղեկացրել է, որ Ոստիկանության ծառայողները հանդիպել են նշանադրված անձի հետ (մոտ 30 տարեկան, ազգությամբ եզդի): Վերջինս հայտնել է, որ եզդիական ավանդույթներին համապատասխան՝ նշանադրվել է 16 տարին չլրացած, ազգությամբ եզդի աղջկա հետ՝ ծնողների գիտությամբ և համաձայնությամբ: Նշված անձը հայտնել է նաև, որ լինելով եզդի և երկար տարիներ բնակվելով ՀՀ-ում՝ իրազեկված է գործող օրենքներից և ամուսնության կարգից, ուստի ներկայումս ամուսնության նպատակով սպասում են աղջկա 16 տարին լրանալուն:

Հարկ է ընդգծել, որ մանկական կամ վաղ ամուսնություն է համարվում ցանկացած ամուսնություն, երբ կողմերից առնվազն մեկի 18 տարին չի լրացել: Հարկադիր ամուսնությունը սահմանվում է որպես երկու անձանց միություն, որոնցից առնվազն մեկը չի տվել իր լիարժեք և ազատ համաձայնությունը ամուսնությանը[268]: Հարկ է նկատի ունենալ, որ հարկադիր ամուսնությունը խախտում է մարդու հիմնարար իրավունքները և չի կարող դիտարկվել որպես իրավաչափ երևույթ:

Վաղ ամուսնությունների հիմքում կարող են ընկած լինել մի շարք պատճառներ, օրինակ՝ կարծրատիպային մոտեցումները, խնդրի լատենտայնությունը, սոցիալական խնդիրները և այլն: Ազգային փոքրամասնության առանձին համայնքներ վաղ ամուսնությունները պայմանավորում են նաև ազգային ավանդույթներով[269]: Վաղ ամուսնությունները խնդրահարույց են նաև բացասական հետևանքների առաջացման, մասնավորապես՝ պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու, մի շարք իրավունքների, այդ թվում՝ առողջապահական և սոցիալական իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Վաղ ամուսնությունների խնդրին անդրադարձել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը՝ «Բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների մասին» 2005 թվականի բանաձևում[270]՝ նշելով, որ վրդովմունք է առաջացնում այն փաստը, որ կան իշխանություններ, որոնք գաղթական համայնքների մշակույթի և ավանդույթների նկատմամբ հարգանքի քողի լույսի ներքո

---

[267] Հասանելի է https://www.instagram.com/reel/C7PCo_4thFB/?igsh=MXFiczljYjVoNjhzaw%3D%3D հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[268] Հասանելի է https://rm.coe.int/media-guideline-arm-final/1680a15261 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[269] Առավել մանրամասն տե՛ս, Վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՐԱԴ1/0023/01/15 որոշումը:

[270] Հասանելի է https://www.refworld.org/legal/resolution/coepace/2005/en/34235 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանդուրժողականություն են ցուցաբերում բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների նկատմամբ՝ չնայած նրան, որ վերջիններս խախտում են յուրաքանչյուր զոհի հիմնարար իրավունքները:

Վեհաժողովն ընդգծել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևի կարևորությունը, որով որոշ սովորույթները, ամուսնությանն ու ընտանիքին վերաբերող հնացած օրենքները և պրակտիկան անհամատեղելի են դիտարկվել ՄԱԿ-ի կանոնադրությունում ու Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքներին:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ պետական իրավասու մարմինները պարտավոր են երաշխավորել վերը նշված, ինչպես նաև համանման այլ գործերի՝ պատշաճ և իրավունքի գերակայությանը բնորոշ չափանիշներին համապատասխան ուսումնասիրությունն ու քննությունը՝ ապահովելով համապատասխան դեպքերում պատասխանատվության անխուսափելիությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփվել և ներկայացվել են վաղ ամուսնությունների և դրանց բացասական հետևանքների կանխարգելմանն առնչվող խնդիրները, որոնք շարունակում են արդիական մնալ: Դրանք հիմնականում վերաբերում են պարտադիր հանրակրթությունից դուրս մնալուն, մի շարք իրավունքների, այդ թվում՝ առողջապահական և սոցիալական իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին, ոլորտին վերաբերելի հանրային իրազեկման աշխատանքների իրականացմանը և այլն:

Նշված խնդիրների, ինչպես նաև վերջիններիս լուծմանն ուղղված առաջարկների կատարման առնչությամբ գրություն է հասցեագրվել պետական իրավասու մարմիններին:

Պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու առնչությամբ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ՀՀ-ում միջնակարգ կրթությունը պարտադիր է (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) և Նախարարությունը հանրակրթության բնագավառում տարվող պետական քաղաքականության շրջանակներում իրականացնում է նպատակաուղղված միջոցառումներ օրենքի կիրարկման նպատակով: Հատկանշական է գործող պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը, որի ուղղությամբ մշտապես տարվում են լավարկման աշխատանքներ: Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգի արդյունավետ գործարկման և գործընթացի առավել կանոնակարգման նպատակով ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1886-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել կարգում, ըստ որի՝ Նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր և հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, Նախարարությանն է ներկայացնում է 6-ից մինչև 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որևէ կրթական հաստատությունում հաշվառված չեն:

Նախարարությունը ներկայացրել է նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ-ում կրթությունից դուրս մնացած երեխաների և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաների թիվը՝ ըստ սեռատարիքային բաշխվածության.

Տարիք	***Սեռ***		***Ընդամենը***
	արական	***Իգական***	
6	2	2	***4***
7	2	2	***4***
8	5	3	***8***
9	5	8	***13***
10	1	1	***2***
11	4	2	***6***
12	3	1	***4***
13	3	1	***4***
14	12	4	***16***
15	13	7	***20***
16	15	7	***22***
17	20	5	***25***
18	23	4	***27***
19	1	3	***4***
20	1		***1***
Ընդամենը	***110***	***50***	***160***

Նախարարությունը կազմակերպել և իրականացրել է նաև թեմային առնչվող վերապատրաստման դասընթացներ և հանրային իրազեկման աշխատանքներ: Մասնավորապես՝ Նախարարության հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները իրականացրել են «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» թեմայով 499 վերապատրաստման դասընթացներ՝ ուսումնական հաստատությունների 10.455 մանկավարժների, ծնողների և համայնքային սոցիալական աշխատողների շրջանում: Դասընթացների ընթացքում անդրադարձ է կատարվել նաև վաղ ամուսնությունների և դրանց բացասական հետևանքների թեմային: Վերապատրաստումները կրում են շարունակական բնույթ:

Բացի այդ, Նախարարությունն իր կայքում և սոցիալական ցանցի էջերում լուսաբանել է «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ անցկացված «Փոքրամասնությունների կանանց հզորացում» քննարկումը, որտեղ կարևորել է ազգային փոքրամասնությունների կրթության իրավունքի լիարժեք իրացումը և անդրադարձ է կատարվել վաղ ամուսնությունների խնդրին:

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը՝ Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ ստեղծել է «Գենդեր-արձագանքող ուսուցումը դպրոցում» ուսուցիչների համար առցանց դասընթացը:

Դասընթացի շրջանակում մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը վերապատրաստվել է 50 վերապատրաստողների վերապատրաստող, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին նախատեսվում է վերապատրաստել ևս 500 ուսուցիչների:

Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների կողմից ձեռնարկված քայլերը՝ միաժամանակ արձանագրելով, որ կրթության իրավունքի իրացման և վաղ ամուսնությունների կանխարգելման հարցում էական նշանակություն ունեն նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերի բացահայտման նպատակով իրականացվող աշխատանքները՝ նկատի ունենալով և այն, որ քննարկվող ամուսնությունները չեն կատարվում պետական գրանցման միջոցով, և շատ հաճախ խնդիրը կրում է լատենտային բնույթ: Միաժամանակ, Պաշտպանը այս գործընթացում արձանագրել է նաև մի շարք այլ համակարգային խնդիրներ, որոնց առավել մանրամասն անդրադարձ է կատարվել տարեկան հաղորդման «Երեխաների իրավունքներ» բաժնում:

Ինչպես նշվեց, վաղ ամուսնությունները խնդրահարույց հետևանքների են հանգեցնում նաև առողջապահական իրավունքների տեսանկյունից: Մասնավորապես՝ վաղ ամուսնությունները բացասական ազդեցություն են ունենում աղջիկների առողջության վրա: Դրանցից են բարդ ծննդաբերությունները, հետագա կյանքում ի հայտ եկող առողջական խնդիրները, երեխայի խնամքի հետ կապված հարցերը և այլն: Օրինակ՝ ըստ Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2024 թվականի ընթացքում 16-17 տարեկան կանանց շրջանում ծնվել է 48 երեխա:

Այս համատեքստում Պաշտպանը խիստ կարևորում է հանրային իրավագիտակցության բարձրացմանն ու հանրային իրազեկմանը, կարծրատիպային մոտեցումների հաղթահարմանն ուղղված համակարգային աշխատանքների իրականացումը: Իսկ այն դեպքերում, երբ վաղ կամ հարկադիր ամուսնությունները, ինչպես նաև դրանց բացասական հետևանքները վկայում են քրեական օրենսդրությամբ արգելված արարքի առկայության մասին, անհրաժեշտ է երաշխավորել գործերի՝ պատշաճ և իրավունքի գերակայությանը բնորոշ չափանիշներին համապատասխան քննությունը՝ ապահովելով նշված դեպքերում պատասխանատվության անխուսափելիությունը:

Պաշտպանը կարևոր է համարում նաև 2024թ. սեպտեմբերի 10-ին Ազգային ժողովի կողմից ընդունված՝ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-327-Ն օրենքը: Համաձայն վերջինի՝ ամուսնություն կնքելու համար նվազագույն տարիք սահմանվել է բացառապես 18 տարեկանը: Օրենքն ուժի մեջ է մտել 2024 թվականի հոկտեմբերի 10-ին:

Հիշատակման արժանի է վերը նշված օրենսդրական բարեփոխումների իրականացման գործընթացում Պաշտպանի ակտիվ գործունեությունը: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես հիմնական զեկուցող, Ազգային ժողովում մասնակցել է «Ամուսնությունների տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրենսդրական բարեփոխումները՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում» թեմայով խորհրդարանական լսումներին: Անդրադառնալով Հայաստանում վաղ ամուսնությունների խնդրին՝ Պաշտպանը նշել է, որ վերջիններս ունեն բազմաթիվ բացասական հետևանքներ, այդ թվում՝ անձանց կրթության իրավունքի, կանանց իրավունքների, առողջության պահպանման և մի շարք այլ իրավունքների տեսանկյունից: Կարևորելով առկա խնդիրների լուծման

նպատակով օրենսդրական բարեփոխումների իրականացումը՝ Պաշտպանն ընդգծել է, որ դրանք չեն կարող ոլորտում փոփոխությունների ամենամեծ շարժիչ ուժը լինել: Նախևառաջ անհրաժեշտ է հիմնովին բարեփոխել կրթական համակարգը, այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Կարծրատիպային մոտեցումներն առաջին հերթին տարածվում են նշված հաստատություններում կրթական համակարգի և առկա միջավայրի միջոցով: Պաշտպանը շեշտել է, որ կրթության ինչպես բովանդակությունը, այնպես էլ դասավանդման գործընթացը պետք է համապատասխանեն այն չափորոշիչներին, որոնք առկա են ժամանակակից աշխարհում, հատկապես՝ իրավահավասարության և խտրականության արգելքին առնչվող հարցերի համատեքստում[271]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը ողջունելի է համարում խնդրի հաղթահարմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացումը, սակայն դրանք, առանձին վերցրած, չեն կարող լուծել ոլորտում առկա խորքային խնդիրները: Քննարկվող խնդրի հաղթահարմանն ուղղված քայլերը պետք է լինեն համակարգային, ամբողջական՝ նկատի ունենալով դրա հիմքում ընկած պատճառներն ու վերջիններիս հաղթահարման համար անհրաժեշտ կառուցակարգերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ հստակ անդրադառնալով նաև վաղ ամուսնությունների կանխարգելմանն ուղղված խնդիրների հաղթահարման կառուցակարգերին,***
- ✓ ***իրականացնել շարունակական վերապատրաստումներ կրթության ոլորտում ներգրավված անձանց համար՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, այս ոլորտում առկա կարծրատիպային և ժամանակակից իրավունքի դոկտրինին չհամապատասխանող մոտեցումների հաղթահարման, իրավահավասարության և խտրականության արգելքի սկզբունքի առնչությամբ,***
- ✓ ***իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ վաղ ամուսնությունների և դրանց բացասական հետևանքների առնչությամբ,***
- ✓ ***ներդնել հստակ կառուցակարգեր՝ ուղղված ծնողների համար ծնողավարման հմտությունների ձեռքբերմանը վաղ ամուսնությունների կանխարգելման համատեքստում,***
- ✓ ***նկատի ունենալով այն, որ կոնկրետ դեպքերում վաղ ամուսնությունները վկայում են քրեական օրենսդրությամբ արգելված արարքի առկայության մասին, երաշխավորել նշված դեպքերում գործերի արդյունավետ քննությունն ու պատասխանատվության անխուսափելիությունը:***

---

[271] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2865 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում շարունակել է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ գործունեությունը:

• 2024 թվականին մայիսի 17-ին՝ Հոմոֆոբիայի, բիֆոբիայի ու տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը, տեղի է ունեցել «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում» խորագրով կլոր սեղան-քննարկումը, որին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել ողջույնի խոսքով:

• 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը Հպարտության ամսին նվիրված ընդունելության է մասնակցել Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը և հանդես է եկել ողջույնի խոսքով:

• 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը Հպարտության ամսին նվիրված համաժողովի է մասնակցել, որը կազմակերպվել է Իրավունքի կողմ հասարակական կազմակերպության կողմից:

• 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը բացման խոսքով է հանդես եկել «Արժանապատիվ Աշխատանք Հիմա՛» ծրագրի ամփոփիչ համաժողովին[272], որի շրջանակներում, ի թիվս այլնի, անդրադարձել է աշխատավայրում խոցելի խմբերի՝ ԼԳԲՏ համայնքի իրավունքների պաշտպանությանը:

• 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված հանդիպում-քննարկմանը՝ Հայաստանում տրանս անձանց նկատմամբ բռնությունների կանխարգելման և հարակից այլ հարցերի շուրջ:

• 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ հոկտեմբերի 21-22-ն անցկացվող «Օմբուդսմանական/Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն և մարտահրավերներ» խորագրով բարձրաստիճան միջազգային համաժողովի երկրորդ օրն անդրադարձ է կատարվել նաև ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը[273]:

Հարկ է նաև նշել, որ 2024 թվականի ընթացքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով անձանց իրավունքների ոտնահարման վերաբերյալ Պաշտպանը ստացել է նաև դիմում-բողոքներ, որոնք Պաշտպանին ներկայացվել են

---

[272] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3045 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[273] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3136 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

և՛ գրավոր եղանակով, և՛ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին հեռախոսազանգերով: Ստացված ահազանգերի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ և բարձրաձայնել ազատությունից զրկված ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների՝ ազատությունից զրկման վայրերում առաջացած խնդիրները, որոնց կոնկրետ դեպքերում ՄԻՊ միջամտությամբ տրվել են լուծումներ:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2024 թվականի ընթացքում նաև բազմաթիվ հանդիպումներ են ունեցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հետ:

1. ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ-ում

Հասարակությունում ԼԳԲՏ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքն ու ատելության խոսքը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով.

Չնայած ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի գնահատմանն ուղղված համապարփակ հետազոտություններ չեն իրականացվել, սակայն Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը վկայել է այն մասին, որ հասարակությունում ԼԳԲՏ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքն ու հոմոֆոբ[274] և տրանսֆոբ[275] գաղափարները շարունակում են տարածված լինել:

2024 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունը, ինչպես նաև առցանց հարթակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առկա է եղել ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով անհանդուրժողականություն ու խտրական վերաբերմունք:

Հասարակությունում ԼԳԲՏ անձանց նկատմամբ առկա անհանդուրժողականության, ինչպես նաև սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի առկայության մասին են վկայում նաև Մարդու իրավունքների պաշտպանին ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության

---

[274] «Հոմոֆոբիա» հասկացությունը Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության (FRA) կողմից բնորոշվում է որպես նույնասեռականության և գեյ, լեսբի և երկսեռական (բիսեքսուալ) անձանց նկատմամբ նախապաշարմունքներից բխող իռացիոնալ վախ և զզվանք: Հասանելի է https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/397-FRA_hdgso_report_part2_en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[275] «Տրանսֆոբիա» հասկացությունը Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության (FRA) կողմից բնորոշվում է որպես գենդերային անհամապատասխանությունից կամ գենդերային տրանսգրեսիայից իռացիոնալ վախ, ինչպես օրինակ առնական կանանցից կամ կանանցի տղամարդկանցից, տրանսգենդեր, տրանսեքսուալ անձանցից և ծննդյան պահին հաստատված սեռի վերաբերյալ գենդերային կարծրատիպերին չհամապատասխանող այլ անձանցից վախ կամ զզվանք: Հասանելի է՝ https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/397-FRA_hdgso_report_part2_en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված արձանագրումները:

Փինք իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Մարդու իրավունքների պաշտպանին են ներկայացվել 2024 թվականի ընթացքում կազմակերպության կողմից արձանագրված՝ ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման դեպքերը[276], որոնց շարքերում ընդգրկված են նաև այնպիսի դեպքեր, որոնք բովանդակում են ԼԳԲՏ անձանց նկատմամբ հասարակությունում անհանդուրժող վերաբերմունքի, ատելության խոսքի դրսևորումների մասին, այդ թվում՝ հանրային գործիչների մասնակցությամբ[277]:

Սեռական կողնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրական վերաբերմունքը, այդ թվում՝ պետական մարմիններում և պետության կողմից ստեղծված կազմակերպություններում

2024 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ, որոնցով ներկայացվել են ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով իրավունքների խախտման, խտրական վերաբերմունքի և արժանապատվությունը նվաստացնելու դեպքեր.

- քրեակատարողական հիմնարկում մեկ այլ կալանավորված անձի կողմից ազատությունից զրկված այլ անձանց շրջանում ԼԳԲՏՔԻԱ+ համայնքի ներկայացուցչի մասին իրականությանը չհամապատասխանող, պատիվը և արժանապատվությունը նվաստացնող տեղեկությունների տարածում՝ հայհոյանքների և ահաբեկման զուգակցմամբ[278]
- ոստիկանների և քննիչների կողմից ԼԳԲՏ համայնքի ներկայացուցչի նկատմամբ վերջինիս արտաքինի, սեռական կողմնորոշման առնչությամբ նվաստացուցիչ ու խտրական վերաբերմունք, մասնագիտական ոչ պատշաճ վարքագիծ,

Պետք է նկատել, որ Պաշտպանին դիմում-բողոք հասցեագրել են ոչ միայն ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները, այլև այն հասարակական կազմակերպությունները, որոնց դիմել են ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները՝ բարձրացնելով հետևյալ խնդիրները

- հասարակության ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ ատելության խոսքի դրսևորում, քննիչի կողմից խտրական վերաբերմունք և մասնագիտական ոչ պատշաճ վարքագիծ ու արձագանք նույն անձանց նկատմամբ,
- բժշկական անձնակազմի կողմից քրեակատարողական հիմնարկում գտնվող տրանս անձի խոշտանգում, վերջինիս նկատմամբ վատ վերաբերմունք,

---

[276] Այդպիսի դեպքերի շարքում է նկարագրվել, օրինակ, տրանս կանանց գեղեցկության միջազգային մրցույթի շուրջ աղմուկը, հասանելի է https://pinkarmenia.org/news-events/24recap9/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[277] ԼԳԲՏ անձանց իրավունքների վիճակն ու վերջինների իրավունքների առնչությամբ խնդիրները զետեղված են Փինք իրավապաշտպան հասարակական կազմակերպության 2024 թվականի տարեկան զեկույցում:

[278] Բողոքի հիման վրա Պաշտպանի ներկայացուցիչները այց են իրականացրել ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ և առանձնազրույց ունեցել ԼԳԲՏՔԻԱ+ համայնքի ներկայացուցչի հետ:

վիրավորանք, ինչպես նաև ազատությունից զրկված այլ անձանց կողմից սեռական կողմնորոշման պատճառով խտրականություն ու արժանապատվության նվաստացում[279]:

Փինք իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, որը աջակցում է համայնքի կարիքներին, փաստագրում է սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրականության, բռնությունների, ինչպես նաև ատելության խոսքի դեպքերը ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ, 2024 թվականին արձանագրել է խտրականությամբ զուգորդված ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների մարդու իրավունքների խախտման 57 դեպք, այդ թվում՝

●խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման դեպքեր,

●սեռական ու ֆիզիկական բռնության դեպքեր,

●հոգեկան ներգործության, անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածման կամ սպառնալիքի դեպքեր,

●մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտման և այլ դեպքեր:

Հարկ է նշել, որ հասարակական կազմակերպության կողմից արձանագրված դեպքերի մեծամասնությունը եղել են ընտանեկան բռնության դեպքեր:

Հասարակական կազմակերպությունն ընդգծել է, որ արձանագրված իրավախախտումների թիվը տարեց տարի աճել է, միևնույն ժամանակ, նվազել է իրավապահ մարմիններին դիմելու ԼԳԲՏ անձանց ցանկությունը, քանի որ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները բավարար վստահություն չունեն ոստիկանական և քննչական համակարգի նկատմամբ՝ իրավապահ մարմինների կողմից ծաղրական, նվաստացուցիչ վերաբերմունքի, կրկնազոհացման և այլ պատճառներով:

2. Օրենսդրական խնդիրներ

Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես պաշտպանված հատկանիշ, խտրականությանը, ատելության խոսքին և ատելության հիմքով հանցանքներին վերաբերելի կարգավորումներում նախատեսված չլինելը

Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում որպես օրենսդրական խնդիր արձանագրվել ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության համատեքստում այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքով որպես արարքի որակյալ հատկանիշ չի նախատեսվում ատելության շարժառիթով հանցանքի կատարումը՝ պայմանավորված տուժողի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

---

[279] Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ, առանձնազրույց ունեցել ազատությունից զրկված անձի հետ, ով հայտնել է, որ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելու 1-ին օրը խնդիրներ է ունեցել դատապարտյալների հետ, ովքեր չեն ընդունել իրեն: Խցում անցկացրել է միայն առաջին օրը, սակայն առավոտյան հայտնաբերել է, որ իր իրերը դուրս են հանել կացարանից և իրենից պահանջել են լքել այն և իր սեռական կողմնորոշման պատճառով ազատությունից զրկված անձինք թույլ չեն տվել մնալ որևէ խցում:

Քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածների ձևակերպումներում, որոնցով քրեական պատասխանատվություն է նախատեսվում համապատասխանաբար խտրականության, ատելություն հրահրելու, ինչպես նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի համար, որպես պաշտպանվող հատկանիշ ուղղակիորեն չեն սահմանվում տուժողի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես պաշտպանվող հատկանիշ, ուղղակիորեն սահմանված չեն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով, որով ամրագրվում է խտրականություն պարունակող հաղորդումների հեռարձակման արգելքը:

Վերոգրյալ մտահոգությունների համատեքստում պետք է նկատել, որ իրավասու մարմինները շարունակում են պնդել այն համոզմունքը, որ վերաբերելի Քրեական օրենսդրության համապատասխան դրույթներով հարցը կարգավորված է:

Ասվածի համատեքստում, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանվող հանգամանք, օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրել:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցում ևս խնդրահարույց է համարել այս հանգամանքը՝ նշելով, որ նման օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև այն, որ ԼԳԲՏ անձանց ընկալմամբ՝ իշխանությունները դժկամությամբ են արձագանքում հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի շարժառիթով հանցանքներին, կարող են հիմք հանդիսանալ անպատժելիության մթնոլորտի ստեղծման համար: Հանձնաժողովը նաև մտահոգություն է հայտնել այն կապակցությամբ, որ նման պաշտպանվող հատկանիշներ նախատեսված չեն «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծով[280]: Հանձնաժողովի մտահոգությունները կիսում է նաև Մարդու իրավունքների պաշտպանը և այդ կապակցությամբ և՛ հրապարակային (այդ թվում՝ նախորդ տարեկան հաղորդման համատեքստում) և՛ ոչ հրապարակային եղանակներով բարձրացնում է նախագծում հիշյալ պաշտպանվող հատկանիշների նախատեսման անհրաժեշտությունը:

Սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանն առնչվող հատկանիշների դասակարգումը՝ որպես հոգեկան և վարքային խանգարումներ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի (այսուհետ նաև՝ Հիվանդությունների վիճակագրական դասակարգիչ) 5-րդ՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ» գլխում ներառված են տրանսսեքսուալիզմը[281], սեռական

---

[280] Տե՛ս, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ)՝ Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցը, էջեր 10-11, 18-19, հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[281] «Տրանսսեքսուալիզմ» հասկացությունը բնորոշվում է որպես հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկություն, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու զգացումով: Նշվում է,

նույնականացման այլ խանգարումներ, ինչպես նաև սեռական հասունության խանգարումը[282], էգոդիստոնիկ սեռական կողմնորոշումը[283] և սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային այլ խանգարումներ:

Հիվանդությունների վիճակագրական դասակարգիչը չի համապատասխանեցվել Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը, որը չի ներառում սեռական կողմնորոշմանն առնչվող հիվանդություններ, իսկ «տրանսսեքսուալիզմ» տերմինի փոխարեն օգտագործում է «դեռահասների կամ մեծահասակների գենդերային անհամապատասխանություն» տերմինը, որը ներառված է ոչ թե «Հոգեկան և վարքային խանգարումներ», այլ «Սեռական առողջությանն առնչվող վիճակներ» գլխում:

Նշվածի առնչությամբ, ըստ Առողջապահության նախարարության՝ Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների 10-րդ վերանայման վիճակագրական դասակարգիչն առողջապահության բնագավառում հանդիսանում է որպես բժշկական վիճակագրության և դասակարգման հիմք, որը հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 871-Ն հրամանով:

2019 թվականին Առողջապահության համաշխարհային ասամբլեայի 72-րդ հանդիպման ժամանակ բոլոր անդամ պետություններին՝ բնակչության հիվանդացության և մահացության վիճակագրության բարելավման նպատակով առաջարկվել է ազգայնացնել և ներդնել ՀՄԴ-11-ը, որի ներդրման նպատակն է ստեղծել միջազգային մակարդակով համադրելի առողջապահական տվյալների շտեմարան:

Առողջապահության նախարարությունը նկատել է, որ հաշվի առնելով տարբեր երկրների փորձը, ՀՄԴ-11-ի ներդրման համար պահանջվելու է ժամանակ՝ թարգմանության, ազգայնացման, փորձարկման համար: Առողջապահության նախարարությունն ԱՀԿ-ի հետ համատեղ ձեռնարկել է քայլեր ՀՄԴ-11-ի ներդրման նպատակով: Թարգմանության և ազգայնացման աշխատանքների իրականացման նպատակով Առողջապահության նախարարությունը ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ աշխատանքային խումբ ձևավորելու և նշված գործընթացն իրականացնելու համար:

Պաշտպանը կրկին ընդգծում է, որ որպես հոգեկան և վարքային խանգարում սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանն առնչվող անձնային հատկանիշները նախատեսելը նպաստում է նրանց նկատմամբ խարանին և կարող է ամրապնդել հասարակությունում առկա նախապաշարմունքներն ու խտրական վերաբերմունքը, հատկապես՝ առողջապահական համակարգում[284]:

որ հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին:

[282] Նշվում է, որ հիվանդը տառապում է սեփական սեռական պատկանելության կամ սեքսուալ կողմնորոշման անորոշությունից, ինչը հանդիսանում է տագնապի և դեպրեսիայի պատճառ:

[283] Նշվում է, որ սեռի պատկանելությունը և սեռական կողմնորոշումը կասկած չեն հարուցում, սակայն ուղեկցող հոգեբանական և վարքային խանգարումների հետևանքով անհատը ցանկանում է փոխել դա և այդ նպատակով կարող է դիմել բժշկական միջամտության:

[284] Տե՛ս, օրինակ, Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնությունից և խտրականությունից պաշտանության հարցերով ՄԱԿ անկախ փորձագետի զեկույցը, որում անդրադարձ է կատարվում սեռական կողմնորոշման և գենդերային բռնության հետ կապված հատկանիշները որպես հիվանդություններ դասակարգելու և ԼԳԲՏ անձանց նկատմամբ խարանի (այդ

3. Պետական մարմինների աշխատանքը և քաղաքացիական հասարակության արձագանքը կատարված աշխատանքներին

Որպես ռազմավարական նպատակ ՀՀ կառավարության ռազմավարական որևէ փաստաթղթով կամ գործողությունների ծրագրով ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությունը ուղղակիորեն չի մատնանշվում: ԼԳԲՏ անձանց իրավունքներին անդրադարձ չի կատարվել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով, որը հաստատվել է 2023 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ կառավարության թիվ 1674-Լ որոշմամբ:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով որպես առանձին միջոցառումներ սահմանվել են «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի լրամշակումը (գործողություն 4.1) և ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության միջոցների նախատեսումը (գործողություն 4.5): Գործողությունների ծրագրով սահմանվել են նաև խտրականության արգելքի թեմայով շարունակական վերապատրաստումների անցկացումը դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների համար, խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության ուղեցույցների մշակումը, ինչպես նաև խտրականության արգելքի և ատելության խոսքի վերաբերյալ իրազեկման արշավների իրականացումը (ռազմավարական նպատակ 4):

Ըստ Քննչական կոմիտեի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ներքին գործերի նախարարության տվյալների՝ 2024 թվականի ընթացքում խտրականության, իրավահավասարության և այլ թեմաների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ են անցկացվել քննիչների, սոցիալական ոլորտի աշխատողների, Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանության, ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության ծառայողների և այլ մարմինների աշխատակիցների համար, որոնցով անդրադարձ է կատարվել նաև ԼԳԲՏ անձանց:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ նախարարության և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ համագործակցությամբ նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև նախարարության ներկայացուցիչներ՝ թվով 30 ունկնդիր, 2024 թվականի նոյեմբերից 4-5-ը մասնակցել են «Կարողությունների զարգացման և երկրորդային տրավմայի

թվում՝ բշկական հաստատություններում), խտրականության և բռնության միջև կապին, թիվ A/HRC/35/36, կետ 58, հասանելի https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G17/095/53/PDF/G1709553.pdf?OpenElement հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հարկ է նաև նկատել, որ խնդիրն արձանագրվել է նաև 2024 թվականի զորակոչերի գործընթացում, որի մասին են վկայում նաև Մարդու իրավունքների պաշպանի աշխատակազմ ստացված ահազանգերը:

կանխարգելում» թեմայով երկօրյա արտագնա դասընթացի, որով անդրադարձել են նաև «Խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման» թեմաներին:

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների՝ «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» միջոցառման շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ՀՄԿ-ի կողմից 127 դպրոցներում իրականացվել է մանկավարժի վերապատրաստում՝ «Գենդերային բաղադրիչի ներառումը ուսուցիչների՝ ներառող դասավանդման կարողությունների շարունակական զարգացման համատեքստի մեջ» թեմայով: ԿԳՄՍ նախարարության ՀՄԿ-ի և «Կանանի» սոցիալ-հոգեբանական հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվող «Սոցիալականացում առանց խտրականության. առողջ հուզականության և հավասար հարաբերությունների խթանում» ծրագրի շրջանակներում, մանկավարժների և ծնողների համար մշակվել է նկարազարդ ուղեցույց, որն ուղղված է եղել հուզականության մասին գենդերային կարծրատիպերից դուրս ընկալումների ձևավորմանը: Ձեռնարկի բովանդակության հիման վրա ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում իրականացվել է 5 դասընթաց՝ ուսուցիչների և ծնողների համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվել է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստում գենդերային (այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց) քաղաքականությանն առնչվող թեմաներով:

Ըստ Գլխավոր դատախազության տվյալների՝ 2024 թվականի դեկտեմբերին Եվրոպայի խորհրդի «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում 24 դատախազ վերապատրաստվել է «Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը և նախաձեռնված քրեական վարույթների արդյունավետ քննությունը» թեմայով, որի շրջանակներում առանձին անդրադարձ է եղել քրեական վարույթի շրջանակներում ԼԳԲՏ անձանց նկատմամբ զգայուն, ոչ խտրական մոտեցումների ձևավորմանը:

Ըստ Արդարադատության նախարարության տվյալների՝ 2024 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովման թեմաներով վերապատրաստումներ են իրականացվել դատավորների, դատավորի թեկնածուների, դատախազների և քննիչների համար, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև ԼԳԲՏ անձանց նկատմամբ զգայունությանը:

Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում առաջարկել է նաև ԼԳԲՏ անձանց նկատմամբ հանրության վերաբերմունքի առնչությամբ ուսումնասիրություն իրականացնել՝ պարզելու համար, թե հասարակությունում առկա հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի տարածվածությունն ինչպիսին է, առկա հիմնական կարծրատիպերը որոնք են, սակայն 2024 թվականի ընթացքում առաջարկի կատարմանն ուղղված առանձին աշխատանքներ չեն իրականացվել: ԼԳԲՏ անձանց վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանն ուղղված հանրային իրազեկման արշավներ ևս չեն իրականացվել:

Պետք է նկատել, որ 2024 թվականի ընթացքում ատելության խոսքի և բուլինգի դեմ իրականացվող միջոցառումների շրջանակներում չեն հասցեավորվել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի և բուլինգի դրսևորումները:

Չնայած կատարված աշխատանքներին՝ 2024 թվականի ընթացքում դեռևս ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության հարցում առկա են եղել բազմաթիվ խնդիրներ, որոնց մասին են վկայում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով անձանց իրավունքների ոտնահարման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմում-բողոքներն ու խնդրի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմի դիտարկումների արդյունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ իրականացնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ հանրության վերաբերմունքի առնչությամբ ուսումնասիրություն՝ պարզելու համար հասարակությունում առկա հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի տարածվածությունը, առկա հիմնական կարծրատիպերը,

✓ շարունակաբար իրականացնել հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի, ԼԳԲՏ անձանց վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանն ուղղված հանրային իրազեկման արշավներ,

✓ անմիջականորեն հասցեավորել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի և բուլինգի դրսևորումներն ատելության խոսքի և բուլինգի դեմ իրականացվող միջոցառումների շրջանակներում,

✓ շարունակաբար վերապատրաստումներ իրականացնել, հատկապես՝ ոստիկանների, քննիչների, դատախազների և դատավորների համար՝ ուղղված ԼԳԲՏ անձանց նկատմամբ զգայուն, ոչ խտրական մոտեցումների ձևավորմանը,

✓ ուղեցույցներ մշակել ոլորտի իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների համար՝ ուղղված ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը,

✓ շարունակաբար վերապատրաստումներ իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձնակազմի համար՝ ուղղված ԼԳԲՏ անձանց նկատմամբ զգայուն, ոչ խտրական մոտեցումների ձևավորմանը և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ կարողությունների զարգացմանը,

✓ լրացնել «սեռական կողնորոշումը» և «գենդերային ինքնությունը»՝ որպես պաշտպանվող հատկանիշ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ, 329-330-րդ հոդվածներում, ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածում,

✓ փոփոխություններ կատարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչում կամ հնարավոր կարճ ժամկետներում հաստատել նոր դասակարգիչ՝ այն համապատասխանեցնելով Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը:

ԳԼՈՒԽ 3. ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆ

Դեռևս 2022 թվականին Պաշտպանը, կարևորելով հանրային ոլորտում աշխատավայրում սեռական ոտնձգության կանխարգելման միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը, հաստատել է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, որոնք բխել են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից[285]:

2023 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանը, միանալով «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա միջազգային քարոզարշավին, իրականացրել է գենդերային հիմքով բռնության և սեռական ոտնձգության անթույլատրելիության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավ[286]:

2024 թվականի ընթացքում սեռական բռնության դեմ պայքարի հարցերը շարունակել են գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո: Այս հարցերը Պաշտպանը բարձրացրել է ինչպես հրապարակային[287], այնպես էլ ոչ հրապարակային տարբեր հարթակներում:

2024 թվականի հունիսի 28-ին Մարդու իրավունքների պաշտպանը բացման խոսքով է հանդես եկել «Արժանապատիվ Աշխատանք Հիմա՛» ծրագրի ամփոփիչ համաժողովին[288]՝ ընդգծելով Աշխատանքային օրենսգրքում և հարակից օրենսդրության մեջ կատարված փոփոխություններին զուգահեռ բազմաթիվ խնդիրների առկայությունը, այդ թվում՝ աշխատավայրում սեռական ոտնձգությունների կանխարգելման և դրա դեմ պայքարի մեխանիզմների բարելավման անհրաժեշտության հարցերը:

Սեռական ոտնձգության դեմ պայքարում բազմաթիվ խնդիրներ դեռևս շարունակում են արձանագրվել՝ պայմանավորված ինչպես ոլորտի օրենսդրական կարգավորումների անկատարությամբ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում առկա ընկալումներով ու իրավակիրառման թերություններով: Սեռական ոտնձգության դեպքերը հաճախ չեն բարձրաձայնվում, որը կարող է պայմանավորված լինել իրազեկվածության բացակայությամբ կամ պակասով, կանխակալությամբ, ոչ բավարար ապացույցներով, վախով, այդ թվում՝ հասարակության կողմից թիրախավորվելու վախով, ամոթով, քննադատություններով, ոտնձգության դեմ պայքարի քաղաքականության բացակայությամբ ու հաճախ նաև հասարակությունում առկա որոշ ընկալումներով ու կարծրատիպերով:

---

[285] Տե՛ս, Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, 2022թ., հասանելի է https://ombuds.am/images/files/3048e8fa9402101384132bd0f5914077.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[286] Տե՛ս առավել մանրամասն 2023թ. տարեկան հաղորդում:

[287] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2947 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[288] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3045 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ընդ որում՝ բռնությունն ու ոտնձգությունը տարածված և վնասակար երևույթներ են, որ ազդեցություն են ունենում ոչ միայն բռնության ենթարկվող անձի վրա, այլև ողջ հասարակության և հատկապես այն միջավայրի վրա, որտեղ կատարվել է բռնությունը:

Սեռական ոտնձգության օրենսդրական կարգավորումների անկատարությունը և արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը, դրա դրսևորումներն ու վերաբերելի միջազգային չափանիշները մանրամասն քննարկվել են դեռևս Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում[289]:

1. Սեռական ոտնձգությունն աշխատավայրում

2024 թվականի ընթացքում շարունակել է արդիական լինել աշխատավայրում սեռական ոտնձգության դեմ պայքարում արդյունավետ կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը:

Թեև Աշխատանքային օրենսգրքով ամրագրվում է աշխատանքում (աշխատավայրում) սեռական բռնության ու սեռական ոտնձգության արգելքի սկզբունքը[290], այնուամենայնիվ, սկզբունքի ամրագրումն առանց դրա իրացումն ապահովող օրենսդրական ու այլ կառուցակարգերի, չի կարող ծառայել իր նպատակին: Այսպես՝

- ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, անդրադարձ կատարելով սեռական ոտնձգությանը, չի սահմանում պատասխանատվության որևէ միջոց ոտնձգողի նկատմամբ: Ուստի, կարգավորված չեն սեռական ոտնձգության դեպքում գործադրողի նկատմամբ առաջացող իրավական հետևանքները, ինչպիսիք են, օրինակ՝ կարգապահական պատասխանատվությունը և աշխատանքային պայմանագրի դադարեցումը:
- Աշխատանքում սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման ու դրանց քննության կարգ օրենսդրությամբ նախատեսված չէ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը կանոնակարգվում են կազմակերպության ներքին կարգապահական կանոններով:
- Օրենսդրությունը չի նախատեսում սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման ու բացառման ոլորտում պետության ու գործատուի պարտականությունները, ինչպես նաև սեռական ոտնձգությունների կանխարգելման քաղաքականություն ընդունելու կարգավորումներ, դեպքերի վերաբերյալ բողոքների քննություն իրականացնելու համար պատշաճ ընթացակարգեր:
- Ինչպես հանրության շրջանում, այնպես էլ պետական համակարգի և մասնավոր հատվածի աշխատողների համար սեռական ոտնձգության դեպքերի

---

[289] Տե՛ս, առավել մանրամասն, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, էջեր 772-785, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[290] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ և 3.3-րդ հոդվածներ:

մասին հաղորդման ընթացակարգերի մասին իրազեկվածության մակարդակը խիստ ցածր է:

Նշվածի պարագայում ապահովված չէ աշխատավայրում սեռական ոտնձգության ենթարկվող անձանց իրավունքների, ներառյալ՝ արժանապատիվ աշխատանքի իրավունքի պաշտպանությունը: Մինչդեռ, միջազգային իրավական կարգավորումներն ամրագրում են առանց բռնության և ոտնձգությունների աշխատանքի իրավունքի իրացման երաշխավորման ու գործուն կառուցակարգեր ներդնելու պետությունների պարտականությունը:

ԱՄԿ բռնության և ոտնձգության մասին թիվ 190 կոնվենցիա.
Կոնվենցիան վավերացնող պետությունները պարտավոր են հարգել, խրախուսել և ապահովել յուրաքանչյուրի՝ առանց բռնության և ոտնձգությունների աշխատանքի իրավունքի իրացումը:

ԱՄԿ բռնության և ոտնձգության մասին թիվ 190 կոնվենցիա, հոդված 4.
Գործատուները պետք է քայլեր ձեռնարկեն՝ իրենց վերահսկողության աստիճանին համապատասխան, որպեսզի կանխեն բռնությունն ու ոտնձգությունները աշխատանքային հարաբերություններում: Սա ներառում է, որքան հնարավոր է ողջամտորեն, աշխատավայրում քաղաքականության ընդունումն ու իրականացումը, վտանգների բացահայտումը և ռիսկերի գնահատումը, ինչպես նաև տեղեկատվության և ուսուցման տրամադրումը: (…)

ՀՀ-ում 1995 թվականի հուլիսի 29-ից ուժի մեջ է մտել ԱՄԿ Աշխատանքի և զբաղվածության բնագավառում զբաղվածության մասին 1958 թվականի թիվ 111 կոնվենցիան, որի վերաբերյալ ՀՀ կառավարությանն ուղղված ուղիղ հարցմամբ[291] նշվել է, որ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու կամ առանձին օրենսդրական ակտ ընդունելու ուղղությամբ, որով կսահմանվեն սեռական ոտնձգության հասկացությունը, դրա արգելքը և պատժի կառուցակարգերը ինչպես «ծառայություն ծառայության դիմաց» (quid pro quo) ոտնձգությունների, այնպես էլ անբարենպաստ աշխատանքային միջավայր ստեղծելու հետ կապված ոտնձգությունների համար[292]:

Միջազգային իրավական փաստաթղթերում ընդգծվում է աշխատանքում սեռական բռնության ու սեռական ոտնձգության համար պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով ինչպես քրեական օրենսդրությամբ,

[291] Տե՛ս, ԱՄԿ փորձագետների հանձնաժողովի Հայաստանին ուղղված հարցումը, 2016թ., հասանելի է https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:13100:0::NO::P13100_COMMENT_ID:3300897 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[292] Սեռական ոտնձգության հիմնական դրսևորումների մասին տե՛ ս առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

այնպես էլ այլ օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտությունը՝ ըստ պետության հայեցողության[293]:

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքով աշխատանքային հարաբերություններում սեռական ոտնձգության համար քրեական պատասխանատվություն չի սահմանվում, այնուամենայնիվ Պաշտպանն ընդգծում է, որ սեռական ոտնձգությունից պաշտպանության և կանխարգելման հարցերում քրեական պատասխանատվությունը միակ և բավարար միջոց լինել չի կարող, այլ պետք է համակցված լինի իրավական պաշտպանության այլ միջոցների հետ:

Այսպիսով, Պաշտպանը, ելնելով աշխատանքում սեռական բռնության ու ոտնձգության դեմ պայքարի ոլորտում առկա միջազգային իրավական չափանիշներից ու վերահաստատելով իր նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում արտահայտած դիրքորոշումները[294], ընդգծում է, որ՝

- նշված ոլորտում պետության պարտականությունն ընդգրկում է ինչպես անհրաժեշտ օրենսդրության սահմանումը, այնպես էլ իրավունքի պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի (այդ թվում՝ ուղղված վնասների փոխհատուցմանը) մշակումն ու իրացումը,
- յուրաքանչյուր կազմակերպության ներսում առանցքային է գործուն քայլեր ձեռնարկելը բռնության կանխարգելման հարցում, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է մշակել ոտնձգության դեմ պայքարին ուղղված քաղաքականություն, ոտնձգության դեպքերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու ու քննության ընթացակարգեր ու սեռական ոտնձգության դեմ պայքարին ուղղված քաղաքականության իրականացման նկատմամբ վերահսկողության կառուցակարգեր,
- իրավունքների ապահովման երաշխավորման համար անհրաժեշտ է սահմանել քաղաքացիաիրավական, վարչական, կարգապահական պատասխանատվության միջոցներ սեռական ոտնձգության համար՝ նախատեսելով կատարված արարքի համար պատասխանատվության համաչափ տեսակներ՝ կախված արարքի հասարակական վտանգավորության աստիճանից,
- կարևոր է բռնության և ոտնձգություններին արձագանքող անձանց կարողությունների զարգացումը, այդ թվում՝ վերապատրաստումների միջոցով, կարևոր է մշակել համապատասխան օրենսդրական կարգավորումներ և քաղաքականություն,

---

[293] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 779-781:

[294] Աշխատանքում սեռական բռնության ու ոտնձգության դեմ պայքարի ոլորտում առկա միջազգային ու ներպետական իրավակարգավորումներն ու դրանց մանրամասն վերլուծությունը տե՛ս 2023թ. տարեկան հաղորդում:

➢ առանցքային է սեռական ոտնձգության դեպքերի ու դրանց մասին հաղորդման ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը[295]:

Ընդ որում՝ կարևոր է մշակել այնպիսի օրենսդրական կարգավորումներ և քաղաքականություն, որոնք կկանխեն և կանդրադառնան բռնության դրսևորումների բոլոր դեպքերին՝ անկախ ծանրության աստիճանից:

Հարկ է նշել, որ ոլորտում կատարված աշխատանքների առնչությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացվել է տեղեկություն առ այն, որ նախարարության կողմից աշխատանքներ են տարվել «Բռնության և ոտնձգության մասին» ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայի վավերացման ուղղությամբ: Դրանից բացի, ըստ նախարարության, սեռական ոտնձգության վերաբերյալ արվել են իրազեկման աշխատանքներ ու հարցազրույցներ են արվել՝ միտված սեռական ոտնձգության դեմ պայքարին[296]:

Պետք է նշել, որ ըստ Քննչական կոմիտեի՝ 2024 թվականի ընթացքում աշխատանքի վայրում սեռական ոտնձգության դեպքի առնչությամբ նախաձեռնվել է մեկ քրեական վարույթ և մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ներդնել իրավական գործուն կառուցակարգեր՝ ներառյալ՝ հստակ օրենսդրական կարգավորումներ աշխատավայրում սեռական ոտնձգության դեմ պայքարում: Ընդ որում՝ իրավական կարգավորումներ սահմանելիս անհրաժեշտ է հստակ տարանջատել ինչպես պետական մարմինների գործառույթները, այնպես էլ գործատուների ու աշխատակիցների իրավունքների, պարտականությունների բնույթն ու ծավալը, նախատեսել համաչափ պատասխանատվության միջոցներ,

✓ սահմանել գործատուի՝ սեռական ոտնձգությունների դեմ պայքարի քաղաքականություն ընդունելու պարտականությունը, որը պետք է ներառի սեռական ոտնձգությունների վերաբերյալ բողոքների ներկայացման ու դրանց քննության կարգն ու ժամկետները, ինչպես նաև սեռական ոտնձգության ենթարկված անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներն ու միջոցները,

✓ հստակ սահմանել պետական լիազոր մարմնի՝ սեռական ոտնձգությունների դեմ պայքարի քաղաքականության ընդունման, դրա կիրարկման, սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ բողոքների քննության իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը,

---

[295] Պետք է նկատել, որ ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայով իրազեկման միջոցառումների կազմակերպման պարտականությունները վերապահվում են գործատուին՝ սեռական ոտնձգության կանխարգելման քաղաքականության իրականացման համատեքստում:

[296] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=lrEEOiIWI5M, https://www.facebook.com/mlsa.am/videos/448569354646305, https://www.facebook.com/mlsa.am/videos/228009710401332, *https://www.facebook.com/mlsa.am/videos/458098713221080* հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

✓ ***օրենսդրորեն սահմանել գործատուների համար սեռական ոտնձգության դեմ պայքարի քաղաքականության մշակման ուղենիշեր և չափանիշներ,***

✓ ***գործատուների համար մշակել սեռական ոտնձգությունների կանխարգելման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ հանրամատչելի ուղեցույցներ՝ սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման և պաշտպանության գործընթացում ներգրավված անձանց ու մարմինների իրավունքների, պարտականությունների և լիազորությունների վերաբերյալ,***

✓ ***իրականացնել աշխատավայրում սեռական ոտնձգության արգելքի վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնող աշխատանքներ՝ այդ թվում՝ իրազեկման արշավներ գործատուների ու աշխատողների շրջանում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի համար,***

✓ ***օրենսդրական կարգավորումների միջոցով ամրապնդել արհմիությունների դերը սեռական ոտնձգության դեմ պայքարի, այդ թվում՝ կանխարգելման հարցում:***

2. Ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգությունը

2024 թվականի ընթացքում շարունակել են արդիական լինել ուսումնական հաստատություններում բռնության հայտնաբերման, կանխարգելման ու դրանից պաշտպանության հարցերը:

Ուսումնական հաստատություններում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ սեռական ոտնձգություն դրսևորվում է բոլոր ուսումնական հաստատություններում՝ ինչպես հանրակրթական ուսումնական հաստատություններում, այնպես էլ բարձրագույն, ընդ որում՝ ինչպես աշակերտների (ուսանողների), այնպես էլ ուսուցիչների (դասախոսների) կողմից[297]:

Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում արձանագրվել են ուսումնական հաստատություններում բռնության ենթարկված անձանց պատշաճ աջակցություն չցուցաբերելու խնդիրն ու այդ խնդրի հիմքում ընկած պատճառները[298], որոնք հանգում են հետևյալին՝

➢ սեռական ոտնձգության ենթարկված անձանց ուղղորդման, արձագանքման ու ոտնձգության վերաբերյալ հաղորդման պատշաճ կառուցակարգերի, այդ թվում՝ օրենսդրական ընթացակարգերի անկատարություն ու հստակ կանոնակարգումների բացակայություն,

➢ խնդրի առնչությամբ անհետևողականություն ու թերի հաղորդակցություն,

➢ հանրային ընկալումներ, որոնք հանգեցնում են ոտնձգության ենթարկված անձին չհավատալուն, մեղադրելուն,

---

[297] Տե՛ս, առավել մանրամասն, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 781-785:

[298] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 781-785:

➢ իրազեկվածության ցածր մակարդակ:

Բռնության դրսևորումները վաղ հայտնաբերելու և դրանք կանխարգելելու, ինչպես նաև դրանց մասին հաղորդելու համատեքստում Պաշտպանը հատկապես կարևորում է ուսումնական հաստատությունների առանցքային դերը: Ելնելով այդ համատեքստում առկա միջազգային իրավական կարգավորումներից՝ Պաշտպանը մշտապես ընդգծել է ուսումնական բոլոր հաստատություններում սեռական բռնության կանխարգելման, ինչպես նաև դեպքերի մասին հաղորդման և դրանց քննության քաղաքականության մշակման անհրաժեշտությունը[299]:

Հարկ է նկատել, որ այս առնչությամբ ուսումնական հաստատություններում կատարվել են որոշակի աշխատանքներ.

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝

➢ Երևանի պետական համալսարանում մշակվել և ռեկտորի հրամանով ընդունվել է ԵՊՀ սեռական ոտնձգությունների բացառման քաղաքականությունը: Գործում է նաև «Էթիկայի կանոնագիրք»-ը:

➢ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում հաստատվել է ՀՊՏՀ ՊՈԱԿ Էթիկայի (բարեվարքության) կանոնակարգ, որում սահմանված են ուսումնառողների պարտավորությունները իրավական և բարոյական նորմերի պահպանման վերաբերյալ: Բացի այդ սահմանված է նաև նորմերի խախտման դեպքում էթիկայի հանձնաժողովին բողոքի ներկայացման կարգը և պատժամիջոցները:

➢ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում գործում է ակադեմիական բարեվարքության կանոնակարգը, որտեղ սահմանված են Ակադեմիայի վարչական, ակադեմիական և ուսումնաօժանդակ կազմի, ուսանողների, ասպիրանտների, հայցորդների էթիկական վարքագծի սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները: Գործում է Ակադեմիայի էթիկայի հանձնաժողով:

➢ Ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» թեման ընդգրկված է եղել 2023-2025 թվականների Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների պարտադիր վերապատրաստման ծրագրերում:

➢ ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հանրապետական մանկավարժական կենտրոնի և Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից 2024 թվականի ընթացքում իրականացվել է «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» թեմայով 554 վերապատրաստման դասընթաց՝ 13.578 ուսուցիչների և աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների համար:

➢ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ), Պարենի համաշխարհային ծրագրի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի համագործակցությամբ մշակվել են «Առողջ ապրելակերպ» խմբակի չափորոշիչը, ուսումնական ծրագիրը և 5-ից 11-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկները, որոնցում ընդգրկված են նաև բռնության, այդ

[299] Տե՛ս, նույն տեղում:

թվում՝ սեռական բռնության, վերարտադրողական առողջության վերաբերյալ դասաժամեր:

➢ 2023-2024 ու 2024-2025 ուսումնական տարիներ համար նախատեսվել է «Առողջ ապրելակերպ» դասընթաց դասավանդումը հանրակրթական ուսումնական հաստատություններում: Հանրակրթության պետական նոր չափորոշիչով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ստանձնել է հանձնառություն «Առողջ ապրելակերպ»-ը հանրակրթության կարևոր բաղադրիչ դարձնելու վերաբերյալ: 5-11-րդ դասարաններում այն իրականացվելու է պարտադիր խմբակի ձևաչափով, յուրաքանչյուր դասարանում 17-ական դասաժամ: 2024-2025 ուսումնական տարում ծրագիրն իրականացվել է 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարաններում:

Պաշտպանն ընդգծում է, որ չնայած կատարված որոշ աշխատանքներին՝ 2024 թվականի ընթացքում արձանագրված խնդիրները շարունակել են առկա լինել՝ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության ու բռնության դեմ արդյունավետ պայքարի նպատակով հստակ ու համապարփակ կառուցակարգերի բացակայությամբ պայմանավորված:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել իրավական գործուն կառուցակարգեր՝ ներառյալ՝ հստակ օրենսդրական կարգավորումներ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեմ պայքարում՝ այդ թվում՝ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման, քննության ու դրա համար պատասխանատվության կանոնակարգման նպատակով,***
- ✓ ***օրենսդրությամբ սահմանել սեռական բռնության դեմ պայքարի քաղաքականություն մշակելու բոլոր ուսումնական հաստատությունների պարտականությունը և դրա ներդրման համար անհրաժեշտ ուղենիշային չափանիշները,***
- ✓ ***մշակել ուսումնական հաստատություններում ոտնձգության դեպքերի մասին հաղորդելու ընթացակարգերի և դրանց պատշաճ արձագանքի ապահովման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգեր,***
- ✓ ***իրականացնել ուսումնական հաստատությունների պատասխանատուների վերապատրաստումներ՝ սեռական ոտնձգության դեպքերը նույնացնելու, բացահայտելու, դրանք վարելու և պատշաճ ու զգայուն արձագանք ցուցաբերելու համար,***
- ✓ ***իրականացնել հանրության իրազեկման պարբերական աշխատանքներ, այդ թվում՝ ինչպես ուսումնական հաստատություններում սովորողների, այնպես էլ սովորող երեխաների ծնողների համար: Ընդ որում՝ անհրաժեշտ է հստակ սահմանել սովորողների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:***

ԳԼՈՒԽ 4. ՊՏՂԻ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդիրը, չնայած դրա դեմ պայքարում ձեռնարկվող միջոցառումների առկայությանը, 2024 թվականի ընթացքում ևս եղել է արդիական:

2024 թվականի ընթացքում ևս խնդրի կանխարգելման և դրա դեմ պայքարի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից է եղել հասարակությունում կանանց դերի բարձրացումը, նրանց կարողությունների զարգացումը, կանանց կողմից որոշումների կայացման ազատության և վերջիններիս իրավունքների մասին իրազեկման աշխատանքների իրականացումը:

Պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել է շարունակաբար իր նախորդ տարեկան հաղորդումներում՝ անդրադառնալով ինչպես խնդրի հիմքում ընկած պատճառներին, այնպես էլ խնդրի առնչությամբ կատարված հետազոտությունների արդյունքներին[300]:

Պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդրի համատեքստում դրա հիմքում ընկած հիմնական պատճառները հակիրճ կերպով ներկայացվում են ստորև.

- Պտղի սեռի խտրական ընտրություն՝ մշակութային, սոցիալական նորմերով և ավանդույթներով պայմանավորված՝ երեխայի կոնկրետ սեռի նախապատվությունը,
- Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման շարունակականությունը՝ չնայած իրավական արգելքներին,
- Օրենսդրական ոլորտի կարգավորվածության անկատարությունը՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, այդ թվում՝ բժշկասոցիալական ցուցումների պահպանման նկատմամբ մշտադիտարկման ու վերահսկողական մեխանիզմների բացակայությունը, ինչի արդյունքում խնդիրը հաճախ կրում է լատենտային բնույթ,
- Հանրության իրազեկվածության ցածր մակարդակը:

Այս համատեքստում, հարկ է նկատել, որ խնդրի առկայության ու դրա դեմ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունն ընդգծվել է նաև Հայաստանի վերաբերյալ միջազգային դիտարկումներում:

---

[300] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 797-804:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովի Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներ.

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների դեմ պայքարի նպատակով ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում նշվել է, որ կանանց և աղջիկներին վնասող կարծրատիպերը պետք է ենթարկվեն պատժամիջոցների, որոնք հետ կպահեն լրատվամիջոցներին դրանք հավերժացնելուց[301]:

Խնդրի հաղթահարմանն ուղղված ձեռնարկված քայլերի առնչությամբ Պաշտպանի հարցումներին ի պատասխան՝ Առողջապահության նախարարությունը նշել է, որ նախարարության կողմից պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման շարունակականության ապահովման նպատակով իրականացվել են հանրային իրազեկման աշխատանքներ, կազմակերպվել են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների մասին հարցազրույցներ, վերարտադրողական առողջության ծրագրի վերաբերյալ հաղորդագրություններ և այլն:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փոխանցած տվյալների համաձայն՝ պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հղիության արհեստական ընդհատումների խնդրին անդրադարձ է կատարվել «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով, որով որպես նպատակ նախանշվել է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրերի բարելավումը և խտրական նախապատվության հաղթահարումը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշել է, որ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ ներգրավվածությամբ Հայաստանի մի շարք մարզերում բացվել են և նախատեսվում են բացվել «Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոններ, որտեղ անցկացվում են դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ և միջոցառումներ՝ ուղղված կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ կարծրատիպերի փոփոխմանը, երեխայի խնամքի և ծնողավարության մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացմանը, պտղի սեռի խտրական ընտրության, նախածննդյան և հետծննդյան խնամքում տղամարդկանց ներգրավվածության մեծացման կարևորության վերաբերյալ բուժաշխատողների իրազեկվածության բարձրացմանը, «Հայրերի դպրոց» ծրագրի իրականացմանը:

---

[301] Տե՛ս, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովի Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներ, թիվ CEDAW/C/SR.1913 զեկույցը, 2022թ., հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FSR.1913&Lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Չնայած կատարված աշխատանքներին՝ այնուամենայնիվ, Պաշտպանն ընդգծում է, որ դրանք բավարար չեն խնդրի համակարգային լուծման համար: Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի հաղթահարման տեսանկյունից առանցքային են հասարակությունում առկա մոտեցումների և ընկալումների փոփոխությունները, կանանց կարողությունների զարգացման, որոշումների կայացման ազատության և իրավունքների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներն ու բուժաշխատողների նկատմամբ վերահսկողության ուժեղացման նպատակով իրականացվող միջոցառումները, այդ թվում՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքով ամրագրված հղիության արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցումները պահպանելու վերահսկողական մեխանիզմներ մշակելու և կիրառելու համատեքստում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***շարունակաբար նպաստել կանանց տնտեսական, սոցիալական և քաղաքական մասնակցությունը խթանող քաղաքականությունների մշակմանը՝ ուղղված հասարակությունում կանանց դերի բարձրացմանն ու արժևորմանը,***
- ✓ ***զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար իրականացնել հանրային իրազեկման համակարգված միջոցառումներ՝ ուղղված աղջիկ երեխայի արժևորմանը, սոցիալական նորմերի վերափոխմանը, կարծրատիպերի վերացմանը, կնոջ՝ որպես որոշում կայացնողի դերի ընդգծմանը,***
- ✓ ***իրականացնել առողջապահական համակարգի աշխատակիցների կարողությունների ամրապնդման վերապատրաստման դասընթացներ՝ հատկապես թիրախային խմբին պատշաճ խորհրդատվության տրամադրման ու իրազեկման առումներով, և բարձրացնել բուժաշխատողների գենդերազգայունությունը,***
- ✓ ***մշակել և կիրառել կառուցակարգեր՝ վերահսկելու բուժաշխատողների գենդերազգայունությունը,***
- ✓ ***մշակել և կիրառել կառուցակարգեր՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 11 շաբաթ 7-րդ օրվանից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցումների պահպանումը,***
- ✓ ***ապահովել ամուսինների և տղամարդկանց ներգրավումը պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության թեմայով անցկացվող դասընթացներին,***
- ✓ ***դպրոցներում և բուհերում իրականացնել լայնամասշտաբ կրթական քարոզարշավներ ու հանրային իրազեկման նախաձեռնություններ՝ ուղղված աղջիկ երեխայի արժևորմանը,***
- ✓ ***պարբերաբար հետազոտական աշխատանքներ իրականացնել՝ պտղի սեռի խտրական ընտրության տարածվածությունն ու պատճառները Հայաստանի Հանրապետությունում պարզելու նպատակով:***

ԳԼՈՒԽ 5. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍ/ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2024 թվականի ընթացքում շարունակել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ գործունեությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը դեռ նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում ընդգծել է մարդու իրավունքների ազգային հաստատությունների՝ որպես մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու հատուկ մանդատ ունեցող անկախ ազգային մարմինների կարևոր դերակատարությունը ազգային մակարդակում ՄԻԱՎ-ի դեմ պայքարի համար մշակված ռազմավարություններում համապարփակ և իրավունքահեն մոտեցում որդեգրելու հարցում[302]:

Ոլորտում առկա խնդիրների դեմ առավել արդյունավետ պայքար իրականացնելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար 2024 թվականի դեկտեմբերի 9-ին անցկացվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հիմքով խտրականության վերաբերյալ վերապատրաստման դասընթաց, որը վերաբերել է ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ խարանին և խտրականությանը, ՄԻԱՎ-ի ոլորտում առկա իրավակարգավորումներին, օրենսդրական և գործնական բացերին և ոլորտին առնչվող այլ հարցերի: Դասընթացի նպատակն է եղել ՄԻՊ աշխատակազմի կարողությունների զարգացումը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող անձանց իրավունքների վերաբերյալ՝ ապահովելու համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող անձանց նկատմամբ խտրականության դեմ Պաշտպանի աշխատակազմի արդյունավետ պայքարը: Վերապատրաստման դասընթացը կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի նախաձեռնությամբ՝ ՄԱԿ–ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ հարցերով միացյալ ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերը բարձրացնելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի ընթացքում մասնակցել է ՄԻԱՎ-ով ապրող անձանց և խոցելի խմբերի մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ կլոր-սեղան քննարկմանը, ինչպես նաև ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված հանդիպում-քննարկմանը:

Ըստ՝ ՀՀ առողջապահության նախարարության իրենց կարգավիճակի մասին իմացող ՄԻԱՎ-ով ապրող ՀՀ քաղաքացիների թիվը 4859 է: Միայն 2024 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիների շրջանում հայտնաբերվել է ՄԻԱՎ վարակի 544 նոր դեպք, որը 44-ով ավելի է նախորդ տարվա համեմատ:

---

[302] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 786-796:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են հետևյալ խնդիրները՝

- ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումներ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում,
- ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունեցող անձանց՝ մի շարք ծառայությունների համար մերժման դեպքեր,
- ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունեցող անձանց՝ ախտորոշումից, որոշ դեպքերում՝ նաև բուժումից խուսափելու դեպքեր,
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց՝ հիվանդությունը թաքցնելու և օգնության չդիմելու դեպքեր՝ պայմանավորված տնից վտարվելու վախով կամ բնակավայրում ճնշվելու հեռանկարով,
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում առկա ինքնախարանի բարձր մակարդակ,
- ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց՝ սեփական իրավունքները պաշտպանող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ իրազեկվածության պակաս,
- հասարակության շրջանում վարակի բնույթի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ տարբերությունների մասին իրազեկվածության պակաս:

2024 թվականի ընթացքում «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» հասարակական կազմակերպության կողմից արձանագրվել են ՄԻԱՎ ունեցող անձանց նկատմամբ խտրականությամբ զուգորդված 23 իրավախախտման դեպքեր, որոնցում հանդիպել են բժշկական հաստատություններում խտրական և անհարգալից վերաբերմունքի դրսևորման դեպքեր, անձնական տվյալների պաշտպանության ապահովման և այլ խնդիրներ: Ընդ որում՝ նախորդ տարվա համեմատ կազմակերպության կողմից արձանագրվել է 7-ով ավելի իրավախախտման դեպք:

Կազմակերպության կողմից արձանագրված իրավախախտումների գերակշիռ մեծամասնությունը գրանցվել են առողջապահական համակարգում, մասնավորապես, տեղի են ունեցել հետևյալ դեպքերը.

● բժշկական հաստատություններում բուժաշխատողների կողմից անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման ուղղակի կամ անուղղակի մերժումներ,

● պացիենտների նկատմամբ խտրական, անհարգալից վերաբերմունքի դրսևորումներ, տարբերակված մոտեցման ցուցաբերում և (կամ) այլ պացիենտների համեմատ անհավասար պայմանների ստեղծում,

● պացիենտների անձնական տվյալների ապօրինի տարածում և այլն:

Կազմակերպությանը ներկայացված իրավախախտման դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գրեթե բոլոր շահառուները խուսափել են դիմել իրավապահ մարմիններին՝ ելնելով անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածման մտավախությունից, քանի որ ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում առկա է նաև անվստահություն իրավապահ մարմինների և պետական համակարգի նկատմամբ[303]:

---

[303] Տե՛ս, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ տարեկան զեկույցը, 2024թ., հասանելի է https://realwrp.org/news_attachments/163_-

Խնդիր է արձանագրվել նաև ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի կողմից, ով մտահոգություն է հայտնել, որ Հայաստանում ՄԻԱՎ-ի փոխանցումը քրեականացված է՝ չհամապատասխանելով առողջության պահպանման իրավունքի ներքո ստանձնած միջազգային պարտավորություններին: Նշվածը, ըստ Հատուկ զեկուցողի, լուրջ խոչընդոտ է ռիսկի տակ գտնվող անձանց առողջության պահպանման իրավունքից օգտվելու ճանապարհին՝ սահմանափակելով անհրաժեշտ բժշկական ծառայությունների հասանելիությունը և բարձրացնելով առողջական ռիսկերը ոչ միայն իրենց, այլև ամբողջ հասարակության համար: Հատուկ զեկուցողն առաջարկել է քրեական պատասխանատվություն նախատեսել միայն այն դեպքերի համար, երբ ՄԻԱՎ-ի փոխանցումն իրականացվում է դիտավորությամբ և ՄԻԱՎ-ով ապրող անձը տեղյակ է իր մոտ վարակի առկայության մասին[304]:

Ըստ Առողջապահության նախարարության՝ 2024 թվականին կատարվել են ՄԻԱՎ-ին առնչվող օրենսդրական դաշտի վերանայման աշխատանքներ և «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու նպատակով աշխատանքային խումբը մշակել է հիմնավորող փաստաթղթերի փաթեթ, ինչ վերաբերում է օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված այլ նախաձեռնություններին, այդ թվում՝ ՄԻԱՎ-ի փոխանցման ապաքրեականացմանը, ապա, ըստ նախարարության, այդ ուղղությամբ աշխատանքները տարվելու են հաջորդիվ:

Ներկայացվածից բացի, Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում մանրամասն քննարկել է բժշկական գաղտնիքի պահպանման ներպետական և միջազգային չափանիշները[305] և այդ համատեքստում վերահաստատում է, որ առողջապահական մարմինները պարտավոր են միջոցներ ձեռնարկել ՄԻԱՎ-ով ապրող անձանց բժշկական տվյալների գաղտնիության պահպանման համար, քանի որ խտրական վերաբերմունք ծնող պատճառներից մեկն էլ հենց բուժաշխատողների մասնագիտական կարողությունների պակասն է:

Ըստ Առողջապահության նախարարության՝ 2024 թվականի ընթացքում ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ում կայացել են «ՄԻԱՎ վարակով հղիների վարում և մորից՝ երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում» և «Միջին բուժանձնակազմի դերը մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելման գործում» թեմաներով դասընթացների շարք՝ Երևանի ծննդատների համապատասխանաբար ավագ և միջին բուժաշխատողներ համար:

Նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից

_Real%20World,%20Real%20People%20NGO%20-%20Annual%20Report%202024%20-%20ARM.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[304] Տե՛ս, Հայաստան կատարած այցի ժամանակ ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի «Ֆիզիկական ամենաբարձր հասանելի ստանդարտից օգտվելու և հոգեկան առողջության յուրաքանչյուրի իրավունքի վերաբերյալ» զեկույցը, հասանելի է https://digitallibrary.un.org/record/1627460/files/A_HRC_38_36_Add-2-EN.pdf?ln=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[305]Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 786-796:

իրականացվել է 10 հանրային միջոցառում, որից 5-ը՝ ՀՀ մարզերում, որոնց ընթացքում իրականացվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման վերաբերյալ: Երևանի և ՀՀ մարզային լրատվամիջոցների միջոցով եղել են անդրադարձեր ՄԻԱՎ վարակի վերաբերյալ, այդ թվում՝ ասուլիսներ, հարցազրույցներ, ռեպորտաժներ: Առողջապահության նախարարության և ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրոնային էջերով պարբերաբար տեղեկատվություններ են տրամադրվել ՄԻԱՎ վարակ ունեցող անձանց իրավունքների և ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման վերաբերյալ: 2024 թվականի ընթացքում իրականացվել է 18 դասընթաց՝ 12-ը Երևանում 6-ը մարզերում, որին մասնակցել է 487 բուժաշխատող: Դասընթացների մեջ ներառված են եղել ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման, ինչպես նաև պացիենտների իրավունքների մասին թեմաներ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ շարունակական մասնագիտական զարգացման բոլոր ուսումնական ծրագրերում ներառվել են ՄԻԱՎ վարակի գաղտնիության անհրաժեշտության հետ կապված նյութեր:

Ըստ նախարարության՝ հանրակրթական դպրոցներում դասավանդվող «Առողջ ապրելակերպ» դասընթացի չափորոշչի՝ դասընթացի բովանդակային ծրագրում ներառվել են սեռական և վերարտադրողական առողջության, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման վերաբերյալ թեմաները, իսկ մասնագիտական կրթության և ուսուցման պետական կրթական չափորոշիչներում նախատեսվել են առարկաներ, որոնց դասավանդման շրջանակներում անդրադարձ է կատարվել նշյալ թեմաներին:

Առողջապահության նախարարի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 7592-Լ հրամանով հաստատվել է «Բժշկական գաղտնիքի պատշաճ մշակման մեթոդական ուղեցույցը», որով ներկայացվել են բժշկական գաղտնիքի, բուժաշխատողների կողմից դրա պահպանմանն ուղղված կարգավորումներ:

Ողջ վերոգրյալի ամփոփմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ չնայած ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հիմքով խտրականության դեմ պայքարի շրջանակներում պետության կողմից կատարված քայլերին՝ 2024 թվականի ընթացքում ևս շարունակվել են ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խտրական վերաբերմունքի դրսևորումները, որոնք ոչ միայն խախտել են մարդու իրավունքները, այլև խոչընդոտել են ՄԻԱՎ-ի արդյունավետ կանխարգելմանը և ՄԻԱՎ-ի ազդեցությունը նվազեցնելուն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլև գործնականում ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց բժշկական գաղտնիքի պահպանությունը,***
- ✓ ***քրեական պատասխանատվություն նախատեսել միայն ՄԻԱՎ-ի փոխանցման այն դեպքերի համար, երբ ՄԻԱՎ-ի փոխանցումն իրականացվում է դիտավորությամբ և ՄԻԱՎ-ով ապրող անձը տեղյակ է իր մոտ վարակի առկայության մասին,***
- ✓ ***շարունակաբար իրականացնել տեխնիկական և կազմակերպական անվտանգության միջոցառումներ՝ ՄԻԱՎ ունեցող անձանց գաղտնիության իրավունքի ապահովման համար,***

- ✓ *աջակցության ծրագրեր մշակել ՄԻԱՎ-ով ապրող անձանց բուժման և խնամքի համար,*
- ✓ *ՄԻԱՎ-ով վարակված երեխաների իրավունքների ապահովման և տրամադրվող ծառայությունների բարելավման ուղղությամբ շարունակաբար աշխատանքներ կատարել,*
- ✓ *առողջապահական ոլորտի աշխատողների համար մշակել հատուկ կրթական ծրագրեր ու ուղեցույցներ՝ հստակեցնելով ՄԻԱՎ վարակի գաղտնիության անհրաժեշտության հետ կապված հարցերը,*
- ✓ *ՀՀ ողջ տարածքում բուժաշխատողների համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ շրջաններում՝ ՄԻԱՎ-ի, ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման, ինչպես նաև պացիենտների իրավունքների մասին,*
- ✓ *ապահովել ՄԻԱՎ-ի վերաբերյալ խարանին և խտրականությանը վերաբերող թեմաների շարունակական ընդգրկումը ուսումնական տարբեր դասընթացներում,*
- ✓ *շարունակաբար իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց իրավունքների և ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման վերաբերյալ,*
- ✓ *ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող անձանց համար մշակել ուղեցույցներ՝ իրենց իրավունքների վերաբերյալ:*

ԲԱԺԻՆ 5. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Կանանց նկատմամբ խտրականության բացառումը, կանանց իրավունքների պաշտպանությունն ու խթանումը Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից է: Ոլորտում տարիներ շարունակ տարվող աշխատանքներն ուղղված են, ի թիվս այլնի, կանանց նկատմամբ բռնության վերացմանը, կանանց հասարակական-քաղաքական կյանքին ներգրավմանն ու առաջընթացի խթանմանը, կանանց տնտեսական հզորացմանը և վերջիններիս նկատմամբ խտրականությունը բացառող ու իրավունքահեն մոտեցումների ամրապնդմանը:

Կանանց ու տղամարդկանց իրավահավասարության երաշխավորման գործուն, կենտրոնացված և համընդգրկուն կառուցակարգերի ներդրման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2024 թվականի ապրիլի 9-ին պաշտոնապես գործարկել է հանրային հաստատությունների համար Գենդերային հավասարության պարգևադրոշմի (ԳՀՊ) ներդրման գործընթացը[306]:

Գենդերային հավասարության պարգևադրոշմի (ԳՀՊ) ներդրման գործընթացը առաջին անգամ է պաշտոնապես գործարկվել Հայաստանի Հանրապետությունում, իսկ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը մարդու իրավունքների պաշտպանության առաջին ազգային հաստատությունն է, որն անցնելու է պարգևադրոշմի ներդրման համար գնահատումը:

Գենդերային հավասարության պարգևադրոշմը հատուկ մշակված մեթոդաբանություն է, որի նպատակն է աջակցել պետական մարմիններին 2030 թվականի ՄԱԿ-ի Կայուն զարգացման 5-րդ նպատակների՝ գենդերային հավասարության վերաբերյալ դրույթները ներքին իրավական ակտերում ամրագրելուն՝ որդեգրելով գենդերազգայուն մոտեցումներ լիազորություններն իրականացնելիս:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար 2024 թվականի նոյեմբերի 13-ին անցկացվել է «Գենդերային հավասարության պարգևադրոշմը հանրային ինստիտուտների համատեքստում» վերտառությամբ վերապատրաստման դասընթաց[307]: Դասընթացի ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են գենդերային հավասարության պարգևադրոշմի համատեքստում ռազմավարական ուղղությունները, գենդերային բաղադրիչի դիտարկումը հանրային ինստիտուտների գործունեության և քաղաքականությունների մակարդակում, ինչպես նաև գենդերային հավասարության պարգևադրոշմի շրջանակը հանրային ինստիտուտների

---

[306] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2908 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[307] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3180 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

համատեքստում: Վերապատրաստման դասընթացը կազմակերպվել է ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Լավ կառավարման հիմնադրամի կողմից:

Ներկայացվածից բացի, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցություն վարել ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների, միջազգային կառույցների ու կազմակերպությունների, պետական մարմինների և ոլորտային այլ դերակատարների հետ՝ այդ համատեքստում, ի թիվս այլնի, բարձրացնելով ոլորտում արձանագրված խնդիրներն ու ուղղակիորեն ներգրավվելով դրանց լուծմանը ինչպես ոլորտային դերակատարների ձեռնարկված միջոցառումների շրջանակներում, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ[308]:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը բարձրացրել է տարբեր գործընթացներում կանանց մասնակցության խթանման, կին առաջնորդների համար առկա մարտահրավերների, կանանց իրավունքների պաշտպանության բնագավառում առկա խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքների անհրաժեշտության հետ կապված հարցեր իր մարզային այցերի (Գեղարքունիքի, Շիրակի, Տավուշի, Սյունիքի, Լոռու մարզեր)[309], չհայտարարված մշտադիտարկման այցի (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն ՊՈԱԿ)[310], աշխատանքային այցերի[311], հասարակական կազմակերպության ներկայացուցիչների[312], օտարերկրյա պատվիրակությունների[313], դեսպանության ներկայացուցիչների[314], միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների[315] հետ հանդիպումների շրջանակներում:

Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը հատկապես վառ ընդգծվում է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի գործունեության միջոցով:

---

[308] Մանրամասները սույն բաժնում ստորև:

[309] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3178, https://ombuds.am/am/site/ViewNews/3227, https://ombuds.am/am/site/ViewNews/3082, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3078, https://ombuds.am /am/site/ViewNews/3158, https://ombuds.am/am/site/ViewNews/3126 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[310] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3025 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[311] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2882 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[312] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3223 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[313] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3182, https://ombuds.am/am/site/ViewNews/2898 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[314] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3156, https://ombuds.am/am/site/ViewNews/2881, https://ombuds.am/am/site/ViewNews/2889 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ :

[315] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3122, https://ombuds.am/am/site/ViewNews/2909 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Խորհուրդն իր գործունեությունը ծավալում է կանանց իրավազորման, տնտեսական հզորացման, իրավահավասարության ապահովման, քաղաքական մասնակցության ակտիվացման, կանանց նկատմամբ բռնության և գենդերային բռնության կանխարգելման, դրանց արձանագրման և աջակցության տրամադրման, իրավապահ համակարգում և զինված ուժերում կանանց ակտիվ ներգրավման ու առաջընթացի ոլորտներում, կանանց իրավունքներին առնչվող ռազմավարական ու կրթական ուղղություններում:

Խորհուրդը, որը կազմված է կանանց իրավունքների պաշտպանությամբ ու խթանմամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, իր հերթական նիստն է ունեցել 2024 թվականի դեկտեմբերի 10-ին[316]:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության, կանանց կարողությունների զարգացման ու խթանման, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի ուսումնասիրության ու վերլուծության աշխատանքների համակարգումն իրականացնում է Պաշտպանի աշխատակազմի հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնին: Այս համատեքստում 2024 թվականի ընթացքում ևս կենտրոնը, ի թիվս այլնի, ապահովել է Պաշտպանի գործառույթների իրականացումը՝ կանանց իրավունքների խթանման ոլորտում, այդ թվում՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման, ոլորտի օրենսդրության կատարելագործման, Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի աշխատանքների համակարգման համատեքստում:

Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչները ընդգրկված են նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1740-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետությունում կանանց հարցերով խորհրդում և նույն խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբում: Նշվածի համատեքստում Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչները 2024 թվականի ընթացքում մասնակցել են ՀՀ-ում կանանց հարցերով խորհրդի ու նույն խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքներին:

Պաշտպանի աշխատակազմի հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչները 2024 թվականի ընթացքում ներգրավված են եղել նաև ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի միջգերատեսչական հանձնաժողովում, Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդում, ինչպես նաև Ընդլայնված գենդերային թեմատիկ խմբերում՝ «Կանանց քաղաքական մասնակցություն», «Կանանց տնտեսական զորացում» և «Գենդերային բռնության կանխարգելում» թեմատիկ խմբերում:

Մարդու իրավունքների պաշտպանը, կարևորելով կանանց իրավունքների պաշտպանության հարցերը, իր նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման

[316] Առավել մանրամասն տե՛ս, սույն բաժնի 5-րդ էջում:

գործառույթի շրջանակներում կարծիք է ներկայացրել մի շարք նորմատիվ իրավական ակտերի նախագծերի առնչությամբ, որոնք վերաբերել են ինչպես կանանց նկատմամբ բռնության ու ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարին, այնպես էլ կանանց վերարտադրողական առողջության իրավունքին և այլ իրավունքների[317]:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է կանանց իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացումն ու կանանց կարողությունների զարգացումը: Նշվածով պայմանավորված՝ 2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանի հաստատությունը ձեռնամուխ է եղել հանրային իրազեկման աշխատանքների իրականացմանը[318]:

1.Կանանց նկատմամբ բռնություն և ընտանեկան և կենցաղային բռնություն

2024 թվականի ընթացքում կանանց իրավունքների պաշտպանությունը, կնոջ նկատմամբ ցանկացած տեսակի խտրականության բացառումը, դրա դեմ պայքարը, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը ու բռնության կանխարգելումը շարունակել է մնալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարում աշխատանքներ է տարել օրենսդրության կատարելագործման ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը գրավոր կարծիք է ներկայացրել ընտանեկան և կենցաղային բռնությանն առնչվող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների մի շարք նախագծերի առնչությամբ, ներառյալ՝ ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարում ոլորտային օրենսդրության փոփոխություններին և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ.

- «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի լրամշակված փաթեթի,
- Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման խորհրդի գործունեության, աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու խորհրդի առջև դրված գործառույթների պատշաճ իրականացման վերաբերյալ նախագծային կարգավորումների[319],
- Ընտանեկան բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները նախատեսող նախագծի[320],

---

[317] Առավել մանրամասն տե՛ս, սույն բաժնում հաջորդիվ:

[318] Տե՛ս մանրամասն, սույն բաժնում հաջորդիվ:

[319] Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի կիրակումն ապվահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 786-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

[320] «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված

• Աջակցության կենտրոնների գործունեության, մատուցվող ծառայությունների և անձնակազմին ներկայացվող պահանջների և աջակցության կենտրոնի կողմից ծառայությունների մատուցման կարգի[321] և այլնի վերաբերյալ:

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման նպատակով իրականացվել են հանրության իրազեկման միջոցառումներ. 2024 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանը միացել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավին, որի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի դեկտեմբերի 11-ին մասնակցել է Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026թթ. ծրագրի շրջանակներում «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի արդյունքների ամփոփիչ միջոցառմանը:

• 2024 թվականի նոյեմբերի 28-ին Պաշտպանը ուղերձ է հղել՝ նվիրված «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավին[322]՝ ընդգծելով, որ «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավը կարևոր գործիք է հանրային հաստատություններում գենդերային հավասարության համընդգրկման գործընթացին աջակցելու դիտանկյունից:

• Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Հայաստանի պատմության թանգարանի հետ համագործակցությամբ Վարդենիսի դպրոցականները ծանոթացել են «Մայր աստվածություն՝ Անահիտից Մարիամ» խորագրով հայ հին և միջնադարյան մշակութային նմուշների ցուցադրություններին, այդ թվում՝ Անահիտ աստվածուհու բրոնզե արձանի պատմությանը, այնուհետև Պաշտպանը վարել է քննարկում՝ նվիրված կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը, ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարին[323]:

• 2024 թվականի դեկտեմբերի 10-ին՝ «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա քարոզարշավի վերջին և Մարդու իրավունքների միջազգային օրը, տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր

ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ և 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

[321] ««Աջակցության կենտրոնի գործունեությանը, մատուցվող ծառայություններին և անձնակազմին ներկայացվող պահանջները և աջակցության կենտրոնի կողմից ծառայությունների մատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

[322] Հասանելի է https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1158 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[323] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3186 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը[324] Երևանի պետական համալսարանում: Նիստի ընթացքում, ի թիվս այլնի

➢ ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու դրանց պաշտպանության համատեքստում կրթության դերի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները,

➢ տեղի է ունեցել զրույց-քննարկում «Կանանց նկատմամբ բռնության ու ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքար. Կրթության դերը գենդերային բռնության կանխարգելման հարցում» խորագրով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ոլորտի մասնագետների միջև,

➢ հայտարարվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի նախաձեռնությամբ՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համագործակցությամբ «Գենդերային հիմքով բռնության հիմնահարցերը Հայաստանում» խորագրով հետազոտական աշխատանքների մրցույթ՝ նախատեսված Երևանի պետական համալսարանի իրավագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի և ժուռնալիստիկայի ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար:

• Պատրաստվել են գենդերային բռնության հարցերով Մարդու իրավունքների պաշտպանին աջակցության համար դիմելու կարգի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ, որոնք տրամադրվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստի մասնակիցներին:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հարցերը, Պաշտպանի արձանագրած խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկները Պաշտպանի ու հաստատության կողմից ներկայացվել են նաև տարբեր հանդիպումների, միջոցառումների ու աշխատանքային այցերի ընթացքում.

• Պաշտպանը «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա միջազգային քարոզարշավի համատեքստում մասնակցել է գենդերային թեմատիկ խմբի ընդլայնված հանդիպման շրջանակում կազմակերպված պանելային քննարկմանը, որի նպատակն է եղել անդրադառնալ Ընտանեկան բռնության օրենքի ընդունումից հետո իրականացված աշխատանքներին և նախանշել առաջիկա հինգ տարիների հիմնական առաջնահերթություններն ու գործողությունները՝ դիտարկելով դրանք օրենքի նոր փոփոխությունների լույսի ներքո և առանձնացնելով այն խնդիրները, որոնց առնչվում են կանայք հումանիտար ճգնաժամերի ժամանակ: Պաշտպանը շեշտել է, որ բռնության, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնության որևէ

[324] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3201 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

դրսևորում արդարացում չունի, իսկ խնդրի հաղթահարման գործում Պաշտպանը կարևորել է կրթական միջավայրի հիմնովին բարեփոխումը[325]:

• Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ապրիլի 10-ին մասնակցել է Եվրոպայի խորհրդի 2023-2026 թվականների՝ Հայաստանի համար գործողությունների ծրագրի խորհրդի նիստին, որտեղ Պաշտպանը խոսել է ընտանեկան բռնության կանխարգելման և մի շարք այլ հարցերի մասին[326]:

• Պաշտպանը 2024 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFP) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Ֆլորենս Բաուերի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են, ի թիվս այլնի, կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը վերաբերելի, ինչպես նաև մարզերում և գյուղական համայնքներում կանանց կարողությունների զարգացմանն ուղղված մի շարք հարցեր[327]:

• ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի հոկտեմբերի 21-ից 23-ը հայաստանյան պատվիրակության կազմում աշխատանքային այց է իրականացրել Ստոկհոլմ (Շվեդիա), որը նպատակ է ունեցել նպաստել Հայաստանի օրենսդրության, ռազմավարությունների և գործնական քայլերի ուժեղացմանը՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ուղղությամբ[328]:

• Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի փետրվարի 5-ին մասնակցել է «Գենդերային բռնության կանխարգելում» թեմատիկ խմբի ընդլայնված հանդիպմանը՝ նվիրված սեռական բռնության արձագանքմանը:

2024 թվականը բեղուն է եղել կանանց նկատմամբ բռնության ու ընտանեկան բռնության հարցերով միջազգային համագործակցության տեսանկյունից.

Այս համատեքստում Պաշտպանն ակտիվ համագործակցություն է ունեցել ՄԱԿ–ի Բնակչության հիմնադրամի հետ, որի հետ համագործակցությամբ, ի թիվս այլնի, անցկացվել է Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստը «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարում Մարդու իրավունքների պաշտպանը համագործակցել է նաև Եվրոպայի խորհրդի հետ «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է

---

[325] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3175 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[326] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2909 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[327] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3122 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[328] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3154 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության բաժնի կարողությունների զարգացման և համագործակցության ծրագրերի բաժնի և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից:

Բացի ոլորտում արձանագրված խնդիրների համակարգային առումով հասցեավորումից, Պաշտպանը նույն հարցերին ինչպես մշտապես, այնպես էլ 2024 թվականի ընթացքում ևս անդրադարձել է անհատական մակարդակում՝ արձագանքելով կանանց նկատմամբ ու ընտանեկան բռնության առնչությամբ դիմում-բողոքներին: 2024 թվականի ընթացքում դիմում-բողոքների կապակցությամբ, ի թիվս այլնի՝

- Պաշտպանի միջնորդությամբ իրավասու մարմնի կողմից կայացվել են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներ կիրառելու մասին որոշումներ,
- Պաշտպանի միջնորդությամբ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց տրամադրվել են օրենքով նախատեսված աջակցության կենտրոնների և ապաստարանների կողմից մատուցվող ծառայություններ,
- Պաշտպանի կողմից իրավասու մարմին հասցեագրած գրությունները քննարկվել են հատուկ պաշտպանության միջոց կիրառելու հարցը լուծելու նպատակով,
- Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները դիմում-բողոք ներկայացրած անձանց ներկայացրել են «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության» ՀՀ օրենքի կարգավորումները, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները, ներկայացրել են Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները և Պաշտպանին գրավոր բողոք հասցեագրելու կարգը, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հաղորդումների քննարկման և դրանց արդյունքում կայացվող որոշումների բողոքարկման ընթացակարգերը և այլն: Ավելին, դիմում-բողոք ներկայացրած անձանց տրամադրվել են Պաշտպանի աշխատակազմի «թեժ գիծ»՝ 116 և աշխատանքային հեռախոսահամարները, ապաստարանների ու աջակցման կենտրոնների ծառայություններ մատուցող կազմակերպությունների կոնտակտային տվյալները:

Դիմում-բողոքներով բարձրացված խնդիրների լուծման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները համագործակցել են Ներքին գործերի նախարարության, Դատախազության, Քննչական կոմիտեի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների և ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված՝ ընտանեկան և կենցաղային բռնությանն առնչվող դիմում-բողոքների ընդհանուր նկարագիրը. քանակական և որակական ուսումնասիրություն.

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել 81 գրավոր և բանավոր դիմում-բողոք, որոնցով բարձրացվել են ընտանեկան բռնությանն առնչվող հարցեր: 2016 թվականից սկսած՝ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված՝ ընտանեկան բռնության խնդիրներով

պայմանավորված բողոքների թիվը հետևյալն է. ընտանեկան բռնության հարցերով 2016 թվականի ընթացքում (26.02.2016թ.-31.12.2016թ. ժամանակահատված) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ներկայացվել 6 դիմում-բողոք, 2017 թվականին՝ 24 դիմում-բողոք, 2018 թվականին՝ 50 դիմում-բողոք, 2019 թվականին՝ 91 դիմում-բողոք, 2020 թվականին՝ 127 դիմում-բողոք, 2021 թվականին՝ 105 դիմում-բողոք, 2022 թվականին՝ 95 դիմում-բողոք, իսկ 2023-ին՝ 96 դիմում-բողոք:



ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2024 թվականի ընթացքում ներկայացված ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց պնդումների՝ ստացված 81 դիմում-բողոքներից 57-ի դեպքում ընտանեկան բռնության են ենթարկվել իգական սեռի ներկայացուցիչներ, 13-ի դեպքում՝ արական, իսկ 20-ի դեպքում բռնության ենթարկված անձանց մի մասի սեռի վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել[329]: Ընդ որում՝ 17 դիմում-բողոքների դեպքերով ընտանեկան բռնության են ենթարկվել երեխաներ:

Ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց՝ 81 դիմում-բողոքներից 48-ի դեպքում բռնություն է գործադրել արական սեռի ներկայացուցիչ, 24-ի դեպքում՝ իգական սեռի, 12-ի դեպքում բռնություն գործադրած անձի սեռի մասին տվյալներ չեն ներկայացվել:

---

[329] Հարկ է նշել, որ ըստ սեռի վեր հանված դեպքերի հանրագումարն ու դիմում-բողոքների թիվը քանակապես չեն նույնանում, քանի որ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված մի շարք բողոքներով մի բողոքի շրջանակներում ներկայացվել են բռնության տարբեր դրևորումներ ու դրվագներ, հետևաբար՝ որպես դեպք հաշվվել է այդ բողոքներում ներառված յուրաքանչյուր բռնության դրսևորում:
Ինչ վերաբերում է այն դիմում-բողոքների առանձնացմանը, որոնց պարագայում վերաբերյալ բռնության ենթարկված անձանց մի մասի սեռի վերաբերյալ տվյալներ չկան, պետք է նշել, որ դրանք ևս վերաբերում են բազմադրվագ բողոքներին, որոնցում նկարագրված բռնության դեպքերի մասին տեղեկությունները մասնակի են:



Ստացված 81 դիմում-բողոքներից 34-ի դեպքում ընտանեկան բռնության տեսակի վերաբերյալ ուղղակի մատնանշում չի արվել, 32-ի դեպքում արձանագրվել է ֆիզիկական բռնություն, որից 7-ը զուգորդվել է տնտեսական բռնությամբ, 7-ը զուգորդվել է հոգեբանական բռնությամբ, 3-ը սեռական բռնությամբ, 17-ի դեպքում արձանագրվել է հոգեբանական բռնություն, 10՝ տնտեսական բռնություն, 3՝ սեռական բռնություն, 1-ի՝ անտեսում:



Դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ 81 դիմում-բողոքներից 3-ի դեպքում բռնություն գործադրողը ունեցել է հոգեկան առողջության խնդիր, 2-ը օգտագործել են թմրանյութեր, 2-ը ալկոհոլի ազդեցության տակ են եղել:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ըստ դիմումատուների հայտնած տվյալների՝ ստացված 81 դիմում-բողոքներից 13-ի դեպքում ընտանեկան բռնությունը եղել է շարունակական, իսկ մնացած դեպքերում այդ մասին տվյալներ չեն ներկայացվել:

Ներկայացված դիմում-բողոքներից 1-ի դեպքում արձանագրվել է ընտանեկան բռնության գործադրում երեխաների ներկայությամբ, այսինքն՝ երեխաները ենթարկվել են անուղղակի բռնության: Երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնության գործադրման մասին տվյալներ մնացած դեպքերում չեն արձանագրվել: Միևնույն ժամանակ, նշվածը բավարար չէ այն պնդման համար, որ այդ դեպքերում ընտանեկան բռնության գործադրմանը երեխաներ ներկա չեն գտնվել:

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք դիմել են ՆԳՆ ոստիկանություն ստացված 96 դիմում-բողոքներից 28-ի դեպքում[330]: Ընտանեկան բռնության վերաբերյալ բարձրացված հարցերով 81 դիմում-բողոքներից 30-ով ահազանգել է անձամբ ընտանեկան բռնության ենթարկված անձը: Մնացած դիմում-բողոքներով դիմել են բռնության ենթարկված անձի ազգականներ, ընկերներ, փաստաբան, հասարակական կազմակերպություն, ականատես անձինք և այլն:

Պաշտպանին հասցեագրված 81 դիմում-բողոքների աշխարհագրական տեղակայվածության առումով հարկ է նշել, որ 10 դիմում-բողոքներով բողոք ներկայացրած անձինք հասցե չեն նշել: Մնացած 71 դիմում-բողոքներից 38-ի դեպքում ընտանեկան բռնությունը տեղի է ունեցել Երևանում, իսկ 33-ի դեպքում՝ մարզերում:



[330] Հարկ է նկատել, որ ներկայացված դիմում-բողոքների մեծամասնությամբ ՆԳՆ ոստիկանություն դիմած լինելու տեղեկատվությունը չի նշվել: Այս ցուցանիշը ներառում է նաև այն դեպքերը, երբ անձն արդեն իսկ դիմած է լինում Ոստիկանություն, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի հիման վրա բռնարարի նկատմամբ կայացված է լինում պաշտպանական որոշում կամ անհետաձգելի միջամտության որոշում, սակայն քաղաքացին բարձրաձայնում է ընտանեկան և կենցաղային բռնության խնդրով պայմանավորված այլ՝ իրավական, սոցիալական և հոգեբանական աջակցության հարցեր:

Հարաբերությունների բնույթ	Դեպքերի քանակ[331]
Տղամարդու կողմից ամուսնու (կնոջ) նկատմամբ	22
Կնոջ կողմից ամուսնու (տղամարդու) նկատմամբ	2
Նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ	5
Նախկին ամուսնու (կնոջ) կողմից տղամարդու նկատմամբ	1
Փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող տղամարդու (զուգընկերոջ) կողմից ամուսնու (կնոջ) նկատմամբ	2
Ծնողի կողմից զավակի նկատմամբ	24
Կինը ամուսնու մոր նկատմամբ	1
Զավակի կողմից ծնողի նկատմամբ	8
Եղբոր կողմից քրոջ նկատմամբ	2
Քրոջ կողմից քրոջ նկատմամբ	1
Թոռան կողմից պապի նկատմամբ	1
Թոռան կողմից տատի նկատմամբ	1
Տատի կողմից թոռան նկատմամբ	2
Ամուսնու քրոջ կողմից (հարսի) նկատմամբ	2
Ամուսնու (փեսայի) կողմից կնոջ քրոջ նկատմամբ	2
Ամուսնու եղբոր կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	1
Ամուսնու ծնողի (սկեսուրի) կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	1
Ամուսնու (փեսայի) կողմից կնոջ ծնողի նկատմամբ	1
Ամուսնու կողմից կնոջ եղբոր նկատմամբ	1
Հարաբերությունների բնույթի մասին դիմումատուն տվյալ չի ներկայացրել	19

Ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ դիմում-բողոքներով բարձրացվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակներն ու միջոցները, ՆԳՆ ոստիկանության գործողությունների կամ անգործության հետ կապված բողոքները, ընտանեկան և կենցաղային բռնության

[331] Հարկ է նշել, որ դիմում-բողոքների ընդհանուր քանակի և դեպքերի քանակի տարբերությունը պայմանավորված է նրանով, որ բողոքների մի մասը բազմադրվագ է եղել՝ թե՛ բռնության գործադրման, թե՛ սուբյեկտային կազմի առումով: Սույն աղյուսակը կազմվել է ըստ հարաբերության բնույթի՝ դրվագների առանձին-առանձին մատնանշմամբ:

ենթարկվելու հետևանքով ապաստարանում տեղավորվելու հնարավորությունը և այլ հարցեր:

<u>Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ոլորտում արձանագրված խնդիրները.</u>

1. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման հարցը

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրացնում է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման անհրաժեշտության հարցը: Կոնվենցիան ստորագրվել է 2018 թվականի հունվարի 18-ին, սակայն մինչ օրս չի վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն իր՝ Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 1-ի եզրափակիչ դիտարկումներում[332] առաջարկել է Հայաստանի Հանրապետությանը վավերացնել Կոնվենցիան, որի նպատակն է վերջ դնել կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը և երաշխավորել բռնությունից զերծ կյանքով ապրելու՝ կանանց հիմնարար իրավունքը:

ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ կոնվենցիայի վավերացման հարցը քննարկման փուլում է:

2. Ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական կարգավորումների թերություններ

Ոլորտում շարունակում են առկա լինել որոշ օրենսդրական բացեր և թերի կարգավորումներ՝ չնայած նախաձեռնված օրենսդրական փոփոխություններին.

• «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կայացվում[333]:

Հաշմանդամություն հիմքով անձանց քրեական պատասխանատվությունից ինքնաբերաբար ազատելը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը համարել է խտրական և անօրինական: Փոխարենը, հանցակազմի սուբյեկտիվ կողմին վերաբերող դրույթները պետք է հաշմանդամության առումով չեզոք լինեն և հաշվի առնեն կոնկրետ անձի դրությունը: Քրեական իրավունքի ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության ճանաչումը

---

[332] Հասանելի է https://docs.un.org/en/CEDAW/C/ARM/CO/7 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[333] Տե՛ս առավել մանրամասն, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, էջ 1073-1077:

պահանջում է վերացնել նրանց պաշտպանությունը՝ հիմնված հոգեկան և մտավոր հաշմանդամության հիմքով քրեական պատասխանատվությունը մերժելու վրա[334]:

Այսպիսով, ընտանեկան և կենցաղային բռնության գործերով բռնություն գործադրած անձի իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու մոտեցումը հակասում է միջազգային չափանիշներին, քանի որ կանանց կյանքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքները չեն կարող ստորադասվել բռնություն գործադրողի իրավունքներից: Ասվածը բխում է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի դիրքորոշումից, համաձայն որի՝ կանանց կյանքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքները չեն կարող ստորադասվել բռնություն գործադրողի իրավունքներից[335]:

• Բացակայում է ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Չնայած «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակված լինելուն՝ մինչ օրս այն չի ընդունվել: Նախագծի ռազմավարական ծրագրի գենդերային քաղաքականության իրականացման 5-րդ գերակայությունը վերաբերում է գենդերային բռնության և խտրականության կանխարգելմանն ու հաղթահարմանը, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությանն ու աջակցությանը: Նշված գերակայության նպատակն է խթանել ավելի ապահով և անվտանգ միջավայրի ստեղծմանը, բացառել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը, իրականացնել բռնության դեմ պայքարին և կանխարգելմանը միտված համալիր միջոցառումներ, լավարկել բռնության ենթարկված անձանց աջակցության ու պաշտպանության մեխանիզմները: Գերակայությամբ նախատեսվել են տարբեր միջոցառումներ՝ այդ թվում նաև հանրային իրազեկման մեծածավալ արշավներ, մասնագիտական վերապատրաստումներ, օրենսդրական փոփոխություններ, տարաբնույթ հետազոտություններ և ուսումնասիրություններ:

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի վավերացմանն ուղղված աշխատանքների կատարումը ևս ներառվել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ռազմավարական ծրագրի 5-րդ գերակայության շրջանակում նախատեսված միջոցառումների թվում: Նշվածն իր հերթին առավել օրակարգային է դարձնում ռազմավարական փաստաթղթի հրատապ ընդունման հարցը:

---

[334] Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/hrcouncil/docs/10session/A.HRC.10.48.pdf հղումով, կետ 47, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[335] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե CEDAW/C/39/D/6/2005*, կետ 12.1.5, հասանելի է https://opcedaw.files.wordpress.com/2012/01/yildirim-v-austria.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պետք է նշել, որ ընտանեկան բռնության դեմ պայքարում 2024 թվականի ընթացքում իրականացվել են օրենսդրական փոփոխություններ և Պաշտպանի կողմից նախորդ տարիներին ներկայացված մի շարք առաջարկներ իրացվել են ու արդյունքում բարձրացված բազմաթիվ խնդիրներ ստացել են իրենց լուծումները:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ իր նախորդ տարեկան հաղորդումներում արձանագրված խնդիրների հիման վրա օրենսդրական փոփոխությունների առնչությամբ ներկայացրել է մի շարք առաջարկներ, որոնց ի կատարումն՝ արդյունքում հստակեցվել են ոլորտի օրենսդրությամբ ամրագրված սահմանումները և ոլորտը կարգավորող հիմնական օրենքի մի շարք հասկացություններ համապատասխանեցվել են ՀՀ քրեական օրենսգրքի սահմանումներին, նույն օրենքով կարգավորման ենթարկվել նաև զուգընկերային հարաբերությունները, վերանայվել են անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշման իրականացման, դրանց ուժի մեջ մտնելու և ծանուցման ժամկետները, ՀՀ քրեական օրենսգրքով որպես քրեորեն պատժելի արարք է սահմանվել հետամտումը և այլն:

3. Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և իրազեկման պակաս, անվստահություն պետական մարմինների նկատմամբ, ոչ բավարար մասնագիտական պատրաստվածություն

Հասարակությունում կանանց նկատմամբ ու ընտանեկան բռնության վերաբերյալ թյուր ընկալումները, պատկերացումներն ու կարծրատիպերը, որոնք ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում մեծագույն մարտահրավերներից են, շարունակում են արմատավորված մնալ: Կարծրատիպային մտածելակերպը բացասաբար է ազդում բռնության ենթարկված անձի կողմից բռնության դեպքերի մասին բարձրաձայնելու և իր իրավունքների պաշտպանության համար քայլեր ձեռնարկելու և բռնության կանխարգելման հարցերում:

Խնդիրը շարունակում է արդիական մնալ նաև Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքների հիման վրա: Ընդ որում՝ դիմում-բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խտրական մոտեցումներն ու կարծրատիպերը արմատավորված են ողջ հասարակությունում՝ ընդգրկելով հասարակության բոլոր շերտերը, այդ թվում՝ բռնության դեպքերին արձագանքելու պարտականություն ունեցող խմբերին:

Արձանագրվել են իրավասու մարմինների կարծրատիպային մոտեցումներով պայմանավորված մասնագիտական ոչ պատշաճ վարքագծի դեպքեր, երբ, օրինակ, ընտանեկան բռնության ենթարկված անձին Ոստիկանության ծառայողները հորդորել են դիմում և հաղորդում չներկայացնել՝ պայմանավորված այդպիսի հասարակությունում տարածված ընկալումներով:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր 7-րդ պարբերական զեկույցում ընտանիքում ու հասարակությունում կանանց և տղամարդկանց դերերի ու պարտականությունների վերաբերյալ խտրական կարծրատիպերը մտահոգիչ է համարել[336]:

---

[336] Հասանելի է https://docs.un.org/en/CEDAW/C/ARM/CO/7 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն ընդգծել է հանրության իրազեկվածության բարձրացման աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը՝ ուղղված սեռով պայմանավորված բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության քրեական բնույթի վերաբերյալ: Կոմիտեն արձանագրել է նաև, որ կարևոր է, որ կանայք հնարավորություն ունենան դիմելու պաշտպանության միջոցների առանց ճնշման, խարանի կամ կրկնակի զոհականացման ենթարկվելու վախի[337]:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ բռնության ենթարկված անձի կողմից բռնության դեպքերի մասին չբարձրաձայնելու և իր իրավունքների պաշտպանության համար քայլեր չձեռնարկելու պատճառներից մեկն էլ պետության կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության բացակայությունն է:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2024 թվականի ընթացքում իրականացվել են ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների վերապատրաստման տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ.

- «Ընտանիքում բռնության դեմ պայքարի օրենսդրությունը, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության մեխանիզմները և վերոնշյալ անձանց հետ տարվող աշխատանքներն ու մեթոդները» թեմայով վերապատրաստում Միասնական սոցիալական ծառայության մասնագիտական ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների շուրջ 30 աշխատողների համար,
- «Սեռական բռնության դրսևորումները, տեսակները, առանձնահատկությունները (նաև երեխաների հանդեպ), դրանց հաղթահարման ուղիները և ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումները» թեմայով վերապատրաստում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող հաստատությունների շուրջ 30 աշխատակիցների համար,
- ընտանեկան բռնության դինամիկայի, գնահատման և հետազոտման գործիքների, ապացույցների վրա հիմնված միջամտությունների, էթիկական պրակտիկաները, ինչպես նաև սոցիալական աշխատողների ինքնախնամքը՝ բռնությունից տուժածների հետ աշխատելիս[338] և այլ թեմաներով վերապատրաստումներ ու իրազեկման աշխատանքներ ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցման կենտրոնների և ապաստարանի աշխատակիցների ու այլ ոլորտային մասնագետների համար:

---

[337] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, 2022 թվականի նոյեմբերի 1, CEDAW/C/ARM/CO/7, 26 կետ:

[338] Հասանելի է https://www.facebook.com/WomensSupportCenter/posts/pfbid02QR44pnhFsrWVepJFUKxPYNxfnbLj26uKTcAPX3XNkPhNjpS6gyZb1Z2hSrGYd5BDI, https://www.facebook.com/WomensSupportCenter/posts/pfbid029KWtszz58uP6yWxm1Px2HSoDmiSVErKZ9sSXWjFpJETcoJ8ADNNCcwoxxfuKmXBrl հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

• «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը ու դրա դեմ պայքարը» և «Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները» ծրագրերի շրջանակներում վերապատրաստման դասընթաց ՀՀ քննչական կոմիտեում 113 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար:

• Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթների իրականացման համար 795 վերապատրաստման դասընթաց՝ 16.951 ուսուցիչների և աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների համար:

• «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» թեման ընդգրկված է եղել 2023-2025 թվականների ՀՀ ԿԳՄՍ նախարարության ՀՄԿ-ի և ՏՄԱԿ-ի պարտադիր վերապատրաստման ծրագրերում:

Հասարակության մեջ կարծրատիպային մոտեցումները կոտրելու ու սեռով պայմանավորված կարծրատիպերի վերհանման և դրանց փոփոխության ենթարկելու ուղղությամբ տարվել են հետևյալ աշխատանքները.

• «Գենդերային բաղադրիչի ներառումը ուսուցիչների՝ ներառող դասավանդման կարողությունների շարունակական զարգացման համատեքստի մեջ» թեմայով վերապատրաստում 127 դպրոցներում 2.237 մանկավարժի համար,

• ստեղծել է «Գենդեր-արձագանքող ուսուցումը դպրոցում» ուսուցիչների համար առցանց դասընթացը, որի շրջանակում մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը վերապատրաստվել է 50 վերապատրաստողների վերապատրաստող,

• ստեղծվել է նաև «Գենդերազգայուն կրթությունը դպրոցում» դասընթացը, որով վերապատրաստվել է 1.050 մանկավարժական աշխատող,

• ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ոլորտում ոստիկանության իրավասու ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացման ու ուժեղացման նպատակով վերապատրաստման դասընթացներ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների թվով 14 ղեկավար կազմի և 10 ծառայողների համար, համայնքային ոստիկանության թվով 1700 ծառայողների համար

• ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի քննության, այդ թվում՝ բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու թեմայով վերապատրաստման դասընթաց Արդարադատության ակադեմիայում դատախազների համար:

4. Պետության կողմից տրամադրվող համալիր ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության խնդիրներ

Ընտանեկան և կենցաղային բռնության բռնության դեմ պայքարի մասն են կազմում բռնության դեպքերին արագ և բազմամասնագիտական արձագանքը, ընտանեկան և կենցաղային բռնությունից տուժած անձանց ինչպես իրավական, այնպես էլ հոգեբանական ու սոցիալական աջակցության հարցերի լուծումն ու այլ համալիր աշխատանքներ: 2024 թվականի ընթացքում արդիական է մնացել բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվող լիարժեք աջակցության հարցը՝ ապաստարանների ծառայության մատչելիության, ինչպես նաև ապաստարանների քանակն ընդլայնելու ու ապաստարանների ծառայության առկայությունը հանրապետության ողջ տարածքում ապահովելու հարցը:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն այս առնչությամբ ևս բարձրացրել է պետության ողջ տարածքում բավարար ու հասանելի ապաստարանների առկայության, տրամադրվող ծառայությունների, այդ թվում՝ հոգեբանական, տնտեսական աջակցության հասանելիության հարցերը[339]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 364-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի առնչությամբ ներկայացրել է նկատառումներ՝ անդրադառնալով, այդ թվում, ապաստարաններում շահառուների բավարար կենսաապահովման պայմանների երաշխավորման անհրաժեշտությանը:

««Աջակցության կենտրոնի գործունեությանը, մատուցվող ծառայություններին և անձնակազմին ներկայացվող պահանջները և աջակցության կենտրոնի կողմից ծառայությունների մատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմը ևս ներկայացրել է իր նկատառումները, որոնք վերաբերել են անչափահասների կողմից աջակցության կենտրոններին դիմելու կարգավորումներին, որոնց արդյունքում նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Պաշտպանի աշխատակազմի կողմից կատարված հարցումներին ի պատասխան՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշել է, որ 2024 թվականի ընթացքում ՀՀ-ում շարունակել են գործել ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց 2 ապաստարաններ, որոնց ծառայություններից, 2024 թվականի վիճակագրական տվյալների համաձայն, օգտվել է 274 անձ: 2024 թվականի ընթացքում Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում իրենց գործունեությունն են շարունակել նախարարության կողմից ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնի ծառայություններ մատուցող պատվիրակված հասարակական կազմակերպությունները: 2024 թվականի ընթացքում ծառայություններ են մատուցվել 1948 անձի:

Ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարում միջգերատեսչական համագործակցության բացերն արձանագրվել են ինչպես իրավակիրառ պրակտիկայում Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքներով, այնպես էլ օրենսդրական թերի կառուցակարգերի՝ բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման թերի կարգավորվածության համատեքստում: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2023 թվականին կարծիք է ներկայացվել «Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ, որը 2024 թվականի ընթացքում ևս չի ընդունվել:

---

[339] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, 2022 թվականի նոյեմբերի 1, CEDAW/C/ARM/CO/7, 26 կետ:

Հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում միջգերատեսչական համագործակցության խնդիրները բարձրացվել են նաև ոլորտի իրավասու մարմինների կողմից, որին ի պատասխան՝ 2025 թվականի ընթացքում ստեղծվել է Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերին օպերատիվ արձագանքի խթանման միջգերատեսչական աշխատանքային խումբ:

5. Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն

Իրավասու տարբեր մարմիններից ստացված 2024 թվականի վիճակագրական տվյալները ցույց են տալիս հետևյալ պատկերը.

<u>ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ստացված տեղեկություններ.</u>

2024 թվականի ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնության 1360 դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաձեռնված վարույթներով՝ 225 անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, նշված անձանցից 199-ի վերաբերյալ՝ 234 դեպքի կապակցությամբ, քրեական վարույթի նյութերը հանձնվել են դատարան: 34 դեպքի կապակցությամբ 26-անձի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ այն դադարեցվել է, որից 24 դեպքով ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի կիրառմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով, իսկ 10 դեպքի կապակցությամբ քննությամբ պարզվել է, որ կատարվածն ընտանեկան կամ կենցաղային բռնության դեպք չէ, որի պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի կիրառմամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով քրեական հետապնդում չի իրականացվել կամ այն դադարեցվել է: Անձի վերաբերյալ քրեական հետապնդման ժամկետի կասեցման մասին հաշվառում չի իրականացվում:

Ընտանեկան և կենցաղային բռնության 1360 դեպքից 50-ը եղել է կենակցի կողմից, ամուսնու կողմից կնոջ նկատմամբ եղել է 549, նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ եղել է 142, կնոջ կողմից ամուսնու նկատմամբ եղել է 27, ծնողի կողմից զավակի նկատմամբ եղել է 100, զավակի կողմից ծնողի նկատմամբ եղել է 142, ընտանիքի այլ անդամների կողմից եղել է 350 դեպք:

Քննված ընտանեկան և կենցաղային բռնության 1360 դեպքից 1125-ը՝ ֆիզիկական, 207-ը՝ հոգեբանական, 24-ը՝ սեռական բռնության և 4-ը՝ տնտեսական բռնության դեպքեր են եղել:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հաշվառում ըստ տարիքի չի տարվում:

2024 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ստացված ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ ահազանգերով ոստիկանության իրավասու ծառայողները 574 ահազանգով կայացրել են նախազգուշացում, իսկ 1270-ով՝ անհետաձգելի միջամտության որոշում: Բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացված 574 նախազգուշացման որոշումից 32-ի դեպքում բռնությունը կրել է շարունակական բնույթ: Նշված բոլոր դեպքերով բռնություն գործադրած անձանց նկատմամբ հաշվառումը շարունակվել է: Կայացված 1844 պաշտպանության միջոցներից խախտվել է 141-ը, որից՝ 70-ի խախտման մասին ոստիկանությանը հայտնել է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը, իսկ 71-ը՝ հայտնաբերվել է ոստիկանության ծառայողի կողմից:

Գլխավոր դատախազությունից ստացված տեղեկություններ.

2024 թվականի ընթացքում արձանագրվել է ընտանեկան և կենցաղային բռնության (ընտանիքում բռնության) 25 դեպք, որից 14-ը կնոջ նկատմամբ, ընդ որում՝ 8-ը աշխատանքային շահագործման, 6-ը սեռական շահագործման դեպք, իսկ 2 դեպքում՝ երեխայի նկատմամբ սեռական շահագործում, 1 դեպքում՝ երեխայի նկատմամբ աշխատանքային շահագործում:

ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկություններ.

2024 թվականի ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնության (ընտանիքում բռնության) դեպքերով ՀՀ քննչական կոմիտեում քննվել է 2309 քրեական վարույթ, որից 2024 թվականի ընթացքում նախաձեռնվել է 1510 քրեական վարույթ, 5 քրեական վարույթից անջատված մաս, 24 քրեական վարույթ ստացվել է այլ մարմիններից, 1 բժշկական հարկադրանքի վարույթ, 2 լրացուցիչ քննության վերադարձված քրեական վարույթ և 6 քրեական վարույթ վարույթների կարճումը վերացված լինելու հիմքով:

Նշված քրեական վարույթներից՝

- 405 քրեական վարույթ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան,
- 735 քրեական վարույթ կարճվել է, որոնցից 663-ը՝ ռեաբիլիտացնող հիմքով, իսկ 72-ը՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով,
- 57 քրեական վարույթով քրեական հետապնդման ժամկետները կասեցվել են, որից 37-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, իսկ 20-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով:

Ընտանեկան և կենցաղային բռնության (ընտանիքում բռնության) դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով, ըստ հոդվածների, վարույթային հաշվառումներ չեն իրականացվել:

2024 թվականի ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար 10 դեպքով կիրառվել են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով նախատեսված պաշտպանության միջոցները, որոնցից 9 դեպքով հիմք է հանդիսացել պաշտպանվող անձի գրավոր դիմումը, իսկ մեկ դեպքով պաշտպանական միջոց է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ: Պաշտպանական միջոց կիրառելու վերաբերյալ պաշտպանվող անձի դիմումի մերժում չի եղել:

Մինչդեռ, Պաշտպանն ընդգծում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության իրական պատկերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վարել ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի միասնական և կենտրոնացված վիճակագրություն, որի անհրաժեշտությունն ընդգծվել է նաև ՀՀ կողմից ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններով:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն՝ իր թիվ 9 Ընդհանուր հանձնարարականում կարևորել է այն հանգամանքը, որ վիճակագրական տվյալները բացարձակապես անհրաժեշտ են կանանց իրական վիճակը հասկանալու համար և խորհուրդ է տվել մասնակից պետություններին ապահովել, որ իրենց ազգային վիճակագրական մարմինները, որոնք պատասխանատու են ազգային մարդահամարի և այլ սոցիալ-տնտեսական հետազոտությունների պլանավորման համար, նախագծեն իրենց հարցաթերթերը այնպես, որ տվյալները հնարավոր լինի

բաժանել ըստ սեռի՝ թե՛ բացարձակ թվերով, թե՛ տոկոսներով: Այսպիսով, շահագրգիռ օգտատերերը կարող են հեշտությամբ տեղեկատվություն ստանալ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակի մասին[340]:

Ներկայացվածի հետ մեկտեղ, 2024 թվականի ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի միասնական և կենտրոնացված վիճակագրության բացակայությանը հարցը մնացել է արդիական:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2024 թվականի նոյեմբերի 21-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը՝ ուղղված ընտանեկան և կենցաղային բռնության բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման արդյունավետ իրականացման էլեկտրոնային համակարգի ներդրմանը: Որոշմամբ վերանայվել է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման համար տեղեկություններ տրամադրող մարմինների շրջանակը, ինչպես նաև մարմինների կողմից ներկայացվող տեղեկությունների շրջանակը և այլն: Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման համակարգը դրվել է պիլոտային փորձարկման:

Չնայած ոլորտում կատարված աշխատանքներին՝ Պաշտպանն ընդգծում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի շրջանակներում վերը արձանագրված համակարգային խնդիրները վկայում են շարունակական ջանքերի գործադրման անհրաժեշտության մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան,***
- ✓ ***կազմակերպել համապատասխան մասնագետների (ոստիկանության ծառայողներ, քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ բռնության վերացման և դրա դեմ պայքարի ու կանխարգելման ՀՀ օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք նաև ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացմանը,***
- ✓ ***բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ,***
- ✓ ***վարել ընտանեկան և կենցաղային բռնության բռնության դեպքերի միասնական, կենտրոնացված ու համակարգված վիճակագրություն՝ ապահովելով այդպիսի դեպքերին առնչվող տվյալների ճշգրիտ ու ամբողջական հաշվառումը,***

---

[340] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե Ընդհանուր հանձնարարական, հասանելի է https://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm#recom9 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

✓ լավարկել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ բարելավել աջակցության կենտրոնների գործունեությունը, ընդլայնել ապաստարանների քանակն ու ապահովել ապաստարանների ծառայության առկայությունը հանրապետության ողջ տարածքում,

✓ ընդունել պետական ռազմավարություն և դրան կից գործողությունների ծրագիր ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, դրա դեմ պայքարի և բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար,

✓ շարունակական աշխատանքներ տանել հասարակության իրազեկվածության բարձրացման ուղղությամբ՝ սեռով պայմանավորված կարծրատիպերի վերափոխման նպատակով:

2. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին

Կանանց՝ քաղաքական և հասարակական կյանքում մասնակցության խթանումը Մարդու իրավունքների պաշտպանի 2024 թվականի գործունեության հիմնական ուղղություններից է եղել:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանն ուղղված իր աշխատանքները ծավալել է ինչպես անձամբ, այնպես էլ Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի աջակցությամբ ու տարբեր միջգերատեսչական հանձնաժողովներում ու աշխատանքային խմբերում աշխատակազմի ներկայացուցիչների ներգրավմամբ:

Պաշտպանի աշխատակազմի հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչները 2024 թվականի ընթացքում ներգրավված են եղել նաև ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքներում ու «Կանանց քաղաքական մասնակցություն» ընդլայնված թեմատիկ խմբում:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը և հաստատության ներկայացուցիչները մասնակցել են քաղաքական և հասարակական կյանքին կանանց մասնակցությանն ուղղված մի շարք միջոցառումների, տարբեր հարթակներում ներկայացրել առկա խնդիրները, քաղաքական և հասարակական կյանքում կանանց մասնակցության խթանմանն ուղղված Պաշտպանի կատարած աշխատանքները, ինչպես նաև կանանց քաղաքական և հասարակական կյանքին ներգրավվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացման անհրաժեշտությանը.

• 2024 թվականի ապրիլի 16-ին Պաշտպանը հիմնական ելույթով է հանդես եկել Միջազգային հանրապետական ինստիտուտի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Կին առաջնորդների թիրախավորումն առցանց հարթակներում» թեմայով պանելային քննարկմանը՝ շեշտելով հանրային համերաշխության բացառիկ կարևորությունը իրավահավասարության և հանդուրժողականության երաշխավորման համար և ընդգծելով կրթական համակարգի բարեփոխման ուղղությամբ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը[341]:

• 2024 թվականի մայիսի 22-ին Պաշտպանը մասնակցել է ԱՄՆ ՄՋԳ/Հայաստանի կողմից կազմակերպված կանանց դերի և ներգրավվածության բարձրացմանը նվիրված «Կին առաջնորդները արդարադատության ոլորտում. արդարության ձևավորում կանանց ներառման միջոցով» խորագրով պանելային

[341] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2924 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

քննարկմանը: Քննարկման շրջանակներում Պաշտպանն ընդգծել է, որ հավասար հնարավորությունների երաշխավորումը, որոշումների կայացման գործընթացում կանանց ներգրավվածության ապահովումը, հասարակական և քաղաքական կյանքում կանանց ներուժի խթանումը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերներից են ոչ միայն Հայաստանում, այլև՝ ամբողջ աշխարհում: Այս համատեքստում Պաշտպանը շեշտել է, որ մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգ ձևավորելու հարցում նշված խնդիրների հաղթահարումն ունի առանցքային նշանակություն[342]:

• 2024 թվականին կանանց միամսյակի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը կանանց իրավունքների վերաբերյալ հարցազրույցի շրջանակներում խոսել է կնոջ դերի առնչությամբ պատշաճ ընկալում ձևավորելու ու հասարակական և քաղաքական կյանքում կանանց ներուժը խթանելու մասին[343]:

• 2024 թվականի մայիսի 23-ին Պաշտպանը «Ժամանակն է գործելու. կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում» խորագրով ամփոփիչ համաժողովի շրջանակներում մասնակցել է պանելային քննարկման, որի շրջանակներում ընդգծել է, որ յուրաքանչյուրն իր օրինակով պետք է նպաստի համերաշխ հասարակական միջավայրի ձևավորմանը, կանանց հնարավորությունների ամրապնդմանն ու նրանց իրավունքների խթանմանը՝ ոչ միայն բացառելով թիրախավորում ու խտրականություն ենթադրող որևէ վարքագիծ, այլ նաև հակազդելով նման ցանկացած դրսևորմանը[344]:

• 2024 թվականի հուլիսի 26-ին Պաշտպանը հիմնական ելույթով է հանդես եկել նաև «Կանանց մասնակցության խթանումը քաղաքական և քաղաքացիական կյանքում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Առաջնորդությունը որպես փոփոխությունների վրա ազդելու միջոց» թեմայով քննարկմանը, որի նպատակն է եղել բարելավել երիտասարդ կանանց և աղջիկների ակտիվ ներգրավվածությունը ժողովրդավարական գործընթացներում: Պաշտպանը խոսել է ոլորտում առկա մարտահրավերների մասին՝ անդրադառնալով նաև այն մարտահրավերներին, որոնց ինքն է բախվել իր գործունեության ընթացքում[345]:

• 2024 թվականի օգոստոսի 5-ին Պաշտպանը Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբի հետ համատեղ այց է իրականացրել Տավուշի մարզ, որի

[342] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2978 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[343] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/1041 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[344] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2982 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[345] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3073 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

շրջանակներում Պաշտպանն անդրադարձել է գոյություն ունեցող կարծրատիպերը հաղթահարելու, կնոջ դերի առնչությամբ պատշաճ ընկալում ձևավորելու ու հասարակական և քաղաքական կյանքում կանանց ներուժը խթանելու հարցերին[346]:

• Պաշտպանը 2024 թվականի հոկտեմբերի 4-ին մասնակցել է «Գլոբալ անապահովությունից դեպի ընդհանուր անվտանգություն. կանանց դերը խաղաղության կառուցման գործում» 14-րդ միջազգային կոնֆերանսին՝ ուղղված կանանց ակտիվ ներգրավվածությունը ժողովրդավարական գործընթացներում բարելավելուն[347]:

• Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 հոկտեմբերի 30-ին մասնակցել է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող և ԱԺԻ կողմից իրականացվող «ԿԱՏԱՐԻՆԵ համայնք կամրջողներ» ծրագրի ավարտական միջոցառմանը և համաժողովին, որի ընթացքում Գյումրիի, Ճամբարակի և Արտաշատի ԿԱՏԱՐԻՆԵ համայնք կամրջողները ներկայացրել են իրենց իրականացրած ծրագրերը՝ միտված համայնքներում առկա խզվածքները հաղթահարելուն[348]:

• 2024 թվականի նոյեմբերի 23-ին Պաշտպանը մասնակցել է «Կատարինե-Տավուշ» թիմի կանանց քաղաքական առաջնորդության համաժողովին և որպես բանախոս հանդես է եկել «Կանանց իրավունքների խթանումը՝ որպես գենդերային հավասարության երաշխիք» թեմայով[349]:

• 2024 թվականի նոյեմբերի 29-ին Պաշտպանը ողջույնի խոսքով է հանդես եկել Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության նախաձեռնած Ֆեմինիզմը գործողության մեջ հանուն համակարգային փոխակերպման (ՖԱՍԹ) ծրագրի բացման միջոցառմանը՝ անդրադառնալով իրավահավասարության և հակախտրականության ոլորտում առկա խնդիրներին ու այդ ուղղությամբ կրթական համակարգի բարեփոխումների անհրաժեշտությանը[350]:

• 2024 թվականի դեկտեմբերի 1-ին Պաշտպանը ելույթ է ունեցել Լիբերալ քաղաքականության ինստիտուտի կողմից կազմակերպված «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» ծրագրի շրջանակում, որի նպատակն է Հայաստանում խթանել

---

[346] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3078 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[347] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3118 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[348] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3172 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[349] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3184 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[350] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3185 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կանանց ներգրավվածությունը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում[351]:

• Պաշտպանը և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի փետրվարի 2-ին մասնակցել են «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Փոքրամասնությունների կանանց հզորացում Կանայք, խաղաղություն, անվտանգություն օրակարգի շրջանակներում. երկխոսություն ներառական գործողությունների համար» միջոցառմանը:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի նոյեմբերի 4-ին մասնակցել է Լիբերալ քաղաքականության ինստիտուտի կողմից կազմակերպված «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» կլոր սեղան-քննարկմանը:

• Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» թիվ 1325 բանաձևի «Հայաստանի Հանրապետության գործողությունների 2025-2027 թվականների ազգային ծրագրի» նախագծի մշակման աշխատանքներին և աշխատանքային հանդիպումներին:

• 2024 թվականի դեկտեմբերի 17-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ՄԱԿ ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի գործողությունների ազգային ծրագրի իրականացման մշտադիտարկման հարցերով զբաղվող հանձնաժողովի անդամների հետ կլոր-սեղան քննարկմանը:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի սեպտեմբերի 6-ին մասնակցել է Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամի կողմից կազմակերպված «Կանանց թիրախավորող առցանց ատելության խոսքը Հայաստանում. Մարտահրավերներ և լուծումներ» թեմայով պանելային քննարկմանը:

2024 թվականի ընթացքում Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Գենդերային հավասարության խթանում Հայաստանի իրավապահ համակարգում» ծրագրի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի և Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպանատան համագործակցության համատեքստում մշակվել են «Գենդերային հավասարության խթանում Հայաստանի իրավապահ համակարգում» զեկույցն ու կատարվել «ՀՀ իրավապահ համակարգում կին ծառայողների լիարժեք և հավասար մասնակցության, առաջխաղացման և նյութական աջակցության հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները» ուսումնասիրությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում ևս արձանագրել է Հայաստանի Հանրապետությունում հասարակական-քաղաքական կյանքում կանանց ոչ լիարժեք մասնակցության ու ներգրավվածության խնդիրը. խոչընդոտող գործոնները տարբեր են, ինչպես օրինակ՝ կանանց դերի, կարողությունների և հասարակական կյանքում նրանց ներգրավվածության շուրջ

[351] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3185 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

առկա կարծրատիպերը և խտրական ընկալումները, ինչի հետևանքով կանայք հաճախ չեն դիտարկվում որպես որոշում կայացնողներ, քաղաքականություն մշակողներ ու իրականացնողներ:

Գենդերային կարծրատիպերը և խտրականությունը աղջիկների և տղաների համար, որոնք առկա են նաև կրթական համակարգի բոլոր մակարդակներում, վճռորոշ դեր են ունենում մասնագիտական կողմնորոշման համատեքստում: Այս մասին է վկայում նաև ոլորտի քաղաքականություն մշակող իրավասու մարմինը[352]:

ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի կողմից Հայաստանի վերաբերյալ 7-րդ պարբերական զեկույց.
Կանայք շարունակում են չներկայացված լինել որոշումներ կայացնող պաշտոններում, բացառությամբ խորհրդարանի, որտեղ նրանք կազմում էին անդամների ավելի քան 33 տոկոսը՝ գենդերային քվոտայի կայուն աճի պատճառով: Հանձնաժողովն առաջարկում է կոնկրետ միջոցներ ձեռնարկել կանանց քաղաքական և տնտեսական մասնակցությունը խթանելու համար՝ գենդերային զգայուն բյուջետավորում և իրավապահ մարմիններում բարելավված քվոտաների համադրմամբ[353]:

Հայաստանում կանանց ներկայացվածությունը հասարակական և քաղաքական կյանքում, հատկապես՝ որոշումների կայացման գործընթացում շարունակել է ցածր մնալ, որի վերաբերյալ վկայում են ՀՀ տարբեր պետական մարմիններում աշխատող կանանց և տղամարդկանց սեռային հարաբերակցության պաշտոնական տվյալները: Ստորև ներկայացվում են ՀՀ վարչապետի աշխատակազմի, Ազգային ժողովի, Ներքին գործերի նախարարության, Քննչական կոմիտեի, Դատախազության և Բարձրագույն դատական խորհրդի կողմից փոխանցված տվյալները

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի իգական սեռի ներկայացուցիչները 2024 թվականին եղել են 141-ը, որը կազմում է ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 17.32%-ը, այդ թվում 88-ը՝ Երևան քաղաքում (քննիչների 18.7%-ը), իսկ 53-ը՝ մարզային ստորաբաժանումներում (քննիչների 15.4%-ը): 2024 թվականին ՀՀ քննչական կոմիտեում ծառայության նշանակվել է 117 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, որից 21-ը իգական սեռի ներկայացուցիչ: Վերոնշյալ ժամանակահատվածում Երևան քաղաքի ստորաբաժանումներում ծառայության նշանակվել են 15 իգական սեռի ներկայացուցիչներ (նշանակվածների 22.7 %-ը), 51՝ արական, իսկ մարզային ստորաբաժանումներում՝ 6 իգական (նշանակվածների 11.5 %-ը) և 46 արական սեռի ներկայացուցիչ:

Քննչական կոմիտեի փոխանցմամբ բոլոր ստորաբաժանումներում ներգրավված են իգական սեռի քննիչներ և նրանց թիվը բավարար է

---

[352] Հասանելի է https://www.e-draft.am/projects/6821/about հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[353] Տե՛ս ԿՆԽՎԿ-ի հանձնաժողովի, Հայաստանի վերաբերյալ 7-րդ պարբերական պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներ, 2022թ., պարբ. 14,: Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treaty bodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FSR.1913&Lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

համապատասխան հանցատեսակներով արդյունավետ նախաքննություն իրականացնելու համար:



2023-2024 թվականի ընթացքում կանանց և տղամարդկանց ներգրավվածության հարաբերակցությունը քաղաքացիական ծառայության պաշտոններում կրել է հետևյալ փոփոխությունները՝



Ազգային ժողովում կանանց և տղամարդկանց ներկայացվածության հարաբերակցությունը 2025 հունվարի 15-ի դրությամբ եղել է հետևյալը.



2025 թվականի հունվարի 8-ի դրությամբ Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարել է՝



ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայությունում կանանց ներգրավվածությունը՝ 11.4%.



ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների թվի սեռային բաշխվածությունը՝ ըստ պաշտոնների խմբերի



ՆԳՆ-ում հանրային ծառայության այլ տեսակներում ներգրավված անձանց թվաքանակը ըստ սեռերի բաշխվածության.



2024 թվականին ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնում նշանակված անձանց թվաքանակը Երևանում՝ ըստ սեռային բաշխվածության.



2024 թվականին ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնում նշանակված անձանց թվաքանակը մարզային ստորաբաժանումներում՝ ըստ սեռային բաշխվածության.



2024 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թվաքանակը՝ ըստ սեռային բաշխվածության.



2024 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թվաքանակը Երևանում՝ ըստ սեռային բաշխվածության.



2024 թվականին ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնում նշանակված անձանց թվաքանակը՝ ըստ սեռային բաշխվածության.



2024 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թվաքանակը մարզային ստորաբաժանումներում՝ ըստ սեռային բաշխվածության.



2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դատախազության համակարգում դատախազների տոկոսային բաշխվածությունը՝ ըստ սեռերի.



2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ գլխավոր դատախազության համակարգում դատախազների տոկոսային բաշխվածությունը՝ ըստ սեռերի.



2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազների տոկոսային բաշխվածությունը՝ ըստ սեռերի.



2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ մարզերի դատախազությունների դատախազների տոկոսային բաշխվածությունը՝ ըստ սեռերի.



2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազների տոկոսային բաշխվածությունը՝ ըստ սեռերի.



2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ մարզերի դատախազությունների դատախազների տոկոսային բաշխվածությունը՝ ըստ սեռերի.



ՀՀ դատախազության համակարգում կին դատախազների տոկոսային արտահայտությունն՝ ըստ դասային աստիճանների 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Արդարադատության 3-րդ դասի պետական խորհրդական	40%
Արդարադատության 1-ին դասի խորհրդական	15.2%
Արդարադատության 2-րդ դասի խորհրդական	17.6%
Արդարադատության 3-րդ դասի խորհրդական	14.2%
1-ին դասի խորհրդական	31.9%
2-րդ դասի խորհրդական	38.5%
3-րդ դասի խորհրդական	61.9%
ՀՀ դատախազության համակարգում կին դատախազների թիվն՝ ըստ պաշտոնների 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	
ՀՀ գլխավոր դատախազ և տեղակալներ	40%
Ստորաբաժանման ղեկավարներ	5.1%
Ստորաբաժանման ղեկավարի տեղակալ	10.2%
Ստորաբաժանման ավագ դատախազ	20.5%
Ստորաբաժանման դատախազ	29.3%

2024 թվականին նշանակված դատախազների 31.25 տոկոսը կին է եղել, իսկ 11 կին դատախազ ընդգրկվել է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում՝ նշանակվելով համապատասխան պաշտոնների:

Այսպիսով, ՀՀ դատական համակարգում 2024 թվականին ևս չի ապահովվել Եվրոպայի խորհրդի 2003 թվականի հանձնարարականում նախատեսվող 40%-ի կրիտիկական զանգվածը, ըստ որի՝ կանանց կամ տղամարդկանց ներկայացվածությունը քաղաքական և հանրային կյանքում որոշումներ կայացնող մարմիններում չպետք է 40%-ից պակաս լինի[354]:

Չնայած առկա որոշակի առաջընթացին՝ ՀՀ պետական տարբեր մարմիններում կանանց ներգրավվածության վերաբերյալ ներկայացված տվյալները շարունակում են մտահոգել կանանց՝ հատկապես ղեկավար, որոշում կայացնող պաշտոններում ցածր ներկայացվածության տեսանկյունից:

Մինչդեռ, կանանց ներգրավվածությունը հատկապես ղեկավար պաշտոններում առանցքային նշանակություն ունի վերջիններիս հասարակական և քաղաքական կյանքին լիարժեք մասնակցության ապահովման տեսանկյունից, որը բխում է նաև

[354] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականը քաղաքական և հանրային որոշումների կայացման մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին զեկույցը, 2003թ., հասանելի է https://rm.coe.int/1680519084 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

միջազգային չափանիշներից: Պեկինի Գործողությունների ծրագիրը բնորոշում է կառավարման մարմիններում կանանց առնվազն 30%-անոց ներկայացվածությունը որպես որոշումների ընդունման ընթացակարգերի և բովանդակության վրա ազդեցություն ունեցող «կրիտիկական զանգված», մինչդեռ Հայաստանում կանանց ներկայացվածության և որոշումների կայացման գործընթացում ներգրավվածության մասին վկայող պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ շատ մարմինների ղեկավար պաշտոններում ապահովված չէ կանանց առնվազն 30%-անոց ներկայացվածությունը:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման նպատակով 2024 թվականի ընթացքում Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում՝ աշխատանքի և զբաղվածության օրենսդրության, մասնագիտական ընտրության, աշխատանքի փոփոխության և զբաղվածության ծրագրերի վերաբերյալ խորհրդատվություն է ստացել 81595 անձ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի առաջին գերակայության շրջանակներում նախատեսվել են տարբեր միջոցառումներ՝ ուղղված պետական քաղաքականության և կառավարման բոլոր ոլորտներում գենդերային հավասարության հասնելուն, մասնավորապես՝ մասնակցային, ներառական և հասանելի քաղաքական դաշտ ապահովելուն, որտեղ կանայք և տղամարդիկ, կարող են ակտիվորեն և լիարժեք մասնակցել և հավասարապես նշանակալից ազդեցություն ունենալ կառավարման մակարդակում և որոշումների կայացման գործընթացների վրա:

Ներքին գործերի նախարարության ոստիկանությունում կանանց ներգրավվածությունն ավելացնելու նպատակով 2024 թվականին իրականացվել է նպատակային ընդունելություն: Նախատեսվել է ընդունելության ընդհանուր 368 տեղ, որից 299-ը (81,2 %) կանանց համար: Պարեկային ծառայության թափուր հաստիքների համալրման նպատակով հայտարարվել է ընդունելություն 2024 թվականի դեկտեմբերի 16-ից փետրվարի 17-ը, որով տեղերի գերակշիռ մասը հատկացվել է կանանց. միասնական ընդունելություն-մրցույթի համար հատկացվել է 239 տեղ, որից 190-ը իգական սեռի դիմորդներին:

Ըստ Ներքին գործերի նախարարության՝ Պարեկային ծառայությունում կին ծառայողների թեկնածուների լայն շրջանակ ապահովելու համատեքստում իրականացվել են իրազեկման արշավներ, պարեկային ծառայության շարքերը համալրելու ընդունելության գործընթացին ընդառաջ, նախաձեռնվել է կանանց առցանց նախագրանցման գործընթաց, որի նպատակը թեկնածուների թիվը որոշակիացնելը, կանանց դիմելիության համար խոչընդոտ հանդիսացող հանգամանքները գույքագրելն է եղել:

Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի տվյալների՝ քաղաքացիական ծառայության համակարգի բարձր պաշտոններում կանանց ներգրավվածության խթանման ուղղությամբ 2024 թվականի փետրվարի 10-11-ին ՄԱԶԾ «Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել Քաղաքացիական ծառայության

գրասենյակի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից համատեղ կազմակերպված «Դեպի գենդերազգայուն գործելակերպ» խորագրով սեմինար-քննարկումը, որի ընթացքում քննարկվել են գենդերային հավասարության կնիքի գործընթացին ու գործողությունների ծրագրին առնչվող մի շարք հարցեր:

Այսպիսով, պետական տարբեր մարմիններում կանանց ներկայացվածության մակարդակը շարունակում է մտահոգիչ մնալ, հատկապես՝ ղեկավար պաշտոններում, քանի որ կանանց ներգրավվածությունը որոշ մարմիններում, նույնիսկ, չի գերազանցում 30%-ը: Նշվածը պայմանավորված է հասարակության շրջանում առկա կարծրատիպերի, կանանց դերի և կարողությունների վերաբերյալ կարծրատիպային ընկալումների, խտրականության տարբեր դրսևորումների առկայության, կանանց նկատմամբ քննադատական վերաբերմունքի՝ կապված քաղաքական կամ ղեկավար դերեր ստանձնելու, ինչպես նաև կանանց մասնակցությունը խթանող լիարժեք կառուցակարգերի բացակայության հետ:

Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է երաշխավորել կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, հաղթահարել գոյություն ունեցող կարծրատիպերը, ձևավորել կնոջ դերի առնչությամբ պատշաճ ընկալում, ինչպես նաև խթանել հասարակական և քաղաքական կյանքում կանանց ներուժը:

Վերահաստատելով նախորդ տարեկան հաղորդումներում ներկայացված դիրքորոշումները և հաշվի առնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***հասարակությանը շարունակաբար իրազեկել կանանց դերի, կանանց քաղաքական ներգրավվածության և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորության մասին,***
- ✓ ***կանանց ներուժի լիարժեք, արդյունավետ և թիրախային օգտագործման համար ձևավորել պատշաճ կառուցակարգեր՝ թիրախային ծրագրերի իրականացում, օրինակ՝ խթանող միջոցառումների, կանանց առաջնորդության ծրագրերի իրականացում, քվոտաների նախատեսում և այլն,***
- ✓ ***բարձրացնել կանանց քաղաքական և իրավական գիտակցության մակարդակը, նպաստել երիտասարդ կանանց մոտ քաղաքական համակարգի, գործընթացների և արդյունավետ որոշումների ընդունման մեթոդաբանության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը, երաշխավորել քաղաքական մրցակցության հավասար պայմաններ,***
- ✓ ***զանգվածային լրատվության միջոցների, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ,***
- ✓ ***ապահովել ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումների ամբողջական կատարումը՝ կանանց լիարժեք և հավասար մասնակցությունն ընտրված և նշանակված մարմիններում խթանելու նպատակով միջոցներ ձեռնարկելու առնչությամբ,***
- ✓ ***կրթական ծրագրերում կիրառել գենդերային հավասարության, կանանց դերի վերարժևորման և կարծրատիպերի վերացմանն ուղղված մոտեցումներ:***

3. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ

2024 թվականի ընթացքում Պաշտպանի և Պաշտպանի աշխատակազմի կողմից կանանց առողջության պահպանման իրավունքի երաշխավորմանն ուղղված աշխատանքներ են իրականացվել տարբեր հարթակների ու գործիքների միջոցով, որոնք հանգում են հետևյալին.

• Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ 2024 թվականի փետրվարի 26-ին տեղի է ունեցել ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջության ու վերարտադրողական իրավունքի իրացման վերաբերյալ քննարկում: Ներկայացվել են փորձագետների կողմից իրականացված «Ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջությունն ու վերարտադրողական իրավունքը ՀՀ-ում» ուսումնասիրության արդյունքները[355]:

Ուսումնասիրության արդյունքներով՝ չնայած միջազգային ու ներպետական օրենսդրությամբ վերարտադրողական իրավունքի ամրագրմանն ու դրան առնչվող հարցերի կարգավորմանը՝ ներպետական օրենսդրությունում առկա կարգավորումները ամբողջ ծավալով չեն բավարարում ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջության պահպանման համար: Ներկայացվել են խնդիրների հաղթահարմանն ուղղված առաջարկություններ:

• 2024 թվականի ապրիլի 13-ին և 14-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման երկօրյա դասընթաց է անցկացվել Օվիեդոյի կոնվենցիայի վերաբերյալ, որի նպատակն է եղել բարձրացնել Եվրոպայի խորհրդի՝ կենսաբանության և բժշկության կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների և էթիկայի սկզբունքների վերաբերյալ ՄԻՊ աշխատակազմի կարողություններն ու հմտությունները: Դասընթացի ընթացքում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել վերարտադրողական առողջությանը, վերարտադրման տարիքային սահմաններին[356]:

• Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի հունիսի 10-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի ՀՀ Սահմանադրության 29-րդ,

---

[355] Հասանելի է https://ombuds.am/images/files/9fd2e8964cca25ae7fded45bfa866e44.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[356] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2914 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

30-րդ, 31-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցով, այնքանով, որքանով վիճարկման պահին գործող օրենսդրությամբ մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի համար սահմանված է եղել բացարձակ արգելք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող 53 տարին լրացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող 53 տարին լրացած կանանց համար[357]:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիմքում ընկել են ինչպես 2023-2024 թվականներին Պաշտպանին հասցեագրված դիմումները, այնպես էլ 2023 թվականին շրջանառված ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում արձանագրված խնդիրները, որոնք ներկայացվել են նաև Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում:

2024 թվականի ընթացքում կանայք խնդիրների են բախվել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորության բացակայությամբ, այն է՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար կանանց համար տարիքային սահմանափակմամբ պայմանավորված:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հարցումներ են ուղարկվել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ կիրառող տարբեր կենտրոններ՝ տարիքային սահմանափակումը նախատեսող օրենքի[358] ընդունումից հետո 53 տարին լրացած անձանց կողմից մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու դիմելիության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հարցումների արդյունքները վկայել են այն մասին, որ նշված օրենքի ընդունումից հետո 53 տարեկանից բարձր 19 կին (16-ը՝ Արցախյան 44-օրյա պատերազմին զոհված զինծառայողի ծնող) է դիմել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար և մերժվել՝ պայմանավորված տարիքով:

Բարձրացված խնդիրների, Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքների և միջազգային իրավական չափանիշների[359] հաշվառմամբ՝ Պաշտպանն իր՝

---

[357] «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը 2024 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴԱՈ-100 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունել է քննության:

[358] «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 4-ի «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-264-Ն օրենք

[359] Տե՛ս, Կոստան և Պավանն ընդդեմ Իտալիայի (Costa and Pavan v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 54270/10:

Տե՛ս, Ս. Հ.-ն և ուրիշներն ընդդեմ Ավստրիայի (S.H. and others v. Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 57813/00:

Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում եզրահանգել է, որ նշված կարգավորումները խնդրահարույց են խտրականության արգելքի սկզբունքի, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և այդ համատեքստում իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի տեսանկյունից՝ նկատի ունենալով այն, որ ոչ իրավաչափ եղանակով միջամտում են անձի վերարտադրողական ինքնավարությանը, ներառյալ՝ երեխա ունենալու կամ չունենալու որոշումների կայացմանը, տարբերակված մոտեցում է ցուցաբերվում ինչպես սեռի, այնպես էլ տարիքի հիմքով: Օրենսդրական նման սահմանափակումները հակասում են վերարտադրողական իրավունքի իրացման համատեքստում Եվրոպական դատարանի այն տրամաբանությանը, որ ընդհանուր արգելքը՝ ծառայությունների հասանելիությունից օգտվելու համար, առանց անհատական հանգամանքները հաշվի առնելու, համաչափ չէ:

Ներկայացվածի հետ մեկտեղ, Պաշտպանի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված դիմումով վիճարկվող իրավակարգավորումներում կատարվել են որոշակի դրական փոփոխություններ[360] (տարիքային շեմ է սահմանվել 55 տարեկանը՝ գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսիններից մեկի համար, կամ գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջ կամ տղամարդու համար՝ բացառությամբ հղիությունը կրելու դեպքերի): Միևնույն ժամանակ, կարգավորումները շարունակել են խնդրահարույց մնալ դրանց՝ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից:

Օրենսդրական փոփոխություններով կնոջ համար ոլորտի կարգավորվածության առումով դրական առաջընթաց ապահովելով հանդերձ՝ չի ապահովվել խնդիրների լիարժեք հասցեագրումը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ շարունակում է սահմանվել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու բացարձակ արգելք տարիքի հիմքով՝ առանց հաշվի առնելու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար բացի տարիքից անհրաժեշտ նաև այլ գործոնների, այդ թվում՝ բժշկասոցիալական ցուցումների առկայությունը՝ առանց որոնց վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվել հնարավոր չէ:

Նոր օրենսդրական կարգավորումների պարագայում ևս գործնականում կանայք զրկում են վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունից, որի մասին վկայում են Պաշտպանին հասցեագրվող դիմումները[361]:

Կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության և առողջության պահպանման իրավունքի սահմանափակման մի շարք խնդիրներ, որոնք տևական ժամանակ արձանագրվել են Պաշտպանի կողմից և արդիական են եղել նաև 2024 թվականի ընթացքում հանգել են հետևյալին՝

Տե՛ս, Դիքսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Dickson v. the United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2007 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 44362/04 և այլն:

[360] Տե՛ս, 2024 թվականի օգոստոսի 6-ին ուժի մեջ է մտել ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-317-Ն օրենքը:

[361] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3297 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

• խնդրահարույց է առանձին բժշկական ծառայությունների հասանելիությունը, քանի որ կանայք հաճախ զրկվում են լիարժեք կերպով հետազոտվելու և համապատասխան բուժօգնություն ստանալու հնարավորությունից,

• հաշմանդամություն ունեցող կանայք բժշկական օգնություն ստանալու սահմանափակումներ են ունեցել՝ խտրականության ենթարկվելով տարբեր պատճառներով, այդ թվում՝ բժշկական ծառայությունների մատչելիության բացակայության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային, խտրական կամ ոչ պատշաճ վերաբերմունքի արդյունքում,

• խնդրահարույց է առողջական տեղեկատվության, առողջապահական օժանդակ նյութերի մատչելիության բացակայությունը տեսողական խնդիրներ ունեցող կանանց համար, որը մեծ խոչընդոտ է հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման իրավունքի իրականացման համար[362]:

Կանանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար առողջապահական ծառայությունների հասանելիության ու մատչելիության վերը նշված խնդիրներն արձանագրվել են նաև ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում[363]:

Ըստ Առողջապահության նախարարության՝ նախարարության կողմից կանանց առողջության պահպանման իրավունքի առնչությամբ 2024 թվականի ընթացքում իրականացվել են որոշակի աշխատանքներ, այդ թվում՝ Կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ են տարվել՝ արտագնա դասընթացներ 30 գինեկոլոգի և նեոնատոլոգի համար, պրենատալ սքրինինգի մեջ ընդգրկված մարզային մասնագետների գործուղումներ՝ միջազգային հեղինակավոր գիտաժողովներին մասնակցելու համար: Իրականացվել են իրազեկման տարբեր աշխատանքներ՝ կրծքագեղձի ու այլ քաղցկեղների կանխարգելման և այլ թեմաների վերաբերյալ:

2024 թվականի օգոստոսի 6-ից ուժի մեջ մտած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-317-Ն օրենքով դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատումը մինչև 8 շաբաթական հղիության ժամկետում կարող է իրականացվել նաև արտահիվանդանոցային պայմաններում մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում: ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N 568-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով 2024 թվականի ընթացքում «Անպտղության հաղթահարման ծրագիր»-ն ընդլայնվել է՝ բարձրացվել է առաջնային

---

[362] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, էջեր 533-537, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[363] Հասանելի է https://docs.un.org/en/CEDAW/C/ARM/CO/7 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

անպտղությամբ կանանց տարիքային շեմը՝ մինչև 41 տարեկան, որի շահառու են դարձել երկրորդային անպտղություն ունեցող՝ մեկ երեխա ունեցող մինչև 36 տարեկան բոլոր զույգերը:

Բժիշկների և բժշկական ծառայություններ մատուցող հաստատությունների այլ աշխատակիցների շրջանում հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ Առողջապահության նախարարության կողմից իրազեկման աշխատանքներ են իրականացվել, «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ուղեցույցը»[364] համապատասխանեցվել է տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց իրազեկման համար: Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում ուղեցույցի տեսանյութը ներկայացվել է աուդիո և հայերեն ժեստերի լեզվի տարբերակով: Ուղեցույցի նպատակն է եղել հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:

Ներկայացվածի հետ մեկտեղ, թեև ըստ Առողջապահության նախարարության՝ 2024 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց կողմից սեռական և վերարտադրողական առողջության իրականացման ընթացքում առկա խոչընդոտների, կանանց լիարժեք կերպով հետազոտվելու և համապատասխան բուժօգնություն ստանալու համատեքստում խտրականության դրսևորումների վերաբերյալ բողոքներ չեն ստացվել, սակայն հարկ է նկատել, որ նախարարության տվյալների համաձայն՝ *մարդու վերարտադրողական առողջությանն ուղղված բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ աշխատանքներ ևս չեն իրականացվել:*

Պաշտպանն ընդգծում է, որ չնայած կանանց առողջության պահպանման իրավունքի շուրջ կատարված աշխատանքներին՝ կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության և առողջության պահպանման իրավունքի լիարժեք իրացման համար դեռ առկա են խոչընդոտներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓երաշխավորել կանանց համար առողջապահական ծառայությունների հասանելիությունը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար բժշկական տարբեր ծառայությունների մատուցման մատչելիության ու կանանց լիարժեք կերպով հետազոտվելու և առանց որևէ խտրականության համապատասխան բուժօգնություն ստանալու հնարավորության ապահովմամբ,

✓բարձրացնել կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ ՀՀ ամբողջ տարածքում շարունակական վերապատրաստումներ, դասընթացներ իրականացնելով և երաշխավորելով բժշկական ծառայությունների պատշաճ իրականացումը՝ առանց որևէ խտրականության,

---

[364] Հաստատված Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 19-ի N 2751-Լ հրամանով:

✓կանանց առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ շարունակաբար իրականացնել իրազեկման արշավներ՝ ընդգրկելով ՀՀ ամբողջ տարածքը,

✓«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքով մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորության առնչությամբ կատարել փոփոխություններ, որով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու բացարձակ արգելք չի սահմանվի՝ պայմանավորված տարիքի հիմքով՝ առանց հաշվի առնելու անձի անհատական հանգամանքները:

4. Տնտեսական իրավունքների սահմանափակման խնդիրներ

2024 թվականի ընթացքում աշխատաշուկայում և ձեռնարկատիրության մեջ կանանց և տղամարդկանց հավասարությանն առնչվող խնդիրներն ու կանանց տնտեսական իրավունքների խթանման հարցերը ևս եղել են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

Պաշտպանը 2024 թվականի օգոստոսի 9-ին այց է իրականացրել Գեղարքունիքի մարզ, որտեղ քննարկվել են մարզում առկա մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրները, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Անդրադարձ է կատարվել նաև կանանց զբաղվածության հարցերին[365]:

Պաշտպանը բացման խոսքով է հանդես եկել ՄԻՊ աշխատակազմի կողմից կազմակերպված «Կանանց իրավունքների պաշտպանություն և խթանում գործարարության ոլորտում» թեմայով քննարկմանը, որին մասնակցել է մարզում բիզնես ոլորտում տարբեր գործունեություններ իրականացնող ավելի քան 40 կին, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և բռնի տեղահանված անձինք: Քննարկման շրջանակներում կանանց գործարարության մեջ ներգրավման նպատակով իրազեկման աշխատանքներ են իրականացվել, վերջիններիս ներկայացվել են իրենց իրավունքներն ու հնարավորությունները:

Պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում արձանագրել է կանանց աշխատանքային իրավունքների սահմանափակմանն առնչվող մի շարք խնդիրներ[366]՝ պայմանավորված՝

- կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում լրացուցիչ երաշխիքների բացակայության հետ,
- կանանց զբաղվածության, որոշակի աշխատանքներում ներգրավվածության հետ,
- կնոջ դերի շուրջ առկա կարծրատիպերի հետ,
- աշխատանքային հարաբերություններում, ինչպես աշխատանքի ընդունվելիս, այնպես էլ աշխատանքի ընթացքում առաջացած դժվարությունների հետ,

---

[365] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3082 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[366] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, էջեր 537-542, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

- երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի ավարտը կազմակերպելու հետ,
- մայրության արձակուրդից վերադարձող կանանց աշխատավայրում վերաինտեգրելու հետ,
- կրծքով կերակրող մայրերի աշխատանքային պայմանների բարելավման ուղղված խնդիրների հետ:

Հարկ է նկատել, որ ոլորտային մարտահրավերներն ու խնդիրները, այդ խնդիրների ուղղությամբ երկարատև աշխատանքների իրականացման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև ոլորտի քաղաքականությունը մշակող մարմնի կողմից: «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման հիմքում ընկած են ոլորտում արձանագրված լուրջ մարտահրավերները, այդ թվում՝ աշխատաշուկայում սեռային խզվածքի, կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների անհասանելի և մատչելի չլինելու, աշխատաշուկայում լիարժեք ներառման և առաջխաղացման հարցում խտրական մոտեցման, գենդերային դերերի և կարծրատիպերի, գործարարության մեջ ներգրավված կանանց՝ ֆինանսների, այդ թվում՝ վարկային միջոցների հասանելիության, կարողությունների շարունակական զարգացման, այդ թվում՝ բիզնես գրագիտության, հմտությունների զարգացման, թվային գրագիտության շուկաների հասանելիության և այլ խնդիրներ:

«Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի 2-րդ գերակայությամբ նախատեսվել են միջոցառումներ, որոնք միտված են աշխատաշուկայի, զբաղվածության, տնտեսության ոլորտում գենդերազգայուն մոտեցումների խրախուսմանը, աշխատուժի սեռային խզվածքի նվազեցմանը, կանանց սոցիալ-տնտեսական ակտիվության խրախուսմանը և այլնին:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2024 թվականի ընթացքում կանանց հնարավորությունները աշխատաշուկայի համապատասխան հատվածներում խթանելու ուղղությամբ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջոցով մատուցվել են աշխատանքի տեղավորման նպատակով խորհրդատվության, առկա թափուր աշխատատեղերի, իրականացվող զբաղվածության ակտիվ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և այլ աշխատանքներ: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Միասնական սոցիալական ծառայության միջոցով աշխատանքի է տեղավորվել 13329 անձ, որից 7869-ը՝ կին:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2024 թվականի ընթացքում ընտանեկան բռնության ենթարկված անձանց տնտեսական հզորացման ծրագրեր են իրականացվել ընդհանուր թվով 6 մարզերում: ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀ 3 մարզերում իրականացված ծրագրի ընդհանուր շահառուների թվաքանակը կազմել է 72 անձ, որի գրեթե 50 տոկոսն ունեն զբաղվածություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի համաձայն՝ Աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարության համար սահմանվել է ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակների և մատուցվող ծառայությունների ընդլայնումը, մասնավորապես, կանանց տնտեսական զարգացմանն ու հզորացմանն ուղղված աջակցության նոր տեսակների ավելացմամբ, որի շրջանակներում.

- Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց տնտեսական հզորացման ծրագիրը սահմանվել է 2 բաղադրիչից՝ անհատական մասնագիտական և գործնական կամ վերապատրաստման դասընթացների կազմակերպում և անցկացում, ձեռք բերված մասնագիտություններին համապատասխան անհրաժեշտ գործիքակազմի տրամադրում,
- Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կազմակերպման համար պետական աջակցության տրամադրման միջոցառումը, որում ընդգրկվել է 134 անձ, որից 114-ը կին,
- Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրումը, որում ընդգրկվել է՝ 1289 անձ, որից 349-ը կին:

Միևնույն ժամանակ, ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փոխանցած տվյալների՝ տղամարդկանց և կանանց միջև զբաղվածության տոկոսի հարաբերակցության կրճատման նպատակով առանձին ծրագրեր, երեխա ունեցող կանանց զբաղվածության ապահովման և վերջիններիս զբաղվածության խթանմանն ուղղված նոր աշխատանքներ չեն իրականացվել:

Պետք է նկատել, որ երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի ավարտը կազմակերպելու, մայրության արձակուրդից վերադարձող կանանց աշխատավայրում վերաինտեգրելու, կրծքով կերակրող մայրերի աշխատանքային պայմանների բարելավմանն ու վերջիններիս համար աշխատավայրերում հատուկ պայմանների նախատեսման ուղղված օրենսդրական և այլ կառուցակարգեր 2024 թվականի ընթացքում ևս չեն ներդրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓խթանել կանանց հնարավորությունները՝ հաշվի առնելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը աշխատաշուկայի համապատասխան հատվածներում,

✓տղամարդկանց և կանանց միջև զբաղվածության տոկոսի հարաբերակցության կրճատման նպատակով առանձին ծրագրեր իրականացնել,

✓մշակել և ներդնել աշխատաշուկայում տղամարդկանց և կանանց միջև մրցակցության ապահովման բաց և արդյունավետ կառուցակարգեր,

✓նախատեսել ծրագրեր երեխա ունեցող կանանց զբաղվածությունն ապահովելու, մայրության արձակուրդից վերադարձող կանանց՝ աշխատավայրում վերաինտեգրելու, երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի

ավարտը կազմակերպելու, կրծքով կերակրող մայրերի աշխատանքային պայմանները բարելավելու ուղղությամբ, նախատեսել նաև օրենսդրական կարգավորումներ ու համապատասխան կառուցակարգեր,

✓կանանց համար իրականացնել վերապատրաստման և վերաորակման դասընթացներ՝ բարձր վարձատրվող ոլորտներում ներգրավվելու համար,

✓զանգվածային լրատվության միջոցներով և այլ հնարավոր եղանակներով միջոցներ ձեռնարկել՝ նպաստելու աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը,

✓պարբերաբար իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ խթանելու կանանց ներգրավվածությունն ու առաջընթացը գործարարության ոլորտում

✓ընդունել կանանց՝ աշխատաշուկայում ու գործարարության ոլորտում ներգրավվածության ու առաջընթացի խթանմանն ուղղված ոլորտային ռազմավարական փաստաթուղթ և գործողությունների ծրագիր:

5. Գենդերազգայուն արհեստական բանականության զարգացումը՝ որպես կանանց իրավունքների լիարժեք իրացման գործոն

Արհեստական բանականության համակարգերի կիրառումը մարդու իրավունքների վիճակի, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա շարունակում է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն:

Արհեստական բանականությունը կարող է կիրառվել արդարադատության հասանելիությունը բարելավելու, պետական մարմինների գործունության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցումն ավելի մատչելի դարձնելու նպատակով: Միևնույն ժամանակ, վերջինս կարող է առաջացնել իրավիճակներ, որոնք կարող են վտանգներ պարունակել մարդու իրավունքների պաշտպանության համակարգի տեսանկյունից[367]:

Գենդերային ոչ չեզոք արհեստական բանականության կիրառման՝ մարդու իրավունքների վրա ազդեցության հարցին անդրադարձել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2024 թվականի օգոստոսի 24-ին տեղի ունեցած «Գենդերային չեզոք արհեստական բանականություն. խնդիրների հնարավոր լուծումներ» պանելային քննարկման շրջանակներում[368]:

---

[367] Առավել մարամասն տե՛ս, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, գլուխ «Արհեստական բանականության զարգացմանը զուգընթաց անձնական տվյալների պաշտպանությունը»:

[368] Հասանելի է՝ https://www.facebook.com/share/p/1DWvw4yFRA/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պանելային քննարկման շրջանակներում անդրադարձ է կատարվել ինչպես արհեստական բանականության կիրառման ընթացքում գենդերային կողմնակալությանն ու այդ համատեքստում մարդու հիմնարար իրավունքների, այդ թվում՝ խտրականության արգելքի ու դրանից ածանցվող մի շարք իրավունքների (սոցիալ-տնտեսական, աշխատանքային, կրթության և այլն) իրացման հնարավոր վտանգներին ու խախտումներին, այնպես էլ մարդու իրավունքների ազգային հաստատությունների ու ոլորտի այլ մասնակիցների դերին ու անհրաժեշտ ներգրավվածությանը:

Արհեստական բանականության շեշտակի զարգացման ու տարածման համատեքստում գենդերային կողմնակալության ու խտրականության հարցերը գրավել են առանցքային միջազգային դերակատարների ուշադրությունը. Միավորված ազգերի կազմակերպությունը խրախուսում և խթանում է արհեստական բանականության կիրառումը կազմակերպության կողմից՝ նորարական գործընթացի բոլոր փուլերի աջակցման արհեստական բանականության տվյալների մշակման ձևաչափերում գենդերային անհավասարության, խտրականության ու կողմնակալության հասցեավորման նպատակով[369]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սեռով կամ ռասայով պայմանավորված կարծրատիպային կամ նվաստացուցիչ մոտեցումները հաճախ դրվում են արհեստական բանականության ստեղծման տվյալների մեջ՝ հասանելի դառնալով հասարակության լայն շերտերի համար, ինչն էլ իր հերթին անդրադառնում է անհատների վրա և, ստեղծելով բացասական սոցիալական ազդեցություն, նպաստում է գենդերային հավասարության և կանանց իրավունքների վիճակի հետընթացին[370]:

Բերքլիի համալսարանի Հաաս բիզնեսդպրոցի գենդերային իրավահավասարության և առաջնորդության կենտրոնի՝ տարբեր ոլորտներում 33 արհեստական բանականության համակարգերի ուսումնասիրության ու վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ այդ համակարգերի մոտ 44%-ը ցույց է տվել գենդերային կողմնակալություն, իսկ 25 տոկոսը՝ ինչպես գենդերային, այնպես էլ ռասայական կողմնակալություն[371]:

2023 թվականին կայացած Համաշխարհային տնտեսական ժողովի ընթացքում հրապարակված զեկույցի համաձայն՝ ներկայումս գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) բոլոր աշխատողների ընդամենը 29 տոկոսն է կին[372]: Մինչդեռ, արհեստական բանականության մշակման հստակ, իրավահեն մեխանիզմների, արհեստական բանականության անվտանգությունը մինչ թողարկումը ստուգող համակարգերի բացակայության պայմաններում արհեստական

---

[369] Հասանելի է https://unsceb.org/topics/artificial-intelligence հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[370] Հասանելի է https://www.unwomen.org/sites/default/files/2024-03/placing-gender-equality-at-the-heart-of-the-global-digital-compact-en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[371] Հասանելի է https://ssir.org/articles/entry/when_good_algorithms_go_sexist_why_and_how_to_advance_ai_gender_equity հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[372] Հասանելի է https://www.weforum.org/publications/global-gender-gap-report-2023/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

բանականության ստեղծման աշխատանքներին կանանց ընդգրկվածության ցածր մակարդակը կարող է հանգեցնել ոչ գենդերազգայուն մեխանիզմների գոյության:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գենդերային հավասարության գծով համակարգողը որպես արհեստական բանականության կիրառման ընթացքում գենդերային հավասարության ապահովման խնդրի լուծում առաջարկել է մասնավոր ոլորտի և դպրոցների ու համալսարանների հետ համագործակցության շրջանակներում իրականացնել ծրագրեր, որոնց ընթացքում աղջիկներին կծանոթացնեն նորագույն տեխնոլոգիաներին, նրանց կառաջարկվեն տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ուսումնառության կրթաթոշակներ: Ավելին, առաջարկվում է մասնավոր հատվածին համագործակցել քաղաքացիական հասարակության և կառավարական մարմինների հետ՝ ուղղված կանանց և աղջիկների՝ իրենց թվային իրավունքների վերաբերյալ կրթության հնարավորությունների զարգացմանը[373]:

Հարկ է նկատել, որ այս առնչությամբ ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույցի կողմից հրապարակված «Գենդերային հավասարությունը՝ որպես համաշխարհային թվային համաձայնագրի հիմնաքար» վերտառությամբ փաստաթղթում[374] առաջարկվում է օգտագործել թվային տեխնոլոգիաների արագությունը, ծավալները և հնարավորությունները գենդերահավասար քաղաքականության մշակման և խթանման նպատակով:

Ավելին, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» 183-Լ որոշման հավելված 1-ի 2-րդ կետի՝ «Պետական կառավարման ներքին համակարգերի թվայնացում» ռազմավարական ուղղություն, որով նախատեսվում է, որ արհեստական բանականության կիրառությունը պետք է օգնի որոշումների կայացման գործընթացին: Վերոշարադրյալով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի դեկտեմբերի 27-ին հավանություն է տրվել Եվրոպայի խորհրդի «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի մասին» շրջանակային կոնվենցիայի ստորագրման առաջարկությանը:

Հաշվի առնելով արհեստական բանականության կիրառման՝ մարդու իրավունքների վրա հնարավոր ազդեցությունն ու որոշումների կայացման գործընթացում արհեստական բանականության կիրառման առումով պետության հանձնառած մոտեցումները՝ Մարդու իրավունքների պաշտպանը, կարևորելով արհեստական բանականության կիրառումը մարդու իրավունքներին՝ այդ թվում գենդերային հավասարության երաշխավորմանը համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, գտնում է, որ անհրաժեշտ են բարեփոխումներ՝ անհրաժեշտ բոլոր դերակատարների ներգրավմամբ:

---

[373] Հասանելի է https://www.unesco.org/en/articles/gender-biases-ai-and-emerging-technologies հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[374] Տե՛ս, «Գենդերային հավասարությունը որպես համաշխարհային թվային համաձայնագրի հիմնաքար» փաստաթուղթ, էջ՝ 5, հասանելի է https://www.unwomen.org/sites/default/files/2024-03/placing-gender-equality-at-the-heart-of-the-global-digital-compact-en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Արհեստական բանականության համակարգերի կիրառման դեպքում Մարդու իրավունքների ազգային հաստատություններն առանցքային նշանակություն ունեն՝ մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերահսկման, հաշվետվողականության ապահովման, բողոքների ուսումնասիրության, իրազեկվածության բարձրացման և արհեստական բանականության համակարգեր մշակող կազմակերպություններին ուղղորդելու առումով[375]:

Պաշտպանն ընդգծում է, որ արհեստական բանականության համակարգերի կիրառման առումով պարտադիր է ոլորտի առանձնահատկությունների լիարժեք ուսումնասիրություն, մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատում, մարդու իրավունքների պաշտպանության հստակ օրենսդրական կարգավորումների և կառուցակարգերի նախատեսում, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացում:

Վերոնշյալի իրացման համար նախևառաջ կարևոր է հասարակության մեջ գենդերային հավասարության վերաբերյալ առկա կարծրատիպերը թիրախավորելու, քննադատելու և հակազդելու մոտեցումներ ձևավորելուն ուղղված աշխատանքների իրականացումը, արհեստական բանականություն մշակման գործընթացում թափանցիկության ապահովումն ու մասնակցային որոշումների կայացումը, իրավական դաշտում փոփոխությունների իրականացումը, ինչպես նաև արհեստական բանականության կիրառման վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:

Պետության կողմից ևս պետք է ձեռնարկվեն մի շարք միջոցառումներ, մասնավորապես, անհրաժեշտ է իրականացնել գենդերային չեզոք արհեստական բանականության ստեղծման քաղաքականության մշակում, իրականացնել ներդրումներ այն ծրագրերի մեջ, որոնք ուղղված են կանանց և աղջիկների ներգրավմանն արհեստական բանականության մշակման գործընթացներում և այլն:

Այսպիսով՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է արհեստական բանականության կիրառումը գենդերային հավասարության պահանջներին համապատասխանեցնելու մեխանիզմների ներդնումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓իրականացնել հասարակության մեջ գենդերային հավասարության վերաբերյալ առկա կարծրատիպերը թիրախավորելու, քննադատելու և հակազդելու մոտեցումներ ձևավորելուն ուղղված աշխատանքներ

✓իրականացնել մարդու իրավունքների վրա արհեստական բանականության համակարգերի ներդրման գնահատում՝ ներգրավելով համապատասխան մասնագետների,

---

[375] Տե՛ս, ENNHRI-Equinet-ի համատեղ հայտարարությունը Եվրոպայի խորհրդի Արհեստական բանականության հանձնաժողովի լիագումար նիստին Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին կոնվենցիայի [Շրջանակային] VII գլխի նախագծի վերաբերյալ, https://equineteurope.org/wp-content/uploads/2023/04/CoE_AI_Convention_Chapter-7_ENNHRI_Equinet-Joint-Statement_Public.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

✓կրթական համակարգում ներդնել գենդերային չեզոք արհեստական բանականության էթիկայի ուսումնական ծրագրեր,

✓իրականացնել արհեստական բանականության ստեղծման գործընթացում կանանց և աղջիկների ներգրավվածությունն ապահովող ծրագրերի աջակցություն,

✓մշակել գենդերային չեզոք արհեստական բանականության համակարգերի ներդրման քաղաքականություն:

ԲԱԺԻՆ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթություններից է:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող պաշտոնատար անձ, շարունակել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված տարբեր ձևաչափերով աշխատանքների իրականացումը՝ այդ գործընթացում ընդգրկելով հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին:

2024 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք մշտադիտարկման չհայտարարված այցեր, իրավասու մարմիններ են ներկայացվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ, տեղի են ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հետ հանդիպումներ, իրականացվել են իրազեկման միջոցառումներ, նախապատրաստվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե ներկայացվող Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային զեկույցը, քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության առնչությամբ ներկայացված դիմումներն ու բողոքները, իրականացվել են մշտադիտարկման այլ աշխատանքներ:

Այսպես, օրինակ, այցեր են իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ, «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ, այլ դպրոցներ և հաստատություններ: Մշտադիտարկման չհայտարարված այցերի ընթացքում արձանագրվել են մի շարք համակարգային և հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները ներկայացվել են իրավասու մարմիններին:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցության երաշխավորումը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման գործընթացում: Այդ նպատակով 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է իր կողմից նախագծերի առնչությամբ առաջարկությունների ներկայացման գործընթացում ներգրավել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամներին: Այսպես, օրինակ, 2024 թվականի սեպտեմբերի 6-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական առցանց նիստը: Նիստի ընթացքում քննարկվել են «Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու կարգը

հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերով նախատեսված կարգավորումները: Քննարկվել են նախագծի առնչությամբ ՄԻՊ աշխատակազմի և խորհրդի անդամների մտահոգություններն ու առաջարկությունները, որոնք ամփոփվել և ներկայացվել են իրավասու պետական մարմնին:

Մարդու իրավունքների պաշտպանն ապահովել է նաև հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը մշտադիտարկման այլ աշխատանքներին: Այսպես, օրինակ, ավտոբուսների մատչելիության առնչությամբ կատարված մշտադիտարկման այցն իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, լսել է նրանց խնդիրներն ու իրազեկել նրանց իրենց իրավունքների վերաբերյալ: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը 2024 թվականի մայիսի 29-ին այցելել է «Լուսէ» վերականգնողական կենտրոն հիմնադրամ, որը սոցիալ-վերականգնողական ծառայություններ է մատուցում զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաներին, 2024 թվականի սեպտեմբերի 13-ին այց է իրականացրել «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, որտեղ խնամք են ստանում հաշմանդամություն ունեցող անձինք, 2024 թվականի հոկտեմբերի 24-ին այց է իրականացրել «Փրկություն» հասարակական կազմակերպություն, որտեղ ծառայություններ են ստանում հաշմանդամություն ունեցող անձինք և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործում է նաև երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական խորհուրդ: Խորհրդի կազմում ընդգրկված են նաև հաշմանդամություն ունեցող երեխաներ, ովքեր 2024 թվականին շարունակել են ակտիվորեն աջակցել Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման աշխատանքներին, ոլորտում առկա խնդիրների վերհանմանը, իրազեկման աշխատանքների իրականացմանը, զեկույցների

մշակմանը և այլն: Այսպես, օրինակ, 2024 թվականին խորհրդի 5 երեխաներ, որոնցից մեկն ունի հաշմանդամություն, Պաշտպանի գլխավորած պատվիրակության կազմով մասնակցել են Ժնևում Երեխայի իրավունքների կոմիտեի՝ նախնական նիստին և ներկայացրել են խորհրդի կողմից մշակված «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառման վերաբերյալ անկախ այլընտրանքային

զեկույցը: Մարդու իրավունքների պաշտպանի երկու ներկայացուցիչներ, որոնցից մեկն ունի հաշմանդամություն, Բրատիսլավայում մասնակցել են Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի (ENOC) կողմից կազմակերպված Երիտասարդ Խորհրդատուների եվրոպական ցանցի (ENYA) ֆորումին և այլն:

2024 թվականի ընթացքում կազմակերպվել են նաև մի շարք միջոցառումներ, որոնք, ի թիվս այլնի, ուղղված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ հարցերի բարձրացմանն ու քննարկմանը միջազգային հարթակներում: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ հոկտեմբերի 21-22-ն անցկացվող «Օմբուդսմանական/ Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ճգնաժամային իրավիճակներում. Ճկունություն և մարտահրավերներ» խորագրով բարձրաստիճան միջազգային համաժողովի ընթացքում պանելային քննարկումներից մեկի ժամանակ առանցքային թեմաներից է եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված հարցը:

Կարևորելով նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ տարբեր մշակութային միջոցառումներին մասնակցությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ անցկացվող երկօրյա բարձր մակարդակի միջազգային համաժողովի ընթացքում Պաշտպանի նախաձեռնությամբ Հայաստանի ազգային պատկերասրահում համերգային միջոցառում է կազմակերպվել «Ճախրուկ» մշակութային կենտրոնի հաշմանդամություն ունեցող սաների կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումն իրականացնում է առանձնացված ստորաբաժանման՝ Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի միջոցով: Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև բաժնի կարողությունների շարունակական զարգացումը, որի ուղղությամբ 2024 թվականին իրականացվել են մի շարք միջոցառումներ: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները փորձի փոխանակման այցով 2024 թվականի դեկտեմբերի 2-6-ը գտնվել են Կոպենհագենում, որտեղ քննարկվել են նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերներն ու հաստատությունների փորձառությունը:

2024 թվականին Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժինը համալրվել է համընդհանուր դիզայնի սկզբունքներին տիրապետող փորձագետով, ով ունի ունիվերսալ դիզայնին, խելամիտ հարմարեցումներին, մատչելիությանն առնչվող ոլորտներում համապատասխան փորձառություն, ճարտարապետություն և դիզայն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն: Նման փորձագետի ներգրավումը հնարավորություն է տվել նոր կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող, ինչպես նաև նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված շենքերի և շինությունների

մատչելիության ապահովման առնչությամբ մշտադիտարկման աշխատանքներն իրականացնել առավել ինտենսիվ եղանակով:

ԳԼՈՒԽ 1. ԱՆԿԱԽ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Համայնքներում մատչելի ծառայությունների ստեղծումն ու զարգացումը, հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի, համայնքում ներառվելու, ընտանեկան կամ դրան մոտ միջավայր ապահովելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և դրանց բարելավումը, հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ներառմանը միտված միջոցառումների, մատուցվող ծառայությունների և տրամադրվող աջակցող միջոցների մատչելիության, հասանելիության և հասցեականության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցող միջոցների ստեղծման և զարգացման խթանումը, աջակցող միջոցների, այդ թվում՝ ծառայությունների ստեղծմանը և կիրառմանը միտված ծրագրերի (միջոցառումների) իրականացումը, աջակցող միջոցների վերաբերյալ տեղեկությունների մատչելիության և հասանելիության ապահովումը, շուրջօրյա խնամքի հաստատությունների ապաինստիտուցիոնալացումը, խնամքի ծառայությունների՝ համայնքահեն ծառայություններով փոխակերպումը՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից են:

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը սահմանվել է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների բարելավումը, խնամքի ծառայությունների փոխակերպումը և անկախ կյանքի ապահովումը, որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Մինչդեռ՝ 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի ապահովման տեսանկյունից շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ

տարիների տարեկան հաղորդումներում[376] և արտահերթ հրապարակային զեկույցում[377]:

Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, արձանագրել է.

• ապաինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ,

• անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ,

• հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանը անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի ապահովման տեսանկյունից կարևոր է համարում կյանքի բոլոր ոլորտներում մատչելիության երաշխավորումը, որի առնչությամբ արձանագրված խնդիրներին անդրադարձ է կատարվել այլ գլուխների շրջանակում:

1. Ապաինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը հնարավոր է երաշխավորել միայն ցանկացած տեսակի հաստատություններից դուրս ապրելու իրական հնարավորության ապահովմամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի 2024 թվականին իրականացրած մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձինք շարունակում են խնամք ստանալ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամք տրամադրող հաստատություններում: Ավելին, հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը հաստատություններ տեղափոխելու միջոցով իրականացնելու գործընթացը շարունակվում է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միայն «Խարբերդի մասնագիտացված

---

[376] Տե՛ս, 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1376-1385, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս նաև, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1370-1380, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 652-666, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[377] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 101-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, օրինակ, շարունակում են խնամք ստանալ 250 հաշմանդամություն ունեցող անձինք:

Հաշվի առնելով երեխաների, հատկապես, հաշմանդամություն ունեցող երեխաների ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացումն ապահովելու հարցում ընտանեկան միջավայրում ապրելու կարևորությունը՝ առավել մտահոգիչ է հաստատություններում, այդ թվում՝ ոչ պետական հաստատություններում, հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն, միայն, Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, օրինակ, խնամք են ստանում 123 հաշմանդամություն ունեցող երեխաներ, ընդ որում, նրանցից 7-ը 0-3 տարեկան են:

2024 թվականին իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում հաստատություններում նույնպես արձանագրվել են խնամքի և ծառայությունների տրամադրման հետ կապված մի շարք համակարգային և հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ, որոնք առավել մանրամասն արտացոլված են սույն տարեկան հաղորդման համապատասխան գլուխներում:

Որպես հաստատություններին այլընտրանք՝ պետությունը իրավական հիմք է ստեղծել համայնքային փոքր տների ստեղծման և գործունեության համար: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականին նախարարության պատվիրակմամբ 5 համայնքային փոքր խմբային տներում ծառայություն են ստացել 68 հաշմանդամություն ունեցող անձ:

Հարկ է փաստել, սակայն, որ թեև փոքր խնամքի տները նախատեսված են որպես ընտանեկան միջավայրին առավելագույնս մոտեցված, 8-16 անձի համար նախատեսված կենտրոններ, սակայն դրանք ևս ունեն ինստիտուցիոնալացմանը բնորոշ հատկանիշներ: Այսպիսի պայմաններում Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է ապաինստիտուցիոնալացման քաղաքականության իրականացման գործընթացում այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք կբացառեն հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունից առանձնացնելը և ինստիտուցիոնալացմանը բնորոշ հատկանիշներ պարունակող պայմաններում ապրելը, միաժամանակ, կերաշխավորեն անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված համայնքահեն ծառայությունների տրամադրումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերում և Երևան քաղաքում գործում են տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական հոգածության տասնմեկ կենտրոններ, որտեղ ծառայություններ են ստանում հաշմանդամություն ունեցող 564 անձ: ՀՀ պետական բյուջեի առանձին ծախսային միջոցառումների շրջանակներում իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոններում: 2024 թվականին նախարարության պատվիրակմամբ «Երեխաների խնամքի ցերեկային

ծառայություններ» միջոցառման շրջանակներում ծառայություն է տրամադրվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3610 երեխայի (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների): Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրումն իրականացվում է 12 հասարակական կազմակերպությունների կողմից հանրապետության ողջ տարածքում՝ 32 կենտրոններում: Միաժամանակ, 2024 թվականին նախարարության ենթակայությամբ գործող 6 կենտրոններում ցերեկային խնամքի ծառայություններ են մատուցվել 560 երեխայի, որից 72-ը ունեն հաշմանդամություն: Ըստ տրամադրված տեղեկությունների՝ բոլոր մարզերում, բացի Արագածոտնից, գործում է տնային պայմաններում խնամքի ծառայությունը, շահառուների թիվը եղել է 570:

Թեև Պետության կողմից ձեռնարկվող միջոցներին՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ բացակայում են արդյունավետ կառուցակարգերը, որով հնարավոր կլինի ՀՀ ամբողջ տարածքում և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց, անհրաժեշտության դեպքում, տրամադրել անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված համայնքահեն ծառայություններ: Խնդրահարույց է այն, որ 2024 թվականի ընթացքում շարունակվել են միայն Արմավիրի մարզում անկախ կյանքի կենտրոն կառուցելու ուղղությամբ իրականացվող որոշ աշխատանքները, առկա են անձնական օգնականի ծառայությունների տրամադրման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ և այլն:

Այսպես, օրինակ, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձնական օգնականի ծառայություններ չեն տրամադրվել բազմաթիվ հաշմանդամություն ունեցող անձանց, ովքեր ունեցել են դրա անհրաժեշտությունը, սակայն չեն աշխատել կամ չեն սովորել, ինչը օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջ է նշված ծառայությունից օգտվելու համար: Խիստ մտահոգիչ է նաև այն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի դրությամբ ծառայությունների անհատական ծրագրով 270 անձի ցուցվել է անձնական օգնականի ծառայություն, սակայն 100 շահառուի հետ է կնքվել անձնական օգնականի ծառայության տրամադրման պայմանագիր:

2024 թվականի ընթացքում շրջանառվել է «Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը: Մտահոգիչ է այն, որ նախագծերում ևս առկա են մի շարք խնդրահարույց կարգավորումներ: Այսպես, օրինակ, խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների ընտրությունը, դրանցից օգտվելու սահմանափակումների առնչությամբ նախատեսված կարգավորումները, նախագծով ծառայություններից օգտվող անձանց առավելագույն թիվ նախատեսելը և այլն: Մարդու իրավունքների պաշտպանը, նախագիծը քննարկելով Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամների

հետ, նրանց ներկայացրած դիտարկումների հաշվառմամբ պետական իրավասու մարմնին է ներկայացրել իր դիտողություններն ու առաջարկությունները:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ ընտանիքի անդամները սոցիալապես անապահով լինելու հանգամանքով, հաշմանդամություն ունեցող անձի, այդ թվում՝ երեխայի, խնամքը կազմակերպելու հմտությունների բացակայությամբ պայմանավորված՝ նախընտրել են նրանց խնամքը վստահել հաստատություններին: Ավելին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամների համար հատուկ նպատակային աջակցության ծրագրեր չեն իրականացվում: Նշվածը անընդունելի է, ինչի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ կարևորում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին մատուցվող հասցեական ծառայությունների, այդ թվում՝ բավարար ֆինանսական աջակցության տրամադրման և անհրաժեշտ հմտությունների զարգացմանն ուղղված հստակ կառուցակարգերի ներդնումն ու իրականացումը:

Հարկ է արձանագրել նաև, որ 2024 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ նախատեսված ապաինստիտուցիոնալացումն ապահովելու թիրախային արդյունքների ու պետական բյուջեով բավարար հատկացումների նախատեսման առնչությամբ փոփոխություններ չեն իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***ապաինստիտուցիոնալացման քաղաքականության իրականացման գործընթացում բացառել այնպիսի նոր հաստատությունների ստեղծումը, որոնք կպարունակեն ինստիտուցիոնալացման տարրեր և հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունից առանձնացնելու հիմքեր:***

✓ ***նախաձեռնել և իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, որոնք կբացառեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը բնակչության պաշտպանության հաստատություններ:***

✓ ***ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին մատուցվող հասցեական ծառայությունների տրամադրման հստակ կառուցակարգերի ներդնումն ու իրականացումը:***

✓ ***ներդնել կառուցակարգ, որով հնարավոր կլինի ՀՀ ամբողջ տարածքում և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց տրամադրել անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայություններ: Նշված ծառայությունները ներդնելիս և իրականացնելիս պետք է առաջնորդվել այնպիսի մոտեցմամբ, որ դրանք հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց և համապատասխանեն նրանց անձնական կարիքներին:***

✓ **գործուն միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղղված միջազգային չափորոշիչներին համապատասխան անձնական օգնականի ինստիտուտի կայացմանը:**

✓ ***մշակել այնպիսի ռազմավարություն, որով ապաինստիտուցիոնալացումը կնախանշվի որպես արդյունք և պետական հատկացումները կուղղվեն հենց այդ նպատակով նախատեսված հստակ միջոցառումների իրականացմանը:***

2. Անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ

2024 թվականին անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացն ամբողջությամբ իրականացվել է ֆունկցիոնալության գնահատման միջոցով, որի նպատակը՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու հետ կապված որոշումները անձի առողջական խնդիրների, գործունեության, մասնակցության և միջավայրային արգելքների գնահատման հիման վրա կայացնելն ու անհատական կարիքներին համարժեք սոցիալական ծառայություններ տրամադրելն է:

Չնայած հաշմանդամության սոցիալական մոդելին անցնելուն ուղղված պետության ջանքերին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ իրականացված մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ այդ գործընթացում առկա են մի շարք համակարգային խնդիրներ: Արձանագրված խնդիրները վերաբերել են ինչպես հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու հետ կապված օրենսդրական կարգավորումներին, այնպես էլ ֆունկցիոնալության գնահատման գործընթացի իրականացմանը:

Մասնավորապես, արձանագրվել են խնդիրներ՝ կապված ուղեգրման գործընթացի, «e-disability» էլեկտրոնային համակարգի գործածության, «Արմեդ» համակարգի և «e-disability» էլեկտրոնային համակարգերի պատշաճ փոխգործելիության, իրավասու մարմինների միջգերատեսչական համագործակցության ապահովման, գնահատվող անձին իր նկատմամբ ընդունված որոշման բոլոր էական հանգամանքների մասին ծանուցելու պարտավորության պատշաճ կատարման, մասնագետների պակասի, գնահատման ժամկետների ձգձգումների, վերագնահատման և կրկնակի գնահատման գործընթացների հետ և այլն:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները, անձին «Արմեդ» համակարգի միջոցով ուղեգրելուց հետո, հնարավորություն չունեն հետևելու իրենց կողմից տեղադրված ուղեգրի ընթացքին և խնդիրներ առաջանալու պարագայում վերացնելու դրանք՝ կազմակերպելով անձանց ուղեգրումը: Հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձինք, շատ հաճախ բարձրաձայնել են այն հարցը, որ իրենց կողմից ներկայացված դիմումները մերժվել են, իսկ իրենք և ուղեգրող անձինք տեղյակ չեն մերժման պատճառների վերաբերյալ, ինչը հանգեցնում է անձանց ֆունկցիոնալության գնահատման կազմակերպման գործընթացի անհարկի ձգձգումների:

Միաժամանակ, արձանագրվել է նաև, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն էլ իրենց հերթին, չնայած

անցկացված դասընթացներին, շատ հաճախ ուղեգրման գործընթացն իրականացնում են մի շարք սխալներով՝ կցելով ոչ անհրաժեշտ նյութեր, չտրամադրելով անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ, իսկ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց ֆունկցիոնալության գնահատման գործընթացում արձանագրվել են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից անհրաժեշտ բժշկական հետազոտությունների կազմակերպման, բժշկական փաստաթղթերի փաթեթների պատրաստման ձգձգումներ: Խնդիրներ են արձանագրվել նաև «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի և Միասնական սոցիալական ծառայության պատշաճ համագործակցության ոլորտում: Այս համատեքստում, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կարևոր է նաև օրենսդրությամբ ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու գործընթացի համար հստակ ժամկետների սահմանումը և ուղեգրմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգերի ներդնումը:

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշման 39-րդ կետի համաձայն՝ անձի ֆունկցիոնալության գնահատման ընթացքում լրացուցիչ բժշկական հետազոտություն իրականացնելու անհրաժեշտության պարագայում (ախտորոշումը ճշտելու կամ բժշկական հետազոտական հատուկ մեթոդների կիրառում պահանջող դեպքերում, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեղեկություններ ստանալու համար), գնահատող հանձնաժողովն անձին ուղեգրում է լրացուցիչ բժշկական հետազոտության՝ տրամադրելով ուղեգիր, որը ձևավորվում է էլեկտրոնային համակարգում և հասանելի է դառնում այն կազմակերպությանը, որին դիմում է գնահատվողը: Մինչդեռ՝ բողոքների ուսումնասիրության արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված տեղեկությունների համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից անձանց «e-disability» համակարգի միջոցով տրված լրացուցիչ բժշկական հետազոտություն անցնելու ուղեգրերը հասանելի չեն ինչպես այդ անձանց, այնպես էլ վերջիններիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին, ուստի վերջիններս տեղեկացված չեն լինում նման ուղեգրման մասին:

Արձանագրվել են նաև մասնագետների, օրինակ՝ հոգեբույժների, պակասի հետ կապված խնդիրներ: Նշված խնդիրը առավել արտահայտված է մարզերում:

Խնդրահարույց է այն, որ «e-disability» համակարգի միջոցով ինքնաշխատ կերպով գեներացվող որոշումները չեն պարունակում համապատասխան տեղեկատվություն այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը: Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կրկին ընդգծում է գնահատվող անձին համապարփակ տեղեկատվության փոխանցման անհրաժեշտությունը, որով հնարավորություն կտրվի վերջինիս ծանոթանալու իր նկատմամբ ընդունված որոշման բոլոր էական հանգամանքներին:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ առկա է ֆունկցիոնալության գնահատման արդյունքում ընդունված որոշումների բողոքարկման մեխանիզմի կատարելագործման անհրաժեշտություն: Մասնավորապես, դիմումների և բողոքների ուսումնասիրության և քննարկման շրջանակներում արձանագրվել է, որ ֆունկցիոնալության վերագնահատումների մեծ

մասի արդյունքում անձի նկատմամբ սահմանվել է տոկոսային արտահայտությամբ ֆունկցիոնալության սահմանափակման ավելի ցածր աստիճան: Այսպես, օրինակ, բողոքներից մեկի քննարկման ընթացքում արձանագրվել է, որ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում անձի սահմանափակման աստիճանը գնահատվել է 21%, իսկ վերագնահատման արդյունքում՝ 19%:

Խնդրահարույց է այն, որ 2024 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների հետևանքով Մարդու իրավունքների պաշտպանին դիմած բազմաթիվ անժամկետ հաշմանդամություն ունեցող անձինք, բարձրաձայնել են այն հարցը, որ ստիպված են եղել անցնել ֆունկցիոնալության կրկնակի գնահատում իրենց անհրաժեշտ ծառայություններից, այդ թվում՝ անձնական օգնականի ծառայություններից օգտվելու համար, այնպիսի պայմաններում, երբ իրենք արդեն իսկ ունեցել են անժամկետ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ, որը սահմանվել է վերականգնման ոչ ենթակա կենսագործունեության սահմանափակում ունենալու հիմքով: Ընդ որում, նշված փոփոխությունների վերաբերյալ նախագիծն ու դրա հիմնավորումները Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի չեն ներկայացվել:

Մարդու իրավունքների պաշտպանի համար շարունակում է մտահոգիչ մնալ այն, որ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում մշակված փաստաթղթով՝ ծառայությունների անհատական ծրագրերով, թեև կարող են նախատեսվել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձի լիարժեք և արդյունավետ մասնակցությունը խթանելու, անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով անհրաժեշտ բժշկական, վերականգնողական, կրթական, մասնագիտական, սոցիալական ծառայություններ և միջոցառումներ, սակայն դրանցից ոչ բոլորի իրականացումն է նախատեսված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Խնդրահարույց է նաև այն, որ բացակայում է օրենսդրական հնարավորությունը ֆունկցիոնալության թեթև աստիճանի սահմանափակում ունեցող անձանց համար նույնպես կազմելու ծառայությունների անհատական ծրագիր և տրամադրելու անհրաժեշտ ծառայություններ:

Չնայած պետության կողմից աջակցող միջոցների տրամադրման ոլորտում ձեռնարկած միջոցներին՝ 2024 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրները, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են աջակցող միջոցների որակին, օգտագործման առանձնահատկությունների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկմանը և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ միջոցներ ձեռնարկել ուղեգրման գործընթացի բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ բարձրացնելով այդ գործընթացում ներառված մասնագետների հմտություններն ու կարողությունները, բացառելով «e-disability» և «Արմեդ» համակարգերում առկա տեխնիկական խնդիրները, օրենսդրությամբ սահմանելով հստակ ժամկետներ, ներդնելով ուղեգրմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգեր և այլն:

✓ միջոցներ ձեռնարկել բացառելու տարբեր պատճառներով ֆունկցիոնալության գնահատման գործընթացի ձգձգումները, ի թիվս այլնի, ապահովելով անհրաժեշտ մասնագետների ներգրավումը գործընթացին:

✓ միջոցներ ձեռնարկել երաշխավորելու բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ տեղեկատվության ներառումը «e-disability» համակարգի միջոցով ինքնաշխատ կերպով գեներացվող որոշումներում:

✓ միջոցներ ձեռնարկել օրենսդրական և գործնական մակարդակում կատարելագործելու վերագնահատման և կրկնակի գնահատման մեխանիզմները:

✓ ծառայությունների անհատական ծրագրով հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով սահմանված բոլոր ծառայությունների և միջոցառումների իրականացման համար ապահովել պետական բյուջեով նախատեսված միջոցներից դրանք ստանալու հնարավորություն:

✓ գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձի կարիքին համապատասխան որակյալ աջակցող միջոցների իրազեկ և անխոչընդոտ ձեռքբերումը, վերանորոգումը և օգտագործման առանձնահատկությունների վերաբերյալ պատշաճ իրազեկումը:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1987-Լ որոշման հավելված 2-ի համաձայն՝ որպես ակնկալվող արդյունք մինչև 2022 թվականի երկրորդ կիսամյակ նախատեսվել է ընդունել անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման վերաբերյալ գործողությունների ծրագիրը հաստատելու մասին Կառավարության որոշումը, ընդունել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի վերաբերյալ օրենսդրությունը, ներդնել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմը: Նույն որոշման 3-րդ հավելվածի համաձայն՝ նախատեսվել է վերանայել անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումները՝ բացառելով իրենց իրավունքներին և շահերին առնչվող այլ խնդիրներով դատարան դիմելու կամ լսված լինելու իրավունքի անհամաչափ սահմանափակումները:

Անկախ ապրելու իրավունքի երաշխավորման նպատակով պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության միջոցով որոշումների կայացման կառուցակարգի ներդրմանն ու նրանց փոխարեն որոշումներ ընդունելու գործելակերպի բացառմանն ուղղված միջոցների ձեռնարկման ու իրականացման կարևորությանը հատուկ անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումների շրջանակում[378]:

---

[378] Տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ դեռևս վերանայված չեն անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումները և ներդրված չէ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ: Խիստ մտահոգիչ է այն, որ օրենսդրական մակարդակում գործում են կարգավորումներ, որոնք արգելք են անգործունակ ճանաչված անձանց համար իրացնելու իրենց արդար դատաքննության իրավունքը: Օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց իրավունքները և ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողը, խնամակալը կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք: Դատարանը կարող է տասնչորս տարեկան չդարձած անչափահասին կամ անգործունակ ճանաչված անձին ընձեռել գործի քննության ընթացքում լսվելու իրավունք: Ընդ որում, նման կարգավորումը ոչ թե պարտադիր, այլ հայեցողական լիազորություն է նախատեսում՝ ապահովելու անգործունակ ճանաչված անձի լսված լինելու իրավունքը և այլն:

Թեև ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2024 թվականի ընթացքում շրջանառվել է նախագիծ, որն ուղղված է անգործունակության ինստիտուտի և մի շարք այլ ոլորտների բարելավմանը, սակայն հարկ է փաստել, որ նախագծով նախատեսված կարգավորումները նույնպես հուսալի նախադրյալներ չեն ստեղծում՝ երաշխավորելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրումն ու արդար դատաքննության իրավունքի մատչելիությունը:

Կարևոր է ևս մեկ անգամ ընդգծել, որ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ևս անդրադարձել է նշված հարցին՝ առաջարկելով դադարեցնել առկա խտրական իրավական ակտերի գործողությունները, ինչպես նաև վերականգնել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց լիարժեք գործունակությունը և ներդնել աջակցող որոշումների կայացման ռեժիմ[379]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ ապրելու իրավունքի երաշխավորման նպատակով ևս մեկ անգամ կարևորում է պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության միջոցով որոշումների կայացման կառուցակարգի ներդրմանն ու նրանց փոխարեն որոշումներ ընդունելու գործելակերպի բացառմանն ուղղված միջոցների ձեռնարկումն ու իրականացումը:

652-666, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[379] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները հասանելի են https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FARM%2FCO%2F1%2FAdd.1&Lang=en հղումով:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի և հասարակության մեջ լիարժեք և հավասար մասնակցության նախապայման է: Առանց ֆիզիկական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և համակարգերի, ինչպես նաև հանրության համար բաց հաստատությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների պատշաճ հասանելիության, հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող հավասար մասնակցության ունենալ հասարակական կյանքում:

Մատչելիությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով ամրագրված հիմնական սկզբունքներից է, որը կարևոր նախապայման է հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի, կարծիքի արտահայտման ազատության և այլ իրավունքների իրացումն ապահովելու համար:

Մատչելիության ապահովման պարտավորությունն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայում, «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովումը, խտրականության բացառումը, որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Մինչդեռ՝ 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ մատչելիության ապահովման տեսանկյունից շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ

տարիների տարեկան հաղորդումներում[380] և արտահերթ հրապարակային զեկույցում[381]:

Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

• ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ,

• տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության տեսանկյունից խիստ կարևորում է կյանքի բոլոր ոլորտներում (այդ թվում՝ առողջապահության, կրթության, զբաղվածության) մատչելիության ապահովումը, որոնց ավելի մանրամասն անդրադարձ է կատարվել սույն բաժնի տարբեր գլուխներում:

1. Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները ցույց են տալիս, որ շարունակում են արդիական մնալ բնակելի, հասարակական, արտադրական և այլ գործառնական նշանակություն ունեցող շենքերի և շինությունների, այդ թվում՝ նոր կառուցված և վերակառուցված շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների, կանգառների և այլնի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները:

Խիստ մտահոգիչ է այն, որ շարունակվում են արձանագրվել նոր կառուցված և վերակառուցված շենքերի և շինությունների մատչելիության նորմերի պահպանման հետ կապված խնդիրներ: Մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները

---

[380] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1335-1367, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 667-679, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[381] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 62-100 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

սահմանելու մասին» թիվ 2093-Ն որոշմամբ վերակառուցված և «ավարտված» կարգավիճակն ունեցող Երևանի Վարդգես Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցում, օրինակ, առկա են մատչելիության ապահովման հետ կապված բազմաթիվ խնդիրներ:

Մասնավորապես, արձանագրվել է, որ դպրոցի գլխավոր մուտքից՝ Նաիրի Զարյան փողոցի կողմից, օրինակ, բացակայում է թեքահարթակը, որը կկապի մայթի և դպրոցի հարթակները, դպրոցի նախասրահի (ընդունարանի) աստիճանավանդակը կառուցված է այնպես, որ հնարավոր չէ ներքևի նիշից բարձրանալ վերևի նիշ, բացակայում են բազրիքները, վերևի նիշից դեպի ներքև նայելիս, առկա է գույների միաձուլում (հատակ և աստիճան), օգտագործված չէ գունային կոնտրաստ: Դպրոցում առկա բոլոր լվացարանները տեղադրված են նույն բարձրության վրա և մատչելի չեն սայլակ օգտագործողների համար, դպրոցում առկա է հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված մեկ սանհանգույց, որի դռները երկփեղկ են, բարդություն են առաջացնում սայլակ օգտագործող անձանց համար և բացվում են՝ ջեռուցման մարտկոցին (ռադիատորին) դիպելով,

բոլոր սանհանգույցներում, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցում լույսի անջատիչները տեղադրված են 180 սմ բարձրության վրա, սանհանգույցների ոչ բոլոր դռներն են բացվում դեպի դուրս, բացակայում են տակտիլային հատակային ցուցանակները, դպրոցի դահլիճը գտնվում է 4-րդ հարկում, որտեղ հնարավոր է հասնել միայն աստիճաններով բարձրանալու միջոցով, դահլիճում ևս բեմի նիշ հասնելու համար միայն օգտագործվում են աստիճաններ, նստարանների մեջտեղում գտնվող միջանցքը ընդհատումներով է և այլն:

Արձանագրվել են նաև խնդիրներ նոր կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում: Այսպես, օրինակ, արձանագրվել է, որ նախագծերում պահպանված չեն թեքահարթակների հիմնական հարաչափերին ներկայացվող ներպետական և միջազգային չափորոշիչները, պահպանված չէ թեքահարթակների բռնածողերին ներկայացվող պահանջներն առ այն, որ դրանք հարկավոր է տեղադրել 0,7 և 0,9 մ բարձրության վրա, սանդուղքների մոտ 0,9 մ բարձրության վրա, իսկ նախադպրոցական հիմնարկներում նաև 0,5 մ բարձրության վրա, նախագծերից մեկում, օրինակ, դահլիճի բեմի նիշ հասնելու համար միայն օգտագործվում են աստիճաններ, դահլիճի բեմ հասնելու հատվածը ընդհատումներով է, ամբողջ հաստատությունում 2-րդ հարկ բարձրանալու համար նախագծված է սայլակով տեղաշարժվող մեկ անձի համար նախատեսված նվազագույն չափանիշներին համապատասխանող խցիկ ունեցող միայն մեկ վերելակ և այլն:

Խիստ մտահոգիչ է այն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Սյունիքի մարզում, օրինակ, կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել

է 58 շենք-շինություն, որոնցից 45-ն են մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Արտաշատ համայնքում տրամադրվել է 126 շենք-շինությունների շահագործման թույլտվություն՝ 24-ը եղել են հասարակական, որոնցից 20-ն են մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մասիս համայնքում կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել է 1090 շենք-շինություն, որոնցից 150-ն են մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Վեդի համայնքում կառուցվել են 270 շենք-շինություններ, վերակառուցվել՝ 64-ը, որոնցից 17-ն են մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Արմավիրի մարզում կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել է 183 շենք-շինություն, որից 102-ն են մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար և այլն:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերով Երևան քաղաքի վարչական շրջաններում մեկնարկել են թեքահարթակների կառուցման աշխատանքներ: Ծրագիրը կրում է շարունակական բնույթ և 2025 թվականին նույնպես նախատեսվում է կառուցել: Կարևորելով նշված նախաձեռնությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է դրանց շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ բացառելով մատչելիության նորմերին չհամապատասխանող թեքահարթակների կառուցումը: Նշված մտահոգությունը պայմանավորված է նրանով, որ շատ հաճախ նոր կառուցված թեքահարթակները նույնպես չեն համապատասխանում մատչելիության նորմերին:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքներն ու ստացված տեղեկատվության վերլուծությունը ցույց են տալիս, որ շենքերի և շինությունների կառուցման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքը չապահովելու գործելակերպը կրում է շարունակական բնույթ, իսկ դրա պատճառները բազմաթիվ են: Այդպիսիք են թերի վերահսկողական կառուցակարգերը, օրինակ, մատչելիության նորմերի խախտումներ պարունակող նախագծերի առնչությամբ տրված թույլտվությունները վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից անվավեր ճանաչելու գործուն մեխանիզմների բացակայությունը, քաղաքաշինական գործունեության մեջ ներգրավված սուբյեկտների՝ մատչելիության նորմերի վերաբերյալ ոչ բավարար մասնագիտական գիտելիքները, մարդկային ռեսուրսները և այլն:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն
Բոլոր նոր շենքերն ու շինությունները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք ամբողջությամբ մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համապատասխանելով համընդհանուր դիզայնի սկզբունքներին: Մեկնաբանության համաձայն՝ մասնակից պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացող մատչելիության հիմնահարցերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի համար ուսուցողական դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ, որը ներառում է նաև քաղաքաշինական գործունեության իրականացման մեջ ներգրավված բոլոր սուբյեկտների վերապատրաստումները:

Հատկանշական է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, օրինակ, հատուկ ուշադրություն է դարձվել ունիվերսալ դիզայնի (Universal Design for Learning - UDL), մատչելիության և խելամիտ հարմարեցումների վերաբերյալ լրացուցիչ կրթական ծրագրերի ներդրմանը: Այս ուղղությամբ իրականացվել է կրթական ծրագրերի վերանայում և փոփոխություն, որը ուժի մեջ կմտնի 2026 թվականից, իրականացվել է դասախոսների պատրաստություն, մշակվել են լրացուցիչ կրթական ծրագրեր, կիրառվել են ներառականության աջակցման տեխնոլոգիաներ և այլն: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ համայնքային ծառայողների վերապատրաստումն իրականացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով հաստատված վերապատրաստման ծրագրով: Ծրագրի բովանդակությունը ներառել է «Համայնքային սոցիալական աշխատանքի նպատակները և խնդիրները. Համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում» թեման: Դասախոսության շրջանակում անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների իրավունքին: Վերապատրաստումը իրականացվել է 35 խմբի 694 համայնքային ծառայողների (ՀՀ մարզերի) շրջանակում:

Համընդհանուր մատչելիության նպատակին հասնելու հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր նախապայման է համարում ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշներին և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող առարկայական ծրագրերի ներդրման ու մասնագետների վերապատրաստման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շարունակականության ապահովումը: Նշված առաջարկը պայմանավորված է նաև նրանով, որ շատ հաճախ, պետական իրավասու մարմինների աշխատակիցները մատչելիության ապահովումը դիտարկում են բացառապես թեքահարթակների կառուցման տրամաբանությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների փուլային կարգով վերակառուցմանն ուղղված գործուն և անհետաձգելի միջոցների ձեռնարկումը՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության նորմերը:

Այդ կապակցությամբ խիստ մտահոգիչ է այն, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի թիվ 250-Լ որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ուսումնասիրված և անձնագրավորված Երևան քաղաքի թվով 16 օբյեկտների, 28 շենքերի ու շինությունների մասով 2024 թվականին նախատեսվող մատչելիության նախագծային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով 2024 թվականի ընթացքում կազմակերպվել են գնման գործընթացներ և կնքվել են պայմանագրեր: ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի հուլիսի 23-ի N 01/11-4/11484-2024 գրությամբ ներկայացվել է կարծիք, ըստ որի՝ ծրագրի իրագործման ֆինանսական միջոցների տրամադրումը հնարավոր է 2026 թվականից: Ուստի, ֆինանսավորում չնախատեսվելու պատճառով կնքված պայմանագրերը լուծվել են՝ 2026 թվականին դրանց ֆինանսավորմանն անդրադառնալու պայմանով:

Ավելին, նախագծային հատուկ լուծումներով համալրման ենթակա օբյեկտների ցուցակում ընդգրկված չեն նախարարություններին, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններին, մարզպետների աշխատակազմերին, համայնքապետարաններին հատկացված շենքերը, սպորտային, մշակութային և ժամանցային բոլոր վայրերը, քրեակատարողական հիմնարկները, ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի դատարանները և այլն: Խնդրահարույց է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին այս պահին հատկացված շենքը նույնպես մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ մատչելիության ապահովում հատկացված շենքում հնարավոր չէ իրականացնել: Հարցի կապակցությամբ առկա է ՀՀ կառավարության որոշում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի կերպով վերակառուցված նոր շենք հատկացնելու վերաբերյալ:

Նշվածը առավել մտահոգիչ է այն հաշվառմամբ, որ ոլորտում ռազմավարական փաստաթուղթ հանդիսացող «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ՝ որպես «Հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների մատչելիության ապահովում» միջոցառման արդյունք, նշված է միայն հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների մատչելիության ապահովման ծրագիր- ժամանակացույցի վերաբերյալ իրավական ակտի մշակումը:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է պետության կողմից այնպիսի միջոցառումների մշակումն ու իրականացումը, որոնց համատեքստում որպես վերջնարդյունք հստակ կնախանշվի կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների վերակառուցումը՝ նշելով ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգերը:

Կարևոր է, որ այդ միջոցառումները հստակ ժամանակացույց պարունակեն բնակելի, հասարակական, արտադրական և այլ գործառնական նշանակություն ունեցող բոլոր շենքերի և շինությունների, այդ թվում՝ նախարարություններին, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններին, մարզպետների աշխատակազմերին, համայնքապետարաններին հատկացված շենքերի, սպորտային, մշակութային և ժամանցային բոլոր վայրերի, քրեակատարողական հիմնարկների, ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ դատարանների, առաջին ատյանի դատարանների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կանգառների, ստորգետնյա և վերգետնյա անցումների, մայթերի և ճանապարհների, ավտոկայանատեղերի և այլնի մատչելիության ուղղությամբ իրականացվող անհետաձգելի աշխատանքների վերաբերյալ:

Ընդ որում, նշված միջոցառումների իրականացումը պետք է ընդգրկի Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը, հաշվի առնելով նաև այն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մարզերի մեծ մասում վերգետնյա և ստորգետնյա անցումները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ, օրինակ, միջոցառումներ չեն իրականացվել: 2024 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզում, օրինակ, կառուցվող շենք-շինությունները տարվա վերջի դրությամբ շահագործման չեն հանձնվել:

Նշվածի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ թեև տարիներ շարունակ բարձրացվել է ֆիզիկական մատչելիության ապահովման հարցում անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունը, ներկայացվել են առաջարկություններ, սակայն մշտադիտարկումների արդյունքները, ստացված բողոքների ուսումնասիրությունները ու տրամադրված տեղեկությունները կրկին վկայում են այն մասին, որ չնայած պետության կողմից իրականացվող միջոցառումներին՝ դրանք բավարար չեն և չեն երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը: Տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ խնդիրն առավել արդիական է շարունակում մնալ Հայաստանի Հանրապետության մարզերում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն
Պետությունը պարտավոր է ապահովել ֆիզիկական միջավայրի մատչելիությունը և՛ քաղաքներում, և՛ գյուղական համայնքներում:

Ֆիզիկական մատչելիության կարևոր բաղադրիչ է նաև փոխադրամիջոցների մատչելիության ապահովումը: Մինչդեռ՝ 2024 թվականի ընթացքում շարունակել են չլուծված մնալ նախկինում արձանագրված օրենսդրական խնդիրները՝ կապված, օրինակ, միջմարզային, ներմարզային և բազմաբնակավայր համայնքների բնակավայրերի միջև կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող պահանջների հետ, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպություններին մրցույթին մասնակցել ընդամենը երթուղիներում ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսի չափով մատչելի կամ հարմարեցված ավտոբուսների ապահովմամբ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն

Օրենսդրությունը պետք է պարունակի մատչելիության պահանջներ պետական գնումների ընթացակարգերում: Անընդունելի է պետական միջոցների օգտագործումը անհավասարություն ստեղծելու կամ ամրապնդելու համար, որն անխուսափելիորեն առաջանում է անհասանելի ծառայությունների և ենթակառուցվածքների պատճառով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ օրենսդրությամբ նախատեսված է ոչ մատչելի նոր փոխադրամիջոցներ ձեռք բերելու հնարավորություն, որպիսի կարգավորումը չի բխում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներից:

Խիստ մտահոգիչ է այն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականին սուբվենցիոն ծրագրով ՀՀ Շիրակի մարզը ձեռք է բերել թվով 10 ավտոբուս, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չեն: 2024 թվականի ընթացքում Գյումրի քաղաքում ձեռք է բերվել թվով 23 միկրոավտոբուս, որոնցից 5-ն են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար և այլն:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկումները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի համարվող ավտոբուսների պարագայում ևս առկա են մատչելիության երաշխավորման հետ կապված խնդիրներ: Այսպես, օրինակ, Գյումրու ներհամայնքային ավտոբուսների մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի համարվող ավտոբուսը գործնականում մատչելի չէ, օրինակ, տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձի համար, սայլակների համար նախատեսված հատվածը չափազանց փոքր է՝ երաշխավորելու ավտոբուսի մատչելիությունը սայլակով տեղաշարժվող անձի համար և այլն:

Խնդրահարույց է նաև այն, որ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի դրությամբ Երևան քաղաքի ներհամայնքային երթուղիներում շահագործվում են «ՀԻԳԵՐ» մակնիշի 103 հատ ավտոբուսներ, որոնք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Արտաշատ, Մասիս, Վեդի, Վերին Դվին համայնքներում, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված մատչելի տրանսպորտային միջոցներ առկա չեն: Գեղարքունիքի մարզում առկա են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող թվով 6 ավտոբուսներ և 51 միկրոավտոբուսներ: Դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Լոռու մարզում առկա է 61 ավտոբուս, 39 միկրոավտոբուս, որոնցից հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի է 1 ավտոբուս, 1 միկրոավտոբուս և այլն:

Նշված ցուցանիշները շարունակում են վկայել այն մասին, որ գործող կառուցակարգերը չեն երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների ապահովումը, հատկապես, ՀՀ մարզերում, որպիսի պայմաններում անհրաժեշտ է ներդնել նոր կառուցակարգեր՝ ուղղված Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոխադրամիջոցների մատչելիության ապահովմանը՝ երաշխավորելով հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել շենքերի և շինությունների կառուցման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքի ապահովմանն ուղղված գործուն կառուցակարգեր, ներառյալ՝ վերահսկողական մեխանիզմներ՝ բացառելով նոր կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների ոչ մատչելի լինելը:***
- ✓ ***շարունակել ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշներին և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող առարկայական ծրագրերի ներդրմանն ու մասնագետների վերապատրաստումների իրականացմանն ուղղված աշխատանքները:***
- ✓ ***մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք կնախանշեն կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների վերակառուցումը որպես վերջնարդյունք՝ նշելով ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգերը:***
- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել ՀՀ մարզերում ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման ուղղությամբ:***
- ✓ ***իրականացնել ներհամայնքային, միջմարզային և ներմարզային բնակավայրերի միջև կանոնավոր երթուղիների բոլոր փոխադրամիջոցների մատչելիության ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ՝ երաշխավորելով հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար փոխադրամիջոցների հասանելիությունը:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել գործնականում բացառելու ոչ մատչելի փոխադրամիջոցների ձեռքբերումը:***

2. Տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ շարունակվում են արդիական մնալ տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի բոլոր ոլորտներում բազմիցս բարձրաձայնվող խնդիրները:

2024 թվականին շարունակում են արդիական մնալ մատչելի թվային ծառայությունների ապահովման հետ կապված խնդիրները:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց համար դեռևս մատչելի չեն այնպիսի կարևոր նշանակություն ունեցող կայքէջեր, ինչպիսիք են, օրինակ, իրավական ակտերի նախագծերի միասնական կայքէջը՝ «e-draft.am», Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը՝ «arlis.am», դատական տեղեկատվական համակարգը՝ «datalex.am», «e-request.am» էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը և այլն:

Պաշտպանը խիստ կարևորում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջի մատչելիության ապահովումը, ինչի առնչությամբ 2024 թվականից իրականացվում են կայքէջի փոփոխության հետ կապված աշխատանքներ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն

Արդարադատության մատչելիության ապահովումը չի կարող երաշխավորվել պետության կողմից, եթե օրենսդիր և դատական համակարգի ծառայությունները չեն ապահովում իրենց կողմից տրամադրված տեղեկությունների և հաղորդակցման մեխանիզմների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար*:*

Կարևորելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից կայքերի մատչելիության ապահովման նպատակով ուղեցույցների և գործիքների մշակման հետ կապված աշխատանքների իրականացումը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2024 թվականի դրությամբ դեռևս ներդրված չեն այնպիսի գործուն կառուցակարգեր, որոնք կբացառեն ոչ մատչելի կայքերի ստեղծումը և կապահովեն թվային ծառայությունների մատչելիությունը:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ շարունակում են արդիական մնալ նաև բանկերի և այլ ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները: Ընդ որում, խնդիրները կապված են ինչպես օրենսդրական կարգավորումների, այնպես էլ գործնականում մատչելի ծառայությունների տրամադրումն երաշխավորելու գործուն կառուցակարգերի ներդրման հետ: Այսպես, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն. «Եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ քաղաքացի: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող այլ պաշտոնատար անձը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել այն ստորագրել»:

Մարդու իրավունքների պաշտպանը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների մշտադիտարկում իրականացնող անձ, խնդրահարույց է համարում նման կարգավորումների առկայությունը և կիրառումը: Պետությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու հասարակությանը տրամադրվող ծառայությունների մատչելիությունը՝ բացառելով մասնավոր սուբյեկտների կողմից այնպիսի խտրական մոտեցումներ կիրառելու օրենսդրական հնարավորությունը, ինչպիսիք են մատչելի տեղեկատվության տրամադրման փոխարեն հաշմանդամություն ունեցող անձի վրա լրացուցիչ ֆինանսական բեռ դնելն ու երրորդ անձի գործարքների մեջ ներգրավելը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ ապրելու նախապայման է: Պետությունը պարտավոր է իրականացնել բոլոր համապատասխան միջոցները փոխելու այն օրենսդրական կարգավորումները, որոնք պարունակում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումներ:

Մեկ այլ դեպքում՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ՝ վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին»: Նշված կարգավորման հետևանքով Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում ստացել է բողոքներ առ այն, որ հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր ունեն տեղաշարժման հետ կապված խնդիրներ, չեն կարողացել ներկայանալ բանկ և ստորագրել հայտարարություն ՀՀ-ում լինելու մասին և նրանց հաշմանդամության կենսաթոշակի վճարումը դադարեցվել է բանկ չներկայանալու պատճառաբանությամբ: Առաջացած իրավիճակն անթույլատրելի է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների մատչելիության երաշխավորման տեսանկյունից, պետությունը պետք է քայլեր ձեռնարկի այդպիսի դեպքերի բացառումն ապահովելու ուղղությամբ:

2024 թվականի ընթացքում արդիական են մնացել առողջական վիճակի, հիվանդության ախտորոշման, տրամադրված (տրամադրվող) բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ բուժման մեթոդների ընտրության, կիրառման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ մատչելի ձևով տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց փոխանցելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող սպառողներին արտադրողի (կատարողի, վաճառողի), նրա աշխատանքային ռեժիմի և իրացվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ

տեղեկատվություն փոխանցելու գործուն կառուցակարգերի ներդրման հետ կապված խնդիրները:

2024 թվականի ընթացքում արդիական են մնացել նաև թանգարաններում, գրադարաններում և ոչ նյութական մշակութային ժառանգության բնագավառում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի հիմունքներով արդյունավետ ծրագրերի իրականացման հետ կապված խնդիրները:

Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ օրենսդրությամբ սահմանված մանկական և լրատվական մատչելի տեսալսողական հաղորդումների և ֆիլմերի չափաքանակները շարունակում են քիչ լինել հաշմանդամություն ունեցող անձանց՝ տեղեկատվություն ստանալու մատչելիության ապահովման տեսանկյունից:

Տեղեկատվության մատչելիության ապահովման տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է հասարակական տրանսպորտից օգտվելու ընթացքում մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը: Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ գործնականում չի ապահովվում մատչելի ձևաչափով տեղեկատվության տրամադրումը հաշմանդամություն ունեցող ուղևորներին:

Այսպես, օրինակ, Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականին ձեռք է բերվել և մայրաքաղաք ներկրվել 171 հատ «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի միջին դասի ավտոբուս և 15 հատ «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի տրոլեյբուս: Դրանք բոլորը մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ գործնականում չեն օգտագործվում ավտոբուսների բոլոր հնարավորությունները, որոնք կարող են երաշխավորել տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տեղեկատվություն, այդ թվում՝ կանգառների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Այդ առումով կարևոր է նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ վարորդների իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ հասարակական տրանսպորտի վարորդները շատ հաճախ իրազեկված չեն հաշմանդամություն ունեցող ուղևորների իրավունքների մասին, չունեն նրանց հետ հաղորդակցվելու հմտություններ, ավտոբուսները կանգառներում կայանում են այնպիսի եղանակով, որը հնարավորություն չի տալիս սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն օգտվել փոխադրամիջոցից:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման համար կարևոր է տեղեկատվական տարբեր միջոցների՝ այդ թվում՝ ձայնային փարոսիկների (ձայնային լուսացույցների), տակտիլային ցուցանակների օգտագործումը:



Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքում առկա է 1200 կանգառ, որոնցից նոր տեղադրված թվով 97 կանգառասրահների հատակները կահավորված են գոգավոր-ուռուցիկ սալիկներով՝ տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու համար: Մինչդեռ՝ մշտադիտարկման արդյունքում

արձանագրվել է, որ կանգառներից մեկում, օրինակ, տակտիլը տեղադրվել է ոչ ճիշտ նպատակային նշանակությամբ:

Նոր կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող շենքերի և շինությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ դրանք որևէ կերպ չեն նախանշում տակտիլային սալիկների օգտագործում: Իսկ ձայնային փարոսիկներ օգտագործվում են շատ քիչ՝ չերաշխավորելով տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ներդնել գործուն կառուցակարգեր՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար թվային ծառայությունների, այդ թվում՝ կայքերի մատչելիությունն ու արդիականությունը:***
- ***իրականացնել օրենսդրական փոփոխություններ, որոնք պարունակում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումներ՝ բացառելով մյուսների հետ հավասար հիմունքներով ծառայություններից, այդ թվում՝ բանկերի կողմից տրամադրվող ծառայություններից օգտվելու սահմանափակումները:***
- ***միջոցներ ձեռնարկել՝ ավելացնելու մատչելի ձևաչափով հեռուստատեսությամբ հեռարձակվող նյութի չափաքանակը:***
- ***միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու հասարակական տրանսպորտից օգտվելու ընթացքում մատչելի տեղեկատվություն, այդ թվում՝ կանգառների վերաբերյալ ինքնուրույն տեղեկատվություն ստանալու իրավունքը:***
- ***իրականացնել կանոնավոր երթուղիների փոխադրամիջոցների վարորդների վերապատրաստումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելու, փոխադրամիջոցների հնարավորությունները օգտագործելու հմտությունների կատարելագործմանը:***
- ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձի համար ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ տեղեկատվական տարբեր միջոցների՝ այդ թվում՝ ձայնային փարոսիկների (ձայնային լուսացույցների), տակտիլային ցուցանակների օգտագործմամբ:***

ԳԼՈՒԽ 3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պետությունը հաշմանդամություն ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ հարգանքը սահմանել է որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը: Այդ նպատակով պետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակել է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Պետությունը պարտավորվել է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով ընդհանուր բարձրագույն կրթության, մասնագիտական կրթության, մեծահասակների ուսուցման և ամբողջ կյանքի ընթացքում կրթության մատչելիությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքն ապահովելու պարտավորությունն իր ամրագրումն է գտել միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում, դրանց վերաբերող մեկնաբանություններում, «Հանրակրթության մասին» օրենքում, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Մինչդեռ՝ 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում և արտահերթ հրապարակային զեկույցում[382]: Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

- մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ,
- կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ,

---

[382] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 64-71 և 154-184 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 680-689, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

- հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելու խնդիրը:

1. Մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ

2024 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատությունների, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող, բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները:

Մշտադիտարկման արդյունքում խնդիրներ են արձանագրվել ինչպես նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատությունների, այնպես էլ նոր կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող ուսումնական հաստատությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում: Արձանագրված խնդիրներն առավել մանրամասն ներկայացված են սույն բաժնի «Մատչելիություն» վերտառությամբ գլխում:

Խնդրահարույց է այն, որ արձանագրվում են կրթության իրավունքը տնային պայմաններում իրականացնելու դեպքեր՝ պայմանավորված ուսումնական հաստատությունների ոչ մատչելի լինելով: Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ Վայոց ձորի մարզում տեղաշարժման դժվարություններով պայմանավորված 4 երեխայի կրթության իրավունքը տնային պայմաններում է իրականացվում:

Շատ հաճախ ուսումնական հաստատությունների մատչելիության վերաբերյալ պատկերացումները սահմանափակվում են միայն թեքահարթակների կառուցմամբ: Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ուսումնական հաստատություններում մատչելիության և խելամիտ հարմարեցումների ապահովման նպատակով 2024թ. ընթացքում Դիլիջանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Դիլիջանի Հովի. Շարամբերյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցում» և «Դիլիջանի մարզահամալիր» ՀՈԱԿ-ի շենքում կառուցվել են թեքահարթակներ: Նոյեմբերյան համայնքի Բերդավան և Արճիս բնակավայրերի մանկապարտեզներում կառուցվել են թեքահարթակներ:

Մարդու իրավունքների պաշտպանը մշտադիտարկման շրջանակներում արձանագրել է նաև, որ շատ հաճախ դպրոցների միայն առաջին հարկերն են մասամբ մատչելի տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող երեխաների համար, որով պայմանավորված բացակայում է որոշ առարկաներին, այդ թվում՝ «ֆիզիկա» և «քիմիա» առարկաներին, մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով մասնակցելու հնարավորությունը՝ պայմանավորված այդ առարկաների դասասենյակներ հասնելու ճանապարհի ոչ մատչելի լինելով:

Ուսումնական հաստատությունների հասանելիությունն ու մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավոր է երաշխավորել միայն տրանսպորտային համակարգի, կանգառների, մայթերի և այլնի մատչելիության

ապահովմամբ, որի առնչությամբ արձանագրված խնդիրները ներկայացված են սույն բաժնի «Մատչելիություն» վերտառությամբ գլխում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ուսումնական հաստատություններում, ըստ անհրաժեշտության, ներգրավվել կամ հրավիրվել են ժեստերի լեզվի մասնագետներ: Միաժամանակ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի պատասխան այն հարցմանը, թե 2024 թվականի ընթացքում ի՞նչ միջոցառումներ են իրականացվել ապահովելու ժեստերի լեզվի լրացուցիչ կրթական ծրագրի ներդնումը ուսումնական հաստատություններում, հայտնել է, որ համալսարաններից մեկում, օրինակ, պարբերաբար կազմակերպվել են ժեստերի լեզվի դասընթացներ, մեկ այլ համալսարանում իրականացվել է ժեստերի լեզվի լրացուցիչ կրթական ծրագիր ֆակուլտատիվ դասընթացի ձևաչափով:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ ժեստերի լեզվի մասնագետների ներգրավումը կրթական գործընթացներին տարբեր պատճառներով չի իրականացվել: Այդ պատճառներից է եղել, օրինակ, այն, որ ժեստերի լեզվի թարգմանիչը, որին հնարավոր է եղել ներգրավել, չի ունեցել համապատասխան կրթություն:

Վերոնշյալի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պարտավոր է վերացնել բոլոր խոչընդոտները, որոնք կարող են արգելք հանդիսանալ հաշմանդամություն ունեցող անձի կրթության իրավունքի իրացման համար, իսկ մինչև դրա վերացումը, այդ թվում՝ համապատասխան կրթական ծրագրի ամբողջական ներդրումն ու մասնագետների պատրաստումը, պետությունը պարտավոր է հաշմանդամություն ունեցող անձի կրթություն ստանալու իրավունքի իրացումը չբացառելու նպատակով ապահովել համապատասխան խելամիտ հարմարեցումների տրամադրումը: Նման խելամիտ հարմարեցում չտրամադրելը հաշմանդամության հիմքով խտրականություն է, որն էլ իր հերթին հանգեցնում է Կոնվենցիայով նախատեսված պարտավորության խախտման:

Ուսումնական հաստատություններում իրականացված մշտադիտարկումները ցույց են տալիս, որ վերոնշյալը պայմանավորված է նաև նրանով, որ առկա են խելամիտ հարմարեցումների տեսակների հետ կապված թյուր պատկերացումներ: Գործնականում, որպես խելամիտ հարմարեցումներ չեն դիտարկվում, օրինակ, ժեստերի լեզվի թարգմանչի, գրառումներ կատարողի ներգրավումը, առաջադեմ և բարդ սարքավորումների օգտագործումը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են նաև, որ տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար ևս շարունակում են արդիական մնալ կրթության իրավունքի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները: Շարունակվել են արդիական մնալ բրայլյան տառատեսակով տպագրված նյութերի սակավաթիվ և հին լինելու հետ կապված խնդիրները:

Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ (այսուհետ նաև՝ Հաստատություն) իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի

արդյունքում արձանագրվել է, որ Հաստատությունում բնակվող և հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երեխան ապահովված չէ բրայլյան գրքերով և անհրաժեշտ այլ մատչելի ուսումնական նյութերով:

Արձանագրվել են նաև մտավոր, խոսքի և հաղորդակցության հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ուսումնական նյութերի և ուսումնական ծրագրերի կազմակերպման հետ կապված խնդիրներ: Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված այցի ընթացքում ստացվել են տեղեկություններ այն մասին, որ հաճախ, տնային ուսուցման կազմակերպման ժամանակ մատուցվող նյութերը չեն համապատասխանում սանի իրական կրթական կարիքներին և զարգացման հնարավորություններին: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, ինչպես նաև այլ ուսումնական հաստատություններ իրականացված այցերի արդյունքում արձանագրվել է, որ երեխաների կարիքների գնահատման, կրթության կազմակերպման գործընթացը գործնականում չի երաշխավորում դրանց իրական և անհատականացված լինելը: Արձանագրվել է, որ, օրինակ, ուսուցիչները կրթությունը կազմակերպելիս չեն առաջնորդվում կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված անհատական ուսուցման պլաններով, փոխարենը՝ փորձում են բոլոր երեխաներին նույն մոտեցմամբ փոխանցել նյութը՝ երբեմն, որպես հիմնական գործառույթ, իրականացնելով երեխաներին հանդարտեցնելուն ուղղված աշխատանքներ:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կրթության իրավունքի մատչելիության երաշխավորման տեսանկյունից շարունակում է արդիական մնալ նաև օրենսդրական թերի կարգավորումների վերացմանն ուղղված աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը: Այսպես, օրինակ, խիստ կարևոր է բարձրագույն կրթության մատչելիության ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի մատչելիության ապահովման նպատակով պետության կողմից ձեռնարկած միջոցներին, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների կառուցմանը, վերակառուցմանն ու հիմնանորոգմանը, աշխատանքային գիրք-տետրերի և մեթոդական ուղեցույցների հրապարակմանը, իրականացված օրենսդրական փոփոխություններին, 2024 թվականին շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիության ապահովման հետ կապված վերը նշված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

✓ ***ապահովել բոլոր ուսումնական հաստատությունների, ֆիզիկական միջավայրի, այդ թվում՝ շենքերի և շինությունների, հատկապես նոր կառուցվող,***

վերակառուցվող և հիմնանորոգվող ենթակառուցվածքների, տրանսպորտային համակարգի մատչելիությունը:

- ***անհետաձգելի միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների տրամադրումը ապահովելու նպատակով՝ անհատական մոտեցմամբ երաշխավորելով յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձի կրթության իրավունքի իրացումը:***
- ***ապահովել ուսումնական հաստատություններում տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը՝ անհրաժեշտ քանակի և որակի նյութերի, դասագրքերի և սարքավորումների ներգրավմամբ:***
- ***արագացնել օրենսդրական փոփոխությունների իրականացման գործընթացը, որոնք կերաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիությունը ամբողջ կյանքի ընթացքում:***

2. Կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները ցույց են տվել, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության նկատմամբ մոտեցումները շարունակում են միտված չլինել սովորողի առանձնահատկություններին, զարգացման հնարավորություններին և առավելագույն ներուժին համապատասխան գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորմանը: Մասնագետների մոտ առկա է յուրաքանչյուր սովորողի համար ուսումնական գործընթացը հավասարապես խթանելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներառումն ու ակտիվ մասնակցությունն ապահովելու, գնահատումների ճիշտ մեթոդաբանություն կիրառելու, ինչպես նաև սովորողների և ծնողների հետ հարաբերությունները կառուցելու հարցում համապատասխան հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն:

2024 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված այցի ընթացքում տրամադրված տեղեկությունների համաձայն՝ տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպումը, հիմնականում, չի ներառում արդյունավետության բաղադրիչը, ինչի պատճառով լինում են դեպքեր, երբ երեխայի կրթության իրավունքի երաշխավորումը ձևական բնույթ է կրում, չի ապահովվում համապատասխան կրթական արձագանք:

Նույն կերպ արձանագրվել է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթության արդյունավետության բաղադրիչը ամբողջությամբ չի ապահովվում ինչպես հատուկ, այնպես էլ հանրակրթական ուսումնական հաստատություններում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություններ, ինչպես նաև հանրակրթական մի շարք ուսումնական հաստատություններ իրականացված այցերի շրջանակում դասապրոցեսներին մասնակցությունը, ուսուցչի օգնականների հետ ունեցած առանձնազրույցները ցույց են տալիս, որ վերջիններս գործնականում չեն իրականացնում ուսուցչի օգնականի համար օրենսդրությամբ

սահմանված գործառույթները՝ փոխարենը, որպես հիմնական գործառույթ, օգնում են ուսուցիչներին հանդարտեցնել երեխաներին, ուղեկցում են երեխաներին սանհանգույց, օգնում են երեխաներին սնվելու գործընթացում և այլն: Կրթահամալիրում այլ աշխատակիցների պարագայում ևս արձանագրվել է մասնագիտական լիազորությունների և փաստացի գործունեության անհամապատասխանություն, աշխատակիցների ոչ մասնագիտական ծանրաբեռնվածություն: Այսպես, օրինակ, այցի պահին տարբեր մասնագետներ ներգրավված էին երեխաների սննդի կազմակերպման գործընթացին: Կրթահամալիրն ուներ բազմամասնագիտական թիմով, այդ թվում՝ էրգոթերապիստներով, ժեստերի լեզվի թարգմանիչներով և այլ մասնագետներով համալրվելու անհրաժեշտություն: Այս տեսանկյունից խնդրահարույց է ինչպես հաստիքների, այնպես էլ մարզում նեղ մասնագետների բացակայությունը: Արձանագրվել է Կրթահամալիրի աշխատակիցների շարունակական վերապատրաստումների իրականացման անհրաժեշտություն՝ ըստ մասնագիտական աշխատանքային բովանդակության:

Խնդրահարույց է այն, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ առկա է ընդհանուր թվով 165 մասնագետի, այդ թվում՝ հոգեբանների, տիֆլոմանկավարժների, էրգոթերապիստների, սուրդոմանկավարժների պակաս:

Համընդհանուր ներառական կրթության ապահովման տեսանկյունից շարունակում է արդիական մնալ հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված գործուն միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը: 2024 թվականի ընթացքում շարունակվել են արձանագրվել դեպքեր, երբ ծնողները հրաժարվում են իրենց երեխային տանել դպրոց՝ վախենալով, որ իրենց երեխան կարող է թիրախավորվել դասընկերների կողմից, կամ չեն ցանկանում, որ իրենց երեխան սովորի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ նույն դասարանում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց կրթության որակի և արդյունավետության ապահովման նպատակով պետության կողմից ձեռնարկված միջոցներին, այդ թվում՝ իրականացված վերապատրաստումներին, այնուամենայնիվ, 2024 թվականին շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված վերը նշված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ ***միջոցներ ձեռնարկել ապահովելու, որ կրթությունը ուղղված լինի հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդների և ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև նրանց մտավոր, ֆիզիկական և հաղորդակցական կարողությունների լիարժեք զարգացմանը:***
- ✓ ***կրթական գործընթացում ապահովել բազմամասնագիտական թիմի ներգրավվածությունն ու վերջիններիս շարունակական վերապատրաստումները:***
- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համընդհանուր ներառականության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացումը:***

3. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելը

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում այն, որ դեռևս հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ շարունակում են կրթություն ստանալ առանձին միջավայրում: Նման մոտեցումը անթույլատրելի է և չի բխում համընդհանուր ներառականության ապահովման քաղաքականությունից: Միաժամանակ, խնդրահարույց է այն, որ հասարակությունը, այդ թվում՝ նշված հաստատություններում կրթություն ստացող երեխաների ծնողները ավելի նպատակահարմար են համարում երեխաների՝ առանձնացված պայմաններում կրթություն ստանալը, քան մյուսների հետ հավասար պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախելը, ինչը պայմանավորված է, ի թիվս այլնի, նշված ոլորտում պետության կողմից ներդրված կառուցակարգերի ոչ լիարժեքությամբ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների վերակազմակերպելու գործընթացը սկսվելու է 2025 թվականից:

Մարդու իրավունքների պաշտպանն այս գործընթացում խիստ կարևորում է վերակազմակերպման այնպիսի մեթոդաբանության կիրառումը, որը կերաշխավորի իրական ներառականություն և վստահություն ներդրվող կառուցակարգի նկատմամբ:

Խնդրահարույց է այն, որ շարունակվում են ստացվել տեղեկություններ, որ երեխաների կրթությունն իրականացվում է տնային պայմաններում՝ հաշմանդամությամբ, այդ թվում՝ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունենալով պայմանավորված:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել բացառելու հաշմանդամություն ունեցող երեխաների ուսուցումը առանձնացված պայմաններում կամ տնային ուսուցման տարբերակով կազմակերպելը՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի՝ հավասար պայմաններում կրթություն ստանալու իրավունքը:

ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջության պահպանման իրավունքը յուրաքանչյուրի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնարար իրավունքներից է, որի իրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը պետության պարտավորությունն է:

Առողջության պահպանման իրավունքը ամրագրված է մի շարք միջազգային և ներպետական ակտերում: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ–ի կոնվենցիայով, օրինակ, պետությունը պարտավորություն է ստանձնել ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումն՝ առանց հաշմանդամության հիմքով որևէ խտրականության:

ՄԱԿ-ի կայուն զարգացման 3-րդ նպատակն ուղղված է ամուր առողջության ու բարեկեցության ապահովմանը: Նույն նպատակի շրջանակներում ողջ հանրությունը քայլեր պետք է ձեռնարկի բոլորի համար առողջ կյանքի ապահովման և բարեկեցության խթանման ուղղությամբ: Նշվածից բխում է առողջապահության մատչելիությունը, որի շրջանակներում, ի թիվս այլնի՝ նույն նպատակի թիրախներից է որակյալ էական առողջապահական ծառայությունների ու անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի էական դեղորայքի ու պատվաստանյութերի հասանելիությունը բոլորի համար:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ առողջության պահպանման իրավունքի իրացման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[383] և արտահերթ հրապարակային զեկույցում[384]:

---

[383] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 305-341, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 254-290, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 690-692, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[384] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, էջեր 133-149, Երևան, 2022թ., հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ շարունակում է արդիական մնալ բժշկական հաստատությունների ֆիզիկական մատչելիության ապահովման հետ կապված խնդիրը:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայությունները մատչելի դարձնելու նպատակով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող բոլոր կենտրոններում կառուցված են թեքահարթակներ, ձեռք են բերվել շարժական սարքավորումներ և այլն:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ տարբեր մարզերում շարունակում են արդիական մնալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները, շատ հաճախ դրանք դրսևորվում են միայն թեքահարթակների կառուցմամբ: Քաղաքաշինության կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ գոյություն ունեցող շենքերում և շինություններում անհրաժեշտ միջոցառումների չապահովման հիմնական պատճառներից են ֆինանսական միջոցների տրամադրման, ինչպես նաև քաղաքաշինության և առողջապահության ոլորտների տեսչական մարմինների աշխատանքների արդյունավետության բարձրացման հետ կապված խնդիրները:

Հարցի առնչությամբ Պաշտպանը կարևորում է ինչպես սույն տարեկան հաղորդման «Մատչելիություն» գլխում ներկայացված՝ ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, այնպես էլ այլ կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը: Այդպիսի միջոցառում կարող է լինել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին լիցենզավորելու համար շինարարական նորմերի համապատասխանությունը ստուգելու գործընթացում այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք կերաշխավորեն մատչելիության նորմերի ապահովումը:

Պաշտպանի իրականացրած մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ բժշկական հաստատություններում, հիմնականում, ներդրված չեն բժշկական տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի ձևաչափով տրամադրելու ընթացակարգեր (օրինակ՝ բրայլյան համակարգ): Չի տրամադրվում մատչելի, այլընտրանքային և հեշտ ընթերցվող տեղեկատվություն մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մինչդեռ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամուսնության և ընտանեկան հարաբերությունները լիարժեքորեն իրականացնելու նպատակով իրավունք ունեն ազատ և պատասխանատու որոշումներ կայացնելու երեխաների թվի և նրանց ծնվելու ժամկետների մասին, ստանալու մատչելի տեղեկություններ վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման վերաբերյալ:

Մտավոր և զգայական խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ բախվում են իրենց վերաբերյալ բժշկական տեղեկատվությունը ստանալու հետ կապված խոչընդոտների, որոնք պայմանավորված են տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության՝ հեշտ ընթեռնելի ձևաչափերի և հաղորդակցման հավելյալ և այլընտրանքային եղանակների բացակայությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցներին՝ ուղղված իրազեկվածության մակարդակի

բարձրացմանը, դեղերի թվի ավելացմանն ու որակի բարձրացմանը՝ շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար դեղեր ստանալու իրավունք ունենալու մասին իրազեկված չլինելու, դրանց հասանելիության, որակի և արդյունավետության հետ կապված խնդիրները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ անվճար տրամադրվող դեղերի որակի և արդյունավետության վերաբերյալ: Մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձինք տեղեկացրել են, որ հրաժարվել են անվճար տրամադրվող դեղերից՝ նախընտրելով սեփական միջոցներով ձեռք բերել ավելի որակյալ դեղեր:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք հնարավորություն կտան հաշմանդամություն ունեցող անձանց անվճար հիմունքներով ստանալու առավել որակյալ դեղեր՝ բացառելով սեփական միջոցներով դրանք ձեռք բերելու անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով հաշմանդամություն ունեցող անձինք բարձրացրել են նաև այն հարցը, որ շատ դեպքերում չեն ստանում անվճար հիմունքներով իրենց տրամադրվող դեղորայքը՝ պայմանավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում դրանց բացակայությամբ:

Խիստ մտահոգիչ է այն, որ շարունակում է արդիական մնալ ՀՀ տարբեր բնակավայրերում հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման հասանելիության և մատչելիության հետ կապված խնդիրները:

Արձանագրվել է, օրինակ, որ մարզերում անհրաժեշտ որակյալ բժշկական ծառայությունների բացակայությամբ պայմանավորված, ինչպես նաև ֆունկցիոնալության գնահատման համար անհրաժեշտ բժշկական հետազոտություններ անցնելու նպատակով հաշմանդամություն ունեցող անձինք ստիպված են եղել այցելել Երևանում գտնվող բժշկական հաստատություններ: Ըստ անձանց հայտնած տեղեկատվության՝ նշված խնդիրը, երբեմն, առաջացնում է անհարկի ֆինանսական ծախսեր և հանգեցնում է ֆունկցիոնալության գնահատման գործընթացի ձգձգումների:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 25-րդ հոդված
Մասնակից պետությունները պարտավոր են հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական ծառայությունները մատուցել նրանց բնակության վայրին հնարավորինս մոտ, ներառյալ՝ գյուղական վայրերում՝ ապահովելով նույն կարգի, որակի ու չափանիշների անվճար կամ մատչելի առողջապահական ծառայություններով ու ծրագրերով, որոնք տրամադրվում են այլ անձանց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք ՀՀ բոլոր մարզերում հասանելի կդարձնեն հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական որակյալ ծառայությունների տրամադրումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ *գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու բժշկական հաստատություններում ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցական մատչելիությունը:*
- ✓ *իրականացնել բժշկական օգնության և սպասարկման տրամադրման կարգի, այդ թվում՝ դեղերի ստացման կարգի իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ:*
- ✓ *ներդնել կառուցակարգեր՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց անվճար հիմունքներով առավել որակյալ դեղերի առանց ուշացումների տրամադրումը՝ բացառելով սեփական միջոցներով դրանք ձեռք բերելու անհրաժեշտությունը:*
- ✓ *ապահովել բժշկական որակյալ ծառայությունների տրամադրման հասանելիությունը ՀՀ բոլոր մարզերում:*

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքային իրավունքների իրացումը ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձի եկամտի, ապրուստի կայունությունն ապահովելու, այլ նաև նրա անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացումը խթանող գործուն երաշխիքներից է:

Աշխատանքային իրավունքներն ամրագրված են միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական իրավական ակտերում, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Աշխատանքի հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին» հռչակագրում, «Սոցիալական արդարության մասին հռչակագիրը՝ հանուն արդար գլոբալիզացիայի (2008թ.)» փաստաթղթում, ՀՀ Աշխատանքային օրենսգրքում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի ապահովումը, որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[385] և արտահերթ հրապարակային զեկույցում[386]**:**

Դրանք, մասնավորապես, վերաբերում են հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության

---

[385] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 193-229, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 693-696, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[386] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ապահովմանը, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանմանը և այլն: Այսպես, օրինակ, չեն իրականացվում արդյունավետ և թիրախային ծրագրեր, որոնք կարող են իրական հնարավորություն ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ աշխատելու կամ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ 2024 թվականին ստացվել է ընդամենը 3 դիմում-բողոք:

Վերը շարադրվածը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է կատարելագործել հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողական կառուցակարգերը:

Այդ հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, կարևորում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարողությունների զարգացումը, հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերի բացահայտման հստակ գործիքակազմերի մշակումն ու ներդնումը:

Խնդրահարույց է նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվությունն առ այն, որ 2024 թվականին տեսչական մարմնի աշխատակիցների համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում վերապատրաստումներ չեն իրականացվել:

Վերահսկողական կառուցակարգերի կատարելագործումից բացի, խնդրի համակարգային լուծման տեսանկյունից, արդիական է մնում «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված է թվով 1551 հաշմանդամություն ունեցող անձ, որից 136-ը 2024 թվականի ընթացքում տեղավորվել է աշխատանքի: Միայն 2024 թվականի ընթացքում տարածքային կենտրոններում որպես աշխատանք փնտրող հաշվառվել է 517 հաշմանդամություն ունեցող անձ:

Հարկ է փաստել, սակայն, որ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են այն մասին, որ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման ուղղությամբ թիրախային ծրագրեր առկա չեն և բավարար չափով աշխատանքներ չեն իրականացվել:

Այսպես, օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով հաշմանդամություն ունեցող անձը բարձրացրել է սեփական եկամտի աղբյուրն ինքնուրույն ապահովելու նպատակով ձեռքի աշխատանքների վաճառքի կրպակ տրամադրելու հարցը, սակայն պետության կողմից այդ հարցի առնչությամբ որևէ միջոցառում 2024 թվականի ընթացքում չի իրականացվել:

Ավելին, ներդրված չեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման գործուն կառուցակարգեր:

Նշվածի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2024 թվականին Միասնական սոցիալական

ծառայության կողմից իրականացվել է անձնական օգնականի ծառայությունների տրամադրման միջոցառումը, որի շրջանակներում կնքվել է 100 պայմանագիր:

Հարկ է փաստել, սակայն, որ անձնական օգնականի ծառայության ներդնումը չի կարող փոխարինել հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման միջոցառումներին, մասնավորապես այն պայմաններում, երբ անձնական օգնականի ծառայության տրամադրումը սահմանափակված է որոշակի պայմաններով: Ավելին, անձնական օգնականի ծառայությունների հետ կապված ևս առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է իր դիտողությունները: Դրանք, ի թիվս այլնի, վերաբերել են անձնական օգնականի ծառայությունների ժամաքանակին, անձնական օգնականի ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձին ներկայացվող պահանջներին և այլն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***կատարելագործել հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը, ի թիվս այլնի, իրականացնելով ոլորտային պատասխանատու մարմնի կարողությունների զարգացմանը, հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերի բացահայտման հստակ գործիքակազմերի մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքներ:***
- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել՝ ընդունելու «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,***
- ✓ ***կատարելագործել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:***
- ✓ ***ներդնել հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման գործուն կառուցակարգեր:***

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական ու հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով արդյունավետ ու լիարժեք մասնակցության, ներառյալ՝ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքի և հնարավորության ապահովումը, քվեարկության ընթացակարգերի, վայրերի և միջոցների մատչելիության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրությունների և հանրաքվեների գաղտնի քվեարկության իրավունքի պաշտպանությունը, պետական բոլոր մակարդակներում ընտրվելու, պաշտոն զբաղեցնելու և հանրային գործառույթներ իրականացնելու նրանց իրավունքի ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ որպես ընտրողների կամքի ազատ արտահայտման երաշխավորումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ առանց խտրականության և մյուսների հետ հավասար հիմունքներով հանրային գործերի կառավարմանը արդյունավետ ու լիարժեք կերպով մասնակցության ապահովումը, երկրի հանրային ու քաղաքական կյանքով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների և ընկերությունների գործունեության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների գործունեության ու ղեկավարման մասնակցության ապահովումը և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքին մասնակցության իրավունքն ամրագրվել է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքում մասնակցության իրավունքի ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ

տարիների տարեկան հաղորդումներում[387] և արտահերթ հրապարակային զեկույցում[388]:

Արձանագրված խնդիրները, մասնավորապես, վերաբերում են ընտրական տեղամասերի մատչելիությանը, ընտրություններին առնչվող տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությանը, իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով անցկացնելուն և այլն:

Խնդրահարույց է, որ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:

2024 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունն ապահովելու հետ կապված խնդիրները: ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ հանրային քննարկումը իրականացվում է քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակման եղանակով:

Հատկանշական է, որ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումները, որպես կանոն, իրականացվում են վերոնշյալ եղանակով: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը, այն է՝ e-draft.am-ը, մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այսպիսի պայմաններում խնդրահարույց է իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումը միայն ոչ մատչելի կայքերի միջոցով իրականացնելը, ինչը չի բխում միջազգային իրավական մոտեցումներից:

---

[387] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1358-1359, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1350-1351, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 697-702, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[388] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, էջեր 93-100, Երևան, 2022թ., էջեր 101-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2025 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «e-draft.am» կայքի արդիականացված տարբերակում տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար ապահովվել է համակարգի մատչելիությունը: Պաշտպանը նշված հարցի առնչությամբ կարևորում է ամբողջապես մատչելի կայքի անհետաձգելի գործարկմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ապահովելու բոլոր ընտրությունների և հանրային քննարկումների մատչելիությունն ու հասանելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ԲԱԺԻՆ 7. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից է երեխաների իրավունքների պաշտպանությունը, ինչը հիմք է առավել ամուր և իրավունքահեն հասարակության ձևավորման համար:

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը, որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող պաշտոնատար անձ, շարունակել է երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված տարբեր ձևաչափերով աշխատանքների իրականացումը՝ այդ գործընթացում ընդգրկելով նաև երեխաներին:

2024 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք մշտադիտարկման չհայտարարված այցեր, իրավասու մարմիններ են ներկայացվել երեխայի իրավունքներին վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ, երեխաների հետ տեղի են ունեցել հանդիպումներ, իրականացվել են իրազեկման միջոցառումներ, ներկայացվել են այլընտրանքային զեկույցներ, քննարկվել են երեխայի իրավունքների պաշտպանության առնչությամբ ներկայացված դիմումներն ու բողոքները, երեխաների մասնակցությամբ իրականացվել են արտասահմանյան գործուղումներ, անցկացվել են Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով խորհրդի նիստեր, ձևավորվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական նոր խորհուրդը, տեղի է ունեցել անդրանիկ նիստը, իրականացվել են մշտադիտարկման և երեխայի ձայնը լսելի դարձնելուն ուղղված այլ աշխատանքներ:

2024 թվականը հատկանշական էր, հատկապես, նրանով, որ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտե է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային հրապարակային զեկույցը: ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեին այլընտրանքային զեկույց է ներկայացրել նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով խորհուրդը: Երեխաները նաև Պաշտպան Անահիտ Մանասյանի գլխավորությամբ առաջին անգամ մասնակցել են ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման գնահատման վերաբերյալ նախանիստին: Կոմիտեի նիստի ընթացքում երեխաները բարձրաձայնել են իրենց իրավունքներին առնչվող մի շարք հարցեր և ներկայացրել դրանց վերաբերյալ իրենց դիտարկումները, ինչն արտացոլվել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեի 2024 թվականի եզրափակիչ դիտարկումներում:[389]

---

[389] Տե՛ս, Երեխայի իրավունքների կոմիտեի 2024 թվականի եզրափակիչ դիտարկումները, հասանելի են

Մարդու իրավունքների պաշտպանի երիտասարդ ներկայացուցիչները հուլիսի 1-2-ը Բրատիսլավայում մասնակցել են Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի (ENOC) կողմից կազմակերպված Երիտասարդ Խորհրդատուների եվրոպական ցանցի (ENYA) ֆորումին: «Եկեք խոսենք երիտասարդներ, եկեք խոսենք այլընտրանքային խնամք ստացող երեխաների իրավունքների խթանման և պաշտպանության մասին» խորագրով միջոցառման շրջանակներում երեխաները ներկայացրել են իրենց տեսակետները, մասնակցել են ոլորտի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակման աշխատանքներին, հանդես են եկել ելույթներով: Ֆորումի մասնակից թիմերի համատեղ մշակած առաջարկությունները ներկայացվել են 2024 թվականի սեպտեմբերին կայանալիք Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցի (ENOC) համաժողովի շրջանակում:

Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամները հոկտեմբերի 1-3-ը Աթենքում մասնակցել են Աթենական ժողովրդավարության ֆորումի (Athens Democracy Forum) մաս կազմող Պատանիների աթենական ժողովրդավարության ֆորումին (Teens Athens Democracy): Ֆորումի ընթացքում երեխաները ներկայացրել են իրենց դիրքորոշումը խորհրդակցական ժողովրդավարության դերի, սոցիալական մեդիայի, արհեստական բանականության օգտագործման բացասական և դրական ազդեցության, անձնական տվյալների պաշտպանության և մի շարք այլ կարևոր հարցերի առնչությամբ, մասնակցել են ոլորտի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակման աշխատանքներին, հադես են եկել ելույթներով: Պատանիների աթենական ժողովրդավարության ֆորումի շրջանակում երեխաների կողմից մշակված առաջարկությունները ներկայացվել և քննարկվել են Աթենական ժողովրդավարության ֆորումի ընթացքում:

Կարևորելով երեխաների ակտիվ մասնակցությունն իրենց իրավունքների պաշտպանության և որոշումների կայացման գործընթացներում՝ երեխաների հետ հանդիպումներ են տեղի ունեցել նաև ներպետական հարթակներում:

Այսպես, օրինակ, ՄԻՊ առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդամները մայիսի 20-ին հյուրընկալվել են Ազգային ժողովում: Հանդիպմանը մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, ԱԺ պատգամավորներ, ինչպես նաև ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչները: Խորհրդի անդամները ներկայացրել

---

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով:

են իրենց գործունեության առաջնահերթություններն ու ուղղությունները, անդրադարձել երեխաների իրավունքների, այլընտրանքային խնամքի տրամադրման, հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի միջավայրի ապահովման, դպրոցներում բուլինգի կանխարգելման, բացահայտման և արձագանքման հետ կապված խնդիրներին:

2024 թվականի հունիսի 1-ին՝ երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրն, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանն ու ՅՈՒՆԻՍԵՖ-ը Լոռու մարզի Տաշիր խոշորացված համայնքի Պրիվոլնոյե բնակավայրում երեխաների համար կազմակերպել են տոնական միջոցառում, որին մասնակցել է շուրջ 100 երեխա: Միջոցառման ընթացքում անցկացվող քննարկումները վարել են ՄԻՊ առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անդամները:

2024 թվականին ձևավորվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական նոր խորհուրդը: Խորհրդի անդամներն ընտրվել են մրցութային կարգով: Ընտրության

ողջ գործընթացում հանձնաժողովի կազմում ընդգրկված են եղել նաև նախկին խորհրդի երեխաները, որոնցից շատերը այժմ իրենց գործունեությունն իրականացնում են աշխատանքային խմբի ձևաչափով՝ օգնելով Պաշտպանի աշխատակազմին խորհրդի գործունեության կազմակերպման հետ կապված աշխատանքներում:

2024 թվականի նոյեմբերի 20-ին՝ երեխաների համաշխարհային օրը, ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով նորընտիր հասարակական խորհրդի անդրանիկ նիստը: Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել խորհրդի նախկին կազմը ներկայացնող երեխաների փորձի փոխանակում նոր անդամների հետ, ներկայացվել են խորհրդի առաքելությունը և նպատակները, վերջին 2 տարիների փորձը, մարտահրավերները, ինչպես նաև ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչների հետ երկխոսության ձևաչափով երեխաները քննարկել են իրենց իրավունքներին առնչվող մի շարք հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանը և ներկայացուցիչները 2024 թվականին իրականացրել են լայնածավալ իրազեկման միջոցառումներ ՀՀ բոլոր մարզերում: Այցեր են իրականացվել երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող տարբեր կազմակերպություններ, ինչպես մարզերում, այնպես էլ ՄԻՊ աշխատակազմում հանդիպումներ են տեղի ունեցել ուսումնական հաստատությունում սովորող երեխաների հետ, տարբեր հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամքով զբաղվող մասնագետների հետ: Պաշտպանը մասնակցել է

տարբեր միջոցառումների, որոնց ընթացքում հատուկ քննարկվել են երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող տարբեր հարցեր:

Այսպես, օրինակ, 2024 թվականի նոյեմբերի 11-ին Պաշտպանն Ազգային ժողովում մասնակցել է խորհրդարանական լսումների՝ « (ՀՊԴ) ընթացակարգի շրջանակներում ՀՀ չորրորդ ազգային զեկույցում երեխայի իրավունքների վերաբերյալ ներկայացվելիք հարցերը» թեմայով: Քննարկումը նախաձեռնել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը՝ հաշվի առնելով այն, որ 2025 թվականին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում տեղի է ունենալու Համընդհանուր պարբերական դիտարկման չորրորդ շրջանի՝ Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցի քննարկումը: Խորհրդարանական լսումների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում արձանագրված խնդիրները, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են երեխայի նկատմամբ ցանկացած տեսակի բռնությունների կանխարգելմանը, բացահայտմանն ու արձագանքմանը:

Երեխայի իրավունքների վերաբերյալ Պաշտպանը հանդիպումներ և քննարկումներ է ունեցել «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի, Ներքին Գետաշենի Աղվան Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի, Ազգային ժողովի «Ամառային դպրոց» ծրագրի մասնակից դպրոցականների հետ և այլն:

2024 թվականի ընթացքում Պաշտպանն ակտիվորեն համագործակցել է պետական իրավասու մարմինների և ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի, Անչափահասների արդարադատության խորհրդի նիստերին:

2024 թվականի հունվարի 5-ին, օրինակ, Մարդու իրավունքների Պաշտպանը և «ՍՕՍ մանկական գյուղեր» Համահայկական բարեգործական հիմնադրամը կնքել են փոխըմբռնման հուշագիր, որով կողմերը պայմանավորվել են համագործակցել և համատեղել իրենց ջանքերը Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության հարցում: Իսկ 2024 թվականի հուլիսի 22-ին Մարդու իրավունքների պաշտպանը Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Շենիկ և Քարակերտ բնակավայրերում «Հայաստանի մանուկներ» («ՔՈԱՖ») բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված «Մարդու իրավունքների ամառային դպրոցներ» ծրագրի շրջանակներում երեխաների հետ անցկացրել է խմբային պարապմունքներ և այլն:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է և քննարկել է 1266 գրավոր և բանավոր բողոք՝ կապված երեխայի նկատմամբ բռնության, անձնական տվյալների պաշտպանության, նախադպրոցական և

հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության և մի շարք այլ հարցերի հետ:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը

Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի միջոցով, որում ներառված են.

- երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը,
- մարզպետների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներն ու Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը,
- խնամակալության և հոգաբարձության մարմինները:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ եռաստիճան համակարգի յուրաքանչյուր օղակում առկա են համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետ գործունեության վրա: Արձանագրված որոշ խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև իր տարեկան հաղորդումներում[390] և արտահերթ հրապարակային զեկույցով[391] :

ՀՀ Վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1295-Ն որոշման համաձայն. «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է:»: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելու նպատակի իրագործման համար, սակայն Հանձնաժողովն ունի առավել արդյունավետ մեխանիզմների գործադրմամբ աշխատանքներն իրականացնելու անհրաժեշտություն: Առկա են եռաստիճան համակարգում ուղղահայաց և հորիզոնական համագործակցության,

---

[390] Տե՛ս, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս նաև, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 545-547, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149 c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[391] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2025թ., հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

միջգերատեսչական և ոլորտում գործունեություն ծավալող մասնավոր հատվածի հետ արդյունավետ, անվտանգ և համակարգված համագործակցության գործուն կառուցակարգերի ներդրման և դրանց նկատմամբ մշտադիտարկման ապահովման անհրաժեշտություն: Գործնականում բացակայում է այնպիսի մեխանիզմի կիրառումը, որով հնարավոր կլինի վեր հանել համակարգային բոլոր խնդիրներն ու տալ դրանց լուծմանն ուղղված երեխայակենտրոն և երեխայի լավագույն շահից բխող լուծումներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում գումարվել է Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի 3 նիստ և 1 օպերատիվ շտաբի նիստ: «Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների համալիր ծրագրի» նախագիծը մշակելիս ամրագրվել է, որ Երեխաների իրավունքների պաշտպանության հանրապետական մակարդակում արդյունավետության բարձրացման նպատակով, նախատեսվում է վերանայել ազգային հանձնաժողովի գործառույթները՝ անհրաժեշտ մարդկային և տեխնիկական ռեսուրսներով ապահովման, երեխաների մասնակցության չափանիշների սահմանման և այլ հարցերի շուրջ՝ դրանով իսկ մեծացնելով երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը:

Այս համատեքստում Պաշտպանը վերստին արձանագրում է, որ երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի առջև դրված նպատակի իրագործման հարցում կարևոր է նաև վերջինիս օժտել անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով: Ընդ որում, նման դիրքորոշում է հայտնել նաև Երեխայի իրավունքների կոմիտեն՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացրած եզրափակիչ դիտարկումներում[392]:

2024 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանն առնչվող խնդիրները: Մասնավորապես՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները դեռ շարունակում են գործել կամավորության սկզբունքով՝ հնարավորություն չտալով կազմում ներառել անհրաժեշտ և բավարար գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետներ:

Գործնական խնդիրներ են արձանագրվել նաև մարզպետների աշխատակազմերի և Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության հետ խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքի իրականացման գործընթացում բավարար գիտելիքներ չունենալու առնչությամբ: Բազմաթիվ են դեպքերը, երբ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները չեն տիրապետում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրենց լիազորություններին և դրանց կատարման համար չունեն մեթոդաբանություն:

Մտահոգիչ է այն, որ ոչ բոլոր համայնքներում է ապահովված անհրաժեշտ մասնագետների ներգրավվածությունը ԽՀՀ կազմում, մի շարք համայնքներում

---

[392] Տե՛ս, Երեխայի իրավունքների կոմիտեի 2024 թվականի եզրափակիչ դիտարկումները, հասանելի են https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով:

խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմում ընդգրկված չեն անգամ հոգեբաններ:

2024 թվականին շարունակում են արդիական մնալ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների պատշաճ մասնագիտական որակավորման և պարտադիր վերապատրաստման, միջգերատեսչական համագործակցության ապահովման, վերջիններիս լիազորությունների ոչ պատշաճ իրականացման դեպքում՝ պատասխանատվության հստակ միջոցների սահմանման, աշխատանքային ժամերից հետո աշխատանքի կազմակերպման հնարավորության նախատեսման հետ կապված, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այս ինստիտուտի կայացման հարցում բազմիցս հիշատակված խնդիրները:

Նշվածի առնչությամբ խիստ կարևոր է «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ հարակից օրենքների նախագծերի և դրանցից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շուտափույթ ընդունումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և ներդնել Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեության առավել արդյունավետ կառուցակարգեր՝ ապահովելով վերջինիս անհրաժեշտ լիազորություններով, մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով:***
- ✓ ***մշակել և իրացնել կառուցակարգեր՝ բարելավելու մարզպետների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումների ու Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության և Խնամակալության և հոգաբարձության մարմինների միջև համագործակցությունը:***
- ✓ ***մշակել և իրացնել կառուցակարգեր բարելավելու խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքը: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների ընտրության մասնագիտական և որակավորման չափանիշներ, ապահովել, որպեսզի անդամները վճարվեն իրենց կատարած աշխատանքի դիմաց, նախատեսել պարտադիր վերապատրաստումներ վերջիններիս համար, ինչպես նաև քայլեր ձեռնարկել՝ ապահովելու Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված վերոնշյալ խնդիրների լուծումը:***
- ✓ ***ընդունել «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ հարակից օրենքների նախագծերն ու դրանցից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:***

2. Երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը

2023 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որով նախատեսվել է նշված պայմանների բավարարմամբ համալիր ծրագիր ունենալու պահանջը: Ընդ որում, նշված փոփոխությամբ նախատեսվել է նաև, որ համալիր ծրագիր ընդունելու

վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը պետք է ընդունվի օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ նշված համալիր ծրագիրը, որը պետք է պարունակեր երեխայի իրավունքների պաշտպանության բոլոր հիմնախնդիրները, ռազմավարական ուղղություններն ու նպատակները, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակի վերլուծությունը, առաջնահերթությունները, ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգն արտացոլող միջոցների համալիրը, 2024 թվականին չի ընդունվել: Նշվածը խնդրահարույց է երեխայի իրավունքների ապահովման, պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության համակարգված, նպատակային, շարունակական և արդյունավետ իրականացման տեսանկյունից:

Չնայած համալիր ծրագրի նախագծի մշակմանն ու ընդունմանն ուղղված աշխատանքների իրականացմանը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է դրա շուտափույթ ընդունումը և նախատեսված միջոցառումների համար պետական բյուջեից բավարար ֆինանսական միջոցների հատկացումը:

Ռազմավարական փաստաթղթի ընդունման կարևորությանն անդրադարձել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեն 2024 թվականին Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացրած եզրափակիչ դիտարկումներում, որի համաձայն՝ համալիր ծրագիրը պետք է հիմնված լինի Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարական ծրագրերի իրականացման գնահատման վրա և ընդգրկի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և դրան կից կամընտիր արձանագրություններով սահմանված բոլոր ոլորտները: Կոմիտեն նաև առաջարկել է մասնակից պետությանը ծրագիրն ապահովել բավարար մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով:[393]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հնարավորինս շուտ ընդունել երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը:

[393] Տե՛ս, Երեխայի իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտարկումները, հասանելի են https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵԽԱՅԻ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պետությունը, որդեգրելով ապաինստիտուցիոնալացման քաղաքականություն, պարտավորվել է ապահովել երեխայի՝ իր կենսաբանական ընտանիքում և իր կենսաբանական ծնողների հետ պատշաճ խնամք ստանալու իրավունքի իրացումը, և միայն դրա անհնարինության դեպքում՝ դիտարկել խնամքի այլընտրանքային ձևերը՝ նախապատվությունը տալով ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում երեխայի խնամքի կազմակերպմանը:

Մարդու իրավունքների պաշտպանն ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի կարևորությանը և այդ իրավունքը երաշխավորելու պետության պարտավորությանն անդրադարձել է նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[394] և արտահերթ հրապարակային զեկույցներում[395]:

Մինչդեռ, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում և ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում կազմակերպելու հարցում առկա են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական արդյունավետ լուծումներ պահանջող մի շարք համակարգային խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է.

1. երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ.
2. որդեգրման հետ կապված խնդիրներ.
3. խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ.
4. խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ.
5. հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ.

---

[394] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1236-1250, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 549-552, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea 149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

395 Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրությունների կատարման վիճակի վերաբերյալ, 11-13, հասանելի է https://www.ombuds.am /images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

6. հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ.
7. մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ:

1. Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ

Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կամ ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում կազմակերպելու հարցում առկա համակարգային խնդիրներն արդիական են նաև 2024 թվականի ընթացքում, ինչի մասին, ի թիվս այլնի, վկայում է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվությունն այն մասին, որ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա պետական հաստատություններում խնամվում է 462 երեխա, որոնցից 283 երեխա ունի հաշմանդամություն: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող ոչ պետական հաստատություններում խնամվում է 155 երեխա, նրանց մեջ կան նաև հաշմանդամություն ունեցող երեխաներ:

Արձանագրվել է, որ երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու համար հաճախ խոչընդոտ է լինում ընտանիքի ոչ բավարար կենսապայմաններ ունենալը և այդ ուղղությամբ համապատասխան համայնքահեն ծառայությունների բացակայությունը: Դա, երբեմն պատճառ է դառնում նաև երեխաներին շուրջօրյա խնամքի ռեժիմով դպրոցներ տեղափոխելու համար:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները արձանագրել են, որ երեխաներից շատերը հաճախում են տվյալ կրթահամալիր՝ շուրջօրյա խնամքի ծառայությունից օգտվելու նպատակով, ինչն էլ իր հերթին պայմանավորված է երեխաների՝ բավարար կենսագործունեության և կենցաղային պատշաճ պայմանների բացակայությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի արդյունքները վերահաստատում են այն, որ հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում բավարար կենսագործունեության և կենցաղային պատշաճ պայմաններով ապահովված չլինելուն ավելանում են նաև հաշմանդամությամբ պայմանավորված հավելյալ ծախսերը, որոնք պատճառ են երեխայի խնամքը հաստատությունում կազմակերպելու համար:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ծնողները գերադասել են հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքը հաստատության միջոցով իրականացնելու տարբերակը՝ համապատասխան հմտությունների չտիրապետելու և իրենց բնակության վայրում երեխայի համար անհրաժեշտ սոցիալ-բժշկական

աջակցություն ստանալու հնարավորություն չունենալու պատճառով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների համալիր ծրագրի» նախագծով (այսուհետ՝ նաև Համալիր ծրագիր) երեխաներին տրամադրվող սոցիալական ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով նախատեսվում է բարձրացնել հանրային իրազեկվածությունը առկա ծառայությունների վերաբերյալ: Բացի այդ, հաշվի առնելով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվող ծառայությունների տեսակների և ծածկույթի լավարկման անհրաժեշտությունը՝ նախատեսվում է ստեղծել նոր ծառայություններ և ընդլայնել ցերեկային խնամքի կենտրոններում հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ ծառայությունների տրամադրման հնարավորությունն անկախ վերջիններիս ֆունկցիոնալության աստիճանից, այդ թվում՝ ապահովել համապատասխան մարդկային ներուժ, պայմաններ, ուղեցույցներ և միջավայր: Նախատեսվում է նաև մշակել ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքի և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման գործուն մեխանիզմներ, ինչպես նաև բարելավել պատրոնաժ ծառայությունը՝ դրա կարիքը ունեցող ծնողների և ընտանիքների համար: Միաժամանակ, հաշվի առնելով երեխաների և ծնողների շրջանում վնասակար կախվածությունների տարածվածությունը, ինչպես նաև համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված վիճակագրության՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող երեխաների թվի աճը, նախատեսվում է լավարկել ներազդող միջոցներից կախվածություն ունեցող երեխաների և ծնողների ռեաբիլիտացիոն ծառայությունները:

Չնայած պետության գործադրած ջանքերին և նախատեսվող բարեփոխումներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը, այդուամենայնիվ, արձանագրում է, որ մինչև Համալիր ծրագրի ընդունումը պետությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի՝ բացառելու երեխային միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ իր կենսաբանական ընտանիքից բաժանելու գործելակերպը: Պետությունը պարտավոր է ապահովել երեխայի համար սոցիալ-հոգեբանական և սոցիալ-բժշկական աջակցության, համայնքներում ինքնուրույն կյանքով ապրելուն ուղղված ծառայությունների հասանելիությունը, ծնողների համար ծնողավարման հմտությունների ու երեխայի ընտանիքի անդամների համար անհրաժեշտ հոգեբանական և սոցիալական աջակցություն ստանալու իրական հնարավորությունը:

Այդպիսի պահանջը բխում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգավորումներից, Երեխայի իրավունքների կոմիտեի 9-րդ ընդհանուր մեկնաբանության և միջազգային իրավական այլ

փաստաթղթերի վերլուծությունից[396]:

Համակարգային խնդիր է արձանագրվել նաև՝ կապված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուց հետո մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության գնահատման ու դրա առկայության դեպքում՝ համապատասխան քայլերի ձեռնարկման առնչությամբ:

Հարկ է փաստել, որ չնայած պետության ձեռնարկած քայլերին՝ երեխայի խնամքն առաջին հերթին կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված վերը նշված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ բացառելու՝ երեխային միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ իր կենսաբանական ընտանիքից բաժանելու գործելակերպը:***
- ***ապահովել երեխայի համար սոցիալ-հոգեբանական և սոցիալ-բժշկական աջակցության, համայնքներում ինքնուրույն կյանքով ապրելուն ուղղված ծառայությունների իրական հասանելիությունը, ծնողների համար ծնողավարման հմտությունների ու երեխայի ընտանիքի անդամների համար անհրաժեշտ հոգեբանական և սոցիալական աջակցություն ստանալու իրական հնարավորությունը:***
- ***ներդնել կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուց հետո մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության գնահատում ու գնահատման արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան քայլերի ձեռնարկում:***

2. Որդեգրման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկումները վկայում են այն մասին, որ 2024 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ որդեգրման գործընթացի համակարգման, որդեգրման ենթակա երեխաների տվյալների տրամադրման հստակ ընթացակարգի սահմանման, այդ գործընթացում անձնական տվյալների պաշտպանության, որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձանց համադրման, որդեգրել ցանկացող անձանց ընտրության գործընթացում երեխայի լավագույն շահից բխող չափանիշների հաշվառման, որդեգրված երեխաների հետագա խնամքի վերահսկողության հետ կապված հստակ, գործուն և երեխայակենտրոն իրավակարգավորումների բացակայությունը:

Խնդրահարույց է, որ որդեգրման հարցում կարևոր նշանակություն ունեցող գործընթացներն իրականացվում են տեղական մակարդակում, ինչի վերաբերյալ իր

---

[396] Տե՛ս, Երեխայի իրավունքների կոմիտեի 9-րդ ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է https://www.refworld.org/legal/general/crc/2007/en/48507 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն, և առաջարկել՝ ստեղծել որդեգրման գործընթացի վերահսկողության կենտրոնացված համակարգ և սահմանել որդեգրող ծնողների ընտրության հստակ չափանիշներ և ընթացակարգեր, ինչպես նաև անկախ մարմնի կողմից որդեգրման գործընթացի յուրաքանչյուր փուլի մշտադիտարկման համակարգ[397]:

Կարևոր է նաև օրենսդրությամբ որդեգրողի ընտանիքում նման մշտադիտարկման իրականացման և տրամադրվող ծառայությունների առանձնահատկությունների նախատեսումը: Ընդ որում, որդեգրումից հետո պետության տրամադրած ծառայությունների նպատակը պետք է լինի նոր միջավայրում երեխայի ինտեգրումն ապահովելը[398]:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրումն իրականացվում է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որդեգրողի և որդեգրվողի համադրելիության չափանիշների գնահատման հիման վրա: Նման չափանիշների սահմանումն ու համադրման գործընթացի հստակ կարգավորումը կարևոր են երեխայի որդեգրման և որդեգրման գործընթացի գաղտնիության արդյունավետ պաշտպանության, որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչների ֆորմալ բնույթը բացառելու, միայն նյութական վիճակի գնահատման վրա չհիմնվելը երաշխավորելու և երեխային՝ առողջ և ապահով միջավայրում մեծանալու հնարավորություն նախատեսելու համար:

Մինչդեռ, նշված հարցերի առնչությամբ ներպետական օրենսդրությամբ հստակ կարգավորումներ նախատեսված չեն, ինչի վերաբերյալ իր մտահոգությունն էր հայտնել նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները չափազանց ֆորմալ են և հիմնված են պոտենցիալ ծնողների նյութական վիճակի, այլ ոչ՝ ծնողավարման հմտությունների վրա[399]:

Այս համատեքստում հատկապես մեծ ջանքեր պետք է գործադրվեն օտարերկրյա որդեգրումների գործընթացում, մասնավորապես, պետությունը պետք է ձեռնարկի միջոցներ՝ ուղղված օտարերկրյա որդեգրման գործընթացում երեխայի լավագույն շահի ապահովումը երաշխավորելուն, երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը կանխելուն, և նշված հարցերում այլ պետությունների հետ արդյունավետ համագործակցության ձևավորմանը: Ընդ որում, այդպիսի միջոցները պետք է ուղղված լինեն ոչ միայն որդեգրել ցանկացող անձի պատշաճ գնահատմանը, այլև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես

---

[397]Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[398] Հասանելի է https://assets.hcch.net/docs/bb168262-1696-4e7f-acf3-fbbd85504af6.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[399] Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրումներից հետո որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից վերահսկողության գործուն և արդյունավետ կառուցակարգերի ներդրմանը:

Նշված պահանջը բխում է «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգավորումներից:

Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրվել է ընդամենը 22 երեխա, որոնց մեջ հաշմանդամություն ունեցող երեխա չի եղել, իսկ օտարերկրյա քաղաքացու կողմից որդեգրվել է 1 հաշմանդամություն ունեցող երեխա:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ որդեգրման ինստիտուտի լավարկման նպատակով խիստ կարևոր է «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ հարակից օրենքների նախագծերի շուտափույթ ընդունումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է որդեգրման, այդ թվում՝ օտարերկրյա որդեգրման գործընթացի լավարկմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների և գործուն կառուցակարգերի ներդրման հարցում անհետաձգելի միջոցառումների իրականացումը:

3. Խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանը խնամակալության և հոգաբարձության սահմանման առնչությամբ նույնպես արձանագրել է մի շարք համակարգային խնդիրներ:

Պաշտպանի աշխատակազմի իրականացրած մշտադիտարկումները, ստացված դիմում-բողոքները վկայում են այն մասին, որ խնամակալության և հոգաբարձության սահմանման գործընթացում ներդրված չեն գնահատման հստակ գործիքակազմեր և կառուցակարգեր, հաճախ որոշումները կայացվում են սուբյեկտիվ դիրքորոշումների հիման վրա: Երկու ծնողների բացակայության պայմաններում խնամակալ նշանակելու պարագայում չեն նախատեսվում մյուս մերձավոր ազգականների հետ տեսակցությունը և շփումը կարգավորող կառուցակարգեր:

Սույն հարցի վերաբերյալ հատկանշական է, որ թեև ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 551-Ն որոշմամբ նախատեսված են այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման իրականացման սկզբունքները, սակայն օրենսդրությամբ նախատեսված չէ խնամակալի և հոգաբարձուի ընտրության հարցում անձի և երեխայի համադրելիության գնահատման պարտադիր պայման:

Ընդ որում, ինչպես որդեգրման, այնպես էլ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու դեպքերում, կարևոր է, որ այդ գործընթացն իրականացվի բազմամասնագիտական թիմի ներգրավմամբ: Բազմամասնագիտական թիմի ներգրավումը ներկայումս իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ստեղծմամբ: Սակայն հարկ է փաստել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից հարցի քննարկման շրջանակում անհրաժեշտ մասնագետի ներգրավումն եղել է անհնարին խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովում նման մասնագետ ընդգրկված չլինելու պատճառով: Ըստ տրամադրած տեղեկությունների՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներում նման մասնագետի ներգրավումը հնարավոր չի եղել ապահովել՝ պայմանավորված հանձնաժողովների՝ հասարակական հիմունքներով գործելու հանգամանքով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն, օրինակ, ՀՀ-ում կան մի շարք համայնքներ, որոնց խնամակալության և հոգաբարձության մարմինների կազմերում հոգեբան ներգրավված չէ, իսկ նման մասնագետի ներգրավումը պայմանավորված է աշխատանքային անհրաժեշտությամբ:

Պաշտպանի աշխատակազմը կրկին արձանագրում է, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի մասին տեղեկատվությունը ոչ աշխատանքային օրերին հայտնի դառնալու պայմաններում՝ համապատասխան խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ կապ հաստատելու դժվարության հետ կապված խնդիրները շարունակում են արդիական մնալ: Ուստի, կարևոր է նման գործառույթ իրականացնող մարմինների համար ոչ աշխատանքային օրերին և ժամերին նույնպես աշխատանքի շարունակականության ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***օրենսդրությամբ նախատեսել խնամակալի և հոգաբարձուի ընտրության հարցում անձի և երեխայի համադրելիության գնահատման պարտադիր պայման:***
- ***ներդնել խնամակալության և հոգաբարձության սահմանման գործընթացում գնահատման հստակ գործիքակազմեր և կառուցակարգեր՝ բացառելով սուբյեկտիվ դիրքորոշումների հիման վրա որոշումների կայացումը:***
- ***ներդնել կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի խնամակալության և հոգաբարձության սահմանման դեպքերում՝ դիտարկման և գնահատման առարկա դարձնել նաև երեխայի մյուս հարազատների հետ շփման հարցը:***
- ***բացառել խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից անգործության դրսևորումը և յուրաքանչյուր երեխայի պարագայում պատշաճ գնահատել խնամակալության և հոգաբարձության հանձնելու հետ կապված հարցերը:***

✓ խնամակալության և հոգաբարձության սահմանման յուրաքանչյուր դեպքում ապահովել անհրաժեշտ մասնագետների ներգրավվածությունը:

✓ նախատեսել խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ ոչ աշխատանքային օրերին և ժամերին աշխատանքի իրականացման օրենսդրական հիմք:

4. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումն երաշխավորելու նպատակով վերջին տարիներին պետության կողմից աշխատանքներ են իրականացվել խնամատար ընտանիքների ձևավորման հարցում, ձեռնարկվել են միջոցներ օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ խնամատար ընտանիքների ձևավորման և ինստիտուտի կայացման հարցում առկա են մի շարք համակարգային խնդիրներ: Այդ մասին է վկայում նաև այն, որ անգամ 0-3 տարեկան երեխաների այլընտրանքային խնամքը շարունակվում է կազմակերպվել հաստատություններում:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2024 թվականի ընթացքում խնամատարության պայմանագրերի թիվը կազմել է 109, որից 12-ը՝ մասնագիտացված, առողջական խնդիրներ ունեցող խնամատար ընտանիքներ՝ 15 երեխայով, ճգնաժամային խնամատար ընտանիքներ՝ 3, երեխաների թիվը՝ 6, ընդհանուր խնամատար ընտանիքներ՝ 94, 164՝ երեխայով: Արձակուրդային խնամատար ընտանիքներ՝ 0: Խնամատարության հանձնված երեխաների թիվն է՝ 185, որից 105-ը տղա, 80-ը՝ աղջիկ: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 117 անձ հաշվառված է որպես խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ:

Խնդրահարույց է, որ 2024 թվականին շարունակվել են արձանագրվել խնամատարության պայմանագրերի վաղաժամկետ լուծման դեպքեր: Ընդ որում, մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ պայմանագրի լուծման հիմք են հանդիսացել նաև խնամատար ընտանիքում անբարենպաստ պայմանները:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է նաև, որ ի թիվս վերոնշյալի, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատություններում խնամք ստացող երեխաների թիվը նույնպես վկայում է այն մասին, որ խնամատարության ինստիտուտը դեռևս ամբողջությամբ չի ծառայում իր նպատակին՝ երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու հնարավորության ապահովմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վեր հանել խնամատարության ինստիտուտի ոչ լիարժեք կայացման հիմքում ընկած խնդիրները և տալ դրանց առարկայական լուծումներ՝ ապահովելով երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի իրացումը և բացառելով երեխաների խնամքը

հաստատություններում կազմակերպելու շարունակական պրակտիկան:

5. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ

2024 թվականի ընթացքում հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են եղել:

2024 թվականի ընթացքում, որպես համակարգային խնդիր, շարունակում է մտահոգիչ մնալ այնպիսի երաշխիքների բացակայությունը, որոնք հնարավորություն կտան պետությանը ապահովել մինչև հավաստագրումը ոչ պետական հաստատությունների կողմից երեխաների խնամքի և պաշտպանության իրականացման գործընթացում ներպետական օրենսդրության և միջազգային չափորոշիչների պահպանումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ երաշխավորել պատշաճ արձագանքը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2024 թվականի ընթացքում մշտադիտարկման չհայտարարված այցեր են իրականացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գավառի մանկատուն», «Գյումրու «Երեխաների տուն»», «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն», «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ միասին Հաստատություններ):

Արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց մի մասը համակարգային են:

Այսպիսով՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում արձանագրվել են.

1. Անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ.
2. Կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ.
3. Երեխաների անձնական գործերի վարմանը ներկայացվող պահանջների պահպանման հետ կապված խնդիրներ.
4. Վատ վերաբերմունքից զերծ մնալու և կարծիք արտահայտելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ.
5. Երեխաների հետագա խնամքը ընտանեկան միջավայրում իրականացնելուն ուղղված միջոցառումների ապահովման հետ կապված խնդիրներ:

5.1 Անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ

Անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ արձանագրվել են, բոլոր այն հաստատություններում, որտեղ իրականացվել են մշտադիտարկման չհայտարարված այցեր:

Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն իրականացված այցի արդյունքում արձանագրվել է, որ պահպանված չի եղել անձնական տարածքի համար անհրաժեշտ բնակելի մակերեսը, մասնավորապես՝ սենյակներում առկա են եղել իրար միացված կամ շատ մոտ տեղադրված մահճակալներ: Ոչ բավարար տարածքի պատճառով արձանագրվել է տղաների ու աղջիկների համատեղ խնամքի իրականացման դեպք: Հաստատությունն ապահովված չի եղել երեխաների առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ, կարիքահեն և զարգացման համար անհրաժեշտ պայմաններով: Ապահովված չի եղել առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորություն: Օրինակ, լոգարանների մեծ մասը առանձնացված չի եղել ննջասենյակներից, երեխաների լոգանքն իրականացվում էր ննջասենյակում մյուս երեխաների ներկայությամբ: Սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովված չէին. Երեխաների խոզանակները կեղտոտ էին, առկա էր երեխաների անձնական հիգիենայի պարագաների, բաժակների, ափսեների անհատականացման խնդիր (արձանագրվել են դայակների կողմից երեխաների սրբիչները շփոթելու դեպքեր): Հաստատության յուրաքանչյուր խմբասենյակում առկա էր դեղերի պահման արկղիկ, որը կեղտոտ էր, պարունակում էր բացված և չօգտագործված դեղեր, որոնք առանց մակնշման լցված էին տարբեր տուփերի մեջ, ներարկիչները դրված էին կենցաղային օգտագործման իրերի հետ միասին: Հայտնաբերվել են ժամկետանց դեղեր և շիլա: Մսամթերքի վրա բացակայում էր համապատասխան մակնշումը, որը հնարավորություն չէր տալիս ստուգելու պիտանիության ժամկետը: Համապատասխան մասնագետների ներգրավման դժվարությամբ պայմանավորված՝ հաստատությունում չէր իրականացվել երեխաների՝ բժշկական, այդ թվում՝ պալեատիվ, օգնության և սպասարկման անհատական կարիքների գնահատում: Արհեստական կերակրումն իրականացվում էր ներարկիչների և սնուցման զոնդերի (նազոգաստրալ զոնդ) միջոցով, որոնք առանց անհատականացման ախտահանվում և կրկին օգտագործվում էին: Երեխաների հագուստը և նրանց համար առանձնացված կերակրման շշերը հնամաշ էին: Երեխաների ժամանցը, սննդի մատուցումը, ամանների լվացումը և խնամքի կազմակերպման հետ կապված այլ միջոցառումները հաստատությունում, հիմնականում, իրականացվում էին երեխաների ննջասենյակներին կից ակնհայտ փոքր և այդ նպատակների համար չհարմարեցված տարածքում: Հաստատության ֆիզիկական միջավայրը չէր



համապատասխանում համընդհանուր դիզայնի սկզբունքներին: Հաստատությունն ուներ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցի և խելամիտ հարմարեցումների ապահովման անհրաժեշտություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սննդի պահեստում, օրինակ, հայտնաբերվել են ժամկետանց ապրանքներ՝ կանաչ ոլոռ և թխվածքաբլիթ: Պահեստի սառցարանում առկա մսամթերքի վրա բացակայում էր համապատասխան մակնշումը, որը հնարավորություն չէր տալիս ստուգելու պիտանիության ժամկետը: Հաստատությունում 14 օրվա համար կազմված ճաշացուցակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա կազմման գործընթացում առկա են մի շարք խնդիրներ: Այսպես, օրինակ, 14 օրվա համար նախատեսված ճաշացուցակում ընդհանրապես ներառված չէ ձուկը: Այցի ընթացքում պարզվել է, որ ճաշատեսակի նմուշառման արդյունքները չեն լրացվել որևէ մատյանում: Հաստատությունը այցի պահին չուներ բուժքույր-դիետաբան, այնպիսի պայմաններում, երբ հաստատության սաներից մեկն ուներ հատուկ սննդակարգով սնվելու անհրաժեշտություն:

Որպես համակարգային խնդիր, շարունակում է արդիական մնալ ոլորտի օրենսդրական կարգավորումների բարելավման անհրաժեշտությունը՝ կապված հատուկ սննդակարգի մշակման, երեխաներին տրամադրվող սննդի տեսականու և չափաբաժինների հետ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի պահեստում, օրինակ, պահվող բլղուրը ժամկետանց էր, սառցարանում պահվող թռչնամիսը փաթեթավորված չէր, ոսպի, սառցարանում առկա որոշ մսամթերքների վրա բացակայում էր համապատասխան մակնշումը, որը հնարավորություն չէր տալիս ստուգելու պիտանիության ժամկետը: Արձանագրվել է, որ հաստատությունում առկա են առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորության ապահովման հետ կապված խնդիրներ: Այսպես, օրինակ, որոշ սանհանգույցների դռներ չէին փակվում, առկա էր տղաների և աղջիկների սանհանգույցների հստակ տարբերակման հետ կապված խնդիր: Այցի պահին առկա էր փոքր երեխաների անձնական հիգիենայի պարագաների, հագուստի անհատականացման խնդիր: Արձանագրվել է, որ տարածքի անբավարարության պատճառով փոքրահասակ տղաների սենյակներից մեկում համատեղ խնամք էր ստանում նաև մեկ աղջիկ երեխա: Թեև իրականացվել էին որոշակի աշխատանքներ, սակայն շենքային պայմանները շարունակում էին հարմարեցված չլինել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արձանագրվել է, որ կրթահամալիրի ֆիզիկական միջավայրը չի համապատասխանում համընդհանուր դիզայնի սկզբունքներին: Կրթահամալիրում կազմված ճաշացուցակի ուսումնասիրությունը

ցույց է տալիս, որ դրա կազմման գործընթացում առկա են եղել մի շարք խնդիրներ: Այսպես, օրինակ, 25 օրերի համար նախատեսված ճաշացուցակներում նախատեսված կարտոֆիլի գրամները չեն համապատասխանել ՀՀ կառավարության 815-Ն որոշման 5-րդ հավելվածով նախատեսված 3-7 և 7-18 տարեկանների համար սահմանված գրամներին, ճաշացուցակներում սահմանված գրամները չեն տարբերակվել ըստ տարիքային խմբերի: Հեռավոր բնակավայրերից երեխաները հաճախ գիշերում են կրթահամալիրում տրանսպորտի բացակայության և սոցիալական վատ վիճակում գտնվելու պատճառով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհետաձգելի միջոցառումներ իրականացնել՝ վերացնելու վերը նշված խախտումները Հաստատությունում, ապահովելու այնպիսի միջավայր, որտեղ կերաշխավորվեն երեխաների խնամքի իրականացման համար անհրաժեշտ կենսապայմաններ:

5.2 Կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ

Հաստատություններում իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցերի ընթացքում արձանագրվել են այնտեղ խնամք ստացող երեխաների կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ:

Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն իրականացված այցի արդյունքում արձանագրվել է, որ հաստատությունում բնակվող և հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երեխան ապահովված չէր բրայլյան գրքերով և անհրաժեշտ այլ մատչելի ուսումնական նյութերով: Արձանագրվել են կրթական գործընթացը յուրաքանչյուր երեխայի պահանջներին համապատասխանեցնելու և հարմարեցնելու, համապատասխան կրթական արձագանք ապահովելու, ուսումնական հաստատությունների և հաստատության արդյունավետ փոխհամագործակցության բացակայության հետ կապված համակարգային խնդիրներ: Ըստ տնօրենի տրամադրած տեղեկատվության՝ տնային ուսուցման գործընթացը կրում է ձևական բնույթ և չի ապահովում համապատասխան կրթական արձագանք: Հաստատությունում լիարժեքորեն չէր երաշխավորվում երեխաների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, օրինակ, արձանագրվել է, որ հաստատությունում խնամք ստացող երեխաներից մեկը դուրս է մնացել պարտադիր կրթությունից՝ խնամքի և պաշտպանության կազմակերպման գործընթացում առաջացած խնդիրների պատճառով: Արձանագրվել է նաև միգրացիայի համատեքստում ընտանիքից անջատված երեխայի կրթության իրավունքի ապահովման հետ կապված խնդիր: Ըստ

տրամադրած տեղեկատվության՝ երեխան հաճախում է դպրոց, սակայն լեզվական խոչընդոտի պատճառով ուսուցումը կրում է ձևական բնույթ: Ընդ որում, հաստատությունում ևս չկար համապատասխան լեզվին տիրապետող մասնագետ, որպիսի պայմաններում, խիստ անհրաժեշտության դեպքում միայն երեխայի հետ շփումն իրականացվում էր «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից տրամադրված թարգմանչի միջոցով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում իրականացված մշտադիտարկման արդյունքները, օրինակ, ցույց են տալիս, որ երեխաների կարիքների գնահատման, կրթության կազմակերպման գործընթացը գործնականում չի երաշխավորում դրանց իրական և անհատականացված լինելը: Արձանագրվել է, որ ուսուցիչները կրթությունը կազմակերպելիս չեն առաջնորդվում կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՈԻՊ-ներով, փոխարենը՝ փորձում են բոլոր երեխաներին նույն մոտեցմամբ փոխանցել նյութը՝ երբեմն, որպես հիմնական գործառույթ, իրականացնելով երեխաներին հանդարտեցնելուն ուղղված աշխատանքներ: Դասապրոցեսներին մասնակցությունը, ուսուցչի օգնականների հետ ունեցած առանձնազրույցները ցույց են տալիս, որ վերջիններս գործնականում չեն իրականացնում ուսուցչի օգնականի համար օրենսդրությամբ սահմանված գործառույթները՝ փոխարենը, որպես հիմնական գործառույթ, օգնում են ուսուցիչներին հանդարտեցնել երեխաներին, ուղեկցում են երեխաներին սանհանգույց, օգնում են երեխաներին սնվելու գործընթացում և այլն: Այլ աշխատակիցների պարագայում ևս արձանագրվել է մասնագիտական լիազորությունների և փաստացի գործունեության անհամապատասխանություն, աշխատակիցների ոչ մասնագիտական ծանրաբեռնվածություն: Այսպես, օրինակ, այցի պահին տարբեր մասնագետներ ներգրավված էին երեխաների սննդի կազմակերպման գործընթացին: Կրթահամալիրն ունի բազմամասնագիտական թիմով, այդ թվում՝ էրգոթերապիստներով, ժեստերի լեզվի թարգմանիչներով և այլ մասնագետներով համալրվելու անհրաժեշտություն: Այս տեսանկյունից խնդրահարույց է ինչպես հաստիքների, այնպես էլ մարզում նեղ մասնագետների բացակայությունը: Արձանագրվել է կրթահամալիրի աշխատակիցների շարունակական վերապատրաստումների իրականացման անհրաժեշտություն՝ ըստ մասնագիտական աշխատանքային բովանդակության: Կրթահամալիրում որոշ մասնագետների մոտ առկա էր գերծանրաբեռնվածություն: Այսպես, օրինակ, հոգեբանները շատ հաճախ ստիպված են լինում աշխատել նախապես չպլանավորված գրաֆիկով, ինչը պայմանավորված է հաստատությունում կրթություն ստացող երեխաների հետ բազմաթիվ չպլանավորված հոգեբանական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությամբ: Այցի պահին կրթահամալիրն ապահովված չէր սովորող երեխաների համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումներով: Տնօրինությունը նշել է, որ դրան ուղղված քայլեր իրականացվում են: Արձանագրվել է, որ կրթահամալիրում ներդրված չէր բռնությունների, այդ թվում՝ բուլինգի դեպքերի բացահայտմանը, կանխարգելմանն ու արձագանքմանն ուղղված

հստակ գործիքակազմ: Աշխատակիցների պնդմամբ կրթահամալիրում բռնություններ չեն լինում, ուստի լրացուցիչ մեխանիզմների անհրաժեշտությունը բացակայում է, ինչը խնդրահարույց է: Կրթահամալիրը տեղեկացված չէր ուսումնական հաստատությունների անձնակազմի համար երեխաների հանդեպ բռնության կանխարգելման և արձագանքման վերաբերյալ ուղեցույցի և դրանով նախատեսված մեխանիզմների ներդրման և կիրառման անհրաժեշտության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհետաձգելի միջոցառումներ իրականացնել՝ երաշխավորելու հաստատություններում գտնվող երեխաների կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովումը:

5.3 Երեխաների անձնական գործերի վարմանը ներկայացվող պահանջների խախտումներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ մի շարք հաստատություններում առկա են երեխաների անձնական գործերի վարմանը ներկայացվող պահանջների պահպանման հետ կապված խնդիրներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում, օրինակ, բացակայում էր «Առողջության մատյանը», թերի էր լրացված երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյանը: Հաստատությունը չուներ տնային ուսուցման կազմակերպման նպատակով կնքված պայմանագրերի օրինակները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, օրինակ, հաշվառման քարտերում ոչ բոլոր տվյալներն էին լրացված, փաստաթղթերի հավաքագրման միասնական մոտեցում ներդրված չէր: Միգրացիայի համատեքստում ընտանիքից անջատված երեխայի անձնական գործի ուսումնասիրության ընթացքում, օրինակ, պարզ է դարձել, որ անձնական գործի վարման համար առանձնացված թղթապանակում առկա չէր խնամակալ նշանակելու վերաբերյալ համապատասխան խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի որոշումը, ինչը ողջամիտ կասկած է առաջացնում առ այն, որ ընտանիքից անջատված երեխայի խնամքի որոշման գործընթացում խնամակալության և հոգաբարձության մարմինը ներգրավված չի եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ապահովելու մատյանների, երեխաների անձնական գործերի վարումը միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան:

5.4 Վատ վերաբերմունքից զերծ մնալու և կարծիք արտահայտելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում, օրինակ, առկա էր երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն: Հաստատությունն ունի բազմամասնագիտական թիմով համալրվելու և առկա մասնագետների թիրախային վերապատրաստումների անհրաժեշտություն: Առկա է աշխատակիցների կողմից երեխաների հետ վարվեցողության հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն: Հաստատությունում ներդրված չէ երեխաներին վերաբերելի հարցերում վերջինների մասնակցության, լսված լինելու իրավունքի ապահովման, ինչպես նաև բողոքարկելու իրավունքի իրացման իրական, հասանելի և մատչելի հնարավորություն ապահովող

մեխանիզմ: Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարը 116-ի փոխարեն նշված էր 114, ապահովված չէր տեսանելիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհետաձգելի միջոցառումներ իրականացնել՝ երաշխավորելու Հաստատությունում գտնվող երեխաների վատ վերաբերմունքից զերծ մնալու և կարծիք արտահայտելու իրավունքի ապահովումը:

5.5 Երեխաների հետագա խնամքը ընտանեկան միջավայրում իրականացնելուն ուղղված միջոցառումների ապահովման հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում, օրինակ, 2024 թվականի ընթացքում շարունակվել է երեխաներին, այդ թվում՝ 0-3 տարեկան երեխաներին, հաստատություն տեղափոխելու գործընթացը: Ըստ այցի ընթացքում տրամադրած տեղեկությունների՝ 2024 թվականի ընթացքում հաստատությունում բնակվող որևէ երեխայի խնամք չի հանձնվել խնամատար ընտանիքի և որևէ երեխա չի վերադարձվել ընտանիք:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, օրինակ, արձանագրվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձի տվյալների համադրման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել է, որ հաստատությունում խնամք են ստանում երեխաներ, որոնց խնամքը հանձնված է եղել խնամատար ընտանիքի, սակայն հետագայում խնամատարության պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ պայմանագիրը լուծվել է երեխաների խնամքն ապահովելու և դաստիարակելու համար խնամատար ընտանիքում անբարենպաստ պայմանների առկայության հիմքով: Արձանագրվել է, որ այցի պահին կան երեխաներ, ովքեր հաստատությունում շարունակում են խնամք ստանալ մեկ տարուց ավելի: Նույնաբովանդակ խնդիրներ են արձանագրվել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհետաձգելի միջոցառումներ իրականացնել՝ երաշխավորելու երեխաների՝ ընտանեկան միջավայրում խնամք ստանալու իրավունքը:

6. Հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են այն մասին, որ երեխաների հետխնամքի ապահովման գործուն մեխանիզմների ներդրման և կիրառման հարցում առկա են մի շարք խնդիրներ:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ երեխաների խնամք և

պաշտպանություն իրականացնող հաստատություններում ապրող երեխաների համար չկան մշակված հստակ ռազմավարություններ և դրանցից բխող միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն անհատական մոտեցման ցուցաբերմամբ՝ երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելուն ուղղված հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն, այդ թվում՝ մասնագիտության, գործունեության բնագավառի ընտրություն կատարելուն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորելուն աջակցելուն:

Այս նպատակով իրականացվող աշխատանքը, հիմնականում, դասընթացների և խմբային պարապմունքների կազմակերպումն է, որը սակայն, երբեմն չի ընդգրկում հաստատությունում գտնվող բոլոր անձանց:

Խնամք ստացող երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելու հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն ուղղված պետության կողմից ձեռնարկվող միջոցների կատարելագործման անհրաժեշտության մասին է վկայում նաև այն, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում շարունակում են դեռ շուրջօրյա խնամք ստանալ 18 տարին լրացած անձինք:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկումները վկայում են այն մասին, որ հետխնամքի ժամանակահատվածում անկախ կյանքի ապահովման նպատակով պետության տրամադրած սոցիալական աջակցության միջոցները նույնպես ունեն կատարելագործման անհրաժեշտություն:

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 22-ի թիվ 1007-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) 18 տարին լրացած և հաստատությունից դուրս գրված շրջանավարտների դրամական աջակցության և բնակելի տարածության վարձավճարի հատուցման կարգը:

Նշված ակտի վերլուծությունից հետևում է, որ հետխնամքի ժամանակահատվածում դրամական աջակցություն տրամադրվելու է միայն այն անձանց, ովքեր մինչև 18 տարին լրանալը, իսկ 18 տարին լրանալու օրվա դրությամբ պարտադիր կրթությունն ավարտած չլինելու պարագայում՝ պարտադիր կրթությունն ավարտելուց հետո դուրս գրվելու օրը նախորդող վերջին 24 ամիսների ընթացքում անընդմեջ խնամվել են Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունում:

Այսպիսի պայմաններում խնդրահարույց է միայն տարիքը լրանալու հիմքով և 24 ամիսների ընթացքում հաստատությունում անընդմեջ խնամք ստացած լինելու պայմանով բնակելի տարածություն և անհրաժեշտ սոցիալական աջակցություն տրամադրելը, ինչպես նաև այլ տեսակի այլընտրանքային խնամք կամ ոչ պետական

հաստատություններում խնամք ստացող երեխաներին բնակելի տարածություն և անհրաժեշտ սոցիալական աջակցություն չտրամադրելը, որպիսի մոտեցումը հակասում է միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններին:

ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշմամբ տրամադրվող սոցիալական աջակցության խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել է իր տարեկան հաղորդումներում[400]:

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի» համաձայն՝ գործակալությունները և հաստատությունները պետք է ունենան հստակ քաղաքականություն և համաձայնեցված ընթացակարգեր՝ կապված՝ երեխաների խնամքի պլանավորված և չպլանավորված ավարտի հետ՝ ապահովելու երեխայի հետխնամքը և/կամ դրա մշտադիտարկումը: Խնամքի ողջ ժամանակահատվածում նրանք պետք է նպատակ ունենան երեխաներին նախապատրաստելու անկախ կյանքին և համայնքում ներառվելուն սոցիալական և կյանքի հմտությունների ձեռքբերման միջոցով, որոնք խթանվում են համայնքի կյանքին մասնակցությամբ:

Խնամքից հետխնամք անցնելու գործընթացը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով երեխաների սեռը, տարիքը, հասունությունը և առանձնահատուկ հանգամանքները և ներառի խորհրդատվություն և աջակցություն՝ հատկապես շահագործումից խուսափելու համար: Խնամք ստացող երեխաները պետք է խրախուսվեն մասնակցել հետխնամքի պլանավորմանը: Հատուկ կարիքներ ունեցող երեխաները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաները, պետք է օգտվեն համապատասխան աջակցության համակարգից, որը ի թիվս այլնի՝ կբացառի անհարկի ինստիտուցիոնալացումը: Պետք է խրախուսել և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներին աշխատանքի տեղավորել խնամք ստացող երեխաներին, հատկապես խնամքի հատուկ կարիք ունեցող երեխաներին:

Հատուկ ջանքեր պետք է գործադրվեն՝ ապահովելու, հնարավորության դեպքում, յուրաքանչյուր երեխայի մասնագիտական հմտությունների ձեռքբերումը, որը կարող է նպաստել նրա անկախ կյանքի ապահովմանը խնամքից հետո:

Հետխնամքին պետք է նախապատրաստվել հնարավորինս շուտ, մինչև երեխայի խնամքի տրամադրման ավարտը:

Ընթացիկ կրթական և մասնագիտական վերապատրաստումները խնամք ստացող երիտասարդներին պետք է տրամադրվեն որպես անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանն ուղղված կրթական ծրագրերի մաս՝ օգնելու նրանց դառնալ ֆինանսապես անկախ և ստեղծել սեփական եկամուտը:

Սոցիալական, իրավական և առողջապահական ծառայությունների

---

[400] Տե՛ս, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1267-1280, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հասանելիությունը, համապատասխան ֆինանսական աջակցության հետ մեկտեղ, պետք է տրամադրվի երիտասարդներին, ովքեր թողել են խնամքը և հետխնամքի ընթացքում[401]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում ապրող երեխաների համար մշակել և ներդնել հստակ ռազմավարություններ և դրանցից բխող միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն անհատական մոտեցման ցուցաբերմամբ երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելուն ուղղված հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն, այդ թվում՝ մասնագիտության, գործունեության բնագավառի ընտրություն կատարելուն, աշխատանքի տեղավորելուն աջակցելուն,

✓ բնակելի տարածություն և սոցիալական աջակցություն տրամադրել նաև այլ տեսակի այլընտրանքային, այդ թվում՝ ոչ պետական հաստատություններում խնամք ստացած անձանց համար՝ անկախ վերջիններիս խնամք ստանալու ժամանակահատվածից: Բնակելի տարածության և սոցիալական աջակցության տրամադրման հիմքում անհրաժեշտ է դնել անձանց իրական կարիքները:

7. Մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ 2024 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրները:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում գրանցվել է մանկալքության 16 դեպք, որից 11-ը՝ առողջական խնդիրներով պայմանավորված: Միաժամանակ, Նախարարությունը հայտնել է, որ Համալիր ծրագրի շրջանակում նախատեսվում է մանկալքության կանխարգելման նպատակով ուսումնասիրել մանկալքության պատճառ հանդիսացող տիպային հիվանդության պատճառները:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 30.04.2020թ.-ից ուժի մեջ է մտել և գործում է ՀՀ առողջապահության նախարարի 21.04.2020թ. N 13-Ն հրամանը, որի 3-րդ հավելվածով հաստատվել է երեխայի հիվանդությամբ պայմանավորված մանկալքության դեպքում բժշկական կազմակերպության կողմից մասնագիտական երկրորդ կարծիքի ստացման

---

[401] Տե՛ս, Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց», հասանելի է https://digitallibrary.un.org/record/673583?ln=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գործելակարգը: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ առողջապահության նախարարության տարածքում փակցվել են պաստառներ, որոնք իրազեկում են երեխայի առողջական խնդիրների հետ կապված մանկալքության խնդրի կանխարգելման վերաբերյալ և աջակցության թեժ գծի հեռախոսահամարները:

Կարևորելով պետության կողմից ձեռնարկված միջոցները՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ մանկալքության դեպքերի վերաբերյալ տվյալները վկայում են նշված կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտության մասին: Մանկալքության կանխարգելման հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է մանկալքության իրական պատճառների բացահայտմանը, առկա կարծրատիպերի վերացմանը, անկախ երեխայի առողջական վիճակից՝ սոցիալական և հոգեբանական երաշխիքներով ապահովված լինելուն, դեռահասների շրջանում իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել մանկալքության դեպքերի համապարփակ ուսումնասիրություն՝ վեր հանելով իրական պատճառները:***
- ✓ ***ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներդնել մանկալքության դեմ պայքարի ծրագիր, որը կներառի կարծրատիպերի վերացմանը, սոցիալական և հոգեբանական երաշխիքներով ապահովելուն, իրազեկվածության բարձրացմանը:***

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների իրավաչափությունը երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից

Երեխայի տեսակցության կազմակերպմանն առնչվող, երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու (երեխային կողմերից մեկին հանձնելու) հետ կապված կատարողական գործողությունների պատշաճ իրականացումը առանձնահատուկ կարևորություն ունի երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից: Կատարողական գործողություններում երեխայի լավագույն շահի ապահովումը առաջնահերթություն է:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2024 թվականին իրականացվել են ոլորտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական մի շարք փոփոխություններ: 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունվել է «Կատարողական վարույթի մասին» օրենքը, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից, ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարի 2024 թվականի հունիսի 28-ի «Երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու պահանջների հարկադիր կատարման ընթացակարգերը հաստատելու մասին» թիվ 378-Ն հրամանը և այլն:

Նշված օրենսդրական փոփոխություններով կարգավորվել են երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու պահանջների հարկադիր կատարմանն առնչվող մի շարք հարցեր, որոնց Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նախորդ տարիների տարեկան հաղորդումներում: Այսպես, օրինակ, նախատեսվել է լիազորող նորմ, որը հնարավորություն է տվել սահմանել երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու հարկադիր կատարման առանձնահատուկ ընթացակարգ, նախատեսվել է, որ այն դեպքերում, երբ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ տեսակցությանը համազգեստ կրող հարկադիր կատարողի մասնակցությունը կարող է երեխայի մոտ վախ կամ հոգեբանական այլ խնդիրներ առաջացնել, կատարողական վարույթն իրականացնող հարկադիր կատարողն իր անմիջական ղեկավարի թույլտվությամբ տեսակցությանը կարող է ներկայանալ առանց համազգեստի, նախատեսվել է կատարողական վարույթով հոգեբան-փորձագետ ներգրավելու հնարավորություն և այլն:

Հարկ է փաստել, սակայն, որ 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը ցույց են տալիս, որ ոլորտում շարունակում են արդիական մնալ մի շարք խնդիրներ:

Դրանք, մասնավորապես, վերաբերում են հարկադիր կատարողների կողմից կատարողական վարույթի շրջանակում երեխայակենտրոն մոտեցումների ցուցաբերման համար անհրաժեշտ հմտությունների բացակայությանը, կատարողական վարույթի շրջանակում խնամակալության և հոգաբարձության

մարմնի ոչ հոգեբան ներկայացուցիչ ներգրավելու հնարավորությանը, վարույթում տարբեր ձևաչափով ներգրավված հոգեբանների մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակին, որակավորում ունենալու պահանջի բացակայությանը և այլն:

Այսպես, օրինակ, դիմումատուն նշել է, որ կատարողական վարույթով ներգրավված հոգեբան-փորձագետը երեխային այնպիսի հարցեր է տվել, որոնք ավելի վատ ազդեցություն են ունեցել երեխայի վրա՝ դնելով նրան հոգեհուզական վատ վիճակում և ձևավորելով առավել բացասական վերաբերմունք ծնողներից մեկի նկատմամբ:

Նշվածից հետևում է, որ չնայած պետության կողմից ոլորտի կատարելագործմանն ուղղված միջոցներին, այդ թվում՝ անցկացված վերապատրաստումներին և կատարված օրենսդրական փոփոխություններին՝ գործնականում շարունակվում են արձանագրվել կատարողական վարույթների շրջանակում երեխայի լավագույն շահի ապահովման հետ կապված խնդիրներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու երեխայի տեսակցության կազմակերպմանն առնչվող, երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու հետ կապված կատարողական գործողություններում բարձր որակավորում և հմտություններ ունեցող, երեխայի լավագույն շահի սկզբունքներին տիրապետող մասնագետների ներգրավումը:

2. Երեխայի հետ շփման իրավունքի ապահովումը երեխային օտարերկրյա պետություն անօրինական տեղափոխելու դեպքում

Երեխայի հետ շփման իրավունքի ապահովման կարևորագույն տարրերից են երեխայի բնակության վայրի իմացությունն ու դրա հասանելիությունը: Այս առնչությամբ հաճախ անհրաժեշտություն է առաջանում քննարկման առարկա դարձնել երեխային այլ պետություն տեղափոխելու և պահելու, ինչպես նաև ՀՀ տարածքում երեխայի բնակության վայրը փոփոխելու դեպքերում երեխայի հետ շփման իրավունքի ապահովման հետ կապված հարցերը:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքների քննարկման արդյունքում արձանագրվել են ՀՀ տարածքից երեխային անօրինական տեղափոխելու դեպքերը կանխելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների հետ կապված խնդիրներ:

«Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիայի վերլուծությունից հետևում է, որ առանց մեկ ծնողի համաձայնության մյուս ծնողի կողմից երեխային տեղափոխելը և պահելը այլ պետությունում համարվում է անօրինական:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում

են այն մասին, որ առկա է միջազգային առևանգման դեպքերը կանխելու հստակ և գործուն կառուցակարգեր ներդնելու անհրաժեշտություն:

Այս առումով միջազգային առևանգման դեպքերը կանխելու տեսանկյունից կարևոր է օրենսդրությամբ երեխայի տեղափոխման գործընթացի առնչությամբ հստակ կարգավորումների ներդրումը:

Երեխայի անօրինական տեղափոխումը կանխելուն ուղղված որոշակի կարգավորումներ նախատեսված են «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն որի՝ մինչև 16 տարեկան երեխային մյուս ծնողի դիմումի հիման վրա անձնագիր չի տրամադրվում, եթե ծնողը, որի մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան, լիազոր մարմին նախապես ներկայացնում է անձնագիր տրամադրելու անհամաձայնության վերաբերյալ գրավոր հայտարարություն: Հայտարարությանը կցվում է երեխայի բնակության վայրը որոշելու՝ նոտարական կարգով վավերացված համաձայնության պատճենը կամ դատական ակտի պատճենը:

Նշվածը խնդրահարույց է, մասնավորապես, այն տեսանկյունից, որ անձնագիր չի տրամադրվում միայն այն ծնողի գրավոր հայտարարության հիման վրա, ում մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան: Մինչդեռ, մի շարք դեպքերում երեխայի անօրինական տեղափոխումը այլ պետություն իրականացվում է այն ծնողի կողմից, ում մոտ օրինական հիմքով բնակվում է երեխան: Նշված կարգավորումը՝ որպես կանխարգելիչ դրույթ, չի կարող կիրառվել նաև այն դեպքերում, երբ երեխան արդեն իսկ ունի անձնագիր:

Ուստի, պետությունը պետք է իրականացնի այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն երեխաների անօրինական տեղափոխումը կանխելուն՝ երաշխավորելով վերջիններիս լավագույն շահի ապահովումը:

Անդրադառնալով «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիային՝ հարկ է փաստել, որ ներկայում այն միակ գործիքն է, որով հնարավոր է ապահովել անօրինական տեղափոխված երեխայի վերադարձը Հայաստանի Հանրապետություն: Մինչդեռ, գործնականում բազմաթիվ դժվարություններ են առաջանում նաև կոնվենցիայի կիրառման տեսանկյունից: Այդպիսիք են, օրինակ, այն, որ բոլոր երկրները չէ, որ միացել են կոնվենցիային; կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիայի կիրառումը դադարեցվում է, երբ երեխան դառնում է 16 տարեկան և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախատեսել հստակ և գործուն կառուցակարգեր, այդ թվում՝ իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված երեխայի անօրինական տեղափոխման դեպքերի կանխմանը:

3. ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում երեխայի հայտնաբերման և երեխայի հետ շփման իրավունքի ապահովման կառուցակարգերի հետ կապված խնդիրներ

Երեխայի հետ շփվելու իրավունքը խախտվում է նաև այն դեպքերում, երբ ծնողներից մեկը ՀՀ տարածքում փոխում է երեխայի բնակության վայրը՝ առանց մյուս ծնողին այդ մասին տեղեկացնելու: Եթե նշված իրավիճակը հնարավոր է հաղթահարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում, ապա խնդրի հաղթահարումը բարդանում է ծնողների միջև երեխայի բնակության վայրի վերաբերյալ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, քանի որ նման դեպքերում սահմանված չեն ծնողի հետ երեխայի շփման իրավունքի ապահովման հստակ կառուցակարգեր: Այսպես, օրինակ, մեկ ծնողը կարող է փոխել երեխայի բնակության վայրը՝ այդ մասին չտեղեկացնելով մյուս ծնողին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերը վկայում են այն մասին, որ ծնողները խնդրի լուծման առնչությամբ պատասխանատու մարմինների իրավասությունների վերաբերյալ ունեն ոչ բավարար իրազեկվածություն:

Գործող իրավական կարգավորումների համաձայն՝ մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս նոր բնակության վայրի (կացարանի) հասցեն օրենքով սահմանված ժամկետում չհայտնելը առաջացնում է վարչական պատասխանատվություն: Հարկ է փաստել, սակայն, որ առկա չեն հստակ կառուցակարգեր նշված իրավախախտումները բացահայտելու համար, ինչի հետևանքով խախտվում է ծնողի հետ շփվելու երեխայի իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանի այն առաջարկին, որ անհրաժեշտ է մշակել և իրացնել առանց համայնքի տեղական ռեգիստրին տեղեկացնելու երեխայի մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելու կանխարգելման և վարչական իրավախախտման հայտնաբերման հստակ կառուցակարգեր՝ 2024 թվականին ՀՀ ներքին գործերի նախարարությունը հայտնել է, որ վերահաստատում է հիշյալ կառուցակարգերի մշակման և իրացման անհրաժեշտությունը՝ միաժամանակ, տեղեկացնելով, որ այս ուղղությամբ համապատասխան միջոցներ կձեռնարկվեն:

Առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ մեկ ծնողի կողմից երեխայի բնակության վայրը փոխելը կատարվում է պարբերաբար և անգամ երեխայի բնակության վայրի հայտնաբերման պարագայում ծնողի հետ երեխայի շփման իրավունքի իրացումը չի ապահովվում: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ ամրագրված չէ երեխայի հետ ծնողի տեսակցության կազմակերպման հստակ պարտականություն և յուրաքանչյուր դեպքում հարցի լուծումը թողնվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հայեցողությանը: Նման պարագայում խնդրի լուծումը կարող է ապահովվել միայն դատական կարգով, ինչից մի շարք քաղաքացիներ խուսափում են՝ ֆինանսական միջոցների սղության և այլ պատճառներով: Հետևաբար,

համայնքային մակարդակում խնդրի կանխարգելումը և լուծումը կարող է դիտվել որպես առավել նպատակային մոտեցում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ մշակել և իրացնել առանց համայնքի տեղական ռեգիստրին տեղեկացնելու երեխայի մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելու կանխարգելման և վարչական իրավախախտման հայտնաբերման հստակ կառուցակարգեր:

✓ գործուն քայլեր ձեռնարկել մեկ ծնողի կողմից ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրը փոխելու դեպքում երեխայի և ծնողի շփման իրավունքի ապահովման համար:

4. Երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովումը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման դեպքերում

Երեխայի հետ շփվելու իրավունքի իրացումը անհրաժեշտ է քննարկել նաև «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև օրենք) կարգավորումների և դրանց կիրառման համատեքստում:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը սահմանվում է 20-25 օր:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կայացվում է 4-12 ամիս ժամկետով, և այն կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամիս ժամկետով:

Հետևաբար՝ անհետաձգելի և պաշտպանական որոշումներով սահմանվող սահմանափակումները կարող են տևել 12 ամսից ավելի, որի ընթացքում կարող են կիրառվել տարատեսակ սահմանափակումներ, որոնք անմիջականորեն վերաբերում են երեխայի հետ շփման՝ ծնողի իրավունքի սահմանափակմանը: Մինչդեռ, բաց են մնում ծնողի և երեխայի շփման իրավունքի ապահովման հարցերն այն պարագայում, երբ չեն կիրառվում նշված սահմանափակումները, սակայն երեխաները, օրինակ, գտնվում են ապաստարանում, ինչն ինքնին հանգեցնում է վերը նշված սահմանափակումներին:

Ընդ որում, բաց է մնում նաև այն հարցը, թե ինչպես է հետագայում ապահովվելու ծնողի՝ երեխայի հետ շփման իրավունքի իրացումը և տեսակցությունների կազմակերպումն անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո, երբ բռնության ենթարկված անձը և երեխաները շարունակում են մնալ ապաստարանում: Հարկ է ընդգծել, որ դեպքերի մեծ մասի պարագայում սահմանված ժամկետը լրանալուց հետո բռնության ենթարկված անձը և երեխաները շարունակում են մնալ ապաստարանում, և փաստացի շարունակվում է նշված որոշումներով կիրառված սահմանափակումների

գործողությունը: Ապաստարանում մնալը որոշ դեպքերում հանգեցնում է նաև անհետաձգելի միջամտության որոշմամբ չկիրառված սահմանափակումների, օրինակ՝ երեխաների հետ հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվելու կամ երեխայի հետ տեսակցության արգելքի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով նախատեսել բռնության ենթարկված անձի անվտանգային երաշխիքների և ծնողի հետ երեխայի շփման իրավունքի հարաբերակցության արդյունավետ կառուցակարգեր՝ միաժամանակ պահպանելով նաև որոշակիություն որոշումներով նախատեսված սահմանափակումների և գործնականում առկա իրավիճակի միջև:

Այն դեպքերում, երբ երեխաները բռնության չեն ենթարկվել, և առկա չէ երեխաների նկատմամբ բռնության վտանգ, կարևոր է քննարկման առարկա դարձնել խնդիրների խորքային ուսումնասիրության և դրանց արդյունքների հիման վրա, ըստ նպատակահարմարության, տեսակցությունների իրականացման կարգ սահմանելու հարցը՝ երեխայի լավագույն շահի հաշվառմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***✓ լավարկել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները և մոփեցումները երեխաների հետ տեսակցությունների կազմակերպման համատեքստում,***
- ***✓ ներդնել հստակ կառուցակարգեր՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատականացված մոտեցում ցուցաբերելու և տեսակցությունների կազմակերպման նպատակահարմարությունը որոշելու համար:***

ԳԼՈՒԽ 4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Երեխաների զարգացման վրա նախադպրոցական ուսումնական հաստատություններն ունեն բացառիկ նշանակություն, ինչը հաստատված է բազմաթիվ միջազգային փաստաթղթերով: ՄԱԿ-ի կայուն զարգացման 4-րդ նպատակի 4.2 կետի համաձայն՝ անհրաժեշտ է մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր աղջիկների և տղաների համար հասանելի լինեն որակյալ վաղ մանկության զարգացման հնարավորությունները, խնամքը և նախադպրոցական կրթությունը, որպեսզի նրանք պատրաստ լինեն տարրական կրթության:[402] Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ) Կայուն զարգացման 4-րդ նպատակի կիրառմանն ուղղված «Կրթություն 2030» վերտառությամբ փաստաթղթում նշել է, որ պետք է խրախուսվի առնվազն մեկ տարվա անվճար և պարտադիր որակյալ նախադպրոցական կրթության ապահովումը:[403]

Նշված վերլուծությունից հետևում է, որ նախադպրոցական կրթությունը բացառիկ դեր և նշանակություն ունի ինչպես երեխայի վաղ մանկության, այնպես էլ հետագայում ակադեմիական հաջողությունների և ողջ կյանքի ընթացքի վրա, ինչն ապահովելը պետության պարտավորությունն է: Այնուամենայնիվ, ՀՀ-ում նախադպրոցական կրթության իրավունքի ապահովման հարցում առկա են մի շարք համակարգային խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել են.

1.նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ

2.նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ.

3.նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ:

1.Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ

2024 թվականին նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրները շարունակում են արդիական մնալ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ երեխաների նախադպրոցական կրթության իրավունքը շատ հաճախ մնում է չիրացված ՀՀ բնակչության մեծ մասի՝ Երևան քաղաքում բնակվելու, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծանրաբեռնվածության, մարզերի մի շարք բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության կամ ոչ բավարար քանակի,

---

[402] Հասանելի է https://armenia.un.org/hy/sdgs/4 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[403]ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն 2030»-ը հասանելի է https://uis.unesco.org/sites/default/files/documents/education-2030-incheon-framework-for-action-implementation-of-sdg4-2016-en_2.pdf հղումով, էջ 27, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մարզերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնական մասի վճարովի լինելու և մի շարք այլ պատճառներով:

Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ մարզերի մի շարք բնակավայրերում առհասարակ չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Ըստ տրամադրած տեղեկությունների՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի 23 բնակավայրերում, ՀՀ Արարատի մարզի 11 բնակավայրերում, ՀՀ Շիրակի մարզի 66 բնակավայրերում և այլ մարզերի մի շարք բնակավայրերում, օրինակ, առհասարակ չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Արձանագրվել է, որ Երևանում, օրինակ, անգամ շատ վաղ հերթագրման պարագայում երեխան չի կարողացել հաճախել մանկապարտեզ հաստատությունների ծանրաբեռնվածության պատճառով: Ընդ որում, 2025 թվականի փետրվարի 25-ի դրությամբ «Մանկապարտեզ կառավարման համակարգում» առկա տվյալների համաձայն՝ հերթագրված են 14594 երեխա, որից 12963-ը նախադպրոցական ուսումնական հաստատության ընդունելության տարիքային խմբերին համապատասխան են:

Արձանագրվել են նաև մի շարք դեպքեր, երբ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ոչ բավարար քանակի պատճառով ծնողները կա՛մ չեն կարողացել աշխատել՝ երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու համար, կա՛մ աշխատելու պարագայում՝ ստացված աշխատավարձի մեծ մասը կամ ամբողջը տրամադրել են՝ որպես մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատության վճար:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում սուբվենցիոն ծրագրով ՀՀ տարածքում կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել են թվով 39 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Երևան քաղաքում 2024 թվականին գործունեությունը վերսկսել է թվով 6 հիմնանորոգված նախադպրոցական ուսումնական հաստատություն, շահագործման է հանձնվել 6 մանկապարտեզ:

Կարևորելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցմանը, վերակառուցմանն ու հիմնանորոգմանն ուղղված աշխատանքները՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է դրանց շարունակականության ապահովումը՝ երաշխավորելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիությունը բոլոր երեխաների համար:

Երևանի ավագանու 24 դեկտեմբերի 2024 թվականի. թիվ 267-Ն որոշմամբ նախատեսվել է Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթության անվճար իրականացումը՝ երեխայի ծնողների կամ ծնողներից մեկի կամ նրա օրինական ներկայացուցիչների կամ օրինական ներկայացուցիչներից մեկի մշտապես կամ փաստացի Երևան քաղաքում հաշվառված լինելու պարագայում:

Կարևորելով Երևան քաղաքում նախադպրոցական կրթության անվճար իրականացնելու հանգամանքը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում այն, որ 2024 թվականի ընթացքում ՀՀ մարզերում մի շարք համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններ շարունակում են մնալ վճարովի:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ մարզերի մի շարք համայնքներում առհասարակ չեն գործում անվճար նախադպրոցական ուսումնական հաստատություններ, իսկ որոշ մարզերում սահմանվել են որոշ արտոնություններ:

Նշվածը մտահոգիչ է, հատկապես, այն հաշվառմամբ, որ շատ հաճախ վճարովիությունը հիմնական արգելքն է նախադպրոցական կրթության իրավունքը իրացնելու համար:

Նշվածի առնչությամբ իր մտահոգությունն է հայտնել նաև Երեխայի իրավունքների կոմիտեն 2024 թվականի եզրափակիչ դիտարկումներում՝ արձանագրելով վաղ տարիքի երեխաների խնամքի և զարգացման համապարփակ և ամբողջական քաղաքականության հիման վրա նախադպրոցական կրթության զարգացման և ընդլայնման համար բավարար ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտությունը: [404]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ պետության պարտավորությունն է ստեղծել երեխայի վաղ մանկության կրթության համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որպես յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի կարևոր երաշխիք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել ամուր նախադպրոցական համակարգ՝ ձեռնարկելով բոլոր հնարավոր միջոցները նախադպրոցական կրթությունը պարտադիր դարձնելու համար:***
- ✓ ***շարունակել ձեռնարկել գործուն միջոցներ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում անվճար հիմունքներով կրթության իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ,***
- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիությունն ապահովելու համար:***

2.Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով ծնողի երեխաներին, երեք և ավելի երեխա ունեցող ծնողի երեխաներին, զոհված զինծառայողի երեխային, քրոջը, եղբորը, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողի երեխաներին,

---

[404]Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաներին, տվյալ ուսումնական հաստատության (կազմակերպության) աշխատակիցների երեխաներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նշված հրամանով նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունելության համար սահմանված առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակը աստիճանաբար ընդլայնվել է:

Այնուամենայնիվ, 2024 թվականին շարունակել է արդիական մնալ նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունելության համար սահմանված առաջնահերթություն ունեցող անձանց շրջանակի ընդլայնման հետ կապված խնդիրը: Այսպես, օրինակ, այդ շրջանակում շարունակում են չընդգրկվել միայնակ ծնողի կամ խնամակալի կողմից խնամք ստացող երեխաները, սոցիալապես անապահով ընտանիքում ապրող երեխաները և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ընդլայնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդունելության համար առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակը:

3. Նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատված հավելվածի 22-րդ կետի համաձայն՝ սանի ազատումը հաստատությունից կատարվում է՝ ծնողի դիմումի հիման վրա, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, հաստատության և ծնողի միջև կնքված պայմանագրի դրույթները ծնողի կողմից չպահպանելու դեպքում, ուսումնական տարվա ընթացքում սանի, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում:

Նշվածից հետևում է, որ սանը կարող է ազատվել նախադպրոցական ուսումնական հաստատությունից նաև ծնողի կողմից հաստատության և ծնողի միջև կնքված պայմանագրի դրույթները ծնողի կողմից չպահպանելու դեպքում, ինչն ակնհայտորեն հանգեցնում է երեխայի նախադպրոցական կրթության շարունակականության ընդհատման: Այսպիսի պայմաններում անհասկանալի է երեխայի նախադպրոցական կրթության իրացումը ծնողի կողմից պայմանագրով սահմանված դրույթները պահպանելու հետ կապելը:

Յուրաքանչյուր պարագայում պետությունը պարտավոր է առաջնորդվել երեխայի լավագույն շահով՝ անկախ ծնողի դրսևորած վարքագծից: Մինչդեռ, նախադպրոցական կրթության ստացումը, տվյալ պարագայում, դիտարկվում է սովորական պայմանագրային հարաբերությունների համատեքստում, ինչն անթույլատրելի է: Երեխայի նախադպրոցական կրթության ստացումը որևէ պարագայում չպետք է պայմանավորված լինի այլ գործոններով, քան երեխայի լավագույն շահի ապահովումն է:

Միաժամանակ, երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատությունից ազատելու հիմք է ուսումնական տարվա ընթացքում սանի, 75 աշխատանքային օր

բացակայելը: Մասնավորապես, երեխայի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելը կարող է ընդհատվել ամենատարբեր պատճառներով, որոնց համար երեխային նախադպրոցական կրթությունը շարունակել չթույլատրելը որևէ պարագայում չի կարող երեխայակենտրոն համարվել: Պետության քաղաքականությունը պետք է միտված լինի երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ընդգրկելուն, դրա ապահովմանը և ոչ, որոշակի հանգամանքներով պայմանավորված, նախադպրոցական ուսումնական հաստատություն չհաճախելու դեպքում՝ երեխայի կրթություն ստանալու իրավունքը սահմանափակելուն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վարել երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ընդգրկելու քաղաքականություն, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատություններից ազատումն իրականացնել՝ ելնելով բացառապես երեխայի լավագույն շահի ապահովումից:

ԳԼՈՒԽ 5. ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Երեխայի անվճար պարտադիր միջնակարգ կրթության իրավունքը սահմանված է ինչպես ներպետական, այնպես էլ բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերով և կոնվենցիաներով:

Մինչդեռ՝ 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ երեխայի պարտադիր կրթության իրավունքի ապահովման տեսանկյունից շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև տարեկան հաղորդումներում[405] և արտահերթ հրապարակային զեկույցում[406]**:**

Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, արձանագրել է.

1. հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ.
2. հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ.
3. երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ:

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ

Կրթության իրավունքի իրացման համատեքստում, նախ և առաջ, ուշադրության է արժանի հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հարցը:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի թիվ 26-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ պետությունները պետք է ստեղծեն անվտանգ, առողջ և ճկուն ենթակառուցվածք՝ արդյունավետ ուսուցման համար: Սա ներառում է հետիոտնային և հեծանվային երթուղիների և դպրոց հասնող հասարակական տրանսպորտի հասանելիության ապահովումը:[407]

---

[405] Տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 600-609, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[406] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2025թ., հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[407] Տե՛ս, ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի թիվ 26-րդ ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է հետևյալ https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/crccgc26-general-comment-no-26-2023-childrens-rights հղումով, էջ 9:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 04-Ն հրամանի հավելվածի 109-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային հասանելիության առավելագույն ժամանակի հաշվարկով հանրակրթական դպրոցների տեղաբաշխումը բնակավայրերում թույլատրվում է՝ տարրական դասարանների (տարրական դպրոց) համար՝ 10-15 րոպե, միջին դասարանների (միջին դպրոց) համար՝ 30 րոպե, ավագ դասարանների (ավագ դպրոց) համար՝ 45 րոպե: Մինչև տրասնպորտային միջոցների կանգառ աշակերտների հետիոտնային հասանելիության հեռավորությունը (բնակելի թաղամասում, վարչական շրջանի սահմաններում) պետք է կազմի առավելագույնը 500 մ:

Մինչդեռ՝ այս առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել է, որ համայնքների ոչ բոլոր բնակավայրերում են առկա դպրոցներ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ մի շարք մարզերի բնակավայրերում, օրինակ, Քաջարան համայնքում, Տաթև համայնքի Քաշունի բնակավայրում առհասարակ չեն գործում հանրակրթական ուսումնական հաստատություններ:

Այսպես, ՀՀ Արագածոտնի մարզի 13 բնակավայրերում դպրոցներ չկան, ՀՀ Արարատի մարզի 7, Լոռու մարզի 17 և այլ մարզերի մի շարք բնակավայրերում չի գործում որևէ հանրակրթական ուսումնական հաստատություն:

Մեկ այլ խնդիր է, երբ թեև բնակավայրերին մոտ դպրոցներ առկա են, սակայն լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են լինում: Խնդիրն առավել արդիական է տարրական դպրոցի աշակերտների պարագայում և, հատկապես, ՀՀ մարզերում:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում ստացել է նաև բողոքներ այն մասին, որ մի շարք դեպքերում երեխաների բնակության վայրը հեռու է գտնվում հանրակրթական ուսումնական հաստատություններից:

«Հանրակրթության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1.1 մասի 1.1 կետի համաձայն՝ սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվելու հանգամանքը դեռևս բավարար չէ հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունելության

առաջնահերթություն ստանալու համար, ինչը խնդրահարույց է: Տվյալ պարագայում առաջանում են խնդիրներ՝ կապված դպրոցների հասանելիության հետ, հատկապես այն դեպքերում, երբ երեխայի ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները չեն կարող ապահովել երեխայի տեղափոխումը դպրոց: Նշված դեպքում մի կողմից սահմանվում է ծնողի պարտականությունը ապահովել երեխայի՝ պատշաճ դպրոց հաճախումը, մյուս կողմից պետությունը չի ստեղծում համապատասխան պայմաններ այդ պարտականության կատարման համար:

Նշվածից հետևում է, որ 2024 թվականի ընթացքում դպրոցների հասանելիության հետ կապված վերը նշված խնդիրները շարունակում են մնալ արդիական:[408]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ՀՀ համայնքների բոլոր բնակավայրերն ապահովել երեխաների թվին համապատասխան լիցենզիայով սահմանված տեղ ունեցող դպրոցներով:***
- ***դպրոցի և երեխայի բնակության վայրի միջև մեծ հեռավորության պարագայում՝ ապահովել երեխայի տեղափոխումը:***

2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ

Յուրաքանչյուր հանրակրթական ուսումնական հաստատություն ունի իր ներքին կարգապահական, այդ թվում՝ սովորողի վարքագծի կանոնները, որոնք, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հաստատում է պետական ուսումնական հաստատության խորհուրդը: Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ոչ միշտ են ներքին կարգապահական կանոնները և, հատկապես, սովորողների վարքագծի կանոնները հասանելի լինում սովորողներին և վերջիններս անգամ տեղեկացված և իրազեկ չեն լինում դրանցով սահմանված իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Միաժամանակ, անհրաժեշտ է քննարկել նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, այդ թվում՝ սովորողի վարքագծի կանոնների համապատասխանությունը երեխայի իրավունքներին և լավագույն շահին:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների 2024 թվականի մշտադիտարկման արդյունքները նույնպես վկայում են այն մասին, որ որոշ դեպքերում սովորողի վարքագծի կանոններում նախատեսվում են ոչ որոշակի և հայեցողական մեկնաբանություն ենթադրող եզրույթներ, օրինակ՝ «աշակերտին վայել տեսք», «աշակերտին վայել վարքագիծ» և

---

[408] Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ կրթության իրավունքի հասանելիության առնչությամբ արձանագրված խնդիրները նկարագրված են սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում:

այլն, որոնք էլ իրենց հերթին ոչ պատշաճ մեկնաբանման արդյունքում սահմանափակում են երեխայի իրավունքները՝ անհամաչափ պարտավորություններ ստեղծելով երեխաների համար:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ դպրոցը ցուցաբերել է աշակերտին՝ առաջին դասաժամին ուշացումով ներկայանալու համար դպրոց ներս չթողնելու մոտեցում, ինչն անթույլատրելի է երեխայի լավագույն շահի ապահովման տեսանկյունից:

Այս և մի շարք այլ դեպքերում հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնները և սովորողների վարքագծի կանոնները չեն համապատասխանում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի դրույթներին և երեխայի լավագույն շահին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել վերահսկողություն հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների՝ երեխաների իրավունքներին և լավագույն շահին համապատասխանության նկատմամբ,***
- ✓ ***ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների մշակումն իրականացնել համապատասխան մասնագետների միջոցով՝ ապահովելով դրանց որոշակիությունն ու երեխայի կավագույն շահի սկզբունքներին համապատասխանությունը,***
- ✓ ***վարքագծի կանոնների մասին իրազեկել սովորողներին և դրանք փակցնել տեսանելի վայրերում կամ հասանելի դարձնել այլ ձևով,***
- ✓ ***հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների համար իրականացնել վերապատրաստումներ ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների, ինչպես նաև դրանք՝ երեխայի իրավունքներին և լավագույն շահին համապատասխան մեկնաբանելու առնչությամբ:***

3.Երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ

Պետության պարտականությունն է անվճար, հասանելի և որակյալ միջնակարգ կրթության ապահովումը, երեխայի պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերի բացառումը: Պետության քաղաքականությունը պետք է միտված լինի երեխայի կրթության իրավունքի իրացման ապահովմանը:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման աշխատանքները վկայում են, որ բազմաթիվ երեխաներ տարբեր պատճառներով շարունակում են դուրս մնալ պարտադիր կրթությունից: Արձանագրված պատճառները բազմաթիվ են, դրանք կարող են լինել հաշմանդամություն ունենալու հանգամանքը, երեխայի աշխատելու հանգամանքը, կրթությունից դուրս մնացած երեխային բացահայտելու մեխանիզմների, իրավասու մարմինների միջև արդյունավետ համագործակցության, տվյալների փոխանակման արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը, կրթությունից դուրս մնացած երեխային կրթության գործընթացում ընդգրկելու մեխանիզմների և հմտությունների, ծնողների հետ աշխատելու արդյունավետ մեթոդաբանության բացակայությունը, վաղ

ամուսնությունները և այլն: Խիստ մտահոգիչ է այն, որ արձանագրվել է դեպք, երբ երեխան չի հաճախել դպրոց գրենական պիտույքներ չունենալու պատճառով:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է իրականացնել կրթությունից դուրս մնալու պատճառների խորքային վերլուծություն, մշակել այդ պատճառների վերացմանն ուղղված գործուն կառուցակարգեր և գործնականում բացառել որևէ պատճառով կրթությունից դուրս մնալու դեպքերը:

2024 թվականին շարունակում են արդիական մնալ տնային ուսուցման դեպքում կրթության որակի և արդյունավետ վերահսկողական մեխանիզմների բացակայության առնչությամբ նախորդ տարիներին արձանագրված խնդիրները: Շատ հաճախ տնային ուսուցումը կրում է ձևական բնույթ՝ չերաշխավորելով անհրաժեշտ կրթական արձագանք, իսկ, երբեմն, ուղղակի չի իրականացվում, մինչդեռ՝ դրա նկատմամբ իրականացվող արդյունավետ վերահսկողական մեխանիզմները բացակայում են:

2024 թվականին արձանագրվել են նաև միգրացիայի համատեքստում ընտանիքից անջատված երեխայի կրթության իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ: Այսպես, օրինակ, արձանագրվել է, որ երեխան հաճախում է դպրոց, սակայն լեզվական խոչընդոտի պատճառով ուսուցումը կրում է ձևական բնույթ:

Շատ դեպքերում, արձանագրվում է, որ կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտումից հետո, անգամ, առկա չէ արդյունավետ կառուցակարգ երեխաներին կրթության գործընթացում ընդգրկելու համար: Խնամակալության և հոգաբարձության մարմինները, ուսումնական հաստատության աշխատակիցները չունեն երեխաների և ծնողների հետ աշխատելու անհրաժեշտ հմտություններ, ինչն էլ, երբեմն, դառնում է երեխաների կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներից մեկը:

Այս առումով խիստ կարևոր է կրթությունից դուրս մնալու դեպքերի կանխարգելման և արձագանքման ոլորտում մասնագետների հմտությունների կատարելագործմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել կրթությունից դուրս մնալու պատճառների խորքային վերլուծություն, մշակել այդ պատճառների վերացմանն ուղղված գործուն կառուցակարգեր և գործնականում բացառել որևէ պատճառով կրթությունից դուրս մնալու դեպքերը:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ բացառելու տնային ուսուցման գործընթացի ձևական բնույթ կրելը և ներդնել դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու միգրացիոն գործընթացներում հայտնված երեխաների կրթության իրավունքի իրացումը՝ ապահովելով համապատասխան լեզվի մասնագետների ներգրավվածությունը:***
- ✓ ***կրթությունից դուրս մնալու դեպքերի կանխարգելման և արձագանքման գործընթացում ընդգրկված բոլոր մասնագետների համար իրականացնել հմտությունների կատարելագործմանն ուղղված վերապատրաստման աշխատանքներ:***

ԳԼՈՒԽ 6. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐԾԱԳԱՆՔՈՒՄ

Պետությունը ստանձնել է պարտավորություն ձեռնարկել անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները՝ պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:

Երեխայի՝ ցանկացած տեսակի բռնությունից պաշտպանված լինելու իրավունքը իր ամրագրումն է գտել միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, դրանց վերաբերող մեկնաբանություններում, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում, «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքում և այլն:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման գործընթացում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[409] և արտահերթ հրապարակային զեկույցներում:

Բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման առնչությամբ արձանագրված խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ անդրադարձել է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2024 թվականների վիճակի վերաբերյալ այլընտրանքային հրապարակային զեկույցի շրջանակներում[410]:

---

[409] Տե՛ս, 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1232-1240, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս նաև, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1209-1215, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84 a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 609-622, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[410] Տե՛ս, ՀՀ-ն կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿԻ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2024 թվականների

Երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման կառուցակարգում առկա խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև Պաշտպանին կարծիքի ներկայացված նախագծերի առնչությամբ տրված առաջարկությունների շրջանակում: Այսպես, օրինակ, 2024 թվականի ընթացքում Պաշտպանը բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման շրջանակում իրականացվելիք միջոցառումների առնչությամբ կարծիք է ներկայացրել երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք իրավական ակտերի նախագծերի, այդ թվում՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման, բացահայտման և արձագանքման հետ կապված հարցերը բազմիցս բարձրաձայնվել են պետական իրավասու մարմիններին հասցեագրված գրությունների, աշխատանքային քննարկումների, հրապարակումների շրջանակներում:

Խիստ մտահոգիչ է, որ նախորդ տարիների համեմատությամբ գրանցվել է երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների թվի աճ: 2024 թվականին երեխայի նկատմամբ բռնության դեպքերին վերաբերող գրավոր և բանավոր դիմում-բողոքների թիվը եղել է 97, այնպիսի պայմաններում, երբ 2023 թվականին՝ եղել է 67, 2022 թվականին՝ 66, 2021 թվականին՝ 50:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում- բողոքներով հայտնած, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում վեր հանված դեպքերը տեղի են ունեցել հաստատություններում, այդ թվում՝ մանկապարտեզներում, դպրոցներում, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ընտանիքում, ինչպես նաև թվային միջավայրում: Արձանագրվել են ֆիզիկական, սեռական և հոգեբանական, ինչպես նաև անտեսման և այլ ձևերով դրսևորված բռնություններ: Բռնությունները տեղի են ունեցել ինչպես երեխաների միջև, այնպես էլ՝ երեխաների ծնողների, երեխաների հետ աշխատող մասնագետների կողմից երեխաների նկատմամբ և այլն:

Հատկանշական է, որ երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ահազանգեր են ստացվել նաև հենց բռնության ենթարկված երեխաներից և նրանց ընկերներից, որոնք հիմնականում վերաբերել են հանրակրթական ուսումնական հաստատությունում, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխայի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնությանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2024 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ.

1. երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող

վիճակի վերաբերյալ այլընտրանքային հրապարակային զեկույց, հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով:

ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրները.

2. երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրները.

3. իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրները.

4. երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրները:

1. Երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ

2024 թվականին ընդունվել է ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի «Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 479-Ն որոշումը: 2024 թվականին ընդունվել է նաև ուսումնական հաստատությունների անձնակազմի համար երեխաների հանդեպ բռնության կանխարգելման և արձագանքման վերաբերյալ ուղեցույցը:

Արձանագրելով կատարված օրենսդրական փոփոխությունների կարևորությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, սակայն, որ դրանք ամբողջապես չեն անդրադառնում բռնության բոլոր ձևերի կանխարգելման, բացահայտման և արձագանքման մեխանիզմներին՝ հաշվի չառնելով բռնության տեսակների առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, ստացված տեղեկությունների համաձայն՝ երեխաները առավել շատ բռնության են ենթարկվում տեղեկատվական հաղորդակցման ցանցերում, որի բացահայտման, արձագանքման և կանխարգելման հստակ կառուցակարգեր օրենսդրությամբ նախատեսված չեն: Ավելին, խնդրահարույց է նաև այն, որ շատ հաճախ ուսումնական հաստատություններն, օրինակ, տեղեկացված չեն ընդունված որոշման և ուղեցույցի մասին:

Բացի թերի օրենսդրական կարգավորումներից, խնդրահարույց է նաև ռազմավարական փաստաթղթի բացակայությունը, որն ուղղված կլինի երեխայի նկատմամբ բռնության բացահայտմանը, կանխարգելմանն ու արձագանքմանը, կներառի ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը:

Այս առումով, որպես լուծում կարող է լինել երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագրի ընդունումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ անդրադառնալով բռնության բոլոր ձևերի կանխարգելման, բացահայտման և արձագանքման մեխանիզմներին՝ հաշվի առնելով բռնության բոլոր տեսակների առանձնահատկությունները:***

✓ ***մշակել ռազմավարություն և միջոցառումների ծրագիր, որն ուղղված կլինի երեխայի նկատմամբ բռնության բացահայտմանը, կանխարգելմանն ու արձագանքմանը, կներառի ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը:***

2. Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ բռնությունների բացահայտման, կանխարգելման և արձագանքման տեսանկյունից խիստ կարևոր է երեխաների հետ առնչվող անձանց, մասնագետների կարողությունների և հմտությունների շարունակական կատարելագործումը:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ երեխաների հետ առնչվող մասնագետների մեծ մասը բռնության նշանները ճանաչելու և արձագանքելու, բռնությունը կանխարգելելու և վաղ փուլում հայտնաբերելու հմտություններ չունեն, նրանց աշխատանքները, հիմնականում, հիմնված են սուբյեկտիվ մոտեցումների վրա: Ներդրված չեն մասնագետների շարունակական վերապատրաստման հստակ ծրագրեր: Երեխաների նկատմամբ բռնության թեմայի վերաբերյալ մասնագետների շրջանում իրականացվող վերապատրաստումները հիմնականում միջազգային և տեղական կազմակերպությունների նախաձեռնությունների և ծրագրերի արդյունք են: Իսկ պետական իրավասու մարմինների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին բոլոր մասնագետները չէ, որ ընդգրկվում են, դրանք, հիմնականում կարճատև են:

Երեխայի նկատմամբ բռնության նշանները ճանաչելու և արձագանքելու, բռնությունը կանխարգելելու և վաղ փուլում հայտնաբերելու հարցում առանցքային դեր ունի կրթական միջավայրը: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագետները կամ չեն ճանաչում բռնությունը, կամ բռնության մասին կասկածելու դեպքում չեն տիրապետում արձագանքելու համար համապատասխան մասնագիտական գիտելիքների և հմտությունների:

Խնդրահարույց է նաև այն, որ ուսուցիչների շրջանում կատարված հարցումները վկայում են, որ վերջիններս բուլինգի արձագանքման հարցում, օրինակ, ունեն կարծրատիպային մոտեցումներ, որոնք, ըստ էության, երեխայակենտրոն չեն և չեն ապահովում կարեկից միջավայր: Արձանագրվել է, որ դպրոցներում երեխաների հետ զրույցները կրում են ֆորմալ խրատական բնույթ, երեխաների միջև կոնֆլիկտների դեպքում հրավիրում են ծնողի՝ բողոքելով երեխայի վարքագծի վերաբերյալ: Հատկանշական է այն փաստը, որ որոշ ուսուցիչների պնդմամբ կան մանկավարժներ, որոնք աշակերտների հետ հաղորդակցվում են վիրավորանքների միջոցով:

Մեկ այլ խնդիր է նաև մասնագետների կողմից երեխաների նկատմամբ բռնություն կիրառելու հարցը՝ ինչպես հանրակրթական ուսումնական, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների ուսումնասիրության, երեխաների հետ ունեցած քննարկումների արդյունքում արձանագրվել է, որ շատ հաճախ հենց ուսուցիչներն են բուլինգի ենթարկում երեխաներին, դրանով իսկ հիմք ստեղծում՝ մյուս երեխաների կողմից երեխային բուլինգի ենթարկելու համար: Երեխաները բարձրաձայնել են նաև ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնություն կիրառելու դեպքերի մասին:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բռնության վերաբերյալ բողոքներ նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներից:

Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագետների հմտությունների կատարելագործման խիստ անհրաժեշտություն է արձանագրվել նաև երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող մի շարք հաստատություններում: Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում առկա է աշխատակիցների կողմից երեխաների հետ վարվեցողության հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ թեև պետության կողմից իրականացվող միջոցներին, 2024 թվականի ընթացքում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման *և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված վերոնշյալ խնդիրները շարունակում են արդիական մնալ:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***երեխաների հետ աշխատող և երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման, բացահայտման և արձագանքման պարտավորություն ունեցող բոլոր մասնագետների համար պարտադիր դասընթացների և պարբերական վերապատրաստումների անցկացում:***
- ✓ ***երեխայի հետ աշխատող մասնագետների համար ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ թեմաների ներառում:***
- ✓ ***երեխաների նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, դրանց կանխարգելման և արձագանքման ուղղությամբ տարվող աշխատանքների հստակ մեթոդաբանության, գործիքակազմերի և ուղեցույցների պարտադիր կիրառության ապահովում:***
- ✓ ***ուսումնական հաստատությունների և պետական մարմինների աշխատողների կողմից երեխայի նկատմամբ որևէ տեսակի բռնություն կիրառելու դեպքերի հաղորդման և արձագանքման համար հստակ կառուցակարգերի ներդնում՝ ապահովելով գաղտնիությունն ու բացառելով երեխայի թիրախավորումը:***

3. Իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրներ

Բռնության հիմնախնդրի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև ստացված գրավոր և բանավոր ահազանգերը վկայում են, որ ծնողները և երեխաները հաճախ չգիտեն երեխայի նկատմամբ բռնության դրսևորումների և դրանց անթույլատրելիության մասին: Ծնողները բռնության մասին ահազանգում են, հիմնականում, անելանելի վիճակում, երբ բռնությունը տեղի է ունենում պարբերաբար և հանգեցնում է բացասական հետևանքների:

Արձանագրվել է, որ շատ հաճախ երեխաները բռնություն համարում են միայն ֆիզիկական բռնությունը, իսկ բուլինգի դրսևորումները, առցանց բռնությունը, սոցիալական հարթակներում իրար թիրախավորելը և այլն, առհասարակ, բռնություն չեն համարում:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ երեխաները, թեև գիտակցել են, որ իրենց նկատմամբ բռնություն է կիրառվում, սակայն չեն բարձրաձայնել այդ մասին՝ վախենալով հասարակության կողմից թիրախավորվելուց:

Ստացված տեղեկությունները վկայում են նաև այն մասին, որ շատ հաճախ երեխայի նկատմամբ բռնությունը հասարակության մեջ ձևավորված կարծրատիպային մտածողության հետևանք է: Բռնությունը հաճախ դիտարկվում է՝ որպես դաստիարակության միջոց, և, երբեմն, նաև խրախուսվող արարք: Շատ հաճախ, հասարակությունում ձևավորված մտածողության հետևանքով հոգեբանական բռնության են ենթարկվում հաշմանդամություն ունեցող երեխաները, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բնակվող երեխաները և այլն:

Այդ նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար իրականացնում է իրազեկման միջոցառումներ, այցեր, կազմակերպում է երեխաների ընդունելություն աշխատակազմում և այլն: Հարկ է փաստել, որ 2024 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ երեխաները իրենք են դիմել Մարդու իրավունքների պաշտպանին՝ բարձրաձայնելով իրենց նկատմամբ կիրառվող բռնության մասին, այդ թվում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կողմից կիրառված հոգեբանական բռնության դեպքերի, խտրական մոտեցումների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում տեղի ունեցած բռնության դեպքերի մասին: Հատկանշական է, որ բռնության մասին բարձրաձայնած երեխաների մեծ մասը մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված իրազեկման հանդիպումներին և արշավներին, ինչը վկայում է նման միջոցառումների խիստ կարևորության մասին:

Հարկ է արձանագրել, որ թեև պետությունն իրականացնում է միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, կրթական հաստատություններում երեխայի իրավունքների վերաբերյալ պաստառներ փակցնելը, իրազեկման հանդիպումներ կազմակերպելը, 2024 թվականի ընթացքում իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված վերը նշված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

Հարկ է փաստել, որ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն 2024 թվականի եզրափակիչ դիտարկումներում ևս նշել է, որ անհրաժեշտ է հասարակության

ներկայացուցիչների, հատկապես երեխաների, ինչպես նաև երեխաների հետ աշխատող և նրանց շահերը ներկայացնող մասնագետների շրջանում իրականացնել երեխաների սեռական բռնության և շահագործման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար անհրաժեշտ միջոցառումներ և արձագանքել երեխաների շահագործման և բռնության առցանց բոլոր դրսևորումներին, այդ թվում՝ ամրապնդելով մասնագիտական կարողությունները և ծրագրային գործիքները՝ նման բռնությունները հայտնաբերելու և հետաքննելու համար:[411]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ներդնել հստակ ծրագրեր հասարակությունում, հաստատություններում առկա բռնությունը խրախուսող արժեհամակարգի և երեխայի լավագույն շահից չբխող կարծրատիպերի փոփոխության ուղղությամբ,

✓ դասընթացների և այլ միջոցառումների շրջանակում երեխաներին, այդ թվում՝ մանկապարտեզներում և դպրոցներում սովորող, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բնակվող երեխաներին, մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ:

4. Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրներ

2024 թվականին Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրված դեպքերը վկայում են այն մասին, որ բռնության պատշաճ արձագանքման և կանխարգելման հարցում կարևոր նշանակություն ունի դրանց մասին տեղեկատվության փոխանցման միջգերատեսչական կառուցակարգերի ձևավորումը և ճշգրիտ, համապարփակ վիճակագրության վարումը:

Մինչդեռ, ՀՀ-ում երեխաների նկատմամբ բռնության վիճակագրություն առանձին չի վարվում, չեն հավաքագրվում վիճակագրական տվյալներ բռնության տեսակների, բռնության ենթարկված երեխաների տարիքի, բռնության ենթարկողի կարգավիճակի և այլ կարևոր տվյալների վերաբերյալ: Տարբեր գերատեսչությունների կողմից հավաքագրված տեղեկատվությունը չունի միասնական մոտեցում և հնարավորություն չի տալիս բացահայտելու երեխայի նկատմամբ բռնության դեպքերի իրական պատկերը:

Երեխայի նկատմամբ բռնության առանձնացված տեղեկատվություն պարունակող վիճակագրություն չվարելու հետևանքով առաջանում են նաև իրավասու մարմինների միջև տեղեկությունների և տվյալների փոխանակման և արդյունավետ համագործակցության ապահովման հետ կապված խնդիրներ, ինչը խիստ կարևոր է երեխայի նկատմամբ բռնությունների բացահայտման, կանխարգելման և արձագանքման արդյունավետ մեխանիզմների ներդրման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել երեխայի նկատմամբ բռնության առանձին վիճակագրության վարումը՝ հավաքագրելով բռնության

---

[411] Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

տեսակների, բռնության ենթարկված երեխաների սեռի, տարիքի, բռնության ենթարկողի կարգավիճակի և այլ կարևոր տվյալների վերաբերյալ առանձնացված տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետությունը, վավերացնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, պարտավորվել է ճանաչել մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա արժանապատվության և նշանակալիության զգացումի զարգացմանը, երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքների և այլոց հիմնարար ազատությունների նկատմամբ, և որի դեպքում հաշվի է առնվում երեխայի տարիքը և հասարակության մեջ նրա վերաինտեգրման ու հետագա դրական դեր խաղալուն նպաստելու ցանկալիությունը:

Ուստի, երեխայի մասնակցությամբ արդարադատության իրականացումը պետք է երաշխավորի երեխայի արժանապատվությունը և բխի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված բոլոր երաշխիքներից:

Մինչդեռ՝ 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ երեխայի պարտադիր կրթության իրավունքի ապահովման տեսանկյունից շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև տարեկան հաղորդումներում[412] և արտահերթ հրապարակային զեկույցում[413]:

Այսպես, օրինակ, թեև ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.03.2023 թվականի 91-Լ հրամանով հաստատվել է «Դասը վարում է քննիչը» խորագրով դասընթացի առարկայական ծրագիրը և դասընթացավարներին ներկայացվող պահանջները, որով նախաձեռնվել է կրթադաստիարակչական, հաղորդակցային և հանրային իրազեկման ծրագիրը, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ շարունակում է արդիական մնալ անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելմանն ուղղված պարտադիր և շարունակական ծրագրերի ներդրման անհրաժեշտությունը:

Խիստ մտահոգիչ է այն, որ չնայած պետության ձեռնարկած միջոցներին, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից հարցի առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը՝ շարունակում են արդիական մնալ տնային կալանք կիրառելու դեպքում երեխայի կրթության իրավունքի իրացման հետ կապված՝ նախկինում արձանագրված խնդիրները: Օրենսդրությամբ նախատեսված չեն տնային կալանքի ներքո գտնվող անչափահասների կրթության իրավունքի իրացման առանձնահատկությունները, նախատեսված չէ, անգամ, տնային ուսուցման ձևով կրթության իրավունքի իրացման հնարավորություն:

2024 թվականին շարունակում են արդիական մնալ իրավասու մարմինների միջև անչափահասների արդարադատության ոլորտում պատշաճ

---

[412] Տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 600-609, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[413] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2025թ., հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

համագործակցության ապահովման հետ կապված բազմիցս բարձրաձայնված խնդիրները: Այսպես, օրինակ, արձանագրվել է պրոբացիայի ծառայության և խնամակալության և հոգաբարձության մարմինների միջև պատշաճ համագործակցության բացակայություն:

Խնդրահարույց է, որ Բառնահուսի սենյակների արդյունավետ կիրառման հարցում նախկինում արձանագրված խնդիրները նույնպես շարունակում են մնալ արդիական: Մասնավորապես, բոլոր մարզերում չէ որ առկա են Բառնահուսի սենյակներ, ք. Երևանում և ք.Կապանում ստեղծված սենյակները ապահովված չեն փորձաքննություններ անցկացնելու հնարավորությամբ, առկա է իրազեկվածության և համապատասխան հմտությունների տիրապետող մասնագետների պակաս, ինչը խիստ մտահոգիչ է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելմանն ուղղված պարտադիր և շարունակական ծրագրերի ներդրումն ու իրականացումը:***
- ✓ ***ձեռնարկել միջոցներ յուրաքանչյուր փուժող և վկա երեխայի հարցաքննության կազմակերպման գործընթացում երեխայակենտրոն մոտեցումների և պայմանների ապահովման ուղղությամբ՝ վերաբերելի չափանիշների հաշվառմամբ ստեղծելով Բառնահուսի սենյակներ նաև այլ մարզերում:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու իրավասու մարմինների միջև անչափահասների արդարադատության ոլորտում պատշաճ համագործակցությունը:***
- ✓ ***մշակել և ներդնել տնային կալանքի ներքո գտնվող երեխաների կրթության իրավունքի ապահովման հստակ կառուցակարգեր:***

ԳԼՈՒԽ 8. ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար պետությունը պարտավոր է ապահովել դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ պետք է ցուցաբերվի նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2024 թվականին շարունակում են արդիական մնալ երեխայի լսված լինելու իրավունքի ապահովման հետ կապված նախկինում արձանագրված համակարգային խնդիրները:

Այսպես, օրինակ, ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են դեռևս բազմաթիվ կարգավորումներ, որոնք երեխայի կարծիքը հաշվի առնելը պայմանավորում են ինչ որ տարիքի հասած լինելու հանգամանքով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի վերլուծությունից, օրինակ, հետևում է, որ միայն տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելն է պարտադիր՝ խղճի ազատության, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու և օրենքով նախատեսված այլ դեպքերի հետ կապված: Օրենսգրքով նախատեսված դեպքերում տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ:

Առկա են նաև գործնականում երեխային լսելու և նրա կարծիքը հաշվի առնելու առնչությամբ համապատասխան գործիքակազմի, մասնագիտական հմտությունների և գիտելիքների կիրառման հետ կապված խնդիրներ:

Այսպես, օրինակ, Պաշտպանի աշխատակազմում ստացվել են տեղեկություններ, որ, երբեմն, խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից չի ապահովվել երեխայի՝ իր հայացքները ազատորեն արտահայտելու հնարավորությունը: Օրինակ, հաճախ հանդիպող խնդիրներից է, երբ խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ երեխաների վերաբերյալ որոշումները կայացվում են առանց երեխաների կարծիքը հաշվի առնելու:

Արձանագրվել են նաև խնդիրներ՝ կապված ուսումնական հաստատություններում երեխաների ձայնը լսելի դարձնելու հետ: Պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում հիմնականում առկա են ձևավորված աշակերտական խորհուրդներ: Խորհուրդների ներկայացուցիչների հետ զրույցները ցույց են տալիս, որ վերջիններս զբաղվում են միայն դպրոցում միջոցառումների կազմակերպչական հարցերով, և հաճախ ստեղծված հարթակը չի ծառայում իրենց տեսակետների և կարիքների ներկայացման նպատակին:

Արձանագրվել է նաև, որ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, նույնպես, շատ հաճախ ներդրված չեն երեխաներին վերաբերելի հարցերում վերջինների մասնակցության, լսված լինելու իրավունքի

ապահովման, ինչպես նաև բողոքարկելու իրավունքի իրացման իրական, հասանելի և մատչելի հնարավորություն ապահովող մեխանիզմներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած պետության կողմից ոլորտի մասնագետների վերապատրաստումների, երեխաների մասնակցությամբ միջոցառումների իրականացմանը, ուսումնական հաստատությունների աշակերտական խորհուրդների գործունեության լավարկմանն ուղղված և մի շարք այլ աշխատանքներին՝ 2024 թվականին շարունակում են արդիական մնալ երեխաներին վերաբերելի հարցերում վերջինների մասնակցության, լսված լինելու իրավունքի ապահովման առնչությամբ բազմիցս բարձրաձայնված խնդիրները:

Երեխայի ձայնը լսելի դարձնելու հարցում Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև իր կողմից իրականացվող մշտադիտարկման աշխատանքներում երեխաների ներգրավվածության ապահովումը, որի վերաբերյալ տեղեկատվությունը առավել մանրամասն ներկայացված է սույն բաժնի նախաբանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ ***ապահովել օրենսդրական այնպիսի փոփոխությունների իրականացում, որը կերաշխավորի երեխային վերաբերելի բոլոր գործընթացներում երեխայի կարծիքը իր տարիքին և հասունության մակարդակին համապատասխան հաշվի առնելու օրենսդրական հնարավորությունը:***
- ✓ ***միջոցներ ներդնել երեխային լսելու և նրա կարծիքը հաշվի առնելու առնչությամբ իրավասու մարմինների համար համապատասխան գործիքակազմերի մշակման, մասնագիտական հմտությունների և գիտելիքների շարունակական կատարելագործման ուղղությամբ:***

ԳԼՈՒԽ 9. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքն ամրագրվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային իրավական փաստաթղթերով, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Մինչդեռ, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են երեխաների անձնական տվյալների պաշտպանության և մշակման հետ կապված խնդիրներ: Պաշտպանի աշխատակազմում ստացված գրավոր և բանավոր բողոքները վերաբերել են լրագրողների պատրաստած տեսանյութերում, սոցիալական ցանցերում երեխաներին, այդ թվում՝ բռնության ենթարկված երեխաներին նույնականացնող տվյալների հրապարակումներին, «ԴատաԼեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգի տվյալների (այսուհետ՝ նաև «ԴատաԼեքս» համակարգ) հրապարակումներին և այլն:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով կարգավորվում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:

Երեխայի անձնական տվյալների պաշտպանությունն ունի իր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր դեպքում երեխայի անձնական տվյալների հետ առնչվելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տվյալները կրողը հենց երեխան է, և ոչ թե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը՝ անկախ նրա տարիքից, ֆիզիկական, մտավոր զարգացվածությունից, սեռից և իրավագիտակցության մակարդակից:

Երեխայի անձնական տվյալները հրապարակելիս, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելիս կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելիս պետք է խստորեն պահպանել անձնական տվյալները երրորդ անձանց հասանելի դարձնելու՝ միջազգային և ներպետական օրենսդրությամբ նախատեսված պահանջները, ինչպես նաև ներկայացնել ճշգրիտ փաստեր՝ խուսափելով չհիմնավորված ընդհանրացումներից և խտրական ձևակերպումներից: Հրապարակումներում երեխայի ռասան, ազգային պատկանելությունը, կրոնը կամ հաշմանդամություն ունենալու փաստը նշելիս պետք է առաջնորդվել երեխային չվնասելու սկզբունքով:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների, գրավոր և բանավոր դիմում-բողոքների, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերի արդյունքում արձանագրվել են.

1. «ԴատաԼեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ,

2. զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ:

1. «ԴատաԼեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

Խնդրահարույց է, որ 2024 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ «ԴատաԼեքս» համակարգում երեխաների անձնական տվյալների հրապարակման հետ կապված խնդիրները:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նախատեսված է 2025 թվականին ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր և վերահսկողություն սահմանել իրագործման նկատմամբ:

Այսպիսի պայմաններում խնդրահարույց է մինչև ծրագրի ներդրումը երեխայի անձնական տվյալների պաշտպանության երաշխավորումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել ապանձնավորման ծրագրի շուտափույթ ներդրումն ու պատշաճ վերահսկողության իրականացումը, իսկ մինչ այդ՝ երեխայի անձնական տվյալների պաշտպանությունն երաշխավորող անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումը:

2. Զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

ԶԼՄ-ները երեխայի իրավունքների խախտումների կամ դրանց հավանականության մասին բարձրաձայնելու հնարավորություն են, սակայն կարևոր է այդ գործընթացում հետևել երեխային չվնասելու սկզբունքին:

Լրագրողների ու մամուլի ներկայացուցիչների գործունեությունն այնպիսին է, որ վերջիններս լավագույնս կարող են երեխայի իրավունքների պաշտպանության հարցը պահել լրատվական օրակարգում՝ ներկայացնելով ինչպես երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռնարկված քայլերը, այնպես էլ առկա մարտահրավերներն ու խնդիրները: Այս թեմայով 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և հրապարակվել է «Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը» ձեռնարկը, որում մանրամասն ներկայացված են այն հիմնական սկզբունքները և կանոնները, որով պետք է առաջնորդվեն լրագրողները երեխաների առնչվող խնդիրը հրապարակելիս[414]:

Անձնական տվյալների պաշտպանության գործակալության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին նախատեսվում է իրականացնել ուսուցումներ ԶԼՄ-ների համար: Նշված համատեքստում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և Վենետիկի հանձնաժողովի կարծիքին է ներկայացվել «Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը նպատակ ունի ներմուծել այնպիսի

[414] Հասանելի է https://www.ombuds.am/images/files/53988c684fec6a6dd0af986eff694827.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կարգավորումներ, որոնք օրենսդրությամբ սահմանված այլ կարգավիճակ և դրանից բխող՝ պետության կողմից երաշխավորված արտոնություններ են տալիս այն լրատվամիջոցներին, որոնք միանում են ինքնակարգավորվող համակարգին:

Պաշտպանը, ողջունելով ոլորտի կարգավորմանն ուղղված պետության գործադրած ջանքերը, այդուհանդերձ, արձանագրում է, որ 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են բազմաթիվ ահազանգեր, իսկ իրականացված մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի պաշտպանությանն ուղղված կամ խնդիրների բարձրաձայնման նպատակով հրապարակված նյութերում չի պահպանվել երեխային չվնասելու սկզբունքը: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ երեխային նկարահանել են այնպիսի տեսահոլովակում, որը հետագայում նրան բուլինգի ենթարկելու իրական նախադրյալներ է ստեղծել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ երեխաների վերաբերյալ կամ մասնակցությամբ նկարահանումների և նյութերի պատրաստման գործընթացում անհատների, քաղաքական գործիչների, լրագրողների, հեռուստաընկերությունների կողմից չի կիրառվում նաև իրազեկ համաձայնություն ստանալու ձևաչափը:

Ողջունելով երեխաների անձնական տվյալների պաշտպանության առնչությամբ հանրային իրազեկման արշավներ իրականացնելու ուղղությամբ պետության ձեռնարկած միջոցները, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից իրականացված ծրագրերը, «Երեխաների նկարները համացանցում. հրապարակել՝ առանց վնասելու» ուղեցույցի հրապարակումը և այլն՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ շարունակում են արդիական մնալ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության պակասի հետ կապված խնդիրները:

2024 թվականին ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերի մեծ մասով անհրաժեշտություն է եղել քաղաքացիներին պարզաբանել Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիազորությունները, դիմելու կարգը:

Անհրաժեշտ է փաստել, որ երեխաների վերաբերյալ կամ մասնակցությամբ հրապարակումների պատրաստումը ավելի մեծ ուշադրություն և զգուշություն է պահանջում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հրապարակումներ իրականացնելիս խստորեն պահպանել երեխային չվնասելու սկզբունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել ՀԼՄ-ների կողմից երեխաների իրավունքների խախտման դեպքերը նվազեցնելու ուղղությամբ,***
- ✓ ***շարունակել իրականացել հանրային իրազեկման արշավներ երեխաների անձնական տվյալների պաշտպանության առնչությամբ՝ ներգրավելով մասնակցության ավելի լայն շրջանակ,***

- ✓ *շարունակել իրականացնել լրագրողների կայուն և շարունակական վերապատրաստումներ երեխաների առնչությամբ հրապարակումների պատրաստման վերաբերյալ,*
- ✓ *գործուն միջոցներ ձեռնարկել հեռուստատեսությամբ երեխայի լավագույն շահից չբխող նյութերի հեռարձակումը բացառելու ուղղությամբ,*
- ✓ *բարձրացնել իրազեկվածությունը Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիազորությունների և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խախտելու համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ*:

ԳԼՈՒԽ 10. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Աղքատության մեջ մեծացող երեխաները հաճախ բախվում են առողջ սննդով, հիգիենայի պարագաներով, բնակելի տարածությամբ ապահովված լինելու, առողջության պահպանման, կրթության, մշակութային արժեքներին հաղորդակցվելու և այլ իրավունքների խախտման: Աղքատությունը նաև երեխաներին թափառաշրջիկության և մուրացկանության մեջ ներգրավելու հիմնական պատճառներից է:

ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 նպատակներ»-ի 1-ին նպատակի համաձայն՝ մինչև 2030 թվականը ամենուրեք և բոլոր մարդկանց համար պետք է իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը, առնվազն կիսով չափ նվազեցնել ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը, ներդնել տվյալ երկրում համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգեր և միջոցառումներ բոլորի համար, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբեր:

Մինչդեռ, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկումները վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում, հատկապես, մարզերում շարունակում է բարձր մնալ աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակը:

Մանկական աղքատության նվազեցման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է դրան ուղղված հստակ ռազմավարության, ինչպես նաև համապատասխան սոցիալական աջակցության ծրագրերի մշակումն ու իրականացումը: Մինչդեռ՝ այդ նպատակի իրականացմանն ուղղված հստակ ռազմավարություն, որը, ի թիվս այլնի՝ կներառի նաև ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը, մշակված չէ:

Բացի այդ, մանկական աղքատության նվազեցման հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև թիրախային սոցիալական աջակցության ծրագրերի իրականացումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ սոցիալական աջակցության, մասնավորապես անապահովության գնահատման հիմքով տրամադրվող նպաստների հասցեականության բարձրացման նպատակով 2024 թվականին մշակվել է անապահովության գնահատման նոր համակարգի հայեցակարգը: 2025 թվականի հունվարի 9-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 27-Ն որոշումը, որով պայմանավորված՝ ներդրվում է անապահովության գնահատման նոր համակարգ, որի շնորհիվ սոցիալական աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական:

Հարկ է փաստել, սակայն, որ Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են դեպքեր, երբ բազմազավակ ընտանիքի միակ կերակրողն աշխատանք չունենալու պատճառով հայտնվել է ծանր սոցիալական վիճակում, իսկ հասանելի նպաստը հնարավորություն չի տվել հոգալ նույնիսկ երեխաների կրթության իրավունքի ապահովման հետ կապված ծախսերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ պետության տրամադրած դրամական աջակցությունն ու ծառայությունները պետք է

լինեն փոխկապակցված երեխաներին տրամադրվող այլ ծառայությունների հետ, որոնք դրական ազդեցություն կունենան երեխաների կյանքի որակի բարելավման վրա:

Ընդ որում, Միավորված ազգերի կազմակերպության երեխայի իրավունքների կոմիտեն, 2024 թվականի ամփոփիչ դիտարկումներում անդրադառնալով պետության սոցիալական պաշտպանության համակարգին, որը ներառում է ներդրումային և ոչ ներդրումային փոխանցումներ և ծառայություններ, ինչպես նաև աշխատաշուկային առնչվող ծրագրեր, նշել է, որ սոցիալական պաշտպանության համակարգն ընդգրկում է երեխաների բնակչության միայն մի փոքր մասը և ընկալվում է որպես աղքատությունը մեղմացնող, սակայն ոչ կանխարգելող մեխանիզմ: Բացի այդ, երեխայի ծննդյան միանվագ և երեխայի խնամքի նպաստները, թեև հանդիսանում են ծայրահեղ աղքատության դեմ պայքարի միջոցներ, սակայն սահմանափակ ազդեցություն ունեն ընտանիքներին աղքատությունից դուրս բերելու գործում:[415]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***յուրաքանչյուր տարվա համար հավաքագրել մանկական աղքատության վերաբերյալ տվյալները և վերլուծություն իրականացնել դրանց իրական պատճառների բացահայտման ուղղությամբ:***
- ✓ ***սոցիալական ծառայությունների ընդլայնման միջոցով ապահովել կարիքների վրա հիմնված ծառայությունների հասանելիությունը, հատկապես մարզերում:***
- ✓ ***անհրաժեշտ է մշակել ռազմավարություն՝ ուղղված մանկական աղքատության մակարդակի նվազեցմանը:***
- ✓ ***ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բոլոր երեխաների բացահայտումն ու թիրախային, իրական կարիքներին համապատասխան սոցիալական ծրագրերի և աջակցության իրականացումը:***

---

[415] Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 11. ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մուրացկանության և թափառաշրջիկության երևույթները էապես խոչընդոտում են երեխայի առողջ զարգացմանը և հանգեցնում մի շարք բացասական հետևանքների, օրինակ, խախտվում են բավարար կենսապայմաններ ունենալու, առողջության պահպանման և կրթության իրավունքները:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում շարունակում են արդիական մնալ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրները:

Մասնավորապես, արձանագրվել են մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների առնչությամբ միասնական քաղաքականության մշակման, բացահայտման և կանխարգելման, հանրային իրազեկման, անհրաժեշտ աջակցության ցուցաբերման հետ կապված խնդիրներ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության 2024 թվականին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության իրավասու ծառայողների կողմից շարունակվում է ամենօրյա կանխարգելիչ աշխատանքների իրականացումը մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների հայտնաբերման, ինչպես նաև նրանց նկատմամբ կատարվող իրավախախտումները նախականխելու հանցավոր գործունեության մեջ ներգրավելու, շահագործման ենթարկելու դեպքերը բացառելու նպատակով: ՀՀ ՆԳՆ տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 1-ին մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվել են Երևանի քաղաքապետարանի սոցիալական աշխատակցի հետ համագործակցությամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ 2024 թվականին շարունակում են արդիական մնալ մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերի բացահայտման հետ կապված խնդիրները: Այսպես, օրինակ, Պաշտպանի աշխատակազմում, նույնպես, ստացվել է տեղեկատվություն երեխայի մուրացկանության վերաբերյալ, որն անմիջապես փոխանցվել է համապատասխան իրավասու մարմնին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ կերպով բացահայտել և դրա արդյունքում նաև կանխարգելել երեխաների՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու դեպքերը:

Նշվածի առնչությամբ կարևոր է դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վաղ հայտնաբերումը համայնքում, որտեղ առաջնային է խնամակալության և հոգաբարձության մարմնի արդյունավետ աշխատանքը և վերջիններիս կողմից ՀՀ ՆԳՆ ոստիկանության և ՀՀ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ կայուն համագործակցությունը, յուրաքանչյուր ընտանիքի և երեխայի պարագայում՝ սոցիալ-վերականգնողական ծառայությունների ապահովումը:

Երեխային հայտնաբերելուց հետո պետք է նախատեսվեն և իրականցվեն հստակ աշխատանքներ ընտանիքի և երեխայի հետ՝ երեխայի՝ կրկին մուրացկանությամբ կամ թափառաշրջիկությամբ զբաղվելու ռիսկը նվազեցնելու և երեխայի բոլոր իրավունքների իրացումը երաշխավորելու համար՝ իրավասու բոլոր մարմինների միջև կայուն և արդյունավետ համագործակցության ձևավորմամբ:

Մուրացկանության և թափառաշրջիկության որոշ դեպքերի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմը արձանագրել է նաև, որ խնդիրն ուղղակիորեն կապված է նաև ծնողների ցածր ծնողավարման հմտությունների և ցածր իրավագիտակցության հետ: Հաճախ են դեպքերը, երբ երեխաները զբաղվում են մուրացկանությամբ ծնողների իմացությամբ և, երբեմն, նաև դրդմամբ: Ուստի, կարևոր է նաև պետության կողմից նշվածի առնչությամբ ծնողների հետ աշխատանքի և հստակ միջոցառումների պլանավորումը:

Պաշտպանը կարևորում է երեխաների մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրների և իրավասու պետական մարմինների լիազորությունների մասին իրազեկման միջոցառումների շարունակական կազմակերպումն ու իրականացումը՝ հաշվի առնելով այն, որ հաճախ հարցի առնչությամբ քաղաքացիները նախընտրում են դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, քանի որ իրազեկված չեն իրավասու մարմինների գործունեության վերաբերյալ:

Առավել խնդրահարույց է այն, որ մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերին ոչ պատշաճ արձագանքումը, երբեմն, կարող է հանգեցնել նաև երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման:

Ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2024 թվականի ընթացքում 9 երեխա ենթարկվել է մարդու թրաֆիքինգի և շահագործման, որից 6-ը՝ արական սեռի, իսկ մյուս 3-ը՝ իգական: Նշված 9 դեպքից 5-ը եղել է երեխաների սեռական շահագործում (3 տղա, 2 աղջիկ), իսկ 4-ը՝ երեխաների աշխատանքային շահագործում (3 տղա, 1 աղջիկ):

Հարկ է փաստել, որ ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն նույնպես իր դիտարկումներում անդրադարձել է խնդրին՝ նշելով, որ խիստ մտահոգիչ է 14 տարեկանից ցածր բազմաթիվ երեխաների՝ գյուղատնտեսության կամ շինարարական աշխատանքներում ներգրավված լինելը, ինչպես նաև մուրացկանությամբ զբաղվող երեխաների թվի աճը.[416]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել հստակ ծրագրեր մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման և պատշաճ ծառայությունների տրամադրման ուղղությամբ:***

---

[416] Տե՛ս նաև, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի 2024թ հոտկեբերի 14-ին Հայաստանի հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցների վերաբերյալ ամփոփիչ դիտարկումները (CRC/C/ARM/CO/5-6) հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

- ✓ *ապահովել մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների ծնողների հետ աշխատանքների և հստակ պլանավորված միջոցառումների շարունակականությունը:*
- ✓ *ապահովել ՀՀ ՆԳՆ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների շարունակական և արդյունավետ համագործակցությունը՝ երաշխավորելու համար մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների բացահայտումը և աջակցության տրամադրումը:*
- ✓ *զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ հեռուստատեսության միջոցով շարունակաբար իրազեկել հասարակությանը մուրացկանությամբ զբաղվող երեխաներ հանդիպելու դեպքում իրավասու պետական մարմինների պարտականությունների, դիմելու հնարավորությունների և գործող կառուցակարգերի մասին:*
- ✓ *միջոցներ ձեռնարկել՝ բացառելու օրենսդրության պահանջների խախտմամբ երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելը:*

ԲԱԺԻՆ 8. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անձնական տվյալների պաշտպանության մարմնի անկախությունը՝ որպես իրավական պաշտպանության ամրապնդման հիմնասյուն

Անձնական տվյալների պաշտպանության խնդիրը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականի ընթացքում շարունակել է մնալ Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Անձնական տվյալների պաշտպանության համակարգում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանության իրականացման խոչընդոտները տարաբնույթ են և այս համատեքստում խիստ մտահոգիչ է անձնական տվյալների պաշտպանության անկախ մարմնի բացակայությունը:

Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող մարմինը ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն է, որն, իր կանոնադրության[417] 1-ին և 2-րդ կետերով սահմանված իրավակարգավորումների համաձայն, գործում է գործադիր իշխանության մաս հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության ներքո և վերջինիս կողմից հաստատված կանոնադրության հիման վրա: Հետևաբար, չի հանդիսանում անձնական տվյալների պաշտպանությամբ զբաղվող անկախ մարմին:

Մինչդեռ, անձնական տվյալների պաշտպանության մարմնի անկախությունը հանդիսանում է կարևորագույն հենասյուն, որն ապահովում է տվյալների անվտանգությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Այս անկախությունը ենթադրում է դրա ապահովում ինչպես իրավական, այնպես էլ ֆինանսական և հասարակական մակարդակներում:

Անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող մարմնի անկախության կարևորությունն արտացոլվում է նաև միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 1981 թվականի կոնվենցիայով նախատեսված կարգավորումները պահանջում են, որպեսզի տվյալների պաշտպանության մարմինները լինեն անկախ՝ շեշտելով այն, որ տվյալների պահպանումը պետք է իրականացվի առանց քաղաքացիների հիմնարար իրավունքները խոչընդոտելու[418]:

«Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգ» Եվրոպայի խորհրդի թիվ 2016/679 որոշմամբ սահմանված իրավակարգավորումներից բխում է, որ անդամ պետություններում անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող մարմինը պետք է կարողանա պետական մարմիններից անկախ գործել[419]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս անդրադարձել է անձնական տվյալների պաշտպանության մարմինների լիակատար անկախություն

---

[417] Տե՛ս, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կանոնադրություն, հասանելի է https://pdpa.am /hy/agency հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[418] Հասանելի է https://rm.coe.int/1680078b37 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[419] Հասանելի է https://gdpr-info.eu/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ունենալու կարևորության հարցին՝ նշելով, որ միայն այդ կերպ հնարավոր է ապահովել քաղաքացիների արժանապատվությունը և արդար դատաքննության իրականացումը[420]:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Ֆրանսիան Եվրոպայում տվյալների պաշտպանության անկախ մարմիններ ստեղծելու հարցում հանդիսանում է առաջատար: Ֆրանսիայի ազգային տվյալների պաշտպանության հանձնաժողովը (Commission Nationale de l'Informatique et des Libertés (CNIL)) մարմինը ունի լիակատար անկախություն կառավարությունից և այլ արտաքին ազդեցություններից: Ազգային տվյալների պաշտպանության հանձնաժողովը հանդիսանում է տվյալների պաշտպանության մարմին, որը որպես հատուկ հանձնաժողով աշխատում է անձնական տվյալների պաշտպանությամբ և վերահսկում տվյալների մշակման գործընթացները Ֆրանսիայում[421]:

Իր անկախության շնորհիվ այն կառավարության կամ այլ պետական մարմինների կողմից չի ենթարկվում որևէ արտաքին ճնշման, իրականացնում է ոլորտում առավելապես արդյունավետ վերահսկողություն, ինչպես նաև հայտնաբերված խախտումների արդյունավետ քննություն, ինչի շնորհիվ էլ ունի հասարակական վստահելիության բարձր ցուցանիշ:

Նույնը կարելի է պնդել նաև Գերմանիայում անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող մարմնի վերաբերյալ: Գերմանիայում անձնական տվյալների պաշտպանությունն իրականացվում է Դաշնային տվյալների պաշտպանության և տեղեկատվության ազատության հանձնակատարի կողմից, որը անկախ մարմին է, և կառավարության կամ որևէ պետական մարմնի ենթակայության ներքո չի գտնվում[422]:

Նիդերլանդներում գործող Autoriteit Persoonsgegevens (AP) մարմինը պատասխանատու է ինչպես ազգային, այնպես էլ եվրոպական չափանիշներին համապատասխան տվյալների պաշտպանության ապահովման համար: Այն գործում է որպես անկախ մարմին և չունի որևէ տնտեսական կամ այլ կախվածություն պետական մարմիններից: AP-ն ոչ միայն վերահսկում է անձնական տվյալների հավաքագրումը և օգտագործումը, այլ նաև մեծ դերակատարում ունի հանրային իրազեկման գործընթացներում: Մարմինը լիազորված է պատժամիջոցներ կիրառելու այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց գործողությունները չեն համապատասխանում անձնական տվյալների պաշտպանության նորմերին[423]:

Հետևաբար, անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող անկախ մարմնի առկայությունը կարող է նպաստել անկողմնակալ որոշումների կայացմանը, անձնական տվյալների նկատմամբ ապօրինի հասանելիության նվազմանը, բարձր

---

[420] Տե՛ս, Լա Քուադրատուր Դը Նետն ընդդեմ Ֆրանսիայի գործով Մեծ պալատի 2020 թվականի հունվարի 15-ի որոշումը, հասանելի է https://curia.europa.eu/juris/document/document.jsf?text=&docid=232084&pageIndex=0&doclang=EN&mode=lst&dir=&occ=first&part=1&cid=11171417 , 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[421] Հասանելի է https://www.cnil.fr/en/media հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[422] Հասանելի https://www.bfdi.bund.de/EN/BfDI/UeberUns/DieBehoerde/diebehoerde_node.html հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[423] Առավել մանրամասն տե՛ս, https://autoriteitpersoonsgegevens.nl/en/dpo-information հղումով, հասանելի է 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ

վերահսկողության իրականացմանն ու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումների կանխմանը և այլն:

Հարկ է նկատել, որ 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են անձնական տվյալների պաշտպանության հետ կապված մի շարք բողոքներ, որոնց մեծամասնությունը վերաբերել է ինչպես պետական մարմինների, այնպես էլ հանրության այլ դերակատարների կողմից անձնական տվյալների ոչ իրավաչափ օգտագործմանն ու տարածմանը:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արված հարցումներին ի պատասխան՝ ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը հայտնել է, որ 2024 թվականի ընթացքում Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն իրականացրել է 50 գործերով անձնական տվյալների մշակման իրավաչափության քննություն:

Մարդու իրավունքների պաշտպանը այս համատեքստում խիստ կարևորում է անձնական տվյալների պաշտպանության հարցերում հասարակության իրազեկվածության ու պետական մարմինների կարողությունների բարձրացումը և անձնական տվյալների պաշտպանության համակարգում պատշաճ վերահսկողության իրականացումը: Այդ կապակցությամբ, կարևորագույն նշանակություն կարող է ունենալ անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող անկախ մարմնի ստեղծումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

- ***օրենսդրական մակարդակում նախանշել պետական մարմիններից անկախ անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող մարմնի ստեղծումը,***
- ***անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող մարմնի գործունեությունը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին,***
- ***անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող մարմնի գործունեության ուղղություններում ներառել նաև անվտանգության բարձր երաշխավորվածություն ունեցող համակարգի ներդնումը, հասարակության շրջանում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը և պետական մարմինների աշխատակիցների պարբերաբար վերապատրաստումները:***

2. Անձնական տվյալների պաշտպանությունը՝ որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմք

Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում է շարունակում մնալ լրագրողների նկատմամբ հաճախ կիրառվող սահմանափակումների հարցը, որոնք կիրառվում են որպես «անձնական տվյալների պաշտպանություն» իրականացնելու պատրվակով՝ խոչընդոտելով լրագրողական հարցումների պատասխանների կամ պահանջվող տեղեկատվության տրամադրումը:

Մարդու իրավունքների պաշտպանը, իր նախորդ տարեկան հաղորդումներում մանրամասն անդրադարձ կատարելով միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված «լրագրողական բացառություն» հասկացությանը, դրա սահմանման չափանիշներին և միջազգային իրավական պահանջներին, ինչպես նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի Եվրոպական միության Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (GDPR) կարգավորումներին չհամապատասխանելու հարցին, ընդգծել է, որ միայն անձնական տվյալների պաշտպանության նկատառումներից ելնելով՝ լրագրողական հարցումներին չպատասխանելը կամ թերի պատասխանելը կարող է նվազեցնել հասարակության տեղեկացվածության մակարդակը: Ընդ որում՝ պետական մարմինների կողմից տրվող պատասխանները դիտարկվել են իրավական տեսանկյունից չհիմնավորված ու միջազգային չափորոշիչներին ոչ համահունչ[424]:

Հարկ է նկատել, որ 2024 թվականի ընթացքում անձնական տվյալների պաշտպանության հիմքով լրագրողական հարցումների մերժման խնդրին անդրադարձ է կատարվել մի շարք լրատվական կայքերում: Արվել են ուսումնասիրություններ[425], ըստ որոնց՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող լրատվամիջոցները բազմիցս փորձել են ստանալ տեղեկություններ պետական մարմիններից, սակայն, անձնական տվյալների պաշտպանության պատրվակով ստացել են մերժումներ: Ուսումնասիրություններում նշվում է մերժումների հաճախակիության ու դրանով լրագրողական գործունեություն իրականացնող անձանց համար առաջացող խոչընդոտների մասին[426]:

Նախորդ տարիների ընթացքում Պաշտպանի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անհրաժեշտություն կա սահմանելու կոնկրետ չափանիշներ, որոնք կկիրառվեն այն դեպքերում, երբ լրագրողը հայցում է անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ, իսկ պետական մարմինը քննարկում է անձնական տվյալներ պարունակող տեղեկատվության տրամադրման հարցը: Ուսումնասիրությունների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը մշակել է անձնական տվյալների պաշտպանությունը, որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմքի առնչությամբ ուղենշային կանոններ, որոնք ներկայացվել են 2021 թվականի տարեկան հաղորդման մեջ[427]:

---

[424]Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 234-239, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[425] Հասանելի է https://www.azatutyun.am/a/32902516.html հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[426] Տե՛ս, նույն տեղում:

[427]Առավել մանրամասն տե՛ս, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության,մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 434-436, հասանելի https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Վերոնշյալի առնչությամբ հարկ է նկատել, որ օրենսդրական մակարդակում 2024 թվականի ընթացքում ևս փոփոխություններ չեն կատարվել՝ ուղղված հանրության տեղեկացվածության ապահովման («հանրային շահի») և անձնական տվյալների պաշտպանության հավասարակշռման խնդրին:

Հարկ է նկատել, որ անձնական տվյալների պաշտպանության համատեքստում խնդրահարույց է նաև լրատվամիջոցների կողմից հրապարակումներում անձնական տվյալների պաշտպանության կանոնների խախտմամբ անձանց անձնական տվյալների ներկայացման հարցը: Այս առնչությամբ ահազանգեր են ստացվում նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:

Ըստ ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության՝ 2024 թվականի ընթացքում չեն եղել լրատվամիջոցների կողմից անձնական տվյալների մշակման առնչությամբ հարուցված վարույթներ:

ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության տեղեկությունների համաձայն՝ լրագրողների համար դասընթացներ նախորդ տարվա ընթացքում չեն կազմակերպվել: Միաժամանակ նշել են, որ 2024 թվականի մայիս ամսից Անձնական տվյալների պաշտպանության գործակալության և Քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքերում բաց ռեժիմով հասանելի է Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ մշակված ինքնաշխատ էլեկտրոնային դասընթացը հանրային, պետական ծառայողների, ինչպես նաև ոլորտով հետաքրքրվող անձանց համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր կողմից նախկինում արտահայտած դիրքորոշումները և կարևորում է օրենսդրության՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցումն ու լրագրողի մասնագիտական գործունեության համատեքստում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրական հատուկ կանոնակարգումների սահմանումը, լրատվական գործունեություն իրականացնողներին տեղեկատվության տրամադրման չափանիշների և լրատվական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից անձնական տվյալների մշակման կանոնների պահպանումը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ պարբերաբար վերապատրաստումների իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

- ***օրենսդրական մակարդակում նախանշել անձնական տվյալների մշակման և տարածման վերաբերյալ լրատվական գործունեությամբ զբաղվող անձանց և լրագրողների մասնագիտական գործունեության համար հատուկ կարգավորումներ՝ միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ,***
- ***սահմանել լրագրողական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված կամ այսպես կոչված՝ «լրագրողական բացառության» շրջանակներում անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող կարգավորումներ,***

✓ հանրային շահի պաշտպանության համատեքստում նախանշել առանց անձի համաձայնության վերջինիս անձնական տվյալների հրապարակման իրավաչափության գնահատման չափանիշներ,

✓ իրականացնել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների ներկայացուցիչների և լրագրողների համար «անձնական տվյալներ» հասկացության, ինչպես նաև լրագրողական գործունեության ոլորտում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ:

3. Անձնական տվյալների պաշտպանությունը «ԴատաԼեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում և հրապարակումներում բազմիցս բարձրացրել է այն հարցը, որ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է դատական իշխանության պաշտոնական կայքում[428] («ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգ) անձնական տվյալների ապանձնավորման հնարավորություն չկա, այլ կերպ ասած՝ գործնականում դրա իրականացումն ապահովող գործուն կառուցակարգեր ներդրված չեն, ինչը խնդրահարույց է անձնական տվյալների պաշտպանության միջազգային իրավական չափանիշների և ներպետական օրենսդրության կարգավորումների տեսանկյունից[429]:

2024 թվականի ընթացքում խնդիրը շարունակել է արդիական մնալ. Լուրջ մտահոգության տեղիք են տվել հատկապես այն դատական գործերը, որոնք պարունակում են երեխաների և սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված քրեական գործերով տուժող ճանաչված, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի առկայության պայմաններում պաշտպանական որոշում կիրառելու վերաբերյալ քաղաքացիական գործերով բռնություն ենթարկվողի, ենթարկողի և վերջիններիս երեխաների անձնական տվյալների հանրայնացումը:

Արդյունքում, մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի վերաբերյալ տվյալները, վերը նշված դեպքերով ու գործերով շարունակում են հասանելի մնալ հրապարակային տիրույթում՝ առանց որևէ ողջամիտ և իրավաչափ հիմնավորման:

Այս առնչությամբ հատկապես կարևոր է հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2024 թվականի հունիսի 18-ին Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռը[430], որով դատարանն արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի ինքնության (այդ թվում՝ նրա լրիվ անունն ու հասցեն) բացահայտումը՝ ԴատաԼեքսում (որը հանրությանը հասանելի

---

[428] Հասանելի է https://datalex.am/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[429] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 239-243, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[430] Տե՛ս, Ա.Պ.-ն ընդդեմ Հայաստանի (A.P.v. Armenia) գործով 2024 թվականի հունիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 58737/14, կետ 153, հասանելի է https://hudoc.echr.coe.int/?i=001-235704 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

առցանց հարթակ է) որոշման հրապարակմամբ, հանգեցրել է միջամտության՝ դիմումատուի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին՝ չհետապնդելով որևէ իրավաչափ նպատակ:

Դատարանը վերահաստատել է, որ այն դատական ակտերը, որոնք ընդգրկում են անձնական տեղեկություններ, որոնք անհատները կարող են իրավաչափորեն ակնկալել, որ չպետք է հրապարակվեն առանց իրենց համաձայնության, խախտում են անձի մասնավոր կյանքի իրավունքը:

Հարկ է նկատել, որ «Ա. Պ.-ն ընդդեմ Հայաստանի» վճռի կատարման նկատմամբ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն վերահսկողությունն իրականացնելու է խստացված ընթացակարգով, ինչն էլ իր հերթին վկայում է, ի թիվս այլնի, կարևոր համակարգային խնդրի առկայության մասին:

Վերոնշյալի հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ ապանձնավորման համակարգի բացակայությունը և դատական ակտերում ապանձնավորման չիրականացումը որպես իրավունքի բուն էությունը խաթարող փաստ է արձանագրել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, և խնդիրը շարունակում է մնալ արդիական:

Ըստ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից ստացված տեղեկությունների՝ Գործակալությունում դատական ակտերում անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

«ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքում Պաշտպանի աշխատակազմն արձանագրել է, որ դատական ակտերում շարունակում են հրապարակվել անձանց անձնական տվյալները, այդ թվում՝ անձնագրային տվյալները, հասցեները, ծննդյան և ամուսնության վկայականների համարները, երեխաների վերաբերյալ տվյալները և այլ՝ անձին նույնականացնելու հնարավորություն տվող, տվյալներ:

Պետք է նշել, որ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2024 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարանում քննվել է պաշտպանական որոշման վերաբերյալ 24 քաղաքացիական գործ, որոնցից որևէ մեկով ապանձնավորում չի իրականացվել: Դատական ակտերում հրապարակվել են անձանց անձնագրային տվյալները, հասցեները, երեխաների անձնական տվյալները և այլ տեղեկություններ:

Մարդու իրավունքների պաշտպանի հարցումներին ի պատասխան՝ Բարձրագույն դատական խորհուրդը հայտնել է, որ 2024 թվականի ընթացքում՝ դատական իշխանության պաշտոնական կայքում *(*www.court.am*)* հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների պաշտպանության և անձնական տվյալների ոչ հրապարակային դարձնելու վերաբերյալ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում ստացվել է թվով 10 դիմում, որոնք բավարարվել են և համապատասխան դատական ակտերում իրականացվել է անձնական տվյալների ապանձնավորում:

Միաժամանակ, ըստ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2024 թվականին շարունակվել են աշխատանքները անձնական տվյալների ապանձնավորման ծրագրի ներդրման և գործարկման ուղղությամբ, մասնավորապես՝ մշակվել է ապանձնավորման ծրագրի տեխնիկական բնութագիրը, որի հիման վրա՝ նախատեսվում է առաջիկայում իրականացնել համապատասխան գործիքակազմի տեղայնացումը:

ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգով որոնման արդյունքում հանդիպում են դեպքեր, երբ հրապարակված դատական ակտում հասանելի են անձնական տվյալներ, ինչպիսիք են՝ կողմի հասցեն, անձնագրի տվյալներ և այլն, ինչի կապակցությամբ խնդրի լուծմանն ուղղված քայլեր են ձեռնարկվել:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի 3.10-րդ գործողությամբ նախատեսված է 2025 թվականին ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր և վերահսկողություն սահմանել իրագործման նկատմամբ՝ ի կատարում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասի:

Ասվածի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրում է, որ չնայած սահմանադրական օրենքով ամրագրված ապանձնավորման պահանջին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորմանն ուղղված գործուն կառուցակարգեր 2024 թվականի ընթացքում ևս չեն ներդրվել, ուստի անհրաժեշտ է հրատապության կարգով ապահովել ծրագրի ներդնումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***սեղմ ժամկետներում ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիրը՝ ապահովելով նաև արդեն իսկ հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորումը,***
- ✓ ***հասարակության շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված դիմումի հիման վրա դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների հասանելիության սահմանափակման հնարավորության մասին, այդ թվում դատական իշխանության պաշտոնական կայքում (www.court.am), դատարանների վարչական շենքերում:***

4. Արհեստական բանականության զարգացմանը զուգընթաց անձնական տվյալների պաշտպանությունը

Արհեստական բանականության համակարգերի մարդու իրավունքների վիճակի, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա ազդեցությունը կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական[431]:

---

[431] Տե՛ս, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի 2023 թվականի «Իրավունքի գերակայություն» զեկույցը, էջ 94, հասանելի է https://ennhri.org/wp-content/uploads/2023/08/ENNHRI-2023-Report-on-the-State-of-the-Rule-of-Law-in-Europe.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս իր նախորդ տարեկան հաղորդման[432] շրջանակներում անդրադարձել է արհեստական բանականության՝ անձնական տվյալների պաշտպանության վրա ազդեցության հարցին՝ ընդգծելով արհեստական բանականության համակարգերի կիրառմամբ պայմանավորված՝ ոլորտի առանձնահատկությունների լիարժեք ուսումնասիրություն, մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատում իրականացնելու, մարդու իրավունքների պաշտպանության հստակ օրենսդրական կարգավորումներ և կառուցակարգեր նախատեսելու, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունը:

Հարկ է նկատել, որ 2024 թվականին շարունակել են արդիական մնալ նախորդ տարեկան հաղորդման մեջ ներկայացված դիտարկումները, որոնք բխել են արհեստական բանականության լայնամասշտաբ կիրառմանը զուգահեռ մարդու իրավունքների միջազգային իրավակարգավորման գործընթացից: Տարեկան հաղորդման շրջանակներում ընդգծվել է

- Օրենսդրական կարգավորման և արհեստական բանականության ազդեցության գնահատման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով զարգացող տեխնոլոգիաներն ու դրանց համատեքստում ներպետական օրենսդրության բացերը:
- Ներպետական մակարդակում մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների ներդրման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» կոնվենցիայի մշակումը,
- Արհեստական բանականության և դրա հնարավոր վտանգների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը[433]:

Ներկայացվածի համատեքստում առաջնահերթ կարևորություն ունի «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» կոնվենցիայի ընդունումը, Հայաստանի հանրապետության կողմից այն վավերացումը և ներպետական օրենսդրության համապատասխանեցումը կոնվենցիոն պահանջներին:

Եվրոպայի խորհրդի «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» կոնվենցիայով[434] կարգավորվում են արհեստական բանականության համակարգերի կիրառման համատեքստում ժողովրդավարության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքներն ու պետությունների կողմից մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցներ ձեռնարկելու պարտականությունը:

---

[432] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 245-250, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[433] Արձանագրված խնդիրներն ու դրանց մանրամասն նկարագրությունը տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 243-251, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[434] Հասանելի է https://rm.coe.int/1680afae3c հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ըստ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» կոնվենցիայի ներպետական համաձայնեցման փուլը ավարտվել է 2024թ.-ի դեկտեմբերի 27-ին և ՀՀ Արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվել է կազմակերպել վերջինիս ստորագրումը: Ներքին օրենսդրական կարգավորումները կհամապատասխանեցվեն Կոնվենցիայի պահանջներին ստորագրման գործընթացի կազմակերպման ժամանակ:

Մարդու իրավունքների պաշտպանը ողջունել է Կոնվենցիայի վավերացումը՝ արձանագրելով, որ այն կխթանի արհեստական բանականության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող ներպետական օրենսդրության զարգացմանը, հատկապես մարդու իրավունքներին համահունչ՝ անձնական տվյալների պաշտպանության և խտրականության արգելքի սկզբունքներին համապատասխանող արհեստական բանականության ներդրմանը:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերին «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի կազմում ստեղծվել է Հայաստանի համակարգչային միջադեպերի արձագանքման ազգային թիմը (AM-CERT), որի առաքելությունն է ուսումնասիրել և համակարգել Հայաստանի ազգային կրիտիկական ենթակառուցվածքների կիբեռանվտանգության միջադեպերի արձագանքը: AM-CERT-ի ամբողջական ներդրումից հետո նախատեսվում է ունենալ կիբեռանվտանգության միջադեպերի կենտրոնական համակարգման կառույց, ապահովել արագ արձագանք կիբեռմիջադեպերին:

Վերոնշյալի շրջանակներում թիմը համակարգել է 9 միջադեպ, որից 6-ը կարգավորել է թիմը, թիմին զեկուցվել է 90+ ահազանգ 34 կառույցներին, որոնցից 12-ը կապված են հավատարմագրերի արտահոսքի (credential leaks) հետ, և որոնց մասին տեղեկացվել են գործընկեր կառույցները, պետական և մասնավոր հատվածի 51 մասնագետ անցել է հմտությունների վրա հիմնված վերապատրաստում, կարողությունների զարգացման նպատակով իրականացվել է երկու Capture-the-Flag կիբեռ վարժանքներ՝ պետական և բանկային սեկտորի համար: Ինչպես նաև Հայաստանում առաջին անգամ Միջազգային հեռահաղորդակցության միության՝ ITU, հետ համատեղ իրականացվել է ազգային կիբեռզորավարժություն՝ 170+ հոգու մասնակցությամբ պետական և մասնավոր սեկտորներից:

Միաժամանակ, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը նշել է, որ իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություններ արհեստական բանականության կիրառման՝ մարդու իրավունքների վրա ազդեցության, մարդու իրավունքների հնարավոր խախտումների և համապատասխան օրենսդրական կարգավորումների վերաբերյալ և այլն:

Վերոնշյալի առնչությամբ Պաշտպանն ընդգծում է, որ ողջունելի վերոնշյալ քայլերի ձեռնարկումը, սակայն մարդու իրավունքների վրա արհեստական բանականության համակարգերի ներդրման ու կիրառման ազդեցության գնահատումը պահանջում է համապարփակ մոտեցում և տարբեր ոլորտների մասնագետների ներգրավում: Գնահատման հիմնական հիմնասյուները ներառում են մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատման շրջանակի որոշում, հանրային խորհրդատվությունների իրականացում, տարբեր ոլորտներ (մարդու իրավունքներ, տեխնոլոգիա և այլն) ներառող մասնագիտական թիմերի ձևավորում և

ներգրավում, միջազգային մեթոդաբանությունների տեղայնացում և վերլուծության կառուցվածքի ձևավորում:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նաև նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների դերակատարումն արհեստական բանականության զարգացման և այն կարգավորող իրավական նորմերի բացակայության պայմաններում շարունակում է էլ ավելի կարևորվել, քանի որ ՄԻՊ հաստատությունները կարող են արհեստական բանականություն ստեղծողների համար ունենալ ուղղորդող և աջակցող, ինչպես նաև վերահսկող նշանակություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել մարդու իրավունքների վրա արհեստական բանականության համակարգերի ներդրման գնահատում՝ ներգրավելով համապատասխան մասնագետների,***
- ✓ ***վերանայել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը՝ նախատեսելով կարգավորումներ ու պատշաճ կառուցակարգեր արհեստական բանականության համակարգերի միջոցով անձնական տվյալների մշակման համար,***
- ✓ ***սահմանել տեղեկատվական համակարգերում անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովման պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները՝ ի կատարումն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի,***
- ✓ ***ապահովել ներպետական օրենսդրության համապատասխանեցումը «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության» ԵԽ շրջանակային կոնվենցիայի պահանջներին,***
- ✓ ***հանրության շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ արհեստական բանականության գործարկման ռիսկերի և վտանգների մասին, հատկապես՝ անձնական տվյալների պաշտպանության համատեքստում,***
- ✓ ***կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների ներկայացուցիչների համար արհեստական բանականության և մարդու իրավունքների փոխազդեցության վերաբերյալ:***

ԲԱԺԻՆ 9. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Կարծիքի արտահայտման ազատությանն ու տեղեկատվության ազատությանն առնչվող հարցերը 2024 թվականի ընթացքում եղել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթություններից:

Այս իրավունքները՝ որպես ժողովրդավարության ամրապնդման համար կարևոր հենասյուներ, լրջագույն նախապայմաններն են հանրային կառավարման ոլորտում թափանցիկության ու մասնակցայնության երաշխավորման համար ու երաշխավորվում են Սահմանադրությամբ ու միջազգային իրավական փաստաթղթերով:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
Հոդված 10[1]. Արտահայտվելու ազատություն 1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (…)

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
Հոդված 2. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքը Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ ներկայացված հարցման հիման վրա, առանց որևէ խտրականության, պետական մարմինների տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի մատչելիության իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում, ելնելով կարծիքի արտահայտման ազատության ու դրա հետ փոխկապակցված տեղեկատվության ազատության իրավունքի երաշխավորման ինչպես համապատասխան օրենսդրական կառուցակարգերի ամրագրման, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում այդ կառուցակարգերի պատշաճ գործարկման անհրաժեշտությունից, հատուկ կարևորել է ատելության խոսքի բացառման ուղղությամբ կատարվող աշխատանքներն ու ծրագրերը, լրատվամիջոցների կողմից կարծիքի ազատ արտահայտման իրավունքի երաշխավորման ու լրագրողների անվտանգության ապահովման հետ կապված հարցերը:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ուշադրություն է դարձրել կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացմանը, կարողությունների զարգացմանն ու այդ համատեքստում հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանն ուղղված աշխատանքներին՝ անդրադառնալով հանրության բոլոր դերակատարների, այդ թվում՝ ակադեմիական

համայնքի, քաղաքական և հանրային գործիչների, մեդիադաշտի ներգրավման անհրաժեշտությանը:

Մարդու իրավունքների պաշտպանը, հատուկ ուշադրություն դարձնելով կրթական միջավայրի առանցքային ու կենտրոնական դերակատարմանը անհանդուրժողականության կանխարգելման կամ հակառակը դրա ձևավորման գործում ու չափազանց մտահոգիչ համարելով կրթական համակարգում տարածված կարծրատիպերն ու խտրական մոտեցումները, այդ տեսանկյունից կրթական բարեփոխումների մեկնարկի միտումով 2024 թվականի ընթացքում նախաձեռնել է քննարկում կրթական հաստատությունների դերն ատելության խոսքի դեմ պայքարում թեմայով՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ոլորտի իրավասու մարմինների ներգրավմամբ: Միջոցառումը նպատակ է հետապնդել քննարկելու բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ ատելության խոսքը կարգավորող չափանիշները, կրթական հաստատությունների դերը ատելության խոսքի դեմ պայքարում և կրթական հաստատություններում ատելության խոսքին հակազդելու ներքին մեխանիզմների ներդրման հետագա քայլերը: Այն կազմակերպվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի շրջանակներում[435]:

Վերոշարադրյալից բացի, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձեռնարկված աշխատանքները, ի թիվս այլնի, ներառում են.

- «Ատելության խոսքի դեմ պայքարի եվրոպական չափանիշներն ու լավագույն փորձը» թեմայով վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել լրագրողների համար Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ԵԽ երևանյան գրասենյակի հետ համատեղ՝ «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում» և «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» տեղական ծրագրերի շրջանակներում[436]:
- Մարդու իրավունքների պաշտպանը վարպետաց դաս է անցկացրել Հայաստանի Եվրոպական համալսարանում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության մարտահրավերներն արդի աշխարհում» թեմայով[437]:
- Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 5-րդ գլոբալ ֆորումին, որում թեմատիկ քննարկումներում անդրադարձ է կատարել ատելության խոսքին ու ատելության հիմքով հանցագործություններին[438]:

---

[435] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3035 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[436] Հասանելի է https:/ /ombuds.am/am/site/ViewNews/3123 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[437] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3161 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[438] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3204 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

• Մարդու իրավունքների պաշտպանը հանդիպել է Ազգային ժողովի «Ամառային դպրոց» ծրագրի մասնակից դպրոցականների հետ՝ քննարկելով կարծիքի արտահայտման ազատության հարցերը[439]:

• Մարդու իրավունքների պաշտպանը «Կին առաջնորդների թիրախավորումն առցանց հարթակներում» թեմայով պանելային քննարկմանը հանդես է եկել հիմնական ելույթով՝ անդրադառնալով սեռով պայմանավորված կանանց թիրախավորումը տարածված է հասարակական բոլոր մակարդակներում[440]:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում խիստ կարևորել է նաև Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացումը, ինչի նպատակով աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցություն են ունեցել HELP ծրագրի ՌԱԵՀ-ի ԹԻՎ 15 ԸՔՀ ատելության խոսքի դեմ պայքարի թեմայով դասընթացին, աշխատակազմի մեկ այլ ներկայացուցիչ մասնակցել է Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված «Անդրադառնալով ատելության խոսքին և ատելության հիմքով կատարված հանցագործությանը. իրավահավասարության մարմինների դերը բռնության և խտրականության շրջափուլին դիմակայելու հարցում» խորագրով երկօրյա դասընթացին[441]:

Ներկայացվածից բացի Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է կարծիքի արտահայտման ազատությանն ու բարձրացրել ատելության խոսքի անթույլատրելիության հարցերն ու դրան առնչվող գործնական խնդիրները միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների[442], դեսպանությունների ներկայացուցիչների[443], օտարերկրյա պատվիրակությունների[444], աշակերտների[445]

---

[439] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3086 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[440] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2924 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[441] Հասանելի https://ombuds.am/am/site/ViewNews/3058 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[442] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2848, https://ombuds.am/am/site/ViewNews/2854, https://ombuds.am/am/site/ViewNews/2863, https://ombuds.am/am/site/ViewNews/2880, https://ombuds.am/am/site/ViewNews/2882, https://ombuds.am/am/site/ViewNews/2907, https://ombuds.am/am/site/ViewNews/2909, https://ombuds.am/am/site/ViewNews/3183, https://ombuds.am/am/site/ViewNews/3214 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[443] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2867, https://ombuds.am/am/site/ViewNews/2889, https://ombuds.am/am/site/ViewNews/2916, https://ombuds.am/am/site/ViewNews/3019, https://ombuds.am/am/site/ViewNews/3127, https://ombuds.am/am/site/ViewNews/3156, https://ombuds.am/am/site/ViewNews/3171 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[444] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2898, https://ombuds.am/am/site/ViewNews/2911, https://ombuds.am/am/site/ViewNews/3057, https://ombuds.am/am/site/ViewNews/3183 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[445] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2906 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հետ հանդիպումների, աշխատանքային այցերի[446], աշխատանքային քննարկումների[447] ու այլ միջոցառումների[448] ընթացքում:

Ընդ որում՝ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների ապահովման նպատակից ելնելով՝ Պաշտպանն անդրադարձել է հանրային տիրույթում տարածված ատելության խոսքի ու տիրող անհանդուրժողականության անթույլատրելիության ու հանրային համերաշխության մթնոլորտի հաստատման անհրաժեշտության, լրագրողների մասնագիտական գործունեության անխոչընդոտ իրականացման երաշխավորման հարցերին՝ արձագանքելով դրանց և՛ համակարգային խնդիրների առնչությամբ հայտարարությունների հրապարակմամբ, և՛ կոնկրետ դեպքերով Պաշտպանի սահմանադրական մանդատի շրջանակներում Պաշտպանին վերապահված գործիքակազմի գործադրմամբ:

Այս առումով հատկանշական է, որ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը (ENNHRI) հայտարարությամբ է հանդես եկել՝ անդրադառնալով Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քաղաքական գործիչների կողմից սպառնալիքներին և հարձակումներին: Ըստ հայտարարության՝ հարձակումները, որոնց բախվում են Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմը, ներառում են բանավոր ձևաչափով ոտնձգություններ, գենդերային և էթնիկական հիմքով ատելության խոսք, սպառնալիքներ և ինստիտուտին քաղաքացիների դիմելը և հաղորդումներ ներկայացնելը խոչընդոտելու փորձեր:

Նշվածից բացի, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI)՝ Եվրոպայում իրավունքի գերակայության վիճակի վերաբերյալ 2024թ. զեկույցում[449] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության առնչությամբ շեշտադրվում է ինչպես իրականացված աշխատանքները կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության, խտրականության դեմ պայքարի և մի շարք այլ ուղղություններով, այնպես էլ ընդգծվում այն մարտահրավերները, որոնց բախվել են Պաշտպանն ու աշխատակազմը վերոնշյալ աշխատանքների իրականացման ընթացքում:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում սահմանադրական իրավունքների երաշխավորման հարցերին անդրադարձել է նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված իր սահմանադրական մանդատի համատեքստում, ինչի շրջանակներում իր նկատառումներն է ներկայացրել մշակված «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքի և հարակից օրենքների լրամշակված նախագծերի փաթեթի վերաբերյալ[450]:

---

[446] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3048, https://ombuds.am/am/site/ViewNews/3051, https://ombuds.am/am/site/ViewNews/3193 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[447] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3063 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[448] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2909 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[449] Հասանելի է https://rule-of-law.ennhri.org/?country%5B0%5D=2&year%5B0%5D=2024& հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[450] Տե՛ս ստորև:

Պաշտպանը գրավոր կարծիք է ներկայացրել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ, որով նախատեսվել է վարչական իրավական կառուցակարգերի շրջանակներում կարգավորել ատելության խոսքի նվազ ծանրության դրսևորումները, որոնք չեն հատում քրեական օրենսդրությամբ սահմանված շեմը:

Ներկայացվածից բացի, դեռևս 2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպան իր գրավոր կարծիքն էր ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառված ««Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ՝ անդրադառնալով, ի թիվս այլնի, լրագրողների հավատարմագրման ու ինքնակարգավորման հարցերին: Կարծիքում արտահայտված բոլոր դիտարկումներն ու նկատառումները 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կողմից ներկայացվել են նաև Վենետիկի հանձնաժողովի պատվիրակությանը, որը կիսել է Մարդու իրավունքների պաշտպանի ողջամիտ մտահոգություններն ու նկատառումները նախագծային կարգավորումների առնչությամբ[451]:

1. Ատելության խոսքը հանրային տիրույթում

2024 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղություններից ու առաջնահերթություններից է եղել անհանդուրժողականության ու ատելության խոսքի դեմ պայքարը: Առանցքային համարելով կարծիքի արտահայտման ազատությունը ժողովրդավարության հաստատման ու ամրապնդման գործում՝ ինչպես նախորդիվ, այնպես էլ 2024 թվականի ընթացքում Պաշտպանը խիստ մտահոգիչ է գնահատել հանրային տիրույթում տարածված ատելության խոսքն ու անհանդուրժողականության մթնոլորտը: Պաշտպանը, նկատի ունենալով ատելության խոսքի դեմ պայքարում գործուն քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը, այս հարցերը մշտապես բարձրացրել է ինչպես իր հրապարակային ելույթներում ու հայտարարություններում, այնպես էլ ոչ հրապարակային հարթակներում ու տարբեր ձևաչափերով:

Պաշտպանը դեռևս 2023 թվականի ընթացքում հատուկ նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում բոլոր իրադարձությունները պետք է զարգանան բացառապես ժողովրդավարական ճանապարհով՝ մարդու իրավունքների նկատմամբ անվերապահ հարգանքի ու համերաշխության պայմաններում՝ հիմքում ունենալով ժողովրդավարության արժեքներն ու իրավունքի գերակայության պահանջները և ընդգծել, որ հանդուրժողականությունն անկյունաքարային նշանակություն ունի ժողովրդավար, բռնությունից և խտրականությունից զերծ հասարակություն կառուցելու հարցում: Պաշտպանը նշել է, որ հանրային բևեռացումը խաթարում է իրավական և ժողովրդավարական պետության հիմքում ընկած արժեքները: Հաստատելով, որ ցանկացած հարցի վերաբերյալ հանրային ազատ բանավեճը ժողովրդավարական

---

[451] Տե՛ս, Վենետիկի հանձնաժողովի կարծիքը՝ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)030-e հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հասարակության կարևոր ձեռքբերումներից է՝ Պաշտպանը հստակ արձանագրել է, որ յուրաքանչյուր քննարկում պետք է ընթանա կարծիքի արտահայտման ազատության իրավունքի թույլատրելի շրջանակներում, այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու համերաշխության մթնոլորտում[452]:

2024 թվականի ընթացքում ևս Պաշտպանի կողմից արձանագրվել են անհանդուրժողականության դրսևորումներ, որոնք հասել են ծայրահեղ աստիճանի: Այս դրսևորումները, Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքների համաձայն, տեղ են գտել ինչպես հանրային քննարկումներում, այնպես էլ հանրային հնչեղություն ունեցող իրադարձությունների ընթացքում, այդ թվում՝ սոցիալական հարթակներում անհանդուրժողականության, ատելության, թշնամանք, խտրականություն հրահրող, բռնություն քարոզող կամ արդարացնող խոսքի և վիրավորանքի լայն տարածմամբ: Մշտադիտարկման արդյունքները հիմք են տվել նաև եզրակացնելու, որ անհրաժեշտություն է առկա հանրային ու քաղաքական գործիչների և զանգվածային լրատվության միջոցների կողմից զսպվածություն դրսևորելու ու նման խոսքը բացառելու տեսանկյունից:

Ելնելով ատելության խոսքի՝ մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգի վրա խիստ բացասական ազդեցությունից՝ Պաշտպանը հանդես է եկել հայտարարություններով՝ քննադատելով ատելության խոսքի տարածումը և կոչ անելով հասարակության բոլոր դերակատարներին բացառել նման խոսքն ու քննարկումները վարել համերաշխության և փոխադարձ հարգանքի մթնոլորտում:

Այս համատեքստում, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային հայտարարություններով է հանդես եկել 2024 թվականի ապրիլ և մայիս ամիսներին ՀՀ տարածքում տեղի ունեցած հավաքների ընթացքում՝ հատուկ շեշտելով հանդուրժողականության մթնոլորտ ձևավորելուն ու ատելության խոսքը բացառելուն ուղղված վարքագիծ դրսևորելու անհրաժեշտությունը: Պաշտպանն իր հայտարարություններով, անդրադառնալով անհանդուրժողականության ու ատելության խոսքի ակնհայտ ու խնդրահարույց դեպքերին, բազմիցս ընդգծել է, որ հավաքի խաղաղ ընթացքի երաշխավորումը ենթադրում է նաև հավաքի կազմակերպիչների և մասնակիցների կողմից վերջիններիս կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանում, այդ թվում՝ ուղղված հավաքի ընթացքում բռնությունից, բռնության կոչերից, ատելության խոսքի դրսևորումներից զերծ մնալուն[453]:

Բացի վերը նշված իրադարձությունների համատեքստում արված հայտարարություններից, Պաշտպանը 2024 թվականի ընթացքում հրապարակային հայտարարությամբ է հանդես եկել նաև էթնիկ կամ ազգային պատկանելության

---

[452] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 224-234, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[453] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2989, https://ombuds.am/am/site/ViewNews/2957, https://ombuds.am/am/site/ViewNews/2950 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հիմքով ատելության խոսքի վտանգավոր դրսևորումների վերաբերյալ[454]: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից լրատվամիջոցների և սոցիալական հարթակների մշտադիտարկումների արդյունքները ցույց են տվել էթնիկ կամ ազգային պատկանելության հիմքով ատելության խոսքի մեծ տարածվածություն: Ընդ որում՝ մի շարք դեպքերում կոնկրետ էթնիկ կամ ազգային պատկանելությունն օգտագործվել է որպես վիրավորանք:

Մարդու իրավունքների պաշտպանը հստակ ընդգծել է, որ նման խոսքի կիրառումն անթույլատրելի է և որ պետությունը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի էթնիկ կամ ազգային պատկանելության հիմքով ատելության խոսքի բացառման ուղղությամբ: Պաշտպանը հատուկ արձանագրել է, որ հանրային ու քաղաքական գործիչներն իրենց հերթին պետք է բացառեն նման խոսքի կիրառումը, իսկ զանգվածային լրատվության միջոցները՝ վերջինիս տարածումը:

Պաշտպանն ընդգծել է նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ անհրաժեշտ և բավարար քայլեր ձեռնարկելու կարևորությունը՝ հատուկ շեշտելով, որ ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրական որևէ դրսևորում պետք է բացառվի Հայաստանի Հանրապետությունում:

Իր հայտարարությամբ Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի՝ Հայաստանում տարածված էթնիկ և ազգային պատկանելության հիմքով ատելության խոսքի առնչությամբ արձանագրումներին առ այն, որ դրա բացառման ուղղությամբ կոնկրետ քայլեր են պետք ձեռնարկել, այդ թվում՝ կրթության միջոցով հասարակությունում բազմազանության նկատմամբ հարգանքի արմատավորման, ինչպես նաև ցանկացած անձի կամ անձանց խմբի նկատմամբ էթնիկ կամ ազգային ծագման հիմքով խտրականության կանխարգելման ուղղությամբ քայլերի իրականացման միջոցով:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) 6-րդ զեկույցը Հայաստանի վերաբերյալ[455]
Կարևոր է, որպեսզի ընթացող կրթական բարեփոխումների շրջանակներում ուսուցիչների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ տարվեն և այդ համատեքստում պարտադիր ընդգրկեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են մարդու իրավունքները, հասարակության մեջ բազմազանության նկատմամբ հարգանքը և ցանկացած անձի կամ անձանց խմբի նկատմամբ խտրականության կանխարգելումը՝ ելնելով, ի թիվս այլնի, նրանց էթնիկ կամ ազգային ծագումից: Այս հարցերը պետք է արտացոլվեն դպրոցական ծրագրերում համապատասխան նյութերի մշակման և գործողությունների իրականացման միջոցով:

[454] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2959 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[455] Տե՛ս, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարական ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ, հասանելի է https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվում են գործողություններ, որոնք ներառում են օրենսդրական փոփոխություններ, իրազեկման աշխատանքներ հասարակության լայն շերտերի համար, ինչպես նաև խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության ուղեցույցների մշակում ու հաստատում, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում ատելության խոսքի և խոսքի ազատության սահմանազատում՝ համապատասխան չափորոշիչների սահմանում[456]:

Ատելության խոսքի վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացման նպատակով կատարված աշխատանքների վերաբերյալ պետական մարմիններին ուղղված հարցումների արդյունքները որոշակի դրական շարժ են ցույց տալիս. Ստացված տեղեկությունները վկայում են որոշ դեպքերում իրազեկման աշխատանքների, որոշ դեպքերում էլ դրանց նախապատրաստական աշխատանքների կատարման մասին:

Ըստ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում տարված աշխատանքներն ընդգրկում են Երևանի պետական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի, Ռուս-հայկական համալսարանի, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի, Գավառի պետական համալսարանի, Հյուսիսային համալսարանի, Ավանդական բժշկության համալսարանի կողմից կատարված աշխատանքները:

- 2024 թվականի ընթացքում Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում ուսանողներին են ներկայացվել ատելության խոսքի կանխարգելման և դրա դեմ պայքարի եղանակները:
- Ատելության խոսքի վերաբերյալ իրազեկման նպատակով կազմակերպվել են դասախոսություններ, սեմինար քննարկումներ, ուսանողական կլոր սեղան բանավեճեր Հյուսիսային համալսարանում:
- Պետական կառավարման համալսարանում 2024 թվականի ընթացքում շարունակական է եղել Իրավագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների, հայցորդների, մագիստրանտների մասնակցությունը «Իրավաբան մասնագետների համար մարդու իրավունքների ուսուցման (HELP) ծրագիր»-ին՝ ուղղված մարդու իրավունքների վերաբերյալ մասնագիտական գիտելիքների խորացմանը, որում ներառված թեմաների շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև ատելության խոսքին, դրա ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական պաշտպանության կառուցակարգերին: «Իրավագիտություն» կրթական ծրագրով դասավանդվող «Մարդու իրավունքների հիմնահարցեր» դասընթացի ծրագրում նույնպես ներառված է նշված թեման՝ տեղեկատվության ազատության և կարծիքի արտահայտման իրավունքների բովանդակության ներկայացման շրջանակներում, այդ թվում՝ դրա իրացման բացասական հետևանքները, և դրան առնչվող

[456] Տե՛ս, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1978-Լ որոշման Հավելված N 3-ի 4.5-րդ, 4.6-րդ, 4.7-րդ, 8.1-րդ կետերով նախատեսված գործողությունները:

հիմնախնդիրները, ինչպես նաև ներպետական, այնպես էլ միջազգային իրավական պաշտպանության կառուցակարգերը:

➢ Գավառի պետական համալսարանում Իրավագիտության ամբիոնի կողմից անցկացվել է մարդու իրավունքներին նվիրված վերապատրաստում՝ ներառելով ատելության խոսքի կանխման ուղիները թեման:

Հարկ է ընդգծել, որ 2024 թվականի ընթացքում, կարևորելով կրթական հաստատությունների դերն ու ներգրավվածության անհրաժեշտությունը ատելության խոսքի դեմ պայքարում, Պաշտպանը նախաձեռնել է քննարկում՝ կրթական հաստատությունների դերն ատելության խոսքի դեմ պայքարում թեմայով՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ ատելության խոսքը կարգավորող չափանիշները, կրթական հաստատությունների դերը ատելության խոսքի դեմ պայքարում և կրթական հաստատություններում ատելության խոսքին հակազդելու ներքին մեխանիզմների ներդրման հետագա քայլերը քննարկելու նպատակով[457]:

Ըստ Ներքին գործերի նախարարության՝ ոստիկանությունը իր լրատվական ծառայության, ինչպես նաև սոցիալական ցանցերի պաշտոնական էջերի միջոցով պարբերաբար իրականացնում է ատելության խոսքի վերաբերյալ հանրային իրազեկման գործողություններ՝ ոստիկանության բարեփոխումների և նոր ռազմավարության մշակման համատեքստում առանձնահատուկ կարևորելով ատելության խոսքի դրսևորումների և տարածման դեմ պայքարը:

Միևնույն ժամանակ, կատարվել են նաև որոշակի միջոցառումներ՝ ուղղված իրավասու մարմինների կարողությունների զարգացմանը: Ըստ իրավասու մարմիններից ստացված տեղեկությունների՝

➢ «Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը և նախաձեռնված քրեական վարույթների արդյունավետ քննությունը» թեմայով վերապատրաստում է անցել 24 դատախազ:

➢ «Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու հանցակազմերի քննության առանձնահատկությունները: Ատելության խոսքի միջազգային սահմանումների և խտրական ցուցանիշների հասկացության ուսումնասիրությունը» թեմայով վերապատրաստվել է 126 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:

➢ «Հայկական համայնքային և քրեական ոստիկանության ծառայողների համար կարողությունների զարգացում», «Խտրականության, ատելության խոսքի և ատելության շարժառիթով հանցագործությունների քննության առանձնահատկությունները» և «Ձերբակալված անձանց պահման վայրերում խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերի կանխարգելում» թեմաներով անցկացված վերապատրաստումներին մասնակցել են ոստիկանության թվով 29 ծառայող:

---

[457] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3035 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ներկայացվածից բացի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի 4.5-րդ կետի համաձայն՝ 2024 թվականի ընթացքում մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով նախատեսվել է վարչական իրավական կառուցակարգերի շրջանակներում կարգավորել ատելության խոսքի նվազ ծանրության դրսևորումները, որոնք չեն հատում քրեական օրենսդրությամբ սահմանված շեմը :

Նախագծի առնչությամբ իր գրավոր կարծիքն է ներկայացրել Մարդու իրավունքների պաշտպանը: Պաշտպանը ողջունել է անհանդուրժողականության ու խտրականության առավել մեղմ դրսևորումների համար վարչական պատասխանատվության միջոց սահմանելուն ուղղված ջանքերը՝ հաշվի առնելով, որ դրանք բխում են պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից, այն է՝ խտրականության, անհանդուրժողականության ու ատելության խոսքի դեմ պայքարում ունենալ արդյունավետ գործիքակազմ ոչ միայն քրեական արդարադատության ոլորտում, այլև վարչական ու քաղաքացիական օրենսդրությամբ: Միևնույն ժամանակ, Պաշտպանը ներկայացրել է նկատառումներ, նախատեսված կարգավորումների որոշակիության բացակայության ու դրանով պայմանավորված՝ իրավակիրառ պրակտիկայում տարակերպ մեկնաբանությունների հավանականության տեսանկյունից:

Հարկ է նկատել, որ ատելության խոսքի անթույլատրելիության ու դրա դեմ պայքարելու անհրաժեշտության վերաբերյալ այս և այլ հարցեր բարձրացվում են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում ու միջազգային մարմինների դիտարկումներում, որոնց Մարդու իրավունքների պաշտպանը մանրամասն անդրադարձել է դեռևս իր նախորդ տարեկան հաղորդման մեջ: Այս համատեքստում, Պաշտպանն անդրադարձել է մի շարք միջազգային իրավական դրույթների ու չափանիշների, որոնք ամրագրում են ատելության ու խտրականության դրսևորումների արգելքը[458], ատելության խոսքի դեմ պայքարի ոլորտում համապատասխան օրենսդրության նախատեսումը[459], առցանց հարթակում ատելության խոսքի դեմ պայքարելու[460] ու այդ պայքարում բոլոր դերակատարների, այդ թվում՝ պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների ներգրավման անհրաժեշտությունը, նույն համատեքստում հստակ պարտականությունների ամրագրումն ու արդյունավետ համագործակցությունը, ընթացակարգային

---

[458] Տե՛ս Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդված, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի Ռասիստական ատելության խոսքի պայքարի վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարական, հասանելի է https://www.refworld.org /legal/general/cerd/2013/en/101142 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[459] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 20-րդ հոդված

[460] Հասանելի է https://www.coe.int/en/web/yerevan/news/-/asset_publisher/UlNPvpZUDPS7/content/armenia-ecri-notes-progress-but-says-all-discrimination-grounds-must-be-covered-by-law-hate-speech-tackled-effectively հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կառուցակարգերի ապահովումն ու կարողությունների զարգացումը[461], լրագրողների՝ ապատեղեկատվություն, խտրականություն, ատելության խոսք ու քարոզչություն տարածելուց զերծ մնալու պահանջը[462]:

Այս համատեքստում, պետություններին ուղղվող պահանջները, ի թիվս այլնի, հանգում են հետևյալին.

[461] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարական ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ, հասանելի է https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[462] Մամուլի ազատության ու ժողովրդավարության վերաբերյալ համատեղ հռչակագիր:

ՌԱՍԻԶՄԻ ԵՎ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՌԱԵՀ) ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՎ 15 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ[463]
Անհրաժեշտ է՝ • նախաձեռնել եռանդուն ջանքեր ոչ միայն բազմակարծության նկատմամբ հարգանքի կարևորության և ատելության խոսքի հետ կապված վտանգների մասին հանրության իրազեկությունը բարձրացնելու, այլև դրա հիմքերի սխալականությունը և դրա անընդունելիությունը մատնանշելու համար՝ ատելության խոսքը սահմանափակելու և կանխելու նպատակով, • սատարել հանրային և մասնավոր հաստատությունների (ներառյալ՝ ընտրված մարմինների, քաղաքական կուսակցությունների, կրթական հաստատությունների, մշակութային և սպորտային կազմակերպությունների) ինքնակարգավորմանը՝ որպես ատելության խոսքի օգտագործման դեմ պայքարի միջոց, • կիրառել կարգավորող լիազորություններ զանգվածային լրատվամիջոցների (ներառյալ՝ համացանցային ծառայություն մատուցողների, առցանց միջնորդների և սոցիալական մեդիայի) նկատմամբ՝ խթանելու ատելության խոսքի դեմ պայքարի գործողությունները և մերժելու դրա ընդունելի լինելը՝ միաժամանակ չխախտելով արտահայտվելու և սեփական կարծիք ունենալու ազատության իրավունքը, հստակեցնել քաղաքացիական և վարչական պատասխանատվության շրջանակը և կիրառելիությունը ատելության խոսքի օգտագործման դեպքում, որը նպատակաուղղված է կամ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ ուղղված է բռնություն, ահաբեկում, թշնամանք կամ խտրականություն հրահրելուն ատելության խոսքով թիրախավորված անձանց նկատմամբ՝ միաժամանակ հարգելով արտահայտվելու և կարծիքի ազատության իրավունքը:

Ներկայացվածից բացի, 2024 թվականի մայիսի 7-ին ԵԽ Նախարարների կոմիտեն, զարգացնելով իր նախկինում արտահայտած մոտեցումները, ընդունել է Ատելության հանցագործության դեմ պայքարի վերաբերյալ հանձնարարականը՝ կոչ անելով անդամ երկրներին իրականացնել ատելության հանցագործությունների դեմ համապարփակ միջոցներ: Այս հանձնարարականն ընդգծում է պետական պաշտոնյաների պատասխանատվությունը՝ դատապարտելու ատելության

[463] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարական ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ, հասանելի է https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանցագործությունները և խրախուսում է քաղաքական գործիչներին խթանել ներառականությունը և հակազդել ատելության խոսքին[464]*:*

Պաշտպանը, ողջունելով պետության կողմից որոշակի քայլերի իրականացումը, արձանագրում է, որ 2024 թվականի ընթացքում շարունակել է մտահոգիչ լինել հանրային տիրույթում անհանդուրժողականության, ատելության խոսքի տարածվածության աստիճանը, ինչը վկայում է ատելության խոսքի դեմ պայքարում գործուն և միասնական ջանքեր գործադրելու անհրաժեշտության մասին:

Պաշտպանը, նախորդիվ ներկայացրած միջազգային իրավական չափանիշների վրա հենվելով, վերահաստատում է, որ պետությունը պետք է ներդնի ատելության խոսքի (ներառյալ՝ առցանց տիրույթում տարածված) դեմ պայքարում արդյունավետ կառուցակարգեր՝ ընդունելով համապատասխան օրենսդրական կարգավորումներ ու ապահովելով այդ կարգավորումների պատշաճ իրացումը, բարձրացնելով հանրային իրազեկվածությունն ու ոլորտի դերակատարների՝ հանրային գործիչների, պաշտոնատար անձանց, լրագրողների և այլոց կարողությունները նշված ոլորտում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

- ✓ ***հանրային խոսույթում բացառել ատելության խոսքի, բռնության կոչերի, վիրավորանքի, անհանդուրժողականության, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դրսևորում, ինչպես նաև հակազդել նման խոսքին,***
- ✓ ***իրականացնել լրագրողների շարունակական վերապատրաստումներ՝ խոսքի ազատության, ատելության խոսքի և համանման թեմաների առնչությամբ՝ ուղղված, ի թիվս այլնի՝ վերջիններիս կողմից ատելության խոսքի կիրառման կամ նման խոսք պարունակող նյութերի տարածման կանխարգելմանն ու նման խոսք պարունակող նյութերի հակազդմանը,***
- ✓ ***իրականացնել հանրային ծառայողների շարունակական վերապատրաստումներ՝ խոսքի ազատության, ատելության խոսքի և համանման թեմաների առնչությամբ՝ ուղղված, ի թիվս այլնի՝ վերջիններիս կողմից ատելության խոսքի կիրառման կամ նման խոսք պարունակող նյութերի տարածման կանխարգելմանն ու ատելության խոսքին հակազդմանը,***
- ✓ ***իրականացնել ատելության խոսքի վերաբերյալ հանրության իրազեկման լայնածավալ միջոցառումներ՝ ներկայացնելով ինչպես դրա բացասական հետևանքները, այնպես էլ օրենքով սահմանված պաշտպանության կառուցակարգերը:***

2. Լրագրողի մասնագիտական գործունեության անխոչընդոտ իրականացումը՝ որպես կարծիքի արտահայտման ազատության երաշխիք

Մարդու իրավունքների պաշտպանն ինչպես իր տարեկան հաղորդումներում, այնպես էլ հրապարակային և ոչ հրապարակային ձևաչափերով մշտապես ընդգծել է զանգվածային լրատվության միջոցների անխոչընդոտ գործունեության ապահովման կարևորությունը: Այս համատեքստում Պաշտպանը հատուկ կարևորում է

[464] Տե՛ս Ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի ԵԽ Նախարարների կոմիտեի CM/Rec(2024)4 հանձնարարականը:

զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հետ ակտիվ համագործակցությունը՝ ուղղված կարծիքի արտահայտման ազատության երաշխավորմանը:

Պաշտպանի գնահատմամբ՝ լրագրողների և լրատվամիջոցների մասնագիտական պաշտպանված և արդյունավետ աշխատանքն ունի մեծ հանրային կարևորություն,որն առաջին հերթին բխում է Սահմանադրությամբ ամրագրված տեղեկատվություն ստանալու իրավունքից ու կարծիքի արտահայտման ազատությունից:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարական[465]
Հասարակությունն ունի հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունք, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու: *Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մաս:* Իսկ ինչ վերաբերում է վերջիններիս գործունեության սահմանափակմանը, ապա լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ՝ տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:

Լրագրողների գործունեության անխոչընդոտ իրականացման երաշխիքների ու Սահմանադրությամբ ամրագրված հիմնարար իրավունքների ու ազատությունների երաշխավորման համատեքստում լրագրողների մասնագիտական գործունեության դերի վերաբերյալ միջազգային իրավական չափանիշներն ու կարգավորումները և դրանց հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումները Պաշտպանի կողմից ներկայացվել են դեռևս «Բարձրագույն դատական խորհրդի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների առնչությամբ» 2023 թվականի ուսումնասիրությա[466] և Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում[467]:

Ինչպես տարեկան հաղորդման համատեքստում, այնպես էլ հրապարակային ու ոչ հրապարակային ձևաչափերով, Պաշտպանը շարունակաբար ընդգծել է

[465] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարականը:

[466] Մարդու իրավունքների պաշտպանի «Բարձրագույն դատական խորհրդի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների առնչությամբ» 2023 թվականի ուսումնասիրությունը հասանելի է https://ombuds.am/images/files/44dfefa219a78d7f178fc89b1637ff19.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

[467] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 222-224, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

լրագրողների մասնագիտական իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու ցանկացած դրսևորման անթույլատրելիությունը և խիստ վտանգավոր լինելն ու կարևորել պետության կողմից լրատվական գործունեության համար լիովին բարենպաստ միջավայրի առկայությունը և լրագրողների անվտանգությունը երաշխավորող կառուցակարգերի ներդնումը:

Հարկ է նկատել, որ 2024 թվականի ընթացքում զանգվածային լրատվության միջոցների ու լրագրողների մասնագիտական անխոչընդոտ գործունեության երաշխավորման հարցերը ևս գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

Այս համատեքստում 2024 թվականի ընթացքում Պաշտպանը արձանագրել է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնագիտական գործունեությանն առերևույթ խոչընդոտելու, նրանց՝ մասնագիտական գործունեությամբ պայմանավորված, թիրախավորման, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների նկատմամբ առերևույթ բռնության դեպքեր և այլ դրսևորումներ:

Նշված խնդիրները վեր են հանվել ինչպես ՄԻՊ աշխատակազմի՝ լրատվամիջոցների և սոցիալական հարթակների մշտադիտարկումների, այնպես էլ ՄԻՊ աշխատակազմում ստացված ահազանգերի վերլուծության արդյունքների հիման վրա: Հարկ է նկատել, որ ՄԻՊ աշխատակազմի կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում վեր հանված դեպքերի կապակցությամբ՝ Պաշտպանի հանձնարարությամբ անմիջապես կապ է հաստատվել ԶԼՄ ներկայացուցիչների հետ՝ միջադեպերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով: Այս համատեքստում, պարզաբանումներ են պահանջվել իրավասու մարմիններից յուրաքանչյուր խնդրի առնչությամբ՝ և՛ ահազանգերով ու դիմում-բողոքներով Պաշտպանին ներկայացված, և՛ աշխատակազմի մշտադիտարկման արդյունքներով վեր հանված: *Ընդ որում՝ նշված բոլոր դեպքերով Մարդու իրավունքների պաշտպանն իրավասու մարմիններից պահանջել է իրականացնել գործերի պատշաճ քննություն:*

Այսպես, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնագիտական օրինական գործունեությանն առերևույթ խոչընդոտելու ու վերջինիս նկատմամբ, իրենց նկատմամբ մասնագիտական գործունեությամբ պայմանավորված, բռնություն կիրառելու վերաբերյալ տեղեկություններ են ստացվել ինչպես ԶԼՄ-ների և սոցիալական հարթակների մշտադիտարկման արդյունքներով, այնպես էլ Պաշտպանի աշխատակազմին ներկայացրած ահազանգերով: Ձեռքբերված տեղեկությունների կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում կատարվել են ուսումնասիրություններ, որոնք ամփոփելուց հետո ստացված տեղեկությունների ու բարձրացված խնդիրների կապակցությամբ ձեռնարկված քայլերի առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով պարզաբանումներ են պահանջվել իրավասու մարմիններից: Ըստ Գլխավոր դատախազությունից ստացված պարզաբանումների՝ 2024 թվականի ընթացքում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերի առթիվ նախաձեռնվել է 7 քրեական վարույթ, որից 5-ի նախաքննությունը շարունակվել է, 1 քրեական վարույթ կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, իսկ 1 քրեական վարույթ հաստատված մեղադրական եզրակացությամբ հանձնվել է դատարան: Ընդ որում՝ Մարդու

իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրավասու մարմիններին հասցեագրած գրություններով ներկայացված դեպքերի առնչությամբ ստացված պատասխանները փաստում են, որ լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերի առթիվ նախաձեռնված վարույթներից մի քանիսով արձանագրվել են նաև դեպքեր, երբ լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելն առերևույթ զուգորդվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելով կամ լիազորություններն անցնելով: Այսպես՝

- Ըստ 2024 թվականի ապրիլի 27-ի ՋԼՄ տեղեկությունների՝ Ոստիկանության ծառայողները խոչընդոտել են Oragir.News կայքի լրագրողի և օպերատորի աշխատանքը, ապա հրելով՝ գետնին են գցել լրագրող Անի Ներկարարյանին, ով նշվածի արդյունքում վնասվածք է ստացել ոտքի շրջանում: Տեղեկությունը հրապարակվելուց հետո Պաշտպանի ներկայացուցիչն անմիջապես հեռախոսակապ է հաստատել լրագրող Անի Ներկարարյանի հետ, ով հաստատել է ՋԼՄ-ով տարածված տեղեկությունները: Նույն օրը նաև տեսանյութ է հրապարակվել, որում Ոստիկանության դիմակավորված ծառայողները Newday.am կայքի օպերատոր Ջանիբեկ Խաչատրյանին պառկեցնում են գետնին և ձեռնաշղթաներ կիրառում նրա նկատմամբ: Նշվածի հաշվառմամբ՝ համապատասխան գրություններ են հասցեագրվել ՀՀ ներքին գործերի նախարարություն և Գլխավոր դատախազություն: Ըստ Ներքին գործերի նախարարության պարզաբանումների՝ նախարարությունում սկսվել է ծառայողական ուսումնասիրություն, իսկ ըստ Գլխավոր դատախազության՝ Պաշտպանի աշխատակազմից ստացված գրությամբ ներկայացված դեպքի առթիվ 2024 թվականի մայիսի 4-ին ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասով[468]՝ 2 դրվագ, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով[469] նախաձեռնվել է քրեական վարույթ, որը գտնվել է նախաքննության փուլում:
- 2024 թվականի մայիսի 9-ին xosnak.am (Խոսնակ լրատվական) լրատվական կայքի լրագրող Նանե Իսրայելյանը Պաշտպանի աշխատակազմ տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ նույն օրը հավաքի ընթացքում, որում իր հետ ներկա են գտնվել նաև լրագրող Անի Նահապետյանը և xosnak.am (Խոսնակ լրատվական) լրատվական կայքի օպերատորը, խոչընդոտել են իրենց՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեության իրականացմանը: Մինչև հարցազրույց սկսելը երթի մասնակիցները վնասել են իրենց ավտոմեքենան, իսկ արդեն հարցազրույցի ընթացքում պարբերաբար քաշքշել են իրենց և ցուցաբերել վատ վերաբերմունք, կոտրել են օպերատորի տեսախցիկը և հանել դրանում առկա հիշողության սարքը: Նշվածի հաշվառմամբ՝ համապատասխան գրություն է հասցեագրվել Գլխավոր Դատախազություն: Ըստ ստացված պարզաբանման՝ նշված դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քրեական

---

[468] Լրագրողին տեղեկություն տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը կամ նրա մասնագիտական օրինական գործունեությունն այլ կերպ խոչընդոտելը՝ զուգորդված բռնությամբ:

[469] Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով:

օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասով[470] նախաձեռնվել է քրեական վարույթ, որը գտնվել է նախաքննության փուլում:

➢ 2024 թվականի մայիսի 13-ին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է տարածվել այն մասին, որ նույն օրը Երևան քաղաքի Թումանյան փողոցում Ոստիկանության ծառայողների կողմից ուժ է գործադրվել 24 news.am լրատվական կայքի լրագրող Մերի Մանուկյանի նկատմամբ՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, ինչի հետևանքով վերջինս կորցրել է գիտակցությունը և տեղափոխվել բժշկական կենտրոն: «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր իրականացված այցի շրջանակում Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպել են լրագրող Մերի Մանուկյանին և արձանագրել վերջինիս կողմից ստացած մարմնական վնասվածքը: Նշվածի հաշվառմամբ՝ համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն: Ըստ ստացված պարզաբանման՝ լրագրող Մերի Մանուկյանի նկատմամբ բռնություն գործադրելու առերևույթ դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

➢ 2024 թվականի ապրիլի 30-ին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ են տարածվել այն մասին, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորին ուղեկցող անձն Ազգային ժողովի տարածքում հարվածել է Civic.am լրատվական կայքի լրագրող Դավիթ Լևոնյանին: Նշվածի առնչությամբ լրագրող Դավիթ Լևոնյանը Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել է հավելյալ տեղեկություններ, որի հաշվառմամբ՝ համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն: Ստացված պարզաբանման համաձայն՝ լրագրող Դավիթ Լևոնյանի կողմից տրված հաղորդման հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով 2024 թվականի ապրիլի 30-ին նախաձեռնվել է քրեական վարույթ:

➢ 2024 թվականի նոյեմբերի 14-ին «Հրապարակ» օրաթերթի լրագրող Լուսինե Շահվերդյանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչին հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովում Պետական պահպանության ծառայության աշխատակիցը փորձել է կանխել որոշակի տարածք իր մուտքը՝ հարձակվելով ու հեռացնելով իրեն այդ տարածքից, ինչի արդյունքում խոչընդոտել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը: Ներկայացվածի վերաբերյալ օրաթերթի կայքում հրապարակվել է նաև տեսանյութ: Նշվածի հաշվառմամբ՝ համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն: Ըստ ստացված պարզաբանման՝ «Հրապարակ» օրաթերթի լրագրող Լուսինե Շահվերդյանի մասնագիտական օրինական գործունեությանը ենթադրաբար խոչընդոտելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Միևնույն ժամանակ, զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկմամբ վեր հանված մեկ այլ դեպքով իրավասու մարմնի կողմից լրագրողի մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտման դեպք, ըստ էության, չի արձանագրվել: 2024 թվականի մայիսի 14-ին զանգվածային լրատվության

[470] Լրագրողին տեղեկություն տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը կամ նրա մասնագիտական օրինական գործունեությունն այլ կերպ խոչընդոտելը:

միջոցներով տեղեկություն է տարածվել առ այն, որ քաղաք Երևանի Աբովյան փողոցի սկզբնամասում ոստիկանական ավտոմեքենան վարվել է «MediaHub» լրատվամիջոցի լրագրող Նարե Գևորգյանի ուղղությամբ: Տարածված տեղեկության համաձայն՝ Ն. Գևորգյանը տեղափոխվել է «Նաիրի» բժշկական կենտրոն, իրականացվել է ռենտգեն հետազոտություն: Հետագայում ստացվել է պարզաբանում առ այն, որ ոմն անձի կողմից իրեն ամրակցված ավտոմեքենայով վրաերթի ենթարկելու դեպքի առթիվ 2024 թվականի մայիսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ և կատարվել է նախաքննություն: Նախաքննության ընթացքում նշանակված դատաբժշկական փորձաքննության արդյունքներով Նարե Գնունու մոտ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել, իսկ մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ որևէ տեղեկատվություն նախաքննության ընթացքում չի ստացվել: 2024 թվականի մայիսի 30-ին քրեական վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ հաստատվել է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքներն ու Պաշտպանին ներկայացված ահազանգերը վկայել են նաև լրագրողի նկատմամբ, իր մասնագիտական գործունեությամբ պայմանավորված, ատելության խոսքի, թիրախավորման, վիրավորանքի ու անհարգալից վերաբերմունքի ցուցաբերման դեպքերի մասին:

➢ Oragir.news» լրատվամիջոցի լրագրող Անի Ներկարարյանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչին տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ Oragir.news լրատվական կայքում տեղադրված տեսանյութի կապակցությամբ վերջինիս ներկայացվել են վիրավորանքներ ու հայհոյանքներ, լրագրողի նկարները կեղծ էջերով տարածվել են համացանցում, բազմաթիվ օգտատերեր հրապարակումների մեկնաբանությունների միջոցով լրագրողի հասցեին վիրավորանքներ են հնչեցրել: Նշվածի հաշվառմամբ՝ համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ ներքին գործերի նախարարություն: Ստացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ ՆԳՆ-ում իրականացված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Oragir.news» լրատվամիջոցի լրագրող Անի Ներկարարյանի հասցեին համացանցում՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում վիրավորական մեկնաբանություն է կատարել նաև ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողը՝ թույլ տալով բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերի հետ անհամատեղելի արարք, ինչով խախտել է «ՀՀ ոստիկանության ներքին կարգապահական կանոնները»: Վերոգրյալի կապակցությամբ ոստիկանության ծառայողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացության պատճենն ուղարկվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչություն՝ ենթակա ստորաբաժանումներում քննարկելու, հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու ուղղությամբ համապատասխան հանձնարարականներ տալու համար:

➢ 2024 թվականի փետրվարի 23-ին զանգվածային լրատվության միջոցներով տարածվել են տեսանյութեր, որտեղ լրագրող Գայանե Զարգարյանը, ի թիվս այլ մանրամասների, նշում է, որ շուրջ 1 ամիս «Ֆեյսբուք» և «Տիկտոկ» սոցիալական ցանցերում գործող նախաձեռնություններից մեկի՝ տարբեր օգտատերերի կողմից իր անձի վերաբերյալ տարածվել են նյութեր, որոնք ուղեկցվել են իր կյանքին և

առողջությանը վտանգ սպառնացող արտահայտություններով ու խախտել անձնական կյանքի ազատության իրավունքը: Նշվածի հաշվառմամբ՝ համապատասխան գրություններ են հասցեագրվել ՀՀ ներքին գործերի նախարարություն և Գլխավոր դատախազություն: Ստացված պարզաբանումների համաձայն՝ քրեական վարույթ չի նախաձեռնվել այն պատճառաբանությամբ, որ Գայանե Զարգարյանի նկատմամբ հնչեցված սպառնալիքը կրել է անորոշ բնույթ, կատարվել է համացանցային «Տիկ-Տոկ» հավելվածի միջոցով, ինչն ակնհայտորեն չի կարող կոնկրետ և իրական համարվել, այսինքն՝ օբյեկտիվ իրականությունը հիմք չի տվել հիշյալ սպառնալիքն իրական գնահատելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանը առանձին հանդիպումներ է ունեցել նաև «Առավոտ» օրաթերթի լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանի և NewsMedia.am կայքի ղեկավար, լրագրող Գայանե Զարգարյանի հետ՝ քննարկելու նրանց մասնագիտական գործունեությանն առնչվող մի շարք հարցեր: Հանդիպումների շրջանակներում վերջիններս ներկայացրել են իրենց մասնագիտական գործունեությամբ պայմանավորված՝ տարածված խնդիրները՝ կապված սոցիալական հարթակներում իրենց նկատմամբ հնչող բռնության կոչերի, ատելության խոսքի, պաշտոնատար անձանց կողմից լրագրողների նկատմամբ վերաբերմունքի հետ: Այս կապակցությամբ Պաշտպանը ևս մեկ անգամ շեշտել է, որ նշված բոլոր դեպքերն աշխատակազմում մանրամասն ուսումնասիրվում են, գտնվում են իր անմիջական ուշադրության ներքո:

Հարկ է նկատել, որ լրագրողների ու լրատվական գործունեություն իրականացնողների պաշտպանությունը, որպես հանրային վերահսկողություն իրականացնող մարմիններ ու հանրային կարծիքի ձևավորման համատեքստում կարևոր դերակատարներ, երաշխավորվում է միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով, որոնցով ընդգծվում է պետությունների կողմից գործուն քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունն՝ ուղղված վերջիններիս գործունեության անխոչընդոտ իրականացմանը, այդ թվում՝ որևէ ձևով թիրախավորման բացառմանը.

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի «Լրագրողների անվտանգությունն ու անպատժելիության խնդիրը» թիվ A/RES/68/163 բանաձև
Հորդորում է անդամ պետություններին անել ամեն ինչ՝ կանխելու լրագրողների և լրատվամիջոցների աշխատակիցների նկատմամբ բռնությունը, ապահովելու պատասխանատվությունը՝ ենթադրյալ բռնությունների բոլոր դեպքերով անաչառ, արագ և արդյունավետ քննություն անցկացնելու միջոցով, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և տուժողներին համապատասխան փոխհատուցման հնարավորությամբ ապահովելու համար:

Ընդ որում՝ լրագրողները պաշտպանված են նաև բռնությունից ու հարձակումներից, ներառյալ՝ իշխանությունների կողմից ուժի կիրառումից և սեռական ոտնձգություններից, երբ իրենց մասնագիտական գործունեությունն են իրականացնում բողոքի ցույցերի ժամանակ[471]:

[471] Հասանելի է https://www.article19.org/wp-content/uploads/2017/11/safety_of_journalists_WEB_23.10.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարական[472]
Լրագրողների և այլ մեդիա գործիչների անվտանգությունն ու ապահովությունը կարևոր նախապայման են նրանց հանրային քննարկումներում արդյունավետ մասնակցության համար: Լրագրողների և մեդիա գործիչների նկատմամբ սպառնալիքների, ճնշումների և բռնության շարունակականությունը, ինչպես նաև նման արարքների համար պատասխանատվության չկիրառումը առաջացնում են վախ ու բացասաբար են ազդում խոսքի ազատության և հանրային քննարկումների վրա: Պետությունները պարտավոր են պաշտպանել լրագրողներին և մեդիա գործիչներին սպառնալիքներից, ճնշումներից և բռնությունից՝ անկախ դրանց աղբյուրից ու բնույթից (իշխանական, դատական, կրոնական, տնտեսական կամ այլ՝ հանցավոր լծակների կիրառմամբ)[473]:

Այս առնչությամբ, հարկ է նկատել, որ լրագրողների մասնագիտական օրինական գործունեության համար բարենպաստ միջավայրի առկայության և լրագրողների անվտանգության երաշխավորմանն ուղղված պետական մարմինների կողմից 2024 թվականի ընթացքում ձեռնարկված քայլերը պարզելու նպատակով հարցումներ են ուղղվել իրավասու մարմիններին:

Դատական դեպարտամենտից ստացվել է պարզաբանում առ այն, որ լավարկվել է Բարձրագույն դատական խորհրդի 2024թ. հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի հունվարի 11-ի թիվ ԲԴԽ-2-Ն-1 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ ԲԴԽ-99-Ն-38 որոշումը, որի հիմնական նպատակներից է զանգվածային լրատվության միջոցներով դատավորների շփումների շրջանակի բարելավումը: Որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է եղել զանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոններով նախատեսված մի շարք սահմանափակումներ վերացնելու, շփման առավել գործընկերային և թափանցիկ միջավայր ձևավորելու, ինչպես նաև դատական համակարգի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու հանգամանքներով: Որոշմամբ դյուրինացվել է Բարձրագույն դատական խորհրդի դռնբաց նիստերին լրագրողների ներկայության ապահովման գործընթացը (հանվել են այդ գործընթացը սահմանափակող կանոնները)[474]:

---

[472] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարականը:

[473] CM/Rec(2016)4

[474] Այս առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրած խնդիրներն ու համապատասխան առաջարկները տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «Բարձրագույն դատական խորհրդի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության սահմանափակումների առնչությամբ» 2023 թվականի ուսումնասիրության մեջ, հասանելի է https://ombuds.am/images/files/44dfefa219a

Ըստ ՆԳՆ-ի՝ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից լրագրողների մասնագիտական իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու ցանկացած դեպքի վերաբերյալ ստացված դիմում-բողոքների, ահազանգերի, այլ հաղորդումների կապակցությամբ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում կատարվում են ծառայողական քննություններ և ուսումնասիրություններ, որոնց շրջանակներում իրականացվում է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն: Կատարվող քննության ընթացքում հանցագործության հատկանիշներ հայտնաբերվելու դեպքում ծառայողական քննության նյութերն ուղարկվում են նախաքննության մարմիններ:

Նախարարության կողմից նաև նշվել է Ոստիկանության ծառայողների կողմից լրագրողների մասնագիտական իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու դեպքերը կանխարգելելու, դրանց առկայության պարագայում՝ վերացնելու, դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելու և պատասխանատվության անխուսափելիությունը երաշխավորելու նպատակով կառուցակարգեր նախատեսելու համար «Ոստիկանության կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի մշակումը: Ոստիկանության կարգապահական նոր կանոնագիրքը հստակ ակնկալիքներ է սահմանելու ծառայողների վարքագծի և գործողությունների վերաբերյալ, այն ապահովելու է, որպեսզի ծառայողներն իրենց հակահիրավական արարքների համար ենթարկվեն պատասխանատվության:

Քննչական կոմիտեից ստացված պարզաբանման համաձայն՝ մասնագիտական իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթներով Կոմիտեն ապահովում է համակողմանի և անաչառ քննություն: Նկատի ունենալով նման վարույթներով հանրային մեծ հետաքրքրությունը՝ Կոմիտեի կայքում տեղադրվում են համառոտ հրապարակումներ՝ ապահովելու համար հանրային հաշվետվողականությունը:

Ներկայացվածից բացի, լրագրողի մասնագիտական օրինական գործունեության երաշխավորման համատեքստում Պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել նաև լրագրողների հավատարմագրման դադարեցման հետ կապված հարցերը՝ լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու ռիսկի տեսանկյունից:

Այսպես, 2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո է գտնվել լրագրող Վահե Մակարյանի՝ Ազգային ժողովում հավատարմագրման դադարեցման հարցը: Ընդ որում՝ լրագրողի մասնագիտական գործունեության երաշխավորման հետ կապված հարցերը քննարկվել են նաև անձամբ Պաշտպանի՝ Վահե Մակարյանի հետ հանդիպման ընթացքում:

Հավատարմագրման դադարեցման հարցի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի կողմից պարզաբանումներ են պահանջվել իրավասու մարմնից:

Ի պատասխան՝ Պաշտպանը տեղեկացվել է, որ «Մեդիահաբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող MediaHub.am լրատվական կայքի լրագրող Վահե Մակարյանը նույն օրը թույլ է տվել երկու տարբեր խախտումներ,

---

78d7f178fc89b1637ff19.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

որոնցից յուրաքանչյուրի համար ստացել է նախազգուշացում, միաժամանակ վերջինիս հավատարմագրումը դադարեցվել է:

Հարկ է նշել, որ դատական տեղեկատվական համակարգում առկա է տեղեկատվություն առ այն, որ ներկայում տվյալ հարցի առնչությամբ ընթանում է դատական վարույթ: Այս առումով հիշատակման արժանի է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ Պաշտպանն իրավասու չէ միջամտելու դատական վարույթին կամ դատավորների լիազորությունների իրականացմանը կոնկրետ գործով: Ավելին, նույն օրենքի համաձայն՝ Պաշտպանը չի քննարկում բողոքը, եթե անձը դրանում բարձրացված հարցով դիմել է դատարան:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է լրագրողներ-պետական մարմիններ պատշաճ հարաբերությունների և հավատարմանգրման ինստիտուտին առնչվող չափանիշների պահպանումը, և նշված ինստիտուտին անդրադարձը տարեկան հաղորդման շրջանակներում առանցքային է համարում ներպետական օրենսդրությունն ու պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխան զարգացնելու տեսանկյունից:

Հարկ է ընդգծել, որ միջազգային իրավական չափանիշներով ևս ամրագրվում է այն գաղափարը, որ լրագրողների հավատարմագրումն ունի առավելապես վերջիններիս մասնագիտական գործունեության մատչելիության ապահովման դեր: Այն ոչ մի պարագայում չպետք է հանդես գա որպես լրագրողի մասնագիտական գործունեությունը սահմանափակող գործիք, իսկ հավատարմագրման մերժումը կամ դադարեցումը՝ որպես սանկցիա:

Հավատարմագրումը չպետք է կիրառվի որպես գործիք զանգվածային լրատվության միջոցների մասնագիտական գործունեությունը և տեղեկատվության մատչելիության պահանջի իրացումը խոչընդոտելու համար: Ավելին, հավատարմագրման վերաբերյալ կարգավորումները չպետք է դիտարկվեն որպես լրագրողների՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու նպատակով տրվող պետության թույլտվություն: Այլ կերպ, հավատարմագրումը պետք է դիտարկվի լրագրողական գործունեության համար ոչ թե որպես սահմանափակող, այլ «թույլատրող» միջոց[475]:

ԵԱՀԿ չափանիշների համաձայն՝ հավատարմագրման կանոնները պետք է լինեն հստակ ու թափանցիկ: Դա ենթադրում է նաև հավատարմագրման մերժման ու դադարեցման օրինական հիմքերի ամրագրում: Հավատարմագրումը չպետք է ծառայի որպես բովանդակությունը վերահսկելու միջոց: Ավելին, այն չպետք է կիրառվի որպես սանկցիա կամ սահմանափակում՝ ի պատասխան մեդիա քարոզչության կամ այլ ճնշումների[476]:

Այս համատեքստում Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ պետական մարմինների ու լրագրողների միջև հանրային հաղորդակցության ու

---

[475] Տե՛ս «Տարշաշագ ա սաբադշագյոգոկերտ»-ն ընդդեմ Հունգարիայի (TÁRSASÁG A SZABADSÁGJOGOKÉRT V. HUNGARY) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հուլիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 37374/05, կետ 38, հասանելի է https://hudoc.echr.coe.int/eng?i=001-92171 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[476] Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/2/8/245146.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

փոխգործակցության հարցերը, պետական մարմինների գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, լրագրողների և լրատվամիջոցների մասնագիտական պաշտպանված և արդյունավետ աշխատանքը Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մշտական ուշադրության ներքո գտնվող հարցեր են:

Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է ապահովել մի կողմից լրագրողների՝ պատասխանատու լրագրության կանոնները պահպանելու ու «մի՛ վնասիր» սկզբունքով առաջնորդվելու պահանջի, մյուս կողմից՝ պետության կողմից լրատվական գործունեության համար լիովին բարենպաստ միջավայրի առկայությունը և լրագրողների անվտանգությունը երաշխավորելուն ուղղված կառուցակարգեր ներդնելու ու գործարկելու պարտականության պատշաճ կատարումը:

Լրագրողների նկատմամբ բռնությունը, ցանկացած տեսակի ճնշումը կամ վերջիններիս թիրախավորումը, պայմանավորված լրագրողի մասնագիտական օրինական գործունեությամբ, ցանկացած հասարակությունում անընդունելի է և հակասում է ժողովրդավարական արժեքներին: Պետությունն ունի պարտականություն ապահովելու վերջիններիս անվտանգությունն ու պաշտպանելու մամուլի ազատությունը: Ցանկացած տեսակի բռնություն կամ ճնշում լրագրողների նկատմամբ խաթարում է կարծիքի արտահայտման ազատությունը և վտանգում իրավունքի գերակայությունը: Պետական կառույցները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և դատապարտելու նման գործողությունները՝ ապահովելով ազատ և անկախ լրագրողական գործունեությունը:

Պաշտպանը, վերահաստատելով իր նախկինում արտահայտած դիրքորոշումներն, ընդգծում է, որ պետությունը պետք է մշակի և գործարկի այնպիսի կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն բնականոն լրատվական գործունեության համար լիովին բարենպաստ միջավայրի առկայությունը և լրագրողների անվտանգությունը: Ընդ որում՝ նշված կառուցակարգերը պետք է ուղղված լինեն ինչպես լրագրողների իրավաչափ գործունեությանը չխոչընդոտելուն, այնպես էլ նման խոչընդոտները կանխարգելելուն, դրանց առկայության պարագայում՝ վերացնելուն, դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելուն, այդ թվում՝ պատասխանատվության անխուսափելիությունը երաշխավորելուն:

Լրագրողական գործունեությունը խոչընդոտելու դեպքերը պետք է արժանանան պետության պատշաճ իրավական արձագանքին: Այդպիսի ցանկացած ոտնձգություն վտանգում է ոչ միայն լրագրողի իրավունքները, այլև իր բացասական ազդեցությունն է թողնում հասարակության տեղեկացվածության իրավունքի լիարժեք ապահովմանը:

Պաշտպանը կարևորում է նաև մասնագիտական լրատվական գործունեության իրականացումը բացառապես էթիկայի կանոնների, «պատասխանատու լրագրության» սկզբունքների պահպանման և լրագրողների գործունեության արդյունքում ատելության խոսքի բացառման համատեքստում:

3. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա

2024 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են եղել տեղեկատվության ազատությանն առնչվող, այդ թվում՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում պատշաճ իրավակիրառման հարցերը: Այս հարցերի առնչությամբ խնդիրները արձանագրվել են դեռևս Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում[477] ու շարունակել են արդիական լինել նաև 2024 թվականի ընթացքում:

Բացի այդ, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում ներկայացրել է իր դիտարկումները 2023 թվականին շրջանառության մեջ դրված՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հետ համատեղ մշակված «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքի և հարակից օրենքների լրամշակված նախագծերի փաթեթի վերաբերյալ, որոնց վերաբերյալ գրավոր կարծիքը ներկայացվել է 2024 թվականին: Կարծիքում Պաշտպանը, հիշատակելով, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Պետական մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկատվության հասանելիության մասին» NR(81)19 հանձնարարականը, առաջարկել է նախագծային փոփոխությունները նախատեսել այնպես, որով հաշվի կառնվեն նույն հանձնարարականի պահանջները և կապահովվեն տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը: Անդրադարձ է կատարվել տեղեկության հասկացության և տեղեկատվության տնօրինողների շրջանակին, հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման հարցերին և այլն[478]:

Պաշտպանի կողմից արձանագրված խնդիրները կապված են ինչպես իրավակիրառ պրակտիկայի, իրազեկվածության ու պետական մարմինների կարողությունների ոչ բավարար աստիճանի, այնպես էլ օրենքով նախատեսված գործողությունների իրականացմանն ուղղված միասնական ձևաչափերի ու չափանիշների բացակայության հետ:

2024 թվականի ընթացքում տեղեկություններ ստանալու իրավունքի խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացվել 46 դիմում-բողոք: Դիմում-բողոքները բովանդակում են այնպիսի խնդիրների մասին, ինչպիսիք են, օրինակ, լրագրողական գործունեության ընթացքում տեղեկություններ ստանալու նպատակով հարցման առնչությամբ տեղեկության տրամադրումը մերժելու, հայցվող տեղեկությունը օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու կամ ամբողջությամբ չտրամադրելու հարցերը:

---

[477] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 217-221, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[478] Տե՛ս նույն տեղում:

Նշված դիմում-բողոքների ուսումնասիրությունը կրկին վկայում է ինչպես տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման շրջանակներում պետական մարմինների գործողությունների, այնպես էլ հասարակության իրազեկվածության համատեքստում առկա խնդիրների մասին:

Հարկ է նկատել, որ Պաշտպանի՝ տեղեկատվության հարցերով պատասխանատու անձի համար «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի և վերջինիս կիրարկման կառուցակարգերի վերաբերյալ վերապատրաստումների իրականացման մասին հարցադրման առնչությամբ պետական մարմինների մեծամասնությունը հայտնել է, որ վերապատրաստման դասընթացներ չեն կազմակերպվել: Նշված հարցերով կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ են ձեռնարկվել



Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, Ներքին գործերի նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արդարադատության նախարարության, Բարձրագույն դատական խորհրդի, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, ՏԿԵՆ ջրային կոմիտեի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Վարչապետի աշխատակազմի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, իսկ

Քաղաքաշինության կոմիտեի, Ֆինանսների նախարարության, Պետական եկամուտների կոմիտեի, Շրջակա միջավայրի նախարարության և Առողջապահության նախարարության համապատասխան աշխատակիցները ոլորտին առնչվող հարցերը քննարկել են աշխատաժողովների, տարբեր հանդիպումների շրջանակներում: Միևնույն ժամանակ, ըստ հարցումների արդյունքների պարզ է դարձել, որ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում տեղեկատվության հարցերով պատասխանատու անձ նշանակված չէ:

Ներկայացվածից բացի, հարկ է նշել, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պատշաճ կիրարկման առնչությամբ բարձրացված խնդիրներն արձանագրվել են դեռևս Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման համատեքստում՝ անդրադառնալով ոլորտի հասարակական կազմակերպությունների մտահոգություններին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված վիճակագրությունը կազմելու և հրապարակելու միասնական ձևաչափի և մեթոդաբանության բացակայության, վիճակագրության հրապարակման պարտականությունը լրիվությամբ չկատարելու, այդ թվում՝ հարցումների մերժման հիմքերի մասին տվյալները չհրապարակելու տեսանկյունից, ինչը ևս օրենքի պահանջ է[479]:

Նշվածի հետ մեկտեղ, Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրումներին ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության հրապարակման համար միասնական ձևաչափեր ու չափանիշներ ներդնելուն ուղղված քայլեր չեն ձեռնարկվել:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ 2024 թվականի ընթացքում շարունակել է արդիական մնալ տեղեկատվության ազատության համատեքստում պատշաճ իրավակիրառման ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կառուցակարգերի ու իրավակարգավորումների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացման ու նույն օրենքով նախատեսված մարմինների ու անձանց կարողությունների զարգացման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Ներկայացվածից բացի, պետք է նաև նշել, որ միջազգային իրավական փաստաթղթերով խրախուսվում է պաշտոնական տվյալների պրոակտիվ հրապարակումը՝ նվազեցնելով տեղեկատվության ազատության հարցումներ ներկայացնելու անհրաժեշտությունը: Նշվածը սերտ կապված է թափանցիկության, բաց կառավարման ու տեղեկատվության հասանելիության հետ և ուղղված է տեղեկատվության ազատության արդյունավետ իրացման երաշխավորմանը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրվում է հրապարակայնությունը՝ որպես տեղեկատվության ազատության

---

[479] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 222-224, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ապահովման հիմնական սկզբունք: Միևնույն ժամանակ, նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է այն տեղեկատվության հստակ շրջանակը, որի հրապարակման պարտականությունը կրում է իրավասու մարմինը:

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
Հոդված 10. Պետական մարմինների նախաձեռնությամբ հրապարակված փաստաթղթերը Պետական մարմինը սեփական նախաձեռնությամբ և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ է ձեռնարկում իր տնօրինության տակ գտնվող պաշտոնական փաստաթղթերը հրապարակելու համար՝ հանրային կառավարման թափանցիկությունը և արդյունավետությունը խթանելու, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրության հարցերին հանրության իրազեկված մասնակցությունը խրախուսելու նպատակով:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 34-րդ ընդհանուր մեկնաբանության 19-րդ հետի համաձայն՝ տեղեկատվության մատչելիության իրավունքի իրացման արդյունավետությունն ապահովելու համար պետությունները պետք է սեփական նախաձեռնությամբ (պրոակտիվ կերպով) հանրությանը հետաքրքրող տեղեկատվությունը դարձնեն հասանելի՝ գործադրելով բոլոր ջանքերը հեշտ, արագ, արդյունավետ ու գործնական հասանելիություն ապահովելու հարցում[480]:

Նշվածը իր հերթին ենթադրում է շատ ավելի կայուն ու մշտական հիմունքներով հանրությանը հետաքրքրող տեղեկատվության հրապարակայնացում՝ ի տարբերություն ներպետական կարգավորումների, որոնք ամրագրում են տարեկան առնվազն մեկանգամյա հրապարակման պարտադիրությունը՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության խորհրդի Բաց կառավարման վերաբերյալ հանձնարարականներում առաջարկվում է պրոակտիվ կերպով հանրությանը մատչելի դարձնել պետական հատվածի տվյալներն ու տեղեկությունները՝ ի թիվս այլնի՝ ապահովելով դրանց հստակությունը, ամբողջականությունը, վստահելիությունն ու վերաբերելիությունը անվճար ու բաց հասանելիություն ունեցող եղանակով (բաց տվյալների հասանելիություն)[481]:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Հայաստանում նշված ոլորտում առկա տարատեսակ խնդիրները՝ անհրաժեշտ է.

---

[480] Հասանելի է https://www.refworld.org/legal/general/hrc/2011/en/83764 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[481] Հասանելի է https://legalinstruments.oecd.org/en/instruments/OECD-LEGAL-0438 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

- ✓ *ներդնել միասնական ձևաչափեր ու չափանիշներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության հրապարակման համար,*
- ✓ *կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվության հարցերով պատասխանատու անձանց համար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ու վերջինիս կիրարկման կառուցակարգերի վերաբերյալ՝ ապահովելով դասընթացների շարունակականությունն ու մեթոդաբանության միասնականությունը,*
- ✓ *իրականացնել տեղեկատվության ազատության վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ,*
- ✓ *տեղեկատվության մատչելիության իրավունքի իրացման արդյունավետությունը երաշխավորելու, հանրային կառավարման թափանցիկությունը և արդյունավետությունը խթանելու, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրության հարցերին հանրության իրազեկված մասնակցությունը խրախուսելու նպատակով՝ ներդնել տվյալների բաց հասանելիություն ունեցող համակարգ՝ ապահովելով կայուն ու մշտական հիմունքներով հանրությանը հետաքրքրող տեղեկատվության հրապարակայնացումը՝ միջազգային չափանիշներին համաձայն:*
- ✓ *երաշխավորել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասության շրջանակներում պատշաճ հանրային հաղորդակցությունը:*

ԲԱԺԻՆ 10. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2024 թվականի գործունեության հիմնական ուղղություններից է եղել հավաքների ազատության՝ որպես մարդու հիմնական իրավունքի պաշտպանության ապահովումը: Հավաքների ազատության արդյունավետ իրացման երաշխիքների ապահովումն ու նշված իրավունքի իրացման առնչությամբ առաջացած խնդիրները գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է հավաքների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների մշտադիտարկում: Հավաքների ազատության իրավունքի պաշտպանության և խթանման համատեքստում Պաշտպանն իր լիազորություններն իրականացրել է՝ նաև հիմք ընդունելով ստացված դիմում-բողոքները:

Հավաքների ընթացքում ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունն առավելագույնս երաշխավորելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքման այցեր են իրականացրել Ներքին գործերի նախարարության ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ, բուժհաստատություններ, հավաքների անցկացման վայրեր, առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, ուսումնասիրել վերջիններիս իրավունքների ապահովման վիճակն ու ազատությունից զրկելու հիմքերը, նրանց վերաբերյալ կազմված փաստաթղթերը, պարզաբանել ազատությունից զրկված անձի կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները: Այցերի ընթացքում տեղում ուսումնասիրվել են ազատությունից զրկված անձանց կողմից բարձրացված խնդիրները և դրանք քննարկվել են իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ: Պաշտպանն անձամբ խնդիրները քննարկել է իրավասու մարմինների պաշտոնատար անձանց հետ, հանդես եկել մի շարք հրապարակային հայտարարություններով, խնդիրները բարձրացրել է տարբեր քննարկումների ընթացքում:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աջակցությամբ մի շարք դեպքերում իրավասու մարմինների հետ համագործակցության արդյունքում ապահովվել է փաստաբանների մուտքը ոստիկանության տարբեր բաժիններ՝ անձանց պաշտպանությունը ստանձնելու կամ վերջիններիս իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ապահովելու նպատակով[482]: Անհրաժեշտ իրավիճակներում երաշխավորվել է անձանց բժշկական օգնության և զանգի իրավունքի իրացումը, այդ թվում՝ փաստաբանի հետ կապ հաստատելու նպատակով:

2024 թվականի ապրիլ, մայիս և հունիս ամիսների ընթացքում Երևան քաղաքում ու հանրապետության տարբեր մարզերում իրականացված հավաքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբերի իրականացրած այցերի ընթացքում աշխատակազմի ներկայացուցիչներն

[482] Խնդրին առհասարակ մանրամասն անդրադարձ է կատարվել սույն հաղորդման 3-րդ բաժնի 4-րդ գլխում:

առանձնազրույցներ են ունեցել ազատությունից զրկված ավելի քան 200 անձի հետ, այդ թվում՝ հավաքների անցկացման վայրերից արգելանքի վերցվելու և նրանց իրավունքների ապահովման հարցերի առնչությամբ:

2024 թվականի ընթացքում հավաքների ազատության իրավունքի պաշտպանությանն ուղղված աշխատանքների իրականացման համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սկսվել են մի շարք ուսումնասիրություններ, այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ: Այսպես, այցերի ընթացքում արձանագրված բոլոր խնդիրների, ներառյալ՝ բռնության, անհամաչափ ուժի գործադրման, ինչպես նաև 2024 թվականի հունիսի 12-ի դեպքերի, այդ թվում՝ հատուկ միջոցների կիրառման առնչությամբ պարզաբանումներ են պահանջվել ՀՀ ներքին գործերի նախարարությունից, Գլխավոր դատախազությունից և Քննչական կոմիտեից:

2024 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների մշտադիտարկման արդյունքների ուսումնասիրությամբ արձանագրվել և վերահաստատվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներով տարիներ շարունակ բարձրացվող համակարգային և շարունակական բնույթ կրող խնդիրները: *Կարևորելով ոլորտում կատարվող բարեփոխումները՝ Պաշտպանն ընդգծում է, որ դեռևս առկա են իրավասու մարմինների ոչ իրավաչափ պրակտիկային առնչվող խնդիրներ, որոնք ունեն շուտափույթ հաղթահարման կարիք:*

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից 2024 թվականի ընթացքում արձանագրվել են համակարգային և շարունակական բնույթ կրող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հավաքների մասնակիցների զանգվածաբար իրականացվող վարչական ձերբակալումները՝ ներպետական կարգավորումների ու միջազգային չափանիշների խախտմամբ, ազատությունից զրկելու ընթացակարգային խախտումները (օրինակ՝ նախքան ազատությունից զրկելն օրինական պահանջ չներկայացնելը), վարչական ձերբակալման ենթարկելիս անհամաչափ ուժի գործադրումը, անձին ազատությունից զրկելու պատճառների մասին անհապաղ տեղեկացնելու և կարգավիճակից բխող իրավունքները ծանուցելու պահանջի չպահպանումը, Ոստիկանության ծառայողների կողմից անհարգալից վերաբերմունքը, Ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառման իրավաչափության հարցերը և այլն: Վերը նշված խնդիրները հատկապես մտահոգիչ են այն համատեքստում, որ շարունակական են տարիների կտրվածքով: Ուստի, դրանք ունեն համակարգային բնույթ, և դրանց հաղթահարումը ենթադրում է լրջագույն համակարգային փոփոխությունների անհրաժեշտություն:

Հարկ է նկատել նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում, այդ թվում՝ Տավուշի մարզում ու Երևանում մեկնարկած բողոքի ակցիաներին ու հավաքներին, այդ համատեքստում առերևույթ բռնությունների ու ատելության խոսքի տարածման անթույլատրելիությանը, ինչպես նաև խաղաղ հավաքների երաշխավորմանն ուղղված Պաշտպանի իրականացրած աշխատանքներին անդրադարձել է բազմիցս հրապարակային եղանակով, այդ թվում՝ հարցազրույցների ընթացքում[483]:

---

[483] Հասանելի է https://www.facebook.com/100069268237249/posts/770480938604174/?mibextid=wwXIfr&rdid=qaOES4BWv0REdGRL# հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը հավաքների ազատության ու խաղաղ հավաքների իրականացման առնչությամբ արձանագրած խնդիրները բարձրացրել է նաև դեսպանությունների ներկայացուցիչների[484], օտարերկրյա պատվիրակությունների[485], միջազգային կազմակերպությունների[486], աշակերտների[487], ուսանողների[488] հետ հանդիպումների, աշխատանքային այցերի[489] և այլ միջոցառումների[490] ընթացքում:

1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացումը

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված հավաքների մշտադիտարկման, ինչպես նաև Ոստիկանության բաժիններում ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ ինչպես վարչական ձերբակալման ենթարկելիս, այնպես էլ Ոստիկանության բաժնում, ձերբակալված անձանց չեն պարզաբանվել վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերն ու պատճառները, վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները: Նշված խնդիրն արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ ինչպես նախորդ տարեկան հաղորդումներում, այնպես էլ այլ հրապարակային և ոչ հրապարակային աղբյուրներում: Անձին ազատությունից զրկելուց հետո վերջինիս անհապաղ իրեն հասկանալի լեզվով ազատությունից զրկելու պատճառների մասին տեղեկացնելու պարտականությունն ամրագրող ներպետական ու միջազգային իրավական չափանիշներն ու կարգավորումները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում որդեգրված մոտեցումները մանրամասն ներկայացվել են Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում[491]:

---

[484] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2833, https://ombuds.am/am/site/ViewNews/2867, https://ombuds.am/am/site/ViewNews/3018, https://ombuds.am/am/site/ViewNews/3019, https://ombuds.am/am/site/ViewNews/3171 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[485] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2898, https://ombuds.am/am/site/ViewNews/3057, https://ombuds.am/am/site/ViewNews/2848 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[486] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2854 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[487] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3086 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[488] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3161 հղումով, 2025 մարտի 31-ի դրությամբ:

[489] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2880, https://ombuds.am/am/site/ViewNews/2882 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[490] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2842, https://ombuds.am/am/site/ViewNews/2909 հղումով 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[491] Տե՛ս առավել մանրամասն, օրինակ, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 372-375, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
Հոդված 5[1]. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք 2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

2024 թվականի ընթացքում հավաքների շրջանակներում ազատությունից զրկված մի շարք անձինք Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին նաև հայտնել են, որ Ոստիկանության ծառայողների կողմից օրինական պահանջ չի հնչեցվում կամ հնչեցվում է ոչ լսելի կերպով կամ հնչեցվելու պարագայում օրինական պահանջի իրականացման համար ողջամիտ ժամկետ չի տրամադրվում:

Արձանագրված դեպքերի ընդհանուր ուսումնասիրությունից բխում է, որ հիմնականում անձանց վարչական ձերբակալման հիմքը եղել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության օրինական պահանջը չկատարելը: Դիտարկումները ցույց են տալիս, որ վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերը ներկայացվել են ընդհանրական կերպով, չեն անհատականացվել՝ զրկելով վարչական ձերբակալման ենթարկված անձին հնարավորությունից՝ հասկանալու, թե կոնկրետ ինչ հիմքով և պատճառաբանությամբ է իրականացվում վարչական ձերբակալումը: Շատ դեպքերում անձանց համար պարզ չի եղել, թե որն է իրենց ներկայացված կոնկրետ «օրինական պահանջը»: Վարչական ձերբակալման ենթարկելու որոշ դեպքերում, ըստ Պաշտպանին դիմած կամ առանձնազրույցներին մասնակցած անձանց պնդումների, իրենց առհասարակ որևէ պահանջ չի ներկայացվել, որևէ հակաօրինական արարք չեն կատարել, և վարչական ձերբակալման են ենթարկվել զուտ հավաքի անցկացման վայրում գտնվելու փաստի ուժով: Ավելին, ըստ վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ որոշ դեպքերում վարչական ձերբակալումը տեղի է ունեցել անգամ օրինական պահանջի իրականացման պայմաններում:

2024 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացված հավաքների ընթացքում ձերբակալվել և ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային բաժիններ են բերվել ընդհանուր թվով 1107 անձ, որոնցից 975-ը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված Ոստիկանության զորքերի զինծառայողի կամ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու կասկածանքով: Միևնույն ժամանակ, ըստ նախարարության՝ տվյալ հոդվածով Վարչական դատարան է ներկայացվել 116 հայց, որից 71 վարչական գործ գտնվում է դեռևս քննության փուլում, 2 հայց բավարարվել է, 43 հայց մերժվել է:

Ներկայացվածի համատեքստում, վերը նկարագրված խնդիրները ու վիճակագրական տվյալները վկայում են, որ դեռևս շարունակում են արդիական մնալ իրականացված վարչական ձերբակալումների (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված) հիմնավորվածության և իրավաչափության հարցերը, ինչն իր հերթին կասկածի տակ է դնում հավաքների մասնակիցներին վարչական ձերբակալման ենթարկելու իրական նպատակներն ու հիմքերը:

Հարկ է նկատել, որ իրենց նվազագույն իրավունքների մասին վարչական ձերբակալման ենթարկված անձինք (դեպքերի գերակշիռ մասում) տեղեկացել են հենց Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներից՝ իրականացված արագ արձագանքման այցերի ընթացքում:

Պաշտպանն ընդգծում է, որ նաև Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված պահանջ է, որ անձն ազատությունից զրկվելուց հետո անհապաղ պետք է իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին՝ փաստական և իրավական բավարար հիմնավորմամբ: Սահմանադրական դատարանը, քննարկելով անձին ազատությունից զրկելիս հիմքերը չներկայացնելու և իր իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու խնդիրները, Պաշտպանի դիմումի հիման վրա իր՝ 2017 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1339 որոշմամբ արձանագրել է, որ ազատությունից զրկվելու պատճառների մասին անձին «անհապաղ տեղեկացնելը» հանրային իշխանության ուղղակի պարտականությունն է, և այդ հարցում հայեցողական մոտեցումն անթույլատրելի է:

Իր հերթին, օրինական պահանջը պետք է անձի համար լինի որոշակի և հասկանալի, նախորդի վարչական ձերբակալման ենթարկելուն և համապատասխանի վերաբերելի ներպետական և միջազգային չափանիշներին:

Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումներն ու Ոստիկանության բաժիններ իրականացված մեծաթիվ այցերը վկայում են, որ խնդիրը նախորդ տարիների հետ նույնական է, իսկ պրակտիկան՝ խնդրահարույց:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է

- ***վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավունքներին միջամտություն ենթադրող վարչական ձերբակալման հարցերը կանոնակարգող կարգավորումները ու համապատասխանեցնել դրանք Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված կարգավորմանը՝ ուղղակիորեն ամրագրելով անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ ազատությունից զրկվելու պատճառների ու հիմքերի, իրավունքների ու պարտականությունների մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելու պահանջը,***
- ***ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպքում միջազգային չափանիշներին համապատասխան՝ անձին ներկայացնել ազատությունից զրկելու կոնկրետ հիմքերն ու պատճառները, անձի իրավունքներն ու պարտականությունները, այդ հարցին չցուցաբերել ձևական և մեխանիկական մոտեցում,***
- ***պահպանել «օրինական պահանջին» առնչվող միջազգային և ներպետական չափանիշները:***

2. Սահմանված ժամկետից ավելի անձին անազատության մեջ պահելը և ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը

Պաշտպանի աշխատակազմի կողմից 2024 թվականի ընթացքում իրականացված հավաքների մշտադիտարկումը ցույց է տվել, որ 2024 թվականի ընթացքում ևս խնդրահարույց է եղել անձանց ազատությունից զրկելու սկզբնական

պահը չհստակեցնելու ու սահմանված ժամկետների չպահպանման պրակտիկան, որի մասին մշտապես բարձրացվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներում:

Ինչպես նախորդ տարիներին, 2024 թվականին ևս արձանագրվել են դեպքեր, երբ վարչական ձերբակալման ենթարկված անձանց անազատության մեջ պահելու ժամկետի հաշվարկի սկիզբ է դիտարկվել ոչ թե անձին ազատությունից փաստացի զրկելու պահը, այլ անձին ազատությունից զրկելու առնչությամբ համապատասխան արձանագրություն կազմելու կամ նրան Ոստիկանության համապատասխան բաժին բերելու պահը:

Այսպես, օրինակ՝ 2024 թվականի հունիսի 12-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժիններ իրականացված այցերի շրջանակներում ունեցած առանձնազրույցներից մեկի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձը նշել է, որ փաստացի արգելանքի է վերցվել ժամը 15:30-ի սահմաններում: Մինչդեռ, Ոստիկանությունից ստացված պարզաբանման համաձայն՝ վարչական ձերբակալման արձանագրության մեջ ձերբակալման ժամ է նշված եղել 16:40-ը: Միևնույն ժամանակ, նույն անձը Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել է, որ իրեն արգելվել է դուրս գալ Ոստիկանության բաժնից մինչև օրենսդրությամբ ամրագրված 3 ժամը լրանալը, չնայած նրան, որ վարչական վարույթի շրջանակում բոլոր անհրաժեշտ գործողություններն ավարտվել և համապատասխան փաստաթղթերը կազմվել են:

Ինչպես անձին վարչական ձերբակալման ենթարկելու ժամկետների ու ազատությունից զրկելու պահի հստակեցման, այնպես էլ անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից իրավունքների ծագման ու երաշխավորման հետ կապված ներպետական ու միջազգային իրավական կարգավորումներն ու չափանիշները մանրամասն նկարագրվել են Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում[492]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով խնդրահարույց է համարել դիմումատուի ձերբակալման արձանագրությունը կազմելիս այլ ժամի արձանագրումը որպես նրան ձերբակալելու պահ՝ ի տարբերություն այն ժամի, երբ դիմումատուն փաստացի զրկվել է ազատությունից[493]:

Պաշտպանն ընդգծում է, որ անձին ազատությունից զրկելու սկզբնական պահի հաշվարկումը կարևոր է ինչպես օրենսդրությամբ ամրագրված առավելագույն ժամկետների պահպանման, այնպես էլ անձի՝ ազատությունից զրկվածի կարգավիճակից բխող բոլոր երաշխիքների ապահովման տեսանկյունից: Ուստի, անհրաժեշտ է սկզբունքորեն պահպանել միջազգային իրավաբանությամբ ընդունված այն մոտեցումը, որ անձը համարվում է ազատությունից զրկված՝ այն պահից սկսած, երբ նա ստիպված է հետևել ոստիկանի կամքին և չի կարող ինքնակամ լքել իր գտնվելու վայրը:

---

[492] Տե՛ս օրինակ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 375-377, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[493] Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 173:

Ավելին, օրենսդրությամբ ամրագրված 3 ժամը վարչական ձերբակալման ենթարկված անձին անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետն է, և համապատասխան գործողությունների ավարտից հետո անձին անազատության մեջ պահելը՝ առանց իրավաչափ նպատակի առկայության, հանգեցնում է մի շարք հիմնական իրավունքների խախտման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմի պատշաճ երաշխավորման նպատակով անհրաժեշտ է անձին անազատության մեջ պահելու ժամկետը հաշվարկել նրան փաստացի ազատությունից զրկելու, այլ ոչ Ոստիկանության բաժին մուտք գործելու կամ վարչական ձերբակալման ենթարկելու կապակցությամբ արձանագրություն կազմելու պահից: Իսկ համապատասխան գործողություններն ավարտելուց հետո անհրաժեշտ է անձին ազատ արձակել՝ անկախ օրենսդրությամբ ամրագրված 3 ժամը լրանալու հանգամանքից:

3. Ազատությունից զրկված անձի ընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի՝ հավաքների ընդհանուր դիտարկման արդյունքները վկայել են վարչական ձերբակալման մասին իր ընտրած անձին անհապաղ տեղեկացնելու սահմանադրական իրավունքի մասին չտեղեկացնելու ու այդ իրավունքի պատշաճ իրացումը չապահովելու խնդրի շարունակականության մասին:

Վարչական ձերբակալման ենթարկված անձինք որոշ դեպքերում Պաշտպանի աշխատակազմի՝ Ոստիկանության բաժիններ այցելած ներկայացուցիչներից են տեղեկացել այս իրավունքի վերաբերյալ:

Ընդ որում՝ ՄԻՊ ներկայացուցիչների միջամտությամբ նշված սահմանադրական իրավունքի իրացումն ապահովվել է, և վարչական ձերբակալման ենթարկված անձինք հնարավորություն են ունեցել վարչական ձերբակալման մասին տեղյակ պահելու իրենց նախընտրած անձին: Այդպիսի դեպք է գրանցվել, օրինակ, 2024 թվականի ապրիլի 24-ին տեղի ունեցած հավաքի ընթացքում իրականացված վարչական ձերբակալումների շրջանակներում: Խնդրի մասին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել են ազատությունից զրկված անձինք ոստիկանության բաժիններում՝ վարչական ձերբակալման ենթարկված անձանց

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Հոդված 27. Անձնական ազատությունը 3. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

տեսակցելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների այցերի ընթացքում:

Չնայած արձանագրված որոշակի առաջընթացին, ինչի մասին է վկայում նաև այս խնդրի առնչությամբ Պաշտպանին ներկայացված դեպքերի քանակի նվազումը, միևնույն է խնդրի շարունակականությունն ու արդիականությունը արձանագրվել են նաև 2024 թվականին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է գործնականում ապահովել ազատությունից զրկված անձին իր ընտրած անձին իր անազատության մեջ գտնվելու մասին անհապաղ տեղյակ պահելու սահմանադրական իրավունքի մասին իրազեկումը և այդ իրավունքի պատշաճ իրացումը:

4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ

2024 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների մշտադիտարկումը ցույց է տվել, որ ամենատարածված խնդիրներից է ազատությունից զրկելիս անձանց նկատմամբ առերևույթ անհամաչափ ուժի գործադրումն ու որոշ դեպքերում՝ անհարգալից վերաբերմունքը: Ընդ որում՝ խնդիրը վեր է հանվել ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկման արդյունքում: Խնդրի մասին Պաշտպանին ներկայացվել են նաև ահազանգեր, այդ թվում՝ թեժ գծի միջոցով:

2024 թվականի ապրիլ, մայիս և հունիս ամիսներին ՀՀ տարածքում տեղի ունեցած բողոքի ակցիաների և հավաքների իրականացման ժամանակ անձանց ձերբակալման կապակցությամբ իրականացված արագ արձագանքման այցերի ընթացքում արձանագրվել են Ոստիկանության ծառայողների կողմից առերևույթ ոչ համաչափ ուժի, երբեմն նաև բռնության գործադրման դեպքեր՝ հատկապես ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկապահակետային ծառայության հատուկ նշանակության գումարտակի ծառայողների և Ոստիկանության ներքին զորքերի ծառայողների կողմից:

2024 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների՝ Ոստիկանության տարբեր բաժիններ կատարած այցերի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձինք պնդել են, որ վարչական ձերբակալության դեպքերի մեծամասնության ընթացքում ձերբակալման ենթարկված անձանց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժ է գործադրվել: Այս խնդրի մասին ազատությունից զրկված անձինք բարձրացրել են 2024 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից դիտարկված բազմաթիվ հավաքների ընթացքում, այդ թվում՝ 2024 թվականի ապրիլի 23-26-ին, մայիսի 2-ին, 9-14-ին, 16-ին, 20-ին, 27-ին, 31-ին, հունիսի 12-ին:

Ընդ որում՝ ազատությունից զրկված անձինք հայտնել են Ոստիկանության ներկայացուցիչների կողմից ոչ միայն վարչական ձերբակալման ենթարկելիս, այլև ոստիկանական ավտոմեքենայի մեջ անհամաչափ ֆիզիկական ուժ գործադրելու վերաբերյալ տեղեկություններ: Ավելին, ըստ ազատությունից զրկված անձանց՝ վերջիններիս նկատմամբ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերվել ինչպես

վարչական ձերբակալման ենթարկելու ժամանակ, այնպես էլ ոստիկանական ավտոմեքենայի մեջ ու Ոստիկանության բաժիններում:

Այսպես, օրինակ՝ 2024 թվականի ապրիլի 23-ին ՀՀ Տավուշի մարզում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման շրջանակներում իրականացված ակցիաների ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում անձինք հայտնել են վարչական ձերբակալման ենթարկելիս իրենց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժի գործադրման դեպքերի մասին, ընդ որում՝ նկարագրվել են ֆիզիկական ուժի գործադրման տարբեր դեպքեր՝ Ոստիկանության 10, 7 կամ 6 ծառայողների անմիջական մասնակցությամբ: Ազատությունից զրկված անձանց մեծամասնությունը հայտնել է, որ իրենց նկատմամբ կիրառվել է ֆիզիկական անհամաչափ ուժ, վարչական ձերբակալման են ենթարկվել՝ ֆիզիկական բիրտ ուժի գործադրմամբ: Ըստ վերջինների՝ Ոստիկանության ծառայողները բազմաթիվ հարվածներ են հասցրել նրանց մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Ըստ ազատությունից զրկված անձանցից մեկի՝ ականատես է եղել, թե ինչպես են ծեծում հավաքի մեկ այլ մասնակցի, ում մինչև Ոստիկանության բաժին բերելը, առողջական վիճակի վատթարացմամբ պայմանավորված, տեղափոխել են բժշկական կենտրոն: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները նույն օրն այցելել են բժշկական կենտրոն ու տեղեկացել, որ նշված անձի մոտ ախտորոշվել է գլխուղեղի ցնցում, գանգուղեղային փակ վնասվածք:

2024 թվականի մայիսի 9-ից 14-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ տարածքում իրականացված հավաքների ընթացքում ևս ազատությունից զրկված անձինք Պաշտպանի ներկայացուցիչներին ներկայացրել են առերևույթ բռնության գործադրման դեպքերի առնչությամբ տեղեկություններ: Մայիսի 11-ին Ոստիկանության բաժին կատարված այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչը հանդիպել է ազատությունից զրկված անձին անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով հրավիրված շտապ բժշկական օգնության ծառայության բժիշկների հետ՝ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար: Վերջիններիս կողմից տրամադրված տեղեկությունները հաստատել են անձի մոտ մարմնական վնասվածքների առկայությունը: Նույն օրը ազատությունից զրկված անձի կողմից Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին ներկայացվել է մեկ այլ դեպք Ոստիկանության ծառայողների կողմից առերևույթ բռնության գործադրման մասին: Ընդ որում՝ ստացված մարմնական վնասվածքների առկայության փաստը հաստատել ու այդ մասին Պաշտպանի ներկայացուցիչներին են հայտնել շտապ բժշկական օգնություն ցուցաբերած բժիշկները: Արդյունքում արձանագրված մարմնական վնասվածքի հիմքով ազատությունից զրկված անձը տեղափոխվել է բժշկական կենտրոն:

2024 թվականի մայիսի 27-ին տեղի ունեցած հավաքի ժամանակ, իրականացված վարչական ձերբակալումներով պայմանավորված՝ Պաշտպանի արագ արձագանքման խումբը նույն օրը այց է իրականացրել նաև բժշկական կենտրոններից մեկում հոսպիտալացված անձի, ով առանձնազրույցի ընթացքում հայտնել է, որ Ոստիկանության ծառայողներն իրեն դուրս են բերել ավտոմեքենայից, գցել գետնին և ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցրել մարմնի տարբեր հատվածներին: Հավելել է, որ նշվածի արդյունքում գլխի շրջանում պատռվածք է ստացել և ունի ցավեր մեջքի հատվածում: Ըստ առանձնազրույցի ընթացքում

հայտնած տեղեկությունների՝ նշվածից հետո իրեն տեղափոխել են Ոստիկանության բաժին, որտեղ, չնայած գլխի չդադարող արնահոսությանը, պահվել է երկու ժամ, որից հետո միայն տեղափոխվել է բժշկական հաստատություն:

Նույն օրը իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է դեպք, երբ Ոստիկանության ծառայողների կողմից առերևույթ ֆիզիկական ուժի գործադրմամբ բերման է ենթարկվել ՀՀ ԱԺ պատգամավոր: Ավելի ուշ, ըստ Ոստիկանությունից ստացված պարզաբանման՝ պատգամավորը ոստիկանական ավտոմեքենայից ազատ է արձակվել:

2024 թվականի ընթացքում արձանագրվել է նաև դեպք, երբ Ոստիկանության ծառայողներն արգելանքի են վերցրել ՀՀ ԱԺ պատգամավորի, նրան տեղափոխել են Ոստիկանության բաժին, իսկ ավելի ուշ հայտնել, որ ինքը բերվածի, վարչական ձերբակալվածի կամ որևէ այլ կարգավիճակ չունի:

Նշված դեպքերին Պաշտպանն անդրադարձել է նաև հրապարակային կերպով՝ ընդգծելով, որ ՀՀ ԱԺ պատգամավորն օժտված է սահմանադրաիրավական հատուկ կարգավիճակով և որ վերջինս ազատությունից կարող է զրկվել օրենսդրությամբ սահմանված հատուկ ընթացակարգով՝ մտահոգիչ համարելով դեպքն ու նշված պրակտիկայի առկայությունը:

2024 թվականի մայիսի 31-ին Երևան քաղաքում իրականացվող ակցիայի շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել Ոստիկանության բաժիններ, որի շրջանակներում տեղի ունեցած առանձնազրույցի ընթացքում ազատությունից զրկված անձանցից մեկը հայտնել է, որ նույն օրը Արտաքին գործերի նախարարության վարչական շենքի դիմաց իրականացվող ակցիայի ընթացքում իրենից քիչ այն կողմ Ոստիկանության ներքին զորքերի 8 ծառայողներ, քաշքշելով, բիրտ ուժի կիրառմամբ ազատությունից զրկել են մեկ այլ անձի, պատռել են հագուստը: Նշվածի կապակցությամբ առանձնազրույցին մասնակցած անձը միջամտել է, և սկսվել է հրմշտոց, որի ընթացքում Ոստիկանության ներքին զորքերի ծառայողները, բիրտ ֆիզիկական ուժ կիրառելով, իրեն ևս ձերբակալել են: Նշել է, որ իրեն հրել են Ոստիկանության ծառայողների կազմած պատնեշից ներս և նախարարության բակում գցել գետնին ու ծեծի ենթարկել՝ ձեռքերով, ոտքերով և ռետինե մահակներով հարվածներ հասցնելով մարմնի տարբեր հատվածներին, այդ թվում՝ գլխին: Ընդ որում՝ ըստ պնդման՝ Ոստիկանության ծառայողներն իր հասցեին հնչեցրել են հայհոյանքներ և վիրավորական բնույթի այլ արտահայտություններ, անհարգալից վերաբերմունք են ցուցաբերել իր նկատմամբ, այդ թվում՝ Ոստիկանության տրանսպորտային միջոցում գտնվելու ընթացքում: Ազատությունից զրկված անձի հավելմամբ՝ Ոստիկանության բաժնի ծառայողները հրավիրել են շտապ բժշկական օգնության ծառայության խումբ, որի կողմից իրականացվել են առաջին բուժօգնության ծառայություններ, վիրակապվել է գլխի ճակատային հատվածը, առաջարկվել է հետագա հետազոտությունների և բուժման նպատակով տեղափոխվել բժշկական կենտրոն:

2024 թվականի հունիսի 12-ին ևս Պաշտպանի աշխատակազմը իրականացրել է Երևան քաղաքում տեղի ունեցող բողոքի ակցիաների և իրավապահ մարմինների գործողությունների ամբողջական դիտարկում, ինչի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել նաև լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի օգտատերերի հրապարակումները: Իրականացվող մշտադիտարկման արդյունքում 2024 թվականի հունիսի 12-ին արձանագրվել է, որ Բաղրամյան պողոտայի, Պռոշյան

և Դեմիրճյան փողոցների հատվածում Ոստիկանության ծառայողների և հավաքի մասնակիցների միջև տեղի է ունեցել հրմշտոց և բախում, ինչի համատեքստում արձանագրվել են դրվագներ, որ Ոստիկանության ծառայողները, առերևույթ անհամաչափ ուժի կիրառմամբ և հարվածներ հասցնելով, անձանց զրկել են ազատությունից և տեղափոխել Ոստիկանության տարբեր բաժիններ: Ըստ ազատությունից զրկված անձանցից մեկի՝ Ոստիկանության տրանսպորտային միջոցում գտնվել են վարչական ձերբակալման ենթարկված 8 անձինք և Ոստիկանության մի քանի ծառայողներ, որոնցից երեքը՝ քաղաքացիական հագուստով: Ըստ վերջինի՝ նույն մեքենայում է գտնվել նաև իր հայրը, որի նկատմամբ Ոստիկանության ծառայողներն անհարգալից վերաբերմունք են դրսևորել, ֆիզիկական ուժ են կիրառել վարչական ձերբակալման ենթարկված անձանց նկատմամբ, քաշքշել թևերից և հագուստից, հնչեցրել հայհոյանքներ[494]:

Արդյունքում, և՛ Պաշտպանի ու աշխատակազմի այցերի ընթացքում, և՛ Պաշտպանին ներկայացված ահազանգերի շրջանակներում բարձրացվել են Ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ֆիզիկական ուժի՝ առերևույթ բռնության գործադրման ու դրա հետևանքով իրերի վնասման ու մարմնական վնասվածքներ պատճառելու վերաբերյալ բազմաթիվ դեպքեր, որոնց մի մասն արձանագրվել է նաև շտապ բժշկական օգնության ցուցաբերման համատեքստում:

Ներկայացվածի հետ մեկտեղ, հավաքների ընդհանուր դիտարկումների ու Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների արդյունքում հայտնի է դարձել Ոստիկանության ծառայողների կողմից անհանդուրժող, արժանապատվությունը նվաստացնող մոտեցումների ու անհարգալից վերաբերմունքի մասին: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին ազատությունից զրկված անձինք բազմաթիվ դեպքերով ներկայացրել են տեղեկություններ առ այն, որ հավաքի մասնակիցներին վարչական ձերբակալման ենթարկելիս, ինչպես նաև դրանից հետո Ոստիկանության տրանսպորտային միջոցներում ու բաժիններում հասցվում են վիրավորանքներ ու հայհոյանքներ, այդ թվում՝ սեռական բնույթի:

Պաշտպանն ընդգծում է, որ նշված և այլ դեպքերը վկայում են ինչպես առերևույթ անհամաչափ ուժի գործադրման, այնպես էլ Ոստիկանության ծառայողների կողմից անհանդուրժող և արժանապատվությունը նվաստացնող մոտեցումների առկայության մասին:

Իրականացված այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկումների արդյունքում արձանագրված առերևույթ բռնության գործադրման և ոչ համաչափ ուժի կիրառման բոլոր դեպքերի վերաբերյալ համապատասխան գրություններ են հասցեագրվել ՀՀ ներքին գործերի նախարարություն և ՀՀ գլխավոր դատախազություն:

2024 թվականի ապրիլ և մայիս ամիսներին իրականացված հավաքների ժամանակ անձանց նկատմամբ ենթադրյալ բռնություն կիրառելու և իրավունքների խախտման դեպքերի կապակցությամբ ստացվել է պարզաբանում առ այն, որ դրանց առթիվ նախաձեռնվել են քրեական վարույթներ: Ընդ որում՝ մի շարք դեպքերում

---

[494] Նշված դեպքին և 2024 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների շրջանակներում վեր հանված այլ դեպքերի Պաշտպանը անդրադարձել է հրապարակային եղանակով:

քրեական վարույթ նախաձեռնելու առիթ են հանդիսացել Պաշտպանի աշխատակազմից Գլխավոր դատախազությանը հասցեագրած գրություններն ու կից նյութերը: Միևնույն ժամանակ, ՀՀ ներքին գործերի նախարարությունում նախաձեռնվել է 33 ծառայողական քննություն, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման հանգամանքները պարզելու նպատակով, որոնց ընթացքը կասեցվել է և որոշվել է դրանց անդրադառնալ քրեական վարույթով իրավական գնահատականի վերջնական արդյունքներով:

Ըստ Գլխավոր դատախազության՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների, այդ թվում՝ հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունում նախաձեռնվել են թվով 20 քրեական վարույթներ, որոնցով նախաքննությունները շարունակվում են:

Միևնույն ժամանակ, Գլխավոր Դատախազության տեղեկությունների համաձայն՝ 2024 թվականի մայիսի 31-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի շրջակայքում և 2024 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ բողոքի ակցիայի բազմաթիվ մասնակիցների կողմից զանգվածային անկարգություններ, խուլիգանություն կատարելու, պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու դեպքերի առթիվ նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնցից անջատվել և մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել 4 քրեական վարույթներ, որոնք գտնվում են հիմնական դատալսումների փուլում:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում[495] մանրամասն անդրադարձել է այն բոլոր իրավական կարգավորումներին ու չափանիշներին, այդ թվում՝ միջազգային փաստաթղթերում ամրագրված, որոնց պահպանումը առանցքային նշանակություն ունի խաղաղ հավաքների երաշխավորման հարցում:

Այս համատեքստում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում է արձանագրել Հայաստանի դեմ կայացված վճիռներում՝ արձանագրելով, որ անցկացվող հավաքը ցրելը կատարվել է առանց բավարար հիմնավորման, առանց ցրելու մասին նախազգուշացումների և ուժի չհիմնավորված և անհամաչափ գործադրմամբ: Նշվածը, ըստ դատարանի, որպես անհամաչափ միջոց, անցել է ողջամտության այն սահմանները, որը հավաքների ազատությունը սահմանափակելիս կարելի էր ակնկալել իշխանություններից:

---

[495] Տե՛ս առավել մանրամասն, օրինակ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 378-383, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2016 թվականի «Մարդու իրավունքների ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ժամանակ» ուղեցույց[496]
Ոստիկանության կողմից ուժի կիրառումը պետք է մշտապես լինի բացառություն, այլ ոչ թե կանոն: Նախապատվությունը պետք է միշտ տրվի խաղաղ ճանապարհով լարվածության թուլացմանը՝ որպես ուժի կիրառման այլընտրանք օգտագործելով երկխոսությունը, համոզելը և բանակցելը:

Ելնելով վերոգրյալից՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ շարունակում է համակարգային առումով գործադրվել իրավակիրառ այն պրակտիկան, որը խնդրահարույց է ուժի կիրառման համաչափության վերաբերյալ միջազգային իրավական չափանիշների տեսանկյունից:

Հարկ է ընդգծել, որ Պաշտպանը կարևորում է նաև հավաքի մասնակիցների կողմից հավաքի խաղաղ բնույթի և օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է.

✓ շարունակական քայլեր ձեռնարկել, այդ թվում՝ պարբերական վերապատրաստումների միջոցով, Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրումը և վատ վերաբերմունքի դեպքերը բացառելու նպատակով,

✓ իրականացնել անհամաչափ ուժի գործադրման և վատ վերաբերմունքի առերևույթ դեպքերի առնչությամբ պատշաճ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն՝ երաշխավորելով պատասխանատվության անխուսափելիությունը:

5. Հատուկ միջոցների գործադրման իրավաչափության հարցը

Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքներով պարզ է դարձել, որ 2024 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած հավաքի ընթացքում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողները հատուկ միջոցներ, այդ թվում՝ լուսաձայնային նռնակներ են կիրառել հավաքի մասնակիցների նկատմամբ: Նշվածի հետևանքով մի խումբ քաղաքացիներ ստացել են մարմնական վնասվածքներ և տեղափոխվել բժշկական հաստատություն: Այս կապակցությամբ մի շարք ահազանգներ են ստացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին: Պարզվել է, որ հավաքի մասնակիցների կողմից իրականացված գործողությունների արդյունքում վնասվածքներ են ստացել նաև Ոստիկանության ծառայողներ:

Մշտադիտարկման արդյունքներով պայմանավորված՝ Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել Ոստիկանության բաժիններ:

Բացի այդ, Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչներն այց են իրականացրել համապատասխան բժշկական հաստատություն, որտեղ գտնվող

[496] Տե՛ս, Մարդու իրավունքների ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ընթացքում, հասանելի է https://www.osce.org/files/f/documents/c/6/425663.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

անձանց հետ առանձնազրույցների ընթացքում վերջիններս հայտնել են, որ տարբեր մարմնական վնասվածքներ են ստացել Ոստիկանության ծառայողների կողմից կիրառված հատուկ միջոցների արդյունքում, մինչդեռ իրենք որևէ հակաիրավական գործողություն չեն կատարել:

Ըստ քաղաքացիների պնդման՝ պայթյունի ժամանակ գտնվել են հավաքի կենտրոնական շարքերում: Հավելել են, որ հատուկ միջոցների կիրառման մասին հավաքի մասնակիցները չեն նախազգուշացվել:

Զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեսանյութերի և լուսանկարների ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ հատուկ միջոցների կիրառման հետևանքով մի քանի քաղաքացիներ վերին վերջույթների շրջանում ստացել են վնասվածքներ, իսկ նրանցից մեկը ծանր վնասվածք է ստացել դաստակի շրջանում, մասնավորապես՝ ստացված վնասվածքի պատճառով վիրահատությամբ հեռացվել են նրա երեք մատերը: Մարդու իրավունքների պաշտպանն իր անմիջական ուշադրության ներքո է պահել նշված անձի առողջական վիճակի և տրամադրվող բժշկական օգնությանն առնչվող հարցերը, ինչի համատեքստում նաև հեռախոսազրույց է ունեցել նրա կնոջ հետ:

Բացի դրանից, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են նաև տեղեկություններ առ այն, որ մասնագիտական գործունեություն իրականացնող մի շարք լրագրողներ ևս տուժել են հատուկ միջոցների կիրառման հետևանքով:

Զանգվածային լրատվության միջոցներով տարածվել են տեղեկություններ առ այն, որ Ոստիկանության ծառայողների կողմից կիրառված հատուկ միջոցների պիտանելիության ժամկետը լրացած է եղել: Ըստ որոշ հրապարակումներում տեղ գտած գնահատականների՝ քաղաքացիների և Ոստիկանության ծառայողների ստացած վնասվածքների ծանրության պատճառը հենց զինամթերքի ժամկետանց լինելն է: Նշվածի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև ահազանգներ:

Հավաքի ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից հատուկ միջոցների գործադրման իրավաչափության, կիրառված հատուկ միջոցների տեսակների վերաբերյալ հանրությանն իրավասու մարմինների կողմից հստակ տեղեկատվություն չտրամադրելու, այդ թվում՝ ժամկետանց հատուկ միջոցներ կիրառված լինելու հարցերի վերաբերյալ, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են մի շարք մտահոգություններ: Նշված խնդիրների վերաբերյալ նաև եղել են բազմաթիվ հրապարակումներ, ավելին՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կողմից բարձրացվել է հարց առ այն, որ նշված դեպքի, ներառյալ՝ կիրառված հատուկ միջոցների տեսակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ բազմաթիվ հարցումներ են ուղարկվել իրավասու մարմիններին, սակայն որևէ բովանդակային պատասխան չի տրամադրվել հարցումներ կատարած լրատվական միջոցներին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ 2024 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած հավաքի անկախ մշտադիտարկման ու այդ համատեքստում զանգվածային լրատվամիջոցներում և սոցիալական ցանցերում առկա հրապարակումների ու տեսանյութերի ուսումնասիրության արդյունքում Պաշտպանի կողմից կայացվել է որոշում սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու նպատակով:

2024 թվականի հունիսի 12-ին տեղի ունեցած հավաքի ընթացքում հատուկ միջոցների կիրառման և Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության դեպքերի ու դրանց պատշաճ քննության ապահովման վերաբերյալ գրություններ են հասցեագրվել Գլխավոր դատախազություն, Ներքին գործերի նախարարություն ու Քննչական կոմիտե:

Ոստիկանության ծառայողների գործողությունների, ինչպես նաև հատուկ միջոցների գործադրման կապակցությամբ իրավասու պետական մարմիններին հասցեագրված գրությունների կապակցությամբ ստացվել է պարզաբանում, որ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի և Դեմիրճյան փողոցի խաչմերուկում տեղի ունեցած բախումների կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվում է ծառայողական քննություն, իսկ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում նույն փաստի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաձեռնված քրեական վարույթներով քննության իրականացումը շարունակում է գտնվել Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Հարկ է նկատել, որ հավաքների ընթացքում կիրառվող հատուկ միջոցների կիրառման հարցերն ու իրավաչափության սահմանները կարգավորվում են միջազգային իրավական կարգավորումներով ու չափանիշներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը
●Անկախ նրանից, թե Ոստիկանության՝ հավաքներին միջամտությունը պայմանավորված է բնականոն կյանքի խաթարումը, թե հավաքի մասնակիցների բռնի գործողությունները կանխելու նպատակով, Ոստիկանության կողմից ուժի գործադրումը պետք է համաչափ լինի անկարգությունների կանխմանն ու այլ անձանց իրավունքների պաշտպանությանը[497]: ●Հավաքը ցրելու հատուկ միջոցների կիրառումը պահանջում է հատուկ ու բավարար հիմնավորում[498]:

Հավաքների ընթացքում կիրառվող հատուկ միջոցների կիրառման հարցերը կարգավորվում են նաև ներպետական օրենսդրությամբ.

Այսպես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ Ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ

[497]Տե՛ս, Օյա Ատամանն ընդդեմ Թուրքիայի (Oya Ataman v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74552/01, կետ 41-43, Լագունա Գուզմանն ընդդեմ Իսպանիայի (Laguna Guzman v. Spain) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 41462/17, կետ 54:

[498] Տե՛ս, Կրթության և գիտության աշխատողների միությունն ընդդեմ Թուրքիայի (Eğitim ve Bilim Emekçileri Sendikasi and Others v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 20347/07, կետ 108:

ապահովել: Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

Ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Նույն հոդվածի համաձայն՝ Ոստիկանության ծառայողը պարտավոր է նաև ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի, ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն՝ բժշկական կազմակերպություններին անհապաղ հայտնելով մարմնական վնասվածքների ու մահվան բոլոր դեպքերի մասին: Ոստիկանությունը պարտավոր է սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերի մասին սեղմ ժամկետում հայտնել տուժածների մերձավոր ազգականներին: Ոստիկանության պետը ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն գործադրելու (օգտագործելու) հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է դատախազին:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները գործադրվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), ինչպես նաև խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրային միջոցառումները դադարեցնելու ժամանակ, իսկ մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր:

Բացի դրանից, ՀՀ ոստիկանության պետի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցները գործադրելու և դրանք ոստիկանության ծառայողներին հատկացնելու, պահպանելու և պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգը սահմանելու մասին» 2011 թվականի մայիսի 30-ի թիվ 1-Ն հրամանի հավելվածի համաձայն՝ հատուկ միջոցների գործադրումից առաջ ոստիկանության ծառայողը պարտավոր է բարձրաձայն (իսկ նշանակալի հեռավորության դեպքում՝ բարձրախոս սարքերի միջոցով և հասկանալի լեզվով) նախազգուշացնել դրանք գործադրելու մտադրության մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ

ոստիկանության ծառայողի կյանքին ու առողջությանը, կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է: Հատուկ միջոցների գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում ոստիկանության ծառայողը պարտավոր է դրսևորել զսպվածություն, ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի, ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն՝ բժշկական կազմակերպություններին անհապաղ հայտնելով մարմնական վնասվածքների ու մահվան բոլոր դեպքերի մասին:

Նույն հրամանի 2024 թվականի հունիսի 12-ի դրությամբ գործող կարգավորումների համաձայն՝ Ոստիկանության ծառայողներին հատուկ միջոցներ տրամադրելու թույլտվություն տալիս են

1) ակտիվ պաշտպանության միջոցներ՝ ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանման պետերը.

2) հատուկ միջոցառումների իրականացման միջոցներ, այդ թվում՝ ձեռքի գազային նռնակներ, ծխագլանակներ, լուսաձայնային նռնակներ և սարքավորումներ, դ) օդակաթիլային փոշեցրիչ, գազային նռնակներով և ռետինե գնդակներով փամփուշտներ և այլն՝ ՀՀ ոստիկանության պետը կամ նրա առաջին տեղակալը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի հրամանով լիազորված անձինք:

Միևնույն ժամանակ՝ «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման» ուղեցույցում[499] վերը նշված կարգավորումներից բացի սահմանված է, որ ուժ գործադրելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ երկու սկզբունքները՝

ա) ուժի գործադրման իրավական հիմքը - «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի IV գլխի 29-34-րդ հոդվածներով նախատեսված հիմքերի և պայմանների առկայությունը.

բ) գործադրվող ուժի համաչափությունը–ոստիկանության կողմից ուժային միջամտությունը (արձագանքը) պետք է առավելագույնս ադեկվատ (համապատասխան) լինի ստեղծված իրադրությանը և առկա վտանգին՝ ապահովելով հասցվող վնասի նվազագույն աստիճան:

Նույն ուղեցույցի համաձայն՝ ուժի գործադրման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ոստիկանության ծառայողները պարտավոր են հաշվի առնել իրավիճակի առանձնահատկությունները և դեպքերի զարգացման հնարավոր ընթացքը, և մի շարք այլ գործոններ նույնպես կարող են իրենց համակցության մեջ էապես ազդել այս գործընթացի վրա:

Վերոնշյալ իրավակարգավորումներով սահմանվում են նաև հատուկ միջոցների հետ վարվելու անվտանգության պահանջները: Միևնույն ժամանակ, «Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» Առողջապահության նախարարի 2012 թվականի ապրիլի 20-ի թիվ 09-Ն հրամանի 2024 թվականի հունիսի 12-ի դրությամբ գործող

---

[499] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://old.police.am/images/Uxecuyc-N2-arm.pdf.pdf, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կարգավորումներով սահմանված չափանիշների համաձայն՝ լուսաձայնային և գազային նռնակները կարող են կիրառվել բաց տեղանքում՝ մարդուց նվազագույնը 2,5 մետր հեռավորության վրա, հատուկ միջոցների առանձին տեսակների պարագայում՝ 40 կամ 100 մետր հեռավորության վրա:

Հարկ է նկատել, որ ըստ ՆԳՆ-ի՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի հատուկ միջոցների կիրառման ստորաբաժանումների զինծառայողները հատուկ միջոցների կիրառման իրավունքի հավաստագիր ստանալու համար մասնակցում են ուսումնամեթոդական հավաքի, որի ընթացքում հանձնում են ստուգարքներ՝ տեսական գիտելիքների իմացության և հատուկ միջոցների գործնական կիրառման վերաբերյալ: Այդ հավաքին ընդգրկված և դրական գնահատականներ ստացած զինծառայողներին հավաքի ավարտից հետո հատկացվում են հատուկ միջոցների կիրառման իրավունքի հավաստագրեր:

Ինչ վերաբերում է 2024 թվականի ընթացքում հատուկ միջոցների գործադրման չափանիշների և Ոստիկանության ծառայողների հմտությունների կատարելագործմանն ուղղված՝ ձեռնարկված քայլերին, ապա նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ 2024 թվականի հոկտեմբերի 24-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է «Ոստիկանության գվարդիայի մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման ոստիկանական մասնագիտացված նոր ծառայություն՝ Ոստիկանության գվարդիա:

Ոստիկանության գվարդիայի խնդիրներն են լինելու՝ հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը, կարևորագույն նշանակության օբյեկտների պետական պահպանությունը բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը, ռազմական և արտակարգ դրությունների իրավական ռեժիմների ապահովմանը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը, հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելը, քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելը: «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքն ամբողջական ուժի մեջ կմտնի և ոստիկանության գվարդիան կձևավորի 2025 թվականի նոյեմբերի 1-ին:

«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով վերահիմաստավորվել են գվարդիայի ծառայողների կողմից հարկադրանքի, ուժային միջոցների, այդ թվում՝ հատուկ միջոցների գործադրման իրավաչափության և համաչափության պայմանները՝ դրանք համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներին: Ընդ որում, այդ իրավակարգավորումները տեղ են գտել նաև «Ոստիկանության մասին» օրենքում և կիրառելի են դառնալու ոստիկանության բոլոր ծառայողների կողմից: Ոստիկանության զորքերի զինծառայողները ոստիկանության գվարդիայի ծառայողի պաշտոնում նշանակվելու են հատուկ պատրաստություն անցնելուց հետո և հետագայում անցնելու են պարբերական վերապատրաստումներ:

Միաժամանակ, ըստ նախարարության, Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակներում, ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման համար մշակվում են հատուկ դասընթացներ:

Նաև, ԱՄՆ դեսպանատան ICITAP առաքելության աջակցությամբ մշակվել է ոստիկանության գվարդիայի և, առհասարակ, ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման մեթոդական ուղեցույցը:

2024 թվականի հունիսի 12-ին հատուկ միջոցների կիրառման համատեքստում Պաշտպանը խնդրահարույց է համարում այն հանգամանքը, որ մինչ այժմ հանրությանը չի տրամադրվել դեպքի հանգամանքների առնչությամբ այնպիսի պատշաճ տեղեկատվություն, որը հնարավորություն կտար նվազագույն պատկերացում կազմել հատուկ միջոցի կիրառման հիմքերի և իրավաչափության մասին: Ավելին, թե՛ կիրառված հատուկ միջոցի տեսակի, թե՛ մնացյալ հանգամանքների վերաբերյալ տեղեկատվությունը դիտարկվում է նախաքննական գաղտնիքի ներքո՝ սահմանափակելով վերջինիս հանրային հասանելիությունը: Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգավորումների դերը համապատասխան գործընթացները պատշաճ կանոնակարգելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծում է, որ դրանք չեն կարող վերածվել հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի առնչությամբ հանրության տեղեկացվածությունը սահմանափակելու կամ դա փաստացի արդարացնելու միջոցի: Ավելին, նշված գործերով անհրաժեշտ է երաշխավորել շուտափույթ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ինչին անդրադարձ է կատարվում սույն բաժնի այլ պարագրաֆի շրջանակներում:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել հատուկ միջոցների կիրառման իրավաչափության հարցի պատշաճ քննություն,***
- ✓ ***ապահովել կիրառված հատուկ միջոցների տեսակի և քանակի, ինչպես նաև կիրառման հիմքերի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը,***
- ✓ ***շարունակաբար իրականացնել վերապատրաստումներ հատուկ միջոցների կիրառման սահմանված չափանիշների և կարգի պահպանման վերաբերյալ:***

6. Լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս վերջիններիս անվտանգության երաշխավորման հարցերը

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ տարածքում տեղի ունեցած բողոքի ակցիաների և իրավապահ մարմինների գործողությունների ամբողջական դիտարկման, այդ թվում՝ լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ իրենց մասնագիտական գործունեություն իրականացնելիս Ոստիկանության ծառայողների գործողությունների հետևանքով տուժել են նաև լրագրողներ:

Այսպես, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են տեղեկություններ առ այն, որ 2024 թվականի հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայի, Պռոշյան և Դեմիրճյան փողոցների հատվածում Ոստիկանության ծառայողների և հավաքի մասնակիցների միջև տեղի ունեցած բախման արդյունքում վնասվածքներ են ստացել իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնող զանգվածային լրատվության

միջոցների ներկայացուցիչներ: Զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկությունների համաձայն՝ Ոստիկանության գործողությունների արդյունքում տուժել են «AlphaNews» կայքի լրագրողն ու օպերատորը, վնասվել է խմբագրության տեսախցիկը և այլ սարքեր, որոնց մի մասը կորել է[500]: Բացի այդ, Բաղրամյան պողոտայում, Ոստիկանության ծառայողների գործողությունների հետևանքով վնասվել է «ArmLur.am» կայքի օպերատոր ոտքը[501]:

Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է նաև տեղեկություն առ այն, որ «Mediahub» կայքի լրագրողը Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած հրմշտոցի արդյունքում ընկել է գետնին, որից հետո բժշկական կենտրոնում իրականացված հետազոտությունների արդյունքում նրա մոտ արձանագրվել է մարմնական վնասվածք:

2024 թվականի ապրիլի 27-ին ևս զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է տարածվել այն մասին, որ նույն օրը Ոստիկանության ծառայողների կողմից հավաքի ընթացքում լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտվել ու բռնություն է կիրառվել Oragir.News կայքի լրագրողի նկատմամբ, ով նշվածի արդյունքում վնասվածք է ստացել ոտքի շրջանում:

Լրագրողների ազատ գործունեության ու մասնագիտական օրինական գործունեության անխոչընդոտ իրականացման երաշխավորումը կարևորագույն նշանակություն ունի խաղաղ հավաքների իրավունքի լիարժեք իրացման համար: Նշվածն իր հերթին արտացոլված է միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում.

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 27-րդ հոդվածի (հավաքների ազատություն) 37-րդ ընդհանուր մեկնաբանություն
Լրագրողների, իրավապաշտպանների, ընտրությունների դիտորդների և հավաքների մշտադիտարկմամբ կամ լուսաբանմամբ զբաղվող այլ անձանց դերը հատկապես կարևոր է խաղաղ հավաքների իրավունքի լիարժեք իրացման համար: Վերջիններս ենթակա են պաշտպանության Դաշնագրի ներքո և իրենց գործունեությունը չի կարող արգելվել կամ անհամաչափ կերպով սահմանափակվել, այդ թվում՝ իրավապահ մարմինների գործողությունների մշտադիտարկման համատեքստում: Նշված անձինք չպետք է ենթարկվեն ճնշումների, հաշվեհարդարի կամ այլ բռնությունների, իսկ նրանց սարքավորումները չպետք է առգրավվեն կամ վնասվեն: Նույնիսկ եթե հավաքն ապօրինի է հայտարարվում կամ ցրվում է, դա չի դադարեցնում մշտադիտարկում իրականացնելու իրավունքը: Մարդու իրավունքների ազգային հաստատությունների և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից հավաքների մշտադիտարկում իրականացնելու պրակտիկան համարվում է լավ փորձ:

[500] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://t.me/srbazan_payqar/1455, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[501] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://t.me/armluram/30473, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նույն մեկնաբանությամբ ընդգծվում է, որ ոստիկանության ծառայողները հավաքների ընթացքում պետք է հարգեն և ապահովեն հավաքի կազմակերպիչների և մասնակիցների հիմնարար իրավունքները՝ միաժամանակ պաշտպանելով, ի թիվս այլնի, լրագրողներին, դիտորդներին, բժշկական անձնակազմին և հանրության այլ անդամներին:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարական[502]
Պետությունները պետք է հաշվի առնեն լրագրողների և այլ մեդիա գործիչների դերի յուրահատուկ բնույթը և նրանց ժողովրդավարական արժեքը հատկապես որոշակի հարցերում, ինչպիսիք են ճգնաժամային իրավիճակները, ընտրական շրջանները, հավաքներն ու հակամարտության գոտիները: Այս իրավիճակներում հատկապես կարևոր է, որ իրավապահ մարմինները հարգեն լրագրողների և մեդիա ոլորտի այլ մասնագետների դերը՝ ցույցերն ու այլ իրադարձություններ լուսաբանելիս: Խրախուսվում է պետական մարմինների և լրագրողների միջև երկխոսությունը՝ ոստիկանության և մեդիայի ներկայացուցիչների միջև հնարավոր լարվածությունը կամ բախումները կանխելու նպատակով:

Նույն փաստաթղթով ընդգծվում է նաև լրագրողական գործունեության և լրագրողների անվտանգության երաշխավորման նպատակով պետական մարմինների՝ լրագրողների կարգավիճակը պարզելուն ուղղված ջանքեր գործադրելու անհրաժեշտությունը:

Նշվածից բացի, նույն փաստաթղթում նշվում է, որ պետության գործողությունները, որոնք չկարգավորված են և կամայական, անհամատեղելի են մարդու իրավունքների արդյունավետ հարգանքի ու պաշտպանության հետ: Սա նշանակում է, որ, բացի ներպետական օրենսդրությամբ թույլատրելի համարվելուց, ոստիկանական գործողությունները, այդ թվում՝ հավաքների վերահսկման համատեքստում, պետք է բավարար չափով կարգավորված լինեն նույն օրենսդրությամբ՝ ամրագրելով համապատասխան և արդյունավետ երաշխիքներ, որոնք կանխում են կամայականությունը, ուժի չարաշահումը և նույնիսկ պատահարները:

Այսինքն, ոստիկանական ուժերի գործունեության համատեքստում հատուկ ուշադրության պետք է արժանանան կամայականությունների, ուժի չարաշահման և պատահարների կանխման հարցերը: Վերոնշյալ չափանիշները հավաքների ժամանակ լրագրողների պաշտպանության համատեքստում դիտարկելիս, ստացվում է, որ պետությունը պետք է ներդնի պրոակտիվ մեխանիզմներ, որոնք կպաշտպանեն լրագրողներին իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս՝

[502] Տե՛ս, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարականը:

ապահովելով հատուկ երաշխիքներով, որպեսզի ոստիկանությունը կամ որևէ այլ ուժ չչարաշահի իր գործիքակազմը, նույնիսկ լարված իրավիճակներում, օրինակ՝ հավաքների ժամանակ: Պետության ներկայացուցիչները պետք է հաշվետու լինեն իրենց գործողությունների համար, իսկ լրագրողներին պետք է տրվի հատուկ պաշտպանություն, որպեսզի նրանք կարողանան ազատորեն և անվտանգ կերպով կատարել իրենց աշխատանքը:

Վերոշարադրյալի համատեքստում, հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս է ընդգծել զանգվածային լրատվության միջոցների առանցքային դերակատարությունը ժողովրդավարական հասարակությունում՝ այս համատեքստում պահանջելով նրանց անխոչընդոտ մասնագիտական գործունեության անհրաժեշտ երաշխիքների ապահովում ու լրագրողների նկատմամբ հավաքների ընթացքում դրսևորված բռնության գործերով պատշաճ քննության իրականացում: Վերը շարադրված դեպքերն ու նկարագրված միջազգային չափանիշները հիմք են տալիս եզրակացնելու, որ, չնայած որոշ զարգացումներին, այս առումով Հայաստանի Հանրապետությունում դեռևս շարունակում են առկա լինել խնդիրներ, որոնք ունեն պատշաճ հասցեավորման անհրաժեշտություն:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ անհրաժեշտ է ապահովել մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս լրագրողների ու լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգությունը հավաքների ընթացքում, իսկ օրենսդրությամբ արգելված դեպքերի առկայության պարագայում իրականացնել գործերով պատշաճ քննություն:

7. Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության պատշաճ գնահատման հարցը

2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած հավաքների ընթացքում արձանագրված բոլոր խնդիրների, ներառյալ՝ առերևույթ բռնության, անհամաչափ ուժի գործադրման, ինչպես նաև 2024 թվականի հունիսի 12-ի դեպքերի, այդ թվում՝ հատուկ միջոցների կիրառման առնչությամբ պարզաբանումներ են պահանջվել ՀՀ ներքին գործերի նախարարությունից, Գլխավոր դատախազությունից և Քննչական կոմիտեից: Իրավասու մարմիններին հարցադրումներ են ներկայացվել, ի թիվս այլնի, նախաձեռնված քրեական վարույթների ընթացքը պարզելու նպատակով: Նշվածի կապակցությամբ՝

Ըստ Գլխավոր Դատախազության՝

2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների, այդ թվում՝ հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունում նախաձեռնվել են թվով 20 քրեական վարույթներ, որոնցով նախաքննությունները շարունակվում են:

2024 թվականի մայիսի 31-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի շրջակայքում և 2024 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների

ժամանակ բողոքի ակցիայի բազմաթիվ մասնակիցների կողմից զանգվածային անկարգություններ, խուլիգանություն կատարելու, պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներից անջատվել և մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել 4 քրեական վարույթներ, որոնք գտնվում են հիմնական դատալսումների փուլում:

2024 թվականի մայիսի 31-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի շրջակայքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ 5 անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, այդ թվում՝ 4 անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 1 անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով:

2024 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ 17 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, այդ թվում՝ 16-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 1 անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2024 թվականի մայիսի 31-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի շրջակայքում և 2024 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քրեական վարույթներով նախաքննությունը շարունակվում է:

Ավելին, 2024 թվականի ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից անձանց նկատմամբ բռնություն գործադրելու առերևույթ դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթների վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ քննարկվող ժամանակահատվածում նախաձեռնվել է 224 քրեական վարույթ (115-ը ՀՀ ՔՕ 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 109-ը՝ 450-րդ հոդվածի հատկանիշներով): Քրեական հետապնդում է հարուցվել ոստիկանության 3 ծառայողների նկատմամբ 3 քրեական վարույթով (1-ը՝ ՀՀ ՔՕ 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 2-ը՝ 450-րդ հոդվածի հատկանիշներով): Նշված վարույթներից դատարան չեն ուղարկվել, մեղադրական դատավճիռներ չեն կայացվել: Երկու անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ռեաբիլիտացիոն հիմքով, 1 անձի վերաբերյալ քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

<u>Ըստ քննչական կոմիտեի՝</u>

2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների, այդ թվում՝ հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ նախաձեռնվել են 2 քրեական վարույթներ, որոնք միացվել են մեկ վարույթում: Նշված քրեական վարույթից իրադարձություններին մասնակից 17 անձի մասն անջատվել է և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարան՝ ըստ էության քննելու համար: Դեպքերի մյուս մասնակիցների ինքնությունները պարզելու դրվագներով նախաքննությունը շարունակվում է:

Բացի այդ, 2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների, այդ թվում՝ հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների

կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունում նախաձեռնվել են թվով 20 քրեական վարույթներ, որոնցով նախաքննությունը շարունակվում են:

Բացի այդ, 2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների վերաբերյալ նախաձեռնվել են 3 քրեական վարույթներ, որոնցից 2 քրեական վարույթներով յուրաքանչյուրից առանձնացվել են 2-ական քրեական վարույթներ (ընդհանուր 4 քրեական վարույթ), որոնք մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, իսկ նշված 3 քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

Միևնույն ժամանակ, ըստ Քննչական կոմիտեի 2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների, այդ թվում՝ հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներով որևէ ոստիկանության ծառայողի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել:

Հարցադրումներ են ներկայացվել նաև Ներքին գործերի նախարարությանը 2024 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընթացքում Ոստիկանության գործողությունների իրավաչափության, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման վերաբերյալ իրականացված ծառայողական քննությունների և պատասխանատվության միջոցների կիրառման ընթացքը պարզելու նպատակով:

<u>Ըստ ներքին գործերի նախարարության՝</u>

2024 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման հանգամանքները պարզելու նպատակով ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել են 33 կարգապահական վարույթներ, որոնցից՝

- **18-ի** ընթացքը կասեցվել է՝ մինչև նույն փաստերի կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը,
- **15-ը** թողնվել են անհետևանք, որոնցից **12-ի** արդյունքներով ոստիկանության ծառայողների գործողություններում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, իսկ **3** հիմնավորված դեպքերով կարգապահական խախտում թույլ տված ոստիկանության **3** ծառայող ենթակա են եղել կարգապահական տույժի, սակայն ղեկավարվելով «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ վերջիններիս նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել:

Ներկայացված տեղեկությունները վկայում են այն մասին, որ 2024 թվականի ընթացում տեղի ունեցած հավաքների ընթացքում արձանագրված խնդիրների համատեքստում Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության առնչությամբ քրեաիրավական գնահատական չի տրվել:

Փաստացի 2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների, այդ թվում՝ հունիսի 12-ին Երևան քաղաքի Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներով որևէ ոստիկանության ծառայողի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել: Ոստիկանության ծառայողների կողմից անձանց նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի առթիվ նախաձեռնված 224 քրեական վարույթներից քրեական հետապնդում է հարուցվել ոստիկանության ընդամենը 3 ծառայողի նկատմամբ, որից 2-ի դեպքում քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ 1-ի դեպքում նախաքննությունը շարունակվում է: Ավելին, 2024 թվականի դրությամբ Ոստիկանության ծառայողների գործողությունները պատասխանատվության չեն հանգեցրել անգամ կարգապահական վարույթների համատեքստում:

Մինչդեռ, ըստ ներկայացված տվյալների՝ հավաքների մասնակիցների կողմից զանգվածային անկարգություններ, խուլիգանություն կատարելու, պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներով հիմնական դատալսումներ են իրականացվում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներից մեկով G8 գագաթնաժողովում ցուցարարների նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի համար պատասխանատու անվտանգության ուժերի անդամներին պատժելու իրավական կառուցակարգերի անբավարարությունը ճանաչել է խախտում: Դատարանը խախտման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ ոստիկանները, ովքեր հարձակվել են դիմումատուի վրա և ֆիզիկապես նրան խոշտանգումների ու վատ վերաբերմունքի են ենթարկել, չեն բացահայտվել ու պարզապես մնացել են անպատիժ[503]:

Այս առնչությամբ, հարկ է նշել նաև, որ քրեական արդարադատության համակարգում պատժի ու պատասխանատվության առաջացման որոշակիության ու կանխատեսելիության չափանիշներն ամրագրված են միջազգային իրավական փաստաթղթերում.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն՝ քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:

---

[503] Տե՛ս, Սեստարոն ընդդեմ Իտալիայի (Cestaro v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի վճիռը, գանգատ թիվ 6884/11:

Նշվածն ամրագրումն է nullum crimen, nulla poena sine lege (չկա հանցանք, չկա պատիժ առանց օրենքի) սկզբունքի, որը երաշխավորում է քրեական արդարադատության որոշակիությունն ու պատժի ու պատասխանատվության կանխատեսելիությունը: Նշված կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է, ցանկացած հանցագործություն և պատիժ պետք է հստակ ամրագրված լինի օրենքով, չի կարող տարածական մեկնաբանվել, և կիրառվել անալոգիայով[504]:

Ի երաշխավորումն այս սկզբունքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվում է, որ արարքի հանցավորությունը, պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 14-րդ հոդվածի վերաբերյալ 32-րդ հանձնարարական[505]
Դատարանի առջև հավասարության իրավունքը ու արդար դատաքննության իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կարևորագույն բաղադրատարր է և ծառայում է որպես իրավունքի գերակայության երաշխիք: Դաշնագրի 14-րդ հոդվածն ուղղված է երաշխավորելու արդարադատության պատշաճ ընթացակարգերի ապահովումը:

Ներկայացվածի համատեքստում, Մարդու իրավունքների պաշտպանը խիստ անհրաժեշտ է համարում Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության առնչությամբ պատշաճ քննության իրականացումն ու քննության արդյունքների հիման վրա վերջիններիս գործողությունների իրավաչափության բացակայության վերաբերյալ գնահատականի առկայության դեպքում համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառումը:

Ներկայացվածի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ ըստ Ներքին գործերի նախարարության՝ 2024 թվականի ընթացքում Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողների համար իրականացվել են վերապատրաստումներ, մասնավորապես՝ խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման թեմաներով իրականացված վերապատրաստումներին մասնակցել են 206 ծառայող, իսկ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու

[504] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի ՍԴ3/0013/01/11 գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը:
[505] Տե՛ս, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարականը:

իրավունքի ապահովման թեմաներով իրականացված վերապատրաստումներին մասնակցել են թվով 58 ծառայող:

Ըստ նախարարության՝ 2024 թվականին անցկացված հավաքների ընթացքում բաժին բերված անձանց նվազագույն իրավունքների ապահովման նպատակով՝ հավաքների շրջանակներում յուրաքանչյուր ծառայությունից առաջ իրականացվել են ծառայությունում ներգրավված ծառայողների մասնակցությամբ հրահանգավորումներ, որի ընթացքում ծառայողներին ներկայացվել են անձանց նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելիս վերջիններիս նվազագույն իրավունքներն ապահովելու առանձնահատկությունները: Ազատությունից զրկված անձանց «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ՀՀ Կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ և ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի 2007 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 3-Ն հրամանով սահմանված կարգով և ձևերով ներկայացվել են մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքները:

Չնայած վերոշարադրյալ առանձին քայլերին և զարգացումներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է խաղաղ հավաքների իրականացումն ու երաշխավորումը որպես ժողովրդավարության առանցքային բաղադրիչ և խնդրահարույց է համարում իրավակիրառ պրակտիկայում ձևավորված ու արմատացած համակարգային խնդիրների շարունակական առկայությունը: Պաշտպանը այս տեսանկյունից ևս հատուկ ընդգծում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման կարևորությունը[506]: Վարչական իրավախախտումների ու դրանց վարույթների վերաբերյալ օրենսդրության արդիականության խնդրի մասին արձանագրվել է դեռևս Սահմանադրական դատարանի՝ Պաշտպանի դիմումի հիման վրա 2017 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1339 որոշմամբ, ըստ որի՝ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրում է, որ հավաքի խաղաղ ընթացքի երաշխավորումը ենթադրում է ինչպես պետական իրավասու մարմինների, այնպես էլ հավաքի կազմակերպիչների և մասնակիցների կողմից վերջիններիս կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանում: Դա վերաբերում է, այդ թվում՝ հավաքի ընթացքում բռնությունից, բռնության կոչերից, ատելության խոսքի դրսևորումներից զերծ մնալուն, որպիսի դրսևորումները ևս 2024 թվականի ընթացքում եղել են ակնհայտ և խնդրահարույց:

---

[506] Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը դրվել է շրջանառության մեջ 2023 թվականին, Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է նախագծի վերաբերյալ իր գրավոր կարծիքը, առավել մանրամասն տե՛ս 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է.

✓ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի երաշխավորման և իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների գիտելիքների և կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ներպետական և միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ,

✓ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանափակման իրավաչափության չափանիշները պահպանելու ուղղությամբ՝ իրավունքի սահմանափակումը հիմնավորելով ծանրակշիռ և համոզիչ փաստարկներով:

✓ երաշխավորել պատասխանատվության անխուսափելիությունն այն դեպքերում, երբ Ոստիկանության ծառայողները չեն պահպանում օրենսդրությամբ սահմանված պահանջները:

ԲԱԺԻՆ 11. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղի դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարման ապահովման կարգի հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ

2024 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կատարած մշտադիտարկումների և անհատական դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել Լեռնային Ղարաբաղի դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարման ապահովման կարգի հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ, որոնց պատշաճ լուծման համար անհրաժեշտ են համատեղ ջանքեր ու մասնագիտական քննարկումներ բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ Լեռնային Ղարաբաղի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2023 թվականի օգոստոսի 30-ին վճռել է գումարի բռնագանձման պահանջով իր ներկայացրած հայցը բավարարել և մեկ այլ անձից հօգուտ իրեն գանձել համապատասխան գումար:

Բողոքին կից ներկայացված վճռի ուսումնասիրությունից պարզվել է, որ այն կարող էր բողոքարկվել Լեռնային Ղարաբաղի վերաքննիչ դատարան հրապարակելու օրվանից հետո մեկամսյա ժամկետում, իսկ այդ ժամկետում չբողոքարկվելու դեպքում՝ վճիռը մտնում է օրինական ուժի մեջ:

Բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է նաև, որ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել է Հայաստան և չի կարողացել ստանալ վճռի կատարման համար կատարողական թերթը:

Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ ներկայացված տեղեկատվությամբ հայտնել է, որ բարձրացված հարցի կապակցությամբ դիմել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն (այսուհետ՝ նաև Ծառայություն) և ստացել պատասխան այն մասին, որ պետք է ներկայացնել կատարողական թերթ: Տեղեկացվել է նաև, որ Լեռնային Ղարաբաղի դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարման ապահովման կարգն օրենսդրական մակարդակում կարգավորելու նպատակով իրականացվում են քննարկումներ:

Վերոնշյալի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել Ծառայություն, որին ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ անձը 2023 թվականի դեկտեմբերի 22-ին դիմումով Ծառայություն է ներկայացրել Լեռնային Ղարաբաղի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2023 թվականի օգոստոսի 30-ին կայացված վճիռը: Նշված դիմումի հիման վրա վերջինիս պարզաբանվել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (…):

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարման ապահովման կարգն օրենսդրական մակարդակում

կարգավորելու նպատակով քննարկումներին, ապա այդ մասով տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ Ծառայությունը նման քննարկումների վերաբերյալ տեղեկատվության չի տիրապետում:

Հաշվի առնելով բարձրացված խնդրի արդիականությունը, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ հաշվետու տարվա ընթացքում ստացվող բողոքների շարունակական աճը՝ Պաշտպանը լրացուցիչ գրություն է հասցեագրել Արդարադատության նախարարություն:

Պատասխան գրությամբ՝ նախարարությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ ուսումնասիրելով բարձրացված հարցը՝ կարծում ենք, որ պետք է առանձնացնել երկու խումբ կատարողական վարույթներ.

1) կատարողական վարույթներ, որոնք ԼՂ հարկադիր կատարման ծառայողների կողմից ուղարկվել են Ծառայություն հարկադիր կատարման, քանի որ պարտապանը կամ վերջինիս գույքը գտնվել է Հայաստանի Հանրապետությունում,

2) կատարողական վարույթներ, որոնք հարուցվել և գտնվում են ԼՂ-ում, քանի որ պարտապանը կամ վերջինիս գույքը ևս ԼՂ-ում է:

Առաջին խումբ կատարողական վարույթներով Ծառայության հարկադիր կատարողը, դրանք ընդունելով վարույթ, իրականացրել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով նախատեսված անհրաժեշտ գործողություններ (այդ թվում՝ կիրառել է արգելանքներ պարտապանի բանկային հաշիվների վրա):

Ընդ որում, նշված օրենքի ուսումնասիրությունից հստակ է, որ հարկադիր կատարողը պարտավոր է շարունակել կատարողական գործողություններն այնքան ժամանակ, քանի դեռ չեն առաջացել կատարողական վարույթներն ավարտելու, կասեցնելու կամ կարճելու վերոհիշյալ օրենքով նախատեսված հիմքերը: Միաժամանակ, գործող կարգավորումների համաձայն՝ կատարողական վար ութով կիրառված արգելանքը ենթակա է վերացման բացառապես հիշյալ օրենքի 44.1-ին կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

Ինչ վերաբերվում է երկրորդ խումբ կատարողական վարույթներին, որոնք գտնվում են ԼՂ-ում, կարծում ենք, որ <u>գործող իրավակարգավորումների պայմաններում</u> Ծառայությունը որևէ իրավասություն չունի որոշելու դրանց հետագա ընթացքը:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդի դեմ ներկայացված հայցը (ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ) Լեռնային Ղարաբաղի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը բավարարել է, որի հիման վրա տրվել են համապատասխան կատարողական թերթեր:

Նշել է նաև, որ հետագայում պարզելով, որ պարտապանը հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում, ԼՂ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթները կատարման են ուղարկվել ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որի վերաբերյալ իր վստահորդը չի ծանուցվել:

Նշված բողոքի ուսումնասիրության պատշաճ ընթացքն ապահովելու և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել փաստաբանի հետ: Վերջինս հայտնել է, որ իր վստահորդի նկատմամբ հարուցված կատարողական վարույթների վերաբերյալ մանրամասն

տեղեկատվության չի տիրապետում, սակայն իրեն հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունում իր վստահորդի բանկային հաշիվների նկատմամբ կիրառվել է արգելանք և հետագայում իր վստահորդի՝ Լեռնային Ղարաբաղում բնակվելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո Ծառայությունը՝ 2017 թվականին կատարողական վարույթներն ուղարկել է կատարման Լեռնային Ղարաբաղ:

Փաստաբանը հայտնել է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցչությունը 2024 թվականի ապրիլ ամսին տրամադրել է տեղեկանք, ըստ որի՝ հիշյալ վարույթները մնացել են Լեռնային Ղարաբաղում՝ Ադրբեջանի վերահսկողության ներքո: Հավելել է, որ 2024 թվականի հոկտեմբեր ամսին դիմել է Ծառայություն կատարողական վարույթները կարճելու համար, սակայն Ծառայությունը հստակ պատասխան չի տվել և կատարողական վարույթները չեն կարճվել:

Բողոք ներկայացրած փաստաբանը խնդրել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն իր վստահորդի նկատմամբ հարուցված կատարողական վարույթները կարճելու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը գրություն է հասցեագրել Ծառայություն: Պատասխան գրությամբ՝ ստացվել է պարզաբանում այն մասին, որ Ծառայության կատարողական վարույթների վարման էլեկտրոնային շտեմարանի ուսումնասիրությունից պարզվել է, որ ԼՂ ԴԱՀԿ ծառայությունում հարուցված թվով 2 կատարողական վարույթներ 19.04.2017 թվականին ուղարկվել են Ծառայություն՝ հետագա կատարման: Նշված կատարողական վարույթներն ընդունվել են վարույթ և դրանց հետագա ընթացքը լուծելու նպատակով որոշումներ են կայացվել պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին, սակայն կատարված հարցումների արդյունքում պարտապանի անվամբ բռնագանձման ենթակա գույք կամ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, իսկ կատարողական վարույթները՝ 06.12.2017 թվականին վերադարձվել են Լեռնային Ղարաբաղ՝ հետագա կատարման:

Ինչ վերաբերում է պարտապանի գույքի վրա դրված արգելանքները վերացնելուն, ապա այս մասով պատասխան գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ նշված կատարողական վարույթների շրջանակներում կիրառված արգելանքները կվերացվեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 44.1-ին հոդվածի որևէ հիմքի առկայության դեպքում: Միաժամանակ, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ նույն բողոքը քննվում է դատական կարգով, մասնավորապես, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունից պարզվել է, որը ՀՀ Վարչական դատարանի 17.12.2024 թվականի որոշմամբ՝ անձի հայցադիմումն ընդդեմ Ծառայության՝ կատարողական վարույթները կարճելու և որպես հետևանքներ՝ բանկային հաշիվներն արգելանքից հանելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Հարկ է նաև նշել, որ այս դիմում-բողոքները Պաշտպանի աշխատակազմում գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Պաշտպանին հընթացս հասցեագրվում են նաև խնդրի հետ փոխկապակցված այլ դիմում-բողոքներ, որոնք առնչվում են Լեռնային Ղարաբաղի դատարաններում

քննության ընթացքում եղած գործերը ՀՀ դատարանների իրավասությանը փոխանցելուն:

Այս կապակցությամբ, Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Արդարադատության նախարարությունը 2024 թվականի մայիս ամսին տեղեկացրել է, որ Լեռնային Ղարաբաղի դատարաններում քննության ընթացքում եղած գործերը Հայաստանի Հանրապետության դատարանների իրավասությանը փոխանցելու վերաբերյալ խնդիրների լուծման ուղիները որոշակիացնելու նպատակով միջգերատեսչական քննարկումներն ընթացիկ փուլում են և այս պահին չկան արձանագրված արդյունքներ:

Ընդ որում, նույնաբովանդակ տեղեկատվություն նախարարությունը ներկայացրել էր նաև 2023 թվականի հոկտեմբերին՝ Պաշտպանի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում կատարված հարցմանն ի պատասխան:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Պաշտպանը կարևորում է բարձրացված խնդիրների լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշման նպատակով շարունակական քննարկումների իրականացումը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ խնդիրները պետք է ստանան շուտափույթ լուծում և ԼՂ բռնի տեղահանված անձանց իրավունքների առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ է արագացնել համապատասխան իրավական դաշտի ստեղծման (օրենսդրական փոփոխություններ կատարման) գործընթացը:

2. Կատարողական վարույթի շրջանակում կատարողական գործողությունները պատշաճ չիրականացնելու հետ կապված խնդիրներ

Հաշվետու տարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են բանավոր բողոքներ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից կատարողական վարույթի կողմ չհանդիսացող անձանց դրամական միջոցների վրա արգելանք կիրառելու, ինչպես նաև արգելադրված գումարը բռնագանձելու վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ Ծառայությունն արգելանք է կիրառել իր դրամական միջոցների վրա՝ չնայած նրան, որ ինքը կատարողական վարույթի կողմ չի հանդիսանում, չի հանդիսանում նաև պարտապանի ամուսին: Ըստ անձի պնդման՝ թեև խնդիրը սեղմ ժամկետում ստացել է լուծում, այնուհանդերձ Ծառայություն ներկայանալու համար ստիպված է եղել աշխատանքային օրվա ընթացքում բացակայել աշխատավայրից: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ տեղում Ծառայության ներկայացուցիչն իրեն հայտնել է, որ արգելանքի կիրառումը եղել է վրիպակի հետևանքով:

Մյուս դեպքում, անձը հայտնել է, որ Ծառայությունն արգելանք է կիրառել իր դրամական միջոցների վրա, այն դեպքում, երբ ինքը կատարողական վարույթի կողմ չի հանդիսանում, ինչպես նաև չի հանդիսանում պարտապանի ամուսին: Ավելին, բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ հաջորդիվ հաշվին արգելադրված գումարը բռնագանձվել է: Հավելել է, որ խնդրի կարգավորման նպատակով դիմել է Ծառայություն, սակայն ամիսներ շարունակ արդյունքի չի հասել: Բարձրացված խնդիրը քննարկվել է Ծառայության իրավասու ներկայացուցչի հետ: Ըստ ստացված

պարզաբանման՝ բողոք ներկայացրած անձի հաշվին արգելադրված գումարը բռնագանձվել է վրիպակի հետևանքով՝ այլ անձի պարտավորությունների կատարման համար: Պաշտպանի աշխատակազմի և Ծառայության արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել կարգավորել խնդիրը: Արդյունքում, գումարը վերադարձվել է բողոք ներկայացրած անձին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների առնչությամբ Արդարադատության նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ կատարողական վար ութի կողմ չհանդիսացող անձի դրամական միջոցների վրա արգելանք կիրառվում է այն դեպքերում, երբ հարուցված կատարողական վար ութի շրջանակներում բացահայտվում է պարտապանի ամուսնության հանգամանքը և անհրաժեշտություն է առաջանում հայտնաբերել համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույք (դրամական միջոցներ):

Կատարողական վարույթի շրջանակներում պարտապանին պատկանող գույքի, տվյալ դեպքում՝ դրամական միջոցների, վերաբերյալ տեղեկություններ ստացվում են ՀՀ առևտրային բանկեր օրենքով նախատեսված էլեկտրոնային հաղորդագրություններ (արգելանք կիրառելու որոշումներ) ուղարկելու միջոցով՝ այդ թվում՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված դրամական միջոցների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, նշվել է, որ 2024 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 56-րդ հոդվածի 6-րդ մասով հստակ նախատեսվեց, որ պարտապանի ամուսնու աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները բռնագանձման ենթակա չեն: Ըստ այդմ, ներկայում պարզելով նշված եկամտի ստացման աղբյուրը՝ հարկադիր կատարողը վերացնում է պարտապանի ամուսնու աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների վրա կիրառված արգելանքը: Ավելին, երբ բռնագանձվում է պարտապանի ամուսնու հաշվին արգելադրված գումարը (ներկայում բռնագանձումն իրականացվում է ինքնաշխատ) և պարզվում է, որ այն չի համարվում ամուսնության ընթացքում ձեռք բերված այնպիսի դրամական միջոց, որի նկատմամբ կարող էր իրականացվել բռնագանձում, ապա տվյալ գումարը վերադարձվում է տվյալ անձին՝ այդ անձի բանկային հաշվեհամարի մասին տեղեկատվություն ունենալու դեպքում կամ գրություն է ուղարկվում վերջինիս՝ նման տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

Ինչ վերաբերում է կատարողական վար ութի կողմ չհանդիսացող անձանց դրամական միջոցների նկատմամբ արգելանք կիրառելու ուղղությամբ 2024 թվականի ընթացքում ձեռնարկված միջոցներին՝ Ծառայությունը նշել է, որ 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունվել է «Կատարողական վարույթի մասին» օրենքը, որտեղ, ի թիվս այլնի, կարգավորվել են կատարողական վարույթի կողմ չհանդիսացող անձի նկատմամբ պարտականություններ կամ իրավունքի սահմանափակումներ սահմանող որոշում կայացնելու կարգը, դեպքերը, ինչպես նաև հստակեցվել են պարտապանի ամուսնու վերաբերյալ հարցումներ կատարելու կառուցակարգերը՝ ըստ այդմ ամրապնդելով գործող իրավակիրառ պրակտիկան:

Հաշվետու տարում Պաշտպանին հընթացս հասցեագրվել են նաև բողոքներ, որոնք առնչվում են կատարողական վարույթի շրջանակում կիրառված արգելանքը

վերացնելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման կատարումը սահմանված ժամկետում չապահովելու դեպքերին:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ հարուցված կատարողական վարույթի շրջանակում 2024 թվականի նոյեմբերի 1-ին Ծառայություն է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.11.2024 թվականին կայացված «Հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը: Հավելել է, որ նշված որոշմամբ մասնակի վերացվել է դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովումը: Նշվածով պայմանավորված՝ խնդրել է կիրառված արգելանքը վերացնել:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ մեկ ամիս անց Ծառայությունը պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ արգելանքը մասնակի վերացնելու պահանջը մերժվել է՝ որոշումը երկրորդ կնիքով հաստատելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձի՝ դատական ակտի համաձայն՝ նշված որոշումն օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ Ծառայությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ 07.12.2024 թվականին գրություն է հասցեագրվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ 01.11.2024 թվականին կայացված որոշման օրինական ուժի մեջ մտած լինելու փաստը պարզելու նպատակով:

Հաջորդիվ, 13.12.2024 թվականին Ծառայություն է մուտքագրվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի գրությունը, որի համաձայն՝ քաղաքացիական գործի շրջանակում 01.11.2024 թվականին կայացված՝ «Հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Գրությամբ հավելել են, որ վերոնշյալի հաշվառմամբ՝ 13.12.2024 թվականին կայացված որոշմամբ արգելանքը վերացվել է:

Այս առումով հարկ է նշել, որ Պաշտպանի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների առնչությամբ Արդարադատության նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարողը որոշումը կայացնում է դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հայտնի դառնալու օրվանից եռօրյա ժամկետում, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ: Ըստ այդմ, գործնականում արգելանքները վերացնելու՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը հարկադիր կատարողի կողմից ստացվելուց հետո սահմանված ժամկետում պարտապանի գույքի նկատմամբ կիրառված արգելանքները վերացվում են: Եթե մուտքագրված բողոքների կամ դիմումների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ առանձին դեպքերում վերը նշված կարգավորումները չեն պահպանվել, Ծառայությունը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները դրա հետևանքները վերացնելու ուղղությամբ:

2024 թվականին Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ պարտապանի կողմից պարտավորությունների փաստացի կատարման պարագայում՝ կիրառված արգելանքներն օրենքով սահմանված ժամկետում չվերացնելու վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ հարուցված կատարողական վարույթների շրջանակներում առկա պարտավորություններն իր կողմից ամբողջությամբ կատարվել են, սակայն Ծառայությունը կիրառված արգելանքները չի վերացրել: Բարձրացված խնդիրը քննարկվել է Ծառայության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հաստատել է բողոք ներկայացրած անձի կողմից ներկայացված տեղեկատվությունը և պատրաստակամություն հայտնել խնդիրը սեղմ ժամկետում կարգավորելու ուղղությամբ:

Հաջորդիվ, Պաշտպանին դիմած անձը լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել առ այն, որ կիրառված արգելանքները վերացվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ միջոցներ ձեռնարկել կատարողական վարույթի կողմ չհանդիսացող անձանց դրամական միջոցների վրա արգելանք և (կամ) բռնագանձում տարածելու պրակտիկայում հանդիպող դեպքերը բացառելու ուղղությամբ.

✓ կատարողական գործողությունների կատարման ձգձգման և (կամ) ուշացման հետևանքով կատարողական վարույթի կողմերին ոչ պատշաճ վարչարարությամբ վնաս հասցնելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով՝ ուժեղացնել հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների հստակ և ժամանակին կատարման նկատմամբ վերահսկողությունը:

3. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև քանդման (ապամոնտաժման) գործընթացների իրականացման հետ կապված խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին շարունակել են մտահոգիչ և խնդրահարույց լինել ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև քանդման (ապամոնտաժման) գործընթացների իրականացման հետ կապված խնդիրները:

Այսպես, 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում ՄԻՊ այն հարցադրումներին, *թե քանի՞ ինքնակամ շինություն է քանդվել 2024 թվականի ընթացքում առանց ինքնակամ շինությունը քանդելու մասին Երևանի քաղաքապետի որոշման և արդյո՞ք նման պրակտիկա առկա է*, ներկայացվել է պատասխան այն մասին, որ *Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից <u>2024 թվականին առանց համապատասխան քանդման որոշումների իրականացվել են շուրջ 203 քանդման աշխատանքներ:</u>*

Նշվել է նաև, որ նախաձեռնման փուլում հայտնաբերված ինքնակամ շինարարական աշխատանքների դեպքերում՝ քանդման աշխատանքներն իրականացվում են (անհապաղ) առանց համապատասխան քանդման որոշման:

Փաստորեն, ստացված պարզաբանումից հետևում է, որ առանց համայնքի ղեկավարի համապատասխան որոշման ինքնակամ կառուցված շինությունները քանդելու պրակտիկա առկա է և այդ դեպքերը, ըստ ներկայացված տվյալների, քիչ չեն:

Մինչդեռ, հարկ է նշել, որ ըստ ***ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող <u>ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները</u>:*** Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ ինքնակամ (...) կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ: Նշվածին համապատասխան՝ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացի առավել ամբողջական կարգավորումը սահմանված է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), ***որով ուղղակիորեն նախատեսված է, որ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ <u>ընդունում է որոշում</u> պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին (տե՛ս 33-րդ կետը):***

Վերոգրյալից բացի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված են իրավական կարգավորումներ, որոնց բովանդակային վերլուծությունը նույնպես վկայում է, որ ***համայնքի ղեկավարի և Երևանի քաղաքապետի՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) լիազորությունը կարող է իրականացվել բացառապես համապատասխան որոշման հիման վրա:***

Այսպիսով, ստացվում է, որ ըստ գործող օրենսդրական կարգավորումների, այնպիսի ընթացակարգ, որով հնարավոր է ինքնակամ կառուցված շինությունները քանդել առանց համապատասխան որոշման կայացման նախատեսված չէ:

Ավելին, հատկանշական է, որ «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին վերապահված է՝ ***համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին <u>որոշման կայացման</u> և համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով <u>որոշման կատարման ապահովման նկատմամբ</u> վերահսկողություն իրականացնելու լիազորություն:***

2024 թվականին Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքները, մասնավորապես, վերաբերել են ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու և դրանք քանդելու մասին Երևանի քաղաքապետի որոշման վերաբերյալ ինքնակամ կառույցն իրականացրած անձանց պատշաճ եղանակով չծանուցելու պարագայում, քանդման գործողություններ նախաձեռնելու և որպես հետևանք՝ այդ անձանց հասանելի իրավական միջոցների գործադրման *(օրինակ՝ համայնքի ղեկավարի նշված որոշման օրինականությունը դատական կարգով վիճարկելու)* հնարավորություն չապահովելու հարցին:

Այսպես, օրինակ՝ 2024 թվականի փետրվարի 29-ին Պաշտպանի թեժ գծին ստացվել են ահազանգեր Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոցում գտնվող

հասարակական նշանակության տարածքներում բնակելի շինությունները քանդելու վերաբերյալ:

Մասնավորապես, քաղաքացիները հայտնել են, որ այդ շինություններում տարիներ շարունակ բնակվել են և այժմ բնակության նպատակով այլ տարածք տեղափոխվելու, ինչպես նաև իրենց անձնական գույքը փոխադրելու հնարավորություն դեռևս չունեն: Ըստ քաղաքացիների պնդման՝ Երևանի քաղաքապետարանի գործողությունների արդյունքում խախտվում են իրենց իրավունքները:

Ահազանգերի, ինչպես նաև հրապարակային տեղեկությունների հիման վրա՝ Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ անմիջապես սկսվել է ուսումնասիրության ընթացակարգ: Համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով կապ է հաստատվել Երևանի

քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ: Իրականացվել է արագ արձագանքման այց: Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ[507]:

Օրեր անց՝ Պաշտպանի աշխատակազմ ինքնակամ կառույցների ապամոնտաժման խնդրով գրավոր դիմում-բողոքներ են հասցեագրել Լվովյան փողոցի մի խումբ բնակիչներ:

Վերջիններս տեղեկացրել են, որ երկար տարիներ բնակվել են Լվովյան փողոցի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինություններում: Հավելել են, որ հաշվառված են իրենց փաստացի բնակության վայրի հասցեներով, որոնց հիման վրա դարձել են «Վեոլիա ջուր» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունների բաժանորդներ և պատշաճ կատարել են կոմունալ, հողի հարկի և գույքահարկի վճարումները:

Բողոք ներկայացրած անձանցից ոմանք հայտնել են նաև, որ ինքնակամ կառույցներն օրենքով սահմանված կարգով հաշվառել են Կադաստրի կոմիտեում: Այնուհետև, մի քանի անգամ դիմումներ են հասցեագրել Երևանի քաղաքապետին ինքնակամ կառույցների օրինականացման խնդրանքով:

Վերջիններիս տեղեկացմամբ՝ Երևանի քաղաքապետարան հասցեագրված դիմումների քննարկման արդյունքում ինքնակամ կառույցների օրինականացման կամ օրինականացումը մերժելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

---

[507] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2877, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մասնավորապես, բողոք ներկայացրած անձինք նշել են, որ դիմումների քննարկման յուրաքանչյուր դեպքում Երևանի քաղաքապետարանից ստացված պատասխան գրություններով իրենց պարզաբանվել է, որ ինքնակամ կառույցների օրինականացման համար դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել Որոշմամբ սահմանված փաստաթղթերը:

Հավելել են, որ ինքնակամ կառույցների օրինականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը կազմելուց հետո՝ կրկին դիմել են Երևանի քաղաքապետին ինքնակամ կառույցների օրինականացման խնդրանքով: Վերջին դիմումներին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից հայտնել են, որ այդ հողամասերը՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի՝ հանդիսանում են հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտի: Նշել են նաև, որ ներկայում իրականացվում են Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներ, որոնց ավարտից հետո հարցին հնարավոր կլինի անդրադառնալ վերոնշյալ աշխատանքների քննարկման ժամանակ այդ տարածքների նպատակային և գործառնական նշանակության հստակեցումից հետո:

Բացի այդ, հատկանշական է, որ բնակիչներից մեկի կողմից հաշվառված ինքնակամ շինությունն ապամոնտաժելուց հետո՝ Երևանի քաղաքապետարանը պատասխան գրությամբ՝ նրան հայտնել է, որ ինքնակամ կառույցով ծանրաբեռնված այդ հողամասը հանդիսանում է հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտի: Հայտնել է նաև, որ ինքնակամ կառույցի օրինականացման մասին դիմումին կանդրադառնան Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների ավարտից հետո:

Բնակչի պնդմամբ՝ Լվովյան փողոցի 5/4 հասցեին հարակից հասցեում իր կողմից կառուցված ինքնակամ շինության քանդման վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից որոշում չի կայացվել, ինչի արդյունքում, վերջինս զրկվել է նաև դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունից: Հավելել է, որ նշվածի մասին է վկայում նաև ինքնակամ կառույցի ապամոնտաժման աշխատանքների ավարտից հետո Երևանի քաղաքապետարանի կողմից օրինականացման վերաբերյալ իր դիմումին տրված պատասխանը:

Բողոք ներկայացրած անձինք խնդրել են Պաշտպանի աջակցությունն ինքնակամ կառույցների ապամոնտաժման գործընթացի իրավաչափությունը պարզելու հարցում:

Վերը նշված բողոքների քննարկման արդյունքում Պաշտպանը կայացրել է Լվովյան փողոցի մի խումբ բնակիչների իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում: Հաշվի առնելով այն, որ որոշումն ու դրանում արտահայտված Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները հրապարակված են[508], սույն պարագրաֆի շրջանակում հարկ չենք համարում մանրամասն անդրադառնալ դրանց, այնուհանդերձ, նպատակահարմար ենք համարում համառոտ ներկայացնել (առանձնացնել) որոշման մեջ տեղ գտած հիմնական շեշտադրումները:

---

[508] Դրանք հասանելի են հետևյալ հղումով՝ https://ombuds.am/images/files/49033f9db0212aa60a635aaa9aa7aceb.pdf, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Այսպես, նշված որոշման շրջանակում մարդու իրավունքների խախտման առկայությունը գնահատելու և համապատասխան եզրահանգում կատարելու համար Պաշտպանն իրավական վերլուծությամբ պատասխանել է հետևյալ հարցերին.

1) արդյո՞ք Երևանի քաղաքապետարանի կողմից խախտվել է բողոք ներկայացրած անձանց Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը: Ըստ այդմ, արդյո՞ք Երևանի քաղաքապետարանը վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ծանուցել է վարչական վարույթի հարուցման, վարչական ակտերի ընդունման մասին, ինչպես նաև ապահովվե՞լ է արդյոք վարչական վարույթում մասնակիցների լսված լինելու իրավունքը,

2) արդյո՞ք Երևանի քաղաքապետարանը խախտել է Լվովյան փողոցի մի շարք հասցեների բնակիչների Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Առաջին հարցադրման շրջանակում՝ անդրադառնալով որոշման մեջ ներկայացված փաստական հանգամանքներին, վերլուծության ենթարկելով վերաբերելի իրավակարգավորումները, ինչպես նաև համադրելով բարձր դատարանների իրավական դիրքորոշումները՝ Մարդու իրավունքների պաշտպանը, մասնավորապես, արձանագրել է, որ վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքը դիտարկվում է որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ տարր և ուղղակիորեն պայմանավորում վարչական վարույթի փաստական հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննարկումն ու լուծումը:

Վարչական վարույթի շրջանակում վարչական մարմնի կողմից լսումներ կարող են չանցկացվել միայն օրենքով սահմանված ***բացառիկ դեպքերում***: Երևանի քաղաքապետարանի վկայակոչած այն փաստական հանգամանքները, ըստ որոնց՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի *(մանրամասն տե՛ս նույն որոշման 11-րդ կետը)* իրականացված վերոնշյալ հասցեների շինությունների առկայության պարագայում վարչական ակտն ընդունելու հապաղումը կարող էր հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, ***պատշաճ հիմնավորված չէ և չի կարող դիտարկվել՝ որպես լսումներ չանցկացնելու բացառիկ դեպք:***

Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով չի ծանուցել բողոք ներկայացրած անձանց, չի ապահովել քաղաքացիների լսված լինելու իրավունքը՝ զրկելով նրանց իրենց իրավունքները պաշտպանելու արդյունավետ կառուցակարգերից օգտվելու հնարավորությունից: **Հետևաբար, լսված լինելու իրավունքի չապահովմամբ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակում չի երաշխավորել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր, այդ թվում՝ գործի մասնակիցների օգտին առկա բացահայտման ենթակա հանգամանքները պարզելու երաշխիքը:**

Վարչական մարմնի կողմից՝ որպես վարչական ակտի ծանուցման ձև ընտրվել է վարչական ակտի հրապարակման եղանակով ծանուցումը, ինչը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի պահանջներին: Մասնավորապես, բողոք ներկայացրած անձինք նույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիտարկվում են որպես վարչական վարույթի մասնակիցներ և հասցեատերեր,

որպիսի պարագայում նույն օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ գրավոր վարչական ակտը պետք է հանձնվեր վարույթի մասնակիցներին:

Անդրադառնալով Լվովյան փողոցի մի շարք հասցեների բնակիչների՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հետ կապված հարցին՝ Մարդու իրավունքների պաշտպանը, մասնավորապես, ընդգծել է, որ վարչական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ կարգավորում նախատեսելիս Երևանի քաղաքապետարանը պարտավոր էր՝ ելնելով անձանց արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել նշված իրավունքի իրացումը գործնականում երաշխավորելու համար: Այդ առումով առանցքային է, որ վարչական ակտը բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախված է այն հանգամանքից, ***թե որքանով է բողոքարկվող վարչական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ի՞նչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար և այլն:***

Վարչական բողոք ներկայացնելու համար նախապատրաստվելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող վարչական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր բողոքում հիմնավորել, պատճառաբանել վարչական մարմնի կողմից իր իրավունքների ենթադրյալ խախտումը և վարչական վարույթի ելքի վրա դրանց ազդեցությունը:

Վերոգրյալի լույսի ներքո՝ կարևոր է նկատի ունենալ, որ վարչական ակտի բողոքարկման ժամկետ սահմանելիս այդ ժամկետի հաշվարկման սկիզբն անհրաժեշտ է պայմանավորել վարչական ակտը դրա հասցեատերերի կողմից ստանալու պահով: Մասնավորապես, այս առումով օրենսդրի կամքն է երաշխավորել բողոքարկվող վարչական ակտը շահագրգիռ անձին հասու դարձնելը, դրան պատշաճ ծանոթանալը և բողոքարկման համար բավարար ժամանակ ունենալը: Այսինքն, դատական պաշտպանության իրավունքի իրացման համար կարևոր է ոչ միայն ծանուցման միջոցով ակտը անձին հասու դարձնելը, այլև ակտի բողոքարկման համար գործնականում ողջամիտ ժամկետ տրամադրելը, որպիսի չափանիշները պահպանված չեն եղել սույն գործի շրջանակներում: ՀՀ վճռաբեկ և Սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումների վերլուծությունը վկայում է, որ անձի դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համար թե՛ օրենսդրական, թե՛ գործնական առումով պետք է ապահովված լինի վերոնշյալ երեք պայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես.

- *վարչական ակտի օրինականության վիճարկման համար պետք է ողջամիտ ժամկետ սահմանվի,*
- *վարչական ակտի մասին անձին օրենքով սահմանված կարգով ծանուցելու պահը պետք է սահմանվի որպես վարչական ակտի բողոքարկման համար օրենքով նախատեսված ժամկետի հաշվարկման մեկնարկ,*
- *վարչական ակտի հասցեատերերին պետք է տրամադրվի ողջամիտ ժամկետ վարչական ակտի բողոքարկման համար նախապատրաստվելու նպատակով:*

Վերոգրյալի լույսի ներքո՝ Պաշտպանն արձանագրել է, որ սույն գործի շրջանակում տեղի է ունեցել քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների խախտում և Երևանի քաղաքապետարանին առաջարկել է՝

- *ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ինքնակամ կառուցված շինությունների ապամոնտաժման հետևանքով քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում՝ մշակելով ու իրացնելով անհրաժեշտ կառուցակարգեր.*
- *ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հետագայում իրավունքի նման խախտումները բացառելու ուղղությամբ:*

Պետք է նշել, որ 2024 թվականին նմանատիպ խնդիրների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև այլ բողոքներ: Դրանք գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին հընթացս հասցեագրվել են նաև դիմում-բողոքներ, որոնք վերաբերել են ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին դիմումների քննարկման անհարկի ձգձգումներին:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2021 թվականին դիմել է Երևանի քաղաքապետարան համայնքային հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցի օրինականացման հարցով:

Հավելել է, որ չորս տարի անընդմեջ դիմել է Երևանի քաղաքապետարան, սակայն ինքնակամ կառույցի օրինականացման կամ մերժման վերաբերյալ որոշում չի կայացվել: Նշել է նաև, որ Երևանի քաղաքապետարանը պատասխան գրություններով հայտնել է, որ օրինականացման հարցին հնարավոր կլինի անդրադառնալ Երևանի քաղաքապետարանի կողմից նշված գույքի պետական գրանցման աշխատանքների հնարավորության առկայության պարագայում:

Բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է նաև, որ բանավոր քննարկումների ժամանակ Երևանի քաղաքապետարանից հավաստիացրել են, որ ինքնակամ կառույցն օրինականացնելու պարագայում հողամասի օրինականացման վճարը հաշվարկվելու է մինչև 2021 թվականը գործող կադաստրային արժեքներով: Մինչդեռ, 2024 թվականին Երևանի քաղաքապետարան ինքնակամ կառույցի օրինականացման խնդրով կրկին հասցեագրված դիմումներին ի պատասխան՝ հայտնել են, որ ինքնակամ շինության և դրանով զբաղեցված հողամասի օրինականացման հարցը կարող է քննարկվել «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված արժեքներով:

Պաշտպանը գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան՝ պահանջելով տրամադրել պարզաբանումներ, թե ինչու՞ վարչական մարմնի կողմից չի իրականացվել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում օրենսդրությամբ սահմանված ժամկետներում՝ հաշվի առնելով նաև օրենքով վարչական մարմնի վրա դրված արագ գործելու պարտականությունը:

Ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից տեղեկատվություն է տրամադրվել, մասնավորապես այն մասին, որ բողոք ներկայացրած անձը 2021

թվականի հունվարին դիմել է Երևանի քաղաքապետարան ինքնակամ կառուցված շինությունը Որոշման շրջանակում օրինականացնելու խնդրանքով: Դիմումին կցված փաստաթղթերը թերի են եղել և հնարավորություն չեն ընձեռել իրականացնել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն: Արդյունքում, 2021 թվականի ապրիլին մուտքագրվել է քննարկվող տարածքի տեղագրական հանույթը և լուսանկարներ, ինչով սակայն հնարավոր չի եղել նույնականացնել 2021 թվականի հունվար ամսվա դիմումի առարկա հանդիսացող ինքնակամ շինությունը: Հետագայում քաղաքացին շարունակել է համալրել փաթեթը պակասող և հարցի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերով:

Հայտնել են նաև, որ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց համար սահմանված կարգով առանձնացված հողամասերն օտարվում են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով, եթե ինքնակամ կառույցի օրինականացման վերաբերյալ մինչև 2021 թվականի հունվարի 31-ը ներկայացված դիմումի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է բարենպաստ վարչական ակտ:

Հետևաբար, հաշվի առնելով, որ քաղաքացու կողմից սահմանված ժամկետում ներկայացված դիմումն ամբողջական չի եղել և հնարավորություն չի ընձեռնել վարչական մարմնին գործի վարչական վարույթը հասցնել եզրափակիչ փուլի, ներկայում գործի քննության արդյունքում բարենպաստ վարչական ակտ կայացնելու դեպքում այդ գործի փաստական հանգամանքների նկատմամբ քաղաքացուն առաջարկվել է կիրառվել վարչական ակտի կայացման պահին գործող իրավական հիմքը՝ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված գները:

Մինչդեռ, բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ իր կողմից ինքնակամ կառույցի օրինականացման վերաբերյալ դիմումն անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին Երևանի քաղաքապետարան է ներկայացրել դեռևս 2021 թվականի ընթացքում, ինչից հետո օրինականացման վերաբերյալ հարցի ըստ էության քննարկումն անհարկի հետաձգվել է: Հավելել է, որ նման պարագայում ինքնակամ շինության և դրանով զբաղեցված հողամասի օրինականացման վճարը 2024 թվականի դրույքաչափերով հաշվարկելու իրեն արված առաջարկն իրավաչափ չէ:

Նշվածի հաշվառմամբ՝ 2024 թվականի նոյեմբեր ամսին անձը հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ինքնակամ կառուցված շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասը Որոշման շրջանակներում օրինականացնելու վերաբերյալ որոշումը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Դատական գործի ընթացքի նկատմամբ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է հետագա հետևողական աշխատանք, մասնավորապես, ուսումնասիրվել է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա «Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին» դատարանի որոշումը: Ըստ այդմ, դատարանը, որոշել է անձի հայցադիմումն ընդունել վարույթ և Երևանի քաղաքապետարանից

պահանջել՝ ներկայացնել ինքնակամ կառուցված շինության և դրանով զբաղեցված հողամասն օրինականացնելու վերաբերյալ նյութերը:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նաև նշել, որ Որոշման 9-րդ կետի համաձայն՝ հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման նպատակով, ըստ գույքի գտնվելու վայրի, պետք է դիմի համապատասխան համայնքի ղեկավարին:

Ըստ Որոշման 10-րդ կետի՝ համայնքի ղեկավարը դիմումն ստանալուց հետո՝ սույն կարգի 8-րդ կետում նշված՝ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության կառույցների համար 30-օրյա ժամկետում ընդունում է դրանց օրինականացման կամ մերժման մասին որոշում:

Որոշման 46-րդ կետը սահմանում է, որ ինքնակամ կառույցների օրինականացման մերժման դեպքում դիմողին 5-օրյա ժամկետում գրավոր տեղյակ է պահվում մերժման պատճառների մասին՝ մերժման համար հիմք հանդիսացող իրավական ակտի կոնկրետ նորմի պարտադիր նշումներով, առձեռն հանձնելու կամ փոստով առաքելու միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ինքնակամ կառուցված շինությունների քանդման (ապամոնտաժման) գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս մշտապես պահպանել օրենսդրության պահանջները՝ գործնականում բացառելով առանց համապատասխան որոշման ինքնակամ կառուցված շինությունները քանդելու պրակտիկան, ինչպես նաև պատշաճ վերահսկողություն իրականացնել ինքնակամ կառույցների քանդման որոշումների կայացման և դրանց կատարման ապահովման նկատմամբ.***
- ✓ ***վարչարարությունն իրականացնելիս անձանց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումները բացառելու նպատակով միջոցներ ձեռնարկել ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու, ինչպես նաև այն քանդելու մասին համապատասխան որոշումն ինքնակամ կառույցն իրականացրած անձին պատշաճ եղանակով հասու դարձնելու, դրան ծանոթանալը և բողոքարկման համար բավարար ժամանակ ունենալը գործնականում երաշխավորելու ուղղությամբ.***
- ✓ ***պրակտիկայում ոչ հազվադեպ հանդիպող ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին դիմումների քննարկման անհարկի ձգձգումների (քաշքշուկների) դեպքերը բացառելու նպատակով՝ քայլեր ձեռնարկել դրանց քննարկման ընթացակարգերի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ:***

4. Մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող, շրջակա միջավայրին վնաս հասցնող եղանակով, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոնների պահանջների չպահպանմամբ շինությունների ապամոնտաժման խնդիր

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո է գտնվել մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող, շրջակա միջավայրին վնաս հասցնող եղանակով, ինչպես նաև աշխատանքի

անվտանգության կանոնների պահանջների չպահպանմամբ շինությունների ապամոնտաժման հետ կապված խնդիրը:

Այսպես, օրինակ՝ Երևան քաղաքի Պ. Սևակի 5/1 հասցեում գտնվող բազմահարկ շինության պայթեցման եղանակով քանդման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական հարթակների մշտադիտարկման, ինչպես նաև հարակից շենքերի բնակիչներից ստացվող զանգերի հիման վրա Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմում անմիջապես սկսվել է ուսումնասիրության ընթացակարգ:

Մասնավորապես, ըստ լրատվամիջոցների հրապարակումների՝ քանդման աշխատանքներ իրականացնող ընկերությունը 2024 թվականի հուլիսի 24-ին պատրաստվում է պայթեցնել ՀՀ ՊԵԿ «Հատուկ Կապ» ՓԲ ընկերությանը պատկանող նախկին շենքը: Ըստ հրապարակման՝ հարակից շենքերի բնակիչները դեմ են պայթեցման ճանապարհով շենքի քանդմանը, քանի որ պայթեցման ենթակա շենքը շրջակա շենքերին (Պարույր Սևակ 5, Պարույր Սևակ 8, 8/1, 8/2) մոտ է մի դեպքում մոտ 20 մետր, մյուս դեպքում՝ մոտ 40 մետր, որպիսի պարագայում պայթեցումը վտանգ է ներկայացնում հարակից շենքերի սեյսմակայունությանը: Հրապարակման համաձայն՝ իրավասու պետական մարմինները բնակիչներին չեն ծանուցել նախատեսվող պայթեցման մասին: Բնակիչների տեղեկացմամբ՝ կառուցապատողի՝ պայթեցման եղանակով շենքը քանդելու հիմնավորումն այն է, որ անհնարին է տեխնիկայի և մարդկային ուժի կիրառմամբ քանդել այն: Դրանից բացի, քանդման աշխատանքներ իրականացնող ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ շինարարի համար ֆինանսական շահի տեսանկյունից շենքի պայթեցման եղանակով քանդումն ավելի մատչելի է, քան մարդկային ուժի և տեխնիկայի միջոցով քանդումը: Հավելել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից ընկերությանն առաջարկվել է քանդումն իրականացնել մարդկային ուժի և տեխնիկայի գործադրմամբ: Ըստ հրապարակման մեջ առկա տեղեկությունների՝ Երևանի քաղաքապետարանի կողմից շենքի պայթեցման եղանակով քանդման վերաբերյալ թույլտվություն չի տրամադրվել[509]:

Պաշտպանի հանձնարարությամբ սկսված ուսումնասիրության շրջանակում կապ է հաստատվել ինչպես հարակից շենքերի բնակիչների, այնպես էլ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պայթեցման աշխատանքներով զբաղվող ընկերության ներկայացուցչի հետ: Դրա հետ մեկտեղ, Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են հարցին առնչվող առկա փաստերը և ոլորտը կարգավորող իրավական ակտերը: Պաշտպանի նախաձեռնությամբ կազմակերպվել են նաև քննարկումներ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Նշված հարցի առնչությամբ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ՝ մտահոգիչ համարելով այն, որ բնակիչները գործընթացի վերաբերյալ պատշաճ չեն իրազեկվել, ինչը համանման գործընթացների պարագայում հաճախակի հանդիպող պրակտիկա է և չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Պաշտպանը հատուկ ընդգծել է նաև, որ հաշվի առնելով

---

[509] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/live/mWOGwBVeorY , 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

բնակիչների մոտ առկա մտահոգությունները, ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ առկա միմյանց հակասող մեկնաբանություններն ու տարընթերցումները, պայթեցնելու հնարավոր հետևանքների լրջությունը, այդ թվում՝ մարդու իրավունքների տարբեր բնագավառների տեսանկյունից, ինչպես նաև ոլորտում պետության կոնկրետ պոզիտիվ պարտավորությունները՝ պետությունը պետք է ապահովի գործընթացի պատշաճ կազմակերպումը և բացառի մարդու իրավունքների հնարավոր խախտումները այդ համատեքստում[510]:

Վերոգրյալից բացի, խնդրի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու պահանջով Պաշտպանը գրություններ է հասցեագրել ինչպես Երևանի քաղաքապետարան, այնպես էլ Ներքին գործերի նախարարություն:

Երևանի քաղաքապետարանից ստացված պատասխան գրությամբ տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ վերը նշված հասցեում կառուցապատողին բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից 24.01.2024 թվականին տրամադրվել է հ.01/50-01-29-24 նախագծման թույլտվությունը: Այնուհետև, նշված նախագծման թույլտվության հիման վրա, մշակված գույքերի ապամոնտաժման նախագիծը մինչ համաձայնեցման ներկայացվելը՝ գործող օրենսդրության պահանջների համաձայն, ենթարկվել է նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համապատասխանությանը հավաստող փորձաքննության և «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության կողմից ստացել 15.03.2024 թվականի հ.24-290 դրական եզրակացությունը:

Տեղեկություն է տրամադրվել նաև այն մասին, որ հիմք ընդունելով վերը նշված փորձագիտական դրական եզրակացությունը՝ 26.03.2024 թվականին համաձայնեցվել է հ.01/50-03-185-24 քանդման նախագիծը և տրամադրվել հ.01/50-05-12-24 քանդման թույլտվությունը (գրությանը կից ներկայացվել է նաև դրա պատճենը)՝ ***համաձայն որոնց գույքերի քանդումը նախատեսված չէ պայթեցման եղանակով:***

Ներքին գործերի նախարարությունից ստացված պատասխան գրությամբ, ի թիվս այլնի, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/1 հասցեում գտնվող բազմահարկ շենքի պայթեցման վերաբերյալ ՆԳՆ ***«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված թիվ 1510 եզրակացությունը վերաբերվում է շենքի պայթեցման հնարավորությանը, ոչ թե պայթեցման հետևանքով հարակից շենքերի անվտանգության ապահովմանը***, ուստի առաջարկվել է քանդման աշխատանքներ իրականացնող ընկերության կողմից Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/1 հասցեում գտնվող բազմահարկ շենքի պայթեցման աշխատանքներն իրականացնել հարակից շենքերի (Պարույր Սևակ 5, Պարույր Սևակ 8, Պարույր Սևակ 8/1, 8/2) վրա պայթեցման ազդեցության գնահատումից հետո, որը կարող է իրականացվել համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից:

Տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, ***որ պայթեցման եղանակով ապամոնտաժում իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերությունը Երևանի քաղաքապետարանից ստանա Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/1***

---

[510] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3067, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հասցեում գտնվող բազմահարկ շենքի ապամոնտաժման թույլտվություն՝ պայթեցման եղանակով: Նշվել է նաև, որ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը թույլտվություններ տալու գործառույթ չունի:

2024 թվականի սեպտեմբերի 11-ին Պարույր Սևակի 5/1 հասցեի բնակիչների կողմից Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, որ նշված հասցեում գտնվող բազմաբնակարան շենքերի մի մասն ապամոնտաժվել է: Տրամադրվել են նաև տեսանյութեր[511] և լուսանկարներ:

Վերոգրյալի հետ մեկտեղ բնակիչներն իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ նախապես չեն տեղեկացվել ապամոնտաժման աշխատանքների վերաբերյալ: Հավելել են, որ այդ աշխատանքներն իրականացնելիս չեն պահպանվել անվտանգության կանոնները, մասնավորապես՝ աշխատանքների իրականացման ընթացքում ներկա չեն եղել Ոստիկանության ծառայողները, տվյալ հատվածում շարունակվել է տրանսպորտային միջոցների անխոչընդոտ երթևեկությունը, ինչպես նաև որոշ պարագաներում առաջացել են երեխաների անվտանգության հետ կապված խնդիրներ: Նշվածը հավաստվում է նաև տրամադրված տեսանյութերով և լուսանկարներով:

Խնդրի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմ Ոստիկանությունից ստացված նախնական պարզաբանման համաձայն՝ քանդման աշխատանքներ իրականացնող ընկերությունը դիմել է Ոստիկանություն՝ հայտնելով, որ 2024 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ժամը 10:00-14:00 ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել Պ. Սևակի 5/1 հասցեի ապամոնտաժման աշխատանքներ: Նշվել է նաև, որ հիշյալ հասցեում 2024 թվականի սեպտեմբերի 11-ին իրականացված ապամոնտաժման աշխատանքներում Ոստիկանության ծառայողներ ներգրավված չեն եղել:

Նշվածի հետ մեկտեղ, Երևանի քաղաքապետարանից Պաշտպանի աշխատակազմ նախնական տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, որ Պարույր Սևակի 5/1 հասցեի փլուզումը տեղի է ունեցել շինարարական աշխատանքները կատարելիս:

[511] Քաղաքացիների ներկայացրած տեսանյութերից մեկը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=SNlvSe4zWCA , 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նույն օրը՝ 2024 թվականի սեպտեմբերի 11-ին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային հայտարարությամբ՝ խիստ մտահոգիչ և անթույլատրելի է համարել մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող, շրջակա միջավայրին վնաս հասցնող եղանակով, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոնների պահանջների առերևույթ չպահպանմամբ՝ Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/1 հասցեում գտնվող բազմահարկ շինությունների մի մասի ապամոնտաժումը:

Պաշտպանը հատուկ ընդգծել է նաև, որ ոլորտը կարգավորող իրավական ակտերի և բազմահարկ շենքի ապամոնտաժման եղանակների, ինչպես նաև քանդման թույլտվության հիմքում ընկած փաստաթղթերի և առաջարկվող քանդման եղանակների միջև առկա առերևույթ հակասությունների մասին ավելի վաղ տեղեկացրել էր իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պահանջել խնդիրը մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան լուծելու առնչությամբ պատշաճ քայլեր ձեռնարկել: Ավելին, նշված հարցի առնչությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ Պաշտպանի նախաձեռնությամբ կազմակերպվել են մի շարք քննարկումներ:

Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգիչ է համարել և այն, որ այս ամիսների ընթացքում տարբեր ձևաչափով իրականացվել են ապամոնտաժման գործընթացի հետ կապված աշխատանքներ, մինչդեռ հարակից շենքերի բնակիչները որևէ կերպ պատշաճ եղանակով տեղեկացված չեն եղել, ինչը վերջիններիս մոտ առաջացրել է հոգեճնշող և խուճապային տրամադրություններ: Ավելին, որոշ իրավիճակներում Պաշտպանն արձանագրել է երեխաների անվտանգության հետ կապված խնդիրներ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Պաշտպանն ընդգծել է, որ ներկայացված նախնական առանձին տեղեկություններն առ այն, որ աշխատանքների իրականացման ժամանակ տեղի է ունեցել փլուզում, որևէ կերպ չի վերացնում պետության և աշխատանքներն իրականացնող սուբյեկտների պարտավորություններն ու պատասխանատվությունն այս բնագավառում, այդ թվում՝ իրականացվող աշխատանքների անվտանգության ապահովման տեսանկյունից:

Պաշտպանը նշել է նաև, որ այս ամենը հանգեցրել է և շարունակում է հանգեցնել մարդկանց, այդ թվում՝ երեխաների մի շարք իրավունքների խախտման: Հաշվի առնելով, որ ապամոնտաժման աշխատանքներն ավարտին չեն հասցվել, նկատի ունենալով բնակիչների բազմաթիվ դժգոհությունները, ինչպես նաև խիստ մտահոգիչ համարելով առկա իրավիճակը՝ Պաշտպանն արձանագրել է, որ պետք է անհապաղ

միջոցներ ձեռնարկվեն մարդու իրավունքների հետագա խախտումները բացառելու ուղղությամբ[512]:

Իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների (անգործության), ինչպես նաև ապամոնտաժման աշխատանքներն իրականացնելու գործընթացում ներգրավված անձանց և կազմակերպությունների կողմից հնարավոր խախտման հանգամանքները քրեական վարույթի շրջանակում քննարկման առարկա դարձնելու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն: Պաշտպանը գրություն է հասցեագրել նաև համապատասխան տեսչական մարմիններին, իրենց իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկելու պահանջով:

Բարձրացված հարցի կապակցությամբ Գլխավոր դատախազության պատասխան գրությամբ, մասնավորապես, ներկայացրել է տեղեկատվություն այն մասին, որ *ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ձեռնարկված ստուգողական գործողությունների արդյունքում տվյալներ են ստացվել, որ Երևան քաղաքի Պ. Սևակ 5/1-րդ հասցեում գտնվող 6832.2մ² **շենքը չի պայթեցվել, այլ ծանր տեխնիկայով ճոպանները քաշելու միջոցով կտրարվել է քանդում:***

Ուսումնասիրության է ենթարկվել նաև նշված շենքի ապամոնտաժման նախագիծը և քանդման թույլտվությունը, որով պարզվել է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության վերաբերյալ որևէ եզրակացություն կամ փաստաթուղթ առկա չէ:

Հաշվի առնելով, որ քաղաքաշինության օբյեկտը շահագործումից հանելու աշխատանքների իրականացման ընթացքում առերևույթ խախտվել են շրջակա միջավայրի պահպանության օրենսդրության պահանջները, մասնավորապես՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ ենթամասի «ա» կետով և 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթները, 2024 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ ՔԿ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 09109924 քրեական վարույթը:

Բացի այդ, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնից ստացված պատշաճ հաղորդման համաձայն՝ 2024 թվականի սեպտեմբերի 24-ին տեղեկություն է ստացվել, որ Երևան քաղաքի Պարույր Սևակ 5/1-րդ հասցեում գտնվող շենքի մի հատվածը, որը դեռ ապամոնտաժված չի եղել, քանդվել է 2024 թվականի սեպտեմբերի 23-ին:

Ձեռնարկված ստուգողական գործողությունների արդյունքում տվյալներ են ձեռք բերվել, որ քանդման աշխատանքներ իրականացնող ընկերությունն օրենսդրությամբ սահմանված կարգի, մասնավորապես՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների խախտմամբ՝ իրացրել է իր ենթադրյալ իրավունքները և Երևան քաղաքի Պարույր Սևակ 5/1 հասցեում գտնվող կիսաքանդ շինության մի մասը ծանր տեխնիկայով ճոպանները քաշելու միջոցով քանդել է՝ այդ կերպ քաղաքաշինական

---

[512] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3099, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

օբյեկտը շահագործումից հանելու աշխատանքների իրականացման ընթացքում խախտելով շրջակա միջավայրի պահպանության օրենսդրության պահանջները, մասնավորապես ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ ենթամասի «ա» կետով և 18-րդ հոդվածի 1-ի մասով նախատեսված պահանջները:

Տեղեկացվել է նաև, որ դեպքի առթիվ 2024 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ ՔԿ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին մասով և 460-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 09113824 քրեական վարույթը: 2024 թվականի սեպտեմբերի 4-ին որոշում է կայացվել թիվ 09109924 և թիվ 09113824 քրեական վարույթները միացնելու մասին, ձեռնարկվում են միջոցներ պատշաճ և համակողմանի նախաքննություն ապահովելու ուղղությամբ:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից ստացվել է պատասխան առ այն, որ Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/1 հասցեում գտնվող բազմահարկ շենքի քանդման արդյունքում առաջացած փոշու արտանետումների դեպքի կապակցությամբ, տեսչական մարմնում քաղաքացիների ահազանգի հիման վրա 2024 թվականի սեպտեմբերի 12-ին հարուցվել է վարչական վարույթ՝ քանդման աշխատանքներ իրականացնող ընկերության նկատմամբ: Նշվել է, որ վարչական վարույթի ավարտից հետո արդյունքների մասին կներկայացվի լրացուցիչ տեղեկատվություն:

Հաջորդիվ, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից ի լրումն ստացվել է տեղեկատվություն, որի բովանդակությունից պարզ է դառնում, որ նկատի ունենալով տվյալ փաստով քրեական վարույթի առկայությունը և հիմք ընդունելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջը՝ Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/1 հասցեում գտնվող բազմահարկ շենքի քանդման արդյունքում առաջացած փոշու արտանետումների դեպքի կապակցությամբ տեսչական մարմնում սեպտեմբերի 12-ին հարուցված վարչական վարույթը կարճվել է:

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից ստացվել է պատասխան այն մասին, որ տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի զեկուցագրի, Պաշտպանի գրությամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա տեսչական մարմնում 2024 թվականի սեպտեմբերի 19-ին քանդման աշխատանքներ իրականացնող ընկերությունում հարուցվել է թիվ 190924-1472 վարչական վարույթ:

Զննման ժամանակ պարզվել է, որ 2024 թվականի օգոստոսի 12-ին քանդման աշխատանքներ իրականացնող ընկերության և մեկ այլ ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ վերջինս հանդիսանում է կապալառու: Ըստ պայմանագրի՝ կապալառուն պարտավորվում է պատվիրատուի հանձնարարությամբ կատարել շենքի քանդման և շինարարական աղբի հեռացման աշխատանքներ՝ քաղաք Երևան, Պարույր Սևակ 5/1 հասցեում: Կապալառուի և անհատ ձեռնարկատիրական գործունեություն ծավալող անձի միջև 2024 թվականի օգոստոսի 20-ին կնքվել է շինարարական կապալի պայմանագիր, ըստ որի՝ անհատ ձեռնարկատերը պարտավորվում է պատվիրատուի հանձնարարությամբ կատարել շենքի քանդման և

շինարարական աղբի հեռացման աշխատանքներ՝ քաղաք Երևան, Պարույր Սևակ 5/1 հասցեում:

Տեսչական մարմնում 2024 թվականի հոկտեմբերի 16-ին Ա/Ձ-ում հարուցվել է վարչական վարույթ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 85-րդ, 244-րդ, 246-րդ, 248-րդ, 254-րդ, 255-րդ հոդվածների, ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի թիվ 756-Ն հրամանով հաստատված «Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» N 2.2-002-05 սանիտարական կանոնների և նորմերի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 26-ի թիվ 21-Ն հրամանի հավելվածով, պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի հոկտեմբերի 24-ին իրականացված զննման ժամանակ պարզվել է, որ ք. Երևան, Պարույր Սևակ 5/1 հասցեում շենքի քանդման աշխատանքներն ավարտված են և իրականացվում է շինարարական աղբի հեռացման աշխատանքներ:

Վարչական վարույթի արդյունքում 2024 թվականի նոյեմբերի 13-ին ընդունվել է արձանագրված խախտումները վերացնելու մասին թիվ 0467 կարգադրագիրը, որով անհատ ձեռնարկատիրոջը հանձնարարվել է.

1) ապահովել աշխատանքային գործունեության ընթացքում արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների (բանվորներ) ովքեր աշխատանքային գործունեության ընթացքում ենթարկվում են աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը (ֆիզիկական գերծանրաբեռնվածությունների գործոնների հետ կապված աշխատանքներ) սահմանված կարգով պարտադիր բժշկական զննության իրականացումը,

2) շինարարական հրապարակն ապահովել երկդռնանի հանդերձապահարաններով կահավորված հանդերձարաններով և ցնցուղարանով,

3) ապահովել աշխատողների (բանվորների) աշխատանքի անվտանգ կատարման ուսուցումը կամ հրահանգավորումը,

4) ապահովել շինարարական հրապարակում աշխատող անձնակազմի (բանվորներ) կողմից արտահագուստի, փակ կոշիկների, գլխի պաշտպանիչ սաղավարտների կրումը:

Հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 230-րդ հոդվածը և հաշվի առնելով վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումները՝ տեսչական մարմնում 2024 թվականի նոյեմբերի 14-ին հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ստացվել է պատասխան, մասնավորապես, առ այն, որ ***<u>ընկերության կողմից քանդման աշխատանքներն իրականացվում են Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականի մարտի 26-ին տրված՝ թիվ 01/50-05-12-24 քանդման թույլտվության համաձայն:</u>***

Նշվել է նաև, որ տեսչական մարմնի մասնագետներն ուսումնասիրել են քանդման թույլտվության հիմք հանդիսացող փորձաքննություն անցած քանդման նախագիծը, ըստ որի՝ ***<u>շինության քանդման աշխատանքները հնարավոր է իրականացնել պայթեցման կամ մեխանիկական քանդման եղանակներով:</u>***

Այս մոտեցումը, մեր կարծիքով, խնդրահարույց է, քանի որ քանդման թույլտվության և դրա հիմքում ընկած փաստաթղթերի ուսումնասիրությունը, նախաձեռնված քրեական վարույթի առկայությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ անցկացված մի շարք քննարկումների արդյունքները, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացված պարզաբանումներն առերևույթ վկայում են հակառակի մասին:

Նշվածի համատեքստում Պաշտպանը հատուկ ընդգծում է և տեսչական մարմնի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքին, որ վերջինս պարտավոր է պատշաճ ջանասիրություն դրսևորել՝ կոնկրետ դեպքերը բազմակողմանի ուսումնասիրելու և դրանց քննարկումն իր լիազորությունների տիրույթում ամբողջական ապահովելու համար:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող, շրջակա միջավայրին վնաս հասցնող եղանակով, ինչպես նաև աշխատանքի անվտանգության կանոնների պահանջների չպահպանմամբ շինությունների ապամոնտաժման հետ կապված հարցերը հետագայում նույնպես գտնվելու են Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո և դրանց ընթացքի նկատմամբ իրականացվելու է հետագա հետևողական աշխատանք:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն արձանագրում է, որ մարդու իրավունքների հետագա խախտումները բացառելու տեսանկյունից չափազանց կարևոր է.

- ***համանման գործընթացների պարագայում մշտապես առաջնորդվել ինչպես օրենսդրության պահանջների, այնպես էլ մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահպանմամբ,***
- ***անհապաղ միջոցներ ձեռնարկել ոլորտի իրավահարաբերություններն առավել համապարփակ կարգավորելու և գործող կարգավորումները կատարելագործելու ուղղությամբ,***
- ***հարակից շենքերի բնակիչների շրջանում ապամոնտաժման վերաբերյալ իրազեկման պատշաճ աշխատանքների իրականացումը[513], բնակիչների հետ հանդիպումների ձևաչափերով՝ պատշաճ հանրային լսումների իրականացումը, բնակիչների պատշաճ մասնակցության ու ներգրավվածության ապահովումը, ինչպես նաև գործընթացի շրջանակներում հրապարակայնության պահպանումը:***

5. Սահմանափակումների դադարման (վերացման) պետական գրանցումն իրականացնելու հետ կապված օրենսդրական խնդիր

2024 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների դադարման (վերացման) պետական գրանցումն իրականացնելու հետ կապված օրենսդրական խնդիր, որը բացասական

[513] Մասնավորապես, առանցքային է ապամոնտաժման եղանակների, հնարավոր հետևանքների, օրվա և ժամի, ինչպես նաև քանդման թույլտվության և դրա հիմքում ընկած փաստաթղթերի մասին ամբողջական տեղեկատվության ներկայացումը:

ազդեցություն է ունենում անձի սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու սահմանադրական իրավունքի իրացման վրա:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ քրեական գործի շրջանակում 2016 թվականի հունիս ամսին վարույթն իրականացնող քննիչի կողմից կայացվել է «Գույքի վրա կալանք դնելու մասին» որոշում, որի հիման վրա իր հորը սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հարող հողամասերի նկատմամբ կիրառվել է սահմանափակում (կալանք): Այնուհետև, բողոքը ներկայացրած անձի տեղեկացմամբ, քրեական գործը փոխանցվել է դատարան:

Հավելել է, որ գործը դատարանում քննվելու ընթացքում իր մոտ հայտնաբերվել է ծանր հիվանդություն, ինչով պայմանավորված՝ վիրահատության անհրաժեշտություն է առաջացել: Նշել է նաև, որ վիրահատության համար անհրաժեշտ գումարը հավաքելու համար առաջացել է իր հորը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը վաճառելու անհրաժեշտություն, հետևաբար բնակելի տան նկատմամբ կիրառված կալանքը վերացնելու վերաբերյալ միջնորդություն են ներկայացրել դատարան:

Բողոքը ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ դատարանը 2023 թվականի ապրիլ ամսին տեղի ունեցած դատական նիստում արձանագրային որոշմամբ վերացրել է վարույթն իրականացնող քննիչի կողմից 2016 թվականի հունիս ամսին անշարժ գույքի նկատմամբ կիրառված կալանքը, որի կապակցությամբ համապատասխան գրություն է հասցեագրել ՀՀ կադաստրի կոմիտե:

Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ ՀՀ կադաստրի կոմիտեն իրեն տեղեկացել է, որ անշարժ գույքի նկատմամբ կիրառված արգելանքը վերացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել քրեական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Վերոնշյալի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել Կադաստրի կոմիտե, որին ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ ըստ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ սահմանափակումների պետական գրանցման համար հիմք են ***դատական ակտերը***, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, նախաքննություն իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված որոշումները, իսկ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *սույն հոդվածով սահմանված կարգով գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցումն իրականացվում է սահմանափակումը վերացնելու (դադարեցնելու) մասին* ***համապատասխան փաստաթղթի հիման վրա***:

Հայտնել է նաև, որ վերը նշված օրենքի 24-րդ և 26-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ սահմանափակման դադարման պետական գրանցման համար սահմանված կարգով դիմում և դատարանի վերը նշված արձանագրային որոշումը կա՛մ Կադաստրի կոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից), կա՛մ Կադաստրի կոմիտեի պաշտոնական www.e-cadastre.am կայքի միջոցով ներկայացվելու դեպքում կուսումնասիրվեն կադաստրային գործում առկա նյութերը, և դիմումին կտրվի համապատասխան ընթացք:

Ստացված տեղեկատվությունը փոխանցվել է բողոք ներկայացրած անձին: Ավելի ուշ՝ վերջինս Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել է լրացուցիչ տեղեկատվություն առ այն, ***որ խնդիրը վերջնական լուծում է ստացել միայն ամիսներ անց***: Հավելել է, որ դիմում է ներկայացրել դատարան, ստացել արձանագրային որոշման քաղվածքը, այն կցել է Կադաստր կոմիտե ներկայացվող դիմումին և դրանից հետո նոր հարցը ստացել է լուծում:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով իրավաբանական անձի ներկայացուցիչը հայտնել է, որ 2024 թվականի հուլիսի ամսին տեղի ունեցած դատական նիստում դատարանի կողմից կայացված արձանագրային որոշմամբ՝ իր վստահորդի ընկերությանը պատկանող անշարժ գույքերի նկատմամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թվականի հունվարի ամսի «Գույք արգելադրելու մասին» որոշմամբ կիրառված արգելանքները վերացվել են:

Բողոք ներկայացրած անձի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ դատարանը 2024 թվականի հուլիսի ամսին գրություն է հասցեագրել ՀՀ կադաստրի կոմիտե գույքի վրա կիրառված արգելանքները վերացնելու պահանջի մասին:

Բողոք ներկայացրած անձն իր մտահոգությունն է հայտնել առ այն, որ ՀՀ կադաստրի կոմիտեն, առանց պատշաճ իրավական հիմնավորման, հրաժարվում է դատարանի գրության հիման վրա վերացնել կիրառված արգելանքները, նշելով առանձին որոշման ձևով արգելանքները վերացնելու որոշում կայացնելու և դրանք կոմիտեին ներկայացնելու անհրաժեշտությունը:

Բողոք ներկայացրած անձը նշել է նաև, որ բարձրացված խնդրով դիմել է ՀՀ կադաստրի կոմիտե, որին ի պատասխան՝ տեղեկացվել է, որ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, ինչպես նաև «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, ***անհրաժեշտ է ներկայացնել սահմանափակումը վերացնելու վերաբերյալ դատարանի կողմից կայացված առանձին որոշում***:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ ՀՀ կադաստրի կոմիտեն, առանց պատշաճ հիմնավորման, չի ապահովում դատական ակտի կատարումը: Մասնավորապես, նշել է, որ քրեական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածը վերաբերում է մինչդատական վարույթին՝ նախաքննության փուլին և չի կարող կիրառելի լինել դատական քննության փուլում գտնվող գործերի նկատմամբ, իսկ քննարկվող գործը գտնվում է դատական քննության փուլում: Հավելել է նաև, որ նշված իրավիճակին վերաբերելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-րդ հոդվածը, որում, մասնավորապես, գույքն արգելադրումից հանելու որոշումը կայացնելու ձևաչափը բացառապես դատարանի հայեցողության շրջանակում է:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր վստահորդների սեփականության իրավունքի շարունակական խախտումը վերացնելու և դատական ակտի անխոչընդոտ կատարումն ապահովելու հարցերում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը գրություն է հասցեագրել Կադաստրի կոմիտե՝ իրավական վերլուծությամբ անդրադառնալով բարձրացված հարցին: Գրությամբ, մասնավորապես, նշվել է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մի շարք հոդվածների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ դատական նիստի ընթացքում լուծվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում՝ նախապես լսելով դատական նիստին մասնակցող կողմերի

կարծիքները: ***Դատական նիստի ընթացքում դատարանի կողմից որոշումները կայացվում են առանձին փաստաթղթի ձևով կամ ներառվում են դատական նիստի արձանագրության մեջ:***

Նախկին օրենսդրության համեմատությամբ, օրենսգիրքն ընդարձակել է առանձին փաստաթղթի ձևով կայացվող որոշումների շրջանակը՝ ներառելով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, խափանման միջոցը վերացնելու, փոխելու, անփոփոխ թողնելու, դրա ժամկետը երկարաձգելու կամ այն կիրառելու, ինքնաբացարկ հայտնելու, բացարկն ընդունելու, վարույթին մասնակցելուց ազատելու, փորձաքննություն նշանակելու, ապացույցն անթույլատրելի ճանաչելու, դատական տուգանք նշանակելու, վարույթից հեռացնելու մասին որոշումները: Սակայն, առանձին փաստաթղթի ձևով կայացվող որոշումների այս ցանկը սպառիչ չէ:

Դատարանի կողմից կայացող բոլոր այն որոշումների համար, որոնք պետք է կայացվեն առանձին փաստաթղթի ձևով, օրենսգիրքն օգտագործում է ***«առանձին փաստաթղթի ձևով»*** կայացվող որոշում կամ ***«առանձին որոշում»*** ձևակերպումները: Մնացած բոլոր որոշումների համար առանձին փաստաթղթի ձևով կայացնելու պարտադիր պահանջ նախատեսված չէ, *սակայն դատարանն իրավասու է իր հայեցողությամբ ցանկացած որոշում կայացնել առանձին փաստաթղթի ձևով:* Բոլոր որոշումները, այդ թվում՝ առանձին փաստաթղթի ձևով կայացվող որոշումները դատարանը կայացնում է դատական նիստի դահլիճում՝ առանց որոշում կայացնելու համար առանձին սենյակ հեռանալու: Օրենսգիրքն այս կանոնից միակ բացառությունը սահմանում է վերդիկտի և վարույթը եզրափակող դատական ակտի համար, որոնք կայացվում են առանձին սենյակում:

Դատարանի կողմից կայացվող բոլոր որոշումները, անկախ նրանից՝ կայացվել են առանձին փաստաթղթի ձևով, թե ոչ, հրապարակվում են դատական նիստում, իսկ առանձին փաստաթղթի ձևով կազմված որոշումները նաև երեք օրվա ընթացքում տրամադրվում են կողմերին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի՝ սույն օրենսգրքում օգտագործվող ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը (…) ***դատական ակտ՝ դատարանի կայացրած որոշում կամ դատավճիռ***:

Գրությամբ նշվել է նաև, որ սույն դեպքում դատարանն իր հայեցողությամբ կայացրել է ընկերությանը պատկանող անշարժ գույքերի նկատմամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թվականի հունվար ամսի «Գույքն արգելադրելու մասին» որոշմամբ կիրառված արգելանքները վերացնելու մասին որոշում և դա մտցրել է դատական նիստի արձանագրության մեջ:

Ի դեպ, բողոք ներկայացրած անձի կողմից Պաշտպանի աշխատակազմ ներկայացված լրացուցիչ տեղեկատվության համաձայն՝ վերջինս ՀՀ կադաստրի կոմիտե է ներկայացրել նաև դատական նիստի արձանագրության քաղվածքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը Կադաստրի կոմիտեին ուղղված գրությամբ առաջարկել էր քննարկել ընկերությանը պատկանող անշարժ գույքերի նկատմամբ կիրառված արգելանքները վերացնելու հարցը:

Ի պատասխան՝ Կադաստրի կոմիտեից հայտնել են, որ կադաստրային գործերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երկրորդ վարչության պետի տեղակալի «Գույք արգելադրելու մասին» որոշման

համաձայն՝ արգելանք է կիրառվել ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի նկատմամբ:

Այնուհետև, ընկերության ներկայացուցչի կողմից Կադաստրի կոմիտե է ներկայացվել ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի հուլիս ամսվա գրությունը՝ նույն դատարանի 2024 թվականի հուլիսի 15-ի արձանագրային որոշմամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի նկատմամբ կիրառված արգելանքները վերացվելու վերաբերյալ, սակայն կիրառված արգելանքները չեն վերացվել՝ հիմք ընդունելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները: Մասնավորապես, նշված հոդվածի պահանջների համաձայն՝ սույն հոդվածով սահմանված կարգով գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցումն իրականացվում է սահմանափակումը վերացնելու (դադարեցնելու) մասին համապատասխան փաստաթղթի հիման վրա, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այնպիսի հանգամանքների երևան գալով, որոնք օրենքի հիման վրա դադարեցնում են կիրառված սահմանափակման գործողությունը:

Նշել են նաև, որ 2024 թվականի սեպտեմբերի 11-ին ընկերության ներկայացուցչի կողմից կրկին Կադաստրի կոմիտե է ներկայացվել *ՀՀ հակակոռուպցիոն դատարանի գրությունը և 2024 թվականի հուլիս ամսին կայացած դատական նիստի արձանագրման համառոտագրումը, որն էլ հիմք է հանդիսացել անշարժ գույքերի նկատմամբ կիրառված արգելանքները վերացնելու համար:*

Ավելի ուշ՝ ընկերության ներկայացուցիչը նամակով իր գոհունակությունն է հայտնել Պաշտպանի հաստատությանը՝ հաստատելով, որ բողոքում բարձրացված խնդիրը ստացել է լուծում և անշարժ գույքերի նկատմամբ կիրառված արգելանքները վերացվել են:

Վերոգրյալի համատեքստում՝ Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ չնայած՝ անհատական մակարդակում արձանագրված դրական արդյունքներին՝ այնուամենայնիվ խնդիրն ունի համակարգային լուծման կարիք: Այս առումով, ՀՀ կադաստրի կոմիտեն պետք է միջոցներ ձեռնարկի գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների դադարման (վերացման) պետական գրանցումն իրականացնելու կառուցակարգերն օրենսդրական մակարդակում լրամշակելու (կատարելագործելու) ուղղությամբ՝ այն հաշվով, որ դրանք առավել համահունչ լինեն Քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումների տրամաբանությանը:

6. Թափառող շների հարձակումների կանխարգելման խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացնում է թափառող շների հարձակումների կանխարգելման հետ կապված համակարգային խնդիրը[514]:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին Պաշտպանին ներկայացված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, ինչպես նաև

[514] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 857-860, 793-797, 173-175):

զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ Երևան քաղաքում և հանրապետության տարբեր համայնքներում թափառող շների հարձակումները պարբերաբար բնույթ են կրում:

Տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2024 թվականին խնդրի վերաբերյալ բողոքներ են ստացել նաև մարզպետարանները: Ընդ որում, դրանց քանակական պատկերը մարզից մարզ (համայնքից համայնք) խիստ տարբեր է: Այսպես, օրինակ՝ ըստ Շիրակի մարզպետի աշխատակազմից ստացված տվյալների՝ 2024 թվականին ստացվել է թվով 29 դիմում-բողոք *(որոնցից՝ Գյումրիում՝ 16, Արթիկում՝ 6, Ախուրյանում՝ 6, Ամասիայում՝ 1)*, ըստ Կոտայքի մարզպետի աշխատակազմից ստացված տվյալների՝ մարզի համայնքներում թափառող շների վնասազերծման հարցերով ստացվել է շուրջ 418 բողոք, Արագածոտնի մարզպետի աշխատակազմ 2024 թվականի ընթացքում թափառող շների վնասազերծման հարցերով ստացվել շուրջ 200 բողոք: Ըստ Արարատի մարզպետի աշխատակազմից ստացված տվյալների՝ Արտաշատ համայնքում շան կծելու դեպք չի գրանցվել (եղել են հեռախոսային ահազանգեր՝ թեժ գծով շների հարձակումների վերաբերյալ), Մասիս համայնքում ստացվել են թափառող շների վերաբերյալ 200-ից ավելի ահազանգեր, Արարատ համայնքում ներկայացվել է 1 գրավոր բողոք թափառող կենդանիների վերաբերյալ, Վերին Դվին համայնքում թափառող շների վերաբերյալ բողոք չի եղել: Ըստ Արմավիրի մարզպետի աշխատակազմից ստացված տվյալների՝ թափառող շների վնասազերծման խնդրով ստացվել է 1 բողոք՝ Վաղարշապատ համայնքի բնակչից: Ըստ Լոռու մարզպետի աշխատակազմից ստացված տվյալների՝ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն թափառող շների վնասազերծման հարցերով ստացվել է թվով 2 դիմում (Վանաձոր համայնքի բնակիչներից): Ըստ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տրամադրած տվյալների՝ Սիսիան համայնքում բնակչության կողմից ստացվել են բազմաթիվ բողոքներ (բանավոր կարգով) թափառող շների ագրեսիվ պահվածքի վերաբերյալ, Մեղրի համայնքում թափառող շների հարձակման վերաբերյալ ստացվել է 2 դիմում բողոք: Տավուշի մարզպետի աշխատակազմից ստացված տվյալների համաձայն՝ Դիլիջանի համայնքում թափառող շների վնասազերծման հարցերով ստացվել է բանավոր շուրջ 100 բողոք, Իջևան համայնքում՝ ստացվել են 7 գրավոր և 40 բանավոր բողոքներ, Նոյեմբերյան համայնքում ստացվել են բազմաթիվ բանավոր բողոքներ, Բերդ համայնքում թափառող շների հարձակման դեպքեր չեն գրանցվել:

Թեև անհատական մակարդակում Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմնի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում բողոքներով բարձրացվող մի շարք հարցեր 2024 թվականին ստացել են լուծում, այնուհանդերձ նշված խնդիրը համակարգային առումով շարունակում է խնդրահարույց մնալ:

Բարձրացված խնդրի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ բնակվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Նորաշեն թաղամասում: Նշել է նաև, որ նշված տարածքում առկա են թափառող շներ, որոնք ագրեսիվ վարքագիծ են դրսևորում և հարձակվում անցորդների վրա: Հավելել է, որ բազմիցս դիմել է «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ, սակայն խնդիրն այդպես էլ լուծում չի ստացել: Պաշտպանի ներկայացուցիչը

բարձրացված հարցը քննարկել է նշված ՀՈԱԿ-ի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ 3 աշխատանքային օրվա ընթացքում կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ: Ավելի ուշ՝ Մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձը լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել առ այն, որ խնդիրը կարգավորվել է և թափառող շները տեղափոխվել են այլ վայր:

Մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում թափառող շունն իր ձագերի հետ մնում է իրենց բազմաբնակարան շենքի 5-րդ հարկում: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը թափառող շների տեղափոխումն իրականացնելու հարցում: Բարձրացված հարցի լուծման նպատակով Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ներկայացուցչի հետ: Վերջինս իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել խնդրի շուտափույթ լուծմանը: Հաջորդիվ՝ բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ իրավասու մարմինների միջամտության արդյունքում թափառող շները շենքից տեղափոխվել են այլ վայր:

Մյուս բողոքով քաղաքացին հայտնել է, որ Գյումրի քաղաքի փողոցներից մեկում մշտապես թափառող շների պատճառով իր երեխաները զրկված են բակ դուրս գալու հնարավորությունից: Վերջինիս տեղեկացմամբ՝ նշված խնդրով դիմել է տարբեր իրավասու մարմինների, այդ թվում՝ Գյումրու համայնքապետարան, սակայն հարցին լուծում չի տրվել: Պաշտպանի՝ Գյումրու համայնքապետարան հասցեագրած գրությանն ի պատասխան՝ տրամադրվել է պարզաբանում այն մասին, որ բողոքում ներկայացված խնդիրը լուծվել է և շները տեղափոխվել են այլ վայր:

Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների կողմից բարձրացված խնդիրների լուծման նպատակով իրականացված քայլերը, այնուհանդերձ մեկ անգամ ևս ընդգծում է, որ դրանք իրավիճակային են և համակարգային առումով խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Մարդկանց վրա թափառող շների հարձակումների հետ կապված խնդիրը Պաշտպանի աշխատակազմը 2024 թվականի ընթացքում ուսումնասիրել է նաև սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման միջոցով:

Այսպես, հրապարակումներից մեկի ուսումնասիրության արդյունքում տեղեկություններ են ստացվել առ այն, որ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ոսկեհասկ բնակավայրում 2024 թվականի հուլիսի 16-ին թափառող շունը հարձակվել է մոր և երեխայի վրա, ինչի արդյունքում վերջիններս տեղափոխվել են հիվանդանոց[515]: Մեկ այլ հրապարակման ուսումնասիրության արդյունքում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ 2024 թվականի հուլիսի 30-ին Արագածոտնի մարզի Նոր Երզնկա համայնքի Եղվարդի խճուղի 6/6 հասցեում թափառող շունը հարձակվել է 32-ամյա քաղաքացու վրա: Հրապարակման համաձայն՝ քաղաքացին մարմնի տարբեր հատվածներում վնասվածքներով տեղափոխվել է Աշտարակի բժշկական կենտրոն[516]:

---

[515] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://oragir.news/hy/material/2024/07/17/123761, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[516] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://shamshyan.com/hy/article/2024/07/30/1266554, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նշված դեպքերի կապակցությամբ Պաշտպանը սեփական նախաձեռնությամբ սկսել է քննարկման ընթացակարգեր և համապատասխան գրություններ հասցեագրել իրավասու մարմիններին:

Մարդու իրավունքների պաշտպանի 2024 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից պարզաբանել են, որ «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ն իրականացնում է թափառող կենդանիների թվաքանակի կանոնակարգման ծրագիր՝ ստերջացման եղանակով: Ծրագիրը ենթադրում է անտուն, թափառող կենդանիների բռնում, նախնական հետազոտություն, վտանգավոր վարակիչ հիվանդությունների առկայության դեպքում ըստ «Անասնաբուժության մասին» օրենքի քնեցում, առողջ կենդանիների ստերջացում, պատվաստում կատաղություն հիվանդության դեմ: Գործընթացի ավարտից հետո կենդանիները վերադարձվում են տարածք՝ ականջներին կրելով տարբերանշաններ:

Հաջորդիվ, Երևանի քաղաքապետարանից ստացվել է նաև տեղեկատվություն այն մասին, որ Երևան քաղաքում «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի տարածքում շների կացարանի կառուցմամբ նախատեսվում է պահել մինչև 300 կենդանի: 2024 թվականին իրականացվել են նախագծային աշխատանքները: Այժմ նախագիծը փորձաքննության փուլում է և ավարտից հետո կսկսվեն շինարարական աշխատանքները:

Նույն խնդրի վերաբերյալ Պաշտպանի հարցադրմանը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ նախարարությունը թափառող շների վնասազերծման հարցերով ստացել է շուրջ 10 բողոք: Թափառող կենդանիների վնասազերծման խնդիրներին լուծում տալու, համայնքներին մեթոդական օժանդակություն տրամադրելու, ինչպես նաև թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման գործընթացում միասնական մոտեցում ցուցաբերելու նպատակով ՏԿԵՆ-ի, Երևանի քաղաքապետարանի և Երևան քաղաքում «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից մշակվել է հանրապետության համայնքներում «Թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների» տեխնիկական բնութագիրը: Տրամադրած տեղեկատվության համաձայն՝ համայնքներին առաջարկվել է թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման համար մրցույթները հայտարարել վերը նշված բնութագրի համաձայն: Հայտնել են նաև, որ շուրջ 30 համայնքում իրականացվել է թափառող կենդանիների վնասազերծման գործընթաց: Գործընթացի ավարտից հետո առողջ կենդանիները վերադարձվում են տարածք՝ ականջներին կրելով տարբերանշաններ:

Պաշտպանը կարևորում է իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված աշխատանքները, այնուհանդերձ հատուկ ընդգծում է, որ խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ են համատեղ ջանքեր, ինչպես նաև մասնագիտական քննարկումներ բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ կենդանիների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ:

Անհրաժեշտ է նաև ստեղծել համապատասխան իրավական դաշտ և նախատեսել բավարար ֆինանսավորում՝ արձանագրված խնդիրներին պատշաճ լուծում տալու համար: Ընդ որում, խնդրի լուծմանն ուղղված միջոցառումները պետք է

կրեն համալիր բնույթ: Այս տեսանկյունից կարևոր է նաև համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ապահովումը:

2024 թվականի ընթացքում ՄԻՊ աշխատակազմի կատարած ուսումնասիրությունները և ստացված տվյալները վկայում են, որ շարունակում է չլուծված մնալ նաև թափառող շների հարձակման հետևանքով մարդկանց առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված խնդիրը: Այսպես, օրինակ՝ Տավուշի մարզպետի աշխատակազմից ստացված վիճակագրական տվյալների համաձայն՝ Նոյեմբերյան համայնքում 2024 թվականին թափառող շների վնասազերծման հարցերով ստացվել են բազմաթիվ բանավոր բողոքներ, որոնք չեն հաշվառվել, սակայն համայնքապետարանի կողմից բուժհաստատություններին կատարած հարցման արդյունքում պարզվել է, որ շան կծածի համար դիմած և բուժօգնություն ստացած անձանց թիվը 2024 թվականին կազմել է 82 անձ:

Խնդրի կապակցությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնել է, որ ***առողջությանը պատճառված վնասը փոխհատուցելու մեխանիզմներ չեն մշակվել:*** Նշել է նաև, որ Ազգային ժողովի պատգամավորներ Մերի Գալստյանի և Արուսյակ Մանավազյանի կողմից նախատեսվում է շրջանառության մեջ դնել «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի և մի շարք օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր, որոնց հաստատմամբ կհստակեցվեն պատկան և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և առաջիկա ծրագրերը:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով, մասնավորապես, անդրադառնալով Ընտանի կենդանիների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի (European Convention for the Protection of Pet Animals[517]) 12-րդ հոդվածի դրույթներին *(ըստ այդմ՝ երբ կողմը համարում է, որ թափառող կենդանիների թիվն իր համար խնդիր է ներկայացնում, այն պետք է ձեռնարկի համապատասխան օրենսդրական և (կամ) վարչական միջոցներ այդպիսի կենդանիների թվի կրճատման համար, այն միջոցներով, որոնք չեն առաջացնում ցավ, տառապանք կամ տանջանք)՝ արձանագրել է պետության պոզիտիվ պարտականության խախտում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքով[518]՝ հարձակման հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտավորությունը դնելով պետության վրա:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ.

✓ ***մարդկանց վրա թափառող շների հարձակման դեպքերը կանխելու ուղղությամբ պետությունը պետք է մշակի և իրացնի առավել արդյունավետ և***

---

[517] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/168007a67d հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[518] Տե՛ս Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 9718/03, կետեր 33, 49, 62, 63 և 80:

գործուն կառուցակարգեր, որոնք առավելագույնս կնպաստեն խնդրի լուծմանը, կապահովեն մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և կբխեն կենդանիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի պահանջներից,

- ***մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ունեցած պոզիտիվ պարտականությունների համատեքստում պետությունը պետք է մշակի և իրացնի կառուցակարգեր՝ թափառող շների հարձակման հետևանքով քաղաքացիների առողջությանը պատճառված վնասի հատուցման վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծման և գործնականում դրանց պատշաճ կիրառության նպատակով:***

ԲԱԺԻՆ 12. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Սույն բաժնում արտացոլված են սոցիալական ապահովության իրավունքին առնչվող և ոլորտում առկա ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական համակարգային բնույթի խնդիրներ, այդ թվում՝ տարիներ շարունակ բարձրաձայնվող և դեռևս լուծում չստացած: Առաջին անգամ առանձին անդրադարձ է կատարվում նաև երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2024-2026 թվականների պետական աջակցության ծրագրի իրականացման, ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման, պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալներին բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում չտրամադրելու խնդիրներին, ինչպես նաև դրանց լուծման կոնկրետ առաջարկներին:

Պաշտպանը 2024 թվականի ընթացքում սոցիալական իրավունքների ապահովման հարցերի շրջանակներում շարունակել է ինչպես գրագրությամբ, այնպես էլ՝ պետական մարմինների հետ հաղորդակցության տարբեր ձևաչափերով ներկայացնել ոլորտային խնդիրներն ու դրանց լուծման եղանակները: Պաշտպանի աջակցությամբ քաղաքացիների կողմից բարձրացված սոցիալական իրավունքների ապահովման հետ կապված բազմաթիվ հարցեր ստացել են դրական լուծում:

Այս ոլորտի առնչությամբ, պետք է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում իրավասու մարմինների հետ հաստատված համագործակցության շրջանակում իրականացվել է ամենօրյա սկզբունքով աշխատանք: Առանձին դեպքերում նաև իրականացվել են համատեղ քննարկումներ: 2024 թվականին սոցիալական իրավունքների ապահովմանն առնչվող հարցերով կազմակերպվել են մի շարք քննարկումներ, որոնց մասնակցել են նաև ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչները:

Սոցիալական ապահովության ոլորտին առնչվող խնդիրների մասով Մարդու իրավունքների պաշտպանն առանցքային է համարում իրավունքահեն կառուցակարգերի միջոցով կանխորոշված խնդիրների հաղթահարումն ու սոցիալական իրավունքների անխոչընդոտ իրացումը:

ԳԼՈՒԽ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը երաշխավորվում է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլև մի շարք միջազգային փաստաթղթերով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքին Պաշտպանն անդրադարձել է իր նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման գործառույթի համատեքստում՝ տարիներ շարունակ ինչպես նորմատիվ իրավական ակտերի նախագծերին կարծիք ներկայացնելու, այնպես էլ հարցերը իրավասու մարմնի առջև բարձրացնելու միջոցով[519]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարական.

Բուհերի ինքնավարությունը ակադեմիական ազատության ինստիտուցիոնալ ձևն է և անհրաժեշտ նախապայման՝ երաշխավորելու բարձրագույն կրթության ուսուցչական անձնակազմին և հաստատություններին վստահված գործառույթների պատշաճ կատարումը[520]:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե.

Ինքնավարությունն ինքնակառավարման այն աստիճանն է, որն անհրաժեշտ է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից արդյունավետ որոշում կայացնելու համար՝ կապված նրանց ակադեմիական աշխատանքի, ստանդարտների, կառավարման և դրանց հետ կապված գործունեության հետ[521]:

Եվրոպայի խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» զեկույցը.

Հայաստանում պետք է մշակել բարձրագույն կրթությանը վերաբերվող նոր առաջնային օրենք, որով պետք է ամրապնդվի բուհերի պատշաճ ինքնավարությունը՝ ներառելով կառավարության տարանջատումը բուհերի կառավարումից՝ հատկապես բուհերի կառավարման մարմինների

---

[519] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 136-141:

[520] Տե՛ս ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականը, 1997թ., հասանելի է https://en.unesco.org/about-us/legal-affairs/recommendation-concerning-status-higher-education-teaching-personnel հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[521] Տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 13-րդ համընդհանուր մեկնաբանությունը, 1999թ., հասանելի է https://www.refworld.org/pdfid/4538838c22.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

անդամակցության մասով: ՀՀ կառավարությունը պետք է հարգի բուհերի պատշաճ ինքնավարությունը ոչ միայն նոր օրենսդրության ընդունման ժամանակ, այլև իր հետագա քաղաքական գործունեության ընթացքում[522]:

Բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտություն ենթադրող գործընթացները 2024 թվականին ևս գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

2024 թվականին շրջանառության մեջ է դրվել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը[523], որի վերաբերյալ գրավոր կարծիք է ներկայացրել Պաշտպանը: Նախագիծն ուղղված է եղել բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ իրավական հենքի ապահովմանը, իսկ ակնկալվող արդյունքներից է եղել բարձրագույն կրթության և գիտության ոլորտում ներգրավված դերակատարների ակադեմիական ազատությունների և ինքնավարության երաշխավորումն ու բուհերի ինքնակառավարման՝ սահմանադրական պահանջից բխող հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների, հաշվետվողականության և ֆինանսավորման անհրաժեշտ լիարժեք մեխանիզմների ներդրմանն աջակցությունը:

Նախածային կարգավորումներով նախատեսվել է հանրային բուհի հոգաբարձուների խորհրդի անդամների առաջադրման կարգը, որը խնդրահարույց է համարել Պաշտպանը՝ բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտելու ռիսկերի առկայությամբ պայմանավորված: Նախագծային կարգավորումներով պետության հիմնադրած բուհերի դեպքում հիմնադիրը պետությունն է, իսկ լիազոր մարմինը՝ պետությունը ներկայացնող նախարարությունը, որը ներկայացնում է պետության շահերը ու իրավունքներ է ձեռք բերում, ստանձնում է պարտավորություններ պետության անունից, ուստի հանրային բուհերի պարագայում հոգաբարձուների խորհրդի 20-ից 10 անդամները (50%) ընտրվելու են պետության կողմից:

Բացի այդ Պաշտպանը խնդրահարույց է համարել այն հանգամանքը, որ նախագծային կարգավորումներ նախատեսված չեն այն դեպքերի համար, երբ ձայները բաշխվում են հավասար համամասնությամբ: Մասնավորապես, Պաշտպանը գտել է, որ նման դեպքերում կարող են առաջանալ իրավիճակներ, երբ մի հարցի շուրջ ձայները կիսվեն՝ արդյունքում հանգեցնելով բարձրագույն ուսումնական հաստատության համար առանցքային հարցերի ընդունման ձգձգմանը և, ըստ այդմ, ուսումնական հաստատության բնականոն գործունեության խաթարմանը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության փոխանցած տվյալներով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծը 2024 թվականի սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 1-ը ներկայացվել է հանրային

---

[522] Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» վերտառությամբ զեկույցը, 2015թ., հասանելի է https://rm.coe.int/16804895e7 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[523] Հասանելի է https://www.e-draft.am/projects/7684/justification հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

քննարկման, ներկայացվել է նաև շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի և վերջիններից ստացված կարծիքների, ինչպես նաև հանրային քննարկման արդյունքում լրամշակվել և ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացության:

Համալսարանների միջազգային ասոցիացիայի «Ակադեմիական ազատությանը և համալսարանի ինքնավարությանը սպառնացող վտանգների մասին» վերլուծությամբ ընդգծվել է պետությունների պարտականությունը ոչ թե համալսարաններին վերահսկելու, այլ կարգավորելու ու հաշվետվողականության և ինքնավարության հավասարակշռությունը երաշխավորելու հարցում: Միևնույն ժամանակ, համալսարանական ղեկավար կազմը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ինքնավարությունը չպետք է պատրվակ դառնա բարձրագույն կրթության հաստատությունների դասախոսական կազմի իրավունքները սահմանափակելու համար[524]:

Այսպիսով, Պաշտպանն ընդգծում է, որ պետության քաղաքականության իրականացման ողջ ընթացքում, այդ թվում՝ օրենսդրության մշակման շրջանակներում պետք է ապահովվի բուհերի ինքնավարությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

✓ բարձրագույն ուսումնական հաստատություններին վերաբերող ցանկացած օրենսդրական նախաձեռնության, ինչպես նաև քաղաքականության հիմքում դնել բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի իրացումը՝ բացառելով ցանկացած ոչ համաչափ միջամտություն,

✓ բաշխել բուհի հոգաբարձուների խորհրդի անդամների համամասնությունն այն տրամաբանությամբ, որ գործադիր իշխանությունը որոշումների կայացման հարցում չունենա որոշիչ դեր, ինչը բխում է բուհի ինքնակառավարման իրավունքի պատշաճ երաշխավորման անհրաժեշտությունից:

2. Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության հասանելիության ապահովումը.

Բուհական կրթության իրավունքը երաշխավորվում է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերով:

Յուրաքանչյուրի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունքը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով:

---

[524] Տե՛ս Համալսարանների միջազգային ասոցիացիայի «Ակադեմիական ազատությանը և համալսարանի ինքնավարությանը սպառնացող վտանգների մասին» զեկույցը, 2018թ., հասանելի է https://iau-aiu.net/IMG/pdf/iau_horizons_vol.22.2.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 13-րդ հոդված.
2. Կրթության իրավունքի լրիվ իրականացման համար՝
c/ բարձրագույն կրթությունը պետք է կազմակերպվի հավասարապես մատչելի բոլորի համար՝ յուրաքանչյուրի ընդունակությունների հիման վրա բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման, և մասնավորապես, անվճար կրթություն աստիճանաբար մտցնելու ուղիով, (...):

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի վերաբերյալ ընդհանուր մեկնաբանությամբ[525] առանձնացվել են կրթության բոլոր ձևերի և բոլոր մակարդակների միմյանց հետ փոխկապված և էական հատկանիշներ: Այս համատեքստում ընդգծվում է կրթության մատչելիությունը:

Կրթությունը պետք է մատչելի լինի, որը ենթադրում է կրթական հաստատությունների և ծրագրերի հասանելիությունը բոլորին՝ առանց խտրականության, մասնակից պետության իրավասության շրջանակներում:

Նշյալ մեկնաբանությամբ մատչելիությունը ներառում է.

- Խտրականության բացակայությունը. կրթությունը պետք է հասանելի լինի բոլորին, հատկապես՝ առավել խոցելի խմբերին,
- Ֆիզիկական մատչելիությունը. կրթությունը պետք է լինի ֆիզիկապես հասանելի և անվտանգ (և՛ տեղակայման, և՛ նորագույն տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից):
- Տնտեսական մատչելիություն. Կրթությունը պետք է հասանելի լինի բոլորի համար: Ընդ որում՝ Դաշնագրում տնտեսական մատչելիությունը ներկայացվում է տարբեր ձևաչափերով. սկզբնական կրթության պարագայում նախատեսվում է դրա անվճար լինելը բոլորի համար, իսկ միջնակարգ և բարձրագույն կրթության պարագայում պետություններից պահանջվում է անվճար համակարգի ներդրումը աստիճանաբար:

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և վճարովի ընդունելության տեղերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով:

Միևնույն ժամանակ ՀՀ կառավարության որոշումների[526] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2020/2021-2024/2025 ուսումնական տարիների համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ

---

[525] Հասանելի է https://www.right-to-education.org/sites/right-to-education.org/files/resource-attachments/CESCR_General_Comment_13_en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[526] Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի N 797-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 465-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի N 474-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 16-ի N 350-Ն որոշում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի N 488-Ն որոշում:

(անվճար), առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերը եղել են հետևյալը՝

- 2020/2021 ուսումնական տարի - 2926 տեղ,
- 2021/2022 ուսումնական տարի - 2918 տեղ,
- 2022/2023 ուսումնական տարի - 2927 տեղ,
- 2023/2024 ուսումնական տարի - 3124 տեղ,
- 2024/2025 ուսումնական տարի - 3162 տեղ:

Նշվածը ցույց է տալիս, որ թեև տարիների ընթացքում գրանցվել է անվճար տեղերի քանակի աճ, նշված աճը կայուն չի եղել: Ավելին, 2021/2022 ուսումնական տարվա համար գրանցվել է անվճար տեղերի քանակի նվազում:

Նշվածից բացի, ուսումնասիրելով, օրինակ 2024 թվականի ընթացքում Երևանի պետական համալսարանի տաբեր ֆակուլտետներում անվճար և վճարովի տեղերի հարաբերակցությունը, նկատելի է, որ իրավագիտության ֆակուլտետի համար հատկացվել է անվճար միայն 2 տեղ, իսկ վճարովի՝ 138, միջազգային հարաբերությունների ֆակուլտետում՝ 2 անվճար և 108 վճարովի տեղ, ֆինանսներում՝ 2 անվճար և վճարովի 68 տեղ:

Այսպիսով, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության մատչելիության ուսումնասիրության արդյունքները հանգել են հետևյալին՝

- պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար) տեղերի քանակի աճի կայունությունն ապահովված ու երաշխավորված չէ,
- բուհերում ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար) տեղերի քանակը՝ վճարովի տեղերի համեմատ խիստ ցածր տոկոս է կազմում:

Պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ հաստատված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով կրթության իրավունքի բաժնում որպես ռազմավարական նպատակ է սահմանված կրթության իրավունքի իրացման ընթացքում խոչընդոտների վերացման ապահովումը՝ մարդու իրավունքների ապահովման, կրթությունից դուրս մնացած երեխաների իրավունքների պաշտպանության, համընդհանուր ներառականության ապահովման, նախադպրոցական անվճար կրթության հասանելիության համատեքստում: Մինչդեռ, այդ նպատակի իրականացման համար ամրագրվել է միայն մեկ 1 գործողություն, որը վերաբերում է միջին և ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստմանը:

Սա ևս վկայում է, որ չնայած սահմանած նպատակին, ոլորտում հանձնառած աշխատանքները բավարար չեն ու հարկ եղածից խիստ նվազ, և արտացոլում է պետական քաղաքականության մակարդակում բուհերում կրթության իրավունքի մատչելիության բավարար հասցեավորված չլինելու պատկերը:

Բացի այդ, բուհերում ոչ բավարար քանակի անվճար տեղերի հատկացման հանգամանքին զուգահեռ՝ խնդրահարույց է նաև ուսման վարձավճարների բարձրացումը, ինչը ևս լուրջ խոչընդոտ է բարձրագույն կրթություն ստանալու համար՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ ուսանողների մեծ մասը ստիպված են լինում ուսման նպատակով փոխել բնակության վայրը՝ մարզերից գալով Երևան, հետևաբար՝ նաև հավելյալ վճարել բնակության համար, ընդ որում՝ առանձին

բնակարան վարձակալելու միջոցով, քանի որ ոչ բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններն ունեն հանրակացարաններ:

2024 թվականի դրությամբ ուսանողական հանրակացարաններ ունեցել են միայն ստորև նշված բարձրագույն ուսումնական հաստատությունները՝

- Երևանի պետական համալսարան,
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
- Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան,
- Գավառի պետական համալսարան,
- Գորիսի պետական համալսարան,
- Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան (հյուրատուն):

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության փոխանցած տվյալների՝ Երևանի պետական համալսարանում 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում վարձավճարը չվճարելու հիմքով դուրս է մնացել բակալավրիատի 8 ուսանող (6 առկա, 2 հեռակա), վերականգնվել՝ 1 ուսանողի (առկա) ուսանողական իրավունքը, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում ուսման վարձը չվճարելու պատճառով դուրս է մնացել 11 ուսանող, վերականգնվել՝ 1 ուսանողի (առկա) ուսանողական իրավունքը, Գորիսի պետական համալսարանում ուսման վարձը չվճարելու պատճառով դուրս է մնացել 10 ուսանող, իսկ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանում 2024 թվականի ընթացքում ուսման վարձը չվճարելու պատճառով դուրս է մնացել 26 ուսանող, վերականգնվել՝ 3 ուսանողի ուսանողական իրավունքը:

Այսպիսով, չնայած բուհերի՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի ապահովմանն ուղղված որոշակի քայլերին, Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է ապահովել անվճար տեղերի քանակական աճի կայունությունը՝ պետական քաղաքականության մակարդում ամրագրելով բարձրագույն կրթության մատչելիության՝ անվճար հասանելիության երաշխավորումը՝ կայուն ու աստիճանակարգային փուլերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***պետական քաղաքականության մակարդում ստանձնել պարտականություն ու ամրագրել բարձրագույն կրթության մատչելիության՝ անվճար հասանելիության երաշխավորումը՝ կայուն ու աստիճանակարգային փուլերով,***
- ***շարունակաբար ավելացնել բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում հատկացվող անվճար տեղերի քանակը՝ ապահովելով կայուն աճ ու դիտարկելով բարձրագույն ուսումնական հաստատությունների վարձավճարների չափերի նվազեցման հարցը,***
- ***ավելացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների հանրակացարանների քանակը:***

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հոգեկան առողջության պահպանման հարցը.

Բուհերում ուսումնառության ընթացքում ուսանողները շատ հաճախ բախվում են ակադեմիական և ոչ ակադեմիական մի շարք խնդիրների և դժվարությունների, որոնք իրենց ուղղակի ազդեցությունն են թողնում ուսանողների ինչպես ուսումնական գործընթացների ու մասնագիտական զարգացման, այնպես էլ հոգեբանական կայունության ու բարեկեցության և սոցիալական կյանքի վրա:

Ուսանողների շրջանում կատարված հարցումների արդյունքները հանգել են նրան, որ ուսանողները ուսման գործընթացի տարբեր ասպեկտների, ինչպես նաև կյանքի տարբեր ոլորտներին առնչվող դժվարությունների պատճառով ուսումնառության ընթացքում բախվել են մի շարք խնդիրների, որոնք իմաստային առումով բաշխվել են 7 խմբերում: Դրանք են՝

1. Ակադեմիական դժվարությունները,
2. Սոցիալական դժվարությունները,
3. Հուզական դժվարությունները,
4. Տեղափոխման, բնակության վայրի փոփոխության հետ կապված դժվարությունները,
5. Կազմակերպչական դժվարությունները,
6. Անձնային՝ Ես-ի հետ կապված դժվարությունները,
7. Ուսումից դուրս սթրեսային, արտակարգ իրավիճակները[527]:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հոգեկան առողջությունը համարում է հոգեկան բարեկեցության վիճակ, որը մարդկանց հնարավորություն է տալիս հաղթահարել կյանքի սթրեսները, գիտակցել սեփական կարողությունները, լավ սովորել և աշխատել, ներդրում ունենալ սեփական համայնքում: Հոգեկան առողջությունը ԱՀԿ-ն համարում է ավելին, քան հոգեկան խանգարումների բացակայությունը: ԱՀԿ-ն ընդգծում է, որ հոգեկան առողջության վրա ազդող գործոնների վերափոխումը հաճախ պահանջում է գործողություններ առողջապահության ոլորտից դուրս, ուստի խթանման և կանխարգելման ծրագրերում պետք է ներգրավված լինի, ի թիվս այլնի, կրթության ոլորտը[528]:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության Միջազգային քոլեջի ուսանողական նախագիծը հոգեկան խանգարումների տարածվածությունը և բաշխումը պարզելու նպատակով ուսումնասիրություն է իրականացրել ութ երկրների 19 ուսումնական հաստատություններում, որի արդյունքում պարզ է դարձել, որ ուսանողների 35%-ը հայտնել է հոգեկան խանգարումների մասին[529]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Լատինական Ամերիկայի և Կարիբյան երկրներում բարձրագույն կրթության միջազգային ինստիտուտի՝ «Աջակցություն բարձրագույն կրթություն ստացող ուսանողների հոգեկան առողջությանն ու բարեկեցությանը»

---

[527] Հասանելի է https://www.old.ysu.am/files/06A_Grigoyan_A_Serobyan_N_Khachatryan.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[528] Հասանելի է https://www.who.int/news-room/fact-sheets/detail/mental-health-strengthening-our-response հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[529] Հասանելի է https://www.apa.org/pubs/journals/releases/abn-abn0000362.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

վերտառությամբ փաստաթղթում[530] նշվում է, որ ամբողջ աշխարհում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների զգալի մասը բախվում է հոգեկան առողջության հետ կապված մարտահրավերների և բարձրացնում բարձրագույն ուսումնական հաստատություններում հոգեկան առողջության ծառայություններ մատուցելու անհրաժեշտության հարցը:

Ըստ նույն փաստաթղթի՝ բուհ-երը պարտավոր են աջակցել ուսանողների հոգեկան առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման 3-րդ նպատակին (ԿԶՆ) համահունչ, որն ուղղված է առողջության ու բարեկեցության ապահովմանը: Այս համատեքստում, պետություններն ունեն պարտականություն աջակցելու ԲՈՒՀ-երին՝ հիմնականում քաղաքականությունների մշակման և ֆինանսավորման միջոցով:

Նույն փաստաթղթում ընդգծվում է, որ ուսանողների՝ հոգեկան առողջության ծառայություններից օգտվելու հարցում խոչընդոտ են հանդիսանում բարձրագույն ուսումնական հաստատություններում հոգեկան առողջապահական ծառայություններ մատուցելու ինստիտուցիոնալ ոչ բավարար կարողությունները, ֆինանսական դժվարություններն ու հոգեկան առողջության վերաբերյալ տարածված ընկալումները:

Փաստաթղթում հստակ ներկայացվում են ինչպես կատարված հետազոտությունների արդյունքում քանական տվյալներ ԲՈՒՀ-երի ուսանողների հոգեկան առողջության վերաբերյալ (օրինակ՝ ԱՄՆ-ում ուսանողների 60%-ից ավելին ունի առնվազն մեկ հոգեկան առողջության խնդիր), այնպես էլ բուհերի ու պետությունների պարտականությունները ուսանողների հոգեկան առողջությունը բարելավելու և ՄԱԿ-ի կայուն զարգացման 3-րդ նպատակին հասնելու նպատակով: Դրանք ուղղված են՝

- հոգեկան առողջության պահպանման ծառայությունների անվճար հասանելիությունը երաշխավորելու նպատակով բավարար ենթակառուցվածքներով (պայմաններ, ռեսուրսներ) ապահովելուն,
- մասնագիտական և դասախոսական աջակցություն տրամադրելու նպատակով կարողությունները զարգացնելուն,
- հոգեկան առողջության գրագիտությունը խթանելուն,
- ակադեմիական պայմանները հարմարեցնելուն,
- համակարգված մշտադիտարկումն ու տվյալների հավաքագրումը խթանելուն:

Այսպիսով, բուհերում հոգեկան առողջության պահպանման խնդիրները տարածված երևույթ են, որի հաղթահարման գործում մեծ դերակատարություն կարող են ունենալ հենց բուհերը: Ընդ որում՝ խնդրի հաղթահարման գործում շատ կարևոր է նաև դասախոսական անձնակազմի պատրաստվածությունը՝ ուսանողների հետ հաղորդակցման ոճի, աջակցող հաղորդակցման հմտությունների և այլնի վերաբերյալ:

---

[530] Հասանելի է https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000391501/PDF/391501eng.pdf.multi հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Արտասահմանյան երկրների փորձը ցույց է տալիս, որ բուհական համայնքը ակտիվ ներգրավվածություն ունի ուսանողների հոգեկան առողջության բարելավման հարցում:

Այսպես, դեռևս 2019 թվականին Միացյալ Թագավորության համալսարանները ներդրել են Համալսարանի հոգեկան առողջության կանոնադրությունը: Սկզբունքների փաթեթը համալսարանների համար հանդես է գալիս որպես ուղեցույց՝ ուսանողների և անձնակազմի հոգեկան առողջությունն ու բարեկեցությունը բարելավելու նպատակով[531]:

Նորվեգիան ունի Ուսանողների բարեկեցության կազմակերպման համակարգ, որը հայտնի է Studentsamskipnaden անվանումով: Այս կազմակերպությունները գործում են համալսարանների և քոլեջների հետ համագործակցությամբ՝ առաջարկելով տարբեր օժանդակ ծառայություններ, այդ թվում՝ հոգեկան առողջության ծառայություններ: Կազմակերպությունները ֆինանսավորվում են ինչպես ուսանողական վճարների, այնպես էլ պետական սուբսիդիաների միջոցով[532]:

Անդրադառնալով ուսումնական հաստատություններում հոգեկան առողջության բարելավման ուղղված ներպետական միջոցառումներին՝ պետք է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի հուլիսի 8-ի N 2948-Լ որոշմամբ հաստատված հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագրից բխող միջոցառումների ցանկով «Բնակչության հոգեկրթություն» վերտառությամբ 5-րդ նպատակի համատեքստում որպես միջոցառում սահմանված է հոգեկրթություն առարկայի մշակումը և ներդրումը (ներառյալ՝ ինքնաճանաչում, ինքնակարգավորում, սթրեսակայունություն, կենսակայունություն, հուզական այրում, անձնային աճ թեմաները): Մինչդեռ, նշված միջոցառման ակնկալվող արդյունքը ենթադրում է հոգեկրթության դասավանդում միայն դպրոցներում:

Իր հերթին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ հաստատված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով կրթության իրավունքի բաժնում միայն 1 գործողություն է սահմանված, որը վերաբերում է միջին և ավագ դպրոցների ուսուցիչների վերապատրաստմանը:

Նշվածը վկայում է պետական քաղաքականության մակարդակում բուհական կրթության համատեքստում ուսանողների հոգեկան առողջության պահպանմանն ու բարելավմանն ուղղված համապարփակ ծրագրի բացակայության ու հետևաբար նախատեսվելիք քայլերի անորոշության ու անկանխատեսելիության մասին:

Պաշտպանի այն հարցադրմանը, թե ի՞նչ քայլեր են ձեռնարկվել բուհերի ուսանողների հոգեկան առողջության պահպանմանն ու բարելավմանն ուղղված՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ներկայացրել է հետևյալը.

---

[531] Հասանելի է https://hub.studentminds.org.uk/university-mental-health-charter/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[532] Հասանելի է https://lovdata.no/dokument/NL/lov/2007-12-14-116 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ԵՊՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում հոգեբանական բարեկեցությանն աջակցող ծառայություններ տրամադրվում են Հոգեբանական աջակցության ուսումնագործական լաբորատորիայի կողմից, որը ԵՊՀ ուսանողներին տրամադրում է անվճար հոգեբանական ծառայություն:

Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Հոգեբուժություն» առարկայի ցիկլային դասընթացների ընթացքում ընդգրկվել են թեմաներ՝ նպաստելու նաև ուսանողների հոգեկան առողջության պահպանմանը և բարելավմանը, ինչպես նաև առանձին դեպքերում իրականացվել են անհատական զրույցներ, ցուցաբերվել հոգեբանական աջակցություն:

Պետական կառավարման ակադեմիայում հոգեբանական աջակցություն, ըստ անհրաժեշտության, ցուցաբերել են Հոգեբանության ամբիոնի մասնագետները:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտում գործում է հոգեբանական աջակցության ծրագիրը, որն ուղղված է պրոֆեսորադասախոսական, վարչատնտեսական անձնակազմի, դասախոս-մարզիչների, «Սպորտուս» հենակետային քոլեջի, պատերազմի մասնակից ուսանողների և բարձրակարգ մարզիկ-ուսանողների հոգեկան առողջության պահպանմանը, ինչպես նաև իրականացվում են անհատական խորհրդատվություններ, սեմինար դասախոսություններ, լաբորատոր հոգեախտորոշումներ, հոգեթերապևտիկ միջոցառումներ:

Բուհերի ուսանողների հոգեկան առողջության պահպանմանն ու բարելավմանն ուղղված աջակցության կենտրոնների միջոցով կամ միջոցառումների, դասընթացների, քննարկումների միջոցով ուսանողների հոգեկան առողջության պահպանմանն ուղղված քայլեր իրականացվել են նաև Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի, Գավառի պետական համալսարանի, Ավանդական բժշկության համալսարանի, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի կողմից:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների համար ոլորտին առնչվող թեմաներով վերապատրաստումներ իրականացվել են Երևանի պետական համալսարանի, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Ավանդական բժշկության համալսարանի, Գավառի պետական համալսարան և «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի կողմից:

Այսպիսով, Պաշտպանն ընդգծում է, որ թեև Հայաստանի որոշ բուհերում իրականացվում են ուսանողների հոգեկան առողջության պահպանմանն ուղղված առանձին քայլեր, դրանք կրում են հատվածական բնույթ, իրականացվում են ոչ միասնական ձևաչափերով ու ոչ մշտական հիմունքներով՝ վկայելով նաև պետության՝ ուսանողների հոգեկան առողջության պահպանումն ու բարելավումը՝ որպես քաղաքականության ուղղություն որդեգրած չլինելու մոտեցման ու հստակ քաղաքականության ներդրման ու համակարգային միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ մշակել ու ներդնել համապարփակ քաղաքականություն բուհական կրթություն ստացող ուսանողների հոգեկան առողջության պահպանման ու բարելավման, վերջիններիս բարեկեցության ապահովման ուղղությամբ,

✓ ՀՀ բարձրագույն ուսումնական բոլոր հաստատություններում ներդնել հոգեկան առողջության բարելավման անվճար ծառայությունների իրականացման համակարգ,

✓ պարբերաբար իրականացնել բուհերի դասախոսական կազմի և անձնակազմի վերապատրաստում՝ ուղղված ուսանողների հոգեկան առողջության հետ կապված խնդիրները բացահայտելու և նրանց աջակցելու հմտություններ ձեռք բերելուն, այդ թվում՝ անհանգստության վաղ նշանները ճանաչելու և դեպի համապատասխան ծառայություններ ուսանողներին ուղղորդելու առնչությամբ,

✓ շարունակաբար ուսանողների, դասախոսական անձնակազմի և հանրության շրջանում տարբեր գործիքակազմերով իրազեկման աշխատանքներ իրականացնել հոգեկան առողջության պահպանման և բարելավման վերաբերյալ:

4. Հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում շենքային, գույքային պայմանների և ջեռուցման ապահովման վերաբերյալ խնդիրներ.

Հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում շենքային, գույքային անբավարար ու վատ պայմանների և ջեռուցման հետ կապված խնդիրները, որոնք արձանագրվել են տարիներ շարունակ, 2024 թվականի ընթացքում ևս շարունակել են առկա լինել:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ընթացքում իրականացրել է այց Արագածոտնի մարզի եզդիական բնակչություն ունեցող բնակավայրեր[533]:

Այցը կազմակերպվել է Ազգային ժողովի պատգամավոր, Խորհրդարանում եզդիական համայնքի ներկայացուցիչ, ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանի հետ համատեղ: Մասնակցել են Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը, խորհրդարանական հանձնաժողովի անդամ պատգամավորներ:

Շրջայց է իրականացվել Արևուտ, Կանչ և Հակո գյուղական բնակավայրերով,

[533] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3190 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

որի շրջանակներում ուսումնական հաստատություններ այցերի ու զրույցների ընթացքում արձանագրվել է, որ նշված բնակավայրերի ուսումնական հաստատությունների շենքային պայմանները գտնվել են ոչ բարվոք վիճակում. բացակայել է կենտրոնական ջեռուցման համակարգը, դասարանների կահավորումը թերի է եղել, մարզադահլիճներն ընդհանրապես ենթակա չեն օգտագործման:

Արձանագրված խնդիրները ներկայացվել են իրավասու պետական մարմիններին՝ քննարկման առարկա դարձնելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու նպատակով: Ի պատասխան՝ նշված մարմինները ևս արձանագրել են խնդիրների առկայությունն ու ներկայացրել տարված ու նախատեսվելիք աշխատանքները:

Հարկ է նշել նաև, որ դեռևս 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներով ներկայացվել է դպրոցը՝ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի շրջանակներում հրատապ կառուցման, վերանորոգման և հիմնանորոգման ենթակա ուսումնական հաստատությունների ցանկում ընդգրկելու հարցը: Հարցին Պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում՝ առաջարկելով ընդլայնել ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող դպրոցների և մանկապարտեզների ցանկը[534]: Հարկ է նկատել նաև, որ չնայած նշված ծրագրի և որոշման կատարելագործման անհրաժեշտությանը՝ Պաշտպանը ողջունելի է համարում կառավարության կողմից հիշյալ ծրագրի իրականացումը:

Ուսումնական հաստատություններում շենքային և գույքային անբավարար ու վատ պայմանների առկայությունը մտահոգիչ է և լուրջ խոչընդոտ կրթական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև երեխայի, ուսուցչական ու վարչական անձնակազմի կյանքի ու առողջության պահպանման իրավունքի իրացման տեսանկյունից:

2024 թվականի ընթացքում խնդիրներ են արձանագրվել նաև պետական իրավասու մարմինների կողմից.

Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային պայմանների դիտարկման կամ ջեռուցման համակարգի ժամանակավոր խաթարման պատճառով, երբեմն, դասապրոցեսը կազմակերպվել է հեռավար եղանակով:

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության փոխանցման՝ իր լիազորությունների շրջանակներում վարվել է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, որտեղ հավաքագրվել են կրթական հաստատությունների գործունեության և պայմանների վերաբերյալ տվյալները, նախարարությունը պարբերաբար շրջաբերականներ է ուղարկել իր ենթակայության կազմակերպություններին՝ ներկայացնելու ջեռուցման հետ կապված առկա խնդիրները:

---

[534] Տե՛ս առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

Վերջինս արձանագրել է, որ հանրապետության հատկապես համայնքային մի շարք պետական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների անբավարարության վիճակը շարունակել է պահպանվել, որն առաջացրել է երեխաների կրթության իրավունքի սահմանափակումներ, ինչպես դասապրոցեսի բնականոն ընթացքի կազմակերպման և երեխայի կրթության իրավունքի իրականացման, այնպես էլ երեխայի առողջության, անվտանգության և զարգացման համար: Հանրակրթական դպրոցների շենքային և գույքային պայմանների խնդիրներ արձանագրվել են թե՛ քաղաքային, և թե՛ գյուղական դպրոցներում, իսկ առավել խոցելի այս առումով եղել են գյուղական դպրոցները:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ 2024 թվականի ընթացքում Կենտրոն վարչական շրջանում գործող թվով 6 մսուր-մանկապարտեզների գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել է 5-10 աշխատանքային օրով՝ շենքային և կոմունալ վատ պայմանների պատճառով:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ 2024 թվականի ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի նկատմամբ վերահսկողություն իրականացվել է ամենօրյա ռեժիմով՝ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի տրամադրած տվյալների հիման վրա:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալներով՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերը նախագծելիս, ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N 103-Ն հրամանով հաստատված շինարարական նորմերի պահանջների, ամրագրվել է օդային և ջերմային համակարգերի պահպանման պահանջ:

Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ Երևանի ենթակայության մի շարք դպրոցներ ներառված են հիմնանորոգման ծրագրերում, իսկ մյուս ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացվում են ընթացիկ նորոգման և գույքի թարմացման աշխատանքներ: Դպրոցները անհրաժեշտ գույքով, սարքավորումներով թարմացումը, մասնավորապես՝ լաբորատորիաների թարմացումն իրականացվում է դպրոցների միջոցներով՝ նաև նախատեսված թիրախային ծրագրերի շրջանակում, իսկ նոր վերակառուցվող, հիմնանորոգվող և կառուցվող մանկապարտեզները հարմարեցվում են հենաշարժողական խնդիր ունեցող անձանց՝ ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***համակարգային ուսումնասիրության և գնահատման ենթարկել ՀՀ-ում գործող բոլոր ուսումնական հաստատությունների՝ գործող օրենսդրությամբ սահմանված հանրակրթական նշանակություն ունեցող շենքերի շինարարական նորմերին համապատասխանությունը,***
- ***ավելացնել բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների բարելավման համար հատկացվող ֆինանսական միջոցները,***
- ***կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների բարեկարգման ուղղությամբ,***

✓ բոլոր ուսումնական հաստատություններն ապահովել առարկայական ծրագրերին համապատասխան անհրաժեշտ գույքով և սարքավորումներով,

✓ ընդլայնել ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող դպրոցների և մանկապարտեզների ցանկը,

✓ ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարումը՝ ուժեղացնելով վերահսկողությունը դրա խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

5. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը.

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ իր տարեկան հաղորդումներում անդրադարձել է հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձման հարցին, որի արդյունքում արձանագրված որոշ խնդիրներ շարունակել են արդիական մնալ 2024 թվականի ընթացքում: Նշված խնդիրները հանգում են հետևյալին.

➢ որպես ընդհանուր կանոն՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար դասագրքեր տրամադրվում են տարրական հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների միայն առաջինից չորրորդ դասարանի աշակերտներին[535]:

➢ սոցիալապես անապահով ընտանիքի սովորողների համար դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու վերաբերյալ կարգավորումներ օրենքով ամրագրված չեն[536]:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 13-րդ հոդված.
2. Կրթության իրավունքի լրիվ իրականացման համար՝ a/ սկզբնական կրթությունը պետք է լինի պարտադիր և անվճար բոլորի համար, b/ միջնակարգ կրթությունն իր զանազան ձևերով, ներառյալ պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունը, պետք է լինի բաց և մատչելի բոլորի համար՝ բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման և, մասնավորապես, անվճար կրթություն աստիճանաբար մտցնելու ուղիով: (…)

Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

---

[535] «Կրթության մասին» օրենք 6-րդ հոդվածի 4-րդ մաս և 48-րդ հոդվածի 3-րդ մաս:

[536] Տե՛ս, առավել մանրամասն, օրինակ, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 119-123:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դեռևս 2017 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, ինչի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 12-ի ՍԴՈ-1419 որոշմամբ հաստատել է, որ պետությունը պարտավոր է երաշխավորել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող բավարար որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր: Սահմանադրական դատարանը որոշման մեջ ընդգծել է սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը օրենքով ամրագրելու և ի կատարումն այդ օրենքի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը[537]:

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման հարցերը կարգավորվում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 29-ի N 81-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու» կարգով: Ըստ կարգի պահանջների՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում: Հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը կազմվում է մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում և հաստատվում տնօրենի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ փոփոխություններ կատարել «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.13-րդ կետով ամրագրված Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտում՝ ընդլայնելով այն անձանց շրջանակը, ում կտրամադրվեն անվճար դասագրքեր,

✓ ապահովել Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1419 որոշմամբ հայտնած դիրքորոշման կատարումը՝ սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու վերաբերյալ կարգն ամրագրելով օրենքով:

6. Ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում.

Դեռևս 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը իրականացրել է ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող

[537] Տե՛ս նույն տեղում:

հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների ուսումնասիրման ծրագիրը, որի արդյունքներն ամփոփվել են 2019 թվականին Պաշտպանի կողմից հրապարակված «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում[538], որում, ինչպես նաև Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում[539], Պաշտպանի կողմից արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- ջրամատակարարման բացակայության կամ անհասանելիության հետ կապված խնդիրներ,
- ծորակների և սանհանգույցների անբավարար քանակի հետ կապված խնդիրներ,
- ըստ սեռերի առանձնացված սանհանգույցների, ցայտաղբյուրների բացակայության հետ կապված խնդիրներ,
- խմելու ջրից օգտվելու ոչ հիգիենիկ եղանակների հետ կապված խնդիրներ,
- սանհանգույցներում զուգարանակոնքի՝ ոչ փակ խցիկներում տեղադրման հետ կապված խնդիրներ,
- նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի վերաբերյալ իրավական կարգավորումների բացակայության հետ կապված խնդիրներ,
- նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմի և երեխաների՝ ուսումնական հաստատությունների կառուցվածքի, գույքով ու սարքավորումներով ապահովման վերաբերյալ նորմատիվային դրույթների և դրանց չկիրառման հետևանքով հնարավոր բացասական հետևանքների մասին ոչ բավարար իրազեկվածության հետ կապված խնդիրներ:

Բարձրացված հարցերի առնչությամբ կատարված աշխատանքները պարզելու նպատակով հարցադրումներ են ուղղվել իրավասու պետական մարմիններին:

2024 թվականի ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը վարել է տվյալների էլեկտրոնային բազա նախադպրոցական հաստատությունների, դպրոցների, ուսումնարանների, քոլեջների, բուհերի վերաբերյալ, այդ թվում՝ «Շենք և հարմարություններ» բաժնում ենթակառուցվածքների՝ ջրամատակարարման, կոյուղացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջեռուցման և այլնի առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ ոլորտի առնչությամբ միջոցառումներ չեն իրականացվել, քանի որ նախարարության ենթակայությամբ գործող

---

[538] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, 2019թ., հասանելի է https://ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[539] Տե՛ս, առավել մանրամասն, օրինակ, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 119-136:

հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության խնդիրներ չեն արձանագրվել և ջրամատակարարման և սանիտացիայի հետ կապված ահազանգեր չեն ստացվել:

Ինչ վերաբերում է խմելու ջրից օգտվելու հետ կապված արձանագրված խնդիրներին, ապա ըստ Առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն և 2017 թվական N 12-Ն հրամաններում նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու կարգի առնչությամբ կարգավորումներ նախատեսելիս գործնականում կարող են առաջանալ մի շարք խնդիրներ, որոնց կարգավորումը գտնվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, որպես ոլորտում քաղաքականություն մշակող մարմնի, և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, որպես քաղաքականությունն իրականացնող մարմնի, համակարգման տիրույթում: Ուստի՝ անհրաժեշտ է լիազոր մարմինների համատեղ քննարկմամբ և մասնակցությամբ իրականացնել խնդրի համապարփակ ուսումնասիրության և մշակել լուծումներ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության փոխանցմամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամը ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ կազմակերպության միջոցով իրականացրել է «Հայաստանի Հանրապետությունում դպրոցական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ջրի հասանելիության և սանիտարահիգիենիկ պայմանների համապարփակ հետազոտություն» ծրագիրը, որի արդյունքում նախագծվել են լուծումներ և տրամադրվել առաջարկություններ՝ միտված գնահատման արդյունքում հայտնաբերված բացերի լրացմանը: Հիմնադրամի աջակցությամբ երեխաների համար անվտանգ, մաքուր և դիմակայուն կրթական միջավայրի ապահովման գործում որոշվել է որպես մոդել ՀՀ Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի ընտրված 3 դպրոցներում տեղադրել/կառուցել շարժական (mobile/stand-alone) մոդելային սանհանգույցներ:

ՀՀ առողջապահության նախարարությունն իրականացրել է նաև ոլորտը կանոնակարգող հանրային առողջապահության ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկումներ՝ զանգվածային լրատվական միջոցներով, ինչպես նաև քննարկումների և հանդիպումների ընթացքում:

Ըստ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի գրեթե բոլոր դասարանների առարկայական ծրագրերում ներառված են եղել ջրի կարևորության վերաբերյալ թեմաներ (ջուրը՝ հիգիենայի պահպանման միջոց, ջուրը սննդում, ջրի միջոցով վարակիչ հիվանդությունների կանխարգելում, ջրի մաքրում, ֆիլտրում), ուսուցչի զբաղեցրած պաշտոնի նկարագրին համապատասխանության նպատակով իրականացվել է ուսուցչի հերթական ատեստավորումը, որի շրջանակներում ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ թեմաները ներառվել են համապատասխան ուսուցիչների վերապատրաստումների ծրագրերում, ինչպես նաև նախարարությունը տեղադրել է իրազեկող պաստառներ՝ ըստ անհրաժեշտության:

Երևանի քաղաքապետարանի փոխանցմամբ՝ դպրոցների բուժկետներում և հարակից տարածքներում հիգիենայի պահպանման կանոնների վերաբերյալ

պարբերաբար տեղադրվել են թեմատիկ պաստառներ, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում հիգիենայի կանոնների ուսուցումն իրականացվել է դասղեկական ժամերի և տարբեր առարկաների, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» առարկայի շրջանակում:

Այս համատեքստում Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է՝

- ***իրականացնել հանրակրթական և նախադպրոցական բոլոր ուսումնական հաստատությունների՝ ջրի և սանիտարական պայմանների առնչությամբ գործող նորմերին համապատասխանության համակարգային ուսումնասիրություն,***
- ***ուսումնասիրությունների հիման վրա՝ մշակել կոնկրետ գործողությունների ծրագիր՝ նախատեսելով միջոցառումներ և սահմանելով հանրակրթական և նախադպրոցական հաստատություններն օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխանեցնելու ժամանակացույցը,***
- ***ներդնել հատուկ կառուցակարգ, որի միջոցով կիրականացվի պարբերական մշտադիտարկում ոլորտային նորմերի պահպանման նկատմամբ՝ նախանշելով հանրակրթական և նախադպրոցական հաստատություններում համապատասխան գործողությունների անհրաժեշտությունը,***
- ***ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն և 2017 թվականի N 12-Ն հրամաններում կատարել լրացումներ՝ հստակ կարգավորումներ նախատեսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու կարգի առնչությամբ՝ հաշվի առնելով վարակների տարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել հստակ ամրագրված նորմը, ըստ որի՝ երեխաներին կտրամադրվեն բացառապես անհատական օգտագործման այնպիսի բաժակներ, որոնք նրանց համար հեշտ տարանջատելի կլինեն մյուս բաժակներից կամ մեկանգամյա օգտագործման բաժակներ և այլն,***
- ***շարունակաբար կազմակերպել նախադպրոցական հաստատությունների պատասխանատուների համար իրազեկման սեմինարներ ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված կարգավորումների վերաբերյալ,***
- ***շարունակաբար իրականացնել իրազեկման աշխատանքներ զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև կրթական ծրագրերի միջոցով ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ ուսումնական հաստատությունների աշակերտների, վերջիններիս ծնողների համար, ինչպես նաև ուսումնական հաստատությունների պատասխանատու անձանց շրջանում,***
- ***տեղադրել բոլոր հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտացիայի և հիգիենայի կանոնների պահպանման վերաբերյալ երեխաների համար իրազեկող և մատչելի պաստառներ,***
- ***մշակել հստակ ժամանակացույց մինչև ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի ընդունումը կառուցված շենքերում ցայտաղբյուրի առկայությունն ապահովելու համար և վերանայել նույն հրամանի***

Հավելվածի 9-րդ կետի պահանջը՝ նախատեսելով ցայտաղբյուրի քանակի վերաբերյալ համապատասխան նորմեր՝ հաշվի առնելով դպրոցում երեխաների քանակը,

- ***վարել տարբերակված վիճակագրություն հանրակրթական, նախադպրոցական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ՝ հիմնված տարբեր վերաբերելի չափանիշների վրա:***

7. Սննդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում.

Պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացվել են ուսումնական հաստատություններում արգելված սննդատեսակների վաճառքի ու սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջների պահպանման և կանխարգելման ու վերահսկողության պատշաճ կառուցակարգերի և կարգավորումների բացակայության հարցերը[540]: Բարձրացված խնդիրների արդիականությունը կարելի է արձանագրել նաև 2024 թվականի համատեքստում, ինչի մասին են վկայում նաև իրավասու մարմիններից ստացված տեղեկությունները:

Այսպես, բարձրացված հարցերի առնչությամբ կատարված աշխատանքները ու խնդիրները պարզելու նպատակով հարցադրումներ են ուղղվել պետական մարմիններին, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև:

2024 թվականի ընթացքում ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվել են պետական վերահսկողության միջոցառումներ (ստուգումներ) մի շարք ուսումնական հաստատություններում և խնամքի հաստատություններում: Աբովյան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում սննդի մատակարարների կողմից փորձեր են իրականացվել մատակարարել սննդի տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, ընդ որում՝ անհամապատասխան են եղել նաև մատակարարման պայմանները, որի գործընթացը կասեցվել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալներով՝ 2024 թվականի ընթացքում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում կասեցվել է մի շարք մթերքների մատակարարման գործընթացը, քանի որ այդ մթերքները լաբորատոր հետազոտության և փորձաքննության արդյունքում բացասական արդյունքներ են ստացել:

Միևնույն ժամանակ, ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ կառավարության միջոցներով ՀՀ մարզերում իրականացվել է «Դպրոցական սնունդ» ծրագիրը, որի շահառու են եղել ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների սովորողները և նախակրթարանների սաները, ովքեր մեկանգամյա հավասարակշռված, առողջ, տաք սնունդ ստանալու հնարավորություն են ունեցել՝ մանկական սննդի միջազգային ընդունված նորմերին և ՀՀ առողջապահության

[540] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում:

նախարարության 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջներին համապատասխան, իսկ այն դպրոցներում, որտեղ տարածքային, ենթակառուցվածքային կամ ժամանակավոր այլ տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չի եղել իրականացնել տաք սննդի տրամադրումը, գործել է չոր սննդի տրամադրման կարգը:

ԿԳՄՍ նախարարության փոխանցմամբ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կազմում հիմնված «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկը աջակցում է ԿԳՄՍՆ-ին ծրագիրը համակարգելու և մշտադիտարկելու, ինչպես նաև՝ մեթոդական ուղղություն տալու, առաջացած խնդիրներին լուծումներ գտնելու, ոլորտում զարգացման ուղիներ առաջարկելու գործում: Հիմնարկը՝ համաձայն իր մշտադիտարկումների ուղեցույցի, ըստ մարզերի, ամսական կտրվածքով կազմել է մշտադիտարկումների ամփոփ արդյունքների հաշվետվություն՝ հիմնվելով մշտադիտարկումների համապարփակ գործիքակազմի վրա: Հիմնարկի կողմից դպրոցական սննդի կազմակերպման, գնումների ընթացակարգերի, սննդամթերքի անվտանգության, սանիտարահիգիենիկ նորմերի, առողջ սննդակարգի, սննդակախյալ հիվանդությունների կանխարգելման, գործնական խոհարարության և այլ թեմաների վերաբերյալ վերապատրաստումներ են իրականացվել դպրոցում աշխատող խոհարարների, դպրոցի տնօրենների, վարչատնտեսական մասի համակարգողների համար:

ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով հաստատվել են «Նախադպրոցական ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» 2.1.2.001-24 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները:

Մշակվել է «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» հանրային առողջապահական նորմատիվ հաստատելու մասին Առողջապահության նախարարի հրամանի նախագիծը:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից մշակվել է նախադպրոցական կրթական հաստատություններում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բնագավառի վերահսկողության նոր ստուգաթերթ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 19 N 1492-Ն որոշմամբ:

2024 թվականին Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից կազմակերպվել են երկօրյա իրազեկման աշխատանքներ մասնավոր նախադպրոցական հաստատությունների համար՝ հիգիենիկ պահանջների, սննդի կազմակերպմանը ներկայացվող պահանջների, վարակիչ հիվանդությունների արձանագրման դեպքում կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև ստուգումների և վարչական վարույթների շրջանակներում:

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա միջավայրը» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվել են առողջ սննդի վերաբերյալ թեմաները, իսկ 5-9-րդ դասարաններում դասավանդվող «Առողջ

ապրելակերպ» պարտադիր խմբակի դասընթացի շրջանակներում ուսումնասիրվել են «Սնուցում և ֆիզիկական ակտիվություն» թեմաները, հիգիենայի կանոնների ուսուցումը, որն իրականացվել է նաև դասղեկական ժամերին: Առողջապահության նախարարությունը կազմակերպել է առողջ ապրելակերպի իրազեկման դպրոցական մարզային արշավներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

- ***ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպումը՝ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանի պահանջներին համապատասխան,***
- ***իրականացնել պատշաճ վերահսկողություն ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանման նկատմամբ,***
- ***շարունակաբար իրականացնել իրազեկման աշխատանքներ ռացիոնալ և առողջ սննդի վերաբերյալ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների, ուսուցիչների և հաստատության անձնակազմի համար,***
- ***դպրոցներում ապահովել այնպիսի առողջապահական կրթական ծրագրերի պատշաճ իրականացումը, որոնք հաղորդում են տեղեկատվություն սննդի հիգիենայի սկզբունքների վերաբերյալ, ինչպես նաև վերապատրաստումների իրականացումը կրթական ծրագիրն իրականացնողների համար:***

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու կամ ոչ ամբողջովին կատարելու խնդիրներ

Հաշվետու տարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ընդհանուր վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ շարունակում են արդիական մնալ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու, ոչ ամբողջովին կատարելու կամ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելու խնդիրները: Նշված խնդիրներին Պաշտպանը մշտապես է անդրադառնում իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում[541], արտահերթ զեկույցներում[542], իրազեկող տեսանյութերում[543] և հրապարակային ելույթներում[544]:

Աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու կարգը, մասնավորապես, ամրագրված է աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտով՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, որի 130-րդ հոդվածի բովանդակային ուսումնասիրությունը վկայում է, որ ընդհանուր և իմպերատիվ պայմանն այն է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե նույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ: Ընդ որում, հատկանշական է, որ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը, գործատուից անկախ պատճառներով, հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը ևս վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս և ներառվում է վերջնահաշվարկի մեջ (տե՛ս նույն օրենսգրքի 170-րդ հոդվածը): Ինչ վերաբերում է գործատուների կողմից վերջնահաշվարկը ոչ ամբողջովին կամ մասնակի կատարելուն, ապա այս համատեքստում հատկանշական է, որ Աշխատանքային օրենսգիրքը գործատուներին վերջնահաշվարկը մասնակի կատարելու կամ վերջնահաշվարկ կատարելիս որոշ

---

[541] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ, 2019, 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 149-150, 225-227, 202-204, 90-91):

[542] Տե՛ս, Պաշտպանի 2022 թվականի «Աշխատանքային իրավունքների մի շարք խնդիրներ՝ ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քննարկման» արտահերթ հրապարակային զեկույցը: Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/images/files/3e8c442679f3517741050c3a1bcc4fa8.pdf, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[543] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/614, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[544] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3045, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

տեսակի գումարներ չհաշվարկելու համար ոչ միայն որևէ իրավական հիմք չի տալիս, այլև պարտավորեցնում է կատարել ***լրիվ վերջնահաշվարկ***:

Այսպիսով, նշված իրավանորմերն ունեն իմպերատիվ բնույթ և ուղղված են աշխատողի աշխատանքային իրավունքների պատշաճ ապահովմանն ու դրանցից որևէ շեղում չի կարող լինել: Վերոգրյալի համատեքստում՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում արտահայտած այն դիրքորոշումները, ըստ որոնց՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելը գործատուների ոչ թե իրավունքն է, այլ պարտականությունը, իսկ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսելու հնարավորությունը վերաբերում է ոչ թե վերջնահաշվարկ կատարելու կամ չկատարելու կողմերի հայեցողությանը, այլ վերջնահաշվարկի կատարման կարգին, օրինակ՝ ժամկետին: Այսինքն՝ գործատուն որևէ կերպ իրավասու չէ սահմանափակելու աշխատանքից ազատվելուց հետո աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու իրավունքը:

Ուշագրավ է, որ 2024 թվականին ՄԻՊ աշխատակազմ աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումներով ստացված բողոքներով բարձրացված թերևս ամենատարածված խնդիրն աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելը կամ ոչ ամբողջովին կատարելը կամ օրենքով սահմանված ժամկետը չպահպանելով կատարելն է:

Այսպես, հաշվետու տարում աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել է 299 գրավոր և բանավոր դիմում-բողոք, որից 78-ը վերաբերել է քննարկվող խնդիրներին:

Հարկ է նշել, որ հաշվետու տարում կոնկրետ դեպքում վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ բողոքը Պաշտպանի աջակցությամբ ստացել է լուծում:

Այսպես, Պաշտպանին ներկայացված բանավոր բողոքով անձը հայտնել է, որ աշխատել է ՆԳՆ ստորաբաժանումներից մեկում: Հայտնել է նաև, որ իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է 2024 թվականի ապրիլի 26-ին, մինչդեռ պայմանագրի լուծման օրն իր հետ վերջնահաշվարկ չի կատարվել: Նշել է նաև, որ այս խնդրով բազմիցս բանավոր դիմել է իրավասու աշխատակցին, սակայն արդյունքի չի հասել:

Պաշտպանի ներկայացուցիչը բարձրացված հարցը նույն թվականի մայիսի 6-ին և 7-ին քննարկել է ՆԳՆ համապատասխան ստորաբաժանումների իրավասու ներկայացուցիչների հետ: Արդյունքում, տրամադրվել է պարզաբանում առ այն, որ վերջնահաշվարկի կատարման համար հիմք հանդիսացող տեղեկատվություն ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն դեռևս չի փոխանցվել, ինչով պայմանավորված՝ աշխատակցի հետ վերջնահաշվարկ չի կատարվել: Նշել է, որ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու նպատակով հարցում է կատարել ՆԳՆ համապատասխան ստորաբաժանում և հավելել, որ անձի հետ վերջնահաշվարկը հնարավոր կլինի կատարել երկու աշխատանքային օրվա ընթացքում: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ խնդիրը ստացել է լուծում և իր հետ կատարվել է վերջնահաշվարկ:

Այսպիսով, նշված դեպքում խնդրահարույց է այն, որ աշխատանքային օրենսդրության նորմերը պետական մարմնի կողմից ի սկզբանե չեն պահպանվել:

Հարկ է նշել, որ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու, ոչ ամբողջովին կատարելու կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելու վերաբերյալ հաշվետու տարում ստացված բողոքները հիմնականում վերաբերել են մասնավոր ոլորտին, իսկ մասնավոր կազմակերպությունների դեմ բողոքներ քննարկելու իրավասություն Պաշտպանը չունի: Նշվածի հաշվառմամբ՝ ՄԻՊ-ին հասցեագրված նման բողոքները դրանք ներկայացրած անձանց գրավոր համաձայնությամբ փոխանցվել են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին: Դրանց ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք:

2024 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ շարունակում են խնդրահարույց մնալ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս բարձրացված, աշխատանքային իրավունքների վերաբերյալ աշխատողների իրազեկվածության պակասի և դրա հետևանքով առաջ եկող հարցերը՝ նկատի ունենալով, որ մարդու իրավունքների խախտման հանգեցնող պատճառներից մեկն իրազեկվածության պակասն է:

Այս տեսանկյունից Պաշտպանը կարևոր է համարում աշխատանքային իրավունքների ապահովման նկատմամբ պետության պատշաճ վերահսկողության միջոցների ձեռնարկումը, ինչպես նաև աշխատողների և գործատուների շրջանում աշխատանքային իրավունքների առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման խնդրին Պաշտպանը մշտապես անդրադառնում է ինչպես իր ուղերձներում[545], այնպես էլ վերաբերելի քննարկումների, համաժողովների և այլ միջոցառումների ժամանակ: Այսպես, օրինակ՝ 2024 թվականի հունիսի 28-ին Մարդու իրավունքների պաշտպանը բացման խոսքով հանդես գալով ***«Արժանապատիվ Աշխատանք Հիմա՛»*** ծրագրի ամփոփիչ համաժողովին՝ կարևորել է հանրային քննարկումների ձևաչափով քաղաքացիների իրազեկվածության մակարդակի բարձրացումը, քանի որ Պաշտպանի աշխատակազմ դիմող քաղաքացիների զգալի մասը տեղեկացված չէ իրենց իրավունքներից[546]:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշտապես առաջնորդվել օրենսդրության պահանջների պահպանմամբ. աշխատանքից ազատվող աշխատողի հետ կատարել պատշաճ և լրիվ վերջնահաշվարկ՝ պահպանելով նաև օրենսդրությամբ սահմանված ժամկետները.***
- ✓ ***պարբերաբար կազմակերպել միջոցառումներ աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:***

---

[545] Տե՛ս, օրինակ՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2511, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[546] Մանրամասն տե՛ս, հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3045, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի հունիսի 28-ին բացման խոսքով է հանդես եկել «Արժանապատիվ Աշխատանք Հիմա՛» ծրագրի ամփոփիչ համաժողովին: Միջոցառման ընթացքում քննարկվել են վերջին տարիներին Աշխատանքային օրենսգրքում և հարակից օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները, արտադատական պաշտպանության հնարավորությունները, աշխատանքային իրավունքների վիճակի վերաբերյալ ընկալումները և ապագա հեռանկարներն ու առաջնահերթությունները:

Համաժողովի շրջանակներում Պաշտպանը, ընդունելով հանդերձ օրենսդրության փոփոխություններին ուղղված համակարգային աշխատանքները, ընդգծել է օրենսդրական և պրակտիկ կիրառելիության խնդիրների շարունակական առկայությունը, դրանց պատշաճ կարգավորման և հասցեավորման կարիքը, ու կարևորել հանրային քննարկումների ձևաչափով քաղաքացիների իրազեկվածության մակարդակի բարձրացումը[547]:

2015 թվականից մինչ օրս Պաշտպանը ինչպես տարեկան հաղորդման շրջանակում, այնպես էլ հանրային քննարկումների ընթացքում բարձրացրել է աշխատանքային իրավունքների և օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայության, աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասի և դրանցից բխող խնդիրների մասին[548]:

Չնայած Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի առկայությանը, որին աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի այլ պահանջների, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություն է տրվել[549] Պաշտպանը բազմիցս անդրադարձել է նաև աշխատանքային իրավունքների վերաբերյալ աշխատողների իրազեկվածության պակասին և դրա հետևանքով առաջ եկող խնդիրներին, որը շատ հաճախ հանգեցնում է ոչ միայն իրավունքների խախտման, այլև իրավունքի խախտման դեպքերի չբացահայտման:

Աշխատողների և գործատուների շրջանում իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությանը Պաշտպանն անդրադարձել է նաև իր՝ «Աշխատանքային իրավունքների մի շարք խնդիրներ՝ ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին

---

[547] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3045 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[548] Տե՛ս առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 93-96:

[549] Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածը:

ուղղված դիմում-բողոքների քննարկման» արտահերթ հրապարակային զեկույցի[550] շրջանակներում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ նախարարությունը 2024 թվականի ընթացքում կատարել է աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ՝ **e-work.am** հարթակի, աշխատանք փնտրող անձանց և գործատուներին առաջարկվող հնարավորությունների[551], աշխատավայրում և աշխատանքային հարաբերություններում խնամքին երեխա ունեցող կանանց առավելությունների և արտոնությունների վերաբերյալ[552], հեռուստատեսային հաղորդումների շրջանակներում[553]:

Նախարարության կողմից իրականացվել է Հրազդան քաղաքում «Գտի՛ր աշխատանք» խորագրով աշխատանքի տոնավաճառ[554], հրապարակումներ են արվել աշխատանքային պայմանագրերի մասին պահանջվող տեղեկությունները մեկ հարթակում ամբողջացնելու և հասանելիություն ապահովելու նպատակով աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի ներդրման վերաբերյալ[555]:

Ներկայացվածի հետ մեկտեղ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող դիմում-բողոքների, Պաշտպանի աշխատակազմի կողմից մարդկանց տրամադրվող խորհրդատվության արդյունքները վկայում են ինչպես աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակասի, այնպես էլ այդ ուղղությամբ թիրախավորված ու կայուն աշխատանքների իրականացման անհրաժեշտության մասին:

---

[550] Տե՛ս «Աշխատանքային իրավունքների մի շարք խնդիրներ՝ ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քննարկման» արտահերթ հրապարակային զեկույցը, 2022 փետրվար, հասանելի է https://ombuds.am/images/files/3e8c442679f3517741050c3a1bcc4fa8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[551] Հասանելի է https://www.facebook.com/mlsa.am/videos/1068825577971331 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[552] Հասանելի է https://www.facebook.com/mlsa.am/videos/840783197426337 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[553] Հասանելի է https://www.facebook.com/mlsa.am/videos/1214867202868532, https://www.facebook.com/mlsa.am/videos/868195458407408 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[554] Հասանելի է https://www.facebook.com/mlsa.am/posts/pfbid0DkP7KJrm8XFPWsBQoefKPsfM1mWem6H9yMdqn9PD6xSysoEbzAfhnv2GkD76rnR4l հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[555] Հասանելի է https://www.facebook.com/photo/?fbid=910115241160294&set=a.249253233913168 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտ է՝

- ✓ ***Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ սահմանված ժամկետում ավարտել աշխատանքային վեճերի լուծման արտադատական մարմնի ստեղծման աշխատանքները՝ հստակեցնելով արտադատական մարմնի լիազորությունների ծավալը՝ բացառելու համար դրանց նույնացումը Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին վերապահված լիազորությունների ծավալի հետ,***
- ✓ ***զանգվածային լրատվության և այլ հնարավոր միջոցներով շարունակաբար հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ:***

3. Գործադուլի իրավունքի սահմանափակումը

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ իր տարեկան հաղորդումներում անդրադարձել է գործադուլի իրականացմանը խոչընդոտող գործադուլի օրենսդրական և գործնական խնդիրներին, որոնք են հանգում են հետևյալին.

1) աշխատանքային պայմանների և արհմիությունների իրավունքների երաշխավորման վերաբերյալ հարցերից բացի, սոցիալ-տնտեսական քաղաքականությանն առնչվող հարցերի բարձրաձայնման անհնարինություն գործադուլի միջոցով,

2) որոշակի ոլորտներում գործադուլի իրավունքի արգելք,

3) գործադուլ հրավիրելու համար աշխատողների թվաքանակին ներկայացվող բարձր պահանջներ,

4) գործադուլի իրավունքի առնչությամբ իրազեկվածության պակաս:

- ➢ ՀՀ աշխատանքային օրենսգրքում 2023 թվականի ընթացքում կատարված փոփոխությունների համաձայն՝ գործադուլ կարող է իրականացվել հետևյալ դեպքերում.

1) աշխատանքային վեճն աշխատողի և գործատուի համաձայնությամբ չլուծվելու դեպքում,

2) կոլեկտիվ աշխատանքային վեճը չլուծվելու դեպքում,

3) գործատուի կողմից հաշտեցման գործընթաց իրականացնելուց խուսափելու դեպքում,

4) հաշտեցման հանձնաժողովի՝ Աշխատանքային օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ընդունած որոշումը գործատուի չկատարելու դեպքում,

5) նախօրոք կնքված կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները գործատուի չկատարելու դեպքում,

6) կոլեկտիվ բանակցություններ վարելու վերաբերյալ գրավոր ծանուցում ստացած գործատուի՝ Աշխատանքային օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված ժամկետում կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իր դիրքորոշման մասին

կոլեկտիվ բանակցությունների ցանկություն հայտնած կողմին չտեղեկացնելու դեպքում[556]:

Այս կապակցությամբ, տեղին է Միավորումների ազատության կոմիտեի արտահայտած դիրքորոշումն[557] առ այն, որ գործադուլի միջոցով կարող են բարձրացվել խնդիրներ և առաջադրվել պահանջներ, որոնք աշխատանքային պայմաններին և արհմիությունների իրավունքների երաշխավորմանը վերաբերելուց զատ կարող են վերաբերել նաև սոցիալ-տնտեսական քաղաքականությանը, ինչը, ըստ Միավորումների ազատության հանձնաժողովի, չպետք է քողարկվի մասնագիտական կամ արհմիութենական պահանջների շղարշի տակ. այդ պահանջները պետք է կապված լինեն աշխատողների իրավունքների խթանման և պաշտպանության հետ:

Այսպիսով, թեև գործադուլի իրավունքի իրացման դեպքերի շրջանակն ընդլայնվել է, սակայն շարունակում են սահմանափակումներ լինել որոշակի դեպքերի առնչությամբ, օրինակ՝ գործադուլի միջոցով բարձրացնելու այնպիսի խնդիրներ և առաջադրելու այնպիսի պահանջներ, որոնք աշխատանքային պայմաններին և արհմիությունների իրավունքների երաշխավորմանը վերաբերելուց զատ կարող են վերաբերել նաև սոցիալ-տնտեսական քաղաքականությանն առնչվող հարցերին:

➢ Նշվածի հետ մեկտեղ, օրենսդրական խնդիրների շարքում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված են ոլորտներ, որտեղ գործադուլի իրավունքը արգելվում է (ոստիկանությունում, զինված ուժերում (դրան հավասարեցված այլ ծառայություններում), պահպանության ծառայություններում, ինչպես նաև կենտրոնացված էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, գազամատակարարման կազմակերպություններում, անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններում)[558]:

Նշված դրույթների առնչությամբ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2022 թվականի եզրակացություններում[559] հանգել էր նրան, որ Հայաստանում իրավիճակը չի համապատասխանում Վերանայված եվրոպական սոցիալական խարտիային այն հիմքով, որ՝

- գործադուլ հրավիրելու համար պահանջվող աշխատողների թվաքանակը չափազանց բարձր է,
- էներգամատակարարման ծառայություններում գործադուլներն արգելված են,

---

[556]Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 96-100, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[557] Տե՛ս «Գործադուլի վերաբերյալ ԱՄԿ սկզբունքները», Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ժնև, հասանելի է https://www.ilo.org/sites/default/files/wcmsp5/groups/public/@ed_norm/@normes/documents/publication/wcms_087987.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[558] ՀՀ աշխատանքային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մաս:

[559]Տե՛ս, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2022 թվականի եզրակացությունը, հասանելի է https://rm.coe.int/conclusions-2022-armenia-e/1680aa984a հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

• ոստիկանությունը զրկված է գործադուլ անելու իրավունքից,

• որոշ ոլորտներում գործադուլի իրավունքի սահմանափակումները լայն են և դուրս են Խարտիայով թույլատրված սահմաններից:

Այսպիսով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով շարունակում են ուժի մեջ մնալ այնպիսի կարգավորումներ, որոնցով դեռ որոշակի ոլորտներում գործադուլի իրավունքն արգելվում է միջազգային չափանիշներին հակասող եղանակով:

➢ Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության ընթացքում արձանագրել է նաև, որ իրավակիրառ պրակտիկայում աշխատակիցները պատշաճ իրազեկված չեն գործադուլի կազմակերպման և իրականացման համար օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ:

Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, ինչպես նաև սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկումները վկայում են, որ խնդիրը համակարգային է:

Չնայած գործադուլին առնչվող իրավակարգավորումների համատեքստում կատարված որոշ դրական փոփոխություններին՝ դրանք բավարար չեն գործադուլի իրավունքի՝ միջազգային չափանիշներին համապատասխան պատշաճ իրացման տեսանկյունից:

Գործադուլը, որն ուղղված է աշխատողների տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանությանը և հանդիսանում է նաև միավորման ազատության դրսևորում, երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածով, ինչպես նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով և այլ ներպետական ու միջազգային փաստաթղթերով:

Ներկայացված խնդիրների համատեքստում Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք է շարունակական իրազեկման աշխատանքներ իրականացնի կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորման և գործադուլի իրականացման օրենսդրորեն ամրագրված կառուցակարգերի վերաբերյալ:

Պաշտպանը ընդգծում է նաև, որ պետությունում գործող իրավակարգավորումները չպետք է լինեն այնպիսին, որպեսզի գործնականում խոչընդոտեն գործադուլի միջոցով աշխատողների կողմից համապատասխան խնդիրների բարձրաձայնմանը, իսկ աշխատանքային պայմանների վերաբերյալ հարցերը իրավասու մարմինները պետք է մանրամասն ուսումնասիրության առարկա դարձնեն և լինեն հետևողական, որպեսզի հնարավորին սեղմ ժամկետում գտնվեն դրանց համակարգային լուծումները:

Պետք է նշել, որ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ նախարարության կողմից Պաշտպանի կողմից նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում ներկայացված առաջարկների կատարմանն ուղղված քայլեր չեն իրականացվել, սակայն դրանք քննարկվելու են Աշխատանքային օրենսգրքի հետագա բարեփոխումների շրջանակում:

Ելնելով այն հանգամանքից, որ գործադուլի իրավունքի իրացման խնդիրները շարունակում են արդիական մնալ՝ Պաշտպանը վերահաստատում է գործադուլի իրավունքի առավել պարզ և կիրառելի կարգավորումների օրենսդրորեն ամրագրման անհրաժեշտությունն ու գործնականում դրանց երաշխավորումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ընդլայնել այն ոլորտները, որտեղ արգելված չի լինի գործադուլի իրականացումը,***
- ***շարունակական իրազեկման աշխատանքներ իրականացնել գործադուլի իրավունքի իրականացման օրենսդրորեն ամրագրված կառուցակարգերի վերաբերյալ,***
- ***օրենսդրորեն ամրագրել գործադուլի իրավունքի առավել պարզ և կիրառելի կարգավորումներ՝ նվազեցնելով գործադուլ իրականացնելու համար պահանջվող աշխատողների թվաքանակը (օրինակ՝ գործադուլ իրականացնել ոչ թե աշխատողների ընդհանուր թվի կեսի, այլ մեկ երրորդի համաձայնությամբ),***
- ***նախատեսել աշխատանքային պայմանների և արհմիությունների իրավունքների երաշխավորման վերաբերյալ հարցերից բացի, սոցիալ-տնտեսական քաղաքականությանն առնչվող հարցերի բարձրաձայնման հնարավորությունը գործադուլի միջոցով,***
- ***երաշխավորել այնպիսի իրավակարգավորումների առկայությունը, որպեսզի դրանք գործնականում չխոչընդոտեն գործադուլի միջոցով աշխատողների կողմից համապատասխան խնդիրների բարձրաձայնմանը, իսկ աշխատանքային պայմանների վերաբերյալ հարցերը իրավասու մարմինները դարձնեն մանրամասն ուսումնասիրության առարկա և լինեն հետևողական, որպեսզի հնարավորին սեղմ ժամկետում գտնվեն դրանց համակարգային լուծումները:***

4. Խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայությունը

Պաշտպանը տարիներ շարունակ իր տարեկան հաղորդման շրջանակներում մտահոգությունն է հայտնել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին խախտված աշխատանքային իրավունքների հարցով անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայության առնչությամբ[560]:

Տեսչական մարմինը, որը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն, իրականացնում է աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնելու լիազորությունը և օրենքով նախատեսված դեպքերում կիրառում պատասխանատվության միջոցներ, չի քննարկում անանուն ձևաչափով ստացված բողոքները:

---

[560]Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 100-102, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նշվածով պայմանավորված՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներով քաղաքացիները խնդրահարույց են համարել անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայությունը: Նշվածի արդյունքում, ըստ բողոքների, անձինք խուսափում են դիմել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին՝ խուսափելով նույնականացման խնդրի հետ բախվելուց:

Պետք է նկատել նաև, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 1-ից պետք է գործարկեր աշխատանքային իրավունքի պաշտպանության EmployeeProtect.am հարթակը, որի միջոցով աշխատողները պետք է կարողանային դիմում-հայտ ներկայացնել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին: Հարթակում հետագայում պետք է նաև գործարկվեր անանուն դիմումներ ներկայացնելու գործիքը[561]:

Մինչդեռ, էլեկտրոնային հարթակը մինչ օրս չի գործում:

Ինչ վերաբերում է անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ հարցադրմանը, ապա Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի պարզաբանումների համաձայն՝ դիմումների ներկայացումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ըստ որի՝ վարչական մարմին դիմումը ներկայացվում է գրավոր և, ի թիվս այլնի, պետք է պարունակի նաև դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը) և այլն:

Միևնույն ժամանակ, ըստ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային իրավունքի խախտման առերևույթ հատկանիշներ պարունակող անանուն տեղեկատվություն ստանալու դեպքում, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը հարուցում է վարչական վարույթ՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

Այսպիսով, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում վարչական վարույթ հարուցելու հիմքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված՝ դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները բավարարող դիմումն է, իսկ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը կարող է իրականացվել միայն նշված դեպքերում:

---

561 Հասանելի է https://www.hlib.am/%d5%a1%d5%a1%d5%bf%d5%b4-%d5%b6-%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%a1%d6%80%d5%af%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a7-%d5%a1%d5%b7%d5%ad%d5%a1%d5%bf%d5%b8%d5%b2%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab-%d5%ab%d6%80%d5%a1%d5%be%d5%b8/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հետևաբար՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը անանուն ներկայացված բողոքների վերաբերյալ սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու սահմանափակ հնարավորություն ունի:

Միևնույն ժամանակ, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորություն նախատեսելուն ուղղված աշխատանքներ նախարարության կողմից չեն իրականացվել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու հնարավորությունը և դրանց հիման վրա վարչական վարույթ հարուցելու պարտականությունը:

5. Աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման իրավունքների պաշտպանություն

Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցերը 2024 թվականին շարունակել են գտնվել Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Չնայած օրենսդրական երաշխիքներին, դեռ առկա են համակարգային խնդիրներ, որոնք խոչընդոտում են աշխատողների իրավունքների պատշաճ իրացմանը:

Յուրաքանչյուր աշխատողի, օրենքին համապատասխան, առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունքը երաշխավորվում է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ ներպետական և միջազգային մի շարք փաստաթղթերով, որոնք մանրամասն ներկայացվել են Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում[562]:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում ընդգծել է, որ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցերում առկա են համակարգային խնդիրներ՝ կապված օրենսդրական կարգավորումների բացակայության, իրազեկվածության պակասի, դրանց արդյունքում իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրների հետ: Արձանագրված խնդիրները, որոնք արդիական են եղել նաև 2024 թվականի ընթացքում, հանգում են հետևյալին՝

- գործատուի՝ աշխատողների անվտանգության և առողջության պահպանության համար անհրաժեշտ և բավարար միջոցների ձեռնարկումն ու պարտադիր պայմանների ապահովումն ամրագրող օրենսդրական կարգավորումների բացակայություն,

---

[562]Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 102-110:

➢ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման ոլորտում ռիսկերի գնահատման, կանխարգելման, պաշտպանության, կանխարգելիչ միջոցների և սարքավորումների ընտրության, աշխատողների՝ իրենց պարտականությունների և անվտանգության կանոնների վերաբերյալ իրազեկվածության, ինչպես նաև համապատասխան կարողությունների պակաս,

➢ աշխատանքային օրենսդրությամբ «առողջություն» և «անվտանգություն» հասկացությունների հստակության բացակայություն՝ դրանց ճիշտ կիրառման ապահովման նպատակով:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ աշխատանքային անվտանգության և առողջության պաշտպանության մակարդակը բարձրացնելու նպատակով 2024 թվականի ընթացքում իրականացվել են իրազեկման ծրագրեր, իսկ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացրել շինարարական ոլորտում՝ արձանագրելով անվտանգության խախտումներ, որոնցից 28-ը հանգեցրել են դժբախտ պատահարների (10 մահվան ելքով):

Միևնույն ժամանակ, պետական մարմիններից ստացված արձանագրումները ևս վկայում են ոչ բավարար կառուցակարգերի մասին: Ըստ նույն տեսչական մարմնի՝ մարմինը չունի բավարար գործիքակազմ, հատկապես քաղաքացիաիրավական հարաբերությունների վերահսկողության առումով:

Մինչդեռ, անվտանգ ու առողջ աշխատանքային պայմանների ապահովումն անհրաժեշտ է ոչ միայն անհատական բարեկեցության, այլև աշխատանքի արդյունավետության բարձրացման համար:

Հարկ է նկատել, որ միջազգային մակարդակով շարունակում է կարևորվել պետությունների պարտավորությունը՝ անվտանգության երաշխիքների բարելավման ուղղությամբ, ինչի շրջանակներում հատկանշական են Եվրոպական միության օրենսդրությամբ սահմանված սկզբունքներն ու ԱՄԿ կոնվենցիաների պահանջները: Օրինակ՝ այս համատեքստում հիշատակման արժանի է ԵՄ 89/391/EEC շրջանակային հրահանգը, որը նախատեսում է, որ գործատուները պարտավոր են հաշվի առնել մի շարք սկզբունքներ, որոնցից են՝ ռիսկերի կանխարգելումը, անխուսափելի ռիսկերի գնահատումը, աշխատանքային պայմանների հարմարեցումը, տեխնիկական առաջընթացին հարմարեցումը, անհատական պաշտպանության միջոցների նկատմամբ կոլեկտիվ պաշտպանության միջոցների առաջնահերթությունը և այլն: Համանման կարգավորումները կարող են արդյունավետ լինել նաև Հայաստանի Հանրապետությունում հիշատակված խնդիրների հաղթահարման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

✓վավերացնել «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ թիվ 155 կոնվենցիան,

✓վերանայել ՀՀ աշխատանքային օրենսդրությունը՝ ստեղծելով կանխարգելման համակարգ, որը կլուծի ռիսկերի և մասնագիտական վտանգների խնդիրները,

✓նախատեսել աշխատավայրում անվտանգության ու առողջության ապահովման համար նոր կառավարման ձևաչափ,

✓նախատեսել առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ, հատկապես՝ հղի և կրծքով կերակրող կանանց համար,

✓հստակ ամրագրել գործատուի պարտականությունը՝ մինչև աշխատանքային պարտականությունների կատարումը աշխատողներին իրազեկելու աշխատանքի անվտանգության կանոնները,

✓հստակ ամրագրել գործատուի պատասխանատվությունը աշխատողների անվտանգության ու առողջության պահպանման հարցերում,

✓օրենսդրությամբ ապահովել աշխատողների մասնակցությունը անվտանգության և առողջության ապահովման հարցերի քննարկումներին,

✓ընդլայնել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործիքակազմը և կատարելագործել առկա կառուցակարգերը,

✓պարբերաբար իրականացնել աշխատանքային անվտանգության մասին իրազեկման և վերապատրաստման միջոցառումներ՝ ներգրավելով աշխատողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ու արհեստակցական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

6. Աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խթանման հարցում արհեստակցական միությունների դերի բարձրացումը

2024 թվականին Հայաստանում արհեստակցական միություններում (արհմիություններին) ցածր ներգրավվածությունը շարունակել է պահպանվել՝ պայմանավորված արհմիությունների թույլ ինստիտուցիոնալ վիճակով և սոցիալական ցածր դերակատարությամբ:

Արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը միավորվելու ազատության դրսևորումներից է, որը երաշխավորված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով, որոնք բազմիցս քննարկման առարկա են դարձել Պաշտպանի տարեկան հաղորդումներում[563]:

2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան ներառել է 18 ճյուղային հանրապետական միություններ, որոնց կազմում գործել է 589 արհմիութենական կազմակերպություն՝ 191,340 անդամներով: Նախորդ տարվա համեմատ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ճյուղային հանրապետական միություններում ընդգրկված արհմիութենական կազմակերպությունները ավելացել են միայն 2-ով, իսկ դրանցում ընդգրկված անդամները նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ եղել են 189479-ը:

2024 թվականի ընթացքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան շարունակել է գրավոր և բանավոր իրավախորհրդատվությունների տրամադրումը: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի 15 դատական գործից 14 դատական գործ ավարտվել է հաղթանակով, իսկ 1-ը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում ավարտվել է

---

[563] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 110-118:

հաղթանակով, մինչդեռ պատասխանողի բողոքի հիման վրա գործը գտնվել է Վերաքննիչ դատարանի վարույթում: Եվս 2 հայց մուտք է արվել դատարան: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան նաև իրականացրել է աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ անվտանգության խնդիրների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ և վերապատրաստումներ:

Չնայած նշվածի՝ Հանրային ծառայություններում աշխատողների արհմիությունների Եվրոպական ֆեդերացիայի (EPSU) հրապարակած ուղեցույցում ընդգծվել է, որ արհմիությունում անդամների քանակի ավելացումը բավարար երաշխիք չէ արհմիության հզորության ավելացման համար, պետք է երաշխավորել ավելացող անդամների քանակի գերազանցումը արհմիությունը լքողների քանակին ու ակտիվ անդամակցություն, որպեսզի հնարավոր լինի նրանց արագ մոբիլիզացնել արհմիության արշավների ու բանակցությունների ժամանակ[564]:

➢ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2022 թվականին դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով ՀՀ զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքի սահմանադրականության հարցը[565]:

Սահմանադրական դատարանն էլ իր հերթին, Պաշտպանի դիմումի հիման վրա, բացարձակ արգելքն ամրագրող իրավակարգավորումները ճանաչել է Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող ու Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի նոյեմբերի 11-ը[566]:

Նշվածի առնչությամբ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ դեռ 2022 թվականի եզրակացությունում[567] ընդգծվել է «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, որով կապահովվի նաև դատախազության մարմինների ծառայողների, դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորների, ոստիկանության աշխատակիցների, ինքնազբաղված անձանց և ոչ ֆորմալ աշխատողների հնարավորությունը անդամակցելու արհմիություններին, ինչպես նաև այն, որ Հայաստանում իրավիճակը չի համապատասխանում

---

[564] Տե՛ս, Հանրային ծառայություններում աշխատողների արհմիությունների Եվրոպական ֆեդերացիայի ուղեցույցը, հասանելի է https://www.epsu.org/sites/default/files/article/files/Organising%20guide_ARM.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[565]Պաշտպանը փաստել է, որ արհեստակցական միությունները ծառայում են որպես աշխատողների անհատական և կոլեկտիվ իրավունքների պաշտպանության, ինչպես նաև նրանց սոցիալական բարեկեցության ապահովման հիմնական և առավել արդյունավետ մեխանիզմ: Արհեստակցական միությունների ստեղծումն, այսպիսով, բոլոր աշխատողների հիմնարար իրավունքն է, որից վերջիններիս զրկումը կարող է էականորեն խաթարել գործատուի և աշխատողների միջև կայուն և բնականոն երկխոսությունը, ինչն իր հերթին կառաջացնի գործատուի կողմից աշխատողների իրավունքների խախտման և վերջիններիս նվազ պաշտպանվածության ռիսկեր:

[566]Տե՛ս, Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴՈ-1683 որոշումը:

[567]Տե՛ս, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2022 թվականի եզրակացությունը, հասանելի է https://rm.coe.int/conclusions-2022-armenia-e/1680aa984a հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Եվրոպական սոցիալական խարտիայի 5-րդ հոդվածին այն հիմքով, որ արհմիություններ և գործատուների կազմակերպություններ ստեղծելու համար նվազագույն պահանջները չափազանց բարձր են, ինչի վերաբերյալ անդրադարձ է կատարվել նախորդիվ:

Չնայած վերոշարադրյալին, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դիրքորոշմանն ու նախանշած վերջնաժամկետներին՝ օրենսդրական կարգավորումների՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխանեցում 2024 թվականին չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ իրականացնել «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ՝ ամրապնդելով արհմիությունների ինստիտուցիոնալ և նյութական անկախության երաշխիքները՝ որպես իրավապաշտպան և քաղաքացիական հասարակության միավորներ,

✓«Արհեստակցական միությունների մասին» օրենքը շուտափույթ համապատասխանեցնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին և իրացնել այդ առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները,

✓շարունակաբար իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ և վերապատրաստումներ՝ ուղղված արհմիությունների սոցիալական դերակատարության բարձրացմանը, դրանց ձևավորման և անդամակցության, անդամակցության արդյունքում առաջացող հնարավորությունների մասին,

✓ամրապնդել արհմիությունների ներկայությունը և գործուն դերակատարությունը աշխատողների կարգապահական վարույթներում,

✓ապահովել արհմիությունների ներկայացուցիչների ներկայացվածությունը տարբեր աշխատանքային հաստատությունների խորհուրդներում կամ ներկայացուցչական մարմիններում՝ հնարավորություն տալով բարձրաձայնելու աշխատողների խնդիրները,

✓ապահովել արհմիությունների մասնակցությունը աշխատողների իրավունքներին առնչվող քաղաքականության մշակման և դրա կատարման վերահսկման գործընթացներին, մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրել, որ աշխատանքային և արհմիության գործունեությանն առնչվող ոլորտների օրենսդրության մեջ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվում են՝ նախապես դրանք քննարկելով արհմիությունների կազմակերպությունների հետ,

✓նվազեցնել արհմիություններ ստեղծելու պահանջները՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:

ԳԼՈՒԽ 3. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2024 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ: Հարկ է նկատել, որ սեփականության իրավունքի խախտումները բաժին են ընկնում տարիներ շարունակ մեր երկրում լուծում չստացած խնդիրներին: Այդպիսիք են պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիրը, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրները, անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման հետ կապված խնդիրը, «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցում չտրամադրելու խնդիրը և այլն: Հարկ է նշել, որ այս համակարգային խնդիրները Պաշտպանը մշտապես է բարձրացնում իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումների շրջանակում:

Հաշվետու տարում նշված խնդիրների կարգավորման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության սահմաններում ձեռնարկվելիք միջոցառումների ուղղությունները նախանշելու նպատակով Պաշտպանի նախաձեռնությամբ ՄԻՊ աշխատակազմում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են նաև մի շարք միջոցառումների, որոնց ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են Հայաստանում գերակա հանրային շահի նպատակով սեփականության օտարմանն առնչվող օրենսդրության ու պրակտիկայի արդի խնդիրները, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով և «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված կարգավորումները:

1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիր

2024 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ, որոնք վերաբերել են որոշ տարածքների հանրային գերակա շահ ճանաչվելու հետևանքով մարդկանց իրավունքների սահմանափակման հարցերին:

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձի փաստաբանը տեղեկացրել է, որ Ֆիրդուսի փողոցի թիվ 32 և 32/2 հասցեներում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է իր վստահորդին: Հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի թիվ 332-Ն որոշմամբ հաստատված հավելվածի համաձայն՝

իր վստահորդին սեփականության իրավունքով պատկանող վերոնշյալ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ: Այնուհետև, Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից փոստային առաքման միջոցով վերջինիս են հասցեագրվել գրություններ, որոնցով առաջարկվել է 15-օրյա ժամկետում դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել դրանց կից ներկայացված՝ «Անշարժ գույքը հանրության գերակա շահերի ապահովման նպատակով վերցնելու և փոխհատուցում վճարելու մասին» պայմանագրերի նախագծերի վերաբերյալ:

Բողոք ներկայացրած անձը նշել է նաև, որ իր վստահորդը չի ընդունել և առարկություն է ներկայացրել վերոնշյալ պայմանագրերի նախագծերում ամրագրված առաջարկությունների վերաբերյալ: Հավելել է, որ դրանից հետո՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի համաձայն խնդրո առարկա անշարժ գույքի նկատմամբ օտարման գործընթաց չի սկսվել, մասնավորապես, ձեռքբերողի կողմից փոխհատուցման ենթակա գումարը չի հանձնվել դեպոզիտ հաշվին, ինչպես նաև օրենքով նախատեսված ժամկետում սեփականության օտարման պահանջով հայցադիմում չի ներկայացվել դատարան: Նշել է նաև, որ ՀՀ վարչական դատարանի վարույթում է գտնվում թիվ ՎԴ/5866/05/18 վարչական գործը՝ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի թիվ 332-Ն որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հավելել է, որ Պաշտպանի աշխատակազմ դիմում-բողոք ներկայացնելուց մոտ մեկ շաբաթ առաջ խնդրո առարկա տարածքն ընդգրկող լոտի կառուցապատմամբ զբաղվող ընկերության (այսուհետ՝ նաև ձեռքբերող) ներկայացուցիչներն իր վստահորդին բանավոր հորդորել են ընդունել իրենց կողմից առաջարկված գինը և վաճառել վերջինիս սեփականությունը: Տեղեկացրել են նաև, որ պատրաստվում են քանդել տան տանիքը, ինչն անհնարին կդարձնի այնտեղ բնակվելը: Ի պատասխան՝ իր վստահորդը հայտնել է, որ առաջարկված գնի կապակցությամբ ինքն ավելի քան մեկ տարի է ինչ առարկություններ է ներկայացրել:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ 2024 թվականի նոյեմբերի 10-ի գիշերն իր վստահորդի տան տանիքը քանդել են, ինչի արդյունքում տունը հայտնվել է բաց երկնքի տակ: Հավելել է, որ նման ապօրինի գործողությունների և օրենքով նախատեսված ընթացակարգերը շրջանցելու միջոցով ձեռքբերողը փորձում է հարկադրել իր վստահորդին անշարժ գույքն օտարել իրենց նախընտրած գնով: Բացի այդ, նշել է, որ իր վստահորդին սեփականության իրավունքով պատկանող Ֆիրդուսի փողոցի թիվ 32 և 32/2 հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ գույքերի օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետ էր նախատեսվել 2023 թվականի հունվարի 1-ը, որով ձեռք բերողին իրավունք էր վերապահվել օտարման գործընթացները սկսել մինչև սահմանված ժամկետի ավարտը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ փաստաբանը հայտնել է, որ ձեռքբերողի կողմից ոչ միայն օրենքով սահմանված կարգով օտարման գործընթաց չի սկսվել, ավելին, օրենքով նախատեսված օտարման ընթացակարգերի շրջանցմամբ՝ 2024 թվականի նոյեմբերի 10-ի գիշերը կառուցապատմամբ զբաղվող ընկերության կողմից սկսվել են իր վստահորդի տան տանիքի ապօրինի քանդման աշխատանքները, որի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել նաև ՀՀ ոստիկանություն:

Փաստաբանը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր վստահորդին սեփականության իրավունքով պատկանող Ֆիրդուսի փողոցի թիվ 32 հասցեում գտնվող անշարժ գույքի քանդման աշխատանքները դադարեցնելու հարցում:

Բողոքի ուսումնասիրության պատշաճ ընթացքն ապահովելու նպատակով՝ Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել բողոք ներկայացրած անձի փաստաբանի հետ: Վերջինս տեղեկացրել է, որ ձեռքբերողի կողմից տանիքի քանդման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետարանի կողմից տրված քանդման թույլտվության հիման վրա: Փաստաբանը վերահաստատել է, որ ձեռքբերողի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում հանրության գերակա շահ ճանաչված անշարժ գույքի օտարման գործընթաց չի սկսվել: Հավելել է, որ նման պարագայում Ֆիրդուսի փողոցի թիվ 32 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով դեռ պատկանում է անշարժ գույքի սեփականատիրոջը և Երևանի քաղաքապետարանի կողմից անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող անձի պահանջով չէր կարող քանդման թույլտվություն տրամադրվել:

Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է ստացվել նաև այն մասին, որ իր վստահորդի կողմից Ֆիրդուսի փողոցի թիվ 32 հասցեում գտնվող բնակելի տան քանդման աշխատանքների իրականացման համար Երևանի քաղաքապետարանի կողմից տրված քանդման թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջով վերջինս դիմել է դատարան[568]:

Պաշտպանի աշխատակազմում իրականացված «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականին տրված քանդման թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ (ՎԴ/14316/05/24):

Հիմք ընդունելով նշված բողոքով մատնանշված հանգամանքները, ինչպես նաև բարձրացված հարցի հանրային նշանակությունը՝ 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Պաշտպանի այն հարցադրումներին, *թե 2024 թվականի ընթացքում Կառավարության 2018 թվականի մարտի 12-ի թիվ 332-Ն որոշմամբ նախատեսված բացառիկ հանրային գերակա շահ ճանաչված տարածքներում Երևանի քաղաքապետարանի կողմից անշարժ գույքերի քանդման քանի՞ թույլտվություն է տրվել՝ առանց հաշվի առնելու ձեռքբերողի կողմից «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի օտարման գործընթացը սկսելու հանգամանքը և արդյո՞ք նման պրակտիկա առկա է* ***(որպես օրինակ ներկայացվել է Ֆիրդուսի փողոցի թիվ 32 և 32/2 հասցեների քանդման թույլտվություն տրամադրելու հանգամանքը)***, ներկայացվել է պատասխան առ այն, որ *«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի քանդման թույլտվություն է տրվում բացառապես այդ գույքի սեփականատիրոջ հետ օրենքով սահմանված կարգով առուվաճառքի պայմանագրի կնքումից և ձեռքբերողի կողմից*

---

[568] Պաշտպանը բողոքը չի քննարկում, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցնում է նաև այն դեպքում, երբ բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անձը դրանում բարձրացված նույն հարցով դիմել է դատարան, առկա է նույն հարցի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ:

այդ գույքն իր անվամբ գրանցելուց հետո: Նշվել է նաև, որ Ֆիրդուսի փողոցի 32 և 32/2 հասցեների նկատմամբ ներկա դրությամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշում առկա չէ, հետևաբար այն քանդելու թույլտվություն տրվել չէր կարող:

Փաստորեն, ստացված պարզաբանումից հետևում է, որ ***Ֆիրդուսի փողոցի 32 և 32/2 հասցեների նկատմամբ ներկա դրությամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշում առկա չէ:*** Մինչդեռ, Պաշտպանի հարցադրման մեջ արդեն իսկ վկայակոչված էր ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 332-Ն որոշումը[569]: Ավելին՝ նշված որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի ցանկից պարզվում է, որ վերոհիշյալ հասցեները շարունակում են մնալ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածք: Դրանից բացի, Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ կառուցապատողին Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 31-ին տրվել է թիվ 01/50-05-75-24 քանդման թույլտվությունը, որն էլ վիճարկվել է դատական կարգով: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանը լրացուցիչ գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ և Արագած բնակավայրերում գտնվող որոշ տարածքների *(մոտ 115 հա ընդհանուր մակերեսով)* նկատմամբ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 1595-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ճանաչվել է հանրության գերակա շահ: Նշել է, որ սեփականության դիմաց փոխհատուցման չափը կազմել է ***300 ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար***, որը բողոք ներկայացրած անձի պնդմամբ, համարժեք փոխհատուցում չէ: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ նշված հողատարածքները բնակիչների կողմից տնօրինվել և մշակվել են ավելի քան 30 տարի: Այդ հողատարածքները ծառայել են որպես կարտոֆիլի, կաղամբի, ցորենի և այլ մշակաբույսերի դաշտեր՝ լինելով բնակիչների եկամտի միակ աղբյուրը: Հավելել է, որ իրենց իրավունքները պաշտպանելու համար իրականացրել են բողոքի ակցիաներ, սակայն արդյունքի չեն հասել: Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն օտարվող անշարժ գույքի դիմաց համարժեք փոխհատուցում ստանալու հարցում:

Պաշտպանի աշխատակազմը խնդիրն ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով[570]:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ ***խնդրելով ներկայացնել պարզաբանումներ այն մասին, թե ինչպե՞ս է իրականացվել այդ տարածքների շուկայական արժեքի գնահատումը: Արդյո՞ք 300 ՀՀ դրամ (մեկ քառակուսի մետրի համար) փոխհատուցումը դիտարկվել է համարժեք, եթե այո, ապա ի՞նչ հիմնավորմամբ:***

---

[569] Հասանելի է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում հետևյալ հղումով՝ https://new.arlis.am/hy/acts/162281, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[570] Տե՛ս, օրինակ՝ հետևյալ հրապարակումները https://shorturl.at/qcKOh, https://shorturl.at/UACPr հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ի պատասխան՝ նախարարությունը տրամադրել է պարզաբանում առ այն, որ Որոշման 1-ին կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի թիվ 279-Ա որոշմամբ հավանություն ստացած՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում «ՌԻԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված՝ ամառային և ձմեռային զբոսաշրջային, լեռնադահուկային, էկոգյուղատնտեսական արտադրության կենտրոնի ստեղծման և ջրամբարի կառուցման «Արագած» ներդրումային ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) իրականացնելու նպատակով Որոշման N 2 հավելվածում նշված տարածքներում ներառված՝ N 1 հավելվածում նշված հողամասերի (կադաստրային ծածկագրերով անշարժ գույքի միավորների) նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերից, քանի որ՝

ա. ծրագրի իրականացման արդյունքում կներգրավվեն նոր ներդրումներ, կստեղծվեն նոր աշխատատեղեր, կբարձրանա մարզի նկատմամբ գրավչությունը, կբարելավվի զբոսաշրջությունը, ինչը բնականաբար կունենա սոցիալ-տնտեսական բարձր նշանակություն մարզի և ամբողջ հանրապետության համար.

բ. ծրագրի իրականացումը կունենա նաև բնապահպանական, առողջության, սպորտի, մշակույթի զարգացման նշանակություն.

2) ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց որոշման N 1 հավելվածում ընդգրկված կադաստրային ծածկագրերով անշարժ գույքի միավորների օտարման:

Ըստ նախարարության՝ մինչ Որոշման ընդունումը ՀՀ օրենսդրության հիման վրա՝ Որոշման նախագիծը բազմիցս քննարկվել է շահագրգիռ մարմինների, այդ թվում՝ Արագածոտնի մարզպետարանի, Ապարան համայնքի հետ: Նախարարության տեղեկացմամբ՝ բացի այդ, ըստ ներդրող ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության՝ մինչ Որոշման ընդունումը եղել են բազմաթիվ հանդիպում-քննարկումներ տվյալ վարչական բնակավայրերի բնակիչների հետ, որոնց ընթացքում վերջիններս ներկայացրել են իրենց կարծիքները, ինչպես նաև ընդհանուր առմամբ դրական տրամադրվածությունը ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման վերաբերյալ:

Ընկերության կողմից իրականացվելիք Ծրագրի մասով նախարարությունը նշել է, որ այն միտված է Հայաստանի Հանրապետությունում տնտեսության, մասնավորապես՝ զբոսաշրջության ոլորտում բազմազանության ու զարգացման ապահովմանը, այդ թվում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան լեռնադահուկային սպորտային և ամառային հանգստի ենթակառուցվածքների կառուցմանն ու շահագործմանը, բնակչության մեջ առողջ ապրելակերպի հաստատմանը, համապատասխան ենթակառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարի կառուցմանը, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպմանը, և համահունչ է ՀՀ կառավարության կողմից որդեգրած տնտեսական զարգացման ռազմավարությանը:

Ծրագրով նախատեսվում է Ընկերության կողմից առաջիկա հինգ տարիների ընթացքում մոտ 190 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրումների իրականացում, մասնավորապես՝

- 300 փոքր ֆերմերային տնտեսության կառուցում,

- ջրամբարի (3,000,000 մ^3) կառուցում,
- 300 «տուն» հյուրանոցային համալիրի կառուցում,
- Միջազգային լեռնադահուկային սպորտի ֆեդերացիայի ստանդարտներին համապատասխանող դահուկային հանգստավայրի ենթակառուցվածքի կառուցում, մասնավորապես՝ 30 կմ սահուղիներ, ճոպանուղի, լեռնադահուկային կանգառներ:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ստեղծել ավելի քան 1000 նոր աշխատատեղ, որոնք կարող են համալրվել նաև Ապարան համայնքի և մասնավորապես՝ տվյալ վարչական բնակավայրի բնակիչները:

Ներդրումային ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է, որ Ընկերության կողմից առաջիկա տասը տարիների հարկային մուտքերը պետական բյուջե կկազմեն մոտ 71 մլն ԱՄՆ դոլար, իսկ գույքահարկի գծով հատկացումները համայնքային բյուջե՝ մոտ 11 մլն ԱՄՆ դոլար:

Հետևաբար, նախարարության տեղեկացմամբ, Ծրագրի իրականացումն Արագածոտնի մարզի համար կունենա սոցիալ-տնտեսական բարձր նշանակություն, քանի որ նշված ցուցանիշները դրական ազդեցություն կունենան հատկապես համայնքի և վերջինիս բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Ըստ նախարարության՝ Որոշմամբ հանրության գերակա շահ են ճանաչվել հողատարածքներ, որոնցից յուրաքանչյուրի մասով կատարվել է համապատասխան շուկայական արժեքի գնահատում: Գնահատումն իրականացվել է «Էքսպերտ Դիալոգ» ՍՊ ընկերության կողմից: «Գնահատման գործունեության մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի գնահատման աշխատանքներն իրականացնելիս գնահատողն անկախ է և անշարժ գույքի գնահատումն իրականացնում է «Գնահատման գործունեության մասին» օրենքին, գնահատման ստանդարտին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Գնահատողի անկախությունը գնահատման գործունեության իրականացման հիմնարար և պարտադիր պայման է: Վերոնշյալ օրենքի դրույթներին համապատասխան գնահատումը պատվիրակվել է հողամասերը ձեռքբերող ընկերության կողմից:

Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման վերաբերյալ նախարարությունը նշել է, որ Որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված հողատարածքների օտարման գործընթացն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով: Հողային օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով հողամասի սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Մասնավորապես, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ օտարվող սեփականության շուկայական արժեքը բաց և մրցակցային շուկայում սեփականություն հանդիսացող գույքի վաճառողի և գնորդի գիտակցաբար, արդարացի առևտրի պայմանների պահպանմամբ և օրինական գործողությունների արդյունքում ձևավորվող, գույքի վաճառքի առավել հավանական գինն է: Եթե օտարվող սեփականության համար առկա չէ համապատասխան բաց և մրցակցային շուկա, ապա սեփականության շուկայական արժեքը որոշվում է այնպիսի հաշվարկման մեթոդով, որն արդարացի կհամարի դատարանը: Անշարժ գույքի կամ

անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով: Միաժամանակ, նախարարությունը տեղեկացրել է, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության սեփականատիրոջ իրավունքները և երաշխիքները սահմանված են «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 14-րդ հոդվածով: Նշել է նաև, որ ինչպես հայտնի է, Որոշմամբ հանրության գերակա շահ են ճանաչվել հողատարածքներ, որոնցից յուրաքանչյուրի մասով կատարվել է համապատասխան շուկայական արժեքի գնահատում:

Ամփոփելով վերոգրյալը՝ ***նախարարությունը հայտնել է, որ Որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների օտարման գործընթացն իրականացվում է ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան:***

Նշվածի համատեքստում հարկ է նկատել, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ առկա խնդիրների մասին Պաշտպանը մշտապես է բարձրաձայնել իր գործունեությունն ամփոփող նախկին տարեկան հաղորդումներում: Մասնավորապես, դրանց շրջանակներում Պաշտպանին տարբեր տարիներին հասցեագրված բողոքներում շարադրված հանգամանքների լույսի ներքո ամփոփվել և մանրամասն ներկայացվել են խնդիրների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում *(այդ թվում՝ Հայաստանի դեմ քննված գործերով)* ու Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնց հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել են ոլորտի օրենսդրության կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ[571]:

Թեև 2024 թվականի դրությամբ այդ առաջարկներն ամբողջապես իրագործված չեն եղել *(հետևաբար, խնդիրները հաշվետու տարում շարունակել են արդիական մնալ)*, այնուհանդերձ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ոլորտում առկա օրենսդրական խնդիրները հաղթահարելու ուղղությամբ պետությունը որոշակի քայլեր է ձեռնարկել, մասնավորապես, մշակել է օրենսդրական նախաձեռնությունների փաթեթ[572]:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում հրապարակած տեղեկատվության՝ Վենետիկի հանձնաժողովի 142-րդ պլենար նիստի ընթացքում քննարկվել է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենսդրության վերանայմանն ուղղված նախաձեռնությունը:

---

[571] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2017, 2018, 2019, 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները, (համապատասխանաբար՝ էջեր 63-67, 102-106, 112-119, 180-185, 161-166, 73-76):

[572] Տե՛ս, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշման 3-րդ հավելվածով հաստատված «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը», կետ 3.14 (Ծրագրի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191790, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հրապարակման համաձայն՝ հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ նախագիծը մինչև հանրային քննարկմանը և պաշտոնական շրջանառության դրվելն ուղարկվել էր Վենետիկի հանձնաժողով՝ փորձագիտական կարծիք[573] ստանալու նպատակով:

Ըստ հրապարակման՝ *նախաձեռնությունն ուղղված է գույքի օտարման դիմաց լրացուցիչ, առավել բարձր փոխհատուցման չափերի նախատեսմանը, օտարման ենթակա գույքերի ուսումնասիրության և գնահատման նոր, առավել համապարփակ ստանդարտների ներդրմանը, գերակա շահ ճանաչելու վերաբերյալ որոշումների հիմնավորվածության պահանջների նախատեսմանը, որոշումների և փոխհատուցման չափի վիճարկման դատավարական ընթացակարգերի հստակեցմանը, գերակա շահով պայմանավորված՝ օտարման նպատակի իրագործման համար հստակ ժամկետների նախատեսմանը, գույքի օտարման դիմաց փոխհատուցման չտրամադրման դեպքերում պետության լրացուցիչ պատասխանատվության մեխանիզմների ներդրմանը:*

Ըստ հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվության՝ Վենետիկի հանձնաժողովը դրական է գնահատել նախաձեռնությունը՝ նշելով, որ այն իրական քայլ է՝ ուղղված հանրության գերակա շահով պայմանավորված օտարման ընթացակարգերը ՄԻԵԴ-ի պահանջներին համապատասխանեցնելուն: Հանձնաժողովը նշել է նաև, որ ներդնելով առավել հստակ ընթացակարգեր և սկզբունքներ, ընդլայնելով փոխհատուցման կանոնները և ներառելով որոշակի ընթացակարգային երաշխիքներ՝ այս փոփոխությունները քայլ առաջ են և ունեն պոտենցիալ նվազեցնելու ՄԻԵԴ-ի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտումների ռիսկերը: Միևնույն ժամանակ, հրապարակման համաձայն, Վենետիկի հանձնաժողովը նախագծի վերաբերյալ ներկայացրել է մի շարք կարևոր դիտարկումներ, որոնք քննարկվել են Արդարադատության նախարարության պատվիրակության հետ և կընդունվեն նախագծի լրամշակման ընթացքում՝ նախագծի հանրային քննարկմանն ընդառաջ[574]:

Հարկ է նշել, որ ոլորտում առկա խնդիրների քննարկման նպատակով հաշվետու տարում Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջոցառումների: Այսպես, օրինակ՝ 2024 թվականի հոկտեմբերի 31-ին ՄԻՊ ներկայացուցիչները մասնակցել են «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից կազմակերպված՝ Հայաստանում գերակա հանրային շահի նպատակով սեփականության օտարմանն առնչվող օրենսդրության ու պրակտիկայի արդի խնդիրների վերաբերյալ քննարկմանը, որի ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով և «Հանրության գերակա

---

[573] Փորձագիտական կարծիքի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.coe.int/web/venice-commission/-/CDL-REF(2025)014-e, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[574] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.moj.am/article/4305, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված կարգավորումները[575]:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Պաշտպանը կարևորում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ոլորտում առկա օրենսդրական խնդիրները հաղթահարելու ուղղությամբ նախարարության գործադրած ջանքերը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ անհրաժեշտ է հնարավորին սեղմ ժամկետում ավարտին հասցնել նախագծի լրամշակման և հանրային քննարկման ներկայացման գործընթացները:

2. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցում չտրամադրելու շարունակական խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում մշտապես բարձրացրել է «Դալմայի» այգիներում հողամասեր վարձակալած կամ զբաղեցրած անձանց հողատարածքներն այլ նպատակային նշանակության համար վերցնելու և փոխհատուցում չտրամադրելու խնդիրը[576]: Այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ երկար տարիներ Պաշտպանը բարձրաձայնել է խնդիրը, սակայն դրան ամբողջական լուծում չի տրվել:

Հաշվի առնելով, որ հաշվետու տարում խնդիրը շարունակել է չլուծված մնալ և 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է դիմումներ «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողներից՝ Պաշտպանի նախաձեռնությամբ ՄԻՊ աշխատակազմում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում՝ խնդրի կարգավորման համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության սահմաններում ձեռնարկվելիք միջոցառումների ուղղությունները նախանշելու նպատակով: Քննարկմանը մասնակցել են Վարչապետի աշխատակազմի և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև բողոք ներկայացրած անձինք:

---

575 Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.transparency.am/hy/media/news/article/5191, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

576 Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2018, 2019, 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 109-111, 127-131, 197-200, 166-169, 76-79):

Քննարկման արդյունքների և ստացված բողոքների քննարկման պատշաճ ընթացքն ապահովելու հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ վարչապետի աշխատակազմ և Երևանի քաղաքապետարան՝ բարձրացված հարցերը կրկին ուսումնասիրելու, փոխհատուցման գործընթացն ավարտին հասցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու *(անհրաժեշտության դեպքում քննարկելով համապատասխան կառուցակարգեր մշակելու անհրաժեշտության հարցը)* կապակցությամբ:

ՀՀ վարչապետի աշխատակազմ հասցեագրված գրությունը՝ քննարկման նպատակով փոխանցվել է Երևանի քաղաքապետարան, որտեղից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և Վարչապետի աշխատակազմ ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ Երևան համայնքը, Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններ հանդիսացող Երևան քաղաքի ավագանին և Երևանի քաղաքապետն օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով չեն կրում որևէ պարտավորություն փոխհատուցում տրամադրել «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողներին:

Երևանի քաղաքապետարանը պատասխան գրությամբ վկայակոչել է նաև ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը և այդ համատեքստում անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3691/05/09 վարչական գործով 30.07.2010 թվականի որոշմանը, ըստ որի՝ սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքի ծագման համար անձը պետք է հիմնավորի ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրավունքների իրավաբանական ձևակերպման պետության կամ համայնքի հողերն օգտագործելու փաստը: Հավելել է, որ 22.10.2021 թվականին քաղաքացիական գործով կայացված մեկ այլ որոշմամբ (թիվ ԵԴ/9457/02/19) դատարանը հայտնել է դիրքորոշում այն մասին, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասից բխող՝ պետության կամ համայնքի հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքի համար պետք է առկա լինեն անհրաժեշտ նախապայմանները: ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից մինչև 20 տոկոս ավելի յուրաքանչյուր միավոր հողամասի կամ սեփականաշնորհված ընդհանուր հողաբաժնի չափից փաստացի օգտագործման դեպքում նշված հողատարածության նկատմամբ ճանաչվում է նրանց սեփականության իրավունքը, եթե՝

1) համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար.

2) հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը.

3) հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական,

պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում:

Պատասխան գրությամբ անդրադառնալով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետին՝ պարզաբանվել է, որ դրանով Երևանի քաղաքապետին պատվիրակվել է լիազորություն, որի հիմքով Երևանի քաղաքապետն իրավասու է մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի, Երևան քաղաքի շրջանային խորհուրդների և նրանց գործադիր մարմինների, Երևանի քաղաքային խորհուրդների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի պահանջների կատարման համար անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարել համապատասխան ակտերում կամ ուժը կորցրած ճանաչել մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի, Երևան քաղաքի շրջանային խորհուրդների և նրանց գործադիր մարմինների, Երևանի քաղաքային խորհուրդների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերը:

Ըստ Երևանի քաղաքապետարանի պարզաբանման՝ նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ համապատասխան լիազորությունը Երևանի քաղաքապետին վերապահվել է հստակ նպատակով, այն է՝ մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի, Երևան քաղաքի շրջանային խորհուրդների և նրանց գործադիր մարմինների, Երևանի քաղաքային խորհուրդների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի պահանջների կատարումը, հետևաբար նշված նորմը չի կարող մեկնաբանվել որպես Հայաստանի Հանրապետության ենթադրյալ պարտավորությունների, առավել ևս փոխհատուցում տրամադրելուն առնչվող պարտավորության փոխանցում համայնքի ղեկավարին:

Հաշվի առնելով այն, որ Երևանի քաղաքապետարանի որդեգրված մոտեցման մասով Պաշտպանի նախորդ տարիների հաղորդումների շրջանակներում ամփոփվել և մանրամասն ներկայացվել են խնդրի առնչությամբ վերաբերելի իրավակարգավորումները, միջազգային կառույցների դիտարկումները, դատական պրակտիկան, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի արտահայտված դիրքորոշումներն ու առաջարկությունները, ուստի հարկ չենք համարում ներկայացված պարզաբանման համատեքստում կրկին անդրադառնալ դրանց[577]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է մշակել և իրացնել կառուցակարգեր հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռք բերման վաղեմության իրավունք ունեցող անձանց այլ հողամասեր տրամադրելու կամ նրանց վնասները հատուցելու, իսկ նման հողամասերը վաճառելու դեպքերում գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց շահերը հաշվի առնելու նպատակով: Այս համատեքստում անհրաժեշտ է ավարտին հասցնել «Դալմայի» այգիների նախկին վարձակալների և (կամ) հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցման տրամադրման գործընթացը:

---

[577] Տե՛ս, նույն տեղում:

3. Սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պատճառով առաջացած հողամասերի համադրումները վերացնելու և որպես հետևանք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումները մերժելու խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու հետևանքով առաջացած իրավունքների խախտումներին: Հարկ է նշել, որ այս խնդիրներին Պաշտպանը մշտապես անդրադառնում է իր տարեկան հաղորդումներում[578]:

Այսպես, օրինակ՝ ընթացիկ տարում բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ 2006 թվականի հունիսի 6-ին Արարատի մարզի Մխչյան գյուղում աճուրդով գնել է 1,868 հա 5-րդ կարգի գյուղատնտեսական նշանակության վարելահող, որի վրա կառուցել է ինքնակամ շինություններ: 2024 թվականին ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացի ժամանակ պարզվել է, որ առկա է գծային չափերի, երկրաչափական տեսքի և մակերեսի անհամապատասխանություն գրանցված գույքի և էլեկտրոնային քարտեզի միջև: Ըստ բողոքի՝ էլեկտրոնային քարտեզի համաձայն՝ հողամասի մակերեսը կազմում է 0,5713 հա: Խնդրի առնչությամբ վերջինս 2024 թվականի հունվար ամսին դիմել է Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան, սակայն բարձրացված հարցը լուծում չի ստացել:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ կադաստրի կոմիտեն տեղեկացրել է, որ վերը նշված բնակավայրում գտնվող հողամասի (անշարժ գույքի) կադաստրային գործում առկա նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարվել է համայնքի ղեկավարի 2006 թվականի հունիս ամսվա որոշման և նույն թվականին կնքված առուվաճառքի պայմանագրի (դրանցում հողամասի մակերեսը նշված է 1.868 հա) և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի հիման վրա, որը կազմվել է սխեմատիկորեն՝ առանց շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատների:

Նշել է նաև, որ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծում արտացոլված հողամասի գծային չափերը և երկրաչափական տեսքը համապատասխանում են գրանցված կադաստրային ծածկագրով, 0.5713 հա մակերեսով հողամասի տվյալներին, իսկ սեփականության իրավունքի վկայականում արտացոլված է վերոնշյալ հողամասի որոշ հատվածը: Հավելել է, որ գրանցման համար հիմք հանդիսացած հատակագծում գծանշված ճանապարհը և շինությունը չեն ներառվել իրավունքի պետական գրանցման վկայականում:

Դրանից բացի, նշվել է, որ, ըստ էության, առկա է անհամապատասխանություն իրավահաստատող փաստաթղթերի, համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի և ինքնակամ շինությունների

---

[578] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 185-188, 170-173, 79-80):

հաշվառման շրջանակներում որակավորում ունեցող անձի կողմից կազմված չափագրման փաթեթի տվյալների միջև:

Միաժամանակ, տրամադրել է տեղեկատվություն առ այն, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 34-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ եթե պետական գրանցումը կատարվել է որևէ իրավասու մարմնի տված փաստաթղթի հիման վրա, ապա թույլ տրված սխալների ուղղումը կարող է կատարվել միայն տվյալ մարմնի կողմից համապատասխան ուղղում կատարելու հիման վրա:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Կադաստրի կոմիտեն առաջարկել է, որ առցանց՝ www.e-cadastre.am կայքի միջոցով կամ կոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակ համայնքի ղեկավարի կողմից հաստատված, ճշտված սահմաններով հողամասի հատակագիծ ներկայացնելու պարագայում քննարկվող հողամասը կարտացոլվի կադաստրային քարտեզում, և իրավունքի պետական գրանցման վարույթին կտրվի համապատասխան ընթացք: Ընդ որում՝ պակաս մակերեսով իրավունքի պետական գրանցում կիրականացվի սեփականատիրոջ կողմից տրված համաձայնության առկայության պարագայում:

Գրությանը կից Կադաստրի կոմիտեն տրամադրել է նաև վերոնշյալ փաստաթղթերը և կադաստրային քարտեզից հատված՝ համադրված օրթոֆոտոհատակագծի հետ:

Նույն բողոքի շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել նաև Արտաշատի համայնքապետարան՝ ներառելով Կադաստրի կոմիտեից ստացված պարզաբանումները: Ի պատասխան՝ տրամադրվել է պարզաբանում այն մասին, որ քաղաքացու հետ քննարկվել են դիմումով բարձրացված հարցերը և վերջինիս տեղեկացվել է, որ աճուրդով օտարված հողամասը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից առանձնացվել է սխեմատիկորեն՝ առանց շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատների կազմված հատակագծի հիման վրա: Ըստ տրամադրված տեղեկատվության, քանի որ ՀՀ տարածքում համայնքների էլեկտրոնային քարտեզները (շրջադարձային կետերի կոորդինատներով) ձևավորվել են ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1441-Ն որոշման կիրառությունից հետո, ուստի հնարավոր չէր անշարժ գույքի գրանցման համար հիմք հանդիսացած հատակագծում առկա գծային չափերով հողամասն արտացոլել կադաստրային քարտեզում: Նշել է նաև, որ ***ելնելով վերոգրյալից՝ փաստացի հնարավոր չէ տեղում ապահովել քաղաքացու վկայականով գրանցված մակերեսով հողատարածք:***

Տեղեկացրել է նաև, որ համայնքը քաղաքացուն կարող է անհատույց հողամաս հատկացնել միայն ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի սահմանված պահանջներն ապահովելու դեպքում: Հավելել է, որ համայնքը պատրաստ է դիտարկելու քննարկվող թաղամասում առկա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածներով սահմանված կարգով օտարելու հարցը:

Փաստորեն, ստացվում է, որ Արտաշատի համայնքապետարանը կոնկրետ դեպքը բազմակողմանի ուսումնասիրելու և դրա քննարկումն իր լիազորությունների տիրույթում *(այսինքն՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 34-րդ հոդվածի համատեքստում)* ամբողջական ապահովելու փոխարեն՝ առաջարկում է խնդիրը լուծելու նպատակով դիտարկել նշված

թաղամասում առկա համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողամաս անձին օտարելու կամ անհատույց տրամադրելու հարցերը: Ընդ որում, անդրադարձ չկատարելով այն հարցին, թե օրինակ՝ բողոք ներկայացրած անձը ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին բավարարու՞մ է, թե՞ ոչ:

Հարկ է նշել, որ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման առաջարկությունների կատարման շրջանակում 2024 թվականի ընթացքում Կադաստրի կոմիտեին ուղղված հարցմանն ի պատասխան, մասնավորապես, ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ վերոնշյալ աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2026 թվականը: Նշվել է նաև, որ հիշյալ հավելվածով սահմանված աշխատանքների ավարտից հետո գործում է անշարժ գույքերի (հողամասերի) սահմանների սխալների ուղղման պարզեցված ընթացակարգ, իսկ դեռևս չուղղված բնակավայրերում գտնվող առանձին գույքային միավորների նկատմամբ ուղղման աշխատանքներն իրականացվում են նույն որոշման 1-ին հավելվածով սահմանված կարգով:

Տրամադրվել է տեղեկատվություն նաև այն մասին, որ ամփոփման փուլում է գտնվում որոշման փոփոխությունների փաթեթը, որով հնարավորություն կընձեռվի քաղաքացիներին առավել պարզեցված ընթացակարգով իրականացնել իրենց հողամասերի հետ կապված քարտեզագրական սխալները: Համայնքների հետ նախատեսվել է համաձայնեցման գործընթաց բացառապես համայնքային գույքերի հետ սահմանային անհամապատասխանությունների պարագայում, իսկ պետական հողամասերի հետ կապված անհամապատասխանությունները կհամակարգվի Կոմիտեի կողմից: Երկու դեպքում էլ համաձայնեցման գործընթացն իրականացվելու է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ առանց քաղաքացիների ներգրավման:

Հողամասերի համադրումները վերացնելու, այն է՝ ՀՀ ամբողջ տարածքում առկա համակարգային խնդիրը կարգավորելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի առնչությամբ Կադաստրի կոմիտեից Պաշտպանին՝ տարեկան հաղորդման շրջանակներում կատարված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ կոմիտեի նախաձեռնությամբ իրականացվում են ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի դրույթներով սահմանված, կադաստրային քարտեզներում առկա վարչական սահմանների և կադաստրային թաղամասերի տեղադիրքերի ու սահմանների սխալների ուղղման աշխատանքներ, որոնց շրջանակներում մինչ օրս ուղղվել են ՀՀ 508 բնակավայրերի կադաստրային քարտեզներ *(որոնցից 155-ը՝ 2024, իսկ 8-ը՝ 2025 թվականների ընթացքում)*: Հավելել են, որ ներկայում ուղղման ընթացիկ աշխատանքներ են իրականացվում շուրջ 30 բնակավայրերի կադաստրային քարտեզներում:

Պաշտպանը ողջունելի է համարում իրավասու մարմնի կողմից խնդրի լուծմանն ուղղված որոշակի քայլերի ձեռնարկումը՝ միևնույն ժամանակ արձանագրելով, որ հարցը պետք է ստանա շուտափույթ համակարգային լուծում:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարիներին արտահայտած դիրքորոշումներն ու ներկայացված առաջարկները, մասնավորապես՝

✓ ***իրականացնել պատշաճ վերահսկողություն գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման նկատմամբ՝ կադաստրային քարտեզում սխալները բացառելու համար.***

✓ ***իրականացնել պատշաճ վարչարարություն՝ սեփական նախաձեռնությամբ ձեռնարկելով միջոցներ կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների գծային չափերի կամ տեղադիրքի կամ երկրաչափական տեսքի կամ արտացոլմանը վերաբերող սխալները ուղղելու համար:***

4. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման (հեռացման) և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների հաղորդումներում, այդ թվում՝ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ[579] մանրամասն անդրադարձ է կատարել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման (հեռացման) և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրներին:

Մասնավորապես, նախորդ տարվա հաղորդման շրջանակում ամփոփվել և ներկայացվել են անհատական դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր հանված և առավել տարածված համակարգային խնդիրները, վերլուծության են ենթարկվել ոլորտը կարգավորող իրավական ակտերը և գործնականում առաջացող խնդիրները:

Կատարված աշխատանքի հիման վրա իրավասու պետական մարմիններին ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ, իսկ դրանց կատարման վիճակի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական մշտադիտարկում:

Այսպես, 2024 թվականի ընթացքում բարձրացված համակարգային խնդիր կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Քաղաքաշինության կոմիտեից ստացվել է հետևյալ պարզաբանումը.

Կոմիտեի համակարգմամբ 2008-2021 թվականներին իրականացված՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շահառու ճանաչված 5419 ընտանիքներից (Շիրակի, Լոռու, Արագածոտնի մարզեր)՝

✓ 5391 ընտանիքի բնակարանային խնդիրը լուծվել է 2008-2021 թվականներին.

✓ 28 ընտանիքի (Շիրակի մարզի Ջրաձոր համայնք) խնդիր լուծվելու է ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1411-Լ որոշման շրջանակներում՝ Կապսի ջրամբարի կառուցման նպատակով Ջրաձոր համայնքից վերաբնակեցվող ընտանիքների հետ միասին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի թիվ 1006-Ն որոշմամբ սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

---

[579] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 80-86:

✓ Ծրագրի շրջանակներում բնակապահովման իրավունքը վերականգնած՝ ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային խնդիրները լուծվելու են բնակարանի գնման վկայագրի միջոցով կամ ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով:

Նշված որոշման ընդունումից հետո 2021-2024 թվականներին բնակապահովման իրավունքը դատական կարգով վերականգնել և ծրագրի շահառու են ճանաչվել թվով 51 ընտանիք *(թիվն ունի աճման միտում՝ ի հաշիվ դատական պրոցեսում գտնվող շուրջ 100 ընտանիքի)*, որոնցից թվով 44 ընտանիքի խնդիրը դիտարկվել է ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1299-Ա որոշման շրջանակներում, իսկ մնացած 7 ընտանիքների խնդիրը նախատեսվում է լուծել 2025 թվականի ընթացքում:

Անդրադառնալով բնակարանի կարիքավորների հերթացուցակում ինչ-ինչ պատճառներով չհաշվառված անձանց բնակապահովման խնդրին՝ Քաղաքաշինության կոմիտեն տեղեկացրել է, որ այդ ընտանիքների թվի ճշտման, համապատասխան իրավական հիմքերի ստեղծման և դրանց հիման վրա ծրագրերի իրականացման հարցին նախատեսվում է անդրադառնալ փուլային մոտեցման եղանակով:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով ամրագրված դրույթների համաձայն՝ նախատեսվել է անդրադառնալ այդ ընտանիքներից մի խմբի՝ ոչ հիմնական շինություններում (այսուհետ՝ տնակներում) բնակվող ընտանիքներին:

Ըստ այդմ, ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1658-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում իրականացվել է ոչ հիմնական շինությունների փաստագրում, կազմվել և վերլուծվել են փաստագրված տնակներում և դրանցում բնակվող ընտանիքների վերաբերյալ աղյուսակային և քարտեզագրական նյութերը:

Արդյունքում մշակվել և ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշմամբ հաստատվել է աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված տնակներից ազատելու կարգը, որով սահմանվում են տնակների ազատման և հեռացման, դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված հարցերի կանոնակարգման մոտեցումները և առաջնահերթությունները:

Նշված որոշման համաձայն՝

➢ 2023 թվականին համայնքների ղեկավարների կողմից հաստատվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողի վրա տեղադրված տնակների և դրանք տնօրինող ընտանիքների ցուցակները, որոնց համաձայն՝ պետական և համայնքային հողամասերի վրա են գտնվում 4068 տնակ (2964-ը՝ Շիրակի մարզում (որից՝ 2648-ը Գյումրի), 1104-ը՝ Լոռու մարզում):

Ըստ նախնական վերլուծության (հիմնական պատկերը պարզ կլինի բուն ծրագրերի իրականացման ժամանակ՝ փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով)՝

➢ ***1089 ընտանիք կարող է հավակնել տարբերակված մոտեցմամբ աջակցության ցուցաբերման,***

➢ ***1136 տնակ ենթակա է քանդման՝ առանց աջակցության տրամադրման (բնակարան ստացած՝ տնակը դեռևս չքանդած, այլ հասցեում սեփականություն ունեցող ընտանիքների կողմից զբաղեցված տնակներ, չբնակեցված/չօգտագործվող կամ ոչ բնակության նպատակով օգտագործվող և այլ տնակներ),***

➢ ***1843 տնակում բնակվող ընտանիքներ (բնակարան (բնակելի տուն) օտարած (բացառությամբ պետության կամ համայնքի կողմից հատկացված) կամ ներքին միգրացիայի արդյունքում հարակից համայնքներից փոխադրված կամ այլ (օրինակ՝ ներընտանեկան խնդիրների պատճառով տրոհված) պատճառներով տնակներում բնակվողի կարգավիճակում հայտնված ընտանիքների կողմից) հավակնում են սոցիալական բնակարանային ֆոնդի, որոնց նկատմամբ մոտեցումները պետք է հստակեցվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվող՝ բնակարանով ապահովման միասնական սոցիալական ռազմավարության շրջանակներում:***

➢ Կարգի 16-րդ կետի համաձայն՝ իրականացվում են չօգտագործվող կամ չբնակեցված տնակների ապամոնտաժման աշխատանքները:

✓ Մինչև 2027 թվականը նախատեսված է ոչ հիմնական շինություններից ազատում և ապամոնտաժում, բնակության նպատակով օգտագործվող տնակներում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման մասով պետական աջակցության տարբերակված մոտեցման ցուցաբերում՝ կախված տվյալ ընտանիքի՝ տնակում բնակվողի կարգավիճակում հայտնվելու հիմքերից:

Այդ նպատակով Կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 2024 թվականին իրականացվելիք աշխատանքների շրջանակը սահմանող որոշման նախագիծը, սակայն չի ընդունվել՝ լրացուցիչ քննարկման նպատակով:

Ներկայում քննարկվում է հիշյալ որոշման համաձայն՝ աջակցության տրամադրման մեկնարկի համար ՀՀ պետական բյուջեից 2025 թվականին միջոցներ հատկացնելու հարցը:

ՀՀ տարեկան պետական բյուջեներով հատկացված միջոցների չափից ելնելով և որոշմամբ սահմանված հերթականության համաձայն՝ կորոշվի տվյալ տարվա ընթացքում աջակցություն ստանալու հավակնող ընտանիքների թիվը:

Կոմիտեից պարզաբանվել է նաև, որ աղետի գոտու բնակավայրերում նշված ժամանակահատվածում իրականացվել կամ իրականացման ընթացքում են գտնվում նաև բնակարանաշինական հետևյալ ծրագրերը՝

✓ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Բաղրամյան 43 և Գ. Նժդեհի 7 հասցեների թվով 2 վթարային բազմաբնակարան շենքերի փոխարեն կառուցվել և շահագործման է հանձնվել մեկ բազմաբնակարան շենք.

✓ ավարտական փուլում են գտնվում Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Խնկոյան փողոցի վթարային փայտյա հանրակացարանային թվով 2 շենքերի փոխարեն մեկ բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքները.

✓ իրականացվել են Ստեփանավան քաղաքի Աշոտաբերդ թաղամասի թվով 24 վթարային փայտյա բազմաբնակարան շենքերի փոխարեն նոր թաղամասի նախագծման աշխատանքները, որի հիման վրա՝ 2024 թվականին մեկնարկել են նոր թաղամասի շինարարական աշխատանքները.

✓ մշակվել են Աշոցք համայնքի Կոճոռ թաղամասի թվով 20 վթարային փայտյա բազմաբնակարան շենքերի փոխարեն նոր թաղամասի նախագծանախահաշվային փաստաթղթերը և ֆինանսական միջոցներ նախատեսվելու պարագայում կմեկնարկեն շինարարական աշխատանքները,

✓ 2023 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին մշակվել է բազմաբնակարան շենքի 1 օրինակելի նախագիծ՝ հետագա ծրագրերի շրջանակներում ըստ անհրաժեշտության տեղակապման միջոցով կիրառելու նպատակով:

➢ Բնակարանային ծրագրերի բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 8.4-րդ կետի միջոցառման համաձայն, մշակման փուլում է գտնվում «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Հետևաբար, հանրապետությունում անօթևան և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների բնակապահովման խնդրի մասով մոտեցումները նպատակահարմար է հստակեցնել մշակվող ռազմավարության շրջանակներում, իսկ բուն խնդիրների լուծումը դիտարկել ռազմավարությամբ հաստատվելիք գործողությունների ծրագրի շրջանակներում:

Իսկ առանձին խումբ ընտանիքների բնակարանային խնդիրը կարող է դիտարկվել որպես նշված ռազմավարության առանձին գործողություն կամ այդ ընտանիքների մասով՝ ռազմավարությամբ նախատեսվող գործողությունների շրջանակներում սահմանել առաջնահերթություն:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման շրջանակում պետական աջակցության տրամադրումն իրականացվում է ընտանիքների՝ ոչ հիմնական շինությունում բնակվողի կարգավիճակում հայտնվելու հիմքերի գնահատման արդյունքում: Մինչդեռ, ոչ հիմնական շինություններում փաստացի բնակվող ընտանիքների հարցն անհրաժեշտ է քննարկել և գնահատել իրական կարիքի անհրաժեշտության տեսանկյունից, այլապես, ոչ հիմնական շինություններում փաստացի բնակվող ընտանիքը, չունենալով պետական աջակցություն ստանալու հիմքեր, միաժամանակ, չունենալով անհրաժեշտ միջոցներ կացարան ձեռք բերելու կամ վարձակալելու համար, ոչ հիմնական շինության քանդումից հետո հայտնվելու է անորոշ կարգավիճակում՝ չունենալով բնակարանային բավարար պայմաններ կեցությունը շարունակելու համար:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է նաև ընդգծել, որ նույն որոշման շրջանակում պետական աջակցության հավակնորդ չեն հանդիսանում այն ընտանիքները, որոնք պետական կամ բարեգործական ծրագրերի շրջանակում արդեն իսկ ստացել են բնակարաններ: Նշվածից հետևում է, որ նախորդիվ ժամանակահատվածում պետությունը կատարել է անձի նկատմամբ ունեցած իր պարտավորությունը, որից հետո, սակայն, ընտանիքի կազմի ընդլայնման, ընտանիքի բաժանման կամ այլ պատճառներով վերջիններս կրկին հայտնվել են վագոն տնակում:

Հաշվի առնելով այն, որ աղետի գոտու բնակավայրերում բնակարան կորցրած անձանց իրավունքների պատշաճ իրացման, ինչպես նաև աղետի գոտու

բնակավայրերը պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու հարցերը տարիներ շարունակ ծառացած են եղել պետության առջև, ուստի ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշումը կիրարկելիս կարևոր է որպես առաջնային նպատակ սահմանել ոչ միայն համայնքային հողերը ոչ հիմնական շինություններից ազատելու հարցը, այլ խնդրին մոտենալ համակարգային տեսանկյունից՝ քննարկվող հարցերին մեկընդմիշտ լուծում տրամադրելու նպատակով: Հարկ է նաև ընդգծել, որ սույն որոշմամբ արդեն իսկ նախատեսվել են արդյունավետ լուծումներ, այդ թվում՝ համապատասխան կարգավիճակ ունեցող անձանց պետական աջակցության տրամադրման եղանակով: Դրան զուգահեռ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել նաև վերը նշված ընտանիքների հարցը, որոնց պետական աջակցություն չի տրամադրվելու: Հակառակ պարագայում ձեռնարկվող գործողությունները կարող են նպաստել անօթևանության թվի և այլ սոցիալական խնդիրների արհեստական աճին:

Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ կատարված առաջարկները՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է.

- ✓ ***միջոցներ ձեռնարկել ոչ հիմնական շինության քանդման կամ ապամոնտաժման արդյունքում անձանց անօթևանի կարգավիճակում հայտնվելու դեպքերը բացառելու ուղղությամբ: Այս տեսանկյունից կարևոր է ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման շրջանակում պետական աջակցության չհավակնող և ապամոնտաժման ենթակա ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների հարցը դիտարկել ԱՍՀՆ-ի՝ բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարության շրջանակում:***
- ✓ ***ոչ հիմնական շինություններում բնակվող, սակայն ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման շրջանակում պետական աջակցություն ստանալու հավակնորդ չհանդիսացող յուրաքանչյուր դեպքով իրականացնել առանձին դիտարկում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով այն ընտանիքներին, որոնց կազմում կան երեխաներ, կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հատուկ խնամքի կարիք ունեցող այլ անձինք:***

5. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման հետ կապված օրենսդրական խնդիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների հաղորդումներում, այդ թվում՝ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ[580] մանրամասն անդրադարձել է անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային

[580] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 86-89:

Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման խնդրին:

Սույն խնդրի համատեքստում կարևոր է նշել, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հունվարի 12-ի թիվ 42-Ն որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել՝

1) ՀՀ կառավարության 1997 թվականի ապրիլի 30-ի «Բնակարանաշինարարական կոոպերատիվների վարչությունների և փայատերերի հետ փոխհաշվարկ կատարելու կարգը հաստատելու մասին» թիվ 110 որոշումը.

2) ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 2-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշումը.

3) ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 12-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված օգնության տրամադրման ժամանակացույցի մասին» թիվ 229 որոշումը:

Փաստորեն, ստացվում է, որ Կառավարության այս որոշման ընդունման արդյունքում՝ *անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերը զրկվել են դրամական օգնություն ստանալու հնարավորությունից:*

Բարձրացված խնդրի վերաբերյալ 2024 թվականին Ֆինանսների նախարարությունը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հունվարի 12-ի թիվ 42-Ն որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել Կառավարության հիշյալ որոշումները *(որոնցով կարգավորվել են անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները)*, ի թիվս այլնի, այն հիմնավորմամբ, որ համավարակով, պատերազմով և այլ իրողություններով պայմանավորված կոոպերատիվների փայատերերի փոխհատուցման տրամադրման ծրագրի իրականացումն այլևս սոցիալական ծրագրերի առաջնահերթություն չէ, և ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում նպատակահարմար է սոցիալական ծախսերի առաջնահերթություններ սահմանել այլ՝ ներկա իրողություններով պայմանավորված սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի համար:

2024 թվականին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը խնդրի վերաբերյալ տեղեկացրել է, որ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը ուժը կորցրած են ճանաչվել 2023 թվականի հունվարի 12-ի թիվ 42-Ն որոշմամբ և ներկայում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից այդ նպատակով որևէ ծրագիր չի իրականացվում:

Հայտնել է նաև, որ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց փոխհատուցման տրամադրման խնդրի կարգավորման համար որոշիչ է համապատասխան ծրագիր իրականացնելու դեպքում վարչարարական հնարավոր խնդիրների ծագումը, որոնց լուծումներ առաջարկելն իրատեսական չէ՝ հաշվի առնելով, մասնավորապես, անհրաժեշտ տեղեկատվական բազաների (կոոպերատիվների, դրանց փայատերերի վերաբերյալ) բացակայությունն ու դրանով պայմանավորված՝ ներկայացված փաստաթղթերի ստույգությունը պարզելու անհնարինությունը:

Նշել է նաև, որ հաշվի առնելով վերջին տարիների զարգացումները, պայմանավորված՝ համավարակով, 44-օրյա պատերազմական գործողություններով, 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակիչների բռնի տեղահանումով և այլ իրողություններով, կոոպերատիվների փայատերերին փոխհատուցման տրամադրման ծրագրի իրականացումն այլևս սոցիալական ծրագրերի առաջնահերթություն չէ: Ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում նպատակահարմար է սոցիալական ծախսերի առաջնահերթություններ սահմանել այլ՝ ներկա իրողություններով պայմանավորված սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի համար:

Ելնելով վերոգրյալից, *ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոոպերատիվների ձևավորման և փայավճարների կատարման գործընթացում պետության և կոոպերատիվների փայատերերի միջև որևէ իրավահարաբերություն չի ծագել, ուստի և կոոպերատիվների փայատերերին փոխհատուցում տրամադրելու ՀՀ կառավարության պատրաստակամությունը չի հանգեցնում փայատերերին դրամական օգնության տրամադրելու պոզիտիվ պարտականության առաջացմանը, փոխհատուցում տրամադրելու միջոցառման իրականացումը նպատակահարմար չէ:* Ըստ այդմ, այդ նպատակով ինչպես 2023 թվականի, այնպես էլ 2024 թվականի համար պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել:

Հատկանշական է, որ այս մոտեցումն ընկած է եղել նաև իրավական ակտի նախագծի ընդունման հիմնավորման մեջ[581]: Պաշտպանը այդ նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքում նշել է, որ իրավաչափ չէ որոշման ընդունման հիմնավորումն առ այն, որ նախագծի ներկայացումը պայմանավորված է գործնականում կիրառություն չունեցող իրավական ակտերը (իրավական ակտերի դրույթները) ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտությամբ, առանց հաշվի առնելու հանրային իրազեկվածության խիստ ցածր մակարդակը: Պաշտպանը նշել է նաև, որ հիշատակված հիմնավորումների համատեքստում հնարավոր անձանց կողմից փոխհատուցում ստանալու հավանականության վերացումն արդարացված չէ, համանման իրավիճակում արդեն իսկ փոխհատուցում ստացած և նման հնարավորություն ունեցող, սակայն մինչ այս պահը գործողություններ չձեռնարկած անձանց համար հավասար պայմաններ ապահովելու տեսանկյունից, ինչպես նաև հիմնավորված չէ պետական իշխանության համապատասխան մարմինների մոտ

[581] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/4830/justification, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

անհրաժեշտ տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված՝ անձանց արդեն իսկ ընձեռված իրավունքների սահմանափակումը:

Պաշտպանին նախորդ տարիներին ներկայացված և 2024 թվականի դրությամբ քննարկման փուլում գտնվող բողոքների ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ կարևոր է անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հատուցման քաղաքականությունը նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար իրավական հնարավորություններով ապահովման սկզբունքի վրա կառուցելը:

Նախորդ տարեկան հաղորդման շրջանակում ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել էր, որ սեփականության իրավունքը հարգելու պարտավորությունը ներառում է թե՛ բացասական, թե՛ դրական պարտավորություններ: Սոցիալական արդարության, սեփականության իրավահարաբերությունների կայունության նկատմամբ պետության հանձնառության տեսանկյունից կարևոր է, որպեսզի վերջինս անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքի պաշտպանությունը ապահովի նաև կոնկրետ միջոցառումների ձեռնարկմամբ՝ փոխհատուցում ստանալու իրավունքի՝ որպես սեփականության իրավունքի պաշտպանությունը երաշխավորելու նպատակով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծել էր, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել իրավունքահեն քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռի նույն կարգավիճակում գտնվող անձանց ստանալ հավասար իրավական հնարավորություններ իրենց իրավունքներն իրացնելու տեսանկյունից: Կարևոր է առաջնորդվել միջազգային այնպիսի չափանիշներով, որոնց մեկնաբանումը հնարավորություն կտա գույք դիտարկել ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը[582]:

Ելնելով վերոգրյալից և կարևորելով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման գործընթացի շարունակականության ապահովումը, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է ձեռնամուխ լինել օրենսդրական մակարդակում խնդրի լուծմանը՝ քննարկման առարկա դարձնելով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման գործընթացի վերսկսումը:

---

[582] Առավել մանրամասն տե՛ս, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի (Trgo v. Croatia) գործով 2009 թվականի սեպտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 35298/04, կետ 44:

6. Տրանսպորտային միջոցի հափշտակման և փաստացի չտիրապետման պարագայում գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու խնդիր

2024 թվականին Պաշտպանին հասցեագրվել են դիմում-բողոքներ, որոնք վերաբերել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի վճարման պահանջ առաջադրելուն այն պարագայում, երբ անձանց սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը հափշտակվել է:

Այսպես, օրինակ՝ 2024 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ 2012 թվականին իր վստահորդի տրանսպորտային միջոցը հափշտակվել է: Տեղեկացրել է նաև, որ տվյալ փաստով հարուցվել է քրեական գործ, որի վարույթը, սակայն նույն թվականին կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի անհայտ լինելու հիմքով: Հայտնել է նաև, որ 2013 թվականին վերը նշվածի վերաբերյալ քննիչի կողմից իր վստահորդին տրամադրվել է տեղեկանք, որը վերջինս նույն թվականին ներկայացրել է վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, ինչպես նաև Ճանապարհային ոստիկանություն: Հավելել է, որ չնայած դրան՝ 2023 թվականին իր վստահորդին առաջադրվել է 2011-2021 թվականների փոխադրամիջոցի գույքահարկի վճարման պահանջ:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ 2021 թվականին ձեռք է բերել ավտոմեքենա, որն օրենքով սահմանված կարգով գրանցել և հաշվառել է շարժական գույքի կադաստր վարող մարմնում: Հավելել է, որ 2023 թվականին ցանկացել է մեքենայով հատել հայ-վրացական սահմանը: Հայտնել է նաև, որ սահմանային անցակետում հայկական կողմը ստուգել է ավտոմեքենան և որևէ խնդիր չի հայտնաբերել, սակայն վրացական կողմը տրանսպորտային միջոցի ստուգումից հետո իրեն հայտնել է, որ այն գտնվում է միջազգային հետախուզման մեջ: Ըստ բողոքը ներկայացրած անձի՝ Վրաստանի իրավապահ մարմիններն առգրավել են ավտոմեքենան և կատարված ստուգման արդյունքում պարզել են, որ այն եղել է հափշտակված: Մինչդեռ, նման պայմաններում համայնքապետարանն իրեն առաջադրել է փոխադրամիջոցի գույքահարկի վճարման պահանջ:

Այսպիսով, ստացվում է, որ խնդրո առարկա դեպքերում սեփականատերերը բախվել են մի իրավիճակի, երբ փաստացի զրկված լինելով իրենց գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրական հնարավորությունից՝ վերջիններիս տեղական ինքնակառավարման մարմինների կողմից *(օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով*[583]*)* առաջադրվում է գույքահարկի վճարման պարտավորություն:

Հարկ է նշել, որ բարձրացված խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումների շրջանակներում: Մասնավորապես, նշվել է, որ ՀՀ հարկային օրենսգրքում նախատեսված չեն

---

[583] Հարցին որոշակի լուծում է տրվել ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1251-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 31-րդ կետով: Ըստ այդմ, հափշտակված տրանսպորտային միջոցները սեփականատիրոջ (ներկայացուցչի) գրավոր դիմումի և այդ փաստի առթիվ քրեադատավարական վարույթ հարուցելու մասին փաստաթղթի (այդ թվում՝ էլեկտրոնային) հիման վրա հաշվառումից ժամանակավոր հանվում են, և դրանց գրանցումը կասեցվում է: Այնուհանդերձ, նման կարգավորումը փակում է խնդրի միայն մի մասը և գույքահարկի պարտավորության հաշվարկման տեսանկյունից այդ իրավակարգավորումը խնդիրը չի լուծում, քանի որ նման արտոնություն կամ ազատման հիմք Հարկային օրենսգրքով նախատեսված չէ:

դրույթներ փոխադրամիջոցը հափշտակվելու դեպքում գույքահարկի պարտավորությունից ազատելու վերաբերյալ: Այն է՝ օրենսդրության մեջ բացակայում են կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմերը: Նշվածի հաշվառմամբ՝ ***Պաշտպանն առաջարկել էր սահմանել օրենսդրական կարգավորումներ փոխադրամիջոցը հափշտակվելու դեպքում այն ժամանակավորապես հաշվառումից հանելու պարագայում դրա սեփականության իրավունքի սուբյեկտին գույքահարկի պարտավորությունից ազատելու վերաբերյալ***[584]***:***

Վերոգրյալի համատեքստում՝ իբրև դրական առաջընթաց պետք է դիտել Ներքին գործերի նախարարության կողմից մշակված և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում հանրային քննարկման դրված (27.12.2023 - 11.01.2024) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը[585]:

Նախագծով առաջարկվում է լրացում կատարել հիշյալ օրենսգրքի 245-րդ հոդվածում՝ սահմանելով, որ փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում են նաև հափշտակված կամ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ այդ փոխադրամիջոցի մասով: Նախագծով առաջարկվում է սահմանել նաև, որ հափշտակված կամ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ փոխադրամիջոցի հափշտակության կամ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվելու մասին քրեական վարույթ հարուցելու պահից մինչև փոխադրամիջոցը դրա սեփականատիրոջ տնօրինմանը հանձնելն ազատվում են հափշտակված կամ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի գույքահարկից, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով փոխադրամիջոցի գույքահարկի հաշվառում իրականացնող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնում տեղեկատվություն է ստացվում հափշտակված կամ սեփականության դեմ ուղղված այլ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցված լինելու մասին[586]:

Ողջունելով նախագծի հեղինակների նպատակը՝ հարկ է ընդգծել, որ նախագծով օրենքին հետադարձ ուժ չի տրվում: Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի՝

---

[584] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 211-214, 180-183):

[585] Նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/6691/about, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[586] Տե՛ս, նախագծի ընդունման հիմնավորումը:

Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ (...) անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք քննարկել նախագծով օրենքին հետադարձ ուժ տալու համար համապատասխան նորմեր (անցումային դրույթներ) նախատեսելու հարցը՝ հաշվի առնելով, որ փոխադրամիջոցները կարող են հափշտակված լինել տևական ժամանակ առաջ (օրինակ՝ 13 տարի առաջ):

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Պաշտպանը կարևորում է բարձրացված խնդրի լուծման նպատակով նախարարության կողմից գործադրված ջանքերը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ անհրաժեշտ է արագացնել համապատասխան իրավական դաշտի ստեղծման (օրենսդրական փոփոխությունների կատարման) գործընթացը: Ընդ որում, անձանց իրավունքների առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է նաև քննարկման առարկա դարձնել նախագծով օրենքին հետադարձ ուժ տալու հնարավորության հարցը:

7. 1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդիր

Պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է 1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդրին[587], մասնավորապես, առաջարկելով ՀՀ պետբյուջեում նախատեսել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած ծրագրի շահառու փախստականների բնակապահովման խնդիրը լուծելու համար՝ ապահովելով նրանց ինտեգրման այս կարևոր բաղադրիչի իրականացումը: Նշվածի առումով շարունակում է մտահոգիչ լինել այն հանգամանքը, որ Պաշտպանի տարեկան հաղորդումներում պարբերաբար բարձրացված այս խնդրին լուծում չի տրվում:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին ՄԻՊ աշխատակազմ ստացվել են 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթելու, տարատեսակ վատթար պայմաններով ժամանակավոր կացարաններում բնակվելու, սակայն մինչ օրս պետության կողմից բնակարաններով չապահովվելու հարցի վերաբերյալ բողոքներ:

Այսպես, օրինակ՝ բողոքներից մեկով անձը հայտնել է, որ որդու հետ 1990 թվականին Ադրբեջանից բռնագաղթել են Հայաստան: Հավելել է, որ բնակության համար իրենց տրամադրվել է Երևան քաղաքի շենքերից մեկի նկուղային ոչ բնակելի տարածությունը՝ ազատ բնակարանների առկայության դեպքում բնակության համար անհրաժեշտ պայմաններ ունեցող բնակելի տարածք տրամադրելու պայմանով: Ըստ բողոքի՝ հատկացված նկուղային հարկում բացակայել են բնակվելու համար անհրաժեշտ նվազագույն կենսապայմանները և տարածքը զբաղեցված է եղել շենքի

---

[587] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2018, 2019 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար էջեր՝ 677-679, 782-784, 816-820):

բնակիչների իրերով, ուստի այդ տարածքում բնակվելն օբյեկտիվորեն անհնարին է եղել:

Հավելել է, որ հաշվառումից հետո բնակարանով ապահովելու համար բազմիցս դիմել է իրավասու մարմիններին, սակայն արդյունքի չի հասել: Մասնավորապես, նշել է, որ 2022 թվականի նոյեմբեր ամսին դիմել է Երևանի քաղաքապետարան և պատասխան գրությամբ տեղեկացվել է, որ Երևան քաղաքի վարչական տարածքում դեռևս չսեփականաշնորհված բնակարանների սեփականաշնորհման գործառույթների իրականացման նպատակով Երևանի քաղաքապետի որոշման նախագծեր նախապատրաստելու և դրանց համար հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաքագրման լիազորությունները վերապահված են վարչական շրջանի ղեկավարին: Նշվածով պայմանավորված՝ 2022 թվականի դեկտեմբեր ամսին դիմել է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին և ստացել պատասխան այն մասին, որ բնակարանների հերթագրման և հատկացման գործառույթը վարչական շրջանի ղեկավարի լիազորությունների շրջանակից դուրս է:

Նշել է նաև, որ բարձրացված հարցի քննարկման և լուծման նպատակով Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին միջնորդագիր ներկայացնելու խնդրանքով դիմել է ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն և Արաբկիր վարչական շրջանի ղեկավարից ստացել պատասխան՝ իրեն հատկացված նկուղային տարածքի շենքի բնակարաններն այլ անձանց համապատասխան օրդերով հատկացված լինելու մասին:

Պաշտպանին դիմած անձն իր մտահոգությունն է հայտնել առ այն, որ բռնագաղթելուց երեք տասնամյակ անց դեռևս բնակարանով չեն ապահովվել և խնդրել է Պաշտպանի աջակցությունը բարձրացված խնդրի լուծման հարցում:

Որպես Ադրբեջանից բռնագաղթած և բնակարանի կարիք ունեցող փախստական, բնակարանային ապահովության որևէ ծրագրում հաշվառված լինելու մասին տեղեկություն ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատվել է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովության ծրագիրը, որի շահառուներ են ճանաչվել ՀՀ տարածքում գտնվող ժամանակավոր կացարաններում (հանրակացարաններ, հյուրանոցներ, առողջարաններ, մանկապարտեզներ, հանրային նշանակության այլ շենքեր ու շինություններ) և վագոն-տնակներում մշտապես բնակվող և 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ ԿԱ միգրացիայի և փախստականների նախկին վարչության (ներկայիս՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն) կողմից հաշվառված ընտանիքները: Տեղեկացրել են նաև, որ բողոք ներկայացրած անձի ընտանիքը չի ընդգրկվել վերոնշյալ ծրագրում, քանի որ 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կատարված հաշվառման ընթացքում վերը նշված որևէ ժամանակավոր կացարանում չի բնակվել:

Նշվել է նաև, որ վերոնշյալ ծրագիրն իրականացվել է 2005 թվականից մինչև 2009 թվականը, որից հետո ծրագրի իրականացման համար ՀՀ պետբյուջեում գումարներ չէին նախատեսվել և միայն 2019 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարությունն ընդունեց թիվ 1666-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), որի նպատակն էր շարունակել լուծել վերոնշյալ ծրագրի շահառու հանդիսացող Ադրբեջանից բռնի տեղահանված ժամանակավոր կացարաններում բնակվող

ընտանիքների խնդիրը: Նշվել է նաև, որ Որոշմամբ ընդլայնվել է ծրագրի շահառուների շրջանակը՝ մարզերում ներառելով այն ընտանիքներին, որոնք 2003 թվականին հաշվառման մեջ ընդգրկված չլինելու դեպքում հաշվառվել են 2005 թվականին, իսկ Երևան քաղաքում հաշվառման մեջ ընդգրկված չլինելու դեպքում՝ 2005 և/կամ 2008 թվականներին:

Պատասխան գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն նաև այն մասին, որ բողոք ներկայացրած անձի ընտանիքը չի հաշվառվել նաև 2005 և 2008 թվականներին կատարված ուսումնասիրության աշխատանքների ժամանակ, ուստի չի ընդգրկվել Որոշմամբ հաստատված ծրագրում: Վերոնշյալ ծրագրում չընդգրկված բնակարանի կարիք ունեցող փախստական ընտանիքները ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ հաշվառվում են իրենց բնակության վայրի Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում:

Նշված դիմում-բողոքը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանում ապաստանած փախստականների բնակարանային ապահովության հիմնախնդրի լուծման նպատակով թեև ՀՀ կառավարությունը տարբեր տարիներին նախատեսել է միջոցառումներ և ծրագրել գործողություններ[588], որոնք, իհարկե, գնահատելի են, այնուհանդերձ, Պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են, որ ինչպես նախորդ տարիներին, 2024 թվականին ևս բավարար քայլեր չեն ձեռնարկվել դրանք լիարժեք իրականացնելու ուղղությամբ և փախստականների բնակապահովման խնդիրը դեռևս մնում է չլուծված և արդիական:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման առաջարկությունների կատարման շրջանակում 2024 թվականի ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղղված հարցմանն ի պատասխան ներկայացվել է միայն հակիրճ պարզաբանում այն մասին, որ Որոշման շրջանակներում Միասնական սոցիալական ծառայության գործառույթներից է 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականների հաշվառումը և հաշվառման վերցված փախստականների գրանցումը Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման մատյանում:

Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում նախարարությունը տրամադրել է պարզաբանում առ այն, որ ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշման շրջանակներում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը բնակարանով ապահովելու լիազորություն չունի:

Նշված պարզաբանումների համատեքստում հարկ է ընդգծել, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի համաձայն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում և

---

[588] Տե՛ս, օրինակ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1593-Ն և 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1666-Ն որոշումները:

իրականացնում է (...) սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման (...) Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների, տեղահանվածների, երկարաժամկետ միգրանտների և հարկադիր վերադարձող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ինտեգրման կամ վերաինտեգրման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

Ըստ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմինը՝ իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներին հասարակությանն ինտեգրելուն ուղղված միջոցառումներ ***(բնակարանային ապահովության ծրագրեր, լեզվի և քաղաքացիական կողմնորոշման դասընթացներ, առօրյա կյանքին վերաբերող տեղեկությունների տրամադրում, հանրային կյանքին մասնակցություն և այլն):*** Ըստ նույն մասի 3-րդ կետի՝ իրականացնում է ծրագրեր 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականներին մշտական կացարանով ապահովելու նպատակով:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանավորվող պետություններն իրենց օրենքներին և սահմանադրություններին համապատասխան գործադրում են իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու նման փախստականների բնակեցումը:

Նույն կոնվենցիայի 21-րդ հոդվածը սահմանում է, որ բնակարանով ապահովելու կապակցությամբ պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականների հանդեպ հնարավորության սահմաններում ցուցաբերում են բարեհաճ վերաբերմունք, ինչպիսին ցուցաբերվում է նույն հանգամանքներում օտարերկրացիներին:

Հաշվի առնելով այն, որ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանում ապաստանած փախստականների հիմնախնդիրներից իր սրությամբ կարևորվում է նրանց բնակարանային ապահովության խնդիրը՝ Պաշտպանն արձանագրում է, որ այդ համակարգային խնդրի արդյունավետ և վերջնական կարգավորման համար՝ պետության ջանքերը պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում:

ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բազմաթիվ գրավոր և բանավոր բողոքներով անձինք, մասնավորապես, բարձրացրել են անվճար բժշկական օգնություն և սպասարկում չստանալու, բժշկական օգնության ծառայությունները թանկարժեք լինելու, անվճար դեղորայք չստանալու հետ կապված խնդիրներ:

Հարկ է նշել, որ 2024 թվականին Պաշտպանի աշխատակազմի, Առողջապահության նախարարության, ինչպես նաև բժշկական հաստատությունների հետ ձևավորված արդյունավետ համագործակցության արդյունքում քաղաքացիների կողմից բարձրացված մի շարք հարցեր ստացել են լուծում: Այնուհանդերձ, 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված բողոքները, ինչպես նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներից ստացված տվյալները վկայում են, որ այս իրավունքի իրացման հարցում մարդիկ շարունակում են բախվել մի շարք խնդիրների: Սույն գլխի շրջանակում այդ խնդիրներն ամփոփվել են և ենթարկվել մանրամասն վերլուծության: Դրա հիման վրա Պաշտպանի կողմից ներկայացվել են խնդիրների լուծման կոնկրետ առաջարկներ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, կարևոր է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը և նրա ներկայացուցիչները մասնակցել են առողջապահության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող մի շարք միջոցառումների: Այսպես, օրինակ՝ 2024 թվականի փետրվարի 7-ին Պաշտպանը մասնակցել է «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II» ծրագրի համակարգման խորհրդի երկրորդ նիստին և հանդես եկել բացման խոսքով: Միջոցառման նպատակն էր քննարկել Օվիեդոյի կոնվենցիայի հնարավոր վավերացմանն առնչվող հարցեր՝ համախմբելով ծրագրի գործընկերներին, դերակատարներին ու փորձագետներին, ներկայացնել համագործակցության ուղղություններն ու առաջնահերթությունները: Դրանից բացի, 2024 թվականի դեկտեմբերի 6-ին Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են ծրագրի երկրորդ փուլի փակման արարողությանը, որի ընթացքում քննարկվել է իրականացված ծրագրի արդյունքներն ու ձեռքբերումները:

1. Բժշկական օգնության և սպասարկման հասանելիության խնդիր

Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է բողոք, որով բարձրացվել է բնակավայրում առողջության առաջնային պահպանման կենտրոն (այսուհետ՝ ԱԱՊ կամ պոլիկլինիկա) չլինելու հարցը: Պաշտպանին հընթացս ներկայացվել են նաև բողոքներ շահառուներին հասանելիք դեղերը ժամանակին չտրամադրելու վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ բնակվում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ոստան բնակավայրում, որն ունի 3577 բնակիչ: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ բնակավայրը չունի ԱԱՊ կենտրոն կամ ամբուլատորիա ԱԱՊ ծառայություններ մատուցելու համար: Նշել է, որ բնակավայրում առկա են բավարար շենքային պայմաններ ԱԱՊ ծառայությունների մատուցման համար: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ բնակավայրը սպասարկում է «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը (այսուհետ նաև՝ Բժշկական կենտրոն):

Բողոք ներկայացրած անձն իր մտահոգությունն է հայտնել առ այն, որ Բժշկական կենտրոնը գյուղից գտնվում է մոտ 5-6 կմ հեռավորության վրա և այնտեղ հասնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ և ֆինանսական միջոցներ: Ըստ վերջինիս՝ Արտաշատ խոշորացված համայնքում կան բնակավայրեր, որոնցում գործում են ամբուլատորիաներ: Ընդ որում, որոշ բնակավայրեր, որոնք առավել մոտ են գտնվում Արտաշատ համայնքին, քան իրենց բնակավայրը, ունեն բուժկետեր: Պնդել է, որ բնակավայրի բնակչությանն անհրաժեշտ է բուժկետ՝ ԱԱՊ նվազագույն ծառայությունները բնակավայրում ստանալու համար:

Տեղեկացրել է նաև, որ բարձրացված խնդրով դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, Առողջապահության նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, որոնց ի պատասխան՝ Արարատի մարզպետարանից տեղեկացվել է, որ բնակավայրը սպասարկող Բժշկական կենտրոնի մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում, որի արդյունքում պարզ է դարձել, որ Բժշկական կենտրոնը ներկայում չունի լրացուցիչ բժշկի կամ բուժքրոջ հաստիք: Նշվածով պայմանավորված՝ խնդրել է Պաշտպանի աջակցությունը բնակավայրում ԱԱՊ կենտրոն կամ ամբուլատորիա բացելու հարցում:

Բարձրացված խնդրի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել Արարատի մարզպետին: Ի պատասխան՝ տրամադրվել է պարզաբանում առ այն, որ Ոստան գյուղում բուժկետ ունենալու վերաբերյալ դիմումները քննարկվել են Արարատի մարզպետի աշխատակազմում՝ բնակավայրը սպասարկող Բժշկական կենտրոնի տնօրինության մասնակցությամբ: Նշվել է նաև, որ Բժշկական կենտրոնը ԱԱՊ ծառայություններ է ապահովում շուրջ 30 հազար բնակչության՝ Արտաշատ քաղաքի վարչական և հարակից տարածքում, իսկ բժշկական նեղ մասնագիտական ծառայություններ է ապահովում Արտաշատ համայնքի շուրջ 100 հազար բնակչությանը՝ մինչև 24 կմ հեռավորությամբ: Ոստան բնակավայրն ունի ԱԱՊ օղակի և՛ բժիշկներ, և՛ բուժքույրեր, որոնք նշված ծառայությունները մատուցում են սահմանված ամբողջ ծավալով:

Վերոնշյալ պարզաբանումների համատեքստում Պաշտպանը գրություն է հասցեագրել նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ընդգծելով, որ բողոքը կապված է ոչ թե առհասարակ ԱԱՊ

ծառայության բացակայության, այլ այդ ծառայությունը դժվար հասանելի լինելու հետ: Ի պատասխան՝ նախարարությունից հայտնել են, որ Արարատի մարզպետը Ոստան բնակավայրում ամբուլատորիա կառուցելը նպատակահարմար չի համարում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտաշատ համայնքի Ոստան բնակավայրի ավտոմոբիլային ճանապարհը մինչև պոլիկլինիկա կազմում է շուրջ 5 կմ, իսկ հետիոտնի ճանապարհի երկարությունը շուրջ 1,5 կմ է: Գործում է նաև Արտաշատ-Ոստան ավտոբուսային երթուղի՝ ժամը մեկ, որի արժեքը 100 ՀՀ դրամ է:

Նախարարությունից տեղեկացրել են նաև, որ Ոստան բնակավայրում ամբուլատորիայի կառուցման հարցը քննարկելու նպատակով դիմել են Առողջապահության նախարարություն՝ հաշվի առնելով, որ ՀՀ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությունն իրականացնում է թվով 50 մարզային ամբուլատորիաների կառուցում:

Քննարկման արդյունքների մասին նախարարությունը լրացուցիչ տեղեկացրել է, որ գյուղը տարածքային առումով մոտ է գտնվում Արտաշատ քաղաքում գործող Արտաշատի պոլիկլինիկային՝ 3.1 կմ և Մրգավան գյուղում գործող Մրգավանի ամբուլատորիային՝ 2.8 կմ: Ուստի, ամբուլատորիա կառուցելու նպատակահարմարությունը հիմնավորված չէ:

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունները պետք է գործեն անձանց առաջնային բժշկական օգնության իրավունքի առնչությամբ գործող միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող անձանց (հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ) առաջնային բժշկական օգնության իրավունքի իրացումը ֆիզիկական և աշխարհագրական մատչելիության, ինչպես նաև ԱԱՊ բժշկի համար տնային այցելություններ կատարելու տեսանկյունից:

Բուժօգնության հասանելիության սկզբունքը սերտորեն կապված է մատչելիության հետ: Այն վերաբերում է առողջապահական հաստատությունների, ծառայությունների առկայությանը և բաշխմանը, դեղերի տրամադրմանը և աշխարհագրական անհավասարությունների վերացմանը: Բոլոր անձինք պետք է ունենան առողջապահական ծառայությունների հավասար հասանելիություն առանց խտրականության:

Ուշագրավ է նաև խնդրի վերաբերյալ միջազգային իրավունքի աղբյուրների անդրադարձը: Օրինակ՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը (Սան-Սալվադորի արձանագրություն) պետություններից պահանջում է առաջնային առողջապահությունը հասանելի դարձնել համայնքի բոլոր անհատների և ընտանիքների համար[589]:

---

[589] Տե՛ս, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը: Փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.oas.org/juridico/english/treaties/a-52.html, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ անվճար կամ արտոնյալ պայմաններով բնակչության սոցիալապես անապահով խմբերին պոլիկլինիկաների կողմից դեղորայք չտրամադրելու կամ ուշացումով տրամադրելու վերաբերյալ: Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ օրինակ՝ քաղաքացիները դեղերով չեն ապահովվել՝ վերաբաշխումներն իրավասու մարմինների կողմից պատշաճ չկատարվելու կամ մրցույթները չկայանալու պատճառներով: Պարզվել է նաև, որ որոշ դեպքերում հայտարարվել են նոր մրցույթներ և նախքան դրանց կայանալը՝ բուժհաստատության կողմից հնարավորության սահմաններում դեղերն ապահովվել են պոլիկլինիկայի միջոցների հաշվին կամ մարդասիրական կազմակերպությունների կողմից:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած քաղաքացին հայտնել է, որ ունի երկրորդ խմբի հաշմանդամություն, միայնակ կենսաթոշակառու է: Հավելել է, որ դիմել է պոլիկլինիկա «Դիկլակ» կամ «Դիկլոֆենակ» ցավազրկող քսուքը ստանալու համար, սակայն դեղորայքն իրեն չի տրամադրվել առկա չլինելու պատճառով: Այս հարցի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմ պոլիկլինիկայից ստացվել է պարզաբանում առ այն, որ մատակարարող կազմակերպությունը դեռևս դեղորայքը չի ապահովել: Միաժամանակ, հարցի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի իրավասու ներկայացուցիչը հայտնել է, որ խնդիրը քննարկման փուլում է, իսկ դեղամիջոցը հաշմանդամություն ունեցող անձին տրամադրելու ուղղությամբ հրատապ քայլեր կձեռնարկվեն: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել Պաշտպանի աշխատակազմ այն ստանալու մասին:

Մեկ այլ դեպքում, երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը տեղեկացրել է, որ ընտանիքը սոցիալապես անապահով է: Հավելել է, որ ունի առողջական խնդիրներ, բազմիցս դիմել է ամբուլատորիա բժշկի կողմից նշանակված դեղերն իրեն տրամադրելու խնդրանքով, սակայն մերժվել է դրանք առկա չլինելու պատճառով: Այս հարցի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմ ամբուլատորիայից ստացվել է տեղեկություն առ այն, որ դրանք առկա չլինելու պատճառով շահառուին առաջարկվել է դիմել մի քանի օր անց: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ դեղամիջոցներն արդեն տրամադրվել են:

Հաշվետու տարում Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է նաև հոգեմետ դեղորայքը ժամանակին չտրամադրելու խնդիր: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ արդեն երկու ամիս է Վաղարշապատի պոլիկլինիկան եղբորը նշանակված «Մոդիտեն Դեպո (Ֆլուֆենազին)» և «Ազալեպտին (Կլոզապին)» հոգեմետ դեղամիջոցները չի տրամադրում՝ դրանք չլինելու պատճառաբանությամբ:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ստիպված են լինում գնել դեղերը՝ իրենց միջոցների հաշվին: Վերջինիս պնդմամբ՝ ընտանիքը սոցիալապես անապահով է, որպիսի պարագայում դեղերի համար գումար ծախսելը լրացուցիչ դժվարություն է առաջացնում նրանց համար:

Հավելել է, որ խնդրի կարգավորման նպատակով դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, որտեղից պատասխան գրությամբ հայտնել են, որ դրանք եռամսյակային կտրվածքով տրամադրվում են ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություններին, ուստի կարող են անխոչընդոտ ստանալ պոլիկլինիկայից:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը եղբորն անհրաժեշտ հոգեմետ դեղամիջոցները տրամադրելու հարցում:

Բողոքի պատշաճ ուսումնասիրությունը և օպերատիվությունն ապահովելու նպատակով աշխատանքային քննարկում է տեղի ունեցել Արմավիրի մարզպետարանի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինիս տեղեկացմամբ՝ մարզի բժշկական հաստատություններում ներկայում իրականացվում են առկա դեղորայքի վերաբաշխումներ, որոնց ավարտից հետո դեղամիջոցները հասանելի կլինեն դրանք ստանալու իրավունք ունեցող քաղաքացիներին:

Բացի այդ, Պաշտպանը գրություն է հասցեագրել Արմավիրի մարզպետարան: Ի պատասխան՝ ներկայացվել է պարզաբանում առ այն, որ Առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղորայքի բաշխումն իրականացվում է եռամսյակը մեկ ժամանակահատվածում՝ մարզի բոլոր բուժհաստատությունների կողմից տրվող եռամսյակային դեղորայքի շարժի վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա, որն իր մեջ ներառում է դեղորայքի (հոգեմետ, հակադիաբետիկ, հակաէպիլեպտիկ) տվյալ եռամսյակի սկզբում առկա մնացորդի, տվյալ եռամսյակում դեղորայքի մուտքի, ելքի և եռամսյակի վերջում առկա մնացորդի հաշվառմամբ: Հաշվետվության ներկայացումից հետո, նախարարության համապատասխան վարչության կողմից դեղորայքի բաշխման, մարզ դեղորայք բերելու և բուժհաստատություններին տրամադրելու գործընթացի ժամանակահատվածը տևում է մեկ ամիս, ուստի նախարարության կողմից մարզին բաշխվում է գրեթե բոլոր դեղորայքների չորս ամսվա ծախսի չափով, որը նույն սկզբունքով էլ բաշխվում է մարզի բուժհաստատություններին: Հոգեմետ դեղորայքը տրամադրվում է բնակչին տարածաշրջանային պոլիկլինիկական ծառայությունների միջոցով: Դիսպանսեր հսկողության տակ գտնվող քաղաքացուն տրամադրվում է «Էջմիածնի ԲԿ» ՓԲ ընկերության հոգեբուժական կաբինետի կողմից, որն ամիսը մեկ անգամ կայուն ստացել է, այնուհետև՝ մարզում ներմարզային բաշխմամբ կարգավորվել է «Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲ ընկերությունից Արմավիրի մարզպետի գրությամբ. «Ֆլյուֆենազին դեկանուատ լ-թ 25 մգ/մլ դեղորայքի վերաբաշխման ճանապարհով երկու սրվակ հատկացվել է «Էջմիածնի ԲԿ» ՓԲ ընկերությանը՝ քաղաքացուն տրամադրելու համար, որը նա ստացել է: Անհրաժեշտ դեղորայքը ստանալու հանգամանքը հաստատել է նաև բողոք ներկայացրած անձը:

Մեկ այլ դեպքում՝ բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ որդին ունի հոգեկան առողջության հետ կապված խնդիր, մշտական ընդունում է հոգեմետ դեղորայք: Հավելել է, որ հերթական անգամ դիմել է տեղամասային պոլիկլինիկա որդու հոգեմետ դեղորայքը ստանալու նպատակով, սակայն մերժվել է դեղորայքն առկա չլինելու պատճառով:

Խնդրի պարզաբանման նպատակով Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել պոլիկլինիկայի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ ներկա դրությամբ բժշկական հաստատություններում իրականացվում են դեղերի վերաբաշխումներ, որի պատճառով դեղորայքի տրամադրումը հնարավոր չի եղել: Այնուամենայնիվ, արդեն իսկ ձեռնարկել են բոլոր միջոցները հնարավոր սեղմ ժամկետում խնդրի լուծման նպատակով: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը հաստատել է հոգեմետ դեղորայքը ստանալու հանգամանքը:

Նախորդ տարեկան հաղորդման առաջարկությունների կատարման շրջանակում 2024 թվականի ընթացքում Առողջապահության նախարարություն ուղղված հարցմանն ի պատասխան, ներկայացվել է տեղեկատվություն նաև այն մասին, որ 2024 թվականից սկսած շուրջ 500 շահառուների համար ձեռք են բերվել թանկարժեք, վերջին սերնդի նորագույն դեղեր: Շահառուների 40%-ը հանդիսացել են նորածիններ, երեխաներ և դեռահասներ, իսկ 60%-ը՝ 18-ից մինչև 55 տարեկան պացիենտներ:

Նշել են նաև, որ Կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 642-Ն որոշման հավելվածում 1-ում նշված բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ժամանակին տրամադրելու համար առողջության առաջնային պահպանման հաստատությունները հաջորդ տարվա իրենց կարիքների համար գնման ընթացակարգերը կազմակերպում և իրականացնում են ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսվա ընթացքում՝ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն՝ շահառուներին դեղերով անընդհատությունն ապահովելու նպատակով: Նույն որոշման հավելվածով 2-ով սահմանված հիվանդությունների դեպքում Առողջապահության նախարարության կողմից պետական բյուջեի միջոցների հաշվին կենտրոնացված կարգով իրականացվում է դեղերի ձեռքբերում՝ նախատեսված 15 ամիսների համար՝ գործող գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Առաջարկությունների կատարման շրջանակում նախարարությունը տեղեկացրել է նաև, որ Կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի թիվ 1088-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն Կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման մեջ, որի 2.1-ին կետով սահմանված է, որ Առողջապահության նախարարության կողմից կարող են ձեռք բերվել պետության կարիքների համար չգրանցված դեղեր:

Ըստ նախարարության հայտնած տեղեկության՝ 2024 թվականին դեղերի գնման գործընթացի խափանման դեպքում դեղամիջոցը ստանալու իրավունք ունեցող անձին այն չտրամադրելու վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող հաշմանդամություն ունեցող 48 անձի չի տրամադրվել իրենց անհրաժեշտ դեղերը՝ պայմանավորված օրենսդրությամբ սահմանված դեղերի ցանկում դեղի բացակայությամբ: Բոլոր դեպքերը ենթարկվել են մանրամասն ուսումնասիրության: Արդյունքում պարզ է դարձել, որ հիմնականում դրանք առաջացել են տեխնիկական խնդիրներով պայմանավորված և դրական լուծում են ստացել:

Պաշտպանի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց հոգեմետ դեղերի դեղապահովումը 2024 թվականին կազմել է 100%: Կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի անվանացանկը համալրվել է վերջին սերնդի հոգեմետ և հակացնցումային դեղերով:

Տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ ՏԿԵ նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ Արագածոտնի և Արարատի մարզպետի աշխատակազմ հասցեագրված բողոքները եղել են հիմնականում դեղորայքի

տրամադրումն ուշացնելու վերաբերյալ, բոլոր բողոքները սեղմ ժամկետներում բավարարվել են, Լոռու մարզպետի աշխատակազմ՝ թվով 49 բողոք, հիմնականում դժվարամատչելի, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների հասանելի և մատչելի չլինելու, դեղերի տրամադրման հետ կապված բողոքներ: Բոլոր խնդիրներն ուսումնասիրվել են և տրվել են պարզաբանումներ: Արմավիրի մարզպետի աշխատակազմ ստացվել է թվով 11 բողոք, որոնք վերաբերելի են եղել բժիշկների վերաբերմունքին՝ պացիենտների հանդեպ: Ստացված բոլոր բողոքներին տրվել են համապատասխան ընթացքներ, մանրամասն ուսումնասիրվել են բարձրացված խնդիրները և հարկ եղած դեպքում առերևույթ խախտումներ արձանագրվելու պարագայում համապատասխան մասնագետներին տրվել են նկատողություններ և նախազգուշացումներ: Կոտայքի մարզպետի աշխատակազմ մարզի պոլիկլինիկաներից և ամբուլատորիաներից գրավոր բողոքներ չեն ստացվել: Բողոքները եղել են թեժ գծի միջոցով, որոնք վերաբերվել են հատուկ խմբերին անվճար պայմաններով տրամադրվող դեղորայքի մատակարարմանը, ինչը մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման միջնորդությամբ արագ կարգավորվել է: Շիրակի մարզպետի աշխատակազմ բժշկական հաստատությունների վերաբերյալ ստացվել է թվով 14 դիմում-բողոք: Ստացված բողոքները վերաբերել են բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար բուժօգնություն տրամադրելուն, մատուցված բժշկական ծառայությունների որակին: Դիմումների վերաբերյալ եղել են պարզաբանումներ, օրենքի սահմաններում տրվել են դրական լուծումներ: Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ ստացվել է 2 դիմում-բողոք՝ բժշկական օգնության և սպասարկման դիմաց դրամական փոխհատուցման հետ կապված: Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրից քաղաքացին նախօրոք չի տեղեկացրել, որ ինքը հավաքագրված է «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ում, որի պատճառով բժշկական օգնության և սպասարկման համար գումար են գանձել: Տեղեկացնելուց անմիջապես հետո գումարը հետ է վերադարձվել քաղաքացուն: «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ-ից քաղաքացին շտապ բժշկական օգնության բրիգադով տեղափոխվել է ք. Երևան վճարովի հիմունքներով: Ախտորոշումը ճշգրտելուց հետո (ըստ ՀՀ ԱՆ 2022 թվականի մայիսի 10-ի թիվ 27-Ն հրամանի) գանձված գումարը վերադարձվել է քաղաքացուն: ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ մուտքագրվել թվով 5 բողոք, որից 2-ը վերաբերվել է առաջնային օղակում բժիշկի մոտ հերթերի գոյացմանը, 1-ը բժշկի մոտ բնակչի գրանցման, 1-ը աշխատակցի աշխատանքից ազատման և 1-ը բժշկական կենտրոնի տնօրենի ընտրության աշխատանքների կազմակերպման հետ: Բոլոր դիմում-բողոքներին տրվել են հիմնավոր պարզաբանումներ: Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ ստացվել է թվով 4 բողոք՝ 2-ը բժշկի կողմից ոչ պատշաճ վերաբերմունքի համար, 1 դիմում բժշկի կողմից գումար վերցնելու վերաբերյալ, 1 դիմում՝ հարցում բժշկական օգնությունը պետական պատվերի շրջանակներում ստանալու վերաբերյալ: Բոլոր դեպքերում խնդիրները քննարկվել են և տրվել են համապատասխան լուծումներ՝ ի օգուտ դիմողի: Տավուշի մարզպետի աշխատակազմ ստացվել է 1 դիմում-բողոք՝ մասնավոր ատամնաբուժարանի գործունեության վերաբերյալ: Հարցը ուսումնասիրվել է և ուղղորդվել համապատասխան կառույց: «Այգեձորի ԱԿ» ՊՈԱԿ-ում և «Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ում ստացվել են քաղաքացիներից 2-ական բողոքներ՝ դեղերի ուշացման,

լաբորատորիայի սանիտարական վիճակի, բժիշկ-մասնագետի ոչ ճիշտ վերաբերմունքի վերաբերյալ: Բոլոր խնդիրները կարգավորվել են:

Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ Երևանի քաղաքապետարան ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ քաղաքապետարանի ենթակա առողջության կենտրոններում դեղերի տրամադրման ուշացման կամ չտրամադրման հետ կապված խնդիրները պայմանավորված են ընկերությունների ոչ պատշաճ մատակարարումներով, արդյունքում լուծվել են պայմանագրերն այդ ընկերությունների հետ և հայտարարվել են նոր մրցույթներ: 2025 թվականի ընթացքում նմանատիպ դեպքերից խուսափելու նպատակով դեղերի մրցույթը հայտարարվել է դեղատանային (դեղերը պետք է տրամադրվեն բուժհաստատությունից դուրս գտնվող դեղատներից էլեկտրոնային դեղատոմսերի հիման վրա): Որոշ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձանց առաջարկվում է անհարժեշտ դեղի այն համարժեքը, որը ձեռք է բերվել մրցույթի արդյունքում, սակայն քաղաքացիները հրաժարվում են՝ պահանջելով կոնկրետ այս կամ այն երկրի և ընկերության արտադրության դեղորայք: Իրենց հասանելիք դեղորայքի տրամադրումն ուշացնելու պատճառներից է նաև տվյալ դեղը ստացող հիվանդների թվի ավելացումը, որի դեպքում հայտարարվում է նոր մրցույթ, ինչը ևս ժամանակ է պահանջում:

Այսպիսով, Պաշտպանը կարևորում է անհրաժեշտ և բավարար թվով գործող առողջապահական հաստատությունների առկայությունը, պետության կողմից առողջապահական հաստատությունները (թե՛ պետական, և թե՛ մասնավոր), ապրանքները (հատկապես հիմնական դեղերը), ծառայությունները և տեղեկատվությունը քաղաքացիներին գործնականում հասանելի դարձնելուն ուղղված պարտավորությունների պատշաճ կատարումը: Դրանք պետք է համարժեք լինեն, քանի որ առաջնային օղակի բուժաշխատողը մատուցում է ԱԱՊ ծառայություններ, կազմակերպում առաջնային բուժօգնության այլ ծառայություններ:

Պաշտպանն ընդգծում է նաև, որ առողջության պահպանման, այդ թվում՝ առողջապահական ծառայություններից օգտվելու և օրենքով սահմանված կարգով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք, ինչպես նաև բուժօգնություն ստանալու իրավունքների ապահովման նպատակով պետությունը պարտավոր է իրացնել պատշաճ և համալիր մեթոդաբանությամբ քաղաքականություն և ցուցաբերել բավարար փութաջանություն: Անհրաժեշտ է նաև վերանայել պետության կարիքների համար ձեռք բերվող դեղերի գնումների գործընթացի մեթոդաբանությունը, մասնավորապես՝ մշակել և իրացնել գործընթացի ռիսկերը պատշաճ գնահատելու կառուցակարգեր:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մարզային բնակավայրերում բժշկական օգնությունը և սպասարկումն առավել հասանելի դարձնելու նպատակով քննարկել առողջության առաջնային պահպանման կենտրոններ (ամբուլատորիաներ) բացելու (կառուցելու) հարցը՝ ապահովելով անձանց համար իրենց բնակավայրում համապատասխան առողջապահական ծառայություններ ստանալու հնարավորությունը.***

✓ ***մշակել և իրացնել բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի անխափան տրամադրումն ապահովելու նպատակով դրանք ձեռք բերելու գործընթացի վերահսկողության պատշաճ կառուցակարգեր:***

2. Բժշկական օգնության և սպասարկման մատչելիության խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման իրավունքի իրացման խոչընդոտների վերաբերյալ: Դրանց Պաշտպանը մշտապես է անդրադառնում իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում[590]:

Բողոքներով քաղաքացիները նշել են, որ ըստ բժշկական կազմակերպությունների՝ մերժումները մեծամասամբ կապված են պետության կողմից տրամադրված գումարները սպառված լինելու հետ և նման պարագայում առաջարկվել են հերթագրումներ: Նրանց պնդմամբ՝ հերթագրման դեպքում իրենց բժշկական հետազոտության օր է նշանակվել դիմելուց ամիսներ անց: Նման դեպքերում, որպես կանոն, բողոք ներկայացրած անձինք խնդրել են Պաշտպանի աջակցությունն անհրաժեշտ բուժօգնությունն անվճար պայմաններով հնարավոր սեղմ ժամկետում ստանալու հարցում: Քաղաքացիների կողմից մատնանշվել են անհապաղ բուժօգնության անհրաժեշտության տարբեր պատճառներ:

Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց դեպքում քաղաքացիներին, որպես կանոն, լիազոր մարմնի կողմից առաջարկվում է դիմել այլ բժշկական կենտրոններ, որտեղ, սովորաբար, նույն իրավիճակն է լինում: Իսկ դա վերջիններիս (հատկապես օնկոլոգիական հիվանդություններ ունեցող անձանց) մոտ առաջացնում է դժգոհություն: Ըստ բողոքների՝ անձինք ստիպված հրաժարվում են սպասել իրենց հերթին և հերթագրման կարգից դուրս բուժօգնությունը ստանում են վճարովի հիմունքով, իսկ անվճարունակ քաղաքացիները գումարը հայթայթում են ազգականներից կամ ծանոթներից՝ պարտք վերցնելու միջոցով:

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ հաշմանդամություն ունեցող իր կնոջ մոտ ախտորոշվել է քաղցկեղ, ներկայում բժշկի ցուցմամբ անհրաժեշտ է կատարել համակարգչային տոմոգրաֆիա, սակայն բժշկական կենտրոնից հայտնել են, որ այդ հետազոտությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է հերթագրվել: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ հետազոտությունն անհրաժեշտ է իրականացնել հնարավորին սեղմ ժամկետում, քանի որ դրա արդյունքով է պայմանավորված դեղորայքային բուժման (քիմիոթերապիայի) ընդհատումը կամ շարունակականությունը: Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը կնոջ հետազոտությունը սեղմ ժամկետում կազմակերպելու հարցում: Հաջորդիվ, անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել առ այն, որ հետազոտությունն իրականացվել է վճարովի հիմունքներով (դրա համար անհրաժեշտ գումարն ազգականից պարտքով վերցնելու միջոցով):

---

[590] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 314-317, 259-264, 143-149):

Մյուս դեպքում՝ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը Պաշտպանին 2024 թվականի հուլիս ամսին ներկայացված բողոքով հայտնել է, որ բժշկի ցուցմամբ իրեն անհրաժեշտ է համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտություն: Հավելել է, որ այն պետական պատվերի շրջանակում կազմակերպելու համար դիմել է բժշկական հաստատություն, որտեղ հերթագրման արդյունքում հետազոտության կատարման օր է նշանակվել նույն թվականի հոկտեմբերի 15-ը: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն հետազոտությունը սեղմ ժամկետում կազմակերպելու հարցում: Հավելել է, որ ստիպված հետազոտությունը կատարել է վճարովի հիմունքներով:

Խնդրո առարկա դեպքերի տեսանկյունից հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում արտահերթ բժշկական օգնության տրամադրմանն առնչվող իրավական կարգավորումների համատեքստում որոշակի դրական փոփոխություններ են իրականացվել: Օրինակ՝ եթե նախկինում արտահերթ բժշկական օգնություն կարող էր տրամադրվել համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում և *հերթագրման մասնագիտական հանձնաժողովի որոշման հիման վրա,* ապա ներկայում բժշկական ցուցումների առկայության դեպքում բավարար է դրա վերաբերյալ էլեկտրոնային առողջապահության համակարգում գրառում կատարելը[591]: Այնուամենայնիվ, հաշվետու տարում Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք բավարար չեն խնդրի համակարգային լուծման տեսանկյունից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել նաև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցած հաստատությունների պայմանագրային գումարները սպառված լինելու պատճառով դիմողին չսպասարկելու և հերթագրում առաջարկելու վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ անձը հայտնել է, որ ունի առաջին խմբի հաշմանդամություն: Հավելել է, որ արգելապատնեշի բացակայության պատճառով ընկել ու վնասվածքներ է ստացել: Ներկայում բժշկի ցուցմամբ վերականգնողական բուժօգնության կարիք ունի: Դիմել է Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոն անվճար պայմաններով այն ստանալու համար, սակայն մերժվել է պետության կողմից տրամադրված գումարը սպառված լինելու պատճառաբանությամբ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ վերականգնողական բուժօգնության արդյունքը, ըստ բժիշկ-մասնագետի, կախված է այն հնարավոր սեղմ ժամկետում ստանալու հետ:

Բողոքի պատշաճ ուսումնասիրությունն ապահովելու նպատակով աշխատանքային քննարկում է տեղի ունեցել Առողջապահության նախարարության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինիս տեղեկացմամբ՝ 2024 թվականի համար նախատեսված ֆինանսավորումը սպառվել է և քայլեր են ձեռնարկվում բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումն անվճար ապահովելու նպատակով: Ստացված տեղեկատվությունը հաստատել է նաև հիշյալ կենտրոնի աշխատակցը՝ հավելելով, որ դեռևս իրականացվում են շահառու քաղաքացիների հերթագրումներ և

---

[591] Տե՛ս, ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածի 17-րդ կետը:

ֆինանսավորման դեպքում պետական պատվերի շրջանակում բժշկական օգնության տրամադրումը կվերսկսվի:

Այս համատեքստում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել քաղաքացիների համար պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման ծավալներն ավելացնելու հարցը՝ հերթագրված շահառուներին բժշկական ծառայությունն հնարավոր սեղմ ժամկետում մատուցելու համար:

Հաշվի առնելով 2024 թվականին ստացվող դիմում-բողոքներով բարձրացված խնդրի արդիականությունը՝ Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում քննարկվող խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցմանն ի պատասխան՝ Առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է պարզաբանում առ այն, որ 2024 թվականի ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցած հաստատությունների պայմանագրային գումարները սպառված լինելու պատճառով դիմողին չսպասարկելու և հերթագրում առաջարկելու վերաբերյալ ստացվել է թվով 55 բողոք՝ վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման մասով: ***Քանի որ վերականգնողական բժշկական օգնությունը և սպասարկումն անհետաձգելի բուժօգնություն չի համարվում, ուստի առաջարկվել է հերթագրվել:***

2024 թվականին Պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել նաև դեղորայքն անվճար չստանալու հետ կապված: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ օնկոլոգիական հիվանդությամբ պայմանավորված՝ շուրջ 5 տարի է բուժօգնություն է ստանում «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲ ընկերությունում, որտեղ իրեն անվճար չի տրամադրվում «Ավաստին» դեղամիջոցը, որն ինքը դժվարությամբ ձեռք է բերում իր ֆինանսական միջոցներով:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված դեղամիջոցը «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում օնկոլոգիական հիվանդություն ունեցող բուժառուներին տրամադրվում է անվճար հիմունքներով: Ոստի, այն անվճար ստանալու համար իրեն առաջարկվել է բուժօգնությունը շարունակել այնտեղ, ինչից ինքը հրաժարվել է՝ իրեն բուժող բժշկի նկատմամբ բարձր վստահություն ունենալու պատճառով: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը նշված դեղամիջոցն «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲ ընկերությունում անվճար ստանալու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել Առողջապահության նախարարություն՝ խնդրելով ներկայացնել պարզաբանումներ «Ավաստին» դեղամիջոցն «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲ ընկերությունում հաշվառված բուժառուներին չտրամադրելու վերաբերյալ: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ նախարարությունը «Ավաստին» դեղամիջոցը ստացել է որպես մարդասիրական օգնություն և սահմանված կարգով տրամադրել է ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ և «ՀՀ ԱՆ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲ ընկերություններին: ***Ուստի, այն ստանալու***

համար անհրաժեշտ է, որպեսզի քաղաքացին դիմի նշված բժշկական հաստատություններից որևէ մեկը:

Բողոքի քննարկումը պատշաճ ապահովելու նպատակով Պաշտպանը լրացուցիչ գրությամբ խնդրել է տրամադրել պարզաբանումներ այն մասին, թե ի՞նչ սկզբունքով (իրավական հիմքով) է «Ավաստին» դեղամիջոցը տրամադրվում միայն վերոգրյալ բժշկական կենտրոնների բուժառուներին: Խնդրել է նաև քննարկման առարկա դարձնել բողոք ներկայացրած անձին մարդասիրական օգնության շրջանակներում դեղամիջոցը տրամադրելու հնարավորության հարցը: Պաշտպանը գրությամբ վկայակոչել է նաև ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 642-Ն որոշման այն պահանջը, ըստ որի՝ *ՀՀ առողջապահության նախարարության անունով մարդասիրական օգնությամբ ստացված և բաշխված, ինչպես նաև անմիջապես առողջապահական կազմակերպությունների անունով այլ մարդասիրական խողովակներով ստացված դեղերն անվճար տրվում են* ***բոլոր պացիենտներին, ըստ բժշկական ցուցումների՝ անկախ սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկվածությունից:***

Պատասխան գրությամբ նախարարությունը պարզաբանել է, որ որպես մարդասիրական օգնություն է ստացել «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային» դեղը և համաձայն Առողջապահության նախարարի 2024 թվականի մարտի 05-ի թիվ 1204-Ա հրամանի՝ տրամադրվել է ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին և «ՀՀ ԱՆ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ին: Պարզաբանել է նաև, որ նախարարության կողմից իրականացվել է վերոնշյալ հրամանի փոփոխություն՝ հիմք ընդունելով բժշկական հաստատությունների կողմից ներկայացված «Մվասի (բևացիզումաբ) լուծույթ ներերակային» դեղի պահանջարկը: ***Բժշկական հաստատություններում դեղամիջոցը սահմանված կարգով կտրամադրվի դրա կարիքն ունեցող պացիենտներին:***

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ իրեն նշանակված է «Հերցեպտին» (Տրաստուզումաբ) դեղամիջոցը: Ըստ բողոքը ներկայացրած անձի պնդման՝ այն պետական պատվերի շրջանակներում իրեն չի հատկացվում և ինքը ստիպված գնում է այն անձնական միջոցների հաշվին: Նշել է նաև, որ իր մոտ ախտորոշվել է կրծքագեղձի քաղցկեղ (4-րդ փուլ): Ներկայում բուժօգնություն է ստանում «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ նշված դեղամիջոցը, բժշկական հաստատությունն իրեն չի հատկացնում՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի մարտի 25-ի «Վաղ փուլի դրական «her2/neu» կրծքագեղձի քաղցկեղով հիվանդներին տրաստուզումաբ դեղով բուժման հիվանդների ընդգրկման, նշանակման չափանիշները հաստատելու մասին» թիվ 1094-Լ հրամանը: Ըստ այդմ՝ 4-րդ փուլի կրծքագեղձի քաղցկեղով հիվանդներին այն չի տրամադրվում: Դիմողի մտահոգմամբ՝ այլևս ի վիճակի չէ նշված դեղամիջոցը գնել և այն իրեն անվճար չտրամադրվելու դեպքում ստիպված կլինի բուժումը դադարեցնել: Վերջինիս պնդմամբ՝ կրծքագեղձի քաղցկեղ (4-րդ փուլ) ախտորոշում ունեցողներին վերոնշյալ ծրագրում չընդգրկելը խտրականության դրսևորում է պետության կողմից, հատկապես, երբ այն նշանակված է բժշկի կողմից:

Խնդրել է Պաշտպանի աջակցությունը «Հերցեպտին» (Տրաստուզումաբ) դեղամիջոցն իրեն պետության աջակցությամբ տրամադրելու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանն Առողջապահության նախարարություն հասցեագրած գրությամբ խնդրել է պարզաբանումներ ներկայացնել ծրագրում հիվանդների ընդգրկման, այդ թվում՝ հիվանդներին հիշյալ դեղամիջոցի հատկացման նպատակով սահմանված չափանիշների վերաբերյալ: Ի պատասխան՝ նախարարությունից տեղեկացրել են, որ *դեղն ընդգրկված է պետության կողմից կենտրոնացված կարգով գնվող ու համապատասխան հիվանդներին անվճար հատկացվող դեղերի ցանկում: Առողջապահության նախարարի հրամանով «Տրաստուզումաբ» դեղը ծրագրի շրջանակներում անվճար տրամադրվում է հաշվառված I-III փուլի դրական HER2/NEU կրծքագեղձի քաղցկեղ ունեցող պացիենտներին: Նշել են նաև, որ հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում IV փուլի դրական HER2/NEU կրծքագեղձի քաղցկեղ ունեցող պացիենտներին ծրագրում ընդգրկելու հարցը կքննարկվի:*

Այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվող և լրջագույն բացասական հետևանքների հանգեցնող խնդրին լուծում չի տրվում՝ ֆինանսական բավարար միջոցներ չունենալու պատճառով: Այս համատեքստում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել պետական ֆինանսավորման ծավալներն ավելացնելու հարցը: Հարկ է նաև նշել, որ այս դիմում-բողոքը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություն:

Հաշվետու տարում Պաշտպանին հընթացս հասցեագրվել են նաև դիմում-բողոքներ օնկոլոգիական, ինչպես նաև սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունից օգտվել չկարողանալու վերաբերյալ՝ դրանց թանկարժեք լինելու և վճարման հնարավորություն չունենալու պատճառներով:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ նախկինում իր մոտ ախտորոշվել է օնկոլոգիական հիվանդություն, որի պատճառով Գերմանիայում ենթարկվել է վիրահատության. հեռացվել է մեկ աչքը:

Նշել է, որ ներկայում իր մոտ ախտորոշվել են չարորակ նորագոյացություններ, լյարդի ցիռոզ, որոնց բուժման համար բժիշկները ցուցել են կիրառել իմունոթերապիա: Հավելել է, որ այն բուժման թանկարժեք միջոց է և իրականացվում է երեք շաբաթը մեկ անգամ: Վերջինիս պնդմամբ՝ այդ մեթոդի կիրառումը կարևոր է իր առողջության պահպանման և իմունային համակարգի ամրապնդման համար, ավելին՝ այն միակ մեթոդն է, որը թույլ կտա դադարեցնել հիվանդության զարգացումը, օրգանիզմը պահել կայուն վիճակում: Արդյունքում, կստեղծվի հնարավորություն հետագայում վիրահատություն կատարելու համար:

Միևնույն ժամանակ, ըստ դիմողի՝ նման թանկարժեք բուժման մեթոդի համար չունի բավարար ֆինանսական միջոցներ: Հավելել է, որ մեծ գումար է ծախսել տարբեր հետազոտությունների համար, որի հետևանքով ավելի է վատթարացել ֆինանսական վիճակը, իսկ ազգականները հնարավորություն չունեն իրեն աջակցելու:

Բողոք ներկայացրած անձը հայտնել է նաև, որ ունի հաշմանդամություն և դրանով պայմանավորված պետք է ունենա հնարավորություն անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն իմունոթերապիան անվճար ստանալու հարցում:

Պաշտպանը խնդրի կապակցությամբ գրություն է հասցեագրել Առողջապահության նախարարություն: Նախարարությունն իր պատասխանում նշել է միայն, որ իմունաթերապիա բժշկական օգնությունն ընդգրկված է Առողջապահության նախարարի «Նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկը հաստատելու մասին» 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված ցանկում և բնակչության բոլոր խմբերին մատուցվում է վճարովի հիմունքներով, ինչի մասին տեղեկացվել է նաև քաղաքացին:

Փաստորեն, նախարարությունը որևէ անդրադարձ չի կատարել այդ խնդրի լուծմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու, առնվազն այն քննարկման առարկա դարձնելու և համանման այլ հարցերի: Այս բողոքը նույնպես Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություն:

Մյուս դեպքում, Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ իր 65-ամյա հոր առողջական խնդիրներով պայմանավորված դիմել են բժշկական կենտրոն, որտեղ իրականացված հետազոտության արդյունքում վերջինիս մոտ ախտորոշվել է սուր ինֆարկտ և ցուցվել է սրտի անոթի ստենտավորում: Բժշկական կենտրոնում հայտնել են, որ բուժօգնությունը չի կարող իրականացվել պետական պատվերի շրջանակներում, քանի որ բուժառուն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված չէ: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը վիրահատությունը պետական պատվերի շրջանակներում իրականացնելու հարցում:

Տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում ստացված տվյալները ցույց են տալիս, որ 2024 թվականին խնդրի վերաբերյալ բողոքներ ստացել է նաև Առողջապահության նախարարությունը: Այսպես, ըստ նախարարության ներկայացրած տեղեկատվության՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունք չունեցող և սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման ծառայության կարիք ունեցող և վճարման հնարավորություն չունեցող անձանց կողմից 2024 թվականի ընթացքում ստացվել է թվով 64 բողոք:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու տարում ստացված բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ բժշկական օգնության ծառայությունների մատչելիությունն ապահովելու տեսանկյունից կարևոր է առողջապահական համակարգի արդյունավետությունը բարձրացնել՝ ոլորտին բավարար ու շարունակական ֆինանսական հատկացումներ տրամադրելով: Պաշտպանը ընդգծում է նաև, որ առողջապահական համակարգերում ֆինանսական միջոցների հատկացումների արդյունավետությունը, ի թիվս այլնի, պայմանավորված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների գործունեության թափանցիկությամբ, բուժառուների առջև բարենպաստ և հաշվետվողական գործելաոճով:

Նկատի ունենալով այն, որ Պաշտպանի նախորդ տարիների հաղորդումների շրջանակներում ամփոփվել և մանրամասն ներկայացվել են առողջապահական ոլորտում արձանագրված մարդու իրավունքների խնդիրների առնչությամբ միջազգային իրավական փաստաթղթերը, միջազգային դատական ատյանների պրակտիկան, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի Հայաստան կատարած այցի արդյունքում

կազմված զեկույցում տեղ գտած դիտարկումները, ինչպես նաև միջազգային իրավունքի այլ աղբյուրները, ուստի նպատակահարմար չենք համարում սույն պարագրաֆի շրջանակում կրկին անդրադառնալ դրանց[592]:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ նախորդ տարեկան հաղորդման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, բարձրացրել էր Հայաստանի Հանրապետության կողմից «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիան (Օվիեդոյի կոնվենցիա) վավերացնելու կարևորության հարցը՝ նշելով, որ Օվիեդոյի կոնվենցիան միակ իրավաբանորեն պարտադիր միջազգային փաստաթուղթն է, որը սահմանում է կիրառելի օրենսդրական շրջանակ և՛ ամենօրյա բժշկական պրակտիկայի, և՛ կենսաբժշկության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրման համար: Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված է, որ կողմերը, հաշվի առնելով առողջապահական կարիքները և մատչելի ռեսուրսները, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում իրենց իրավազորության տարածքում պատշաճ որակի առողջապահական ծառայությունների հավասար մատչելիություն ապահովելու համար:

Այս առումով, իբրև դրական առաջընթաց պետք է գնահատել Առողջապահության նախարարության ներկայացրած այն տեղեկատվությունը, որ 2024 թվականին մայիսի 16-ին ՀՀ արտաքին գործերի նախարարը ստորագրել է Օվիեդոյի կոնվենցիան:

Պաշտպանն իր 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակում բուժօգնության ծառայությունների մատչելիության ապահովման խնդրի կարգավորման համար առաջարկել էր նաև *մշակել և իրացնել առողջապահության ոլորտում անհավասարությունը նվազեցնելու համալիր քաղաքականություն, որով կապահովվի առողջապահական ծառայությունների ֆինանսական մատչելիությունն՝ անկախ սոցիալական վիճակից:*

Հարկ է նշել, որ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման առաջարկությունների կատարման շրջանակում 2024 թվականի ընթացքում Առողջապահության նախարարություն ուղղված հարցմանն ի պատասխան, մասնավորապես, ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ ՀՀ կառավարության 02.02.2023 թվականի թիվ 133-Լ որոշմամբ հաստատվել է Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգը:

Տեղեկացրել են նաև, որ «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» օրենքի և հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի հանձնարարականով ևս մեկ անգամ ներկայացվել է հանրային քննարկման և Ֆինանսների նախարարության կարծիքին: Կառավարության 27.12.2024 թվականի թիվ 2093-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն Կառավարության 04.03.2004 թվականի թիվ 318-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք

---

[592] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 314-317, 259-264, 143-149):

ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկ»-ում և սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ներառվել են նաև «65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք՝ միայն ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների մասով»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը կարևորում է բարձրացված խնդրի լուծման նպատակով նախարարության կողմից գործադրված ջանքերը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ անձանց առողջության պահպանման իրավունքի առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է արագացնել համապատասխան իրավական դաշտի ստեղծման (օրենսդրական փոփոխությունների կատարման) գործընթացը՝ հնարավոր սեղմ ժամկետում ավարտին հասցնելով Առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրումը:

3. Շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգերի բացակայության խնդիր

Պաշտպանը 2023 թվականի հաղորդման շրջանակում[593] առաջին անգամ բարձրացրել էր շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանության դեպքերի կանխարգելման խնդիրը: Մասնավորապես, նախորդ տարեկան հաղորդման մեջ մտահոգիչ համարելով գրանցված ինքնասպանության դեպքերի ցուցանիշը[594]՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նշել էր, որ շուրջօրյա խնամքի կենտրոններում այս դեպքերի կանխարգելման խնդրին համակողմանի լուծում տալու համար ներկայում առկա չէ հստակ կառուցակարգ *(օրինակ՝ ռազմավարություն):* Մինչդեռ, նշված ոլորտում համակարգված և արդյունավետ քաղաքականության որդեգրումն ու դրա հետևողական իրականացումը կարող է կարևոր նշանակություն ունենալ ինքնասպանությունների կանխարգելման հարցում:

Պաշտպանն ընդգծել էր նաև, որ նշված խնդրի լուծմանն ուղղված գործնական բավարար քայլերի, նման դեպքերի կանխարգելմանն ուղղված համապատասխան կազմակերպական մեխանիզմների առկայությունը, ի թիվս այլնի, անհրաժեշտ է նաև այդ հաստատությունների շահառուների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Ռազմավարության իրավական կարգավորման առարկա կարող են դառնալ օրինակ՝ շուրջօրյա խնամքի կենտրոններում արձանագրված ինքնասպանության դեպքերի հիմքում ընկած հանգամանքների (պատճառների) ու նպաստող գործոնների գնահատման, շուրջօրյա խնամքի կենտրոնում ինքնասպանության դեպքերի

---

[593] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 162-165:

[594] Այսպես, ըստ ԱՍՀՆ-ի տրամադրած տեղեկությունների՝ նախարարության համակարգում գործում են տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի 4 կենտրոններ: Տրամադրված տվյալների համաձայն՝ 2020-2023 թվականներին միայն «Երևանի № 1 տուն-ինտերնատ»-ում է արձանագրվել ինքնասպանության 4 դեպք: Ընդ որում, նշված 4 դեպքերից 1-ը տեղի է ունեցել 2020 թվականին, 2-ը՝ 2022 թվականին, 1-ը՝ 2023 թվականին:

կանխարգելման համալիր ծրագրի մշակման և իրականացման հետ կապված հարցերը:

Դրա հետ մեկտեղ, ինքնասպանության ռիսկի խմբին դասվող շահառուներին կյանքից զրկելու միջոցներին *(օրինակ՝ երկարացման լար, պարան, կոշկաքուղեր, սավան, գոտի և այլն)* անհրաժեշտ ժամանակահատվածով հասանելիությունը սահմանափակելու օրենսդրական հնարավորության նախատեսման հետ կապված հարցը նույնպես կարող է դառնալ ռազմավարության իրավակարգավորման առարկա[595]:

Արդյունքում, խնդրին համակողմանի լուծում տալու նպատակով *Պաշտպանը, ի թիվս այլնի, առաջարկել էր մշակել և պատշաճ իրացնել ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգեր (օրինակ՝ ռազմավարություն):* Առաջարկի կատարման վիճակի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական մշտադիտարկում, որի շրջանակում 2024 թվականին ԱՍՀՆ հասցեագրված գրությամբ Պաշտպանը, ի թիվս այլնի, բարձրացրել էր նաև այս հարցը:

Նախարարությունն իր պատասխանում նշել է միայն, որ շուրջօրյա խնամքի հաստատություններում ինքնասպանության դեպքերի կանխարգելման նպատակով բազմամասնագիտական խումբը *(հոգեբան, սոցիալական աշխատող, աշխատանքային թերապիայի մասնագետ)* ամենօրյա աշխատանքներ են իրականացնում շահառուների հետ: Այսինքն, նախարարությունը որևէ անդրադարձ չի կատարել այդ խնդրի լուծմանն ուղղված համալիր միջոցներ ձեռնարկելու, առնվազն այն քննարկման առարկա դարձնելու և համանման հարցերի:

Վերոգրյալից բացի, ԱՍՀՆ-ից ստացվել են տվյալներ առ այն, որ 2024 թվականին տարեցների շուրջօրյա խնամքի հաստատություններում *(««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն», ««Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն», ««Ձորակ» շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն, «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ներում)* ինքնասպանության դեպքեր չեն գրանցվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ կատարված առաջարկները՝ Պաշտպանն արձանագրում է, որ խնդրին համակողմանի լուծում տալու նպատակով անհրաժեշտ է՝ մշակել և պատշաճ իրացնել ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգեր (օրինակ՝ ռազմավարություն): Այդ կառուցակարգերով նախատեսվող միջոցառումների իրականացմամբ անհրաժեշտ է ապահովել համակարգված, թիրախային և արդյունավետ քաղաքականություն շուրջօրյա խնամքի կենտրոններում ինքնասպանության դեպքերի կանխարգելման ուղղությամբ, ստեղծել համապատասխան իրավակազմակերպական նախադրյալներ նման դեպքերի հայտնաբերման, գնահատման համար, ապահովել անձնակազմի և շահառուների պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը:

---

[595] Ըստ «Երևանի № 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տրամադրած տեղեկությունների՝ ինքնասպանությունների հիշյալ 4 դեպքերից 3-ն իրականացվել են երկարացման լարով կախվելու միջոցով և միայն 1-ն է կատարվել այլ եղանակով՝ երրորդ հարկի սենյակից ցած նետվելու միջոցով:

4. Աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցման հետ կապված խնդիր

2024 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, ինչպես նաև սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ Հայաստանի տարբեր բնակավայրերում, հատկապես՝ մայրաքաղաքում տեղակայված հանրային սննդի, զվարճանքի և ժամանցի կետերում հնչող բարձր երաժշտության, ինչպես նաև աղմուկով ուղեկցվող շինարարական աշխատանքների վերաբերյալ խնդիրներն ավելի են սրվել:

Այսպես, օրինակ՝ Երևան քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի շենքերից մեկի բնակիչները Պաշտպանին հասցեագրված խմբային բողոքով հայտնել են, որ իրենց շենքի հարևանությամբ գործունեություն ծավալող ռեստորանը շրջակայքում միակն է, որի բարձր երաժշտությունը խախտում է գիշերային անդորրը:

Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ իրենց շենքի հարևանությամբ գործում են նաև այլ ռեստորաններ և սրճարաններ, որոնք պահպանում են համակեցության կանոնները և բարձրագոչ երաժշտությամբ չեն խաթարում ինչպես շենքի բնակիչների, այնպես էլ հարակից օբյեկտների այցելուների հանգիստը:

Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ բարձրացված խնդիրը կարգավորելու և խախտումները վերացնելու նպատակով բազմիցս դիմել են այդ ռեստորանի ղեկավարությանը, ինչպես նաև Ոստիկանություն, սակայն արդյունքի չեն հասել:

Բողոք ներկայացրած անձինք խնդրել են նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն, որ շենքի բնակիչների՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումում բարձրացված հարցը չի քննարկվել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից, և այն ըստ էության կարող է լուծվել այդ մարմնի կողմից, ինչպես նաև առկա է բողոք ներկայացրած անձանց գրավոր համաձայնությունը, հիշյալ շենքի բնակիչների խմբային դիմումը՝ համապատասխան ընթացք տալու համար փոխանցվել է տեսչական մարմին:

Պատասխան գրությամբ՝ տեսչական մարմնից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի 5.3-րդ կետով սահմանված աղյուսակ 3-ի 4-րդ կետով սահմանված պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացվել է զննում և աղմուկի մակարդակի գործիքային չափումներ: ՀՀ ԷՆ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության փորձագետների կողմից Երևան քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի հիշյալ շենքի մի շարք բնակարաններում իրականացված աղմուկի մակարդակի գործիքային չափումների վերաբերյալ 2024 թվականի հունիսի 25-ի թիվ 8/087 փորձագիտական եզրակացությունից պարզ է դարձել, որ 2024 թվականի հունիսի 24-ի՝ ժամը 21:00-ից մինչև ժամը 22:00-ն ընկած

ժամանակահատվածում իրականացված չափման արդյունքում ձայնի համարժեք մակարդակը բնակարանների հյուրասենյակում և ննջասենյակներում ռեստորանի (փակ և բաց սրահների) գործունեության ընթացքում հնչող երաժշտության ժամանակ չի համապատասխանում սանիտարական նորմերի 5.3-րդ կետով սահմանված աղյուսակ 3-ի 4-րդ կետի պահանջներին:

Նշվել է նաև, որ տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի պետի կողմից 2024 թվականի հունիսի 28-ին ընկերությանն՝ ի դեմս տնօրենի, տրվել է կարգադրագիր՝ վերոնշյալ խախտումները վերացնելու նպատակով:

Բողոքի ընթացքի նկատմամբ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է հետագա հետևողական աշխատանք և կարգադրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով լրացուցիչ գրություն է հասցեագրել տեսչական մարմին: Պատասխան գրությամբ՝ տեսչական մարմնից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ տեսչական մարմնում 2024 թվականի հուլիսի 15-ին հարուցվել է վարչական վարույթ՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարված լինելը պարզելու նպատակով: Նշվել է նաև, որ հարուցված վարչական վարույթի շրջանակում նախատեսված է իրականացնել զննում և աղմուկի մակարդակի գործիքային չափումներ:

Վերոգրյալից բացի, գրություն է հասցեագրվել նաև Երևանի քաղաքապետարան: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների կողմից կատարված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ ռեստորանում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքը, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպումը և իրացումն իրականացվել է առանց համապատասխան թույլտվությունների, որի համար վերջինիս նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի համաձայն՝ ծառայության կողմից 2024 թվականի ապրիլի 16-ին կազմվել են համապատասխանաբար թիվ Ա-006914 և Ա-006913 արձանագրությունները:

Հայտնել են նաև, որ առանց վերը նշված թույլտվությունների գործունեություն իրականացնելու համար նույն օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի հատկանիշներով 2024 թվականի փետրվարի 2-ին, հունիսի 4-ին և հուլիսի 17-ին Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի և ծառայությունների բաժնի աշխատակիցների կողմից կազմվել են համապատասխանաբար թիվ Ա-005327, Ա-005328, Ա-005392, Ա-005391, Ա-005398, Ա-005397 արձանագրությունները:

Միաժամանակ, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ վերոհիշյալ հասցեին կից երաժշտական գործիքների օգտագործմամբ՝ խախտվել են Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ին հ.849-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները, որի համար ծառայության կողմից ընկերության տնօրենի նկատմամբ 2024 թվականի հուլիսի 4-ին և 13-ին նշված օրենսգրքի 180.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմվել են թիվ Ա-007767 և Ա-008019 արձանագրությունները:

Բողոքի շրջանակում Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացրել են, որ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կենտրոնականի բաժնի աշխատակիցների կողմից կատարված

ստուգողական և կանխարգելիչ միջոցառումների արդյունքում Ալեք Մանուկյան փողոցում գտնվող հիշյալ ռեստորանի սեփականատերը պարտավորվել է խստորեն պահպանել համակեցության կանոնները:

Նկատի ունենալով ընթացիկ տարում ստացված բողոքների աճը՝ Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ տեսչական մարմնում 2024 թվականի ընթացքում բազմաբնակարան շենքերի հարակից տարածքներում հանրային սննդի ծառայություն կազմակերպելու հետևանքով շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոնների խախտման (աղմուկի բարձր մակարդակի) վերաբերյալ ստացվել է 106 դիմում-բողոք, որոնց հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ (82-ը դիմումի հիմքով, 24-ը նախաձեռնությամբ), իրականացվել են զննումներ, կատարվել են աղմուկի մակարդակի վերաբերյալ գործիքային չափումներ:

Նշվել է նաև, որ գործիքային չափումների արդյունքում ձայնի համարժեք և առավելագույն մակարդակները գերազանցելու դեպքում տնտեսավարողներին տրվել են կարգադրագրեր: Խախտում կատարած տնտեսավարողները ենթարկվել են վարչական տույժի (տուգանքի): Իսկ բոլոր այն դեպքերում, երբ գործիքային չափումների արդյունքում ձայնի համարժեք և առավելագույն մակարդակները չեն գերազանցել թույլատրելի նորմերի սահմանները վարչական վարույթները կարճվել են՝ վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

Պաշտպանին ներկայացված բազմաթիվ այլ բանավոր և գրավոր բողոքներով անձիք իրենց դժգոհությունն են արտահայտել նաև շինարարական ու քանդման աշխատանքների հետևանքով առաջացող բարձր աղմուկի և շինաշխատանքները ոչ աշխատանքային ու հանգստյան օրերին իրականացնելու արդյունքում՝ իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Ազատության պողոտայի շենքերից մեկի բնակիչները բարձրացրել են իրենց շենքի հարակից տարածքում իրականացվող բնակելի շենքի կառուցապատման հետևանքով առաջացած բարձր աղմուկի վերաբերյալ հարց: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ վերոնշյալ շինարարական աշխատանքներն իրականացվում են նաև ոչ աշխատանքային օրերին՝ սկսած ժամը 07:50-ից: Բողոք ներկայացրած անձինք Պաշտպանի աշխատակազմ են ներկայացրել նաև տեսանյութ:

Բողոքի շրջանակում Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ազատության պողոտայի նշված վայրում կատարված տեղատեսության արդյունքում պարզվել է, որ կառուցապատող ընկերության կողմից առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի (շինարարության թույլտվությունը կասեցված լինելու պայմաններում) իրականացվում են փոսորակի փորման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ ընկերության տնօրենի նկատմամբ վերը նշված վարչության աշխատակիցների կողմից 2024 թվականի սեպտեմբերի 4-ին վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմվել է Ա.008426 արձանագրությունը:

Առավել մտահոգիչ է այն, որ որոշ դեպքերում ներկայացված դիմում-բողոքներում բարձրացվում է այն հարցը, որ այդ աշխատանքների հետևանքով խաթարվում է նաև հարևանությամբ գտնվող դպրոցներում դասապրոցեսների բնականոն ընթացքը: Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կրթության իրավունքի պատշաճ իրացումը երեխայի՝ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքն է, որի իրացման ապահովման առաջնային և կարևորագույն օղակներից են հանրակրթական ուսումնական հաստատությունները:

Այս առթիվ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ, մասնավորապես, ընդգծելով, որ ճանաչելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը՝ պետության ջանքերը պետք է նպատակաուղղված լինեն յուրաքանչյուր երեխայի կրթության պատշաճ իրացման ապահովմանը: Պաշտպանն արձանագրել է նաև, որ քննարկվող ամբողջ ոլորտում պետության կողմից կա՛մ մշակված չեն գործիքակազմեր, կա՛մ դրանք չեն կիրառվում անհրաժեշտ և բավարար մեթոդաբանությամբ՝ արդյունքում հանգեցնելով քաղաքացիների տարատեսակ իրավունքների խախտումների: Նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է հրատապ քայլեր ձեռնարկել այդ խնդրի լուծման ուղղությամբ[596]:

Մեկ այլ հրապարակային հայտարարությամբ, Պաշտպանն անընդունելի է համարել աղմուկի միջազգային չափանիշներին չհամապատասխանող անթույլատրելի մակարդակը, հատկապես ուշ երեկոյան և գիշերային ժամերին: Պաշտպանն ընդգծել է նաև, որ խիստ կարևոր է պահպանել համակեցության կանոնները, *իսկ այս ոլորտում անձանց հիմնարար, այդ թվում՝ հանգստի, առողջության պահպանման և այլ իրավունքների երաշխավորման պարտականությունը կրում է պետությունը:*

Նշել է նաև, որ միջազգային չափանիշներին չհամապատասխանող պայմաններում առկա մշտական կամ պարբերական բնույթ կրող աղմուկը բացասաբար է անդրադառնում մարդկանց առողջական վիճակի վրա, խաթարում է նրանց հանգստի համար անհրաժեշտ միջավայրը: Հարկ է նկատի ունենալ, որ մեր շրջապատում կան առողջական խնդիրներ և հաշմանդամություն ունեցող անձինք, տարեց մարդիկ, երեխաներ, ինչպես նաև բժշկական հաստատություններ, որոնց բնականոն գործունեության համար, հատկապես ուշ երեկոյան և գիշերային ժամերին, լռությունը պահպանելն ունի կենսական նշանակություն[597]:

Հաշվի առնելով այն, որ աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցման հետ կապված հարցերը հիմնականում վերաբերում են մասնավոր ոլորտին, իսկ Պաշտպանը մասնավոր կազմակերպությունների դեմ բողոքներ քննարկելու իրավասություն չունի, ՄԻՊ աշխատակազմ ստացվող գրավոր բողոքներն ուսումնասիրվում և բողոք ներկայացրած անձանց գրավոր համաձայնությամբ

---

[596] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3110, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[597] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3026, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

փոխանցվում են իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին: Դրանց ընթացքի նկատմամբ իրականացվում է հետագա հետևողական աշխատանք:

Բանավոր բողոքների դեպքում անձանց տրամադրվում է իրավախորհրդատվություն՝ իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ:

Պաշտպանի իրավասության տիրույթում գտնվող բողոքների ուսումնասիրության արդյունքում նախաձեռնվում են քննարկման ընթացակարգեր և պարզաբանումներ են պահանջվում իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից: Այս համատեքստում հարկ է նկատել, որ խնդրի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ 2024 թվականին ստացված խմբային բողոքի քննարկման արդյունքում պարզվել է, որ դրանում բարձրացված հարցը ստացել է լուծում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով հաշմանդամություն ունեցող անձը հայտնել է, որ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ բնակավայրում տեղակայված հակակարկտային կայանի գործարկման ժամանակ առաջանում է բարձր աղմուկ, որից ցնցվում են դրա հարևանությամբ գտնվող տները, այդ թվում՝ իր վթարային տունը: Հավելել է, որ կայանի գործարկման ժամանակ արձակվող բարձր աղմուկն իր մոտ առաջացնում է ուժեղ գլխացավեր:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ հակակարկտային կայանի տարածքում հիմնականում բնակվում են, տարեցներ (անկողնային հիվանդներ) և երեխաներ: Ըստ բողոքի՝ կայանի աշխատանքն անհանգստություն է պատճառում վերջիններիս: Հաջորդիվ, նույն հարցի վերաբերյալ Պաշտպանին ներկայացվել է նաև խմբային բողոք բնակավայրի մյուս բնակիչների կողմից, որով վերջիններս խնդրել են Պաշտպանի աջակցությունն հիշյալ բնակավայրում տեղակայված հակակարկտային կայանի տեղափոխման հարցում:

Նշված խմբային բողոքը համապատասխան ընթացք տալու համար փոխանցվել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, որտեղից ՄԻՊ աշխատակազմ ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ բնակավայրում տեղակայված հակակարկտային կայանի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի գրության հիման վրա՝ տեսչական մարմնում 2024 նոյեմբերի 6-ին հարուցվել է վարչական վարույթ: Նշվել է նաև, որ նախքան զննում իրականացնելը՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ին, բողոք ներկայացրած անձը և այլ անձինք դիմում են ներկայացրել տեսչական մարմին, որով, մասնավորապես, հայտնել են, որ իրենց դիմումում ներկայացված պահանջը կատարվել է՝ հակակարկտային կայանը հեռացվել է 300 մետրով և դրա առաջացրած աղմուկն այլևս անհանգստացնող չէ:

Ելնելով վերոգրյալից, տեսչական մարմինը տեղեկացրել է, որ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը, տեսչական մարմնում 2024 նոյեմբերի 6-ին հարուցված վարչական վարույթը 2024 թվականի նոյեմբերի 21-ին կարճվել է՝ իրավիճակի փոփոխման հիմքով: Նշել է նաև, որ որոշումը ծանուցվել է վարույթի մասնակիցներին:

Այնուհետև, Պաշտպանին ներկայացված լրացուցիչ դիմումով բնակիչը հաստատել է հակակարկտային կայանի տեղափոխման հանգամանքը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ խիստ մտահոգիչ է այն, որ տևական ժամանակ Պաշտպանի կողմից բարձրացվող և լրջագույն բացասական հետևանքների հանգեցնող խնդիրներին դեռևս լուծում չի տրվում: Պաշտպանը ևս մեկ անգամ հրավիրում է իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրությունը վերոգրյալ խնդիրներին և կոչ անում այլ պետությունների հաջողված փորձի հաշվառմամբ՝ մշակել դրանց հաղթահարման պատշաճ կառուցակարգեր (որոնք կապահովեն բնակչության հիմնարար իրավունքները) և հետևողականորեն իրացնել դրանք: Ընդ որում, այդ կառուցակարգերը կարող են վերաբերել ինչպես անհրաժեշտ օրենսդրական, այնպես էլ այլ փոփոխությունների իրականացմանը: Պաշտպանը հետևողական է լինելու վերոգրյալ խնդիրների համակարգային լուծումների մշակման հարցում:

5. Հանրային տրանսպորտում հրդեհային անվտանգության ապահովման խնդիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի հունվարի 2-ին, ժամը 11:35-ին Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ «Եռաբլուր» զինվորական պանթեոնից Մալաթիայի փողոց տանող հատվածում այրվում է տրոլեյբուս:

Պարզվել է նաև, որ Սեբաստիայի և Շահումյան 4-րդ փողոցների խաչմերուկում թիվ 15 երթուղին սպասարկող տրոլեյբուսում հրդեհ է բռնկվել, այնուհետև վերջինս բախվել է կայանած «Skoda» մակնիշի ավտոմեքենային. տուժածներ չկան:

Ըստ հրապարակման՝ հրդեհը մեկուսացվել է ժամը 12:01-ին, մարվել՝ 12:26-ին: Այրվել են տրոլեյբուսը, գովազդային վահանակի պաստառը՝ մոտ 1 քմ, ջերմահարվել հարակից հագուստի խանութի պատի արտաքին երեսպատումը (մոտ 4 քմ) և խաչմերուկի մոտ տեղադրված տեսախցիկը[598]:

Հաշվի առնելով այն, որ պատահարի հետևանքով վտանգվել են մարդկանց կյանքի, առողջության պահպանման, ինչպես նաև այլ իրավունքները՝ Պաշտպանը սեփական նախաձեռնությամբ սկսել է

[598] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/rescueservicera/posts/328726280123481, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ուսումնասիրության ընթացակարգ: Դեպքի վերաբերյալ առավել մանրամասն ու ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություններ է հասցեագրել իրավասու մարմիններին: Դեպքի առթիվ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ՝ հատուկ ընդգծելով, որ տեղի ունեցածը պետք է մանրամասն քննության առարկա դարձվի ոչ միայն պատասխանատուներին բացահայտելու և պատասխանատվության կանչելու, այլ նաև ապագայում նման պատահարները բացառելու համար[599]:

Սկսված ուսումնասիրության շրջանակում Պաշտպանը հետևյալ հարցադրումներն է ուղղել Երևանի քաղաքապետարանին.

1. երթուղի դուրս գալուց առաջ տրոլեյբուսի տեխնիկական վիճակի զննում իրականացվե՞լ է, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա ի՞նչ հիմնավորմամբ: Եթե այո, ապա դրա արդյունքում շարժակազմի վնասվածքներ կամ անսարքություններ հայտնաբերվել են, թե՞ ոչ.
2. արդյո՞ք տրոլեյբուսը կահավորված է եղել հակահրդեհային միջոցներով, թե՞ ոչ *(օրինակ՝ կրակմարիչով, հրշեջ ազդասարքով և այլն)*.
3. արդյո՞ք տրոլեյբուսի վարորդի համար կազմակերպվել են դասընթացներ՝ հրդեհի ժամանակ ազդարարելու, ուղևորների տարհանումը կազմակերպելու, հրդեհաշիջման համար ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ.
4. Երևանի քաղաքապետարանի իրավասության շրջանակում ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում հրդեհային անվտանգության պահպանման և հրդեհների կանխման ուղղությամբ.
5. Երևանի քաղաքապետարանի կողմից ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում հրդեհային անվտանգության, այդ թվում՝ ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում հրդեհային անվտանգության, ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպման ուղղությամբ:

Ի պատասխան նշված հարցադրումների՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ հ. 15 երթուղին սպասարկող տրոլեյբուսում բռնկված հրդեհի դեպքը քննարկվել է ինչպես Երևանի քաղաքապետարանում, այնպես էլ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ում:

Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն իրականացնում է շարժակազմի (տրոլեյբուսների) ամենօրյա տեխնիկական զննման աշխատանքներ, ինչ վերաբերում է կրակմարիչների առկայությանը, ապա ընկերության բոլոր տրոլեյբուսներում դրանք առկա են: Նշել են նաև, որ կոնկրետ այս դեպքում վարորդը փորձել է կրակմարիչով հանգցնել կրակը, սակայն այն տարածվել է շատ արագ, տրոլեյբուսի այրվող հատվածը եղել է անհասանելի, որի պատճառով՝ նա չի կարողացել կասեցնել հրդեհը:

---

[599] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2829, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հավելել են նաև, որ ընկերության կողմից տրոլեյբուսի բոլոր վարորդների հետ անց են կացվում հրահանգավորումներ՝ իրազեկելով տարբեր իրավիճակներում նրանց պարտականություններն ու գործողությունների հերթականությունը:

Երևանի քաղաքապետարանը պատասխան գրությամբ հայտնել է նաև, որ ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում առկա շարժակազմերը (ավտոբուս, տրոլեյբուս) կահավորված են կրակմարիչներով: Տրված հանձնարարականի համաձայն՝ ներկայում ուսումնասիրվում է կրակմարիչների տեխնիկական վիճակը և պիտանելիության ժամկետները: Հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ դրանք անհապաղ վերացնելու և հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու համար: Միաժամանակ, հանձնարարված է Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին հատուկ ուշադրություն դարձնելու տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հրդեհային անվտանգության հարցերին և մշտապես ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր՝ հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու և հրդեհները կանխելու ուղղությամբ:

Պաշտպանի աշխատակազմում ի գիտություն են ընդունվել Երևանի քաղաքապետարանի տրամադրած պարզաբանումները: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ նշված գրությամբ անդրադարձ չի կատարվել Երևանի քաղաքապետարանի կողմից հրդեհային անվտանգության, այդ թվում՝ ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ հարցադրմանը՝ Պաշտպանը կրկին գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան:

Ի պատասխան նշված գրության՝ Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ 2024 թվականի հունվարի 2-ին Երևան քաղաքի Սեբաստիայի և Շահումյան 4-րդ փողոցների խաչմերուկում հ. 15 երթուղին սպասարկող տրոլեյբուսում բռնկված հրդեհի դեպքին առնչվող, հասարակական վերահսկողության կազմակերպման հարցը քննարկվել է Երևանի քաղաքապետարանում և «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ում: Հրդեհային անվտանգության ապահովման նպատակով «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ում կատարվել է մանրազնին գույքագրում, ձեռք են բերվել կրակմարիչներ և բոլոր տրոլեյբուսներն ապահովվել են անհրաժեշտ քանակությամբ կրակմարիչներով: Կրակմարիչներով և հակահրդեհային գործիքներով կահավորվել են նաև ընկերության բոլոր ենթակառույցները և դրանք գտնվում են համապատասխան աշխատակիցների մշտական հսկողության տակ:

Երևանի քաղաքապետարանի նման մոտեցումը, անշուշտ, ողջունելի է: Այնուհանդերձ, Երևանի քաղաքապետարանը, ինչպես նաև տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող իրավասու պետական մարմինը պետք է շարունակական ջանքեր գործադրեն ուղևորային փոխադրման անվտանգությունն ապահովելու, տրանսպորտում հակահրդեհային կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու և հրդեհների հետևանքները վերացնելու ուղղությամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ դեռևս շարունակվում է չլուծված մնալ հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ (այդ թվում՝ հանրային տրանսպորտում) հասարակական վերահսկողության բացակայության խնդիրը:

Մինչդեռ, կարծում ենք, որ հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության համապատասխան կառուցակարգերի գործարկումը կբարձրացնի հրդեհային անվտանգության ապահովման ոլորտում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, թույլ կտա իրականացնել պարբերական վերլուծություններ հրդեհային անվտանգության ապահովման առանձին լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ, իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնել առաջարկներ՝ հրդեհային անվտանգության միջոցառումների անցկացման վերաբերյալ և այլն:

Այս համատեքստում, կարծում ենք, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ (այդ թվում՝ հանրային տրանսպորտում) հասարակական վերահսկողության համապատասխան կառուցակարգերի գործարկման հարցը:

Հարկ է նաև նշել, որ «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ *հրդեհային անվտանգության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների կամավոր լիազորություններն են՝ (…) հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է շարունակական ջանքեր գործադրեն ուղևորների անվտանգ փոխադրման իրավունքն ապահովելու ուղղությամբ:

6. Պալիատիվ բուժօգնությունը

Պալիատիվ բուժօգնության ամբողջական ներդրման հետ կապված հարցը 2024 թվականի ընթացքում ևս գտնվել է Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում արձանագրվել և ամփոփվել են ՀՀ-ում պալիատիվ բուժօգնության տրամադրմանն առնչվող խնդիրներ, որոնք 2024 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ: Վերջիններս են՝

➔ առողջապահության ազգային քաղաքականության և համակարգերի մեջ պարտադիր պալիատիվ խնամք ներառելու անհրաժեշտությունը,

➔ առողջապահության ոլորտի մասնագետների համար պալիատիվ խնամքի վերաբերյալ ուսուցման, վերապատրաստումների անցկացման անհրաժեշտությունը,

➔ բնակչության համար օփիոիդային ցավազրկողների բավարար քանակի ապահովումը և համապատասխանեցումը հիմնական դեղերի հասանելիության միջազգային կոնվենցիաներին,

➔ պալիատիվ բուժօգնություն իրականացնելիս մարդկային ռեսուրսների հզորացման և ընդլայնման, ներառյալ՝ առողջապահական համակարգում աշխատողների վերապատրաստման, հիմնական ուսումնական ծրագրերում պալիատիվ խնամքի վերաբերյալ դասընթացի ներդրման, ինչպես նաև կամավորներին և հանրությանը կրթելու անհրաժեշտությունը,

➔ հասարակության և բուժաշխատողների շրջանում պալիատիվ բուժօգնության, տրամադրվող խնամքի վերաբերյալ իրազեկվածության պակասը,

➔ պալիատիվ խնամքի՝ միայն կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտներին տրամադրման խնդիրները,

➔ Հայաստանի Հանրապետությունում պալիատիվ բուժօգնության՝ ոչ բոլորին և ոչ բոլոր մարզերում հասանելիությունը[600]:

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին դիմում է հասցեագրվել փաստաբանի կողմից, ում պաշտպանյալի առողջական վիճակը, ըստ դիմումում ներկայացված պնդումների, կալանավայրում պատժի կրման հետ անհամատեղելի է եղել: Դիմումով փաստաբանը խնդրել է Պաշտպանի աջակցությունը անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից դատապարտյալի ֆունկցիոնալության գնահատման գործընթացի արագ իրականացման, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի շրջանակներում «Խնամի» պալիատիվ բուժօգնության կենտրոնում վերջինիս խնամքը կազմակերպելու հարցում: Դատապարտյալի խնամքը երկար ժամանակ կազմակերպվել է «Խնամի» պալիատիվ բուժօգնության կենտրոնում դատապարտյալի միջոցների հաշվին, սակայն վճարումներ կատարելու հնարավորությունը որոշ ժամանակ անց չի եղել, իսկ պետպատվերի շրջանակներում պալիատիվ խնամք քաղաքացիական մասնագիտացված կազմակերպությունում հնարավոր է իրականացնել անձի ֆունկցիոնալության գնահատման եզրակացության հիման վրա:

Պալիատիվ խնամքն առողջապահական ծառայությունների կարևոր բաղադրիչներից մեկն է: ԱՀԿ գնահատականների համաձայն՝ ամեն տարի աշխարհում պալիատիվ խնամքի կարիք ունեն ավելի քան 56.8 միլիոն մարդ, որոնց 78%-ը բնակվում են ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում: Կանխատեսվում է, որ մինչև 2060 թվականը պալիատիվ օգնության կարիք ունեցող անձանց թիվը կկրկնապատկվի՝ պայմանավորված բնակչության ծերացմամբ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածության աճով: Պալիատիվ խնամքի ցածր հասանելիության խնդիրը արդիական է համարել նաև Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, որը փաստել է, որ տարվա ընթացքում ՀՀ-ում 27000-28000 քաղաքացի է մահանում, և նրանցից 60-70%-ը ամոքիչ խնամքի կարիք ունի, իսկ պալիատիվ խնամքի անհրաժեշտությունն առաջանում է բազմաթիվ հիվանդությունների դեպքում: Մեծահասակների շրջանում հիմնականում ցուցաբերվում է ծանր ընթացք ունեցող սիրտանոթային հիվանդությունների (38.5%), քաղցկեղի (34%), քրոնիկ շնչառական հիվանդությունների (10.3%), դիաբետի (4.6%) դեպքում: Պալիատիվ խնամքի անհրաժեշտություն կարող է լինել նաև երիկամային անբավարարություն, լյարդի քրոնիկ հիվանդություն, ցրված սկլերոզ, Պարկինսոնի

---

[600] Տե՛ս, առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ, էջեր 157-162:

հիվանդություն, ռևմատոիդ արթրիտ, նյարդաբանական հիվանդություններ, դեմենցիա, բնածին խանգարումներ ունեցողների համար[601]:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդգծել է, որ առհասարակ համապատասխան պալիատիվ խնամքի ծառայությունների բացակայությունը ոչ միայն մեծացնում է տառապանքը հիվանդների և ընտանիքների համար, այլև առաջացնում է ավելի մեծ ծախսեր առողջապահական համակարգի համար՝ հանգեցնելով մեծաթիվ անձանց հիվանդանոցներում տեղավորմանը, ինչպես նաև շտապ օգնության թանկարժեք ծառայություններից օգտվելուն: Խորհրդարանական վեհաժողովը կոչ է արել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների համար, ովքեր ունեն պալիատիվ խնամքի կարիք, ձեռնարկել մի շարք միջոցներ՝ պալիատիվ խնամքի ծառայություններն ուժեղացնելու և որակյալ պալիատիվ խնամքի հասանելիությունն ապահովելու համար, որոնցից են ցավի բուժման հասանելիությունը ապահովելը՝ վերացնելով իրավական խոչընդոտները, որոնք սահմանափակում են ցավազրկող դեղամիջոցների հասանելիությունը պալիատիվ խնամքի համատեքստում, լուծել կրթական և վերաբերմունքի խոչընդոտները՝ բարձրացնելով առողջապահական ոլորտի մասնագետների և հանրության շրջանում ցավի համապատասխան և արդյունավետ կառավարման, ներառյալ՝ օփիոիդների վրա հիմնված բուժումների մասին իրազեկվածությունը և այլն[602]:

Առողջապահության համաշխարհային ասամբլեան հորդորել է անդամ պետություններին անհրաժեշտության դեպքում մշակել, ամրապնդել և կիրառել պալիատիվ խնամքի քաղաքականություն, աջակցել առողջապահական համակարգերի համապարփակ հզորացմանը, ներառել պալիատիվ խնամքը որպես շարունակական կրթության անբաժանելի բաղադրիչ և ուսուցում և այլն[603]:

Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում լիցենզավորվել է պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող 36 բժշկական հաստատություն, որոնցից 15 բժշկական հաստատություններում պալիատիվ բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվել են պետական պատվերի շրջանակներում:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ հիվանդանոցային պայմաններում պալիատիվ բժշկական օգնություն ու սպասարկում պետական պատվերի շրջանակներում իրականացվել է միայն Երևան քաղաքի բժշկական հաստատություններում:

Ըստ Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ պալիատիվ բուժօգնության ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

---

601 Հասանելի է https://ysmu.am/norutyunner/paliativ-khnamqn-aroghjapahakan-tsaray/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

602 Հասանելի է https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=25214&lang=en հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

603 Տե՛ս, Առողջապահության համաշխարհային ասամբլեայի WHA67.19 բանաձևը, 2014 թվականի մայիսի 24, հասանելի է https://apps.who.int/gb/ebwha/pdf_files/WHA67/A67_R19-en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

- ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ ուռուցքաբանության ամբիոնի կողմից իրականացվել է «Պալիատիվ խնամք» ՇՄՋ կրեդիտավորված դասընթաց, որին մասնակցել է 7 բժիշկ:
- 2024 թվականին ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ում ստեղծվել և փորձարարական կարգով ներդրվել է մանկական պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային շարժական (մոբիլ) ծառայությունը, որը տրամադրվել է Երևանի և ՀՀ Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերի՝ Երևանից 30 կմ հեռավորության վրա գտնվող համայնքներում հաշվառված և բնակվող երեխաներին՝ նրանց բնակության վայրում, ներառյալ՝ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում:
- Իրականացվել են նաև թեմատիկ իրազեկման աշխատանքներ, մասնավորապես պալիատիվ բուժօգնության ոլորտում հանրային իրազեկմանն ուղղված հաղորդագրություն, հոլովակներ, տեսանյութ և հարցազրույց է պատրաստվել, որոնք տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով և տեղադրվել Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում և սոցիալական էջերում:

Կարևորելով նշված ոլորտում պետության կողմից իրականացված միջոցառումները՝ Պաշտպանն ընդգծում է, որ վերջիններս պետք է լինեն թիրախային և համակարգված, ուղղված լինեն ոլորտում գոյություն ունեցող բոլոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ պատշաճ և բավարար կառուցակարգերի մշակմանն ու իրացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***պալիատիվ բուժօգնություն տրամադրել ոչ միայն կյանքին վտանգ սպառնացող և անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտներին, այլև կենսակերպը սահմանափակող քրոնիկական կամ այլ հիվանդություններ ունեցող բոլոր հիվանդներին,***
- ✓ ***շարունակել ընդլայնել պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում պալիատիվ բուժօգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը՝ ներառելով բոլոր մարզերը,***
- ✓ ***վերացնել իրավական խոչընդոտները, որոնք սահմանափակում են ցավազրկող դեղամիջոցների հասանելիությունը պալիատիվ խնամքի համատեքստում,***
- ✓ ***շարունակել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին հանրային իրազեկվածության աշխատանքները և բուժաշխատողների համար պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ շարունակական կրթական ծրագրերի, վերապատրաստումների իրականացումը՝ ներգրավելով ավելի մեծ թվով բուժաշխատողների:***

ԳԼՈՒԽ 5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ

1.1 Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու խնդիր

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդրին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես անդրադառնում է իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում[604]: Այս առումով մտահոգիչ է այն, որ Պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացվող հարցերին լուծումներ չեն տրվում և համակարգային առումով կենսաթոշակի այս տեսակի հետ կապված հարցերը շարունակում են խնդրահարույց մնալ:

Պաշտպանի աշխատակազմ 2024 թվականին ևս ստացվել է բողոք կենսաթոշակի այս տեսակին վերաբերող խնդրով: Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքով քաղաքացին հայտնել է, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման վերաբերյալ դիմում է ներկայացրել Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոն, սակայն ստացել է մերժում:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ աշխատել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի նախկին «Հակատուբերկուլյոզային դիսպանսերում», այնուհետև, «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲ ընկերության կազմում գտնվող հակապալարախտային բաժանմունքում՝ որպես հերթապահ բուժքույր, իսկ 2012 թվականից՝ Վանաձորի «Ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲ ընկերության հակապալարախտային բաժանմունքում՝ որպես հերթապահ բուժքույր: Դիմողի պնդմամբ՝ շուրջ 35 տարի աշխատել է բացիլակիր, քրոնիկ տուբերկուլյոզով տառապող հիվանդների հետ: Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը պարզաբանումներ ներկայացնելու պահանջով գրություն է հասցեագրել նախարարություն: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ ըստ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 55 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 15 օրացուցային տարին աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում (թիվ 1 ցուցակ), մինչև 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 7 օրացուցային տարի 6 օրացուցային ամիսն աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել է արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

---

[604] Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 84-89, 97-103, 45-48):

Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ թիվ 2 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 59 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 20 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում (թիվ 2 ցուցակ), մինչև 2014 թվականի հունվարի 1-ն առնվազն 10 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Միևնույն ժամանակ, հայտնել են, որ 20.12.1985 թվականին լրացված աշխատանքային գրքույկի գրառումների համաձայն՝ դիմողը 20.12.1985 թվականին ընդունվել է աշխատանքի Վանաձորի հակատուբերկուլոզային դիսպանսերում՝ որպես բուժքույր-վիճակագիր, 01.01.1991 թվականին տեղափոխվել՝ որպես տեղամասային բուժքույր, 17.05.2000 թվականին կրկին տեղափոխվել է ստացիոնար բաժանմունք՝ որպես հերթապահ բուժքույր:

Ըստ աշխատանքային գրքույկի՝ 01.01.2008 թվականին 3 ամիս ժամկետով աշխատանքի է ընդունվել «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲ ընկերության հակապալարախտային բաժանմունք՝ որպես հերթապահ բուժքույր, 01.04.2008 թվականին համարվել է հիմնական աշխատող: «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲ ընկերության 01.01.2012 թվականին վերակազմակերպվելու կապակցությամբ, տեղափոխվել է «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲ ընկերության տուբերկուլյոզային բաժանմունք՝ որպես հերթապահ բուժքույր և 26.12.2019 թվականին՝ ազատվել աշխատանքից:

Նախարարության գրության համաձայն՝ Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 ցուցակի XXI գլխի թիվ 22600000-1754բ ծածկագրով նախատեսված են՝ անմիջականորեն հիվանդներին սպասարկող տուբերկուլյոզային և վարակիչ հիմնարկություններում, բաժանմունքներում, կաբինետներում՝ միջին և կրտսեր բժշկական անձնակազմի աշխատողները, իսկ տեղամասային բուժքույրը նախատեսված չէ:

Բացի այդ, նշել են, որ ՀՀ վարչապետի 1996 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 604 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի սահմանման մասին» անվանացանկում, ՀՀ առողջապահական հիմնարկների միջին և կրտսեր բժշկական պաշտոնների ցանկում, բուժքույր-վիճակագիր պաշտոնը նախատեսված չէ:

Միաժամանակ, տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ դիմողը դիմումին կից ներկայացրել է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից տրված՝ արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթը հաստատող տեղեկանք, որի համաձայն՝ 20.12.1985-26.12.2019թթ. աշխատել է «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲ ընկերության հակապալարախտային բաժանմունքում՝ որպես հերթապահ բուժքույր, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող, թիվ 1 ցուցակի XXI բաժնի թիվ 2260000ա ծածկագրով, սակայն նշված տեղեկանքն առանց հիմքերի է և չի կարող ընդունվել որպես ստաժը հաստատող պատշաճ փաստաթուղթ:

Հավելել են, որ նշված տեղեկանքում գրառված՝ XXI բաժնի թիվ 2260000ա ծածկագիրը վերաբերում է թիվ 2 ցուցակին, այլ ոչ թիվ 1 ցուցակին, միաժամանակ, թիվ 1 ցուցակի XVI գլխի «Առողջապահական հիմնարկներ» բաժնի 12300000-17541 ծածկագրով հաստատված են առողջապահական հիմնարկների աշխատողներ, ովքեր մշտապես և անմիջականորեն աշխատում են աշխատատեղում ռադիում 226-ի ավելի քան 10 միլիկյուրի ակտիվությամբ կամ ճառագայթաթունավորմամբ համարժեք քանակության ճառագայթաակտիվ նյութերով: Ըստ այդմ, բողոք ներկայացրած անձի կողմից զբաղեցրած պաշտոնները նախատեսված չեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների № 1 ցուցակում, ուստի դիմողը արտոնյալ պայմաններով, ըստ թիվ 1 ցուցակի, աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունի, իսկ արտոնյալ պայմաններով (թիվ 2 ցուցակ) աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 59 տարին լրացած անձին, մինչդեռ նրա 59 տարին լրանում է 2024 թվականի փետրվարի 2-ին, ուստի դիմողը 14.03.2023 թվականի դրությամբ, արտոնյալ պայմաններով, ըստ թիվ 1 ցուցակի, աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունի: Միաժամանակ, տեղեկացվել է, որ ըստ թիվ 2 ցուցակի արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման հարցին օրենքով սահմանված կարգով անդրադարձ կկատարվի 59 տարին լրանալուց հետո:

Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ 59 տարին լրանալուց հետո արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման վերաբերյալ դիմում է ներկայացրել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն, որը կրկին մերժվել է: Վերջինս հայտնել է, որ մերժումն այս անգամ պատճառաբանվել է արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթը հաստատող տեղեկանքի հիմքերի բացակայությամբ, որի պայմաններում այն չի կարող ընդունվել որպես ստաժը հաստատող պատշաճ փաստաթուղթ:

Նշվածի հաշվառմամբ՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման խնդրով բողոք ներկայացրած անձը դիմել է դատարան[605]: Դատական գործի ընթացքի նկատմամբ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է հետագա հետևողական աշխատանք, մասնավորապես, ուսումնասիրվել է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում տեղադրված դատական ակտը: Ըստ այդմ, 2024 թվականի հոկտեմբերի 3-ին Վարչական դատարանի կողմից կայացված վճռով դատարանն արձանագրել է, որ այն անձինք, ովքեր ունեն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ և առնվազն 20 օրացուցային տարի աշխատել են ՀՀ կառավարության կողմից հաստատված թիվ 2 ցուցակում ներառված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող պաշտոններում, լրացել է նրանց 59 տարին, ունեն արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակի իրավունք,

[605] Պաշտպանը բողոքը չի քննարկում, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցնում է նաև այն դեպքում, երբ բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անձը դրանում բարձրացված նույն հարցով դիմել է դատարան, առկա է նույն հարցի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ:

որը նշանակվում է մինչև տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

Միաժամանակ, Դատարանը եզրահանգել է, որ ՀՀ կառավարության 12.01.2012 թվականի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների թիվ 2 ցուցակի 21-րդ բաժնում թիվ 22600000-1754բ ծածկագրի տակ ներառված են տուբերկուլյոզային և վարակիչ հիմնարկությունների, բաժանմունքների, կաբինետների այն աշխատողները, որոնք անմիջաբար սպասարկում են հիվանդներին: Ընդ որում, նշանակություն չունի, թե այդ հիմնարկների որ կառուցվածքային ստորաբաժանումում են աշխատում նրանք:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության և գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում Դատարանն արձանագրել է, որ աշխատանքային գրքույկում կատարված գրառումներով հաստատվում է, որ հայցվորն ունի 34 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ և առնվազն 20 օրացուցային տարի աշխատել է ՀՀ կառավարության կողմից հաստատված թիվ 2 ցուցակում ներառված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող պաշտոններում:

Դատարանի գնահատմամբ, այդ աշխատանքը նախատեսված է ՀՀ կառավարության 12.01.2012 թվականի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների թիվ 2 ցուցակի 21-րդ բաժնում թիվ 22600000-1754բ ծածկագրի տակ, որով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք է տրված տուբերկուլյոզային և վարակիչ հիմնարկությունների, բաժանմունքների, կաբինետների այն աշխատողներին, որոնք անմիջաբար սպասարկում են հիվանդներին, իսկ հայցվորի անձնագրով հաստատվում է, որ դեռևս 02.02.2024 թվականին լրացել է նրա 59 տարին:

Դատարանը վճռել է բողոք ներկայացրած անձի հայցը բավարարել և Միասնական սոցիալական ծառայությանը պարտավորեցնել հայցվորին՝ դիմում ներկայացնելու օրվանից՝ 06.02.2024 թվականից, արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակել: Դատական ակտը 2024 թվականի նոյեմբերի 12-ին Միասնական սոցիալական ծառայության կողմից բողոքարկվել է Վերաքննիչ վարչական դատարան:

Արդյունքում ստացվում է՝ եթե անձը նմանատիպ դեպքերում դատարան չդիմի՝ կրելով հավելյալ ֆինանսական բեռ, արտադատական կարգով արդյունքի հասնել չի կարող:

Հաշվի առնելով այն, որ հաշվետու տարվա ընթացքում արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու հետ կապված խնդիրը շարունակել է արդիական մնալ՝ Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ Նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ պարզաբանում է տրամադրվել առ այն, որ գործող իրավակարգավորումներով արդեն իսկ կանոնակարգված են արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելուն առնչվող հարաբերությունները:

Նշել են նաև, որ արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետները, մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները սահմանափակելը նպատակ ունի աստիճանաբար վերացնել կենսաթոշակի այդ տեսակը, ինչը բխում է կենսաթոշակային ապահովության բնագավառում Կառավարության որդեգրած քաղաքականության սկզբունքներից:

Հավելել են, որ Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի թիվ 674-Ն որոշումներով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակների վերանայման անհրաժեշտությունը նպատակահարմար չեն համարում: Նշել են, որ վտանգավոր կամ ծանր պայմաններում աշխատած անձանց առողջության վրա ազդող բացասական հետևանքների համարժեք փոխհատուցումն ապահովելու համար պատշաճ կառուցակարգեր նախատեսելու հարցը անհրաժեշտ է դիտարկել գործատուի կողմից ձեռնարկվող միջոցառումների շրջանակներում:

Ընդ որում, նմանատիպ պատասխան նախարարությունը ներկայացրել է նաև նախորդ տարի: Մինչդեռ, ո՛չ 2024 թվականին, ո՛չ էլ 2023 թվականին ԱՍՀՆ-ի կողմից չի ներկայացվել տեսլական արտոնյալ պայմաններով կենսաթոշակի տեսակի վերացման դեպքում այլընտրանքային մոտեցումների առնչությամբ:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Պաշտպանը, նախորդ տարեկան հաղորդման շրջանակում, կարևորել է երկար տարիներ վտանգավոր կամ ծանր պայմաններում աշխատած անձանց կենսաթոշակային ապահովության ուղղությամբ այնպիսի այլընտրանքային մոտեցումների որդեգրումը, որոնք համապատասխան կլինեն ոլորտին առնչվող միջազգային չափանիշներին[606]*:*

Պաշտպանն ընդգծել է նաև, որ սոցիալական ապահովության քաղաքականության ոլորտում առանցքային է կենսաթոշակի իրավունքին վերաբերելի հարցերի նկատմամբ պետության «բծախնդիր» մոտեցումը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ պետությունը պետք է մշակի և իրացնի պատշաճ կառուցակարգեր՝ վտանգավոր կամ ծանր պայմաններում աշխատած անձանց առողջության վրա ազդող բացասական հետևանքների համարժեք փոխհատուցումն ապահովելու նպատակով:

1.2. Մասնակի կենսաթոշակ նշանակելու խնդիր

2024 թվականին Պաշտպանի աշխատակազմի իրականացրած ուսումնասիրությունները և ստացված դիմում-բողոքների քննարկման արդյունքները վկայում են այն մասին, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրները համակարգային առումով շարունակում են խնդրահարույց մնալ: Մասնակի կենսաթոշակի իրավունքի իրացման խնդիրներին

[606] Այդ չափանիշներին Պաշտպանն անդրադարձել է 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակում (էջեր 47-48):

Պաշտպանը տարիներ շարունակ անդրադարձել է իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում[607]:

Մասնակի կենսաթոշակ նշանակվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է:

Կենսաթոշակի այս տեսակը նշանակվում է նաև թատերական և թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է:

Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները (տե՛ս «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 14-րդ հոդվածը):

Կենսաթոշակի այս տեսակի իրավունքը տվող մասնագիտությունների, պաշտոնների, ինչպես նաև կազմակերպությունների անվանումների ցանկը հաստատված է Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ:

Հարկ է նշել, որ ինչպես նախորդ տարիներին, 2024 թվականին նույնպես մասնակի կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ քաղաքացիների դիմումները Միասնական սոցիալական ծառայության կողմից մերժվել են, քանի որ զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ աշխատել են, Կառավարության հիշյալ որոշման մեջ ներառված չեն:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ դիմել է Միասնական սոցիալական ծառայություն մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցով, սակայն դիմումը մերժվել է՝ մասնագիտական ստաժը չբավարարելու պատճառաբանությամբ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ վերջինս ունի 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 տարին՝ մասնագիտական: Հավելել է, որ աշխատել է քոլեջում որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի, այնուհետև՝ վերահրամանագրման արդյունքում նույն քոլեջում աշխատել է որպես դասախոս, որն էլ մերժման պատճառ է հանդիսացել:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը պարզաբանումներ ներկայացնելու պահանջով գրություն է հասցեագրել նախարարություն: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն, մասնավորապես, այն մասին, որ բողոք ներկայացրած անձը պետական քոլեջում աշխատել է որպես **դասախոս**՝ այդ ժամանակահատվածը վերջինիս մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում հաշվառելու իրավական հիմքերը բացակայում են, քանի որ Կառավարության հիշյալ որոշման թիվ 6 հավելվածով հաստատված՝ «Կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի

---

[607] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 89-94, 103-110, 48-50):

իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների» ցանկով **«դասախոս»** պաշտոնը նախատեսված չէ:

Մինչդեռ, համաձայն «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 3-րդ հոդվածի *(որով սահմանված են նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները)* 1-ին մասի 29-րդ կետի՝ **«դասախոսը»** ՄԿՈՒ (մասնագիտական կրթության և ուսուցման) ***մանկավարժական աշխատող է,*** որը դասապրոցեսի միջոցով ապահովում է ուսանողի (ունկնդրի) կողմից ուսումնառության վերջնարդյունքները յուրացվելու գործընթացը:

Միևնույն ժամանակ, «Հանրակրթության մասին» օրենքի 3-րդ հոդվածի *(որով նույնպես սահմանված են նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները)* 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ **«մանկավարժական աշխատողը»** սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության պահանջները ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակից է:

Այսինքն, վերը նշված հասկացությունների բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ դասախոսը ևս համարվում է ***մանկավարժական աշխատող*** և համարժեք է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նշված *«դասատու», «ուսուցիչ», «մանկավարժ»* հասկացություններին: Ավելին, նշվածը հաստատվել է նաև դատական պրակտիկայում նույնաբովանդակ գործերի շրջանակներում:

Այսպես, օրինակ՝ թիվ ՎԴ5/0093/05/21 վարչական գործի շրջանակներում, դատարանը բավարարելով դիմողի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը մասնակի կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջը, հաստատված է համարել, որ դիմողի աշխատած դասախոսի պաշտոնը, ըստ էության, համապատասխանում է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ սահմանված մանկավարժի պաշտոնի անվանմանը և բովանդակությանը:

Ավելին, Վարչական դատարանը նշել է, որ կենսաթոշակային մարմինը խախտել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 4-րդ հոդվածի դրույթն առ այն, որ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում կենսաթոշակային մարմինը պետք է առաջնորդվի մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը, ինչպես նաև դատական պրակտիկան հիմք ընդունելու մոտեցմամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ մասնակի կենսաթոշակի նշանակումը մերժելու վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացված դիմում-բողոքների քննարկման արդյունքում մի շարք հարցեր 2024 թվականին ստացել են լուծում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցով դիմել է Միասնական սոցիալական ծառայության Ախուրյանի տարածքային կենտրոն, որտեղից իր աշխատանքային գործունեության մասին տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում է կատարվել Հայաստանի ազգային արխիվ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ արխիվից ստացված

տեղեկատվության և Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոցի հրամանագրքերի տվյալների միջև առկա է եղել անհամապատասխանություն, ինչի պատճառով մասնակի կենսաթոշակի նշանակումը մերժվել է: Անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանի կողմից նախարարություն հասցեագրված գրության հիման վրա կատարվել են լրացուցիչ ուսումնասիրություններ, մասնավորապես, համապատասխան հարցումներ են կատարվել Հայաստանի ազգային արխիվ և Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց, որոնց արդյունքներով հաստատվել է Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոցում դիմողի աշխատելու փաստը, ապա նշվածի հաշվառմամբ՝ նշանակվել է մասնակի կենսաթոշակ՝ 55 տարին լրանալու օրվանից:

Հաշվի առնելով 2024 թվականին ստացվող դիմում-բողոքներով բարձրացված խնդրի արդիականությունը՝ Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում քննարկվող խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցմանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրվել է պարզաբանում առ այն, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները: Հավելել են, որ գործող իրավակարգավորումներով արդեն իսկ կանոնակարգված են մասնակի աշխատանքային կենսաթոշակ նշանակելիս մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում 1992-2004 թվականներին առանց սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթի առկայության հաշվառելու հարաբերությունները, ***և լրացուցիչ «մատչելի» կառուցակարգեր մշակելու անհրաժեշտություն չկա,*** քանի որ առկա կարգավորումներով՝ մինչև 2004 թվականը գործնականում մասնակի կենսաթոշակ նշանակվում է աշխատելու մասին փաստաթղթերի հիման վրա, իսկ 2004 թվականից հետո ընկած ժամանակահատվածի համար առկա են անձնավորված տվյալներ:

Մինչդեռ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին տարբեր տարիներին հասցեագրված բողոքների համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ դրա անհրաժեշտությունն իրականում առկա է: Պետք է նկատի ունենալ, որ իրավակիրառ պրակտիկայում առկա յուրաքանչյուր դեպք անհատական է իր բնույթով, ուստի փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությունը պետք է դիտարկել՝ հաշվի առնելով պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպք:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ ինչպես նախորդ տարիներին, 2024 թվականին ևս մասնակի կենսաթոշակի նշանակման մերժման հիմնական պատճառներից է եղել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում բողոք ներկայացրած անձանց կողմից զբաղեցրած պաշտոնի, մասնագիտության կամ կազմակերպության բացակայությունը:

Պաշտպանն արձանագրում է, որ սույն Որոշմամբ թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկը թերի է, ավելին՝ ցանկում ընդգրկված պաշտոններն ու մասնագիտությունները լիազոր

մարմնի կողմից մեկնաբանվում են տառացի ու նեղ ընկալմամբ, իսկ ցանկում չընդգրկված մասնագիտությունների ու պաշտոնների փաստացի բնույթն ու իրականացված գործունեության էությունը հաշվի չի առնվում:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ հիմք ընդունելով դատական պրակտիկան, չտալ Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին տառացի և նեղ մեկնաբանություն,***
- ✓ ***իրավակիրառ պրակտիկայում առկա յուրաքանչյուր դեպք հաշվի առնելով՝ քննարկման առարկա դարձնել հիշյալ որոշման մեջ անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու նպատակահարմարության հարցը,***
- ✓ ***մշակել և իրականացնել մասնակի կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար աշխատանքային ստաժի հավաստման մատչելի կառուցակարգեր:***

1.3 Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիր

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին շարունակել է խնդրահարույց լինել մարդկանց փաստացի աշխատած ժամանակահատվածը կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում չհաշվառելու համակարգային խնդիրը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների հաղորդումներում, այդ թվում՝ 2023 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձել է այդ խնդրին և ներկայացրել դրա լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ[608]:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու նպատակով դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն: Հավելել է, որ 1984-1997 թվականներին աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում չի հաշվառվել՝ Հայաստանի ազգային արխիվում տեղեկությունների բացակայության հիմնավորմամբ: Մինչդեռ, դիմողի պնդմամբ, մինչև 1992 թվականի հունվարի 1-ն աշխատած ժամանակահատվածն անհրաժեշտ էր հաշվարկել աշխատանքային ստաժում, քանի որ դրա վերաբերյալ գրառումներն առկա են իր աշխատանքային գրքույկում:

Վերոնշյալի առնչությամբ՝ նախարարությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ բողոք ներկայացրած անձի դիմումի հիման վրա նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից 17 տարի 5 ամիս 10 օր ընդհանուր աշխատանքային ստաժի հաշվառմամբ: Միևնույն

---

[608] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 50-52:

ժամանակ, պարզաբանվել է, որ դիմումին կից ներկայացված աշխատանքային գրքույկի գրառումների համաձայն՝ 10.04.1984-12.05.1997 թվականներին դիմողն աշխատել է Արագածի ԲՈՒԱՏՁ-ում, սակայն աշխատանքային գրքույկում բացակայում է կազմակերպության անվանումը, որտեղ ընդունվել է աշխատանքի, իսկ աշխատանքից ազատման վերաբերյալ գրառումը հաստատված է «Հայաստանի Տրանսպորտի Նախ. Արագածի Ավտոտրանս.Ճան» Պետական ՓԲ կնիքով, իսկ կազմակերպության անվանափոխության վերաբերյալ գրառում առկա չէ:

Գրությամբ տեղեկացվել է նաև, որ բողոք ներկայացրած անձի աշխատելու և աշխատավարձ ստանալու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում է կատարվել Հայաստանի ազգային արխիվ, որին ի պատասխան՝ տեղեկատվություն է տրամադրվել այն մասին, որ Արագածի ԲՈՒԱՏՁ-ի անձնակազմին վերաբերվող փաստաթղթերը 1985 թվականի մարտ ամսից Ազգային արխիվ չեն հանձնվել, ուստի վերոնշյալ ժամանակահատվածների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել *(տրամադրվել է տեղեկատվություն՝ 10.04.1984 թվականին աշխատանքի ընդունվելու և 14.01.1985 թվականին արձակուրդ տրամադրելու վերաբերյալ, որը հաշվառվել է վերջինիս ընդհանուր աշխատանքային ստաժի հաշվարկում)*:

Պատասխան գրությամբ նշել է նաև, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված գրության համաձայն՝ 21.07.1995 թվականին պետական գրանցում է ստացել «Արագածի Ավտոտրանսպորտային և ճանապարհների» պետական ձեռնարկությունը, որը 09.01.1998 թվականին գրանցել է անվանման և կազմակերպաիրավական տեսակի փոփոխություն և դարձել է՝ «Արագածի ավտոտրանսպորտային և ճանապարհների» պետական փակ բաժնետիրական ընկերություն, ուստի բողոք ներկայացրած անձի աշխատանքային գրքույկում առկա՝ 12.05.1997 թվականի ազատման հրամանը հաստատված է ոչ իրավաչափ կնիքով:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ նախարարությունը հայտնել է, որ 14.01.1985-12.05.1997 թվականների ժամանակահատվածը դիմումատուի ընդհանուր աշխատանքային ստաժում ներառելու իրավական հիմքեր առկա չեն:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակման նպատակով դիմել է Միասնական սոցիալական ծառայության Արթիկի տարածքային կենտրոն, սակայն դիմումը մերժվել է:

Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ 1983-1986 թվականներին աշխատել է Ծաղկահովիտ գյուղում գտնվող հիմնարկում՝ որպես ռադիոմեխանիկ, իսկ 1987-1995 թվականներին՝ Լենինականի Գուլպայի ֆաբրիկայի Արթիկ մասնաճյուղում:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ 1992-1995 թվականներին աշխատած ժամանակահատվածը կենսաթոշակային մարմինը չի հաշվառել իր աշխատանքային ստաժում և արդյունքում ստաժը կազմել է 9 տարի 7 ամիս, որը բավարար չէ 63 տարին լրացած անձին տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար:

Բողոքի քննարկման ընթացքում նախարարությունից Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ բողոք ներկայացրած անձի աշխատանքային գրքույկը ոչ իրավաչափ լրացված լինելու և արխիվային փաստաթղթերի բացակայության պատճառով՝ 10.07.1987-01.01.1995 թվականներն

աշխատանքային ստաժում հաշվառելու իրավաչափությունը հիմնավորելու և այդ ժամանակահատվածից հետո աշխատելու փաստը ճշտելու նպատակով Հայաստանի ազգային արխիվ կրկնակի կատարած հարցումներին ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն միայն անձնական քարտի հիման վրա, որը գործող օրենսդրության պահանջներով չի կարող հիմք ընդունվել՝ որպես աշխատանքային ստաժը հաստատող պատշաճ փաստաթուղթ: Արդյունքում, առկա տվյալներով աշխատանքային գրքույկը ոչ իրավաչափ լրացված լինելու և արխիվային փաստաթղթերի բացակայության պատճառով խնդրո առարկա ժամանակահատվածը չի կարող հաշվառվել բողոք ներկայացրած անձի աշխատանքային ստաժում:

Միևնույն ժամանակ, նախարարությունն առաջարկել է, մինչև 1992 թվականի հունվարի 1-ն աշխատած ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հիմնավորելու նպատակով առկայության դեպքում տարածքային կենտրոն ներկայացնել արհմիության կամ կուսակցության անդամատոմսը:

Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել է տեղեկատվություն առ այն, որ բարձրացված խնդրով դիմել է դատարան:

Վերը նշված բողոքների ուսումնասիրությունից հետևում է, որ մարդիկ աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրների հիմնականում բախվում են, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն կարողանում ներկայացնել աշխատանքային ստաժը հաստատող կամ դա ապացուցող փաստարկներ:

Այդ խնդիրներն առաջանում են սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի պահպանված չլինելու կամ արխիվ հանձնված չլինելու դեպքերում, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն գործում (վերացված կամ լուծարված են լինում) բոլոր այն կազմակերպությունները, որտեղ անձինք աշխատել են:

Ստացվում է, որ գործատուների բարեխիղճ չլինելու *(սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չպահպանելու կամ դրանք արխիվ չհանձնելու)* և պետական պատշաճ վերահսկողության բացակայության *(սոցիալական վճարներ կատարելու ուղղությամբ)* պատճառով մարդիկ բախվում են խնդիրների, որոնց լուծման ճանապարհը մնում է դատարան դիմելը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ աշխատանքային ստաժի հաշվարկման վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների քննարկման արդյունքում մի շարք հարցեր 2024 թվականին ստացել են լուծում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ աշխատանքային կենսաթոշակ նշանակելու նպատակով դիմել է ՄՍԾ Վանաձորի տարածքային կենտրոն, սակայն դիմումը մերժվել է: Հավելել է, որ մեկ տարի անց՝ 2024 թվականի մայիս ամսին տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ նոր դիմում է ներկայացրել նշված տարածքային կենտրոն, որը բավարարվել է:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումը մերժվել է աշխատանքային ստաժը չբավարարելու

հիմնավորմամբ: Մասնավորապես, ըստ բողոք ներկայացրած անձի, ընդհանուր աշխատանքային ստաժում չեն հաշվառվել 01.01.1997-31.12.1999 թվականներին աշխատելու և 14.03.2011-14.03.2012 թվականներին գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածները: Մինչդեռ, տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելիս՝ 01.01.1997-31.12.1999 թվականներին աշխատելու ժամանակահատվածը հաշվառվել է աշխատանքային ստաժում:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ աշխատանքային կենսաթոշակ նշանակած չլինելու հետևանքով չստացած կենսաթոշակը ստանալու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանի կողմից նախարարություն հասցեագրված գրության հիման վրա կատարվել են լրացուցիչ ուսումնասիրություններ: Արդյունքում, նախարարությունը Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ լրացուցիչ ուսումնասիրությունների և հարցումների արդյունքներով խնդրահարույց ժամանակահատվածի՝ 29.05.2023-29.05.2024 թվականների համար չվճարված կենսաթոշակի գումարը բողոք ներկայացրած անձին կփոխանցվի 2024 թվականի դեկտեմբեր ամսվա կենսաթոշակի վճարման ցուցակներով: Ավելի ուշ, բողոք ներկայացրած անձը հաստատել է, որ ստացել է չվճարված կենսաթոշակի գումարը:

Մյուս դեպքում, Պաշտպանի դիմած անձը հայտնել է, որ կենսաթոշակ նշանակելիս ընդհանուր աշխատանքային ստաժում չի հաշվառվել 1989-1996 թվականներին Դիլիջանի թիվ 8 մանկապարտեզում՝ որպես դայակ աշխատելու, ինչպես նաև 1997-2001 թվականներին Դիլիջանի «Իմպուլս» գործարանում՝ որպես մաքրուհի աշխատելու ժամանակահատվածները:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանի գրության հիման վրա Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում սկսվել են հավելյալ ուսումնասիրություններ: Արդյունքում, նախարարությունից, ի թիվս այլնի, ստացվել է պատասխան առ այն, որ Դիլիջանի թիվ 8 մանկապարտեզում 1989-1996 թվականներին և Դիլիջանի «Իմպուլս» գործարանում՝ 17.06.1996-24.09.2001 թվականներին աշխատելու և աշխատավարձ ստանալու մասին տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով Նշանակման վարչությունը՝ 20.09.2024 թվականին հարցում է կատարել Հայաստանի ազգային արխիվ, որտեղից ստացված՝ ըստ տարիների և ամիսների աշխատավարձի մասին տեղեկատվության հիման վրա, 33 տարի 1 ամիս 5 օրվա աշխատանքային ստաժով՝ 01.12.2024 թվականին վերահաշվարկվել է բողոք ներկայացրած անձի կենսաթոշակը (կենսաթոշակի չափը՝ 49 830 ՀՀ դրամ) և պակաս վճարված 25 410 ՀՀ դրամ կենսաթոշակի գումարը վճարվել է 2024 թվականի դեկտեմբեր ամսվա կենսաթոշակների վճարման ցուցակներով:

Հարկ է նշել, որ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման առաջարկությունների կատարման շրջանակում 2024 թվականի ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղղված հարցմանն ի պատասխան, մասնավորապես, ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում արձանագրված դեպքերը՝ վերանայվել են աշխատանքային ստաժը հաշվառելու կանոնները և ընթացիկ կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնցով, ի թիվս այլնի, սահմանվել է՝

1) մինչև 1996 թվականի նոյեմբերի 10-ն աշխատած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում, դրանց ենթակա դպրոցներում, գրադարաններում, բնակշահագործման (բնակարանային շահագործման) գրասենյակներում (տեղամասերում, տնտեսություններում).

2) 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2004 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է (զբաղեցրել է պաշտոն) քաղաքացիական ավիացիայի գործարաններում և կազմակերպություններում, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման № 6 և № 7 հավելվածներում նշված կազմակերպություններում՝ անկախ այդ կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնից կամ կատարած աշխատանքից.

3) եթե կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու կամ այլ դեպքերի համար ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտով սահմանված է արխիվային տեղեկանքներ կամ արխիվային տվյալներ (տեղեկություններ) պարունակող այլ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտություն, սակայն դրանք համապատասխան դիմումին կից չեն ներկայացվում, ապա արխիվային փաստաթուղթը «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ից ստանում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ համապատասխան հարցում կատարելու միջոցով: Այս դրույթի կիրառմամբ արխիվային փաստաթղթերն էլեկտրոնային հարցմամբ ստանում է Միասնական սոցիալական ծառայությունը.

4) եթե ազգային արխիվը, ի պատասխան վերը նշված կետի համաձայն կատարված հարցման, չի տրամադրում տեղեկատվություն արխիվային փաստաթղթերի բացակայության հիմքով և գրության մեջ նշում է գործատուի գտնվելու վայրի հասցեն, որտեղից կարող է ձեռք բերվել անհրաժեշտ տեղեկատվությունը, ապա Միասնական սոցիալական ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն ազգային արխիվից պատասխանը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հարցում է կատարում տվյալ գործատուին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ առաջիկայում նախատեսվում է կրկին վերանայել (պարզեցնել) աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնները, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի աշխատանքային ստաժում հաշվառել պետական մարմիններում աշխատած ժամանակահատվածները՝ առանց սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթի *(իրավական ակտի նախագիծը դրվել է շրջանառության մեջ):*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը ողջունում է խնդրի կարգավորման ուղղությամբ իրավասու մարմինների կողմից գործադրված(ող) ջանքերը, այնուհանդերձ հարկ է համարում արձանագրել, որ խնդիրների համակարգային կարգավորման տեսանկյունից՝ լուծումները պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում: Ընդ որում, այդ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ կենսաթոշակառուների համար աշխատանքային

ստաժի հաստատման մատչելի կառուցակարգեր մշակելու և ներդնելու կարևորությունը:

1.4 Կենսաթոշակի վճարման շարունակականության ապահովման գործընթացի խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին շարունակել է արդիական մնալ Հայաստանի տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների չվճարված կենսաթոշակը ստանալու հնարավորության բացակայության հարցը:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր կենսաթոշակառու տատը 2022 թվականից մինչև 2024 թվականը գտնվել է օտարերկրյա պետությունում: Նշել է նաև, որ վերը նշված ժամանակահատվածի ընթացքում վերջինիս կենսաթոշակ չի վճարվել: Հավելել է, որ Հայաստան վերադառնալուց հետո, 2024 թվականին կենսաթոշակի վճարումը վերսկսելու խնդրով, կենսաթոշակառուն դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն, որտեղ, սակայն, վերջինիս տեղեկացրել են, որ վճարվելու է միայն դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա կենսաթոշակը:

Մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ չի կարողացել տարեկան առնվազն մեկ անգամ ներկայանալ բանկ և ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարությունը, քանի որ 4 տարի գտնվել է օտարերկրյա պետությունում: Տեղեկացրել է նաև, որ Հայաստանից բացակայելու ընթացքում իրեն կենսաթոշակ չի վճարվել: Հավելել է, որ Հայաստան վերադառնալուց հետո դիմել է ՄՍԾ, որտեղ իրեն հայտնել են, որ վճարվելու է միայն դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա կենսաթոշակը:

Խնդրո առարկա դեպքերում, ներպետական օրենսդրական կարգավորումների ուժով մեխանիկորեն դադարեցվել է կենսաթոշակի վճարումը *(տե՛ս «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը)*՝ առանց պարտականությունները չկատարելու պատճառները պարզելու կամ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հարցը քննարկելու:

Հարկ է նշել, որ այս խնդիրներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ անդրադարձել է իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում[609]: Բարձրացված հարցի կապակցությամբ նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում իրականացվել են նաև համապարփակ վերլուծություններ[610] և խնդրի կարգավորման համար ներկայացվել են կոնկրետ առաջարկներ: Մասնավորապես, նախորդ տարեկան հաղորդման շրջանակում, քննարկվող խնդրի կարգավորման համատեքստում՝ ***Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորել է այնպիսի կառուցակարգերի մշակումն ու իրացումը, որոնք ՀՀ-ում չլինելու ամբողջ ժամանակահատվածի համար կենսաթոշակառուին չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ վճարելու իրավական հնարավորություն կտան:***

---

[609] Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 97-100, 119-124, 52-55):

[610] Նշվածի հաշվառմամբ՝ հարկ չենք համարում սույն պարագրաֆի շրջանակում կրկին անդրադառնալ դրանց:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման առաջարկությունների կատարման շրջանակում 2024 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղղված հարցմանն ի պատասխան, ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ ըստ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի՝ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Նշել են նաև, որ նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին, 9-րդ և 11-րդ մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով, բացառությամբ օրենքով նշված դեպքերի: Կենսաթոշակը կանխիկ եղանակով կարող է վճարվել նաև կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով կենսաթոշակ վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում:

Հայտնել են նաև, որ կենսաթոշակը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած կենսաթոշակը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը: Նշված իրավակարգավորումների կիրառմամբ՝ օրենսդրությամբ կենսաթոշակառուն 2 տարի կարող է ստանալ կենսաթոշակ՝ առանց Հայաստանի Հանրապետությունում գտնվելու՝ լիազորագրի միջոցով կվճարվի 1 տարի և լիազորագիրը ներկայացնելու ամսվան նախորդող 1 տարվա գումարը: Նշել են, որ առավել երկարատև բացակայության դեպքում կվճարվի Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո՝ կենսաթոշակի վճարումը վերսկսելու՝ անձամբ ներկայացված դիմումի հիման վրա:

Ըստ նախարարության՝ խնդիրն ամբողջությամբ կարգավորված է Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու, կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով հաշմանդամ ճանաչված անձանց համար (տե՛ս «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 4.1-ին մաս):

Հավելել են, որ կենսաթոշակային ոլորտում վարվող քաղաքականության հիմնական խնդիրը ***Հայաստանում գտնվող կենսաթոշակառուներին*** *արժանապատիվ կենսաթոշակ վճարելն է և նշված խնդրի լուծումը կառավարության առաջնահերթություններից է, որն ամրագրված է Կառավարության հնգամյա ծրագրում: Միևնույն ժամանակ, նշել են, որ Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին:*

Ամփոփելով վերոգրյալը՝ նախարարությունը հայտնել է, որ ընդհանուր դեպքում վճարման այլ կարգ ու ժամկետներ սահմանելը չի բխում

Կառավարության որդեգրած քաղաքականության գաղափարաբանությունից և ըստ այդմ, առանձին միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա:

Մարդու իրավունքների պաշտպանին հընթացս հասցեագրվել են նաև քննարկվող հարցի հետ կապված այլ բողոքներ, որոնց համաձայն՝ կենսաթոշակառուներն առողջական լուրջ խնդիրներ ունենալու պատճառով չեն կարողանում ներկայանալ բանկ և ստորագրել պահանջվող հայտարարությունը:

Օրինակ՝ 2024 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ստանում է հաշմանդամության կենսաթոշակ: Նշել է, որ դրա վճարումը շարունակելու և Հայաստանում իր գտնվելու հանգամանքը հավաստելու նպատակով պետք է անձամբ ներկայանա բանկ, սակայն առողջական խնդիրներով պայմանավորված չի կարող դա անել: Հավելել է, որ Հայաստանում իր գտնվելու հանգամանքը տնային այց կատարելու կամ տեսակապի միջոցով հավաստելու խնդրանքով դիմել է բանկ, սակայն արդյունքի չի հասել:

Բարձրացված հարցը քննարկելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել ՄՍԾ իրավասու ներկայացուցչի հետ և առաջարկել խնդիրը լուծել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 6.1-ին մասով նախատեսված իրավական կարգավորման շրջանակում: Այս առնչությամբ Ծառայության աշխատակիցը տեղեկացրել է, որ նշված դեպքում ևս դիմումատուն անձամբ պետք է դիմի ՄՍԾ տարածքային կենտրոն: Միևնույն ժամանակ, առաջարկել է, որ կենսաթոշակառուն կամ վերջինիս փոխարեն մեկ այլ անձ գրավոր դիմում հասցեագրի ՄՍԾ տարածքային կենտրոն և ներկայացնի իրավիճակը, որպեսզի հնարավոր լինի քննարկել դիմումատուի գտնվելու վայր տարածքային կենտրոնի աշխատակցի այց կատարելու հնարավորության հարցը:

Պաշտպանի ներկայացուցիչը հարցը քննարկել է նաև ՄՍԾ տարածքային կենտրոնի ներկայացուցչի հետ: Վերջինս առաջարկել է, որ բողոք ներկայացրած անձի հարազատը կրկին դիմի բանկ և ներկայացնի խնդիրը:

Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել է լրացուցիչ տեղեկատվություն առ այն, որ բանկի աշխատակիցների կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում խնդիրը ստացել է լուծում:

Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման առաջարկությունների կատարման շրջանակում 2024 թվականի ընթացքում ԱՍՀՆ-ին ուղղված հարցմանն ի պատասխան, ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 6.1-ին մասերի համաձայն՝ կենսաթոշակառուի դիմումի հիման վրա կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով, եթե կենսաթոշակառուն *(անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը)* ***ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է, կամ լրացել է կենսաթոշակառուի 75 տարին:***

Հավելել են, որ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց կենսաթոշակառուի բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով կամ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից՝ ***անձամբ կենսաթոշակառուի ներկայացրած՝*** կենսաթոշակին առնչվող ցանկացած գրավոր դիմումի հիման վրա:

Միևնույն ժամանակ, գրությամբ նշել են, որ Կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 284-Ն որոշման հավելվածի 3.1-ին կետի համաձայն՝ շահառուի Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց նրա բանկ ներկայանալու, եթե շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկը հաստատել է՝ բանկի աշխատակցի՝ ՀՀ-ում շահառուի գտնվելու վայր այցելությամբ, կամ իր ներքին ընթացակարգերին համապատասխան՝ տեղեկատվատեխնիկական միջոցների կիրառմամբ: Հավելել են, որ շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը հաստատելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են շահառուի և բանկի միջև կնքված բանկային հաշվի պայմանագրով:

Ըստ նախարարության տրամադրված պարզաբանման՝ ***կենսաթոշակների վճարման գործընթացի կազմակերպման ընթացքում, սոցիալական ապահովության մարմինների կողմից տնային այցելություն կատարելու միջոցով դիմումներ ընդունելու դրույթ օրենսդրությամբ նախատեսված չէ,*** *սակայն, կենսաթոշակի վճարումը շարունակելու, կամ վճարման եղանակը փոխելու համար անձանցից, ովքեր տեղաշարժման դժվարություններ ունենալու պատճառով հնարավորություն չունեն անձամբ դիմում ներկայացնել կամ բանկ այցելել, անհրաժեշտության դեպքում, ստացված բանավոր կամ գրավոր հաղորդումների հիման վրա տնային այցելության միջոցով դիմումն ընդունվում է ՄՍԾ տարածքային կենտրոնների աշխատակիցների կողմից:*

Նշել են նաև, որ Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 670-Ն որոշման թիվ 1 հավելվածում կատարված փոփոխությունների արդյունքում՝ տարեկան մեկ անգամ բանկ ներկայանալու պահանջը հանվել է այն կենսաթոշակառուների համար, ովքեր հանդիսանում են վարձու աշխատող:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ թեև ԱՍՀՆ-ն ձեռնարկել է առանձին միջոցներ խնդիրը հաղթահարելու ուղղությամբ, այնուամենայնիվ, Պաշտպանին հասցեագրվող բողոքները վկայում են, որ առկա իրավակարգավորումները, ինչպես նաև ՄՍԾ կողմից որդեգրված պրակտիկան լիարժեքորեն չեն գործում և ըստ էության բավարար չեն խնդրի համակարգային կարգավորման տեսանկյունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել տեղաշարժման դժվարություններ (առողջական լուրջ խնդիրներ) ունեցող կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը հավաստելու վերաբերյալ հայտարարություն ստորագրելու օրենսդրական պահանջի կատարման առավել դյուրին կառուցակարգեր օրենսդրորեն մշակելու և իրացնելու ուղղությամբ:

Պաշտպանը խիստ կարևորում է նաև այնպիսի կառուցակարգերի մշակումն ու իրացումը, որոնք ՀՀ-ում չլինելու ամբողջ ժամանակահատվածի համար կենսաթոշակառուին չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ վճարելու իրավական հնարավորություն կտան:

2. Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը

2.1 Ընտանիքների անապահովության գնահատման գործընթացի օրենսդրական և գործնական խնդիրներ

2024 թվականին Պաշտպանին ներկայացվել են բողոքներ, որոնք վերաբերել են ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի կիրառման թերություններին: Այսպես, օրինակ՝ բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ ընդգրկված է եղել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստացել է սոցիալական նպաստ: Հավելել է, որ սոցիալական նպաստ ստանալու իրավունքի դադարեցման արդյունքում՝ 2024 թվականի հուլիս ամսից նպաստի վճարում չի կատարվել:

Բարձրացված հարցի առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկություն այն մասին, որ անապահովության գնահատման համակարգում հերթական հաշվառման (փաստագրման) ժամանակ, որպես ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամուտ, *հաշվի է առնվել բողոք ներկայացրած անձի կենսաթոշակի գործող 47 400 դրամ չափը,* որի արդյունքում ընտանիքի անապահովության միավորը նվազել և կազմել է 26.99, որը ցածր է ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 24-ի թիվ 50-Ն որոշման 3-րդ կետով սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող 28.00 սահմանային մեծության միավորից:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ 81 տարեկան է, ստանում է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: Նշել է նաև, որ հանդիսացել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգի շահառու: Հավելել է, որ 2022 թվականին իր կենսաթոշակն ավելացել է 3000 ՀՀ դրամի չափով, որի հետևանքով 2024 թվականի օգոստոս ամսից սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է:

Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ ունի առողջական բազմաթիվ խնդիրներ, ավելին՝ շուրջ երեք տարի է անկողնային հիվանդ է, և կենսաթոշակի գումարը չի բավարարում նույնիսկ իր նվազագույն կարիքները հոգալու համար: Հայտնել է նաև, որ կենսաթոշակի 3000 ՀՀ դրամի չափով ավելանալու հետևանքով զրկվել է 20 000 ՀՀ դրամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքից, ուստի խնդրել է Պաշտպանի աջակցությունը սոցիալական նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու հարցում:

Վերոնշյալի առնչությամբ՝ նախարարությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ բողոք ներկայացրած անձի ընտանիքը հաշվառված է ՄՍԾ Վարդենիսի տարածքային կենտրոնի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և մինչև 2024 թվականի հուլիս ամիսը ներառյալ՝ ստացել է սոցիալական նպաստ՝ ամսական 20 000 ՀՀ դրամի չափով: 2024 թվականի օգոստոսից ընտանիքի սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է:

Միաժամանակ, պարզաբանվել է, որ 2024 թվականի սեպտեմբերին, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կրկին հաշվառվելու (փաստագրվելու) ժամանակ, որպես ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամուտ, դիտարկվել է բողոք ներկայացրած անձի աշխատանքային կենսաթոշակի 52 350 ՀՀ դրամ գործող չափը: Արդյունքում, ընտանիքի անապահովության միավորը

կազմել է 25.57, որը ցածր է ՀՀ կառավարության 2019 թվականի հունվարի 24-ի թիվ 50-Ն որոշման 3-րդ կետով 2024 թվականի համար սահմանված՝ սոցիալական նպաստի իրավունք տվող 28.00 սահմանային մեծության միավորից: Հավելել են, որ ընտանիքի սոցիալական նպաստի իրավունքը դադարեցվել է որոշման պահանջներին համապատասխան:

Հատկանշական է, որ նույն գրությամբ նախարարությունը հայտնել է, որ ծառայության տարածքային կենտրոնը՝ 2024 թվականի 4-րդ եռամսյակի համար ընտանիքին նշանակել է եռամսյակային հրատապ օգնություն՝ ամսական 20 000 ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշման 3-րդ հավելվածի 23-րդ կետը սահմանում է ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամուտի կազմը, որի մեջ մտնում է նաև կենսաթոշակը: Նշված իրավակարգավորման կիրառումը գործնականում հանգեցրեց խնդրի, երբ 2022 թվականի հունվարի 1-ից նվազագույն կենսաթոշակն ավելացավ 2100 ՀՀ դրամի չափով և նախկին 26 500 ՀՀ դրամի փոխարեն կազմեց 28 600 ՀՀ դրամ:

Արդյունքում, ստացվեց մի իրավիճակ, երբ կենսաթոշակի չափի ոչ էական ավելացումը որոշիչ ազդեցություն ունեցավ ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամուտի հաշվարկման հարցում և հանգեցրեց նպաստի իրավունքի դադարեցման:

Հարկ է նշել, որ առաջացած խնդրին պրակտիկայում տրվեց ժամանակավոր լուծում: Ըստ այդմ, 2023 թվականին ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն որոշման մեջ կատարված փոփոխության արդյունքում այն լրացվել է նոր 6.2-րդ կետով, ըստ որի՝ ՀՀ կառավարության որոշումներով կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվող դրամական աջակցության, պարգևավճարների չափերի փոփոխություններն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընտանիքի ամբողջական եկամտի կազմում ***մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը չեն հաշվարկվում:***

Հաջորդիվ, այդ ժամկետը երկու անգամ երկարաձգվել է: Առաջին դեպքում վերոնշյալ ժամկետը երկարաձգվել է մինչև ***2024 թվականի մարտի 1-ը***, իսկ երկրորդ դեպքում՝ մինչև ***2024 թվականի հուլիսի 1-ը***:

Վերջին ժամկետի ավարտից անմիջապես հետո Պաշտպանին սկսվել են հասցեագրվել բազմաթիվ դիմում-բողոքներ՝ կենսաթոշակի չափի փոփոխության արդյունքում նպաստի իրավունքի դադարեցման խնդրի վերաբերյալ:

Այս առումով Պաշտպանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ կենսաթոշակի չափի բարձրացումը չպետք է հանգեցնի ընտանիքի նպաստի իրավունքի դադարեցմանը, հատկապես այն դեպքերում, երբ բարձրացումն անհամաչափ է այն սոցիալական աջակցությանը, որից անձը զրկվել է: Պաշտպանը նաև հրավիրում է իրավասու մարմինների ուշադրությունն այն հանգամանքի վրա, որ նպաստի իրավունքի դադարեցումն արտոնությունների հասանելիության տեսանկյունից ևս առաջացնում է անբարենպաստ հետևանքներ, մասնավորապես, ընտանիքը զրկվում

է պետական պատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական օգնությունից, դեղորայքից և այլն:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ 2024 թվականի ընթացքում համակարգային առումով շարունակել են խնդրահարույց մնալ նաև այն դեպքերը, երբ անհրաժեշտ է լինում ընտանիքի՝ բնակության հասցեում հաշվառված, բայց այդ վայրում փաստացի չբնակվող և ըստ էլեկտրոնային համակարգի՝ «բացակա» համարվող անդամի Հայաստանից դուրս բնակվելու փաստը հաստատելու համար ներկայացնել վերջինիս օտարերկրյա պետությունում բնակվելու և հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկանք:

Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ ՀՀ քաղաքացիների համար նման փաստաթղթի ձեռքբերումը կապված է որոշակի դժվարությունների հետ *(օրինակ՝ նպաստ ստանալու վերաբերյալ դիմում ներկայացնող անձը հստակ տեղեկության չունի բացակա անձի գտնվելու վայրի վերաբերյալ կամ վերջինիս հետ որևէ կապ չունի, գործնականում դժվարություններ են առաջանում նաև օտարերկրյա պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերի նոտարական կարգով հաստատման համար պահանջվող վճարումների մասով և այլն)*:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ ընտանեկան նպաստ ստանալու նպատակով դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն, սակայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում չի ընդգրկվել՝ իր բնակության վայրի հասցեում հաշվառված անձի ՀՀ սահմաններից դուրս գտնվելու հանգամանքով պայմանավորված: Հավելել է, որ ընտանիքի «բացակա» համարվող անդամի կողմից Հայաստանից դուրս բնակվելու փաստը հաստատելու համար ծառայությունն առաջարկել է ներկայացնել տեղեկանք՝ վերջինիս օտարերկրյա պետությունում բնակվելու և հաշվառված լինելու վերաբերյալ: Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ պահանջվող փաստաթուղթը հնարավոր չէ ներկայացնել:

Այս առումով, իբրև դրական առաջընթաց պետք է համարել այն, որ ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգով (մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի թիվ 27-Ն որոշումը) իրականացվել են փոփոխություններ, որոնց համաձայն՝ ընտանիքի կազմը որոշվում է դիմողի անհատական օգտահաշվում դիմումում լրացված տվյալների հիման վրա, որոնք ստուգվում են բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով (տե՛ս նույն որոշման 1-ին հավելվածի 25-րդ կետը): Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ ընտանիքի կազմում չեն դիտարկվում ՀՀ տարածքից 90 և ավելի օր դուրս գտնվող անձինք՝ անկախ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու հանգամանքից (տե՛ս նույն հավելվածի 26-րդ կետի 5-րդ ենթակետը): Եթե բնակչության պետական ռեգիստրում ընտանիքի բոլոր չափահաս անդամները նշված հասցեում հաշվառված են ոստիկանի զեկուցագրի հիման վրա և առկա են հաշվառված այլ անձինք, ապա գնահատման համակարգի միջոցով առցանց հարցում է ուղարկվում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությանը՝ ընտանիքի փաստացի կազմը հաստատելու կամ չհաստատելու համար (տե՛ս նույն հավելվածի 27-րդ կետի 1-ին ենթակետը):

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ընտանիքների անապահովության գնահատման բանաձևի կիրառման առավել գործուն կառուցակարգեր ներդնելու հարցը՝ այն հաշվով, որ կենսաթոշակի չափի բարձրացումը չհանգեցնի ընտանիքի նպաստի իրավունքի դադարեցմանը:

2.2 Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման խնդիր

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել գրավոր և բանավոր դիմում-բողոքներ, որոնցով քաղաքացիներն իրենց դժգոհությունն են արտահայտել առ այն, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ ***ավանդատուի փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, այսինքն՝ այն չի կարող անցնել այլ անձի կամ մտնել ժառանգության զանգվածի մեջ:***

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ ծնողների անունով ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված է ավանդ՝ 19.000 ռուբլու չափով: Հավելել է, որ ծնողների մահից հետո վերջիններիս անունով ներդրված ավանդի դիմաց փոխհատուցում նշանակելու խնդրանքով դիմում է ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն ստացել է մերժում՝ իրավական հիմքեր չլինելու հիմնավորմամբ:

Այսպես, ըստ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված ***«Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգ»-ի*** (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի 3-րդ ենթակետի՝ *ավանդատուի հաշվառումը ենթակա է գրավոր մերժման, եթե* ***ավանդատուն մահացել է****:*

Ըստ Կարգի 23-րդ կետի՝ ավանդատուի՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ փոխհատուցում ստանալու գույքային իրավունքը համարվում է դադարած կատարմամբ՝ վճարմամբ կամ ***ավանդատուի մահով:***

Կարգի 22-րդ կետը սահմանում է, որ փոխհատուցում ստանալու գույքային իրավունքով Հայաստանի Հանրապետությունից կատարում պահանջելու ավանդատուի իրավունքը համարվում է ծագած այն ***ամսում, որ ամսվա վճարման ցուցակներում ընդգրկվել են ավանդատուի տվյալները,*** իսկ Կարգի 36-րդ կետի համաձայն՝ եթե ավանդատուն մահացել է իր տվյալները փոխհատուցման վճարման ցուցակում ներառվելուց հետո, ապա մահացած ավանդատուին հասանելիք փոխհատուցումը վճարվում է նրա ժառանգին (ժառանգներին)՝ ավանդատուի բնակության վայրը (բնակչության պետական ռեգիստրում հաշվառված՝ բնակության վայրի հասցեն) սպասարկող տարածքային կենտրոն ներկայացրած դիմումի և նոտարի կողմից տրված ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա (...):

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն կարգի 1-ին կետում նշված դեպքերի[611]՝ ***ավանդատուի փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, <u>այն չի կարող անցնել այլ անձի</u>, լինել գրավի առարկա, <u>մտնել ժառանգության զանգվածի մեջ:</u> Փոխհատուցումը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել ավանդատուի պարտավորությունների դիմաց:***

Ըստ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 28-րդ կետի՝ հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 8 հավելվածի առաջին մասի համաձայն փոխհատուցման տրամադրումը պետք է կրի հասցեական բնույթ, ***փոխհատուցում ստանալու ավանդատուի պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, այն չի կարող անցնել այլ անձի (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 398-րդ հոդված), լինել գրավի առարկա (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 230-րդ հոդվածի առաջին մաս), մտնել ժառանգության զանգվածի մեջ (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի երկրորդ մաս):***

Հաշվի առնելով քննարկվող խնդրի կարևորությունը և համակարգային բնույթը՝ ՄԻՊ նախորդ տարեկան հաղորդման առաջարկների կատարման շրջանակում 2024 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղղված հարցմանն ի պատասխան ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի հավելված 8-ի համաձայն՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը պետք է կրի հասցեական բնույթ և

---

[611] Նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում (այսուհետ՝ փոխհատուցում) ստանալու իրավունք ունեն նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներառյալ խորհրդային ռուբլով դրամական ավանդ ներդրած հետևյալ անձինք՝

1) մինչև 1942 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձինք (այսուհետ՝ տարեց), այդ թվում, եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձինք, այդ թվում, եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածի ցանկում ընդգրկված համայնքներում՝ բնակչության պետական ռեգիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաև այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված (այսուհետ՝ սահմանամերձ համայնքներում հաշվառված) անձինք, այդ թվում, եթե ավանդը ներդրվել է մահացած ամուսնու կողմից՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ զոհված (մահացած) կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած անձինք (այսուհետ՝ զոհվածի ժառանգ):

նպատակաուղղվի առաջին հերթին սոցիալապես առավել անապահով խմբերին դասված քաղաքացիների սոցիալական վիճակի բարելավմանը:

Նշվել է նաև, որ վերոգրյալի հաշվառմամբ՝ ոլորտը կարգավորող իրավական ակտով սահմանվել է, որ ավանդատուի փոխհատուցում (և ոչ վերադարձ) ստանալու պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, այն չի կարող անցնել այլ անձի, լինել գրավի առարկա, մտնել ժառանգության զանգվածի մեջ: Ընդ որում, փոխհատուցում ստանալու գույքային իրավունքով Հայաստանի Հանրապետությունից կատարում պահանջելու ավանդատուի իրավունքը համարվում է ծագած այն ամսում, որ ամսվա վճարման ցուցակներում ընդգրկվել են ավանդատուի տվյալները: Այսինքն, արդեն իսկ փոխհատուցման պահանջ ներկայացրած անձի դեպքում իրավունքը ծագում է տվյալները վճարման ցուցակում ներառվելու ամսում: Ըստ այդմ, միայն այս դեպքում փոխհատուցումը կարող է վճարվել ժառանգին:

Ներկայացված պարզաբանումից հետևում է, որ անձանց սեփականությունը ժառանգության միջոցով իրենց ժառանգներին փոխանցելու իրավունքը պայմանավորվում է վճարման ցուցակում ընդգրկվելու հանգամանքով: Ընդ որում՝ յուրաքանչյուր տարվա համար շահառուների շրջանակը որոշում և վճարման ցուցակները կազմում է ԱՍՀՆ-ն: Արդյունքում՝ պետության հայեցողության իրացման շրջանակներում անձինք զրկվում են իրենց սեփականությունը ժառանգման կարգով փոխանցելու իրավունքից:

Հարկ է նշել, որ բարձրացված խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել նախորդ տարեկան հաղորդման շրջանակում: Մասնավորապես, համադրելով բարձր դատարանների իրավական դիրքորոշումները՝ Պաշտպանը, մասնավորապես, գտել է, որ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցում ստանալու իրավունքը ենթակա է քննարկման սեփականության սահմանադրաիրավական երաշխիքների լույսի ներքո: Այսպիսով, Պաշտպանն ընդգծել է, որ ներդրված ավանդի պահանջի իրավունքը՝ որպես Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուրի՝ օրինական հիմքով ձեռք բերած սեփականություն պրակտիկայում չի կարող կիրառվել Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ: Միաժամանակ, ներդրված ավանդի փոխհատուցման պահանջի իրավունքի՝ անձի հետ անխզելիորեն կապված լինելու և ժառանգության զանգվածի մեջ չմտնելու տեսանկյունից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությանն է միտված ժառանգական իրավունքների ապահովումը սեփականատիրոջ մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավազորությունների հաջորդականությունը: Միևնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն երաշխավորված և պաշտպանված հնարավորություն[612]: Այսպիսով, անձի սեփականության իրավունքի պաշտպանությանն է միտված ինչպես անձին սեփականությունից զրկելու օրենսդրական հստակ և սահմանափակ հիմքերի առկայությունը, այնպես էլ սեփականատիրական հարաբերություններում իրավահաջորդության կարգով փոխանցվող իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:

---

[612] Տե՛ս ՍԴ-ի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-917 որոշումը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքն անհրաժեշտ է դիտարկել որպես սեփականության լեգիտիմ ակնկալիք և ժառանգության զանգվածի մաս, որի մեջ, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի, ներառվում է ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները[613]:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է մշակել պատշաճ իրավական կառուցակարգեր այն հանգամանքների հաշվառմամբ, որ ներդրված ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը համարվում է անձի սեփականություն, իսկ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցման իրավունքը ներառվում է ժառանգության զանգվածի մեջ:

2.3 Անօթևան անձանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ՝ 2024 թվականին Պաշտպանը շարունակել է ստանալ բազմաթիվ դիմում-բողոքներ անօթևան մնացած անձանցից, ինչպես նաև զանգեր պետական մարմիններից ու մտահոգ քաղաքացիներից՝ անձանց դրսում հայտնվելու և կացարանի կարիք ունենալու վերաբերյալ: Թեև խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվող գրավոր և բանավոր բողոքների համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2024 թվականին, 2023 թվականի համեմատ, դրանց թիվը նվազել է՝ 101-ից դառնալով 78, այնուհանդերձ քանակական ցուցանիշը շարունակում է մտահոգիչ մնալ:

Հարկ է նաև նշել, որ 2024 թվականին Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմինների հետ ձևավորված արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել անօթևան անձանց տեղավորել կացարանում: Չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին՝ անօթևանության հարցը համակարգային առումով շարունակում է խնդրահարույց մնալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իրենց բազմաբնակարան շենքի նկուղում բնակվում է անօթևան մի կին: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն անօթևանի կարգավիճակում հայտնված կնոջը ժամանակավոր կացարանում տեղավորելու հարցում: Հաջորդիվ, Պաշտպանի թեժ գծին է զանգահարել նաև անօթևանի կարգավիճակում հայտնված անձը՝ հայտնելով, որ ֆինանսական խնդիրներով պայմանավորված՝ չի կարողացել վճարել բնակարանի վարձավճարը և արդեն մի քանի օր է ինչ բնակվում է հիշյալ շենքի նկուղում:

Պաշտպանի ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ)

---

[613] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 62-66:

ներկայացուցչի հետ: Պաշտպանի աջակցությամբ դիմողը տեղավորվել է նշված Հիմնադրամում:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ ներկայում գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում, սակայն ՌԴ իրավասու մարմնի կողմից իր նկատմամբ կայացվել է արտաքսման վերաբերյալ որոշում: Հավելել է, որ 2024 թվականի դեկտեմբերի 12-ին կայանալիք չվերթով վերադառնալու է Հայաստան: Հայտնել է նաև, որ Հայաստանում չունի հարազատներ և բնակության վայր, ուստի մտավախություն ունի, որ վերադառնալուց հետո հայտնվելու է անօթևանի կարգավիճակում: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն կացարանում տեղավորելու հարցում:

Պաշտպանի աշխատակազմի և Հիմնադրամի արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել պայմանավորվածություն ձեռք բերել մինչ դիմողի Հայաստան ժամանելը՝ վերջինիս կացարանում տեղ առանձնացնելու վերաբերյալ, որպեսզի վերջինս կարողանա օդանավակայանից անմիջապես գնալ կացարան և բնակություն հաստատել այնտեղ: Հաջորդիվ, դիմողը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ ՀՀ վերադառնալուց հետո անմիջապես դիմել է Հիմնադրամ, որտեղ էլ սեղմ ժամկետում կազմակերպվել է իր ընդունելությունը:

Մյուս դեպքում դիմողը հայտնել է, որ շուրջ 40 օր է բնակվում է փողոցում: Հավելել է, որ նախկինում բնակվել է այլ քաղաքում, սակայն ընտանեկան խնդիրների պատճառով հեռացել է տնից և բնակություն հաստատել Երևան քաղաքում: Նշել է նաև, որ ֆինանսական ծանր վիճակով պայմանավորված՝ նախկինում բնակվել է Հիմնադրամում, սակայն հետագայում ունենալով առողջական խնդիրներ տևական ժամանակ ստացիոնար բուժում է ստացել, որից հետո այլևս Հիմնադրամ չի ներկայացել: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը Հիմնադրամ վերադառնալու հարցում:

Բարձրացված հարցը Պաշտպանի ներկայացուցիչը քննարկել է Հիմնադրամի ներկայացուցչի հետ: Արդյունքում, ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ դիմողին Հիմնադրամում տեղավորելու վերաբերյալ: Նույն օրը բողոք ներկայացրած անձը վերադարձել է Հիմնադրամ:

Նշվածին զուգահեռ բազմաթիվ են դեպքերը, երբ Հիմնադրամին հատկացված տեղերի (ընդհանուր 100 տեղ) լրացած լինելու հանգամանքով պայմանավորված՝ հնարավոր չի եղել անօթևան անձանց տեղավորել ժամանակավոր կացարան և վերջիններս շարունակել են մնալ դրսում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանի թեժ գծին զանգահարած քաղաքացին հայտնել է, որ ամիսներ շարունակ օգնություն է տրամադրում անօթևանի կարգավիճակում հայտնված մի տղամարդու, որը ՌԴ-ից արտաքսվել է Հայաստան: Հավելել է, որ այստեղ հարազատներ և բնակության վայր չունի: Նշել է նաև, որ իրեն պատկանող արտադրամասի փոքրիկ պահոցը տրամադրել է վերջինիս՝ ժամանակավոր բնակություն հաստատելու համար: Հայտնել է նաև, որ անօթևանը դիմել է Միասնական սոցիալական ծառայություն՝ խնամքի հաստատություն տեղափոխվելու համար և 2024 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ եղել է հերթացուցակում:

Բողոք ներկայացրած անձը հայտնել է նաև, որ տղամարդը տևական ժամանակ ունեցել է առողջական խնդիրներ, վիճակը կտրուկ վատթարանալուց հետո նրան տեղափոխել են բժշկական կենտրոն: Նշել է նաև, որ թեև բժշկական կենտրոնն

ընդունել է նրան, սակայն տեղեկացրել է, որ սոցիալական խումբ չունենալու հանգամանքով պայմանավորված՝ նրան տրամադրվող բժշկական օգնությունը հնարավոր է կազմակերպել միայն վճարովի հիմունքներով: Հավելել է, որ կատարել է պահանջվող վճարումը, որից հետո անձին մի քանի օր տրամադրվել է անհրաժեշտ բուժօգնություն: Հաջորդիվ, բժշկական կենտրոնից կապ են հաստատել իր հետ և տեղեկացրել, որ բուժումը շարունակելու համար անհրաժեշտ է կրկին վճարում կատարել, հակառակ պարագայում՝ վերջինիս դուրս կգրեն բժշկական կենտրոնից:

Բողոք ներկայացրած անձը նշել է, որ չունի բավարար ֆինանսական միջոցներ կրկին վճարում կատարելու համար: Մինչդեռ, բժշկի կողմից բողոք ներկայացրած անձին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ հիվանդի առողջական վիճակի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է, որպեսզի վերջինիս շարունակի բուժումը ստացիոնար պայմաններում:

Դիմողը հայտնել է նաև, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անօթևան անձը դուրսգրումից հետո նման ծանր առողջական վիճակով հայտնվելու էր դրսում՝ առանց խնամքի, ապա խնդրի կապակցությամբ տեղեկացրել է պատկան մարմիններին՝ ՀՀ առողջապահության նախարարությանը և Հիմնադրամին: Այնուհանդերձ, ըստ դիմողի պնդման, հարցի լուծման ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել: Հավելել է, որ Հիմնադրամից հայտնել են, որ նոր շահառու ընդունելու հնարավորություն չունեն, քանի որ հատկացված բոլոր տեղերը լրացել են:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն անօթևանի կարգավիճակում հայտնված անձին կացարան կամ խնամքի հաստատություն տեղավորելու հարցում:

Պաշտպանի ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է Հիմնադրամի ներկայացուցչի հետ: Վերջինս տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ Հիմնադրամի անկողնային բաժանմունքում ազատ տեղ առկա չէ, ուստի նոր շահառու ընդունելու հնարավորություն չկա:

Հաջորդիվ, ըստ բողոք ներկայացրած անձի, բժշկական հաստատությունը կատարում է հիվանդի դուրսգրում և վերջինիս փոխադրում Հիմնադրամ, որտեղ նրան չեն ընդունում՝ նույն հիմնավորմամբ, այնուհետև՝ փոխադրում են այնտեղ, որտեղ մինչ այդ բնակվել է (արտադրամասին կից պահոց):

Բողոք ներկայացրած անձը կրկին զանգահարել է Պաշտպանի աշխատակազմ և լրացուցիչ տեղեկատվություն ներկայացրել, որ անօթևան անձն առողջական ծանր վիճակում *(մասնակի կուրություն, երկկողմանի թոքաբորբ, ամբողջությամբ այտուցված ոտքեր, զուգորդող շնչառական խնդիրներ)* ցուրտ եղանակային պայմաններում, երեկոյան ժամին հայտնվել է բացարձակ անօգնական վիճակում և առանց խնամքի, ապա նման պայմաններում անցկացրել է ամբողջ գիշերը, որի արդյունքում առողջական վիճակը կտրուկ վատացել է:

Նշվածի մասին Պաշտպանի ներկայացուցիչն անհապաղ տեղեկացրել է Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցչին, ինչպես նաև տարածքային կենտրոնին: Արդյունքում, պայմանավորվածություն է ձեռքբերվել հրատապ տնայց կատարելու և խնամքի հաստատություն արտահերթ ուղեգրում կատարելու վերաբերյալ:

Ըստ ՄՍԾ տարածքային կենտրոնի ներկայացուցիչների կողմից Պաշտպանի աշխատակազմ ներկայացված լրացուցիչ տեղեկատվության՝ կատարված այցի ընթացքում, արձանագրելով անձի առողջական ծանր վիճակը, հրավիրել են շտապ

օգնություն և անձին տեղափոխել բժշկական կենտրոն, որտեղ սկզբում հրաժարվել են ընդունել անօթևան անձին՝ նշելով, որ սոցիալական կարգավիճակի բացակայության պատճառով պետական պատվերի շրջանակում բուժօգնության տրամադրումը հնարավոր չէ, ապա՝ ՄՍԾ աշխատակիցների ջանքերի շնորհիվ վերջինիս ընդունել են և տեղափոխել վերակենդանացման բաժանմունք, որտեղ էլ երկու օր անց անձը մահացել է:

Քննարկվող դեպքը վառ օրինակ է անհրաժեշտ և ժամանակին չցուցաբերված աջակցության, որը հանգեցրել է ծանր և անդառնալի հետևանքների: Ստացվում է, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին օգնություն ցուցաբերելու հարցում հասարակության արձագանքը և դերակատարումը դառնում է առանցքային այն պարագայում, երբ խնդրի լուծման ուղղությամբ իրավասու մարմինների գործողությունները ոչ բավարար և ժամանակավրեպ են: Տեղի ունեցածը պետք է մանրամասն քննության առարկա դարձվի՝ հետագայում նման դեպքերից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով:

Անօթևանության հարցը քննարկելիս անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել Պաշտպանին հասցեագրվող դիմում-բողոքներով հաճախ բարձրացվող այն դեպքերին, երբ Հիմնադրամի շահառու հանդիսացող անձինք ներքին կարգապահական կանոնների խախտման հետևանքով հեռացվում են Հիմնադրամից և հայտնվում դրսում: Այսպես, օրինակ՝ ալկոհոլամոլության, ոչ պատշաճ վարքի դրսևորման, ինչպես նաև համակեցության կանոնների այլ խախտումների պատճառով շահառուների միջև հաճախ առաջանում են վիճաբանություններ, որոնց արդյունքում դադարեցվում է շահառուի խնամքի տրամադրումը:

Վերոնշյալի համատեքստում Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ անձանց հեռացումը ժամանակավոր կացարանից խնդրի լուծման ընդունելի եղանակ չէ: Շահառուի հեռացման հարցն անհրաժեշտ է դիտարկել որպես ծայրահեղ լուծում, իսկ մինչ այդ համապատասխան մասնագիտացում և պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից պետք է իրականացվեն սոցիալ-հոգեբանական աշխատանքներ՝ շահառուների վարքագծի շտկման և հետագա բնակությունը թույլատրելի դարձնելու ուղղությամբ:

Հիմնադրամի ներքին կարգապահական կանոնների մասին խոսելիս հարկ է նաև անդրադարձ կատարել հաճախ հանդիպող այն խնդրին, երբ կացարան տրամադրելուն աջակցելու խնդրանքով Պաշտպանի աշխատակազմ ներկայացած անձանց առաջարկվում է Հիմնադրամում ժամանակավոր բնակության տեղափոխվելու վերաբերյալ համապատասխան դիմում ներկայացնել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն, սակայն վերջիններս հրաժարվում են այդ առաջարկից՝ նշելով, որ նախկինում հանդիսացել են այդ կացարանի շահառու, սակայն իրենց կամքով դուրս են եկել՝ հաշվի առնելով կացարանում տեղի ունեցող դեպքերը *(անձնական իրերի գողություն, անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններ և այլն):*

Այսինքն, ստեղծվում է մի իրավիճակ, երբ կացարանի և փողոցում բնակվելու միջև ընտրություն կատարելիս՝ անձը նախապատվությունը տալիս է անօթևանի կարգավիճակով փողոցում բնակվելուն: Նշված օրինակները մեկ անգամ ևս փաստում են համապատասխան մասնագիտացում ունեցող անձանց կողմից Հիմնադրամի շահառուների հետ անհատական աշխատանքների իրականացման, հավելյալ

տեղերի ստեղծման և բնակության պայմանների բարելավման անհրաժեշտության մասին:

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին կացարանի հասանելիության խնդրին: Այսպես, Պաշտպանի աշխատակազմում գործող շուրջօրյա թեժ գիծ հեռախոսահամարին ոչ աշխատանքային օրերին և ժամերին ստացվում են բազմաթիվ զանգեր ինչպես անօթևանի կարգավիճակում հայտնված անձանցից, այնպես էլ տարբեր մարմիններից, որոնք ակնկալում են Պաշտպանի աջակցությունը կացարանի տրամադրման հարցում: Դիմողների տեղեկացմամբ՝ իրավասու մարմինների հետ կապ հաստատել չի հաջողվում, իսկ Հիմնադրամում ոչ աշխատանքային օրերին և ժամերին ընդունելություն չի իրականացվում, ինչի արդյունքում անձը շարունակում է բնակվել դրսում:

Օրինակ՝ Պաշտպանի թեժ գիծ հեռախոսահամարին ստացված զանգերից մեկով Ոստիկանության բաժիններից մեկից հայտնել են, որ ընտանեկան անախորժությունների հետևանքով տարեց մի կին հայտնվել է դրսում և ներկայում ունի կացարանի խնդիր: Հայտնել են նաև, որ կնոջը Հիմնադրամ տեղավորելու նպատակով սեփական միջոցներով ավտոմեքենայով փոխադրել են Երևան, սակայն կացարանում հրաժարվել են վերջինիս ընդունել՝ պատճառաբանելով, որ ոչ աշխատանքային օրերին կացարանը նոր շահառուների չի ընդունում:

Նշվածի կապակցությամբ Հիմնադրամի ներկայացուցիչը Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ անձին կացարան ընդունելու համար անհրաժեշտ է անցնել մի շարք բժշկական հետազոտություններ՝ որոշակի հիվանդությունների առկայությունը բացառելու նպատակով:

Պաշտպանն ընդգծում է, որ նշված դեպքերից խուսափելու և անօթևաններին ժամանակին կացարան տեղավորելու համար անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի ոչ աշխատանքային օրերին և ժամերին կացարանի հերթապահ աշխատակցի կողմից անձանց ընդունումն իրականացվի կացարանի առանձնացված հատվածում՝ մինչև բժշկական հետազոտության իրականացումը:

Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ 2024 թվականին կացարանով ապահովման ծառայություն մատուցող կազմակերպություն են դիմել թվով 68 անձինք, իսկ շուրջօրյա խնամքի կազմակերպման համար Միասնական սոցիալական ծառայություն է դիմել 368 անձ, որից 221-ը ներկայում ստանում են խնամք, մնացածները մերժվել են կամ հերթագրվել: Միևնույն ժամանակ, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամում գտնվել է 100 անձ (այդ թվում՝ Արցախից Հայաստան տեղափոխված):

Նախարարությանն հասցեագրված գրությամբ Պաշտպանը տեղեկատվություն է պահանջել նաև այն մասին, թե ի՞նչ քայլեր են ձեռնարկվել անօթևան անձանց կացարան տրամադրելու նպատակով Հիմնադրամում ազատ մահճակալի բացակայության պարագայում:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ անօթևան քաղաքացիները կացարանի տրամադրման նպատակով ներկայանում են կացարանով ապահովման

ծառայություն մատուցող կազմակերպություն, որտեղ ***2024 թվականին ազատ մահճակալների բացակայության հարց չի եղել:***

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանը մեկ անգամ ևս հրավիրում է իրավասու պետական մարմինների ուշադրությունը վերը ներկայացված դեպքերին, որոնք ըստ էության փաստում են հակառակի մասին:

Անդրադարձ կատարելով «Սոցիալական շտապ օգնության համակարգի ձևավորման ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի թիվ 71-Ա հրամանի կիրարկմանը՝ Նախարարությունը հայտնել է, որ նշված հրամանով հաստատված սոցիալական շտապօգնության համակարգի ծրագրի նպատակն է՝ արագ արձագանքել արտակարգ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) սոցիալական առաջնային կարիքների բավարարման հարցում: Այդ նպատակով պահեստներում հավաքագրվել է անհրաժեշտ (բնաիրային) ապրանքատեսականի, պահեստավորվել և բաշխվել սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին *(ծրագրի իրականացման ժամանակահատվածում՝ 12 ամսում, աջակցություն է տրամադրվել ավելի քան 900 շահառուի):*

Միաժամանակ, տեղեկատվություն է տրամադրվել այն մասին, որ ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում և առնվազն մեկ մարզում: Նախատեսվում է 2025 թվականի ընթացքում ծրագրի շարունակականության ապահովում և ընդլայնում՝ անհատական/զանգվածային ճգնաժամերի արձագանքման ընթացակարգերի մշակման, ընդլայնման, մշակված տրիաժ կենտրոնի մոդելի փորձարկման, հերթապահ ծառայության պիլոտի իրականացման միջոցով:

Հարկ է նշել նաև, որ Պաշտպանը 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակում անդրադառնալով անօթևան մնացած անձանց ժամանակավոր հիմունքներով բնակելի տարածքով ապահովելու հարցի առանցքային կարևորությանը՝ ընդգծել է, որ պետության սոցիալական քաղաքականությունը, ի թիվս այլնի, պետք է ուղղված լինի անօթևանության կանխարգելմանն ու այդպիսի կարգավիճակում հայտնված անձանց՝ հասարակության մեջ ինտեգրելուն: Անօթևան անձանց կացարանով ապահովելը և խնամքը պատշաճ կազմակերպելը կարևոր է դիտարկել որպես պետության և իրավասու մարմինների գործունեության առաջնահերթություն: Այս համատեքստում՝ Պաշտպանը կարևորել է նաև պետության կողմից համապատասխան միջոցառումների իրականացումը՝ անապահով ընտանիքներին և խոցելի այլ խմբերին մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովելու, ինչպես նաև ժամանակավոր կացարանների ստեղծման և առկա կացարաններում կենսապահովման ծայրահեղ պայմանների բարելավման ուղղությամբ[614]:

Հարկ է նաև նշել, որ 2024 թվականի տարեվերջին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում կազմակերպվել է նաև աշխատանքային քննարկում՝ անօթևանության խնդրին առնչվող հարցերի

---

[614] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականների տարեկան հաղորդումը, էջեր 68-71:

կարգավորման ուղղությունների և դրանց լուծման եղանակների նախանշման նպատակով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է մշակել անօթևանության կանխարգելման հայեցակարգ, ռազմավարություն և գործողությունների ծրագիր՝ ի թիվս այլնի անդրադառնալով նաև նման կարգավիճակում հայտնված անձանց սոցիալական ինտեգրման խնդիրների հաղթահարմանն ուղղված կառուցակարգերին:

2.4 Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման խնդիրներ

2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելուն:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքներից մեկով տղամարդը հայտնել է, որ փաստացի ամուսնական հարաբերությունների (կապի) մեջ է գտնվում կնոջ հետ (առանց օրենքով սահմանված կարգով գրանցման): Նշել է նաև, որ իրենց համատեղ կյանքի ընթացքում ծնվել է 2-րդ երեխան: Դրանից բացի, տեղեկացրել է, որ կինը նախկին ամուսնությունից ունի 3 անչափահաս երեխա, որոնք ծնվել են ՌԴ-ում: Բողոքի համաձայն՝ կինը 5-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման խնդրանքով դիմել է ՄՍԾ, սակայն նոր ծնված երեխային տրվել է 4-րդ երեխայի կարգաթիվ:

Բողոքի պատշաճ ուսումնասիրությունն ու օպերատիվությունն ապահովելու համար ՄԻՊ ներկայացուցիչը բարձրացված խնդիրը քննարկել է ՄՍԾ իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս՝ նախ վկայակոչել է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետով սահմանված իրավակարգավորումները[615], ապա ներկայացրել պարզաբանում առ այն, որ ՌԴ-ում ծնված երկու երեխայի հայրությունը ճանաչված չէ և ծննդյան ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունը լրացվել է մոր գրավոր հայտարարության հիման վրա, իսկ մյուս երեխայի հայրությունը որոշված է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում կատարող մարմնում՝ երեխայի հոր (կենսաբանական հոր) և մոր համատեղ դիմումի հիման վրա: Հավելել է, որ կնոջ հետ ունեցած համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են երկու երեխա, որոնց ծննդյան ակտում ևս հոր մասին տեղեկությունը լրացվել է մոր գրավոր հայտարարության հիման վրա: Նշել է նաև, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ

---

[615] Ըստ այդմ, նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից)՝ (...) նոր ծնված երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները և զավակները (նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները), եթե՝ (...) «դ» նոտարական ակտով հաստատված է այդ երեխայի՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը կամ այդ զավակի նոտարական ակտով հաստատված հայտարարությունն այն մասին, որ անչափահաս տարիքում իր փաստացի խնամքն ու դաստիարակությունն իրականացրել է նոր ծնված երեխայի ծնողը, (...) «է» ծնողի (ով չի հանդիսանում նոր ծնված երեխայի ծնողը) գրավոր համաձայնությամբ այդ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնում է նոր ծնված երեխայի ծնողը, (...) «թ» նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ հաշվառված են նոր ծնված երեխայի բնակության (հաշվառման) վայրի հասցեով:

երեխաներից չորսի հայրությունը ճանաչված չէ և փաստացի խնամքն իրականացնում է կինը, իսկ մի երեխայի հայրությունը որոշված է (ծննդյան ակտում առկա է գրառում) և փաստացի խնամքը նույնպես իրականացնում է կինը, սակայն նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ համամայր երեխան (որի հայրությունը որոշված է) նոր ծնված երեխայի բնակության վայրի հասցեով հաշվառված չի եղել, ինչպես նաև բացակայում է նոտարական ակտով հաստատված հայտարարությունը կամ ծնողի գրավոր համաձայնությունը մոր կողմից փաստացի երեխայի խնամքն իրականացնելու մասին, ուստի, երեխայի կարգաթիվը հաշվարկվել է որպես 4-րդ երեխայի կարգաթիվ: Հետևաբար, 5-րդ երեխայի ծննդով պայմանավորված՝ առկա է վերոնշյալը հաստատող փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտություն:

Վերոգրյալի առնչությամբ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ նոտարական ակտով հաստատված հայտարարություն ՄՍԾ չեն կարող ներկայացնել, քանի որ գործարքի կատարման համար գանձվող պետական տուրքը վճարելու համար բավարար ֆինանսական միջոցներ չունեն: Բացի այդ, նշել է, որ կնոջ նախկին ամուսնու գրավոր համաձայնությունն առ այն, որ երեք երեխային փաստացի խնամում է մայրը, նույնպես չի կարող ներկայացնել՝ նախկին ամուսնու գտնվելու վայրն իրենց անհայտ լինելու պատճառով:

Պաշտպանին ներկայացրած մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ կինը նախկին ամուսնությունից ունի 2 երեխա: Հայտնել է նաև, որ իրենց համատեղ կյանքի ընթացքում ծնվել է 3-րդ երեխան, ինչով պայմանավորված՝ դիմում են ներկայացրել ՄՍԾ տարածքային կենտրոն 3-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու համար, սակայն ստացել են մերժում (նոր ծնված երեխային տրվել է 2-րդ երեխայի կարգաթիվ): Ըստ պնդման՝ թեև առաջին երեխան հաշվառված է նախկին ամուսնու բնակության վայրի հասցեով, այնուհանդերձ երեխայի խնամքն իրենք են իրականացնում:

Պաշտպանին դիմած անձին տրամադրվել է խորհրդատվություն: Մասնավորապես, պարզաբանվել են Որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետով սահմանված իրավակարգավորումները, ինչին ի պատասխան՝ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ նոտարական ակտով հաստատված հայտարարություն ՄՍԾ չեն կարող ներկայացնել՝ գործարքի կատարման համար գանձվող պետական տուրքը վճարելու համար բավարար միջոցներ չունենալու պատճառով:

Հաշվի առնելով հաշվետու տարում ստացվող բողոքներով բարձրացված խնդրի արդիականությունը՝ տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ Պաշտպանի կողմից ԱՍՀՆ-ին ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ *Որոշմամբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ անհրաժեշտության դեպքում, հիմք է ընդունվում ոչ միայն նոտարական ակտով հաստատված հայտարարությունը, այլ նաև երեխայի մյուս ծնողի գրավոր համաձայնությունը՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունը նոր ծնված երեխայի ծնողի կողմից իրականացնելու վերաբերյալ: Ընդ որում, խնդրո առարկա համաձայնությունը կարող է տրվել ծնողի կողմից՝ առանց նոտարական հավաստման:*

Պարզաբանում է տրամադրվել նաև այն մասին, որ 2023 թվականին Որոշման մեջ կատարված փոփոխության արդյունքում պարզեցվել է նմանօրինակ դեպքերում

համահայր կամ համամայր երեխային նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի առնելու ընթացակարգը: Մասնավորապես, 2023 թվականի մայիսի 19-ից սկսած նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի է առնվում նաև նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ նրա հետ նույն բնակության վայրի հասցեով հաշվառված համամայր կամ համահայր քույրերն ու եղբայրները: Բացի այդ, նույն որոշմամբ սահմանվել է նաև, որ եթե նոր ծնված երեխայի համամայր կամ համահայր արդեն չափահաս քույրը կամ եղբայրը նոտարական ակտով հաստատված հայտարարությունն է ներկայացնում այն մասին, որ անչափահաս տարիքում իր փաստացի խնամքն ու դաստիարակությունն իրականացրել է նոր ծնված երեխայի ծնողը, ապա այս դեպքում ևս այդ զավակը հաշվի է առնվում նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս:

Պաշտպանը ողջունում է նախարարության ձեռնարկած քայլերը, այնուհանդերձ հարկ է համարում արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկայում Որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետի կիրառումը դեռևս շարունակում է խնդրահարույց լինել՝ նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանին տարբեր տարիներին ներկայացված բողոքների համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամուսնալուծված նախկին ամուսինները, որպես կանոն, հրաժարվում են հայտարարություն ներկայացնել ՄՍԾ կամ նրանցից մեկի բնակության վայրը հայտնի չէ:

Բացի այդ, գործնականում լինում են դեպքեր, երբ նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ հաշվառված չեն այդ երեխայի բնակության (հաշվառման) վայրի հասցեով:

Առանձին բողոքների դեպքերում էլ անձինք բավարար ֆինանսական միջոցներ չեն ունենում ինչպես նոտարների կողմից մատուցվող ծառայությունների համար սահմանված պետական տուրքը վճարելու, այնպես էլ՝ նոտարական ծառայություններից օգտվելու համար վերջինիս գտնվելու վայր հասնելու համար: Բողոքների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ նմանօրինակ դեպքերում նոտարները հիմնականում հրաժարվում են Որոշման հիշյալ կետով պահանջվող փաստը հաստատելուց: Արդյունքում նոր ծնված երեխայի կարգաթիվը ճիշտ չի որոշվում:

Վերոգրյալի համատեքստում ուշադրության են արժանի այս խնդրի վերաբերյալ ՍԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումներն: Այսպես, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1438 որոշման շրջանակում նշել է, որ Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, ***բազմազավակության***, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»: Յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքի ծավալը որոշվում է օրենքով: Օրենքով են ամրագրվում նաև այդ իրավունքի իրացման կարգը և պայմանները: Այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է ընդունել սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորող օրենսդրական կարգավորումներ, և միաժամանակ, օգտվում է լայն հայեցողությունից, թե ինչպիսի կարգավորումներ պետք է ամրագրի: Սահմանադրության 83-րդ

հոդվածում ամրագրված իրավունքի երաշխավորմանն է ուղղված «Պետական նպաստների մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք): Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական նպաստների տրամադրման նպատակն է՝ 1) անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը. 2) ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը. 3) ժողովրդագրական իրավիճակի բարելավումը. 4) սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը»: Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ***երեխայի ծննդյան միանվագ նպաստը պետական նպաստների տեսակներից մեկն է:***

Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի տարբերակում՝ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու կարգը, նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար մյուս երեխաներին և զավակներին հաշվի առնելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Օրենքի իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2014 թվականի մարտի 6-ին ընդունել է «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» քննության առարկա որոշումը:

Օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով՝ ***երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար:*** Հետևաբար՝ ցանկացած նոր ծնված երեխա, անկախ որևէ հանգամանքից իրավունք ունի ստանալու միանվագ նպաստ, իսկ պետությունն իր հերթին պարտավոր է այն տրամադրել երեխայի ծնողներին կամ ծնողին՝ հորը կամ մորը, կամ օրինական ներկայացուցիչներին, կախված կոնկրետ իրավիճակից[616]:

Հիշատակման է արժանի նաև Վերաքննիչ վարչական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, որում անդրադառնալով երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելիս հաշվի առնվող փաստաթղթերին՝ նշվել է, որ ***ինքնանպատակ չէ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի որոշելը, քանի որ պետության կողմից բազմազավակության խրախուսումն ունի ժողովրդագրական ցուցանիշների շարունակական բարելավման նպատակ, որոնք ուղղված են առաջիկա տարիներին ծնելիության կայուն աճն ապահովելուն, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ հանրապետության բնակչության թվի էական աճ գրանցելու նախադրյալներ ստեղծելուն***[617]***:***

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է նախորդ տարիների հաղորդումների շրջանակներում արտահայտած այն դիրքորոշումը, ըստ որի՝ *պետք է հաշվի առնել, որ նոր ծնված երեխայի կարգաթիվն արտացոլում և պայմանավորվում է ընտանիքում խնամվող երեխաների քանակով, որով էլ պայմանավորվում է վճարվող նպաստի չափը:*

---

[616] Տե՛ս, ՍԴ-ի 2019 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-1438 որոշման 4.1-ին կետը:

[617] Տե՛ս, Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի հունվարի 15-ի թիվ ՎԴ6/0004/05/21 գործը:

Ընտանիքում ծնված երեխաների կարգաթիվ սահմանելու նպատակը, ըստ էության այն է, որ տրամադրվող սոցիալական ապահովության միջոցը ծառայի ընտանիքի բազմազավակությամբ պայմանավորված կարիքներին, ինչպես նաև ունենա խթանիչ ազդեցություն: Հետևաբար, նոր ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը պետք է ձեռք բերվի՝ հաշվի առնելով ընտանիքում փաստացի խնամվող երեխաների քանակը և դրա համար պետք է ներդրված լինեն և կիրառվեն արդյունավետ մեխանիզմներ, որոնք կոչված են առավելագույնս բարենպաստ որոշում կայացնելուն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ներդնել երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման առավել դյուրին և արդյունավետ կառուցակարգեր, որոնք կյանքի կկոչեն օրենսդրի նպատակը և անհարկի դժվարություններ չեն առաջացնի ծնողների համար:

2.5 Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման խնդիրներ

Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2169-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատվել է ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու կարգը, որով դրամական աջակցություն նշանակվում և վճարվում է ընտանիքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ՝ ամսական 50 000 ՀՀ դրամի չափով, մինչև երեխայի 6 տարեկանը լրանալու ամիսը ներառյալ:

Հարկ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են դիմում-բողոքներ, որոնցով քաղաքացիները բարձրացրել են ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման գործընթացի հետ կապված խնդիրներ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ ունի չորս անչափահաս երեխա (ծնվել են՝ 2010, 2011, 2017 և 2024 թվականներին): Նշել է նաև, որ երեխաների հետ միասին բնակվում է Երևանում, իսկ նախկին ամուսինը գտնվում է արտերկրում: Նշել է, որ 4-րդ երեխան ծնվել է ամուսնալուծությունից հետո, ուստի երեխայի հայրության մասին նշումը կատարվել է իր հայտարարության հիման վրա: Ըստ բողոքի՝ վերջին՝ 4-րդ երեխայի ծննդով պայմանավորված՝ դիմել է ՄՄԾ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ Որոշմամբ սահմանված դրամական աջակցությունը նշանակելու համար, սակայն մերժվել է: Հավելել է, որ ՄՄԾ-ից իրեն տեղեկացրել են, որ շահառու երեխայի կարգաթիվը որոշելու համար անհրաժեշտ է հոր (վերջինս նախքան արտասահման մեկնելը չի ճանաչել հայրությունը) գրավոր համաձայնությունը կամ այդ երեխայի՝ շահառու երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստի վերաբերյալ նոտարի կողմից հաստատված ակտ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ դիմել է նոտարին երեխաների՝ իր խնամքի տակ լինելու փաստը հաստատելու խնդրանքով, սակայն վերջինս այդ գործարքը կատարելու համար պահանջել է վարչական շրջանի կողմից տրված տեղեկանք, որով կհավաստվի երեխաների՝ իր

խնամքի տակ լինելու հանգամանքը: Հավելել է, որ այդ խնդրով *դիմել է վարչական շրջանի աշխատակազմ և ստացել տեղեկանք փաստացի բնակվողների մասին՝ առանց երեխաների՝ իր խնամքի տակ լինելու վերաբերյալ նշումով:*

Հավելել է, որ շահառու երեխայի խնամքն ու դաստիարակությունն իր կողմից իրականացվելու համաձայնության վերաբերյալ երեխաների հոր կողմից հայտարարությունը նախկին ամուսինը չի կարող ներկայացնել ՄՄԾ, արտասահմանում գտնվելու պատճառով: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն անհրաժեշտ բովանդակությամբ տեղեկանք վարչական շրջանի կողմից ստանալու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան՝ անհրաժեշտ բովանդակությամբ տեղեկանք չտրամադրելու վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Ի պատասխան, մասնավորապես, ներկայացվել է պարզաբանում առ այն, որ վարչական շրջանից ստացված պարզաբանմամբ՝ իրավաբանական նշանակության փաստը ենթակա է հաստատման, եթե նշված փաստը, կոնկրետ իրավունք չէ և այն ամրագրող փաստաթուղթ կամ իրավասու պետական կամ այլ մարմին առկա չէ և անձը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթուղթ:

Տրամադրվել է նաև տեղեկատվություն այն մասին, որ վարչական շրջանի ղեկավարը չի կարող տրամադրել անձի՝ ուրիշի խնամքի տակ լինելու վերաբերյալ փաստաթուղթ, այն պատճառով, որ նման լիազորություն չունի և բնականաբար նման հաշվառում չի իրականացնում, և այդ փաստը հաստատվում է կա՛մ նոտարի կողմից, կա՛մ դատական կարգով, քանի որ այդ փաստից կախված է անձի անձնական և (կամ) գույքային իրավունքների ծագումը՝ այս դեպքում՝ օրենքով սահմանված կարգով դրամական աջակցության տրամադրումը:

Մեկ այլ նմանատիպ բողոքով Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու համար ՄՄԾ-ն պահանջել է նոտարի կողմից երեխաների՝ իր խնամքի տակ լինելու մասին փաստը հաստատող ակտ: Ըստ բողոքի՝ դիմել է նոտարին երեխաների խնամքն իր կողմից իրականացնելու փաստը հաստատելու նպատակով, սակայն վերջինս պահանջել է համատիրության կողմից տրամադրված տեղեկանք՝ երեխաների իր խնամքի տակ լինելու մասին: Ըստ դիմողի՝ հաշվի առնելով այն, որ իրենց նորակառույց շենքը համատիրություն դեռևս չունի, այն ստանալու համար դիմել է վարչական շրջանի աշխատակազմին և ***տեղեկացվել, որ վարչական շրջանի կողմից կարող է տրամադրվել տեղեկանք փաստացի բնակվողների մասին՝ առանց երեխաների՝ իր խնամքի տակ լինելու վերաբերյալ նշումով:***

Պաշտպանի աշխատակազմի և վարչական շրջանի աշխատակազմի արդյունավետ համագործակցության արդյունքում բողոք ներկայացրած անձին տրամադրվել է նոտարի պահանջած բովանդակությամբ տեղեկանք: Արդյունքում, բողոք ներկայացրած անձին նշանակվել է ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն:

Նկատի ունենալով հաշվետու տարում ստացվող գրավոր և բանավոր բողոքներով բարձրացված խնդրի արդիականությունը՝ Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում գրություն է

հասցեագրել ԱՍՀՆ-ին: Ըստ նախարարությունից ստացված պարզաբանման՝ դրամական աջակցության իրավունքը ծագում է ընտանիքում առնվազն 3 երեխաների փաստացի խնամքի ու դաստիարակության կապակցությամբ, իսկ դրամական աջակցությամբ պետությունը նպաստում է նման ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Այս տրամաբանությամբ Որոշմամբ սահմանված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանները նպատակ են հետապնդում բացահայտել նոր ծնված երեխայի և նրա հորից կամ մորից սերված երեխաների՝ նույն ընտանիքում խնամք ու դաստիարակություն ստանալու (փաստացի բնակվելու) հանգամանքը:

Ըստ տրամադրված պարզաբանման՝ դրամական աջակցություն նշանակելու համար շահառու երեխայի կարգաթիվը որոշելիս Որոշմամբ սահմանված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետի «է» պարբերության համաձայն՝ հաշվի են առնվում նաև շահառու երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները (շահառու երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները), եթե ծնողի (ով չի հանդիսանում շահառու երեխայի ծնողը) **գրավոր համաձայնությամբ** այդ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնում է շահառու երեխայի ծնողը: Ընդ որում, այս դեպքում ևս խնդրո առարկա համաձայնությունը նոտարական հաստատում չի պահանջում:

Նախարարությունը նշել է նաև, որ պարբերաբար ուսումնասիրում է նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի որոշման հետ կապված բարձրացված խնդիրները և ըստ անհրաժեշտության լրամշակում ոլորտի իրավակարգավորումները:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկ է նշել, որ ՄԻՊ աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ շահառու երեխաների կարգաթիվը որոշելիս իրավակիրառ պրակտիկայում դեռևս առկա են խնդիրներ, որոնք դժվարացնում են դրամական աջակցության իրավունքի իրացումը և ծնողի համար առաջացնում վարչարարական ավելորդ քաշքշուկներ:

Ուստի, ծնունդների խրախուսումների ու բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքների տեսանկյունից՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման առավել մատչելի և արդյունավետ կառուցակարգերի նախատեսման ու իրացման հարցերը:

2.6 Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2024-2026 թվականների պետական աջակցության ծրագրի իրականացման հետ կապված խնդիր

Կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի թիվ 968-Լ որոշմամբ հաստատված՝ երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության 2024-2026 թվականների պետական աջակցության ծրագրերի շրջանակներում պետության կողմից աջակցություն է տրամադրվում հիփոթեքային վարկով բնակարան ձեռք բերող (բերած) կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկ ստացած քաղաքացիներին:

Ծրագիրն իրականացվում է աջակցության հետևյալ երկու բաղադրիչների ձևով՝

1) միանվագ դրամական աջակցություն մարզային բնակավայրերում՝ հիփոթեքի միջոցով բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու համար.

2) երեխայի ծննդով պայմանավորված՝ աջակցություն հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին:

Պաշտպանը ողջունելի է համարում երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության հիշյալ ծրագրի իրականացումը, ինչպես նաև դրա շարունակականության ապահովումը: Այս համատեքստում Պաշտպանը կարևորում է նաև ժողովրդագրական վիճակի շարունակական բարելավման և մարդկային կապիտալի զարգացման ուղղությամբ պետության կողմից գործադրվող ջանքերը:

Վերոգրյալով հանդերձ, հարկ է նշել, որ Պաշտպանին հասցեագրված անհատական բողոքի քննարկման արդյունքում վեր է հանվել ծրագրին առնչվող համակարգային խնդիր, որի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ են համատեղ ջանքեր և մասնագիտական քննարկումներ բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Այսպես, Պաշտպանին ներկայացված բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ 2023 թվականին ծնված երեխայի ծննդով պայմանավորված՝ Կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի թիվ 968-Լ որոշմամբ նախատեսված աջակցությունը ստանալու համար դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ստացել պատասխան առ այն, որ ընտանիքը կարող է դառնալ ծրագրի շահառու, եթե սեփականության իրավունքով պատկանող բնակելի անշարժ գույքի գնահատվող շուկայական առավելագույն գինը 30 մլն դրամ է: Հաշվի առնելով այն, որ, ըստ բողոքը ներկայացրած անձի, իր բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական գինը կազմել է մոտ 31,6 մլն դրամ՝ մերժումը համարել է հիմնավոր:

Պաշտպանի աշխատակազմ ներկայացրած լրացուցիչ տեղեկատվությամբ՝ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի թիվ 968-Լ որոշմամբ հաստատված ծրագրի հիմնական պայմաններում կատարվել են մի շարք փոփոխություններ[618]: Մասնավորապես, բարձրացվել է ձեռք բերվող (բերված), կառուցվող բնակելի անշարժ գույքի արժեքի նկատմամբ կիրառվող առավելագույն սահմանաչափը՝ ***30 մլն դրամից դառնալով 35 մլն դրամ***:

Բացի այդ, փոփոխությունների արդյունքում՝ *որոշման գործողությունը տարածվել է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա,* ***<u>բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի ծննդյան աջակցության ծրագրի շրջանակներում շահառուն դիմում է 2023 թվականին ծնված երեխայի ծննդով պայմանավորված աջակցություն ստանալու համար</u>***[619]***:***

Այսպիսով, նոր իրավակարգավորումների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ Որոշմամբ հաստատված հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին տրամադրվող աջակցությունը ստանալու համար դիմելու իրավունք ունեն նաև 2023

---

[618] Առավել մանրամասն տե՛ս, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի թիվ 968-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 1167-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի թիվ 381-Լ որոշումը:

[619] Տե՛ս, ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի թիվ 381-Լ որոշման 4-րդ կետը:

թվականին ծնված երեխայի՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքները, որոնք բավարարում են սահմանված պահանջներին (տվյալ դեպքում բնակելի անշարժ գույքի արժեքի սահմանաչափի մասով):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Պատասխան գրությամբ՝ վկայակոչվել է ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի թիվ 381-Լ որոշման վերը հիշատակված 4-րդ կետը և տեղեկատվություն տրամադրվել այն մասին, որ ***քաղաքացու երեխան ծնվել է 2023 թվականին, հետևաբար, որոշմամբ սահմանված կարգավորումները, այդ թվում՝ բնակելի անշարժ գույքի արժեքի սահմանաչափի բարձրացումը, քաղաքացու վրա չեն տարածվում:***

Նշված պարզաբանումները համարելով ոչ բավարար՝ Պաշտպանը կրկին գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Պատասխան գրությամբ՝ նշվել է, որ Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, ***եթե դա նախատեսված է այդ ակտերով:***

Հայտնել են նաև, որ ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ (…) անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, ***եթե դա նախատեսված է այդ ակտերով:***

Ըստ նախարարության՝ վերոնշյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ անձի իրավական վիճակը բարելավող նորմատիվ իրավական ակտերին հետադարձ ուժ տալը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ նախատեսված է համապատասխան ակտով:

Տվյալ դեպքում, նախարարության դիրքորոշմամբ, ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի թիվ 381-Լ որոշմամբ ամրագրված չէ որևէ դրույթ այն մասին, որ որոշումն ունի հետադարձ ուժ, իսկ որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նոր բացառություններ սահմանելու դեպքում վերջիններս կվերաբերեն ոչ միայն բողոք ներկայացրած անձին, այլ նաև նույն կարգավիճակում գտնվող այլ հնարավոր անձանց, ինչի համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերոգրյալ մոտեցումը, մեր կարծիքով, խնդրահարույց է, ինչպես նաև մտահոգության տեղիք է տալիս մարդկանց սոցիալական իրավունքների պատշաճ իրացման տեսանկյունից:

Նշված մոտեցումն անթույլատրելի է այն պատճառով, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի թիվ 381-Լ որոշման 4-րդ կետը *շահառուներին ակնհայտորեն ընձեռում է հնարավորություն 2023 թվականին ծնված երեխայի ծննդով պայմանավորված աջակցություն ստանալու համար դիմում ներկայացնելու:* Այլ կերպ ասած՝ Կառավարության վերոհիշյալ որոշմամբ ***նախատեսված*** իրավակարգավորումների մի մասը բարելավում են շահառուների իրավական վիճակը և պետք է հետադարձ ուժ ունենան:

Հարկ է հավելել, որ նախարարության մոտեցումը չի բխում նաև քննարկվող ծրագրի հիմնական նպատակներից ու խնդիրներից, որոնք հանգում են հետևյալին.

1) աջակցել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը՝ համապատասխան պայմաններ ապահովելով ընտանիքների կայուն զարգացման համար.

2) խթանել երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման գործընթացը մարզային բնակավայրերում.

3) երեխայի ծննդյան դեպքում վարկային բեռը թեթևացնելու միջոցով հնարավորություն ընձեռել շահառուներին համատեղել հիփոթեքային վարկի մարումը և երեխայի խնամքը՝ աջակցելով հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին երեխա ունենալու հարցում:

Անդրադառնալով ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հանգամանքին՝ հարկ է նշել, որ նման իրավիճակը մտահոգիչ է: Կարծում ենք, որ նախարարությունը պետք է ջանքեր գործադրի (այդ թվում՝ օրենսդրական մակարդակում) խնդրին հրատապ լուծում տալու ուղղությամբ: Ընդ որում, խնդրի լուծմանն ուղղված միջոցառումները պետք է կրեն համակարգային բնույթ:

Այսպիսի մոտեցումը կբխի նաև Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 4-րդ բաժնի 4.1-ին ենթաբաժնի 2-րդ պարբերությունից, որի համաձայն՝ *շարունակաբար աշխատանքներ են իրականացվելու՝ վերանայելու և զարգացնելու արդեն մեկնարկած ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված ծրագրերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխաներ ունեցող ընտանիքների բնակապահովման միջոցառումներին, երեխաների խնամքի համար տրամադրվող նպաստներին*[620]*:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ արձանագրված խնդրին պատշաճ լուծում տալու նպատակով անհրաժեշտ է հրատապ քայլեր ձեռնարկել նշված ծրագրի շրջանակներում 2023 թվականին ծնված երեխայի ծննդով պայմանավորված պետական աջակցություն տրամադրելու ուղղությամբ՝ հատուկ քննարկման առարկա դարձնելով բավարար ֆինանսավորում նախատեսելու հարցը:

2.7 Պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալներին բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում չտրամադրելու խնդիր

2024 թվականին Պաշտպանին ներկայացվել են բանավոր բողոքներ, որոնցով պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալները բարձրացրել են բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցման չտրամադրման հետ կապված խնդիր:

Ընդ որում, հարկ է ընդգծել, որ այս խնդիրը Պաշտպանի հաստատության կողմից վեր է հանվել ոչ միայն անհատական բողոքների ուսումնասիրության արդյունքում, այլ նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակներում իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում:

Ըստ բողոքների՝ պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալները պատժից ազատումից ամիսներ առաջ սահմանված կարգով դիմել են քրեակատարողական հիմնարկի պետին, որպեսզի վերջինս ապահովի վարձակալությամբ բնակարան գտնելն ու բնակարանի վարձակալության

---

[620] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.gov.am/files/docs/4586.pdf, էջ 53, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

վարձավճարի հատուցում ստանալու համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն առցանց դիմում ներկայացնելը, սակայն ստացել են մերժում: Արդյունքում՝ պատժի կրումից հետո իրենց նշված հատուցումը չի տրամադրվել:

Խնդրո առարկա դեպքով համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով ՄԻՊ ներկայացուցիչը կապ է հաստատել ԱՍՀՆ իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս տրամադրել է տեղեկատվություն առ այն, որ *ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության ձևը, ծավալն ու տրամադրելու կարգը, ինչպես նաև դատապարտյալին տրամադրվող միանվագ դրամական օգնության չափն ու տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 502-Ն որոշմամբ* (այսուհետ՝ Որոշում) նախատեսված բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցման տրամադրման գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգը դեռևս չի գործարկվել, այդ իսկ պատճառով առցանց դիմում ներկայացնելու հնարավորություն առկա չէ: Տեղեկատվություն է տրամադրել նաև այն մասին, որ *Որոշման կիրարկումից հետո պատժից ազատվող և բնակության վայր չունեցող որևէ դատապարտյալի բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում չի տրամադրվել:*

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ Միավորված ազգերի կազմակերպության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի *«Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ)»* 108-րդ կետում նշվում է, որ *կառավարական կամ այլ մարմիններն ու հաստատությունները, որոնք ազատված բանտարկյալներին օգնում են հասարակության մեջ իրենց տեղը գտնելու (…) պետք է հոգ տանեն, որ այդպիսի բանտարկյալներն անձը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր ու վկայականներ ստանան, **համապատասխան բնակարան և աշխատանք գտնեն**, ունենան տվյալ կլիմային ու տարվա եղանակին հարմար հագուստ և այնքան միջոցներ, որը բավարար է նշանակման վայրը մեկնելու և ազատվելուն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում ապրելու համար*[621]*:* Այս հարցն իրավական կարգավորման է ենթարկվել նաև այլ միջազգային իրավական փաստաթղթերով[622]:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավաբանության այս պահանջներն իրացվել են նաև ներպետական օրենսդրության մեջ: Այսպես, օրինակ՝ Քրեակատարողական օրենսգրքի 141-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալն ապահովվում է ժամանակավոր կացարանով՝ մինչև վեց ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցելով:***

Դրա հետ մեկտեղ, Որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետով ուղղակիորեն նախատեսված է, որ *եթե պատժից ազատվող դատապարտյալը չունի*

---

[621] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Nelson_Mandela_Rules-E-ebook.pdf, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[622] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/I3AdJ, կետ 102.1, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

բնակության վայր, ապա նրան տրամադրվում է բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում (այսուհետ՝ հատուցում)՝ մինչև վեց ամիս ժամկետով:

Նույն հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ դատապարտյալը համարվում է բնակության վայր չունեցող, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում չունի սեփականության կամ համասեփականության իրավունքով բնակարան (բնակելի տարածություն)[623], իսկ ըստ 10-րդ կետի՝ ***բնակության վայր չունեցող դատապարտյալի պատժից ազատումից առնվազն երկու ամիս առաջ քրեակատարողական հիմնարկի պետն ապահովում է դատապարտյալի վարձակալությամբ բնակարան գտնելը և առցանց դիմումի ներկայացումը միասնական սոցիալական ծառայություն՝ հատուցում ստանալու համար:***

Մարդու իրավունքների պաշտպանի 2024 թվականի տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ *Որոշման կիրարկման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի խնդիրներ, որոնք խոչընդոտել են դրա կիրարկմանը, ինչով պայմանավորված ծրագրի գործարկումից ի վեր պատժից ազատվող որևէ դատապարտյալ չի ստացել բնակելի տարածության վարձավճարի փոխհատուցում:*

Մասնավորապես, ըստ նախարարության, Որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ բնակության վայր չունեցող դատապարտյալի պատժից ազատումից առնվազն երկու ամիս առաջ քրեակատարողական հիմնարկի պետն է ապահովում դատապարտյալի վարձակալությամբ բնակարան գտնելը *(ինչը խնդրահարույց է)* և առցանց դիմումի ներկայացումը Միասնական սոցիալական ծառայություն՝ Որոշմամբ սահմանված բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում ստանալու համար:

Նախարարության տեղեկացմամբ՝ Որոշման կիրարկման ընթացքում ի հայտ եկած որոշակի խնդիրների լուծման ուղիներ գտնելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով նախարարության, ՄՍԾ-ի և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ պարբերաբար տեղի են ունեցել քննարկումներ, որոնց արդյունքներով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այս պահին դեռևս հնարավոր չէ իրականացնել Որոշմամբ սահմանված մի շարք պահանջների կատարումը, նախատեսվել է փոփոխություններ կատարել Որոշման մեջ և նախագիծը մշակող մարմնի՝ Արդարադատության նախարարության կողմից շրջանառել համապատասխան որոշման նախագիծ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ Որոշման կիրարկումից հետո ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների բովանդակությունը վկայում է պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության *(դրա ձևի, ծավալի, տրամադրման կարգի)*, ինչպես նաև դատապարտյալներին տրամադրվող միանվագ դրամական օգնության *(դրա չափի)* վերաբերյալ վերջիններիս իրազեկվածության ոչ բավարար

---

[623] Դատապարտյալին սեփականության կամ համասեփականության իրավունքով պատկանող բնակարանի (բնակելի տարածության) առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Կադաստրի կոմիտեն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

մակարդակի մասին: Այս տեսանկյունից Պաշտպանը կարևորում է պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության վերաբերյալ վերջիններիս իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերի անհրաժեշտությունը: Դրանք կարելի է կազմակերպել ինչպես պատիժը կատարող հիմնարկների միջոցով, այնպես էլ հանրային իրազեկման աղբյուրներով (օրինակ՝ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով):

Ամփոփելով վերոգրյալը, Պաշտպանը կարևորում է բարձրացված խնդիրների լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշման նպատակով շարունակական քննարկումների իրականացումը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ խնդիրները պետք է ստանան շուտափույթ լուծում և պատժից ազատվող դատապարտյալների սոցիալական աջակցության իրավունքի առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է արագացնել համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման գործընթացը, որպեսզի պատժից ազատվող դատապարտյալները կարողանան պատշաճ և ամբողջ ծավալով օգտվել իրենց համար նախատեսված սոցիալական:

ԳԼՈՒԽ 6. ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին արդիական են եղել հանրային ուղևորատար տրանսպորտի սպասարկման որակի, գերծանրաբեռնվածության, ժամանակին և կանոնավոր չաշխատելու հետ կապված խնդիրները:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ինքը և Վանաձոր քաղաքի 20-ից ավել մանկավարժ աշխատում են Սպիտակ համայնքի տարբեր բնակավայրերում տեղակայված դպրոցներում: Նշել է նաև, որ միջհամայնքային տրանսպորտային երթուղու բացակայության պատճառով՝ աշխատանքի գնում են ոչ սարքին վիճակում գտնվող միկրոավտոբուսներով, ինչը, ըստ բողոքը ներկայացրած անձի, վտանգում է իրենց կյանքը:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ առաջարկելով քննարկել միջհամայնքային տրանսպորտային միջոց գործարկելու կամ պատշաճ տրանսպորտով ապահովելու հարցերի քննարկումը:

Ի պատասխան՝ նախարարությունից տեղեկացրել են, որ ներկայում «Վանաձոր-Սպիտակ» ներմարզային երթուղին սպասարկվում է օրական երեք շրջապտույտ «Ուղեծիր» ՍՊ ընկերության կողմից: Հայտնել են նաև, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 2620-Ա հրամանի համաձայն՝ 2025 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակում նախատեսվում է կազմակերպել Լոռու մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող կազմակերպությունների ընտրության մրցույթ, ինչի արդյունքում ՀՀ Լոռու մարզի համայնքները կսպասարկվեն նոր տրանսպորտային միջոցներով:

Հաշվի առնելով մանկավարժներին տեղափոխող տրանսպորտի կիսասարք և հնամաշ լինելը՝ Պաշտպանը կրկնակի գրությամբ առաջարկել է մինչ միասնական երթուղային ցանցը սպասարկող կազմակերպությունների ընտրության մրցույթ անցկացնելը՝ քննարկել մանկավարժների փոխադրումը պատշաճ տրանսպորտային միջոցով ապահովելու հնարավորության հարցը:

Ի պատասխան՝ նախարարությունից տեղեկացրել են, որ մինչև Լոռու մարզի միասնական երթուղային ցանցի ներդնումը՝ մանկավարժներին Վանաձորից Սպիտակ տեղափոխող տրանսպորտային միջոցների տրամադրման գործընթացը հնարավոր կլինի կազմակերպել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի «Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 47-Ն հրամանի պահանջներին համապատասխան կրթական հաստատությունների կողմից մանկավարժների փոխադրումները տրանսպորտային ծառայությունների դիմաց տրվող փոխհատուցման միջոցների հաշվին կազմակերպելու միջոցով, այդ թվում՝ փոխհատուցման համար հաշվարկված գումարների շրջանակներում հաստատությունների կողմից կարող են ձեռք բերվել նաև ուղևորափոխադրման ծառայություններ: Ընդ որում, ուղևորափոխադրման ծառայությունների ձեռքբերման գնման տեխնիկական բնութագիրը կարող է ներառել

վարորդին և նրա հագուստին ներկայացվող, ինչպես նաև ուղևորափոխադրող մեքենայի տեխնիկական վիճակի պայմանների մասին դրույթներ:

Հաշվետու տարում Պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել նաև Արագածոտնի մարզի Օշական համայնքի, ինչպես նաև Արմավիրի մարզի Արմավիր և Մերձավան բնակավայրերի բնակիչներից՝ տրանսպորտը ժամանակին և կանոնավոր չաշխատելու, գերծանրաբեռնվածության, գյուղերում մեկ երթուղի գործելու և այլ խնդիրների վերաբերյալ:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացրել է, որ նախարարությունը հայտարարել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ Արագածոտնի մարզի միասնական երթուղիների համար: Մրցույթը կկայանա 2024 թվականի հոկտեմբերի 4-ին: ***Ըստ նախարարության՝ մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո մարզի բնակավայրերը կունենան որակյալ և արդյունավետ տրանսպորտային սպասարկում:***

Վերոգրյալի հետ մեկտեղ, հայտնել է, որ Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է դեռևս 2021 թվականի նոյեմբերի 19-ին և մարզի Վաղարշապատ տարածաշրջանը սպասարկվում է «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲ ընկերության կողմից, իսկ Արմավիրի տարածաշրջանի համար հայտ ներկայացրած կազմակերպությունները չեն բավարարել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ հաստատված կարգի պահանջները, որի հետևանքով մրցույթում հաղթող չի ճանաչվել: Մրցույթի արդյունքները ներկայում վիճարկվում են դատական կարգով և միայն դատական գործընթացի ավարտից հետո հնարավոր կլինի անդրադառնալ մարզում միասնական երթուղային ցանցի ներդրմանը:

«Երևան-Վաղարշապատ» թիվ 205 միջմարզային երթուղու վերաբերյալ տեղեկացրել է, որ Արմավիրի մարզի Վաղարշապատ տարածաշրջանի միասնական երթուղիները սպասարկող «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲ ընկերությունը ձեռք է բերել նոր տրանսպորտային միջոցներ՝ երթուղիների տրանսպորտային սպասարկման որակը բարձրացնելու նպատակով:

Հարկ է նշել, որ այս դիմում-բողոքները Պաշտպանի աշխատակազմում գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

2024 թվականին հանրային ուղևորատար տրանսպորտի հետ կապված խնդիրներ արձանագրվել են նաև Պաշտպանի՝ Արագածոտնի մարզի եզդիական բնակչություն ունեցող բնակավայրեր այցի շրջանակում: Այցը կազմակերպվել է Ազգային ժողովի պատգամավոր, Խորհրդարանում եզդիական համայնքի ներկայացուցիչ, ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանի հետ համատեղ, մասնակցել են Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը, խորհրդարանական հանձնաժողովի անդամ պատգամավորներ:

Շրջայց է իրականացվել Արևուտ, Կանչ և Հակո գյուղական բնակավայրերով: Բոլոր բնակավայրերում, ի թիվս այլնի, արձանագրվել են տրանսպորտի

բացակայության հետ կապված խնդիրներ[624]: Մասնավորապես, այցի ընթացքում պարզվել է, որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո, աշակերտները հնարավորություն չունեն իրենց բնակավայրում շարունակելու կրթությունը: Վերջիններս հայտնել են, որ Արևուտ խոշորացված համայնքում առկա չէ ավագ դպրոց և աշակերտները ստիպված են գնալ Թալին քաղաքում գտնվող համապատասխան կրթական հաստատություն, որը սակայն գտնվում է 8 կմ հեռավորության վրա և միջհամայնքային տրանսպորտի բացակայության պայմաններում առաջանում են դժվարություններ: Արձանագրված խնդիրը (մնացյալ խնդիրների հետ միասին) ամփոփվել և ներկայացվել է պետական իրավասու մարմիններին:

Հաշվի առնելով ազատ տեղաշարժի անխոչընդոտ իրականացման կարևորությունը և քննարկվող խնդրի համակարգային բնույթը՝ Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների շրջանակում հարցադրում է ուղարկել ՏԿԵՆ առ այն, *թե նախարարության իրավասության շրջանակում ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել(ում) միջհամայնքային և միջմարզային ուղևորափոխադրումները պատշաճ կերպով կազմակերպելու, իսկ երթուղու բացակայության պայմաններում՝ այդպիսիք նախատեսելու ուղղությամբ:*

Ի պատասխան Պաշտպանի հարցադրմանը՝ նախարարությունից հայտնել են, որ Հայաստանի Հանրապետությունում ուղևորափոխադրումների ոլորտը բարելավելու նպատակով ներդրվում է միասնական երթուղային ցանց: Մասնավորապես, Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2021 թվականի հոկտեմբերի 29-ին, որի արդյունքում մարզը սպասարկվում է «Մուլտի Տրանսպորտ» ՍՊ ընկերության կողմից: Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2021 թվականի նոյեմբերի 19-ին, որի արդյունքում մարզի Վաղարշապատ տարածաշրջանը սպասարկվում է «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲ ընկերության կողմից: Իսկ Արմավիրի տարածաշրջանը սպասարկելու համար մրցույթին հայտ ներկայացրած կազմակերպությունները չեն բավարարել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները, որի հետևանքով մրցույթում հաղթող չի ճանաչվել: Մրցույթի արդյունքները ներկայում վիճարկվում են դատական կարգով և դատական

[624] Այս առթիվ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3190 , 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գործընթացի ավարտից հետո միայն հնարավոր կլինի անդրադառնալ մարզում միասնական երթուղային ցանցի ներդրմանը:

Տեղեկացրել են նաև, որ ներկայում նախարարության կողմից աշխատանքներ են իրականացվում մինչև դատական գործընթացի ավարտը մարզի երթուղիները սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու ուղղությամբ: Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2022 թվականի հունվարի 20-ին, որի արդյունքում Արարատի մարզի միասնական երթուղիների սպասարկման իրավունք էր ստացել «Ռեգնում» ՍՊ ընկերությունը: Հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերման պարտավորությունները չկատարելու պատճառով 2023 թվականի ապրիլին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը «Ռեգնում» ՍՊ ընկերությանը զրկել է Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկելու իրավունքից: Սակայն մարզում նոր մրցույթ հնարավոր չէ կազմակերպել, քանի որ զրկման հրամանը վիճարկվում է դատական կարգով: Մինչև մարզում միասնական երթուղային ցանցի ներդրումը նախարարությունը քայլեր է ձեռնարկում մարզի բնակավայրերի ժամանակավոր սպասարկումը կազմակերպելու համար:

Վերոգրյալից բացի, տեղեկացրել են նաև, որ Արագածոտնի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2024 թվականի հոկտեմբերի 4-ին, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Մուլտի Տրանսպորտ» ՍՊ ընկերությունը, իսկ Գեղարքունիքի մարզի միասնական երթուղիների՝ Սևանի, Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2024 թվականի հունիսի 28-ին, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Գ-ԱՐՔՈՒՆԻՔ-1» ՍՊ ընկերությունը: Արագածոտնի մարզի համայնքների և Գեղարքունիքի մարզի Սևան, Գավառ և Ճամբարակ համայնքների ներհամայնքային երթուղիները ներառվել են համապատասխան միասնական երթուղային ցանցերում՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին համապատասխան: Վերը նշված մարզերի միասնական երթուղային ցանցերի սպասարկումը «Մուլտի Տրանսպորտ» և «Գ-ԱՐՔՈՒՆԻՔ-1» ՍՊ ընկերությունների կողմից կիրականացվի հայտ-պարտավորությամբ սահմանված ժամկետում տրանսպորտային միջոցները գնահատման ներկայացնելուց հետո: Բացի այդ, 2024 թվականին հայտարարված Գեղարքունիքի մարզի միասնական երթուղիների՝ Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը չէր կայացել հայտատուի կողմից մրցութային կարգի պահանջները չապահովելու պատճառով: Գեղարքունիքի մարզի նշված տարածաշրջանների նոր մրցույթը կայանալու է 2025 թվականի հունվարի 24-ին: Հաջորդիվ, Պաշտպանի աշխատակազմ ներկայացվել է լրացուցիչ տեղեկատվություն առ այն, որ նշված մրցույթը չի կայացել հայտատու չլինելու պատճառով:

Հարկ է նշել, որ այս խնդիրներին Պաշտպանը տարիներ շարունակ անդրադարձել է իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում[625]: Մասնավորապես, նշելով, որ ուղևորատար տրանսպորտի թերզարգացվածությունը մարդկանց համար առաջացնում է մի շարք սոցիալական և այլ տեսակի խնդիրներ, ինչպես նաև անհարմարություններ, այդ թվում՝ անձանց ազատ տեղաշարժի անխոչընդոտ իրականացման տեսանկյունից: Հասարակական ուղևորատար տրանսպորտն այն ոլորտն է, որի հետ առնչվում է գրեթե յուրաքանչյուր մարդ: Պաշտպանն ընդգծել է նաև, որ անհրաժեշտ է բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ հանրային ուղևորատար տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ, ինչպես նաև գերծանրաբեռնվածության հարցի լուծման կապակցությամբ ավելացնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների քանակը՝ ապահովելով մարզային բոլոր համայնքներում տրանսպորտի առկայությունը և հասանելիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ հանրային ուղևորատար տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ.***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել հանրապետության բոլոր մարզերում հասարակական տրանսպորտի որակի բարելավման և պատշաճ սպասարկումն ապահովելու ուղղությամբ:***

[625] Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 848-851, 797-799):

ԳԼՈՒԽ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների արդյունավետ և օպերատիվ լուծումը ենթադրում է նաև անկախության ու փոխօգնության սկզբունքների վրա հիմնված համագործակցություն, մասնավորապես, այլ երկրների մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների հետ: Այս առումով, հիշատակման է արժանի այն, որ հաշվետու տարվա ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր մանդատի շրջանակներում ոչ միայն շարունակել է ակտիվ համագործակցությունն օմբուդսմանական գործընկեր հաստատությունների հետ, այլ նաև ընդլայնել է փոխգործակցության ուղղությունները: Հարկ է նաև նշել, որ ձևավորված սերտ համագործակցության արդյունքում օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների բազմաթիվ խնդիրներ *(այդ թվում՝ պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հետ կապված)* ստացել են լուծում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված դիմումով անձը հայտնել էր, որ որդին գտնվում է Ֆրանսիայի փախստականների համար նախատեսված ճամբարներից մեկում, տառապում է կյանքին վտանգ սպառնացող հիվանդությամբ (ստանում է բուժում երիկամային անբավարարության դեմ): Անձն իր մտահոգությունն էր հայտնել առ այն, որ Հայաստան վերադառնալու դեպքում որդու կյանքը հնարավոր չի լինի փրկել, քանի որ Հայաստանում դիակային դոնորից երիկամի փոխպատվաստում չի իրականացվում, իսկ ինքը որդու համար կենդանի դոնոր չի կարող լինել, քանի որ առկա են բժշկական չափանիշների անհամապատասխանություններ:

Անձի պնդումները հիմնվում էին նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվություն վրա, որի համաձայն՝ ներկայում Հայաստանի Հանրապետությունում երիկամի փոխպատվաստումն իրականացվում է միայն կենդանի դոնորից, իսկ դիակային դոնորից օրգանների և հյուսվածքների փոխպատվաստում, այդ թվում՝ երիկամային փոխպատվաստում չի իրականացվում: Նշվածի հաշվառմամբ՝ անձը խնդրել էր Պաշտպանի աջակցությունը Ֆրանսիայում բուժում ստացող իր որդու արտաքսումը կասեցնելու հարցում:

Դիմումի քննարկման շրջանակներում նամակ է հասցեագրվել նաև Ֆրանսիայում իրավունքների պաշտպանին (The French Defender of Rights): Ավելի ուշ՝ Պաշտպանին դիմում ներկայացրած անձը տեղեկացրել է, որ Ֆրանսիայից որդու արտաքսման գործընթացը կասեցվել է և նա կշարունակի բուժում ստանալ այնտեղ:

Մեկ այլ դեպքում, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումով անձը հայտնել էր, որ դուստրը բուժման նպատակով մեկնել է Ֆրանսիա: Հավելել է, որ առողջական ծանր խնդիրներով, ինչպես նաև միայնակ և առանց խնամակալի գտնվում է այդ երկրի օնկոլոգիական կենտրոններից մեկի վերակենդանացման բաժանմունքում *(Պաշտպանի աշխատակազմ են ստացվել նաև նշված հանգամանքները հաստատող բժշկական և այլ փաստաթղթեր):* Դստեր ծանր հիվանդության պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անձը խնդրել էր Պաշտպանի աջակցությունը Հայաստանում

Ֆրանսիայի դեսպանատանն արտահերթ հարցազրույցի օր ամրագրելու և մուտքի արտոնագիր ստանալու հարցերում:

Հաշվի առնելով հարցի կարևորությունն ու հրատապությունը, նկատի ունենալով Պաշտպանի հաստատության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան միջև առկա համագործակցության բարձր մակարդակը՝ Մարդու իրավունքների պաշտպանը նշված հարցի կապակցությամբ նամակ է հասցեագրել Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանին: Արդյունքում, բողոքի ներկայացրած անձի բարձրացված հարցն ստացել է լուծում:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը մշտական կապ է պահպանել նաև այլ երկրների մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների հետ: Նշված հաստատությունների հետ սերտ համագործակցության արդյունքում կրկին հնարավոր է եղել օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիների շատ խնդիրների տալ լուծում:

Այսպես, օրինակ՝ 2024 թվականին Ռուսաստանի Դաշնության Չելյաբինսկի մարզի Մարդու իրավունքների հանձնակատարը դիմել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ տեղեկացնելով, որ քաղաքային բժշկական հաստատություններից մեկում բուժում ստացող ՀՀ քաղաքացին ունի առողջական լուրջ խնդիրներ, ինչպես նաև պատշաճ բուժօգնության և խնամքի կարիք: Հանձնակատարը տեղեկացրել էր նաև, որ վերջինս բնակվում է միայնակ, չունի հարազատներ, որոնք կարող են ստանձնել նրա խնամքը: Հանձնակատարն իր պատրաստակամությունն էր հայտնել նաև քաղաքացուն Հայաստան տեղափոխմանն աջակցելու հարցում:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ Պաշտպանի ներկայացուցիչը կապ էր հաստատել Հանձնակատարի ներկայացուցչի հետ՝ գործընթացը կազմակերպելու մանրամասները քննարկելու նպատակով: Ավելի ուշ, Հանձնակատարի ջանքերով քաղաքացին՝ բժշկի ուղեկցությամբ, տեղափոխվել էր Հայաստան:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ ՀՀ առողջապահության նախարարության, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցության արդյունքում «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից Շտապ բժշկական օգնության ծառայության միջոցով քաղաքացին տեղափոխվել է մասնագիտացված բժշկական հաստատություն, անցել

անհրաժեշտ բժշկական հետազոտություններ և ստացել համապատասխան բուժօգնություն:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր անձի ֆունկցիոնալության գնահատման ուղղությամբ՝ հետագայում վերջինիս համապատասխան խնամքի հաստատություն տեղափոխելու նպատակով: Բարձրացված հարցերի ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք: Արդյունքում, Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացն ավարտվել է և վերջինս ուղեգրվել է շուրջօրյա խնամքի կենտրոն:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի և Ռուսաստանի Դաշնությունում մարդու իրավունքների հանձնակատարի հաստատությունների միջև ձևավորված երկարամյա և արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել նաև իրականացնել այց ՌԴ-ում գտնվող փակ հաստատություն:

Այսպես, 2024 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՌԴ մարդու իրավունքների հանձնակատարի ներկայացուցիչները համատեղ այց են իրականացրել ՌԴ ներքին գործերի նախարարության գլխավոր վարչության Մոսկվա քաղաքի օտարերկրյա քաղաքացիների ժամանակավոր պահման կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն): Այցի ընթացքում Օմբուդսմանների ներկայացուցիչները հանդիպել են ՌԴ տարածքում առանց թույլտվության բնակվող և ռեադմիսիայի սպասող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ:

Առանձնազրույցի ընթացքում Կենտրոնում պահվող ՀՀ քաղաքացիները (մայր և դուստր) հայտնել են, որ անջատ են պահվում միմյանցից՝ տարբեր կացարաններում: Նշել են նաև, որ անձնական հիգիենայի պահպանման նպատակով իրենց տրամադրվում է օճառ, սակայն շամպուն և կանացի հիգիենայի պարագաներ չեն հատկացվում: Նշվածի հետ մեկտեղ, անձինք խնդրել են Օմբուդսմանների ներկայացուցիչների աջակցությունն իրենց վերադարձի գործընթացը հնարավորին սեղմ ժամկետում ավարտին հասցնելու հարցում:

Բարձրացված հարցերը տեղում քննարկվել են Կենտրոնի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարողի հետ: Վերջինս վարչակազմի ներկայացուցիչներին հանձնարարել է անհապաղ միջոցներ ձեռնարկել անձանց համատեղ բնակությունը նույն կացարանում կազմակերպելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ, հանձնարարել է վարչակազմի կին ներկայացուցչի միջոցով վերջիններիս շամպուն և կանացի հիգիենայի պարագաներ փոխանցել: Ավելի ուշ՝

2024 թվականի հոկտեմբերի 25-ին Պաշտպանի ներկայացուցչին տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, որ անձանց վերադարձի գործընթացը 2024 թվականի հոկտեմբերի 22-ին ավարտվել է և վերջիններս նույն օրը մեկնել են Հայաստան:

Առանձնազրույցի ընթացքում ՀՀ մեկ այլ քաղաքացի հայտնել է, որ ձախ ոտքին առկա է վերք, սկսվել է թարախակալման պրոցես: Հավելել է, որ Կենտրոնի բժշկի կողմից ցուցվել է հակաբորբոքային քսուք: Նշել է նաև, որ անհրաժեշտ դեղամիջոցը հարազատների միջոցով կամ անձնական միջոցների հաշվին ձեռք բերելու հնարավորություն չունի: Բարձրացված հարցը քննարկվել է Կենտրոնի բժշկական սպասարկման ստորաբաժանման ներկայացուցչի հետ: Վերջինս անհապաղ կազմակերպել է անձի ոտքին առկա վերքի բժշկական զննությունը, հակասեպտիկ դեղամիջոցով մշակումը և վիրակապումը, ինչպես նաև տեղեկացրել, որ բուժառուն կգտնվի բժշկի դինամիկ հսկողության ներքո:

Առանձնազրույցի ընթացքում ՀՀ մեկ այլ քաղաքացի հայտնել է, որ ՁԻԱՀ-ով ապրող անձ է, Հայաստանում հաշվառված է Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում և ստանում է համապատասխան դեղորայք: Հավելել է, որ ներկայում իր մոտ քիչ քանակությամբ դեղահաբեր են մնացել: Նշել է նաև, որ Կենտրոնում իրեն ցուցված դեղամիջոցի փոխարեն՝ առաջարկում են այլ փոխարինող դեղամիջոց, որը, անձի պնդմամբ, արդյունավետ չէ:

Անձը խնդրել է Օմբուդսմանների ներկայացուցիչների աջակցությունն իր վերադարձի գործընթացը հնարավորին սեղմ ժամկետում ավարտին հասցնելու հարցում, որպեսզի Հայաստանում հնարավորություն ունենա ստանալ իրեն անհրաժեշտ դեղորայքը:

Բարձրացված հարցը *(առանց առողջական վիճակի, ինչպես նաև ախտորոշման մասին ստացված տվյալները ներկայացնելու)* Օմբուդսմանների ներկայացուցիչները քննարկել են Կենտրոնի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարողի հետ: Վերջինս պատրաստակամություն է հայտնել հնարավորին սեղմ ժամկետում տոմս ձեռք բերելու հարցը Դատական կարգադրիչների (պրիստավների) դաշնային ծառայության գործընկերների հետ քննարկելու կապակցությամբ:

Երկու օր անց՝ 2024 թվականի հոկտեմբերի 12-ին Պաշտպանի ներկայացուցչին տեղեկատվություն է տրամադրվել այն մասին, որ անձի վերադարձի գործընթացն ավարտվել է և վերջինս արդեն իսկ մեկնել է Հայաստան:

Առանձնազրույցի ընթացքում ՀՀ մեկ այլ քաղաքացի հայտնել է, որ տառապում է պարբերական (երևանյան) հիվանդությամբ: Հավելել է, որ սուր նոպաների դեպքում ցավերի թուլացման համար օգտագործում է «Կոլխիցին» դեղամիջոցը, որն առկա չէ Կենտրոնում: Խնդրել է Օմբուդսմանների ներկայացուցիչների աջակցությունն իրեն նշված դեղամիջոցը տրամադրելու հարցում:

Բարձրացված հարցը քննարկվել է Կենտրոնի բժշկական սպասարկման ստորաբաժանման ներկայացուցչի հետ: Վերջինս պատրաստակամություն է հայտնել կազմակերպել բժշկական խորհրդատվություն և նշված դեղամիջոցի հատկացման հարցը քննարկելու նպատակով դիմել համայնքի պոլիկլինիկա:

Ավելի ուշ՝ 2024 թվականի հոկտեմբերի 22-ին Պաշտպանի ներկայացուցչի հետ կապ է հաստատել Կենտրոնում պահվող անձի փաստաբանը և հայտնել, որ իր վստահորդին արդեն իսկ տրամադրվում է «Կոլխիցին» դեղամիջոցը: Փաստաբանը շնորհակալություն է հայտնել Պաշտպանի ներկայացուցչին կատարած աշխատանքի համար:

Առանձնազրույցների ընթացքում Կենտրոնում պահվող ՀՀ քաղաքացիները հայտնել են նաև, որ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատան աշխատակիցներն իրենց չեն այցելում: Դրանից բացի, նշել են, որ տևական ժամանակ է չեն կարողանում կապ հաստատել դեսպանատան հետ՝ իրենց հուզող հարցերի վերաբերյալ խորհրդատվություն և աջակցություն ստանալու նպատակով: Քաղաքացիների պնդմամբ՝ իրենց մոտ առկա դեսպանատան հեռախոսահամարները չեն գործում:

Պաշտպանի ներկայացուցիչն ուսումնասիրել է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատան պաշտոնական կայքում (https://russia.mfa.am) զետեղված կոնտակտային տվյալները: Պարզվել է, որ ՀՀ քաղաքացիների մոտ առկա հեռախոսահամարները չեն պատկանում դեսպանատանը և վերջիններս պատշաճ իրազեկված չեն դեսպանատան ստույգ կոնտակտային տվյալների մասին:

Օմբուդսմանների ներկայացուցիչների աջակցությամբ Կենտրոնում պահվող ՀՀ քաղաքացիներին հայերեն և ռուսերեն լեզուներով փոխանցվել է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատան ստույգ կոնտակտային տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:

Կենտրոնում պահվող ՀՀ քաղաքացիները բարձրացրել են նաև այլ հարցեր, որոնք գտնվում են Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր մանդատի շրջանակներում տարբեր ուղղություններով շարունակաբար և հետևողականորեն իրականացնելու է տարատեսակ միջոցառումներ և աշխատանքներ օտարերկրյա պետություններում գտնվող (այդ թվում՝ փակ հաստատություններում պահվող) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բարձր է գնահատում օմբուդսմանական գործընկեր հաստատությունների հետ կառուցողական աշխատանքը՝ խնդիրներին օպերատիվ լուծումներ տալու տեսանկյունից, ինչպես նաև հրավիրում է ՀՀ իրավասու պետական մարմինների ուշադրությունն օտարերկրյա պետություններում գտնվող (այդ թվում՝ փակ հաստատություններում պահվող) ՀՀ քաղաքացիների շահերի առավել արդյունավետ պաշտպանության ապահովման անհրաժեշտության հանգամանքին: Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրում է, որ օտարերկրյա պետություններում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններն ու հյուպատոսական հիմնարկները մշտապես պետք է

լուրջ ջանքեր գործադրեն ՀՀ քաղաքացիների շրջանում իրենց գործունեության հիմնական ուղղությունների, գտնվելու վայրերի, հեպադարձ կապի և այլ տվյալների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 13. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրը, դրա պահպանությունն ու ոլորտի խնդիրներն ուղղակիորեն կապված են մարդու իրավունքների պատշաճ իրացման հետ: Մաքուր, առողջ, անվտանգ և կայուն զարգացող շրջակա միջավայրի բացակայության արդյունքում մարդը զրկվում է իր կենսական մի շարք իրավունքների, այդ թվում՝ կյանքի, առողջության պահպանման, սննդի և ջրի հասանելիության իրացման հնարավորությունից:

Հավասարապես, շրջակա միջավայրի կայուն կառավարումը հնարավոր չէ առանց մարդու իրավունքների ամրապնդման և դրանց նկատմամբ հարգանքի առկայության. մարդու իրավունքները, ինչպես օրինակ՝ տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության և իրավական պաշտպանության միջոցի իրավունքները շրջակա միջավայրի պաշտպանության համար խիստ կարևոր են:

ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակները, որոնք ուղղված են աղքատությունն իր բոլոր ձևերով վերացնելուն, անհավասարությունների դեմ պայքարելուն ու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները լուծելուն, արտացոլում են մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներն ու չափանիշները: Կայուն զարգացման նպատակներն, ի թիվս այլնի, նպատակ ունեն երաշխավորելու շրջակա միջավայրի պաշտպանությունն ու դրա հետ կապված խնդիրների լուծումը:

Միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում ամրագրված է առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, ինչպես օրինակ՝ Ստոկհոլմի 1972 թվականի հռչակագրում, Ռիոյի 1992 թվականի հռչակագրում: Քաղաքակիրթ աշխարհը ներկա ժամանակահատվածում ձգտում է ուղիղ և բացահայտ կերպով ճանաչել ու ամրագրել մարդու՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:

2022 թվականի հուլիսի 28-ին Միավորված ազգերի կազմակերպությունը ողջունել է Գլխավոր Ասամբլեայի կողմից մաքուր, առողջ և կայուն միջավայրում ապրելու ճանաչումը որպես մարդու իրավունք[626]: Նշվածը հաջորդել էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի բանաձևին, որով նույն իրավունքը ճանաչվել էր դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 8-ին[627]:

Այս բանաձևերը ուղենիշային կարևոր ձեռքբերումներ են՝ ուղղված մարդու՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ու այդ իրավունքի հետ անբաժանելի ու փոխկապակցված մարդու իրավունքների պաշտպանությանը:

Շրջակա միջավայրին առնչվող մարդու իրավունքներ են պարունակում շուրջ 150 երկրների սահմանադրություններ ՝ այդկերպ անձի համար ձևավորելով շրջակա միջավայրի որոշակի հատուկ պայմանների նկատմամբ ակնկալիք:

---

[626] Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի «Մարդու՝ մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայր ունենալու իրավունքը» վերտառությամբ թիվ A/RES/76/300 բանաձև, 2022 թվականի հուլիսի 28, հասանելի է https://documents.un.org/doc/undoc/gen/n22/442/77/pdf/n2244277.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[627] Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված և մարդու իրավունքների խորհուրդի կողմից հաստատված թիվ A/HRC/RES/48/13 բանաձև, 2021 թվականի հոկտեմբերի 8, հասանելի է https://docs.un.org/en/A/HRC/RES/48/13 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ներկայացվածի առնչությամբ, հարկ է նկատել, որ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ շրջակա միջավայրի առնչությամբ սահմանվել էր կոնկրետ իրավունք: Այսպես, 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 33.2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: 2015 թվականի փոփոխություններով՝ Սահմանադրության 12-րդ հոդվածով, ի տարբերություն 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 33.2-րդ հոդվածի, սահմանվում է յուրաքանչյուրի՝ շրջակա միջավայրի պահպանության մասին հոգ տանելու պարտականությունը: Դրա հետ մեկտեղ, Սահմանադրության նույն հոդվածով ամրագրվում է, որ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, հաշվի առնելով առողջ, անվտանգ, ինչպես նաև կայուն զարգացող շրջակա միջավայրի նշանակալից դերը մարդու իրավունքների պատշաճ իրացման հարցում, իր զեկույցներով ու տարեկան հաղորդումներով, հրապարակային և ոչ հրապարակային այլ դիրքորոշումներով մշտապես բարձրացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի խնդիրները, որոնք արդիական են և ունեն համակարգային բնույթ:

1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայությունը

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2024 թվականի ընթացքում ևս արձանագրվել են խնդիրներ՝ կապված շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ հանրային իրազեկման ու հանրության պատշաճ ներգրավվածության հետ: Նշված խնդիրները բարձրացվել են Պաշտպանի կողմից նաև նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում՝ մանրամասն անդրադարձ կատարելով ինչպես ներպետական կարգավորումներին ու կառուցակարգերին, այնպես էլ միջազգային իրավական չափանիշներին ու հանձարարականներին[628]:

Պաշտպանի կողմից արձանագրվել է պատշաճ հանրային լսումների ու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար ավելի երկար ու ողջամիտ ժամկետների երաշխավորման հարցը:

---

[628] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 176-181, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի (հասարակության մասնակցությունը կոնկրետ հարցերի կապակցությամբ որոշումներ ընդունելուն) 3-րդ մաս.
Հասարակության մասնակցության ընթացակարգերի տարբեր փուլերի համար պետք է նախատեսվեն ողջամիտ ժամկետներ, որոնք նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան կապահովեն բավարար ժամանակ հասարակության իրազեկման, նախապատրաստման և շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին արդյունավետ մասնակցության համար:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները ներկայացվում են՝

1) նույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում՝ ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում.

2) փորձաքննության ընթացքում՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում՝ ծանուցումից հետո՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում.

3) փորձաքննության ընթացքում՝ Բ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում՝ ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում[629]:

Մինչդեռ, Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն, անդրադառնալով հանրության մասնակցության ժամկետներին, դեռևս 2021 թվականի Հայաստանի վերաբերյալ զեկույցում, նշված ժամկետները համարել է ոչ բավարար՝ ընդգծելով, որ թեև ընդունելի է տարբեր ժամկետներ նախատեսելը տարատեսակ գործողությունների համար, սակայն այն փաստը, որ այդ ժամկետները յուրաքանչյուր կատեգորիայի շրջանակներում բոլոր տեսակի նախագծերի վրա են տարածվում առանց առավել ծավալուն ու բարդ նախագծերի համար առավել երկար ժամկետներ նախատեսելու հնարավորության առկայության, նշանակում է, որ նախատեսված ու առաջարկվող ժամկետները ողջամիտ չեն Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով[630]:

Մարդու իրավունքների պաշտպանը Օրհուսի կոնվենցիայի դրույթների արդյունավետ կիրարկման տեսանկյունից բարձրացրել է նաև արդարադատության մատչելիության երաշխավորման հարցը: Այս առումով, արդարադատության հասանելիության առումով ներպետական օրենսդրությամբ հասարակական

[629] Նույն ժամկետները ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ, որով սահմանվում են հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները:

[630] Հասանելի է https://unece.org/sites/default/files/2021-11/ECE_MP.PP_2021_46_E.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կազմակերպությունների համար ամրագրված են սահմանափակումներ[631], ինչպես նաև չկա շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովման, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմ:

Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի (հասարակության մասնակցությունը կոնկրետ հարցերի կապակցությամբ որոշումներ ընդունելուն) 3-րդ մաս.
Հասարակության մասնակցության ընթացակարգերի տարբեր փուլերի համար պետք է նախատեսվեն ողջամիտ ժամկետներ, որոնք նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան կապահովեն բավարար ժամանակ հասարակության իրազեկման, նախապատրաստման և շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին արդյունավետ մասնակցության համար:

Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն խնդրահարույց է համարել այն հանգամանքը, որ հասարակական կազմակերպությունների կողմից հայց ներկայացնելու համար նախապայման է նախատեսված հիմնադրույթային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցած լինելը կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորության բացակայությունը[632]:

Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածով ճանաչվում է էկոլոգիական իրավունքների խախտման համար դատական և արտադատական պաշտպանության դիմելու իրավունքը՝ դատարանում և/կամ օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում՝ ընդունված որոշումների վերանայման հնարավորությունը[633]:

Կոմիտեի դիրքորոշմամբ՝ արդարադատության մատչելիության իրավունքի համար նախապայմաններ սահմանող ներպետական կարգավորումները չեն համապատասխանում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասին[634]:

Ասվածի առնչությամբ, հարկ է նկատել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների

---

[631] Տե՛ս, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներ:

[632] Տե՛ս, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներ:

[633] Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ առավել մանրամասն վերլուծությունները տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 177-181, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[634] Տե՛ս, Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2017 թվականի զեկույց, հասանելի է http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE_MP.PP_2017_33_E.pdf, https://unece.org/sites/default/files/2021-11/ECE_MP.PP_2021_46_E.pdf հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գործողությունների ծրագրում[635] որպես գործողություն է նախատեսվել հասարակական կազմակերպությունների համար դատարան դիմելու իրավունքի սահմանումը հանրային նշանակության, կարևորության հարցերով, այդ թվում՝ ինչպես վարչական, այնպես էլ քրեական վարույթներով՝ հաշվի առնելով actio popularis սկզբունքը: Որպես նշված գործողության արդյունք է նշված, ի թիվս այլնի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով դատարան դիմելու համար հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջների նվազեցումը: Նույն գործողության վերջնաժամկետը 2024-2025թթ. են:

Ինչ վերաբերում է արտադատական մարմնի ստեղծմանը, ըստ Շրջակա միջավայրի նախարարության, հարցը աշխատանքային կարգով քննարկվել է շրջակա միջավայրի նախարարությունում և որոշվել է համապատասխան աշխատանք տանել արդարադատության նախարարության հետ համատեղ: Տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Ա. Իսկոյանի անվան Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի և նույն ֆակուլտետի «Միջազգային էկոլոգիական իրավունք» դասընթացի մասնակից մագիստրատուրայի ուսանողների հետ:

Վերոշարադրյալի ամփոփմամբ՝ պետք է փաստել, որ թեև 2024 թվականի ընթացքում ներկայացված խնդիրները, այդ թվում՝ Օրհուսի կոնվենցիային համապատասխան՝ հանրության պատշաճ ներգրավվածության, արդարադատության մատչելիության, կենտրոնացված մշտադիտարկող անկախ և անաչառ արտադատական մարմնի ներդրման հետ կապված, շարունակում են արդիական լինել: Ուստի, Պաշտպանն ընդգծում է, որ Կոնվենցիոն ու միջազգային հանձնարարականներով պահանջված արդյունքին հասնելու համար շարունակական համակարգային աշխատանքների իրականացումը անհրաժեշտություն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***համապատասխանեցնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի կարգավորումները Օրհուսի կոնվենցիային՝ սահմանելով հանրային լսումների համատեքստում հանրության մասնակցության առավել ճկուն ժամկետներ՝ ըստ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի դիրքորոշումների,***
- ✓ ***օրենսդրորեն երաշխավորել հասարակական կազմակերպությունների արդարադատության մատչելիության իրավունքը՝ ապահովելով Համապատասխանության կոմիտեի առաջարկությունների կատարումը,***
- ✓ ***քայլեր ձեռնարկել՝ ուղղված Օրհուսի կոնվենցիայով նախատեսված անկախ և անկողմնակալ արտադատական մարմնի ստեղծմանը:***

2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը

Թափոններն աղտոտում են մթնոլորտային օդը, ընդերքը, ջրերն ու հողերը՝ բացասաբար ազդելով բնական միջավայրի, մարդկանց, ինչպես նաև կենդանական ու բուսական աշխարհի վրա: Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն են

[635] Տե՛ս, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման Հավելված N 2:

ունենում ինչպես հանքարդյունաբերության արդյունքում առաջացող քիմիական նյութերն ու թափոնները, այնպես էլ կենցաղային աղբը: Այդ պատճառով քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը կարևոր դեր ունեն շրջակա միջավայրի պահպանման գործում:

Աղտոտման վնասակար հետևանքների հարցը երկար տարիներ շարունակ ընդգծվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում՝ որպես առողջ և անվտանգ շրջակա միջավայր ապահովելու հիմնախնդիր: Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը կայուն օրգանական աղտոտիչներից պաշտպանելու պարտավորություն՝ վավերացնելով Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիան:

Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա *Հոդված 1*
Հաշվի առնելով շրջակա միջավայրի և զարգացման Ռիո դե Ժանեյրոյի հռչակագրի 16-րդ սկզբունքում ամրագրված նախազգուշական միջոցներ ձեռնարկելու սկզբունքը, սույն Կոնվենցիայի նպատակն է պահպանել մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը կայուն օրգանական աղտոտիչներից:

Ստոկհոլմի կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել առանձին քիմիական նյութերի արտանետման կրճատմանը, քիմիական նյութեր պարունակող պաշարների և թափոնների կառավարմանն ուղղված այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն մարդու առողջության ու շրջակա միջավայրի պաշտպանությունը[636]:

Առողջ և անվտանգ շրջակա միջավայրի ստեղծման համատեքստում հատկապես կարևոր է ջրի որակի բարելավումը և դրա աղտոտման կանխարգելումը քիմիական նյութերով ու թափոններով, ինչը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների շրջանակում առաջնահերթ խնդիրներից է:

ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակ 6 *Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ*
Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն ➢ 6.3 Մինչև 2030 թ. բարելավել ջրի որակը՝ կրճատելով աղտոտումը, վերացնելով վտանգավոր քիմիկատներ և նյութեր թափելը և նվազեցնելով դրանց արտահոսքերը, կիսով չափ կրճատելով չմաքրվող կեղտաջրերի համամասնությունը և էականորեն մեծացնելով վերամշակումը և անվտանգ վերօգտագործումն ամբողջ աշխարհում

Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում 2024 թվականի գլխավոր մարտահրավերներից է եղել ջրերի աղտոտվածության խնդիրը:

[636] Տե՛ս, «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի 6-րդ հոդված:

Թափոններն ու դրանց արտանետումները, ներթափանցելով ջրային օբյեկտներ ու ռեսուրսներ, վնաս են հասցնում ջրային էկոհամակարգին: Այս խնդրի մասին են վկայում ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքները: ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքներով[637]՝ օրինակ՝ Շնող գետի ջրի որակը գետաբերանում 2024 թվականի հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ընդհանուր առմամբ՝ Շնող գետի ջրի որակի հարցը բարձրացվել է դեռ նախորդ տարեկան հաղորդումներում՝ 2020 թվականից ի վեր, ընդ որում՝ նույն թվականից ի վեր գետի ջրի որակը գնահատվում է «վատ» (5-րդ դաս, որն ամենացածրն է), նախորդիվ գետի աղտոտվածության առնչությամբ արձանագրվել է, որ գետի ընդհանրական դասը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մի շարք նյութերով (մոլիբդեն, սուլֆատ իոն, պղինձ, ԿՉՆ և այլն):

2024 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին նույն խնդիրն արձանագրվել է նաև Ախթալա գետի, Սոթք գետի գետաբերանի հատվածում ջրերի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)[638]: Ընդհանուր առմամբ՝ նույն ժամանակահատվածի մոնիթորինգային արդյունքների դիտարկումը ցույց է տալիս, որ «վատ» գնահատված գետերի կամ գետերի հատվածների թիվը տասնյակից ավել է:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանում 2024 թվականի ապրիլից հունիս ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Նույն գնահատականն է ստացել Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ, հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում: Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)[639]:

Այլ ջրային օբյեկտներում ևս աղտոտվածության խնդիրը լուրջ է: Արփի լիճ ջրամբարի ջրի որակը մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ախուրյանի ջրամբարի ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ներկայացվածը ուղղակի վկայությունն է այն բանի, որ ջրային օբյեկտների որակային ցուցանիշները մտահոգիչ ու խնդրահարույց են:

2024 թվականի ընթացքում ջրային օբյեկտների աղտոտվածության մասին տեղեկություններ են տարածվել նաև այլ աղբյուրներում: Հանրային ռադիոյի կայքում հրապարակվել է տեղեկություն Հրազդան գետի աղտոտվածության վերաբերյալ, ընդ որում՝ ըստ նույն աղբյուրի՝ գետն աղտոտված է եղել ինչպես կենցաղային թափոններով, այնպես էլ քիմիական նյութերով[640]:

Ավելին, գետերի աղտոտվածության հարցը բարձրացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի ու աշխատակազմի աշխատանքային հանդիպումների ընթացքում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2024 թվականի ընթացքում մասնակցել են «Կլիմայի փոփոխության արդի մարտահրավերներն ու Գյումրու կանաչ գոտիների պահպանման խնդիրները» թեմայով քննարկման, որի շրջանակներում անդրադարձ

---

[637] Հասանելի է https://env.am/storage/files/iv-eramsyak-2024-web.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[638] Հասանելի է http://env.am/storage/files/2023-i.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[639] Հասանելի է https://env.am/storage/files/ii-eramsyak-2024-web.pdf 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

է կատարվել նաև Գյումրի գետակի աղտոտվածության հիմնախնդրին և դրա հետևանքով շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող հանգամանքներին: Այնուհետև, նույն թվականի ընթացքում Գյումրի գետակի աղտոտվածության խնդիրը Գյումրի կատարված մարզային այցի շրջանակներում հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ներկայացվել է Մարդու իրավունքների Պաշտպանին: Նշվածի համատեքստում, վերջիններս ընդգծել են, որ գետը գերաղտոտված է, լցված է կենցաղային ու այլ տեսակի թափոններով, խնդրահարույց է առողջ շրջակա միջավայրում ապրելու տեսանկյունից: Առաջարկվել է այդ մասին գրավոր դիմում ներկայացնել Պաշտպանի աշխատակազմ:

Այս առնչությամբ, դեռևս նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում արձանագրվել է կենսաբանական մոնիթորինգի անհրաժեշտությունը: Ըստ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի՝ Շրջակա միջավայրի նախարարության՝ Կլիմայի փոփոխության մասին չորրորդ ազգային հաղորդագրությունում[641] ևս նշվում է, որ անհրաժեշտ է ներդնել և իրականացնել մակերևութային ջրերի կենսաբանական մոնիթորինգ՝ էկոհամակարգի էկոլոգիական կարգավիճակը և խոցելիությունը կլիմայի փոփոխությունների նկատմամբ գնահատելու համար:

Հարցի համատեքստում որպես լրջագույն խնդիր են արձանագրվում վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրները: Դեռևս լուծված չեն այդ թափոնների էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասազերծման, վերամշակման, օգտահանման և ոչնչացման հարցերը՝ նշված գործողությունների համար հատուկ վայրերի բացակայությամբ պայմանավորված[642]:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ Հայաստանի Հանրապետությունում բացակայում են մի շարք վտանգավոր թափոնատեսակների (սնդիկ պարունակող ապրանքներ, քիմիական նյութեր և այլ) համար վնասազերծում, տեղադրում, պահում և դրա հետ կապված այլ գործունեություն իրականացնելու համար թույլտվություն ունեցող կազմակերպություններ, ինչը հանգեցնում է նրան, որ նման թափոնատեսակներ առաջացնողները կամ տիրապետողները չեն կարողանում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել դրանց հեռացման հետ կապված աշխատանքներ: 2024 թվականի ընթացքում արձանագրվել է, որ մի շարք ուսումնական հաստատություններում առկա են քիմիական նյութեր (լաբորատոր ուսումնասիրությունների և հետազոտությունների համար նախատեսված), որոնք չեն կարող հեռացվել վերը նշված հաստատություններից:

Վտանգավոր թափոնների տեղադրման կամ պահման համար նախատեսված հատուկ վայրերի (նույնիսկ ժամանակավոր տեղադրման կամ պահման համար) բացակայության հարցը արձանագրվել է դեռևս նախորդ տարեկան հաղորդումներում

---

[641] Հասանելի է http://env.am/storage/files/fnc-arm.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[642] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 181-188, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ու շարունակել է պահպանել արդիականությունը նաև 2024 թվականի ընթացքում: Որպես հետևանք՝ վտանգավոր թափոնները, հայտնվելով դրանց համար չնախատեսված և կենցաղային թափոնների համար նախատեսված բաց վայրերում, վնաս են հասցնում շրջակա միջավայրին[643]:

Միաժամանակ, Շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում 2 կազմակերպության տրամադրվել է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա, լիցենզիայի նոր ներդիր և վտանգավոր թափոնների փոխադրում գործունեության տեսակի համար լիցենզիայի ներդիր:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ 2024 թվականի ընթացքում նախարարությունը մշակել ու պատրաստվում է սահմանված կարգով ներկայացնել Կառավարության քննարկմանը «Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնց ընդունման դեպքում, ի թիվս այլնի, մի շարք վտանգավոր թափոնների գործածության կանոնները սահմանող իրավական ակտերի նախագծերը, որոնցով նախատեսվում է սահմանել որոշ թափոնների անվտանգ հավաքման, պահման, փոխադրման, մշակման, վերամշակման, վնասազերծման, օգտահանման կամ թափոնների հեռացման վայրերում տեղադրման կանոնները, կպարզեցվի վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման գործընթացը, կհստակեցվի թափոնների հեռացման վայրերում շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի իրականացման համար պատասխանատուների շրջանակը:

Ըստ նախարարության՝ մշակվել է «Թափոնների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, ինչով նախատեսվում է սահմանել այն դեպքերը, երբ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը օրենքով ազատվում են լիցենզիա ունենալու պահանջից, եթե սահմանված ժամկետներում անվտանգ եղանակով պահեստավորում կամ կուտակում են իրենց գործունեության արդյունքում գոյացող որոշ տեսակի վտանգավոր թափոնները, մինչև դրանք լիցենզավորված կազմակերպություններին հանձնելը:

Չնայած 2024 թվականին կատարված գործողություններին՝ ոլորտում արձանագրված խնդիրները շարունակում են առկա լինել: Մինչ օրս ձեռնարկված քայլերը բավարար չեն ոլորտի խնդիրների հաղթահարման համար, ինչի ուղղակի վկայությունն է այս խնդիրների՝ ինչպես 2024 թվականի ընթացքում, այնպես էլ տարիներ շարունակ առկայությունը: Հարկ է նկատել, որ արձանագրված խնդիրները առավել մտահոգիչ են դառնում դրանց տևականության տեսանկյունից: Ասվածի համատեքստում, թափոնների վերացման և կառավարման համար բավարար կազմակերպական և տեխնիկական պայմանների ապահովումը խիստ կարևոր է:

Հարկ է նաև ընդգծել, որ թեև կենցաղային թափոնների տեսակավորման հարցում վերջին տարիներին լուրջ դրական տեղաշարժ ու միտում է նկատվել, մասնավորապես՝ Երևան քաղաքում թափոնների տեսակավորման ամանների տեղադրման և դրանց հասանելիության ապահովման ուղղությամբ, կենցաղային

---

[643] Հասանելի է https://fb.watch/bkExMc_VZ9/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

թափոնների տեսակավորման խնդիրը 2024 թվականին շարունակել է առկա լինել ինչպես Երևանում կենցաղային թափոնների սահմանափակ տեսակների համար նախատեսված թափոնամանների առանձնացման, այնպես էլ Երևանից դուրս ոչ միայն թափոնների տեսակավորման ամանների բացակայության, այլև առհասարակ աղբամանների առկայության առնչությամբ: Ուստի, ողջ հանրապետությունում թափոնների տեսակավորման խնդիրը շարունակում է առկա լինել՝ դրա ոչ լրիվ և հատվածական իրականացմամբ, որոշ մասնագիտացված աղբամանների բացակայությամբ, ինչպես նաև բնակչության ոչ բավարար իրազեկվածությամբ պայմանավորված[644]:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝

- ✓ ***էկոհամակարգի էկոլոգիական կարգավիճակի և դրա գործունեության վրա աղտոտման ազդեցությունը պատշաճ գնահատելու նպատակով Հայաստանում ներդնել մակերևութային ջրերի կենսաբանական մոնիթորինգի համակարգ՝ ապահովելով դրա համակարգային իրականացումը,***
- ✓ ***օրենսդրական փոփոխությունների միջոցով ստեղծել արտոնություններ տրամադրող ու տնտեսական խրախուսանքի այլ միջոցներ կիրառող ծրագիր (քաղաքականություն) այն տնտեսվարողների համար, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն,***
- ✓ ***ստեղծել թափոնների տեսակավորման և վերամշակման գործուն, համապարփակ և կայուն համակարգ համապետական մակարդակով՝ ապահովելով դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը:***

3. ՓՀԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը

Շրջակա միջավայրի պահպանության համար առանցքային նշանակություն ունեն ջրային էկոհամակարգերի պաշտպանությունն ու վերականգնումը: Ջուրն ու դրա կայուն կառավարումը կազմում են Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակների առանցքը:

---

[644] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 188-192, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակ 6[645]
Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ

Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն

- 6.1 Մինչև 2030 թ. ձեռք բերել անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր և հավասար հասանելիություն բոլորի համար
- 6.4 Մինչև 2030 թ. էականորեն մեծացնել ջրօգտագործման արդյունավետությունը բոլոր ոլորտներում և ապահովել քաղցրահամ ջրի կայուն ջրառը և ջրամատակարարումը՝ լուծելու սակավաջրության խնդիրը և էականորեն կրճատել սակավաջրությունից տառապող մարդկանց թիվը
- 6.5 Մինչև 2030 թ. իրականացնել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում բոլոր մակարդակներում, այդ թվում՝ համապատասխան դեպքերում, անդրսահմանային գործակցության միջոցով
- 6.6 Մինչև 2020 թ. պաշտպանել և վերականգնել ջրաէկոհամակարգերը, այդ թվում՝ լեռները, անտառները, ջրաճահճային տարածքները, գետերը, ջրաբեր շերտերը և լճերը
- 6.բ Սատարել և ուժեղացնել տեղական համայնքների մասնակցությունը ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման բարելավմանը

2024 թվականի ընթացքում ևս Հայաստանի Հանրապետությունում ջրային, այդ թվում՝ էկոհամակարգերի հետ կապված խնդիրները շարունակել են առկա լինել: Նշվածի հիմքում ընկած է ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու վատնումը: Որպես ջրային ռեսուրսների գերօգտագործման հիմնական աղբյուր հանդես են գալիս ՓՀԷԿ-երն են ու դրանց շահագործման ընթացքում թույլ տրվող խախտումները:

Ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրաքանակների գերազանցման հետ կապված խնդիրներն արձանագրվում են տարիներ շարունակ: Այս խնդիրների կիզակետում արդեն մի քանի տարի է ինչ Եղեգիս գետի ծանրաբեռնվածության խնդիրն է, որը մտահոգել է և՛ բնապահպաններին, և՛ տեղի բնակչությանը: 2024 թվականի ընթացքում ևս Եղեգիս գետի գերծանրաբեռնվածության խնդիրը արդիական է եղել[646]:

Եղեգիս գետի գերծանրաբեռնվածության խնդիրը, դրա վտակների վրա գործող 17 ՓՀԷԿ-երով պայմանավորված, մանրամասն նկարագրվել է Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում՝ ընդգծելով նաև շահագրգիռ անձանց մտահոգությունները գետի հոսքի ծանրաբեռնվածության հետ կապված (դերիվացիոն խողովակներով՝ 51.46 %-ով, նախատեսվող ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում՝

[645] Տե՛ս, Կայուն զարգացման նպատակ 6, հասանելի է http://un.am/hy/p/sustainable-development-goal-6 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[646] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/climate-change/15501/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

76.69 %, ինչն արգելված է ՀՀ Ջրային օրենսգրքով)[647]: Խնդիրը բարձրացվել է նաև դրա՝ սոցիալ-տնտեսական զարգացման, կենսապայմանների ու կենսապահովման վրա ազդեցության տեսանկյունից[648]:

Ներկայացվածի հետ մեկտեղ, չնայած Եղեգիս գետի սակավաջրության խնդրից ելնելով՝ Նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N369-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի առկայությանը ՝ ինչպես 2022 և 2023, այնպես էլ 2024 թվականի ընթացքում աշխատանքային խմբի կողմից ՓՀԷԿ-երում և ՀԷԿ-երում ուսումնասիրություններ չեն կատարվել[649]: Ընդ որում՝ Եղեգիս գետը նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժման ենթակա գետերի ցանկում է[650]:

Ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի՝ 2024 թվականի ընթացքում թվով 29 ՓՀԷԿ-երի և ՀԷԿ-երի մոտ իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է ՀՀ ջրային օրենսգրքի խախտման 17, ՀՀ հարկային օրենսգրքի խախտման 11 և «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի խախտման 12 դեպք: Իրավախախտները ենթարկվել են վարչական պատասխանատվության: 2024 թվականի ընթացքում Եղեգիս գետի վրա գտնվող ՓՀԷԿ-երի շահագործման շրջանակներում ստուգումներ չեն իրականացվել:

Շրջակա միջավայրի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2022 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենքի՝ 2024 թվականի հունվարի 1-ից ջրօգտագործման թույլտվություն ստացած ջրօգտագործողների կողմից և ջրառի և էկոթողքի կետերում պետք է տեղադրվեն տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր, իսկ 2024 թվականի մարտի 20-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-130-Ն օրենքով՝ մակերևութային ջրային ռեսուրսներից ապօրինի ջրօգտագործման դեպքերի համար սահմանվել են ավելի խիստ վարչական տույժեր:

---

[647] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 188-192, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[648] Առավել մանրամասն տե՛ս նույն տեղում:
Ըստ բարձրացված մտահոգությունների՝ վատացել են Եղեգիս գետի ջրի ֆիզիկաքիմիական ցուցանիշները, գետի սանիտարական վիճակը, վերացել է հանգստի գոտիների մի մասը, ամռանը չորացած գետի ափամերձ տարածքը կորցրել է կանաչ ծածկույթը, վատացել է միկրոկլիման: Ակտիվ բնակչությունը փորձել է պաշտպանել բարենպաստ պայմաններում ապրելու իր իրավունքները, սակայն բնակչության կարծիքը հաշվի չի առնվել: Ավելին, ահազանգել են առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսներից օգտվելու դեպքերի մասին:

[649] Նախկինում արձանագրված խնդիրները տե՛ս նույն տեղում:

[650] Տե՛ս, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում՝ նախատեսված Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» N 488-Ն որոշում:

Հարկ է նկատել, որ ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ Եղեգիս գետից ջրօգտագործման թույլտվություններով էներգետիկ նպատակով ջրառ իրականացնող փիէկ ունեցող ջրօգտագործողների կողմից ներկայացվող ջրօգտագործման թույլտվությունների գործողության ժամկետների երկարաձգման գործընթացի շրջանակներում Ջրային օրենսգրքի 33.1 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջի համաձայն Նախարարությունն իրականացնում է նաև ջրօգտագործման թույլտվությունների վերանայման գործընթաց՝ ջրօգտագործման թույլտվություններով ամրագրելով ջրառի և էկոլոգիական թողքի կետերում տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր տեղադրելու պայմանը:

Միևնույն ժամանակ, ըստ նախարարության, ԱՄՆ ՄԶԳ-ի «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագրի կողմից շրջակա միջավայրի նախարարությանն է ներկայացվել ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդաբանության նախագիծը:

2024 թվականի ընթացքում առկա խնդիրները հիմք են տալիս փաստելու, որ ջրերի գերօգտագործման խնդիրը շարունակական է, իսկ արձանագրվող դեպքերի թիվը չի զիջում նախորդ տարիների դեպքերի թվին: Ասվածը ևս մեկ անգամ հիմնավորում է այն, որ ՓՀԷԿ-երի շահագործումն ու ջրօգտագործումը պետք է ենթարկվի համակարգային և պարբերական մշտադիտարկման ու պատշաճ վերահսկողության:

Արձանագրելով 2024 թվականի ընթացքում կատարված աշխատանքները՝ այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուժեղացնել ՓՀԷԿ-երի շահագործման նկատմամբ վերահսկողությունը, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման հետևանքով առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:

4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության վնասակար ազդեցությունը խիստ տարածված խնդիր է հանքարդյունաբերությամբ զբաղվող երկրներում: Այս ոլորտի գործունեությունն ուղղակիորեն վնասում է շրջակա միջավայրը և ազդում բնակչության առողջության վրա[651]: Այն հանգեցնում է շրջակա միջավայրի որակի անկմանը՝ աղտոտելով օդը, ինչպես նաև ստորերկրյա և մակերևութային ջրերը, ծովային ու առափնյա տարածքները: Ամբողջ աշխարհում հանքարդյունաբերության հիմնական մարտահրավերներից մեկը շրջակա միջավայրի պահպանության չափանիշներին չհամապատասխանելն է, ինչը պայմանավորված է պատշաճ մշտադիտարկման և իրավական կարգավորման բացերով:

Հանքարդյունաբերության ոլորտում արձանագրված խնդիրներին, ոլորտում ամրագրված միջազգային իրավական կարգավորումներին ու չափանիշներին

[651] Հասանելի է https://sdgs.un.org/partnerships/sustainable-development-mining-activities հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել իր նախորդ տարեկան հաղորդումներում[652]:

2024 թվականի ընթացքում ևս հանքավայրերի շինարարության ու շահագործման հետ կապված խնդիրները շարունակել են արդիական մնալ և գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության ներքո:

4.1 Ամուլսարի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրներ

Տարիներ շարունակ քաղաքացիական հասարակությունը, ներառյալ՝ հասարակական կազմակերպություններն ու անհատ բնապահպանները, բարձրացնում է Ամուլսար լեռան վրա կատարվող ոսկու հանքի շինարարական աշխատանքների և հետագայում հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խնդիրը: Մարդու իրավունքների պաշտպանին այս հարցի առնչությամբ բազմիցս բողոքներ են հասցեագրել հանքավայրի շրջակա բնակավայրերի բնակիչները, հանքի շահագործման համար թույլտվություն ստացած ընկերության աշխատակիցներն ու ընկերությունը: Բողոքներից բացի, հարցի կարևորությունից ու հանրային հետաքրքրությունից ելնելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացրել է քննարկվող խնդրի ամբողջական դիտարկում իր սահմանադրական կարգավիճակի առավելագույն հնարավորությունների շրջանակներում և իր իրավասությանն առնչվող մասով: Խնդիրը դիտարկվել է բացառապես Պաշտպանի իրավասության սահմաններում շահագրգիռ բոլոր կողմերի մտահոգությունների ու տեղեկությունների հավաքագրման նպատակով[653]:

Հարկ է նկատել, որ Գնդեվազի մի շարք բնակիչներ 9 տարուց ավելի դատարանում վիճարկել են ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը: Արդյունքում վերջիններիս ներկայացրած հայցը 2024 թվականի դեկտեմբերի 2-ին բավարարվել է մասնակի: Միևնույն ժամանակ, դատարանի վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով[654]:

Հարկ է նշել նաև, որ ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պարզաբանումների՝ ինչպես 2019-2023 թվականներին, այնպես էլ 2024 թվականի

---

[652] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 192-205, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[653] Խնդրի առանցքն է կազմում «Լիդիան Արմենիա» կազմակերպության կազմած «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիր փոփոխված նախագծի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում»» փաստաթղթին տրված դրական եզրակացությունն առոչինչ ճանաչելու և հանքավայրի շինարարական աշխատանքները կասեցնելու հարցը. մի շարք բնապահպաններ ու փորձագետներ պնդում են, որ Ամուլսարի հանքի շահագործումը լրջագույն էկոլոգիական վտանգների առաջացման սպառնալիք է: Ավելին, ըստ վերջինների՝ պետական փորձաքննական եզրակացությունը տրվել է առանց փորձաքննության լիարժեք իրականացման: Առավել մանրամասն տե՛ս 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը:

[654] Տե՛ս ՎԴ/1049/05/15 վարչական գործը:

ընթացքում տեսչական մարմինը Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրում ստուգումներ չի իրականացրել:

Շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումների համաձայն՝ ի բարելավումն պետական փորձաքննական եզրակացության տրամադրման կարգավորումների՝ Կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 43-Ն որոշմամբ հաստատվել է նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ ընդլայնման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ դադարեցման կամ փակման կամ քանդման կամ նախագծային փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության անհրաժեշտությունը որոշելու կարգը, ինչպես նաև Կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N 643-Ն որոշմամբ հաստատվել է փորձաքննության, պետական փորձաքննական եզրակացության մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու, պետական փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը:

Հաշվի առնելով 2014 թվականի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» և 2023 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքներով սահմանված փոփոխությունները՝ մշակվել է «Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N369-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագիծը: Նախագծով առաջարկվում է հաստատել փոփոխված օրենսդրության («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք, ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք) կարգավորումներին համապատասխան ուղեցույցներ, որոնք կաջակցեն նախաձեռնողին կազմել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, հանքի փակման ծրագիրը, շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության գնահատման հաշվետվությունը, սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատման հաշվետվությունը, կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության լիարժեքության գնահատում և ներկայացնել համապարփակ, մատչելի հաշվետվություն՝ ապահովելով ընդերքօգտագործման ոլորտի կարգավորումների, մոտեցումների արդիականությունը:

Ասվածի հետ մեկտեղ, պետք է նշել, որ դեռևս 2021 թվականին «Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպությունն ու «CEE Bankwatch Network» ՀԿ-ների միջազգային ցանցը բողոք էին ներկայացրել Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն այն կապակցությամբ, որ Ամուլսարում ոսկու հանքի ծրագիրը խախտում է կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունները:

Նշված բողոքում բարձրացվել է այն հարցը, թե ինչպես է ՀՀ կառավարությունն անտեսել Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականում առկա ապացույցները, որոնք մատնանշում էին էմերալդ բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող թեկնածու երեք տարածքների (ԲՀՀՏ)՝ Ջերմուկի, Գորայքի և Սևանա լճի բուսական և կենդանական աշխարհների վրա զգալի ազդեցությունները: Ամուլսարի տարածքը ներառված է

Բեռնի կոնվենցիայով նախատեսված «Էմերալդ» գոտում՝ այսինքն կենսաբազմազանության առումով արժեքավոր և պաշտպանության ենթական տարածք է[655]:

Էմերալդ ցանցը հատուկ պահպանության ենթակա տարածքների էկոլոգիական ցանց է: Ցանցի ներդնումը Բեռնի կոնվենցիայի համատեքստում նախաձեռնել է Եվրոպայի Խորհուրդը Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 1989 թվականի N 16 հանձնարարականի ընդունմամբ[656]:

Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 1989 թվականի հունիսի 9-ի N 16 հանձնարարական[657]
Անհրաժեշտ է 1. քայլեր ձեռնարկել հատուկ պահպանության հետաքրքրություն ներկայացնող տարածքներ նշանակելու համար՝ ապահովելու համար, որ պահպանության անհրաժեշտ և համապատասխան միջոցներ են ձեռնարկվում իրենց տարածքում կամ իրենց պատասխանատվության տակ գտնվող յուրաքանչյուր տարածքի համար, երբ այդ տարածքը համապատասխանում է հետևյալ պայմաններից մեկին կամ մի քանիսին. ա. այն էապես նպաստում է վտանգված տեսակների, էնդեմիկ տեսակների կամ Կոնվենցիայի I և II հավելվածներում թվարկված տեսակների գոյատևմանը. բ. այն ապահովում է տեսակների զգալի քանակություն տեսակների բարձր բազմազանության տարածքում կամ աջակցում է ոչ կամ ավելի տեսակների կարևոր պոպուլյացիաներին. գ. այն պարունակում է վտանգված կենսամիջավայրերի կարևոր և/կամ ներկայացուցչական նմուշ.

Նշվածի կապակցությամբ, 2021 թվականին Բեռնի կոնվենցիայի Բյուրոն վերահաստատել է իր հանձնարարականը՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է ցանկացած զարգացում, որը կարող է բացասաբար ազդել Կոնվենցիայով պաշտպանվող կենսամիջավայրերի և տեսակների վրա կասեցնել, անկախ նրանից՝ դա վերաբերում է «Էմերալդ» ցանցի տարածքներին, թե ոչ: Հանձնարարականով Բյուրոն ևս մեկ անգամ խնդրել է ՀՀ իշխանություններից զեկույց ներկայացնել, որը մասնավորապես կարձագանքի Ամուլսարի ոսկու հանքի խնդրին: Բյուրոն հիշեցրել է, որ «Էմերալդ» ցանցի ներքո ստանձնած պարտավորությունները գոյություն ունեն ինչպես թեկնածուների, այնպես էլ հաստատված տարածքների համար և որ իշխանությունները պետք է հետևեն Մշտական հանձնաժողովի թիվ 208 (2019) հանձնարարականին՝ «Էմերալդ» ցանցի տարածքների էկոլոգիական բնույթի փոփոխությունները հայտնաբերելու, զեկուցելու, գնահատելու և արձագանքելու վերաբերյալ: Նրանք պետք է հարգեն «Էմերալդ» ցանցի իրական շահերը: Բյուրոն նաև խրախուսել է իշխանություններին գործընթացում ներգրավել բոլոր

[655] Հասանելի է https://rm.coe.int/other-complaint-armenia-amulsar-gold-project-comp-report/1680a1db9b հղումով, 2025 թվականի մարտի 31 դրությամբ:

[656] Հասանելի է https://www.coe.int/en/web/bern-convention/emerald-network հղումով, մարտի 31-ի դրությամբ:

[657] Հասանելի է https://search.coe.int/bern-convention/Pages/result_details.aspx?ObjectId=0900001680746c25 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

համապատասխան շահագրգիռ կողմերին: Այս մասին նշված է Բեռնի կոնվենցիայի քարտուղարության կողմից 2021թ-ի ապրիլի 30-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանն ուղղված նամակում[658]:

Ավելին, ասվածի հետ մեկտեղ, պետք է նշել, որ 2023 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը Ստրասբուրգում կայացել է Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 43-րդ հանդիպումը[659], որի օրակարգում ընդգրկված հարցերից մեկը վերաբերել է Ամուլսարին:

Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 43-րդ հանդիպումը
184. Մտահոգիչ է Հայաստանում «Էմերալդ ցանցի» տարածքի, ներառյալ այն պահպանվող տարածքի, որտեղ գտնվում է Ամուլսարի հանքավայրը, կտրուկ կրճատմանն ուղղությամբ տարվող գործընթացի շարունակականությունը: Այդ տարածքի կրճատումը կարող է բացասական առումով ճակատագրական լինել պահպանվող տարածքների համաեվրոպական ցանցի արդյունավետության տեսանկյունից: 185. Մտահոգիչ է, որ ըստ պնդումների՝ այս կարևոր գործընթացներում հանրության ներգրավվածությունը կարծես թե անտեսվել է Հայաստանի կառավարության կողմից, որ նոր ռազմավարությունը, կարծես թե, թույլ կտա շրջանցել հանրության մասնակցությունը, չնայած Օրհուսի կոնվենցիայով նախատեսված պարտավորությանը, և որ աննախադեպ թվով «հանրության մասնակցությունը խոչընդոտելու նպատակով հարուցված ռազմավարական վարույթներ (դատավարություններ) են եղել ընդդեմ հանրային մասնակցության (SLAPPs), անկախ փորձագետների, իրավաբանների և լրագրողների, ովքեր դեմ էին նախագծին: 187. ՀՀ կառավարությունը պետք է դադարեցնի Ամուլսարում ոսկու հանքի հետ կապված աշխատանքները, քանի որ դրանք կարող են բացասաբար ազդել Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող կենսատարածքների ու տեսակների վրա՝ անկախ այն բանից՝ ներառված են դրանք Էմերալդ ցանցում, թե՞ ոչ: Ընդգծվել են տարածաշրջանում պարսկական ընձառյուծի (Panthera pardus tulliana) ներկայության մասին արձանագրված փաստերը, ինչպես նաև այլ արժեքավոր տեսակների հայտնաբերումը վերջին շրջանում: Հարկ է վերանայել Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագրի ՇՄԱԳ-ը, փաստացի՝ նոր ՇՄԱԳ իրականացնել՝ հաշվի առնելով կենսաբազմազանության մասին նոր հայտնագործությունները, տեղական գիտնականների և քաղաքացիական հանրության փորձագիտական կարծիքները, ինչպես նաև միջսահմանային ազդեցությունների հնարավորությունը: Հայաստանի կառավարությունը պետք է արագացնի «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծումը: 188. Ամուլսարին և Էմերալդ ցանցին վերաբերող գործընթացներում պետք է պարտադիր ներգրավել քաղաքացիական հասարակությանը:

[658] Հասանելի է https://rm.coe.int/report-1st-meeting-of-the-bureau-14-15-april-2021/1680a24efe հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[659] Հասանելի է https://rm.coe.int/misc-e-2023-final/1680ad9230 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրումներ է ուղղել Շրջակա միջավայրի նախարարությանը՝ պարզելու, թե Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 43-րդ նիստի արդյունքում Ամուլսարի առնչությամբ ՀՀ-ին ուղղված վերոնշյալ հանձնարարականների կապակցությամբ ի՞նչ քայլեր է ձեռնարկել Շրջակա միջավայրի նախարարությունը:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝

Եվրոպայի խորհրդի կողմից ստեղծված «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի վավերացումից ի վեր՝ Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է 23 թեկնածու Էմերալդ տարածք, որոնց ընդհանուր մակերեսը կազմել է հանրապետության տարածքի գրեթե մեկ երրորդը՝ ընդգրկելով այնպիսի տարածքներ, որոնք ամբողջապես չեն արտացոլում Կոնվենցիայով նախատեսված պահպանվող տեսակների կենսամիջավայրերը (ներկայացված թեկնածու էմերալդ տարածքներում է ընդգրկվել նաև ներկայիս Ամուլսարի ոսկու հանքավայրի զբաղեցրած տարածքը): Հաշվի առնելով ներկայացված թեկնածու Էմերալդ տարածքների հետ կապված խնդիրները՝ 2023 թվականին «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի (EU4Environment)» ծրագրի շրջանակներում մեկնարկել է Հայաստանում Էմերալդ ցանցի թեկնածու տարածքների վերանայման գործընթացը, ինչի արդյունքում կազմվել է թեկնածու Էմերալդ տարածքների վերանայման առաջարկների հաշվետվություն և շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի ապրիլի 25-ի գրությամբ ներկայացվել է շահագրգիռ կողմերի քննարկմանը:

Հարկ է նշել, որ վերոնշյալ գործընթացին զուգահեռ՝ դեռևս 2020 թվականից Ամուլսարի հանքավայրի հարցը ներառված է եղել Կոնվենցիայի իրականացումը վերահսկող մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) օրակարգում՝ հիմք ընդունելով «ԷկոԼուր» լրատվականի, «Հայաստանի անտառներ», «Կանաչ Հայաստան» ՀԿ-ների և «CEE Bankwatch Network» բնապահպանական միջազգային ցանցի (այսուհետ՝ բողոքող կողմ) բողոքը, համաձայն որի՝ Կառավարությունը, թույլտվություն տալով Ամուլսարի հանքարդյունահանման նախագծին, վտանգել է Կոնվենցիայով պահպանվող տեսակների կենսամիջավայրերը՝ խախտելով Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև 5-րդ և 6-րդ հոդվածները: Ըստ Ամուլսարի հանքավայրի 2025 թվականի ընթացքում շահագործելու վերաբերյալ պաշտոնական աղբյուրների կողմից ներկայացված տեղեկատվության՝ բողոքող կողմի նախաձեռնությամբ 2023 թվականի դեկտեմբերին հանձնաժողովը որոշել է Ամուլսարի հետ կապված հարցը 2020 թվականին դեռևս «Սպասման ընթացքում» գտնվող կարգավիճակից բարձրացնել «Հնարավոր հարց» կարգավիճակին (հանձնաժողովում հասարակական կազմակերպությունների բողոքների կարգավիճակները դասակարգվում են ըստ բարդության աստիճանների՝ «Սպասման ընթացքում գտնվող բողոք», «Հնարավոր հարց» և «Բաց հարց»):

2024 թվականի դեկտեմբերի 2-ից 6-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովի նիստին հանձնաժողովի կողմից ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

1) իրականացնել Ամուլսարի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր գնահատում և փորձաքննություն՝ հաշվի առնելով պահպանության ներքո գտնվող բոլոր բուսատեսակները և կենդանատեսակները,

2) տրամադրել կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից՝ Ամուլսարի հանքավայրի զբաղեցրած և հարակից տարածքների կենսաբազմազանության ուսումնասիրության արդյունքները,

3) քաղաքացիական հասարակությանը և բողոքող կողմին ակտիվորեն ներգրավել թեկնածու Էմերալդ տարածքների վերանայման և «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծման գործընթացներում,

4) որոշելով հարցը՝ թողնել «Հնարավոր հարց» կարգավիճակում, հանձնաժողովի բյուրոյի 2025 թվականի գարնանը նախատեսվող նիստին ընդառաջ, մինչև 2025 թվականի փետրվարի 14-ը քարտուղարություն ներկայացնել տեղեկատվություն՝ վերոնշյալ առաջարկների շուրջ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Վերոնշյալ բոլոր հանգամանքների համատեքստում՝ ներկայացված առաջարկությունների և առարկությունների որոշակիացման, Ամուլսարի հանքավայրի հետ կապված խնդրի քննարկման և հետագա խնդրահարույց զարգացումներից խուսափելու, ինչպես նաև Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում անհրաժեշտ քայլերի նախանշման և ճանապարհային քարտեզի մշակման նպատակով Շրջակա միջավայրի նախարարությունում նախատեսվել է կազմակերպել քննարկումներ, որոնցում ներգրավվելու են պետական կառույցների, գիտական կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ նաև բողոքող կողմի ներկայացուցիչները: Քննարկման ընթացքում նախատեսվում է որոշակիացնել նաև վերոնշյալ աշխատանքների համակարգման աշխատանքային խմբի ձևավորման հարցերը: Աշխատանքային քննարկմանը մասնակցելու նպատակով շրջակա միջավայրի նախարարությունը դիմել է համապատասխան շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ նաև գիտական կազմակերպություններին:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի կողմից ներկայացրած 2-րդ առաջարկի կապակցությամբ՝ Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման թույլտվություն ստացած «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից ամփոփ տարեկան հաշվետվությունը ներկայացնելու ժամկետ է նշվել 2025 թվականի փետրվարի 20-ը: Հաշվետվությունում ներառվելու են նաև Ամուլսարի հանքավայրի զբաղեցրած և հարակից տարածքների կենսաբազմազանության ուսումնասիրության արդյունքները:

Այս առումով Պաշտպանը կարևորում է Կառավարության կողմից հարցն անմիջական ուշադրության կենտրոնում պահելը՝ ինչպես պետական մարմինների հետ քննարկումների, այնպես էլ անմիջականորեն Վայոց Ձորի մարզ այցերի ու բնակիչների հետ հանդիպումների ձևաչափերով՝ ապահովելով պատշաճ հանրային լսումների իրականացումը, հանրության պատշաճ մասնակցությունն ու ներգրավվածությունը, ինչպես նաև գործընթացի շրջանակներում հրապարակայնության սկզբունքի պահպանումը:

Չափազանց կարևոր է նաև իրավասու մարմինների կողմից խնդրին առնչվող իրազեկման լայնածավալ աշխատանքների շարունակական իրականացումը ոչ միայն ազդակիր համայնքի, այլև ողջ հանրապետության տարածքի ընդգրկմամբ:

4.2 Հանքարդյունաբերության հարցերում հանրության մասնակցության խոչընդոտներ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հետևողականորեն դիտարկվել են շրջակա միջավայրի պահպանության հարցերում, այդ թվում՝ հանքարդյունաբերական գործունեության համատեքստում հանրության պատշաճ մասնակցության ու այդ մասնակցության անխոչընդոտ իրականացման երաշխավորման հարցերը:

Այս համատեքստում, Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են գտնվել հասարակական կազմակերպությունների, անհատ բնապահպանների ու իրավապաշտպանների, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչների՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերում մասնակցության առնչությամբ բարձրացված մտահոգությունները:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները Մարդու իրավունքների պաշտպանին են ներկայացրել տևական ժամանակ ՀՀ-ում ընթացող ճնշումները բնապահպան ակտիվիստների, բնապահպանական կազմակերպությունների, իրավապաշտպանների, ազդակիր համայնքների՝ հանքարդյունաբերության վնասակար ծրագրերին դեմ արտահայտվող բնակիչների նկատմամբ՝ այդ թվում՝ փորձեր անելով աղավաղել վերջիններիս իրական նպատակը: Նշվածով պայմանավորված՝ 2024 թվականի ընթացքում Պաշտպանն անձամբ է ընդունել բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգին առնչվող բնապահպանական ոլորտում առկա խնդիրները քննարկելու նպատակով:

Ըստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ նշված ճնշումները ակտիվացել են Ամուլսարի հանքավայրի վիճահարույց ծրագրի շուրջ մտահոգություն

առաջացնող հայտարարությամբ պայմանավորված[660] ու արտահայտվել են ատելության խոսքով, վիրավորանքներով, զրպարտչական բնույթի հրապարակումներով, որոնք տեղ են գտել, ի թիվս այլնի, հրապարակային ելույթներում ու հարցազրույցներում, ինչպես նաև հանրության մասնակցության դեմ ռազմավարական դատավարություններով (SLAPP) [661]: Այս խնդիրները մտահոգել են նաև տարբեր միջազգային դերակատարների, որոնց գործունեության առանցքում մարդու իրավունքներ են, էկոլոգիական հարցերն ու հանրային մասնակցությունը[662]: Հանրության ներգրավվածության խնդիրների ու ընդդեմ հանրային մասնակցության աննախադեպ թվով «հանրության մասնակցությունը խոչընդոտելու նպատակով հարուցված ռազմավարական վարույթների ու դատավարությունների (SLAPPs) վերաբերյալ պնդումները մտահոգել են նաև Բեռնի կոնվենցիայի մշտական կոմիտեին[663]:

Շրջակա միջավայրին առնչվող հարցերում հասարակության մասնակցության ու ներգրավվածության հարցերը կարգավորվում են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով[664].

Ռիո դե Ժանեյրոյի շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ հռչակագիր[665]
Սկզբունք 10.
Շրջակա միջավայրի հարցերը լավագույնս կարգավորվում են շահագրգիռ հասարակության մասնակցությամբ բոլոր մակարդակներում: Ազգային մակարդակում ցանկացած անհատ պետք է ունենա բավարար հասանելիություն պետական մարմինների կողմից տնօրինվող շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությանը, այդ թվում՝ վտանգավոր նյութերի ու իրենց համայնքներում տեղի ունեցող գործողությունների վերաբերյալ տեղեկատվությանը, ինչպես նաև պետք է ունենա հնարավորություն որոշումների կայացման գործընթացին

[660] Հասանելի է https://cvmedia.am/page2-4019--88, https://rightsindevelopment.org/news/armenia-environmental-defenders-defamation/ հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[661] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/amulsar/15359/ , https://www.ecolur.org/hy/news/amulsar/15391/ https://rightsindevelopment.org/wp-content/uploads/securepdfs/Wearing-blinders-v6.pdf հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[662] Հասանելի է https://rightsindevelopment.org/news/armenia-environmental-defenders-defamation/, https://bankwatch.org/press_release/international-groups-stand-in-solidarity-with-armenian-environmental-and-human-rights-defenders-facing-defamation-and-criminalisation հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[663] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 201-204, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[664] Տե՛ս առավել մանրամասն, նույն տեղում:

[665] Հասանելի է https://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_CONF.151_26_Vol.I_Declaration.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մասնակցելու: Պետությունները պետք է նպաստեն ու խրախուսեն հասարակության իրազեկվածությունն ու մասնակցությունը տեղեկատվությունը լայնորեն հասանելի դարձնելու միջոցով: Արդյունավետ դատական ու վարչական վարույթներին հասանելիությունը, ներառյալ փոխհատուցումն ու պաշտպանության միջոցները պետք է ապահովված լինի:

Այս կապակցությամբ Պաշտպանն ընդգծում է մասնագիտական և իրավապաշտպան գործունեություն իրականացնելիս ցանկացած անձի, այդ թվում՝ բնապահպանների իրավունքների՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված լինելու կարևորությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝

✓ ***Անհրաժեշտ է ապահովել ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված ու պետության ստանձնած, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ ամրագրված շահագրգիռ հասարակության պատշաճ ու անխոչընդոտ մասնակցությունն ու ներգրավվածությունը շրջակա միջավայրին առնչվող հարցերում, այդ թվում՝ հանքարդյունաբերական գործունեության համատեքստում:***

✓ ***Բացառել ցանկացած ճնշում հասարակական կազմակերպությունների, անհատ բնապահպանների ու իրավապաշտպանների, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչների նկատմամբ շրջակա միջավայրի պահպանության հարցերում վերջիններիս մասնակցության իրավունքն իրացնելիս:***

ԲԱԺԻՆ 14. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից է գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությունը: Մարդու իրավունքների պաշտպանի մանդատն այս ոլորտում ընդգրկում է ինչպես գործարարների շահերի պաշտպանությանը, այնպես էլ՝ տնտեսական գործունեության իրավունքի երաշխավորմանը վերաբերող հարցերը:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների, ինչպես նաև կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել օրենսդրական և գործնական խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ Պաշտպանը հանդես է եկել կոնկրետ առաջարկներով:

Այս առումով, էական է նաև, որ 2024 թվականի ընթացքում իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում քաղաքացիների կողմից բարձրացված մի շարք հարցեր ստացել են լուծում:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը սկսել է իրագործել գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման լայնածավալ աշխատանքներ:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի կողմից կատարված մարզային այցերի ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել են գործարարների իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցեր:

Գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկումներ իրականացվել են նաև զանգվածային լրատվության միջոցներով, մասնավորապես, ներկայացվել են գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության

ընթացքում ոլորտում արձանագրված խնդիրները և այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը[666]:

Պաշտպանն ակտիվացրել է նաև համագործակցությունը ոլորտի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցերի առնչությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմը մասնակցություն է ունեցել գործարարության ոլորտում շահագրգիռ գերատեսչությունների, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված քննարկումներին:

Հարկ է նաև նշել, որ 2024 թվականի ընթացքում ՏԿԵՆ, ՀԾԿՀ, ինչպես նաև հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում քաղաքացիների բազմաթիվ խնդիրներ ստացել են լուծում:

2024 թվականին Պաշտպանը շարունակել է պետական մարմինների հետ հաղորդակցության տարբեր ձևաչափերով ներկայացնել հանրային ծառայության ոլորտներում առկա խնդիրները:

---

[666] Մանրամասն հասանելի է https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1115, https://ombuds.am/am/site/Video GalleryView/1192 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներ

Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանությունը և խթանումը կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնման, տնտեսական աճի և բիզնեսի հաջողության կարևոր շարժիչ ուժ է, ինչպես նաև գենդերային հավասարության հաստատման կարևոր նախապայման:

Գործարարության ոլորտում կանանց իրավունքների երաշխավորման և խթանման տեսանկյունից կարևորվում է տնտեսական կյանքում կանանց հավասար հնարավորությունների ապահովումը, գործարար միջավայրում վերջիններիս լիարժեք ինտեգրումը, շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի ձևավորումը: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունի տնտեսական կյանքում կանանց մասնակցության կառուցակարգերի բարելավումը, ինչը պահանջում է համալիր և ռազմավարական մոտեցումներ:

Հատկանշական է, որ 2024 թվականի ընթացքում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից շրջանառվել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը[667]:

Նախագծով առաջարկվել է սահմանել գենդերային հավասարության քաղաքականություն, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական բնագավառում: Այդ գերակայության շրջանակում նախանշված միջոցառումներն ուղղված են լինելու տնտեսության ոլորտում գենդերազգայուն մոտեցումների խրախուսմանը, կանանց սոցիալ-տնտեսական ակտիվության խրախուսմանը և սոցիալ-տնտեսական կյանքում կանանց հավասար ներգրավվածության և առաջխաղացման խթանմանը: Նախագծով նախատեսված կարգավորումների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը ՀՀ վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1740-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի շրջանակում ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ:

Կարևորելով հիշյալ ռազմավարական փաստաթղթի նախագծի մշակումը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2024 թվականի դրությամբ այն դեռևս չի ընդունվել: Նշվածը կարող է խոչընդոտներ ստեղծել գործարար միջավայրում կանանց լիարժեք ներգրավվածության և առաջխաղացման տեսանկյունից, քանի որ կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնման և գործարար միջավայրում իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից կարևորվում է տնտեսական կյանքում կանանց հավասար ներգրավվածությանը և առաջխաղացմանն ուղղված ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի առկայությունը:

---

[667] Հասանելի է https://www.e-draft.am/projects/6821/justification հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ընդ որում, գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից կարևորվում է նաև գործարար միջավայրին կանանց ինտեգրվելու հնարավորությունների և այդ ոլորտում իրավունքների պաշտպանության ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը: Շատ կանայք *(այդ թվում՝ երիտասարդ, հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ, գյուղաբնակ, տեղահանված, փախստական)* անտեղյակ են գործարար միջավայրին ինտեգրվելու հնարավորություններին և այդ ոլորտում իրավունքների պաշտպանության ընթացակարգերին:

Հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից կատարված մարզային այցերի ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը կազմակերպել է նաև «Կանանց իրավունքների պաշտպանություն և խթանում գործարարության ոլորտում» թեմայով մարզային քննարկում Գեղարքունիքում, որին մասնակցել է մարզում բիզնես ոլորտում գործունեություն իրականացնելու ցանկություն ունեցող ավելի քան 40 կին, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և բռնի տեղահանված անձինք: Քննարկվել են գործարարության ոլորտում հանդիպող մարտահրավերները, իրավահավասարության երաշխավորման կարևորությունը, գոյություն ունեցող կարծրատիպերը հաղթահարելու անհրաժեշտությունը և այլն:

Քննարկման մասնակիցները ներկայացրել են գործարարության ոլորտում հանդիպող մարտահրավերները, հանդես եկել առաջարկներով: Բարձրաձայնվել են նաև հարցեր՝ կապված բռնի տեղահանված անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար առևտրային կազմակերպություն ստեղծելու անհնարինության, հարկային ոլորտում առաջացող խնդիրները լուծելու դժվարությունների հետ, որոնց լուծման ուղղությամբ տարվել են անհատական աշխատանքներ[668]:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***արագացնել «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման գործընթացը, ինչն առավել արդյունավետ կերպով կերաշխավորի կանանց***

[668] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3082 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

տնտեսական հնարավորությունների ընդլայնումը և այդ ոլորտում իրավունքների պաշտպանությունը,

- ✓ ***իրավասու պետական մարմնի կողմից ակտիվորեն իրականացնել իրազեկման աշխատանքներ գործարար միջավայրում կանանց ինտեգրվելու հնարավորությունների և այդ ոլորտում իրավունքների պաշտպանության ընթացակարգերի վերաբերյալ:***

2. ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ աշխատանքային կամ աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացված եկամուտների կրկնակի հարկման խնդիր

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ աշխատանքային կամ աշխատանքների կատարման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացված եկամուտների կրկնակի հարկման վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացել է ծանուցում այն մասին, որ 2022 թվականին Ռուսաստանի Դաշնությունում ծառայությունների մատուցման համար ստացել է աշխատավարձ և հավասարեցված այլ եկամուտ, ինչպիսի պարագայում Հայաստանի Հանրապետության հարկային մարմին չի ներկայացվել 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը և եկամտային հարկի վճարում չի կատարվել: Հավելել է, որ այդ աշխատանքի համար հարկվել է նշյալ պետությունում:

Մեկ այլ դեպքում՝ բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ արտագնա աշխատանքի համար հարկային պարտավորությունը կատարելու մասին ծանուցումը ստանալուց անմիջապես հետո կատարել է նշված վճարումները, այնուհետև, տեղեկացել է, որ կատարված վճարումները ենթակա են վերադարձման:

Բարձրացված հարցերի կապակցությամբ Պետական եկամուտների կոմիտեից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ ներկայում Պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի տարածքից դուրս՝ աշխատանքային կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացված եկամուտների հարկման հետ կապված կարգավորումների մասով: Ըստ պարզաբանման՝ մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացումը, ՊԵԿ-ը ձեռնպահ կմնա հարկային վարչարարություն իրականացնելուց՝ ներառյալ արգելադրում, գանձումներ և այլն: Նշվել է նաև, որ Պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, որը վերադարձվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից և ներկայում լրացուցիչ քննարկվում է:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է նաև Պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակված և իրավական ակտերի նախագծերի

հրապարակման միասնական կայքում դեռս 2024 թվականի փետրվարի 26-ին տեղադրված օրինագիծը և դրա ընդունման հիմնավորումը[669]:

Կարևորելով բարձրացված խնդրի լուծման համար «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումը *(որով նախատեսվում է ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից աշխատանքային կամ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացված եկամուտների՝ ՀՀ-ում հարկման կարգավորումների վերանայում),* այնուհանդերձ

Պաշտպանն արձանագրում է, որ.

Անհրաժեշտ է արագացնել համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման գործընթացը, որի արդյունքում ֆիզիկական անձինք կարող են ներկայացնել եկամտային հարկի ճշտված հաշվարկ և հետ ստանալ վճարված եկամտային հարկի գումարը:

3. Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ժամանակավոր ներմուծված՝ թեթև մարդատար տրանսպորտային միջոցների մաքսազերծման անհամարժեքության խնդիր

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվող՝ ժամանակավոր ներմուծված թեթև մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության նպատակով ձևակերպման ժամանակ միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերի և հարկերի մասնակի փոխհատուցման վերաբերյալ:

Բողոքների հիմնական մասը վերաբերել է նրան, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2023 թվականի թիվ 2076-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով հաստատված Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) անդամ չհանդիսացող պետություններից Միության մաքսային տարածք ժամանակավոր ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող թեթև մարդատար տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ավտոմոբիլ), ազատ շրջանառության համար ներմուծման դեպքում պետական աջակցության ծրագրով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ՀՀ-ում գտնվող ժամանակավոր ներմուծված թեթև մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության նպատակով ձևակերպման համար հատկացվել էր սեղմ ժամկետ (ընդամենը 25 օր) և հազարավոր քաղաքացիներ հնարավորություն չեն ունեցել պետական աջակցության ծրագրի շրջանակներում ձևակերպել իրենց մեքենաները:

Ըստ բողոքների՝ Որոշման համաձայն՝ յուրաքանչյուր ավտոմոբիլի համար ազատ շրջանառության նպատակով ուղևորային մաքսային հայտարարագիր

---

[669] Հասանելի է https://www.e-draft.am/projects/6938 30.01.2024 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ներկայացնելու և միասնական դրույքաչափերով մաքսատուրքերը և հարկերը վճարելու դեպքում յուրաքանչյուր շահառուին տրամադրվող փոխհատուցման գումարը կազմում է միասնական դրույքաչափով վճարված մաքսատուրքերի և հարկերի մեծության 40%-ը, եթե վերջինիս կողմից հայտարարագրվել է մինչև 5 տարի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմոբիլ և միասնական դրույքաչափով վճարված մաքսատուրքերի և հարկերի մեծության 70%-ը, եթե վերջինիս կողմից հայտարարագրվել է 5 տարվանից ավելի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմոբիլ:

Ըստ բողոքների՝ յուրաքանչյուր շահառուին տրամադրվող փոխհատուցման գումարը հաշվարկելիս հիմք է ընդունվել ավտոմոբիլի թողարկման տարեթիվը, այլ ոչ թե շարժիչի հզորությունը, նշել են, որ մի խումբ քաղաքացիներ պատրաստակամ են ավտոմոբիլները մաքսազերծել՝ հաշվի առնելով շարժիչի հզորությունը:

Բողոք ներկայացրած անձանց մտահոգություններին ավելի մանրամասն ծանոթանալու և բարձրացված խնդրի լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշման նպատակով Պաշտպանի աշխատակազմում կազմակերպվել է բողոք ներկայացրած անձանց ընդունելություն: Ընդունելության ժամանակ անձինք իրենց մտահոգություն են հայտնել Որոշման կարգավորումների հետևանքների առնչությամբ: Մասնավորապես, նշել են, որ Որոշման կարգավորումները վատթարացրել են մի շարք քաղաքացիների սոցիալական վիճակը և մի խումբ այլ քաղաքացիներ ստիպված են եղել վաճառել ավտոմոբիլներն էական ցածր արժեքով: Նշել են նաև, որ ազատ շրջանառության նպատակով ձևակերպման ժամանակ միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերը և հարկերը մեծամասամբ գերազանցում են ավտոմոբիլի իրական արժեքը: Օրինակ, նշվել է, որ 4.8 լ ծավալ ունեցող ավտոմեքենայի մաքսազերծման արժեքը կազմում է 12 մլն ՀՀ դրամ, այն դեպքում, երբ նշյալ ավտոմոբիլի շուկայական արժեքը 7000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ է: Մտահոգություն են հայտնել նաև ավտոմոբիլների ազատ շրջանառության նպատակով ձևակերպման համար հատկացված ժամկետի ակնհայտորեն ողջամիտ չլինելու կապակցությամբ (ընդամենը 25 օր)՝ նշելով, որ ժամկետի սղությամբ պայմանավորված ի վիճակի չեն եղել համապատասխան ֆինանսական միջոցներ ձեռք բերել ավտոմոբիլների մաքսազերծման գործընթացը կազմակերպելու նպատակով:

Պաշտպանը 2024 թվականի նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ՊԵԿ:

Բարձրացված հարցի վերաբերյալ ՊԵԿ-ը ներկայացրել է պարզաբանումներ այն մասին, որ Որոշման 1-ին կետով հաստատված է Միության անդամ չհանդիսացող պետություններից Միության մաքսային տարածք մինչև 2023 թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ՝ ժամանակավոր ներմուծման նպատակով ներմուծված և առանց Միության մաքսային տարածքը լքելու նույն նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող՝ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող ավտոմոբիլների ազատ շրջանառության համար ներմուծման դեպքում պետական աջակցության ծրագիրը, որի նպատակն էր ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվող՝ ժամանակավոր ներմուծված թեթև մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության նպատակով ձևակերպման ժամանակ միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերի և հարկերի մասնակի փոխհատուցումը Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ մեղմելու համար միության օրենսդրության շրջանակներում ֆիզիկական անձանց անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար սահմանված՝ մաքսային վճարների բարձր դրույքաչափերի ազդեցությունն անձանց սոցիալական վիճակի վրա:

Պարզաբանումներ են տրամադրվել նաև այն մասին, որ Որոշման 1-ին կետով սահմանված է, որ ժամանակավորապես Հայաստանի Հանրապետություն ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքերի և հարկերի վճարման պարտավորությունը Միության մաքսային օրենսգրքի 264-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում հիշատակված դեպքերում ենթակա է ապահովման միայն Միության մաքսային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված եղանակով: Նշված որոշման 2-րդ կետի համաձայն՝ նույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Միաժամանակ հայտնել են, որ բազմիցս տեղի ունեցած քննարկումների ժամանակ շահագրգիռ անձանց ներկայացվել է տեղեկատվություն ինչպես ժամանակավորապես Հայաստանի Հանրապետություն ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքերի և հարկերի վճարման պարտավորությունների ապահովման նպատակով դրամական դեպոզիտի կիրառման վերաբերյալ, այնպես էլ խնդրո առարկա տրանսպորտային միջոցների՝ ազատ շրջանառության համար վերաձևակերպման դեպքում պետական աջակցության տրամադրման կարգի և ժամկետների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն առաջարկում է միության օրենսդրության շրջանակներում ֆիզիկական անձանց անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար սահմանված՝ մաքսային վճարների բարձր դրույքաչափերի ազդեցությունն անձանց սոցիալական վիճակի վրա մեղմելու համար քննարկման առարկա դարձնել ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գտնվող՝ ժամանակավոր ներմուծված ավտոմոբիլների ազատ շրջանառության նպատակով ձևակերպման ժամանակ միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերի և հարկերի մասնակի փոխհատուցման նոր կարգավորումներ սահմանելու հնարավորության հարցը՝ մաքսային ձևակերպման համար հատկացնելով ողջամիտ ժամկետ և դրանց վերաբերյալ իրականացնելով պատշաճ իրազեկման աշխատանքներ:

4. Մաքսակետերում գոյացող հերթերի և պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիր

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ շարունակվում է արդիական մնալ ՊԵԿ-ի մաքսային գործառնությունների իրականացման վայրերում գոյացող հերթերի խնդիրը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ՊԵԿ-ին:

Պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ ՊԵԿ-ից պարզաբանել են, որ ներկայում «Զվարթնոց» օդանավակայանով (այդ թվում՝ «Կարգո» բեռնային համալիրով), փոստային կամ սուրհանդակային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով ժամանող և մեկնող բեռների գծով ներկայացված ապրանքների հայտարարագրերի, ինչպես նաև Երևանում գտնվող մաքսային ստորաբաժանումներում սպասարկումն իրականացվում է ծանուցման էլեկտրոնային համակարգի միջոցով: Փուլային եղանակով համակարգին անցում են կատարելու Գյումրիում, Վանաձորում և Սիսիանում գտնվող մաքսային մարմինները:

Կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ Պետական սահմանի ցամաքային անցման կետերում հերթերի կարգավորման, ինչպես նաև մաքսային ձևակերպումների և հսկողության վրա ծախսվող ժամանակահատվածի կրճատման, վարչարարության բարելավման նպատակով իրականացվում են ամենօրյա աշխատանքներ: 2024 թվականի հոկտեմբերից Հայաստանի Հանրապետությունից արտահանման ուղղությամբ կիրառվում է «ՏՄ վերահսկողություն մաքսային հսկողության տարածքում» համակարգը: Միաժամանակ, պետական սահմանի Բագրատաշենի անցման կետում մեկնարկել են ենթակառուցվածքների վերափոխման, իսկ Ագարակում՝ նոր սահմանային անցման կետի շինարարական աշխատանքները:

Այսպիսով, Պաշտպանը ողջունում է վարչարարության արդյունավետության բարձրացմանն ու հերթերի հաջող կառավարմանն ուղղված համապարփակ մի շարք միջոցառումների իրականացմանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն արձանագրել է, որ որոշակիորեն կարգավորվել են նաև մաքսատուն-վարչություններում ձևավորված հերթերը:

Հաշվետու տարում Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շարունակվում է չլուծված մնալ նաև ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիրը: Այսպես, մարդիկ նշում են, որ սահմանային անցակետերում տարբեր հարցեր ունենալով՝ փորձել են ՊԵԿ-ից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, սակայն չեն կարողացել, քանի որ հեռախոսազանգերի կենտրոնը գիշերային ժամերին չի գործում: Ընդ որում, Պաշտպանն այս խնդրին մանրամասն անդրադարձ է կատարել նաև իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[670]:

Ըստ ՊԵԿ-ի ներկայացրած պարզաբանումների՝ ՀՀ ՊԵԿ «Թեժ գիծ» ծառայությունը գործում է ՀՀ ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի կազմում: «Թեժ գիծ» ծառայությունը աշխատում է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 09:00-ից 18:00-ն, իսկ շաբաթ օրը՝ ժամը 10:00-ից 14:00-ն: Հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի կողմից հարցադիմումներ կամ բողոքներ ստացվում են էլեկտրոնային եղանակով՝ www.src.am պաշտոնական կայքից՝ շուրջօրյա: Հեռախոսազանգերի

---

[670] Առավել մանրամասն տե՛ս, 2020 և 2023 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, համապատասխանաբար՝ էջեր 761-764, 398-400: Հասանելի են https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf, https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

միջոցով ստացված բոլոր բողոքները արձանագրվում են և էլեկտրոնային համակարգի միջոցով հետագա ընթացքն ապահովելու նպատակով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ՀՀ ՊԵԿ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, որ հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի աշխատանքները փոխկապակցված են ոչ միայն ՀՀ ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ նաև ՀՀ այլ պետական մարմինների աշխատանքների հետ, որոնց աշխատանքային ժամերը սահմանված են երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն:

Ըստ ՊԵԿ-ի տրամադրած տեղեկատվության՝ ինչ վերաբերում է օրվա տարբեր ժամերին Հայաստանի Հանրապետություն ներմուծում և արտահանում իրականացնող տնտեսավարողների կողմից բարձրացրած հարցերի վերաբերյալ արագ արձագանքմանը, ապա հայտնել են, որ ՀՀ բոլոր սահմանային անցման կետերը աշխատում են շուրջօրյա աշխատանքային ռեժիմով և առաջացած խնդիրները և բողոքները լուծում ստանում են տեղում՝ տվյալ մաքսային անցման կետում: Հետևաբար, ըստ ՊԵԿ-ի՝ հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի աշխատանքային ժամերը գրաֆիկով շուրջօրյա սահմանելն անարդյունավետ է:

Վերոգրյալի համատեքստում, Պաշտպանը վերահաստատում է տարիներ շարունակ ներկայացվող այն առաջարկը, ըստ որի՝ գործնականում սահմանային մաքսատուն-վարչություններում մարդիկ հաճախ, հայտնելով իրենց անհամաձայնությունը մաքսային ծառայության աշխատակիցների պահանջների հետ, փորձում են ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնից իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ստանալ պատշաճ տեղեկատվություն և իրենց խնդիրը ավելի արագ և ճկուն կերպով լուծել, սակայն չեն կարողանում: Այսպիսով, հեռախոսազանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելու պատճառով արագ արձագանքում պահանջող բողոքները ողջամիտ ժամկետում չեն լուծվում: Այս առումով շարունակում է խնդրահարույց մնալ հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը շաբաթվա բոլոր օրերին և շուրջօրյա չիրականացնելու հարցը, քանի որ նույն խնդրի հետ առնչվում են նաև այլ պետական մարմինների աշխատակիցները, որոնք քաղաքացիների՝ հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կամ քաղաքացիների բարձրացրած խնդիրներին արագ լուծում տալու համար հնարավորություն չեն ունենում կապ հաստատել ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի հետ:

Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք եվրոպական երկրներում մաքսային ծառայության թեժ գծի հեռախոսահամարները գործում են շուրջօրյա (Գերմանիա, Իտալիա և այլն)[671]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ մաքսակետերում գոյացող հերթերի նվազեցման ուղղությամբ ՊԵԿ-ի ձեռնարկած քայլերը պետք է դիտել իբրև դրական առաջընթաց: Այնուհանդերձ անհրաժեշտ է շարունակական ջանքեր գործադրել հերթերի արդյունավետ կառավարումը բարձրացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև քննարկման առարկա դարձնել ՊԵԿ

---

671 Հասանելի են https://www.zoll.de/EN/Contact/Other_contacts/other_contacts_node.html և https://www.gdf.gov.it/en հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ

հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը մշտական հիմունքներով (շուրջօրյա) դարձնելու հարցը:

5. Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի իրազեկվածության պակասի խնդիր

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը ստացել է բողոքներ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգից չօգտվելու խնդրի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ դեպքերում միկրոձեռնարկատիրության սուբյեկտները տեղեկացված չեն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգից օգտվելու իրենց իրավունքներին և ընթացակարգին, ինչի արդյունքում հաճախ տուժում են պետական մարմինների վարչարարությունից, կայացրած վարչական ակտերից:

Նշվածը խոչընդոտներ է ստեղծում միկրոձեռնարկատիրության զարգացման, փոքր բիզնեսի շահերի պաշտպանության և տնտեսության մրցունակությունը բարձրացնելու տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ 2024 թվականին Պաշտպանի աշխատակազմում մշակվել և հրապարակվել է միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի վերաբերյալ ուղեցույց[672], որի նպատակն է բարձրացնել միկրոձեռնարկատիրության սուբյեկտների իրազեկվածությունը միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի արտոնություններից օգտվելիս:

Ուղեցույցը կազմելիս հաշվի են առնվել Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված նկատառումները և առաջարկությունները: Ուղեցույցում անդրադարձ է կատարվել այն հարցերին, որոնք առավել հաճախ են բարձրացվում Պաշտպանին հասցեագրվող դիմումներում ու բողոքներում, մասնավորապես, ի՞նչ է միկրոձեռնարկատիրությունը, ովքե՞ր կարող են համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ ի՞նչ արտոնություններ են նախատեսված միկրոձեռնարկատիրության համար, ինչպե՞ս կարող են օգտվել դրանցից և միկրոձեռնարկատիրության հարկման համակարգին առնչվող մի շարք այլ հարցեր:

Հարկ է նշել, որ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» հաղորդաշարի շրջանակում Պաշտպանի ներկայացուցիչը ներկայացրել է Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության ընթացքում արձանագրված խնդիրը

[672] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է https://www.ombuds.am/images/files/b6cb7a43c158e4cb4627979e69bd709a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի իրազեկվածության պակասի և այդ ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կազմված ու հրապարակված ուղեցույցի վերաբերյալ[673]:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ Պաշտպանին խնդրի վերաբերյալ շարունակում են հասցեագրվել դիմում-բողոքներ՝ անհրաժեշտ է իրավասու պետական մարմնի կողմից ակտիվորեն իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ միկրոձեռնարկատիրության հարկման համակարգի արտոնությունների և դրանցից օգտվելու պայմանների և հնարավորությունների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր անձ իրավասու պետական մարմնի ներկայացուցիչներից ստանա մանրամասն պարզաբանում գործող իրավակարգավորումների, կոնկրետ դեպքի պարագայում դրանց կիրառելիության և այլ անհրաժեշտ հարցերի կապակցությամբ:

6. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ ստուգումների ընթացքում պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիրը շարունակում է մնալ արդիական:

Պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ ՊԵԿ-ից պարզաբանել են, որ 2024 թվականի ընթացքում ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների և վարքագծի (էթիկայի) կանոնների բաժնի կողմից անցկացվել են թվով 7 ծառայողական քննություններ, որոնց արդյունքում մեկ ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ, մեկ այլ ծառայող ենթակա է եղել կարգապահական պատասխանատվության, սակայն հաշվի առնելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգապահական տույժ կիրառելու համար սահմանված ժամկետները՝ ծառայողական քննությունը դադարեցվել է:

Կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությունների արդյունքում հայտնաբերված խախտումները հետագայում բացառելու նպատակով ՊԵԿ նախագահի կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Ըստ ՊԵԿ-ի տրամադրած տեղեկատվության՝ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության աշխատակիցների կողմից իրականացված շրջայցերի ընթացքում, անձնակազմի հետ տարվող աշխատանքներում, ծառայողներին հանձնարարել են պահպանել «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին»

---

[673] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1192, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

օրենքների և ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները և անշեղորեն առաջնորդվել ՊԵԿ նախագահի համապատասխան հրամաններով և հանձնարարականներով, ինչպես նաև խստագույնս պահպանել հարկային և մաքսային ծառայողների վարքագծի կանոնները՝ համակարգում բացառելով հարկ վճարողների շահերի ոտնահարման, նրանց գործունեության խոչընդոտման, անհարկի միջամտության, ճնշումների գործադրման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը:

Քննարկվող հարցի կապակցությամբ պետք է նշել, որ Պաշտպանը այս խնդրին մանրամասն անդրադարձ է կատարել նաև իր 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում[674]: Այսպես, Պաշտպանն առաջարկել էր ստուգումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով հարկային և մաքսային ծառայողների հանդերձանքին ամրացնել դյուրակիր տեսախցիկներ՝ հաշվի առնելով, որ վերջին տարիներին իրավապահ մարմինների կողմից լայնորեն կիրառվում են տեխնոլոգիական նորամուծություններ, որոնցից են նաև դյուրակիր տեսախցիկները:

ՊԵԿ-ի պարզաբանումների համաձայն՝ 2024 թվականի փետրվարի 28-ին ընդունված ՀՕ-95-Ն օրենքով Հարկային օրենսգիրքը լրացվել է «Տեսաձայնագրումը թեմատիկ հարկային ստուգման ընթացքում» վերտառությամբ 352.1-ին հոդվածով, որով հարկային մարմնին հնարավորություն է ընձեռվել թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով օգտագործել ծառայողական տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ:

Այսպիսով, ըստ ՊԵԿ-ի՝ վերը նշված օրենքի ընդունումից հետո նախաձեռնվել է տեսաձայնագրող տեխնիկական միջոցների և համապատասխան ծրագրային ապահովման ձեռքբերման գործընթացը, հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք անցել են պատրաստման դասընթացներ՝ տեսաձայնագրող տեխնիկական միջոցներից օգտվելու և տեսաձայնագրում իրականացնելու նպատակով: 2024 թվականի հոկտեմբեր ամսից ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն՝ տեսաձայնագրող տեխնիկական միջոցներն սկսել են կիրառվել թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում:

Ըստ պարզաբանման՝ ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների թիվ 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ բաժիններում արդեն բաժանված են և կիրառվում են համազգեստին ամրացվող տեսախցիկները, իսկ մյուս բաժիններում տեսախցիկների տեխնիկական կարգաբերումները ընթացքի մեջ են: Պետական սահմանի ցամաքային անցման կետերի մաքսային ծառայողներին տրամադրվել են անհատական տեսախցիկներ, որոնց ծրագրային ապահովումը ներկա պահին գտնվում է լրամշակման փուլում:

---

[674] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, համապատասխանաբար՝ էջեր 396-398: Հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանը ողջունում է այս ուղղությամբ ՊԵԿ ձեռնարկած քայլերը և արձանագրում որ, ընդհանուր առմամբ, Պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացված հարցը ստացել է լուծում: Պաշտպանն ընդգծում է նաև, որ քաղաքացիների հետ անմիջական շփում ունեցող ստուգումներ իրականացնող անձանց հանդերձանքի վրա դյուրակիր տեսախցիկների ամրացումը կնպաստի նրանց գործունեության թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, բողոքներում բարձրացված հարցերի արդյունավետ լուծմանը:

Այնուհանդերձ, Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է հնարավորին սեղմ ժամկետում ավարտին հասցնել համազգեստին ամրացվող տեսախցիկների համալրման և գործարկման գործընթացը բոլոր ստորաբաժանումներում:

7. Վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված տուգանքների անհամաչափության և անհատական մոտեցման բացակայության խնդիր

2024 թվականին Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ փոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանցից, որոնք բարձրացնում են վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված տուգանքների միասնական չափերի խնդրահարույց լինելու հարցը:

Մասնավորապես, բողոքները վերաբերում են նրան, որ տուգանելիս հաշվի չեն առնվում կոնկրետ իրավախախտման հանգամանքները *(օրինակ՝ իրավախախտումն առաջին անգամ կատարած լինելու հանգամանքը և այլն)*, ինչպես նաև իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը: Այդպիսով, տուգանքներ նշանակելիս հարկային մարմինն անհատական մոտեցում չի ցուցաբերում, ինչի արդյունքում փոքր շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները հայտնվում են տնտեսական ծանր վիճակում:

Այսպես, օրինակ՝ բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ իր ավտոտնակը դարձրել է փոքր խանութ: Հավելել է, որ խանութում առկա է եղել ընդամենը 150 000 ՀՀ դրամից մինչև 200 000 ՀՀ դրամին համարժեք ապրանք և օրական իրականացվել է 10 000 ՀՀ դրամից մինչև 15 000 ՀՀ դրամի չափով վաճառք: Չնայած դրան՝ հարկային մարմինը, անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար, իր նկատմամբ կիրառել է վարչական տույժ (նշանակել է 300 հազար ՀՀ դրամի չափով տուգանք):

Պաշտպանին ներկայացված մեկ այլ դիմում-բողոքով անձը հայտնել է, որ ունի ծաղկի փոքր վաճառակետ: Հավելել է, որ հարկային մարմնի աշխատակիցը կատարել է հսկիչ գնում 5000 ՀՀ դրամի չափով, որի համար ցանկացել է վճարում կատարել անկանխիկ վճարման եղանակով, սակայն, ըստ պնդման, տեխնիկական խնդրի պատճառով հնարավոր չի եղել այդ պահին ապահովել անկանխիկ վճարման ընդունման հնարավորությունը: Արդյունքում, իր նկատմամբ նշանակվել է 300 հազար ՀՀ դրամի չափով տուգանք:

Ըստ տնտեսվարողների՝ նշանակված տուգանքներն իրենց համար ծանր տնտեսական հետևանքներ են առաջացրել: Բողոքների համաձայն՝ փոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանց դեպքում 300 հազար ՀՀ դրամի չափով

տուգանք նշանակելն իրատեսական չէ, քանի որ սահմանված շեմը բավականին բարձր է: Այսպիսով, ստացվում է, որ տվյալ պարագայում բողոք ներկայացրած անձանց հիմնական մտահոգությունը վերաբերում է տուգանքների նշանակման անհատականացման կառուցակարգերի բացակայությանը:

Այս խնդրին Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել նաև իր 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում, մասնավորապես, նշելով, որ հաճախ տուգանք նշանակելիս հաշվի չի առնվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողի շրջանառության ծավալը, բոլորի համար գործում է տուգանքի միևնույն չափը[675], իսկ հարկային տեսուչը չունի օրենսդրական այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ կարողանա յուրաքանչյուր խախտման պարագայում ցուցաբերել անհատական մոտեցում[676]:

Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ՊԵԿ: Ի պատասխան՝ ներկայացվել են պարզաբանումներ այն մասին, որ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար կիրառված տուգանքների մասով ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ստացվել է թվով 344 դիմում-բողոք, ինչպես նաև թվով 34 դիմում-բողոք ստացվել է կանխիկ դրամով գումարի վճարման կամ ընդունման սահմանափակումները չպահպանելու դեպքում կիրառված տուգանքների մասով: Հայտնել է նաև, որ դիմումները հիմնականում վերաբերվել են ոչ թե կիրառված տուգանքների անհամաչափությանը, այլ բուն ստուգման ակտերին:

Ըստ ՊԵԿ-ի՝ վերը նշված թվով 378 դիմում-բողոքների քննության արդյունքում Հանձնաժողովի կողմից ընդունվել են հետևյալ որոշումները.

- թվով 157 դեպքով դիմում-բողոքը բավարարվել է (գերակշիռ մասը վերաբերվել է այն դեպքերին, երբ մինչև խախտման հայտնաբերումը հարկ վճարողը համապատասխան դիմում ներկայացրած է եղել բանկ՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորությունն ապահովելու համար),
- թվով 195 դեպքով դիմում-բողոքը մերժվել է,
- թվով 26 դեպքով դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարույթը կարճվել է:

ՊԵԿ-ի պարզաբանումների համաձայն՝ Հանձնաժողովում յուրաքանչյուր գործ քննվում է առանձին և քննության ժամանակ հաշվի են առնվում կոնկրետ գործում

---

[675] ՀՀ հարկային օրենսգրքի 419-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի վերլուծությունը վկայում է, որ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ չընդունելու, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար ամրագրված են տուգանքների կոնկրետ չափեր *(300 հազար դրամ, իսկ խախտման արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում՝ 400 հազար դրամ):*

[676] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 393-394: Հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

առկա և որոշման կայացման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ ստեղծված իրավիճակում տուգանքների առանց տարբերակման կամ անհատականացման, միասնական չափերի կիրառումը կարող է տարբեր աստիճանի ներգործություն ունենալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մեծ և փոքր ձեռնարկատիրության համար՝ առանց դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները հաշվի առնելու: Մասնավորապես, այն դեպքերում, երբ մեծ ձեռնարկատիրության համար այդ տուգանքի չափը կարող է աննշան լինել՝ հաշվի առնելով ձեռնարկատիրության ֆինանսական դրությունը, փոքր ձեռնարկատիրության համար այն կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ առհասարակ և հանգեցնել ձեռնարկատիրական գործունեության ծավալման արգելքի:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ նշված խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել առաջին անգամ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար նախազգուշացում կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսելու կամ սահմանված տուգանքների չափերը համաչափության սկզբունքի տեսանկյունից դիտարկելու և տուգանքների նվազագույն ու առավելագույն չափեր սահմանելու հնարավորության հարցը: Ընդ որում, անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում իրավախախտման կոնկրետ հանգամանքները:

8. Տնտեսական բնույթի մի շարք հանցագործությունների համար նախատեսված խրախուսական նորմերի վերացման խնդիր

2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել նաև հասարակական կազմակերպությունների և անհատ իրավապաշտպանների կողմից բարձրացված մտահոգությունները՝ կապված ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք հոդվածներում նախատեսված խրախուսական նորմերն ուժը կորցրած ճանաչելու օրինագծի հետ: Պաշտպանի աշխատակազմը խնդիրն ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրության է ենթարկվել Պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակված և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am) 08.08.2024 թվականին տեղադրված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը[677]:

Հարկ է նշել, որ նախագիծը չի ուղարկվել Պաշտպանի կարծիքին՝ չնայած նրան, որ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 252-Լ որոշմամբ

[677] Նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/7564/justification, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հաստատված հավելվածի 15-րդ կետով նախատեսված է հստակ պահանջ, ըստ որի՝ ***(…) մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կարծիքի ուղարկվում են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին (…):***

Այնուհանդերձ, կարևորելով, գործարարության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության և խթանման պատշաճ կառուցակարգերի առկայության հետ կապված հարցերը, հաշվի առնելով այն, որ դրանք մշտապես գտնվում են Պաշտպանի գործունեության առաջնահերթությունների թվում՝ ստորև ներկայացնում ենք նախագծի վերաբերյալ Պաշտպանի հաստատության նկատառումները, որոնք հանգում են հետևյալին.

1. Նախագծով նախատեսվում է կատարել էական փոփոխություն, մասնավորապես, ուժը կորցրած ճանաչել *ՀՀ քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածի 4-րդ, 285-րդ և 286-րդ հոդվածների 3-րդ, 288-րդ հոդվածի 2-րդ, 290-րդ հոդվածի 5-րդ մասերը*, որոնք պարունակում են քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ խրախուսական նորմեր:

Քննարկվող խրախուսական նորմերի բովանդակային ուսումնասիրությունից պարզվում *է, որ Քրեական օրենսգրքի 281-րդ, 285-րդ, 286-րդ, 288-րդ հոդվածներով նախատեսված արարքները կատարած անձինք ազատվում են քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ հատուցել են հանցագործությամբ պատճառված գույքային վնասը և հաշվարկված տույժերը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ վճարել է չվճարված հարկերը, տուրքերը կամ այլ վճարները և դրանց չվճարման համար հաշվարկված տույժերը:*

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային պրակտիկայում անդրադառնալով խրախուսական նորմերի բնույթին՝ արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա են նորմեր, որոնք կարգավորում են հանցագործություն կատարելուց հետո անձի կողմից դրսևորած պոզիտիվ վարքագծի հիման վրա ծագող հատուկ հասարակական հարաբերություններ: Օրենսդրի կողմից հիշյալ հարաբերությունները կարգավորող նորմերը զետեղված են ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված առանձին հոդվածներում (…): Վկայակոչված նորմերն իրենց բնույթով խրախուսական նորմեր են, որոնք քրեորեն հետապնդելի արարք կատարած անձին առաջարկում են իրականացնել սոցիալական նշանակություն ունեցող որոշակի դրական վարքագիծ[678]՝ նրա արարքը խթանելով խրախուսանքով[679]: Այդ նորմերում սահմանվում են պահանջներ, որոնց իրականացման դեպքում հնարավոր է եզրակացնել, որ հանցագործություն կատարած անձը կորցրել է իր երբեմնի հանրային վտանգավորությունը, որի արդյունքում նպատակահարմար է այդ անձին ազատել

---

[678] Տվյալ դեպքում օրինակ՝ իրականացնել հանցագործությամբ պատճառված գույքային վնասի և հաշվարկված տույժերի ամբողջական հատուցում:

[679] Տվյալ դեպքում՝ արարքը կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելով:

քրեաիրավական ներգործության միջոցներից, մասնավորապես՝ քրեական պատասխանատվությունից[680]***:***

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ խրախուսական նորմերի առկայությունը հնարավորություն է ընձեռում քրեական օրենսդրությանը լինելու բավականաչափ արդյունավետ առանձին սոցիալական խնդիրներ լուծելիս: Ուստի, կարծում ենք, որ տվյալ պարագայում, խրախուսական նորմերի առկայությունը պետք է արդարացված համարել:

Այս համատեքստում, կարծում ենք՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև վերը նշված խրախուսական նորմերի առնչությամբ արտասահմանյան երկրների փորձն ու օրենսդրական մոտեցումները:

Այսպես, համանման հանցակազմերի համար խրախուսական նորմեր են սահմանված Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում *(տե՛ս օրինակ՝ Բելառուսի քրեական օրենսգրքի 25-րդ գլխի ծանոթագրության 2-րդ կետը, Ղազախստանի քրեական օրենսգրքի 214-րդ և 244-րդ հոդվածների ծանոթագրությունը, Ղրղզստանի 218-րդ հոդվածի ծանոթագրությունը, Ռուսաստանի քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ և 199-րդ հոդվածի 2-րդ մասերը)*[681]*:*

Հատկանշական է, որ համանման հանցակազմերի համար խրախուսական նորմեր են սահմանված նաև այլ երկրներում *(տե՛ս օրինակ՝ Ուզբեկստանի քրեական օրենսգրքի 180-րդ, 180.1-ին և 184-րդ հոդվածները, Ուկրաինայի քրեական օրենսգրքի 212-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, Վրաստանի քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածի ծանոթագրության 2-րդ կետը, Տաջիկստանի քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածի ծանոթագրության 1-ին կետը):*

Այսպիսով, նախագծի իրավական կարգավորման առարկայի վերաբերյալ միջազգային փորձի վերլուծությունը, մեր համոզմամբ, ուղիղ վկայում է այն մասին, որ տվյալ դեպքում խրախուսական նորմերի առկայությունը պետք է արդարացված համարել:

2. Նախագծի հեղինակները՝ դրա ընդունման հիմնավորման մեջ վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու և առավել մեղմ պատժի կիրառման կանոնակարգումներ՝ հանգում են այն եզրակացության, որ ***քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ խրախուսական վերոնշյալ նորմերի անհրաժեշտությունը բացակայում է:***

Կարծում ենք՝ այս մոտեցման հետ դժվար է համաձայնել: Բանն այն է, որ մեր երկրի քրեական օրենսդրությունում, ըստ էության, առկա է խրախուսական բնույթի նորմերի երկու հիմնական տարատեսակ՝ ***լիազորող և պարտավորեցնող***: Լիազորող նորմերի կիրառումը թողնված է քրեական վարույթի հանրային մասնակիցների (հասկանալի բացառություններով) հայեցողությանը: Վերջիններս՝ ելնելով անձի կողմից դրսևորած դրական վարքագծից և օրենքով նախատեսված այլ չափանիշներից

---

[680] Տե՛ս, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հրանտ Հարությունյանի և Բեգլար Հովհաննիսյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՆԴ/0011/01/14 որոշման 33.1-ին կետը:

[681] Ի դեպ, «Մաքսային միության և մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրում (Հայաստանի համար ուժի մեջ է մտել 02.01.2015 թվականին) *քրեական պատասխանատվությունից ազատելու առանձնահատկություններ սահմանված չեն:*

կարող են խրախուսական բնույթի որոշակի գործողություններ իրականացնել: Այլ կերպ՝ խրախուսումը տվյալ դեպքում պայմանական է: Մինչդեռ, պարտավորեցնող նորմերի պարագայում՝ հայեցողություն դրսևորելու ընդարձակ հնարավորությունը բացակայում է, քանզի օրենսդիրը բավարար հստակությամբ ձևակերպել է խրախուսական նորմերի իմպերատիվ բնույթը և եթե անձն դրսևորի սոցիալական նշանակություն ունեցող որոշակի դրական վարքագիծ *(օրինակ՝ ամբողջությամբ վճարում է չվճարված հարկերը, տուրքերը կամ այլ վճարները և դրանց չվճարման համար հաշվարկված տույժերը)*՝ խրախուսումը կիրառվում է անվերապահորեն (ինքնաբերաբար): Նշված նորմերն էապես նվազեցնում են նաև քրեական օրենսգրքի կոռուպցիոն ռիսկայնությունը: Այդպիսինն են նաև քննարկվող խրախուսական նորմերը: Ուստի, քրեական օրենսգրքով նախատեսված այլ կանոնակարգումները չեն կարող ամբողջ ծավալով փոխարինել դրանց (լրացնել պակասը), քանի որ շահավետության տեսանկյունից զիջում են քննարկվող խրախուսական նորմերին:

3. Նախագծի հեղինակները՝ դրա ընդունման հիմնավորման մեջ անդրադառնալով պատժի հասկացությանը և դրա նպատակներին՝ հանգում են այն եզրակացության, *որ խրախուսական նորմերի առկայությունը նպաստում է հարկային հանցագործությունների կատարման խթանմանը:* Ընդ որում, այս պնդումը հիմնավորելու (հստակ տրամաբանական կապը բացահայտելու) համար չեն ներկայացվում ո՛չ վիճակագրական տվյալներ[682] *(օրինակ՝ միևնույն անձի կողմից մեկից ավելի անգամ Քրեական օրենսգրքի 281-րդ, 285-րդ, 286-րդ, 288-րդ, 290-րդ հոդվածներով նախատեսված արարքները կատարված լինելու վերաբերյալ),* ո՛չ էլ այլ բնույթի հետազոտությունների արդյունքներ *(օրինակ՝ կրիմինալոգիական):*

Նախագծին կցված չեն նաև ֆինանսատնտեսական հաշվարկներ կամ հիմնավորման համար անհրաժեշտ այլ տվյալներ կամ փաստաթղթեր *(օրինակ՝ քննարկվող խրախուսական նորմերի վերացման արդյունքում այդ հանցանքների կատարման արդյունքում պատճառված գույքային վնասների վերականգնման մասով ի՞նչ պատկեր (կանխատեսում) կլինի. դրանք կաճե՞ն, թե՞ կնվազեն):*

Վերոգրյալը վերաբերում է նաև նախագծի հեղինակների այն եզրակացությանը, որի համաձայն՝ *հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցմամբ քրեական պատասխանատվությունից ազատվելու գիտակցման իրավական հիմքերը խանգարում են և հնարավորություն չեն տալիս կանխել նոր հարկային հանցագործությունների կատարումը:*

4. Նախագծի վերաբերյալ հանրային կարծիքը բացահայտելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրության են ենթարկվել նաև իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում օգտատերերի հայտնած դիրքորոշումները: Այսպես, նախագծի վերաբերյալ բացասական դիրքորոշում է հայտնել **3461** օգտատեր, իսկ դրական դիրքորոշում՝ ընդամենը **11** օգտատեր[683]:

---

[682] Փոխարենը՝ հղում է արվում ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված վիճակագրական տվյալներին՝ խրախուսական նորմերի կիրառմամբ 2023 թվականի ընթացքում գործերի քննության, ընթացքի և դրանց արդյունքում վերականգնվող գումարների վերաբերյալ: Ընդ որում, այդ տվյալները, մեր համոզմամբ, վկայում են հակառակի՝ խրախուսական նորմերի բավականաչափ արդյունավետության մասին:

[683] Արդյունքները ներկայացված են 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Միևնույն ժամանակ, ողջունելի է այն, որ նախագիծը քննարկվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստում, որին մասնակցել են նաև դրանում չներգրավված կազմակերպություններն ու միությունները, մասնագիտական խմբերը[684]:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը հրավիրում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ուշադրությունը վերոգրյալ հանգամանքներին և կոչ անում վերը նշված հանցակազմերի պարագայում ձեռնպահ մնալ քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ խրախուսական նորմերի վերացման գաղափարից:

9. Ֆիզիկական անձանց կողմից եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային և արժեքային ավելի խիստ չափաքաներ սահմանելու խնդիր

Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2024 թվականի ապրիլի 1-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (https://www.e-draft.am) հանրային քննարկման է ներկայացվել «Ֆիզիկական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային և արժեքային չափաքաներ սահմանելու մասին» որոշման նախագիծը, որով Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից հետիոտնային եղանակով ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով Հայաստանի Հանրապետություն ներկրվող անձնական օգտագործման ապրանքների համար սահմանվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 107 որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերից ավելի խիստ բնաիրային և արժեքային չափեր՝ քանակային շեմը սահմանելով 10 կգ, իսկ արժեքայինը՝ 200 եվրոյին համարժեք դրամ:

Նախագծի բովանդակային ուսումնասիրությունը վկայում է, որ ավելի խիստ նորմեր սահմանելու անհրաժեշտության վերաբերյալ ներկայացվել են ընդհանրական բնույթի հիմնավորումներ այն մասին, որ *հետիոտնային եղանակով ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մասով առկա են չարաշահման հնարավորություններ: Մասնավորապես, ցամաքային անցման կետերով միևնույն ֆիզիկական անձի կողմից պարբերաբար սահմանահատման արդյունքում Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվում մինչև 500 եվրո արժեքով և մինչև 25 կգ քաշով ապրանքներ՝ իբրև անձնական օգտագործման, սակայն*

[684] Տեղեկատվությունը հասանելի է Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում հետևյալ հղումով՝ https://www.src.am/am/getNews/606, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրականում այդ ապրանքները տարբեր ճանապարհներով վաճառքի նպատակով հայտնվում են ներքին շուկայում՝ դրանով իսկ խաթարելով մրցակցային դաշտը և ստեղծելով ստվերային շրջանառություն:

Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ սույն որոշման նախագիծը կարծիքի չի ուղարկվել Մարդու իրավունքների պաշտպանին, այն դեպքում, երբ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 252-Լ որոշման 15-րդ կետի համաձայն՝ ***մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կարծիքի ուղարկվում են նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին:***

Ավելի ուշ՝ 08.08.2024 թվականին, ՀՀ կառավարությունն ընդունել է «Ֆիզիկական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային և արժեքային չափաքաներ սահմանելու մասին» որոշումը (այսուհետ՝ Որոշում), որն ուժի մեջ է մտել 19.08.2024 թվականին:

Ըստ Որոշման ընդունման հիմնավորման՝ անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաների նկատմամբ արժեքային, քաշային և (կամ) քանակական ավելի խիստ նորմեր նախատեսելը, ըստ էության, նպատակաուղղվել է բացառելու «ֆիզիկական անձանց կողմից չարաշահման հնարավորությունները», մինչդեռ այդպիսի հնարավորությունների առկայությունը հիմնավորելու համար չեն նշվել ֆիզիկական անձանց կողմից կոնկրետ չարաշահման դեպքեր, գործնականում հանդիպող խնդիրներ, չեն ներկայացվել նաև ֆիզիկական անձանց կողմից մրցակցային դաշտը խաթարելու վերաբերյալ վիճակագրական տվյալներ և հետազոտությունների արդյունքներ: Արդյունքում, սահմանելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 107 Որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերից ավելի խիստ նորմեր՝ չեն ներկայացվել ՀՀ-ում գործող պրակտիկայի համեմատական վերլուծությունների արդյունքներ՝ հիմնավորելու ՀՀ-ում ընթացիկ իրավիճակով պայմանավորված ավելի խիստ նորմեր սահմանելու անհրաժեշտությունը: Ընդ որում, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 107 որոշման 1-ին կետի «է» ենթակետով սահմանված՝ *անդամ պետության օրենսդրությամբ ավելի խիստ նորմեր սահմանելու հնարավորության* իրացումը պետք է պայմանավորված լինի անդամ պետությունում **առկա կոնկրետ խնդրի լուծման հրամայականով:** Մինչդեռ, Որոշման հիմնավորումներից ամենևին չի հետևում, որ խնդիրը (ֆիզիկական անձանց կողմից չարաշահման հնարավորությունները) կլուծվի կամ նվազագույնի կհասցվի ՀՀ ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ արժեքային, քաշային և (կամ) քանակական ավելի խիստ նորմեր սահմանելու դեպքում:

Որոշման ընդունման հիմնավորումներից պարզ չէ նաև, թե ի՞նչ չափանիշներից ելնելով է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 107 որոշման թիվ 1 հավելվածի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության համար սահմանված արժեքային չափը Որոշմամբ «500 եվրո»-ի փոխարեն սահմանվել «200 եվրո», իսկ քանակային շեմը՝ «25կգ»-ի փոխարեն՝ «10կգ» և պարզ չէ նաև, թե ի՞նչպես է արժեքային և քանակային շեմի նվազեցումը կանխելու կամ բացառելու ֆիզիկական անձանց կողմից չարաշահումների հնարավորությունները:

Միաժամանակ, ՀՀ-ում գործող պրակտիկայի, վիճակագրական տվյալների և հետազոտությունների արդյունքների վերաբերյալ վերլուծության բացակայությունը, ըստ էության, կարող է վկայել այն մասին, որ արժեքային և քանակային շեմի նվազեցումը կարող է ուղղված լինել պետության համար լրացուցիչ եկամուտներ ապահովելուն:

Բացի այդ, Որոշման ընդունման հիմնավորման շրջանակում չեն ներկայացվել Միության անդամ պետությունների տարածքում գործող նորմերի և պրակտիկայի համեմատական վերլուծությունների արդյունքներ, չի կատարվել միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն: Մինչդեռ, Միության անդամ պետությունների տարածքում գործող կարգավորումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Որոշմամբ սահմանվել են ֆիզիկական անձանց կողմից առանց հարկերի և մաքսատուրքի անձնական օգտագործման համար ներկրվող ապրանքների՝ միության անդամ պետությունների օրենսդրության նկատմամբ արժեքային, քաշային և (կամ) քանակական ավելի խիստ նորմեր: Բացի այդ, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ մի շարք երկրներում գործում են առանց հարկերի և մաքսատուրքերի անձնական օգտագործման ապրանքների ներկրման արժեքային, քաշային (քանակական) ավելի մեղմ նորմեր, մասնավորապես՝ առանց հարկի և մաքսատուրքի անձնական օգտագործման ապրանքի ներկրման արժեքային թույլատրելի շեմը Միացյալ Թագավորությունում 390 ֆունտ ստեռլինգ[685] է, Կանադայում՝ 800 կանադական դոլար[686], Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 800 ԱՄՆ դոլար[687], Ավստրալիայում՝ 900 ավստրալիական դոլար[688], ԵՄ անդամ պետություն չհանդիսացող քաղաքացիների համար ԵՄ անդամ պետության տարածք ներմուծվող ապրանքների համար 300 եվրո[689]: Ընդ որում,

---

[685] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.gov.uk/bringing-goods-into-uk-personal-use/arriving-in-Great-Britain, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[686] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://travel.gc.ca/returning/customs/bringing-to-canada/personal-exemptions-mini-guide, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[687] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.cbp.gov/travel/international-visitors/know-before-you-visit/customs-duty-information, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[688] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.abf.gov.au/entering-and-leaving-australia/duty-free, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[689] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.etiasvisaeurope.co.uk/eu-duty-free allowance/#:~:text=As%20 for%20EU%20residents%2C%20there%20are%20no%20duty-

միջազգային փորձի ուսումնասիրմամբ պարզվում է նաև, որ առանց հարկերի և մաքսատուրքերի անձնական օգտագործման ապրանքների ներմուծման թույլատրելիությունն առավելապես կապված է ապրանքի արժեքի և ոչ թե քաշի հետ:

Հարկ է նաև նշել, որ Որոշման նախագիծն իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (https://www.e-draft.am) քննարկման է դրվել 01.04.2024թ.-16.04.2024թ. ժամանակահատվածում, քննարկման ընթացքում նախագիծն արժանացել է հավանության մեկ անձի կողմից, իսկ նախագծին դեմ է քվեարկել քսան անձ: *Կարևոր է նաև ընդգծել, որ նման իրավական ակտերի նախագծեր մշակելիս պետք է իրականացնել պատշաճ իրազեկման աշխատանքներ՝ նախկինում գործող նորմերի համեմատ ֆիզիկական անձանց իրավունքների տեսանկյունից ավելի խիստ բնույթ կրող նորմերի ընդունման վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:*

Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ թեև պետությունն ունի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 107 որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերից ավելի խիստ նորմեր սահմանելու հայեցողություն, սակայն Որոշման ընդունման հիմնավորման մեջ չի ներկայացվել ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածք առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ներմուծման թույլատրելի արժեքային, քաշային և (կամ) քանակական շեմի փոփոխության իրավաչափությունը գնահատելու պատշաճ հիմնավորում, չեն ներկայացվել պրակտիկայի համեմատական վերլուծությունների արդյունքներ՝ հիմնավորելու ՀՀ-ում ընթացիկ իրավիճակով պայմանավորված ավելի խիստ նորմեր սահմանելու անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն առաջարկում է քննարկման առարկա դարձնել Որոշմամբ սահմանված բնաիրային և արժեքային չափաքանակները վերանայելու հնարավորության հարցը՝ համապատասխանեցնելով դրանք Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 107 որոշման թիվ 1 հավելվածով նախատեսված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերին:

10. Ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչների բացակայության խնդիր

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ Ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչների բացակայության խնդիրը շարունակում է արդիական մնալ:

---

free,cigarillos%20or%2050%20cigars%20or%202
50g%20of%20tobacco, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ընդ որում, Պաշտպանն այս խնդրին մանրամասն անդրադարձ է կատարել նաև իր նախորդ տարիների հաղորդումներում՝ արձանագրելով, որ նշյալ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված չեն անձնական օգտագործման ապրանքների ներմուծման հստակ չափորոշիչներ, ինչի հետևանքով ֆիզիկական անձանց համար պարզ չէ, թե ինչ հաճախականությամբ ՀՀ ապրանք ներմուծելիս նրանք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք[690]:

Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ՊԵԿ:

ՊԵԿ պարզաբանումների համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու թույլատրելի չափաքանակները սահմանված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված առանձին հարցերի մասին» թիվ 107 որոշմամբ, իսկ այդպիսի ապրանքների ներմուծման հաճախականության վերաբերյալ գործառնությունները՝ մինչև ԵՏՀ համապատասխան կարգավորումների սահմանումը, իրականացվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 457-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ ռիսկերի կառավարման համակարգի միջոցով:

Ըստ ՊԵԿ-ի՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 377-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգավորումների համաձայն՝ ռիսկերի պրոֆիլներում ու ցուցիչներում պարունակվող տեղեկատվությունը գաղտնի է և ենթակա չէ հրապարակման:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն արձանագրում է, որ թեև նշված տեղեկատվությունը գաղտնի է և հրապարակման ոչ ենթակա, այդուհանդերձ ապրանքների ներմուծման հաճախականության վերաբերյալ հստակ չափորոշիչների բացակայության պարագայում՝ ***ֆիզիկական անձանց համար պարզ չէ, թե ի՞նչ հաճախականությամբ ՀՀ ապրանք ներմուծելիս նրանք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք:*** Կարծում ենք նաև, որ նման մոտեցումը չի բխում օրենքի որոշակիության ու կանխատեսելիության պահանջներից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք որոշումներով անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ արձանագրել է, որ օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, ինչը հնարավորություն է տալիս անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները[691]:

Նորմը չի կարող դիտվել որպես «օրենք», քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որպեսզի անձին հնարավորություն ընձեռի կարգավորել իր

---

[690] Առավել մանրամասն տե՛ս, 2021 և 2023 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, համապատասխանաբար՝ էջեր 728-730, 394-395: Հասանելի են https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[691] Տե՛ս, Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Sunday times v. The United Kingdom) գործով Եվրոպական դատարանի վճռով, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

վարքագիծը. վերջինս պետք է կարողանա, եթե անհրաժեշտ լինի համապատասխան խորհուրդներով, տվյալ հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ տվյալ գործողության արդյունքում[692]:

Իրավական որոշակիության սկզբունքը բացահայտվել է նաև Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում: Այսպես, Սահմանադրական դատարանը նշել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Ըստ դատարանի՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել և մշակել ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչներ:

---

[692] Տե՛ս, Սիլվերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Silver and Others v. the United Kingdom) գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռ գանգատ թիվ 7136/75), կետ 88:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը

2024 թվականին շարունակել է խնդրահարույց մնալ մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով բաժանորդների ջրամատակարարման դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու խնդիրը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ջրի հասանելիությունն ապահովելուն:

Այս առումով շարունակում է խիստ մտահոգիչ լինել այն հանգամանքը, որ Պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացրել է խնդիրը, սակայն դրան օրենսդրական լուծում չի տրվել[693]: Մասնավորապես, նախորդ տարեկան հաղորդման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանն անդրադառնալով Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» թիվ 378-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 74-րդ կետով նախատեսված իրավակարգավորմանը *(ըստ այդմ, մատակարարին որպես հայեցողական լիազորություն է տրված մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը)*՝ հատուկ շեշտադրել է, որ ***բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը չպիտի հանգեցնի վերջինիս ջրի իրավունքից զրկելուն[694], հետևաբար, նշված որոշմամբ պետք է սահմանվի նաև բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու մատակարարի պարտականությունը:***

Վերոգրյալի հետ մեկտեղ, նախորդ տարեկան հաղորդման շրջանակում ներկայացվել են բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու հարցի վերաբերյալ միջազգային փորձի օրինակներ, որոնք վերաբերել են սպառած ջրի դիմաց անվճարունակության պատճառով վճարումը չիրականացվելու դեպքում

---

[693] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 439-442, 769-773, 744-746, 401-403):

[694] ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 բանաձևով ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչվեց որպես մարդու իրավունք և ընդունվեց այն փաստը, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար *(տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2010 թվականի (64/292) բանաձևը: Այն հասանելի է* http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml *հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ)*: Ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուրի համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի իրավունքը՝ նրա ամենօրյա պահանջմունքների բավարարման համար (տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային համաձայնագրի 11-րդ և 12-րդ հոդվածները):

բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու մատակարարի պարտականությանը[695]:

Հաշվի առնելով հասարակության բոլոր շերտերի համար ջրի հասանելիության ապահովման կարևորությունը և քննարկվող խնդրի համակարգային բնույթը՝ Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է հասցեագրել ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտե (այսուհետ՝ Ջրային կոմիտե) և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն):

Ջրային կոմիտեն ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1122-Ն և ՀԾԿՀ 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 413-Ն որոշումների արդյունքում, անապահով սպառողներին ջրամատակարարման և ջրահեռացման հավասար և հասանելի ծառայությունների ապահովման տեսանկյունից գործողություններն արդեն կատարվել են, սակայն մեկուսացված և խոցելի խմբերի վերաբերյալ ներկայում տեղեկատվություն առկա չէ: Նշված տեղեկատվության հավաքագրման գործընթացն իրենից ենթադրում է մի քանի գերատեսչությունների գործառույթների շրջանակ:

Ըստ Ջրային կոմիտեի՝ առկա չէ խոցելի և մեկուսացված խմբերի համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հասանելիության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև այդ խմբերի վրա ներկայիս ջրամատակարարման և ջրահեռացման սակագների ազդեցության գնահատման մեխանիզմներ: Ըստ Ջրային կոմիտեի տրամադրած տվյալների՝ վերը նշված տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացումը ենթադրում է մի շարք գերատեսչությունների համատեղ աշխատանք՝ Շրջակա միջավայրի, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Ֆինանսների նախարարություններ, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ՀՀ մարզպետների աշխատակազմեր, համայնքապետարաններ (համաձայնությամբ) և այլն:

Վերոգրյալի համատեքստում՝ հատկանշական է, որ Ջրային կոմիտեի պարզաբանման մեջ վկայակոչված ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1122-Ն որոշումը վերաբերում է սոցիալապես անապահով ընտանիքների[696] կողմից սպառվող բնական գազի, էլեկտրական էներգիայի և նրանց մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների նվազմանն ուղղված միջոցառումներին, ինչը, իհարկե, ողջունելի է: Այնուհանդերձ, մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով բաժանորդների ջրամատակարարման

---

[695] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 401-402:

[696] Այդ որոշման իմաստով սոցիալապես անապահով ընտանիքներ են համարվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «20.00» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքները կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքները:

դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու խնդրի տեսանկյունից այդ որոշումը լուծում չի նախատեսում:

Ինչ վերաբերում է պարզաբանման մեջ վկայակոչված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 413-Ն որոշմանը, ապա այն Հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 377-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել: Նույն որոշմամբ սահմանվել են Ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները, որոնք սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների (բաժանորդների) մասով չեն փոփոխվել (տե՛ս նշված որոշման 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերը):

Բարձրացված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրել է նաև Ընկերությունը: Ըստ այդմ, ***հասարակության բոլոր շերտերի համար ջրի հասանելիությունը, ջրի իրավունքին վերաբերելի միջազգային չափորոշիչներն ապահովելու և գործուն կառուցակարգեր սահմանելու պահանջը կատարված է:*** Ըստ Ընկերության՝ այդ պահանջը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ, վարձակալության պայմանագրով, Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 397-Ա որոշմամբ Ընկերությանը տրված լիցենզիայով և Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշմամբ: Ըստ պարզաբանման՝ Ընկերության սպասարկման տարածքում ընդգրկված բոլոր բնակավայրերն ապահովված են ամենօրյա (հրապարակված սպասարկման տարածքի ջրամատակարարման գրաֆիկով) և սահմանված սանիտարական նորմերին ու որակին ներկայացվող պահանջներին համապատասխանող խմելու ջրի մատակարարմամբ:

Այս առումով, հարկ է նշել, որ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշմամբ մատակարարին որպես հայեցողական լիազորություն է տրված մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը: Մինչդեռ, բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը չպիտի հանգեցնի վերջինիս ջրի իրավունքից զրկելուն: Հետևաբար, որոշմամբ սահմանված չէ բաժանորդներին նվազագույն ջրի քանակով ապահովելու մատակարարի պարտականությունը:

Վերոգրյալից հետևում է, որ Պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացված խնդիրը՝ մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով բաժանորդների ջրամատակարարման դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու վերաբերյալ, դեռևս օրենսդրական մակարդակում լուծում չի ստացել:

Ավելին, չեն ներդրվել նաև հատուկ կարիքներ ունեցող անձանց համար *(ինչպես օրինակ՝ երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն)* ջրի հասանելիության, ջրի իրավունքին վերաբերելի միջազգային չափորոշիչների ապահովման կառուցակարգեր:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ ջրի իրավունքը ենթադրում է պետության ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ պարտավորություններ: Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման ծառայությունների մատուցումն իրականացնում է մասնավոր՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը: Այնուհանդերձ, ջրամատակարարման իրականացումը մասնավոր ընկերությանը

փոխանցելու դեպքում էլ պետության պոզիտիվ պարտավորությունն է պահպանել ջրի հասանելիության ապահովումը հասարակության բոլոր շերտերի համար, ներառյալ հատուկ կարիքներ ունեցող անձանց, ինչպես օրինակ՝ երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն: Հետևաբար, մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չվճարման դեպքում, եթե առկա են միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերը, անձն ամբողջովին չի կարող զրկվել ջրի հասանելիությունից և նշված իրավունքից, և պետք է ունենա նվազագույն չափաքանակով ջրին հասանելիություն: Ավելին, կարևոր է, որպեսզի ջրանջատումը չհանդիսանա սանիտացիայից զրկվելու պատճառ[697]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ պետությունը պետք է ապահովի ջրի հասանելիությունը, ջրի իրավունքին վերաբերելի միջազգային չափորոշիչները և սահմանի գործուն կառուցակարգեր հասարակության բոլոր շերտերի համար ջրին հասանելիությունն ապահովելու նպատակով: Ընդ որում՝ այդ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև անվճարունակության դեպքում նշված կառուցակարգերի մշակման կարևորությունն ու պատշաճ իրացման անհրաժեշտությունը:

2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը

Հաշվետու տարում շարունակել են արդիական մնալ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության վերաբերյալ խնդիրները: 2024 թվականին ևս Պաշտպանին ներկայացվել են նման դիմում-բողոքներ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ Ավան վարչական շրջանի Խուդյակով փողոցի կոյուղագիծը համակցվում է հարևան մի շարք այլ կոյուղագծերի, ապա միասնական խողովակն անցնում է մասնավոր հողատարածքներով և միանում է մագիստրալ կոյուղատարի, որն սպասարկում է ամբողջ թաղամասը: Բողոքը ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ նշված միասնական կոյուղագիծը հնամաշ է, չի բավարարում կոյուղագծերին ներկայացվող նվազագույն չափանիշներին: Հավելել է, որ Խուդյակով փողոցի երկայնքով առկա չէ որևէ կոյուղատար: Ըստ պնդման՝ նմանատիպ իրավիճակ է նաև մասնավոր սեկտորի այլ հատվածներում:

Բարձրացված հարցի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ խնդրի կարգավորումը գտնվում է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի (այսուհետ՝ Ջրային կոմիտե), «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո: Նշել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի 2024-2025թթ. ծրագրերով անհատական ջրահեռացման համակարգի կառուցման/վերակառուցման աշխատանքներ նախատեսված չեն:

---

[697] Տե՛ս, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անկախ փորձագիտական զեկույցը խմելու ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://digitallibrary.un.org/record/685823?v=pdf (2025 թվականի մարտի 31-ի դրությամբ):

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել նաև Ջրային կոմիտե, որին ի պատասխան ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ նշված հասցեի ջրահեռացման համակարգը՝ որպես պետական սեփականություն հանձնված չէ Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Ջրային կոմիտեի, և այն ընդգրկված չէ Ընկերությանը վարձակալության հանձնված գույքի ցանկում: Նշվել է, որ բարձրացված խնդրի կարգավորումը դուրս է Ջրային կոմիտեի իրավասությունների շրջանակներից:

Նշված դիմում-բողոքը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Հարկ է նաև նշել, որ 2024 թվականին խնդրի վերաբերյալ բողոքներ է ստացել նաև Ընկերությունը: Այսպես, ըստ վերջինիս կողմից տրամադրված տվյալների՝ 2024 թվականի ընթացքում կոյուղագծերի վթարների վերաբերյալ ստացվել է 111 գրավոր բողոք: Դիտահորերի խցանումների վերաբերյալ թեժ գծի (1-85) հեռախոսակենտրոնի միջոցով ստացել են 105 539 զանգ: Յուրաքանչյուր դեպքով Ընկերության կողմից ձեռնարկվել են կոնկրետ իրավիճակից բխող և դրան համապատասխան գործողություններ, դիտահորերի խցանումները վերացվել են:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության խնդիրները Պաշտպանը վերհանել է ոչ միայն անհատական բողոքների ուսումնասիրության, այլ նաև տարբեր բնակավայրեր իրականացրած այցերի արդյունքում: Արձանագրված խնդիրների ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք: Արդյունքում, իրավասու պետական մարմինները Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել են նշված բնակավայրերը պատշաճ ջրամատակարարմամբ ապահովելու, այդ թվում՝ նոր ջրատար և ներքին ցանց կառուցելու վերաբերյալ իրենց տեսլականը և այդ ուղղությամբ նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ:

Այսպես, օրինակ՝ Գեղարքունիքի մարզ կատարած այցի ժամանակ խմելու ջրի մատակարարման ոլորտում արձանագրված խնդիրների վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետարանը Պաշտպանին ներկայացրել է տեղեկատվություն, ըստ որի՝ Վարդենիս համայնքի Վերին և Ներքին Շորժա բնակավայրերում 2024 թվականին իրականացվում են խմելու ջրի ցանցի կառուցում, Նորաբակ բնակավայրում պարբերաբար իրականացվում է խմելու ջրագծի արտաքին ցանցի վերանորոգում, Կութ բնակավայրում 2025 թվականին նախատեսվում է հիմնովին վերանորոգել խմելու ջրի արտաքին ցանցը, Ազատ բնակավայրում 2025 թվականին սուբվենցիոն ծրագրով նախատեսված է կառուցել ՕԿՋ և 1500 մետր ջրագիծ:

Վերոգրյալից զատ, Պաշտպանի աշխատակազմում ստացվել է տեղեկատվություն առ այն, որ 2024 թվականին սուբվենցիոն ծրագրով իրականացվել են ջրամատակարարման համակարգի կառուցման/նորոգման աշխատանքներ հետևյալ բնակավայրերում՝ Արարատի մարզի Արմաշ սահմանամերձ բնակավայր, Արմավիրի մարզ Փշատավան և Ջանֆիդա սահմանամերձ բնակավայրեր, Լոռու մարզի Ջիլիզա սահմանամերձ բնակավայրեր, Շիրակի մարզի Աղին սահմանամերձ բնակավայրեր, Սյունիքի մարզի Ներքին Հանդ, Արծվանիստ, Դիցմայրի, Սզնակ, Գետիշեն սահմանամերձ բնակավայրեր:

Կոյուղաջրի արտահոսքի հետևանքով առաջացած խնդիրներ արձանագրվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի մոնիթորինգային այցերի ընթացքում: Այսպես, օրինակ՝ 2024 թվականին Հատուկ կացարան իրականացված այցի

ընթացքում արձանագրվել են կոյուղաջրի արտահոսքի հետևանքով առաջացած մի շարք խնդիրներ[698]:

Նկատի ունենալով, որ քննարկվող խնդիրը համակարգային առումով շարունակում է արդիական մնալ, Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում դրանց կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել Ջրային կոմիտե:

Ջրային կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ ներկայում պետական միջոցներով իրականացնում է խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծման և կառուցման աշխատանքներ, որոնցից են՝ Արարատի մարզի, Վերին Դվին, Ազատավան, Նոր Ուղի, Վերին Արտաշատ, Բերդիկ բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգերի կառուցումը, Սյունիքի մարզի Բռնակոթ և Տավուշի մարզի Բաղանիս բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգերի կառուցման/վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Ըստ պարզաբանման՝ Ջրային կոմիտեի կողմից անմիջական իրականացվող աշխատանքներից բացի, մի շարք ծրագրեր պատվիրակված են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին (ՀՏԶՀ), որոնց պատասխանատու մարմինը ևս հանդիսանում է Ջրային կոմիտեն: Պետության կողմից իրականացվող խոշոր վարկային և դրամաշնորհային ներդրումային ծրագրերից բացի, ներկայում պետական և համայնքային միջոցներով իրականացվել և այժմ էլ իրականացվում են համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր, որոնցում տեղ են գտել նաև ջրային համակարգերի (խմելու ջրամատակարարում և ջրահեռացում, ոռոգում) կառուցման/վերակառուցման աշխատանքները:

Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների կողմից գործադրված ջանքերը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ բարձրացված խնդիրները համակարգային առումով դեռ շարունակում են արդիական մնալ, ուստի հետագայում նույնպես գտնվելու են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝ առաջնահերթության կարգով միջոցներ ձեռնարկել բնակավայրերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման ուղղությամբ:

3. Խմելու ջրի մատակարարման խափանումներ

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ սահմանված ժամանակացույցին համապատասխան ջրամատակարարում չիրականացնելու, ինչպես նաև ջրամատակարարման

[698] Առավել մանրամասն տե՛ս, սույն հաղորդման «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» բաժինը:

ընդհատումների, ջրանջատումների վերաբերյալ պատշաճ չծանուցելու, խմելու ջրի որակի և ճնշման վերաբերյալ խնդիրները նախորդ տարիների համեմատ ավելի են սրվել:

Հաշվի առնելով այն, որ խնդիրները զանգվածային են և ունեն շարունակական բնույթ՝ Պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ խիստ անթույլատրելի համարելով ստեղծված իրավիճակը: Պաշտպանը հատկապես մտահոգիչ է համարել նաև այն, որ ամռան ամիսներին մարդիկ զրկված են լինում ջրի և սանիտացիայի հասանելիությունից[699]:

Թեև 2024 թվականի ընթացքում Պաշտպանի միջամտությամբ և ջրամատակարարում իրականացնող ընկերության հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք անհատական հարցերի տալ լուծում, այնուհանդերձ խնդիրների հաղթահարման նպատակով անհրաժեշտ է գտնել համակարգային լուծումներ:

Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում խմելու ջրի մատակարարման գործընթացում խնդիրների կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է հասցեագրել ինչպես Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), այնպես էլ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն):

Այսպես, Ընկերության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ջրամատակարարման գրաֆիկի խախտման (անբավարար ջրամատակարարման) վերաբերյալ գրավոր ստացվել է 91 բողոք: Ընկերության թեժ գծի (1-85) հեռախոսակենտրոնի միջոցով 2024 թվականի ընթացքում ստացվել է 199 967 զանգ *(ըստ Ընկերության՝ այստեղ առանձին դասակարգում չի իրականացվում այդ զանգերի՝ որպես բողոք հանդիսանալու բնույթի վերաբերյալ)*: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ Երևան քաղաքում՝ 48 360, մարզերում 6078 բաժանորդի շուրջօրյա ջրամատակարարումը 2024 թվականի մայիսի 1-ից սեպտեմբերի 16-ն ընկած ժամանակահատվածում փոխարինվել է ժամայինով, որը պայմանավորված է ջրային ռեսուրսների նվազմամբ:

Ընկերության պարզաբանումների համաձայն՝ ջրամատակարարման գրաֆիկի խախտումները պայմանավորած են եղել պլանային, վթարային ջրանջատումներով, շինարարական աշխատանքներով, պոմպակայանների և մաքրման կայանների աշխատանքների խափանման հետևանքով առաջացած խնդիրների, ինչպես նաև բաժանորդների ներքին ցանցում առկա վթարային հարցերի հետ: Միաժամանակ, ջրամատակարարման գրաֆիկի խախտումները նվազագույնի հասցնելու համար շարունակվում են կատարվել բարելավման աշխատանքներ: Ընկերության տեղեկացմամբ՝ իրենց միջոցներով, ինչպես նաև պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրերի շրջանակներում իրականցվող ներդրումներով կատարվել են խնդրահարույց ջրագծերի, փականային հանգույցների կառուցման և վերակառուցման աշխատանքներ, ջրամատակարարման ցանցում շարունակվում են իրականացվել բարելավման աշխատանքներ:

---

[699] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3046, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ըստ Հանձնաժողովի պարզաբանումների՝ խմելու ջրի մատակարարման խափանումների վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 109 դիմում-բողոք: Դրանց քննարկման ընթացքի վերաբերյալ Հանձնաժողովը տեղեկացրել է հետևյալը.

✓ 62 դիմում-բողոքի դեպքում՝ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում ջրամատակարարումը վերականգնվել է սահմանված ժամկետում,

✓ 4 դիմում-բողոքի դեպքում՝ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում ջրամատակարարումը վերականգնվել է սահմանված ժամկետների խախտմամբ: Ուստի, Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների 128-րդ կետի համաձայն՝ Ընկերության կողմից բաժանորդներին վճարվել է տուժանք,

✓ 11 դիմում-բողոքի դեպքում՝ ջրամատակարարման ընդհատումները պայմանավորված են եղել հասցեների ջրամատակարարման ներքին ցանցի անմխիթար վիճակով, որոնց շահագործումը և սպասարկումը Ընկերության կողմից չի իրականացվում: Ուստի, նշված ջրագծերում առկա խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները պետք է կատարվեն ջրագծի սեփականատիրոջ կամ իրավասու անձի կողմից (համատիրություն, շենքի կառավարիչ և այլն),

✓ 32 դիմում-բողոքի դեպքում՝ ջրամատակարարման ընդհատումներ չեն գրանցվել: Տրամադրվել է ջրամատակարարման հաստատված ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն: Ավելին, Ընկերության կողմից սպասարկվող ջրագծերում կատարվել են ճնշման չափիչ սարքերի (լոգերների) կիրառմամբ լրացուցիչ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում վթարներ չեն հայտնաբերվել, խնդիրներ չեն արձանագրվել:

2024 թվականի ընթացքում շարունակել են խնդրահարույց մնալ նաև խմելու ջրի որակի և ճնշման վերաբերյալ հարցերը: Ասվածի մասին են վկայում նաև Հանձնաժողովի ներկայացրած տվյալները, ըստ որի՝ մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ Հանձնաժողով ներկայացվել է 8 դիմում-բողոք, խմելու ջրի ճնշման վերաբերյալ՝ 161 դիմում-բողոք: Հայտնել են, որ որևէ դիմում-բողոքի դեպքում չի հարուցվել վարչական վարույթ: Դիմում-բողոքները քննարկվել են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ Հանձնաժողովը տեղեկացրել է հետևյալը.

<u>Մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ ներկայացված 8 դիմում-բողոքներից</u>՝

✓ 4 դիմում-բողոքներ վերահասցեագրվել են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին՝ հաշվի առնելով ՀՀ ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածը, ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876-Ն հրամանը և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը,

✓ 4 դիմում-բողոքի դեպքում (խմելու ջրի որակի վերաբերյալ հարցը ներկայացվել է դիմումով բարձրացված՝ ջրամատակարարմանն առնչվող այլ խնդիրների հետ համատեղ)՝ ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ խմելու ջրի նմուշները համապատասխանել են ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876-Ն հրամանով հաստատված «Խմելու ջուր:

Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» թիվ 2-III-Ա2-1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին:

Մատակարարվող խմելու ջրի ճնշման վերաբերյալ 161 դիմում բողոքներից՝

✓ 49 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդի պահանջը բավարարվել է. կարգաբերման, վերանորոգման աշխատանքների իրականացման արդյունքում ջրամատակարարումը կարգավորվել է,

✓ 5 դիմում-բողոքի դեպքում՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ջրամատակարարման խնդիրները ներքին ցանցում են, որոնց կարգավորման պարտավորությունը բաժանորդինն է կամ հասցեն սպասարկող համատիրությանը,

✓ 107 դիմում-բողոքի դեպքում տեղադրված ճնշման չափիչ սարքի (լոգերի) տվյալների ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ մատակարարվող խմելու ջրի ճնշումը համապատասխանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 103-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ:» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով սահմանված պահանջներին:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՄԱԿ-ի սպառողների պաշտպանության 2016 թվականի ուղեցույցի 72-րդ կետում սահմանվում է ջրամատակարարման ոլորտում անդամ պետությունների պարտավորությունը՝ մշակել, իրականացնել և ամրապնդել խմելու ջրի մատակարարման, բաշխման և որակի բարելավման ազգային քաղաքականություն: Ընդ որում, նշվում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ծառայությունների մատուցման մակարդակի, որակի և տեխնոլոգիայի բարձրացմանը, կարգավորող վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև սպառողների իրազեկման և ծրագրերին հասարակության մասնակցության կարևորությանը[700]: Բացի այդ, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունների համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ընդունեն համապարփակ ծրագրեր ներկա և ապագա սերունդների համար բավարար և անվտանգ ջրի առկայությունն ապահովելու համար: Մասնավորապես, ընդգծվում է ջրային ռեսուրսներն աղտոտումից, ջրամբարներից ջրերի գերբացթողումից պաշտպանելը՝ մշտադիտարկում իրականացնելով առկա ռեսուրսների և վերջնական սպառողների կողմից ջրի արդյունավետ օգտագործման նկատմամբ և այլն[701]:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նաև նշել, որ Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդման շրջանակում կարևորելով մատակարար ընկերության մատուցած ծառայությունների որակի և սահմանված պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը՝ ***ընդգծել էր, որ վերահսկողությունը և հետևողականությունը հնարավորություն կտան խուսափել***

---

[700] Տե՛ս, «Սպառողների իրավունքների պաշտպանության համար» ՄԱԿ-ի ուղեցույց, հասանելի է http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1_en.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[701] Տե՛ս, UN CESCR General Comment 15: Ընդունվել է 2003 թվականի հունվարի 20-ին ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 29-րդ համաժողովում (E/C.12/2002/11):

հաճախակի ջրանջատումներից և կնպաստեն նաև սպառողների պատշաճ իրազեկման ապահովմանը[702]:

Ելնելով վերոգրյալից և վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***ուսումնասիրել վթարային ընդհատումների պատճառները և աշխատանքներ իրականացնել դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ,***
- ✓ ***առավել հետևողական լինել խմելու ջրի մատակարարման ծառայությունների կանոնների, ինչպես նաև ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ պատշաճ ծանուցումների իրականացման նկատմամբ:***
- ✓

4. Առևտրային հաշվառքի սարքի խափանման կամ վնասման դեպքում առանց փաստական հանգամանքների բացահայտման բաժանորդին պատասխանատվության ենթարկելու խնդիր

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին շարունակել է խնդրահարույց և մտահոգիչ մնալ առևտրային հաշվառքի սարքերի (ջրաչափի և գազահաշվիչի) խափանման կամ վնասման դեպքում առանց փաստական հանգամանքների բացահայտման ջրամատակարարում ու գազամատակարարում իրականացնող ընկերությունների կողմից բաժանորդներին պատասխանատվության ենթարկելու խնդիրը: Այս խնդրի դեռևս շարունակականության մասին են վկայում Պաշտպանի՝ տարբեր տարիների գործունեության տարեկան հաղորդումներում անդրադարձերը[703]:

Նշված խնդրի վերաբերյալ բողոքները, որպես կանոն, նույնաբովանդակ են: Օրինակ՝ 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների համաձայն՝ ջրամատակարարում և գազամատակարարում իրականացնող ընկերությունները փոխարինել են բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը (ջրաչափը և գազահաշվիչը), որից հետո դրանք ստուգաչափվել են «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերություն կողմից: Փորձագիտական հետազոտության եզրակացություններով պարզվել է, որ օրինակ՝ ջրաչափի համրման սարքի միացման օղակը կոտրված է կամ օրինակ՝ վնասված են գազահաշվիչի իրանի առջևի կոճգամի ներքևի հատվածը, ետևի կոճգամի ներքևի հատվածը, կտրված է ելքի միջադիրը: Առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով իրականացվել է վերահաշվարկ և այն վճարելու պարտավորությունը դրվել է բաժանորդների վրա: Մինչդեռ, հնարավոր է, որ առևտրային հաշվառքի սարքերը վնասված լինեն, օրինակ՝ ջրամատակարարում կամ գազամատակարարում իրականացնող ընկերությունների աշխատակիցների կողմից

---

[702] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը (էջեր՝ 406-407):

[703] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021 և 2023 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 443-444, 781-783, 749-751, 407-409):

այն ապահավաքակցելու (փոխարինելու) ընթացքում: Հետևաբար, խնդրահարույց է իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը բաժանորդին ներկայացնելը՝ առանց համապատասխան հիմնավորումների:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» թիվ 378-Ն և 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 95-Ն որոշումներով առևտրային հաշվառքի սարքի արտաքին միջամտությամբ խախտման փաստական հանգամանքների բացահայտման գործիքակազմ նախատեսված չէ և նույն որոշումների համապատասխանաբար՝ 47-րդ և 134-րդ կետերով սահմանված վերահաշվարկի կատարման համար բավարար է միայն նշված կետերով նախատեսված հիմքերի առկայությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է հասցեագրել ինչպես Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), այնպես էլ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն:

Ըստ Հանձնաժողովի պարզաբանումների՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով իրականացված վերահաշվարկին չհամաձայնելու վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 169 դիմում-բողոք: Դրանց քննարկման ընթացքի վերաբերյալ Հանձնաժողովը տեղեկացրել է հետևյալը.

- ✓ 4 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդին ներկայացված վերահաշվարկված գումարը նվազեցվել է,
- ✓ 2 դիմում-բողոքի դեպքում՝ կատարված վերահաշվարկի դիմաց բաժանորդին ներկայացված վճարման հաշիվները հիմնավոր չլինելու հիմքով վերահաշվարկը չեղարկվել է,
- ✓ 9 դիմում-բողոքի դեպքում՝ Հանձնաժողովը փաստել է, որ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունն իրավունք չունի ծախսերի հիման վրա հաշվարկված հաշիվներից բացի, այլ հաշիվներ, մասնավորապես՝ նախորդ բաժանորդին ներկայացված հաշիվները, տույժերը նոր բաժանորդին ներկայացնելու,
- ✓ 69 դիմում-բողոքի դեպքում՝ ընկերությունն իրավունք ունի վերահաշվարկված գումարը բաժանորդից պահանջել միայն դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով ծառայությունների մատուցումը: Միաժամանակ, ընկերության կողմից բաժանորդներին վճարվել է տույժ,
- ✓ 69 դիմում-բողոքի դեպքում՝ ներկայացված վերահաշվարկի գումարը բաժանորդների կողմից ենթակա է վճարման, քանի որ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտումը,
- ✓ 16 դիմում-բողոքի դեպքում՝ հասցեի բաժանորդ է հանդիսանում այլ անձ:

Ըստ Հանձնաժողովի՝ դիմումատուները տեղեկացվել են, որ համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի 8-րդ կետի՝ բարձրացված հարցը Հանձնաժողովը կարող է քննարկել

բաժանորդի (կամ նրա ներկայացուցչի) պահանջով՝ վերջինիս կողմից դիմում (ներկայացուցչի դեպքում՝ նաև լիազորագիր) ներկայացնելու դեպքում:

Հանձնաժողովի տվյալներով՝ վերահաշվարկի վերաբերյալ դիմում-բողոքների հիման վրա վարչական վարույթ չի հարուցվել: Դիմում-բողոքները քննարկվել են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածին համապատասխան:

Հանձնաժողովի տրամադրած տվյալների համաձայն՝ 15 դիմում-բողոքի դեպքում առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով կատարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկը վերանայվել է. ընկերության կողմից ներկայացված գումարը նվազեցվել է, փաստվել է վերահաշվարկ կատարելու կամ բաժանորդին վերահաշվարկված գումարը ներկայացնելու անբավարար հիմքերը:

Ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության ներկայացրած տեղեկության՝ ընկերության կատարած վերահաշվարկի վերաբերյալ 2024 թվականի ընթացքում գրավոր և էլեկտրոնային եղանակով ստացել են 183 դիմում-բողոք: Դրանց քննարկման արդյունքում 6 դեպքով հաշվարկված գումարը վերանայվել է՝ ելնելով տարբեր պատճառներից՝ կապված ջրամատակարարման տևողության, խողովակի տրամագծի հետ և այլն, իսկ մնացածի դեպքերով մերժվել՝ բավարար հիմքերի բացակայության պատճառով:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նաև նշել, որ Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդման շրջանակում կարևորելով Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը՝ ընդգծել էր, որ վերահսկողության պատշաճ մեխանիզմների բացակայությունը գործնականում կարող է հանգեցնել մատակարարների կողմից չարաշահումների: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանն առաջարկել էր խիստ վերահսկողություն սահմանել մատակարար ընկերությունների կողմից Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ:

Այս կապակցությամբ, Պաշտպանը դրական է գնահատում Հանձնաժողովի կողմից ներկայացված պարզաբանումներն առ այն, որ հանրային ծառայությունները կարգավորող ոլորտում գործունեություն իրականացնող անձանց կողմից օրենքով և Հանձնաժողովի իրավական ակտերով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ Հանձնաժողովի կողմից իրականացվող վերահսկողությունը կրում է մշտական բնույթ, որն արտահայտվում է օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող՝ հանրային ծառայությունների ոլորտում հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդումների կարգավորվող անձանց գործունեությունը ճյուղային օրենքներին, Հանձնաժողովի իրավական ակտերին, լիցենզիայի պայմաններին համապատասխանության ստուգմամբ, Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության հավաստիության գնահատման համար կարգավորվող անձանց գործունեության մոնիթորինգի իրականացմամբ, ինչպես նաև տարբեր իրավասու մարմինների կողմից բարձրաձայնված խնդիրների առնչությամբ համապատասխան ուսումնասիրությունների իրականացմամբ: Նշված գործընթացների արդյունքում կարգավորվող անձանց կողմից ճյուղային օրենքներով, Հանձնաժողովի իրավական ակտերով սահմանված պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում Հանձնաժողովի կողմից կիրառվում են ճյուղային օրենքներով

նախատեսված պատասխանատվության միջոցներ և նույն օրենքներով նախատեսված այլ մեխանիզմներ:

Ամփոփելով վերոգրյալը և վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ.

- ***Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր: Մասնավորապես, պետք է քննարկման առարկա դարձվի վերահսկողության առավել գործուն մեխանիզմներ մշակելու և ներդնելու հարցերը,***
- ***անհրաժեշտ է ոլորտը կարգավորող իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը, առանց փաստական հանգամանքների բացահայտման, բաժանորդին ներկայացնելու մոտեցումը վերանայելու համար:***

5. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ

2024 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են բողոքներ հասցեագրվել նաև ոռոգման ջրի մատակարարման խափանումների վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Արմենակյան և Նորքի այգիներ փողոցների բնակիչները ոռոգման ջուր չունեն: Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ Նորք-Մարաշ վարչական շրջանի ոռոգման համակարգը կառուցվել է 50 տարի առաջ և 47 տարի անխափան աշխատել է, իսկ ոռոգման համակարգի խնդիրներն ի հայտ են եկել 2022 թվականից: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ տարվա ընթացքում 1-2 անգամ լինում են խողովակների խցանումներ, ջուրը բնակիչներին չի հասնում և հետևաբար, առաջանում է խցանումները բացելու անհրաժեշտություն: Բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ խնդրի լուծման համար դիմել են իրավասու մարմիններին, սակայն արդյունքի չեն հասել: Խնդիրը բարձրաձայնվել է նաև զանգվածային լրատվության միջոցներով:

Բարձրացված հարցի առնչությամբ Պաշտպանին ներկայացվել են պարզաբանումներ այն մասին, որ վերոհիշյալ հատվածի ոռոգման ջրի խողովակները չունեն որևէ իրավական կարգավիճակ և հանձնված չեն իրավասու մարմնի, քանի որ վերջիններս ունեն վաղեմության և նորմատիվային խնդիրներ: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ 2023 թվականի ընթացքում Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հրատապ աշխատանքների ծրագրով մաքրվել են այդ հատվածի ոռոգման ջրի խողովակները, ժամանակավոր լուծման նպատակով:

Բողոքի ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք, որի արդյունքում Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, որ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի այգիներ փողոցի հարակից հատվածի ոռոգման համակարգի անցկացման աշխատանքները ներառված են Նորք-Մարաշ վարչական

շրջանի ղեկավարի 2025 թվականի ընթացիկ ծրագրերում: Հաջորդիվ, տրամադրվել է տեղեկատվության նաև այն մասին, որ հայտարարվել է նշյալ ջրագծի նախագծման մրցույթ:

Պաշտպանին ներկայացրած մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Ակունք գյուղում ոռոգման ջրի մատակարարումը պատշաճ կերպով չի իրականացվում: Բողոք ներկայացրած անձի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ներկայում ոռոգող ջրատարից բացի, այլընտրանքային հնարավորություն չկա:

Նշվածի կապակցությամբ Գեղարքունիքի մարզպետը ներկայացրել է պարզաբանումներ այն մասին, որ նշված բնակավայրում ոռոգման ջրի մատակարարման նպատակով 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերով կառուցվել է 1500գծմ երկարությամբ ոռոգման համակարգ՝ 2 ուղեգծերով (LR 80 չափի վաքերով), որի շնորհիվ ոռոգման ջրի կորուստները հասցվել են նվազագույնի՝ նպաստելով ավելի արդյունավետ ոռոգում իրականացնելուն:

2024 թվականին ոռոգման ջրի հասանելիության հետ կապված որոշակի դրական առաջընթաց արձանագրվել է ոչ միայն Պաշտպանին ներկայացված անհատական դիմում-բողոքների ուսումնասիրությամբ, այլ նաև Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբերի իրականացրած այցերի արդյունքում:

Այսպես, օրինակ՝ 2024 թվականի ապրիլի 11-ին և 12-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները Տավուշի մարզում հանդիպումներ են ունեցել Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Բերքաբեր, Ոսկեպար, Ոսկեվան, Կիրանց բնակավայրերի բնակիչների և վարչական ղեկավարների հետ, քննարկվել են բնակիչներին հուզող առաջնահերթ հարցերը:

Հանդիպման ընթացքում Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավարը հայտնել է, որ Պաշտպանի նախորդ այցի ընթացքում արձանագրված որոշակի խնդիրներ[704] գտնվում են լուծման փուլում: Մասնավորապես, տեղեկացրել է, որ բնակավայրի հարակից տարածքում գտնվող ջրամբարի վրա կառուցված պոմպակայանը շուտով (մոտ երկու ամսից) կհանձնվի շահագործման, ինչի արդյունքում կլուծվի ոչ միայն Բերքաբերի, այլ նաև հարևան մի քանի բնակավայրի ոռոգման ջրի խնդիրը: Ավելի ուշ՝ նշված բնակավայրի վարչական ղեկավարը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել առ այն, որ վերը նշված պոմպակայանը 2024 թվականի հունիս ամսին հանձնվել է շահագործման: Հավելել է, որ պոմպակայանը հնարավորություն է տալիս ոռոգել շուրջ 120 հեկտար հողատարածք:

Վերոգրյալը, իհարկե, պետք է դիտել իբրև դրական առաջընթաց, այնուամենայնիվ պետք է նշել, որ ոռոգման ջրի մատակարարման ոլորտը համակարգային կարգավորման կարիք ունի: Նախորդ տարեկան հաղորդման շրջանակում անդրադառնալով բարձրացված խնդրին՝ Պաշտպանը, մասնավորապես, ընդգծել է, որ ոռոգման ջրի հասանելիության խնդիրը հատկապես մտահոգիչ է այն պատճառով, որ այն ուղղակիորեն բացասական է ազդում

---

[704] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը (էջեր 411-412):

բնակիչների սոցիալական վիճակի վրա, քանի որ որոշ բնակավայրերում վերջիններիս եկամտի հիմնական, որոշ դեպքերում էլ՝ միակ աղբյուրն այգեգործությունն ու բանջարաբոստանային գործունեության արտադրությունն է: Նշել է նաև, որ ոռոգման ջրի մատակարարման պատշաճ ապահովումն ունի առաջնային նշանակություն, քանի որ Կառավարության կողմից հաստատված պետական տարբեր աջակցության ծրագրերի արտոնություններն ուղղված են գյուղատնտեսության խթանմանը, իսկ առանց ոռոգման ջրի հասանելիության, նման ծրագրերի արդյունավետությունը ցանկալի մակարդակի չի կարող լինել: Հետևաբար, ոռոգման ջրի մատակարարման ոլորտը կանոնակարգելու ուղղությամբ պետք է իրականացվեն շարունակական գործողություններ[705]:

Հաշվի առնելով այն, որ նշված խնդիրը համակարգային առումով շարունակում է արդիական մնալ՝ 2024 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե:

Ի պատասխան՝ Ջրային կոմիտեն ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ ՀՀ բնակավայրերում ոռոգման ջրի պատշաճ և բավարար հասանելիության խնդիրները լուծելու ուղղությամբ կոմիտեն իրականացնում է 15 ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքներ, ոռոգման ջրամատակարարման բարելավման, ջրապահովվածության բարձրացման և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով իրականացնում է թվով 28 օրվա կարգավորման ջրավազանների կառուցման և վերակառուցման աշխատանքներ: Ոռոգելի հողատարածքների ջրամատակարարումը բարելավելու նպատակով նախատեսում է կառուցել 15 փոքր և միջին ջրամբարներ, որոնց շնորհիվ կավելանան նոր հողատարածքներ, մեխանիկական ջրարտադրությունը կփոխարինվի ինքնահոսով, որը կապահովի էլեկտրաէներգիայի խնայողություն:

Ըստ տրամադրված տեղեկությունների՝ ՀՀ տարածքում առաջացող մակերևութային ջրերի արդյունավետ կառավարման և ջրի պահանջարկի բավարարման համար ջրամբարների անվտանգ շահագործման և դրանցով կայուն ջրամատակարարման ապահովման նպատակով կիրականացվեն 7 ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ: Արփա-Սևան թունելի անվտանգ շահագործման և պահպանման շարունակականության ապահովման ծրագրի շրջանակներում իրականացնում է Արփա-Սևան թիվ 2 թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ: «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակով պայմանավորված՝ Կեչուտի ջրամբարից № 1 թունելով Արփա գետի ջուրը տեղափոխվում է Եղեգիսի ջրանցույց և այնտեղից Եղեգիս գետի հոսքի հետ միասին ուղղորդվում է № 2 թունել, որով ջուրը տեղափոխվում է Սևանա լիճ: Ոռոգման ջրամատակարարումն արդյունավետ և անխափան կազմակերպելու նպատակով ոռոգման շրջանին ընդառաջ, ջրօգտագործող ընկերությունների կողմից ձեռնարկվում են ոռոգման համակարգերի նորոգման և մաքրման աշխատանքներ:

---

[705] Տե՛ս, նույն տեղում:

Պարզաբանումներ են տրամադրվել նաև այն մասին, որ Արմավիրի մարզի Արաքս սահմանամերձ բնակավայրում կատարվել են ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ, իրականացվել է ոռոգման ջրի հասանելիության համար թվով 2 ծրագիր: Շիրակի մարզ Շիրակավան և Երազգավորս սահմանամերձ բնակավայրերում կատարվել են ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ, Գտաշեն և Մեղրաշատ բնակավայրերում իրականացվել է ոռոգման ցանցի նորոգում: Վայոց ձորի Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում կառուցվել է ոռոգման արտաքին ցանց՝ 2,5 կմ, Ռինդ բնակավայրում՝ ոռոգման ջրագիծ: Ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ են իրականացվել նաև Գեղարքունիքի մարզ Նորաբակ սահմանամերձ բնակավայրում, Լոռու մարզ Դսեղ սահմանամերձ բնակավայրում, Սյունիքի մարզ Տեղ սահմանամերձ բնակավայրում:

Պաշտպանը ողջունելի է համարում ոռոգման համակարգերի հիմնանորոգման, ոռոգման ջրամատակարարման բարելավման, ջրապահովվածության բարձրացման և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով ձեռնարկված քայլերը, այնուհանդերձ հարկ է համարում փաստել, որ խնդրի համակարգային լուծման ուղղությամբ դեռևս պետք է իրականացնել շարունակական գործողություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոռոգման ջրի անխափան մատակարարումն ապահովելու ուղղությամբ:

6. Անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասում էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ տեղադրելու խնդիր

2024 թվականին Պաշտպանին շարունակվել են բողոքներ հասցեագրվել առ այն, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)՝ առանց անձանց հետ նախապես համաձայնեցնելու՝ էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ է տեղադրել իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 1988 թվականին Կոտայքի մարզի Գառնի համայնքում ստացել է տնամերձ հողամաս: Հավելել է, որ հողամասում իրականացվող շինաշխատանքները չի կարողանում ավարտին հասցնել, քանի որ այնտեղ առկա է էլեկտրահաղորդման գծերի հենասյուն: Ըստ բողոքի՝ հենասյունը խոչընդոտում է հողամասն օգտագործել ըստ նպատակային նշանակության, այն հնամաշ է և կարող է կողաշրջվել իր առանձնատան ցանկապատի ուղղությամբ:

Բարձրացված հարցի վերաբերյալ Ընկերությունը ներկայացրել է պարզաբանումներ այն մասին, որ հողամասում գտնվող հենասյան տեղափոխությունը կապված է ներկա ժամանակահատվածում ներդրումային ծրագրի շրջանակներում «Գողթ» 10կՎ օդային գծի վերակառուցման հետ, որի աշխատանքների ավարտից հետո բարձրացված խնդիրը կկարգավորվի:

Բողոքի ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք:

Մասնավորապես, Ընկերության իրավասու ներկայացուցիչը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ վերը նշված աշխատանքներն ընթացիկ տարում ավարտին կհասցնեն: Բողոք ներկայացրած անձը նույնպես լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ Ընկերության «Գեղամա» մասնաճյուղի ներկայացուցիչներն իրեն հայտնել են, որ ներկայում վերակառուցման աշխատանքներ են իրականացվում և դրանք ավարտին կհասցնեն 2025 թվականի մայիս-հունիս ամիսներին:

Մեկ այլ բողոքով, Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում՝ ավելի վաղ, քան տարածքի նկատմամբ գրանցվել է իր սեփականության իրավունքը, տեղադրված են եղել Ընկերությանը պատկանող բարձրավոլտ էլեկտրական ենթակայանը և հենասյունը, որից էլեկտրաէներգիա է մատակարարվում 163 բաժանորդի: Նշել է նաև, որ ենթակայանը և հենասյունը տեղադրվել են վերաբերելի իրավակարգավորումների ու չափանիշների կոպիտ խախտումներով: Մասնավորապես, ըստ պնդման՝ պահպանված չէ բնակելի տնից սահմանված հեռավորությունը, ենթակայանի դռները չեն կողպվում: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ այս ամենը վտանգում է բնակիչների կյանքը և առողջությունը:

Հավելել է, որ դեռևս 2017 թվականի հուլիս ամսին նշված հարցով դիմել է դատարան: Արդյունքում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն Ընկերությանը պարտավորեցրել է վերացնել հայցվորին սեփականության իրավունքով պատկանող հողամասում առկա և Ընկերությանը պատկանող էլեկտրական ենթակառուցվածքների շահագործման հետևանքով սեփականատիրոջ ընտանիքի անվտանգությանը սպառնացող խոչընդոտները, ինչպես նաև սահմանված նորմերից բարձր աղմուկը: Այնուհանդերձ, ըստ բողոքը ներկայացրած անձի, դատական ակտը չի կատարվում՝ ենթակայանը և հենասյունը տեղափոխելու համար Ընկերությանը հողամաս տրամադրելու անհնարինության պատճառով:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան, որին ի պատասխան ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ քննարկվող հասցեի հարևանությամբ տարածքները խիտ կառուցապատված են բնակելի և հասարակական շինություններով, իսկ նոր ենթակայան տեղադրելու պարագայում անհրաժեշտ է խստիվ պահպանել անվտանգության գոտիները, ուստի Ընկերության հետ կատարվում է հարակից տարածքների ուսումնասիրություններ համապատասխան հողամասի ընտրության նպատակով:

Բողոքի քննարկման պատշաճ ընթացքն ապահովելու նպատակով Պաշտպանը Երևանի քաղաքապետարան ուղարկել է լրացուցիչ գրություն՝ խնդրելով ներկայացնել տեղեկություն՝ համապատասխան հողամասի ընտրության նպատակով Ընկերության հետ կատարվող(ած) ուսումնասիրության ընթացի կամ հնարավոր արդյունքների վերաբերյալ: Խնդրել է նաև հայտնել, թե ի՞նչ ժամկետում է նախատեսվում իրականացնել հիշյալ տրանսֆորմատորային ենթակայանի տեղափոխումը:

Ի պատասխան՝ տրամադրվել է պարզաբանում այն մասին, որ քաղաքապետարանի համապատասխան մասնագետի և Ընկերության ներկայացուցիչների հետ տարածքի ուսումնասիրության արդյունքում կատարվել է նախնական հողամասի ընտրություն: Հարցի հետագա ընթացքն ապահովելու համար հարցումներ են արվել ինժեներական սպասարկում իրականացնող մատակարար

կազմակերպություններ և ՀՀ կադաստրի կոմիտե: Նշվել է նաև, որ հարցումների պատասխանների առկայության պարագայում կանդրադառնան հարցի քննարկմանը:

Հարկ է նաև նշել, որ այս դիմում-բողոքները Պաշտպանի աշխատակազմում գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Նկատի ունենալով, որ բարձրացված խնդիրը համակարգային առումով շարունակում է խնդրահարույց լինել՝ Պաշտպանը տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել Ընկերություն:

Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2024 թվականի ընթացքում հենասյունների տեղափոխման կամ փոխարինման վերաբերյալ Ընկերությունը ստացել է 791 դիմում-բողոք, որոնց հիման վրա Ընկերության աշխատակիցների կողմից իրականացվել են ուսումնասիրություններ և արդյունքներից ելնելով՝ փոխարինվել են այն հենասյունները, որոնք գտնվել են տեխնիկապես վատ վիճակում: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ Ընկերության կողմից նոր կառուցվող օդային գծերի մոնտաժման աշխատանքների համար կազմվում է նախագիծ՝ նախապես համաձայնեցնելով համապատասխան համայնքի ղեկավարի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է առավել հետևողական լինել անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում էլեկտրահաղորդման գծերի հենասյուների տեղադրման հարցում՝ պահպանելով այդ առումով առկա իրավակարգավորումներն ու չափանիշները:

7. Էլեկտրաէներգիայի մատակարարման հաճախակի ընդհատումների խնդիր

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են առանց նախապես ծանուցելու էլեկտրամատակարարող ընկերության կողմից պարբերաբար և տևական ժամանակով էլեկտրամատակարարման ընդհատման պատճառով անհարմարություններ, նյութական և տեխնիկական մեծ վնասներ պատճառվելուն:

Հարկ է նշել, որ 2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել վերականգնել էլեկտրական էներգիայի մատակարարումը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կացարանում:

Այսպես, 2024 թվականի հոկտեմբերի 25-ին Պաշտպանի աշխատակազմ ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ Արարատի մարզի Մասիս քաղաքի մարզադպրոցի շենքում ժամանակավորապես բնակություն հաստատած ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք մի քանի օր է մնացել են առանց էլեկտրաէներգիայի մատակարարման:

Պաշտպանի հանձնարարությամբ՝ անհապաղ կապ է հաստատվել շենքի բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմնի իրավասու ներկայացուցչի հետ: Բնակիչները նշել են, որ ցուրտ եղանակային պայմաններով պայմանավորված, առանց էլեկտրաէներգիայի մատակարարման շենքում բնակվելը դարձել է անհնար:

Խնդրին առավել մանրամասն ծանոթանալու նպատակով նույն օրը մշտադիտարկման այց է իրականացվել: Պաշտպանի աջակցությամբ՝ բարձրացված հարցը ստացել է լուծում և էլեկտրաէներգիայի մատակարարումը վերականգնվել է[706]:

Չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին՝ հարկ է նշել, որ էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումների հարցը համակարգային առումով շարունակում է խնդրահարույց մնալ: Այս առնչությամբ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ[707]:

Հաշվետու տարվա ընթացքում միայն այս խնդրի մասին Պաշտպանի աշխատակազմ է ստացվել 29 գրավոր և բանավոր դիմում-բողոք: Ընդ որում, 2024 թվականին Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների, թեժ գծին ստացված զանգերի հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների մշտադիտարկումները վկայում են, որ էլեկտրական էներգիայի հաճախակի ընդհատումների խնդիրը բացասական է ազդում ոչ միայն ֆիզիկական ու իրավաբանական անձանց վրա, այլ նաև խաթարում է մի շարք պետական մարմինների և ուսումնական հաստատությունների բնականոն գործունեությունը, պատճառ դառնում սպորտային և մշակութային միջոցառումների, ինչպես նաև դատական նիստերի ընդհատման:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումների պատճառով իր տատի առողջական վիճակը վատթարանում է, քանի որ վերջինս շնչում է թոքերի արհեստական օդափոխության սարքով:

Մյուս դեպքում, անձը տեղեկացրել է, որ Կոտայքի մարզի Քասախ բնակավայրի Մուշ թաղամասի էլեկտրաէներգիայի մատակարարումը պարբերաբար ընդհատվում է: Նշել է, որ էլեկտրամատակարարման կտրուկ ընդհատումների պատճառով խաթարվում են իր կողմից իրականացվող շինարարական աշխատանքները և վնասվում են իր տան կենցաղային իրերը:

---

[706] Այս կապակցությամբ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ: Այն հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3141, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[707] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3046, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող է: Հավելել է, որ Զովունի բնակավայրում էլեկտրամատակարարման ընդհատումները կրում են հաճախակի բնույթ, ինչի հետևանքով իրեն պատճառվում է նյութական վնաս:

Մյուս դեպքում էլ անձը հայտնել է, որ Աբովյան քաղաքի 3-րդ և 4-րդ միկրոշրջաններում պարբերաբար և առանց նախապես ծանուցելու էլեկտրամատակարարումն ընդհատվում է, ինչի արդյունքում խաթարվում է ուսումնական պրոցեսը: Միաժամանակ, տեղեկացրել է, որ էլեկտրամատակարարող ընկերության բաժանորդների սպասարկման և տեղեկատվական կենտրոնի օպերատորները չեն պատասխանում իր հեռախոսազանգերին:

Վերոգրյալից զատ, Պաշտպանին հատուկ հաստատություններ մոնիթորինգային այցերի ընթացքում հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ առ այն, որ էլեկտրաէներգիայի պարբերական խափանումների ընթացքում անհնար է լինում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի իրավունքը: Օրինակ, կան հաստատություններ, որոնք կահավորված են վերալակով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով՝ մինչդեռ պարբերական և առանց պատշաճ ծանուցման էլեկտրոէներգիայի անջատումների հետևանքով հաճախ խնդիր է առաջանում նրանց մի հարկից մյուսը տեղափոխելու և այլ վերաբերելի հարցերի հետ կապված:

Պաշտպանի աշխատակազմն էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումների խնդիրն ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով:

Այսպես, օրինակ՝ հրապարակումներից մեկի համաձայն՝ 2024 թվականի օգոստոսի 7-ին «Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն»-ում բալետային ներկայացման ժամանակ տեղի է ունեցել էլեկտրամատակարարող ընկերության կողմից, առանց նախապես ծանուցելու, էլեկտրաէներգիայի մատակարարման հերթական ընդհատումը, ինչի պատճառով այս անգամ ևս դադարեցվել է հերթական ներկայացումը: Հրապարակման համաձայն՝ պարբերական դարձած այս խնդիրը ոչ միայն մեծ անհարմարություն և բարոյական վնաս, այլև նյութական ու ֆինանսական մեծ կորուստներ է պատճառում թե՛ թատրոնին իր բնականոն աշխատանքային գործունեության իրականացման հարցում, թե՛ առաջացնում է հանդիսատեսի օբյեկտիվ վրդովմունքը: Հատկապես երեկ, երբ լեփ-լեցուն դահլիճում հյուրախաղերով հանդես է եկել բալետային հրավիրյալ խումբ արտերկրից[708]:

Ըստ մեկ այլ հրապարակման՝ Աբովյան քաղաքի մարզադաշտում հայկական «Նոա» և սլովենական «Ռուժեմբերոկ» ֆուտբոլային ակումբների հանդիպումն

---

[708] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://armenpress.am/hy/article/1197317, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ընդհատվել է երկրորդ խաղակեսի 67-րդ րոպեին՝ էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով[709]: Նշված խնդրի վերաբերյալ մեկ այլ հրապարակման համաձայն՝ Աբովյանի քաղաքային մարզադաշտում հաճախ հոսանքազրկումներ գրանցվելու պատճառով «Նոա» ֆուտբոլային ակումբի նախաձեռնությամբ գեներատոր է տեղադրվել[710]:

Մեկ այլ հրապարակման համաձայն՝ 2024 թվականի օգոստոսի 2-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում ընդմիջվել է ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լևոն Քոչարյանի և Հայաստանի եռամարտի ֆեդերացիայի քարտուղար Սերգեյ Ասատուրովի գործով դատական նիստը, քանի որ դատարանի շենքը հոսանքազրկվել է: Ըստ հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվության՝ դատարանն անցել էր ապացույցների հետազոտմանն ու դահլիճում ուսումնասիրվում էին տեսանյութերը[711]:

Հարկ է նշել, որ էլեկտրաէներգիայի հաճախակի ընդհատումները խաթարում են նաև Պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեությունը: Մասնավորապես, հնարավոր չի լինում պատշաճ կազմակերպել Մարդու իրավունքների պաշտպանի բարձր մակարդակով հանդիպումները, ապահովել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը, թեժ գծի կամ այլ ֆիքսված քաղաքային և ներքին հեռախոսահամարների միջոցով անձանց իրավախորհրդատվությունների տրամադրումը, ըստ անհրաժեշտության՝ արագ արձագանքման այցերի կազմակերպումը և այլն:

Նախորդ տարեկան հաղորդման շրջանակում անդրադառնալով բարձրացված խնդրին՝ Պաշտպանն ընդգծել է, որ սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի հաճախակի ընդհատումների հարցը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է՝ ուսումնասիրել վթարային արտապլանային ընդհատումների պատճառները, աշխատանքներ իրականացնել (այդ թվում՝ պահուստային (երկրորդային) սնուցում ապահովելու միջոցով) դրանք նվազագույնի հասցնելու համար, ինչպես նաև քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները բարելավելու ուղղությամբ[712]:

Հաշվի առնելով, որ 2024 թվականի ընթացքում էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումների խնդիրը համակարգային առումով շարունակել է արդիական մնալ՝ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդման

---

[709] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://proffootball.am/2024/08/20/%f0%9f%93%b8-noa-ruzhomberok-match-was-interrupted-by-a-power-outage/, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[710] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://armenian-soccer.com/aghbyur-abovyani-marzadashtum-noan-hosankhi-generator-e-teghadrel/ , 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[711] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://news.am/arm/news/836860.html, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[712] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 թվականի տարեկան հաղորդումը (էջեր 413-415):

նախապատրաստման շրջանակներում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է հասցեագրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 15.11.2017 թվականի թիվ 489-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2018-2034 թվականների երկարաժամկետ ներդրումային ծրագրին, որով արդեն իսկ նախատեսվել ու բաշխիչ ցանցերում իրականացվում են էլեկտրահաղորդման գծերի վերակառուցում և արդիականացում, այդ թվում՝ երկրորդային էլեկտրամատակարարման ապահովում ու բաշխիչ ցանցերի ընդլայնում, որոնց շրջանակում՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով ընկերությունը 2018-2024 թվականների ընթացքում իրականացրել է ավելի քան 70 միլիարդ դրամի ներդրումներ: Նշված ներդրումային ծրագրի շրջանակում 2025 և 2028 թվականների համար սահմանվել են նպատակային ցուցանիշներ: Մասնավորապես, նշված որոշման և ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների համաձայն, էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումների ցուցանիշները (համակարգի անջատման միջին տևողության ինդեքսը՝ SAIDI, համակարգի ընդհատումների միջին հաճախականության ինդեքսը՝ SAIFI) սկսած 2025 թվականից՝ տարեկան արդյունքներով չպետք է գերազանցեն բազիսային ցուցանիշների (որոնք սահմանվել են 2021 թվականին) 75%-ը, իսկ սկսած 2028 թվականից՝ բազիսային թվականի ցուցանիշների 55 տոկոսը, իսկ թույլատրելի սահմաններից լարման շեղման դեպքերը՝ սկսած 2025 թվականից՝ տարեկան արդյունքներով չպետք է գերազանցեն բազիսային ցուցանիշների 50 տոկոսը, իսկ սկսած 2028 թվականից՝ պետք է բացառվեն:

Ավելին, գործող ներդրումային ծրագրի համաձայն՝ 2025 և 2026 թվականներին իրականցվելու են Երևան քաղաքի փոքր կենտրոնի գոյություն ունեցող էլեկտրամատակարարման ցանցի արդիականացման աշխատանքներ, որոնց շրջանակում նախատեսվում է գործող բաշխիչ ենթակայանների վերակառուցում, նոր բաշխիչ ենթակայանի կառուցում Տերյան-Արամի փողոցների խաչմերուկում, միատրանսֆորմատորային ենթակայանների ընդլայնում երկտրանսֆորմատորայինների, միատրանսֆորմատորային ենթակայանների փոխարեն նոր երկտրանսֆորմատորայինների կառուցում՝ արդյունքում երկրորդային սնուցմամբ ապահովում և այլն, ինչի արդյունքում ևս զգալիորեն կբարելավվեն էլեկտրամատակարարման ցուցանիշները Երևան քաղաքում:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ արտապլանային ընդհատումները հիմնականում կապված են բաշխիչ ցանցի մաշվածության հետ: Վթարային և արտապլանային անջատումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ընկերության կողմից 6/10կՎ օդային գծերում իրականացվում են բաց հաղորդալարերը փակ մեկուսացված հաղորդալարերով փոխարինման և 0.4կՎ օդային ցանցերում վերակառուցման աշխատանքներ, ինչպես նաև նախատեսվում է մոնտաժել նոր օդային և մալուխային գծեր՝ պահուստային սնուցմամբ ապահովելու նպատակով: 2025 թվականի ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Երևան քաղաքում գտնվող թվով 41 բաշխիչ ենթակայան:

Ըստ պարզաբանման՝ ընկերությունը 2024 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի լարման շեղման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման թվով 4042 դիմում է ստացել, որոնցից 3047-ը հաստատվել է և բաժանորդներն ստացել են համապատասխան փոխհատուցում:

ՀԾԿՀ-ն ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ էլեկտրական ցանցերում վթարների կանխմանը, հուսալիության և անվտանգության բարձրացմանն ուղղված էական գործիքներից է հանդիսանում տվյալ ուղղությամբ ներդրումների իրականացումը: Ի տարբերություն ջրային ոլորտի, որտեղ ներդրումային քաղաքականությունն իրականացվում է վարձակալության պայմանագրի շրջանակում և, այդ մասով հանձնաժողովն ուղղակիորեն իրավասություններ չունի, «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածով հանձնաժողովին տրված է լիցենզավորված անձանց ներկայացրած ներդրումային ծրագրերին համաձայնություն տալու իրավասություն՝ ապագա սակագներում դրանց ամբողջական կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով:

Ըստ պարզաբանման՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2016-2034 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու շրջանակում, հանձնաժողովն ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սպասարկման որակի ցուցանիշների նկատմամբ սահմանել է միջանկյալ և վերջնական թիրախային ցուցանիշներ, որոնք ընկերությունը պարտավոր է ապահովել համապատասխանաբար՝ 2025 և 2028 թվականներին: Հիշյալ ցուցանիշների՝ ըստ տարիների միջինացված բաշխման արդյունքում արձանագրվել է, որ բաժանորդների հոսանքազրկումների միջին տևողության և հաճախության թիրախային ցուցանիշները բարելավվում են 2022 թվականի արդյունքով արձանագրված փաստացի ցուցանիշների համեմատությամբ և, համահունչ են ներդրումային ծրագրով 2023 թվականի համար միջինացված կատարողական ցուցանիշներին: Մասնավորապես, 2023 թվականի արդյունքներով՝ բաժանորդների հոսանքազրկումների միջին տևողության փաստացի ցուցանիշը կազմել է 759.02 «րոպե/բաժանորդ»՝ ծրագրով սահմանված 775.55 «րոպե/բաժանորդ» նպատակային-թիրախային միջինացված ցուցանիշի փոխարեն, բաժանորդների հոսանքազրկումների միջին հաճախության

փաստացի ցուցանիշը կազմել է 7.83 «հոսանքազրկում/բաժանորդ»՝ ծրագրով սահմանված 7.73 «հոսանքազրկում/բաժանորդ» նպատակային-թիրախային միջինացված ցուցանիշի փոխարեն, թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության փաստացի ցուցանիշը կազմել է 4.72 «լարման շեղում/բաժանորդ»՝ ծրագրով սահմանված 4.51 լարման շեղում/բաժանորդ» նպատակային-թիրախային միջինացված ցուցանիշի փոխարեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը ողջունում է խնդրի կարգավորման ուղղությամբ իրավասու մարմինների գործադրված ջանքերը, այնուհանդերձ արձանագրում է, որ դրանք պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում: Ընդ որում, այդ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները բարելավելու անհրաժեշտությունը ոչ միայն Երևանում, այլև՝ մարզերում:

Պաշտպանը վերահաստատում է նաև իր դիրքորոշումն առ այն, որ սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի հաճախակի ընդհատումների հարցը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է՝ ուսումնասիրել վթարային արտապլանային ընդհատումների պատճառները, աշխատանքներ իրականացնել (այդ թվում՝ պահուստային (երկրորդային) սնուցում ապահովելու միջոցով) դրանք նվազագույնի հասցնելու համար, ինչպես նաև քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 15. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐԵՐ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի առաջնային ուշադրության կենտրոնում է եղել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ երաշխավորումը, որը նախորդ տարվա ընթացքում դիտարկվել է ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների համատեքստում:

2024 թվականի հունվարի 24-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am-ում, շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվել է փաստաբանական ծառայություններ մատուցող անձանց՝ նախկինում վճարվող շրջանառության հարկի փոխարեն, շահութահարկ և ավելացված արժեքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի պայմաններում փաստաբանական ծառայություն մատուցողների հարկային բեռն ավելացել է մի քանի անգամ: Ընդ որում՝ նույն նախագիծը Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքին չի ներկայացվել:

Նախագծի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքը ստանալու նպատակով Պաշտպանին է դիմել Փաստաբանների պալատի նախագահը: Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը վերոնշյալ նախագծի առնչությամբ ներկայացրել է հրապարակային դիրքորոշում[713]:

Պաշտպանը հրապարակային դիրքորոշման շրջանակներում ընդգծել է, որ թեև պետությունն ունի հարկային քաղաքականությունը որոշելու լայն հայեցողություն, սակայն քննարկվող նախագծի առումով չի ներկայացվել հարկային քաղաքականության փոփոխության իրավաչափությունը գնահատելու անհրաժեշտ հիմնավորում՝ միջազգային չափանիշներին համապատասխան, չի ներկայացվել նաև նոր կարգավորման՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա հնարավոր ազդեցությունների ու ռիսկերի գնահատում:

Պաշտպանը, հաշվի առնելով փաստաբանական գործունեության առանձնահատկությունները, նշել է, որ ոլորտին վերաբերող ցանկացած փոփոխություն պետք է դիտարկվի ինչպես հարկաբյուջետային, այնպես էլ հանրության իրավունքների պատշաճ իրացման և դրանց պաշտպանության՝ պետության պոզիտիվ պարտականության համատեքստում: Հրապարակային դիրքորոշմամբ կարևորվել է նախագծի նպատակների և հիմնավորումների վերաբերյալ հանրային քննարկումների պատշաճ կազմակերպումը՝ բոլոր շահագրգիռ դերակատարների, այդ թվում՝ փաստաբանական համայնքի ներգրավմամբ՝ հաշվի առնելով հատկապես այն, որ դրա դրույթները քննարկումների և մտահոգությունների առիթ են ստեղծել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծել է, որ անհրաժեշտ է հանրությանն իրազեկել Նախագծի բովանդակության, դրանով առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև նախագծի վերաբերյալ նախատեսվող քննարկումներին մասնակցության հնարավորության մասին՝ նկատի ունենալով

---

[713] Առավել մանրամասն տե՛ս, https://ombuds.am/am/site/ViewNews/2934 հղումով, հասանելի է 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանրային գործերի վարմանը մասնակցելու նրանց իրավունքը, այդ թվում՝ հանրային բանավեճի վրա ազդեցություն ունենալու միջոցով:

Հարկ է նաև նկատել, որ Պաշտպանը հարկային փոփոխությունները, ի թիվս այլնի, առավելապես դիտարկել է անվճար իրավաբանական օգնություն (pro bono) ցուցաբերելիս հարկման մեխանիզմի ներդրման ու դրա հետևանքով հասարակության լայն զանգվածի համար իրավական պաշտպանության միջոցների փաստացի անհասանելի դառնալու տեսանկյունից՝ հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների և Փաստաբանների պալատի ներկայացուցիչների մտահոգությունները այդ առթիվ: Պաշտպանը նախագծային կարգավորումների առնչությամբ նկատել է, որ Նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են բացասական հետևանքներ ունենալ իրավաբանական օգնության հասանելիության վրա, այդ թվում՝ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրման հնարավորության սահմանափակման առումով (pro bono services):

Այս համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է անվճար իրավաբանական օգնության (pro bono) տրամադրման վերաբերյալ միջազգային չափանիշներին՝ ընդգծելով պետությունների պարտականությունը՝ խրախուսելու իրավաբանական և փաստաբանական միություններին իրավաբանական օգնության տրամադրմանը աջակցելու հարցում՝ առաջարկելով մի շարք ծառայություններ, ներառյալ անվճար (pro bono)[714]:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի սեպտեմբերի 4-ին հանդիպել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի և պալատի ներկայացուցիչների հետ, որի շրջանակներում, ի թիվս այլնի, քննարկվել են իրավաբանական օգնության նկատմամբ կիրառվող հարկային փոփոխություններին առնչվող հարցերը[715]:

Չնայած Պաշտպանի կողմից ներկայացված հրապարակային մտահոգություններին՝ նախագծային փոփոխություններն ընդունվել են, որից հետո Պաշտպանը 2024 թվականի նոյեմբերի 1-ին Սահմանադրական դատարան դիմում է ներկայացրել՝ «ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի հունիսի 12-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ

---

714 Տե՛ս, Եվրոպայի խորհրդի՝ քրեական արդարադատության համակարգում իրավաբանական օգնություն ստանալու հասանելիության սկզբունքները ուղեցույցը, կետ 56, հասանելի է https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/UN_principles_and_guidlines_on_access_to_legal_aid.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

715 Առավել մանրամասն տե՛ս, https://ombuds.am/am/site/ViewNews/3095 հղումով, հասանելի է 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ

կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 64-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ: Պաշտպանի կողմից ներկայացված դիմումում ներառվել են ինչպես իր հրապարակային դիրքորոշմամբ նախանշված խնդիրները, այդ թվում՝ անվճար իրավաբանական օգնություն (pro bono) ցուցաբերելիս հարկմանն առնչվող հարցերը, այնպես էլ ՀՀ փաստաբանների պալատի և մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 61-րդ, 64-րդ, 73-րդ և 78-րդ հոդվածներին համապատասխանության վերաբերյալ դիրքորոշումները[716]: Կարևորելով հարկային փոփոխությունների՝ մարդու իրավունքների և հատկապես իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի նկատմամբ ազդեցության առնչությամբ հասարակության լայն շերտերում տարածված մտահոգությունները՝ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով ու հրապարակային դիրքորոշմամբ արտացոլված խնդիրները 2024 թվականի ընթացքում շարունակել են մնալ Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո՝ Պաշտպանի իրավասությունների շրջանակներում առկա ողջ գործիքակազմի գործադրմամբ:

2025 թվականի հունվարի 10-ին Մարդու իրավունքների պաշտպանը հանդիպել է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել է անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելիս հարկային պարտավորությունների առաջացման հարցը հարկային օրենսդրության փոփոխությունների համատեքստում: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունները ներկայացրել են իրենց մտահոգությունները առ այն, որ այդ փոփոխությունների համատեքստում անվճար իրավաբանական օգնության ցուցաբերումն, ըստ ընդունված կարգավորումների, հարկվելու է՝ նաև ստեղծելով անհասկանալի իրավիճակ ու բարդություններ անվճար հիմունքներով մարդկանց իրավունքների պաշտպանություն իրականացնելու տեսանկյունից[717]:

Պաշտպանը հանդիպման շրջանակներում մտահոգիչ է գնահատել հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում ստեղծված իրավիճակը՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրման համատեքստում հարկման հարցի կապակցությամբ ձևավորված անորոշության տեսանկյունից:

---

[716] Սահմանադրական դատարանը 2024 թվականի նոյեմբերի 19-ի թիվ ՍԴԱՈ-177 որոշմամբ դիմումի գործի քննությունը մերժել է:

[717] Առավել մանրամասն տե՛ս, https://ombuds.am/am/site/ViewNews/3237 հղումով, հասանելի է 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել մեկ այլ հանդիպում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչների միջև: Հանդիպման ընթացքում հասարակական կազմակերպությունների կողմից բարձրացված մի շարք հարցեր պարզաբանվել են, ձևավորվել է հարթակ բոլոր կողմերի արձանագրած խնդիրները ներկայացնելու ու անվճար իրավաբանական օգնության տրամադրման համատեքստում հարկային պարտավորությունների առաջացման առնչությամբ ստեղծված անորոշության վերաբերյալ մտահոգություններով կիսվելու համար [718]:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականի ընթացքում շարունակել է մտահոգիչ համարել փաստաբանական ծառայություններ մատուցողների՝ անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելիս հարկ վճարելու պարտավորության առնչությամբ բարձրացված հարցի հետ կապված վերջնական լուծումների բացակայության հարցը՝ այդ մասին խոսելով հրապարակային[719]:

Հարկ է նաև նկատել, որ հարկային փոփոխությունների արդյունքում անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելիս հարկման ու դրա մարդու իրավունքների վրա ազդեցության, այն է՝ իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորության երաշխավորման հարցը շարունակում է գտնվել Պաշտպանի ուշադրության ներքո:

Պաշտպանը, ի գիտություն ընդունելով իրավասու մարմնի՝ ստեղծված իրավիճակի հանգուցալուծման ուղղությամբ քայլերը, ընդգծում է Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում փաստաբանական ծառայություններ մատուցողների կողմից անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացման հարցի շուրջ ստեղծված անորոշության ու այդ համատեքստում հարկային պարտավորություններին առնչվող օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքեր գործադրելու անհրաժեշտությունն ու հատուկ կարևորում որոշումների կայացման գործընթացում շահագրգիռ սուբյեկտների մասնակցությունը:

[718] Առավել մանրամասն տե՛ս, https://ombuds.am/am/site/ViewNews/3258 հղումով, հասանելի է 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[719] Առավել մանրամասն տե՛ս, https://ombuds.am/am/site/ViewNews/3258 հղումով, հասանելի է 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 16. ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանն իր մանդատի շրջանակներում շարունակել է հետևել Ադրբեջանում ապօրինի ազատությունից զրկված բոլոր էթնիկ հայերի իրավունքներին առնչվող հարցերին՝ նկատի ունենալով մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքներն ու արժեքները պահպանելու կարևորությունը, անձանց հարազատների կողմից Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հանգամանքը և հումանիտար հարցերում մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերակատարությունը: Իրավական խնդիրը ցույց տալու նպատակով Պաշտպանը պարբերաբար օգտագործել է իր մանդատին վերաբերելի ամբողջ գործիքակազմերը: Խնդրին անդրադարձ է կատարվել տարբեր ձևաչափերով, այդ թվում՝ միջազգային գործընկերների հետ հանդիպում-քննարկումների, պաշտոնական գրագրությունների, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող դերակատարներին խնդիրը հասցեավորելու միջոցով: Հարցի մասին Պաշտպանը բազմիցս խոսել է նաև հրապարակայնորեն[720]: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով հարցի զգայունությունը և Պաշտպանի աշխատակազմի՝ «չվնասելու սկզբունքով» գործելու կարևորությունը՝ համապատասխան աշխատանքները կրել են խորհրդապահական բնույթ:

Այս պահին Ադրբեջանի իրավազորության ներքո շարունակում են ազատությունից զրկված մնալ բազմաթիվ հայեր, որոնց մի մասի նկատմամբ առկա են «մեղադրական դատավճիռներ»՝ տարբեր ժամկետներով ազատազրկումների ձևով, իսկ մյուսների նկատմամբ շարունակվում են իրականացվել, այսպես կոչված, գործընթացներ («դատավարություններ»):

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ Բաքվում ընթացող՝ նրանց վերաբերելի բոլոր գործընթացները տեղի են ունենում մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքների ու արժեքների, միջազգային իրավական չափանիշների կոպտագույն խախտումներով:

Պաշտպանի այս դիրքորոշման հիմքում ընկած են տևական ժամանակ աշխատակազմի կատարած համակողմանի ուսումնասիրություններն ու փաստահավաք աշխատանքները, մարդու իրավունքների մոնիտորինգային միջազգային մարմինների դիտարկումները, ներառյալ՝ միջազգային իրավական չափորոշիչների լույսի ներքո հարցի դիտարկումը: Հատկանշական է, որ մինչև անձանց կամայականորեն ազատությունից զրկելն անգամ Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց ելույթներում, ադրբեջանական հասարակությունը, այդ թվում՝ հասարակական գործիչները, զանգվածային լրատվության միջոցները նրանց արդեն իսկ պիտակավորում էին որպես «հանցագործ»:

---

[720] Հասանելի են հետևյալ https://ombuds.am/am/site/ViewNews/2716, https://www.ombuds.am/am/site/ViewNews/2653, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3241, https://ombuds.am/am/site/ViewNews/3115, https://www.youtube.com/watch?v=cTDoP464meU, https://ombuds.am/am/site/ViewNews/3303 հղումներով և այլն, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ավելին, ադրբեջանական մեդիա տիրույթում և սոցիալական հարթակներում, ինչպես նաև պաշտոնատար տարբեր անձանց կողմից առ այսօր շարունակվում են լայնորեն տարածվել նշված անձանց ուղղված ատելություն ու թշնամանք պարունակող խոսք, վիրավորանքներ, հայերին սպանելու, բռնության կոչեր և հայերի նկատմամբ խորքային ատելություն: Ակնհայտ է, որ պետության կողմից հովանավորվող էթնիկ ատելության քարոզի և անմեղության կանխավարկածի խախտման պայմաններում ընթացող, այսպես կոչված, «դատավարությունները» հակասում են արդար դատաքննության իրավունքի պահանջներին, և չեն կարող դիտարկվել որպես արդար և անկողմնակալ դատարանի կողմից իրականացվող:

Այս համատեքստում կարևոր է վկայակոչել նաև ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով» ստանձնած՝ Ադրբեջանի 10-ից 12-րդ պարբերական հաղորդումների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները, որում կոմիտեն **մտահոգություն է հայտնել սոցիալական ցանցերում, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից ազգությամբ հայերի նկատմամբ ռասիստական կարծրատիպերի տարածման կապակցությամբ (կետ 4(c)) և Ադրբեջանի ղեկավարությանն առաջարկել է միջոցներ ձեռնարկել պաշտոնատար անձանց և հանրային հաստատությունների կողմից ազգությամբ հայերի դեմ ուղղված ատելության խոսքի, ռասայական ատելության և խտրականության հրահրման և խթանման մշտադիտարկման ու դրանց դեմ պայքարի ուղղությամբ** (կետ 5(d)):

Կարևոր է նաև նշել, որ 2021 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը հրապարակել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում միմյանց դեմ քննվող դատական գործերի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացված հրատապ միջոցների վերաբերյալ իր որոշումները[721], որոնց համաձայն՝ առկա է կոնվենցիայի շրջանակներում հայերի իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ: Ըստ այդմ, Դատարանն Ադրբեջանին պարտավորեցրել է՝

ա) բռնությունից և մարմնական վնասվածքներից պաշտպանել բոլոր այն անձանց, որոնք 2020թ. հակամարտությամբ պայմանավորված հայտնվել և պահվում են Ադրբեջանում, ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առաջ հավասարությունը,

բ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու ազգությամբ և էթնիկ հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից,

գ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները:

---

[721] Հասանելի է https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-ORD-01-00-EN.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հատկանշական է նաև, որ **Դատարանն իր որոշմամբ Ադրբեջանին պարտավորեցրել է ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու խտրականությունն ու դրա հրահրումը, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից:**

Ադրբեջանում ընթացող, այսպես կոչված, գործընթացների կամ «դատավարությունների»՝ մարդու իրավունքների տեսանկյունից խնդրահարույց լինելու մասին մի շարք մտահոգություններ են բարձրացրել տարբեր իրավապաշտպաններ[722], փաստաբաններ[723], հասարակական կազմակերպություններ[724], հեղինակավոր միջազգային դերակատարներ[725], բազմաթիվ մտահոգություններ են հնչել ընտանիքների անդամների կողմից[726], ավելին՝ ազատությունից զրկված անձինք ևս պատմել են Բաքվի բանտում իրենց իրավունքների խախտումների մասին[727] և այլն:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձր հանձնակատար Վոլկեր Տյուրկը Ժնևում ընթացող Մարդու իրավունքների Խորհրդի 58-րդ նստաշրջանի ընթացքում ներկայացրած իր համապարփակ զեկույցում հատուկ անդրադարձ է կատարել Ադրբեջանում կամայականորեն պահվող բոլոր անձանց, ներառյալ էթնիկ հայերի հիմնախնդրին՝ նշելով, որ «նրանք պետք է անհապաղ ազատ արձակվեն, և արդար դատավարության նրանց իրավունքները պետք է ամբողջությամբ հարգվեն»[728]:

Եվրախորհրդարանն ընդունել է Բաքվում ազատությունից զրկված հայերի վերաբերյալ հրատապ բանաձևը, որում դատապարտում է Ադրբեջանի կողմից հայերի անարդար կալանավորումները, անմարդկային վերաբերմունքը և անարդար դատավարությունները և պահանջում է նրանց անհապաղ ու անվերապահ ազատ արձակում[729]:

Ադրբեջանում անկախ դատական համակարգի իսպառ բացակայությունը փաստաթղթավորվել է Freedom House-ի 2022-ի զեկույցում[730], որում նշվում է, որ

---

[722] Հասանելի են https://armenpress.am/hy/article/1204917, https://civic.am/news/88649 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[723] Հասանելի է https://shorturl.at/GIMfM, https://x.com/JaredGenser/status/1894772788734353744, հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[724] Հասանելի է https://shorturl.at/iCjgO, https://shorturl.at/KeENW հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[725] Հասանելի է https://www.amnesty.org/en/latest/news/2025/01/azerbaijan-authorities-must-ensure-fair-trial-rights-of-ruben-vardanyan-and-investigate-claims-of-rights-violations/, https://oragir.news/hy/material/2025/03/13/148580, https://factor.am/828102.html, https://panarmenian.net/eng/news/320094 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[726] Հասանելի է https://shorturl.at/ULyoi հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[727] Հասանելի է https://shorturl.at/xna6z հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[728] ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձր հանձնակատարի հայտարարությունն ամբողջությամբ հասանելի է https://www.ohchr.org/en/statements-and-speeches/2025/03/turbulence-and-unpredictability-amid-growing-conflict-and-divided#:~:text=All%20those%20arbitrarily%20detained%20in,human%20rights%20as%20its%20torch հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[729] Հասանելի է https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-10-2025-0177_EN.html հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[730] Հասանելի է https://freedomhouse.org/country/azerbaijan/freedom-world/2022 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

դատական համակարգը կոռումպացված է և ենթարկվում է գործադիրին: Human Right Watch-ն իր զեկույցներում պարբերաբար փաստաթղթավորել է, ի թիվս այլնի, ադրբեջանական ուժերի կողմից հայ ռազմագերիների խոշտանգումները, դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ֆիզիկական բռնության և նվաստացումների դեպքերը, իսկ հայ ռազմագերիների հետապնդումը որակվել է որպես Ժնևյան 3-րդ կոնվենցիայի խախտում[731]: ԱՄՆ Պետդեպարտամենտը ևս անդրադարձել է Ադրբեջանում դատական համակարգի անկախությանն առնչվող համատարած խնդիրներին[732]:

Amnesty International միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը ևս Ադրբեջանում մարդու իրավունքների վերաբերյալ զեկույց է ներկայացրել Եվրոպայի խորհրդին: Այն վերնագրված է «Ադրբեջանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ հույսի նշան չկա: Մարդու իրավունքների համակարգային և լուրջ խախտումները պետք է խստորեն դատապարտվեն»[733]:

Միջազգային ու ներպետական տարբեր գործընկերների, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող դերակատարների, ազատությունից զրկված անձանց, նրանց ընտանիքների անդամների ահազանգերի, ինչպես նաև Պաշտպանի անկախ փաստահավաք աշխատանքներով հավաքագրված այլ տեղեկությունների հաշվառմամբ՝ հստակ կարող ենք արձանագրել, որ **ապօրինի ազատությունից զրկված հայերի նկատմամբ գեներացվել է ատելություն ու մեղավորության կանխավարկած, առկա են վատ վերաբերմունքի ենթարկվելու, արդար դատաքննության իրավունքի խախտման առնչությամբ լուրջ մտահոգություններ:**

Հարկ է ընդգծել, որ արդար դատաքննության իրավունքն ամրագրված է միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: Արդար դատաքննության իրավունքի համատեքստում անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից դիտարկվում է մի քանի հարթություններում, այդ թվում՝ պետական մարմինների և լրատվամիջոցների կողմից այդ սկզբունքի պահպանման անհրաժեշտության տեսանկյունից: Տարբեր դերակատարների կողմից բարձրացված մտահոգությունները վկայում են նաև, որ քրեական հետապնդման ներքո գտնվող էթնիկ հայերը զրկված են արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատավարական երաշխիքներից, այդ թվում՝ իրենց ընտրած պաշտպանի միջոցով արդյունավետ պաշտպանության և համապատասխան երաշխիքների առկայությամբ թարգմանչի օգնությունը ստանալու իրավունքներից[734]: Մարդու իրավունքների պաշտպանը կիսում է պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման հետ կապված մտահոգությունները:

---

[731] Հասանելի է https://www.hrw.org/news/2021/03/19/azerbaijan-armenian-pows-abused-custody հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[732] Հասանելի է https://www.state.gov/reports/2022-country-reports-on-human-rights-practices/azerbaijan/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[733] Հասանելի է https://shorturl.at/GqZ6q հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[734] Հասանելի է հետևյալ https://armlur.am/1439979/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդրահարույց իրավիճակներ թույլ չտալու համար:** Այսպես, Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործող Եվրոպական դատարանը եկել է այն հետևությանը, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը (Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան): Դատարանի դիրքորոշմամբ՝ **բարձրագույն պաշտոնատար անձինք առանց որևէ պարզաբանման կամ ենթադրության համոզել են հասարակությանը հավատալ, որ դիմողը մեղավոր է՝ չնայած նրան, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքները դեռ հետազոտված չեն եղել**[735]**:**

Մեկ այլ գործով, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ **անմեղության կանխավարկածը կխախտվի, եթե պաշտոնատար անձը կարծիք արտահայտի հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղավորության վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով**: Նույն որոշմամբ դատարանն ընդգծել է **պաշտոնատար անձանց կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով չմեղադրված և չդատապարտված անձանց մասին**[736]**:**

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) թիվ 1003 (1993) բանաձևի 22-րդ կետի համաձայն՝ **լրագրության մեջ տեղեկությունները և կարծիքները պետք է հարգեն անմեղության կանխավարկածը, հատկապես այն գործերով, որոնք դեռ ավարտված չեն և պետք է ձեռնպահ մնալ գնահատականներից: Հետևաբար, անմեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքը պետք է պահպանվի նաև լրատվամիջոցների ու լրագրողների աշխատանքում: Այս դիրքորոշումն է հայտնել նաև Եվրոպական դատարանը**[737]**:**

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Պաշտպանն արձանագրում է. ***Ադրբեջանում ապօրինի պահվող բոլոր հայերի հիմնարար իրավունքներին միջամտությունը տեղի է ունեցել/ունենում միջազգային իրավական չափորոշիչների խախտումներով՝ նկատի ունենալով այն, որ չեն պահպանվում ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային-իրավական երաշխիքներն ու չափանիշները***: Ոլորտում մանդատ ունեցող բոլոր դերակատարները, այդ թվում՝ միջազգային, պետք է շուտափույթ և պատշաճ քայլեր ձեռնարկեն խնդրի լուծման ուղղությամբ: Պաշտպանն իր մանդատի ներքո շարունակելու է հասցեագրել այս բոլոր խնդիրները մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող դերակատարներին:

---

[735] Տե՛ս, Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89:

[736] Տե՛ս, Դակթարասն ընդդեմ Լիտվայի գործով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98:

[737] Տե՛ս, Դյու Ռոյը և Մալոնին ընդդեմ Ֆրանսիայի գործով 2000 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 34000/96:

ԲԱԺԻՆ 17. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների ապահովման հարցերը 2024 թվականի ընթացքում գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի ամենօրյա ուշադրության ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանը ներգրավված է եղել բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության և խթանման աշխատանքներում և վերաբերելի խնդիրները բարձրաձայնել է տարբեր հարթակներում, ինչպես միջազգային գործընկերների, այնպես էլ պետական իրավասու մարմինների հետ հաղորդակցության շրջանակներում:

2024 թվականի ընթացքում Պաշտպանը անձամբ և իր աշխատակազմի միջոցով բարձրացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքներին առնչվող հարցեր մարզային այցերի[738] (Գեղարքունիքի, Շիրակի, Տավուշի, Սյունիքի մարզեր), մշտադիտարկման այցերի (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն ՊՈԱԿ)[739] և բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կացարան[740], աշխատանքային այցերի[741], հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների[742], օտարերկրյա պատվիրակությունների[743], դեսպանության ներկայացուցիչների[744], միջազգային

---

[738]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3158, https://ombuds.am/am/site/ViewNews/3227, https://ombuds.am/am/site/ViewNews/3078, https://ombuds.am/am/site/ViewNews/3082 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[739] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3025 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[740] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3141 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
Հարկ է նկատել, որ այցի ընթացքում բռնի տեղահանված անձանց հետ տեղի են ունեցել առանձնազրույցներ, ուսումնասիրվել են նրանց պայմանները, կարիքների գնահատման, բժշկական օգնության և սպասարկման, սննդի, անձնական հիգիենայի պարագաների տրամադրման հետ կապված հարցերը: Պաշտպանի աջակցությամբ վերականգվել է բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կացարանում էլեկտրաէներգիայի մատակարարումը:

[741]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2956, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3107, https://ombuds.am/am/site/ViewNews/3048, https://ombuds.am/am/site/ViewNews/2880 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[742]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3030, https://ombuds.am/am/site/ViewNews/3158 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[743]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2875, https://ombuds.am/am/site/ViewNews/3057, https://ombuds.am/am/site/ViewNews/2875, https://ombuds.am/am/site/ViewNews/2910 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[744]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3017, https://ombuds.am/am/site/ViewNews/3019, https://ombuds.am/am/site/ViewNews/2867,https://ombuds.am/am/site/ViewNews/2881, https://ombuds.am/am/site /ViewNews/3171, https://ombuds.am/am/site/ViewNews/2977, https://ombuds.am/am/site/ViewNews/2974, https://ombuds.am/am/site/ViewNews/3156, https://ombuds.am/am/site/ViewNews/2926, https://ombuds.am/ am/site/ViewNews/2833, https://ombuds.am/am/site/ViewNews/2977 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կազմակերպությունների ներկայացուցիչների[745], պետական մարմինների[746], դպրոցականների[747], ուսանողների[748] հետ հանդիպումների, հարցազրույցների[749] շրջանակներում:

Ներկայացվածից բացի բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերը բարձրացնելու նպատակով.

• Պաշտպանը մասնակցել է «Փախստականների պաշտպանության և ինտեգրման ամրապնդում Հայաստանում. մարտահրավերներ, ռազմավարություններ և համագործակցություն» թեմայով պանելային քննարկմանը, որի շրջանակներում Պաշտպանը հատուկ անդրադարձել է նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության հարցին[750]:

• Մարդու իրավունքների պաշտպանը հարցազրույց է տվել բրիտանական ԶԼՄ-ների ներկայացուցիչներին Հայաստանում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքներին առնչվող հարցերի և Պաշտպանի փաստահավաք աշխատանքների վերաբերյալ[751]:

• ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի և Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) հայաստանյան գրասենյակի կողմից համատեղ կազմակերպվել է «Սահմանափակումներ և հնարավորություններ. Փախստականների և ապաստան հայցողների մարտահրավերները Հայաստանում» թեմայով աշխատաժողով, որի շրջանակներում քննարկվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված հարցերը[752]:

• Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 5-րդ գլոբալ ֆորումին՝ Ցեղասպանության և այլ ոճրագործությունների նկատմամբ վաղ ազդարարման և վաղ արձագանքման միջազգային մեխանիզմների արդյունավետության ամրապնդումը» խորագրի ներքո: Միջոցառման շրջանակներում Պաշտպանը որպես բանախոս է հանդես եկել «Ցեղասպանության և այլ ոճրագործությունների հանգեցնող ռիսկային գործոնները և փոքր երկրների դերը ցեղասպանության կանխարգելման օրակարգի առաջմղման

---

[745]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2857, https://ombuds.am/am/site/ViewNews/2863, https://ombuds.am/am/site/ViewNews/3214, https://ombuds.am/am/site/ViewNews/2848, https://ombuds.am/am/site/ViewNews/3017, https://ombuds.am/am/site/ViewNews/2833 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[746] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3095 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[747] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3086 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[748] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2941 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[749] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3195 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[750] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3022 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[751]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2937 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[752] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3170 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գործում» թեմայով առաջին պանելային քննարկմանը, որի ընթացքում անդրադարձել է նաև 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման գործընթացին[753]:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի գլխավոր ասամբլեային, որտեղ Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի անդամ գործընկերներին է ներկայացրել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության փորձը՝ անդրադարձ կատարելով բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ու մշտադիտարկման աշխատանքներին, այն մարտահրավերներին, որոնց առնչվել է հաստատությունը պատերազմական և հետպատերազմական պայմաններում գործունեություն ծավալելիս: Մասնավորապես, առանձին անդրադարձ է կատարվել փաստահավաք աշխատանքների կարևորությանը, բռնի տեղահանված բնակչության հետ աշխատանքի առանձնահատկություններին, հավաստի տեղեկատվության հավաքագրմանն ուղղված՝ աշխատակազմի ջանքերին ու կարողությունների զարգացմանն ուղղված քայլերի ձեռնարկմանը[754]:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից կազմակերպված քննարկմանը՝ Արցախից բռնի տեղահանված հայրենակիցների համար փախստականի և ՀՀ քաղաքացու կարգավիճակներին առնչվող իրավունքներն ու պարտականությունները արդյունավետ և բովանդակալից վերհանելու և լուծման նպատակներով:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ուժեղացում» ծրագրի վերաբերյալ միջոցառմանը:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Կանանց կենտրոն, Շուշի» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների կարիքների ապահովման խնդիրները» թեմայով քննարկմանը:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է Հելսինկյան քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից կազմակերպված Արցախից բռնի տեղահանված անձանց իրավական աջակցության ծրագրի ամփոփմանը:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Իմին նախաձեռնություններ» հիմնադրամի կողմից կազմակերպված 2020-2023 թվականներին Արցախից բռնի տեղահանված կանանց և աղջիկների վերաբերյալ հետազոտության արդյունքների ներկայացմանը:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարի հրավերով Եվրոպայի խորհրդի 2023-2026 թվականների Հայաստանի գործողությունների ծրագրի շրջանակում

---

[753] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3204 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[754] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3152 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրականացվող՝ «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում» ծրագրի շրջանակներում տեղի ունեցող Եվրոպայի խորհրդի ներքին տեղահանվածների պաշտպանության չափանիշներին նվիրված քննարկմանը:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ուժեղացում» ծրագրի տեխնիկական հանձնաժողովի երկրորդ նիստին:

• Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից կազմակերպված՝ ՀՀ-ում ներքին տեղահանված անձանց պաշտպանության և աջակցության ազգային իրավական բազայի վերանայման և մշակման վերաբերյալ երեք աշխատաժողովներին:

2024 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներ է տարել նաև օրենսդրության կատարելագործման ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը գրավոր կարծիքով իր նկատառումներն է ներկայացրել բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող օրենսդրական փոփոխությունների նախագծերի վերաբերյալ, որոնք վերաբերել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տարբեր տեսակի սոցիալական աջակցությունների տրամադրման հարցերին[755]:

Նախագծերի առնչությամբ Պաշտպանն անդրադարձել է սոցիալական աջակցության տրամադրման շարունակականությանը, դրա տրամադրման պայմաններին, հնարավորություններին, դադարեցման ու մերժման հիմքերին և այլ հարցերի՝ այդ թվում՝ հանդես գալով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար նախատեսված սոցիալական աջակցության տրամադրման շարունակականության ապահովմանն ուղղված քայլեր ձեռնարկելու և այլ առաջարկներով:

Հաշվի առնելով փաստահավաք աշխատանքների կարևորությունը, բռնի տեղահանված բնակչության հետ աշխատանքի առանձնահատկությունների, հավաստի տեղեկատվության հավաքագրմանն ուղղված՝ աշխատակազմի ջանքերին

---

[755] Տե՛ս, «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին բնակավայրերի ցանկերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ, 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ և 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1957-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, ինչպես նաև «Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին կեցության ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

ու կարողությունների զարգացմանն ուղղված քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար մշակվել է մարդու իրավունքների ոլորտում փաստահավաք գործունեության իրականացման վերաբերյալ ուղեցույց[756]:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար 2024 թվականի ընթացքում կազմակերպվել է նաև «Փաստահավաք առաքելության կարողությունների զարգացում» խորագրով աշխատաժողով, որի նպատակն է եղել Պաշտպանի աշխատակազմի՝ փաստահավաք աշխատանքներ իրականացնելու կարողությունների զարգացումը: Աշխատաժողովը կազմակերպվել է Եվրոպական Միության ֆինանսավորմամբ ՄԱԿ-ի կառույցների կողմից իրականացվող «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Հարկ է նշել, որ Պաշտպանը դեռևս 2023 թվականի ընթացքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին հատուկ անդրադարձել է նաև անձամբ իր և աշխատակազմի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքների ընթացքում, որով փաստագրված տեղեկություններն ամփոփվել են Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում[757]:

---

[756] Հասանելի է https://ombuds.am/images/files/96b751e4c8575af07dd352d4cdef3dca.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[757] Հասանելի է https://ombuds.am/images/files/e76a3b67b4a56fadb3271705e33eeec5.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

1. Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ինչպես նաև սոցիալական աջակցության միջոցառումների հետ կապված խնդիրներ

Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանն առնչվող խնդիրներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին գտնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո: Այդ ուղղություններով տարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ և բարձրացված հարցերի նկատմամբ իրականացվում է հետևողական աշխատանք:

Հարկ է նշել, որ 2024 թվականին Պաշտպանի միջամտությամբ, ինչպես նաև իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերին առնչվող մի շարք խնդիրների տալ լուծում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ առողջական վիճակով պայմանավորված՝ 2022 թվականի աշնանը ԼՂ-ից իր ընտանիքի հետ տեղափոխվել է Հայաստան: Հավելել է, որ Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով հետագայում հնարավորություն չեն ունեցել վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, ուստի, որպես հյուրընկալվողներ 2023 թվականի մայիս ամսին հաշվառվել են Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից:

Բողոք ներկայացրած անձը նշել է նաև, որ իրեն, կնոջը և իրենց անչափահաս երեխային ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (յուրաքանչյուրի բաժնեմասը կազմում է 1/3 կամ 18.4 քմ) պատկանում է բնակարան (ընդհանուր մակերեսը՝ 55.22 քմ), որը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան համայնքում:

Հավելել է, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցությունը ստանալու նպատակով դիմում է ներկայացրել Միասնական սոցիալական ծառայություն, սակայն դրամական աջակցությունը 50 000 ՀՀ դրամի փոխարեն վճարվել է մասնակի՝ 10 000 ՀՀ դրամի չափով՝ Հայաստանում սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք ունենալու հիմնավորմամբ:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ հիշյալ որոշման մեջ կատարվել են փոփոխություններ, մասնավորապես, միջոցառման շրջանակում տրամադրվող սոցիալական աջակցության ամսական չափը կազմում է 50 000 ՀՀ դրամ նաև այն դեպքերում, երբ շահառուն Հայաստանում ունի բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված միայն մեկ անշարժ գույք, որի բաժնեմասին համապատասխան մակերեսը փոքր է 20 քառակուսի մետրից:

Դիմողի պնդմամբ՝ որոշման մեջ կատարված փոփոխություններից հետո բազմիցս դիմել է ծառայության Հրազդանի տարածքային կենտրոն՝ ամսական սոցիալական աջակցությունը 50 000 ՀՀ դրամի չափով ստանալու խնդրանքով, սակայն Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ սոցիալական աջակցությունը վճարվել է մասնակի՝ 10 000 ՀՀ դրամի չափով:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարություն: Վկայակոչելով որոշման 1-ին հավելվածի 4-րդ կետը և 2-րդ հավելվածի 22-րդ կետը՝ նախարարությունը տեղեկացրել է, որ Հայաստանում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի տվյալների հետ համադրման արդյունքում, որի համաձայն՝ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում գտնվող անձանց բնակարանը՝ 55.22 քմ մակերեսով, սեփականության իրավունքով պատկանել է դիմողի կնոջը, որի արդյունքում դիմումատուի և նրա ընտանիքի անդամների՝ որոշմամբ սահմանված սոցիալական աջակցության ամսական չափը կազմել է 10 000 ՀՀ դրամ:

Պարզաբանվել է նաև, որ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի հուլիսի 22-ին կատարվել է վերոնշյալ բնակարանի մասնաբաժինների նվիրատվության գործարք, ինչի արդյունքում բնակարանն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է դիմողին, վերջինիս կնոջը և երեխային, ինչպես նաև յուրաքանչյուրի մասնաբաժնի չափը կազմում է 18.4 քմ:

Նախարարությունից տեղեկացրել են նաև, որ որոշմամբ սահմանված միջոցառման շրջանակում 2024 թվականի հուլիս և օգոստոս ամիսների համար ամսական սոցիալական աջակցությունը բողոք ներկայացրած անձին և վերջինիս ընտանիքի անդամներին վճարվել է ամբողջությամբ՝ 50 000 ՀՀ դրամի չափով:

Բողոքի քննարկման ընթացքում՝ բողոք ներկայացրած անձը Պաշտպանին հասցեագրած լրացուցիչ դիմումով տեղեկացրել է, որ իր բարձրացրած հարցը Պաշտպանի աջակցությամբ ստացել է լուծում, մասնավորապես, որոշմամբ նախատեսված աջակցությունը՝ 2024 թվականի հուլիս ամսվանից սկսած իրեն և իր ընտանիքի անդամներին վճարվել է ամբողջությամբ՝ 50 000 ՀՀ դրամի չափով:

Մեկ այլ բողոքով՝ անձը տեղեկացրել է, որ մինչև 2023 թվականի սեպտեմբերի 25-ն ամուսնու և երկու անչափահաս երեխայի հետ բնակվել է Լեռնային Ղարաբաղում: Այնուհետև, ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել է Հայաստան և հաշվառվել Գորիսի հումանիտար կայանում: Նշել է նաև, որ ամուսինը և երկու երեխան ծնվել և հաշվառված են Հայաստանում, սակայն 12 տարի բնակվել են Լեռնային Ղարաբաղում, որի վերաբերյալ առկա են համապատասխան փաստաթղթեր:

Որպես բռնի տեղահանված՝ օգտվել են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ տրամադրվող 100 000 ՀՀ դրամ միանվագ աջակցությունից: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին տրամադրվող մյուս ծրագրերից օգտվելու նպատակով դիմել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն ամուսնու և երեխաների դիմումները մերժվել են՝ Հայաստանում հաշվառված լինելու պատճառաբանությամբ:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ ընտանիքի սոցիալական կարիքների գնահատման և հնարավոր սոցիալական աջակցության ծրագրերի մեջ ընդգրկելու նպատակով գրություն է ուղարկվել Միասնական սոցիալական ծառայություն: Ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է տնային այցելություն. ընտանիքը

բնակվում է դիմողի ամուսնու հայրական տանը: Բնակարանը երկսենյականոց է, ունի հին վերանորոգում, կոմունալ-կենցաղային բավարար պայմաններ, առկա կահույքն ու տեխնիկան հնամաշ են: Բնակարանը գազաֆիկացված է, առկա է մշտական ջուր և էլեկտրաէներգիա:

Տեղեկացրել են նաև, որ դիմողի ամուսնու կողմից առցանց լրացված դիմումը՝ իր և երեխաների համար, 2024 թվականի նոյեմբեր ամսին մերժվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի և 2023 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1957-Լ որոշման 1-ին հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, քանի որ ծրագրերի շահառու կարող էին հանդիսանալ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում միանվագ դրամական աջակցության շահառու հանդիսացող անձինք՝ բացառությամբ բնակչության պետական ռեգիստրում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը Հայաստանում հաշվառված անձանցից:

Դիմողի ընտանիքի անդամները հաշվառված են եղել Հայաստանում: Հավելել են, որ Կառավարության մի շարք որոշումներում կատարված փոփոխությունների արդյունքում՝ բնակչության պետական ռեգիստրում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը Հայաստանում հաշվառված անձինք ևս կարող են դառնալ թիվ 1763-Լ և թիվ 1957-Լ ծրագրերի շահառուներ, որոնցում ընդգրկվելու համար վերջիններիս համար լրացվել են առցանց դիմումներ: Դիմումները գտնվում են մշակման փուլում և հաստատվելուց հետո կներառվեն վճարման ցուցակներում:

Վերոգրյալ տեղեկությունը փոխանցվել է բողոք ներկայացրած անձին: Վերջինս նշել է, որ ընտանիքի անդամների համար լրացված առցանց դիմումները հաստատվել են և վերը նշված ծրագրերով նախատեսված գումարները փոխանցվել են իրենց:

Հարկ է նշել, որ 2024 թվականին Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել դիմում- բողոքներ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքին, ինչպես նաև սոցիալական աջակցության միջոցառումներին առնչվող հարցերի վերաբերյալ: Ստացված դիմում-բողոքների քննարկման ընթացքում վեր են հանվել մի շարք գործնական և օրենսդրական խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու տեսանկյունից Պաշտպանը կարևորում է շարունակական քննարկումների և գործուն քայլերի իրականացման անհրաժեշտությունը:

Այսպես, ԼՂ-ից բռնի տեղահանված անձինք Պաշտպանին հասցեագրել են բազմաթիվ գրավոր և բանավոր բողոքներ՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված սոցիալական աջակցություն ստանալու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմելու և Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում տվյալների բացակայության հիմքով մերժելու վերաբերյալ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2020 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղի Հադրութ քաղաքից տեղահանվել է Հայաստան և այլևս չի բացակայել երկրից: Հավելել է, որ դիմում է ներկայացրել նախարարություն՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված աջակցությունը ստանալու նպատակով, սակայն այն մերժվել է՝ ՀՀ կառավարության 2023 թվականի

հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված միջոցառման շահառուների և Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում տվյալների բացակայության հիմքով:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1820-Լ որոշման շահառու է հանդիսացել և որպես տեղահանված անձ ստացել է 300.000 ՀՀ դրամ միանվագ աջակցություն: Միևնույն ժամանակ, օգտվել է 2021 թվականին 4-ամսյա տևողությամբ 68.000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության ծրագրից:

Նշել է նաև, որ իր հետ միասին 2020 թվականին տեղահանված իր ընտանիքի մյուս անդամները հանդիսանում են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շահառու, քանի որ վերջիններիս տվյալներն առկա են եղել Օպերատիվ շտաբի ցուցակներում: Հավելել է, որ ընտանիքի անդամների տվյալները ցուցակում ընդգրկվել են, քանի որ Հայաստանում գտնվելու ընթացքում տեղեկանք ստանալու նպատակով վերջիններս դիմել են Օպերատիվ շտաբ, որի արդյունքում իրենց տվյալները հայտնվել են Օպերատիվ շտաբում: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը նշված որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող աջակցությունը ստանալու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում նախարարություն ուղղված հարցմանն ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ աջակցության տրամադրման դիմումը մերժվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված միջոցառման շահառուների կամ Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում տվյալների բացակայության հիմքով:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ բողոքով անձը նշել է, որ մինչև 2021 թվականն իր ընտանիքի հետ բնակվել է Լեռնային Ղարաբաղում և ծառայել Պաշտպանության բանակի զորամասերից մեկում: Այնուհետև, իր պաշտոնը կրճատվելուց հետո, Լեռնային Ղարաբաղից տեղափոխվել է Հայաստան՝ բնակություն հաստատելով Երևան քաղաքում: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ին դիմել և սահմանված կարգով անցել է ծառայության ՊՆ N զորամասում: Հավելել է, որ 2022 թվականի հունվար ամսին կինը տեղափոխվել է իր մոտ: Ըստ պնդման՝ վերջինս արձակուրդի ընթացքում 2022 թվականի դեկտեմբերի 10-ին մեկնել է ԼՂ, ապա հայտնվել շրջափակման մեջ, սակայն 2023 թվականի ձմռանը կարողացել է վերադառնալ Հայաստան:

Ըստ բողոքի՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ տրամադրվող սոցիալական աջակցությունից օգտվելու նպատակով դիմել են նախարարություն, սակայն դիմումները մերժվել են՝ Օպերատիվ շտաբի տրամադրած ցուցակներում տվյալների բացակայության հիմքով:

Մինչդեռ, բողոքին կից ներկայացված ՊՆ կողմից տրամադրված համապատասխան փաստաթղթերի բովանդակային ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզել վերջիններիս Հայաստան տեղափոխվելու և այստեղ գտնվելու հստակ ժամկետները:

Այսպիսով, ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ Լեռնային Ղարաբաղից 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո բռնի

տեղահանված այն անձինք, ովքեր բնակվել են Հայաստանում և չեն դիմել Օպերատիվ շտաբ՝ չեն հանդիսանում ՀՀ կառավարության 2023 թվականի 1763-Լ որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցության ծրագրի շահառու ***(Օպերատիվ շտաբի կողմից տրամադրված ցուցակներում իրենց տվյալներն առկա չլինելու պատճառով):***

Ընդ որում, անձինք դիմում-բողոքներով բարձրացնում են նաև այն խնդիրը, որ 2020 թվականի բռնի տեղահանության և դրան հաջորդող ժամանակահատվածում Օպերատիվ շտաբ ներկայանալու և տվյալներ փոխանցելու վերաբերյալ օրենսդրությամբ որևէ պահանջ սահմանված չի եղել, ուստի նման անհրաժեշտության մասին պատշաճ իրազեկված չեն եղել:

Հարկ է նշել, որ 2024 թվականի ընթացքում նմանատիպ բազմաթիվ դիմում-բողոքներ են ստացվել Պաշտպանի աշխատակազմ: Դրանց հիման վրա նախաձեռնված քննարկման ընթացակարգերի շրջանակում՝ նախարարությունը տրամադրել է նույնաբովանդակ պարզաբանում ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման գործող իրավական կարգավորումների վերաբերյալ:

Պաշտպանի՝ 2024 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ ԱՍՀՆ-ից ստացվել է պարզաբանում առ այն, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շրջանակում տրամադրվող սոցիալական աջակցության միջոցառման շահառուների շրջանակը որոշելու համար հիմք են ընդունվում առկա, հասանելի և ստուգելի շտեմարանների տվյալները, քանի որ պետական մարմինը պարտավոր է առաջնորդվել իրավական առումով ստուգելի և չափելի տվյալներով: Հայտնել են նաև, որ Օպերատիվ շտաբի կողմից տրամադրված ցուցակներում նախարարությունը փոփոխություններ և լրացումներ կատարելու լիազորություններ չունի:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ 2020 թվականի տեղահանության ժամանակ, ինչպես նաև դրանից հետո Օպերատիվ շտաբ ներկայանալու և Հայաստանում իրենց գտնվելու վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու օրենսդրական պահանջ չի եղել և ներկայում էլ առկա չէ, ուստի նման անհրաժեշտության մասին անձինք պատշաճ իրազեկված չեն եղել: Ավելին, շատ դեպքերում անձանց Հայաստանում գտնվելու վերաբերյալ տվյալներն Օպերատիվ շտաբին հասանելի են դարձել միայն, երբ վերջիններս որոշակի փաստաթղթեր ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դիմել են շտաբ: Այլ խոսքով՝ դիմելու բուն նպատակը չի եղել Օպերատիվ շտաբին իրենց տվյալները ներկայացնելը:

Հարկ է նաև նշել, որ մերժում ստացած շատ անձինք տեղահանությունից հետո դիմել են նաև Կարմիր խաչի ընկերություն և տրամադրել իրենց տվյալները: Բացի այդ, հատկանշական է, որ շատ անձինք 2020 թվականի տեղահանությունից հետո օգտվել են պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության այլ ծրագրերից, որն ինքնին թույլ է տալիս փաստել տեղահանված լինելու և Հայաստանում գտնվելու հանգամանքները:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ԼՂ-ից բռնի տեղահանված և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանում գտնվող անձանց շրջանակի որոշման համար բացառապես

Օպերատիվ շտաբի կողմից տրամադրված ցուցակները հիմք ընդունելու հանգամանքն օբյեկտիվորեն բավարար չէ:

Պետք է նկատի ունենալ, որ իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպք անհատական է իր բնույթով, հետևաբար լիազոր մարմինն անձանց սոցիալական աջակցության ծրագրի շահառու դարձնելու հարցը քննարկելիս՝ պետք է կիրառի առավել ճկուն կառուցակարգեր յուրաքանչյուր դեպքի հանգամանքների բազմակողմանի և լրիվ ուսումնասիրությունն ապահովելու համար:

Պաշտպանին հընթացս հասցեագրվում են նաև բազմաթիվ գրավոր և բանավոր բողոքներ՝ կոմունալ ծառայությունների դիմաց կատարվող վճարումների համար սոցիալական աջակցություն ստանալու նպատակով ԱՍՀՆ դիմելու և Հայաստանում սեփականության իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հիմքով մերժում ստանալու վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել է Հայաստան և ներկայում վարձակալական հիմունքներով բնակվում է Երևան քաղաքում: Հավելել է, որ 2013 թվականին ամուսնալուծվել է և իր խնամքին ունի երկու անչափահաս երեխա, որոնց կարիքները հոգում է միայնակ:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ինքը և իր անչափահաս երեխաները հանդիսանում են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շահառու: Հավելել է, որ 2024 թվականի սեպտեմբեր ամսից սկսած անչափահասներին տրամադրվող ամսական սոցիալական աջակցությունն 50.000 ՀՀ դրամի փոխարեն վճարվել է 10.000 ՀՀ դրամի չափով: Նշել է նաև, որ պարզաբանում ստանալու նպատակով դիմել է Միասնական սոցիալական ծառայություն, որտեղից հայտնել են, որ 40.000 ՀՀ դրամի վճարումը մերժվել է, քանի որ երեխաների հայրը Հայաստանում սեփականության իրավունքով պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունի: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ հիշյալ անշարժ գույքն ընդհանուր սեփականության իրավունքով պատկանում է երեխաների հորը և հորեղբորը: Հավելել է, որ նախկին ամուսինը 2013 թվականից բնակվում է ՌԴ-ում, չունի բռնի տեղահանված անձի կարգավիճակ, չի հանդիսանում որոշման շահառու, որևէ կապ չի պահում իրենց հետ, իսկ այդ բնակարանում ներկայում բնակվում է նախկին ամուսնու եղբայրը:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը վերը նշված որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող ամսական սոցիալական աջակցությունն իր խնամքին գտնվող անչափահասներին 50.000 ՀՀ դրամի չափով տրամադրելու, ինչպես նաև չվճարված ամիսների համար հասանելիք 40.000 ՀՀ դրամ աջակցության գումարները վճարելու հարցերում:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել է Հայաստան: Հավելել է, որ 2013 թվականի մայիսի 31-ին ամուսնալուծվել է և իր խնամքին ունի երկու անչափահաս երեխա: Հավելել է, որ հանդիսանում են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շահառուներ, սակայն 2024 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար ամսական սոցիալական աջակցությունն անչափահաս երեխաներից մեկին 50.000 ՀՀ դրամի փոխարեն վճարվել է 10.000 ՀՀ դրամի չափով:

Նշվածի կապակցությամբ նախարարությունը բողոք ներկայացրած անձին հայտնել է, որ 40.000 ՀՀ դրամի վճարումը մերժվել է՝ նախկին ամուսնու Հայաստանում սեփականության իրավունքով պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հիմքով: Մինչդեռ, անձի պնդմամբ՝ նախկին ամուսինը ներկայում հարաբերությունների մեջ է գտնվում այլ կնոջ հետ և համատեղ բնակվում են այդ բնակարանում: Հավելել է, որ նշված բնակարանը նախկին ամուսինը ձեռք է բերել ամուսնալուծությունից հետո:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ երեխայի և հոր համատեղ բնակությունն անհնար է՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ***դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անչափահաս երեխայի բնակության վայր է որոշվել մոր բնակության վայրը և խնամքը հանձնվել է իրեն, ինչն ինքնին օբյեկտիվ խոչընդոտ է հանդիսանում վերջիններիս մեկ հարկի տակ բնակվելու համար:***

Նշել է նաև, որ երեխայի հայրը ՌԴ քաղաքացի է և չի հանդիսանում 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցությունների շահառու:

Խնդրել է Պաշտպանի աջակցությունը հիշյալ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող ամսական սոցիալական աջակցությունն իր խնամքին գտնվող անչափահաս երեխաներից մեկին 50.000 ՀՀ դրամի չափով տրամադրելու, ինչպես նաև չվճարված ամիսների համար հասանելիք 40.000 ՀՀ դրամ աջակցության գումարները վճարելու հարցերում:

Նշված բողոքների քննարկման շրջանակում Նախարարությանն ուղղված Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ պարզաբանում է տրամադրվել գործող իրավակարգավորումների վերաբերյալ: Տեղեկացվել է նաև, որ Հայաստանում սեփականության իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի տվյալների հետ համադրման արդյունքում, որի համաձայն՝ երեխայի հորը պատկանող գույքի մակերեսը մեծ է 20 քառակուսի մետրից:

Պատասխան գրությամբ նախարարությունը վկայակոչել է նաև «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումը, ըստ որի՝ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից: Բացի այդ, նշել է, որ բնակության վայր չունեցող շահառուների համար սահմանվել է ամսական դրամական աջակցություն 50 000 ՀՀ դրամի չափով, իսկ բնակության վայր ունեցողների համար՝ 10 000 ՀՀ դրամի չափով:

Պատասխան գրությամբ հայտնել են նաև, որ <u>երեխաները, ինչպես բխում է վերը նշված իրավակարգավորումից, ունեն բնակելի տարածության սեփականատեր հանդիսացող ծնողի զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իրենց բնակության վայրից: Ընդ որում, անգամ ծնողական իրավունքներից զրկելու (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մաս) կամ սահմանափակման (նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս) դեպքում երեխան իր այդ իրավունքը պահպանում է:</u>

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ սոցիալական աջակցության տրամադրման դիմումները քննարկելիս և մերժման որոշում կայացնելիս նախարարության կողմից հաշվի չի առնվում բնակարանում բնակվելու

անձանց, այդ թվում՝ երեխաների իրական հնարավորությունը: Ընդ որում, նմանօրինակ դեպքերում անհրաժեշտ է ոչ միայն լսել երեխաների կարծիքը և հաշվի առնել բնակվելու փաստացի հնարավորությունը, այլ նաև առաջնորդվել երեխայի լավագույն շահով:

Ըստ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի՝ երեխան իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատական և այլ մարմիններում:

Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված (...) *<u>ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու</u>*, օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շրջանակում սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու վերաբերյալ ստացվել են նաև մի շարք այլ բողոքներ: Այսպես, օրինակ՝ բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով ամուսնու հետ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել են Հայաստան: Հիշյալ որոշման շրջանակում տրամադրվող սոցիալական աջակցության տրամադրման նպատակով դիմել է Միասնական սոցիալական ծառայություն, սակայն աջակցությունը տրամադրվել է մասնակի՝ 10.000 ՀՀ դրամի չափով, իսկ 40.000 ՀՀ դրամի մասով մերժվել է՝ Հայաստանում սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույք ունենալու հիմնավորմամբ: Բողոք ներկայացրած անձինք հայտնել են, որ համատեղ սեփականության իրավունքով ունեն 30.1 քմ մակերեսով բնակարան:

Հաշվի առնելով, որ բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հետ կապված դրույթը 2024 թվականին վերանայվել է *(բնակվելու համար նախատեսված անշարժ գույքի մակերեսի մասով)*՝ վերջիններս կրկին դիմել են ծառայություն, որտեղից պարզաբանվել է, որ որոշմամբ հաստատված սոցիալական աջակցության գումարները վճարվելու են մասնակի՝ 10.000 ՀՀ դրամի չափով, քանի որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում, որպես գրանցված իրավունքի սուբյեկտ, նշված է ամուսիններից միայն մեկը՝ կինը:

Այս կապակցությամբ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ նշված անշարժ գույքը գնել են համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, պարզապես առուվաճառքի պայմանագիրը կնքելիս և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ստանալիս ամուսինը գտնվել է Լեռնային Ղարաբաղում, ինչով պայմանավորված՝ վերջինիս անունը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում չի ներառվել: Ըստ բողոքի՝ սոցիալական աջակցությունն ամբողջ ծավալով ստանալու համար ստիպված են եղել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում կատարել փոփոխություն և ձեռք բերել նոր վկայական, որտեղ, որպես գրանցված իրավունքի սուբյեկտ, նշվել է նաև ամուսնու անունը: Փոփոխությունը կատարելուց հետո կրկին դիմել են Միասնական սոցիալական ծառայություն և դիմումը բավարարվել է, սակայն աջակցությունը 50.000 ՀՀ դրամի չափով վճարվել է միայն իրավունքների պետական գրանցման վկայականում փոփոխության կատարումից հետո ընկած ժամանակահատվածի համար:

Բողոք ներկայացրած անձինք խնդրել են Պաշտպանի աջակցությունը՝ վկայականում կատարված փոփոխությանը նախորդող ամիսների համար չվճարված 40.000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության վճարման հարցում:

Քննարկվող խնդրի կապակցությամբ նախարարությունը պարզաբանում է տրամադրել այն մասին, որ անշարժ գույքը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով 23.08.2024 թվականից պատկանում է ամուսիններին՝ յուրաքանչյուրին 15.05 քառակուսի մետր բաժնեմասով, ինչի արդյունքում նրանց տրամադրվող ամսական դրամական աջակցության չափն օգոստոս ամսվա համար կազմել է յուրաքանչյուրին ամսական 50.000-ական դրամ: Հայտնել են նաև, որ որոշմամբ սահմանված և մինչև 2024 թվականի օգոստոսը վճարված 10 000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության չափի վերանայման իրավական հիմքեր առկա չեն:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է,*** եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Նշվածից հետևում է, որ եթե ամուսիններից մեկը գույքը ձեռք է բերել ամուսնության ընթացքում, ապա այդ գույքը համարվում է համատեղ սեփականություն՝ անկախ այն հանգամանքից, որ գույքի պետական գրանցումը կատարվել է ամուսիններից մեկի անունով: Միևնույն ժամանակ, նշված պարագայում ամուսինների գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահից, անկախ այն հանգամանքից, որ սեփականության իրավունքի վկայականում որպես սեփականատեր նշված է ամուսիններից մեկի անունը:

Այս առումով, Պաշտպանը կրկին ընդգծում է, որ նման իրավիճակներում անհրաժեշտ է գործել պետական աջակցության ծրագրով նախանշված նպատակներին համահունչ և դիմումների ուսումնասիրության շրջանակում պատշաճ քննարկման առարկա դարձնել անձանց կողմից ներկայացված հանգամանքները և այդ համատեքստում կայացնել հիմնավորված, պատճառաբանված և թիրախային որոշումներ:

Քննարկվող խնդրի շրջանակում, իբրև դրական առաջընթաց պետք է արձանագրել այն, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված շահառուի՝ Հայաստանում բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հետ կապված դրույթը 2024 թվականին վերանայվել է *(ըստ այդմ, ժամանակավոր կացարանում բնակվելու համար սոցիալական աջակցության ամսական չափը կազմում է 40000 դրամ նաև այն դեպքերում, երբ շահառուն ունի բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված միայն մեկ անշարժ գույք, որի բաժնեմասին (ընդհանուր համատեղ սեփականության դեպքում համասեփականատերերի բաժնեմասերը դիտարկվում են հավասար չափերով) համապատասխան մակերեսը փոքր է 20 քառակուսի մետրից):*

Պաշտպանը ողջունում է կատարված փոփոխությունները՝ այնուամենայնիվ, հարկ է համարում նկատել, որ 2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ շարունակվել են ստացվել դիմում-բողոքներ, որոնց ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ գործնականում հանդիպում են

դեպքեր, երբ անձին բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ բնակվելու համար նախատեսված անշարժ գույքի՝ 20 քառակուսի մետրից փոքր բաժնեմասի տարածքում բնակվում են (պետք է բնակվեն) մեկից ավելի անձինք կամ նշված անձինք օբյեկտիվ հնարավորություն չունեն բնակություն հաստատել այնտեղ: Նշվածի հաշվառմամբ՝ հարկ է արձանագրել, որ ոլորտին վերաբերող իրավակարգավորումները պետք է շարունակաբար կատարելագործվեն:

Հաշվետու տարում Պաշտպանին ներկայացվել են նաև բողոքներ այն մասին, որ անձինք, փաստացի լինելով բռնի տեղահանված, զրկվել են Կառավարության մի շարք որոշումներով հաստատված միջոցառումների շրջանակներում տրամադրվող աջակցություններից օգտվելու հնարավորությունից՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ սահմանված դիմում ներկայացնելու ժամկետները բաց թողնելու պատճառով:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ անչափահաս դստեր հետ 2023 թվականի սեպտեմբերի 30-ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել են Հայաստան: Հավելել է, որ դստեր առողջական խնդիրներով պայմանավորված՝ Գորիսում տեղակայված հումանիտար կայան չեն ներկայացել (չեն հաշվառվել), այլ միանգամից մեկնել են Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաք: Հավելել է, որ երեխայի ապաքինումից անմիջապես հետո հաշվառման նպատակով դիմել է Չարենցավանի համայնքապետարան:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման շրջանակում տրամադրվող միանվագ դրամական սոցիալական աջակցությունը չի ստացել, ուստի պարզաբանման նպատակով դիմել է ՄՍԾ Չարենցավանի տարածքային կենտրոն: Ըստ պնդման՝ Ծառայության աշխատակիցը տեղեկացրել է, որ աջակցության տրամադրումը մերժվել է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր տվյալներն առկա չեն ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից տրամադրած՝ բռնի տեղահանվածների տվյալներում, ուստի առաջարկվել է դիմել Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: Հավելել է, որ 2023 թվականի դեկտեմբերի 1-ին գրավոր դիմում է ներկայացրել Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, որին ի պատասխան հայտնել են, որ հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և փոխանցված տեղեկատվությունը՝ ինքը և դուստրը 2023 թվականի դեկտեմբերի 8-ին հաշվառվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հաշվառման տեղեկատվական համակարգում:

Նշել է նաև, որ պատասխանը ստանալուց անմիջապես հետո դիմել է ՄՍԾ Չարենցավանի տարածքային կենտրոն, սակայն արդյունքի չի հասել և կրկին առաջարկվել է մոտենալ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: Հավելել է, որ ծառայությունն էլ իր հերթին ուղղորդել է խնդրի կարգավորման նպատակով դիմել ՄՍԾ:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ հաջորդիվ բնակության է տեղափոխվել Գեղարքունիքի մարզ: Այս անգամ սոցիալական աջակցության տրամադրման նպատակով դիմել է ՄՍԾ Ճամբարակի տարածքային կենտրոն, որտեղից աշխատակիցը կրկին տեղեկացրել է, որ իր տվյալներն առկա չեն բռնի տեղահանվածների ցուցակներում, ուստի վերջինս ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման շահառու չի կարող հանդիսանալ:

Հավելել է, որ ավելի ուշ Ծառայությունից տեղեկացել է, որ միանվագ դրամական աջակցություն նշանակելու և վճարման ցուցակ ընդգրկելու համար դիմում ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանված եղել 2024 թվականի հունվարի 31-ը, որը վարչարարական քաշքշուկների պատճառով ինքը բաց է թողել:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ վերջնաժամկետի առկայության վերաբերյալ տեղեկատվության չի տիրապետել, միևնույն ժամանակ, նշել է, որ մինչև 2024 թվականի հունվարի 31-ը բազմաթիվ անգամ այցելել է ՄՍԾ, սակայն այդ մասին իրեն չեն իրազեկել:

Հավելել է, որ հաջորդիվ դիմել է նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող աջակցությունը ստանալու համար, սակայն մերժվել է՝ իր տվյալները ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված միջոցառման շահառուների կամ Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող ԼՂ բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում առկա չլինելու հիմնավորմամբ:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որին ի պատասխան ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ բողոք ներկայացրած անձն իր և անչափահաս երեխայի համար, վերոնշյալ որոշման թիվ 2 հավելվածի 26-րդ կետով սահմանված կարգով, մինչև 2024 թվականի հունվարի 31-ը ներառյալ՝ Ծառայություն դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր չի ներկայացրել: Ըստ այդմ, 100 000 ՀՀ դրամ միանվագ դրամական սոցիալական աջակցության միջոցառման շրջանակում վերջիններս չեն կարող հանդիսանալ շահառու:

Ըստ նախարարությունից ստացված պարզաբանման՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառման շրջանակում բողոք ներկայացրած անձի կողմից մուտքագրված առցանց դիմումները մերժվել են՝ համաձայն ՀՀ կառավարության 12.10.2023 թվականի թիվ 1763-Լ որոշման թիվ 2 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում իր ընտանիքը տեղահանվել է Հայաստան և բնակություն հաստատել Սյունիքի մարզի Գորիս համայնքի Քարահունջ բնակավայրում:

Հավելել է, որ 2019-2021 թվականներին ժամկետային զինվորական ծառայություն է անցել Ջրականում և զինվորական ծառայության ավարտից հետո՝ 2021 թվականի հուլիսի 1-ին, հաշվառվել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում:

Բողոք ներկայացրած անձը հայտնել է նաև, որ ժամկետային զինվորական ծառայության ավարտից հետո տեղափոխվել է Հայաստան, ապա 2021 թվականին վերադարձել է Լեռնային Ղարաբաղ և նույն թվականի դեկտեմբերի 20-ին սահմանված կարգով պայմանագրային զինծառայության է անցել ԼՂ ՊԲ N զորամասում: Բողոքի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի շրջափակման ժամանակահատվածում՝ շուրջ մեկ տարի, այնտեղ գտնվել է պայմանագրային զինվորական ծառայության մեջ (նշվածը հավաստվում է մի շարք փաստաթղթերով), որով պայմանավորված՝ Հայաստան վերադառնալու հնարավորություն չի ունեցել:

Վերջինիս տեղեկացմամբ՝ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով բռնի տեղահանվել է Հայաստան և անմիջապես հաշվառվել Գորիսում տեղակայված հումանիտար կայանում:

Հայտնել է, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման շրջանակում տրամադրվող միանվագ դրամական սոցիալական աջակցությունը ստանալու նպատակով 2023 թվականի նոյեմբերի 12-ին առցանց եղանակով դիմում է ներկայացրել Ծառայություն, սակայն որևէ պատասխան չի ստացել: Նշվածով պայմանավորված՝ այցելել է ՄՍԾ Գորիսի տարածքային կենտրոն, որտեղ աշխատակիցներն իրեն տեղեկացրել են, որ սոցիալական աջակցությունը որոշ ժամանակ հետո կտրամադրվի, ուստի առաջարկել են սպասել:

Հավելել է, որ տևական ժամանակ սպասելուց հետո 2024 թվականի մարտ ամսին գրավոր դիմում է հասցեագրել Ծառայություն, որին ի պատասխան՝ հայտնել են, որ դիմումը ներկայացվել է 2024 թվականի հունվարի 31-ից հետո, հետևաբար այն ենթակա չէ բավարարման:

Ըստ բողոքը ներկայացրած անձի՝ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու նպատակով կրկին այցելել է նաև Ծառայության տարածքային կենտրոն, որտեղից պարզաբանել են, որ իր տվյալներն առկա են եղել Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում, հետևաբար, ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման շահառու չի ճանաչվել:

Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ վերոնշյալով պայմանավորված՝ դիմել է ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն՝ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով բռնի տեղահանված անձ հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հաջորդիվ, ստացված տեղեկատվությունը ներկայացրել է ՄՍԾ, որին ի պատասխան՝ կրկին տրամադրվել է նույնաբովանդակ պատասխան՝ դիմում ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետը բաց թողնված լինելու վերաբերյալ:

Հավելել է, որ 2024 թվականի ապրիլ ամսին կրկին դիմում է ներկայացրել ՄՍԾ, որի շրջանակում նշանակվել և վճարվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ նախատեսված դրամական աջակցությունը, քանի որ վերջինիս տվյալներն առկա են եղել Օպերատիվ շտաբի տրամադրած 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշման շրջանակում տրամադրվող 100 000 ՀՀ դրամ միանվագ դրամական աջակցության, ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1957-Լ որոշմամբ նախատեսված դրամական աջակցությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ նախատեսված դրամական աջակցությունը 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի մարտ ամիսները ներառյալ՝ ստանալու հարցերում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որին ի պատասխան ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ բողոք ներկայացրած անձի տվյալները չեն ընդգրկվել 100 000 ՀՀ դրամ միանվագ դրամական աջակցության

վճարման ցուցակներում՝ Օպերատիվ շտաբի տրամադրած տեղեկատվության հիմքով (Լեռնային Ղարաբաղի այն քաղաքացիների տվյալները ովքեր 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ գտնվել են Հայաստանի Հանրապետությունում): Նշվել է նաև, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի համաձայն՝ եթե չափահաս շահառուի տվյալները չեն ներառվել վճարման ցուցակ, անհրաժեշտ էր միանվագ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու համար գրավոր դիմել Ծառայություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով՝ https://e-request.am/ կայքի միջոցով՝ ***մինչև 2024 թվականի հունվարի 31-ը ներառյալ՝*** դիմումին կցելով համապատասխան հիմքերը (հիմնավորող փաստաթղթերը): Գրությամբ նաև հավելել են, որ համաձայն Ծառայության տրամադրած տեղեկատվության, բողոք ներկայացրած անձի անվամբ մինչև 2024 թվականի հունվարի 31-ը ներառյալ՝ Ծառայություն դիմում չի ներկայացվել:

Պատասխան գրության համաձայն՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շրջանակում բողոք ներկայացրած անձի անվամբ առցանց դիմում մուտքագրվել է 2024 թվականի ապրիլի 18-ին, որից հետո վերջինիս սոցիալական աջակցության գումարները փոխանցվել են համապատասխան բանկ:

Հավելել են, որ 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի մարտը ներառյալ, ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շրջանակում, բողոք ներկայացրած անձին ամսական դրամական աջակցությունը ենթակա չէ վճարման, քանի որ նշված որոշմամբ սահմանված շահառու չհանդիսացող անձանց այն տրամադրվել է 2024 թվականի ապրիլից՝ համաձայն ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 28-ի թիվ 447-Լ որոշման պահանջների:

Հարկ է նկատել, որ բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել նաև ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, որին ի պատասխան տեղեկացվել է, որ բողոք ներկայացրած անձի տվյալները ***2023 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ առկա են եղել*** Ծառայության կողմից վարվող բռնի տեղահանված անձանց տվյալների բազայում:

Փաստորեն, խնդրո առարկա դեպքերում անձինք, ***փաստացի*** լինելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, զրկվել են Կառավարության մի շարք որոշումներով տրամադրվող սոցիալական աջակցության միջոցառումներից օգտվելու հնարավորությունից՝ դրանցով սահմանված ժամկետները բաց թողնելու հիմնավորմամբ: Ընդ որում, կարևոր է ընդգծել, որ քննարկվող դեպքերում ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ հաստատված միանվագ դրամական աջակցության միջոցառման շահառու չճանաչված անձինք զրկվել են նաև Կառավարության մյուս որոշումներով (2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ և 2023 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1957-Լ որոշումներ) նախատեսված սոցիալական աջակցության ծրագրերից ամբողջ ծավալով օգտվելու հնարավորությունից:

2024 թվականին Պաշտպանի աշխատակազմի կատարած մշտադիտարկումների և անհատական բողոքի ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել Ստեփանակերտի բենզալցակայանում 2023 թվականի սեպտեմբերի 25-ին

տեղի ունեցած պայթյունի հետևանքով տուժած անձանց համար սոցիալական աջակցության առանձին ծրագիր իրականացնելու անհրաժեշտության խնդիր:

Այսպես, Պաշտպանին ներկայացված խմբային դիմումով անձինք իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 2082-Լ որոշմամբ կարգավորվել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության տրամադրման (նշանակելու և վճարելու) հետ կապված հարաբերությունները, սակայն հիշյալ որոշումը 2023 թվականի սեպտեմբերի 30-ին ուժը կորցրած է ճանաչվել:

Հավելել են, որ վերը նշված որոշման շահառուների համեմատությամբ գտնվում են անհավասար պայմաններում: Խնդրել են Պաշտպանի աջակցությունը 2023 թվականի սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտի բենզալցակայանում տեղի ունեցած պայթյունի հետևանքով տուժած անձանց սոցիալական աջակցություն տրամադրելու հարցում:

Հաշվի առնելով բարձրացված հարցի կարևորությունը՝ Պաշտպանը նախարարություն հասցեագրված գրությամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն, թե արդյո՞ք նախարարությունը նախատեսում է իրականացնել հիշյալ պայթյունի հետևանքով տուժած անձանց սոցիալական աջակցության տրամադրման ծրագիր: Դրական պատասխանի դեպքում խնդրել է տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ո՞ր փուլում է գտնվում նախագիծը և ի՞նչ իրավակարգավորումներ են նախատեսվում: Բացասական պատասխանի դեպքում խնդրել է քննարկման առարկա դարձնել նշված անձանց համար սոցիալական աջակցության ծրագիր մշակելու հնարավորության հարցը:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ նախարարությունը տեղեկացրել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, անհայտ կորածների ընտանիքներին, ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած անձանց, այդ թվում՝ Ստեփանակերտի բենզալցակայանում 2023 թվականի սեպտեմբերի 25-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով տուժած անձանց համար սոցիալական աջակցության առանձին ծրագրի մշակման հարցը դեռևս քննարկվում է: Հայտնել է նաև, որ նախարարությունը զուգահեռ իրականացնում է նաև շահառուների շրջանակի հստակեցման հետ կապված տեղեկատվության ստացման աշխատանքներ:

Վերոհիշյալ անձանց համար սոցիալական աջակցության ծրագրի մշակման ընթացքի կամ հնարավոր արդյունքների, ինչպես նաև ծրագրի շահառուների շրջանակի հստակեցման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Պաշտպանը կրկին գրություն է հասցեագրել նախարարություն, որին ի պատասխան տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2024 թվականի օգոստոսի 21-ին նախարարությունում նախարարի տեղակալի մասնակցությամբ տեղի է ունեցել հանդիպում «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ևս քննարկվել են առանձին սոցիալական աջակցության ծրագրեր իրականացնելու հետ կապված հարցերը:

Նշվել է նաև, որ հանդիպման ընթացքում կազմակերպության ներկայացուցիչները հայտնել են, որ տուժած ընտանիքների առանձնահատուկ կարիքների բավարարման հրատապություն ամենայն հավանականությամբ առկա է եղել փետրվար ամսին, և անհրաժեշտություն կա լրացուցիչ դիտարկելու, թե արդյո՞ք նշված կարիքները շարունակում են մնալ: Նախարարության ներկայացուցիչները տեղեկացրել են, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքները, բացի շարունակական դրամական աջակցությունից, ունեն նաև արտոնյալ պայմաններով առողջապահական և կրթական ծառայությունների հասանելիություն: Միաժամանակ, առաջարկել են ընտանիքների համաձայնությամբ տուժող անձանց և ընտանիքների տվյալները տրամադրել նախարարությանը՝ դեպքի վարման շրջանակներում համալիր կարիքների գնահատման և անհատական աջակցությունների ծրագրի մշակման նպատակով:

Այսպիսով, քննարկման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն այն մասին, որ կազմակերպությունը նախարարությանը տրամադրի կազմակերպություն դիմած տուժող անձանց տվյալները՝ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջոցով սոցիալական կարիքների համալիր գնահատում իրականացնելու և այդ կարիքներին համապատասխան սոցիալական աջակցության գործող և հասանելի ծրագրերում ընդգրկելու նպատակով:

Պաշտպանի հերթական հարցմանն ի պատասխան՝ նախարարությունը տեղեկացրել է, որ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից նախարարությանը տրամադրված՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտում բենզալցակայանի պայթյունի հետևանքով տուժած 21 և այլ աղբյուրներից ևս հավաքագրված շուրջ 60 անձանց տվյալները ներկայացվել են Միասնական սոցիալական ծառայություն ընտանիքների համալիր գնահատում իրականացնելու նպատակով:

Ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ այս պահին իրականացված է 21 անձի (ընտանիքի) համալիր գնահատումը՝ Յունիսեֆի և նախարարության հետ համագործակցությամբ իրականցվող e-քարտերի (էլեկտրոնային դրամապանակի) փորձնական ծրագրում ընդգրկելու նպատակով: Գնահատումների արդյունքում 18 ընտանիքներ ընդգրկվել են աջակցության ծրագրերում և ստացել են ամանորյա քարտեր, որից

- 11 ընտանիքներ ստացել են նաև հագուստի և կոշիկի քարտեր,
- 12 ընտանիքներ ստացել են նաև առողջապահական քարտեր,
- 12 ընտանիքներ ստացել են նաև հարմարավետ կենցաղի քարտեր,
- 1 ընտանիք ստացել է նաև մանկական խնամքի քարտ:

Միջինում ընտանիքները e-քարտերի ծրագրի շրջանակներում ստանում են շուրջ 150 000 ՀՀ դրամի նպատակային գնումների հնարավորություն:

Միաժամանակ, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ պայթյունից տուժած անձանց կամ նրանց ընտանիքների համար առանձին ծրագիր իրականացնելու ուղղությամբ նախարարությունում քննարկումներ չեն իրականացվում՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ անձինք իրենց կարիքներին համապատասխան կարող են ընդգրկվել սոցիալական աջակցության գործող ծրագրերում, ինչպես նաև շարունակել օգտվել արտոնյալ պայմաններով առողջապահական և կրթական ծառայությունների հասանելիության հնարավորություններից:

Պաշտպանը ողջունում է նախարարության ձեռնարկած քայլերը, այնուամենայնիվ արձանագրում, որ անհրաժեշտ է կատարել պայթյունի հետևանքով տուժած ընտանիքների կարիքների շարունակական գնահատում և ըստ անհրաժեշտության քննարկման առարկա դարձնել հասցեական և նպատակային սոցիալական աջակցության տրամադրման հարցը:

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվում են նաև այլ բողոքներ *(օրինակ՝ ԼՂ-ում բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց Հայաստան տեղահանվելուց հետո դրամական աջակցության վճարման դադարեցման վերաբերյալ)*, որոնք գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական երաշխիքների շարունակական բարելավման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու տեսանկյունից անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և ներդնել գործուն իրավական կառուցակարգեր՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող, սակայն Օպերատիվ շտաբի ցուցակներում չընդգրկված անձանց ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շահառու դարձնելու նպատակով,***
- ✓ ***սոցիալական աջակցության տրամադրման դիմումները քննարկելիս և որոշում կայացնելիս հաշվի առնել բնակարանում բնակվելու անձանց, այդ թվում՝ երեխաների իրական հնարավորությունը: Ընդ որում, նմանօրինակ դեպքերում անհրաժեշտ է ոչ միայն հաշվի առնել բնակվելու փաստացի հնարավորությունը և լսել երեխաների կարծիքը, այլ նաև առաջնորդվել երեխայի լավագույն շահով,***
- ✓ ***քննարկման առարկա դարձնել սոցիալական աջակցության տրամադրման հնարավորությունն ու համապատասխան կառուցակարգերի մշակումը՝ հիմք ընդունելով ոչ թե անձի՝ իրեն բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունենալու հանգամանքը կամ դրա չափը (օրինակ, երբ անշարժ գույքի մակերեսը մեծ է 20 քառակուսի մետրից), այլ սեփականության իրավունքից բխող տիրապետման և օգտագործման իրավազորություններն իրացնելու փաստացի հնարավորությունը և այն հանգամանքը, թե քանի՞ անձ է բնակվում համապատասխան բաժնեմասի տարածքում՝ նկատի ունենալով, օրինակ, յուրաքանչյուր բնակվող անձի տեսանկյունից բնակվելու համար նախատեսված տարածքի նվազագույն ու բավարար չափերը,***
- ✓ ***սոցիալական աջակցության տրամադրման դիմումների ուսումնասիրության ընթացքում պատշաճ քննարկման առարկա դարձնել անձանց կողմից ներկայացված հանգամանքները (օրինակ՝ այն հանգամանքը, որ ամուսնության ընթացքում ձեռք բերած գույքը համարվում է ամուսինների համատեղ սեփականությունը) և այդ համատեքստում կայացնել հիմնավորված, պատճառաբանված և թիրախային որոշումներ,***

✓ ***վերոգրյալ և նմանօրինակ այլ հանգամանքների լույսի ներքո քննարկման առարկա դարձնել Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ սահմանված դիմում ներկայացնելու ժամկետը վերանայելու (երկարաձգելու), այն հարգելի համարելու կառուցակարգ նախատեսելու հնարավորության հարցերը, այդ թվում՝ Կառավարության այլ որոշումներով տրամադրվող սոցիալական աջակցության միջոցառումներից ամբողջ ծավալով օգտվելու համար պայմաններ ստեղծելու նպատակով:***

2. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրներ

2024 թվականի ընթացքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հետ կապված հարցերը շարունակել են մնալ Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Տարեկան հաղորդման շրջանակներում երեխաներին և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետությունում առկա բոլոր համակարգային խնդիրները վերաբերելի են նաև բռնի տեղահանված անձանց իրավունքների ապահովմանը: Այդ խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է հաղորդման այլ վերաբերելի հատվածներում:

Արձանագրելով պետության կողմից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցները՝ Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է, որ դեռևս շարունակում են արդիական մնալ ադրբեջանական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված յուրաքանչյուր երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցության ապահովման ու նրանց ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացումն երաշխավորելու հետ կապված խնդիրները: Շարունակել են արդիական մնալ նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի ապահովման, ֆիզիկական մատչելիության պայմաններին համապատասխանող կացարանների տրամադրման, սոցիալական աջակցության ծրագրերի մատչելիության և դրանց վերաբերյալ իրազեկվածության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, ֆունկցիոնալության գնահատման գործընթացի ապահովման և հոգեբանական աջակցության տրամադրման հետ կապված բազմիցս բարձրաձայնված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***շարունակական միջոցառումներ իրականացնել՝ երաշխավորելու ադրբեջանական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված յուրաքանչյուր երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցության ապահովման, ինչպես նաև նրանց ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելու ուղղությամբ:***

✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման և խթանման ուղղությամբ:***

ԲԱԺԻՆ 18. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի առաջնային ուշադրության կենտրոնում են եղել սահմանամերձ բնակավայրերում ապրող անձանց իրավունքների պաշտպանության հարցերը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականին հատկապես կարևորել է սահմանամերձ բնակավայրերի բնակիչների խաղաղ կյանքի, բնակչության՝ առանց վախի ու լարվածության կենսավարման հարցերը:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացվել են, ինչպես նաև շարունակվել են քննության առարկա մնալ 2023 թվականի ընթացքում ստացված բազմաթիվ դիմում-բողոքներ և ահազանգեր՝ կապված Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կյանքի, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության, սեփականության և այլ հիմնարար իրավունքների ապահովման հետ: Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանամերձ բնակավայրերում տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի խախտմանն առնչվող խնդիրները, որոնք արձանագրվել են դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ և արտահերթ զեկույցներում, մեծ մասամբ պահպանվել են և շարունակում են մնալ չլուծված[758]: Պաշտպանի աշխատակազմում ստացված բոլոր բողոքների և ահազանգերի առնչությամբ նախաձեռնվել են ուսումնասիրություններ, իրականացվել է դրանցում բարձրացված հարցերի քննարկում:

Ներկայացվածի հետ մեկտեղ, Պաշտպանը և ՄԻՊ ներկայացուցիչները սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կողմից բարձրացված հարցերին անձամբ ծանոթանալու և վերջիններիս իրավունքների ապահովմանն ուղղված Պաշտպանի լիազորություններն իրականացնելու նպատակով այցելել են Տավուշի մարզի Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Բերքաբեր, Ոսկեպար, Ոսկեվան, Կիրանց բնակավայրեր[759], Սյունիքի մարզի՝ Կապան քաղաք, Աճանան և Սյունիք

[758] Պաշտպանի տարեկան հաղորդումը և արտահերթ զեկույցներն առավել մանրամասն հասանելի են https://ombuds.am/am/site/SpecialReports հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[759]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2913 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

բնակավայրեր, ինչպես նաև Ներքին Հանդ սահմանամերձ բնակավայր[760], Գեղարքունիքի մարզ[761]:

Սահմանամերձ բնակավայրերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցերը Պաշտպանը տարբեր ձևաչափերով պարբերաբար ներկայացրել է նաև միջազգային գործընկերներին, նրանց հետ համատեղ իրականացվել են նաև այցեր տարբեր մարզեր: Օրինակ, Պաշտպան Անահիտ Մանասյանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը 2024թ. օգոստոսի 5-ին համատեղ այց են իրականացրել Տավուշի մարզ: Այցի շրջանակում, ի թիվս այլնի, քննարկվել են սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցեր: Պաշտպանը վստահություն է հայտնել, որ համատեղ ջանքերով Տավուշի մարզում հնարավոր կլինի շարունակաբար իրականացնել տարատեսակ ծրագրեր: Այցի շրջանակում Պաշտպանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողն այցելել են Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, հանդիպում ունեցել տարբեր հասարակական կազմակերպությունների կին ներկայացուցիչների և շահառուների հետ, ինչպես նաև այցելել են «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի այլընտրանքային խնամք ստացող երեխաներին[762]: Փաստահավաք աշխատանքների արդյունքում Պաշտպանը բազմաթիվ առաջարկություններ է ներկայացրել ՀՀ պետական իրավասու մարմիններին սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների պաշտպանության համակարգի լավարկման վերաբերյալ:

Քննարկվող ժամանակահատվածում Պաշտպանը սահմանամերձ բնակավայրերում բնակվող անձանց իրավունքների առնչությամբ արձանագրած խնդիրներն ու բոլոր գործընթացների շրջանակներում մարդու իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը ներկայացրել է նաև օտարերկրյա պատվիրակությունների, դեսպանությունների, միջազգային կազմակերպությունների հետ հանդիպումների ու աշխատանքային այցերի ընթացքում, օրինակ՝

➢ Նիդերլանդների Թագավորության Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի պատվիրակության հետ հանդիպման ընթացքում[763],

---

[760]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2985 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[761]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3082 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[762]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3078 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[763]Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3057 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

➢ Ֆրանսիայի Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Անն-Լորանս Պետելի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ընթացքում[764],

➢ Ստրասբուրգ կատարած աշխատանքային այցի շրջանակներում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների նորընտիր հանձնակատար Մայքլ Օ'Ֆլահերթիի հետ հանդիպման ընթացքում[765],

➢ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեհդի Սոբհանիի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ընթացքում[766],

➢ Եվրոպայի խորհրդի քաղաքական ու արտաքին հարաբերությունների հարցերով տնօրեն Միրոսլավ Պապայի հետ հանդիպման ընթացքում[767],

➢ Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության (SIDA) ներկայացուցիչ, ծրագրերի գլխավոր մասնագետ Քրիստին Օլսոնի և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Մաքսիմ Լոնգանգեի հետ հանդիպման[768] և այլ հանդիպումների ընթացքում:

Սահմանամերձ բնակավայրեր կատարված այցերի ընթացքում արձանագրված խնդիրների մասին Պաշտպանը խոսել է նաև տեղական և միջազգային զանգվածային լրատվության միջոցներին տրված հարցազրույցներում[769]:

1. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կյանքի, խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքների խախտմանն առնչվող խնդիրներ

2024 թվականի փետրվարի 13-ին՝ ժամը 05:30-ից սկսած, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հրաձգային զենքերից կրակ են բացել Սյունիքի մարզի Ներքին Հանդի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով հայկական կողմն ունեցել է 2 զոհ և վիրավորներ[770]:

Սյունիքի մարզի Ներքին Հանդի ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերի գործողությունների հետևանքով մարդու իրավունքների խախտումներին վերաբերելի հարցերի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմում սկսվել է ուսումնասիրություն, Պաշտպանի աշխատակազմ բնակիչների կողմից ստացվել են ահազանգեր: Արձանագրվել է, որ ադրբեջանական զինված ուժերի կրակի հետևանքով խաթարվել են քաղաքացիական բնակչության կյանքի, անվտանգ միջավայրում ապրելու, կրթության և այլ հիմնարար իրավունքները: ՄԻՊ աշխատակազմին բնակիչները

---

[764]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2898 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[765] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3048 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[766] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2926 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[767] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2907 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[768] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2857 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[769]Հասանելի է, օրինակ, https://ombuds.am/am/site/InterviewsView/1110, https://ombuds.am/am/site/ViewNews/2937 հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[770]Հասանելի է https://armlur.am/1340616/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պատմել են, որ կրակոցները պարզ լսելի են եղել, ինչի հետևանքով իրենք ահաբեկվել են, հայտնվել են անորոշության մեջ, տագնապային վիճակում[771]:

Ադրբեջանական զինված ուժերի համանման գործողություններ արձանագրվել են նաև ՀՀ այլ բնակավայրերի ուղղությամբ: Ըստ ստացված տեղեկությունների՝ Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները 2024 թվականի ապրիլի 6-7-ն ընկած ժամանակահատվածում հրաձգային զենքերից կրակ են բացել Խոզնավարի (Սյունիքի մարզ), Արավուսի (Սյունիքի մարզ), Սոթքի (Գեղարքունիքի մարզ) հատվածի ՀՀ ԶՈՒ դիրքերի ուղղությամբ[772]:

2024 թվականի ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումների կողմից սահմանային մի շարք ուղղություններով արձակված կրակոցների պատճառով Տավուշի մարզի մի շարք գյուղերում վնասվել են քաղաքացիական ենթակառուցվածքներ՝ բնակիչների տներ, գերեզմանաքարեր և այլն: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի ներկայացուցիչները փաստահավաք աշխատանքներ իրականացնելու նպատակով այցելել են Տավուշի մարզի Մովսես և Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրեր, հանդիպել բնակիչների և վարչական ղեկավարների հետ: Բնակիչներից մեկն, օրինակ, պատմել է, որ ապրիլի 5-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, ադրբեջանական զինծառայողները կրակ են արձակել, ինչի հետևանքով վնասվել է իր տան դարպասը: Նշել է, որ այդ ժամանակ եղել են քնած, կրակոցների ձայնից վախեցած արթնացել են: ՄԻՊ ներկայացուցիչները տեղում ևս արձանագրել են, որ բնակչի տան դարպասը կրակոցից ծակվել ու վնասվել է: Համայնքի մի շարք այլ բնակիչներ ևս ներկայացրել են ադրբեջանական կրակոցների հետևանքով իրենց կրած վնասները. ջարդվել ու վնասվել են տների կտուրները, պատերը, ավտոմեքենաները և այլն:

[771] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2862 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[772] Հասանելի է https://mil.am/hy/news/12076 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում մարդու իրավունքների վիճակին տեղում ծանոթանալու, բնակիչների հետ հանդիպելու և փաստահավաք աշխատանքներ իրականացնելու նպատակով Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները 2024 թվականի ապրիլի 11-ին և 12-ին այցելել են Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Բերքաբեր, Ոսկեպար, Ոսկեվան, Կիրանց բնակավայրեր[773]:

Հանդիպումների և առանձնազրույցների ընթացքում բնակիչները և վարչական ղեկավարները Պաշտպանին մտահոգություններ են հայտնել առ այն, որ ադրբեջանական զինծառայողների գործողությունների պատճառով խախտվում են իրենց կյանքի ու անվտանգության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, կրթության, սեփականության և այլ հիմնարար իրավունքներ, իրենք զրկվում են անվտանգ պայմաններում ընտանիքների եկամտի աղբյուր անասնապահությամբ զբաղվելու, արոտավայրերն օգտագործելու հնարավորությունից: Բացի այդ, սահմանային բնակավայրերի բնակիչները կոնկրետ դեպքերի և հանգամանքների վկայակոչմամբ ներկայացրել են սահմանազատման և սահմանագծման գործընթացում իրենց մտահոգող բազմաթիվ այլ խնդիրներ (օրինակ, ճանապարհներից անխոչընդոտ և անվտանգ օգտվելու, նոր ճանապարհներ կառուցելու, կենսական նշանակության ենթակառուցվածքների անվտանգության, համայնքները դիտարկման ու թիրախավորման ներքո հայտնվելու և այլնի հետ կապված):

Սահմանամերձ բոլոր բնակավայրերում մարդկանց բարձրացրած մտահոգությունները, առաջարկությունները, փաստահավաք աշխատանքներով արձանագրված խնդիրները Պաշտպանը հասցեագրել է իրավասու պետական մարմիններին՝ հատուկ ընդգծելով, որ բոլոր գործընթացներում պետության անվտանգության երաշխավորման հետ մեկտեղ պետք է առաջնային լինեն մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի երաշխավորումն ու մարդու իրավունքների գերակայության հիմնարար սկզբունքը:

Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները 2024 թվականի մայիսի 23-ից 25-ն այցեր են իրականացրել նաև Սյունիքի մարզ, այդ թվում՝ Ներքին Հանդ սահմանամերձ բնակավայր[774]: Ներքին Հանդի բնակիչների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են մարդկանց իրավունքներին վերաբերելի և հրատապ լուծում պահանջող մի շարք հարցեր: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել բնակիչների զբաղվածության

[773]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2913 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[774] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2985 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ապահովման, նոր կառուցվող ջրագծի, տների կտուրների վերանորոգման և այլ հարցերի: Բնակիչները շարունակել են իրենց մտահոգությունը հայտնել առ այն, որ ադրբեջանական զինծառայողների ներկայության պատճառով չեն կարողանում այցելել գյուղի գերեզմանատուն, հասանելիություն չունեն նաև եկեղեցուն: Հավելել են, որ խնդիրը պարբերաբար ներկայացնում են պետական մարմիններին և գյուղ այցելող միջազգային կառույցների ներկայացուցիչներին:

Վերոնշյալ հարցին անդրադարձել է նաև Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը՝ արձանագրելով Ներքին Հանդի բնակիչների անվտանգության ու խաղաղ կյանքով ապրելու իրավունքի իրացման խնդիրները և ընդգծելով բնակիչների վախի զգացողությունն ու հույզերը՝ պայմանավորված նաև հարազատների գերեզմաններ այցելելու հնարավորության բացակայությամբ[775]:

Սահմանամերձ տարբեր բնակավայրերում (Տեղ, Վերին Շորժա, Կութ, Նորաբակ, Սոթք, Կուտական, Երասխ և այլն) արձանագրված մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրներին Պաշտպանը մանրամասն անդրադարձել է ինչպես նախորդ տարեկան հաղորդմամբ, այնպես էլ արտահերթ զեկույցներում[776]՝ միաժամանակ պետական իրավասու մարմինների ուշադրությունը հրավիրելով առկա խնդիրների և դրանց լուծման մեխանիզմների վրա:

Փոխհամագործակցության ընթացքում պետական մարմինները ներկայացրել են կատարված աշխատանքները, այդ թվում՝ այն աշխատանքները, որոնք ուղղված են եղել սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությունն ապահովելուն: Մասնավորապես, ներկայացվել են կատարված իրազեկմանն ուղղված աշխատանքները, քաղաքացիական պաշտպանության միջոցառումները, քաղաքացիական պաշտպանության պլանի մշակման և տարածման աշխատանքները, ինչպես նաև բնակիչների անվտանգությունն ապահովելուն ուղղված այլ գործողությունները: Չնայած կատարված աշխատանքներին՝ բազմաթիվ խնդիրներ շարունակում են մնալ արդիական և լուծում պահանջող:

Պաշտպանը բազմիցս է ընդգծել մարդու կյանքի, ապահով, խաղաղ և արժանապատիվ ապրելու, անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքների, մարդու անվտանգային իրավունքների պաշտպանությանն ու երաշխավորմանն ուղղված միջազգային իրավական կարգավորումների ու չափորոշիչների պահպանման հրամայականը[777]:

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» 3-րդ հոդված.
Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի (…) իրավունք:

[775] Հասանելի է https://armtimes.com/hy/article/299467 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[776] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 727-730, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf, https://ombuds.am/images/files/76adf8c4ef52d036fab368d87e0bea55.pdf, https://ombuds.am/images/files/4e73af39ae6617df7437605f57eb01cd.pdf հղումներով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[777] Տե՛ս առավել մանրամասն նույն տեղում:

Պաշտպանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները, հստակ արձանագրում է, որ ադրբեջանական զինված ուժերի վերը նշված գործողությունները հակասում են ինչպես մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին ու երաշխիքներին, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 1-ին և 2-րդ հոդվածներով սահմանված՝ անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքին և միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը ձգտելու նպատակին[778]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մասնակցությունը իրենց անվտանգությանն ու իրավունքներին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում՝ վերջիններիս մտահոգությունների հաշվառմամբ,***
- ✓ ***սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար ապահովել իրենց իրավունքների և անվտանգային հարցերի վերաբերյալ կանոնավոր, հստակ և մատչելի հանրային հաղորդակցություն: Կարևոր է մարդկանց հետ պարբերաբար հանդիպումների շրջանակներում թիրախային տեղեկատվության տրամադրումը, որպեսզի բնակիչներն անվտանգային մարտահրավերների հետ մեկտեղ չհայտնվեն նաև տեղեկատվական վակուումում և անորոշության մեջ,***
- ✓ ***պարբերաբար վերանայել ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանները՝ համապատասխանեցնելով դրանք առկա իրավիճակներին,***
- ✓ ***շարունակական դարձնել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը,***
- ✓ ***բարելավել և արդիականացնել քաղաքացիական պաշտպանության կառույցները և համապատասխան ենթակառուցվածքները ,***
- ✓ ***ապահովել բոլոր ենթակառուցվածքների անվտանգությունն ու հասանելիությունը՝ այդ թվում՝ ոչ միայն իրականացնելով ճանապարհների առաջնային վերանորոգում, այլև ապահովելով ճանապարհների անվտանգությունն ու հնարավորինս սեղմ ժամկետներում այլընտրանքային ու անվտանգ ճանապարհների կառուցումը:***

2. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների սեփականության իրավունքի, զբաղվածության ապահովման և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված խնդիրներ

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի իրականացրած փաստահավաք աշխատանքների, ստացված բողոքների և դիմումների ուսումնասիրությունների, ինչպես նաև նախորդող ժամանակահատվածում իրականացրած աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ ադրբեջանական

---

[778] Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75801 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

զինված ուժերի տեղակայումներն ու նրանց ներկայությունը ՀՀ սահմանային բնակավայրերի բնակիչներին կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներում խախտում է մարդկանց սեփականության իրավունքը, առաջացնում զբաղվածությունն ապահովելու և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված խնդիրներ:

1) Դեռևս 2023 թվականին Պաշտպանի կողմից Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում արձանագրվել է բնակիչների՝ ադրբեջանական զինված ուժերի ծառայողների գործողությունների պատճառով իրենց սեփականությունն ազատորեն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հետ կապված խնդիրներ, ընդ որում՝ բարձրացված խնդիրների հիմնական մասը շարունակում են մնալ արդիական: Դրանց Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել 2023թ. տարեկան հաղորդմամբ, ինչպես նաև արտահերթ զեկույցներում[779]:

2) 2024 թվականի ապրիլի 11-ին և 12-ին ՀՀ Տավուշի մարզում ունեցած հանդիպումների ընթացքում[780] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին և աշխատակազմի ներկայացուցիչներին բնակիչների կողմից մտահոգություններ են բարձրացվել գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ զբաղվելու անհնարինության, բնակավայրերն ադրբեջանական զինծառայողների նշանառության և թիրախավորման ներքո հայտնվելու ու դրա արդյունքում բնակիչների բնականոն կյանքը խաթարվելու վերաբերյալ:

3) Մովսես և Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրերի բնակիչների ու վարչական ղեկավարների, ինչպես նաև ադրբեջանական կրակոցների հետևանքով վնասված քաղաքացիական ենթակառուցվածքների սեփականատերերի հետ հանդիպման[781] ընթացքում բնակիչները հայտնել են, որ 2024 թվականի ապրիլի 5-ին ադրբեջանական զինծառայողների կողմից արձակված կրակոցների հետևանքով վնասվել են բնակիչներից մեկի տան դարպասները, բազմաթիվ բնակիչների տների կտուրները, պատերը, գերեզմանատունը, բնակիչների ավտոմեքենաները:

---

[779] Առավել մանրամասն տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 730-733, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf , հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[780] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2913 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[781] Տե՛ս, նույն տեղում:

Մովսես բնակավայրի վարչական ղեկավարը վերոնշյալ խնդրի առնչությամբ հայտնել է, որ գյուղի բնակիչների կրած վնասների փոխհատուցման, այդ թվում՝ գերեզմանաքարերի վերականգնման հարցով դիմել է իրավասու մարմիններին:

Վերը նշված բնակավայրերում նկարագրված հանգամանքները հաստատվել են Պաշտպանի փաստահավաք աշխատանքներով:

Սահմանամերձ բնակավայրերի բնակիչների սեփականության իրավունքի, զբաղվածությունն ապահովելու և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված մի շարք խնդիրներ արձանագրվել են նաև Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում դեռևս նախորդ տարիներին: Ի թիվս այլնի՝ Պաշտպանին ներկայացվել է նաև Սյունիքի և Գեղարքունիքի որոշ բնակավայրեր ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկելու հարցը, որը ևս գտնվել է Պաշտպանի ուշադրության ներքո, հարցը պարբերաբար ներկայացվել է իրավասու պետական մարմիններին, խնդրի առնչությամբ կազմակերպվել են քննարկումներ:

Չնայած պետական մարմինների կատարած մի շարք աշխատանքներին, այդ թվում՝ համայնքներում կյանքի լավարկմանը միտված՝ բազմաթիվ խնդիրներ շարունակում են մնալ չլուծված:

Պետք է նկատի ունենալ, որ սոցիալ-տնտեսական իրավունքների, այդ թվում՝ բավարար կենսամակարդակի ապահովման երաշխիքները ամրագրված են ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերում[782]:

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 25-րդ հոդված, 1-ին մաս.

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:

Պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացված առաջարկներին ի պատասխան՝ Էկոնոմիկայի նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն առ այն, որ գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են մի շարք պետական աջակցության ծրագրեր, որոնց մի մասում սահմանված են արտոնություններ 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տնտեսավարողների համար, մասնավորապես գործում է Հայաստանի

[782] Հարցի առնչությամբ տե՛ս առավել մանրամասն 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 730-733, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թվականների ծրագիրը, Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը, Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիրը, գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր:

Էկոնոմիկայի նախարարության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրված պատասխաններում ներկայացվել են 2024 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները, սակայն Նորաբակ և Կութ բնակավայրերում իրականացված աջակցման ծրագրերի կամ գործողությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չէ: Առկա չէ տեղեկատվություն, թե ինչ գործողություններ են իրականացվել Տավուշում և Սյունիքում բնակիչների՝ ադրբեջանական զինված ուժերի կրակոցներից կրած գույքային վնասները փոխհատուցելու առնչությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների պաշտպանությանն ու երաշխավորմանը միտված համակարգային մոտեցումներ ու լուծումներ՝ երաշխավորելով սեփականության իրավունքի և այլ հիմնարար իրավունքների պաշտպանությունը***
- ✓ ***ապահովել միասնական չափանիշներով սահմանամերձ բնակավայրերի բնակիչներին համարժեք փոխհատուցման տրամադրումը ադրբեջանական վերահսկողության ներքո անցած կամ ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված գործողությունների արդյունքում վնասված գույքերի դիմաց,***
- ✓ ***մշակել և իրացնել պատշաճ և բավարար կառուցակարգեր սահմանամերձ բնակավայրերում բնակիչների տնտեսական գործունեության խթանման և զբաղվածության ապահովման ուղղությամբ՝ շարունակական և առավել թիրախային դարձնելով աջակցման ծրագրերը:***

3. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում երեխաների կրթության իրավունքի ապահովման խնդիրները

2024 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում և տարբեր հարթակներում բարձրացված խնդիրների ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են սահմանամերձ բնակավայրերում կրթության իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ:

Որպես կրթության իրավունքի իրացմանն առնչվող հիմնական խնդիրներ մատնանշվել են սահմանամերձ բնակավայրերի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ադրբեջանական զինված

ուժերի դիտարկման ներքո գտնվելը, ինչպես նաև որոշ սահմանամերձ բնակավայրերում նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների բացակայությունը: Բնակիչները Պաշտպանին մտահոգություններ են հայտնել սահմանազատման և սահմանագծման գործընթացի շրջանակում ուսումնական հաստատությունների անվտանգ պայմաններում գործելու և երեխաների կրթության իրավունքն անխոչընդոտ իրացնելու վերաբերյալ[783]: Այսպիսի մտահոգություններ են հայտնել նաև ուսուցիչները:

Համայնքներում փաստագրված բոլոր տեղեկությունները, մարդկանց մտահոգությունները Պաշտպանը հասցեագրել է իրավասու գերատեսչություններին՝ պահանջելով ցանկացած հարցի լուծում դիտարկելիս հիմքում դնել մարդու իրավունքների պաշտպանության ու երաշխավորման գաղափարը:

Անվտանգ պայմաններում կրթության իրավունքի իրացման հարցի հետ կապված՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացրել է, որ Կիրանց բնակավայրի նորակառույց դպրոցի ամբողջ երկայնքով կառուցվել է երկաթբետոնե պատնեշ:

Այս ամենի հետ մեկտեղ, Պաշտպանը կարևորում է նաև սահմանամերձ բոլոր բնակավայրերի դպրոցների աշակերտների հետ հոգեբանական աշխատանքների, անվտանգային տարաբնույթ հարցերի, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների և իրազեկվածության բարձրացմանը միտված աշխատանքների պարբերական իրականացումը:

Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկատվության՝ Վարդենիս համայնքի սահմանամերձ բնակավայրերի հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացվում են բարոյահոգեբանական վերականգնողական աշխատանքներ, համայնքում գործում են հոգեսոցիալական կարգավորման կենտրոն, որի ծառայություններից անվճար օգտվում են բոլոր ցանկացողները:

Դրական գնահատելով նշված աշխատանքների իրականացումը՝ հարկ է նշել, որ կարևոր է, որ այդպիսի աշխատանքներ իրականացվեն բոլոր համայնքներում, հատկապես՝ սահմանամերձ:

Ներկայացվածից բացի, 2024 թվականի ընթացքում մամուլում բարձրացվել են տարբեր բնակավայրերի՝ նախադպրոցական կամ հանրակրթական հաստատություններ չունենալու, առկա հաստատությունների փակման հարցերը[784]:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Պաշտպանի հարցադրումներին ի պատասխան՝ տեղեկություններ է տրամադրել Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի մի շարք համայնքներում հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության վերաբերյալ:

---

[783]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2913 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[784] Հասանելի է https://168.am/2025/01/22/2156641.html հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Կրթական իրավունքի իրացման իրավական հիմքերին և միջազգային չափորոշիչներին Պաշտպանը բազմիցս է անդրադարձել, այդ թվում՝ 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում[785] :

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 26-րդ հոդված, 1-ին մաս.
Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Առնվազն տարրական և ընդհանուր կրթությունը պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պիտի լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, և բարձրագույն կրթությունը՝ հավասարապես մատչելի բոլորի համար՝ յուրաքանչյուրի ընդունակությունների հիմունքով:

Վերահաստատելով կրթության իրավունքի իրացման կարևորության վերաբերյալ արտահայտված դիրքորոշումները՝ Պաշտպանը շարունակում է մտահոգիչ համարել սահմանամերձ բնակավայրերում նախադպրոցական և հանրակրթական հաստատությունների բացակայության և դրանց թվի կրճատման հիմնահարցը, և գտնում է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել սահմանամերձ բնակավայրերում կրթական հաստատությունների բացման և վերաբացման ուղղությամբ՝ անկախ բնակչության թվաքանակից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

- ✓ ***իրականացնել համապարփակ անվտանգային հարցերի ուսումնասիրություններ ու լրացուցիչ և տեղայնացված միջոցներ ձեռնարկել ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության և թիրախավորման ներքո գտնվող նախադպրոցական և հանրակրթական ուսումնական կենտրոնների անվտանգության ապահովման նպատակով, իրականացնելով քաղաքացիական պաշտպանության հատուկ միջոցառումներ և հանրային իրազեկման արշավներ,***
- ✓ ***շարունակաբար իրականացնել սահմանամերձ բնակավայրերի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների համար բարոյահոգեբանական վերականգնողական աշխատանքներ,***
- ✓ ***սահմանամերձ բնակավայրերում ապահովել նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կառուցման և վերակառուցման աշխատանքները:***

[785] Առավել մանրամասն տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 733-735, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 19. ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից է եղել աղետի գոտու բնակիչների հիմնարար իրավունքների ամբողջ ծավալով երաշխավորումն ու անխոչընդոտ իրացումն ապահովելը:

2024 թվականի մայիսի 25-26-ը Լոռու և Տավուշի մարզերի մի շարք բնակավայրերում տեղացած հորդառատ անձրևների (հեղեղումների) պատճառով առաջացած արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը (այդ թվում՝ Լոռու և Տավուշի մարզային ստորաբաժանումները) աշխատել է արտակարգ ռեժիմով:

Ավելին՝ Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ՝ աշխատակազմն ամենօրյա ռեժիմով իրականացրել է տարատեսակ միջոցառումներ և աշխատանքներ, այդ թվում՝ մշտադիտարկման և փաստահավաք աշխատանքներ՝ ապահովելով արձանագրված խնդիրների օպերատիվ հասցեագրումն ու լուծումը: ՄԻՊ հաստատությունն արդյունավետ համագործակցություն է ունեցել նաև իրավասու պետական մարմինների հետ:

Օրեր անց՝ 2024 թվականի մայիսի 31-ին մեկնարկել է նաև Պաշտպանի այցը Լոռու մարզի աղետի գոտի: Իրավունքների հետ կապված խնդիրներին տեղում ծանոթանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանն աշխատակազմի ուղեկցությամբ շրջայց է իրականացրել հեղեղումներից տուժած բնակավայրեր, առանձնազրույցներ ունեցել ավելի քան 50 բնակիչների հետ (այդ թվում՝ տարհանված ընտանիքների), լսել նրանց կողմից բարձրաձայնված հարցերը: Այցի ընթացքում արձանագրվել են բոլոր խնդիրները, ինչպես նաև հեղեղումների արդյունքում պատճառված վնասները:

Աղետի գոտու բնակիչները, ի թիվս սոցիալական բնույթի հարցերի, բարձրացրել են նաև մի շարք խնդիրներ՝ կապված սեփականության իրավունքի, փաստաթղթերի կորուստի, պատճառված վնասի փոխհատուցման, կրթության իրավունքի հետ: ***Բնակիչները՝ որպես հրատապ լուծում պահանջող հարց, առանձնացրել են փոխհատուցման հետ կապված հարցը:*** *Այս առթիվ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ՝ նշելով, որ այն ունի առաջնահերթ հասցեավորման անհրաժեշտություն՝ անձանց բազմաթիվ հիմնարար իրավունքների պատշաճ իրացումը երաշխավորելու դիտանկյունից*[786]*:*

Այցի ընթացքում Պաշտպանը բնակիչներին հայտնել է, որ բարձրաձայնված մի շարք խնդիրներ արդեն իսկ հասցեավորվել են իրավասու մարմիններին՝ դրանց լուծումներ տալու նպատակով: Հայտնել է նաև, որ փաստահավաք աշխատանքների արդյունքում վերհանված մյուս խնդիրները կամփոփվեն և կուղարկվեն համապատասխան պետական մարմիններին: Պաշտպանը բնակիչներին

[786] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2999 , 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

վստահեցրել է, որ իր իրավասության շրջանակում աջակցելու է բոլոր խնդիրների լուծմանը և մարդկանց իրավունքների պատշաճ իրացմանը:

Նույն օրը Պաշտպանը հեղեղումների հետևանքով վնասված թաղամասեր է այցելել նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի, ինչպես նաև ՀՀ-ում հավատարմագրված ավելի քան 40 դիվանագիտական ներկայացուցիչների հետ:

Պաշտպանն այցելել է նաև Սանահին կայարան թաղամաս և զրուցել բնակիչների հետ: Այցի ընթացքում ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արեն Մկրտչյանը ներկայացրել է այն վնասները, որոնք կրել է բնակավայրը հեղեղումների հետևանքով:

Լոռի այցի շրջանակում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն Ալավերդի քաղաքի Միասնական տեղեկատվական կենտրոնում հանդես է եկել ասուլիսով[787]:

Փաստահավաք աշխատանքների արդյունքում վերհանված խնդիրների քննարկման ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշման նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է իրավասու պետական մարմիններին: Այսպես, օրինակ՝ աղետի գոտու բնակիչներին պատճառված վնասի փոխհատուցման համար սոցիալական աջակցություն տրամադրելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով Պաշտպանը դիմել է Կառավարությանը:

---

[787] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1072, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պատասխան գրությամբ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տրամադրել է պարզաբանում այն մասին, որ ՀՀ ներքին գործերի նախարարության նախաձեռնությամբ մշակվել և 2024 թվականի հուլիսի 4-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով աղետի գոտում ֆիզիկական անձանց պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 1043-Ն որոշումը, որով կարգավորվում են աղետի գոտում ֆիզիկական անձանց բազմաբնակարան շենքի բնակարանին կամ անհատական բնակելի տանը և կենցաղային առաջնային գույքին պատճառված վնասների փոխհատուցման հետ կապված հարաբերությունները: Բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան կորստի դեպքում ֆիզիկական անձին տրամադրվում է փոխհատուցում՝ բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով: Բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան կորստի դեպքում տրամադրվող փոխհատուցման չափի հաշվարկման համար հիմք են ընդունվում քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող կորցրած բնակարանի կամ բնակելի տան ընդհանուր մակերեսը և Կադաստրի կոմիտեի կողմից հրապարակված՝ 2024 թվականի հունիս ամսվա ընթացքում մարզերի համապատասխան քաղաքներում վաճառված բազմաբնակարան շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քառակուսի մետրի ձևավորված շուկայական միջինացված գնի տվյալները, իսկ տվյալների բացակայության դեպքում փոխհատուցման չափի հաշվարկման համար հիմք են ընդունվում անշարժ գույքի հարկով հարկման նպատակով Կադաստրի կոմիտեի կողմից հաշվարկված անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի կազմում ներառված սեփականության իրավունքով գրանցված բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան արժեքը:

Տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, որ բազմաբնակարան շենքի բնակարանի կամ անհատական բնակելի տան բնակելի տարածքին պատճառված վնասի դեպքում ֆիզիկական անձինք վերանորոգման համար ստանում են փոխհատուցում՝ ըստ ազդակիր ճանաչված՝ բնակության համար նախատեսված տարածքի հեղեղված մասի յուրաքանչյուր քառակուսի մետրի, բայց ոչ ավելի 80 քառակուսի մետրից: Եթե ազդակիր ճանաչված ընդհանուր մակերեսը 80 քառակուսի մետրից ավելին է, ապա փոխհատուցման չափի հաշվարկը կատարվում է 80 քառակուսի մետրի հաշվարկով: Յուրաքանչյուր քառակուսի մետրի համար հատուցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի դեպքում՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ.

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան, Փամբակ, Տաշիր, Ստեփանավան, Գյուլագարակ համայնքների և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Բագրատաշեն, Դեբեդավան,

Հաղթանակ, Պտղավան բնակավայրերի և Դիլիջան ու Իջևան համայնքների դեպքում՝ 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

Վերոգրյալի հետ մեկտեղ հայտնել են նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2024 թվականի հուլիսի 4-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքներին սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1033-Լ որոշումը:

Նշված որոշման շրջանակներում միանվագ դրամական օգնության ձևով սոցիալական աջակցություն է տրամադրվում Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով զոհված անձանց ընտանիքներին, ինչպես նաև այն ընտանիքներին, որոնց բնակության համար նախատեսված փաստացի օգտագործած անշարժ գույքը վնասվել է:

Սոցիալական աջակցությունը տրամադրվում է՝

1) զոհված անձանց ընտանիքների դեպքում՝ 1 000 000 դրամի չափով,

2) ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի և ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի դեպքում՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվարկով՝ 60 000 դրամի չափով,

3) ՀՀ Լոռու մարզի Թումանյան, Փամբակ, Տաշիր, Ստեփանավան, Գյուլագարակ համայնքների և Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Արճիս, Բագրատաշեն, Դեբեդավան, Հաղթանակ, Պտղավան բնակավայրերի և Դիլիջան ու Իջևան համայնքների դեպքում՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվարկով՝ 40 000 դրամի չափով:

Հիշյալ որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է Միասնական սոցիալական ծառայությունը: Աջակցությունը ստանալու համար շահառու ընտանիքի անդամներից մեկը, մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ՝ ծառայություն է ներկայացնում (այդ թվում՝ www.e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով) դիմում՝ համաձայն կարգով հաստատված ձևի:

Ըստ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տեղեկատվության՝ վերջինիս կողմից մշակել են մի շարք ծրագրեր, որոնք ներառում են Լոռու և Տավուշի մարզերի գյուղատնտեսական գործունեություն ծավալող, ՓՄՁ և խոշոր հարկատու հանդիսացող տնտեսավարողներին: Ծրագրերի մի մասը սահմանված կարգով շրջանառվում են, իսկ որոշ ծրագրերի իրականացումը պայմանավորված է պաշտոնական տվյալների ամբողջական ստացմամբ և համադրմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ հաստատվել է Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում տնտեսավարողներին աջակցության տրամադրման ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի թիվ 772-Ն որոշման հավելվածով սահմանված համայնքներում գործունեություն իրականացնող և աղետից տուժած առևտրային կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին կամ աղետից տուժած ձեռնարկատիրական գործունեության վայր հանդիսացող անշարժ

գույքի (շենքերի, շինությունների) սեփականատերերին կամ սեփականության իրավունքի իրավատերերին:

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տեղեկատվության՝ ծրագրերի շահառուներին վնասի համար փոխհատուցման տրամադրման գործընթացը նախատեսվում է ավարտել 2024 թվականի դեկտեմբեր ամսին:

Պաշտպանը ողջունելի է համարում պետության կողմից աղետի գոտու բնակիչների համար սոցիալական աջակցության միջոցառումների իրականացումը: Պաշտպանը կարևոր է համարում նաև ընդգծել, որ 2024 թվականի մայիսի 25-ից մինչև 2025 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում աղետի գոտու բնակիչներից ստացվել է ընդամենը 3 գրավոր դիմում-բողոք և դա հիմք է տալիս ենթադրելու, որ, ընդհանուր առմամբ, այս խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ կառավարությունը գործուն միջոցներ է ձեռնարկել, ինչը պետք է դրական գնահատել:

Այնուհանդերձ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել նաև այնպիսի խնդիր, որը կապված է աղետի գոտու բնակիչներին կրած վնասի դիմաց համարժեք սոցիալական աջակցություն չտրամադրելու հետ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով վնաս է պատճառվել իրեն պատկանող 0.1665 հա տարածքով այգուն: Հավելել է, որ այգում ունեցել է թվով 115 պտղատու ծառ (5 տարեկան), որից կորցրել է 30-ը, իսկ մնացած մասը գտնվում են վերականգնողական փուլում: Բողոք ներկայացրած անձը հայտնել է նաև, որ այգում իրականացրել է ցանքսի աշխատանքներ՝ 600 մ² ձմերուկ, 80 մ² սխտոր, 80 մ² վարունգ, 90 մ² լոլիկ և 130 մ² կարտոֆիլ:

Հավելել է, որ հորդառատ անձրևներից հետո այգին նախնական տեսքի բերելու համար մեծ ջանք և ֆինանսական միջոցներ է ներդրել՝ մոտ 760.000 ՀՀ դրամի չափով *(ըստ բողոք ներկայացրած անձի՝ նշվածը կարող է հավաստել նկարներով և տեսանյութով)*:

Բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ 2024 թվականի դեկտեմբերի 24-ին ստացել է 165.000 ՀՀ դրամ աջակցություն, որը վերջինիս գնահատմամբ՝ համաչափ չէ իր կրած վնասներին և կատարած ծախսերին:

Նշել է նաև, որ այգին ունեցել է 50 բետոնե սյուներով ամրացված 140 մ երկարությամբ ցանկապատ, որը կորցրել է հեղեղի արդյունքում: Հավելել է, որ կորցրել է նաև 600 մ երկարությամբ ոռոգման ջրի խողովակը (իր դետալներով), հողամասի մոտ 20 տոկոսը և հողաշերտի մակերեսն ամբողջությամբ, որի վերականգնման համար 65-70 ավտոմեքենա հողի լիցք է կատարվել և հավասարեցման համար համապատասխան տեխնիկա է ներգրավել, որն աշխատել է 12 ժամ անընդմեջ *(բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ այդ աշխատանքի դիմաց վճարել է 130.000 ՀՀ դրամ):*

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը կրած վնասի դիմաց համարժեք սոցիալական աջակցություն ստանալու հարցում:

Վերոնշյալի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրվել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: Պատասխան գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների

պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում գյուղատնտեսության ոլորտում զբաղված տնտեսավարողներին, անկած կամ կորսված գյուղատնտեսական կենդանիների, ոչնչացված կամ կորսված կամ վնասված պտղատու ծառերի, հատապտղի թփերի ու ցանքատարածությունների դիմաց տրամադրվող փոխհատուցման միջոցով աղետի գոտու տարածքներում գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների կրած վնասների մեղման նպատակով ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1264-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում գյուղատնտեսության ոլորտում բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման կարգը»:

Տեղեկացվել է նաև, որ Էկոնոմիկայի նախարարությունը կարգի համաձայն՝ աղետի հետևանքով վնաս կրած շահառուների հաշվառման և վնասի գնահատման գործառույթներ չի իրականացնում: Ըստ կարգի 8-րդ և 9-րդ կետերի՝ նախարարությունը համապատասխան փոխհատուցման ենթակա գումարները փոխանցում է շահառուների բանկային հաշվեհամարներին՝ միայն համայնքային հանձնաժողովների կողմից կազմված, մարզային հանձնաժողովներում քննարկված, հանրապետական հանձնաժողովի կողմից հաստատված՝ Ներքին գործերի նախարարության կողմից Էկոնոմիկայի նախարարությանը տրամադրված ակտերի հիման վրա:

Միաժամանակ, տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, որ կարգի շրջանակում անձին հատկացվել է փոխհատուցում 165.000 ՀՀ դրամի չափով՝ աղետի հետևանքով վնասված (վերականգնման ենթակա) 110 հատ պտղատու ծառերի համար:

Բողոքի քննարկման շրջանակում գրություն է հասցեագրվել նաև Տավուշի մարզպետարան: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ գյուղատնտեսության ոլորտում պատճառված վնասի շրջանակներում բնակչությանը փոխհատուցվել են անկած կամ կորսված գյուղատնտեսական կենդանիների, ոչնչացված կամ կորսված կամ վնասված պտղատու ծառերի, հատապտղային թփերի և ցանքատարածությունների համար:

Նշվել է նաև, որ 2024 թվականին Նոյեմբերյան համայնքի՝ գյուղատնտեսության ոլորտում տուժած բնակչությանը պտղատու ծառերի մասով փոխհատուցվել է միայն աղետի հետևանքով վնասված՝ վերականգնման ենթակա ծառերի համար համայնքային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունների հիման վրա:

Նոյեմբերյանի համայնքի աղետի հետևանքով ոչնչացված կամ կորսված պտղատու ծառերի համար փոխհատուցումը չի տրվել, քանի որ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային և մարզային հանձնաժողովների կողմից առաջարկվել է հանրապետական հանձնաժողովին հարցին վերջնական լուծում տալու համար այն լրացուցիչ քննարկել 2025 թվականին՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, քանի որ այդ ընթացքում հստակ պարզ կլինի թե քանի պտղատու ծառ է ոչնչացվել կամ կորսվել:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով վնասվել է իր ավտոմեքենան: Հավելել է, որ՝ որպես

աջակցություն, իրեն տրամադրվել է 348.625 ՀՀ դրամ, որը վերջինս ուղղել է մեքենայի փոխանցման տուփի և շարժիչի վերանորոգմանը: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ տրամադրված գումարը համաչափ չէ պատճառված վնասի չափին և այն չի բավականացրել մեքենայի ամբողջական վերանորոգման համար:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը կրած վնասի դիմաց համարժեք սոցիալական աջակցություն ստանալու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրվել Լոռու մարզպետարան: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով Ալավերդի համայնքի տուժած ավտոմեքենաների մի շարք սեփականատերեր Լոռու մարզպետի աշխատակազմ են ներկայացրել դիմում բողոքներ՝ տրամադրվող փոխհատուցումների հետ կապված:

Նշվել է նաև, որ խնդիրները կարգավորելու նպատակով համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ ներքին գործերի նախարարություն, որտեղից պատասխան գրությամբ ներկայացվել է հետևյալը.

ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 12.2-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի կորստի դեպքում փոխհատուցման ենթակա գումարի չափը, իսկ տրանսպորտային միջոցի վնասվածության դեպքում՝ վնասվածության աստիճանը և դրա հիման վրա փոխհատուցման ենթակա գումարի չափը հաստատվում են ԱՊՊԱ ոլորտում շարժական գույքին պատճառված վնասները գնահատող այն որակավորված փորձագիտական կազմակերպությունների կողմից կատարված փորձաքննության արդյունքում տրված եզրակացությամբ, որոնք փորձաքննություն իրականացնում և եզրակացություն տալիս են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից փորձագիտական ծառայությունների ձեռքբերման շրջանակներում: Իսկ Հավելվածի 19-րդ կետը նախատեսում է փոխհատուցման համար ներկայացվող դիմումի մերժման դեպքում բողոքարկման հնարավորություն: Նշված իրավակարգավորումների համակողմանի և համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ տրանսպորտային միջոցին պատճառված վնասի փոխհատուցման չափի բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ:

Հարկ է նաև նշել, որ այս դիմում-բողոքները Պաշտպանի աշխատակազմում գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Փաստահավաք աշխատանքների արդյունքում վերհանված մյուս խնդիրը վերաբերել է երեխաների կրթության իրավունքի պատշաճ երաշխավորմանը, մասնավորապես՝ քննությունների կազմակերպմանն ու անցկացմանը: Խնդրի կապակցությամբ Պաշտպանը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից պահանջել է պարզաբանումներ՝ աղետի գոտի հանդիսացող բնակավայրերի հանրակրթական ուսումնական հաստատությունների 4-րդ դասարաններում գիտելիքի ստուգման, ավարտական և միասնական քննություններին կազմակերպման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ:

Ի պատասխան՝ նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն այն մասին, որ Տավուշի մարզում ուսումնական տարվա ավարտին 4-րդ դասարանում գիտելիքի ստուգում չի իրականացվել, քանի որ մարզի հանրակրթական

ուսումնական հաստատություններում ամբողջությամբ ներդրվել է հանրակրթության պետական նոր չափորոշիչը: Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 78-Ն հրամանով հաստատված հավելվածի 5-րդ կետի՝ 4-րդ դասարանի ավարտին սովորողի տարեկան բնութագրի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ ինքնաշխատ եղանակով իրականացվել է ատեստավորում: ԳԹԿ-ի կողմից արտաքին գնահատման միջոցով՝ հանրակրթության պետական նոր չափորոշչին համահունչ, իրականացվել է սովորողների ուսումնառության վերջնարդյունքների ստուգում: Նախարարությունը հայտնել է նաև, որ մարզում ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպումն ընթանում է բնականոն հունով:

Անդրադառնալով Լոռու մարզում աղետի գոտի հանդիսացող բնակավայրերի հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա ավարտին գիտելիքի ստուգման, ավարտական, պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպման համար իրականացված և ձեռնարկվող քայլերին՝ նախարարությունը տեղեկացրել է, որ բոլոր քննությունները պատշաճ կազմակերպվում են:

Ըստ նախարարության՝ ԳԹԿ-ի կողմից լրացուցիչ տրամադրվել են թեստային առաջադրանքներ, որոնք սահմանված կարգով տրամադրվում են Թումանյանի, Քարինջի, Մարցի, Լորուտի, Աթանի, Ահնիձորի, Դսեղի և Չկալովի դպրոցներին: Քարկոփի միջնակարգ դպրոցի քննական գործընթացը կազմակերպվում է Ճոճկանի Գ. Խուդինյանի անվան միջնակարգ դպրոցում: Ալավերդու Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի 9-րդ և 12-րդ դասարանների «Հայոց լեզու» առարկայի քննությունները կազմակերպվել են Ալավերդու Մ. Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոցում (04.06.2024թ, 06.06.2024թ), մյուս քննությունները կազմակերպվում են Ալավերդու Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում: Միասնական քննությունները կազմակերպվում են համաձայն ժամանակացույցի, ճանապարհների անցանելիությունը ապահովված է:

Աղետի գոտու բնակիչների հիմնարար իրավունքների ապահովման հետ կապված մյուս խնդիրները վերհանվել են զանգվածային լրատվության միջոցների ու սոցիալական մեդիայի մշտադիտարկման արդյունքում: Այսպես, 2024 թվականի հունիսի 5-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը լրատվամիջոցներին տված հարցազրույցում իր մտահոգությունն է հայտնել աղետի գոտում հնարավոր համաճարակի առաջացման վտանգի վերաբերյալ: Մասնավորապես, նախարարը նշել է, որ աղետի գոտում մեծ քանակությամբ տիղմ կա, որի մեջ կարող են վնասակար նյութեր լինել, բացի այդ կան բազմաթիվ անկած կենդանիներ, որոնց մի մասի մարմինները դեռ չեն հայտնաբերվել, որով պայմանավորված որոնողական աշխատանքները դեռ շարունակվում են[788]:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունն ու հրատապությունը, Մարդու իրավունքների պաշտպանն անհապաղ սկսել է ուսումնասիրության ընթացակարգ, որի շրջանակներում անհրաժեշտ պարզաբանումների պահանջով գրություններ են

[788] Հարցազրույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.aysor.am/am/news/2024/06/05/%D5%BD%D5%A1%D5%B6%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/2287304 , 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հասցեագրվել ինչպես ՀՀ առողջապահության նախարարություն, այնպես էլ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին:

Ի պատասխան՝ Առողջապահության նախարարությունը հայտնել է, որ Վարչապետի 2024 թվականի մայիսի 26-ի թիվ 492-Ա «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում հեղեղումների հետևանքները վերացնելու օպերատիվ աշխատանքային խումբ (շտաբ) ստեղծելու մասին» որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված միջոցառումների կատարման նպատակով իրականացվում են՝

- համաճարակաբանական հետախուզություններ,
- համաճարակային իրավիճակի ուժեղացված ուսումնասիրություններ,
- ջրերի և հողի ուժեղացված մոնիտորինգ,
- էպիզոոտոլոգիական հետազոտություններ, մասնավորապես՝ կրծողների (որպես հատուկ վտանգավոր և այլ բնական օջախային վարակների կրողներ) դիակներ հայտնաբերելու, ինչպես նաև հիվանդություններ փոխանցողների ուղղությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դեզինսեկցիոն և դեզինֆեկցիոն աշխատանքներ:

Իրականացված աշխատանքների վերաբերյալ հայտնել է հետևյալը.

1. Մայիսի 27-ից մինչև հունիսի 11-ն ընկած ժամանակահատվածում Լոռու մարզի տարբեր բնակավայրերից, կատարվել են խմելու ջրի ընդհանուր թվով 270 նմուշառում՝ լաբորատոր հետազոտություններ իրականացնելու նպատակով: Մանրէաբանական ցուցանիշներով շեղում է արձանագրվել խմելու ջրի 53 նմուշում: Շեղումների վերաբերյալ տեղյակ է պահվել Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը:

2. Միջատաբանական աշխատանքներ իրականացնելու համար աշխատանքային խմբեր են մեկնել Քարկոպ և Սանահին համայնքներ: Քարկոպ համայնքում իրականացվել են դեզինսեկցիոն աշխատանքներ: Ախտահանման աշխատանքներ են կատարվել մանկապարտեզի, դպրոցի տարածքում, բնակելի շենքերի նկուղային հարկերում, անասնաշենքերի և թռչնանոցների կից տարածքներում, որտեղ միաժամանակ տեղադրվել է նաև միջատաբանական թակարդներ՝ նմուշառման նպատակով: Սանահին համայնքում իրականացվել են ախտահանման աշխատանքներ բնակելի շենքերում և հարակից տարածքներում: Ջրափոսերում կատարվել է միջատաբանական աշխատանքներ՝ փոխանցողների թրթուռների հայտնաբերման նպատակով: Միջատաբանական թակարդներից հայտնաբերված կենսաբանական նյութը ենթարկվել է լաբորատոր հետազոտության՝ հատուկ վտանգավոր և այլ բնական օջախային վարակներ հայտնաբերելու նպատակով: Արդյունքները եղել են բացասական: Միջատաբանական աշխատանքները շարունակվում են:

3. «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի մասնագետները Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի մասնագետների հետ համատեղ Քարկոպ գյուղում հայտնաբերել են թվով 31 թռչնի անկում, որոնք դուրս են բերվել Քարկոպ գյուղի տարածքից և թաղվել Ճոճկան համայնքի տարածքում, տարածքը գույքագրվել է որպես անասնագերեզմանոց, 7 անկած խոզ հայտնաբերվել է Նեղոց գյուղի տարածքում, թաղվել են, տարածքը գույքագրվել է որպես անասնագերեզմանոց: Տաշիրի տարածքում անկած կենդանիների դեպքեր չեն հայտնաբերվել:

4. «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի էպիզոոտոլոգիայի, էկտոմակաբուծաբանության և էնտոմոլոգիայի լաբորատորիայի կենդանաբանական խումբը Երևանից գործուղվել է Լոռու մարզ՝ հեղեղումների հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակում էպիզոոտոլոգիական հետազոտություններ իրականացնելու նպատակով: Շրջայց է իրականացվել հեղեղումներից տուժած ամբողջ տարածքում, սակայն կրծողների (որպես հատուկ վտանգավոր և այլ բնական օջախային վարակների կրողներ) դիակներ չեն հայտնաբերվել:

Բնակչության հետ տարվել են բացատրական աշխատանքներ, որպեսզի հնարավորինս զերծ մնան կրծողների և փոխանցողների հետ շփումից, իսկ դիակներ նկատելու դեպքում անմիջապես տեղեկացնեն «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղ: Ալավերդու հարակից անտառային գոտում մկնանման կրծողների հայթայթման նպատակով տեղադրվել են թակարդներ, հավաքվել և լաբորատորիա են տեղափոխվել հողի նմուշներ: Կրծողների դիակների որոնողական երթուղիներ են դրվել Ալավերդու հարակից համայնքներում՝ դեպի Նեղոց, այնուհետև Ալավերդուց դեպի Թումանյան, Վահագնի, Վահագնաձոր համայնքներ, սակայն դիակներ չեն հայտնաբերվել:

Կրծողների հայթայթման նպատակով տեղադրվել են գիշերային թակարդներ վերը նշված համայնքների անտառային գոտիներում, սակայն ընկնելիություն չի եղել: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները գտնվում են հսկողության տակ:

5. «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի «Շիրակ» մասնաճյուղի կենդանաբանական խումբը բերվել է պատրաստականության վիճակի:

6. Մայիսի 26-ից մինչև հունիսի 11-ը ընկած ժամանակահատվածում Տավուշի մարզի տարբեր բնակավայրերից, կատարվել են խմելու ջրի ընդհանուր թվով 195 նմուշառում՝ լաբորատոր հետազոտություններ իրականացնելու նպատակով: Մանրէաբանական ցուցանիշներով շեղում է արձանագրվել խմելու ջրի 104 նմուշում: Շեղումների վերաբերյալ տեղյակ է պահվել Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը:

7. Դեբեդ գետի ավազանի՝ Այրում-Բագրատաշեն հատվածում կատարվել են միջատաբանական հետազոտություններ՝ մալարիա տարածող մոծակների հայտնաբերման նպատակով: Արդյունքները եղել են բացասական: Աշխատանքները շարունակվում են:

8. Տավուշի մարզում գրանցված երկու անասնագերեզմանոցներից վերցվել են թվով 10 նմուշ հող սիբիրյան խոցի հարուցչի հայտնաբերման նպատակով: Հետազոտություններն ընթացքի մեջ են:

9. Լոռու և Տավուշի մարզերում ջրային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդության դեպքեր չեն արձանագրվել:

10. Շարունակվում են աղետից տուժած բնակավայրերի խմելու ջրի ամենօրյա ուժեղացված մոնիթորինգը:

11. Բժշկական կազմակերպություններին առաջարկվել է իրականացնել բակային համայցեր աղիքային վարակներով հիվանդների վաղաժամ հայտնաբերման նպատակով:

12. Շարունակվում են իրազեկման և բացատրական աշխատանքները բնակչության շրջանում:

13. Համաճարակային վիճակը Տավուշի և Լոռու մարզերում հունիսի 11-ի դրությամբ հանգիստ է:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պատասխան գրությամբ տրամադրել է հետևյալ տեղեկատվությունը.

Հաշվի առնելով աղետի գոտում ստեղծված իրավիճակը և իրավիճակի կարևորությունը՝ տեսչական մարմնի մասնագետների կողմից այցեր են իրականացվել Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր և Տավուշի մարզի Դիլիջան համայնքներ՝ սանիտարահամաճարակային իրավիճակին տեղում ծանոթանալու և տեսչական մարմնի իրավասության շրջանակում անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու նպատակով: Համատեղ այց է իրականացվել նաև Լոռու մարզպետարանի, Ալավերդի և Տաշիր համայնքների ներկայացուցիչների հետ՝ աղետից տուժած Ալավերդի համայնքի Սանահին կայարան թաղամասում, Տաշիր քաղաքի Գետափնյա փողոցի սեփական տների տարածքում. իրավիճակը անհանգստացնող էր, սակայն վերահսկելի:

Տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի կողմից, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ «ԼՈՌԻ» և «ՏԱՎՈՒՇ» մասնաճյուղերի կողմից ներկայացված, վերջին օրերի ընթացքում իրականացված խմելու ջրի լաբորատոր հետազոտությունների արդյունքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին կայարան թաղամասից, Էնգելսի փողոցի շենքերից, Լոռու մարզի Թումանյան համայնքից և Տավուշի մարզի Դիլիջան համայնքի տարբեր հասցեներից վերցված խմելու ջրի նմուշների մանրէաբանական ցուցանիշները չեն համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական կանոնների և նորմերով սահմանված պահանջներին՝ մանրէների ընդհանուր քանակությունը գերազանցել է նորմայի սահմանները, հայտնաբերվել են կոլիֆորմ մանրէներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, անմիջապես գրություններ են գրվել նշված համայնքների ղեկավարներին՝ անհապաղ արգելելու բնակավայրերի բնակչության կողմից խմելու ջրի օգտագործումը և բնակիչներին իրազեկելու՝ ջուրը խմելու նպատակով չօգտագործելու և ջրային գործոնով պայմանավորված աղիքային վարակիչ հիվանդությունների և բռնկումների կանխարգելման նպատակով, անհապաղ ջրի աղտոտման պատճառները պարզելու, բնակիչներին անվտանգ խմելու ջրով ապահովելու վերաբերյալ:

Քանի որ ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «ԼՈՌԻ» մասնաճյուղի կողմից ներկայացված, Ալավերդի համայնքի Էնգելսի փողոցի շենքերից իրականացված խմելու ջրի լաբորատոր հետազոտությունների արդյունքում ևս արձանագրվել էին շեղումներ, Տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի մասնագետները ուսումնասիրություն են իրականացրել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Ալավերդի» տեղամասում, աշխատակիցների հետ շրջել և խմելու ջրի նմուշառում են

իրականացրել Էնգելսի փողոցի տարբեր հասցեներից (հետազոտություններն ընթացքի մեջ են):

Հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «ԼՈՌԻ» մասնաճյուղի կողմից ներկայացված 2024 թվականի հունիսի 03-ի թիվ 102 փորձագիտական եզրակացությունը, տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական կանոնների և նորմերով սահմանված պահանջների պահպանումը «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման Լոռու մարզի Թումանյան համայնքը սնող «Ագարակ-Օձուն», Վանաձոր համայնքը սնող «Նովոսելցովո», և Դիլիջան համայնքը սնող խմելու ջրի ջրամատակարարման համակարգերում պարզելու նպատակով: Վարչական վարույթն ընթացքի մեջ է:

Գրություն է ներկայացվել նաև Լոռու մարզի Թումանյան համայնքի մի մասը սնող ջրատարը սպասարկող «Արա Մկրտչյան» անհատ ձեռնարկատիրոջը՝ իր սպասարկման ջրատարից (հուշաղբյուրից, քաղաքի ցայտաղբյուր) համայնքի բնակչությանը մատակարարվող խմելու ջրի աղտոտման պատճառները պարզելու և համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու՝ խմելու ջրի որակը սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Միաժամանակ, տեսչական մարմնի կողմից գրություններ են ներկայացվել Լոռու և Տավուշի մարզպետներին՝ հեղեղումների պատճառով ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված, աղիքային վարակիչ հիվանդությունների և թունավորումների առաջացումը և հետագա տարածումը կանխարգելելու նպատակով, առաջարկվել է ուժեղացնել հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 14-Ն հրամանով հաստատված «Աղիքային վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1.-027-2013, ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների պահպանման նկատմամբ:

Տավուշի մարզպետից պատասխան գրություն է ստացվել այն մասին, որ մարզի համայնքներում հեղեղումների պատճառով ստեղծված արտակարգ իրավիճակով պայմանավորված, աղիքային վարակիչ հիվանդությունների և թունավորումների առաջացումը և հետագա տարածումը կանխարգելելու նպատակով համապատասխան գրությամբ համայնքների ղեկավարներին առաջարկվել է ուժեղացնել հսկողությունը խմելու ջրի նկատմամբ՝ հիմք ընդունելով տեսչական մարմնի կողմից ներկայացված ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանները:

Վերոգրյալի հետ մեկտեղ, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ տեսչական մարմինն իր լիազորությունների շրջանակներում պատրաստակամ է աջակցելու առաջացած խնդիրների լուծման գործընթացին:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրվել նաև «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը:

Պատասխան գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ ընկերությունը խմելու ջրի որակի հսկողությունն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-111-12-1 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համապատասխան:

Ըստ ընկերության՝ 2024 թվականի մայիսի 25-26-ը Լոռու և Տավուշի մարզերի մի շարք բնակավայրերում տեղացած աննախադեպ անձրևներից առաջացած հեղեղումների պատճառով վնասվել են գետերի վրա կառուցված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի շահագործման տակ գտնվող մի քանի ջրատար խողովակներ: Ընկերության կողմից անմիջապես դադարեցվել է ջրամատակարարումը բոլոր վնասված հատվածներում: Այն բնակավայրերում, որտեղ ջրամատակարարման համակարգը չի տուժել հեղեղումներից, իրականացվել է բնականոն ջրամատակարարում: Ընկերության աշխատակիցները անհապաղ ձեռնամուխ են եղել արտաժամյա գրաֆիկով աշխատանքի և արագ վերականգնել վնասված հատվածների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ խմելու ջրի որակի հսկողությունը ևս իրականացվել է ընկերության լաբորատորիաների կողմից՝ արտակարգ ռեժիմով: Ալավերդի քաղաքում և հարակից գյուղերում կատարվել են բազմաթիվ նմուշառումներ՝ օրվա կարգավորիչ ջրամբարներից (ՕԿՋ), ներքին ցանցի տարբեր հասցեներից: Նմուշառումներ են իրականացվել նաև վթարավերականգնողական աշխատանքներից անմիջապես հետո: Տաշիր և Դիլիջան քաղաքներին մատակարարվող խմելու ջրի որակի հսկողությունն ևս իրականացվել է բնականոն հունով: Վերցված վերոնշյալ խմելու ջրի բոլոր նմուշները համապատասխանել են ՀՀ սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին:

Նշել են նաև, որ Ալավերդի համայնքի ջրամատակարարումն իրականացվում է «Լոռի Բերդ» և «Ագարակ», իսկ Տաշիր համայնքինը՝ «Նովոսելցովո-Կաթնաղբյուր» ջրաղբյուրներից, որոնց վարակազերծման գործընթացը կատարվում է հեղուկ քլորացմամբ՝ անընդհատ ռեժիմով, ինչն ապահովում է մնացորդային՝ ազատ քլորի մշտական առկայությունը խմելու ջրում և նվազագույնի հասցնում մանրէաբանական շեղման վտանգը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ընկերությունը տեղեկացրել է, որ Ալավերդի համայնքի Սանահին կայարան թաղամասը չի սպասարկվում «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից: Ալավերդի համայնքի Էնգելսի փողոցի տարբեր հասցեներից, Թումանյան համայնքի օրվա կարգավորիչ ջրամբարից (ՕԿՋ), համայնքի՝ տարբեր հասցեներից՝ կատարվել են համատեղ նմուշառումներ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում: Բազմակողմանի հետազոտված բոլոր նմուշները համապատասխանել են ՀՀ սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին, որի արդյունքում հարուցված վարչական վարույթը կարճվել է: Հավելել են, որ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության համար խմելու ջրի որակն

առաջնային խնդիրներից մեկն է, և հնարավոր ամեն քայլ ձեռնարկվում է այն ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխան պահելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ աղետի գոտու բնակիչների հիմնարար իրավունքների երաշխավորման և անխոչընդոտ իրացման հետ կապված բոլոր հարցերը հետագայում նույնպես գտնվելու են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: Բարձրացված հարցերի ընթացքի նկատմամբ իրականացվելու է հետագա հետևողական աշխատանք:

Վերոգրյալի համատեքստում՝ Պաշտպանը առաջարկում է քննարկման առարկա դարձնել աղետի գոտու բնակիչների համար աջակցություն նախատեսող ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում վնասի փոխհատուցման չափի բողոքարկման հնարավորություն (կառուցակարգ) նախատեսելու հնարավորության հարցը:

ԲԱԺԻՆ 20. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Տարեց անձանց հիմնարար իրավունքների ամբողջ ծավալով երաշխավորումն ու անխոչընդոտ իրացումը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններից է: Կարևոր է տարեցների սոցիալական պաշտպանության ապահովումը, նրանց կյանքի որակի բարձրացումը և արժանավայել ծերություն ունենալու համար անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծումը: Չնայած այս ուղղությամբ դրական որոշակի տեղաշարժին՝ ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ օրենսդրական և գործնական խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են տարեցների սոցիալական ծառայությունների տրամադրմանը, առողջապահական ծառայություններից օգտվելու անմատչելիությանը, կենսամակարդակի ապահովմանը, խնամքի հարցում աջակցության և այլ հարցերի:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է եղել տուն-ինտերնատներում և մասնավոր շուրջօրյա խնամքի հաստատություններում ապրող տարեց մարդկանց ու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ տարվող խնամքի գնահատումը: Այս համատեքստում հարկ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում ՄԻՊ աշխատակազմը չհայտարարված մշտադիտարկման այցեր է իրականացրել տարեց անձանց շուրջօրյա խնամքով զբաղվող հաստատություններ: Արդյունքում վեր են հանվել ինչպես անհատական բնույթի, այնպես էլ համակարգային խնդիրներ:

2024 թվականին տարեցների իրավունքների իրացման խնդիրներին առնչվող հարցերով կազմակերպվել են քննարկումներ, որոնց մասնակցել են նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները: Այսպես, հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը ստացել է հրավեր մասնակցելու Նյու Յորքում կայանալիք ՄԱԿ-ի տարեցների հարցերով աշխատանքային խմբի 14-րդ նիստին: Պաշտպանի ներկայացուցիչները հեռավար եղանակով մասնակցել են նիստին, ինչպես նաև աշխատանքային խմբին են տրամադրել Հայաստանում տարեցների իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

1. Ոլորտում առկա գործնական և օրենսդրական խնդիրներ

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմի իրականացրած ուսումնասիրությունները, կատարած այցերի, ստացված բողոքների քննարկման արդյունքները վկայում են, որ մեր երկրում տարեցների իրավունքների իրացման հարցում առկա են որոշակի խնդիրներ:

Մասնավորապես, Պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է **«տարեց»** եզրույթի հետ կապված իրավական անորոշության առկայության հարցը, որը պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով: *Այսպես, 2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված և նույն թվականի նոյեմբերի 14-ին ուժի մեջ մտած «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքում **«տարեց»** հասկացությունը շարունակում է սահմանված մնալ՝ **<u>որպես 65 տարին լրացած անձ</u>*** (տե՛ս նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը):

Մինչդեռ, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով տարիքային աշխատանքային կենսաթոշակի անցնելու տարիք է սահմանված 63-ը: Այսինքն, այդ

տարիքից անձը համարվում է կենսաթոշակառու: Այդ տարիքում անձին կնշանակվի կենսաթոշակ, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, իսկ չունենալու պարագայում սոցիալական կարգավիճակ ձեռք չի բերում: Կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձը միայն 65 տարին լրանալու դեպքում ծերության նպաստի իրավունք ունի:

Ստացվում է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունենալու պարագայում 63-65 տարեկան անձինք զրկվում են տարեցներին մատուցվող խնամքի և սոցիալական աջակցության ծառայություններից օգտվելու հնարավորությունից *(օրինակ՝ կացարանով ապահովում, խնամքի ծառայություններ տնային պայմաններում, շուրջօրյա խնամքի կենտրոններում և այլն)*: Իսկ խնամքի ծառայությունների տրամադրման համար որոշիչ նշանակություն ունի անձի տարիքը, քանի որ խնամք տրամադրվում է տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց:

Օրինակ, 2024 թվականի բողոքներից մեկով 63 ամյա անձը հայտնել է, որ սոցիալապես անապահով է, միայնակ, չունի մշտական աշխատանք և բնակության վայր, չի կարողանում ինքնուրույն հոգալ կենցաղային խնդիրները, ունի առողջական լուրջ խնդիրներ, սակայն ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով չի կարողանում բուժօգնություն ստանալ: Նշել է նաև, որ բավարար աշխատանքային ստաժ չունենալու պատճառով կենսաթոշակ չի ստանում: Խնդրել է Պաշտպանին սոցիալական աջակցություն տրամադրելու հարցում:

Վերլուծելով իրավիճակը՝ ստացվում է, որ անձը չունի եկամտի որևէ աղբյուր. չի ստանում որևէ տեսակի կենսաթոշակ և նպաստ: Սոցիալական նպաստ նույնպես չի կարող ստանալ. սոցիալական որևէ կարգավիճակ չունենալու պատճառով անապահովության միավորը չի կարող ապահովվել սահմանված չափը: Լավագույն դեպքում կարող է օգտվել եռամսյա հրատապ օգնությունից, որը կազմում է ամսական 20.000 ՀՀ դրամ, ինչպես նաև չի կարող խնամք ստանալ պետության աջակցությամբ շուրջօրյա խնամքի հաստատությունում: Նման դեպքերում անձինք զրկվում են սոցիալական աջակցությունից, որը «Սոցիալական աջակցության մասին» օրենքի իմաստով կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ դրա ռիսկում գտնվող անձի կամ ընտանիքի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու կարողությունները զարգացնելու միջոցով անձին կամ ընտանիքին գնահատված սոցիալական կարիքների կամ խոցելիության հիման վրա տրամադրվող մեկ կամ մի քանի սոցիալական ծառայություն է:

Իհարկե, լինում են դեպքեր, երբ Պաշտպանի աջակցությամբ այս խումբ անձանց տրամադրվում են որոշակի աջակցություններ (տեղական ինքնակառավարման մարմիններից գումարային աջակցություն, վառելափայտ, սննդի փաթեթ և այլն), այնուամենայնիվ խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից Պաշտպանի տարեկան հաղորդման շրջանակներում կատարված հարցմանն ի պատասխան՝ տեղեկացրել են, որ 2024 թվականի ընթացքում տարեցների իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերող որոշումները չեն վերանայվել, քանի որ դրանք նախատեսվում է վերանայել 2025 թվականին՝ ժողովրդագրության ռազմավարության համատեքստում:

Մյուս խնդիրը վերաբերում է տարեցների՝ հիվանդություններ ունենալու պատճառով հաստատություններում շուրջօրյա խնամքից զրկվելուն: Այս համատեքստում հարկ է նշել, որ Պաշտպանին ներկայացվում են բողոքներ այն մասին, որ օրինակ՝ ալկոհոլամոլություն կամ հոգեկան առողջության խնդիր ունենալու պատճառով չեն կարող ընդհանուր տիպի տուն-ինտերնատում խնամք ստանալ: Իհարկե, հոգեկան առողջության խնդիրը խոչընդոտ չէ շուրջօրյա խնամք ստանալու տեսանկյունից, քանի որ նման պարագայում սոցիալապես անապահով անձը կարող է խնամք ստանալ հատուկ տիպի խնամքի հաստատությունում *(օրինակ՝ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» կամ ««Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ներում)*, բայց լինում են դեպքեր, երբ տվյալ տարեց անձի՝ հատուկ տիպի տուն-ինտերնատում խնամք տրամադրելը նպատակահարմար չէ՝ հոգեկան առողջության խնդիրը թեթև լինելու պատճառով: Իսկ ալկոհոլամոլությամբ տառապող անօթևան անձանց պարագայում՝ առհասարակ խնամք չի տրամադրվում:

Իբրև դրական առաջընթաց պետք է նշել այն հանգամանքը, որ նախորդ տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում Կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, տրամադրվող խնամքի ձևերը, խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն և հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1744-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը փոփոխության է ենթարկվել *(օրինակ՝ ՄԻԱՎ-ը և ոչ մանրէազատ տուբերկուլոզն այլևս խոչընդոտ չէ, որպեսզի անձին շուրջուրյա խնամք տրամադրվի ընդհանուր տիպի տուն-ինտերնատում)*, այնուհանդերձ Պաշտպանին տարբեր տարիներին ներկայացվող բողոքների համալիր ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ խնդիրն ամբողջությամբ չի լուծվել:

Այսպես, օրինակ՝ 2024 թվականին Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ դիմել է իրավասու մարմնին շուրջօրյա խնամքի հաստատությունում խնամք ստանալու նպատակով, սակայն մերժվել է: Սկսված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մերժման հիմքն քրոնիկ ալկոհոլամոլությունն է. անձը հաշվառված է Կախվածությունների բուժման ազգային կենտրոնում:

Ճիշտ է քրոնիկ ալկոհոլամոլությունը և թմրամոլությունը խնամքի տրամադրումը մերժելու հիմք է, այնուհանդերձ տարեցների սոցիալական իրավունքների և սոցիալական երաշխիքների պաշտպանության տեսանկյունից իրավասու մարմինները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն և քննարկման առարկա դարձնեն Որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկը վերանայելու հնարավորության հարցը: Հատուկ քննարկման առարկա պետք է դարձվի նաև վերը նշված հիվանդություններն ունեցող անձանց խնամքը կազմակերպելու նպատակով այլընտրանքային խնամքի հաստատություններ և (կամ) ներկայիս խնամքի հաստատություններում հատուկ տարածքներ առանձնացնելու հնարավորությունը՝

հաշվի առնելով նման կարգավիճակ ունեցող անձանց կարիքներն ու հասարակության մեջ ինտեգրվելու անհրաժեշտությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ մի շարք խնդիրներ արձանագրվել են նաև շուրջօրյա խնամքի հաստատությունից հեռացված տարեց անձանց անօթևանության հետ կապված, որոնք ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով զրկվում են շուրջօրյա խնամքից:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) շահառու է: Հավելել է, որ 2024 թվականի հունվար ամսին անհիմն հեռացվել է ՊՈԱԿ-ից, որի արդյունքում դարձել է անօթևան:

Այս հարցի կապակցությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից Պաշտպանին ներկայացրել են պարզաբանումներ այն մասին, որ մեկ տարվա ընթացքում երեք անգամ քաղաքացին խախտել է ՊՈԱԿ-ի ներքին կարգապահական կանոնները, այդ պատճառով դադարեցվել է վերջինիս խնամքի տրամադրումը և չի կարող կրկին ուղեգրվել խնամքի հաստատություն:

Այս կապակցությամբ, հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1744-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 64-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ խնամքի կենտրոնի կամ փոքր տան ներքին կարգապահական կանոնները մեկ տարվա ընթացքում երեք անգամ խախտելու դեպքում դադարեցվում է շահառուի խնամքի տրամադրումը:

Աշխատանքային քննարկումների ընթացքում հաստատության իրավասու աշխատակիցը Պաշտպանի ներկայացուցչին տեղեկացրել է, որ քաղաքացին իր բնույթով կոնֆլիկտային անձնավորություն է և տառապում է ալկոհոլամոլությամբ: Նշել է նաև, որ վերջինս անհարգալից վերաբերմունք է դրսևորում և՛ անձնակազմի, և՛ մյուս շահառուների նկատմամբ, ուստի նպատակահարմար չէ նրա՝ հաստատություն կրկին ուղեգրումը:

Բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել, որ բնակվում է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի տարածքին կից շինությունում:

Պաշտպանը կարևորում է խնամքի կենտրոններում ներքին կարգապահական կանոնների պահպանումը: Այնուհանդերձ, առանցքային նշանակություն ունի նաև շահառուների հետ հոգեբանական աշխատանքների արդյունավետ իրականացումը՝ շահառուների համակեցության և համատեղ կենցաղավարման, ինչպես նաև սոցիալական փոխազդեցության հմտությունների ձևավորման տեսանկյունից:

Մեկ այլ խնդիր է անօգնական վիճակում գտնվող տարեցին շուրջօրյա խնամքի կենտրոն ուղեգրումն անհապաղ չկազմակերպելը: Պաշտպանն ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և այլ աղբյուրների միջոցով անձի անօգնական վիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում դիմում է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն: Վերջինս Որոշման համաձայն՝ անհապաղ իրականացնում է իրավիճակի ուսումնասիրություն և ուսումնասիրության արդյունքների հիման վրա տարածքային կենտրոնի ղեկավարը նույն օրն ընդունում է խնամք տրամադրելու մասին որոշում՝ կազմելով դեպքի հրատապության վերաբերյալ արձանագրություն, որը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է ՄՍԾ, որը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տալիս է իր համաձայնությունը, որից հետո տարածքային կենտրոնն անձին անհապաղ

ուղեգրում է խնամքի համապատասխան կենտրոն: Նշված տեղեկությունները տարածքային կենտրոնը ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին ստանալու դեպքում ուղեգրման գործընթացն իրականացնում է առաջիկա աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մինչ այդ՝ առանց ուղեգրման, ուղղորդում է համապատասխան կազմակերպություն:

Չնայած առկա կառուցակարգերին՝ Պաշտպանին հասցեագրվող բողոքները վկայում են, որ տարեցներն օրեր շարունակ մնում են անօթևան՝ տուն-ինտերնատներում փաստացի տեղ չլինելու կամ ոչ աշխատանքային օրերին և ժամերին ՄՍԾ-ն հասանելի գործիքակազմ չունենալու պատճառով:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2023 թվականի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել է Հայաստանի Հանրապետություն և բնակության վայր չունենալու պայմաններում հայտնվել է դրսում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ բողոք ներկայացրած անձը ԼՂ-ում հաշվառված է եղել հոգեկան առողջության կենտրոնում, սակայն վերջինիս տևական ժամանակ խնամք է տրամադրվել բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում, այնուհետև խնամքի տրամադրումը դադարեցվել է: Արդյունքում, անձը մնացել է անօթևան և օրեր շարունակ բնակվել տուն-ինտերնատի հարևանությամբ՝ դրսում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Միասնական սոցիալական ծառայության միջև տեղի ունեցած կառուցողական աշխատանքների շնորհիվ անձը մի քանի օր հետո տեղափոխվել է տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրող հատուկ (մասնագիտացված) հաստատություն:

Պետք է նշել, որ նման իրավիճակներում իրավասու մարմինների հետ քննարկումների, աշխատանքների արդյունքում անօթևան-տարեցներին հաստատությունում տեղավորելու հարցը մեծամասամբ լուծվում է, սակայն խնդիրն այն է, որ, երբեմն, ***վերջիններս մի քանի օր ստիպված են լինում գիշերել դրսում մինչև արտահերթ ուղեգրման կազմակերպումը:***

2024 թվականին մի շարք խնդիրներ են արձանագրվել նաև մասնավոր շուրջօրյա խնամքի հաստատություններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասով: Այսպես, օրինակ՝ Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ սոցիալական խնամքի ծառայություններ մատուցող կենտրոնում խնամքի ծառայություններ ստացող շահառուները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, արժանանում են ոչ պատշաճ խնամքի:

Հաշվի առնելով, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով Պաշտպանին վերապահված է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության լիազորություն, ինչպես նաև նույն օրենքով Պաշտպանն օժտված է պարբերական և ըստ անհրաժեշտության անարգել այցեր իրականացնելու իրավասությամբ այն հաստատություններ, որտեղ գտնվում են հաշմանդամություն ունեցող անձինք, Պաշտպանի՝ այդ ոլորտում լիազորությունների իրականացումն

ապահովող ներկայացուցիչները՝ նույն օրն այց են իրականացրել վերը նշված կենտրոն:

Այցի ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք վերաբերել են կենտրոնում խնամքի ծառայություններ ստացող շահառուների, այդ թվում՝ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող շահառուների ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովմանը, անկախ կյանքի երաշխավորմանն ուղղված ծառայությունների բացակայությանը, ինչպես նաև կենտրոնի շահառուներին տրամադրվող խնամքի ծառայությունների որակին, սննդի կազմակերպման հարցերին, սանիտարահիգիենիկ վիճակին, աշխատակիցների ոչ բավարար քանակին, ճաշացանկի, համապատասխան մատյանների բացակայությանը և այլն:



Այս առթիվ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ[789]:

Արձանագրված խնդիրները Պաշտպանը հասցեավորել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ խնամքի ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունում օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ նախարարությունից, ի թիվս այլնի, պարզաբանվել է, որ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և տեսչական մարմինները ձեռնամուխ են լինելու հետևել բոլոր կենտրոնների կողմից մատուցվող խնամքի ծառայությունների որակի բարելավմանը, ցուցադրել մեթոդական աջակցություն, իսկ օրենսդրության պահանջները չկատարելու և զգուշացումներն անտեսելու դեպքում կազմակերպությունները ենթարկվելու են պատասխանատվության:

Արձանագրված խնդիրները Պաշտպանը հասցեավորել է նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում իրականացված զննումների արդյունքում

---

789 Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3083?fbclid=IwY2xjawIj7LFIeHRuA2FIbQIxMAABHWthwn0vOVT88WVTVh_ggqh5w8IU_aFVojiFsLt5AHREqdCGSVLcf_kATA_aem_a01iCMQ9fWt1A1ItLSBXHw, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

արձանագրվել են խախտումներ և տրվել է կարգադրագիր: Հայտնել են նաև, որ վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումների հիման վրա հարուցվել է վարչական իրավախախտման գործի վարույթ և կենտրոնի տնօրենը ենթարկվել է վարչական տույժի, ինչպես նաև տեղեկատվություն է ներկայացվել Պետական եկամուտների կոմիտեին՝ *ընկերության կողմից առանց բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու լիցենզիայի գործունեություն ծավալելու վերաբերյալ:*

Պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը նման պայմաններում կազմակերպելը: Մասնավորապես, սանիտարահիգիենիկ վատթար վիճակի, դեղորայքի պահման պայմանների, սննդի կազմակերպման սահմանված պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացումը պետք է իրավասու պետական մարմինների գործունեության առաջնահերթություններից լինի:

Այս համատեքստում, Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ խնամքի կենտրոններում բնակվող տարեցների նորմալ կենսագործունեության համար շատ կարևոր է անհրաժեշտ և բավարար սննդի տրամադրումը: Սննդի տրամադրման գործընթացում խնդրահարույց է տրամադրվող սննդի նմուշառման բացակայությունը: Կատարած այցի ընթացքում արձանագրվել է, որ սննդի նմուշներ առկա չեն, ինչն անհնար է դարձնում տրամադրվող սննդի նկատմամբ վերահսկողությունը:

Պաշտպանն արձանագրում է, որ տարեցների և խոցելի անձանց իրավունքների երաշխավորման հարցում պետության պոզիտիվ պարտավորությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն՝ պայմանավորված իրենց առանձնահատուկ կարիքներով: Հետևաբար, առանցքային է իրավասու պետական մարմինների կողմից համապատասխան միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը մասնավոր հաստատություններում տարեցների իրավունքների պաշտպանությունը պատշաճ ապահովելու համար:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը ողջունելի է համարում այն հանգամանքը, որ 2024 թվականին «Սոցիալական աջակցության մասին» օրենքում կատարվել է օրենսդրական փոփոխություն: Ըստ այդմ, սահմանվել է, որ սոցիալական ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունները, անկախ դրանց կազմակերպաիրավական տեսակից *(պետական ոչ առևտրային, հասարակական կազմակերպություններ կամ ձեռնարկատիրական հիմնարկներ)*, պետք է հավաստագրեն մատուցվող ծառայությունների բոլոր տեսակները:

Նշված փոփոխությունը տարեցների սոցիալական իրավունքների և սոցիալական երաշխիքների պաշտպանությանն ուղղված կարևոր քայլ է,

այնուհանդերձ, կարծում ենք, որ անհրաժեշտ է ուժեղացնել սոցիալական աջակցության ոլորտի սոցիալական ծառայությունների տրամադրման նկատմամբ պետական վերահսկողությունը՝ գործունեության հանդեպ բարձր պատասխանատվության դրսևորման նպատակով:

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Կանխարգելման ազգային մեխանիզմի և Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ստորաբաժանումների աշխատակիցները Պաշտպանի գլխավորությամբ մշտադիտարկման չհայտարարված այց են իրականացրել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ Կենտրոն), ուսումնասիրել Կենտրոնի պայմանները, շահառուների և աշխատակիցների իրավունքների ապահովման վիճակը և համապատասխան փաստաթղթերը:

Ի թիվս այլնի, ուսումնասիրության առարկա են դարձել սանիտարահիգիենիկ պայմանները, շահառուների սննդի, բժշկական օգնության և սպասարկման ապահովման վիճակը, ինչպես նաև աշխատակիցների հաստիքների բավարարությունը, նրանց աշխատանքային պայմանները և այլն: Տեղի են ունեցել առանձնազրույցներ շահառուների հետ: Այցի ընթացքում Կենտրոնի անձնակազմը պատրաստակամ և ակտիվ համագործակցել է Պաշտպանի և նրա ներկայացուցիչների հետ: Մշտադիտարկման արդյունքներն առավել մանրամասն ներկայացված են Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2024 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում:

Այս առթիվ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ[790], մասնավորապես, նշելով, որ խնամքի կենտրոնների շահառուների իրավունքների պաշտպանությունն իր գործունեության կարևոր ուղղություններից է: Խնդիրները գտնվում են անձամբ իր ուշադրության ներքո:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է նշել, որ ոլորտի զարգացման համար անհրաժեշտ կլինի շարունակական օրենսդրական փոփոխություններ կատարել՝ վերանայելով տարեցների խնամքի տրամադրման կարգը, ինչպես նաև սոցիալական սպասարկման ու խնամքի գործող չափորոշիչները:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն արձանագրում է, որ տարեցների սոցիալական իրավունքների, ինչպես նաև սոցիալական երաշխիքների պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է.

- ✓ ***վերանայել օրենսդրությամբ նախատեսված «տարեց» համարվող անձանց տարիքային սահմանը,***
- ✓ ***քննարկման առարկա դարձնել Որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկը վերանայելու հնարավորության հարցը, ինչպես նաև Որոշմամբ նախատեսված հիվանդություններ ունեցող անձանց խնամքը կազմակերպելու նպատակով այլընտրանքային խնամքի հաստատություններ և***

[790] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3025, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

(կամ) ներկայիս խնամքի հաստատություններում հատուկ տարածքներ առանձնացնելու հնարավորությունը,

✓ տարեց անձին շուրջօրյա խնամքի կենտրոնում արտահերթ ընդունելությունն առավել սեղմ ժամկետում կազմակերպելու նպատակով նախատեսել առավել ճկուն կառուցակարգեր.

✓ սոցիալական ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպություններում (անկախ դրանց կազմակերպաիրավական տեսակից) ընդլայնել և ուժեղացնել իրավասու պետական մարմինների վերահսկողական լիազորությունները:

2. Տարեցներին տրամադրվող ծառայությունների խնդիր

2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են գտնվել նաև տարեցների սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրները: Այդ խնդիրներին Պաշտպանը պարբերաբար անդրադառնում է իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում:

Ճիշտ է, 2024 թվականին Պաշտպանի միջամտությամբ, ինչպես նաև Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք հարցերի տալ լուծում, այնուհանդերձ բազմաթիվ խնդիրներ շարունակում են մնալ չլուծված՝ ծառայություններ առկա չլինելու կամ հաճախ նրանց համար դրանք հասանելի չլինելու պատճառով:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած 73-ամյա անձը տեղեկացրել է, որ հայտնվել է կյանքի դժվարին իրավիճակում, ունի սննդի կարիք և չի կարողանում ձեռք բերել իրեն հետվիրահատական շրջանում նշանակված դեղամիջոցները:

Բարձրացված հարցերը քննարկվել են անձի բնակության վայրի Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի և համայնքի ղեկավարի հետ, ինչի արդյունքում, քաղաքացին ընդգրկվել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և սնունդ ստանալու նպատակով վերջինիս տրամադրվել են կտրոններ:

Մեկ այլ դեպքում, Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ իր 95-ամյա տատն անկողնային հիվանդ է: Հավելել է, որ առողջական խնդիրներով պայմանավորված՝ չի կարողացել ներկայանալ բանկ և ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու վերաբերյալ հայտարարությունը, որի արդյունքում կենսաթոշակի վճարումը դադարեցվել է: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը կենսաթոշակի վճարումը վերսկսելու հարցում:

Բարձրացված հարցը Պաշտպանի ներկայացուցիչը քննարկել է ՄՍԾ իրավասու աշխատակցի հետ: Վերջինս պատրաստակամություն է հայտնել աջակցել խնդրի լուծմանը: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ ՄՍԾ տարածքային կենտրոնի աշխատակիցն այցելել է կենսաթոշակառուին և կազմակերպել կենսաթոշակի վճարումը վերսկսելու վերաբերյալ դիմումի ստորագրումը, որից հետո՝ 2024 թվականի դեկտեմբերի ամսին, կենսաթոշակի վճարումը վերսկսվել է:

Մյուս դեպքում, քաղաքացին դիմելով Պաշտպանին՝ տեղեկացրել է, որ համատեղ բնակվում է իր տարեց մոր հետ: Հավելել է, որ մայրն ունի առողջական

լուրջ խնդիրներ. *անկողնային հիվանդ է և ունի կուրություն*: Նշել է նաև, որ միակ եկամուտի աղբյուրը մոր կենսաթոշակն է, որը չի բավարարում կենցաղային հոգսերը, մոր կարիքները (այդ թվում՝ հիգիենայի հետ կապված) հոգալու, ինչպես նաև անհրաժեշտ դեղորայքը ձեռք բերելու համար: Հայտնել է նաև, որ սոցիալական ծառայությունից մայրը չի կարողանում օգտվել, քանի որ միայնակ կենսաթոշակառու չի համարվում:

Բարձրացված հարցերը քննարկվել են իրավասու մարմինների հետ: Արդյունքում ընտանիքն ընդգրկվել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, ինչպես նաև «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվող ճաշարանից օգտվողների ցանկում: Տարեց կնոջը տրամադրվել են նաև որոշ դեղամիջոցներ:

Չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին՝ տարեցները շարունակում են բախվել սոցիալական ծառայությունների բացակայության, դրա անբավարարության կամ դժվարամատչելիության խնդիրներին:

Ուստի, Հայաստանում տարեցների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է մատչելի իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների հստակ իրավական ամրագրում:

2024 թվականին տարեցների և նրանց հարազատների կողմից տարաբնույթ սոցիալական խնդիրների վերաբերյալ Պաշտպանին ներկայացված բողոքների համալիր ուսումնասիրությունը, ինչպես նաև իրականացված մշտադիտարկումները վկայում են, որ տարեցների բազմաթիվ սոցիալական խնդիրներ շարունակել են մնալ չլուծված: Այս պայմաններում առավել կարևոր և անհրաժեշտ են դառնում պետության կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունները:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների՝ 2024 թվականի ընթացքում տարեցների խնամքի համար ավելացվել են շուրջօրյա կենտրոններում մահճակալներ, ընդհանուր առմամբ 80-ը՝ հասցնելով 1340-ի, տնային պայմաններում սպասարկում է տրվել ևս 150 անձի՝ հասցնելով 1350-ի, ցերեկային կենտրոններում խնամք և ճաշարաններում սննդի կազմակերպում է տրամադրվել ևս 100-ի՝ հասցնելով 1300-ի: Շուրջօրյա և տնային խնամքի շահառուներից անկողնային խնամք են ստանում համապատասխանաբար 278 և 112 անձ, իսկ պալիատիվ խնամք նախարարությունը չի իրականացնում:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից ևս տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ պետական դրամաշնորհների շրջանակում իրականացվող ծրագրերն իրականացնելիս 2024 թվականի ընթացքում կազմակերպության կողմից սոցիալական ծառայություններ է ստացել մոտ 1800 տարեց անձ:

Անկախ այն հանգամանքից, որ պետության և բարեգործական հասարակական կազմակերպությունների կողմից որոշ անձանց տրամադրվել է աջակցություն՝ շատ տարեցներ շարունակում են ունենալ ֆինանսական խնդիրներ և չեն կարողանում բավարարել անգամ իրենց առաջնային կարիքները: Հարցն առավել խնդրահարույց է միայնակ տարեցների շրջանում, որոնց միակ եկամուտը պետական ցածր նպաստներն ու կենսաթոշակներն են, որոնք չեն բավարարում անգամ տարեցների դեղերի ձեռքբերմանը:

Ճիշտ է, վերջին տարիներին սոցիալական նպաստների և կենսաթոշակների չափի ավելացման տեսանկյունից արձանագրվել է որոշակի առաջընթաց, այնուհանդերձ հարկ է նշել, որ խնդրի լուծմանն ուղղված բոլոր քայլերը պետք է լինեն շարունակական, ինչպես նաև համապատասխան կոնկրետ ժամանակահատվածի պահանջներին:

Տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության իրավունքը, նրանց համար սոցիալական ու այլ երաշխիքների ապահովման հարցն ամրագրված է նաև միջազգային փաստաթղթերում, օրինակ՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում[791]:

Հոդված 23. Տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության իրավունքը

Տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, ուղղակիորեն կամ պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելով, ընդունել կամ խրախուսել համապատասխան միջոցառումներ, որոնք մասնավորապես ուղղված են՝

- հնարավորություն տալ տարեց մարդկանց հնարավորին չափ երկար մնալու որպես հասարակության լիարժեք անդամներ՝ հետևյալ միջոցներով.

ա) համապատասխան ռեսուրսներ, որոնք հնարավորություն կտան նրանց վարելու վայելուչ կյանք և ակտիվ դեր խաղալու հասարակական, սոցիալական և մշակութային կյանքում,

բ) տարեց մարդկանց համար մատչելի ծառայությունների ու մեխանիզմների և դրանցից օգտվելու հնարավորությունների մասին տեղեկատվության տրամադրում,

- հնարավորություն տալ տարեց մարդկանց՝ ազատորեն ընտրելու իրենց կենսակերպը և վարելու անկախ կյանք իրենց հոգեհարազատ միջավայրում այնքան, ինչքան նրանք ցանկանում են և ի վիճակի են, հետևյալ միջոցներով.

ա) նրանց կարիքներին և առողջական վիճակին հարմար բնակավայրի կամ նրանց բնակավայրում հարմարեցման նպատակով համապատասխան օժանդակության տրամադրում,

բ) նրանց վիճակով պայմանավորված՝ առողջական խնամք և ծառայություններ,

- երաշխավորել համապատասխան աջակցություն հաստատություններում բնակվող տարեց մարդկանց, հարգելով նրանց մենությունը, և մասնակցություն հաստատությունում կյանքի պայմանների վերաբերյալ որոշումների ընդունմանը:

---

[791] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/-/native/1680b21993, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետությունը 2004 թվականին վավերացրել է Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի մի շարք հոդվածներ, սակայն չի վավերացրել ու չի ստանձնել խարտիայի 23-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները, որոնք վերաբերում են տարեցների սոցիալական պաշտպանության հարցերին:

Այս ուղղությամբ 2024 թվականի ընթացքում ևս պատշաճ ջանքեր չեն գործադրվել: Այսպես, համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված պարզաբանման՝ *Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի՝ տարեց անձանց իրավունքների սոցիալական պաշտպանության մասին 23-րդ հոդվածի վավերացումը և իրավական այլ կարգավորումներ նախատեսվում է իրականացնել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ռազմավարության շրջանակներում:*

Վերոգրյալի համատեքստում խիստ մտահոգիչ է այն, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող հաղորդումների շրջանակներում տարիներ շարունակ բարձրացրել է Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի հիշյալ հոդվածի վավերացման անհրաժեշտության հարցը[792], սակայն հարցին լուծումներ չեն տրվել:

Ավելին, բարձրացված խնդրին անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը (2018-2024): Այսպես, դեռևս 2018 թվականին Հայաստան կատարած այցին հաջորդիվ 2019 թվականին հրապարակված զեկույցով անդրադառնալով Հայաստանում տարեց անձանց իրավունքների պաշտպանությանը՝ Հանձնակատարը, ի թիվս այլնի, առաջարկել է, որ Հայաստանը ստանձնի Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի հոդված 23-ով սահմանված պարտավորությունը սոցիալական պաշտպանության տարեցների իրավունքի վերաբերյալ[793]:

Վերոգրյալի հետ մեկտեղ, խիստ մտահոգիչ և անթույլատրելի է նաև այն, որ ըստ *ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի թիվ 498-Լ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 8-րդ կետի՝ նշված հոդվածի վավերացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը նախատեսված էր կատարել դեռևս 2023 թվականին:*

---

[792] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019 և 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 751-752, 1432-1434):

[793] Զեկույցի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/report-on-the-visit-to-armenia-from-16-to-20-september-2018-by-dunja-m/168091f9d5 (տե՛ս էջ 24, կետ 94), 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հարկ է նշել, որ 2024 թվականի հուլիսի 23-ին Եվրոպայի խորհրդի «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի կոնվենցիոն համակարգի և դրա զեկույցների ներկայացման մեխանիզմների վերաբերյալ աշխատաժողովին:

Աշխատաժողովի ընթացքում Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետ, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի փոխնախագահ Տատյանա Պույուն և Եվրոպայի խորհրդի ազգային խորհրդատու, միջազգային իրավունքի փորձագետ Աննա Մելիքյանը ներկայացրեցին Եվրոպական սոցիալական խարտիայի և դրա մոնիտորինգային ընթացակարգերի ընդհանուր նկարագիրը, Եվրոպական սոցիալական խարտիայի համակարգի բարեփոխումները, ինչպես նաև հետագա քայլերը[794]:

Բացի այդ, 2024 թվականի դեկտեմբերի 2-ին Եվրոպայի խորհրդի նույն ծրագրի շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են նաև *«Ինչպես համագործակցել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի հետ՝ Եվրոպական սոցիալական խարտիայի զեկույցների ներկայացման ընթացակարգի ներքո»* վերտառությամբ դասընթացին[795]:

Դասընթացի նպատակն էր ամրապնդել Հայաստանում երրորդ կողմի կազմակերպությունների համագործակցությունը Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) հետ՝ Եվրոպական սոցիալական խարտիայի (ԵՍԽ) զեկույցների ներկայացման ընթացակարգի ներքո: Միջոցառման ընթացքում ներկայացվել են հայերեն թարգմանված և տպագրված 2 ձեռնարկ. *«Ինչպե՞ս կարող են Մարդու իրավունքների ազգային հաստատությունները ու իրավահավասարության ազգային մարմինները համագործակցել Սոցիալական իրավունքի եվրոպական*

[794] Մանրամասն տե՛ս, հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/NJkqv, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[795] Մանրամասն տե՛ս, հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/1grux, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կոմիտեի հետ՝ Եվրոպական սոցիալական խարտիայի մոնիթորինգի համակարգի շրջանակներում» և «Ինչպե՞ս կարող են (Մ)ՀԿ-ները համագործակցել Սոցիալական իրավունքի եվրոպական կոմիտեի հետ՝ Եվրոպական սոցիալական խարտիայի մոնիթորինգի ընթացակարգերի շրջանակներում»[796]*:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***տարեցների իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով մշակել հստակ, մատչելի իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքներ,***
- ✓ ***տարեց մարդկանց արժանապատիվ գոյության իրավունքը ապահովելու նպատակով՝ շարունակաբար քայլեր ձեռնարկել կենսաթոշակների և տարեցներին վճարվող նպաստների չափերը բարձրացնելու ուղղությամբ,***
- ✓ ***վավերացնել Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի՝ տարեց անձանց իրավունքների սոցիալական պաշտպանության մասին 23-րդ հոդվածը:***

[796] Ձեռնարկները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://shorturl.at/QM1du, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 21. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ իր գործունեությունը տարբեր ձևաչափերով:

Տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմ է մուտքագրվել 99 գրավոր և բանավոր բողոք փախստականի կարգավիճակ ունեցող անձանց կողմից, 29 գրավոր և բանավոր բողոք ապաստան հայցող անձանցից, 96 գրավոր և բանավոր բողոք փախստականի կարգավիճակ ստանալու համար դիմող անձանցից, որոնք կամ դեռևս իրենց ներկայացրած դիմումի պատասխանը չեն ստացել, կամ վերջիններին մերժել են տրամադրել փախստականի կարգավիճակ: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից նաև պարզաբանումներ են ներկայացվել Պաշտպանի աշխատակազմի էլեկտրոնային հասցեին և հեռահաղորդակցության մյուս միջոցներին ստացված՝ ապաստան հայցելու իրավական կարգավորումների վերաբերյալ հարցումներին ի պատասխան:

Պաշտպանը կարևորում է նաև հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը:

2024 թվականի ընթացքում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության համատեքստում Պաշտպանն ակտիվ համագործակցել է պետական մարմինների, նշված անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների հետ:

Պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների հրավերներով կամ վերջիններիս հետ համատեղ Պաշտպանը և իր ներկայացուցիչները մասնակցել են ոլորտային տարբեր հարցերով քննարկումների, ընդգծել համապատասխան ոլորտում իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման կարևորությունը, իրականացրել են այցեր, այդ թվում՝ չհայտարարված այցեր տարբեր կառույցներ, օրինակ՝ քրեակատարողական հիմնարկներ, ՀՀ սահմանային անցման կետեր, «Հատուկ կացարան» ՊՈԱԿ, «Զվարթնոց» և «Շիրակ» միջազգային օդանավակայանների տարանցիկ գոտիներ և այլն:

Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները այց են իրականացրել «Հատուկ կացարան» ՊՈԱԿ (այսուհետ՝ նաև Կացարան), որի շրջանակում ուսումնասիրվել են այնտեղ բնակվող անձանց կենսաապահովման պայմանները, վերջիններիս համապատասխանությունը միջազգային և ներպետական իրավակարգավորումներին, տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը, սննդի, սպիտակեղենի, անձնական հիգիենայի պարագաների, հագուստի և կոշիկի տրամադրման հետ կապված հարցերը: Պաշտպանն առանձնազրույցներ է ունեցել Կացարանում բնակվող ապաստան

հայցողների, այդ թվում՝ երեխաների, ինչպես նաև Կացարանի աշխատակիցների հետ:

Այցի ընթացքում արձանագրվել են խնդիրներ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում՝ խոհանոցի և սանհանգույցների սանիտարահիգիենիկ վիճակին, Կացարանի գերբնակեցվածությանը, շենքային պայմանները հարմարեցված չեն եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Արձանագրվել են ապաստան հայցող երեխաների կրթության իրավունքի, առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին տրամադրվող աջակցության և խնամքի պատշաճ ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ: Արձանագրվել է նաև Կացարանում արաբերեն լեզվի մասնագետի բացակայության խնդիր այն դեպքում, երբ այնտեղ բնակվողների մեծ մասն արաբախոս է:

Կացարանի տնօրինությունը բարձրացրել է նաև Կացարանի անվտանգության ապահովման հետ կապված հարցը՝ նշելով մասնագիտացված ծառայության ներդրման անհրաժեշտությունը:

Խիստ մտահոգիչ են շարունակում մնալ նաև հարևան մասնաշենքերից կոյուղաջրի արտահոսքի հետևանքով առաջացած խնդիրները, որի առնչությամբ Պաշտպանը անհետաձգելի միջոցներ ձեռնարկելու պահանջով դիմել է համապատասխան մարմնին:

Արձանագրված խնդիրների առնչությամբ գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններին:

Պաշտպանի աշխատակազմի, Հայկական Կարմիր խաչի ընկերության, ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչները համատեղ սահմանային մոնիթորինգի այց են իրականացրել «Բագրատաշեն», «Բավրա» սահմանային անցակետեր, «Այրում» երկաթուղային կայարան, «Շիրակ» օդանավակայան, «Գոգավան» անցակետ: Այցի շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչը ՀՀ պետական սահմանի պահպանության ծառայություն իրականացնող ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողների և սպայական անձնակազմի համար անցկացրել է «Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության միջազգային և ազգային չափանիշները» խորագրով վերապատրաստման դասընթացներ, որոնց շրջանակներում ներկայացրել է Պաշտպանի լիազորությունների շրջանակն ու աշխատանքի հիմնական ուղղությունները փախստականների, ապաստան հայցողների և ՄԱԿ ՓԳՀ-ի մտահոգության ներքո գտնվող այլ անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ նաև Միգրացիոն ծառայություն), Փաստաբանների պալատի ներկայացուցիչների հետ համատեղ մշտադիտարկման այց են իրականացրել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ, որտեղ պահվում են ապաստան հայցողներ, ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն և փաստաթղթեր չունեցող անձինք: Այցի նպատակն էր տեղում ծանոթանալ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին, այդ թվում՝ ազատությունից զրկման պայմաններին, ապաստան հայցողների

բացահայտման և նրանց ապաստան տրամադրող մարմին ուղղորդման հետ կապված հարցերին և այլն: Նշված հարցերի առնչությամբ քննարկումներ են իրականացվել նաև քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ: Այցի իրականացման պահին քրեակատարողական հիմնարկում պահվում էր 180 օտարերկրացի, այդ թվում՝ ապաստան հայցողներ:

Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից ստեղծված՝ ապաստան հայցողների կալանավորման հարցերով նորակազմ միջգերատեսչական աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը: Նիստի նպատակն էր սահմանել աշխատանքային խմբի գործողությունների ծրագիրը և վեր հանել ապաստան հայցող անձանց իրավունքների իրացմանն առնչվող խնդիրները: Աշխատանքային խումբն իրենից ներկայացնում է համագործակցության հարթակ ապաստան հայցողների բացահայտման և ուղղորդման հարցերում:

Պաշտպանի ներկայացուցիչը մասնակցել է նաև «Ապաստան հայցողների համար Հատուկ կացարանի պայմանների վերաբերյալ» աշխատանքային խմբի 2-րդ նիստին, որի շրջանակում քննարկվել են Կացարան կատարած այցերի ընթացքում արձանագրված հարցերը, ինչպես նաև Կացարանի տնօրինության և բնակիչների կողմից բարձրաձայնված խնդիրները:

Պաշտպանի ներկայացուցիչը մասնակցել է «Փախստականների պաշտպանության մուտքի զգայուն համակարգի» միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստին, որի ընթացքում քննարկվել են 2024 թվականի ծրագրերն ու առաջնահերթ գործողությունները, ներկայացվել է սահմանների հետ կապված ընթացիկ գործողությունների, ապաստանի տրամադրմանն առնչվող ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն:

Պաշտպանի ներկայացուցիչը մասնակցել է նաև նույն միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են հաշվետու տարվա ընթացքում իրականացված աշխատանքները, արձանագրված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև 2025 թվականի առաջնահերթ գործողությունների ծրագիրը: Այնուհետև աշխատանքային խմբի ներկայացուցիչները մշտադիտարկման այց են իրականացրել Հատուկ կացարան:

Պաշտպանի ներկայացուցիչը մասնակցել է ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի՝ Հայաստանում միջազգային պաշտպանության միջավայրը բարելավելու նպատակով սկսված ամենամյա «Մասնակցային գնահատում» գործընթացին: Գործընթացի նպատակն էր խթանել հիմնական շահագրգիռ կողմերի և Հայաստանում բռնի տեղահանված անձանց միջև երկխոսությունը, նպաստել բռնի տեղահանված անձանց առջև ծառացած մարտահրավերների և խնդիրների վերհանմանը, ուսումնասիրությանը և համապատասխան լուծումների առաջարկմանը:

Պաշտպանի հաստատության 20-ամյակի առթիվ կազմակերպված բարձրաստիճան միջազգային համաժողովի շրջանակներում անցկացվել է

պանելային քննարկում՝ «Օմբուդսմանական/ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերը ճգնաժամային իրավիճակներում. Արձագանք՝ տեղահանվածների, փախստականների և միգրանտների կարիքներին» թեմայով: Որպես բանախոս հանդես են եկել Մոլդովայի Հանրապետության Օմբուդսման Չեսլավ Պանիկոն, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Անդրանիկ Եղոյանը, Եվրոպայի խորհրդի փորձագետ Սաշա Յանկովիչը և ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցչության իրավաբանական բաժնի ղեկավար Աննա Կոպցյուխը:

Պաշտպանի և ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպվել է «Սահմանափակումներ և հնարավորություններ. Փախստականների և ապաստան հայցողների մարտահրավերները Հայաստանում» թեմայով աշխատաժողով, որի շրջանակներում անցկացվել է պանելային քննարկում՝ «Փախստականների իրավունքների ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

Քննարկվել են փախստականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հիմնական խնդիրներն ու դրանց լուծման լավագույն ուղիները, երկրում փախստականների իրավունքների ոլորտում գրանցված առաջընթացն ու գոյություն ունեցող մարտահրավերները, Հայաստանում նրանց իրավունքների պաշտպանության ընթացիկ վիճակը, իրավական բացերը և այլն:

Միջոցառմանը մասնակցել են Ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Առողջապահության նախարարության, Միգրացիոն ծառայության, Միասնական սոցիալական ծառայության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ: Միջոցառմանը մասնակցել են նաև փախստականներ ու բռնի տեղահանված անձինք, ովքեր ներկայացրել են իրենց հուզող խնդիրները:

1. Ոլորտին վերաբերելի վիճակագրական տվյալներ

Համաձայն ՆԳՆ միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ-ում ապաստան է հայցել 660 անձ: Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալներով՝ 2024 թվականի ընթացքում փախստականի կարգավիճակ է ստացել 207 անձ, իսկ մերժում ստացած ապաստան հայցողների թիվը կազմել է 173: Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ գրանցվել է նաև առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների՝ ՀՀ ժամանման 1 դեպք:

2024 թվականի ընթացքում ապաստան հայցած և փախստականի կարգավիճակ ստացած անձանց թիվը՝ ըստ քաղաքացիության երկրի հետևյալն է՝ Ուկրաինա՝ համապատասխանաբար 149 և 112 անձ, Իրաք՝ համապատասխանաբար 146 և 35 անձ, Իրան՝ համապատասխանաբար 93 և 12 անձ, Եգիպտոս՝

համապատասխանաբար 78 և 4 անձ, Ռուսաստանի Դաշնություն՝ համապատասխանաբար 55 և 6 անձ, Սիրիա՝ համապատասխանաբար 19 և 10 անձ, Աֆղանստան՝ համապատասխանաբար 10 և 2 անձ, Բելառուս՝ համապատասխանաբար 5 և 3 անձ, Թուրքիա՝ համապատասխանաբար 5 և 1 անձ և այլն:



2. Արձանագրված հիմնական խնդիրները

2024 թվականին Հատուկ կացարան իրականացված այցի ընթացքում Պաշտպանի և աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են տարաբնույթ խնդիրներ: Վերջիններս վերաբերել են անվտանգության մասնագիտացված ծառայության ներդրման անհրաժեշտությանը, տարածքի մատչելիությանը, Կացարանի գերբնակեցվածությանը, սանիտարահիգիենիկ վիճակին, ապաստան հայցող երեխաների կրթության իրավունքին, առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին տրամադրվող աջակցությանը և խնամքի պատշաճ ապահովմանը, արաբերեն լեզվի մասնագետի բացակայությանը, կոյուղաջրի արտահոսքի հետևանքով առաջացած խնդիրներին, Պաշտպանին դիմելու հնարավորության և Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարի վերաբերյալ իրազեկող պաստառների, թերթիկների կամ թռուցիկների բացակայությանը և այլն:

Այս առումով հարկ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները Կացարանի հանրամատչելի և տեսանելի հատվածներում տեղադրել են տեղեկատվական թերթիկներ (3 լեզուներով՝ անգլերեն, ռուսերեն, արաբերեն), որոնք իրազեկում են բնակիչներին Պաշտպանին դիմելու իրենց իրավունքների մասին :

Մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ կոյուղաջրի արտահոսքի արդյունքում Կացարանի նկուղում կոյուղաջրեր են կուտակվել, որը հանգեցրել է տարածքի սանիտարահիգիենիկ վիճակի վատթարացմանը: Նշված խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից գրություններ են հասցեագրվել իրավասու մարմիններին և կազմակերպություններին:

Ի պատասխան՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը հայտնել է, որ Մոլդովական 29/1 շենքը նախկին հանրակացարանի մասնաշենք է, որը հետագայում վերակառուցվել է բազմաբնակարան բնակելի շենքի, և որի ջրամատակարարման և ջրահեռացման արտաքին համակարգերն ընդգրկված չեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող գույքի ցանկում:

Երևանի քաղաքապետարանի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ տվյալ խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո: Միաժամանակ տեղեկացրել է, որ հայտարարվել է Մոլդովական փողոցի հ.29/1 շենքից մինչև Դ. Մայյան փողոցով անցնող կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքների ձեռքբերման մրցույթ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում, գնման ընթացակարգով, առաջիկա տարիներին կհայտարարվի նաև շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթ:

Նշված հարցի առնչությամբ գրություն է հասցեագրվել նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Վերջինս նույնպես տեղեկացրել է, որ նշված շենքի ջրամատակարարման և ջրահեռացման արտաքին համակարգերն ընդգրկված չեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող գույքի ցանկում: Հավելել են նաև, որ շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի պատշաճ սպասարկում իրականացնելու նպատակով, Երևանի քաղաքապետարանի կողմից կացարանի նկուղային տարածքի բարեկարգման աշխատանքների խնդրի կարգավորումից հետո, անհրաժեշտ է սեփականատիրոջ կողմից Երևան քաղաքի Մոլդովական 29/1 շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերն որպես նվիրատվություն հանձնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Ջրային կոմիտեի, հետագայում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածք ընդգրկելու նպատակով:

Խիստ մտահոգիչ համարելով ստեղծված իրավիճակը՝ Պաշտպանը խնդրի հետ առնչություն ունեցող բոլոր իրավասու մարմիններին հորդորում է ձեռնարկել և իրականացնել անհետաձգելի միջոցներ տվյալ և համանման խնդիրների անհապաղ լուծման ուղղությամբ:

Պաշտպանը կարևորում է նաև մնացյալ խնդիրների, մասնավորապես՝ տարածքի մատչելիության, գերբնակեցվածության, սանիտարահիգիենիկ պայմանների, ապաստան հայցող երեխաների կրթության իրավունքի, առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին տրամադրվող աջակցության և խնամքի պատշաճ ապահովման, արաբերեն լեզվի մասնագետի բացակայության ուղղությամբ պատշաճ և բավարար կառուցակարգերի մշակումն ու իրացումը:

3. Ոլորտում գոյություն ունեցող համակարգային խնդիրները

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփվել և ներկայացվել են փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող, համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնք շարունակում են արդիական մնալ: Վերջիններս վերաբերում են մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում՝ անձի արտաքսման կամ հանձնման օրենսդրական արգելքին, պետական սահմանի անցման բոլոր կետերում Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների բացակայությանը, ապաստանի հայցեր ընդունելու ընթացակարգերի օրենսդրական կարգավորման բացակայությանը, ռեսուրսների բացակայության պատճառով ապաստան հայցողներին հատուկ կացարանում տեղավորելու անհնարինությանը, ապաստան հայցողների և փախստականների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգ (օնլայն հարթակ) ստեղծելու անհրաժեշտությանը, ապաստան հայցողների և փախստականների աշխատանքային իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքներին, ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների ապահովման խնդիրներին և այլն:

3.1. Մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում՝ անձի արտաքսման կամ հանձնման օրենսդրական արգելքը

Մարդասիրական և սովորութային միջազգային իրավունքի համաձայն՝ չվերադարձելիության սկզբունքն արգելում է պետություններին արտաքսել կամ հանձնել անձին իր ծագման երկիր, երբ կան էական հիմքեր ենթադրելու, որ անձը վերադառնալիս կհայտնվի անուղղելի վնասի վտանգի տակ՝ ներառյալ հալածանքները, խոշտանգումները, վատ վերաբերմունքը կամ մարդու իրավունքների այլ լուրջ խախտումները:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է անձին (անկախ նրա քաղաքացիությունից) հանձնման ուղղակի արգելք, եթե առկա է իրական սպառնալիք, որ տվյալ անձը կարող է ենթարկվել մահապատժի, խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի այդ երկրում:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիան) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի ("refouler") կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իրականացման վերաբերյալ թիվ 4 (2017թ.) ընդհանուր մեկնաբանության 22-րդ հոդվածի համատեքստում ՄԱԿ Խոշտանգումների դեմ կոմիտեն ներկայացնում է մարդու իրավունքների իրավիճակների օրինակներ, որոնք կարող են խոշտանգումների վտանգ հանդիսանալ, և դրանք մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն անձին իրենց տարածքից արտաքսելու մասին որոշում կայացնելիս: Մասնավորապես,

պետությունները պետք է հաշվի առնեն՝ արդյո՞ք շահագրգիռ անձը կարտաքսվի մի պետություն, որտեղ զրկված է կյանքի բնական իրավունքից, ներառյալ՝ անձին արտադատական սպանությունների կամ բռնի անհետացման ենթարկելը, կամ որտեղ մահապատիժն ուժի մեջ է և համարվում է խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի դրսևորում, մասնավորապես. (i) եթե վերջինս վերացրել է մահապատիժը կամ մորատորիում է սահմանել դրա կատարման նկատմամբ[797]:

Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 36 ընդհանուր մեկնաբանությունում (պայմանագրային մարմին, որն անկախ փորձագետներից կազմված մարմին է, որը վերահսկում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի կատարումը) նշվում է, որ կյանքի իրավունքը հարգելու և ապահովելու պարտականությունը պահանջում է մասնակից պետություններից ձեռնպահ մնալ անձանց արտաքսելուց, արտահանձնելուց կամ այլ կերպ տեղափոխելուց այն երկրներ, որտեղ կան էական հիմքեր ենթադրելու, որ նրանց կյանքի իրավունքի խախտման իրական ռիսկ կա (պարագրաֆ 30): Մարդու իրավունքների կոմիտեն այնուհետև նշում է, որ որևէ կոնկրետ հանցագործության համար մահապատիժը չվերականգնելու պարտավորությունը պահանջում է, որ մասնակից պետությունները չարտաքսեն, չհանձնեն կամ այլ կերպ չտեղափոխեն անձին մի երկիր, որտեղ նա պետք է կանգնի դատարանի առաջ՝ մահապատժով դատապարտվող հանցագործության համար, եթե նույն հանցագործությունը մահապատիժ չի ենթադրում արտահանձնող պետությունում, այնքան ժամանակ, քանի դեռ վստահելի և արդյունավետ երաշխիքներ առկա չեն, որ անհատը մահապատժի չի ենթարկվի (պարագրաֆ 34)[798]:

ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես պատժատեսակ չի կարող նշանակվել, եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով:

Վերը շարադրված բոլոր իրավակարգավորումները վկայում են այն մասին, որ մահապատժի վտանգի առկայության դեպքում անձը չի կարող արտաքսվել կամ հանձնվել: Մինչդեռ ոլորտային օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում բացակայում է մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձին արտաքսելու կամ հանձնելու օրենսդրական արգելքը:

Այս առումով հարկ է նշել, որ մշակվել է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքը, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան, պաշտպանում է նաև բոլոր օտարերկրացիներին Հայաստանի Հանրապետությունից հարկադրաբար հեռացվելուց, եթե նրանց սպառնում է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի ենթարկվելու վտանգ՝

---

[797] Հասանելի է https://www.refworld.org/legal/general/cat/2018/en/120416 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[798] Հասանելի է https://www.refworld.org/legal/general/hrc/2019/en/123145 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում օժանդակ պաշտպանություն կամ հանդուրժվողի կարգավիճակ տրամադրելու միջոցով[799]:

Վկայակոչված նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է Օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող 9-րդ հոդվածի 3-րդ մասը ձևակերպել հետևյալ կերպ. օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի:

Կարևորելով ոլորտային օրենսդրության կատարելագործման առնչությամբ իրականացված քայլերը՝ Պաշտպանը կոչ է անում միջոցներ ձեռնարկել օրենքի շուտափույթ ընդունման ուղղությամբ՝ հաշվի առնելով ոլորտում գոյություն ունեցող միջազգային չափանիշները:

3.2. Պետական սահմանի անցման բոլոր կետերում Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների բացակայությունը

Ինչպես 2023 թվականին իրականացված մոնիթորինգի շրջանակներում, այնպես էլ 2024 թվականին Պաշտպանի աշխատակազմը պետական անցման կետերում, մասնավորապես՝ «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում արձանագրել է Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների բացակայության խնդիրներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկադրող պատճառների հետևանքով իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը լքած և միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք, անցնելով պետական սահմանը, առաջնային կարիք ունեն տեղեկանալու համապատասխան օգնություն ստանալու հնարավոր ձևերի վերաբերյալ, սահմանային պաստառների առկայությունը վերջիններիս համար ունի կենսական նշանակություն՝ միաժամանակ հիմք ընդունելով այն փաստը, որ անձանց իրավունքների ապահովումը պետությունների պոզիտիվ պարտականությունն է, որը սահմանված է ՀՀ կողմից վավերացված միջազգային տարբեր փաստաթղթերով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է պետական սահմանի բոլոր անցման կետերում տեղադրել Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառներ:

3.3. Ռեսուրսների բացակայության պատճառով ապաստան հայցողներին հատուկ կացարանում տեղավորելու անհնարինությունը

2023 թվականին կանխորոշվում էր Աբովյան քաղաքում կառուցվող նոր կացարանի շինարարական աշխատանքների ավարտը՝ այն նախատեսելով 2024 թվականի նոյեմբեր ամսվա ավարտին: Կացարանը պետք է ունենար միաժամանակ 100 անձի բնակեցման հնարավորություն: Ըստ Հատուկ կացարանի ներկայացուցչի՝ նոր կացարանի շինարարական աշխատանքներն ավարտվել են, սակայն մինչ օրս

---

[799] Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, հասանելի է https://www.e-draft.am/projects/8209/about հղումով, նախագիծ 4, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

այն դեռևս չի հանձնվել շահագործման՝ հաշվի առնելով վերանորոգման աշխատանքներով պայմանավորված խնդիրները:

2024 թվականի ընթացքում Պաշտպանին ուղղված մի շարք դիմումներում բարձրացվել է այն հարցը, որ ապաստան հայցողները չեն կարողանում լուծել սենյակ վարձակալելու, կենսաապահովման հիմնական կարիքները բավարարելու հետ կապված խնդիրները, իսկ Միգրացիոն ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հատուկ կացարանում չկան ազատ տեղեր՝ նոր ապաստան հայցողների տեղավորման համար:

Հատուկ կացարան կատարված այցերի արդյունքում արձանագրված խնդիրները, Հայաստանում ապաստան հայցողների թիվը, ինչպես նաև վերջիններիս կողմից՝ կացարանի խնդրի կարգավորման նպատակով մուտքագրված դիմումները վկայում են նոր կացարանի շինարարական աշխատանքները հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտին հասցնելու անհրաժեշտության մասին:

Ըստ վիճակագրական տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի ընթացքում ապաստան է հայցել 660 անձ, նոր կացարանի կառուցման աշխատանքների ավարտից հետո էլ հնարավոր կլինի կացարանով ապահովել ևս 100-ին: Այս ցուցանիշը փաստում է, որ մոտ 500 ապաստան հայցողներ կրկին ունենալու են կացարանի ապահովման խնդիր:

ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 951-Ն որոշման համաձայն՝ Միգրացիոն ծառայության կողմից տրամադրվում է ընդամենը 20.000 դրամ, իսկ ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ: Ապաստան հայցողներին տրամադրվող դրամական օգնության նպատակով անհրաժեշտ ծախսերի նախատեսման հնարավորության հարցը քննարկվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի շրջանակներում: Ընդ որում, Միգրացիոն ծառայության կողմից դրամական օգնությունը տրամադրվում է 3 ամիս ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ առավելագույնը մինչև 6 ամիս՝ կացարանի, կոմունալ և այլ հարցերը լուծելու նպատակով, որը սակայն բավարար չէ անհրաժեշտ կարիքները հոգալու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտին հասցնել Հատուկ կացարանի շինարարական և շահագործման հանձնման աշխատանքները,***
- ✓ ***հաշվի առնելով որոշմամբ նախատեսված աջակցության գումարի՝ ապաստան հայցող անձանց կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու ծախսերը չբավարարելու հանգամանքը՝ անհրաժեշտ է հավելյալ ֆինանսական միջոցներ նախատեսել ապաստան հայցող անձանց տրամադրվող ֆինանսական աջակցության նպատակով:***

3.4. Ապաստան հայցողների և փախստականների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգ (օնլայն հարթակ) ստեղծելու անհրաժեշտություն

Ապաստան հայցողների և փախստականների կողմից Պաշտպանի աշխատակազմ ստացված դիմում-բողոքներով բարձրացված հարցերի բովանդակությունը, դիմում-բողոքների շարունակաբար աճող թիվը, Հատուկ կացարան կատարված մշտադիտարկման այցերը, ինչպես նաև իրավասու պետական մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցությունը վկայում են, որ ապաստան հայցողները և փախստականները մինչ այժմ բախվում են իրենց իրավունքների վերաբերյալ ամբողջական և ամփոփ տեղեկատվություն ստանալուն առնչվող դժվարությունների:

Իրավասու պետական մարմիններն ու կազմակերպություններն իրենց հերթին կատարում են շարունակական իրազեկման աշխատանքներ, ինչպես նաև տրամադրում են իրավաբանական խորհրդատվություն, սակայն սահմանային անցակետերում առկա իրազեկող պաստառները, ինչպես նաև Հատուկ կացարանում առկա տեղեկատվական թերթիկները բավարար չեն ապաստան հայցողներին պատշաճորեն ուղղորդելու համար: Խնդիրը արդիական է հատկապես այն խմբի ապաստան հայցողների և փախստականների համար, ովքեր չեն բնակվում Հատուկ կացարանում, սակայն Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում բախվում են մի շարք խնդիրների՝ իրենց կարգավիճակի և իրավունքների իրացման տեսանկյունից, ինչպիսիք են, օրինակ, կրթություն ստանալու, աշխատանքի ապահովման և այլ հիմնարար իրավունքները:

Օրինակ՝ Ռումինիայում, ինչպես նաև եվրոպական մի շարք այլ երկրներում գործարկվում են միասնական տեղեկատվական համակարգեր, որտեղ ներկայացված է ապաստան հայցողներին և փախստականներին առնչվող տեղեկատվություն՝ ոլորտին վերաբերելի բոլոր մանրամասներով[800]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է փախստականներին և ապաստան հայցողներին առնչվող իրավակարգավորումները, ապաստան հայցելու ընթացակարգը և այլ կարևոր տեղեկությունները հավաքագրել մեկ միասնական օնլայն հարթակում, որը կարող է էական խթան հանդիսանալ ապաստան հայցողների և փախստականների համար իրավունքների երաշխավորման և պաշտպանության տեսանկյունից: Անհրաժեշտ է, որ հարթակը լինի պարզ և մատչելի, պարունակի ոլորտի օրենսդրական կարգավորումները, տեղեկատվություն բոլոր պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների վերաբերյալ: Ամբողջական տեղեկատվությունը միաժամանակ պետք է լինի բոլոր անհրաժեշտ օտար լեզուներով:

3.5. Ապաստան հայցողների և փախստականների աշխատանքային իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքներ

«Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապաստան հայցողներն ու ՀՀ-ում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն ՀՀ տարածքում աշխատանք փնտրելու և

---

[800] Հասանելի է https://cezicelegea.ro/ro հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

աշխատելու նույն պայմաններով, ինչ ՀՀ քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հատուկ կացարան կատարած այցերի ընթացքում որոշ ապաստան հայցողներ մտահոգություն են հայտնել առ այն, որ ունեն մասնագիտություններ, սակայն հայոց լեզվի չիմացությունը լուրջ խոչընդոտներ է ստեղծում ոչ միայն մասնագիտական աշխատանքի, այլ առհասարակ աշխատանք գտնելու հարցում: Միաժամանակ նշված խնդիրը մինչ 2024 թվականը կարգավորվում էր միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով, սակայն այդ ծրագրերը 2024 թվականի ընթացքում չեն իրականացվել:

Այցերի ընթացքում պարզ է դարձել նաև, որ Հատուկ կացարանում առկա է մանկական խաղասենյակ, սակայն այն չի գործարկվում՝ խաղավար չունենալու հանգամանքով պայմանավորված: Նշվածն էլ հանգեցնում է նրան, որ ապաստան հայցող կամ փախստականի կարգավիճակ ունեցող որոշ կանայք զրկվում են աշխատանքի հնարավորությունից, քանի ունեն մանկահասակ երեխաներ, որոնց համար թեկուզ կարճատև ժամանակով զբաղվածություն չի ապահովվում: Մի շարք դեպքերում ծնողները երեխաներին չեն ցանկանում տանել մանկապարտեզներ՝ հաշվի առնելով լեզվական խոչընդոտներն ու մշակութային առանձնահատկությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Հատուկ կացարանի աշխատակազմը համալրել համապատասխան մասնագետների հաստիքներով՝ ստեղծելով պատշաճ և բավարար պայմաններ ապաստան հայցողների և փախստականների աշխատանքային իրավունքի իրացման տեսանկյունից:

3.6. Ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցելու կարգը

Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1147-Ն որոշմամբ կարգավորվում են ՀՀ սահմանային անցման կետերում, ՀՀ տարածքում կամ ազատազրկման վայրերում օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ներկայացրած ապաստանի խնդրանքը ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի՝ ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղակայված ստորաբաժանումների, Ոստիկանության տարածքային մարմինների և ազատազրկման վայրերի վարչակազմի կողմից ընդունվելու և այն ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը փոխանցվելու հետ կապված հարաբերությունները:

Հատկանշական է, որ նշված որոշման հավելվածում մանրամասն ներկայացված է սահմանային անցակետերից ուղղորդումների կարգը, իսկ քրեակատարողական հիմնարկներից ուղղորդումներին անդրադարձ է կատարվել Որոշման հավելվածի 11-րդ կետում միայն՝ նշվելով, որ ոստիկանությանը, ինչպես նաև ազատազրկման վայրերի վարչակազմին ներկայացված ապաստանի խնդրանքն ընդունվում և ծառայությանն է փոխանցվում սույն կարգով:

Պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկումների, ինչպես նաև աշխատանքային խմբերի քննարկումների արդյունքում անդրադարձ է կատարվել այս հարցին և նշվել, որ Որոշման մեջ բավականաչափ մանրամասն չէ պարզաբանված

քրեակատարողական հիմնարկներից ուղղորդման կարգը, քանի որ քրեակատարողական հիմնարկներից ու սահմանային անցակետերից ուղղորդման ընթացակարգերը չեն կարող լինել նույնը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է որոշման մեջ տարբերակել և մանրամասնել ազատազրկման վայրերի վարչակազմին և սահմանային անցակետերին ներկայացվող ապաստանի խնդրանքի ընթացակարգերը:

3.7. Ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների ապահովման խնդիրներ

Պաշտպանի մշտական ուշադրության ներքո է ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության վիճակը: Պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, 2024 թվականին քրեակատարողական հիմնարկներ մշտադիտարկման այցերի ընթացքում ուսումնասիրել և արձանագրել է ազատությունից զրկված օտարերկրացիների, այդ թվում՝ ապաստան հայցողների իրավունքների իրացման հիմնական խնդիրները:

Մշտադիտարկման այցերի ընթացքում ազատությունից զրկված օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ տեղի են ունեցել առանձնազրույցներ, որոնց ընթացքում արձանագրվել են նրանց հուզող հարցերը, ներկայացվել են նրանց հիմնական իրավունքները և ազատությունները, Պաշտպանի լիազորությունների շրջանակը և դիմելու կարգը:

Մշտադիտարկման այցերի ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, ընդ որում՝ Պաշտպանի կողմից վերջիններս արձանագրվել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում: Ստորև ներկայացվում են տվյալ խնդիրները.

1) ազատությունից զրկված օտարերկրացիների իրավական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի հետ կապված խնդիրներ՝ թարգմանչական ծառայության լիարժեք ապահովման բացակայությամբ պայմանավորված.

2) ազատությունից զրկված օտարերկրացիների առողջապահական ծառայությունների, սոցիալ-հոգեբանական աջակցության և այլ անհրաժեշտ ծառայությունների հասանելիության ապահովման խնդիրներ.

3) ՔԿՀ-ների աշխատակիցների անբավարար իրազեկվածությունը իրենց պարտավորության վերաբերյալ՝ կապված ապաստան հայցողների գրանցման և համապատասխան պետական մարմիններ ուղղորդելու գործընթացի հետ.

Վկայակոչված խնդիրների շարունակականությունը ենթադրում է, որ անհրաժեշտ է առավել խորքային և համապարփակ մոտեցում՝ ապահովելու փախստականների և ապաստան հայցողների հիմնարար իրավունքների լիարժեք իրացումը: Օրենսդրական բացերի, գործնականում առաջացող խնդիրների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը պետք է լինեն համակարգված և հետևողական՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել պատշաճ և բավարար կառուցակարգեր վերը թվարկված համակարգային խնդիրների անհապաղ լուծման ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 22. ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է իր գործունեությունը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ոլորտում:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման համատեքստում Պաշտպանն ակտիվ համագործակցել է պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ:

Վերջիններիս հրավերներով Պաշտպանը և իր ներկայացուցիչները մասնակցել են ոլորտային տարբեր հարցերով քննարկումների, այցերի, ընդգծել համապատասխան ոլորտում իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման կարևորությունը:

Այսպես, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման ոլորտում հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցում դասախոսություններ են անցկացրել դիվանագիտական դպրոցի ունկնդիրների և գործող դիվանագետների համար: Վերջիններիս ներկայացվել են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման բնագավառում Պաշտպանի լիազորությունների շրջանակը, ոլորտը կարգավորող իրավական դաշտը, թրաֆիքինգի կամ շահագործման զոհ/հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները և այլն:

Պաշտպանի աշխատակազմը շարունակել է իր մասնակցությունը Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի աշխատանքներին, մասնավորապես՝ 2024 թվականի փետրվար ամսին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի երկօրյա հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են 2023 թվականի ընթացքում կատարված աշխատանքները՝ շեշտադրելով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից իրականացված միջոցառումները, ինչպես նաև 2024 թվականին նախատեսվող քայլերը: Այնուհետև 2024 թվականի դեկտեմբերի 25-ին Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են վերը նշված աշխատանքային խմբի ամփոփիչ հանդիպմանը, որի շրջանակներում ներկայացվել են 2024 թվականի ընթացքում իրավասու մարմինների կողմից իրականացված աշխատանքները:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում կազմակերպված աշխատաժողով-դասընթացին՝ նվիրված տրավմատիկ իրադարձություններ վերապրած երեխաների հոգեբանական աջակցության թեմային: Միջոցառման շրջանակում, ի թիվս այլնի, քննարկվել են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու ռիսկերին առնչվող հարցերը:

Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները իրականացրել են նաև մշտադիտարկման այցեր տարբեր հաստատություններ, այդ թվում՝ ուսումնական, որի շրջանակներում, ի թիվս այլնի, անդրադարձ են կատարել մարդկանց թրաֆիքինգի և

շահագործմանն առնչվող հարցերին: Վերջիններս քննարկվել են նաև Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստերի շրջանակներում:

Ներքին գործերի նախարարության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ իրականացված այցի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, կացարանում բնակվող անձանց իրազեկել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ոլորտում իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի վերաբերյալ՝ հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով[801]:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման վտանգների, դրանց նոր ձևերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելու համատեքստում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ԶԼՄ-ների կողմից կազմակերպված քննարկումների՝ հարցազրույցի ձևաչափով: Օրինակ՝ հարցազրույցներից մեկը վերաբերել է Հայաստան ժամանած հնդիկների աշխատանքային շահագործման և վերջիններիս սոցիալական պայմանների հետ կապված հարցերին[802]:

1. Թրաֆիքինգի և շահագործման զոհերի վիճակագրություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում 25 անձ ճանաչվել է թրաֆիքինգի կամ շահագործման զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ: Նրանցից 11-ն արական սեռի ներկայացուցիչներ են, 14-ը՝ իգական, 11 անձ ենթարկվել է սեռական շահագործման, իսկ 14-ը՝ աշխատանքային: Նույնացված զոհերից 10-ը հատուկ կատեգորիայի զոհեր են (1-ը՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ, 9-ը՝ երեխաներ, որոնք ենթարկվել են ինչպես սեռական, այնպես էլ



[801] Այցի մասին առավել մանրամասն տե՛ս սույն տարեկան հաղորդման 21-րդ բաժինը:
[802] Հասանելի է https://youtu.be/wifZU1Lg4L0 հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

աշխատանքային շահագործման): 24 անձ հանդիսանում է ՀՀ, 1-ը՝ Թուրքմենստանի քաղաքացի:

Ըստ շահագործման վայրերի՝ զոհ է ճանաչվել 1 անձ Տավուշի մարզից, 2-ը՝ Լոռու մարզից, 10-ը՝ Երևանից, 9-ը՝ Կոտայքի մարզից, ինչպես նաև 1-ը՝ Արարատի մարզից և 1-ը՝ Շիրակի մարզից:

ՀՀ ներքին գործերի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշներով արձանագրվել է 34 դեպք, որոնցից 15-ը՝ սեռական, 19-ն աշխատանքային շահագործման դեպքեր են: Սեռական շահագործման 15 և աշխատանքային շահագործման 19 դեպքերը ներքին շահագործման դեպքեր են:

2024 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում մարդկանց ենթադրյալ թրաֆիքինգի և շահագործման ենթարկելու հանցագործության դեպքերի վերաբերյալ քննվել է 57 քրեական վարույթ, որոնցից 37-ը նախաձեռնվել է 2024 թվականի ընթացքում: Նշված քրեական վարույթներից 5-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 14-ը կարճվել են, իսկ մնացած 24 վարույթով նախաքննությունը շարունակվում է:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ մատուցելու» ծրագրի իրականացման և ապաստարանի գործարկման համար պետության կողմից հատկացվել է 32,105,000 դրամ, որն ամբողջությամբ իրացվել է:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին միանվագ դրամական աջակցություն տրամադրելու համար պետությունը հատկացրել է 1,750,000 դրամ:

2024 թվականի ընթացքում թրաֆիքինգի կամ շահագործման զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված 25 անձից 7-ին տրամադրվել է դրամական աջակցություն՝ 250,000 դրամ՝ առաջին անհրաժեշտության կենցաղային կարիքները հոգալու համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը թվով 6 (2 զոհ նույնացվել է 2023 թվականին) միջնորդություն է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ զոհերին կամ հավանական զոհերին առաջնային բուժօգնություն տրամադրելու նպատակով:

Միջնորդությունները բավարարվել են և 3 զոհն ու 1 հավանական զոհը (Հնդկաստանի քաղաքացի) օգտվել են բժշկական ծառայություններից: Բացի այդ, Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից 2023 թվականի ընթացքում նույնացված 5 զոհերը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի նախագահի կողմից տրված համապատասխան քաղվածքի հիման վրա 2024 թվականին ստացել են իրավաբանական և փաստաբանական աջակցություն:

2. Ոլորտում արձանագրված խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել են առանձին խնդիրներ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ոլորտում, որոնց լուծման ուղղությամբ ներկայացվել են

համապատասխան առաջարկներ: Արձանագրված խնդիրները վերաբերել են հանրային իրազեկվածության բարձրացման, իրավապահ մարմինների ծառայողների կարողությունների և հմտությունների կատարելագործմանն ուղղված վերապատրաստումների իրականացման, «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» ԵԽ կոնվենցիայի վավերացման անհրաժեշտության հարցերին և այլն:

2024 թվականի ընթացքում նշված խնդիրները մեծամասամբ շարունակում են արդիական մնալ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ իրականացվել են վերապատրաստման-իրազեկման հանդիպումներ նախարարության վերահսկողության ներքո գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող հաստատությունների աշխատակիցների և ծնողների համար կիբերթրաֆիքինգի և կիբերանվտանգություն թեմաներով: Օրինակ՝ վերապատրաստման դասընթաց է անցկացվել նաև Միասնական սոցիալական ծառայության մասնագիտական ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների աշխատակիցների համար՝ «Մարդկանց թրաֆիքինգ և շահագործում» թեմայով:

Ըստ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործման նպատակով Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) 2024 թվականի վերապատրաստման ծրագրում ներառվել են թրաֆիքինգի կամ շահագործման որակման հիմնախնդիրների, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերի, ինչպես նաև քրեական դատավարությունում զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունների, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու ապահովման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ:

Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ «Վորլդ Վիժն Ինթերնեյշընալ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում մշակվել են մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ աշխատանքում տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումների ապահովման ուղեցույցը (դատավորի համար) և դրա կիրառելիության մեթոդաբանությունը, որոնցով սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188-190-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով տուժող ճանաչված մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ աշխատանքում տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումներն ապահովող իրավահարաբերություններ, ինչպես նաև այդ դատաքննության առանձնահատկությունները, որոշակի տակտիկական և մեթոդական մոտեցումները: Նշված ուղեցույցը և մեթոդաբանությունը 2024 թվականին շրջանառվել է ՀՀ բոլոր դատարաններում:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ պետությունը ձեռնարկել և իրականացրել է որոշակի քայլեր՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման, մասնավորապես՝ հանրային իրազեկվածության բարձրացման, իրավապահ մարմինների ծառայողների համար վերապատրաստումների իրականացման ուղղությամբ: Կարևորելով նշված ոլորտում իրավասու մարմինների կողմից իրականացված աշխատանքները՝ Պաշտպանը, միևնույն ժամանակ, ընդգծում է, որ դրանք պետք է կրեն շարունակական բնույթ, լինեն թիրախային և իրականացվեն առավել համակարգային եղանակով:

Նշված ոլորտում առկա, ուշադրության արժանի խնդիրներից է նաև աշխատանքային միգրացիայի նպատակով Հայաստան ժամանած օտարերկրացիների թրաֆիքինգի ենթարկվելու վտանգը: Օրինակ՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետություն է ժամանել Հնդկաստանի 50,050 քաղաքացի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված անձինք կարող են գտնվել թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու վտանգի գոտում՝ Պաշտպանը կարևորում է ռիսկերի ճիշտ գնահատումը, այդ ուղղությամբ պատշաճ և բավարար կառուցակարգերի մշակումն ու իրացումը՝ թրաֆիքինգի կամ շահագործման ենթադրյալ դեպքերը բացահայտելու, արձագանքելու և կանխարգելելու ուղղությամբ: Այս համատեքստում կարևոր կլինի նաև նշված անձանց՝ իրենց հասանելի լեզվով թրաֆիքինգի կամ շահագործման հնարավոր վտանգների մասին իրազեկելը:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև մարդու օրգանների թրաֆիքինգը:

Այս առումով հարկ է նշել, որ դեռևս 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[803], որի նպատակն է կանխել և պայքարել մարդու օրգանների ապօրինի առևտրի դեմ, ինչպես նաև սահմանել պոզիտիվ պարտականություն կոնվենցիայի կողմերի համար՝ մարդու օրգանների ապօրինի առևտուրը ճանաչելով որպես հանցագործություն և սահմանելով համապատասխան պատժամիջոցներ: Կոնվենցիան նաև կոչ է անում երկրներին իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ բարձրացնելով հասարակության իրավագիտակցությունը, կրթելով բժշկական մասնագետներին և ամրապնդելով օրգանների նվիրատվության իրավական հիմքերը: Ապօրինի առևտրի զոհերին պետք է տրամադրվեն աջակցություն և վերականգնման ծառայություններ, իսկ միջազգային համագործակցությունը պետք է խթանվի հաղորդակցման, համատեղ հետաքննությունների և հանցագործների արտահանձման միջոցով: Կոնվենցիան նաև խթանում է օրգանների նվիրատվության և փոխպատվաստման իրավական և էթիկական շրջանակների ստեղծումը՝ նվազեցնելով ապօրինի առևտրի պահանջարկը:

Ըստ ՀՀ կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի թիվ 31-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ-ում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի՝ դեռևս 2023 թվականի 3-րդ եռամսյակում պետք է

[803] Հասանելի է https://rm.coe.int/16806dca3a հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

վավերացվեր «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, սակայն այն մինչ այժմ չի վավերացվել:

Պաշտպանը խիստ կարևորում է վերոնշյալ կոնվենցիայի վավերացումը, քանի որ այն կնպաստի Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի և մեխանիզմների վերանայմանն ու բարելավմանը, ինչը, իր հերթին, կստեղծի բարելավված հիմք մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին/ հավանական զոհերին ցուցաբերվող աջակցության որակի բարձրացման, նրանց իրավունքների պաշտպանության և զոհակենտրոն քաղաքականության իրականացման համար:

Պաշտպանը կարևոր է համարում նաև ՀՀ կողմից «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իրականացման լույսի ներքո համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացմամբ ազգային զեկուցողի ինստիտուտի ներդրումը՝ նշված մանդատը վերապահելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը՝ վերջինիս օժտելով պետական հաստատությունների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ ուղղված գործողությունները մշտադիտարկելու իրավասությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելմանն ուղղված հանրային իրազեկման աշխատանքներն իրականացնել առավել թիրախային և համակարգային եղանակով՝ ապահովել վերջիններիս շարունակականությունը,***
- ✓ ***մշակել և իրացնել պատշաճ և բավարար կառուցակարգեր աշխատանքային միգրացիայի նպատակով Հայաստան ժամանած օտարերկրացիների թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելու ռիսկերի ճիշտ գնահատման, թրաֆիքինգի կամ շահագործման ենթադրյալ դեպքերը բացահայտելու, արձագանքելու և կանխարգելելու, ինչպես նաև իրենց հասանելի լեզվով հնարավոր վտանգների մասին իրազեկելու ուղղությամբ,***
- ✓ ***իրականացնել պատշաճ և բավարար աշխատանքներ «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի շուտափույթ վավերացման ուղղությամբ,***
- ✓ ***«Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների՝ ՀՀ կողմից իրականացման լույսի ներքո, օրենսդրական փոփոխությունների իրականացմամբ նախատեսել ազգային զեկուցողի ինստիտուտի ներդրումը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը օժտելով պետական հաստատությունների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ ուղղված գործողությունները մշտադիտարկելու իրավասությամբ:***

ԲԱԺԻՆ 23. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մոնիթորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

2024 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ չեն մուտքագրվել ազդարարների իրավունքների խախտմանն առնչվող դիմումներ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 30.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն ազդարարների պաշտպանության իրականացման նպատակով իրավասու է հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը, իրականացնելու ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մոնիթորինգ և գնահատում, հանդես գալու ազդարարների պաշտպանության իրականացման վերաբերյալ հրապարակային զեկույցներով, իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ: Պաշտպանն իրավասու է ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով տրամադրելու խորհրդատվություն և ներկայացնելու անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները:

Վերոնշյալ օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման 3-րդ հավելվածով հաստատված ձևին համապատասխան ներկայացված վիճակագրական տվյալները՝ ստորև ներկայացվում է ազդարարման հետ կապված վիճակագրությունը.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Դեռահան մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարման կարգադրությունների ընդհանուր քանակը	Այդ թվում						
			Ներքին, որից		Արտաքին, որից		Հանրային, որից		Ազդարարման միջոցների քանակի
	1.	2.	3.		4.		5.		6.
ՀՀ գլխավոր դատախազություն		380	Բանավոր		Բանավոր		Բանավոր		380
			Գրավոր		Գրավոր		Գրավոր		
ՀՀ ներքին գործերի նախարարություն		11	Բանավոր		Բանավոր	2	Բանավոր		
			Գրավոր	1	Գրավոր	8	Գրավոր		
ՀՀ պաշտպանության նախարարություն		3	Բանավոր		Բանավոր		Բանավոր		
			Գրավոր		Գրավոր	3	Գրավոր		

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Դեռահան մարմնի անվանումը	Տողի համարը	Արգասաբերման դարմանման ընթացքում ստացված վնասվածքներ	Ընդհանուր թիվը՝ ըստ վիճաբան տեսակի դեպքի	Որից		
				Արգասաբերման հաղորդումների III վեղարանոցային վերակացության թիվը	Արգասաբերման հաղորդման վայրում հիվանդի մեջտեղ դուրս եկած թիվը	Արգասաբերման հաղորդման վերելքների ցանցում հիվանդի թիվը
	1.	2.	3.	4.	5.	6.
Հ					106	274
Հ գլխավոր դատախազություն		Կոռուպցիոն բնույթի դեպք	10			
		Անհամատեղելիության պահանջի խախտման դեպք				
		Այլ բնույթի դեպքեր				

Դեռական մարմնի տեսանումը	Զգուշորդման հաղորդման հիմքով հարուցված վարույթի սուբյուրում ընդունված սկզբի ամենուր թիվ	Որից			
		Պաշտոնատարի անձին կարգապահական տուգանքներ նշանակելու մասին	Հանցագործության հատկանիշներ պարունակող արարքներ կատարելու մասին հայտնի դարձած դեպքերի թիվ	Հարուցված վարույթների կարճման որոշման թիվ	Խախտում հայտնաբերելու դեպքերի թիվը չհայտնաբերելու
	7.	8.	9.	10.	11.
ՀՀ գլխավոր դատախազություն				39	

*Դեպքերն ըստ օրենքի՝

1) Կոռուպցիոն բնույթի դեպքի մասին տեղեկություն

2) Շահերի բախման, հայտարարագրման պահանջի խախտման մասին տեղեկություն

3) Վարքագծի կանոնի խախտման մասին տեղեկություն

4) Անհամատեղելիության պահանջի խախտման մասին տեղեկություն

5) Այլ սահմանափակումների խախտման մասին տեղեկություն՝ նշել կոնկրետ խախտման անվանումը

6) Հայտարարագրման հետ կապված խախտման մասին տեղեկություն

7) Հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկություն

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Պետական մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարին տրամադրված պաշտպանության միջոցի տեսակը*	Ընդհանուր թիվը՝ ըստ պաշտպանության տեսակի	Պաշտպանության նախաձեռնման հիմքը, որից	
				Մարմնի նախաձեռնությամբ տրամադրված պաշտպանության տեսակների թիվը	Ազդարարի դիմումի հիման վրա տրամադրված պաշտպանության տեսակների թիվը
	1.	2.	3.	4.	5.
ՀՀ գլխավոր դատախազություն		0	0	0	0
ՀՀ ներքին գործերի նախարարություն		0	0	0	0

Ազդարարին պաշտպանություն տրամադրելու մերժման դեպքերի ընդհանուր թիվը	Որից	
	Իրավասու մարմնի մերժման որոշումների թիվը	Դիմումին որևէ այլ հիմքով ընթացք չտալու դեպքերի թիվը
6.	7.	8.
0	0	0
0	0	0

Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքերը	Որից		Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքում օրենքով նախատեսված վարույթ հարուցելու միջնորդությունների թիվը	Ազդարարման հետևանքով ազդարարի նկատմամբ իրականացված վնասակար գործողությունների ընդհանուր թիվը
	Իրավասու մարմնի պատասխանատու անձի մեղքով	Այլ պատճառներով		
9.	10.	11.	12.	13.
0	0	0	0	0
0	0	0	0	0

Ազդարարի նկատմամբ իրականացված վնասակար գործողությունների վերացմանն ուղղված միջոցառումների թիվը	Որից		
	Ազդարարի իրավունքների պաշտպանությանը կամ խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված միջոցառումների թիվը	Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերի թիվը	Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց այլ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունների թիվը
14.	15.	16.	17.
0	0	0	0
0	0	0	0

*

1. Անձնական տվյալների գաղտնիություն

2. Վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք

3. Մարդու իրավունքների պաշտպանից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք

4. Հատուկ պաշտպանություն, այդ թվում՝

1) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը.

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը.

3) պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը.

5) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը.

6) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը.

7) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը.

5. Այլ

Մնացյալ իրավասու մարմինների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ վերջիններս ազդարարման հաղորդումներ չեն ստացել, հետևաբար վիճակագրական տվյալներ առկա չեն:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդմամբ[804] ամփոփվել և ներկայացվել են ազդարարման հետ կապված

[804] Առավել մանրամասն տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդումը, 821-827 էջեր, հասանելի է

հաշվետվությունն ու վիճակագրությունը, ինչպես նաև ոլորտին առնչվող առանձին խնդիրներ: Նշված խնդիրները վերաբերել են հանրային իրազեկվածության, իրավագիտակցության և սոցիալական պատասխանատվության ցածր մակարդակին, համակարգի նկատմամբ անվստահությանը, ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգի ոչ պատշաճ կիրառմանը:

Արձանագրված խնդիրների, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկների առնչությամբ գրություն է հասցեագրվել իրավասու մարմնին:

Ի պատասխան՝ Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում 2023 թվականի նոյեմբերի 29-ի բարձրաստիճան միջոցառմամբ պաշտոնապես տրվել է Ազդարարման համակարգի վերաբերյալ 2023-2024 թվականների հաղորդակցման գործողությունների համապետական իրազեկման ծրագրի և արշավի մեկնարկը:

Արշավի առաջին փուլում իրականացվել են հետևյալ քայլերը.

– մշակվել է ազդարարման համակարգի վերաբերյալ հաղորդակցման համապետական ծրագրի հայեցակարգ, մանրամասն միջոցառումների ծրագիր, մշակվել է արշավի բրենդինգը, իրականացվել է ծախսագնահատում,

– միջոցառումները համակարգելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ,

– բանակցություններ են տարվել միջազգային դոնոր կազմակերպությունների (ԵՄ, ԵԽ, ԱՄՆ ՄԶԳ, Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) հետ և մի շարք պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ արշավի բազմավեկտոր ֆինանսավորման համար,

– տեղի է ունեցել արշավի պաշտոնական մեկնարկի միջացառումը,

– միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ հայտարարվել է 3 մրցույթ,

– ոլորտային 7 հասարակական կազմակերպության հետ կնքվել է համագործակցության հուշագիր,

– ազդարարման համակարգի՝ azdararir.am-ի վերաբերյալ իրազեկող սահիկաշար-պատուհան է տեղադրվել ավելի քան 130 պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքէջերում, որից ավելի քան 70-ը մարզպետարաններ և համայնքապետարաններ են,

– հեռախոսային օպերատորների միջոցով 100.000 քաղաքացու ուղարկվել է ազդարարման համակարգի մասին իրազեկող կարճ հաղորդագրություն,

– ազդարարման համակարգի մասին ՏԻՄ ներկայացուցիչների (ՀՀ մարզպետարանների և համայնքապետարանների աշխատակազմերի, ազդարարման հարցերով պատասխանատուների և համայնքների ներկայացուցիչների) իրազեկվածության բարձրացմանն ուղղված վերապատրաստում-միջոցառումներ են իրականացվել ՀՀ բոլոր մարզերում և Երևանում՝ ընդգրկելով ավելի քան 300 ՏԻՄ ներկայացուցիչների,

– ՀՀ բոլոր մարզերում տեղադրվել են ազդարարման համակարգի մասին իրազեկող պաստառներ,

---

https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

– ԵԽ միջազգային և ազգային փորձագետների ներգրավմամբ իրականացվել է վերապատրաստողների վերապատրաստում՝ ուղղված արշավում ներգրավված պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների իրազեկմանը և կարողությունների զարգացմանը,

– ԵԽ փորձագիտական գնահատման են ենթարկվել բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվելիք վերապատրաստման նյութերը,

– իրականացվել են մի շարք իրազեկող և/կամ փորձագիտական քննարկումներ ազդարարման համակարգի շուրջ, նկարահանվել են մի շարք հարցազրույցներ:

2024 թ. հոկտեմբերին մեկնարկել է իրազեկման արշավի 2-րդ փուլը, որի շրջանակում՝

– «Ռեստարտ Իջևան» և «Ռեստարտ Գյումրի» երիտասարդական-քաղաքացիական կենտրոն հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ Տավուշի և Շիրակի մարզերի երիտասարդների համար կազմակերպված հակակոռուպցիոն երիտասարդական ճամբարի շրջանակում Արդարադատության նախարարությունը իրականացրել է ազդարարման համակարգի վերաբերյալ վերապատրաստում-դասընթաց՝ ներկայացնելով ազդարարման համակարգը և ազդարարման համապետական արշավը: Վերապատրաստմանը մասնակցել են Տավուշի և Շիրակի մարզերի 14-25 տարեկան շուրջ 100 երիտասարդներ,

– «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամի հետ համագործակցութամբ իրականացվել է հերթական վերապատրաստում-դասընթացը՝ 2024 թվականի մայիսից Հայաստանի 8 դպրոցներում ձևավորված Բարեվարքության ակումբների անդամների և նրանց մենթորների համար, որի շրջանակում ներկայացվել են ազդարարման ինստիտուտը, տեսակները, ազդարարների պաշտպանության միջոցները, ազդարարման միասնական հարթակից օգտվելու եղանակները,

– Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ մեկնարկել է «Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագիրը, որն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից,

– մեկնարկած վերապատրաստումների 2-րդ փուլով արդեն իսկ իրականացվել է 15 ուսուցում, վերապատրաստվել են ավելի քան 400 ուսանողներ, աշակերտներ, ուսուցիչներ, մասնավոր հատվածի և ՏԻՄ ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ նախատեսվում է իրականացնել 21 ուսուցում Երևանում և ՀՀ 4 մարզում՝ վերապատրաստելով 600 անձի,

– մշակվել են և շուտով կիրապարակվեն տեղական ինքնակառավարման մարմիններում և մասնավոր հատվածում ներքին ազդարարման մեթոդական ուղեցույցները, «Ձեր թվային ազդարարման իրավունքը» տեղեկատվական-ուսումնական ձեռնարկը,

– իրականացվել են մի շարք իրազեկող և/կամ փորձագիտական քննարկումներ ազդարարման համակարգի շուրջ, նկարահանվել են հարցազրույցներ:

Միաժամանակ, Արդարադատության նախարարության կողմից մեկնարկած Ազդարարման համակարգի իրազեկման համապետական արշավն արդեն գրանցել է դրական ցուցանիշներ. արշավից առաջ ազդարարումների ամսական միջին քանակը եղել է 2-5, իսկ 2024 թվականի դեկտեմբերին գրանցվել է ազդարարումների ամսական ամենաբարձր ցուցանիշը՝ 57 ազդարարում (վիճակագրություն՝ https://azdararir.am/am/statistics): Եթե 2023 թվականին ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ստացվել է 116 ազդարարում, ապա 2024 թվականի նոյեմբերի դրությամբ արդեն իսկ ստացվել է 293 ազդարարում, ինչը նշանակում է, որ ազդարարումների թիվն այս պահին ավելի քան կրկնակի գերազանցում է 2019 թվականից ի վեր՝ նախորդ բոլոր տարիներին ներկայացված ազդարարումների թիվը:

Ըստ Արդարադատության նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության՝ ազդարարումների որակական ցուցանիշները ևս շեշտակի աճել են. 2024 թվականի հունվարից հոկտեմբեր ամիսներին հարթակ ներկայացված ազդարարումների 57.71 տոկոսը ստուգվել է օպերատիվ-հետախուզական գործողությունների միջոցով: Սա վկայում է այն մասին, որ ներկայացվող ազդարարումների բովանդակությունն առավել հստակ և թիրախային է դարձել:

Ազդարարման համակարգի վերաբերյալ հաղորդակցման գործողությունների համապետական իրազեկման ծրագրի և ծրագրի իրականացմանն ուղղված լայնամասշտաբ իրազեկման արշավի շրջանակում իրականացվել են վերապատրաստումներ՝ Գեղարքունիքի (Սևան), Վայոց ձորի (Եղեգնաձոր), Սյունիքի (Գորիս), Լոռու (Վանաձոր), Տավուշի (Իջևան), Շիրակի (Գյումրի), Արագածոտնի (Աշտարակ), Արարատի (Արարատ), Կոտայքի (Հրազդան), Արմավիրի (Արմավիր) մարզերում:

Երևանում ամփոփվել է ՏԻՄ ներկայացուցիչների իրազեկվածության բարձրացմանն ուղղված շրջափուլը, որն արդեն տվել է իր դրական արդյունքները՝ գրեթե 10 անգամ աճել է ազդարարման դեպքերի քանակը: Հաջորդ քայլով իրականացվել են հաղորդակցության տարբեր միջոցառումներ և վերապատրաստումներ Երևանի և մարզերի բարձրագույն ուսումնական հաստատություններում և դպրոցներում: Մասնավորապես՝ «Երիտասարդներն՝ ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի շրջանակում ազդարարման համակարգն ու ազդարարի գործառույթները ներկայացվել են Տավուշի մարզի երիտասարդներին:

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ՝ նոյեմբերի 16-ին տրվել է «Համախմբենք ուժերը՝ կանխենք կոռուպցիան» համապետական արշավի մեկնարկը, որի շրջանակում ՁԼՄ ներկայացուցիչների համար անցկացվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ և կոռուպցիա» երկօրյա դասընթացը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս արձանագրելու, որ պետության կողմից ձեռնարկվել և իրականացվել են աշխատանքներ, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների շրջանում՝ իրազեկվածության, իրավագիտակցության, սոցիալական պատասխանատվության մակարդակի, համակարգի նկատմամբ վստահության բարձրացման ուղղությամբ,

որի արդյունքում նախորդ տարվա համեմատ ավելացել է ազդարարման հաղորդումների ոչ միայն քանակական, այլև որակական ցուցանիշը:

Պաշտպանը կարևորում և գովելի է համարում վերը նշված ոլորտում իրականացված աշխատանքները՝ ընդգծելով, որ վերջիններս պետք է կրեն շարունակական բնույթ և լինեն թիրախային:

Ազդարարման հաղորդումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին վիճակագրություն ներկայացնելու պարտականություն ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա մարմինների կողմից ներկայացրած տեղեկատվության վերլուծությունը վկայում է նաև վիճակագրության վարման կարգի միասնականության բացակայության մասին:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 1-ին կետի համաձայն՝ ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումն իրականացնում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողը (պատասխանատու անձ):

ՀՀ կառավարության նույն որոշման 3-րդ հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանին:

Մինչդեռ՝ առանձին իրավասու մարմիններ չունեն բավարար չափով տեղեկացվածություն իրենց կողմից վարվող վիճակագրությունը Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացնելու պարտականության մասին: Մի շարք դեպքերում էլ առանձին իրավասու մարմիններում ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումն ու ձևակերպումն իրականացնող պատասխանատու անձինք նշանակված չեն, ավելին՝ ազդարարման հաղորդումների հաշվառում չի իրականացվում, հետևաբար՝ նշված մարմիններում առկա չեն վիճակագրական տվյալներ ազդարարման հաղորդումների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***շարունակել իրականացնել հանրային իրազեկման և վերապատրաստման աշխատանքներ՝ ըստ տարբեր թիրախային խմբերի՝ նպաստելով վերջիններիս իրավագիտակցության և սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների և, առհասարակ, ազդարարման համակարգի առնչությամբ իրազեկվածության բարձրացմանն ու նշված համակարգի և պաշտպանության միջոցների նկատմամբ վստահության ձևավորմանը,***
- ✓ ***ապահովել վիճակագրության վարման կարգի միատեսակ և պատշաճ կիրառումը իրավասու բոլոր մարմիններում:***